ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԸՆՏՐԱՆԻ

32Ա
Ա-50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐԽԻՎ
ARCHIVES OF THE FIRST PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԸՆՏՐԱՆԻ

Ելույթներ
Հոդվածներ
Հարցազրույցներ

41153

ԵՐԵՒԱՆ 2006

ՀՏԴ 32 (479.25)
ԳՄԴ 66 (2Հ)
S – 370

LEVON TER-PETROSSIAN

SELECTED SPEECHES, ARTICLES, INTERVIEWS

Erevan 2006

Տեր-Պետրոսյան Լեւոն
S – 370 Ընտրանի: Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ. Կազմող եւ խմբագիր Ա. Բ. Սարգսյան – Եր.: Հայաստանի Հանրապետության Առաջին Նախագահի արխիվ, 2006. – 728 էջ:

ԳՄԴ 66 (2Հ)

ISBN 99941-2-015-8

© Լեւոն Տեր-Պետրոսյան, 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ-ՆԱԽԱԳԱՀ
ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
60-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն ժողովածուն միայն հավուր պատշաճի կազմված հոբելյանական հրատարակություն չէ՝ Հայաստանի Հանրապետության Հիմնադիր-Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի 60-ամյակի առիթով, գնահատանք ու հարգանքի տուրք՝ պետական գործչի նրա վաստակին:

Վերջին տարիներին հետևողականորեն աճում է Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքական ժառանգությանը անդրադառնալու, նրա գնահատականները, վերլուծություններն ու կանխատեսումները հիշելու, դրանց իրավացիությունն ու ճշգրտությունը հիշեցնելու հաճախականությունը: Սա նշանակում է, որ նրա քաղաքական ժառանգությունը ոչ միայն պահպանել է իր արդիականությունը, հասարակական հնչեղությունը եւ գործնական-քաղաքական նշանակությունը, այլեւ բազմապատկել է իր այդ հատկանիշները: Մինչդեռ, ժամանակին հրապարակված լինելով միայն օրվա մամուլում, դրանք այժմ մատենագիտական եզակի օրինակներ են՝ մի քանի գրադարանների պահոցներում, շատերին անմատչելի: Էլ չենք խոսում այն ելույթների մասին, որոնք մնացել են անտիպ: Անգամ դարաբաղյան հակամարտության կարգավորման սկզբունքների ու հեռանկարների խնդրին վերաբերող հայտնի «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը, որի բոլոր հիմնական դրույթները հազարավոր անգամ վկայակոչվել, հիշատակվել ու հիշվել են, բազմաթիվ հրապարակումներից հետո էլ շարունակում է մնալ փնտրված: Մինչդեռ Հայաստանի Առաջին նախագահն իր ելույթներում պարբերաբար անդրադարձել է ոչ միայն Հայաստանի համար կարեւոր այս խնդրին: Նրա հրապարակային ելույթները ներառում են տասնին խնդիրներից սկսած մինչեւ պետականության հիմնադրույթներ ու քաղաքական սկզբունքներ, իրական ու կեղծ քաղաքական հասկացությունների, իրական ու ոչ

իրական արժեքների զանազանումից մինչեւ պատմության ու արդի զանազան երեւույթների գնահատականներ, իրավիճակների վերլուծություն ու ապագայի կանխատեսումներ: Հրապարակվող ժողովածուն լավագույնս է ներկայացնում հայ հասարակական ու քաղաքական մտքի երկու բեւեռների՝ քաղաքական ռոմանտիզմի եւ իրատես քաղաքականության պայքարը, եւ այդ պայքարում իրատես քաղաքականության հաղթանակի՝ 1988 թվականից սկսվող տասնամյակի պատկերը:

Այսօր առավել ցայտուն ու տեսանելի է, որ ժամանակին չնկատված ու չգնահատված, կասկածի տակ դրված, վիճելի համարված շատ բան, որ, ի հեճուկս Առաջին Նախագահի անհաշտ քաղաքական ընդդիմության, այնուամենայնիվ, հնարավոր է եղել դնել գործնական քաղաքականության հիմքում եւ իրագործել, իրոք տվել է իր անուրանալի դրական ու մնայուն արդյունքները՝ անկախության ձեռքբերում ու անկախ պետականության կայացում, զինական հաղթանակներ, Լեռնային Ղարաբաղի փրկություն, նրա փաստական անկախության ու անվտանգության ապահովում, համակարգային բարեփոխումներ, ժողովրդավարության արմատավորում եւ այլն: Նույն կերպ տեսանելի է, որ այն դեպքերում, երբ ժամանակի «հայրենասերն» ու «ազգայինն» ընդդիմությանը հաջողվել է արգելափակել նրա նախաձեռնությունները, խոչընդոտել որեւէ ծրագիր, ապա այսօր քաղում ենք դրա ավելի քան դառը պտուղները: Այս վերջին դեպքի համար բերենք հետեւյալ ցայտուն օրինակը, որ կապված է 1990 թ. սեպտեմբերի 3-ին Գերագույն խորհրդի փակ նիստում Լեւոն Տեր-Պետրոսյանի մի ելույթի հետ, որ, բնականաբար, ժամանակին չի հրապարակվել:

Հանրապետության Հիմնադիր-նախագահին «պարտվողականության» մեջ մեղադրող «հաղթողականների» իշխանությունը շատ է խոսում իրավական հիմքի վրա Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման մասին: Մասնավորապես վկայակոչվում է «ԽՍՀՄ օրենքների շրջանակներում» ԼՂՀ-ի անկախության հռչակումը 1991 թ. սեպտեմբերի 2-ին եւ նույն թվականի դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեն: Սակայն, երբ միջազգային որեւէ ատյանում նրանց առաջարկվում է իրավական հիմքի վրա խնդրի քննարկում, անմիջապես խուսափում են ու բողոքում նման առաջարկից: Բանն այն է, որ հիշյալ որոշումները կայացնելիս Լեռնային Ղարաբաղը չուներ մարզային իշխանության սահմանադրական մարմին՝ Մարզային խորհուրդ (այնտեղ 1989 թ. հունվարից հաստատված էր հատուկ կառավարում):

Մինչդեռ որոշակի նշանակության իրավական հիմքի մասին այսօր, թերեւս, կարելի էր խոսել, եթե Հայաստանի ու Ղարաբաղի «հայրենասերն» ու «հաղթողականն» գործիչները ժամանակին, դրանից մեկ տարի առաջ՝ 1990 թ. սեպտեմբերին անսային Լեւոն Տեր-Պետրոսյանի խոսքին, ընդունեին նրա ներկայացրած պարզ ու իրագործելի ծրագիրը, որի շնորհիվ մեկ տարի անց Լեռնային Ղարաբաղն իր Անկախության հռչակագիրն ընդունելիս եւ հանրաքվեն կայացնելիս կունենար նույն ԽՍՀՄ օրենքներով ճանաչված մարզային իշխանության օրինական մարմիններ: Նրանց այդ «հերոսացման» պատճառով է, որ իրավական սույն փաստարկն այժմ անում է, քարոզչական բնագավառում անգամ՝ թույլ, ավելի լուրջ տեղերում՝ ժպտահարույց: Համապատասխան փաստաթուղթն այս ժողովածուում հրապարակվում է առաջին անգամ (տե՛ս սույն ժողովածուն, էջ 113–122)[1]:

Վերջին 7-8 տարիների իրողությունների համատեքստում հասարակական գիտակցության մեջ ակամա համեմատության հիմքի վրա վերանայման ու վերարժեւորման գործընթացներ են տեղի ունեցել ամենատարբեր տեսանկյուններով: Հայաստանի Հանրապետության Հիմնադիր-նախագահն այն ղեկավարն է, որն իր գործունեության ողջ ընթացքում բոլորի համար առավելագույնս բացել է ղեկավարի իր աշխատանոցի մանրամասները: «Ժողովրդի հետ կապի» տակ նա հասկանում էր ոչ թե ցուցադրական ու հաճախադեպ այցերն ու թատերականացված «կենդանի հանդիպումները», այլ, առաջին հերթին, հրապարակավ՝ հոդվածների, հարցազրույցների, ելույթների տեսքով նրան տեղյակ էր պահում երկրի քաղաքական օրակարգում առկա բոլոր խնդիրներին, իր քայլերին ու ծրագրերին: Սույն ժողովածուն կօգնի ընթերցողին հիմնական գծերով վերականգնել այդ պատկերը եւ վերապրել այդ կապը:

Ժամանակին, հայտնի հանգամանքների պայմաններում ու հասկանալի պատճառներով, Լեւոն Տեր-Պետրոսյանը երկու հիմնական լսարան ուներ. առաջին՝ արդեն կողմնորոշված համախոհների, երկրորդ՝ կանխակալ չհամախոհների ու չընդունողների: Ավելի պակաս էր երրորդ՝ ուշադիր

---

[1] Մեծ ուշացումով, էական կորուստներից հետո միայն, Լեռնային Ղարաբաղում հասկացան այս ծրագրի արդյունավետությունը եւ 1991 թ. մայիսի 16-ին հանդես եկան համապատասխան հայտարարությամբ, իսկ ՀՀ Գերագույն խորհուրդը հուլիսի 16-ի որոշմամբ պաշտպանեց այն, սակայն վերականգնել կորսվածը այլեւս հնարավոր չեղավ:

ընթերցողների ու ընկալել ցանկացողների լսարանը: Այժմ, բոլորովին այլ հանգամանքների դեմ-հանդիման ու բոլորովին այլ իրողությունների պայմաններում, հիմնականը դարձել է այս երրորդ լսարանը: Առաջարկվող ժողովածուն ուղղված է նաև այս պահանջարկը բավարարելուն: Սրանց ավելացել է նաև հասարակության շատ կարևոր մի մաս՝ մտածողության անցյալի բարդույթներից ազատ այն սերունդը, որ ժամանակին անչափահաս, այսօր արդեն իր ուժերի հասարակական ու քաղաքական դրսևորման լավագույն տարիքում է:

Նկատող հայացքները բազմիցս են արձանագրել, որ չնայած հրաժարականից հետո Հանրապետության Հիմնադիր-նախագահի լռությանը, երկրի քաղաքական կյանքում նա միշտ ներկա է որպես կարևոր քաղաքական գործոն:

Սա ճիշտ դիտարկում է:

Հայաստանի քաղաքական կյանքում նրա մշտական և գործուն ներկայությունը պայմանավորված է առնվազն երեք հանգամանքով: Առաջինն այն անուրանալի փաստն է, տարեգրական ու պատմականորեն անկրկնելի այն արդյունքները, որ ձեռք են բերվել նրա ղեկավարությամբ ու նրա առաջնորդած ճանապարհով: Երկրորդ՝ նրա թողած քաղաքական հետագիծը՝ պետականության հիմքում դրած նոր արժեքային համակարգը, քաղաքական մտքի այն դպրոցը, որ ձևավորվեց նրա շուրջ ու նրա անմիջական ազդեցությամբ: Երրորդ՝ մարդու, մտավորականի, քաղաքական ու պետական գործչի, երկրի ղեկավարի արժանապատվությունը մարմնավորող նրա այն կերպարը, որ դրոշմվել է հասարակական հիշողության մեջ: Նրան հաջորդած վարչախումբը, համեմատության մեջ երեք դեպքում էլ շատ մեծ հաշվով և անհուսալիորեն տանուլ տալով, ի սկզբանե ձեռնամուխ եղավ համեմատության այդ եզրերը ոչնչացնելու՝ նրա թողած հետագիծը նսեմացնելու ու կերպարը վարկաբեկելու, ընդհուպ՝ նրա վաստակն ու արդյունքները գողանալու ու սեփականելու անհեռանկար ու անբարո գործին: Ինքնահաստատման ու սեփական գոյության իրավունքը արդարացնելու համար նույն մեղկ ճանապարհն ընտրեց նաև վարչախմբի տարատեսակ ու հերթափոխային «պաշտոնական», պատվիրված ընդդիմությունը: Ուստիև՝ Հայաստանի ներքաղաքական կյանքի էությունն ու դինամիկան 1998-ի իշխանափոխությունից առ այսօր իրականում արտահայտվում է ոչ թե իշխանություն – ընդդիմություն երկուության պայքարում, այլ՝ մի կողմից «նախկինների», մյուս կողմից՝ իշխանության և ընդդիմության իրական հա-

կադրությունում: Իրականում այ՛ս բանաձևն է ցուցադրում հայաստանյան քաղաքական իրականության երկու բևեռները, արտահայտում երկու տարբեր արժեքային համակարգերի ու պետականության հիմնադրույթների մասին պատկերացումների տրամագծային հակադրությունը, երկրի զարգացման ուղիների՝ այդ հակադրության վրա հենված երկու իրարամերժ քաղաքական ըմբռնումների տարբերությունը: Այս բևեռներից մեկն օժտված է զանգվածային լրատվության միջոցներից օգտվելու անսահմանափակ ու մենաշնորհ իրավունքով, մյուսը՝ փաստորեն զրկված է այդ հնարավորությունից: Հրապարակվող ժողովածուն կմեղմի հասարակությանը տրվող տեղեկատվական բազայի այս ահռելի տարբերությունը, կնպաստի նրա ճիշտ կողմնորոշվելուն:

Հայաստանյան հասարակությունը ոչնչի այնքան մեծ կարոտով ու ակնկալիքով չի սպասում, որքան Հանրապետության նախագահի «նորից խոսելուն»: Ընդ որում՝ այդ սպասումը կար և արտահայտվում էր արդեն իսկ նրա հրաժարականից 2-3 ամիս հետո: Առաջարկվող ժողովածուն, թեև ընդգրկում է հեղինակի քաղաքական ժառանգության փոքր մի մասը, սակայն ըստ էության և ամբողջությամբ կարող է լրացնել օրեցօր խորացող հասարակական այս պահանջը՝ ուշադիր ընթերցողին տալ նրան հուզող հարցերի պատասխանները: Ահա թե ինչու, համոզված ենք, որ սույն ընտրանին Հայաստանի Հանրապետության Հիմնադիր-նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի 60-ամյակի առթիվ հոբելյանական հրատարակություն, պետական գործչի նրա վաստակին գնահատանք ու հարգանքի տուրք լինելուց զատ, ունենալու է նաև կարևոր գործնական-քաղաքական նշանակություն:

* * *

Վաղուց ընդունված է, որ երկրի ղեկավար գործիչները, մասնավորապես առաջին դեմքերը, իրենց աշխատակազմում ունեն հատուկ ստորաբաժանում կամ անձ («սպիչռայթեր»), որը պատրաստում է նրանց ելույթներն ու հոդվածները: Հայտնի է, որ Լևոն Տեր-Պետրոսյանը երբևէ չի ունեցել և չի օգտվել այսօրինակ ծառայությունից, չի ստորագրել ու չի կարդացել ուրիշի գրածը, ինքն է իր բոլոր ելույթների ու հոդվածների հեղինակը: Այս հանգամանքը, որպես յուրահատկություն, էականորեն բարձրացնում է հրապարակվող փաստաթղթերի արժեքը, ավելացնում դրանց ուսումնասիրման հնարավոր տեսանկյունները:

ժողովածուն կարելի էր կազմել նյութերի տարբեր դասակարգմամբ՝ ժանրային (ելույթներ, հարցազրույցներ, հոդվածներ և այլն), թեմատիկ (Շարժում, Լեռնային Ղարաբաղ, պետական շինարարություն, քաղաքական միտք և այլն): Ընտրեցինք, նման դեպքերում թերևս ավելի քիչ հանդիպող, ժամանակագրական հաջորդականության սկզբունքը՝ հետևյալ նկատառումով: Հանրապետության Նախագահի թողած այս ժառանգությունն առաջին հերթին վավերագրեր են, մեր պատմության ամենադրամատիկ ու հիշարժան նորագույն շրջանի՝ 1988 թվականից սկսված աննախադեպ համաժողովրդական շարժման, անկախության ձեռքբերման, պետականության կայացման, Լեռնային Ղարաբաղի ազատագրման ժամանակաշրջանի պատմության համար ամենաբարձրակարգ ու հավաստի պատմական սկզբնաղբյուրներ: Եվ, որպես այդպիսին, առավել կարևոր են ոչ այնքան դրանց ժանրային կամ թեմատիկ հատկանիշները, որքան հենց ժամանակագրական հերթագայությունը: Այսպիսի դասավորությունն ընթերցողին հնարավորություն է տալիս նորից վերապրել նորագույն շրջանի մեր այդ տասնամյա պատմության հևքը և ամենօրյա ելևէջները, համաժողովրդական կամքի եզակի դրսևորումները, անհաղթահարելի թվացող դժվարությունների հաղթահարման ու անհավատալի թվացող հաղթանակների բերկրանքը, վերհիշել, շատերի կողմից գուցե մոռացված, երկրի նորօրյա պատմության, նույնիսկ սեփական կենսագրության բազմաթիվ էջեր:

Պարզ ընթերցողը կարող է մտնել անկանխատեսելիությամբ ու ալեբախումներով հարուստ այս շրջանի շուրջ տասնամյա ղեկավարի և առաջնորդի քաղաքական աշխատանոցը, տեսնել բազմաբնույթ, բազմազան ու բազմաթիվ խնդիրների հսկայական ներկապնակը, ժամանակի ալեկոծումները, պատկերացնել ջանքերի այն չափը, սառնասրտության ու համբերության այն պաշարը, գերմարդկային լարման ու նաև իմաստության այն աստիճանը, որ պետք է ունենար Հանրապետության Նախագահը՝ փորձությունները հաղթահարելու, խութերը շրջանցելու, անելանելի իրավիճակներից ելք գտնելու, իրեն վստահված նավը խաղաղ նավահանգիստ հասցնելու համար:

Պատմաբան հետազոտողի համար այս կերպ հստակ ներկայանում է նույն շրջանի՝ կարևորագույն իրադարձություններից, խնդիրներից և իրողություններից հյուսված տասնամյա պատմության իրական ողնաշարը:

Քաղաքագետի համար ավելի դյուրին է դառնում նկատել նույն այս տարիներին գործնական քաղաքականության հիմքում դրված սկզբունքների, հիմնադրույթների հետևողականությունն ու անխաթարությունը, հետևել դրված խնդիրների իրագործման, ծրագրերի իրականացման գործընթացին, տեսնել դրանց ներքին կուռ տրամաբանական կապը, իրադարձությունների միջով ձգվող հստակ առանցքային գծերը, հանգել օբյեկտիվ գնահատականների և հավաստի հետևությունների:

* * *

Սույն հատորում ընդգրկված փաստաթղթերի մեծ մասը ժամանակին հրապարակվել է մամուլում: Սակայն հրապարակումները միշտ չէ, որ զերծ են եղել, երբեմն անխուսափելի, հաճախ նաև անփութության հետևանք հանդիպող թերություններից: Նույնը վերաբերում է հատկապես այլ լեզուներից կատարված հայերեն թարգմանություններին: Ուստի սույն հատորում հրապարակվող փաստաթղթերը, որոնց բնօրինակները՝ հիմք ձեռագիր կամ մեքենագիր տարբերակները, ելույթների ձայնագրությունները կամ տեսաֆիլմերը պահպանվել են Նախագահի արխիվում, համեմատվել են վերջիններիս հետ, դրանց օգնությամբ շտկվել վրիպումները, էականները՝ ծանոթագրվել տողատակում: Օտարալեզու փաստաթղթերը, որոնք ժամանակին թարգմանվել և հրապարակվել են հայերենով, կրկին համեմատվել են բնագրի հետ, շտկվել են թարգմանական բնույթի թերությունները և բացթողումները, եթե դրանք մտքի կամ իմաստային փոփոխության են հանգեցրել՝ ծանոթագրվել են: Ժամանակին հայերեն չթարգմանված կամ վատորակ թարգմանության դեպքում, օտարալեզու նյութերը նորից են թարգմանվել սույն հրատարակության համար:

Բանավոր ելույթների հրապարակումից առաջ հեղինակը սովորաբար նախապես խմբագրել է տեքստը, ինչի մասին հրապարակման վերջում ծանուցվել է: Նման դեպքերում, եթե պահպանվել է բանավոր ելույթի ձայնագրության այն օրինակը, որի վրա մինչև հրապարակվելը աշխատել է հեղինակը, ապա համեմատությունը կատարվել է այդ օրինակի հետ: Սակայն միշտ չէ, որ հեղինակը հնարավորություն է ունեցել բանավոր ելույթների ձայնագրական տեքստերը խմբագրել, և թերթերի հրապարակումները կատարվել են անմիջապես ձայնագրությունից՝ սեփական վերծանության հիման վրա: Այսպիսի դեպքերում հրապարակումների բնագրերը համեմատել ենք ԳԽ նիստերի պաշտոնական սղագրությունների հետ, եթե այդպիսիք

ունեցել ենք Ձեռքի տակ: Բոլոր դեպքերում՝ բանավոր, ժամանակին հեղինակի կողմից չխմբագրված ելույթների վրա կատարվել են նվազագույն խմբագրական փոփոխություններ՝ այն խստագույն պայմանով, որ չտուժի ոչ միայն միտքը, այլեւ պահպանվեն բանավոր ելույթին բնորոշ առանձնահատկությունները: Մի շարք փաստաթղթեր անտիպ են եւ հրապարակվում են առաջին անգամ՝ բնօրինակների հիման վրա:

Ասյն հրապարակման մեջ պահպանել ենք միայն այն վերնագրերը, որոնք հեղինակային են (հիմնականում՝ հոդվածները): Մյուս դեպքերում դրված են նկարագրական – տեղեկատվական վերնագրեր, որոնք նշում են նյութի տեսակը (ելույթ, հարցազրույց, ուղերձ, խոսք եւ այլն), տեղը, ատիթը, ժամանակը: Իսկ այն վերնագրերը, որոնք դրված են եղել խմբագրությունների եւ հարցազրույցների հեղինակների կողմից, նշված են վերջում:

Քանի որ Հանրապետության Առաջին նախագահի արխիվի նյութերի վերջնական մշակման աշխատանքները չեն ավարտվել, դրանք հղված են նախնական մշակման ժամանակավոր պայմանական համարներով՝ ՀՀԱՆԱ (Հայաստանի Հանրապետության Առաջին նախագահի արխիվ) համառոտագրմամբ:

Խմբագիրը շնորհակալություն է հայտնում Արա Սահակյանին, երջանիկ Աբգարյանին, Միքայել Հայրապետյանին, Արայիկ Մանուկյանին եւ Շահեն Կարամանուկյանին՝ ժողովածուի նյութերի, եւ հատկապես խմբագրի «Առաջաբանի» ու «Վերջաբանի» մասին նրանց խիստ արժեքավոր դիտողությունների ու առաջարկների համար: Շնորհակալություն ենք հայտնում նաեւ սույն հատորի ստեղծման մյուս մասնակիցներին՝ նյութերի համակարգչային մուտքագրողներ Լիպա Ճագարյանին եւ Սաթենիկ Հակոբյանին, համակարգչային ձեւավորող Թուրեն Թարումյանին, սրբագրման աշխատանքներին բերած իր օժանդակության համար՝ Գոհար Խաչատրյանին, եւ հատկապես Ավետիս Ավագյանին՝ ամբողջ ընթացքում իր կատարած բազմաբնույթ աշխատանքի համար:

Խմբագրի կողմից



* Նմուշ Լ. Տեր-Պետրոսյանի Ձեռագրից



2.

նության հասկացությունն ընդա-
մենը չեղյալ փաստաթղթային հայտա-
գրում է, որովհետև ազգի գո-
յությունն ինքնին ազգային հա-
[illegible] [illegible] է:

Գիտակցաբար-թե բնազդով,
պետականացված, թե ոչ՝ ազգը,
քանի դեռ գոյություն ունի, իր
անդամների առնվազն 90 տոկոսով
[illegible] գտնվում է [illegible]-
թյան վիճակում, այսինքն՝ ունի
իր ընդհանուր հայրենիքը, ազգային
սովորությունները, ավանդույթներն ու
արժանապատվությունը, լեզուն, հավատը,
մշակույթը, նաև՝ բաղձալի իղձերն ու
ապագայի պատկերացումները, որոն-
ցով նա տարբերվում է այլ
ազգերից:

Անկախության հարց է [illegible]

ԵԼՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

ԵԼՈՒՅԹ ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 68-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(10 սեպտեմբերի, 1983 թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Այսօր Խորհրդային Հայաստանի խաղաղ երկնի ներքո մենք հավաքվել ենք տոնելու Մուսա լեռան հերոսամարտի 68-րդ տարեդարձը, մեկ անգամ ևս հաղորդակցվելու մեր նախնիների սխրագործությանը, ոգեկոչելու անցյալ փառքերը եւ լավատեսության նոր լիցք ստանալու ապագայի նկատմամբ:

1915 թվականին հայ ժողովրդի երեքհազարամյա պատմության մեջ արձանագրվեց ամենաողբերգական եւ նկատագրական դրվագը: Մի ժողովուրդ, որ դարեր շարունակ ապրել եւ ստեղծագործել էր իր պապենական հողի վրա, ունեցել վերելքի եւ վայրէջքի հաջորդող ժամանակաշրջաններ, ենթարկվել բազմաթիվ փորձությունների, բռնազաւթների եւ օտարացման, այնուամենայնիվ, մի ներքին բնազդով կառչել էր իր լեռնաշխարհին՝ լավագույն կյանքի ակնկալումով հասնելով մեր բաղաքակիրթ դարին: Սակայն այդ դարը եկավ միանգամից ի դերեւ հանելու նրա բոլոր հույսերը, հոշոտելու նրա որդիներին ու դուստրերին, ամայացնելու նրա հայրենի երկիրը:

Հայ ժողովրդի բնաջնջումն իրագործվեց հրեշավոր ծրագրով, որը հղացվել էր դեռևս անցյալ դարի յոթանասնական թվականներին՝ ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո: Հռնաստանի, Բալկանյան երկրների ազատագրման փաստը ամենահետին թուրքին անգամ բերել էր այն համոզման, որ ևս մի պատերազմ՝ եւ իրենք կորցնե-

յու են նաեւ Հայաստանը: Հայ ժողովրդի դատավճիռն, այսպիսով, անկախ նրա բռնած դիրքից ու գործունեությունից, կայացված էր: Ուստի միանգամայն հակապատմական է մեր օրերում դրսեւորվող այն մտայնությունը, որ իբր՝ եթե հայերն իրենց տեղում հանգիստ նստեին, չապստամբեին Օսմանյան պետության դեմ, քաղաքական կուսակցությունները չգրգռեին ժողովրդին, ապա թուրքերը մեզ ոչինչ չէին անի: Միանգամայն հակապատմական, միաժամանակ վնասակար եւ հուսալքող մտայնություն, որ գլխիվայր է շրջում պատմական իրականությունը: Ֆիդայական շարժումն ու ազգային քաղաքական կուսակցությունների ստեղծումը ոչ թե պատճառը, այլ հետեւանքն էին թուրքական հայաջինջ քաղաքականության: Եւ եթե հարկ է անպայման մեղադրել հայ ժողովրդի քաղաքական առաջնորդներին ու ղեկավարներին, ապա նրանց պետք է մեղադրել միայն այն բանում, որ չեն կարողացել ժողովրդին կոչել անհաշտ պայքարի, չհավատալ հակառակորդի խաբեություններին, գիտակցել հայ-թուրքական համակեցության բուն էությունը: Թուրքական լծից ազատագրվելու միակ միջոցը զինված պայքարն էր, քանի որ եթե հայերը ձեռքերը ծալած նստեին անգամ, միեւնույն է՝ թուրքերը նրանց պետք է ոչնչացնեին: Դժբախտաբար, այս բանը չհասկացան ժողովրդին առաջնորդելու կոչված կուսակցական ղեկավարները, իսկ երիտթուրքական հեղաշրջումից հետո, խաբվելով թուրքերի կեղծ բարեկամական ցույցերից, նույնիսկ կորցրին զինված պայքարի նախորդ տասնամյակներին ձեռք բերած նվազագույն աչալրջությունն ու մարտունակությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կատարվեց արդեն ամենաճակատագրական սխալը՝ զանգվածային մասնակցությունն ընդհանուր զորահավաքին, որով հայ ժողովուրդը փաստորեն զրկվեց իր ամենամարտունակ ուժերից: Հետո եկավ եղեռական ապրիլը, եկավ 1915 թվականի մղձավանջային ամառը, եւ Հայոց դրախտային աշխարհը վերածվեց մոխրակույտի:

Սակայն մի՞թե կարող էր երեքհազարամյա քաղաքակրթություն ունեցող մի ժողովուրդ, որը դարեր շարունակ փայփայել էր Հայոց պետականության վերականգնման երազանքը, սնվել անցյալի հերոսական ավանդներով ու կերտել «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպը՝ չանսալ դիմադրության իր ներքին բնազդին եւ չդրսեւորել իր անհողդողդ կամքն

ու ազատատենչ ոգին: Բարեբախտաբար՝ ոչ: Եւ ահա, տասնյակ տարիներ Հայոց լեռներում թնդացին խրոխտ ֆիդայիներ Արաբոյի, Աղբյուր Սերոբի, Անդրանիկի, Գեւորգ Չավուշի եւ շատ շատերի անմահ անունները՝ որպես արդարության ու վրիժառության խորհրդանիշներ, որպես ժողովրդական ոգու դրսեւորման արտահայտություններ: Ֆիդայական շարժումը կոչված էր սանձելու մեր վայրագ թշնամիների ամենօրյա ոտնձգությունները, պաշտպանելու հայ գեղջուկի ոտնահարված պատիվն ու խանգարված անդորրը, հույսի շող ցոլացնելու նրա լքված հոգում: Եւ այդ շարժումը լիովին կատարեց իր պատմական առաքելությունը՝ մեկ անգամ եւս հավաստելով հայ ժողովրդի զինական կարողությունն ու անձնազոհությունը:

Այդ տարիներին գրվեց նաեւ հայ ժողովրդի պատմության ամենահերոսական էջերից մեկը՝ Զեյթունի լեռնականների անօրինակ սխրագործությունը: 1895 թվականին բռնկված այդ ապստամբությունն ապացուցեց, որ համախմբվածության եւ կազմակերպվածության դեպքում թշնամու դեմ կարելի է պայքարել ոչ միայն ֆիդայական խմբակային եղանակներով, այլեւ զանգվածային ռազմական գործողություններով՝ հակառակորդի կանոնավոր բանակներին հակադրելով հայրենի լեռների անառիկ դիրքն ու մարտիկների ոգու կորովությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցած իրադարձությունները լիովին հաստատեցին պատմական այս իրողությունը: Անզեն ծերունիների, կանանց ու երեխաների հոշոտելու սովոր գիշակեր հրոսակները Հայոց աշխարհի տարբեր վայրերում հանդիպեցին կատաղի դիմադրության՝ բազմիցս մատնվելով խայտառակ պարտության ու խուճապահար փախուստի: Վանի եւ Շատախի հերոսամարտերը, Ուրֆայի, Շապին-Գարահիսարի, Սասնո եւ Յոզղաթի ինքնապաշտպանական գոյամարտերը մասամբ ի դերեւ հանեցին հայ ժողովրդին հիմնովին բնաջնջելու թուրքական ծրագրերը՝ վկայելով ազգի ներքին զինական կարողության եւ հոգու արիության մասին:

Դիմադրական շարժման այդպիսի օջախներից մեկն էր նաեւ Մուսա լեռը, որի հայաբնակ գյուղերի մի բուռ հայությունը, ավելի քան քառասուն օր կենաց-մահու անհավասար պայքար մղելով թուրքական կանոնավոր բանակների դեմ, կարողացավ պահպանել իր գոյությունն ու փրկվել համընդհանուր կոտորածից: Եւ այստեղ եւս ոչ թե քաղաքական

գործիչների ու գյուղական ավագանու կազմակերպված գործունեությունն էր նրանց առաջնորդողը, այլ ռամկական վճռականության ժառանգածին բնազդը: Մինչ գավառի երեւելիները հավաքված խորհրդակցում էին բռնելիք ընթացքի մասին, ժողովուրդն արդեն սկսել էր տարերայնորեն բարձրանալ լեռը, նա ինքն էր կայացրել վերջնական վճիռը եւ պարզել ապստամբության դրոշը: Սրանով եւ մանավանդ իր հաղթական ելքով է նշանակալից Մուսա լեռան հերոսամարտը, որը, թեեւ ոչ նույն ընդգրկմամբ ու ծավալումով, տեղ է գրավում Վասպուրականի հայության փառապանծ ապստամբության կողքին:

Արեւմտահայության տարերային ընդվզումները 1918 թվականին վերաճեցին արդեն համաժողովրդական պատերազմի, որի կիզակետը հանդիսացավ Սարդարապատի հաղթական ճակատամարտը, երբ հայ ժողովուրդը սեփական ուժերով հաստատեց իր գոյության իրավունքը եւ փրկեց իր լայնածավալ հայրենիքի մի փոքրիկ հողակտորը:

ՅՀԱԼԱ, 12/10.09.83: Բնագիր: Մեքենագիր:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԻՐԱԳՈՐԾՎԵԼԻՔ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ[1]

(30 մարտի, 1988 թ.)

1988 թ. մարտի 24-ին ՍՄԿԿ կենտկոմը եւ ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդն ընդունեցին որոշում՝ «Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 1988–1995 թվականների միջոցառումների մասին»: Քաղաքական այլ իրադրության մեջ բարենորոգումների այս ծրագիրն, անկասկած, լայն խանդավառություն կառաջացներ ինչպես մարզի աշխատավորության, այնպես էլ՝ ընդհանրապես ողջ հայ ժողովրդի մեջ: Սակայն, ինչպես պարզվում է կենտրոնական մամուլի հաղորդագրություններից («Իզվեստիա», 1988 թ. մարտի 25, 28, 30 եւ այլն), ՍՍՀՄ ղեկավարության «հոգատարությունը» սպասված արձագանքը չգտավ Լեռնային Ղարաբաղում: Դա բացատրվում է նախ՝ այն բանով, որ ծրագրում անտեսված եւ լռության է մատնված Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման սահմանադրական պահանջը, երկրորդ՝ նրանով, որ ոչ մի հայ հավատ չի տածում բարենորոգումների իրականացման հաջողության նկատմամբ: Պատմական դառը փորձը հայ ժողովրդին բերել է այն համոզման, որ ՍՄԿԿ կենտկոմի եւ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի մշակած միջոցառումները կունենան մոտավորապես նույնպիսի արդյունք, ինչպիսին ունեցան Օսմանյան կայսրության կողմից Արեւմտյան Հայաստանում իրականացված բարենորոգումները: Համեմատությունն արտառոց

[1] *Տարածվել է Գաբրիել Բաղրատյան ծածկանվամբ, հայերեն եւ ռուսերեն:*

կարող է թվալ միայն առաջին հայացքից. սակայն մի պետություն, որ չկարողացավ կանխել Սումգայիթի հայ բնակչության նկատմամբ կիրառված եղեռնը, չի կարող երաշխավորել նաեւ մշակված ծրագրերի իրագործումը:

Դրա վառ ապացույցը տալիս է Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հենց ՍՄԿԿ կենտկոմի կայացրած երկու հիմնական որոշումների համեմատությունը: Այսպես, ՍՄԿԿ կենտկոմի 1988 թ. փետրվարի 21-ի որոշման մեջ նշված էր հետեւյալը. «[Ադրբեջանական եւ Հայկական] համապետությունների կուսակցական եւ սովետական մարմիններին առաջարկված է... մշակել եւ իրականացնել մարզի սոցիալ-տնտեսական ու կուլտուրական հետագա զարգացման միջոցառումներ» («Սովետական Հայաստան», 25 փետրվարի, 1988 թ.): Սրանից կարելի էր ենթադրել, թե Հայաստանը պետք է ակտիվորեն մասնակցի Լեռնային Ղարաբաղի «սոցիալ-տնտեսական ու կուլտուրական հետագա զարգացման» գործին: Սակայն ՍՄԿԿ կենտկոմի եւ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988 թ. մարտի 24-ի որոշումը ի չիք է դարձնում Հայաստանին վերապահված այդ իրավունքը՝ Ղարաբաղում իրականացվելիք բարեւնորոգումների ողջ ծրագիրը դնելով Ադրբեջանական ՍՍՀ-ի պետական մարմինների եւ ՍՍՀՄ զանազան մինիստրությունների վրա: Որոշման մեջ Հայկական ՍՍՀ-ին ցուցված են միայն հետեւյալ երկու ծանրակշիռ հանձնարարականները. «17. ՍՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեին, Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին եւ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ ապահովել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, ինչպես նաեւ Ադրբեջանական ՍՍՀ-ի մյուս շրջաններում գտնվող հայկական դպրոցներում աշխատանքը կատարելագործելու կազմակերպական-մանկավարժական եւ մեթոդական համատեղ միջոցառումների մշակումն ու իրագործումը: 18. ՍՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեին՝ Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի եւ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի հետ համատեղ 1988 թվականից սկսած մասնագետների կոոպերացված պատրաստման պլաններով նախատեսել, որ Հայկական ՍՍՀ-ի տարածքում գտնվող բուհերում ուսանողական տեղեր հատկացվեն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ապրող անձանց նպատակային ընդունելության համար» («Սովետական Հայաստան», 29 մարտի 1988 թ.): Մարզի զարգացման գործում Հայաստանի համար ավելի կրավորական դեր դժվար էր պատկերացնել, քանի որ որոշման նշված երկու կետերն անգամ ոչ թե նրան ինչ-որ նոր իրավունքներ են վերապահում, այլ պարզապես արձանագրում են արդեն գոյություն ունեցող փաստը. առանց այդ էլ՝ Ղարաբաղում եւ Ադրբեջանական ՍՍՀ-ի մյուս շրջաններում գտնվող հայկական դպրոցներում օգտագործվում էին Հայաստանում տպագրված մեթոդական ձեռնարկներն ու դասագրքերը, եւ առանց այդ էլ՝ Հայաստանի բուհերում նպատակային տեղեր էին հատկացվում դարաբաղցի ուսանողներին: Այսպիսով ակնհայտ է, որ ՍՄԿԿ կենտկոմը ընդամենը մեկ ամսի ընթացքում Հայկական ՍՍՀ-ին լիովին զրկել է Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական եւ կուլտուրական զարգացման գործին մասնակցելու իրավունքից: Այդ պատճառով ամենեւին զարմանք չպետք է առաջացնի այն փաստը, որ դարաբաղցիները բացահայտ թերահավատությամբ են վերաբերվում նրա պարակված միջոցառումներին:

ՍՄԿԿ կենտկոմի եւ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի բարեւնորոգումների ծրագիրը, որով որպես ողորմություն Ղարաբաղին է մատուցվում տարիներ շարունակ նրանից կորզված միլիոնների չնչին տոկոսը, էժանագին խաբեություն է՝ կոչված մեղցնելու հասունացած հաղաքական խնդիրը եւ բթացնելու հայ ժողովրդի զգոնությունը: Այսպես կոչված «Ղարաբաղի պրոբլեմների» լուծման միակ միջոցը մարզի վերամիավորումն է Հայաստանի հետ: Հարյուր տարվա փորձից հետո հայ ժողովուրդը կարող է եզմվել, տեղի տալ բռնի ուժի առջեւ, բայց այլեւս չխաբվել, չհայփայել որեւէ պատրանք: Գոնե սա պետք է լինի մեր ազգի արթնացման, մեր միամտության բոթափման արտահայտությունը, մեր բառոյական հաղթանակը:

ՀՀԱՆԱ, 12/30.03.88: Թռուցիկ, 30 մարտի, 1988 թ.: Բնագիր: Մեքենագիր:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ ԵՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ[1]

(25 հուլիսի, 1988 թ.)

ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ս.թ. հուլիսի 18-ին կայացրած որոշմամբ ավարտվեց Ղարաբաղյան շարժման առաջին փուլը, որի բնորոշ հատկանիշն էր հայ ժողովրդի դրսեւորած վճռակամությունը՝ զուտ սահմանադրական շրջանակներում ընթացող պայքարում: Զեւական տեսակետից՝ հինգ ամիս տեւած համաժողովրդական այդ պայքարը չհասավ իր նպատակին՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը մնաց Ադրբեջանի կազմում, եւ դեռ ավելին՝ հայ ժողովուրդը ենթարկվեց հրեշավոր բռնությունների, որոնց հետեւանքով եղան տասնյակ մարդկային զոհեր, հարյուրավոր վիրավորներ եւ հազարավոր բաղաքական գաղթականներ՝ զրկված կյանքի եւ գույքի ապահովության տարրական իրավունքից:

Դառնով հանդերձ, ամենեւին չի կարելի հավասարության նշան դնել ս.թ. փետրվարի 20-ի եւ հուլիսի 18-ի իրավիճակների միջեւ, քանի որ այդ ընթացքում տեղի ունեցան այնպիսի նշանակալից իրադարձություններ, որոնց վիճակված է բախտորոշ դեր խաղալ հայ ժողովրդի ազգային ճակարգրի հաստատման եւ նրա բաղաքական նպատակների իրականացման գործում: Միայն այն փաստը, որ ստալինյան եւ բրեժնեւյան բռնապետության դաժան լծին ենթարկված մի փոքրիկ ժողովուրդ երկրի դեմոկրատացման համար ստեղծված առաջին իսկ ճնարավորության դեպքում ամիսներ շարունակ համաժողովրդական ցույ-

---

[1] *Տարածվել է «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեին» անունից:*

ցերի, հայրուհազարանոց միտինգների եւ տեւական գործադուլների միջոցով կարողացավ հակադրվել աշխարհի հզորագույն ճնշիչ մեքենային եւ հաջողությամբ պաշտպանել իր դատը, բավական է տեսնելու նրա ներսում կուտակված, դարերի խորից եկող կենսական ահռելի լիցքը, որ ցանկացած ազգի գոյատեւման անհրաժեշտ պայմանն է համդիսանում: Դրսեւորելով բարձր գիտակցականություն եւ կարգապահություն՝ հայ ժողովուրդն անցավ դեմոկրատական պայքարի հիանալի դպրոց եւ հաստատեց քաղաքական պատմության իր իրավունքը, որից զրկված էր շուրջ 70 տարի: Նա դարձավ մի ուժ, որի հետ այսօր ստիպված հաշվի են նստում եւ այսուհետեւ էլ պիտի հաշվի նստեն: Քաղաքական տեսակետից սա է Ղարաբաղյան շարժման առաջին փուլի խոշորագույն հաղթանակը, որ հիմք է տալիս լավատեսորեն գնահատելու հայ ժողովրդի ազգային պայքարի հետագա ընթացքը:

Իսկ պատմական առումով Ղարաբաղյան շարժումը հինգ ամսվա ընթացքում արձանագրեց այնպիսի կարեւոր նվաճումներ, որոնք անհնարին են Սովետական Միության գոյության բոլոր տարիների համար.

- Երկրի պատմության մեջ առաջին անգամ Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Հայաստանի Գերագույն սովետները որոշումներ կայացրին ներքինից՝ ժողովրդի կամքով եւ ոչ թե վերեւից իջեցված հրահանգներով, Ղարաբաղում եւ Հայաստանում հաստատվեց իսկական ժողովրդապետություն, բյուրոկրատական ապարատը անգործության մատնվեց, երեւույթներ, որ բխում են վերակառուցման ոգուց եւ արժանի են լուրջ ուսումնասիրման եւ ընդօրինակման.
- Առաջին անգամ Ղարաբաղում եւ Հայաստանում տեղի ունեցան հայրուհազարանոց ցույցեր եւ միտինգներ, որոնք իրենց հանախակիությամբ, կազմակերպվածությամբ եւ զանգվածայնությամբ անգերազանցելի են ոչ միայն Սովետական Միության, այլ ողջ աշխարհի համար, մանավանդ եթե նկատի ունենանք, որ այդ զանգվածային միջոցառումների ժամանակ ժողովրդի մեղով չի արձանագրվել օրինականության խախտման ոչ մի դեպք.
- ՍՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ Ղարաբաղում եւ Հայաստանում կազմակերպվեցին հաղթական բնույթ կրող տեւա-

կան համազգային գործադուլներ, որոնց նպատակն էր սրել կենտրոնական իշխանությունների ուշադրությունը հայ ժողովրդի արդար պահանջի վրա եւ սահմանադրական միջոցներ ձեռնարկել այն բավարարելու համար:

Շարժման այս վճռականությունը, հետեւողականությունը եւ կազմակերպվածությունը բացատրվում են ոչ թե մի հանի սադրիչների առանձին գործունեությամբ, ինչպես միամտաբար կարծում են նրա հակառակորդները, այլ այն պարզ հանգամանքով, որ մի ողջ ժողովուրդ միավորվել է միասնական գաղափարի շուրջ, որի արդարացիության նկատմամբ ոչ ոք տարակուսանք չունի: Պայքարի հզորությունը պայմանավորված էր նաեւ նրանով, որ հայ ժողովուրդը վերջապես հնարավորություն էր ստացել թոթափելու տասնամյակներ շարունակ իր ազգային արժանապատվությունը վիրավորող սարկական հոգեբանությունը եւ բացեիբաց արտահայտվելու իր հնկատագրի հետ կապված բոլոր էական խնդիրների վերաբերյալ: Ղարաբաղյան շարժմանն այս կամ այն չափով իրենց մասնակցությունը բերին Ղարաբաղի եւ Հայաստանի հայության բոլոր խավերը, ինչպես նաեւ Սովետական Միության մյուս հանրապետություններում եւ Սփյուռքի գաղութներում բնակվող մեր հայրենակիցներից շատերը:

Շարժումը հատկապես միասեռ եւ հետեւողական էր բուն Ղարաբաղում, որտեղ ե՛ւ մարզի ղեկավարությունը, ե՛ւ ողջ աշխատավորությունն ու մտավորականությունը միեւնույն վճռականությամբ եւ միասնական գործողություններով պաշտպանում էին իրենց սահմանադրական պահանջը: Դա, անշուշտ, բացատրվում է նրանով, որ պատմական անարդարությունից բխող ազգային խտրականության բոլոր բացասական հետեւանքներին ենթարկվել են նախ եւ առաջ հենց իրենք՝ ղարաբաղցիները, այդ իսկ պատճառով, բնականաբար, նրանց բողոքը առավել հզոր եւ միահամուռ պետք է լիներ:

Սովետական Միության մյուս հանրապետություններում եւ Սփյուռքի գաղութներում բնակվող մեր հայրենակիցները Շարժմանն իրենց բերած մասնակցության մեջ առայժմ սահմանափակվել են միայն տեղեկատվության տարածմամբ, համերաշխության ցույցերով եւ օտար միջավայրում Ղարաբաղի հարցի նկատմամբ դրական հասարակական կարծիք ստեղծելու գործով: Նրանց հնարավորությունները, սակայն, դեռեւս

4153

սպառված չեն, եւ պետք է հուսալ, որ առաջիկայում, մանավանդ սփյուռհայերը, միաճամուռ կերպով կլծվեն մեր ազգի արդար պայքարին:

Շատ ավելի բարդ է Ղարաբաղյան շարժման մեջ խորհրդային Հայաստանի հասարակության տարբեր խավերի՝ մանավանդ պետական-կուսակցական ղեկավարության եւ նոմենկլատուրային պաշտոնեության ցուցաբերած դերը: Փետրվարյան օրերից եւեթ պարզ դարձավ, որ լճացման տարիների ենթվածությամբ վարկաբեկված եւ աթոռներին կառչած հասարակական այդ խավն ավելի շուտ շահագրգռված է իր դիրքի պահպանմամբ, հան Ղարաբաղյան շարժմանն աջակցելու մտով: Եւ եթե Հայաստանի ղեկավարությունը ժողովրդի ճնշման տակ ստիպված էր որոշ զիջումներ անել, այնուամենայնիվ, նրա համար ավելի կարեւոր էր ենթարկվել կուսակցական կարգապահության տակին եւ անվերապահորեն իրագործել կենտրոնական իշխանությունների հրահանգները: Ցավոք, պետք է նշել, որ ի տարբերություն Հայաստանի ղեկավարության, Ադրբեջանի ղեկավարությունը նախանձելի միասնություն հանդես բերեց իր ժողովրդի հետ՝ հովանավորելով նույնիսկ նրա բարբարոսական գործողությունները:

Ղարաբաղյան շարժումը, բնականաբար, ավելի լայն արձագանք գտավ հասարակության մյուս խավերի՝ աշխատավորության, ուսանողության եւ մտավորականության շրջանում: Դարնանային իրադարձությունների ժամանակ ակտիվ դեր խաղացին մայրաքաղաքի բուհերի ուսանողները, որոնք իրենց դասադուլներով, ննստացույցերով ու երթերով մեծապես նպաստեցին Շարժման հզորացմանը եւ նրա հետագա ծավալմանը: Ամռանն իր վճռական խոսքն ասաց հանրապետության աշխատավորությունը, որի վառ արտահայտությունը հանդիսացան հունիսի 13–15-ի եւ հուլիսի 4–15-ի գործադուլները, ինչպես նաեւ հիմնարկ-ձեռնարկությունների ժողովներում ընդունված համարձակ որոշումներն ու բողոքի բանաձեւերը: Աշխատավորական զանգվածներում մեծ ակտիվություն ցուցաբերեցին շարքային կուսակցականները: Բավական է նշել, որ Ղարաբաղի հարցի դրական լուծման պահանջով Հայաստանի կոմունիստների կողմից ՍՄԿԿ 19-րդ կոնֆերանսին ուղղված ուղերձի տակ դրված էր մոտ 40 հազար առորագրություն: Ինչ վերաբերում է հանրապետության մտավորականությանը, ապա նա առաջին իսկ օրից Շարժման ղեկը վերցրեց իր ձեռքը եւ մինչեւ վերջ հավատարիմ մնաց հայ ժողովրդի ազգային շահերին: Տասնյակ հազարավոր գիտաշխատողներ, ինժեներներ, ուսուցիչներ, բժիշկներ, երաժիշտներ, դասախոսներ, նկարիչներ, իրենց ողջ եռանդը ներդնելով մեր արդար պայքարին, սրբորեն կատարեցին իրենց պարտքը հայրենիքի եւ ժողովրդի հանդեպ: Մտավորականության ծոցից անհրաժեշտաբար ծնվեց «Ղարաբաղ» կոմիտեն, որը կոչված էր ապահովելու զանգվածային շարժման կազմակերպվածությունը եւ, արձագանելով ժողովրդի իղձերին, նախանշելու նրա գործողությունների հիմնական ուղղությունները: Կոմիտեի գործունեության հաջողությունն իր հերթին պայմանավորված էր այն վստահությամբ, որ տածում էր ժողովուրդը նրա նկատմամբ:

Մտավորականության մասին խոսելիս, դժբախտաբար, չի կարելի չանդրադառնալ նրա ավագ սերնդի ներկայացուցիչների դիրքորոշմանը, որը ցավ եւ արդարացի դժգոհություն է առաջացնում ժողովրդական լայն զանգվածների մեջ: Փետրվարյան օրերին մեր անվանի գրողները, նկարիչները, ակադեմիկոսները գտնվում էին Ղարաբաղյան շարժման առաջին դիրքերում եւ իրենց իմաստուն խոսքերով կողմնորոշում ու ոգեւորում ցուցարարներին: Սակայն իրադրության սրման առաջին իսկ պահին նրանք կորցրին իրենց վճռականությունը, գործարի մեջ մտան հանրապետության վարկաբեկված ղեկավարության հետ, վերադարձան սերնդին եւ իրենց հասարակական դիրքին հատուկ հարմարվողական վարվելակերպին՝ այդ ամենը փարիսեցիաբար կոծկելով ժողովրդի հակատազրի մտահոգությամբ առգորված բարոյախոսական հարոզներով: Սակայն առանձին բացառությունների՝ ակադեմիկոս Վ. Համբարձումյանի, թղթակից-անդամ Ռ. Ղազարյանի եւ գրող Ս. Խանզադյանի օրինակը հույս է ներշնչում, որ նրանք, այնուամենայնիվ, երբեւէ կզգան իրենց սխալը եւ կվերադառնան իրենց ժողովրդի գիրկը:

Հայ ժողովրդի խաղաղ դեմոկրատական շարժմանը Ադրբեջանի ղեկավարությունը հակադրեց կազմակերպված եղեռնի եւ անվերջ ահաբեկումների, իսկ ՍՍՀՄ կենտրոնական իշխանությունները՝ մեր ազգային արժանապատվությունը վիրավորելու, Շարժումը ստալինյան պիտակներով վարկաբեկելու, երկրում հակահայկական կարծիք ստեղծելու եւ վերջապես՝ բռնի ուժով մեզ ճնշելու հաղթականությունը: Հայ ժողովուրդը հաջողությամբ դիմագրավեց այս բոլոր փորձություններ եւ Սահմանադրության շրջանակներում կիրառած իր վճռական գործո-

դություններով, այնուամենայնիվ, հասավ այն բանին, որ Ղարաբաղի հարցն առաջին անգամ քննության արժանացավ ԽՍՀՄ գերագույն իշխանության ատյանում: Անկախ քննության արդյունքից, դրանով Շարժումն ապացուցեց իր գոյության իրավունքն ու ներկայացրած պահանջի արդարացիությունը, քանի որ հակառակ դեպքում այն կխեղդվեր դեռևս սկզբնավորման պահին՝ չբարձրանալով տարերային դժգոհության մակարդակից: ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հուլիսի 18-ի նիստում հայ ժողովրդի պահանջի արդարացիությունը հերքվեց ոչ թե ուղղակի փաստարկներով, քանի որ դրանք չկան, այլ Սովետական Միության ընդհանուր քաղաքականությանը վերաբերող կողմնակի շահադիտումներով, որոնցից գլխավորներն են.

ա) Սովետական Միությունն իր վերակառուցման քաղաքականությունը բխեցնում է պատմականորեն ձևավորված արդի իրականությունից և այդ պատճառով մտադիր չէ որևէ փոփոխություն կատարել երկրի վարչա-տարածքային կառուցվածքում:

բ) Ղարաբաղի հարցի լուծումը պատճառ կդառնա նմանատիպ հարցերի մի շղթայի առաջացման, որը երկիրը կկանգնեցնի անելանելի վիճակի առաջ:

Ինչպես տեսնում ենք, նման մոտեցման մեջ մոռացության է մատնվում ոչ միայն տարրական մարդկային արդարությունը, այլև ազգերի ինքնորոշման հանրահայտ սկզբունքն ու Սովետական Միության կողմից վավերացված միջազգային իրավունքի նորմերը: Սա բարոյական իրավունք է տալիս հայ ժողովրդին շարունակել իր պայքարը և չհաշտվել այն մտքի հետ, որ ինչպես 1920 թվականին Հայաստանի կեսը զոհաբերվեց հանուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի, այժմ էլ Ղարաբաղը զոհաբերվի հանուն Սովետական Միության թվացյալ ընդհանուր շահերի, մանավանդ համոզված լինելով, որ Ղարաբաղի հարցի դրական լուծումը ոչ միայն չի հակասում այդ շահերին, այլև՝ ընդհակառակը, կնպաստի դեմոկրատացման ուղին բռնած մեր երկրի հեղինակության բարձրացմանը միջազգային ասպարեզում:

Հուլիսի 18-ից սկսած՝ Ղարաբաղյան շարժումը մտավ զարգացման նոր փուլ, որն, ի տարբերություն նախորդ շրջանի, առաջիկա ամիսներին հավանաբար կկրի խրամատային պայքարի բնույթ: ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահության որոշման մեջ հայ ժողովրդի ընդ-

վզման շնորհիվ մտցված որոշ դրական կետեր թերևս առաջիկայում հնարավորություն տան ինչ-որ չափով ապահովելու Լեռնային Ղարաբաղի ազգային ինքնուրույնությունը, ամրապնդելու նրա կապերը Հայաստանի հետ, բարելավելու մարզի տնտեսությունն ու աշխատավորության կենսամակարդակը: Սակայն պարզ է մի բան, որ հայ ժողովուրդն այլևս երբեք չի կարող հաշտվել Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու մտքի հետ և նույն միասնականությամբ ու վճռականությամբ կշարունակի իր պայքարը մինչև մարզի վերջնական վերամիավորումը Հայաստանի հետ: ԽՍՀՄ Սահմանադրությունն այդ նպատակին հասնելու համար դեռևս շատ հնարավորություններ է պարունակում, իսկ հայ ժողովուրդը իր հնգամսյա պայքարով արդեն ապացուցել է, թե ինչպես պետք է օգտվել այդ հնարավորություններից: Այն փաստը, որ Սովետական Միության ղեկավարությունն արագ ի վիճակի չեղավ դեմոկրատական լուծում տալու հայ ժողովրդի արդարացի պահանջին, դեռևս չի նշանակում, որ առաջիկայում երկրի վերակառուցման և մեր հասարակարգի դեմոկրատացման խորացման պայմաններում չի ուղղի իր սխալը:

Ղարաբաղյան շարժումն ամբողջ ԽՍՀՄ-ում առաջացրեց դեմոկրատական պայքարի մի նոր ալիք, որ ինքնին միակ երաշխիքն է երկրում հայտարարված առաջադիմական պրոցեսների տևականության ապահովման:

ՅՅԱԼԱ, 12/25.070.88: Թռուցիկ, 25 հուլիսի, 1988 թ.: Բնագիր: Մեքենագիր:

ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԻԲՐ ԲՈՐԲՈՔՎՈՒՄ ԵՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԻՏԻՆԳՆԵՐՈՒՄ[1]

(19 օգոստոսի, 1988 թ.)

Վերջին ժամանակներս Ղարաբաղյան շարժման դեմ ուղղված հիմնական մեղադրանքներից մեկն է դարձել այն, որ իբր երեւանյան միտինգներում հակառուսական տրամադրություններ են բորբոքվում: Սա պարզապես ստալինյան զինանոցից հանված հերթապահ մի հեյուրանք է, որով ավանդաբար ամբաստանվում է կենտրոնական իշխանություններին, սովետական բյուրոկրատիայի նկատմամբ արտահայտված որեէ դժգոհություն: Նման մոտեցումը, սակայն, ամենեւին չի կարելի կապել իշխանությունների թեթեւամտության կամ կարեւատեսության հետ, քանի որ այն ունի շատ ավելի խոր պատմահասարակական եւ հոգեբանական արմատներ: Բանն այն է, որ երկրի բյուրոկրատիան առ այսօր բացահայտորեն առաջնորդվում է Սովետական Միության եւ Ռուսական պետության նույնության գաղափարով: Նշենք թեկուզ մեկ թարմ փաստ. «Օգոնյոկ» շաբաթաթերթի այս տարվա հուլիսյան համարներից մեկում (թիվ 29) ՍՍՀՄ ֆինանսների մինիստր Բ. Ի. Գուսեւը առանց այլեւայլության գրում է հետեւյալը. «Այսօրվա առաջնահերթ հոգսը պետության առնչվող հոգսն է, մանավանդ մեր Սովետական պետության՝ Ռուսական պետության ամրապնդման հոգսը»: Ուստի միանգամայն պարզ է, որ նման մոտեցման դեպքում պետական մարմինների

---

[1] *Տպագրվել է «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեին» անունից, հայերեն եւ ռուսերեն:*

նկատմամբ արտահայտված որեւէ դժգոհություն պետք է դիտվի որպես հակառուսական տրամադրություն: Միաժամանակ հարկ է նշել, որ մեզ այդպիսի մեղադրանք ներկայացնողները տարօրինակ կերպով մոռանում կամ միանգամայն բնական են համարում այն փաստը, որ սովետական մամուլը ավելի քան մեկ տարի զբաղված է հայ ժողովրդին վերականգնման թշնամի, էքստրեմիստ, նացիոնալիստ, ծիակեր հռչակելու եւ դրանով հակահայկական տրամադրություններ սերմանելու գործով, որի հետեւանքով, օրինակ, բանակում արդեն հալածանքներ են սկսվել հայ զինծառայողների հանդեպ:

Ղարաբաղյան շարժման նպատակն է սահմանադրական շրջանակներում ընթացող գործողություններով հասնել Ղարաբաղի վերամիավորմանը Հայաստանի հետ՝ որպես սկզբունք խուսափելով որեւէ ազգի կամ ժողովրդի, որեւէ կրոնի կամ դավանանքի դեմ ուղղված թշնամական կամ վիրավորական արտահայտություններից: Սակայն դա չի նշանակում, որ մենք պետք է խուսափենք նաեւ մեր ազգային արժանապատվությունը վիրավորող այնպիսի իրողությունների սկզբունքային քննադատությունից, ինչպիսիք են, օրինակ, ադրբեջանցի մոլեռանդների կողմից Սումգայիթի հայ բնակչության նկատմամբ գործադրված ցեղասպանության եւ սովետական բանակի կողմից «Զվարթնոց» օդանավակայանում կիրառված բարբարոսության փաստերը: Վնռական հակահարված պետք է ստանան նաեւ հայ ժողովրդի հասցեին ուղղված այն բոլոր անպատասխանատու հայտարարությունները, որ անպատիժ կերպով հրապարակում են առանձին ղեկավար անձինք եւ մամուլի ու հեռուստատեսության մարմինները:

Հայ ժողովուրդն իսկապես շուրջ 300 տարի իր քաղաքական հույսերը կապել է Ռուսաստանի հետ եւ, անկախ կրած բազմաթիվ հուսախաբություններից, այսօր էլ չի կորցրել իր համակրանքը ռուս ժողովրդի նկատմամբ՝ վերջինիս վերաբերմունքը հստակորեն տարբերելով իշխանությունների վարած մեծապետական շովինիզմի քաղաքականությունից: Սակայն այժմ, երբ Ղարաբաղի խնդրով զգալի բարոյական հարված է հասցվել հայ ժողովրդի ազգային արժանապատվությանը, ապա կարող է փանգվել նաեւ այդ համակրանքը: Հայ եւ ռուս ժողովուրդների անկեղծ բարեկամության պահպանման երաշխիքը ներկայումս

գտնվում է Մոսկվայի ձեռքում, որի փտանգման պատասխանատվությունն էլ ընկնում է հենց նրա վրա:

Ղարաբաղյան շարժման հակառակորդների կողմից որպես հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամությանը հակասող երեւույթ, որպես հակառուսական տրամադրությունների բորբոքման մեղադրանք է ներկայացվում նաեւ միտինգներում արտահայտվող այն մտահոգությունը, որ վերաբերում է հայոց լեզվի կիրառության ոլորտի ընդլայնման, հայկական դպրոցների բարենորոգման, հայ մշակույթի զարգացման եւ նման այլ հարցերի: Անհանդուրժողականություն է ցուցաբերվում նույնիսկ այնպիսի բնական եւ սահմանադրական իրավունքների նկատմամբ, ինչպիսիք են, օրինակ, հայ մանուկներին հայկական դպրոց ուղարկելու, հիմնարկ-ձեռնարկություններում գործավարությունը Սովետական Հայաստանի պետական լեզվով իրագործելու, դիսերտացիաները հայոց լեզվով գրելու պահանջները եւ այլն: Ինչպես հայտնի է, նման պահանջներ ներկայացվում են համարյա բոլոր միութենական հանրապետություններում՝ դրական արձագանք գտնելով նույնիսկ կենտրոնական մամուլում: Այս փաստն ինքնին ցույց է տալիս, որ մայրենի լեզվի եւ ազգային դպրոցի ճակատագրի մտահոգությունը համատարած երեւույթ է եւ պահանջում է լուրջ վերաբերմունք ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական իշխանությունների կողմից:

Հայաստանում հակառուսական տրամադրությունների իսկական հրահրողը, որքան էլ տարօրինակ է, հենց հանրապետության ղեկավարությունն է, հանրապետության բյուրոկրատիան: Ինչի՞ նման է, օրինակ, այն փաստը, որ համարյա բոլոր նոմենկլատուրային աշխատողների երեխաները ուսանում են ռուսական դպրոցներում, ղեկավար անձանցից շատերը չեն տիրապետում մայրենի լեզվին եւ գերադասում են նույնիսկ ելույթներ ունենալ ռուսերենով, ռուսական դպրոցներն օգտվում են առանձնահատուկ շնորհներից, մինիստրություններում ու հիմնարկ-ձեռնարկություններում հայոց լեզուն հանվում է գործածությունից, պաշտոնյաների առանձնասենյակների մակագրություններն արվում են ռուսերեն եւ այլն: Այս բոլորը, բնականաբար, ժողովրդի մոտ ռուսաց լեզվի համար առանձնաշնորհված սոցիալական գերակայության եւ ծրագրված ռուսականացման պատկերացում է ստեղծում, որ

արդարացի զայրույթ եւ ավելորդ գրգռություն է հարուցում հասարակության լայն խավերի շրջանում:

Եզրակացությունը, թվում է, ինքնըստինքյան հասկանալի է. անկեղծ ձգտում հայ եւ ռուս, ինչպես նաեւ Սովետական Միության բոլոր ժողովուրդների բարեկամության ամրապնդման ուղղությամբ, սակայն դրա հետ մեկտեղ անհաշտ պայքար ազգային շահերի ոտնահարման, մեծապետական շովինիզմի եւ ռուսականացման քաղաքականության ցանկացած դրսեւորման դեմ:

ՀՀԱՆԱ, 12/19.08.88: Թռուցիկ, 19 օգոստոսի, 1988 թ.: Բնագիր: Մեքենագիր:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ ԵՒ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ[1]

(14 նոյեմբերի, 1988 թ.)

Հրաժարվելով Ղարաբաղի հայության ինքնորոշման ձգտումը ծայրահեղականների ու ազգայնականների (էքստրեմիստներ եւ նացիոնալիստներ) կողմից հրահրված շարժում ներկայացնելու թերեւամիտ եւ անհեռատես գնահատականից՝ կենտրոնական իշխանությունների գաղափարախոսական մարմինները վերջին ժամանակներս հետեւողականորեն որոնում են Շարժումը վարկաբեկելու, հետեւապես՝ հայ ժողովրդի նվիրական զգացումները եւ արժանապատվությունը վիրավորելու մի ավելի գռեհիկ ու մերկապարանոց միջոց: Խորհրդային ժողովուրդների հասարակական կարծիքին պարտադրվում է այն տեսակետը, թե իբր Ղարաբաղյան շարժումը խրախուսվում է վերակառուցման հակառակորդների կողմից, քանի որ իրադրության ապակայունացումը կաշառակեր տարրերին եւ ստվերային տնտեսության գործարքատերերին ապահովում է անցյալում գործած հանցանքների բացահայտման վտանգից եւ հնարավորություն է տալիս հաջողությամբ շարունակելու իրենց մութ գործերը:

Դժվար չէ նկատել, որ մենք գործ ունենք ստալինյան գաղափարաբանության զինանոցից հանված մի հերթական մտապատենի (ստե-

[1] *Նախապես գրվել է որպես ելույթ՝ նոյեմբերի 14-ին՝ Թատերական հրապարակում 200000-անոց հանրահավաքում: Որպես թռուցիկ տարածվել է հեղինակի անունով: Հրապարակվել է՝ Վարդգես Դավթյան, Առասպելի եւ իրականի սահմանագծին, Լեւոն Տեր-Պետրոսյան. քաղաքացին եւ քաղաքագետը, Եր., 1996, էջ 99–101:*

րեռոիպի) ետեւ, որի հիմքում, ինչպես նկատված է առանձին հրապարակախոսների կողմից, ընկած է այն ավանդական պատկերացումը, որ խորհրդային Միությունն առանց ներքին թշնամու չի կարող ապրել: Այդ իսկ պատճառով «սպիտակգվարդիական – կուլակ – ժողովրդի թշնամի» շղթային շատ բնական կերպով այժմ միանյուսվում է «վերակառուցման հակառակորդ» օղակը: Դեռ ավելին, «սոցիալիզմի հաջողություններին զուգընթաց՝ դասակարգային պայքարը սրվում է» ստալինյան բանաձեւին համաձայն՝ կարծես մշակվում է «վերակառուցման հաջողություններին զուգընթաց՝ նրա հակառակորդների դիմադրությունն աճում է» բանաձեւը: Դրանով ստեղծվում է մի իրավիճակ, երբ իշխանությունների համար ամեն մի անցանկալի հասարակական շարժում կարող է հեշտությամբ որակվել որպես վերակառուցման հակառակորդների գործունեության արդյունք:

Ղարաբաղյան շարժումն այս տեսակետից գնահատելիս, մասնավորապես նշվում է ղազախստանյան նմանակը (անալոգը), որն, ինչպես հայտնի է, մեր հասարակությանը մատուցվել է որպես սոցիալական անարդարության, կաշառակերության եւ անօրինականությունների այլ փաստերը ազգային զգացումների պոռթկումով կոծկելու նզտում: Թերեւս ավելորդ է նշել, որ իաղաքականության մեջ նմանակները պատահաբար չեն հիշեցվում, այլ դրանով նախապատրաստվում է համապատասխան հասարակական կարծիք նմանօրինակ պարագաներում նույնպիսի հաշվեհարդար տեսնելու համար:

Ու Ղարաբաղյան շարժումը համեմատության ոչ մի եզր չունի ղազախստանյան իրադարձությունների հետ, հազիվ թե կարիք կա ապացուցելու, եւ դեպքերին հիշ թե շատ ծանոթ ցանկացած մարդ իմնուրույն կարող է հանգել այդ եզրակացության: Ու Ղարաբաղյան շարժումը ոչ մի կապ չունի նաեւ վերակառուցման հակառակորդների հետ, նույնպես հարկ չկա ապացուցելու, քանի որ այն ծագել է ոչ թե այսօր, այլ տասնյակ տարիներ առաջ: Հայ ժողովուրդն սկզբից ևւեթ չի հաշտվել Ստալինի կամայականությամբ մայր հայրենիքից պոկված եւ օտարի լծի տակ դրված ազատաբաղձ Ադցախի հայության ստրկական վիճակի հետ՝ օգտագործելով ժողովրդավարության համար ստեղծված ցանկացած, թեկուզեւ կարճատեւ պահ, պատմական անարդարությունը շտկելու ուղղությամբ: Առաջին նման պահն ստեղծվել էր 60-ական թվա-

կաններին՝ խրուշչովյան լայնախոհ մարդասիրական հաղաքականության շնորհիվ, որի արդյունքը եղան 1965 թվականի ապրիլի 24-ի պատմական զանգվածային ցույցը եւ 1966–1967 թվականներին Հայաստանի հետ Ղարաբաղի վերամիավորման լուրջ շարժումը, որը, սակայն, շուտով խեղդվեց բռեժնեւյան եոապետության ճահճուտում:

Մեր երկրում հռչակված վերակառուցման, հրապարակայնության եւ ժողովրդավարացման արդի պայմաններում հայ ժողովուրդը ճնարավորություն ստացավ ավելի վճռականորեն բարձրացնելու իր արդար դատը, եւ ահա ուր ամիս շարունակ խիստ սահմանադրական միջոցներով նա պայքարում է հանուն ազգային միասնության: Շարժումը կրում է ճիրավի համաժողովրդական բնույթ, որով եւ բացատրվում են նրա հաղաքական հզորությունն ու ներքին կազմակերպվածությունը: Ուստի միանգամայն ծիծաղելի են նրա առաջացումը մի խումբ ծայրահեղականների, արեւմտյան գործակալների, սադրիչների, անպատասխանատու անձանց կամ վերակառուցման հակառակորդների չանիերին վերագրելու մեկը մյուսին հաջորդող եւ մեկը մյուսից շուտ սնանկացող փորձերը:

Չի կարելի ժխտել, իճարկե, որ Շարժման պատճառով հանրապետությունում ստեղծված լարված իրավիճակից իսկապես կարող են օգտվել, եւ թերեւս օգտվում էլ են, որոշ անբարոյական տարրեր, որոնք իրենց անօրինական գործողություններով կարող են ինչ-որ չափով վնասել վերակառուցման գաղափարին: Սակայն, նախ՝ նման երեւույթներից երաշխավորված չէ ոչ մի հաղաքական շարժման հետեւանքով ստեղծված այդպիսի իրավիճակ, եւ երկրորդ՝ Ղարաբաղյան շարժումը շատ ավելի լայն հնարավորություններ է ընձեռում իրենից օգտվելու վերակառուցման կողմնակիցներին, քան նրա հակառակորդներին: Կույր պետք է ձեւանալ չտեսնելու համար, որ հայ ժողովուրդը պատմական հանգամանքների բերումով հայտնվել է խորհրդային հասարակարգի իսկական վերակառուցման եւ ժողովրդավարության հաստատման ավանգարդում: Խորհրդային Միության ժողովուրդների շարքում հայ ժողովուրդն առաջինն է, որ դրսեւորել է այնպիսի հասարակական ակտիվություն, որն, ինչպես հավաստվում է երկրի նոր հաղաքականության չատագովների կողմից, վերակառուցման եւ ժողովրդավարության հաղթանակի միակ գրավականն է: Հասարակական այդ ակտի-

վությունը հայ ժողովուրդը դրսեւորել է ոչ միայն զանգվածային ցույցերի, միտինգների եւ գործադուլների միջոցով, այլեւ կենսագործել սոցիալ-բաղաքական նույժ կարեւորություն ներկայացնող կոնկրետ բայլերով: Երկրի պատմության մեջ առաջին անգամ ժողովրդի պահանջով եւ ոչ թե վերեւից իջեցված հրահանգներով մարզային եւ հանրապետական գերագույն իշխանությունների նստաշրջաններ են գումարվել Ղարաբաղում եւ Հայաստանում: Երկրի պատմության մեջ, նույնպես առաջին անգամ, հայ ժողովրդի կողմից առաջադրված դեպուտատական թեկնածուներն ընտրություններում պարտության են մատնել նոմենկլատուրային հիմումներով առաջադրված թեկնածուներին: Սրանք ժողովրդական լայն խավերի ձեռ բերած այն առաջին նշանակալից ձեռնումներն են, որոնք նախանշում են ինչպես մեր հանրապետության, այնպես եւ ողջ երկրի զարգացման հետագա ընթացքը:

Ի՞նչն է, սակայն, կենտրոնական իշխանություններին խանգարում տեսնելու այս ամենը եւ ըստ արժանվույն գնահատելու հայ ժողովրդի խոշոր ներդրումը վերակառուցման բաղաքականության իրականացման գործում: Այս հարցին կարելի է տալ երկու հնարավոր պատասխան. կամ՝ կենտրոնական մարմիններն իրենք դեռեւս չեն մարվել հակավերակառուցողական տարերից, որի ապացույցը թերեւս պետք է համարել ՍՄԿԿ կենտկոմի վեց բարձրաստիճան ղեկավարների վերջերս տեղի ունեցած անակնկալ պաշտոնանկությունը, եւ կամ՝ վերակառուցման կողմնակիցները դեռեւս չեն թոթափել անցյալից եկող հրահանգավորված եւ համապատասխան շրջանակների մեջ դրված ժողովրդավարություն սահմանելու մտայնությունը: Այդ իսկ պատճառով, հակառակ զանգվածների հասարակական ակտիվությունը բարձրացնելու կոչերին, առայժմ խիստ դիմադրություն է ցույց տրվում վերակառուցման առաջընթացին նպաստող ներհեղից կատարված բոլոր բայլերին: Այս ամենը, սակայն, չպետք է տարակուսանք առաջացնի երկրի որդեգրած ներկայիս բաղաքականության անշրջելիության նկատմամբ, բանի որ Խորհրդային Միությունն այլ ճանապարհ չունի, բան լիակատար ժողովրդավարության հաստատումն ու իրավական պետություն դառնալու անհրաժեշտությունը:

Իր ութամսյա գիտակցական պայքարով հայ ժողովուրդը հաջողությամբ դիմագրավել եւ հերթել է Ղարաբաղյան շարժումը վարկաբեկող

բոլոր անհիմն որակումները, եւ կասկած չի կարող լինել, որ նույն հաջողությամբ շատ մոտ ապագայում հօդս կցնդեցնի նաեւ մեր արդար դատը վերակառուցման հակառակորդների հետ կապելու անհույս ջանքերը: Դրա լավագույն ապացույցը կհանդիսանա Ղարաբաղի անհապաղ դուրսբերումը Ադրբեջանի կազմից եւ նրա վերջնական միավորումը մայր Հայաստանի հետ:

ՀՀԱՆԱ, 12/14.10.88: Թռուցիկ, 14 հոկտեմբերի, 1988 թ.: Բնագիր: Մեքենագիր:

ԵԼՈՒՅԹ ՀԵՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ
(24 հունիսի, 1989 թ.)[1]

Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, խոսապես մտահոգված ընթացիկ նստաշրջանի հակադեմոկրատիկ բնույթով, նրանում հնչած հիմնովին սխալ ու անհեռատես բաղաքական ծրագրով եւ հայ ժողովրդի իղձերի իրականացման համար ստանձնած պատասխանատվության զգացումով՝ իր պարտքն է համարում Հայաստանի գերագույն իշխանության ամբիոնից անելու հետեւյալ հայտարարությունը:

Չնայած պատմական դարը փորձին, չնայած հայ ժողովրդի կրած բազմաթիվ հիասթափություններին, մեր որոշ մտավորական գործիչների կողմից շարունակվում է տենդագին կերպով բարոզվել բաղաքականապես սնանկ եւ վտանգավոր այն մտայնությունը, որ Հայաստանը, շրջապատված լինելով այլակրոն, թշնամի ազգերով՝ իր գոյությունը կարող է պահպանել միայն ոուեւէ հզոր պետության հովանավորության շնորհիվ: Այս մտայնությունը մեր ժողովրդին մատնում է բարոյական ստրկության եւ զրկում նրան բաղաքական պարտնյոր դառնալու հնարավորությունից, որը բաղաքականության մեջ հաջողության հասնելու երաշխիքն է:

---

[1] «Ղարաբաղ» կոմիտեի անունից հնչած այս հայտնի բնագիրը չի պարունակվել «Դրոշակը» այն հրապարակել է (հավանաբար Հայկագրությունից) «Հետք Տեր-Պետրոսյանի մտահոգիչ հայտնի» վերնագրով՝ իր կողմից խոստանալով հետագայում «գիրքորոշվել նման զարտուղի եւ զառապարտելի կեցվածքի մը նկատմամբ»: Ուզում ենք ապագրված տեքստում տեղ գտած ակնհայտ սխալները եւ վրիպումները:

Հայաստանի՝ որպես պանթուրիզմի ծրագրի իրականացումը խափանող եւ դրանում Ռուսաստանի շահերին ծառայող գործոնի ըմբռնումը Հայկական հարցը կրկին ներմաշում է միջազգային հաղաքական հարաբերությունների բարդ ոլորտը, որ նղի է մեր ժողովրդի նպատակի համար վտանգավոր հետեւանքներով:

Թեեւ պանթուրիզմը, որպես գաղափարախոսություն, ապրելով իր ծաղկումը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, ներկայումս փաստորեն կորցրել է հաղաքական գործոնի իր բովանդակությունը, քանի որ թուրքալեզու ժողովուրդները բռնել են ազգային զարգացման ուղին, նրա դեմ ուղղված խաչակրաւնի կոչերը ընդունակ են այն նորից վերածելու հաղաքական գործոնի, եւ Հայաստանը դարձնելու պանթուրիզմի, պանիսլամիզմի թիրախ:

Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, ավելի քան մեկ տարի գլխավորելով համաժողովրդական Շարժումը, սկզբից ի վեր մերժել է օտար հովանավորի վրա հույս դնելու եւ պանթուրիզմը որպես մշտական սպառնալիք դիտելու վնասակար մտայնությունը եւ հետեւողականորեն կենսագործել է հաղաքական այն սկզբունքը, որ հայ ժողովուրդն իր ազգային իղձերին հասնելու համար պետք է ապավինի միայն ու միայն սեփական ուժերին: Քաղաքական այդ ուղին արդեն տվել է իր ակնհայտ դրական արդյունքները, եւ արցախյան խնդիրը մերժման, բռնադատման փուլից դուրս է բերվել լուծման փուլ:

Իր արդարացի, սահմանադրական պայքարի շնորհիվ հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ դաշնակիցներ՝ ի դեմս միջազգային հասարակական կարծիքի, Մոսկվայի, Լենինգրադի, Մերձբալթյան հանրապետությունների եւ այլ դեմոկրատական ուժերի: Դա նախ եւ առաջ հայ ժողովրդի համազգային շարժման շոշափելի նպաստի գնահատումն է Խորհրդային Միության դեմոկրատացման պրոցեսում եւ երկրորդ՝ արցախյան խնդրի արդարացի լուծման միակ գրավականը, որը մենք պարտավոր ենք փայփայել աչքի լույսի պես:

Գիտակցելով այս իրողությունը՝ արցախյան խնդիրը փակուղու առաջ կանգնեցնել ձգտող ուժերը հայ ժողովրդի դեմ նյութել են մի անվոր դավ, որին այսօր, կամա թե ակամա, մասնակցում են որոշ հայ մտավորական գործիչներ: Պանթուրիզմի վտանգի, Թուրքիայի կողմից նվաճված հայկական տարածքների խնդրի արծարծումն այս

պահին հետապնդում է միայն ու միայն մեկ նպատակ. հայ ժողովրդին ներկայացնել որպես ռեւանշիստներ, վարկաբեկել արցախյան արդարացի պահանջատիրությունը եւ դրանով զրկել նրան վերոհիշյալ դաշնակիցների համակրանքից: Այդ իսկ նկատառումով Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն խստագույնս դատապարտում է Հայկական հարցը միջազգային հարաբերությունների լճանագին խաղարտ դարձնելու ներքաքական փորձը եւ համոզմունք հայտնում, որ մեր ազգային իղձերի իրականացման միակ ուղին երկրի դեմոկրատացման գործընթացի անշրջելիության ապահովումն է եւ հայ ժողովրդի միաբանությունը՝ կերտված Հայոց համազգային շարժման գաղափարական սկզբունքների վրա:

Մենք վստահ ենք, որ եթե ժամանակին պաշտոնապես ճանաչվեր Հայոց համազգային շարժումը, եւ դրանով փոխըմբռնման հնարավորություն ստեղծվեր հանրապետության ղեկավարության եւ ժողովրդի ներկայացուցիչների միջեւ, ապա այսօր տեղի չէր ունենա հաղաքական այն արկածախնդրությունը, որին նվիրված է սույն հայտարարությունը:

«Դրոշակ», 24 հուլիսի, 1989 թ.:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(4 նոյեմբերի, 1989 թ.)[1]

Վերակառուցման եւ հրապարակայնության հաղթականութեան հոչակումից երկու-երեք տարի անց Խորհրդային Միության ժողովուրդները համոզվեցին, որ երկրի կուսակցական-տնտեսական բյուրոկրատիան ոչ միայն ի վիճակի չէ իրականացնելու ծրագրված հաղթականությունը, այլեւ շարունակ խոչընդոտներ է հարուցում նույնիսկ վերից սահմանված չափավոր դեմոկրատիայի կենսագործման երկչոտ փորձերի առջեւ: Այս իսկ պատճառով երկրի տարբեր վայրերում պաշտոնական իշխանությունների կողմին տարերայնորեն առաջացան բազմազան հասարակական կազմակերպություններ, միություններ եւ ընկերություններ, որոնք, առանձին հանրապետություններում վերածվելով յայն սոցիալական շարժումների, դարձան եթե ոչ ընդդիմադիր, ապա առնվազն ալտերնատիվ ժողովրդական իշխանություններ: Եւ կարճ ժամանակի ընթացքում ժողովրդական այդ շարժումները երկրի դեմոկրատացման ուղղությամբ արձանագրեցին շատ ավելի նշանակալից ձեռնարկներ, քան ձեռք էին բերված վերակառուցման շրջանի նախորդ երեք տարիներին:

Հասկանալի պատճառներով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այդ շարժումների ծագման համար ազդակ հանդիսացան տվյալ հասարակական-քաղաքական միջավայրի առջեւ ծառացած ամենակենսական խնդիրները. Մերձբալթյան հանրապետություններում դա ժողովրդա-

---

[1] *Գրավոր տեքստը տարածվել է «Հայոց համազգային շարժման ներքոյում խորհրդային Միության դեմոկրատացման պրոցեսումս վերնագրով:*

գրական տագնապալի վիճակից բխող անհանգստությունն էր, Ռուսաստանում կենսոլորտի, իսկ Բելոռուսիայում, Ուկրաինայում եւ Մոլդավիայում՝ մայրենի լեզվի եւ ազգային նկարագրի պահպանման մտահոգությունները եւ այլն:

Հայաստանի ժողովրդական շարժումն սկսվեց որպես բնության պահպանության եւ սոցիալական արդարության համար մղվող պայքար: Սակայն, երբ 1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի հայությունը, արտահայտելով ինքնորոշման իր իրավունքը, որոշում կայացրեց մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու եւ Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու մասին, Շարժման հիմնական խնդիրը դարձավ այդ որոշման իրագործումը: Մի քանի ամիս անց Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, նկատի առնելով ժողովրդական զանգվածների աճող քաղաքական ակտիվությունը, ընդլայնեց Շարժման ծրագիրը, նրա մեջ ընդգրկելով հայ ժողովրդի առջեւ ծառացած բոլոր կարեւոր խնդիրները, որոնք վերաբերում են հանրապետության սուվերենության ընդլայնմանը, կենսոլորտի բարելավմանը, պատմական անցյալի վերագնահատմանը, հայոց լեզվի եւ հայկական դպրոցների զարգացմանը, դեմոկրատական ազատությունների ապահովմանը եւ այլն: Եւ Շարժումն սկսեց քայլ առ քայլ, համառ պայքարի գնով առաջ մղել այդ նպատակների իրականացման գործը՝ միշտ որպես հիմնական խնդիր ունենալով, սակայն, Ղարաբաղի եւ Հայաստանի վերամիավորման հարցը: Առաջադրված ծրագրի իրականացման ճանապարհին հայկական ժողովրդական շարժումը հանդես բերեց այնպիսի նշանակալից դեմոկրատական նախաձեռնություններ, որոնց շնորհիվ 1988 թվականին հայտնվեց Խորհրդային Միության դեմոկրատացման պրոցեսի ավանգարդում:

Որո՞նք են դեմոկրատական այդ նախաձեռնությունները, աննախադեպ՝ Խորհրդային Միության գոյության բոլոր տարիների համար.

1. Երկրի պատմության մեջ առաջին անգամ Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում տեղի ունեցան հարյուրհազարանոց ցույցեր եւ միտինգներ, որոնք իրենց հաճախակիությամբ, կազմակերպվածությամբ եւ զանգվածայնությամբ անգերազանցելի էին ոչ միայն Խորհրդային Միության, այլեւ ողջ աշխարհի համար, մանավանդ եթե նկատի ունենանք, որ այդ զանգվածային միջոցառումների ժամանակ, իշխանությունների իսկ խոստովանությամբ, չարձանագրվեց օրինականության խախտման որեւէ լուրջ դեպք: Ղարաբաղում եւ Հայաստանում հաստատվեց խոսքի եւ ոչ պաշտոնական մամուլի լիակատար ազատություն: Երեւանի Թատերական հրապարակը վերածվեց իսկական Հայդ-պարկի, որտեղ յուրաքանչյուր ոք կարող էր արտահայտել սեփական կարծիքը, ցուցադրել իր քաղաքական պլակատները, փակցնել թռուցիկներ, հայտարարություններ եւ այլն: Խոսքի ազատության հետ մեկտեղ, սակայն, զանգվածների գիտակցության մեջ գործում էր ինքնազսպման մի յուրահատուկ մեխանիզմ, որի շնորհիվ ժողովուրդը ճիշտ ժամանակին կանխում էր պատահաբար հնչող ծայրահեղական ելույթներն ու կոչերը:

2. Երկրի պատմության մեջ նույնպես առաջին անգամ Ղարաբաղում եւ Հայաստանում կազմակերպվեցին քաղաքական բնույթ կրող տեւական համազգային գործադուլներ, որոնց նպատակն էր սրել կենտրոնական իշխանությունների ուշադրությունը հայ ժողովրդի արդար պահանջի վրա եւ սահմանադրական միջոցներ ձեռնարկել այն բավարարելու համար: Գործադուլների ընթացքը դրված էր լիակատար դեմոկրատական հիմքերի վրա. դրանք թեեւ կազմակերպվում էին Շարժման ղեկավարության կոչով, սակայն գործադուլին մասնակցելու մասին վերջնական վճիռը կայացնում էին աշխատավորական կոլեկտիվները՝ իրենց հիմնարկ-ձեռնարկությունների ընդհանուր ժողովներում ընդունված եւ կնիքով կամ ստորագրություններով հաստատված գրավոր որոշումներով: Գործադուլներն այնքան արտառոց երեւույթ էին Խորհրդային Միության համար, որ երկրի աշխատավորները, մասամբ պաշտոնական տեղեկատու միջոցների ազդեցությամբ, չկարողացան ընկալել դրանց էությունը եւ մամուլում ու հեռուստատեսությամբ հանդես եկան հայերի հասցեին ուղղված անտեղի կշտամբանքներով, չգիտակցելով, որ շատ չանցած իրենք պետք է դիմեին պայքարի այդ ծայրահեղ, բայց օրինական միջոցին:

3. Ղարաբաղը եւ Հայաստանը դարձան այն վայրերը, որտեղ, նույնպես երկրի պատմության համար առաջին անգամ, խորհրդային իշխանության մարմինները՝ Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Հայաստանի Գերագույն խորհուրդները որոշումներ կայացրեցին ներքեւից՝ ժողովրդի կամքով եւ ոչ թե վերեւից իջեցված հրահանգներով: Բավական է միայն նշել, որ վերջին մեկուկես տարվա ընթացքում այդ խոր-

ճուդների կայացրած բոլոր որոշումները ճանդիսանում են ժողովրդական կամքի արտահայտությունը: Քաղաքական տեսակետից թերևս սա է Հայաստանի դեմոկրատական շարժման ամենաճշգամակալից նվաճումը, որ ձեռք բերվեց ժողովրդի համար պայքարի եւ դեպուտատների հետ տարված դժվարին բացատրական աշխատանքի հետեւանքով, որի նպատակն էր բարձրացնել նրանց պատասխանատվությունը ընտրողների հանդեպ: Ժողովրդական զանգվածների հարաճուն ճնշման եւ դեպուտատների գիտակցականության բարձրացման շնորհիվ Ղարաբաղի մարզային եւ Հայաստանի Գերագույն խորհուրդները աստիճանաբար վերածվեցին ինչ թե շատ դեմոկրատական պառլամենտների, որոնց նիստերին մասնակցելու իրավունք ստացան նաեւ ոչ պաշտոնական կազմակերպությունների ներկայացուցիչները: Հայաստանի խորհրդարանի գործունեության բարձրակետը հանդիսացավ 1988 թվականի նոյեմբերի 24-ի նստաշրջանը, որը, հակառակ իշխանությունների համառ դիմադրությանը, գումարվեց ժողովրդի նախաձեռնությամբ եւ դեպուտատների մեծամասնության կամքով:

4. Հայաստանյան շարժումը առաջնեկը հանդիսացավ նաեւ խորհրդային Միության ընտրական համակարգի բարեփոխման գործում եւ, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, կարողացավ ընտրությունները վերածել իսկական դեմոկրատական միջոցառման: Դեռեւս անցյալ տարվա հոկտեմբեր – նոյեմբեր ամիսներին կայացած՝ հանրապետության Գերագույն խորհրդի մասնակի ընտրությունների ընթացքում ժողովրդին հաջողվեց արմատական բեկում մտցնել ընտրությունների անցկացման հարացած կարգում եւ ընտրել իր սեփական ներկայացուցիչներին, հաջողություն, որ ավելի ամրապնդվեց ս.թ. օգոստոսի 27-ին տեղի ունեցած ընտրություններում: 1988 թվականի նոյեմբերի 24-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը, Մեծքարթյան հանրապետությունների Գերագույն խորհուրդների կողքին, մերժեց ընտրությունների անցկացման նոր օրինագծի եւ ԽՍՀՄ Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին հրամանագրի ընդունումը՝ նկատի ունենալով նրանց հակադեմոկրատական բնույթը: Իսկ ս.թ. փետրվար ամսին ժողովուրդը պարզապես բոյկոտեց պարետային ժամի եւ զանգվածային բռնությունների առկայության պայմաններում անցկացվող

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների ընտրությունները, որոնց անօրինական արդյունքները դեռեւս ենթակա են վերանայման:

Դեմոկրատական այս նախաձեռնություններով նշանավորված Հայաստանյան ժողովրդական շարժումն անցած մեկուկես տարիների ընթացքում արձանագրեց մի շարք ծրագրային նվաճումներ, որոնցից գլխավորներն են.

- Հայաստանի Գերագույն խորհրդի 1988 թ. հունիսի 15-ի նստաշրջանի որոշումը Ադրբեջանի եւ Հայաստանի վերամիավորման մասին,
- Հայկական ատոմակայանի փակումը եւ «Նաիրիտ» գիտա-արտադրական միավորման աշխատանքի դադարեցման մասին ընդունված որոշումը,
- 1915 թվականի Հայոց ցեղասպանության դատապարտման մասին հրապարակված օրենքը,
- 1918 թվականի մայիսի 28-ը որպես հայկական պետականության վերականգնման օր եւ Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը որպես ազգային խորհրդանիշ ճանաչելու որոշումը,
- Հայոց համազգային շարժում հասարակական կազմակերպության պաշտոնական ճանաչումը,
- հայ գինակոչիկների ծառայության մասին կայացված որոշումը եւ այլն:

Այս նվաճումները մեծ վստահություն ներշնչեցին ժողովրդին սեփական ուժերի նկատմամբ՝ հիմք տալով նրան ավելի ընդլայնելու եւ արմատական դարձնելու Շարժման ծրագիրը:

Հայ ժողովրդի դեմոկրատական շարժմանը ադրբեջանական իշխանությունները եւ ԽՍՀՄ կենտրոնական մարմինները, ոտնահարելով ե՛ւ միջազգային իրավունքի նորմերը, ե՛ւ համամարդկային արժեքները, ե՛ւ խորհրդային Սահմանադրության դրույթները, հակադրեցին կույտ ուժի եւ բռնության հաղթականությունը, որի շարունակական օղակներն են.

- անցյալ տարվա փետրվարից սկսված եւ դեռեւս ընթացող հակահայկական մամլաշավը,
- 1988 թ. փետրվարի 27–29-ին Սումգայիթում տեղի ունեցած ոճրագործությունը, որը դեռեւս սպասում է իր հաղթական գնահատականին,

- Հայաստանի մայրաքաղաքի գրավումը խորհրդային բանակի կողմից, որ տեղի ունեցավ 1988 թ. մարտ ամսին,
- «Ջվարթնոց» օդանավակայանի այլումայի իրադարձությունը եւ Մասիս քաղաքում տեղի ունեցած զանգվածային թումբավորումը,
- 1988 թ. սեպտեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի Խոջալու գյուղում ծագած զգոնիչ միջադեպը,
- նույն թվականի նոյեմբեր ամսին Բաքվում, Կիրովաբադում եւ Ադրբեջանի այլ հայաբնակ վայրերում ծավալված ու մինչեւ օրս շարունակվող հակահայկական հալածանքները,
- պարետային ժամի եւ հատուկ դրության հաստատումը Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում,
- Ղարաբաղյան շարժման գործիչների զանգվածային ձերբակալություններն անցյալ տարվա դեկտեմբեր եւ այս տարվա հունվար ամիսներին,
- ներքին զորերի ստորաբաժանումների վայրագ գործողությունները Ստեփանակերտում ա.թ. սեպտեմբեր ամսին,
- եւ վերջապես, Լեռնային Ղարաբաղի ու Հյուսիսային Արցախի, ապա նաեւ Հայաստանի տեւական շրջափակումը:

Մոսկվայի եւ Բաքվի ողեգրած անաբեկչական այս քաղաքականության նպատակն է ծնկի բերել հայ ժողովրդին եւ նրան ետ կանգնեցնել իր արդար սահմանադրական պահանջներից, իսկ դրա նախողման դեպքում՝ նրան ներքաշել ազգամիջյան պատերազմի մեջ՝ պատրվակ ստեղծելով շատ ավելի լուրջ բռնության դիմելու համար: Հայ ժողովուրդն անցած մեկուկես տարվա ընթացքում, պատվով դիմագրավելով նշված փորձությունները, չկորցրեց իր հավասարակշռությունը եւ դուրս չեկավ պայքարի սահմանադրական շրջանակներից՝ շահելով երկրի բոլոր դեմոկրատական ուժերի եւ միջազգային հասարակական կարծիքի համակրանքը: Բացի հայ ժողովրդի պայքարի արդարացիության գիտակցությունից, այդ համակրանքը պետք է համարել այն կարեւոր նպաստի գնահատման արտահայտությունը, որ հայկական ժողովրդական շարժումը բերեց Խորհրդային Միության դեմոկրատացման գործին: Հայոց համազգային շարժման փորձը յուրացվեց Խորհրդային Միության եւ մասամբ նաեւ Արեւելյան Եւրոպայի երկրների ժողովուրդների կողմից՝ շատ առումներով դառնալով ընդօրինակման առարկա:

Պատմական հանգամանքների բերումով Հայաստանը դարձավ դեմոկրատական նախաձեռնությունների փորձադաշտ, սակայն, մյուս կողմից, նա փորձադաշտ դարձավ նաեւ կենտրոնական իշխանությունների կողմից կիրառվող կամ խրախուսվող հակադեմոկրատական միջոցառումների եւ աճաբեկչական գործողությունների համար. Սումգայիթը արձագանգվեց Ֆերգանայով, «Ջվարթնոցը»՝ Թբիլիսիով եւ այլն:

Ամփոփելով հայ ժողովրդի մղած ազգային-դեմոկրատական պայքարի այս համառոտ վերլուծությունը՝ հարկ ենք համարում ընդգծել նրա երեք կարեւորագույն արդյունքները.

- այսօր մենք ունենք ինքնորոշման իր իրավունքը կենսագործած, անկախ արցախահայություն, որն սպասում է այդ իրավունքի պաշտոնական ճանաչմանը.
- այսօր մենք ունենք թեեւ ծանր խնդիրների առջեւ կանգնած, բայց ազատ, ժողովրդավար հանրապետություն, որտեղ իշխում է ժողովրդի լիիրավ կամքը.
- այսօր մենք ունենք օտարների հովանավորության պատրանքը թոթափած, իր ուժերին ապավինող միաձույլ, միաբան եւ միակամ մի ժողովուրդ, որը լի է սեփական բախտը կռվու վճռակամությամբ:

Հայոց համազգային շարժման, համայն հայության խնդիրն է ամրապնդել եւ ավելի եւս խորացնել նվաճված բնագծերը՝ հետեւողականորեն կենսագործելով այն ծրագիրը, որի հիմնարկմանն է նվիրված սույն համագումարը[2]:

ՀՀԱՆԱ, 12/04.11.89: Բնագիր: Մեքենագիր:

---

[2] *Որպես հոդված հրապարակվել է «Երեկոյան Երեւան» Թերթում (14 նոյեմբեր, 1989 թ.) «Խորացնել նվաճված բնագծերը» վերնագրով: Բայց այդմ էլ՝ լրագրային տարբերակում վերջին նախադասությունը՝ «Հայոց համազգային շարժման, համայն հայության խնդիրն է ամրապնդել եւ ավելի եւս խորացնել նվաճված բնագծերը՝ հետեւողականորեն կենսագործելով այն ծրագիրը, որի հիմնարկմանն է նվիրված սույն համագումարը» միտքը ժամանակային փոփոխության է ենթարկվել. «... հետեւողականորեն կենսագործելով այն ծրագիրը, որը հաստատեց ՀՀՇ-ի համագումարը»:*

ԱՐՑԱԽՅԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆ[1]

(13 նոյեմբերի, 1989 թ.)

Վերջին ժամանակներս մեր հասարակության տարբեր շրջանակներում սկսել է տարածում գտնել այն կարծիքը, թե իբր Արցախյան շարժումը մտել է փակուղի, ևանի որ սպառվել են սահմանադրական պայմարի այն միջոցները, որոնց հետ էր կապվում Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման հույսը: Այս կարծիքը տարածում են մի կողմից՝ արցախյան խնդրի արագ լուծման ակնկալությունից հուսախաբված եւ պայմարի երկարատեւությունից հոգնած անկեղծ մարդիկ, մյուս կողմից՝ շարժումը վարկաբեկելու միտումով շահագրգռված ուժերը: Ոոպես բնական հետեւանք այստեղից էլ ծագում են շարժումը սահմանադրական շրջանակներից դուրս բերելու ծայրահեղական ձգտումները, կամ ընդհակառակը՝ միջազգային ատյանների օգնությանը դիմելու հուսահատական կոչերը: Այսինքն՝ ասվում է այն, ինչին մեկուկես տարի ապարդյուն կերպով ձգտում էին կենտրոնական իշխանությունները, բայց մեր ժողովրդի բարձր գիտակցականության պատճառով չէին կարողանում հասնել, այն է՝ ժողովրդին հանել հավասարակշռությունից եւ պատրվակ ստեղծել ցանկացած բռնության դիմելու համար, որն այդ դեպքում կարդարացվի միջազգային հասարակական կարծիքի կողմից:

---

[1] *Նրայիչ հանրահավաքում, որի՝ 1989 թ. նոյեմբերի 13-ով թվագրված մեքենագիր տեքստը հեղինակի առաջարկությամբ տարածվել է որպես թռուցիկ, ապա, մանակի փոփոխություններով, նույն վերնագրով հրապարակվել «Ավանգարդում» (19 նոյեմբեր, 1989 թ.):*

Մեկուկես տարի շարունակ Արցախյան շարժումը միջազգային իրավունքի եւ խորհրդային Սահմանադրության շրջանակներում ընթացող հետեւողական գործողություններով ի դերեւ հանեց միութենական իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի վերամիավորման դեմ ձեռնարկված բոլոր ծրագրերն ու աճաբեկչական միջոցառումները: Դրա հետ մեկտեղ այդ գործողությունների հետեւանքով Մոսկվան ստիպված էր հայլ առ հայլ, թեկուզեւ փորձիկ, թեկուզեւ աննշան չափերով կատարել Արցախի խնդրի լուծման ուղղությամբ: Դրանք են՝ ԽՄԿԿ կենտկոմի եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988 թ. մարտի 24-ի որոշումը «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մասին», ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. ապրիլի 9-ի որոշումը Լեռնային Ղարաբաղի հարցով զբաղվող հանձնաժողովի ստեղծման մասին, Ազգությունների խորհրդի մի նոր հանձնաժողովի ստեղծումը 1988 թ. հունիսի 18-ին կայացած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստից հետո, 1988 թ. օգոստոս ամսին Լեռնային Ղարաբաղում ԽՄԿԿ կենտկոմի եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ներկայացուցչի նշանակումը եւ, վերջապես, Լեռնային Ղարաբաղում Հատուկ կառավարման կոմիտեի հաստատումը ս.թ. հունվարի 11-ին: Հաջորդ զիջումն, ինչպես հայտնի է, սպասվում է նոյեմբերի 13-ին, որի հետ են ուղղակիորեն կապված վերջին շրջանում Ադրբեջանում սաստկացած հակահայկական ցույցերն ու բռնությունները, մասնավորապես Հայաստանի շրջափակումը: Անկախ այն ակնհայտ իրողությունից, որ թվարկված միջոցառումները ոչ միայն շոշափելի արդյունքի չհանգեցրին Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման գործում, այլեւ ավելի խճճեցին ու բարդացրին այն, եւ նույնը պետք է սպասել նաեւ նոյեմբերի 13-ին կայացվելիք որոշումից, այնուամենայնիվ չի կարելի անտեսել կենսաբոնական իշխանությունների կատարած զիջումների հաղաքական նշանակությունը: Դրանց ձեռնարկմամբ նախ՝ Մոսկվան ակամա խոստովանեց Արցախի խնդրի առկայության եւ նրա լուծման անխուսափելիության փաստը, իսկ դրանց նախորդմամբ ակնհայտ դարձավ, որ այդ խնդիրը կարող է ունենալ միայն ու միայն մեկ լուծում, այն է՝ Արցախի վերամիավորումը Հայաստանի հետ:

Բոլոր նշված զիջումները ձեռք բերվեցին մեր ժողովրդի համառ պայքարի եւ սահմանադրական շրջանակներում ձեռնարկված հստակ եւ հետեւողական հաղաքական գործողությունների շնորհիվ, որոնցից գլխավորներն են՝ կազմակերպված ցույցերն ու միտինգները, համազգային գործադուլները, Լեռնային Ղարաբաղի Մարզային կոմիտեի, Մարզային եւ Ազգային խորհուրդների, ինչպես նաեւ Հայաստանի Գերագույն խորհրդի հայտնի որոշումները, անցյալ տարվա նոյեմբերի 7-ի ապշեցուցիչ համաժողովրդական ցույցը, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նույն ամսի 24-ին գումարված նիստը, Ղարաբաղի շրջափակման եղերքը շինանյութով բեռնված երկու ավտոշարասյուների կողմից, ադրբեջանական իշխանությունների ձեռնարկած ագրեսիայի կանխումը Խաչին-տափի նկատմամբ եւ այլն: Արցախյան խնդրի լուծման ուղղությամբ տեղաշարժ կատարելու գործում վճռորոշ դեր խաղաց մանավանդ խոր ազգային-դեմոկրատական վերափոխումների իրականացումը Հայաստանում, որը որպես «հայկական գործոն» հակակշռեց բռնությամբ արտահայտվող «ադրբեջանական գործոնին»: Հայաստանում իրականացված ազգային դեմոկրատական վերափոխումները՝ համաժողովրդական վերահսկողության սահմանումը իշխանությունների վրա, ընտրարշավների կազմակերպումը, Գերագույն խորհրդի վերածումը դեմոկրատական պառլամենտի եւ մանավանդ ազգային գաղափարաբանության հաստատումը հասարակական կյանքում, լայն արձագանք գտան ողջ սոցիալիստական համակարգում՝ կողմնակիորեն դառնալով արցախյան հարցի առաջխաղացման ուղղությամբ հաղաքական ճնշման ամենաազդեցիկ միջոցը:

Արցախահայության եւ Հայաստանի աշխատավորության համառ պայքարի ու զոհաբերների գնով նվաճված զիջումների շնորհիվ Լեռնային Ղարաբաղն այսօր փաստորեն ձեռք է բերել իր անկախությունը եւ իրականում ոչ միայն պարզապես արտահայտել, այլեւ կենսագործել է ինքնորոշման իր իրավունքը: Մեկուկես տարի է արդեն, որ Արցախում չեն կատարվում ադրբեջանական իշխանությունների բոլոր հրամաններն ու ձեռնարկումները, աստիճանաբար ամրապնդվում են Հայաստանի եւ Արցախի տնտեսական-մշակութային կապերը, աշխատանքներ են տարվում մարզի բնակչության ֆիզիկական գոյությունն ապահովելու ուղղությամբ: Արցախի անկախության փաստն անելանելի վի-

նակի առջեւ է կանգնեցրել թե՛ կենտրոնական, թե՛ ադրբեջանական իշխանություններին, քանի որ արցախահայության ինքնորոշման իրավունքն այժմ արդեն հնարավոր է ոտնահարել միայն դիմելով մեծ մասշտաբի բռնության: Սակայն այդպիսի բռնություն կարող է կիրառվել միայն խորհրդային ռեժիմի ընդհանուր խստացման դեպքում, իսկ դա առայժմ բացառվում է ե՛ւ միջազգային քաղաքական իրադրության, ե՛ւ երկրի դեմոկրատացման կենսական անհրաժեշտության տեսանկյունից: Հայ ժողովրդի դեմ բռնություն գործադրելու հարցը շոշափում է երկրի լինել-չլինելու կամ նրա զարգացումը մի քանի տասնամյակով կասեցնելու խնդիրը: Այնպես որ, բռնության գինն այնքան թանկ է, որ խորհրդային ղեկավարությունը դժվար թե առայժմ ցանկանա Արցախի խնդրով վտանգի տակ դնել երկրի ճակատագիրը:

Ինչպես տեսնում ենք, Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման համար ներկայումս ստեղծվել են չափազանց նպաստավոր պայմաններ, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ դրանով շահագրգռված են ինչպես երկրի բոլոր դեմոկրատական ուժերը, այնպես էլ բոլոր ինքնավար ազգային կազմավորումները: Առաջինները այդ հարցը դիտում են որպես վերակառուցման փորձաքար, իսկ ազգային փոքրամասնությունները, այդ թվում՝ Հյուսիսային Կովկասի եւ Մերձվոլգյան շրջանների մահմեդական եւ թյուրքական ժողովուրդները՝ որպես սեփական նպատակների իրագործման օրինակ: Սակայն միայն նպաստավոր պայմանները դեռեւս բավարար չեն Արցախի խնդրի լուծման համար, քանի որ փորձը ցույց է տալիս, որ Մոսկվան իր զիջումներով առայժմ մեզ տվել է միայն այն, ինչ մենք ինքներս ենք նվաճել, եւ այսուհետեւ էլ կտա միայն այն, ինչ մենք ինքներս կարող ենք նվաճել:

Ուրեմն անհրաժեշտ է ձեռնարկել նոր քաղաքական գործողություններ, որոնք կարող են առաջիկայում արմատական բեկում մտցնել Արցախի հարցի կարգավորման գործում: Պարզ է, որ պայքարի այն միջոցները՝ ցույցերը, միտինգները, երթերը, գործադուլները, հացադուլները եւ այլն, որոնք այնքան ազդեցիկ էին անցյալ տարի, արդեն զգալիորեն կորցրել են իրենց քաղաքական նշանակությունը, քանի որ այժմ նման իրադարձություններ տեղի են ունենում երկրի բոլոր կողմերում: Ուստի մեր պարտքն է հանդես գալ այնպիսի նոր նախաձեռնություններով, որոնք հնարավորություն տան հասնելու բաղձալի նպատակին:

Ակնհայտ է, որ այդ նոր նախաձեռնությունները պետք է ամփոփվեն խորհրդային Սահմանադրության եւ միջազգային իրավունքի այն նույն սահմաններում, որոնցում Արցախյան շարժումն ընթացել է մինչ օրս: Այդ իմաստով անհրաժեշտ է լիովին ձերբազատվել հարցերի զգացական, անիրապաշտ ընկալումից եւ նրանց նկատմամբ հանդես բերել սառը քաղաքական-պետական մոտեցում: Անժխտելի է, իհարկե, որ արցախյան խնդրի հիմքում ընկած է հայ ժողովրդի պատմական իրավունքի գաղափարը, եւ տվյալ առումով այն կազմում է Հայկական հարցի բաղկացուցիչ մասը: Սակայն գործնական քաղաքականության տեսակետից՝ այդ խնդրի ձուլումը պատմական Հայաստանի մյուս տարածքների նկատմամբ հայ ժողովրդի ունեցած նույնքան արդար պահանջների հետ՝ այսօր ոչ միայն չի կարող նպաստել հարցի լուծմանը, այլեւ ավելի եւս կբարդացնի այն:

Արցախահայության ինքնորոշման իրավունքի կենսագործման փաստն արձանագրելով՝ Շարժումը կարողացավ ի դերեւ հանել ղարաբաղյան խնդիրը որպես ազգամիջյան եւ կրոնական առճակատում ներկայացնելու կամ Հայաստանի կողմից տարածքային պահանջ դնելու փորձերը: Արցախի ինքնորոշումը լիովին տեղադրվում է միջազգային իրավունքի սահմաններում եւ այդ առումով միանգամայն հասկանալի է ե՛ւ երկրի դեմոկրատական ուժերի, ե՛ւ միջազգային հասարակայնության համար: Ուստի ակնհայտ է, որ մեր հաջորդ քայլերը նույնպես պետք է համապատասխանեն այդ պահանջներին:

Այս առումով, տվյալ քաղաքական հանգամանքներում միանգամայն խոցելի է այն տեսակետը, որով առաջարկվում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջիկա նիստերից մեկում Արցախը հայտարարել Հայաստանի անբաժան մասը, քանի որ դա արդեն կարող է ներկայացվել իբրեւ միջազգային իրավունքի կոպիտ խախտում եւ հաստատել Հայաստանի տարածքային նկրտումները Ադրբեջանի նկատմամբ: Քաղաքական տեսակետից նման որոշման կայացումը կլիներ անուղղելի սխալ, քանի որ դրանով կասկածի տակ կդրվեր նաեւ արցախահայության ինքնորոշման փաստի իրավացիությունը:

Միջազգային իրավունքի պահանջները եւ հասարակական կարծիքը բավարարելու տեսակետից, սակայն, կա Արցախի հարցի լուծման մի ավելի նուրբ եւ անխոցելի ճանապարհ: Ո՞րն է դրա էությունը.

— Իմհնորոշված, անկախ Արցախի իմհնավար մարզը եւ Հայաստանի Հանրապետությունը, որպես Խորհրդային պետական կառուցվածքի երկու իմհնուույն կազմավորումներ, պայմանագիր են կնքում իրար հետ, եւ այդ երկու կազմավորումները հայտարարում են միացյալ հանրապետություն:

Նման լուծումը թեեւ ըստ էության չի տարբերվում նախորդ առաջարկից, սակայն, ինչպես նշվեց, անխոցելի է միջազգային իրավունքի տեսակետից: Արցախի եւ Հայաստանի իշխանությունների այդ համատեղ հայտարարությանը պետք է հետեւեն, անշուշտ, վերամիավորումն իրագործելու ուղղությամբ կատարվող գործնական քայլեր, որոնցից կարեւորագույնն է Հայաստանի Գերագույն խորհրդի դեպուտատների ընտրությունը Արցախի ընտրական տեղամասերից: Ահա արամ են այն գլխավոր հաղաքական խնդիրները, որոնց իրականացմանը պետք է ուղղվեն մեր բոլոր առաջիկա գործողությունները: Այս խնդիրներն իրագործելու դեպքում կենտրոնական իշխանությունները, հայտնվելով շատ ավելի անելանելի վիճակի առջեւ, ստիպված պետք է լինեն վերջիվերջո հաշտվելու Արցախի եւ Հայաստանի փաստացի վերամիավորման մտքի հետ:

ՀՅԱՆԱ, 12/13.11.89: Բնագիր: Մեքենագիր:

ԱՐՄԱՏԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ[1]

(4 դեկտեմբերի, 1989 թ.)

Ցպետք է, իհարկե, այն պատրաստն ունենալ, որ դեմոկրատիան ի վիճակի է լուծելու ժողովուրդների շահերը շոշափող բոլոր հարցերը, բանի որ ակնհայտ է, որ նույնիսկ ամենադեմոկրատական երկրներում, ինչպես Մեծ Բրիտանիայում եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ոտնահարվում են իրանդացիների եւ սեւամորթների իրավունքները: Սակայն մյուս կողմից չպետք է անտեսել նաեւ այն հայտնի միտքը, որ թեեւ դեմոկրատիան էլ մի բան չէ, բայց մարդկությունը դեռեւս դրանից լավ բան չի ստեղծել:

Մասնավորապես հայ ժողովրդի պատմությունը նկատի ունենալով՝ վերջին 70 տարիների նրա բոլոր դժբախտությունների պատճառը պետք է որոնել դեմոկրատիայի բացակայության մեջ:

Դեմոկրատիայի առկայության դեպքում Հայաստանի անկախ հանրապետությունը չէր ծվատվի Ռուսաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ:

Դեմոկրատիայի առկայության դեպքում հնարավոր չէր լինի իրագործել հայկական գյուղի կոլեկտիվացման հրեշավոր ծրագիրը, որի կործանարար հետեւանքները դեռ մինչեւ օրս ծանրացած են մեր ժողովրդի ուսերին:

[1] *Ելույթ Հայոց Գերագույն խորհրդի նստաշրջանում 1989 թ. դեկտեմբերի 4-ին, այս վերնագրով տարածվել է որպես թռուցիկ:*

Դեմոկրատիայի առկայության դեպքում կբացառվեին ստալինյան բռնապետության սանձազերծած զանգվածային ոճրագործություններն ու անմարդկային հալածանքները:

Դեմոկրատիայի առկայության դեպքում աներեւակայելի կլիներ կոմունիզմի գաղափարակիրների լուսապսակով զարդարված բրեժնեյան մաֆիայի՝ սուտլվների, ռոմանովների, ալիևների, ռաշիդովների, գրոմիկոների, դեմիրեյանների գործունեությունը:

Դեմոկրատիայի առկայության դեպքում դժվար թե հանդուրժելի լիներ գաղութային բռնապետության այն անավոր լուծը, որ փաթաթված է Հայաստանի վզին:

Եւ վերջապես, դեմոկրատիայի առկայության դեպքում բացառված կլինեին այսպես կոչված «վերակառուցման» չատագովների ձեռնարկած անաբեկչական գործողությունները հայ ժողովրդի նկատմամբ եւ նրա իրավունքների լկտի ոտնահարումը:

Ահա սրանք են այն իրողությունները, որոնք ակնհայտ են դարձնում Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումների անցկացման անհրաժեշտությունը:

Այսօր միայն դեմոկրատիան է, որ ի վիճակի է ժողովրդական զանգվածների աճողի բաղաքական ակտիվությունը մղելու դեպի ստեղծագործ, շինարար աշխատանքը, դեպի մեր հասարակության իրական վերակառուցումը, դեպի Հայաստանի բայբայված անտեսության վերականգնումը, դեպի արգահատելի բարեւի մարումը եւ բարոյական սկզբունքների հաստատումը:

Այսօր միայն դեմոկրատիան է, որ կարող է հայ ժողովրդի համար կայուն երաշխիքներ ապահովել կենտրոնական իշխանությունների կամայականություններից եւ երկրի բաղաքական անցողիկ ելեւէջներից:

Այսօր միայն դեմոկրատիան է, որ մեր ժողովրդի հարստահարված զանգվածներին կարող է ազատել կուսակցական-պետական բյուրոկրատիայի մսաճաճույճներից ու ոտնձգություններից:

Այս ամենով հանդերձ, արմատական դեմոկրատական վերափոխումների անցկացումն այսօր վճռորոշ նշանակություն ունի նաեւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման խնդրի լուծման գործնական տեսակետից:

Միայն եւ միայն դեմոկրատական նախաձեռնությունների իրականացմամբ է, որ ադրբեջանական կողմի բռնության գործոնին եւ կենտրոնական իշխանությունների անաբեկչական գործողություններին մենք կարող ենք հակադրել հայկական գործոնը: Ջարաչար սխալվում են նրանք, ովքեր կարծում են, որ մենք կարող ենք անել այն, ինչ անում են ադրբեջանական իշխանություններից խրախուսվող մոլեռանդ տարրերը: Հայ ժողովուրդն ընդունակ չէ կոտորելու անզեն մարդկանց՝ կանանց, ծերերի ու երեխաների, եւ փառք Աստծո, որ այդպես է, թեեւ միաժամանակ նա ընդունակ է անսահման վճռականության ու սխրանքի՝ իմնապաշտպանության սրբազան գործում:

Միայն ու միայն նոր դեմոկրատական նախաձեռնությունների իրականացմամբ է, որ մենք կարող ենք կրկին դաշնակիցներ ձեռք բերել՝ հանձինս Խորհրդային Միության դեմոկրատական ուժերի եւ միջազգային հասարակական կարծիքի, որոնց համակրանքը մենք որոշ չափով կորցրել ենք անցյալ տարվա այս օրերի համեմատ:

Միայն ու միայն նոր դեմոկրատական նախաձեռնությունների իրականացմամբ է, որ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման հոչակագիրը մենք թղթից կարող ենք վերածել գործի, քանի որ դրանով մենք նոր շարժման մեջ կդնենք հայկական գործոնը, որն առողջ ցնցումների նույնպիսի շղթա կստեղծի ողջ երկրում, ինչպես այն ստեղծեց անցյալ տարի:

Եւ վերջապես, որ ամենակարեւորն է, միայն ու միայն նոր դեմոկրատական նախաձեռնությունների իրականացմամբ է, որ մենք կարող ենք ապահովել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի բնակչության կյանքի անվտանգությունը, քանի որ այդ դեպքում հայ ժողովրդի դեմ ձեռնարկվող ցանկացած բռնություն երկրի դեմոկրատական ուժերի եւ միջազգային հասարակական կարծիքի կողմից կդիտվի որպես բռնություն դեմոկրատիայի նկատմամբ:

Որո՞նք են դեմոկրատական այդ նոր նախաձեռնությունները:

Հայաստանը պետք է դառնա Խորհրդային Միության առաջին հանրապետությունը, որտեղ պետք է իշխեն համամարդկային արժեքների, ազգերի իմնորոշման, մարդու իրավունքների եւ սոցիալական արդարության սկզբունքները:

Հայաստանը պետք է դառնա Խորհրդային Միության առաջին հանրապետությունը, որտեղ պետք է վերացվի կոմունիստական կուսակցության ապարատի մենիշխանությունը, եւ հաստատվի բազմակուսակցական համակարգ: Կրկնում եմ՝ կոմունիստական կուսակցության ապարատի եւ ոչ թե կուսակցության, քանի որ իրականում 70 տարի շարունակ իշխել է ոչ թե կուսակցությունը, այլ նրա բոնապետական ապարատը, եւ շարային կուսակցականների հսկայական բանակը նույնման իրավազուրկ է եղել, որոնք անկուսակցականները:

Հայաստանը պետք է դառնա Խորհրդային Միության առաջին հանրապետությունը, որտեղ պետք է հաստատվի խոսքի, մամուլի, խղճի լիակատար ազատություն:

Հայաստանը պետք է դառնա Խորհրդային Միության առաջին հանրապետությունը, որի նախագահը պետք է ընտրվի համաժողովրդական ուղղակի քվեարկությամբ:

Միայն ու միայն տվյալ խնդիրների իրականացումից է կախված Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման հարցի լուծումը, եւ սերունդները մեզ չեն ների, եթե մենք այսօր կորցնենք այս բախտորոշ հնարավորությունը: Լեռնային Ղարաբաղն ինքնորոշման իր իրավունքի կենսագործմամբ ստեղծել է մի ռեալություն, որի հետ չեն կարող հաշվի չնստել կենտրոնական իշխանություններ. Հայաստանը եւս դեմոկրատական այս նախաձեռնությունների իրագործմամբ պետք է ստեղծի ռեալություն, որի հետ նույնպես չեն կարող հաշվի չնստել կենտրոնական իշխանությունները: Անհրաժեշտ է թանկ գնահատել ժամանակը, որովհետեւ ազատ գործելու այն առիթը, որը մեզ տրված է այսօր, վաղը գուցե այլեւս չլինի, եւ այն, ինչ մենք կարող ենք նվաճել այսօր, վաղը թերեւս չկարողանանք նվաճել: Ուստի հարկ է փութալ, թերեւս առանց ավելորդ հապճեպության, առավելագույնս օգտագործելու համար ստեղծված առիթը, քանի որ պատմական փորձը ցույց է տալիս, որ այն, ինչ դեմոկրատիայի բնագավառում նվաճում են ժողովուրդները, որոնք էլ հետագայում հաղթական հանգամանքները փոխվեն, այնուամենայնիվ դա մնում է նրանց անկորուստ սեփականությունը. որոնք էլ բռնապետությունը չհանգ արմատախիլ անել խորչորվյան շրջանում դեմոկրատիայի ձեռ բերած նվաճումները, դա մինչեւ վերջ չհաջողվեց նրան: Ժամանակը թանկ պետք է գնահատել

նաեւ մի այլ նկատառումով. եթե մենք այսօր հանդես չբերենք դեմոկրատական հիշյալ նախաձեռնությունները, ապա տատանվորեն վաղը դրանք կիրականացնեն Խորհրդային Միության մյուս հանրապետությունները, եւ մենք կկորցնենք հաղթական գործոնի կարեւոր պահը:

Նկատի ունենալով այս ամենը՝ Հայոց համազգային շարժման ղեկավար խորհուրդը պատրաստել է Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումների անցկացմանը նվիրված հռչակագրի նախագիծը, որն այժմ ներկայացնում եմ ձեր ուշադրությանը:

ՀՌՉԱԿԱԳԻՐ[2]

Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումներ անցկացնելու մասին

- Նկատի ունենալով, որ երկրում ընթացող հակասական պրոցեսները՝ մի կողմից խորհրդային կարգերի դեմոկրատացմանն ուղղված միջոցառումները եւ մյուս կողմից՝ վարչահրամայական մեթոդներին հավատարիմ ուժերի ձեռնարկած հետադիմական քայլերը, ստեղծել են մի այնպիսի բարդ իրավիճակ, որ հղի է լայնամասշտաբ բռնություններով սանձազերծման վտանգով,
- ելնելով այն իրողությունից, որ վերջին երկու տարիների ընթացքում հայ ժողովուրդը կենտրոնական իշխանությունների թողտվությամբ բազմիցս ենթարկվել է ադրբեջանական իշխանությունների եւ խորհրդային բանակի կողմից ձեռնարկված ահաբեկչական գործողությունների, որոնց նպատակն է բռնի ուժով ոտնա-

[2] *Հոկտեմբերյան խորհրդի քննարկմանը ներկայացված՝ հոկտեմբերի 22-ի այս հռչակագիրը քննարկումից երկու շաբաթ հետո հրապարակեց «Երեկոյան Երեւան» թերթը (20 դեկտեմբեր, 1989)՝ ընդառաջելով 12 պատգամավորների անունով տատցված միջնորդություններին, եւ, հավանաբար, դրանում որոշ փոփոխություններ կատարելու նախապատրաստմամբ: Մամուլում՝ թերթային տարբերակում հանված է հոկտեմբերի 1-ին կետն ամբողջությամբ եւ մեզմացված են որոշ որակումներ: Ամբողջական տեքստով, Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի հետ միասին, հրապարակվել է հետագայում (տե՛ս Վ. Դավթյան, Առաջնի եւ իրականի սահմանագծին, Լեւոն Տեր-Պետրոսյան. քաղաքացին եւ քաղաքագետը, Եր. 1996, էջ 102–106):*

ճարել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իմքնորոշման իրավունքը,

- եւ համոզվելով, որ հայ ժողովրդի բնականոն զարգացումն ու նրա ազգային իդեալների իրականացումն ապահովելու համար պահանջվում են կայուն երաշխիքներ, որոնց առկայության դեպքում նրա բախտն այլեւս կախված չէր լինի անցողիկ բաղաքական հանգամանքներից ու հակամարտ ուժերի տեղաբաշխումից՝

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը հաստատում է հանրապետությունում համամարդկային արժեքների, ազգերի իմքնորոշման, մարդու իրավունքների եւ սոցիալական արդարության սկզբունքների վրա հիմնված արմատական դեմոկրատական վերափոխումների անցկացման անհրաժեշտությունը՝ այդ ուղղությամբ որպես առաջին քայլ հռչակելով հետեւյալ կարեւորագույն միջոցառումների իրականացումը.

1. Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխման հիման վրա, վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն:

2. Հանրապետության Սահմանադրությունից հանվում է կոմունիստական կուսակցության դեկավար դերին վերաբերող 6-րդ հոդվածը: Հայաստանում թույլատրվում է տարբեր հասարակական կազմակերպությունների, այդ թվում նաեւ բաղաքական կուսակցությունների ազատ գործունեությունը:

3. Հանրապետությունում հաստատվում է խոսքի, մամուլի, խղճի լիակատար ազատություն, արվեստի, գրականության եւ հասարակական գիտությունների բնագավառում վերացվում է գրաքննությունը:

4. Բոլոր նախկին բաղբանտարկյալներին եւ բաղաքական նկատառումներով հալածված անձանց շնորհվում է լիակատար արդարացում՝ հատուցելով նրանց կրած վնասները:

5. Հանրապետության բնտրական օրենքում նախատեսվում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի եւ շրջանային ու բաղաքային խորհուրդների նախագահների ուղղակի համաժողովրդական ընտրություն, բացառվում է այդ եւ պետական-կուսակցական այլ պաշտոնների համատեղումը:

6. Հայկական ԽՍՀ տարածքում գործում են ԽՍՀՄ այն օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, որոնք վավերացվում են ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից:

7. Հայկական ԽՍՀ-ում վերացվում է կենտրոնից կուսակցական եւ պետական պաշտոնյաներ նշանակելու գաղութատիրական պրակտիկան:

ՀՅԱՍԱ, 12/04.12.89: Բնագիր: Մեքենագիր:

ՄՈՍԿՎԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ԶՈՒՆԻ

(28 հունվարի, 1990 թ.)

1990 թվականի հունվարի 13-ին հայ ժողովրդի դեմ գործվեց մի նոր անօրինական ոճրագործություն: Այս անգամ ծրագրված ցեղասպանության գոհ դարձավ Բաքվի հայության վերջին հատվածը: Նորից վայրագություններ, տների հրկիզումներ, հիսունից ավելի մարդկային գոհեր, հարյուրավոր վիրավորներ, հազարավոր փախստականներ: Մի խոսքով, Ադրբեջանի ղեկավարության եւ կենտրոնական իշխանության մեղսակցությամբ կրկնվեց սումգայիթյան եղեռնագործությունը, սակայն շատ ավելի լայն ընդգրկումով: Եթե դեռեւս կարելի էր համաձայնել սումգայիթյան նախնիրը անմախադեպությամբ ու անակնկալությամբ բացատրելու փորձերին, ապա Բաքվի դեպքերը վերջնականապես ի չիր դարձրին Խորհրդային Միության հայ բաղաքացիների կյանքի ապահովության երաշխիքների գոյության պատրանքը:

Բացի Բաքվից, օրեր շարունակ ադրբեջանական հրոսակների կատաղի հարձակումների թիրախ դարձան Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի եւ Գեղաշենի ենթաշրջանի հայկական գյուղերը: Զնայած տեղի բնակչության ժամանակին հնչեցրած անազանգերին եւ Հայաստանի հասարակայնության բարձրացրած պահանջներին, այս անգամ եւս խորհրդային «փառապանծ» բանակը հանցավոր հապաղումով ժամանեց դեպքերի վայր, այսպիսով հնարավորություն տալով մոլեռանդ խաժամուժին ի կատար ածելու Գանձակ հայաշխարհն իր բնիկ ազգաբնակչությունից մաքրազերծելու նախանցյալ տարվա նոյեմբեր ամսին սկսված գործը: Սակայն Հյուսիսային Արցախի աշխարհազորայինների եւ Հայաստանից ու Լեռնային Ղարաբաղից ժամանած ինք-

նապաշտպանական ջոկատների հերոսական գործողությունների շնորհիվ հակառակորդը մատնվեց ջախջախիչ պարտության՝ տալով տասնյակ զոհեր ու հարյուրավոր վիրավորներ: Շաումյանի եւ Գետաշենի հայության կազմակերպված ինքնապաշտպանությունը եկավ ևս մեկ անգամ ապացուցելու, որ հայ ժողովուրդն իր ազգային իղձերին հասնելու համար պետք է ապավինի միայն սեփական ուժերին:

Հակահայկական մոլուցքի նոր ալիքի բարձրացումն Ադրբեջանում կենտրոնական իշխանությունները կրկին փորձում են բարդել հայ ժողովրդի վրա, մասնավորապես նկատի ունենալով Հայաստանի Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի վերջերս կայացրած իբրեւ թե «սադրիչ» որոշումները: Դրա վկայությունն են ԽՄԿԿ կենտկոմի հաղորդույթի անդամ Ն. Ն. Սլյունկովի կատարած հայտարարությունները մեզ հետ ունեցած հանդիպումների ընթացքում եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ս.թ. հունվարի 15-ի հրամանագիրը «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում եւ մի քանի այլ շրջաններում արտակարգ դրություն հայտարարելու մասին»: Միևնույն միանգամայն ակնհայտ է, որ Ադրբեջանում հայ բնակչության դեմ սանձազերծված նոր բռնությունները բնական հետեւանքն են Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման խնդրում Կենտրոնի վարած այն անսկզբունքային եւ հակահրավական հաղաքականության, որի պսակը հանդիսացավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 28-ի խայտառակ եւ իսկապես սադրիչ որոշումը Լեռնային Ղարաբաղի իրավիճակի կարգավորման վերաբերյալ:

Ակնհայտ ոտնահարելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական իրավունքը, հանդուրժելով եւ նույնիսկ խրախուսելով ադրբեջանական կողմի հանցավոր գործողությունները՝ սումգայիթյան եղեռնագործությունը, հայերի զանգվածային տեղահանությունները, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի տեւական շրջափակումները, խորհրդա-իրանական սահմանների անհնախադեպ խախտումները՝ կենտրոնական իշխանություններն ադրբեջանցիների գիտակցության մեջ ամրապնդեցին բացարձակ անպատժելիության գաղափարը, որը եւ դարձավ վերջին արյունալի իրադարձությունների իրական ազդակը: Եթե փորձ է կատարվում ողարկել այս ակնհայտ ճշմարտությունը, ապա դա նորից արվում է Մոսկվայի հանձնարարությամբ՝ ի վնաս հայ ժողովրդի:

ցավոր դիրքորոշումն արդարացնելու եւ հանրային կարծիքն ապակողմնորոշելու նպատակով: Ուստի վերջին երկու տարիների ընթացքում հայ ժողովրդի դեմ գործված հանցանքների համար հավասարապես պատասխանատու են ինչպես ադրբեջանական, այնպես էլ կենտրոնական իշխանությունները, որոնք անխուսափելիորեն պետք է կանգնեն պատմության դատաստանի առջեւ:

Բաքվում սումգայիթյան ցեղասպանության կրկնությունից հետո այլեւս անհնար է հայ ժողովրդին կերակրել դեմոկրատական վերափոխումների սին պատրանքներով կամ սահմանադրական պայմարի միջոցներով Արցախի խնդիրը լուծելու ծրագրերով, քանի որ երկու տարվա փորձը ցույց տվեց, որ Մոսկվան հաշվի է նստում միայն բիրտ ուժի հետ: Այլապես անհնար է բացատրել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշումը եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1990 թ. հունվարի 15-ի հրամանագիրը, որոնցով Լեռնային Ղարաբաղի եւ Հյուսիսային Արցախի հայության բախտը փաստորեն հանձնվեց նրա հարստահարողների՝ ադրբեջանական իշխանությունների խմաիաուիթի՝ ի չիք դարձնելով Արցախի վերաբերյալ նախկինում ընդունված որոշումների պարունակած նվազագույն դրական տարրերը:

Այս տեսակետից ամբարտավանության գագաթնակետ պետք է համարել մանավանդ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության վերջին հրամանագիրը, որով՝

ա) Ադրբեջանում գործված ոճիրների համար հավասար մեղադրանք է ներկայացվում ադրբեջանական եւ հայկական կողմերին,

բ) նորից, ինչպես Սումգայիթի դեպքում, հողարկվում է Բաքվում կատարված ցեղասպանությունը, դրանով փաստորեն պաշտպանության տակ վերցնելով նրա կազմակերպիչներին ու իրագործողներին,

գ) Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահության դիմումի հիման վրա, արտակարգ դրություն է հայտարարվում ոչ թե Բաքվում, որտեղ տեղի են ունեցել արյունալի իրադարձությունները, այլ Լեռնային Ղարաբաղում ու շրջակա վայրերում,

դ) նույն դիմումի հիման վրա, կոպտորեն խախտելով Հայաստանի սուվերեն իրավունքները, արտակարգ դրություն է հայտարար-

վում նաեւ ՀԽՍՀ Գորիսի շրջանում, որտեղ չի արձանագրվել օրինականության խախտման որեւէ դեպք,

ե) Հյուսիսային Արցախի եւ Լեռնային Ղարաբաղի հայությանը սպառնում է լիակատար զինաթափում, դրանով զրկելով նրան ինքնապաշտպանության հնարավորությունից,

զ) վտանգավոր շրջաններից հաղթաթղթերին ժամանակավորապես արտաբնակեցնելու իրավունքով պատրվակ է ստեղծվում Հյուսիսային Արցախի հայությանը տեղահանելու համար,

է) արգելվում են ՀԽՍՀ հաղթաթղթերի այցելությունները Հյուսիսային Արցախի ու Լեռնային Ղարաբաղի շրջաններ, որով մեր հայրենակիցները զրկվում են Հայաստանի նյութական, բարոյական ու զինական օգնությունից,

ը) եւ վերջապես, որ ամենաարտառոցն ու վտանգավորն է, արտակարգ դրություն է մտցվում առանց այդ միջոցառման իրավական կարգավիճակի առկայության, որով դուռ է բացվում ցանկացած կամայականության համար:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, այս հրամանագիրը ուղղված է միայն ու միայն հայ ժողովրդի դեմ, եւ բնականաբար, Հայաստանի Հանրապետությունը չի կարող հանդուրժել նրա կենսագործումը: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ անհրաժեշտ է անհապաղ վերսկսել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընդհատված նստաշրջանը՝ առնա իրադրության հաղթական գնահատականը տալու եւ դրանից բխող հրատապ միջոցառումներ մշակելու համար: Դա անհրաժեշտ է մանավանդ այն պատճառով, որ Միության կողմից իր հաղթաթղթերի կյանքի անվտանգության երաշխիքներ չապահովելու փաստից մեկնած՝ հայ ժողովուրդը հարկադրաբար եւ տարեայնորեն լծվել է ինքնապաշտպանության՝ միջազգային իրավունքով վերապահված սրբազան գործին, որի դեպքում բացառված պետք է լինի որեւէ ինքնագործունեություն եւ անիշխանություն: Հայ ժողովրդից այսօր պահանջվում են պետական մակարդակով իրականացվող գերնշգրիտ եւ սառը հաղթաթղթական քայլեր, որոնց մշակումը կարող է ապահովել միայն Հայաստանի սուվերեն հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանը:

Կենտրոնական իշխանությունների համար վերջապես պետք է պարզ դառնա այն իրողությունը, որ կատարվածից հետո հայ ժողովուրդն այլեւս չի հանդուրժի իր ազգային արժանապատվությունը ոտնահարող անբարոյական վերաբերմունքը եւ չի ների հարեւան հանրապետությունում իր հայրենակիցների նկատմամբ կատարված ոճագործությունները: Եթե նույնիսկ կատուկ միջոցառումների շնորհիվ հաջողվի հակողության տակ վերցնել Ադրբեջանում տիրող իրադրությունը, ապա միեւնույն է, Հայաստանը չի հանդարտվի, քանի դեռ Լեռնային Ղարաբաղը դուրս չի բերվել հայ ժողովրդի բնաջնջումը ողեգրած հանրապետության կազմից, եւ չի սկսվել նրա բաժանված տարածքների վերամիավորումը հոչակած պատմական որոշման իրականացումը: Մոսկվան այլընտրանք չունի եւ եթե չի ուզում խորհրդային դաշնության կազմում ունենալ հավերժ ըմբոստ մի հանրապետություն, պետք է վերջապես հաշտվի այս մտի հետ[1]:

Նկարատես տատանումներից հետո կենտրոնական իշխանությունները ս.թ. հունվարի 20-ին վճռեցին Ադրբեջանում դիմել կատուկ միջոցների՝ տիրապետելու համար հակողությունից դուրս եկած պայթյունալի իրադրությանը: Դա ձեռնարկվեց ոչ թե հանրապետության հայ բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով, ինչպես ներկայացվում է պաշտոնական տեղեկատվական միջոցների կողմից, այլ միայն այն բանից հետո, երբ լուրջ սպառնալիք ստեղծվեց խորհրդային իշխանության գոյության համար: Այս տեսակետից տեղի ունեցող իրադարձությունները պետք է գնահատել որպես Ադրբեջանական հանրապետության սուվերեն իրավունքների խախտում, որ հետագայում կարող է բացասաբար անդրադառնալ նաեւ խորհրդային Միության մյուս հանրապետությունների հակատագրի վրա:

Այսօր հարեւան հանրապետությունում թափվում է ոչ միայն բռնի ուժի դիմած ծայրահեղական տարրերի, այլեւ անմեղ մարդկանց արյունը, որ չի կարող չեզոքել հայ ժողովրդին: Առդարացիորեն պահանջելով իր հայրենակիցների կյանքի անվտանգության ապահովումը եւ Սումգայիթի ու Բաքվի ցեղասպանության հանցագործների արժանի հատուցումը՝ հայ ժողովուրդը նկատի ուներ ոչ թե խորհրդային բանակի իրա-

[1] *Ձեռագրում հոդվածն այստեղ ավարտվում է, շարունակությունը համանաբար ավելացվել է հրատարակումից անմիջապես առաջ, որի ձեռագիրը չի պահպանվել:*

կանխագրած լայնածավալ գործողությունները, այլ իրավական պետության համար անընդունելի քաղաքակիրթ միջոցների կիրառումը:

Չհերքելով համայնքներում Ադրբեջանի ժողովրդական ճակատի արկածախնդրական գործունեությունը, դատապարտելով հայերի եւ այդ հանրապետության այլ քաղաքացիների նկատմամբ սանձազերծված զանգվածային ոճիրները, այնուամենայնիվ, դեպքերի նման զարգացումը նախ եւ առաջ պետք է համարել Ադրբեջանի ղեկավարության եւ կենտրոնական իշխանությունների վարած արատավոր քաղաքականության ողբերգական հետեւանքը:

Բռնությունը, եթե այն թելադրված չէ ժողովրդի ինքնապաշտպանության շահերով կամ հենց բռնությունը կասեցնելու պահանջներով, դատապարտելի է բոլոր առումներով, անկախ այն բանից, թե ում կողմից է այն կիրառվում՝ պետությա՞ն, թե՞ քաղաքացիների: Դեմոկրատիան եւ բռնությունն անհամատեղելի են, եւ այս տեսակետից Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունների գնահատականը միանշանակ է:

«Հայք», 28 հունվարի, 1990 թ.:
ՀՅԱԱԱ, 28/16.01.90: Բնագիր: Ինքնագիր:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՀԱՅՔ» ԹԵՐԹԻՆ
(4 մարտի, 1990 թ.)

– Անձամբ ձեզ ի՞նչ տվեց Ղարաբաղյան շարժումը:

– Մոտ, նվիրված, զոհողության պատրաստ ընկերներ, որոնց միավորում է հանրային շահի գիտակցությունը եւ պարտքի ու պատասխանատվության զգացումը: Ընդ որում, ընկերներ ասելով, ես նկատի ունեմ ոչ միայն «Ղարաբաղ» կոմիտեի կամ ՀՀՇ-ի վարչության անդամներին, այլեւ Շարժման հարյուրավոր այն մարտիկներին, որոնց հետ ինձ բախտ է վիճակվել շփվել:

– Ի՞նչ կորցրիք Ղարաբաղյան շարժման մեջ:

– Եթե ասեմ՝ հանգիստ, առողջություն կամ հոգեկան անդորր, ապա թերեւս ոչինչ ասած չլինեմ, քանի որ այդ շնորհներից զրկվել է մեր ողջ ժողովուրդը: Ցավում եմ, որ կտրվել եմ (հուսամ՝ ժամանակավորապես) իմ մասնագիտական զբաղմունքից՝ հայ-ասորական հարաբերությունների հետազոտման աշխատանքից, որն այնքա՜ն ստեղծագործական հաճույք է ինձ պարգեւել:

– Ի՞նչ տվեց երկու տարվա ազատագրական պայքարը մեր ժողովրդին:

– Հոգեբանական առումով՝ վստահություն իր ուժերի նկատմամբ, ազատագրում անցյալի նախապաշարումներից եւ ստրկամտությունից, սեփական բախտը կռելու վճռականություն: Բարոյական առումով՝ անհանդուրժողականություն ստի, կեղծիքի անարդարության նկատմամբ: Քաղաքական առումով՝ նկատելի կշիռ միջազգային հասարակական կարծիքի առջեւ: Եւ վերջապես, պատմական առումով՝ միատարր հայրենիք, անհեռանկար գաղութներից ներգաղթած ու ազգային կյանքի մեջ

ներգրավված հարյուր հազարավոր հայրենակիցներ, Հայաստանի Հանրապետության եւ Արցախի վերամիավորման լուրջ հնարավորություն:

– Որն է միասնության Ձեր ըմբռնումը:

– Միասնության գաղափարը մեր ժողովրդին հուզող ամենացավոտ խնդիրն է թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում: Շատ-շատերին անկեղծորեն անհանգստացնում է այն հանգամանքը, որ երկու տարվա ընթացքում Հայաստանում առաջացել են բազմաթիվ հասարակական-քաղաքական կազմակերպություններ, որոնք միաբանության հրամայականին ենթարկվելու փոխարեն զբաղված են անիմաստ գաղափարական վեճերով ու փոխադարձ կշտամբանքներով: Շատ-շատերին էլ անկեղծորեն թվում է, որ բավական է այդ կազմակերպությունները միաձուլվեն կամ համատեղ հռչակագրեր ստորագրեն, ապա միասնությունն ապահովված կլինի: Միասնությունն իդեալ է, որին ձգտում են բոլոր ժողովուրդները, բայց ոչ մեկին դեռեւս չի հաջողվել հասնել: Առանց արձանագրելու մարդկային հասարակությանը հատուկ այս իրողությունը, անհնար է բացահայտել նրա էությունը: Իմ կարծիքով՝ միասնության միակ չափանիշը կարող է լինել հասարակական շահի գիտակցությունը: Մինչեւ հասարակությունը չկարողանա պարզել այդ չափանիշը, միասնության նրա ըմբռնումը կմնա անիրականանալի: Երբ գերադասվում են կուսակցական, դասակարգային եւ անձնական շահերը կամ երբ տիրապետում է քաղքենիական մտածողությունը, ապա միասնության մասին ավելորդ է խոսել:

– Ազգայի՞ն, թե՞ դեմոկրատական է մեր Շարժումը:

– Ինձ թվում է, սխալ կլինի մեկ բառով բնորոշել մեր Շարժումը: Ես կնախընտրեի հետեւյալ բանաձեւը. մեր Շարժումը բովանդակությամբ ազգային է, ձեւով՝ դեմոկրատական: Ընդ որում, այս հասկացությունները տվյալ դեպքում գտնվում են ոչ թե ստորադասական կապի, այլ փիլիսոփայական փոխկապակցության մեջ, քանի որ նրանցից յուրաքանչյուրն ունի ինքնին արժեք: Առանց դեմոկրատիայի ազգայինը կվերածվի ազգայնականի, որն անհարիր է մեր ժողովրդի նկարագրին, իսկ առանց ազգայինի՝ դեմոկրատիան կվերածվի կոսմոպոլիտիզմի, որից ավելի մեծ չարիք դժվար է պատկերացնել մեր ժողովրդի համար:

– Ձեր դերը անկախ Հայաստանի կյանքում:

– Ես չեմ կարող պատասխանել այս հարցին՝ մինչեւ չասեմ, թե ինչպես եմ գնահատում իմ եւ ընկերներիս դերը Ղարաբաղյան շարժման մեջ: Մեզ, ինչպես մեր ժողովրդի հարյուր հազարավոր զավակներին, Շարժման մեջ է ներքաշել զինվորի պարտքի զգացումը: Եթե բախտի քմահաճույքով մենք հայտնվել ենք պայքարի առաջին շարքերում, ապա դա չի նշանակում, որ մենք անփոխարինելի ենք: Վեց ամիս «Ղարաբաղ» կոմիտեի անդամները բանտարկված էին, բայց Շարժումը դրանից ոչ միայն չմարեց, այլեւ ավելի լայն ծավալ ստացավ: Ամենաուրախալին հենց այն է, որ Շարժումն այնքան խորն ու համաժողովրդական է, որ կախված չէ անհատներից: Ես բոլորովին չեմ բացառում, որ վաղը, մյուս օրը Շարժման գլուխ հայտնվեն նոր, ավելի ունակ գործիչներ, քան մենք: Բայց դա մեզ չի կարող ետ կանգնեցնել զինվորի մեր պարտքը կատարելու գիտակցությունից: Ահա նման դեր էլ ես պատկերացնում եմ անկախության պայմաններում: Ով խառնվում է քաղաքականությանը՝ նա պետք է պատրաստ լինի ե՛ւ օրհնանք, ե՛ւ անեծք լսելու: Ով պարտավորվում է ազգին ծառայել՝ նա ազգից պարգեւներ ակնկալելու կամ նրանից խռովելու իրավունք չունի:

«Հայք», 4 մարտի, 1990 թ.:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՅԱՌԱՋ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻՆ[1]

(21 մարտի, 1990 թ.)

– Թէեւ «Յառաջ»-ի մէջ գրեցինք, բայց, աւելորդ չէ հաւանաբար, որ մեզի պարզէիք Ձեր այցելութեան բուն նպատակը:

– Ներկայ այցելութեան առիթը ֆրանսիական ընկերվարական կուսակցութեան հրաւէրն էր՝ մասնակցելու Ռէննի համագումարին, որը տեղի ունեցաւ Մարտի 15–19-ին: Հայոց համազգային շարժման վարչութեան որոշմամբ մեր պատուիրակութեան կազմում ընդգրկուեցինք ես եւ Բարգէն Աւարճեանը: Գոհունակութեամբ պէտք է նշեմ, որ համագումարում պատկառելի պատուիրակութեամբ ներկայացուած էր նաեւ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը:

Ես չեմ ուզում անդրադառնալ համագումարում տիրող իրօք հետաքրքրական մթնոլորտին կամ նրա բացառիկ արդիւնքներին, քանի որ դրանք յայտնի պէտք է լինեն «Յառաջ»-ի ընթերցողներին: Կը ցանկանայի կանգ առնել միայն համագումարի ընթացքում մեր ունեցած մի քանի կարեւոր հանդիպումների վրայ:

---

[1] *Հերթը ծանուցում է. «Յառաջ»-ի խմբագրութեան երթուղի հարցազրոյցն է, զոր կ՛ունենար «Ղարաբաղ» կոմիտէի անդամ, ՀՀՇ-ի վարչական անդամ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ: Մեր առաջին հանդիպումը տեղի ունեցած էր Երեւան, 1988 նոյեմբեր 16-ին, ու իսկ ամիս մը առաջ «Ղարաբաղ» կոմիտէի անդամներու Ձերբակալութենէն («Յառաջ», 1988, նոյ. 24, 25): Ապա՝ 1989 Յուլիսին, երբ Լեւոն Տէր-Պետրոսեան Փարիզ կը գտնուէր առողջական պատճառներով («Յառաջ», 1989, Յուլիս 8/9 եւ 11): Այս անգամ, կրկին Փարիզ է որ կ՛ունենանք մեր հարցազրոյցը, Հայաստան վերադարձի իր նախօրեակին: Հարցազրոյցը թողնում ենք դասական ուղղագրութեամբ, ինչպես տպագրված է «Յառաջ» թերթում եւ արտատպված «Հայքս»-ում:*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՅԱՌԱՋ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻՆ[1]

(21 մարտի, 1990 թ.)

– Թէեւ «Յառաջ»-ի մէջ գրեցինք, բայց, աւելորդ չէ հաւանաբար, որ մեզի պարզէիք Ձեր այցելութեան բուն նպատակը:

– Ներկայ այցելութեան առիթը ֆրանսիական ընկերվարական կուսակցութեան հրաւէրն էր՝ մասնակցելու Ռէննի համագումարին, որը տեղի ունեցաւ Մարտի 15–19-ին: Հայոց համազգային շարժման վարչութեան որոշմամբ մեր պատուիրակութեան կազմում ընդգրկուեցինք ես եւ Բարգէն Արարքցեանը: Գոհունակութեամբ պէտք է նշեմ, որ համագումարում պատկառելի պատուիրակութեամբ ներկայացուած էր նաեւ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը:

Ես չեմ ուզում անդրադառնալ համագումարում տիրող խիստ հետաքրքրական մթնոլորտին կամ նրա բացառիկ արդիւնքներին, քանի որ դրանք յայտնի պէտք է լինեն «Յառաջ»-ի ընթերցողներին: Կը ցանկանայի կանգ առնել միայն համագումարի ընթացքում մեր ունեցած մի քանի կարեւոր հանդիպումների վրայ:

---

[1] *Թերթը ծանուցում է. «Յառաջ»-ի խմբագրութեան երրորդ հարցազրոյցն է, զոր կ'ունենանք «Ղարաբաղ» կոմիտէի անդամ, ՀՀՇ-ի վարչական անդամ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ: Մեր առաջին հանդիպումը տեղի ունեցած էր Երեւան, 1988 նոյեմբեր 16-ին, ոչ իսկ ամիս մը առաջ «Ղարաբաղ» կոմիտէի անդամներու ձերբակալութենէն («Յառաջ», 1988, նոյ. 24, 25): Ապա՝ 1989 Յուլիսին, երբ Լեւոն Տէր-Պետրոսեան Փարիզ կը գտնուէր առողջական պատճառներով («Յառաջ», 1989, Յուլիս 8/9 եւ 11): Այս անգամ, կրկին Փարիզ է որ կ'ունենանք մեր հարցազրոյցը, Հայաստան վերադարձի իր նախօրեակին: Հարցազրույցը թողնում ենք դասական ուղղագրութեամբ, ինչպես տպագրված է «Յառաջ» թերթում եւ արտատպված «Հայք»-ում:*

Հետաքրքրական էր, օրինակ, հանդիպումը եւրոպական խորհուրդի նախագահ Տիկին Քաթրին Լալումիէի հետ: Խօսակցութիւնն ընթացաւ հիմնականում Արեւմուտքի եւ խորհրդային Միութեան հաղաքական յարաբերութիւնների շուրջ: Տիկին Լալումիէը մասնաւորապէս լուրջ ուշադրութիւն դարձրեց մեր հետեւեալ հարցապնդման վրայ. Արեւմուտքի անվերապահ աջակցութիւնը Կորբաչովին՝ խորհ. Միութեան կայունացմանը նպաստելու նպատակով, կարող է յետագայում եւրոպային կանգնեցնել շատ աւելի վտանգաւոր կացութեան առջեւ, եթէ շարունակուեն անտեսուել Կորբաչովի հաղաքականութեան բացասական կողմերը եւ հաշուի չառնուեն խորհրդային երկրում ժողովրդավարական ճիմի վրայ առաջացած նոր հաղաքական ուժերը:

Կարեւոր էր նաեւ սոցիալիստական ինքնեռացիոնալի գլխաւոր քարտուղար Լուիս Այալայի հետ մեր ունեցած հանդիպումը, որի ընթացքում քննարկուեցին Հայոց հարցային շարժման հնարաւորութիւնները՝ միջազգային այդ կազմակերպութեանը անդամակցելու ուղղութեամբ: Մեր զուգակիցը ծանօթացաւ ՀՀՇ-ի ծրագրին եւ դրական շահագրգռութիւն ցուցաբերեց արծարծուած հարցի առընչութեամբ, մասնաւորապէս, որպէս առաջին քայլ, առաջարկելով մասնակցել ընկերվարական Միջազգայնականի խորհրդի յաջորդիկայ նիստին, որը կայանալու է Մայիսի 22-ին, Փարիզում: Նոյն նիւթի շուրջ գործնական մի խօսակցութիւն տեղի ունեցաւ նաեւ ֆրանսիական ընկերվարական կուսակցութեան քարտուղար Փիէռ Կիտոնիի հետ:

– Դուք եղաք նաեւ Սթրազպուրկ: Ինչ հանդիպումներ ունեցաք:

– Ռէնեի համագումարից առաջ, Մարտ 13–14-ին, Սոլիտարիթէ Ֆրանքօ-Արմէնիէն կազմակերպութեան նախաձեռնութեամբ, մենք հնարաւորութիւն ունեցանք լինելու Սթրազպուրկում եւ հանդիպելու եւրոպական խորհրդարանի մի շարք կարեւոր քաղաքական անձնաւորութիւնների հետ: Կ'առանձնացնէի մանաւանդ մեր ունեցած հանդիպումը ֆրանսիական քաղաքականութեան յայտնի դէմքերից մէկի՝ Քլոտ Շէսոնի հետ, որը տեսակցութեան ավարտին խոստացավ բառացիօրէն հետեւեալը. ա. Եւրոպական խորհրդարանի ֆրանսիացի ընկերվարականների խումբը մշտապէս իր ուշադրութեան կենտրոնում պիտի է պահի Հայաստանի իրադարձութիւնները՝ ապահովելով նրանց լայն լուսաբանու-

թիւնը մամուլի էջերում, բ. Հայաստանին վերաբերող խնդիրները պիտի չօշափուեն խորհրդային քաղաքական գործիչների հետ տեղի ունեցող բոլոր հանդիպումներում, գ. Արեւմուտքը պիտի է հետեւողականօրէն պահանջի Արցախի հայութեան իմքնորոշման իրաւունքի կենսագործումը:

Տիկին Սիմոնն Վէյլի եւ Պ. Վանտըմելպուրի հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում մասնաւորապէս քննարկուեց եւրոպական խորհրդարանի պատուիրակութեան Հայաստան այցելելու հարցը: Ի գիտութիւն «Յառաջ»-ի ընթերցողների, կարող եմ հաղորդել, որ հարցն արդէն կարգաւորուած է, եւ պատուիրակութիւնն օրերս կը ժամանի Երեւան: Պատուիրակութեան կազմում են՝ խորհրդարանի անդամներ Սիմոնն Վէյլը (ամուսնու ընկերակցութեամբ), Պ. Վանտըմելպուրը եւ Տիկին Նիխոլ Փէրին, որոնց ուղեկցելու են Սոլիտարիթէի նախագահ Քրիսթիան Տէր-Ստեփանեանը եւ Փրոֆ. Ժան-Փիէռ Մաճէն:

Բացի նշուած հանդիպումներից լուրջ խօսակցութիւններ ունեցանք նաեւ եւրոպական խորհրդարանի անդամներ Քէն Քոուի եւ Ճիովաննի Սորիայի հետ, որոնցից առաջինն զբաղւում է մարդու իրաւունքների պաշտպանութեան, իսկ երկրորդը՝ Արեւելեան Եւրոպայի երկրների խնդիրներով: Քաղաքական հանդիպումներից դուրս մասնակցեցինք նաեւ Սթրազպուրկի հաղաքապետարանի կազմակերպած ընդունելութեանը եւ հաղարի հայ համայնքի ներկայացուցիչների ջերմ երեկոյթին:

– Ի՞նչ ակնկալութիւններ ունէիք այս հանդիպումներէն եւ ինչպէ՞ս կը գնահատէք անոնց արդիւնքը:

– Ձպիտ է, անշուշտ, այն տպաւորութիւնն ստեղծուի, որ մենք մեծ ակնկալիքներ ունենք նման հանդիպումներից, հաճի որ հաղաքական ծրագրեր մշակելիս մենք յենւում ենք նախ եւ առաջ մեր ժողովրդի սեփական ուժերի վրայ: Սրանով ես չեմ ուզում բոլորովին թերագնահատել միջազգային հասարակական կարծիքի նշանակութիւնը, որն այսօր կարծես հաշուի է առնւում խորհրդային Միութեան կողմից եւ այդ պատճառով կարող է որոշ չափով երաշխիք ծառայել մեր պայքարին: Հանդիպումների բուն նպատակն է ներկայացնել մեր տեսակէտը Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւնների վերաբերեալ, հաճի որ խորհրդային պաշտօնական մամուլը եւ արեւմտեան լրատուական միջոցները յանախ թիւր, եթէ չասենք աղաւաղուած պատկերացում են տալիս դրանց

մասին: Իսկ երկրորդ, աւելի հեռաւոր նպատակն է՝ ճեղքել Հայաստանի քաղաքական մեկուսացումը եւ աստիճանաբար ուղղակի յարաբերութիւններ հաստատել օտար երկրների, միջազգային հասարակական կազմակերպութիւնների, մարդասիրական հաստատութիւնների հետ:

– Վերադառնանք Հայաստան: Ի՞նչ պատկեր կը պարզէ, այսօր, Հայաստանի քաղաքական կացութիւնը:

– Նախ՝ Հայաստանի կացութեան անդրադառնալը, ինձ թւում է, անհրաժեշտ է մի քանի խօսքով գնահատել Խորհրդային Միութեան ընդհանուր քաղաքական իրադրութիւնը, այլապէս շատ հարցեր կարող են անհասկանալի մնալ: Խորհրդային Միութեան մէջ այսօր շարունակւում է տնտեսական, ընկերային եւ քաղաքական ճգնաժամի սրընթաց խորացումը: Բոլոր ասպարէզներում, մանաւանդ ազգամիջեան հարցերում եւ Կենտրոնի ու հանրապետութիւնների փոխյարաբերութիւններում նկատւում է ապակայունացման մտահոգիչ դրսեւորում, որն օգտագործւում է երկրի պահպանողական ուժերի կողմից իշխանութեան խստացման անհրաժեշտութիւնը հիմնաւորելու նպատակով: Մասնաւորապէս դրա արդիւնքը պէտք է համարել պրեզիդենտական իշխանութեան օրէրս հաստատուած կարգավիճակը, որով երկրի ղեկավարին գործնականօրէն տրւում են անսահմանափակ լիազօրութիւններ:

Դրա հետ մէկտեղ չի կարելի չնկատել երկրի դեմոկրատական ուժերի համախմբումն ու հզօրացումը, որ այսօր արդէն զգալի եղանակ է ստեղծում ներքին քաղաքական կեանքում: Գնալով աւելի ու աւելի լայն զանգուածների կողմից գիտակցւում է արմատական դեմոկրատական վերափոխումների անցկացման, խորհրդային դաշնութեան կատարելագործման անհրաժեշտութիւնը՝ որպէս երկիրը ճգնաժամից դուրս բերելու միակ պայման: Առայժմ անա սա է այն եզակի գործօնը, որ որոշ լաւատեսութիւն է ներշնչում ապագայի նկատմամբ:

Ինչ վերաբերում է Հայաստանի կացութեանը, ապա Միութեան ճգնաժամը բնորոշող բոլոր երեւոյթները, բնականաբար, առկայ են նաեւ այստեղ: Բայց, նոյնիսկ բնականաբար, կան նաեւ որոշ իրայատկութիւններ, որոնք մեր Հանրապետութիւնը առանձնացնում են միւսներից (Արցախի խնդիր, աղէտի գօտի, գաղթականութիւն եւ այլն):

Ամենակարեւոր հաղորդական գործօնը, որն այսօր դրսեւորւում է Հայաստանում, իշխանութեան համար մղուող պայքարն է Կենտրոնին ծառայող ապազգային նոմենկլատուրայի եւ ազգային-դեմոկրատական ուժերի միջեւ: Հայաստանի պաշտօնական իշխանութիւնները, ապիկար գտնուելով պաշտպանելու մեր ազգային շահերը եւ լուծելու հանրապետութեան առջեւ կանգնած տնտեսական ու ընկերային խնդիրները, ժողովրդի աչքում վերջնականապէս կորցրել են իրենց քաղաքական վարկը՝ ապացուցելով իրենց լիակատար անկարողութիւնը: Ամենամեծ հարուածը, որ նրանք հասցրել են մեր ժողովրդին՝ նրա կենսական ուժերի ջլատումն է, նրա հոգեկան անդորրի խանգարումը, որ կարող է յանգեցնել լուրջ հետեւանքների: Տեսնելով, որ պաշտօնական իշխանութիւնները չեն պաշտպանում իր շահերը ո՛չ Կենտրոնի, ո՛չ էլ Ադրբեջանի ոտնձգութիւնների առջեւ եւ յամառօրէն դիմադրում են ազգային խնդիրների լուծմանն ուղղուած բոլոր միջոցառումներին, ժողովուրդն ստիպուած, երկու տարի շարունակ, անելի ջանքերի ու զոհողութիւնների գնով իմն է լուծում այդ խնդիրները՝ ճնշում գործադրելով հանրապետութեան խորհրդարանի վրայ:

Պարզ է, սակայն, որ այս վիճակը երկար չի կարող տեւել, եւ մինչեւ որ ժողովուրդը չհամոզուի, որ գոյութիւն ունի մի ազգային իշխանութիւն, որն ի վիճակի է արտայայտելու իր շահերն ու իրագործելու իր իղձերը, չի կարող լծուել խաղաղ ստեղծագործական աշխատանքի, առանց որի անհնար է որեւէ երկրի բնականոն զարգացումը: Ուստի հայ ժողովրդի գերխնդիրն այսօր իրօք ազգային խորհրդարանի ստեղծումն է, որ լուծուելու է Մայիսի 20-ին կայանալիք ընտրութիւններում:

– Խօսինք, ուրեմն, ընտրութիւններու մասին եւ, ի մասնաւորի, ՀՀՇ-ի դիրքորոշման այդ առընչութեամբ, այլ խօսքով՝ ընտրապայքարը աթոռամա՞րտ է ձեր Շարժումին համար:

– Կարծում եմ, նախորդ արտայայտութիւններից պէտք է պարզ դառնայ, որ Հայոց համազգային շարժումը չափազանց մեծ, կարելի է ասել՝ բախտորոշ կարեւորութիւն է տալիս յառաջիկայ ընտրութիւններին: Ուստի հասկանալի է այն ծաւալուն նախապատրաստական աշխատանքը, որ ՀՀՇ-ն վարում է այդ ուղղութեամբ: Միայն ընտրարշաւի մասին չէ խօսքը, այլ նաեւ այն անհրաժեշտ ճիգերի, որ Շարժումը գործադրեց Հայաս-

տանի Դեռագոյն խորհրդի վերջին նիստերում՝ համեմատաբար դեմոկրատական ընտրական օրէնքների ընդունման համար: Մեզ ի վերջոյ յաջողուեց ընդունել այնպիսի օրէնքներ, որոնք, կամայականութիւնների բացակայութեան դէպքում, կարող են ապահովել ազատ ընտրութիւնների անցկացումը: Սակայն կամայականութիւնները, դժբախտաբար, բացառուած չեն, եւ իշխանութիւնները կը դիմեն ամէն միջոցի՝ իրենց դիրքերը չզիջելու համար: Նոյնիսկ ընտարաշափ ներկայ փուլում՝ թեկնածուների առաջադրման ընթացքում արդէն արձանագրուել են օրէնքի խախտման բազմաթիւ դէպքեր: Մենք լուրջ մտավախութիւն ունենք, որ իշխանութիւնները կանգ չեն առնի նոյնիսկ գրգռութիւններ հրահրելու գնով Հայաստանում արտակարգ դրութիւն հաստատելու մտի առջեւ, միայն թէ կարողանան ապահովել իրենց յաղթանակը, ինչպէս դա արուեց 1989 թուականի մարտի ընտրութիւններում, որոնք տեղի ունեցան յատուկ դրութեան պայմաններում: ՀՀՇ-ի խնդիրն է՝ խուսափել նման պատրուակներ ստեղծելուն նպաստող գրգռիչ գործողութիւններից եւ ապահովել ընտրութիւնների խաղաղ ընթացքը:

Ինչ վերաբերում է բուն ընտարաշափին, ապա ՀՀՇ-ն դրան մասնակցում է ոչ թէ կուսակցական մօտեցմամբ, այլ համազգային շահերի գիտակցութեամբ: Մենք պէտք է ձգտենք ոչ թէ ապագայ խորհրդարանում առաւելագոյն տեղեր գրաւեցնել, այլ պայքարել միայն ու միայն յանուն այն բանի, որ այդ խորհրդարանը լինի իսկապէս ազգային մի իշխանութիւն, որտեղ ներկայացուած լինեն մեր ժողովրդի արժանի ընտրեալները: Մեզնից անխտիր կերպով գործօն աջակցութիւն կը ստանան բոլոր այն թեկնածուները, որոնք վայելում են ժողովրդի անվերապահ յարգանքը՝ անկախ այն բանից, թէ նրանք ՀՀՇ-ի անդամ են, թէ ոչ:

– Մեր վերջին հարցումը, անշուշտ, կը վերաբերի Ղարաբաղին: Ի՞նչ է այսօր Արցախի կացութիւնը, երբ ամիսներէ ի վեր կը տիրէ արտակարգ վիճակ:

– Արցախն այսօր ապրում է իր դժուարագոյն ժամանակաշրջաններից մէկը: Ինչպէս յայտնի է, այստեղ հաստատուած է արտակարգ դրութիւն, եւ մարզի ողջ իշխանութիւնը փաստօրէն գտնւում է զինուորականների ձեռքում: Ոտնահարելով խորհրդային Սահմանադրութիւնը՝ զինուորական իշխանութիւնները Լեռնային Ղարաբաղում իրականացնում են ոչ միայն ռազմական, այլ նաեւ զուտ բաղաքական գործառնութիւններ, որ ըստ

օրէնքի դուրս է նրանց իրաւասութիւնների սահմաններից: Կենտրոնի չքաւոր նպատակն է՝ զինուորական ուժով ճարկադրել արցախահայութեանը ընդունելու 1989 թուականի նոյեմբերի 28-ի խայտառակ որոշումը, որով մարզը կրկին յանձնւում է Ադրբեջանի լիակատար գերիշխանութեանը: Դրանով են բացատրւում զինուորականների աանձագործած կամայական գործողութիւնները, բռնութիւնները, ձերբակալութիւնները, օդային հաղորդակցութեան դժուարացումը Արցախի եւ Հայաստանի միջեւ: Արցախահայութիւնն այսօր, դիմելով համընդհանուր գործադուլի եւ փաստօրէն յայտարարելով լիակատար բաղաքական անհնազանդութիւն, յաջողութեամբ վիժեցնում է նշուած որոշման իրականացումը: Առայժմ սա է նրանց պայքարի միակ տեսանելի միջոցը, բանի որ ակնյայտ է, որ միայն նոյեմբերի 28-ի որոշման ձախողումից յետոյ Մոսկուան ստիպուած կը լինի փնտռել նոր բաղաքական լուծումներ:

Հայոց համազգային շարժումը, ինչպէս դրանից առաջ Ղարաբաղեան շարժման Հայաստանի կոմիտէն, հետեւողականօրէն հետապնդում է Հայաստանի եւ Արցախի վերամիաւորման խնդիրը, այն դիտելով որպէս մեր ազգի առջեւ ծառացած ամենաճրատապ խնդիր: Այդ ուղղութեամբ մինչ այժմ ձեռնարկուած բոլոր միջոցառումները՝ ցոյցերը, միքիոնները, գործադուլները եւ բաղաքական վճիռները, այդ թւում նաեւ Հայաստանի Դեռագոյն խորհրդի 1988 թուականի յունիսի 15-ի եւ 1989 թուականի դեկտեմբերի 1-ի պատմական որոշումները կայացուել են ՀՀՇ-ի անմիջական նախաձեռնութեամբ եւ ժողովրդական զանգուածների վճռական պայքարով: Ծրագրելով եւ իրականացնելով Հայաստանի եւ Արցախի վերամիաւորումը նոչակող շրջադարձային որոշման կայացումը, Հայոց համազգային շարժումը մտադիր է այն հասցնել իր տրամաբանական վախճանին՝ հայ առ հայ կենսագործելով փաստացի միաւորման գործնական ծրագիրը: Այդ ծրագրի կարեւորագոյն օղակն այսօր Հայաստանի Դեռագոյն խորհրդի տասներկու երեսփոխանների ընտրութիւնն է Լեռնային Ղարաբաղում, որ նախատեսուած է անցկացնել նոյն մայիսի 20-ին: Այստեղ մեզ անշուշտ սպասում է դժուարին պայքար, բայց, ինչպէս պարզուեց վերջին երկու տարիներին, մեր ժողովուրդը պայքարից չի խուսափում:

«Հայք», 15 ապրիլի, 1990 թ.: Արտատպված «Յառաջից»: Հրատարակված՝ «Յառաջի» տեսակցութիւնը Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ» վերնագրով:

ՊԱՏՎԵՐԸ ԿԱՏԱՐՎԱԾ Է. ՍՊԱՍԵՔ ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻՆ

(6 մայիսի, 1990 թ.)

«Խորհրդային Հայաստան» թերթի ս.թ. ապրիլի 21-ի համարում տպագրված է հայ մտավորականների համաստեղության հայտարարությունը, որում հանրապետության ողբալի վիճակը նկարագրելուց հետո արված է մի չափազանց կարեւոր հետեւություն, այն է. «Մենք առաջարկում ենք ամենամոտ ժամանակներում հրավիրել հանրապետության հասարակայնության, ինչպես նաեւ պաշտոնական եւ ոչ պաշտոնական կազմակերպությունների ու իշխանության ներկայացուցիչների ժողով՝ ազգային համաձայնության գալու, մեր հայրենիքը կրկին ոտի կանգնեցնելու ընդհանուր ծրագիր մշակելու համար: Հայրենիք, որը միայն մերը չէ, այլ համայն հայությանը: Մենք պաշտպանում ենք Հայրենիքի եւ Սփյուռքի բոլոր ուժերի մասնակցությամբ ազգային համաժողով հրավիրելու առաջարկը»:

Փայլուն, մանավանդ իմաստափ, մտահղացում, որը սակայն, ինչպես միշտ, այս անգամ եւս պատահաբար համընկել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի, ավելի ճիշտ՝ նրա առաջին քարտուղարի տեսակետին: Քավ լիցի, ես չեմ ուզում հայտարարությունն ստորագրած հարգարժան մտավորականներին մեղադրել գրագողության մեջ, բայց չեմ կարող չնկատել, որ այդ փայլուն միտքը ծնվել է ոչ թե նրանց ուղեղներում, այլ կենտկոմի ակտիվի ժողովում: Չեմ կարող չնկատել մանավանդ այն պատճառով, որ այդ ժողովի արձանագրությունը տպագրված է նույն թերթի նախորդ համարում: Կենտկոմի նորընծիր քարտուղար Վ. Մովսիսյանի ելույթում ասված է բառացիորեն հետեւյալը. «Ճգնաժամից դուրս գալու ելք որոնելու, ազգի բոլոր կենսական ուժերը հա-

մախմբելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել ազգային համաձայնության խորհուրդ: Նրանում պետք է ընդգրկվեն մեր անվանի մարդիկ. բոլոր շարժումների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Դում գիտեմ, որ ծրագրվում է հրավիրել նաեւ համազգային խորհրդաժողով՝ Հայաստանի, Արցախի, ներքին եւ արտաքին սփյուռքի բարձր ներկայացուցչական կազմով: Այդ խորհրդաժողովը կքննարկի, կձեւավորի ազգային վերածննության ու գոյատեւման ծրագիր»:

Ինչպես տեսնում ենք, այս անգամ եւս ամեն ինչ կարգին է. պատվերն իջեցված է, կատարողները գտնված են: Ասենք, գտնելու կարիք էլ չկար, քանի որ բոլոր ստորագրյալներն էլ, առնվազն նրանք, որոնց ճանաչում եմ, վաղուց մասնագիտացած են՝ կատարելու իշխանությունների պատվերը:

Այնուամենայնիվ զարմանալու, կամ առավել եւս վշտանալու կարիք չկա, քանի որ մեր անվանի մտավորականները բարեխիղճ կերպով կատարել են իրենց հասարակական դերը: Փույթ չէ, թե դրա համար նրանք արժանացել են պարգեւների ու տիտղոսների, օգտվել իշխանություններին վերապահված որոշ արտոնություններից ու բարիքներից: Նրանք չարժանանային, ուրիշ նմանները պետք է արժանանային, քանի որ նրանց տեղը երբեք թափուր մնալ չէր կարող: Բոլոր ժամանակներում իշխանությունները կարիք են ունեցել արքունի ներբողագիրների՝ կոչված հլու հնազանդ ծառայելու այդ իշխանություններին, ամրապնդելու նրանց դիրքերը: Մեր օրերում արքունի ներբողագիրների դերը կատարում է նոմենկլատուրային մտավորականությունը, որի ամենակարեւոր արժանիքը կոնյունկտուրային արագ հարմարվելու հատկությունն է: Տարակույս չկա, որ վաղը նույն անվանի մտավորականները իրենց անառարկելի տաղանդը կներդնեն ամրապնդելու համար մեր ապագա ազգային-ժողովրդավարական իշխանությունը: Այսօր արդեն նրանց ելույթներում հայտնվել են Արցախ, Մայիսի 28, Եռագույն դրոշ, պահանջատիրություն, ժողովրդավարություն, ազգային ծրագիր բառերը, որոնք լիովին բացակայում էին նրանց բառապաշարում մինչեւ 1988 թվականի փետրվարը:

Այնպես որ, արքունի ներբողագիրների կամ այլ կերպ ասած՝ նոմենկլատուրային մտավորականների հասարակական դերի անհրաժեշտությունը միանգամայն ակնհայտ եւ անժխտելի է: Միակ կշտամբանքը, որ

կարելի է նրանց ներկայացնել՝ քաղաքականությամբ զբաղվելու հավակնությունն է: Այս առիթով ստիպված եմ արտահայտել մի գռեհիկ ճշմարտություն. քաղաքականությունը ոչ թե խոսք, ոչ թե գաղափար, ոչ թե ծրագիր է, այլ նախ եւ առաջ գործ, այն էլ՝ թույլատրվածի սահմանն անցնելու միտումով: Իսկ նոմենկլատուրային մտավորականությունն իր էությամբ ընդունակ է գործելու միայն թույլատրվածի (հաճախ հանձնարարվածի) սահմաններում, միայն նվաճված բնագծերում: Եթե նրա բառապաշարում այսօր հայտնվել են Արցախ, Մայիսի 28, Եռագույն դրոշ, պահանջատիրություն, ժողովրդավարություն, ազգային ծրագիր բառերը, ապա միայն ու միայն այն պատճառով, որ ժողովրդական հուժկու շարժումն արդեն նվաճել է այդ բնագծերը: Մեր անվանի մտավորականներին վերապահված է այդ բնագծերն ամրապնդելու շնորհակալ գործը, ինչը եւ հաջողությամբ կատարում են նրանք:

Նկատի ունենալով ասվածը, ինձ թվում է, այլեւս տարօրինակ չպիտի թվա այն հարցը, թե ինչո՞ւ վերջին երկու տարիներին մեր անվանի մտավորականությանը չհաջողվեց ժողովրդին տանել իր հետեւից, այլ եղան ինչ-որ «արկածախնդիրներ», որոնք մեր հանրապետությունը հասցրին կործանման եզրին: Մի՞թե հայ մտավորականության համաստեղության համար հեշտ չէր հրապարակից հեռացնել այդ «արկածախնդիրներին» եւ հմտորեն գլխավորել ժողովրդական շարժումը: Պարզվում է, որ հեշտ չէր, քանի որ Շարժումը գլխավորելու համար միայն գեղեցիկ ճառերը քիչ էին, անհրաժեշտ էր կազմակերպել միտինգներ, բողոքի ցույցեր, գործադուլներ, ինքնապաշտպանական ջոկատներ, որոնք դուրս էին թույլատրվածի՝ հետեւաբար նոմենկլատուրային մտավորականության կարողության սահմաններից:

Քաղաքական նման գործողություններ ձեռնարկելու փոխարեն երկու տարի շարունակ մեր անվանի մտավորականները զբաղված էին այդ գործողությունները դատապարտելով, ժողովներ, համագումարներ հրավիրելով, տասնյակ կազմակերպություններ, ճակատներ ստեղծելով, ազգային ծրագրեր մշակելով, փրկության դեղատոմսեր առաջարկելով՝ մոռացած այն պարզ ճշմարտությունը, որ քաղաքականության մեջ անհեթեթություն է, երբ մարդկանց մի խումբ ծրագրեր է մշակում, իսկ մի այլ խումբ՝ իրականացնում դրանք: Քաղաքական ծրագրերն իրակա-

նացնում են այն մարդիկ, ովքեր եւ մշակում են դրանք: Մարեխիստ Լենինը Ռուսաստանում իրագործեց ոչ թե Մարեխի, այլ իր ծրագիրը:

Վերադառնալով մի խումբ հայ մտավորականների խնդրո առարկա հայտարարությանը, որն, ինչպես պարզվեց, պատվիրված է Հայաստանի կոմկուսի կենտկոմի կողմից, պետք է անհրաժեշտաբար պատասխանել այն հարցին, թե ի՞նչ նպատակ է հետապնդում «ազգային համաձայնության գալու» ծրագիրը, եւ ինչո՞ւ է այդ ծրագիրը հրամցվում հենց այս պահին: Մտավորականների իսկ վկայությամբ՝ «Իշխանության մարմինները գտնվում են յուրատեսակ կաթվածահար վիճակում, բյուրոկրատական ապարատն առաջնորդվում է ավելի շատ հասարակության մեջ իր զրաղեցրած տեղը փրկելու, հան հանրապետության առջեւ կանգնած անհետաձգելի խնդիրները լուծելու մտահոգությամբ»: Եթե, ուրեմն, մտավորականներն այս ծրագիրն առաջ են քաշում կաթվածահար իշխանության պատվերով, ապա դա արվում է միայն ու միայն այդ իշխանությունը փրկելու նպատակով: Եւ բոլորովին պատահական չէ, որ պաշտոնական իշխանություններն ու նոմենկլատուրային մտավորականությունն այս ծրագրով հանդես են գալիս ընտրությունների նախօրյակին, չթաքցնելով անգամ իրենց հապճեպությունը: Նպատակը պարզից էլ պարզ է. ազգային համերաշխության ցանկալի գաղափարով մոլորեցնել ժողովրդին, ստեղծել այն պատրանքը, թե կոմկուսը, բյուրոկրատական ապարատը, նոմենկլատուրային մտավորականությունը նույնման մտահոգված են ազգային շահերով, որքան իմը՝ ժողովուրդը, եւ դրանով ապահովել իրենց տեղերը ապագա խորհրդարանում: Ավելին, դրանով փորձ է արվում վերականգնել սնանկության մատնված կոմունիստական կուսակցության հաղթական վարկը եւ, նրա նորընծա դեկավարին ազգային հերոսի դիմակ հագցնելով, ապահովել նրա ընտրությունը խորհրդարանի նախագահի պաշտոնում, որով կողմնակի կերպով կապահովվի նաեւ կուսակցության հսկողությունը հանրապետության գերագույն իշխանության վրա:

Հայտարարության հեղինակներն իրավացիորեն նշում են. «Մեր ժողովրդի պայքարը դեկավարելու համար իշխանության բարձրագույն մարմնում պետք է ընտրել կորովի մարդկանց, որոնք օժտված լինեն կազմակերպչական տաղանդով, մտքի հստակությամբ եւ կարողանան հիմնովին փոխել գործերի ներկա ընթացքը հանրապետությունում...

Մենք ժողովրդին կոչ ենք անում շահագրգիռ վերաբերմունք ցույց տալ ընտրարշավին, մերժել իրենց արատավորած պաշտոնյաների, զանազան պատեհապաշտ մարդկանց, անպատասխանատու, արկածախնդրության հակված, դեմոկրատիայի անունից խոսող, բայց դեմոկրատիայի սկզբունքները ոտնահարող գործիչների թեկնածություններ»: Թվում է, թե ասված է ամեն ինչ, բայց իրականում անտեսված է ամենակարեւորը. երեսփոխանի հիմնական արժանիքը պետք է լինի հզոր քաղաքական գործչի անկախ դիրքորոշումը: Եւ անտեսված է բոլորովին ոչ պատահարար, հանի որ նոմենկլատուրային մտավորականությանը պակասում է հենց այդ հատկանիշը: Ամբոխավարական հմտություն ունենալու դեպքում հայտարարության հեղինակները չէին մոռանա նշել նաեւ այդ հատկանիշը, բայց միեւնույն է, դրանից նոմենկլատուրային մտավորականության էությունը, այն է՝ կախվածությունը, չէր փոխվի:

Ինչեւէ, մեր անվանի մտավորականները հերթական անգամ կատարել են պաշտոնական իշխանությունների պատվերը, եւ հերթական անգամ չհաջողվեցին չեն ուշացա: Սակայն ժամանակն է արդեն հասկանալու, որ իրական շահերը շնորհվում են ոչ թե իշխանություններին, այլ ժողովրդի կողմից:

Ինչ վերաբերում է «ազգային համաձայնության» ծրագրին, ապա այն կարող է գոյանալ ոչ թե հայության բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպությունների, մտավորականության ներկայացուցիչների խորհրդաժողովներով, այլ Հայաստանի եւ Սիլուռի ռեալ քաղաքական ուժերի համագործակցությամբ: Մեր ժողովրդի ճիշտ կողմնորոշման դեպքում այդպիսի համաձայնության իրական հիմք կարող է լինել իսկապես ազգային-ժողովրդավարական խորհրդարանի ստեղծումը:

«Հայք», 6 մայիսի, 1990 թ.:
ՀՀԱՆԱ, 28/06.05.90: Բնագիր: Ինքնագիր:

ՄՈՍԿՎԱՅԻ ՈՃԲԱԳՈՐԾ ՍԱԴՐԱՆՔԸ

(30 մայիսի, 1990 թ.)

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների առաջին փուլը պարզորոշ կերպով ցույց տվեց, որ Հայաստանը կարող է դառնալ Խորհրդային Միության չորրորդ հանրապետությունը, որտեղ կարող է ստեղծվել իսկական ինքնուրույն հաղթականություն վարող ազգային իշխանություն: Դրանով փաստորեն մեր ժողովրդի առջև բացվում է յոթանասունամյա գաղութային լծի թոթափման եւ անկախ զարգացման շոշափելի ուղին, որ, հասկանալի է, ամենևին չի մտնում կայսրության ու նրա տեղական կամակատարների հաշիվների մեջ:

Երկու տարի շարունակ փորձելով վարկաբեկել մեր արդարացի սահմանադրական շարժումը, բռնություններ, ձերբակալություններ միջոցով ջլատել նրա ուժերը, կենտրոնին ու նրա դրածոներին այնուամենայնիվ չհաջողվեց կասեցնել այն բնական գործընթացը, որ սպասում է իր տրամաբանական վախճանին՝ ազգային խորհրդարանի ձեւավորմանը: Դրանով է բացատրվում այն հիվանդագին տենդը, որ Հայաստանում եւ Արցախում կայացած ընտրություններից հետո համակել է կենտրոնական ու տեղական իշխանություններին: Վերջին օրերս տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները ցույց են տալիս, որ ընտրությունների առաջիկա փուլերում դրությունը փրկելու համար նրանք պատրաստ են ցանկացած նողկալի բայլի, անգամ արյունահեղության, որի պերեսխոս վկայությունն է դեպքերի հետևյալ տրամաբանական շղթան.

Մայիսի 22–23-ին Հայաստանի բոլոր ղեկավարները՝ Վ. Մովսիսյանը, Հ. Ոսկանյանը եւ Վ. Մարգարյանցը կանչվում են Մոսկվա:

Մայիսի 23-ի երեկոյան Ստեփանակերտում չպարզված հանգամանքներում սպանվում է 17-ամյա մի հայ պատանի:

Մայիսի 24-ի առավոտյան Բաքվից Ստեփանակերտ ժամանած մի հանձնաժողով անօրինական ստուգումներ է կատարում բաղաքի բնակոցքանկում, առիթ տալով բնակիչների զայրույթին եւ ներհին զորերի ստորաբաժանումների ու բաղամացիների բախմանը:

Նույն օրը երեկոյան եւ հաջորդ օրվա լույս գիշերը ներհին զորերի ստորաբաժանումները զրահամեհենաներով եւ ավտոմատային հրաձգությամբ լայնածավալ անաբեկչական գործողություն են ձեռնարկում Ստեփանակերտի փողոցներում, որի հետեւանքով զոհվում է մեկ եւ վիրավորվում 9 մարդ: Պատասխան կրակից սպանվում է նաեւ մեկ եւ վիրավորվում 4 զինվոր:

Մայիսի 25-ին Երեւանի Ազատության հրապարակում տեղի ունեցած միտինգում խստորեն դատապարտվում է զորհերի սանձազերծած վայրագությունը Ստեփանակերտում եւ կոչ է արվում, հավատարիմ մնալով բաղամական պայքարի մեթոդներին, պատրաստ լինել դիմագրավելու բռնության հետագա փորձերը:

Մայիսի 26-ին Երեւան են ժամանում միութենական իրավապահ մարմինների մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ՝ ԽՍՀՄ ներհին գործերի մինիստր տեղակալ Շիլովը, ներհին զորերի հրամանատար Շատալինը, պետական անվտանգության կոմիտեից՝ Լուկինը եւ ուրիշներ:

Մոսկվայից ժամանած պաշտոնյաների եւ Հայաստանի ղեկավարության հետ նույն օրը կայացած մեր հանդիպումներից պարզվում է, որ նրանք իբր անազանգ են ստացել, թե մայիսի 27–28-ին Երեւանում տեղի են ունենալու զանգվածային անկարգություններ, մասնավորապես փորձ է արվելու տապալել Լենինի արձանը, կազմակերպել անկախության օրվան նվիրված աշխարհազորային շրներթ, գրավել կառավարական շենքը եւ այլն:

Մայիսի 26-ի երեկոյան կենտրոնական ռադիոն եւ «ժամանակ» հեռուստատեսային ծրագիրը տարածում են սպրիչ հաղորդագրություններ, թե իբր նախորդ օրվա միտինգում հնչել են հակասահմանադրական գործողությունների դիմելու կոչեր, որոնց հետեւանքով Հայաստանում սպասվում են լուրջ իրադարձություններ:

Փորձից գիտենալով նման հաղորդագրությունների սպրիչ նպատակը, Հայոց համազգային շարժման վարչությունը անմիջապես իր բողոքն է հայտնում Մոսկվայից ժամանած պաշտոնական անձնավորություններին եւ աճազանգում օտար լրատվական գործակալություններին՝ Հայաստանում ծրագրվող պատժիչ գործողությունների հնարավորության մասին:

Մայիսի 27-ի առավոտյան Երեւանի երկաթուղային կայարանում լուրջ բախում է տեղի ունենում երկաթուղու զինվորական պահակախմբի եւ մի զինված ջոկատի միջեւ, որի հետեւանքով զոհվում է վեց բաղաքացի եւ վիրավորվում տասը զինվոր: Կայարանն անմիջապես շրջապատվում է զրահապատ մեհենաներով եւ ներհին զորերի հոծ շղթայով: Աշխարհազորի եւ հասարակական-բաղամական կազմակերպությունների ակտիվիստների միջամտության եւ բաղամացիների զգոնության շնորհիվ միջադեպը հաջողվում է տեղայնացնել եւ զսպել կրերը:

Կայարանամերձ հրապարակից հեռանալուց հետո զինվորականները, ստեղծելով լարվածության նոր օջախ, շրջապատում են էրեբունի բաղամասի հիվանդանոցի դիահերձարանը, ուր տեղափոխվել էին զոհվածների մարմինները:

Զորհերի համալրումը խոչընդոտելու նպատակով զինված երիտասարդների մի խումբ փորձում է փակել Նուբարաշեն (Սովետաշեն) – Երեւան խճուղին: Զրահապատ մեհենաները ճեղրում են շրջափակումը եւ, թափանցելով էրեբունի բաղամաս, անկանոն կրակ են բացում բնակելի շենհերի վրա, որի հետեւանքով զոհվում է 17 եւ վիրավորվում շուրջ 40 բաղաքացի: Բախման ընթացրում զոհվում է նաեւ մեկ սպա: Հայոց համազգային շարժման ղեկավարների եւ աշխարհազորի մի շարք հրամանատարների ներդրած ահհեղի ջանհերի գնով հաջողվում է դադարեցնել փոխհրաձգությունը եւ խուսափել ավելի մեծ արյունահեղությունից:

Էրեբունի բաղամասում տեղի ունեցող արյունալի միջադեպի ընթացրում եւ դրանից հետո էլ երկու զրահապատ մեհենա ակնհայտորեն սպրիչ նպատակով սուրում են Երեւանի կենտրոնական փողոցներում՝ հավանաբար պատրվակ փնտրելով ընդարձակելու միջադեպի սահմանները:

Նույն օրը երկու հսկայական զինվորական ավտոշարասյուն Կարմիրից եւ Իջեւանից շարժվում են դեպի Երեւան եւ Հոկտեմբերյան:

Բնակչության մեջ ներ գրգռություն չառաջացնելու նպատակով Հայոց համազգային շարժման ներկայացուցիչների եւ գեներալ Շատալինի միջեւ կայացած պայմանավորվածությամբ ավտոշարասյուները դադար են առնում Երեւանի մատույցներում, Սեւանի խեուղում:

Մայիսի 28-ի վաղ առավոտյան զինվորականների կամ խորհրդային բանակի համազգեստ հագած անհայտ մարդկանց կողմից գնդակոծվում է Հայոց համազգային շարժման շենքը եւ սպանվում գետաշենցի մի երիտասարդ, որը գիշերում էր շենքի առեւ կանգնած մարդատար ավտոմեքենաներից մեկում:

Մայիսի 28-ի՝ լույս 29-ի ողջ գիշերը ռազմական զինավարժության պատրվակով զրգռիչ հրանգություն է տեղի ունենում Բաղաֆի զինվորական կայազորում, որը կրկնվում է նաեւ հաջորդ գիշերը:

Դեպերի նմանօրինակ զարգացումը ակնհայտորեն ցույց է տալիս, որ մենք գործ ունենք արհեստականորեն ստեղծված ազիոտաժի եւ բծախնդիր կերպով ծրագրված սադրիչ գործողության հետ, որ հետապնդում է միանգամայն անբարոյական եւ ննջեց նպատակ, այն է՝ բափելով անմեղ մարդկանց արյունը, Շարժման դեմ տրամադրել մեր ժողովրդին եւ դրանով վիժեցնել դեմոկրատական ուժերի հաղթանակը հանրապետության Գերագույն խորհրդի ընտրություններում:

Այսպիսով, զուտ բաղաքական նպատակով, ա.ք. մայիսի 23–28-ին, կենտրոնական եւ տեղական իշխանությունների որոշ շրջանակների հանցավոր համագործակցությամբ, հայ ժողովրդի դեմ կատարվել է հրեշավոր ոճրագործություն, որին նախնական տվյալներով զոհ է գնացել 26 եւ վիրավորվել շուրջ 60 մարդ:

Հանուն արդարության՝ բոլոր ոճրագործները պետք է նստեն մեղադրյալի աթոռին: Սակայն դրանով չէ, որ պետք է իմաստավորվի անմեղ զոհերի թափված արյունը: Այդ արյունը կիմաստավորվի միայն այն ժամանակ, երբ մեր ժողովուրդը մի բռունցք դառնա՝ կվիժեցնի կայսերապաշտ ուժերի բաղաքական ծրագրերը եւ ազգային իշխանության հաստատմամբ կդնի մեր անկախ պետականության հիմքերը:

«Հայք», 30 մայիսի, 1990 թ.:
Ստորագրված՝ «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե, Հայոց համազգային շարժման վարչություն»:

ԱՐՑԱԽՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ
(1 հուլիսի, 1990 թ.)

Հակառակ Կենտրոնի եւ ադրբեջանական իշխանությունների վարած անաբեկչական բաղաքականությանը, դաժան շրջափակումներին ու բիրտ ուժի գործադրման հաճախակի փորձերին՝ արցախահայությունը եկարատեւ հերոսական պայքարի եւ մեր ողջ ժողովրդի ծանրակշիռ աջակցության շնորհիվ անցյալ տարվա վերջերին ըստ էության հասավ իր բաղձալի նպատակին՝ Արցախի փաստացի անկախությանը, որի բաղաքական մարմնավորումը հանդիսացավ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը Հայաստանի Հանրապետության եւ Արցախի վերամիավորման մասին: Խզվեցին բոլոր տեսակի վարչական, մշակութային եւ տնտեսական հարաբերությունները Ադրբեջանի հետ, նկատելիորեն խորացավ Հայաստանի եւ Արցախի համապատասխան վարչատնտեսական ու մշակութային կառուցվածքների միաձուլման գործընթացը, Արցախի նյութամատակարարման եւ դրամաբաշխման (ֆինանսավորման) գործը լիովին անջատվեց Ադրբեջանից ու դրվեց Կենտրոնի ու Հայաստանի վրա, Լեռնային Ղարաբաղը որպես տնտեսական իմքնուրույն միավոր մտավ ԽՍՀՄ տնտեսական զարգացման 1990 թ. պետական պլանի մեջ, Ադրբեջանն իսպառ զրկվեց Արցախի կադրային հարցերին միջամտելու հնարավորությունից:

Հասկանալի է, որ այս նվաճումների խորացումը, թեկուզեւ առանց բաղաքական նոր բայլերի, այլ միայն խորհրդային Միության գործող օրենքների հմուտ կիրառմամբ, անխուսափելիորեն պետք է հանգեցներ Արցախի եւ Հայաստանի փաստացի վերամիավորմանը: Դրա համար անհրաժեշտ էր միայն երկու պայման. նախ՝ Հայաստանի ղեկավարու-

թյան պատրաստակամությունը, որը, դժբախտաբար, համարյա միշտ բացակայել է, եւ երկրորդ, որ ավելի կարեւոր է, Արցախի օրինական իշխանությունների գործելու կարողությունը, որը եղել է բոլոր նշված նվաճումների ձեռքբերման հիմնական գործոնը: Ընդ որում, օրինական իշխանություններ ասելով, պետք է հասկանալ ոչ միայն Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի գործադիր մարմինը կամ կուսակցության մարզային կոմիտեն, այլեւ արցախահայության ստեղծած ոչ պաշտոնական հասարակական կազմակերպությունները՝ «Կռունկ» կոմիտեն, Տնօրենների խորհուրդը, Հայոց համազգային շարժման տեղական ցանցը, «Ամարաս» բարեգործական միությունը եւ, վերջապես, Ազգային խորհուրդը, որոնք, լրացնելով իրար, դժվարին պայմաններում կարողացան իրականացնել երկրամասի առջեւ ծառացած գործնական խնդիրների լուծման պատասխանատու գործը:

Զգալով, որ, չնայած 1989 թ. նոյեմբերի 28-ին ուժի ցուցադրման շնորհիվ ձեռքբերած Քաղաքական հաղթանակին, իրադարձությունների խաղաղ զարգացման դեպքում, միեւնույն է, Արցախի եւ Հայաստանի վերամիավորումը կարող է դառնալ անխուսափելի իրականություն, ադրբեջանական կողմը հարկադրաբար դիմեց լայնածավալ բռնի գործողությունների՝ Արցախի խնդրում արմատական բեկում մտցնելու նպատակով: Տեղի ունեցան խորհրդա-իրանական սահմանների զանգվածային խախտումները, Բաքվի արյունալի ջարդերը, իշխանության տապալման փորձերը, որոնց արդյունքը եղավ Ադրբեջանի գրավումը խորհրդային բանակի կողմից[1]: Ճիշտ է՝ ադրբեջանցիներն այդ գործողությունների հետեւանքով տվին հարյուրավոր զոհեր, ջախջախվեց Ադրբեջանի ժողովրդական ճակատը, սակայն բոլորի համար պարզ դարձավ, որ դրա դիմաց նրանք պետք է ստանան որոշ Քաղաքական հատուցում, այն էլ, ինչպես միշտ՝ հայերի հաշվին: 1990 թ. հունվարի 15-ին Արցախում հայտարարված արտակարգ դրությունը եւ մարզի օրինական իշխանությունների վերացումը եղան այդ ծանրակշիռ հատուցումը:

Տվյալ պահից Արցախը թեւակոխեց իր նորագույն պատմության ամենադժնդակ ժամանակաշրջաններից մեկը: Մարզում հաստատվեց բացարձակ ռազմական իշխանություն՝ գործնականորեն անսահմանափակ լիազորություններով, այդ թվում՝ արտակարգ դրության կարգավիճակով չնախատեսված Քաղաքական ու տնտեսական գործառնություններով: Լուծարվեցին Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի գործադիր մարմնի եւ կուսակցության մարզային կոմիտեի աշխատանքը, դադարեցվեց հասարակական կազմակերպությունների գործունեությունը: Հալածանքներ սկսվեցին Արցախի ազգային շարժման գործիչների եւ մարզի ղեկավարության նկատմամբ[2]: Տեղի ունեցան զանգվածային ձերբակալություններ, զորքերի կողմից բազմիցս ձեռնարկվեցին խաղաղ բնակչության դեմ ուղղված անարգելիչ գործողություններ, որոնց հետեւանքով զոհվեցին մի Քանի եւ վիրավորվեցին տասնյակ Քաղաքացիներ:

Օգտվելով արտակարգ դրության ստեղծած բարենպաստ պայմաններից եւ զինվորական հրամանատարության բացահայտ աջակցությունից՝ մարզում սկսեցին ակտիվ գործունեություն ծավալել նաեւ ադրբեջանական իշխանությունների ներկայացուցիչները: Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ Քարտուղար Պոլյանիչկոյի գլխավորությամբ Ստեփանակերտում հաստատվեց նոյեմբերի 28-ի որոշմամբ նախատեսված կազմկոմիտեն, որն իր առջեւ չՔողարկված կերպով խնդիր դրեց ներՔին զորՔերի միջոցով ծնկի բերել արցախահայությանը, ծավալուն շինարարական ձեռնարկումներով հզորացնել Արցախի ադրբեջանաբնակ գյուղերը եւ փոխել մարզի ժողովրդագրական հաշվեկշիռը հօգուտ ադրբեջանցիների: Զհանդիպելով Կենտրոնի սաստումներին եւ Հայաստանի իշխանությունների միջամտությանը՝ ադրբեջանական կողմը օրեցօր սաստկացրեց իր անօրինական գործունեությունը, որի գագաթնակետը դարձավ Ադրբեջանի պրեզիդենտ Մութալիբովի հրամանագրով Հադրութի շրջխորհրդի եւ կուսշրջկոմի իրավասությունների դադարեցումը: Գործողությունների լիակատար ազատություն ձեռքբերելու նպատակով ադրբեջանական իշխանությունները՝ ռազմական հրամանատարության աջակցությամբ սկսեցին ավելի սաստկացնել մարզի շրջափակումը եւ իրականացնել նրա բացարձակ մեկուսացումը Հայաստանից՝ ամուր փակելով Գորիս – Լաչին – Ստեփանակերտ ճանապարհը եւ կրճատելով Երեւան – Ստեփանակերտ օդանավային ուղերթերը:

[1] «Զգալով, որ ... խորհրդային բանակի կողմից» *հատվածը չկա տպագրում, վերականգնում ենք ըստ ձեռագրի:*

[2] «Լուծարվեցին ... ղեկավարության նկատմամբ» *հատվածը չկա տպագրում, վերականգնում ենք ըստ ձեռագրի:*

Արցախի մեկուսացման ուղղությամբ ձեռնարկված վերջին քայլը հանդիսացավ Ադրբեջանական ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ս.թ. հունիսի 11-ի որոշումը՝ հայ-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով Ադրբեջանի տարածքում 5 կիլոմետրանոց ռազմական գոտու ստեղծման մասին: Կենտրոնի կողմից նույնպիսի պահանջ է դրված Հայաստանի իշխանությունների առջեւ: Սակայն Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության երկու նիստերում այդ պահանջը մերժվեց, քանի որ ո՛չ կենտրոնական, ո՛չ էլ ադրբեջանական իշխանությունները պատրաստակամություն չեն հայտնում բավարարելու հայկական կողմի առաջ դրված միակ պայմանը՝ Գորիս – Լաչին – Ստեփանակերտ ճանապարհի անարգել գործունեության ապահովումը:

Համակենտրոնացման համբարի պայմաններում հայտնված արցախահայությունը, այս անգամ եւս ցուցաբերելով անօրինակ հաստատակամություն, պատվով դիմագրավեց բռնապետության ուժգնացող հարվածները: Համատարած բաղաքացիական անհնազանդությունը դարձավ նրա ազգային-ազատագրական պայքարի ամենազորեղ զենքը, որն իր կիրառությունը գտավ նախ՝ Արցախում հայտարարված համընդհանուր գործադուլի, իսկ այնուհետեւ՝ նոյեմբերի 28-ի որոշումն իրականացնող կազմկոմիտեի աշխատանքի բացարձակ վիժեցման ձեւով: Չնայած զինվորական հրամանատարության եւ ադրբեջանական իշխանությունների գործադրած ահեղի ջանքերին, այնուամենայնիվ, անցած վեց ամիսների ընթացքում նրանց չհաջողվեց կոտրել արցախցիների կամքը եւ Ադրբեջանի ու Արցախի միջեւ վերականգնել թեկուզ մեկ կապող օղակ: Ավելին, դժվարագույն պայմաններում արցախահայությունը ճանապարհների շրջափակման միջոցով բազմիցս կարողացավ խափանել մարզի ադրբեջանական գյուղերում տարվող շինարարական աշխատանքները, զորացնել իր ինքնապաշտպանական կարողությունները, հարկ եղած դեպքում արժանի հակահարված տալ ադրբեջանական հրոսակախմբերին եւ զինվորականների ոտնձգություններին[3]: Արցախահայության պայքարի վառ էջերը դարձան ապրիլի 24-ին Մեծ Եղեռնի արգելված սգահանդեսի կազմակերպումը եւ մանավանդ՝ մայիսի 20-ին Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրությունների անցկացումը:

[3] «Չնայած զինվորական հրամանատարության ... զինվորականների ոտնձգություններին» *հատվածը չկա տպագրում, վերականգնում ենք ըստ ձեռագրի:*

Դրանով հանդերձ, ակնհայտ է, որ իրադարձությունների նմանօրինակ զարգացման դեպքում արցախահայության ուժերը կարող են սպառվել, եւ սեփական իշխանության մարմինների շարունակվող անգործության պայմաններում նա այլեւս ի վիճակի չի լինի լուծել իր գոյության երաշխիքը հանդիսացող կենսական խնդիրները՝ մարզի ժողովրդագրական ներկա հաշվեկշռի պահպանումը, տնտեսության բնականոն կենսագործունեության ապահովումը, ինքնապաշտպանության գործի կազմակերպումը եւ այլն: Ավելին, այսօր մարզում լուրջ վտանգ է ստեղծվել նաեւ անընդհատ գրգռություններով բնակչությանը հավասարակշռությունից հանելու եւ վերամիավորման շարժումը սահմանադրական ուղուց շեղելու միտումով: Դժվար չէ պատկերացնել, թե Արցախում սպասվող հավանական պայթյունը ինչպիսի արձագանք կգտնի Հայաստանում, որը եղել եւ մնում է արցախահայության անվտանգության միակ երաշխավորը:

Նման անցանկալի հետեւանքից խուսափելու եւ ստեղծված ճգնաժամից դուրս գալու միակ տեսանելի ելքն այսօր Լեռնային Ղարաբաղի օրինական իշխանության՝ մարզային խորհրդի վերականգնումն է, որը գոնե միաժամանակ կարող է որոշ չափով կարգավորել մարզի իրավիճակը՝ մինչեւ արցախյան խնդրի վերջնական լուծումը: Ճիշտ է՝ առաջին հայացքից կարող է թվալ, թե դա պարզապես կնշանակի ապարդյուն վերադարձ դեպի 1988 թ. փետրվարի 19-ի վիճակը, սակայն իրականում դրանով Արցախում կստեղծվի բոլորովին նոր մի վիճակ, քանի որ վերականգնված խորհուրդն արդեն կգործի մարզի ձեռքբերած վարչա-տնտեսական անկախության պայմաններում, որի մասին մանրամասն խոսվեց սույն ճոպվածի սկզբում: Պարզ է սակայն, որ Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի վերականգնումը կապված է լուրջ դժվարությունների հետ, քանի որ նրա նշանակությունը շատ լավ է հասկանում նաեւ հակառակ կողմը:

Իսկ մինչեւ մարզային խորհրդի վերականգնումը, որի համար, ակնհայտ է, դեռեւս որոշ ժամանակ կպահանջվի, անհրաժեշտ է շուտափույթ կերպով վերակսել Արցախի Ազգային խորհրդի գործունեությունը, որն, ինչպես հայտնի է, արգելված է առոակարգ դրության կարգավիճակով: Սակայն պարզվում է, որ կա արգելքը շրջանցելու չափազանց

ճիշտ, միաժամանակ բաղաքական մեծ ճնշողություն խոստացող ճանապարհ, եթե Ազգային խորհրդի ղեկն իրենց ձեռք վերցնեն Լեռնային Ղարաբաղից ընտրված ԽՍՀՄ հինգ ժողովրդական դեպուտատները՝ Հենրիկ Պողոսյանը, Վաչագան Գրիգորյանը, Ջաւի Բալայանը, Բորիս Դադամյանը եւ Վահան Գաբրիելյանը, ինչպես նաեւ Հայաստանից ընտրված մի շարք հայտնի դեպուտատներ՝ Սոս Սարգսյանը, Հենրիկ Իգիթյանը, Կոտմիլա Հարությունյանը, Խորեն Աբրահամյանը, Սերո Խանզադյանը, Ֆրունզե Դովլաթյանը, Գրիգոր Խանջյանը, Կարեն Սիմոնյանը, Սերգեյ Համբարձումյանը եւ ուրիշներ: Օգտվելով դեպուտատական անձեռնմխելիության իրավունքից՝ այս հարգարժան անձինք կարող են գոնե մի որոշ ժամանակով հաստատվել Ստեփանակերտում եւ իրենց վրա վերցնել Արցախի օրինական իշխանության լիազորությունները: Դա կարող է ժամանակավորապես զսպել զինվորական հրամանատարության եւ ադրբեջանական իշխանությունների կամայականությունները եւ արագացնել մարզային խորհրդի վերականգնումը, հետեւաբար՝ նաեւ Արցախի հարցի բաղաքական լուծումը: Կլինեն առարկություններ, թե նույնը կարող են կրկնել նաեւ Ադրբեջանից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները. կարող են, բայց նրանք սպիպված կլինեն Պոլյանիչկոյի պես Արցախում շրջել զրահամեքենաներով, մինչդեռ հայ դեպուտատները ազատ կհյուրընկալվեն մարզի համարյա բոլոր բնակավայրերում, ձեռնարկություններում, դպրոցներում ու մշակութային կենտրոններում եւ վստահաբար տեղում կլուծեն բազմաթիվ գործնական խնդիրներ: Երեք անգամ այս բայլը շտա սպասված բաղաքական ու գործնական արդյունքը, ապա նման նշանավոր անձանց ներկայությունը գոնե բարոյական մեծ աջակցություն կհանդիսանա արցախահայության համար եւ կօգնի նրան՝ բոթափելու լքվածության հուսահատական զգացումը: Կարծում եմ, հայ ժողովուրդը լիակատար իրավունք ունի իր ընտրյալներից այդպիսի ազգանվեր ու հույժ անհրաժեշտ ծառայություն ակնկալելու:

«Հայք», 1 հուլիսի, 1990 թ.:
ՀՀԱՆԱ, 28/01.07.90: Բնագիր: Ինքնագիր:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹ ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

(3 օգոստոսի, 1990 թ.)

Մեծարգո պարոն նախագահ,

Մեծարգո պատգամավորներ,

Նախապես զգուշացնեմ, որ իմ ելույթը կրելու է ոչ այնքան ծրագրային, որքան զուտ բաղաքական բնույթ՝ թելադրված ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ մեր հանրապետության եզնաժամային իրավիճակից:

Խորհրդային Միությունում տեղի ունեցող ընդհանուր գործընթացների ուղղվածությունը եւ հայ ժողովրդի պատմական փորձը՝ Հայաստանի Հանրապետության զարգացման հեռանկարի տեսակետից նախանշում են բաղաքականության հետեւյալ գլխավոր հատկանիշներով բնորոշվող մայրուղին.

- իսկական տնտեսական համակարգի վրա հաստատված ազգային անկախ պետականություն.
- միջազգային իրավունքի նորմերի վրա հիմնված իրավական պետություն.
- համամարդկային արժեքների, մարդու իրավունքների վրա խարսխված դեմոկրատական հասարակարգ:

Եթե համեմատելու լինենք մի շարք խորհրդային հանրապետությունների ընդունած անկախության եւ ինքնիշխանության հռչակագրերի պարունակած կոնկրետ միջոցառումները, ապա կտեսնենք, որ նրանք, բացի մանրամասներից, ըստ էության իրարից ոչնչով չեն տար-

բերվում: Համարյա բոլոր հաճարապետություններն էլ որպես իրենց ազգային ծրագրի առաջնահերթ խնդիրներ ընդգծում են հետեւյալ միջոցառումները.

- իմքնուրույն տնտեսական համալիրի ստեղծում.
- սեփական ազգային հարստությունների տնօրինում.
- ներհանրապետական կոոպերացիայի եւ ներքին շուկայի ամրապնդում.
- իմքնուրույն հարկային քաղաքականության եւ դրամական համակարգի կիրառում.
- սեփականության ձեւերի բազմազանություն.
- Միության նկատմամբ ձեւավորված պարտավորությունների արմատական վերանայում.
- սեփական Սահմանադրության եւ օրենսդրության գերակայության ապահովում.
- ուղղակի արտաքին հարաբերությունների հաստատում.
- սեփական բանակի եւ անվտանգության մարմինների ստեղծում.
- օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների գործառնությունների տարանջատում.
- պետական մարմինների ապաքաղաքականացում.
- հասարակական կյանքի ապապետականացում.
- բազմակուսակցական համակարգի եւ դեմոկրատական լիակատար ազատությունների հաստատում.
- մայրենի լեզվի, ազգային մշակույթի զարգացման ապահովում եւ այլն:

Վստահ եմ, որ նույն պատկերն են ունենալու նաեւ տարբեր հասարակական-քաղաքական հոսանքների, այդ թվում՝ կոմունիստական կուսակցության կողմից ներկա նստաշրջանի քննարկմանը ներկայացվելիք հռչակագրերի նախագծերը, քանի որ դա է Խորհրդային Միության զարգացման օբյեկտիվ հեռանկարը: Բոլոր հանրապետություններն էլ վաղ թե ուշ որդեգրելու են իմքնիշխանության ու դեմոկրատացման նշված ուղին, որի հետ, կարծեմ թե, որոշ վերապահումներով հարկադրված են հաշտվել նաեւ կենտրոնական իշխանությունները:

Այդ դեպքում, բնականաբար, հարց կարող է առաջանալ, թե որո՞նք են յուրաքանչյուր հանրապետության ազգային ծրագրի հիմքում ընկած այն ելակետային տարբերակիչ սկզբունքները, որ պետք է կողմնորոշվելու եւ ընտրություն կատարելու հնարավորություն տան ժողովրդին:

Իմ կարծիքով՝ օբյեկտիվորեն գոյություն ունի այդպիսի երկու կողմնորոշող սկզբունք.

Առաջին. վերաբերմունքը միութենական նոր պայմանագրի կամ ֆեդերացիայի նկատմամբ.

Երկրորդ. հասարակության այն ուժերի բացահայտումը, որոնք ի վիճակի են իրագործելու ազգային ծրագիրը:

Առաջին հարցի առնչությամբ ելակետային պետք է համարել այն հանգամանքը, որ երկրի քաղաքական կյանքում այժմ դրսեւորվում է Միության իրավասությունների սահմանափակման, եւ ընդհակառակը՝ հանրապետությունների ու իմքնավար կազմավորումների իրավասությունների ընդլայնման ակնհայտ միտում: Մի կողմից՝ կենտրոնական իշխանությունները, խոսքով ընդգծելով խորհրդային դաշնության կատարելագործման անհրաժեշտությունը, իրականում սակայն նոր ընդունվող օրենքներով ու օրենսդրական ակտերով փորձում են պահպանել երկրի ամբողջատիրական[1] կառավարման համակարգը: Մյուս կողմից՝ հանրապետություններն ու իմքնավար կազմավորումներն իրենց ընդունած իմքնուրույն որոշումներով ձգտում են հաստատել իրենց իմքնիշխանությունը՝ որպես կանոն հակասության մեջ մտնելով միութենական Սահմանադրության եւ գործող օրենսդրության դրույթների հետ:

Հակասության լուծման ելքը երկրի հասարակական միտքը տեսնում է կա՛մ նոր միութենական պայմանագրի կնքման, կա՛մ այդ պայմանագիրը միջհանրապետական երկկողմանի պայմանագրերով փոխարինելու, կա՛մ էլ միաժամանակ ե՛ւ մեկի, ե՛ւ մյուսի առկայության մեջ: Նկատի ունենալով աշխարհում իրականացող ինտեգրացիոն գործընթացները եւ իրատեսորեն գնահատելով պատմականորեն ձեւավորված իրողությունները՝ միանգամից չի կարելի բացառել ո՛չ մեկ, ո՛չ մյուս, ո՛չ էլ երրորդ հնարավորությունը:

---

[1] *Տպագրում՝ ամբողջական, բայց ձեռագրի ուղղում ենք ամբողջատիրական:*

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունը, չսպասելով հարցի վերջնական լուծմանը եւ առաջնորդվելով իր ազգային շահերով, պարտավոր է այսօր եւեթ, որպես օրակարգի խնդիր, իրավահավասար հիմունքներով երկկողմանի քաղաքական եւ տնտեսական պայմանագրեր կնքել բոլոր միութենական հանրապետությունների ու ինքնավար կազմավորումների հետ: Ինչ վերաբերում է միութենական պայմանագրին, ապա տեսանելի ապագայում այն թերեւս կարող է ընդունելի լինել միայն հետեւյալ պայմանների բավարարման դեպքում.

- Հայաստանի մասնակցությունն այդ պայմանագրին միջազգային իրավունքի սուբյեկտի կարգավիճակով.
- հանրապետության տարածքում երկրորդ, այն է՝ միութենական Սահմանադրության եւ միասնական օրենսդրության կիրառության բացառումը:

Դժվար չէ կանխատեսել, որ միութենական պայմանագրի հետ կապված ամենալուրջ խնդիրներից մեկն էլ կլինի խորհրդային բանակի կարգավիճակի սահմանումը: Ներկայումս համարյա բոլոր միութենական հանրապետություններում, այդ թվում նաեւ Ռուսաստանում, տիրապետող է դառնում ազգային զորամիավորումների ստեղծման գիտակցությունը՝ այդ ուղղությամբ որպես առաջին քայլ դիտելով յուրաքանչյուր ազգի ներկայացուցիչների զինծառայությունը սեփական հանրապետության տարածքում: Հետագայում, ըստ երեւույթին, չի բացառվում խորհրդային կամ ռուսական բանակի ժամանակավոր ներկայությունը հանրապետություններում՝ միջազգային պայմանագրերով սահմանված ռազմական բազաների կարգավիճակով:

Արձանագրելով երկրի զարգացման օբյեկտիվ ընթացքով թելադրված այս գլխավոր միտումները՝ հարկ ենք համարում ընդգծել նաեւ, որ Միության եւ հանրապետությունների փոխադարձ պարտավորությունների նման արմատական վերանայումը կողմերից պահանջում է հանդես բերել պարտնյորային հարաբերությունների բարձր գիտակցականություն, մոտեցումների իրատեսություն, միայն ու միայն քաղաքական լուծումներ փնտրելու պատրաստակամություն՝ խուսափելով ուժային մեթոդներից, անցանկալի առճակատումներից ու հակասությունների անհարկի սրումից:

Իսկ թե ինչպիսի հանգրվաններով կիրականացվի ազգային անկախ պետականության վերականգնումը՝ դա արդեն կախված է ոչ թե առանձին անհատների քմահաճույքից կամ կուսակցությունների թելադրանքից, այլ կոնկրետ քաղաքական իրավիճակներում ժողովրդի կամքն արտահայտող ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի դիրքորոշումից, անհրաժեշտության դեպքում նաեւ՝ հանրաքվեի միջոցով կայացած համաժողովրդական վճռից:

Մի բան, սակայն, պարզ է, եւ դա ապացուցեց Լիտվայի օրինակը, որ անկախ պետականության վերականգնումը ոչ թե միաժամանակյա ակտ է, այլ միջոցառումների մի հսկայական համալիրի հետեւողական կենսագործման որոշակի տեւողություն պահանջող գործընթաց:

Սրանով մենք ընդհուպ մոտեցանք մեր երկրորդ սկզբունքային հարցադրմանը, այն է՝ հասարակության ո՞ր ուժերն են արդյոք ի վիճակի իրագործելու այդ միջոցառումները եւ ստեղծելու Հայաստանի ինքնուրույն, անկախ գոյության քաղաքական, տնտեսական, իրավական եւ հոգեւոր նախադրյալները: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ խորհրդային մյուս հանրապետությունների հետ ունեցած ընդհանրությունների կողքին Հայաստանն աչքի է ընկնում նաեւ որոշակի առանձնահատկություններով՝ կապված Արցախի խնդրի, գաղթականների ճակատագրի, աղետի գոտու վերականգնման եւ ռազմական ջոկատների առկայության հետեւանքով հանրապետության ներսում ստեղծված անկայուն իրավիճակի հետ, որ ավելի է բարդացնում Հայաստանի ապագա իշխանությունների պատմական առաքելությունը:

Ի տարբերություն անկախության կամ ինքնիշխանության ուղին բռնած Մերձբալթյան հանրապետությունների, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Մոլդովայի, Հայաստանում գործադիր իշխանության բոլոր լծակները դեռեւս գտնվում են կոմունիստական կուսակցության վերնախավի ձեռքում, որը, թվում է, առայժմ որեւէ մտադրություն չունի հրաժարվելու այդ իշխանությունից կամ այն կիսելու հանրապետությունում առաջացած նոր, դեմոկրատական ուժերի հետ՝ դրանով կիսելով նաեւ պատասխանատվությունը ժողովրդի առջեւ: Փաստ՝ կոմկուսի ապարատի մղած կատաղի ընտրարշավը եւ ընթացիկ նստաշրջանում նրա ցուցաբերած հակաօրինական ու հակադեմոկրատական դիրքորոշումը, որի

պերճախոս վկայությունն են այն քվեարկությունները, որոնցով ապարատը փորձեց շրջափակել պատգամավորների լիազորությունների ճանաչման քննարկումը եւ խախտումներ թույլ տված ընտրական հանձնաժողովներին պատասխանատվության ենթարկելու որոշումը:

Նման պարագաներում հնարավո՞ր է արդյոք հայ ժողովրդի բախտը հետագայում եւս վստահել մի կուսակցության, որի 70-ամյա հանցավոր գործունեությունը մեր հանրապետությունը հասցրել է կործանման եզրին: Օտարի նախաձեռնությամբ ստեղծված եւ օտար նպատակների ծառայող այդ կուսակցությունն իրականում ոչ մի կապ չունի մեր ազգային իղձերի ու նպատակների հետ: Այդ կուսակցությունն էր, որ դրսի ուժերի միջամտությամբ 1920 թվականին վերացրեց անկախ Հայաստանի Հանրապետությունը, հանուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի՝ երկրի տարածքի կեսից ավելին նվիրեց Թուրքիային եւ Ադրբեջանին, սեփականազրկելով գյուղացուն՝ քայքայեց հայկական գյուղի ավանդական կացութաձեւը, կազմակերպեց 1937 եւ 1949 թվականների զանգվածային գնդակահարություններն ու հալածանքները:

Կարող են, իհարկե, առարկել, թե այդ ամենն արդեն անցել է պատմության գիրկը, եւ վերակառուցման շրջանի կոմունիստական կուսակցությունը ոչ մի կապ չունի նշված ոճրագործությունների հետ: Նման առարկությունը կարող էր տեղին եւ իրավացի համարվել, սակայն միայն այն դեպքում, եթե գոնե 1988 թվականի փետրվարից սկսված ազգային-ազատագրական պայքարի ընթացքում կուսակցությունը երաշխիքներ տված լիներ ծառայելու մեր ազգի շահերին:

Փոխանակ գլխավորելու հայ ժողովրդի հուժկու ազգային-ազատագրական շարժումը՝ Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը փաստորեն երկուսուկես տարի շարունակ հանդես եկավ Մոսկվայի հինգերորդ շարասյան դերում՝ խափանելով ներքեւից եկող բոլոր քաղաքական նախաձեռնությունները եւ միայն ժողովրդական զանգվածների ահռելի ճնշման տակ ստիպված լինելով ինչ-որ զիջումներ կատարել հանրապետության ինքնիշխանության ընդլայնման, դեմոկրատական գործընթացների արագացման, Արցախի խնդրի լուծման ուղղությամբ: Հիշենք, թե հանրապետության պաշտոնական իշխանությունների կողմից ինչպիսի կատաղի դիմադրության հանդիպեցին Հայաստանի եւ Արցախի վերամիավորմանը վերաբերող 1988 թվականի հունիսի 15-ի

եւ 1989 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումները, հանրապետությունում արմատական դեմոկրատական վերափոխումների անցկացմանը նվիրված հռչակագիրը, բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված պահանջները եւ այլն:

Չմոռանանք նաեւ, որ նույն այդ իշխանություններն էին, որ 1988 թվականի մարտ ամսին Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով լուծարքի ենթարկեցին «Ղարաբաղ» կոմիտեի տեղական կազմակերպությունները, նույն թվականի դեկտեմբերին Երեւանում եւ հանրապետության մի շարք շրջաններում մտցրին արտակարգ դրություն եւ պարետային ժամ, ձերբակալեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ու Շարժման բազմաթիվ ակտիվիստների, զանգվածային տեղեկատվության միջոցները հեղեղեցին 1937 թվականի զինանոցից հանված մեղադրանքներով եւ այլն: Ահա թե որն է վերակառուցման շրջանի կոմունիստական բյուրոկրատիայի իրական պատկերը, եւ ահա թե ինչպիսի գրավականով է նա հավաստում իշխանության լծակները պահպանելու եւ հայ ժողովրդի ազգային ծրագիրն իրականացնելու իր հավակնությունը:

Քանի դեռ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքով կապված է ԽՄԿԿ-ի հետ եւ ղեկավարվում է դրսից՝ նա չի կարող մինչեւ վերջ ծառայել մեր ազգի շահերին եւ լուծել հանրապետության առջեւ կանգնած կենսական խնդիրները: Միայն ԽՄԿԿ-ի հետ ենթակայական կապերը խզելու դեպքում նա կարող է դառնալ ազգային կուսակցություն եւ իր զգալի ներդրումն ունենալ ազգային նպատակների իրականացման գործում: Դա չի նշանակում, անշուշտ, որ կոմունիստական կուսակցության ներկայացուցիչները, մանավանդ նրա շարքային անդամները, դուրս են հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ներկա գործընթացից: Ըստ արժանվույն գնահատելով նրանց դերն այդ պայքարում, ինչպես նաեւ նրանց ծանրակշիռ քաղաքական փորձն ու մասնագիտական-կազմակերպչական ունակությունները, վստահ ենք, որ կուսակցության բոլոր առողջ ուժերը, անկախ քաղաքական հետագա փոփոխություններից, անձնվիրաբար կկատարեն իրենց պարտքը հայրենիքի ու ազգի հանդեպ:

Ինչ վերաբերում է հանրապետության հասարակական-քաղաքական մյուս ուժերին, որոնք այսօր արդեն լուրջ հայտ են ներկայացնում կիսե-

լու պատասխանատվությունը հայ ժողովրդի ապագայի կերտման գործում, ապա նրանց մասին հարկ եմ համարում նշել հետեւյալը:

Վերակառուցման եւ հրապարակայնության բաղաձկանության հոչակումից երկու-երեք տարի անց Խորհրդային Միության ժողովուրդները համոզվեցին, որ երկրի կուսակցական-տնտեսական բյուրոկրատիան ոչ միայն ի վիճակի չէ իրականացնելու ծրագրված բաղաձկանությունը, այլեւ շարունակ խոչընդոտներ է հարուցում նույնիսկ վերից սահմանված չափավոր դեմոկրատիայի կենսագործման եւ տեղական ինքնավարության ընդլայնման երկչոտ փորձերի առջեւ: Այդ իսկ պատճառով երկրի տարբեր վայրերում պաշտոնական իշխանությունների կողքին տարերայնորեն առաջացան բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, միություններ եւ ընկերություններ, որոնք առանձին հանրապետություններում վերածվելով լայն սոցիալական շարժումների՝ դարձան եթե ոչ ընդդիմադիր, ապա առնվազն այլընտրական ժողովրդական իշխանություններ: Եւ կարճ ժամանակի ընթացքում ժողովրդական այդ շարժումները հասարակության դեմոկրատացման եւ հանրապետությունների ինքնիշխանության ընդլայնման ուղղությամբ հասան շատ ավելի նշանակալից նվաճումների, քան կենտրոնական իշխանությունների ողորմածությամբ ձեռք էին բերված վերակառուցման շրջանի նախորդ երեք տարիներին:

Նման հուժկու սոցիալական շարժումներից էր նաեւ հայ ժողովրդի մղած ազգային ազատագրական պայքարը, որը հալածանքների դժվարագույն պայմաններում, անցած երկուսուկես տարիների ընթացքում արձանագրեց հետեւյալ շոշափելի նվաճումները.

- Հայաստանի Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի եւ 1989 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումները Արցախի ու Հայաստանի վերամիավորման մասին,
- Հայկական ատոմակայանի փակումը եւ «Նաիրիտ» գիտա-արտադրական միավորման աշխատանքի դադարեցման մասին ընդունված որոշումը,
- 1915 թվականի Հայոց ցեղասպանության դատապարտման մասին հրապարակված օրենքը,

- 1918 թվականի մայիսի 28-ը որպես Հայոց պետականության վերականգնման օր եւ Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը որպես ազգային խորհրդանիշ ճանաչելու որոշումը,
- մի շարք հասարակական կազմակերպությունների պաշտոնական ճանաչումը,
- Հայաստանի Սահմանադրության մեջ հանրապետության օրենքների գերակայությունն ապահովող 75-րդ հոդվածի ընդունումը,
- 1990 թվականի գարնանային զորակոչի ժամանակավոր կասեցումը,
- հայ երեխաներին պարտադիր հայեցի կրթություն տալու մասին հանրապետության ժողկրթության նախարարության ընդունած հրամանագիրը եւ այլն:

Թեեւս ավելորդ չէ հիշեցնել, որ ժողովրդական այդ շարժման աճուրդի ջանքերի գնով են ձեռք բերված նաեւ հանրապետությունում հաստատված խոսքի, մամուլի, ցույցերի, միտինգների ազատությունը, համեմատաբար դեմոկրատական ընտրական օրենքի ընդունումը եւ ներկա խորհրդարանում տիրող բազմակարծությունը:

Թվարկված նվաճումներն էլ, ահա, հանդիսանում են այն ակնհայտ հավաստիքը, որ հանրապետության դեմոկրատական ուժերին հիմք է տալիս իշխանության համար մղվող սահմանադրական պայքարում հավակնելու ներկա խորհրդարանի եւ ողջ ժողովրդի վստահության հվեին:

Այսպիսով, եթե այսօր հանրապետությունում կա մի ուժ, որ ընդունակ է երկիրը դուրս բերել եզակաժամային իրավիճակից եւ կտրուկ շրջադարձ կատարել դեպի ազգային նպատակները, ապա դա Հայաստանի Գերագույն խորհրդի դեմոկրատական թեւն է, որն, ի դեպ, դեմոկրատական է ոչ միայն գաղափարախոսությամբ, այլեւ իր կազմով: Նրանում ընդգրկված են մեր հասարակության համարյա բոլոր խավերի ներկայացուցիչները՝ բանվորներ, ինժեներներ, բժիշկներ, ուսուցիչներ, կոլտնտեսականներ, մտավորականներ եւ այլն, մինչդեռ խորհրդարանի այսպես կոչված «բանվորա-գյուղացիական» կոմունիստական կուսակցության եակատը կազմված է բացառապես բարձր նոմենկլատուրայի ներկայացուցիչներից, որ, կարծում եմ, մեր ժողովրդին լուրջ խորհելու տեղիք պետք է տա:

Արեւելյան Եւրոպայի երկրների, Մերձբալթյան հանրապետությունների եւ վերջապես Ռուսաստանի փորձը ես մեզ պետք է հուշի, թե հասարակության որ ուժերի հետ է կապված ազգային-դեմոկրատական նպատակների իրականացման հույսը, եւ որոնք կարեւոր է ժամանակին ու ճիշտ ընտրություն կատարելը: Այդ առումով ուսանելի է մանավանդ Ուկրաինայի օրինակը, որի խորհրդարանը, կազմավորումից ընդամենը մի հանի ամիս հետո, ստիպված եղավ ազատվել կուսակցական բյուրոկրատիայի վերահսկողությունից եւ ուշացումով որդեգրեց ազգային պետականության հաստատման ուղին: Սխալ ընտրության դեպքում, վստահաբար, նույնը կարող է պատահել Հայաստանի խորհրդարանին, այն տարբերությամբ միայն, որ եթե Ուկրաինան կարող էր իրեն այդ շռեղությունը թույլ տալ, ապա մենք հապաղելու իրավունք չունենք ճկատի ունենալով հանրապետության եւ Արցախի իրավիճակի լրջությունը:

Այսօր մեր հանրապետության առջեւ, բացի հեռանկարային ծրագրերից, ծառացած են մի շարք առաջնահերթ խնդիրներ՝ Արցախի հարցի լուծումը, աղետի գոտու վերականգնումը, գաղթականների վիճակի բարելավումը, բայրայված տնտեսության կարգավորումը եւ այլն: Բայց ո՛չ այդ խնդիրները, ո՛չ էլ հեռանկարային ծրագրերը հնարավոր չէ իրականացնել, մինչեւ որ Հայաստանի նորաստեղծ իշխանությունը չկարողանա ապահովել հանրապետության իրավիճակի կայունությունը: Առանց այդ կայունության ոչ մի բաղաքական, տնտեսական, ազգային ծրագիր հնարավոր չէ իրականացնել, հնարավոր չէ միջազգային պայմանագրեր կնքել, հնարավոր չէ օտարերկրյա կապիտալ ներմուծել:

Այդ կայունությունը չի կարող ապահովել ներկա իշխանությունը՝ չունենալով ժողովրդի վստահությունը:

«Հայք», 9 օգոստոսի, 1990 թ.:
ՀՀԱՆԱ, 28/03.08.90: Բնագիր: Ինքնագիր:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՓԱԿ ՆԻՍՏՈՒՄ

(3 սեպտեմբերի, 1990 թ.)

Հարգելի գործընկերներ,

Ղարաբաղյան կնճռի հնարավոր զարգացումները կանխատեսելու հարցում, իմ կարծիքով, հարկ է նախ եւ առաջ պարզել Կենտրոնի դիրքորոշումը: Քանի դեռ Կենտրոնն իր հստակ դիրքորոշումը չի արտահայտել, ես կարծում եմ, հնարավոր չէ այս հարցն Ադրբեջանի հետ լուծել ո՛չ պատերազմի, ո՛չ էլ բանակցությունների ճանապարհով: Որովհետեւ երկու դեպքում էլ Կենտրոնը կարող է խանգարել՝ և՛ պատերազմ մղելուն, ինչպես տեսանք Նոյեմբերյանում, և՛ բանակցություններին: Ինչո՞ւ, որովհետեւ Կենտրոնը մի կողմից երկու կողմերին կոչ է անում հարցերը լուծել բանակցությունների միջոցով, եւ դա, ըստ երեւույթին, բնական ճանապարհն է, բայց մյուս կողմից՝ իր միջամտությամբ, Արցախում իր ներկայությամբ եւ հաստատած ռազմական դիկտատուրայով, փաստորեն, վիժեցնում է այդ բանակցությունների հնարավորությունը: Սա ասված է նրանց. թե՛ Դորբաչովին է ասված, թե՛ Ռիժկովին, եւ թե՛ մյուս ղեկավարներին: Ուրեմն, մինչեւ երրորդ կողմը չդադարեցնի իր միջամտությունը, անհնար կլինի որեւէ հստակեցում կատարել հայ-ադրբեջանական հարաբերություններում: Հետեւաբար, այսօր մեր գերխնդիրն է ստիպել Կենտրոնին պարզելու իր դիրքորոշումը: Դրա համար կան և՛ բաղաքական, և՛ բարոզչական, և՛ ուժի ցուցադրման միջոցներ: Այս բոլոր միջոցներն էլ մեզ պետք է կիրառենք, որովհետեւ բաղաքականությունը բաղկացած է նշված երեք բաղադրիչներից:

Բայց դրա համար մենք նախ եւ առաջ պետք է հաղթական պատերազմ մղենք:

Ինչպե՞ս կարող ենք մենք հաղթական պատերազմ մղել, եթե Հայաստանում փաստորեն անիշխանություն է տիրում: Անիշխան հանրապետության հետ ոչ ոք չի ուզի հաշվի նստել՝ ո՛չ Մոսկվան, ո՛չ Ադրբեջանը: Դրանով էր բացատրվում, որ խորհրդարանի ընտրությունից հետո մեր գերխնդիրը համարեցինք Հայաստանում ուժեղ իշխանության հաստատումը: Եւ սա, կարծում եմ, ոչ ոքի կողմից չի կարող վիճարկվել: Մինչեւ մենք չապահովենք մեր հանրապետության կայունությունը, մինչեւ մեր ձեռքը չվերցնենք իրավիճակի հսկողությունը, վերջ չտանք զինված ջոկատների վտանգավոր, արկածախնդրական ինքնագործունեությանը, մինչեւ վերջ չտանք մաֆիայի կողմից շարունակվող ալան-թալանին, երբ այսօրեւէ, այս վայրկյանին վատնվում են մեր ազգային հարստությունները, բոլոր բազաներից շուտափույթ կերպով յուրացվում ու իրացվում են արտասահմանյան ապրանքները, երբ այսօր էլ, այս վայրկյանին պաշտոններ են վաճառվում, երբ Հայաստանի պետական անվտանգության կոմիտեն եւ ներքին գործերի մինիստրությունը սաբոտաժի են ենթարկում մեր բոլոր ձեռնարկումները, ահա, այս պայմաններում դեմ ուզում եմ հաշի՞վ տեսնել Ադրբեջանի հետ:

Դեմ շարաչար սխալվում եմ: Դեմ մեր ազգի առջեւ կործանման դուռ եմ բացում դրանով: Եւ ես վստահ եմ, որ Ադրբեջանի այս վերջին ակտիվությունը հենց այսպիսի ռեակցիա էր նախատեսել մեր կողմից: Ուրվինետեւ Ադրբեջանը հաջ գիտակցում է, որ կայուն Հայաստանը շատ ավելի լուրջ հակառակորդ է իր համար, քան նույնիսկ հազարավոր, տասնյակ հազարավոր զինված ջոկատների գոյությունը: Վերջինս պարզապես քաղաքական խաղարարտ էր, որ Ադրբեջանն օգտագործում էր: Դեպքերի շղթան ցույց է տալիս, որ Ադրբեջանը վարում է Հայաստանի ապակայունացման քաղաքականություն, եւ այդ ակտիվացումը նկատվեց հենց այն բանից հետո, երբ Հայաստանում միտումներ նկատվեցին դրության կայունացման ուղղությամբ: Հիշենք Նոյեմբերյանի դեպքերը, որին տուրք տվեցին տափգլուխ, արկածախնդիր եւ մաֆիայի կողմից կառավարվող բռեական տարրերը, ինչպես նաեւ՝ մեր խորհրդարանի որոշ ներկայացուցիչներ, որոնք, ժողովրդին ապակողմնորոշելու համար, հարցը շարունակ արծարծում էին այս ամբիոնից:

Դրան հետեւեցին Շահումյանը, Գետաշենը, եւ Արցախում սկսվեցին նույն պրոցեսները: Ուրվինետեւ, ես արդեն մեկ անգամ ասել եմ, կներեմ որ կկրկնեմ, նոր իշխանության հաստատմամբ, Հայաստանում տեղի ունեցավ արմատական փոփոխություն, որը դեռ շատերս չենք գիտակցում: Հայաստանն այսօր խորհրդային Միության ամենաարմատական հանրապետությունն է: Շա՛տ ավելի, քան Մերձբալթյան հանրապետությունները, եւ նույնիսկ՝ Լիտվան: Ինչո՞ւ: Ուրվինետեւ Հայաստանի ներսում Մոսկվան հենարան չունի, հող չունի: Լիտվայում կան ազգային փորամասնություններ, կա Ինտերֆրոնտ, այնտեղ նա դեռ կարող է ազդել դրանց միջոցով: Հայաստանի ներսում Մոսկվան որեւէ լծակ չունի: Միակ լծակը, որով նա կարող է ազդել Հայաստանի իրավիճակի վրա, Արցախն է՝ Արցախը, Գետաշենը, Շահումյանը: Եւ ահա այս լծակն է, որ օգտագործվում էր եւ այսուհետեւ էլ կօգտագործվի Հայաստանի դրությունն ապակայունացնելու նպատակով: Այստեղ է, որ մեզնից պահանջվում է վարել շատ ճկուն քաղաքականություն:

Շահումյանում, Գետաշենում եւ Արցախում ադրբեջանական կողմի ակտիվացման հետ կապված երկրորդ հանգամանքը, ինչպես արդեն նշեց Սեյրան Բաղդասարյանը, նախընտրական կամպանիայի հարցն է: Իսկապես, սեպտեմբերի 30-ին նշանակված են Ադրբեջանի ընտրությունները, եւ Արցախի խաղարարտն օգտագործվում է երկու կողմից էլ՝ թե՛ պաշտոնական իշխանությունների, թե՛ ժողովրդական նպատակի: Երկուսն էլ այս խաղարարտն օգտագործում են ազգայնական զգացմունքներ գրգռելու եւ քաղաքական վարկ ձեռք բերելու համար: Ուստի պետք է գիտակցել, որ մեկ ամիս այս իրադարձությունները պետք է տեղի ունենան, եւ մենք պետք է համապատասխան դիմադրություն հանդես բերենք:

Այստեղ շատ խոսվեց դիմադրության մյուս միջոցների մասին, եւ, ինձ թվում է, պարոն Գրիգյանը համոզվեց, որ այս նիստը չէր կարելի բաց անել: Ուրվինետեւ ասվեցին այնպիսի բաներ, որ թվում է թե, նույնիսկ փակ նիստում, մեր պատգամավորներն այնման գիտակցություն պիտի հանդես բերեին, որ չխոսեին դրանց մասին: Եւ վստահ եղեք, որ խոսողները չեն, որ գործ են անում: Գործ անողներն ընդհանրապես դրա մասին չեն խոսում: Կարծում եմ՝ այսպիսի խոսակցությունները պետք է վերանան մեր խորհրդարանից: Անողները շատ լավ էլ գիտեն, թե ինչ հանապարհով պետք է անել, ինչպես եւ ինչ պետք է հայթայթել,

ում միջոցով պետք է փոխանցել: Այստեղ կառավարությունից ուղղաթիռ, օդանավ կամ ինչ-որ խաղալիքներ պահանջել՝ դա, պարզապես, ինչ ասեմ, անլուրջ շահատաջ է մեր իշխանությունների նկատմամբ: Անլուրջ շահատաջ, որ արվում է սպեկուլյատիվ նպատակներով: Սա վերաբերում է նաեւ պարոն Աղաջանյանին: Ես պարոն Աղաջանյանին բազմիցս լսել եմ, բազմիցս ընդունել եմ Արցախի պատվիրակությանը. այստեղ ներկա են, կարող են վկայել: Համատեղ ննջարկել ենք այն ամենն, ինչ այստեղ առաջարկվում է, բայց դա արդեն արվել ու արվում է: Համատեղ ննջարկել ենք մեր բոլոր ծրագրերը, առաջիկա միջոցառումները, որոնք նախատեսվում են իրականացնել Արցախում, եւ, եթե մի բան նրանց դուր չի եկել, դա դեռեւս հիմք չի տալիս այդպիսի մեղադրանքներ կարդալ Հայաստանի իշխանությունների եւ մեր խորհրդարանի հասցեին:

Արցախի հարցն, արդեն բանիերորդ անգամ եմ կրկնում, ունի երկու լուծում: Այդ հարցի ուղղությամբ կա երկու ստրատեգիա՝ առճակատման ստրատեգիան եւ փոխզիջումների ստրատեգիան: Մինչեւ հիմա մենք ընթացել ենք առճակատման ստրատեգիայով: Մեր բաղաքականության մեջ Արցախի հարցում ոչ մի դիվանագիտություն չի եղել, դիվանագիտությունն իսպառ բացակայել է: Մենք ընտրել ենք առճակատման ստրատեգիան, եւ, չի կարելի ժխտել, որ այդ ստրատեգիայով մենք հասել ենք լուրջ հաջողությունների: Որեան էլ մենք չտեսնենք այդ հաջողությունները, նրանք կան: Արցախը երկուսուկես տարի է՝ բացարձակապես անկախ է Ադրբեջանից: Ճիշտ է՝ շատ ծանր պայմաններում, ճնշման տակ, բայց Արցախն անկախ է Ադրբեջանից: Նա Ադրբեջանի հետ խզել է բոլոր հարաբերությունները՝ թե՛ տնտեսական, թե՛ մշակութային, թե՛ բաղաքական, եւ թե՛ վարչական: Ստեղծվել է մի դրություն, որը պարզապես պետք է ամրապնդել, եւ այս հաջողությունը մենք չենք կարող չտեսնել: Առճակատումն, այո՛, բերեց լուրջ հաջողությունների: Բայց իմ ընդդիմախոսներն իրե պետք է ապացուցեն, որ առճակատումն այսուհետեւ էլ կտա դրական արդյունքներ:

Ինչպես ասացի, այս հարցը բազմիցս ննջարկել եմ Արցախի՝ այստեղ ներկայացված պատգամավորական խմբի հետ, դրա շուրջ առանձին-առանձին զրուցել եմ Իգոր Մուրադյանի եւ Հենրիկ Պողոսյանի հետ: Հարցը ննջել ենք բոլոր կողմերից, բայց ոչ ոք չի կարողացել ապացուցել, որ առճակատումն այսուհետեւ էլ կտա դրական արդյունքներ: Ոչ ոք չի կարողացել դա ապացուցել: Ես, իհարկե, ամենեւին չեմ բացառում այս ստրատեգիան, որովհետեւ մինչեւ հիմա այն ինչ-որ արդյունք տվել է: Բայց այս ստրատեգիան ընտրելու համար մենք պետք է լուրջ փաստարկներ ունենանք, որ այսուհետեւ էլ նա կտա դրական արդյունք: Խորհրդարանում էլ բազմաթիվ առաջարկներ եղան, բայց ոչ մեկը երաշխիք չտվեց, որ այդ առաջարկությունները կհանգեցնեն նման արդյունքի: Ոչ ոք:

Կա մյուս հանապարհը՝ փոխզիջումների հանապարհը: Մենք դա դեռեւս չենք փորձարկել: Երկուսուկես տարի մենք ընթացել ենք առաջին ուղիով: Երկրորդն, ինչպես ասացի, դեռեւս չենք փորձարկել: Բայց մենք իրավունք չունենք միանգամից մի կողմ նետել այն: Կարող է իսկապես կգա մի ժամանակ, որ դրանից հրաժարվենք: Բայց դրա համար մենք դա պետք է փորձենք: Եւ ես ուրախ եմ, որ այստեղ գտնվեցին մարդիկ, որ առաջարկեցին՝ նույնիսկ անվերապահորեն, առանց նախապայմանների, բանակցություններ նստել թե՛ ադրբեջանական կողմի, թե՛ Մոսկվայի, եւ, եթե պետք է՝ Վրաստանի, Թուրքիայի, Իրանի հետ: Ցանկացածի հետ պետք է բանակցել՝ գոնե մեր հարաբերությունները ճշտելու եւ դիմորոշումները պարզելու նպատակով:

Նորից առճակատման մասին. ես ուզում եմ հիշեցնել, ավելի հիշտ՝ ոչ թե հիշեցնել, այլ տեղյակ պահել խորհրդարանին այն բանակցությունների բովանդակության մասին, որ ես վարել եմ արցախյան պատգամավորության հետ: Արցախի խնդրի վերաբերյալ մեր իշխանություններն ունեն ճնտակ ծրագիր: Եթե դա չի հրապարակվել՝ ապա չի հրապարակվել զուտ տակտիկական նկատառումներով: Ձեմ ասում, թե դա օպտիմալ ծրագիր է, բայց դեռեւս ոչ ոք դրան լուրջ այլընտրանք չի հակադրել: Ինչպես նախորդ հոդվածով արդեն նշեց, խորհրդարանն Արցախի հարցում այլեւս անելիք չունի: Խորհրդարանը բաղաքական մարմին է, եւ այդ առումով հասել է առավելագույնին, ինչ կարող էր անել. դա դեկտեմբերի 1-ի որոշումն է: Քաղաքական տեսակետից դրանից ավելի մեծ բայլ խորհրդարանն այլեւս չի կարող անել: Ուստի, Հայաստանի եւ Արցախի վերամիավորման հարցը պետք է տեղափոխվի գործնական բնագավառ: Ես ուզում եմ հիշեցնել, որ Իգոր Մուրադյանն էլ այս տեսակետին է, ինձ դեռեւս մի երկու-երեք ամիս առաջ մի զրույց էր ուղարկել, եւ նրանում հենց այս գաղափարն էր արծարծում:

Այնպես որ, այժմ Արցախի եւ Հայաստանի վերամիավորման խնդիրը, կամ դեկտեմբերի 1-ի որոշման կատարումը, պետք է դրվի առդեն գործադիր իշխանությունների վրա: Եւ Արցախի պատգամավորությանն էլ բազմիցս ասվել է, որ ավելորդ է խորհրդարանում Արցախին նվիրված մշտական հանձնաժողովի ստեղծումը: Եթե անպայման պետք է ստեղծվի Արցախի հարցերով զբաղվող մի մարմին, ապա այն պետք է ստեղծվի Նախարարների խորհրդին կից, լինի դա վարչություն, թե կոմիտե: Այդ մարմինն է, որը կոնկրետ, գործնականորեն պետք է զբաղվի դեկտեմբերի 1-ի որոշման իրականացմամբ, այսինքն՝ Հայաստանի եւ Արցախի տնտեսական, վարչական, հաղաքական եւ մշակութային կառուցվածքների ինտեգրացիայի գործով:

Բայց դրա համար անհրաժեշտ է մեկ պայման: Հայաստանում այսօր արդեն կա մի իշխանություն, որ պատրաստ է իրականացնել դեկտեմբերի 1-ի որոշումը, բայց, բանից պարզվում է՝ դա ինչ է: Ինչո՞ւ: Որովհետեւ մենք չունենք պատմոյոր Արցախում: Առանց պատմոյորի մենք չենք կարող գործադրել դեկտեմբերի 1-ի որոշումը եւ ձեռնարկել վերամիավորման գործնական իրականացմանը: Ո՞վ պիտի լինի այդ պատմոյորը: Այդ պատմոյորը պետք է լինեն Արցախի օրինական իշխանությունները, որոնք վերացված են: Արցախում տիրում է ռազմական դիկտատուրա, որն իրականացնում է ոչ միայն ռեպրեսիվ, այլ նաեւ տնտեսական, հաղաքական եւ վարչական ֆունկցիաներ: Արցախում չկա հայկական իշխանություն: Ճիշտ է՝ այն դեռեւս մնացել է շրջանային, հաղաքային եւ գյուղական խորհուրդների մակարդակով, բայց արդեն սկսվել է նաեւ նրանց իրավունքների սահմանափակման պրոցեսը: Մինչեւ Արցախում մենք պատմոյոր չունենանք, հնարավոր չէ իրականացնել այս գործը: Ուստի այստեղից եզրակացությունը պարզ է. այսօր մենք պետք է ոչ թե ինչ-որ դիմումներ գրենք, որոշումներ կայացնենք (ես չեմ բացառում, իհարկե, հասարակական կարծիքը, հասարակական կարծիքը մշտական գործոն է, եւ այդ ուղղությամբ պետք է աշխատել), այլ գործնական միջոցներ մշակենք Արցախում օրինական իշխանությունները վերականգնելու ուղղությամբ:

Ո՞րն է դրա ճանապարհը:

Սեպտեմբերի 30-ին ողջ Ադրբեջանի տարածքում հայտարարված են տեղական եւ Գերագույն խորհուրդների ընտրություններ: Իդեալական

տարբերակը կլիներ այն (խնդրում եմ դեռեւս չտարակել, ես հետո կբացատրեմ), որ այդ ընտրությունները կայանային նաեւ Արցախում, ընտրվեին տեղական, այն է՝ գյուղական, շրջանային, հաղաքային եւ մարզային խորհուրդները: Ինչ վերաբերում է Ադրբեջանի Գերագույն խորհրդի ընտրություններին, ապա դրանք միաժամանակ են տեղի ունենում, եւ Գերագույն խորհրդի ընտրությունները կարելի էր միշտ էլ վիժեցնել: Նույնիսկ կարելի էր համարել, որ ընտրությունները կայացել են, բայց ոչ մի պատգամավոր չի ընտրվել: Դա շատ հեշտությամբ կարելի էր անել, դրա տեխնիկան պարզ է ձեզ համար, չեմ էլ ուզում բացատրել: Այս ամենից հետո, հոկտեմբերի 1-ին, մենք Արցախում կունենայինք օրինական, ընտրված իշխանություններ:

Բայց այստեղ նորից արցախյան պատգամավորությունը մեզ դնում է աֆգանների մեջ (չնայած՝ Արցախում կան նաեւ այլ կարծիքներ, այն էլ լուրջ մարդկանց կողմից արտահայտված, նույնիսկ լուրջ, որոնք այս պատգամավորությունը): Մի քանի անգամ արդեն ինձ վրա փորձել են ճնշում գործադրել (ես նկատի ունեմ բառոյական ճնշում), որ անպայման մեր խորհրդարանը որոշում կայացնի, որպեսզի Արցախում ընտրություններն անցկացվեն ոչ թե Ադրբեջանի ընտրական օրենքների համաձայն, այլ Հայաստանի Գերագույն խորհրդի սահմանած կարգով:

Դուք պատկերացնո՞ւմ եք, թե սա ինչի կհանգեցնի:

Մենք կարող ենք դա անել, ասացի՝ դա առճակատման ստրատեգիան է, որը չի կարելի բացառել, եթե դրա հետեւանքներն ընդունելի են: Այո, մենք դա կարող ենք անել, ցանկացած օր Արցախում կհայտարարենք ընտրություններ ու կանցկացնենք, ինչպես մայիսի 20-ին շատ հաջող էլ կարողացանք անցկացնել այդպիսիք:

Բայց ի՞նչ կունենանք հաջորդ օրը:

Հաջորդ օրը ես՛ւ Ադրբեջանի, ես՛ւ Միության պրեզիդենտներն այդ ընտրություններն անօրինական կհամարեն, եւ մենք Արցախում ընդհանրապես որեւէ իշխանություն՝ նույնիսկ գյուղական խորհուրդ չենք ունենա: Իսկ ես ասացի՝ մեր նպատակն է Արցախում վերականգնել իշխանությունները որպես պատմոյոր՝ իրականացնելու համար մեր ծրագրերը: Կրկնում եմ՝ ընտրությունների հաջորդ օրն Արցախում կվերանա իշխանության վերջին տարրն անգամ, որ այժմ գոնե գոյություն ունի: Դա կվերանա նաեւ այն դեպքում, եթե Արցախում վիժեցվեն, բոյ-

կոտի ենթարկվեն Ադրբեջանի հայտարարած ընտրությունները: Դուցե ադրբեջանցիները շատ էլ ուրախ կլինեն, եթե Արցախը չմասնակցի սեպտեմբերի 30-ի ընտրություններին, որովհետեւ հոկտեմբերի 1-ին արդեն Արցախում օրինական իշխանություն չի լինի: Եւ Մութալիբովը շատ հեշտությամբ այնտեղ կհայտարարի պրեզիդենտական կառավարման կարգավիճակ: Սա՛ է իրականությունը, եւ մենք պետք է ելնենք ա՛յս իրականությունից:

Ուստի պետք է գտնել մի ճանապարհ, դիվանագիտական ճանապարհ՝ հարգելով թե՛ արցախցիների, թե՛ Հայաստանի բնակչության, եւ թե՛ ադրբեջանցիների զգացմունքները: Նրանց ամբիցիաներն էլ չպետք է մոռանալ: Դիվանագիտությունը հենց դա է: Պետք է գտնել մի ընդունելի ճանապարհ բոլոր երեք կողմերի համար: Մենք շատ ենք մտածել դրա մասին, բազմաթիվ վերլուծություններ կատարել, եւ կարծիք թե գտել ենք այդպիսի մի ճանապարհ ու դրա մասին նույնիսկ հաղորդել ենք Դորբաչովին: Բայց, դժբախտաբար, տեղի ունեցած վերջին իրադարձություններ եւ հայտարարված արտակարգ դրության պատճառով ես չկարողացա գնալ Մոսկվա: Արդեն պայմանավորվածություն կար, որ ես պետք է հանդիպեի Դորբաչովի հետ, եւ ննջեինք հենց այս հարցը:

Այսօր Վազգեն Մանուկյանն է գնացել Մոսկվա՝ շոշափելու համար հենց այն հարցերը, որոնց առիթով մեզ կշտամբանքներ են հնչեցվում: Այսօր երեկոյան կամ վաղը նա կվերադառնա: Երբ տեսնեմ, որ այստեղ հրատապ անելիք չունեմ, անմիջապես պետք է իրականացնեմ այդ այցելությունը՝ ննջարկելու համար այդ հարցերը, որովհետեւ արդեն շատ ենք ուշացնում. սեպտեմբերի 30-ին այդ ընտրությունները պետք է տեղի ունենան:

Ուրեմն ո՞րն է այդ ընդունելի ճանապարհը:

Իմ կարծիքով՝ Մութալիբովի եւ Դորբաչովի հետ նախնական խոսակցություններից հետո կարելի է գտնել մի ձեւ, որի համաձայն՝ ընտրություններն Արցախում անցկացվեն ո՛չ Ադրբեջանի, ո՛չ էլ Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ: Այդ ձեւը հետեւյալն է. մարզային խորհուրդն իրեն է որոշում կայացնում Արցախում ընտրություններ անցկացնելու մասին: Բայց սրանով կբավարարվեն, ասենք, միայն մեր եւ Արցախի ամբիցիաները: Իսկ Ադրբեջանի ամբիցիաներն էլ, ինձ թվում է, կարելի է բավարարել նրանով, որ մարզային խորհրդի կողմից անց-

կացվելիք ընտրությունները նշանակվեն նույն սեպտեմբերի 30-ին: Թող Ադրբեջանը համարի, որ այդ ընտրություններն իրեն է անցկացնում: Արցախցիներն էլ կհամարեն, որ դրանք անցկացնում են իրենց որոշմամբ, եւ ժողովուրդը կհասկանա: Իսկ ինչ վերաբերում է մեզ, պարզ է՝ մեր կողմից դա ըմբռնումով կընկալվի:

Եթե մենք սա չկարողանանք անել, ինձ թվում է՝ մեր բոլոր ճիգերը եւ անգամ իմքնապաշտպանական ձեռնարկները ի դերեւ կելնեն: Եւ մենք կկորցնենք Արցախի հարցը բաղաքական ճանապարհով լուծելու վերջին հնարավորությունը:

Ես ասացի, որ իմ վերլուծություններն ինձ բերել են այն համոզման, որ այսօր առնակատման ստրատեգիան արդեն սպառել է իրեն, եւ ժամանակն է անցնելու փոխզիջումների ստրատեգիային: Փոխզիջումների մասին խոսելով՝ ես չեմ վախենում իմ վարկը կորցնելուց: Իսկ դուք կարող եք ժողովրդի մեջ տարածել, որ ես դավաճանել եմ Արցախի գործին: Ավելին, ես չեմ բացառում, որ դիվանագիտական նկատառումներով կարելի է նույնիսկ որոշ ժամանակով մոռատորիում հայտարարել մեր իսկ ընդունած որոշումների առթիվ: Նկատի ունեմ դեկտեմբերի 1-ի եւ հունվարի 9-ի որոշումները: Մեզ համար այսօր ամենակարեւորն այն է, որպեսզի կարողանանք ապահովել արցախահայության գոյությունն Արցախում: Դրա համար, ասացի, կա երկու պայման. մեկ՝ վերականգնել Արցախի օրինական իշխանությունները, եւ երկրորդ՝ բացառել բանակի միջամտությունը Արցախի գործերին: Դրա ճանապարհն էլ այն է, որ բանակը պետք է հանվի մարզից եւ տեղադրվի Արցախի ու Ադրբեջանի սահմանների վրա: Եթե մենք կարողանանք անել այս երկու բանը, վստահ եղեք, որ մենք մեր պարտքը կատարած կլինենք մեր սերունդների հանդեպ:

Վերամիավորման գործը ժամանակի խնդիր է, եւ դրան մենք վաղ թե ուշ կհասնենք, բայց կհասնենք միայն այն պայմանով, եթե մենք այսօր կարողանանք իրականացնել այս երկու կոնկրետ իրականանալի խնդիրները:

Սա էր ընդհանուր առմամբ իմ ասելիքը, եւ ես խորհրդարանին խնդրում եմ չընկնել ծայրահեղությունների մեջ, հնարավոր պահի լրջությունը, ամեն ինչ անել՝ Արցախի, Գետաշենի եւ Շահումյանի իմքնապաշտպանական կառույցները ճզորացնելու ուղղությամբ, բայց

անել առանց աղմուկի, առանց ցուցադրական եռանդի ու գործողությունների: Սա միայն վնաս կբերի մեր գործին: Տեսանք, թե ցուցադրականությունը ինչպիսի ողբերգության հասցրեց մեր ժողովրդին: Ես նկատի ունեմ ՀԱՔ-ի եւ մյուս ռազմական ջոկատների այն ցուցադրական պաճվածքը, որ եռանք որդեգրել էին այս վերջին վեց ամիսների ընթացքում: Եթե եռանք այդպես ցուցադրաբար չգործեին, չցցվեին, գուցե շատ օգտակար գործ կարող էին անել այսօր, որ, դժբախտաբար, արդեն ի վիճակի չեն անելու:

Վերջում կրկնում եմ. եթե անգամ պետք է ընդունվի այդ փաստաթուղթը (անկեղծորեն ասեմ, ես դրան շատ մեծ կարեւորություն չեմ տալիս, թեեւ բառոզչական կամ հասարակական կարծիք ստեղծելու նպատակներով գուցե իմաստ ունի ընդունել), ապա պետք է ուշադրություն դարձնել, որ այդ փաստաթղթում ծայրահեղություններ չլինեն:

Շեռուհակալություն ուշադրության համար:

ՀՀԱՆԱ, 28/03.09.90: Բանավոր եղույթի ձայնագրության վերծանություն:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՕՐԱԹԵՐԹԻՆ

(9 հոկտեմբերի, 1990 թ.)

– Պարոն Տեր-Պետրոսյան, չխախտելով ավանդույթը, սկզբում անդրադառնանք պատմությանը՝ մեր աչքերի առջեւ գրված, մեր՝ յուրաքանչյուրիս կերտած պատմությանը, միով բանիվ՝ այն ժամանակահատվածին, որն ընկած է երկու՝ 1988 թ. փետրվարի 20 եւ 1990 թ. օգոստոսի 4 տարեթվերի միջեւ: Որպես այդ Շարժման առաջնորդներից մեկը, որտե՞ղ եք տեսնում նրա ակունքները, ինչպե՞ս եք գնահատում Ղարաբաղյան շարժումը, ո՞րն էր նրա պատմական էությունը:

– Ղարաբաղյան շարժումը, նրա ընդգրկումը՝ համաժողովրդական բնույթը, շատերի համար անակնկալ էր: Սակայն երբ հետադարձ հայացք ենք ձգում ոչ հեռավոր պատմական անցյալին, վերլուծում եւ ընկալում ենք պատմական տրամաբանությունը, ակներեւ է դառնում, որ Շարժումն անցյալի միանգամայն տրամաբանական շարունակությունն էր, պատմական երեւույթների շղթայի անխուսափելի օղակներից մեկը:

Հայ ժողովուրդը խորհրդային Միության ամենահարավագույն ժողովուրդն էր ամբողջ 70 տարի, ԽՍՀՄ կազմավորման շրջանից ի վեր, երբ նրա հայրենիքը հանուն համաշխարհային հեղափոխության շահերի, հանուն տոտալիտար տերության ստեղծման փաստորեն զոհաբերվեց, մասնատվեց բարեկամ համարվող Թուրքիայի ու նրա դաշնակիցը հանդիսացող Ադրբեջանի միջեւ: Կատարված պատմական այս անարդարության զգացումը, որը տիրապետող է եղել հայ ժողովրդի մեջ, անխուսափելիորեն պետք է հանգեցներ ժողովրդի ընդվզմանը: Այդ պահը

հանդիսացավ 1988 թ. փետրվարի 20-ը, երբ արցախահայությունը միանգամայն սահմանադրական եղանակով բարձրացրեց մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու եւ Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու հարցը: Սա մի փորիկ կայծ էր, որը սակայն շատ արագ՝ նույն օրն իսկ հրդեհ առաջացրեց, որը բոցավառեց, փոթորկեց հայության սրտերը: Եւ ոչ միայն Հայաստանում, այլեւ ի սփյուռս աշխարհի: Այդ հրդեհը շարունակվում է մինչեւ օրս: Ծտար կամ կողմից սոսկ դատողություններ անող մարդու համար այս ամենը կարող է եւ անսպասելի համարվել, սակայն Շարժումը պատմության ընդհանուր տրամաբանության անխուսափելի փույն էր:

– Այսինքն՝ արցախյան հիմնահարցը փաստորեն առիթ հանդիսացավ պատմական անարդարության դեմ ընդվզելու, ողջ ազգի իրավունքները պաշտպանելու համար:

– Այո, առիթ, հանգի միայն Արցախի ոտնահարված իրավունքի խնդիրը չէր դրված այս շարժման ակունքներում, այլ ողջ հայ ժողովրդի իրավազրկության հարցը:

Շարժման համաժողովրդականության մասին: Այն առաջին հերթին պայմանավորված էր հենց վերը նշածս՝ հայ ժողովրդի իրավազրկության փաստով: Երկրորդ, ոչ նվազ կարեւոր հանգամանքը խնդրի արդարացիությունն էր: Ոչ մի հայի սրտում կասկածի նշույլ իսկ չկար, որ արցախահայության պահանջն արդարացի է: Ջարժե, ինձ թվում է, ներկայացնել Շարժման պատմությունը, հանգի այն անցել է բոլորիս աչքերի առջեւ, բոլորիս մասնակցությամբ: Սակայն հիմնական փուլերին անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ: Շարժումն սկսեցին մի խումբ գործիչներ, ովքեր այդ փուլում չափազանց մեծ դեր խաղացին: Ես նկատի ունեմ Ե՛ւ Իգոր Մուրադյանին, Ե՛ւ Վաչե Սարուխանյանին, Ե՛ւ Վազգեն Մանուկյանին, Ե՛ւ Համբարձում Գալստյանին, Ե՛ւ Սամսոն Ղազարյանին, Ե՛ւ Աշոտ Մանուչարյանին, Ե՛ւ Գագիկ Սափարյանին, Ե՛ւ Ջորի Բալայանին, Ե՛ւ Սիլվա Կապուտիկյանին: Նոանք էին փետրվարին գլխավորում Շարժումը, սակայն որոշ ժամանակ անց այս գործիչների մեծ մասը, չեմ կարող ասել, թե հեռացավ պայքարից, սակայն հեռացավ հրապարակից: Կազմավորվեց մի նոր կոմիտե՝ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, որում թվարկածս մարդկանցից չերեն

ընդգրկվեցին: Կոմիտեն համալրվեց նոր անհատներով: Թե՛ հրապարակից հեռացած անձանց, թե՛ ժողովրդի գիտակցության մեջ այս փոփոխությունը որոշ պարզունակ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Երեւույթի իմ բացատրությունը հետեւյալն է. պայքարը, ես նկատի ունեմ ոչ միայն մեր Շարժումը, այլ պայքարն ընդհանրապես, բաղկացած է առանձին հանգրվաններից, որոնցից յուրաքանչյուրն առաջ է բաշում իր ղեկավարներին, նրանց, ովքեր առավելագույնս են համապատասխանում պայքարի տվյալ փուլի պահանջներին: Կրկնեմ՝ թվարկածս գործիչները լիովին համապատասխանում էին Շարժման սկզբնավորման շրջանի պահանջներին, իսկ հետագայում, երբ Շարժումը նոր պահանջներ սկսեց թելադրել, նրանք այլեւս ի վիճակի չէին բավարարել դրանք:

Բացառված չէ նաեւ այն պահը, երբ մենք իմներս այլեւս չենք համապատասխանելու պայքարի պահանջներին, եւ միանգամայն օրինաչափորեն մեզ փոխարինելու գան շատ ավելի ունակ մարդիկ, ովքեր ի վիճակի կլինեն Շարժումը տանել իր տրամաբանական հունով:

– Ինչպիսի՞ գնահատականների է արժանացել «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը, եւ ինչպե՞ս այն կգնահատեիք Դուք:

– Մեր գործունեության գնահատականները տարաբնույթ են եղել՝ Ե՛ւ օբյեկտիվ, Ե՛ւ միտումնավոր, Ե՛ւ բարեկամական, Ե՛ւ թշնամական, Ե՛ւ... հաղթնիական: Եւ, ցավոք, շատ հաճախ տիրապետող է եղել հենց վերջին՝ հաղթնիական մոտեցումը: Մեզ փորձել են մեղադրել պաշտոնամոլության, անձնական հավակնություններին հագուրդ տալու մեջ: Սակայն նմանատիպ գնահատականներն ու մեղադրանքները հերքվեցին ժողովրդի կողմից: Եւ ժողովրդի վերաբերմունքը (նկատի ունեմ այն մեծ վստահությունը, որը ցուցաբերվեց «Ղարաբաղ» կոմիտեի, հետագայում նաեւ ՀՀՇ-ի նկատմամբ, ինչն ի վերջո հանգեցրեց հանրապետությունում ժողովրդավարական ուժերի հաղթանակին) դրա պերճախոս վկայությունն է:

Իմ գնահատմամբ՝ մեր գործունեությունը բնորոշվել է Շարժման տրամաբանությանը հավատարիմ մնալու սկզբունքով: Ամբոխավարական կեցվածքներ բնավ չենք ընդունել: Նույնիսկ պահեր են եղել, երբ ժողովրդի կարծիքին հակառակ, ելնելով դարձյալ Շարժման տրամա-

բանությունից, բայլեր եմ կատարել, որոնք ընկալվել են ոչ միանշանակ, ոչ անմիջապես: Ենթարկվել եմ անգամ կշտամբանքների, սակայն երբեմ չենք առաջնորդվել բոլորին դուր գալու եւ հաճոյանալու սկզբունքով: Որոշ ժամանակ անց ժողովուրդն անպայմանորեն զգացել է մեր գործողությունների նշմարտացիությունն ու անհրաժեշտությունը:

Երկրորդ բնորոշ գիծը, որը հատուկ է եղել մեր գործունեությանը. մենք երբեմ չենք առաջնորդվել պատահական լուսերով: Մեզ համար միշտ էլ ավելի կարեւոր է եղել բաղաքական իրավիճակի սկզբունքային վերլուծությունը, հան պատեհապաշտությունը, այն է՝ Մոսկվայից, Բաքվից, Արցախից ստացված որեէ տեղեկության հիման վրա այս կամ այն բայլը կատարելը: Երրորդ բնորոշ հատկանիշը. Արցախի հարցը մենք երբեմ չենք տարանջատել հայ ժողովրդի առջեւ այսօր ծառացած ընդհանուր խնդիրներից: Այդ պատճառով էլ ենք մենք կշտամբանքների ենթարկվել, երբ դրել ենք հարցեր, որոնք առաջին հայացից կապ չեն ունեցել Արցախի եւ Հայաստանի վերամիավորման հիմնահարցի հետ: Ասենք, օրինակ, մեր հանրապետության հասարակական կյանքի ժողովրդայնացման խնդիրը: Հիրավի, թվում է, դա անմիջականորեն չի առնչվում բուն խնդրին, սակայն այդպես է եւ էր՝ առաջին հայացից: Այդ հանգամանքը ոչ միշտ է ճիշտ հասկացվել, շահարկվել է, մենք կշտամբանքներ ենք լսել թե՛ բարեկամների, թե՛ շարականների կողմից: Այդ կետ մտածողներին ստիպված եմ հիշեցնել մեր ելակետային սկզբունքներից մեկը՝ Արցախի հարցը մենք երբեմ չենք առանձնացրել հայ ժողովրդի առջեւ ծառացած բոլոր պատմական ու կենսական խնդիրներից, հանգի առկա է դրանց ներքին խոր տրամաբանական կապը:

– Ներքին տրամաբանական այդ կապի առկայությունը, բնականաբար, նաեւ խնդրին նոր մոտեցումներ, նոր քաղաքականություն էր ենթադրում:

– Իհարկե: Եւ հենց այդ պատճառով էլ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն արդեն 1988-ի ամռանը եկավ այն եզրակացության, որ անհրաժեշտ է ընդլայնել Կոմիտեի ծրագիրը, Շարժման ծրագիրը, հանգի փետրվարյան իրադարձությունները ցույց տվեցին, որ Արցախի հարցը հնարավոր չէր լուծել, եթե Հայաստանը չստեղծեր ի՛ր բաղաքական գործոնը, չդառնար, բաղաքական գործընկեր:

Հաշվի առնենք, որ ադրբեջանական գործոնն արդեն առկա էր: Դա անհաբեկչությունն էր, բռնությունը, անն ու սարսափը: Այն իր մարմնավորումը գտավ Սումգայիթում: Հրամայական պահանջ էր դարձել դրան հակադրել հայկական գործոնը, եւ դա ոչ թե որպես բաղաքական շահատաժ, այլ որպես իրենին արժեք հիմնված հայ ժողովրդի կենսական շահերի վրա: Մենք պետք է հասկեհինք նրան, որ Հայաստանը դառնար բաղաքական գործընկեր, որ նրա հետ լրջորեն հաշվի նստեին: Դա տեղի կունենար միայն այն դեպքում, երբ Հայաստանն ապացուցեր իր իրենիշխանությունը եւ ժողովրդավարական արմատական վերափոխումներ կատարելու իր կարողությունը:

– Այդ առումով ի՛նչ էր նախատեսում Շարժման ծրագիրը, եւ ինչպիսի՛ փոփոխություն այն կրեց:

– 88-ին հրապարակված ՀՀՇ-ի ծրագիրն, ըստ էության, հետագայում փիչ փոփոխություններ է կրել մինչեւ համագումարում ընդունվելը: Բաղաքական սկզբունքները լիովին նույնն են մնացել: Ծրագիրը հիմնականում բաղկացած էր չորս առանձին հարցերի խմբից. առաջին՝ Հայաստանի իրենիշխանության ընդլայնում, տնտեսական իրենուրույնություն, արտաքին հարաբերություններ հաստատելու անհրաժեշտություն եւ ազգային զորամիավորումներ ստեղծելու հիմնահարցեր: Երկրորդը ժողովրդավարական վերափոխումների իրականացմանը նվիրված հարցերի խումբն էր՝ բազմակուսակցականության ընդունում, խոսքի, մամուլի, միտինգների, խղճի ազատություն եւ այլն: Երրորդ խումբն առնչվում էր բնապահպանական խնդիրներին: Չորրորդ խումբը կազմում էին հայ ազգային-ազատագրական պայքարի արդի ժամանակաշրջանի պատմության վերաիայման, հոգեւոր եւ մշակութային արժեքների վերականգնման խնդիրները: Ծրագրում Արցախը գրաղեցնում էր ընդամենը մի բանի տող, որն էլ նոր կշտամբանքների առիթ հանդիսացավ: Կյանքն ապացուցեց՝ դա այնպիսի մի ծրագիր էր, որը փաստորեն համապատասխանում էր մեր ժողովրդի պահանջներին, ընդգրկելով բոլոր այն խնդիրները, որոնք ըստ էության հնարավոր էր իրականացնել:

Մի սկզբունք ևս ցանկանում եմ նշել, որը բնորոշ էր «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀՇ-ի գործունեությանը: Դա նրանց բաղաքական իրատեսությունն էր: Մենք միշտ ժողովրդին ներկայացրել ենք այնպիսի ծրա-

գրեր, որոնք հնարավոր էին իրականացնել: Ժողովուրդը չի հանդուրժում անիրականանալի ծրագրեր, խոստումներ, կոչեր: Ձեմ կարող չնշել նաեւ Շարժման չափավորությունը: Միշտ էլ Շարժումը գիտակցել է այն սահմանը, որը թույլատրելի էր՝ մեր ժողովրդի շահերից ելնելով: Բազմիցս փորձեցին մեզ ներքաշել արկածախնդրության մեջ թե՛ մեր ընդդիմախոս բաղաքական կազմակերպությունները, թե՛ տեղական եւ կենտրոնական իշխանությունները, որոնք պատրաստ էին, թեկուզ արյունահեղությունների գնով, վտանգել ոչ միայն Շարժումը, այլեւ բաղաքացիական պատերազմի լուրջ սպառնալիք ստեղծել Հայաստանում: Շարժումը կարողացավ խուսանավել այդ բոլոր խութերից եւ, կարելի է ասել, բացառնակապես խաղաղ, սահմանադրական եղանակով ապացուցեց իր գոյության իրավունքը, իր իշխելու իրավունքը:

Ինչպես ճայ ժողովրդի, այնպես էլ համաշխարհային պատմության համար ուշագրավ երեւույթ էր նաեւ «Ղարաբաղ» կոմիտեի միասնությունը: Երբ մեր աչքերի առաջ բազմաթիվ կազմակերպություններ են բայբայվում, երբ նույն գործիչը երկու տարվա ընթացքում հանդես է գալիս մի շարք կազմակերպությունների անունից, երբ պառակտումները սովորական երեւույթ են, «Ղարաբաղ» կոմիտեն կարողացավ ավելի բան երկու տարի պահպանել իր միասնությունը: Պատճառներն, ըստ իս, երկուսն են. նախ՝ ժողովրդի հանդեպ առկա պատասխանատվության զգացումը, եւ երկրորդ՝ Կոմիտեում ընդգրկված էին այնպիսի մարդիկ, ովքեր իրեն անհատականություններ արդեն կայացել էին, կյանքի հանդեպ չունեին որեւէ անբավարարվածության զգացում, եւ որոնց համախմբումը տեղի էր ունեցել միայն ու միայն պարարի խոր գիտակցումից: Եւ սա հավասարապես վերաբերում է «Ղարաբաղ» կոմիտեի բոլոր անդամներին:

– Ընդդիմադիր ուժ – ղեկավար իշխանություն. այդ անցումն ինչպես հոգեբանական, այնպես էլ քաղաքական գնահատականների փոփոխություններ է ենթադրում: Որո՞նք են դրանք: Ունի՞, արդյոք, այսօրվա իշխանությունն ընդդիմադիր ուժ:

– Շարժումն իսկապես երկուսուկես տարի լուրջ ընդդիմադիր ուժ էր հանդիսանում իշխանությունների համար՝ հաճախ գնալով սուր առճակատումների: Եւ երբ այն եկավ իշխանության գլուխ (ես դա միանգամայն բնական եմ համարում), նա չկարողացավ անմիջապես ազատվել ընդդիմադիր ուժի հոգեբանությունից: Խոսքս առաջին ներքին վերաբերում է խորհրդարանի ժողովրդավարական թեւին: Դեռեւս իներցիայով նրանք առաջնորդվում են ընդդիմադիր ուժի հոգեբանությամբ, մինչդեռ նրանցում պետք է տիրապետի տիրոջ գիտակցությունը: Այս առումով մեծ դեր կարող են խաղալ տեղական խորհուրդների ընտրությունները, որտեղ ժողովրդավարական ուժերի հաղթանակը կապահովի ներկա իշխանության ամբողջականությունն ու լիարժեքությունը:

Այժմ իրական իշխանության գլուխ են նոր, ժողովրդավարական ուժերը, եւ այլ ուժ է, որ պետք է հանդես գա որպես ընդդիմադիր: Սկզբում այդ բանը փորձեց խորհրդարանի կոմկուսի թեւը, սակայն շատ շուտով նա կորցրեց կազմակերպված ընդդիմադիր ուժի իր բնույթը: Ասածս բնավ չի նշանակում, որ ժողովրդավարական ուժերը, կամ ՀՀՇ-ի թեւը խորհրդարանում, այժմ հանրապետությունում զերծ են ընդդիմությունից: Սակայն այդ ընդդիմադիր ուժը խորհրդարանական չէ: Դա ոեալ իշխանության ընդդիմությունն է: Նկատի ունեմ, մասնավորապես, ոչ գործադիր իշխանությունը, որը գրեթե մինչեւ օրս գտնվում է նախկին կառավարողների ձեռքում: Առկա են նաեւ սարսռազի երեւույթներ, որոնց մի մասը գիտակցված, կանխամտածված է, մյուս մասը՝ անշնորհիմության, անճարակության հետեւանք է, երրորդ մասը՝ չիմացության արդյունք: Խնդրի լուծումը ես տեսնում եմ տեղական խորհուրդների իրական բարմացման մեջ, որից հետո մենք կունենանք ոչ թե ոեալ իշխանության ընդդիմությունը, այլ բաղաքական ընդդիմադիր ուժ:

– Ձեր վերաբերմունքը բազմակուսակցական համակարգին:

– Բազմակուսակցությունն արդեն անխուսափելի անհրաժեշտություն է: Շատ շուտով այդ օրենքը կընդունվի, եւ բոլոր կուսակցությունները եւ այլ բաղաքական կազմակերպություններ, որոնք գործում են Սահմանադրության շրջանակներում, կդառնան իրավահավասար: Ես բացառում եմ այն կուսակցությունների գործունեությունը միայն, որոնք բաոզում են բռնություն կամ օրինական իշխանությունների բռնի տապալում: Դրանք, ինչպես բոլոր բաղաքակիրթ երկրներում, այնպես էլ մեզ մոտ, արգելված կլինեն:

– Ինչպե՞ս կբնութագրեիք հանրապետության ներկա քաղաքական իրավիճակը, որո՞նք են այն բարելավելու ուղիները:

– Ներկայումս Հայաստանում առկա սոցիալ-հաղարական իրավիճակը համեմատաբար ավելի կայուն է, քան մեկ-երկու ամիս առաջ, քանզի մենք գործով ապացուցեցինք, որ իսկապես ի վիճակի ենք սեփական ուժերով կայունացնել իրադրությունը: Ներքին վիճակը ապակայունացնող բոլոր գործոններն այսօր արդեն արտաքին գործոններն են՝ Արցախում իրականացվող աւաբեկչության եւ բռնության հաղարականությունը, Հայաստանի նկատմամբ տնտեսական ճնշում գործադրելու փորձերը: Դրանք պետք է հաղթահարվեն հաղարական միջոցներով՝ Կենտրոնի եւ Ադրբեջանի հետ տարվելիք բանակցությունների շնորհիվ: Արդեն որեւէ հիմք չկա Հայաստանի վիճակը որպես պայթյունավտանգ գնահատելու համար: Ջինված կազմավորումները լուծարի են ենթարկված, իսկ անհատների ձեռքին դեռեւս առկա զենքն այն վտանգը չի ներկայացնում, ինչ այն դեպքում, երբ զինված մարդիկ կազմակերպված են որոշակի խմբերով: Ջենքի լիարժեք առգրավումն արդեն ժամանակի հարց է: Ատիճանաբար, երբ ժողովուրդը կհամոզվի, որ պետությունը, նրա իրավապահ եւ օրինապահ մարմիններն ի վիճակի են ապահովելու իր անվտանգությունը, ինքը կամավոր կերպով կհրաժարվի այդ զենքից: Աշխարհազորի գոյության կարիքն ինքնին կվերանա, եւ նրա առողջ տարրերը կընդգրկվեն պետական կառուցվածքների մեջ:

– Ի՞նչ սկզբունքներից է ելնում ներկա իշխանությունն իր կադրային քաղաքականության մեջ:

– Մեր Շարժումը, եթե նկատել եք, առճակատման հաղարականությունից անցնում է ազգային համերաշխության հաղարականության: Գալով իշխանության գլուխ՝ մենք առաջին իսկ հայտարարություններով նշեցինք, որ իշխանությունը եւ, մասնավորապես, կառավարությունը ձեւավորելիս պետք է առաջնորդվենք ոչ թե հաղարական նկատառումներով, ոչ թե պետք է նկատի ունենանք այս կամ այն պաշտոնյայի հաղարական պատկանելությունը, այլ նրա անձնական եւ մասնագիտական հատկանիշները: Կարծում եմ՝ այսօր կառավարության կազմումը դրա ապացույցներից մեկն է, եւ այսուհետեւ էլ, որքան հնարավոր է, մենք պետք է առաջնորդվենք միայն ու միայն այդ սկզբունքով՝ ազգի ողջ ներուժը, բո-

լոր հաղարական հոսանքների, կուսակցությունների կարողությունները ծառայեցնել մեր ժողովրդի շահերին: Ազգային համերաշխության հիմքը մարդկանց իրական արժանիքները գնահատելն է: Յուրաքանչյուր անհատ հասարակության մեջ պետք է գրավի իր արժանի տեղը:

– Ինչպե՞ս կբնութագրեք ժողովրդավարական իշխանության առաջին երկու ամիսները:

– Հարցին պատասխանելուց առաջ չեմ կարող չանդրադառնալ ընտրություններին: Ընտրությունների՝ մայիսի 20-ի նախօրյակին Հայաստանում ստեղծվել էր ճգնաժամային իրավիճակ. երբ Կենտրոնը թույլ էր տվել Հայաստանի պաշտոնական իշխանություններին անել ամեն ինչ, դիմել ցանկացած անօրինականության՝ ապահովելու համար ընտրություններում իրենց հաղթանակը եւ թույլ չտալու, որ իշխանության գլուխ գան ժողովրդավարական ուժերը: Սա է փաստը, սա է իրականությունը: Քայլերը բացահայտ էին:

Երբ դա չհաջողվեց, փորձեր արվեցին սադրանքների դիմելով ապակայունացնել վիճակը, օգտվել այն հանգամանքից, որ Հայաստանում կային բազմաթիվ ռազմական կազմավորումներ, որոնց մի մասը դուրս է ՀՀՇ-ի ազդեցության ոլորտից: Դրանք օգտագործվում էին Շարժման հակառակորդների, պաշտոնական իշխանությունների, կուսակցական ղեկավարության կողմից: Նրանց պետք էր հնարավորություն ստանալ բանակի միջոցով միջամտելու մեր ներքին գործերին եւ կանխելու կոմունիստական ռեժիմի տապալումը հանրապետությունում: Դրա ամենացայտուն ապացույցը մայիսի 27-ի դեպքերն էին, որոնք, մեզ համար ոչ մի տարակույս չկա, կազմակերպված էին Կենտրոնի որոշ ուժերի եւ Հայաստանի իշխանությունների որոշ խավերի կողմից: Սա վերջին փորձն էր՝ այրունահեղության միջոցով պահպանելու կոմկուսի իշխանությունը Հայաստանում: Ժողովրդի զգոնության, Շարժման ճկունության շնորհիվ հաջողվեց խուսափել նաեւ այս սադրանքից, թույլ չտալ, որպեսզի այն մեծ չափերի հասնի, վերածվի հաղարացիական պատերազմի: Իսկ ամենաճգնաժամային պահը Հայաստանում ստեղծվեց նստաշրջանի հրավիրման նախօրյակին, երբ նույնիսկ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճում եւ կենտկոմում նիստեր գումարվեցին արդեն ընտրված պատգամավորների, Շարժման ակտիվիստների, կուսակցա-

կան ղեկավարության մասնակցությամբ, որոնցում պարզապես պահանջ էր դրվում հետաձգել նստաշրջանի հրավիրումը, պատրվակ բերելով, թե իբր բազմաթիվ զինված կազմավորումներ սպառնացել են չենթարկվել խորհրդարանին եւ նստաշրջանի բացման օրը կփորձեն զինված միջամտությամբ խանգարել նրա աշխատանքները: Մենք կռահեցինք այդ սադրանքի էությունը, չվախեցանք սպառնալիքներից՝ վստահ լինելով մեր ժողովրդի աջակցության վրա, եւ հասանք նրան, որ բացվի նստաշրջանը, որի ընթացքն ու արդյունքները հայտնի են բոլորին:

Ու Կենտրոնը, ինչպես նաեւ տեղական իշխանությունները ստիպված եղան հաշվի նստել այս իրականության հետ: Բարեբախտաբար, այս առումով իրատեսական մոտեցում հանդես բերեցին ե՛ւ Կենտրոնը, ե՛ւ տեղական իշխանությունները, որոնց կողմից այլեւս սադրանքի փորձեր չարվեցին: Հետագայում նման փորձեր արվեցին զինված ջոկատների կողմից, որոնք պարզապես ճիշտ չգնահատելով թե՛ իրենց, թե՛ Հայաստանի ներկա իշխանությունների ուժերը, փորձեցին զենքի ուժով քաղաքականություն իրականացնել: Նրանցից շատերը՝ ՀԱԲ-ի եւ մյուս ռազմական կազմավորումների, ինչպես նաեւ որոշ հասարակական-քաղաքական կազմակերպությունների ղեկավարներ, առաջադրված էին որպես պատգամավորության թեկնածուներ: Քանի դեռ առաջադրված էին՝ ընդունում էին խորհրդարանի օրինականությունը, իսկ երբ չընտրվեցին, փորձեցին խորհրդարանի վրա ազդել զենքի ուժով: Ահա այստեղ էր, որ նրանք թույլ տվեցին ամենակոպիտ սխալը՝ ճիշտ չգնահատեցին ուժերի հարաբերակցությունը, ժողովրդի տրամադրությունը: Խորհրդարանը, հիրավի, արդեն վստահություն էր ձեռք բերել ժողովրդի մեջ, դարձել էր իսկապես համախմբվածության երաշխիք, համախմբվածություն՝ մեր պետականության գաղափարի շուրջը: Եւ խորհրդարանը հարկադրված դիմեց վճռական քայլերի: Այդ քայլերն ամենեւին կապված չէին պրեզիդենտի հրամանագրի հետ: Զինված կազմավորումների լուծարումը եւ զենքի առգրավումը մեր հանրապետության ներքին պայմաններից թելադրված անհրաժեշտություն էին, որովհետեւ մենք կանգնած էինք քաղաքացիական պատերազմի շեմին: Եւ անկախ այն բանից՝ կլիներ պրեզիդենտի հրամանագիրը, թե ոչ, միեւնույն է, մենք պետք է իրականացնեինք այն, ինչ արեցինք: Ես սա հատկապես

ցանկանում եմ ընդգծել, որովհետեւ շատ մեկնաբաններ մեր գործողությունները կապում են պրեզիդենտի հրամանագրի հետ:

Այժմ անդրադառնանք բուն հարցին: Առաջինը, որ ես ուզում եմ ընդգծել. եթե կոմկուսի իշխանությունը երկարաձգվեր եւս մեկ-երկու ամսով, քաղաքացիական պատերազմն անխուսափելի կլիներ: Ինչո՞ւ: Որովհետեւ այդ իշխանությունը չէր կարող լուծել առկա զինված կազմավորումների հարցը՝ այն կազմավորումների, որոնց մեջ թափանցել էին բազմաթիվ քրեական տարրեր, որոնք արդեն հեռացել էին մեր ազգի արժանապատվությունը, մեր քաղաքացիների անվտանգությունը պաշտպանելու սրբազան գործից եւ պարզապես զբաղված էին կողոպուտով: Նախկին իշխանությունները ի վիճակի չէին պայքարելու այս երեւույթի դեմ այն պարզ պատճառով, որ բացարձակապես չէին վայելում ժողովրդի վստահությունը, եւ նրանց ունեցած լծակները՝ միլիցիան, անվտանգության մարմինները, որեւէ հեղինակություն չունեին ժողովրդի աչքում: Ո՞վ կարող էր պայքարել այդ ռազմական կազմավորումների դեմ: Կային ուժեր՝ երկրապահ ջոկատները, որոնք ե՛ւ իրենց զորությամբ, ե՛ւ թվով, եւ զինվածությամբ ավելի մեծ ուժ էին ներկայացնում, քան հսկողությունից դուրս եկած բոլոր ջոկատները միասին վերցրած: Երկրապահ ջոկատները կարող էին կարգի հրավիրել նրանց: Սակայն մենք միշտ զսպել ենք, միշտ խոչընդոտել ենք այդ բանին, որովհետեւ դա դիտել ենք որպես ինքնադատաստան, որն անթույլատրելի է, եթե նույնիսկ կատարվում է բարի նկատառումներով: Քրեական տարրերի, հանցագործների դեմ պետք է պայքարի ոչ թե քաղաքացին, այլ՝ պետությունը: Պետությունը եւ օրենքը: Հակառակ դեպքում դա արդեն քաղաքացիական պատերազմ է: Մի բան է, երբ հայրենասեր աշխարհազորը կարգուկանոն է հաստատում եւ պատժում հանցագործներին (դա արդեն քաղաքացիական պատերազմ է), մի այլ բան է, երբ պետությունը եւ օրենքն են կարգուկանոն հաստատում: Իսկ երբ եկանք իշխանության գլուխ, մենք կարող էինք արդեն պետության անունից, վայելելով ժողովրդի վստահությունը, կարգուկանոն հաստատել: Սա էր մեր միակ երաշխիքը:

Երբ ես իմ առաջին իսկ ելույթներում, դեռ չընտրված, հայտարարեցի, որ Հայաստանն ի վիճակի է սեփական ուժերով լուծել այդ հարցերը, հենց դա նկատի ունեի: Որովհետեւ վստահ էի, որ հենց ժողովրդի

աջակցությունից օգտվելով՝ մենք կարող էինք բարձրացնել մեր միլիցիայի եւ անվտանգության մարմինների հեղինակությունը եւ հեշտությամբ պայքարել ջոկատների դեմ: Այդպես էլ եղավ: Դուք տեսաք՝ անարյուն եղանակով մենք փաստորեն հօդս ցնդեցրինք այն առասպելը, որ գոյություն ուներ զինված ջոկատների, մասնավորապես ՀԱԲ-ի մասին: Եւ եթե հիմա նույնիսկ ներկա իշխանությունները հեռանան քաղաքական ասպարեզից, նրանք արդեն մեծ պատմական առաքելություն են իրականացրել, քանզի քաղաքացիական պատերազմը տասնամյակներ շարունակ ազդում է ցանկացած ժողովրդի ճակատագրի վրա: Ե՛ւ 1917-ի նոյեմբերի, ե՛ւ Լիբանանի իրադարձությունները դրա ապացույցն են: Ցանկացած ազգի համար ամենամեծ դժբախտությունը ոչ թե դրսի ագրեսիան է, այլ քաղաքացիական պատերազմը: Ներկա իշխանությունների հաստատմամբ կանխվեց նաեւ արտաքին միջամտության վտանգը: Որովհետեւ քաղաքացիական պատերազմի, ես չեմ ասում ծավալումը, այլ սկիզբն անգամ ենթադրում էր, որ Կենտրոնը պետք է զորք կիրառեր, լայնածավալ միջամտություն ցուցաբերեր այդ իրադարձություններին, ինչն ահավոր հետեւանքներ կունենար հայ ժողովրդի համար:

Եւ երրորդ՝ նոր իշխանության հաստատմամբ Հայաստանն իսկապես դարձավ քաղաքական գործընկեր ե՛ւ Կենտրոնի, ե՛ւ Ադրբեջանի համար: Սա նույնպես օբյեկտիվ իրականություն է: Քաղաքական գործընկեր դարձավ այն պատճառով, որ Կենտրոնը Հայաստանում զրկվեց որեւէ հենարանից: Իշխանության գլուխ եկան մարդիկ, որոնք չեն ենթարկվում Մոսկվայի թելադրանքին: Հայաստանը փաստորեն դարձավ, գուցե զարմանալի թվա, եթե ես այսպես հայտարարեմ՝ ամենաարժանապատիվ հանրապետությունը: Նույնիսկ ավելի՝ քան Մերձբալթյան հանրապետությունները, որովհետեւ Մերձբալթյան հանրապետություններում Մոսկվան դեռեւս լծակներ ունի ազդելու ներքին կյանքի վրա: Դրանք ազգային փոքրամասնություններն են, դրանք ինտերֆրոնտներն են: Հայաստանում այդպիսի բան գոյություն չունի: Մոսկվան Հայաստանի ներքին կյանքի վրա ազդելու որեւէ լծակից այսօր արդեն զրկվել է: Ուստի ստիպված պետք է լինի, եւ դա արդեն երեւաց, ի դեմս մեզ՝ Հայաստանի իշխանությունների, ունենալ ոչ թե հակառակորդ, այլ քաղաքական գործընկեր: Եւ այս փոխադարձ շահագրգռությունը, այս ռեալիզմը մենք տեսանք: Հիմա

մեր բոլոր հարաբերությունները Մոսկվայի հետ կառուցված են քաղաքական գործընկերության, եւ ոչ թե թելադրանքի սկզբունքով: Սա, թերեւս, ժողովրդի համար այնքան էլ ակնառու չէ: Բայց իրողությունն այն է, որ 70 տարիներից հետո Հայաստանը ձեռք բերեց քաղաքական արժեք: Դա մեր պայքարի ամենամեծ հաղթանակն էր:

Այսօր միայն մեկ լծակ կա Հայաստանի կյանքի վրա ազդելու: Դա ներքին լծակ չէ: Ես նկատի ունեմ Արցախի հարցը, քանզի այնտեղ տեղի ունեցող ցանկացած անարդարություն անմիջապես արձագանք է գտնում Հայաստանում: Բայց քաղաքական կշիռ ձեռք բերելով՝ այսօր լուրջ նախապայմաններ են ստեղծված Արցախում դրությունը կայունացնելու համար: Եւ արդեն որոշ տեղաշարժ նկատվում է: Վերջին շրջանում, Ադրբեջանի կողմից Արցախում արհեստական լարվածության սրման կամպանիայից հետո, զգացվում է, որ սկսվել է արդեն մի փոքր զգուշավոր քաղաքականություն: Ակնհայտ ճնշումը թուլացել է: Սա հենց այդ՝ մեր քաղաքական գործընկեր դառնալու հանգամանքի թելադրանքն է:

Չորրորդ կարեւոր խնդիրը Հայաստանի առջեւ ծառացած քաղաքական մեկուսացման հաղթահարումն է, որով ավելի կբարձրանա քաղաքական գործընկերոջ մեր կշիռը: Ես նկատի ունեմ ուղղակի հարաբերությունները արտասահմանյան երկրների հետ: Այդ ուղղությամբ մեզ սպասվում է լուրջ քաղաքական գործունեություն, ճկուն դիվանագիտություն, որպեսզի մենք, եթե ոչ բարիդրացիական կամ բարեկամական, ապա գոնե նորմալ հարաբերություններ հաստատենք առաջին հերթին մեր անմիջական հարեւանների հետ: Ես նկատի ունեմ նախ եւ առաջ Վրաստանը, որի հետ մեզ կապում են դարավոր բարեկամական ավանդույթներ, այնուհետեւ՝ Իրանը, որի հետ Հայաստանը, 1828 թվականից ի վեր, որեւէ կոնֆլիկտ չի ունեցել, ուստի այս առումով հոգեբանական տեսակետից որեւէ արգելք չկա ո՛չ հայ ժողովրդի, ո՛չ էլ Իրանի համար: Կրոնական գործոնն այստեղ, ինձ թվում է, որեւէ դեր խաղալ չի կարող, որովհետեւ թե՛ Հայաստանում, թե՛ Իրանում կան ուժեր, որոնք գիտակցում են, որ պետական շահերը վեր են կրոնականից, եւ հարաբերությունները կարող են հաստատվել պետական այդ շահերի գիտակցությամբ: Ես որեւէ արգելք չեմ տեսնում:

Սոցիալական հոգեբանության եւ մանավանդ պատմական արդարության տեսակետից մի փոքր ավելի բարդ են Հայաստանի եւ Թուր-

քիայի հարաբերությունները: Այնուամենայնիվ, ավանդական հակասությունները չպետք է խոչընդոտեն, մեր ազգի շահերից ելնելով, առանց որեւէ քաղաքական զիջման, օգտվելու այն հնարավորությունից, որ կտան Թուրքիայի հետ ստեղծվող հարաբերությունները՝ գոնե զուտ առեւտրական, իսկ այնուհետեւ՝ ավելի լայն տնտեսական հարաբերությունների մակարդակի վրա: Գտնում եմ, որ անհրաժեշտ է օգտվել այդ հնարավորությունից հանուն հենց մեր ժողովրդի շահերի: Սա, ինձ թվում է, կամրապնդի Հայաստանի՝ որպես անկախության ձգտող մի ժողովրդի պետության գոյությունը:

Պետության ապահովության երաշխիքներից մեկը, գուցեեւ ամենամեծ երաշխիքը, նրա հարաբերություններն են իր անմիջական հարեւանների հետ: Այստեղ մենք, չմոռանալով մեր արդար իրավունքները, պետք է վեր կանգնենք զգացմունքներից: Ցանկացած տիպի հարաբերություններ մշակելիս եւ դրանք իրականացնելիս մենք պետք է առաջնորդվենք միայն ու միայն պետական մտածողությամբ եւ ժողովրդի շահով: Այլապես մենք դատապարտված կլինենք կործանման: Իսկ հարեւանների հետ ստեղծվող նոր հարաբերություններ մշակելիս մենք կմեծացնենք նաեւ քաղաքական գործընկերոջ մեր կշիռը: Դա տալիս է մանեւրելու հնարավորություն եւ մեծացնում է մեր կշիռը նաեւ Միության, Կենտրոնի առջեւ: Քանի դեռ Կենտրոնը համոզված է, որ մենք դատապարտված ենք մշտապես կապված մնալու իրեն եւ որեւէ ելք չունենք դեպի արտաքին աշխարհ, նա մեզ հետ հաշվի կարող է եւ չնստել: Կա մանեւրի եւս մեկ ճանապարհ: Դա ԽՍՀՄ հանրապետությունների հետ ուղղակի պայմանագրեր կնքելու ճանապարհն է՝ ուղղահայաց հարաբերությունները հորիզոնական պայմանագրային հարաբերությունների վերածելու ճանապարհը: Հատկապես մեծ կարեւորություն եմ տալիս Հայաստանի եւ ՌԽՖՍՀ-ի միջեւ հաստատվելիք հարաբերություններին, եւ այդ ուղղությամբ եւս որոշ քայլեր կատարվել են: Հատկանշական են Ելցինի նամակը ինձ, իմ նամակը Ելցինին: Դրանք նախանշում են որոշ հարաբերություններ, երկու կողմից էլ գիտակցվում է մեր հանրապետությունների, մեր ժողովուրդների շահերը կայսրության շահերին չծառայեցնելու խնդիրը:

Ուրեմն՝ այսօր Հայաստանում սոցիալ-քաղաքական իրավիճակը համեմատաբար ավելի կայուն է, քան մեկ-երկու ամիս առաջ, որովհետեւ մենք ապացուցեցինք, որ իսկապես ի վիճակի ենք սեփական ուժերով վերահսկել այն: Կարծեմ կայունացումը պարզապես ժամանակի խնդիր է: Անձամբ ես վիճակն ապակայունացնող ներքին պրոբլեմներ չեմ տեսնում:

– Ինչպիսի՞ն է Արցախի խնդրի վիճակն այսօր, եւ որո՞նք են դրա լուծման ուղիները:

– Բոլորիս համար էլ պարզ է, որ Արցախի հարցը չափազանց բարդ քաղաքական խնդիր է: Այդպիսի խնդիրներն ամբողջ աշխարհում դժվարությամբ են լուծվում, քանզի պայքարող երկու կողմերն էլ համոզված են իրենց արդարացիության մեջ եւ բնավ էլ հակված չեն որեւէ զիջման գնալ: Առճակատման փուլին, երբ կողմերը տեսնում են, որ այն հանգեցնում է ճգնաժամի, բոլոր նմանատիպ հակամարտությունների դեպքում, հետեւում է մի նոր ռազմավարություն՝ համաձայնության եզրերի որոնում: Դա միանգամայն բնական է քաղաքականության մեջ: Գիտակցվում է լարվածությունը մեղմացնելու անհրաժեշտությունը, որովհետեւ այն բերում է նոր բախումների, արյունահեղության, որի ծանր հետեւանքները հասկանալի են երկու կողմերին էլ: Բնական ճանապարհը սա է: Մինչեւ հիմա ե՛ւ մեր, ե՛ւ Ադրբեջանի կողմից Արցախի հարցի լուծման ուղղությամբ վարվել է առճակատման քաղաքականություն, որը տվել է որոշ դրական եւ բացասական արդյունքներ երկու կողմերին էլ:

Այժմ հարցը մտել է ճգնաժամային փուլ, եւ կողմերը գիտակցում են, որ հնարավոր է եւ անհրաժեշտ համաձայնության որոշակի եզրեր գտնել: Կենտրոնը կողմերին կոչ է անում հարցը լուծել փոխադարձ, երկկողմանի բանակցությունների միջոցով: Սա բնական կոչ է, որը կարող են ողջունել բոլոր քաղաքակիրթ երկրներն ու ժողովուրդները: Բայց դա այն դեպքում, երբ այդ կոչն իսկապես անկեղծ է: Ես գտնում եմ, ավելին՝ համոզված եմ, որ այդ կոչն անկեղծ չէ, քանզի մի կողմից Կենտրոնը կոչ է անում երկկողմանի բանակցություններով լուծել այդ հարցը, մյուս կողմից՝ իր կոպիտ միջամտությամբ փաստորեն վիժեցնում է դրանք: Ես նկատի ունեմ Արցախում հայտարարված արտակարգ դրությունը, զորքի կիրառումը, երբ փաստորեն խորհրդային բանակի միջոցով Ադրբեջանը փորձում է իրականացնել իր ծրագիրը: Այսպիսի պայմաններում, իհարկե, Կենտրոնի քաղաքականությունը ես համա-

ռում եմ միանգամայն աներարոյական բաղաքականություն: Մինչեւ չհաստակվի Կենտրոնի դիրքորոշումը, մինչեւ Կենտրոնը չդադարեցնի իր միջամտությունը, մինչեւ Արցախում անվտանգության տարրական պայմաններ չստեղծվեն արցախահայության համար, հնարավոր չէ նստել բանակցությունների սեղանի շուրջ եւ հարցի ինչ-որ լուծում գտնել՝ ընդունելի բոլոր կողմերի՝ նկատի ունեմ արցախահայության, Հայաստանի եւ Ադրբեջանի համար: Կարծում եմ, եւ ոչ միայն ինձ համար, ակնհայտ է արդեն այն փաստը, որ Արցախը, Արցախի հարցը միանգամայն իներնուրույն բաղաքական գործոն է, որն ամենեւին կախված չէ Հայաստանից: Իսկ այն, ինչ տեղի է ունենում Հայաստանում, ուղղակի կախված է Արցախում զարգացող իրադարձություններից: Ահա այսպիսի կապ կա այս երկու հարցերի միջեւ:

Դժվար է կանխագուշակել, թե ապագայում ինչպես կզարգանան իրադարձությունները. առնակատման ուղին գուցե կողմերից մեկին հաջողություն բերի: Այսօր երկու կողմի համար էլ առնակատման ուղին իրեն սպառել է, եւ արդեն նախապայմաններ են ստեղծվել փոխզիջումների ուղիով ինչ-որ տանելի վինակ ստեղծելու համար, որպեսզի հանրապետությունները կարողանան զբաղվել իրենց ներքին բաղ խնդիրներով: Արցախն այսօր պետք է գոնե դառնա ԽՍՀՄ մյուս բոլոր շրջանների նման մի շրջան, որտեղ գործեն խորհրդային օրենքները, եւ բացառված լինի բռնի միջամտությունը նրա ներքին գործերին: Այս հիման վրա, ես կարծում եմ, հնարավոր է գտնել մի ինչ-որ բաղաքական փոխզիջում: Եւ այսօր Հայաստանի իշխանությունների պաշտոնական բաղաքականությունն ընտրել է այս ուղին, որը, կարծում եմ, ըստ արժանվույն կգնահատվի ոչ միայն ԽՍՀՄ, այլ նաեւ ողջ համաշխարհային հանրակական կարծիքի կողմից:

– Իսկ ինչպիսի՞ն է բուն Արցախի դիրքորոշումն այդ հարցում:

– Արցախում էլ կան լուրջ բաղաքական ուժեր, որոնք նույնպես գիտակցում են, որ հարցի բաղաքական լուծումն շտապեցնելը հնարավոր չէ, եւ այսօր ամենակարեւորը արցախահայության նորմալ կենսագործունեության ապահովումն է հայրենի հողում:

– Որպես Գերագույն խորհրդի նախագահ, ինչպե՞ս եք պատկերացնում եւ իրականացնում անմիջական կապը ժողովրդի հետ:

– Ինչպես գիտեք, ես պաշտոնապես հրաժարվել եմ ՀՀՇ-ի վարչության նախագահի պաշտոնից՝ դա համարելով բաղաքական տեսակետից անհամատեղելի պետական կառուցվածքում իմ գրաված պաշտոնի հետ, եւ հրաժարվել եմ ՀՀՇ-ի վարչության անդամությունից, բայց ինձ համարում եմ ՀՀՇ-ի գաղափարակիրն ու նրա շարքային անդամը: Եւ ես իմ կապերը չեմ կտրելու ՀՀՇ-ի, նրա կենտրոնական վարչության եւ տեղական խորհուրդների հետ: Շրջաններ կատարած իմ բոլոր այցելությունների ժամանակ, երբ այցելում եմ որպես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ՝ ծանոթանալու շրջանների հոգսերին, պարտս եմ համարում անպայման այցելել նաեւ ՀՀՇ-ի տեղական խորհուրդներ: Արդեն եղել եմ վեց շրջաններում եւ այդ վնցում էլ զրուցել եմ ՀՀՇ-ի տեղական խորհուրդների անդամների, նաեւ գինված չոկատների անդամների հետ, որովհետեւ կան խնդիրներ, որ պետք է անմիջականորեն նրանց հետ լուծվեն: Երկրորդը՝ ես միշտ, ուղղակի խոսով կարող եմ հանդես գալ միտինգներում (երբ զգացվի նման անհրաժեշտություն), հեռուստատեսությամբ, մամուլով, մասնավորապես՝ մեր խորհրդարանի նոր ստեղծվող թերթի միջոցով դիմել ժողովրդին: Մյուս կողմից, կարծում եմ, հանի դեռ խորհրդարանը վայելում է ժողովրդի վստահությունը (իսկ դա այդպես է՝ մեծ տեսնում ենք, որ արդեն բաղաքական լարվածությունը թուլացել է, ժողովուրդն իսկապես բավարարված է խորհրդարանի աշխատանքով), նա հարկ չունի փողոցներում եւ հրապարակներում լուծել իր հարցերը: Բայց դա այնման ժամանակ, հանի դեռ խորհրդարանը լուծում է մեր պետականության հաստատման գործընթացի խնդիրները: Սակայն կան խնդիրներ էլ, որոնք շոշափում են մեր ողջ ժողովրդի ընթացիկ շահերը, եւ այդպիսի դեպքերում հարկ կլինի իմանալ ժողովրդի կարծիքը: Այստեղ արդեն ողջ ժողովուրդը պետք է վճռի եւ ոչ թե միայն խորհրդարանը: Կարծում եմ, որ շատ շուտով կարող են ծագել այդպիսի խնդիրներ: Ես առիթ ունեցել եմ մի անգամ հայտարարելու (կարծեմ՝ իմ նախընտրական, ծրագրային ելույթում), որ ժողովրդի եւ հանրապետության կենսական շահերը շոշափող բոլոր խնդիրները պետք է դրվեն ժողովրդական բննարկման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ հանրաքվեի:

– Իսկ ովքե՞ր են Ձեր ամենամոտ աջակիցները:

– Ես դա երբեք գաղտնիք չեմ դարձրել: Ամենամոտ աջակիցները պայմարի գործընկերներն են՝ «Ղարաբաղ» կոմիտեի, ՀՀՇ վարչության անդամները եւ Շարժման այն հայրուրավոր գործիչները, որոնք թեպետ չեն երեսացել միտինգների հարթակներում, հեռուստատեսային էկրաններին ու թերթերի էջերում, բայց առանց որոնց անհնար էր եւ՛ «Ղարաբաղ» կոմիտեի, եւ՛ ՀՀՇ-ի գործունեությունը: Դրանք հայրուրավորներ են:

– Ո՞րն է այսօր այն ամենաէական, սկզբունքային խնդիրը, որի առնչությամբ Դուք կդիմեիք ողջ հայ ժողովրդին:

– Ազգային իրական միասնությունը: Յուրաքանչյուր ազգի փափագը ազգի ներդաշնակությունն է, համերաշխությունը: Մեր պայքարի սկզբում, սպեկուլյատիվ նկատառումներով, առաջ էր բաշվում այն տեսակետը, թե մեր ժողովուրդը փոքր ժողովուրդ է, բազմաչարչար, մեծ վտանգների ենթարկված, եւ մեզ բոլոր պայմաններում անհրաժեշտ է ազգային միասնություն, համախմբում եւ այլն: Այս գաղափարը շատերն էին շահարկում Շարժման դեմ պայքարելու համար: Իհարկե, ազգի համախմբումը, համերաշխությունը այնպիսի գաղափարներ են, որ չենք կարող մերժել: Միշտ էլ պետք է ձգտել դրան, բայց մենք հասկանում էինք, որ այդ կոչերը հիմնականում կեղծ էին, եւ դա արվում էր պարզապես Շարժումը վարկաբեկելու համար: Անհնար էր համերաշխությունն, ասենք, ժողովրդական շարժման եւ իշխանությունների միջեւ՝ այնպիսի իշխանությունների, որոնք ծառայում էին ոչ թե մեր ժողովրդի շահերին, այլ Մոսկվային:

Դրանք կեղծ կոչեր էին եւ ուղղակի արվում էին բաղաքական վարկ ձեռք բերելու համար: Դրանց հեղինակներն էլ բայ գիտակցում էին, որ այդ միասնությունը, համերաշխությունը իրական չեն եւ չեն էլ կարող լինել: Սակայն այսօր, երբ Հայաստանում ստեղծվել է մի իշխանություն, որն իսկապես ժողովրդի ընտրած իշխանությունն է եւ չի հենարկվում Կենտրոնի բելադրանքներին, արդեն իրական պայմաններ են ստեղծված ազգային համերաշխության համար: Համերաշխությունը, ներդաշնակությունը չեն ստեղծվում որեւէ կուսակցության, որեւէ իշխանության բելադրանքով կամ բարոյական ու դասակարգային հորդորներով: Համերաշխություն ու ներդաշնակություն հնարավոր է միայն գաղափարի շուրջ: Այսօր այդպիսի մեկ գաղափար կա: Դա Հայոց պետականության գաղափարն է:

Ես կոչ եմ անում մեր ժողովրդին՝ համախմբվել պետականության գաղափարի, դրա մարմնավորումը հանդիսացող Հայաստանի խորհրդարանի շուրջ: Սա է հայ ժողովրդի համախմբման միակ իրատեսական հիմքն այսօր:

Հայոց պետականության գաղափարը, ոչ միայն Հայաստանում բնակվող հայության, այլեւ Սփյուռքը միավորող գաղափար պետք է դառնա:

«Հայաստանի Հանրապետություն», 9 հոկտեմբերի, 1990 թ.:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

(22 հոկտեմբերի, 1990 թ.)

Հոսմի անկումից հետո մարդկությունը վերջնականապես համոզվեց, որ աշխարհում հավերժություն չկա, ուստի պարզ է, որ վերջին գաղութային համակարգն էլ, այսինքն՝ Խորհրդային կայսրությունը, վաղ թե ուշ պետք է կանգնի փլուզման եզրին:

Գուցե մեր ժողովրդի համար, որը խոր քնի մեջ էր, դա հայտնություն էր, բայց վերջին տարիների իրադարձությունները ցույց էին տալիս դրա նշանները, իսկ այսօր այդ փլուզումը իրականություն է դառնում՝ կախված մի շարք օբյեկտիվ պատճառներից:

Մեզանից այսօր միայն մեկ բան է կախված, եւ ոչ միայն մեզանից, այլեւ Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներից ու համայն մարդկությունից՝ որևան հնարավոր է անարյուն, անցավ դարձնել այդ փլուզումը, անարյուն, խաղաղ դարձնել անցումը դեպի մի նոր վարչակարգ: Եւ Արեւելյան Եւրոպայի երկրների փորձը վստահություն է ներշնչում, որ դա հնարավոր է, որ Խորհրդային ղեկավարներն ու նաեւ հանրապետությունները կդրսեւորեն այնքան հանդուրժողականություն եւ գիտակցություն, որ գործը չեն հասցնի լուրջ առճակատման եւ խոշոր ցնցումների:

Բայց, ինչպես եւ ամեն մի փլուզվող, սասանվող կայսրություն, Խորհրդային Միությունն էլ, բնականաբար, վերջին ճիգերն է թափում պահպանելու համար երկրի ամբողջությունն ու իշխանության ամրողջատիրական կառուցվածքը: Նա դրա համար ունի եւ օգտագործում է

շատ ազդեցիկ լծակներ, որոնք են՝ հաղաքականը, տնտեսականը, ազգայինը եւ ռազմականը:

Քաղաքական լծակը հանրապետությունների իմքնիշխանության կամ անկախության ճոչակմամբ, կարելի է ասել, որ սպառում է իրեն: Ժողովրդավարության ուղին բռնած հանրապետություններում իսպառ վերացել է Կենտրոնի թելադրանքը: Հանրապետությունների մեծ մասը հաստատել է սեփական Սահմանադրության եւ իր օրենքների գերակայությունը միութենականի նկատմամբ: Սա աղդեն գործող մեխանիզմ է, կենտրոնական մարմինները կորցրել են իրենց ռեալ հաղաքական իշխանությունը, քանի որ նրանց որոշումները, որպես կանոն, այլեւս չեն իրականանում հանրապետություններում: Սրան գումարվում է նաեւ այն գաղափարախոսության սնանկությունը, որի վրա էր հիմնված կոմունիստական հաղաքական վարչակարգը: Եւ, բնականաբար, Կենտրոնը պետք է փնտրի նոր լծակներ:

Դրանցից ամենաազդեցիկը, իհարկե, տնտեսական լծակն է: Կորցնելով հաղաքական հսկողությունը, Կենտրոնն առաջիկայում, ամենայն հավանականությամբ, կփորձի օգտագործել տնտեսական լծակը՝ հանրապետություններն իրենից կախման մեջ պահելու նպատակով: Օգտվելով նյութամատակարարման, բանկային համակարգի, դրամական շրջանառության, արտաքին առեւտրի եւ օտարերկրյա վալյուտայի վրա ունեցած վերահսկողության համակարգից՝ Կենտրոնը, ըստ էության, կանի ամեն ինչ՝ պահպանելու համար ամբողջատիրական վարչակարգը: Ընդ որում, այս բնագավառում Կենտրոնի սուբյեկտիվ ձգտումներից բացի, կան նաեւ օբյեկտիվ պայմաններ: Չնայած հաղաքական անկախության խիստ արտահայտված միտումներին, հանրապետությունների ապագայի անորոշությունից երկյուղած, առայժմ, կարծես, ձգտում են պահպանել Միությունում ձեւավորված տնտեսական կապերը՝ դրանք ուղղահայաց հարաբերություններից վերածելով հորիզոնականի, այսինքն՝ դրանք հաստատում են հանրապետությունների միջեւ կնքվող պայմանագրերով: Սակայն որքան էլ ազդեցիկ լինի Կենտրոնի տնտեսական լծակը, այնուամենայնիվ, տեսականորեն, Կենտրոնի ձգտումը խոր ճակատության մեջ է գտնվում երկրի տնտեսության զարգացման օբյեկտիվ ընթացքի կամ հիմնական կոնցեպցիայի հետ, որն ապակենտրոնացումն է: Վերջինս նշանակում է հանրապետությունների տնտեսական իմքնուրույնության ամրապնդում եւ հաղաքական տեսակետից կունենա հակադարձ ազդեցություն, այսինքն՝ չի նպաստի երկրի հաղաքական ամբողջության պահպանմանը: Այս հակասությունն օբյեկտիվ է, քանի որ, եթե երկիրն իսկապես ցանկանում է դուրս գալ տնտեսական ճգնաժամից, նա այլ հանապարհ չունի, քան ապակենտրոնացումը: Այդ լծակն, ուստի, խախտում է զարգացման օբյեկտիվ ընթացքը եւ ըստ այդմ նույնպես դատապարտված է ձախողման:

Հաջորդ լծակը, որ, ինչպես նշվեց, կարող է Կենտրոնն օգտագործել կայսերության ամբողջականությունն ամրապնդելու համար՝ **ազգամիջյան հարաբերությունների սրումն է:** Ինչպես ցանկացած գաղութային երկիր, պարզ է, Խորհրդային Միությունն էլ օգտագործեց, օգտագործում է եւ կօգտագործի այս լծակը, որից եւ ամենաշատը տուժել ենք մենք: Եւ չնայած այս ոլորտում արդեն տեղի ունեցած ցավալի իրադարձություններին, պետք է ճուսալ, որ խորհրդային ժողովուրդներն իրենց մեջ այնքան ուժ կգտնեն, որ կարողանան զանազանել իրենց իրական շահերը՝ կայսերության շահերից:

Եւ վերջապես, չպետք է բացառել նաեւ չորրորդ լծակի՝ բռնի ուժի գործադրման հնարավորությունը: Եթե օբյեկտիվորեն նայենք, Կենտրոնը գործնականում ունի միայն այս իշխանությունը, նրան են ենթարկվում միայն բանակը, ներքին գործերի մինիստրությունը եւ պետական անվտանգության կոմիտեն: Եւ, դժբախտաբար, Կենտրոնի կողմից այդ ուժերին իշխելը կարող է ինչ-որ պահի հանգեցնել նաեւ բռնի ուժի կիրառման: Այդպիսի փորձեր եղան էլ՝ չնայած որոշ դեպքերում նաեւ արդարացված (ես նկատի ունեմ Ադրբեջանը, երբ փորձ էր արվում բռնի ուժով տապալել օրինական իշխանություններ, եւ դրա դեմ կիրառվեց Կենտրոնի բռնի ուժը): Այնուամենայնիվ, այսօր տեղի են ունենում այնպիսի իրադարձություններ, որ ոռեալ ռեգիոնում այդ ուժի կիրառումը կարող է հրդեհ առաջ բերել ողջ Միության մեջ: Միաժամանակ ակնառու է նաեւ, որ Կենտրոնը մեծ համբերությամբ է հանդուրժում տեղերում բազմաթիվ անօրինականություններ ու բռնություններ, որոնց ժամանակին կարող էր վայրկենապես արձագանքել: Դա ցույց է տալիս այն եսկա պատասխանատվությունը, որը գիտակցվում է Կենտրոնի կողմից: Բռնության գործադրմամբ Խորհրդային Միությունն ստիպված պետք է լինի հրաժարվել իր զարգացման հաղաքականությունից: Սա էլ

մեզ պետք է լավատեսություն ներշնչի, քանի որ այս կշռադատվածությունը, համենայն դեպս, մինչեւ այժմ առկա է եղել Կենտրոնի հաղթականության մեջ՝ բոլի ուժի դիմել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում:

Բացի ընդհանրապես Խորհրդային Միությունում տեղի ունեցող գործընթացներից, մեր հանրապետության համար կենսական կարեւորություն են ներկայացնում նաեւ Ադրկովկասում կատարվող երեւույթները: Ի՞նչ է տեղի ունեցել Ադրկովկասում: Հայաստանում հաստատվել են ժողովրդավարական կարգեր, կոմունիստական իշխանությունը վերացել է, Ադրբեջանում՝ հակառակը, կոմունիստական իշխանությունն ամրապնդվել է, իսկ Վրաստանը դեռ գտնվում է նախընտրական անկայուն վիճակում, եւ դժվար է ասել, թե ինչով կավարտվի նախընտրական մրցարշավը: Պարզ համեմատություն անցկացնելու դեպքում թվում է, թե այժմ Ադրկովկասում ստեղծվել է այնպիսի դրություն, ինչպիսին կար 1920 թվականին. կոմունիստական Ադրբեջանը դարձել է Կենտրոնի հենարանը՝ ժողովրդավարական Հայաստանի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ Վրաստանի դեմ պայքարելու համար: Եւ մենք, իսկապես, Արցախում տեսնում ենք Կենտրոնի եւ Ադրբեջանի նմանատիպ համագործակցությունը: Այս հանգամանքը, թերեւս, Ադրբեջանին կարող է բերել ժամանակավոր շահեր, եւ, ըստ երեւույթին, բերում էլ է:

Բայց սա, ինչպես նշվեց, պարզ համեմատություն է, քանի որ, ըստ էության, պատկերը միանգամայն այլ է: Եթե 1920 թվականին Ադրբեջանը հանդես էր գալիս որպես հզորացող կոմունիստական Ռուսաստանի դաշնակիցը, ապա այժմ նա դարձել է իր ռեալ իշխանությունը կորցնող խորհրդային Կենտրոնի հենարանը՝ դառնով հակադրվելով ոչ միայն Հայաստանին, այլեւ ժողովրդավարական Ռուսաստանին: Հանգամանք, որն էապես փոխում է իրերի վիճակը եւ մեզ մանեւրելու լայն հնարավորություններ է տալիս: Այս նորությունը մենք պետք է գիտակցենք եւ կարողանանք օգտվել դրանից: Ես նկատի ունեմ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ, շահերի ընդհանրության վրա հիմնված, լուրջ քաղաքական-տնտեսական հարաբերությունների հաստատման հնարավորությունը: Դրա վկայությունն է իմ եւ Բորիս Ելցինի միջեւ կայացած հանդիպումը եւ դրան հետեւած թղթակցությունը, որը արձագանգ

գտավ նաեւ Ռուսաստանի խորհրդարանում, որտեղ ընդունվեց մեզ համար շատ կարեւոր մի որոշում:

Խորհրդային Միությունում եւ Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների լույսի ներքո վերջին տարիներին հայ ժողովրդի գիտակցության մեջ կատարվել են էական փոփոխություններ: Նա վերջապես զգաստացավ երաշեղի թմբիրից՝ անակնկալորեն հայտնաբերելով, որ Խորհրդային Միությունը հավերժ քաղաքական երաշխիքներ չի կարող ապահովել իր գոյության համար: Փաստ՝ Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի կոտորածները, հարյուր հազարավոր գաղթականները, Արցախի եւ Հայաստանի տեւական շրջափակումները, Անդրկովկասը ռուսական զորքերի կողմից լրվելու հետանկարը: Պատմության այս սառը ցնցուղի եւ դառնագույն փորձության առջեւ հայ քաղաքական միտքը եւ ընթացող ազգային-ազատագրական շարժումը վերջապես հանգեցին այն եզրակացության, որ հայ ժողովուրդն իր գոյությունն ապահովելու համար պարտավոր է սեփական ուժերով ստեղծել նոր քաղաքական երաշխիքներ, այն էլ ոչ թե երեւութական, այլ իրական երաշխիքներ:

Առաջին. օտարի կողմից կառավարվող եւ օտարին ծառայող կոմունիստական իշխանությունը փոխարինել ազգային քաղաքականություն վարող ժողովրդավարական իշխանությամբ՝ բացառելու համար որեւէ արտաքին ուժի թելադրանքը եւ առաջնորդվելու միայն ու միայն սեփական ժողովրդի շահերով: Այդ խնդիրն արդեն իրականացված է, սակայն դեռեւս մասամբ՝ միայն իշխանության վերին ոլորտներում: Նպատակի վերջնական իրականացումը կապված է տեղական խորհուրդների առաջիկա ընտրությունների հետ:

Երկրորդ երաշխիքն է սոցիալ-տնտեսական զարգացման մեջ առաջ անցնել մեր ամենիջական հարեւաններից՝ Վրաստանից ու Ադրբեջանից, որոնց հետ չենք կարող չափվել ոչ մարդկային, ոչ էլ բնական հարստություններով: Մեր միակ առավելությունը նրանց նկատմամբ պետք է լինի զարգացման մեջ էապես առաջ անցնելը: Եւ դրա համար արդեն ստեղծված են լուրջ նախադրյալներ, որոնցից ամենակարեւորը Հայաստանում ժողովրդավարական վարչակարգի հաստատումն է: Օգտվելով ժողովրդավարության ընձեռած ազատություններից եւ ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունից, Հայաստանն առաջ անցնելով Ադրբեջանից ու Վրաստանից, ի վիճակի է իրագործելու իր

զարգացումն ապահովող արմատական սոցիալ-տնտեսական վերափոխումներ: Այդ վերափոխումների մեջ առաջնահերթ նշանակություն ունեն մասնավոր սեփականության եւ հողի մասին օրենքները, որոնք հնարավորություն կտան հայ ժողովրդին դրսեւորելու իր բնական ունակությունները՝ գործարարությունն ու ձեռներեցությունը, որոնք 70 տարի հանցավոր կերպով խլված են եղել նրանից: Այդ ունակությունների շնորհիվ էր, որ հայերը գերիշխող դիրքեր էին զբաղեցրել Թիֆլիսի ու Բաքվի տնտեսական կյանքում: Եւ այդ ունակությունների շնորհիվ է, որ այսօր էլ մեր սփյուռահայ եղբայրները դաժան մրցակցության պայմաններում զգալի տեղ են զբաղեցնում գործարար աշխարհում: Պատահական չէ, որ Հայաստանի կառավարության կողմից մեր խորհրդարանին ներկայացվող առաջին օրենքները կլինեն սեփականության եւ հողի մասին: Ձարգացման մեջ հարեւաններից առաջ անցնելու մյուս կարեւոր գրավականն էլ Սփյուռքի գոյությունն է, որի նյութական, բարոյական եւ մտավոր կարողությունները կարող են էապես նպաստել մեր հանրապետության բարգավաճմանը:

Հայ ժողովրդի եւ Հայոց պետականության գոյության ապահովության երրորդ երաշխիքը սեփական ազգային զինված ուժերի ստեղծումն է: Պետությունն առանց բանակի չի կարող գոյություն ունենալ: 1918 եւ 1942 թվականների փորձը ցույց է տվել, որ ամենաճակատագրական պահերին հայ ժողովրդի զինական ուժը գտնվել է Հայաստանի սահմաններից դուրս: Սա էր այն հիմնական պատճառը, որ ՀՀՇ-ն դեռեւս իր առաջին ծրագրում առաջին անգամ դրեց սեփական զինված ուժեր ստեղծելու հարցը:

Այսօր կան բազմաթիվ առաջարկներ, թե ինչպես պետք է ստեղծվի այդ բանակը: Շատերը միամտաբար կարծում են, որ բանակը պետք է ստեղծվի աշխարհազորի ուժերի հիման վրա: Սակայն հասկանալի է, որ պետությունը պետք է պաշտպանի պրոֆեսիոնալ բանակի գաղափարը: Կա մի շատ ավելի բնական, տրամաբանական հանգամանք,– դա վերաբերում է նաեւ խորհրդային Միության մյուս հանրապետություններին,– յուրաքանչյուր ազգի ներկայացուցիչ պետք է ծառայի իր հանրապետության տարածքում: Այսօր Հայաստանի սահմաններից դուրս ծառայում են շուրջ 40 հազար հայ զինվորներ: Եթե նրանք նույնիսկ խորհրդային բանակի կազմում ծառայեն Հայաստանի տարածքում, ապա պարզ է, որ վտանգի պահին նրանք կկատարեն իրենց պարտքը հայրենիքի նկատմամբ: Սա է հանգամանքը, եւ կարելի է ասել, որ Հայաստանի խորհրդարանն այդ ուղղությամբ արել է շատ իրատեսական քայլեր՝ կասեցնելով եւ զորահանային գործընթացը: Վաղ թե ուշ խորհրդային բանակի հրամանատարությունը ստիպված պետք է լինի հաշտվել այս փաստի հետ եւ պայմաններ ստեղծել, որպեսզի հայ երիտասարդները ծառայեն Հայաստանում:

Հեռանկարում մենք պետք է նկատի ունենանք նաեւ, որ մի օր խորհրդային բանակը կարող է լրիվ Հայաստանը: Միաժամանակ չպետք է մոռանալ, որ Թուրքիան ունի դարերով ձեւավորված ստրատեգիական շահեր, եւ այդ շահերից նա միանգամից չի կարող հրաժարվել: Ուստի, ամենայն հավանականությամբ, դեռ որոշ ժամանակ մենք ստիպված կլինենք հաշտվել Հայաստանում ռուսական ռազմական բազաների գոյության հետ:

Չորրորդ երաշխիքը Հայաստանի հաղթական մեկուսացման ճեղքումն է՝ սեփական արտաքին հաղթականության ստեղծումը, որի հնարավորությունից զրկված ենք եղել 70 տարի: 70 տարի մենք նույնիսկ խորհրդային Միության հանրապետությունների հետ անմիջական հարաբերություններ չենք ունեցել, եւ այսօր է, որ պետք է ստեղծենք այդ հաղթականությունը, թափանցենք միջազգային կազմակերպություններ: Շատ շուտով մենք, ըստ երեւույթին, հնարավորություն կունենանք գոնե ոչ պաշտոնական ներկայացուցչություններ ստեղծել ԱՄՆ-ում եւ Ֆրանսիայում: Բոլոր մակարդակներով անհրաժեշտ է, որ հնարավոր է, ընդլայնել մեր կապերը միջազգային կազմակերպությունների հետ: Դրա հնարավորությունները կան: Եւ առաջին քայլերն արդեն իսկ արվում են:

Եւ վերջապես, հինգերորդ եւ ամենակարեւոր երաշխիքը, որ պարտադիր է ցանկացած երկրի բնականոն կենսագործունեության ապահովման համար, մեր ամենիշական հարեւանների՝ Իրանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումն է, որի հիմքում պետք է ընկած լինի հայ ժողովրդի շահերից բխող պրագմատիզմը: Սա հաղթական շահարկումների առարկա է դարձել, բայց առողջ ուժերը հիշտ են հասկանում այս հրամայականը: Եւ Հայաստանի իշխանություններն են, որ պետք է մշակեն ու վարեն այս հաղթականությունը: Վստահ եմ,

որ բարձր հաղաքական գիտակցության հասած հայ ժողովուրդն ի վիճակի է արդեն իրական ազգային շահերը զանազանել հաղաքական շահարկումների առարկա դարձած գաղափարներից:

Հայ ժողովրդի խնդիրն է և՛ հաղաքական, և՛ տնտեսական տեսակետից մեր հանրապետությունը վերածել իրենականավարվող համակարգի, իրենուրույն գործող օրգանիզմի, որն ընդունակ կլինի առավելագույնս օգտվել ներքին ու արտաքին նպաստավոր հանգամանքներից և ժամանակին դիմագրավել ապառնացող հաղաքական ու տնտեսական վտանգները: Ժամանակն է վերջապես լուրջ դասեր հաղել մեր պատմական դարը փոթորկությունից և հախուռն, ռոմանտիկ ազգից վերածվել սառնասիրտ, իրապաշտ, պրագմատիկ ազգի, որի յուրաքանչյուր քայլը պետք է լինի կշռադատված, հիմնված կոնկրետ ու անվրեպ հաշվարկի վրա:

Մեր հաղաքականության հիմնական զենքը պետք է դառնա մանևրելու կարողությունը, ճկուն դիվանագիտությունը: Մենք պետք է ուշի-ուշով հետևենք մեր հաղաքական գործընկերների ու հակառակորդների հարաբերություններին և նուրբ մանևրներով հմտորեն օգտվենք նրանց միջև գոյություն ունեցող անգամ չնչին հակասություններից: Դրա համար անհրաժեշտ է մեկընդմիշտ հրաժարվել ՅՈՒՅԱԴՐԱԿԱՆ, անլուրջ հաղաքական գործողություններից, որոնք մի կողմից ավելորդ կերպով զրգռում են մեր հաղաքական գործընկերներին ու հակառակորդներին, իսկ մյուս կողմից՝ չհանգեցնելով որևէ օգտակար արդյունքի, խոր հիասթափություն են առաջացնում զանգվածների մեջ:

Քաղաքականությունը համակարգ է, ոչ թե պատահական գործողությունների պարզ գումար, ուստի իրենուրույն հաղաքականություն վարող ոչ մի ընտրյալ իշխանություն իրավունք չունի տուրք տալ կողմնակի ենթումներին և շեղվել իր որդեգրած հիմնական դիրհորոշումից: Քաղաքականության որևէ համակարգի կարելի է հակադրել միայն մի այլ համակարգ և ոչ թե նրա ոգուն հակասող առանձին գործողությունների պահանջներ: Դա չի նշանակում, անշուշտ, որ հաղաքական համակարգը դոգմա է և ենթակա չէ արթագրումների՝ պահի հրամայականին համապատասխան:

Ամփոփելով այս համառոտ վերլուծությունը՝ Հայաստանի ներկա ժողովրդավարական իշխանության որդեգրած հաղաքականության էությունը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. առանց լուրջ առճակատումների, առանց ավելորդ ցուցամոլության ու շտապողականության, հանդարտորեն, նուրբ մանևրներով, ճկուն դիվանագիտությամբ, միաժամանակ, հաստատակամ ու անդրդվաղ, բայց առ բայց նոր եւ կայուն հաղաքական երաշխիքներ ստեղծել մեր հանրապետության գոյության ու բարգավաճման համար: Իրագործելով այս խնդիրը՝ մենք լիովին կատարած կլինենք մեր պարտքը սերունդների առջեւ՝ նրանց թողնելով մեր ազգային մյուս իղձերի իրականացման պատրաստականությունը:

Իրականությունը բառացած պատմություն չէ, և որևէ էլ կայուն՝ ենթակա է անակնկալ վերիվայրումների: Մեր ազգի գոյության երաշխիքներն ստեղծելով՝ մենք պատրաստ կլինենք օգտվելու այդ վերիվայրումներից: Ժամանակը մեզ իրական հնարավորություններ է ընձեռել դնելու մեր ազգային իղձերի իրականացման հիմքերը, և աններելի անմտություն կլինի չօգտվել այդ հնարավորություններից:

«Հայաստանի Հանրապետություն», 23 հոկտեմբերի, 1990 թ.:
Հրատարակված՝ «Հայաստանի ներկա քաղաքական իրավիճակը» վերնագրով:

ԵԼՈՒՅԹ ԽՍՀՄ ԴԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

(16 նոյեմբերի, 1990 թ.)[1]

Հարգելի պատգամավորներ,

Բաւավեցը, որ ընթանում է այս դահլիճում, իհարկե, հետաքրքիր է, բայց ոչ ավելին: Եւ եթե այն այսուհետեւ էլ այս ոգով շարունակվի, եւ մենք էլ լենք այս դահլիճը՝ չմշակելով ստեղծված իրավիճակից դուրս գալու կոնկրետ մեխանիզմներ, ապա, համոզված եմ, մեկ-երկու շաբաթ անց ստիպված կլինենք նորից հավաքվելու եւ ինքնակելու ավելի ճգնաժամային մի իրավիճակ: Ցավոք, ես չտեսա այդ մեխանիզմները ո՛չ պրեզիդենտի զեկուցման մեջ, ո՛չ էլ մյուս հունտորների ելույթներում: Ես համաձայն եմ գրեթե բոլոր ելույթների առձանագրային մասերին, չնայած նրանցում, թվում է, շեշտը հիմնականում դրվում է մեր իրականության բացասական կողմերի վրա: Դուք բոլորդ էլ գիտեք, սակայն, որ այդ բացասականով հանդերձ՝ մեր իրականությունն ունի նաեւ դրական կողմեր: Ես կնշեմ դրանցից մի քանիսը.

Առաջինը հանրապետությունների ինքնիշխանության գործընթացի խորացումն է եւ Կենտրոնի ու հանրապետությունների իրավասությունների սահմանազատումը:

Երկրորդը՝ հանրապետությունների միջեւ նորիզոնական հարաբերությունների հաստատումը:

---

[1] *Ելույթի անփոփոխ թարգմանության մի տարբերակ ժամանակին տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» թերթում (18 նոյեմբերի, 1990 թ.):*

Երրորդը՝ հանրապետություններում ժողովրդավարական գործընթացների խորացումը, որն, իմ կարծիքով, ոչ մեկը չի կարող ժխտել:

Եւ վերջինն ու ամենակարեւորը՝ հանրապետական իշխանությունների կենսունակության դրսեւորումը, ինչը մի շարք հանրապետություններ ապացուցել են գործով:

Այժմ բացասականի մասին, որին կանդրադառնամ հակիրճ կերպով:

Պարզ է, որ տնտեսության մեջ խոս է տիրում, որ սոցիալական եւ ազգամիջյան հարաբերությունները չափազանց լարված են, եւ որ իշխանությունները կաթվածահար վիճակում են գտնվում: Բայց ներկա պահին, իմ կարծիքով, ծագել է բոլորովին նոր իրադրություն, որի հետեւանքով էլ գումարվել է մեր այս հավաքը: Իշխանության կաթվածահարությունն արդեն վերափոխվում է իշխանության իրական ճգնաժամի, ինչին գումարվում են «աջ սպառնալիքի» եւ սոցիալական բունտի վտանգները: Այս իրադրության մեջ մենք չպետք է կորցնենք մեր գլուխները: Մեր պարտքն է ճանգիստ գտնել իրավիճակից դուրս գալու եղերը:

Առաջարկվում են մի շարք մոտեցումներ: Պրեզիդենտն առաջարկեց սահմանված հայտարարել հանրապետական իշխանությունների որոշումները: Կարծում եմ՝ բոլորի համար պարզ է, որ դա չի գործի: Ուրիշները, եւ ոչ միայն այստեղ ճնշած ելույթներով, այլեւ հասարակական կարծիքի մակարդակով ու զանգվածային լրատվական միջոցներով, պահանջում են ուժեղացնել իշխանությունը: Ցավոք, շատերը «իշխանություն» բառը հասկանում են մեկ՝ ընդ որում դրա երկրորդային, այն է՝ ռեպրեսիվ իմաստով: Սակայն մոռացվում է ամենագլխավորը՝ իշխանության հիմնական կարգավորիչ գործառույթը:

Որո՞նք են կարգավորման մեխանիզմները.

Խորհրդակցություններն ու ավանդական ժողովներն արդեն ոչինչ չեն տա:

Ուժային մեթոդները, որոնց արդեն անդրադարձա, ցանկալի չեն եւ վտանգավոր են:

Կոորդինացման ինստիտուտը, կարելի է ասել, նույնպես գոյություն չունի:

Պրեզիդենտի հրամանագրերը չեն գործում:

Ուստի միակ մեխանիզմը, որն իմ կարծիքով ապացուցել է իր կենսունակությունը, եւ ամենից էլ ձեր փորձով կարող եք դա հաստատել, ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ է: Ճգնաժամային պահին սովորաբար գործում է

իմիաապաշտպանության բնազդը կամ վտանգի զգացողությունը, եւ այդ պահին համաձայնությունն իսկապես հնարավոր է դառնում: Նման համաձայնություն էադրական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների միջեւ իրականացրել է, հավանաբար, մեզանից յուրաքանչյուրը: Նման մեխանիզմ մասնավորապես գործում է Ռուսաստանյան Ֆեդերացիայի խորհրդարանում, ինչպես նաեւ Մերձբալթյան երեք հանրապետություններում, որոնք արդեն երկար ժամանակ առաջնորդվում են համաձայնեցված գործողություններով:

Բայց իշխանության ո՞ր մարմինն է այսօր ունակ իրականացնելու կամ գործի գցելու այդ մեխանիզմը.

Միութենական խորհրդարա՞նը. կարծում եմ, բոլորիս համար պարզ է, որ դա անհեռանկիզ է: Գերագույն խորհուրդը հրաշալի որոշումներ եւ օրենքներ է ընդունում, որոնք սակայն չեն գործում: Այնուամենայնիվ, կարծում եմ, հուսահատվելու հարկ չկա, քանի որ ձեր աշխատանքը իզուր չի կորչում: Այստեղ համախմբված է մեծ մտավոր ներուժ, եւ ես սա ընդգծում եմ առանց հեգնանքի: Ձեր ընդունած օրենքներն ու որոշումները դրվում են հանրապետական օրենսդրությունների հիմքում: Այսինքն՝ դուք հանրապետություններին օգնում եք մշակելու սեփական օրենքները: Ուստի կարելի է բավարարվել եւ այդ աշխատանքով:

Նախարարների խորհո՞ւրդը. իմ կարծիքով այն տապալում է ամբողջատիրական հավակնոտությամբ եւ այդ պատճառով նոր պայմաններում ունակ չէ իրականացնելու համաձայնության գործառույթը:

Պրեզիդե՞նտը. Ես արդեն այդ մասին խոսեցի, միայն պետք է ավելացնեմ, որ նա նույնպես ի վիճակի չէ իրականացնելու այդ գործառույթը:

Նշանակում է, պետք է գտնել, ավելի ճիշտ, ստեղծել նոր մարմիններ, որոնք ունակ կլինեն ստանձնելու այդ կարգավորող, համաձայնեցնող ինստիտուտների դերը: Ես ընդհուպ մոտենում եմ կոնկրետ առաջարկություններին եւ մեխանիզմներին:

Միակ հնարավոր բանը, որն իմ կարծիքով, կարելի է անել տվյալ պահին, հետեւյալ երկու պետական մարմինների ստեղծումն է.

— **Տնտեսական համաձայնեցման կոմիտե,** որը կարող է լինել ժամանակավոր կամ անցումային, եւ որի դերը կարող է կատարել ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահությունը՝ իր կազմում ընդգրկելով 15 հանրապետությունների վարչապետներին: ԽՍՀՄ Նախարարների

խորհրդի նախագահն ըստ այդմ իրավասու է կատարելու այդ 15 մարդու որոշումները: Հասկանալի է, որ այստեղ անհրաժեշտ է սահմանել այդ մարմնի կարգավիճակն ու աշխատակարգը:

— Քաղաքական համաձայնեցման կոմիտե, որը ձեւականորեն գոյություն ունի: Դա ԽՍՀՄ Ֆեդերացիայի խորհուրդն է, որի կարգավիճակը, սակայն, իմ կարծիքով, առայժմ նշված չէ: Ես այդ խորհրդի անդամ եմ, բայց չգիտեմ իմ լիազորությունները: Հայաստանի Գերագույն խորհուրդն ինձ ոչ մի լիազորություն չի տվել այնտեղ որևէ որոշում ընդունելու կամ փաստաթուղթ ստորագրելու համար: Անհրաժեշտ է հստակեցնել Ֆեդերացիայի խորհրդի կարգավիճակն այն հաշվով, որ խորհրդի անդամները կարողանան իրենց հանրապետությունների Գերագույն խորհուրդների անունից որոշումներ ընդունել: Պետք է նշվի նաեւ այդ մարմնի աշխատակարգը. որոշումները կարելի է ընդունել, ասենք, ռակյալ մեծամասնությամբ՝ ձայների երկու երրորդով կամ այլ կերպ:

Եւ վերջինը՝ միութենական պայմանագրի մասին: Ըստ իս, մենք բաց ենք թողել պահը, երբ հնարավոր էր միութենական պայմանագիր կնքել: Այժմ, կես ճանապարհին, դա իրականացնելն անհնար է: Հանրապետություններում ընթանում են իմքնիշխանության խորացման, Կենտրոնի եւ հանրապետությունների իրավասությունների սահմանազատման գործընթացներ, եւ, ինչպես ասացի, կես ճանապարհին, անհնար է կնքել այդ պայմանագիրը: Պետք է թողնել, որ այդ գործընթացները հասնեն իրենց տրամաբանական ավարտին եւ միայն դրանից հետո կնքել միութենական պայմանագիրը: Դա պետք էր անել կամ ավելի վաղ, բանի դեռ չէր սկսվել հանրապետությունների իմքնիշխանացման գործընթացը, կամ էլ պետք է թողնել այդ գործընթացի ավարտից հետո:

Եթե նման մեխանիզմներ ստեղծվեն, եւ նման պրակտիկան իրեն արդարացնի, հնարավոր է, որ դա ապագայում որոշակիացնի նոր Միության կամ նոր Ֆեդերացիայի իրական ձեւը:

Եթե իմ խոսքում բարոյախրատական ինչ-որ երանգ հնչեց, ապա ներողություն եմ խնդրում:

Շնորհակալություն ուշադրության համար:

ՀՀՄԱՄ, 28/16.11.90: Ելույթի սղագրություն: Թարգմանություն ռուսերենից:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(24 նոյեմբերի, 1990 թ.)

Ես ուշի-ուշով հետեւատեսությամբ հետեւում էի համագումարի աշխատանքներին եւ կարող եմ իմ մի բանի տպավորությունները ձեզ ներկայացնել:

Նախ՝ ուզում եմ նշել այն դրական առաջխաղացումը, որ տեղի ունի նախորդ համագումարի համեմատ. այժմ մթնոլորտ է ավելի գործնական, ավելի կոնստրուկտիվ մթնոլորտ: Կարող եմ ավելացնել նաեւ, նկատի ունենալով խորհրդարանի աշխատանքի փորձը, որ այս լսարանում հավաքված է ոչ պակաս մտավոր կարողություն, քան խորհրդարանում: Եւ նույնիսկ մի առավելություն կարող եմ նշել խորհրդարանի համեմատ: Դա այն է, որ այստեղ ընթացող խոսակցությունն ու բանավեճը շատ ավելի անկեղծ, շատ ավելի նշմարիտ են: Դա ունի երկու բացատրություն. նախ՝ խորհրդարանն իր բնույթով ավելի զբաղված լինելով ընթացիկ, պետական կառուցվածքին վերաբերվող օրենսդրական խնդիրներով՝ ժամանակ չունի լրջորեն զբաղվելու գաղափարախոսական խնդիրներով, չնայած այդ հարցերը ժամանակ առ ժամանակ շոշափվում են. ահա այդ բացն է, որ լրացվում է այստեղ: Եւ երկրորդ՝ խորհրդարանում, համենայն դեպս, կան ընդդիմադիր ուժեր, որոնք շատ հաճախ վարում են ոչ թե կոնստրուկտիվ բանավեճ, այլ բանավեճը հիմնում են բաղաքական շահարկումների վրա: Իսկ այստեղ, բանի որ սա համախոհների ժողով է, նշված թերությունները չկան: Եղան սուր բանավեճեր, եղան սուր հարցադրումներ, բայց այս ամենը կատարվում էր ոչ

թե հաղաքական շահարկումների նպատակով, այլ նշմարտությունը փնտրելու, նշմարտությանը հասնելու մտահոգությամբ:

Ես կուզեի մի քանի պարզաբանումներ կատարել այստեղ ինձ հարցերի շուրջ:

Դրանցից առաջինը մեր Շարժման հետագա գործունեության կառուցվածքային խնդիրներն են, երբ սուր կերպով դրվեց Շարժումը կուսակցության վերածելու կամ որպես Շարժում պահպանելու հարցը: Սա բնական հարց է եւ ծագում է աշխարհի բոլոր այն շարժումների, այն ժողովրդական ճակատների առջեւ, որոնք հասնում են իշխանության: Սա ունի իր օբյեկտիվ պատճառը. մարդկությունը դեռեւս չի ստեղծել հաղաքական պայքարի, հաղաքական գործունեության այլ ձեւ, եթե ոչ կուսակցությունների պայքարը: Դա է առայժմ բնականը, որը բնական է, սակայն, կայուն, արդեն ձեւավորված հասարակությունների համար: Անցման շրջանում, հեղափոխական շրջանում միշտ էլ այս օրինաչափությունը խախտվում է, եւ շատ հաճախ հեղափոխությունը գլխավորում է ոչ թե որեւէ կուսակցություն, այլ մի համաժողովրդական ճակատ, համազգային շարժում, այնպիսին, ինչպիսին Հայոց համազգային շարժումն է: Բայց միեւնույն է, եթե ոչ այսօր, վաղը, մյուս օրը, մի քանի տարի հետո այս հարցը մեր առջեւ ծագելու է: Ծագելու է, որովհետեւ Շարժման կողմին պետք է ձեւավորվեն կուսակցություններ, որոնք պետք է վարեն զուտ կուսակցական գործունեություն, եւ այս հաղաքական մրցակցությանը դիմանալու համար Շարժումը ստիպված պետք է լինի կուռ կառուցվածք ստեղծել, այսինքն՝ աստիճանաբար մոտենալ կուսակցությանը: Ահա այս մտահոգությունն էր առաջին հերթին այն հարցադրման պատճառը, որ շոշափվեց մեր համագումարում: Ես կարծում եմ համագումարը ճիշտ եզրակացության է եկել. առայժմ Շարժումը լիովին իրեն արդարացրել է, եւ ամենեւին կարիք չկա այն կուսակցության վերածելու խնդիրը դարձնել օրակարգի հարց:

Մի այլ պարզաբանում: Այստեղ շոշափվեց ազգայինի եւ դեմոկրատականի, դեմոկրատիայի եւ սոցիալական խնդիրների հակադրման հարցը: Կարծում եմ այս հակադրությունը արհեստական է: Երբեմ չի կարելի ազգայինը հակադրել դեմոկրատականին՝ վերջինիս տակ հասկանալով կոմոպոլիտիզմ: Ամենեւին ոչ: Դրանք լրացնում են մեկը մյուսին, եւ առանց մեկի՝ մյուսը գոյություն չունի: Նույնիսկ աշխարհի

ամենազարգացած, հաղաքակիրթ երկրներում դեմոկրատիան, մարդկային ազատությունները ստեղծվում, ձեւավորվում են նախ եւ առաջ, երբ ոչ միայն ու միայն սեփական ժողովրդի բարօրության համար: Սրանից ավելի ազգային նպատակ, ինձ թվում է, դժվար է պատկերացնել:

Մի այլ հարց՝ Հայոց համազգային շարժմանը ներկայացված մեղադրանքների հարցը: Որպես տիրապետող հաղաքական շարժում, բնական է, որ այն պետք է ունենար ընդդիմախոսներ՝ բարեկամ ընդդիմախոսներ, լուրջ, առողջ քննադատներ: Նույնման բնական է, որ պետք է ունենար նաեւ չարակամներ: Եւ այդ ամենն էլ, փառ Աստծո, կա: Ուղղակի մենք պետք է կարողանանք զանազանել բարեկամի առողջ քննադատությունը չարակամի մեղադրանքներից, պարզապես անտեսել սրանք, ժամանակ չվատնել, արհամարհել:

Որո՞նք են այդ մեղադրանքները:

Նախ այն, որ արդեն երեք տարի կրկնվում է շատերի կողմից, մեր համագումարում էլ դրա մասին ակնարկվեց, թե իբր մեր Շարժումը տառապում է տարերայնությամբ, մեր բոլոր հաջողությունները պատահական են, չկա ո՛չ գործունեության, ո՛չ էլ հետանկարային որեւէ ազգային ծրագիր: Սա ամենամեծ կեղծիքն է, որ գոյություն ունի: Այս մեղադրանքը բախվել է Հայոց համազգային շարժման ժայռին եւ փշրվել: Բայց չնայած դրան՝ մինչեւ հիմա էլ կան այդպես պնդողներ: Ես միայն զարմանում եմ, թե ինչու նման մեղադրանք ներկայացնողները երեք տարվա ընթացքում իրենք չկարողացան ստեղծել այդ ազգային ծրագիրը, համոզել մեր ժողովրդին եւ նրան տանել իրենց ետեւից:

Իսկ եթե ըստ էության մոտենանք, ես կարծում եմ Հայոց համազգային շարժումն ունի խոսքապես ազգային ծրագիր, այն էլ ոեալ ծրագիր, որ այսօր հնարավոր է իրականացնել: Հռչակագիրը, որ ընդունվեց մեր խորհրդաժողովում, եթե համեմատելու լինենք անցյալ տարվա նոյեմբերին ընդունված Հայոց համազգային շարժման ծրագրի հետ, սկզբունքային ոչ մի տարբերություն չենք գտնի, եթե չասենք՝ բացառնակ նույնություն կգտնենք այդ երկու փաստաթղթերի միջեւ:

Ահա սա՛ է այն ազգային ծրագիրը, որի նպատակն է Հայոց անկախ պետականության վերականգնումը եւ դրան ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը: Եթե կան մարդիկ, որոնք կասկածում են այս ազգային ծրագրի նշմարտությանը, խնդրեմ, մենք պատրաստ

ենք ճնճարկել այդ մարդկանց ներկայացրած ծրագրերը: Բայց, կրկնում եմ, երեք տարի է՝ այս մեղադրանքը ներկայացվում է. միևնույն, դժբախտաբար, այդպիսի ծրագիր ոչ ոք չի առաջարկել:

Հայոց համազգային շարժումն իր առջեւ միշտ դրել է ոչ թե վերացական նպատակներ, այլ միայն ու միայն իրականանալի խնդիրներ՝ թեկուզ դրանք առաջին հայացքից փոքր թվան: Փոքր, իրականանալի խնդիրներով, բայց առ բայ իրականացնելով իր ծրագիրը՝ նա ժողովրդին կարողացել է համոզել իր կենսունակության մեջ եւ դրանով է միայն, որ շահել է ժողովրդի վստահությունը: Անցյալ տարվա մեր ծրագիրն այսօր նույնիսկ արդեն որոշ չափով ճնշված է, որովհետեւ այդ ծրագրում նշված մոտակա խնդիրների մեծ մասն արդեն իրականություն է դարձել:

Ես վստահ եմ, որ այսուհետեւ էլ Շարժումը չի կորցնի իր հետեւողականությունը եւ, կրկնում եմ, առհամարհելով շահականիներին (խնդրում եմ սխալ չհասկանալ, դա չի վերաբերում բարեկամներին, դա չի վերաբերում առողջ ինքնատիրությանը, որին պետք է շատ ուշադիր վերաբերվել), անտեսելով նրանց բամբասանքներն ու մեղադրանքները, կշարունակի հաստատակամորեն իրականացնել սեփական հաղթականությունը:

Մի այլ մեղադրանք: Ես ուրախ եմ, որ այստեղ հարցերը սուր են դրվել. մենք չենք խուսափել սուր հարցադրումներից, եւ այսօր ես էլ պետք է շատ սուր դնեմ այդ հարցը: Դա այն է, թե, իբր, Հայոց համազգային շարժումը, «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարները Ղարաբաղի հարցն օգտագործեցին որպես սրամպլիֆ՝ աթոռներ գրավելու համար եւ դրանից հետո մոռացան Արցախը, անտեսեցին նրա շահերը: Սա սովորական մեղադրանք է, որին դուք կհանդիպեք և՛ Հայաստանի մամուլում, և՛ տարբեր ժողովներում, և՛ Սփյուռքում: Սփյուռքում էլ կան կազմակերպություններ, որոնք հետեւողականորեն անցկացնում են այս գիծը: Բայց ովքեր մոտ են, ովքեր գործնականում իսկապես մասնակցել են այս Շարժմանը, տեղյակ են Արցախում Հայաստանի ժողովրդի ներդրած ջանքերին, նրանք կարող են վկայել, որ շատ հաճախ այդպիսի մեղադրանք ներկայացնողները որևէ առնչություն չեն ունեցել Արցախի խնդրի հետ: Այսօր պարզապես այն դարձել է հաղթական շահարկման առարկա, որի նպատակն է միայն ու միայն վարկաբեկել

Հայոց համազգային շարժումը եւ նրա ստեղծած ներկա ազգային իշխանությունը: Հայոց համազգային շարժումը եւ Հայաստանի ներկա իշխանությունները Արցախի վերաբերյալ ունեն հստակ հաղթական ծրագիր եւ հետեւողականորեն իրականացնում են այդ հաղթականությունը: Ես այդ մասին երեկ հնարավորություն ունեցա հանգամանորեն խոսել համագումարի արցախյան բաժանմունքի նիստում, այդ պատճառով հարկ չեմ համարում շարաշահել ձեր ժամանակը:

Մի այլ մեղադրանք, որը նույնպես իր պատմությունն ունի. իբր Հայոց համազգային շարժումն անտեսում է Հայ Դատը, հրաժարվում հայ ժողովրդի պատմական իրավունքներից: Մենք տվել ենք մեր բացատրությունները, բայց դրանք ամենևին չեն ազդում մեր ընդդիմախոսների վրա: Բանավեճի առանձնահատկությունը, դժբախտաբար, այն է, որ դրանով երբեմն հնարավոր չէ ազդել ընդդիմախոսի վրա: Բանավեճը նրա համար է, որ համոզես ժողովրդին, երրորդ կողմին: Միևնույն է, եթե որևէ դիրհորոշում ձեռնտու է մեր ընդդիմախոսներին, որոնք էլ հիմնավորված լինեն մեր փաստարկներն ու պարզաբանումները, նրանք նույն մեղադրանքները շարունակ կրկնելու են, որովհետեւ հաղթական այլ խաղաթուղթ չունեն:

Ի՞նչ կարելի է ասել այս մասին: Մեր վերաբերմունքը Հայ Դատին միանշանակ է: Նախ՝ տիրում է այն թյուր տեսակետը, թե իբր Հայ Դատը Սփյուռքի դատն է, արեւմտահայության խնդիրը: Ամենևին ոչ, որովհետեւ պետք է ելնել այն փաստից, որ Հայաստանի բնակչության կեսն էլ, առնվազն կեսը արեւմտահայ է: Եւ սփյուռքահայության զգացմունքները նույնքան հարազատ են հայրենյաց ժողովրդին, որքան սփյուռքահայությանը: Այնպես որ, Հայ Դատի պաշտպանությունը դարձնել Սփյուռքի մենաշնորհը, ինձ թվում է, հիմքից սխալ է: Սա՝ մեկ: Իսկ երկրորդը՝ մենք բազմիցս կրկնել ենք, որ Հայոց համազգային շարժումն ամենևին չի հրաժարվում հայ ժողովրդի պատմական իրավունքներից, Ցեղասպանության միջազգային ճանաչման պահանջից, բայց գտնում է, որ այդ գաղափարներն անհրաժեշտաբար տեղ գտնելով հաղթական կուսակցությունների ու կազմակերպությունների ծրագրերում եւ լինելով նրանց գործունեության կարեւորագույն խնդիրներից, այսօր չեն կարող դառնալ պետական հաղթականության օրակարգի հարց: Սա է մոտեցումը: Այս սրահում ներկա է մոտ 1500 ազգային հաղթա-

կան գործիչ: Դուք պարտավոր եք իմանալ, որ այս մեղադրանքները դեռևս պիտի շարունակվեն, բայց մենք իրավունք չունենք վատնելու մեր ուժերը, մեր եռանդը նման չարախոսությունների պատասխանելու համար, դրանք պետք է անտեսել, եւ միայն այս ձեւով է, որ դրանք կմարեն: Ես ուրախ եմ, որ մեր համագումարը ցուցադրվում է հեռուստատեսությամբ, եւ ես հնարավորություն ունեմ հատուկ տալու մեր տեսակետը խնդրո առարկա հարցի վերաբերյալ: Հայ Դատը, աբեմտահայության իրավունքներն իր պատմական հայրենիքի նկատմամբ պետական բաղաքականության օրակարգի հարց կդառնան միայն այն ժամանակ, երբ հայոց պետությունն ի վիճակի կլինի սեփական ուժերով լուծել այդ խնդիրները:

Սրա հետ առնչվող մի այլ հարց, որը նույնպես դարձել է բաղաքական շահարկումների առարկա: Մեր կամքից անկախ այդ հարցի վրա ավելի շատ ուշադրություն է հրավիրվել, քան արժանի էր: Դա Թուրքիայի հետ մեր հարաբերությունների հարցն է:

Մենք այդ հարաբերությունները բացարձակապես չենք առանձնացնում մեր բոլոր հարեւանների հետ ձեւավորվելիք հարաբերություններից: Բայց, չգիտես ինչու, շատերը, մոռանալով մյուս հարեւաններին, մեզ անընդհատ ստիպում են խոսել միայն ու միայն Թուրքիայի հետ հարաբերությունների մասին: Սա էլ հասկանալի է, բայց ունի եւ օբյեկտիվ, եւ սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվն այն է, որ 70 տարի մի հոգեբանությամբ սնված մեր ժողովրդի համար այսօր դժվար է հոգեբանական շրջադարձ կատարել եւ հնարավոր տեսնել Թուրքիայի հետ երկխոսությունը: Սուբյեկտիվն էլ այն է, որ այդ հարցը շահարկում են նույնիսկ այն մարդիկ, ովքեր համոզված են, որ այդ հարաբերությունները մեզ համար ունեն կենսական նշանակություն: Դրանք ամենեւին իմիանպատակ չեն, այլ՝ թելադրված այն առողջ գիտակցությամբ, որին վերջապես հասել է մեր ժողովուրդը: Ես կարծում եմ, որ վերջին տարիներին բաղաքական մտի մեջ տեղի ունեցած ամենամեծ հեղափոխությունը հրաժարումն է օտարին ապավինելու, երբոր պետության հովանավորության վրա հույս դնելու սնանկ գաղափարից: 300 տարի շարունակ հայ ժողովրդի բաղաքական միտքը թունավորվել է այն պատրանքով, որ մեծ տերությունները՝ երբեմն Արեւմտյան Եւրոպան, իսկ որպես օրենք՝ Ռուսաստանը, պետք է լինեն մեր ազգային խնդիրների իրագործողը: Սա այն գաղափարն է եղել, որին տուրք տալու համար մենք հատուցել ենք մեծագույն կորուստներով: Այսօր է, որ հայ ժողովուրդն արթնանում է ինքնաշրջման եւ տեսնում, որ նույնիսկ խորհրդային Միությունը, որ թվում էր, թե 70 տարի որոշ երաշխիքներ է ապահովել մեր ազգի գոյության համար (եւ դա իրականություն է, քանի որ այդ ընթացքում Հայաստանի սահմաններին վրա կրակոցներ չեն եղել, հայ ժողովուրդը, չնայած գյուղի բռնարկման եւ ստալինյան եղեռնի շրջանում կրած անհուն կորուստներին, այնուամենայնիվ, հնարավորություն ունեցել է զբաղվելու խաղաղ, ստեղծագործ աշխատանքով), այսօր արդեն գտնվելով փլուզման եզրին, այլեւս չի կարող հանդիսանալ մեր ազգի գոյության երաշխավորը. եւ մենք է, որ պետք է փնտրենք, ստեղծենք մեր ազգի գոյության նոր, ավելի հուսալի երաշխիքներ: Ահա այս երաշխիքների շղթայի օղակներից մեկն է միայն Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը, որը, ինչպես ասացի, մեր հասարակական հոգեբանության յուրահատկություններից ելնելով, իր վրա ավելի շատ ուշադրություն է բևեռել, քան մեր մյուս հարեւանների հետ ունեցած հարաբերությունները:

Այստեղ էլ, որպեսզի ոչ մի թյուրիմացություն չլինի, ես ուզում եմ շեշտել, որ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը, որը առաջին հերթին նշանակում է առեւտրական, տնտեսական հարաբերություններ, ամենեւին չի նշանակում հրաժարում մեր պատմական իրավունքներից, Ցեղասպանության դատապարտման պահանջից: Սակայն մենք առաջնորդվում ենք այն սկզբունքով, որ երկու կողմն էլ, նկատի ունենալով հարցի նրբությունը (չմոռանալով, որ այս հարցերը նույնքան նուրբ եւ սուր են նաեւ Թուրքիայի համար), պետք է դրսեւորեն բաղաքական իրատեսություն եւ այդպիսի հարաբերություններ հաստատելիս չփորձեն միմյանց ներկայացնել բաղաքական պայմաններ: Միայն այդպիսի մոտեցումն է, որ հնարավորություն կտա իրականացնել Հայաստանի համար այդքան անհրաժեշտ հարաբերությունների կարգավորումը իր հարեւանների, ի թիվս որոնց՝ Թուրքիայի հետ:

Այստեղ խոսվեց նաեւ սոցիալական աղետարության խնդիրների մասին: Սա իսկապես մեր առջեւ ծառացած ամենասուր խնդիրներից է: Մենք պետք է խոստովանենք, որ գալով իշխանության գլուխ՝ կարճ ժա-

մանակաճատվածում չէինք կարող բաբելավել մեր ժողովրդի կենսական պայմանները: Մեր ժողովուրդը դա շատ լավ հասկանում է: 70 տարի շարունակ բանդված երկիրը ճնաբավոր չէ վերականգնել մի բանի ամսվա, մի բանի տարվա ընթացքում: Բայց մեր ժողովուրդը մեզանից այսօր իրավացիորեն պահանջում է գոնե սոցիալական արդարություն ապահովել: Որովհետեւ, չնայած տեղի ունեցած բազմաթիվ կարեւոր փոփոխություններին, այնուամենայնիվ, բոլորիս աչքի առջեւ անցյալի պաշտոնյաները շարունակում են կաշառք վերցնել, կողոպտել ե՛ւ պետության, ե՛ւ ազգի հարստությունները, հարստահարել մեր ժողովրդին: Մեր պարտքն է՝ որքան ճնաբավոր է արագ արմատախիլ անել այդ երեւույթը: Բայց դա ճնաբավոր չէ եւ ցանկալի էլ չէ իրականացնել միայն ու միայն պատժիչ միջոցներով: Նմանատիպ կոչերը, որ արվում են մեր իշխանություններին, ինձ թվում է, վնասակար կոչեր են: Իրողությունը պետք է փոխվի, բայց պետք է փոխվի տնտեսության, սոցիալական կյանքում լուրջ, արմատական վերափոխումներ կատարելու շնորհիվ: Իհարկե դա չի բացառում, որ պետք է կիրառվեն նաեւ օրենքով սահմանված պատժիչ միջոցներ:

Ես կարծում եմ՝ ազգային հաշտեաշխության, սոցիալական արդարության հիմքը այնպիսի դեմոկրատական հասարակարգի ստեղծումն է, երբ յուրաքանչյուր անհատ հասարակության մեջ զբաղեցնում է իր արժանի տեղը: Սա, իհարկե, իդեալ է, որին, ըստ երեւույթին, դժվար է հասնել, բայց սա՛ պետք է լինի մեր ճանապարհը: Հայաստանի նորընտիր իշխանությունները փորձում են (թե որքան է մեզ հաջողվում, դա այլ հարց է) ե՛ւ խորհրդարանում, ե՛ւ կառավարությունը ձեւավորելիս գոնել լավագույն կադրերին՝ անկախ նրանց կուսակցական պատկանելությունից, անկախ նրանց անցյալից, այն կադրերին, որոնք այսօր ի վիճակի են առավելագույնս համապատասխանել իրենց զբաղեցրած պաշտոններին: Ինձ թվում է, որ միայն այս ճանապարհով մենք կարող ենք ապահովել անհատին ըստ իր արժանիքների գնահատելու սկզբունքը, որը, կրկնում եմ, սոցիալական արդարության եւ ազգային հաշտեաշխության հիմքը պետք է լինի: Եթե մեզ դա առայժմ չի հաջողվում, ինձ թվում է՝ պետք է ներել. մենք փնտրտուքների մեջ ենք, եւ կարծում եմ նաեւ իրավունք ունենք սխալվելու: Ե՛վ Հայոց համազգային շարժումը, ե՛ւ նրա ստեղծած ազգային իշխանությունը, կարծում եմ, իրավունք

ունեն մեր ժողովրդից վստահության վոտ ակնկալելու, իսկ վստահության վոտ նաեւ վստահյալին սխալվելու իրավունք տալն է:

Դժբախտաբար, մենք կարծես թե մի փոր անհամբեր ենք, չենք հանդուրժում անգամ ամենափոր սխալները: Դա վերաբերում է ոչ միայն մեր հասարակության տարբեր խավերին, այլ նույնիսկ Հայոց համազգային շարժման գործիչներին, երբ մի փոքրիկ վրիպում, մի փոքրիկ անհաջող արտահայտություն դառնում է մատի փաթաթան, կրծեր են բորբոքվում, ավելորդ նյարդայնություն է ստեղծվում: Հուսով եմ, սակայն, որ մենք այնման հաղթական լայնախոհություն կունենանք, որպեսզի մեր իշխանություններին վերապահենք սխալվելու այդ իրավունքը: Իհարկե, սխալներն էլ սահման ունեն: Ամենեին չի կարելի թույլ տալ, որ սխալները հասնեն այնպիսի աստիճանի, որ սպառնալիքի տակ դնեն մեր ծրագրի հիմնական ուղին, լուրջ շեղումներ հանդիսանան այդ ուղու նկատմամբ: Վստահ եմ, որ փոխադարձ լայնախոհություն դրսեւորելու դեպքում Հայոց համազգային շարժման՝ որպես հասարակական կազմակերպության, Հայաստանի Գերագույն խորհրդի՝ որպես պետական գերագույն օրենսդիր մարմնի եւ Հայաստանի կառավարության՝ որպես պետական բարձրագույն գործադիր մարմնի միասնությունը եւ արդյունավետ համագործակցությունը միանգամայն ապահովված կլինեն, ինչը եւ կհանդիսանա մեր հաջողությունների գրավականը: Եթե այսօր մենք սկսենք թաղվել մանր-մունր խնդիրների մեջ, դրանով միայն ջուր կլցնենք մեր ընդդիմախոսների ջրաղացին: Համոզված եմ ինձ սխալ չհասկանալ: Ես ամենեին նկատի չունեմ, թե մենք պետք է ծածկենք, կոծկենք մեր թերությունները, չննադատենք իրար: Ամենեին ոչ: Բայց, կրկնում եմ, պետք է լայնախոհություն հանդես բերենք փնտրտուքների նկատմամբ, որոնց ընթացքում սխալներն անխուսափելի կլինեն:

Եւ վերջին դիտողությունը, որ վերաբերում է ոչ միայն մեր լսարանին, Հայոց համազգային շարժմանը, այլեւ մեր ողջ ժողովրդին: Դա շտապողականությունն է, անհամբերությունը, նյարդայնությունը: Դժբախտաբար, նյարդայնությունը հիմա դարձել է ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ Խորհրդային Միության հասարակության հիմնական հատկանիշը: Այդ նյարդայնությամբ վարակվել են նաեւ իշխանությունները: Ես վերջերս Մոսկվայում էի, ինձ չափազանց մտահոգեց հատկապես

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նյարդայնությունը. ես չտեսա այնտեղ որևէ հավասարակշռված, սառնասիրտ մարդ: Բոլորը գանվում էին ջղային, գրգռված վիճակում, որը չափազանց վտանգավոր է: Նրանք, պարզ է, վարակված են հասարակության նյարդայնությունից. խորհրդարանում նորից կրկին են բորբոքվում, նյարդայնության աստիճանը բարձրանում է, որը փոխանցվում է հասարակությանը, այնուհետեւ՝ կրկին իշխանություններին: Սա չափազանց վտանգավոր մթնոլորտ կարող է ստեղծել: Մենք սրանից պետք է խուսափենք: Մենք պետք է լինենք ավելի սառնասիրտ, ավելի համբերատար: Շտապողականությունը, անհամբերությունը միայն ու միայն կավելացնեն, կխորացնեն մեր սխալները եւ կարող են վտանգել մեր ողջ գործը: Ժողովրդի անհամբերությունն էլ բացատրելի է: Մեզնից թոիչքներ էին սպասում, բայց աշխարհում հրաշքներ չեն լինում, թոիչքներ չեն լինում. դրա համար ժամանակ է պետք:

Բայց չպետք է մոռանալ, որ ամենամեծ թոիչքը մեր ժողովուրդն արդեն կատարել է. ուզում եմ շեշտել Հայոց ճամազգային շարժման եւ նրա ստեղծած իշխանությունների պատմական (ես չեմ վախենում այս բառն օգտագործելուց) առաքելությունը, որ նրանք իրականացրին վերջին չորս ամիսների ընթացքում: Միայն այն փաստի շնորհիվ, որ Հայոց ճամազգային շարժմանը հաջողվեց իշխանության գլուխ անցնել, Հայաստանում կանխվեց բաղամացիական պատերազմը: Դուք շատ լավ եք հիշում չորս ամիս առաջ Հայաստանում տիրող իրավիճակը: Եթե կոմունիստական իշխանությունը շարունակվեր եւս 1-2 ամիս, մենք չէինք կարող խուսափել բաղամացիական պատերազմից: Իսկ բաղամացիական պատերազմը որեւէ ժողովրդի համար ամենամեծ դժբախտությունն է, շատ ավելի մեծ դժբախտություն, քան արտաքին ագրեսիան: Դա կանգնած էր մեր դռան շեմին: Մեզ հաջողվեց հսկողության տակ վերցնել իրադրությունը ոչ թե մեր արժանիքների, այլ միայն ու միայն ժողովրդի վստահության շնորհիվ: Քաղամացիական պատերազմը միայն իրենով չէր ավարտվի: Մեր Շարժմանը, մեր իշխանություններին հաջողվեց խուսափել նաեւ օտար զորերի կողմից Հայաստանն օկուպացնելուց: Որովհետեւ բաղամացիական պատերազմին անմիջապես կհաջորդեր Հայաստանի օկուպացիան խորհրդային բանակի կողմից՝ այնպես, ինչպես տեղի ունեցավ Ադրբեջանում: Ահա այն պատմական առաքելությունը, որ իրականացրել է Հայոց ճամազգային շարժումը: Եւ

եթե այսօր ևս նույնիսկ հեռանա պատմության թատերաբեմից, միեւնույն է, նա արդեն կատարել է իր հսկայական պատմական միսիան մեր ժողովրդի առջեւ:

Սրանից մեծ, կարեւոր հաջողություններ են, բայց ոչ այն թոիչքը, որ իրականացրել է Հայոց ճամազգային շարժումը, մեր ողջ ժողովուրդը: Այդ թոիչքն այն է, որ հայ ժողովուրդը, թոթափելով 70-ամյա գաղութային լուծը, բռնել է անկախ պետականության ստեղծման ճանապարհը եւ ստեղծել իր ազգային իշխանությունը: Այսօր Հայաստանն ունի մի իշխանություն, որն առաջնորդվում է ոչ թե Մոսկվայի, ոչ թե օտարի հրահանգով, այլ միայն ու միայն սեփական ժողովրդի, սեփական պետության շահերով: Ես սրանում եմ տեսնում անկախության բովանդակությունը, ազգային իշխանության էությունը: Եւ ես ձեզ հավաստիացնում եմ՝ Հայաստանի իշխանությունները երբեմ չեն շեղվի բաղաքական այս սկզբունքից:

«Հայաստանի Հանրապետություն», 28 նոյեմբերի, 1990 թ.:
Հրատարակված՝ «ՀՀՇ-ն ունի խորապես ազգային, իրատեսական ծրագիր» վերնագրով:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

(28 փետրվարի, 1991 թ.)

Հարգելի պատգամավորներ,

Երկու օր է, ինչ Հայոց խորհրդարանը քննում է միութենական հանրաքվեի եւ միութենական պայմանագրի նկատմամբ մեր վերաբերմունքի հարցը:

Այս քաղաքական բանավեճը ես համարում եմ երեւույթ, միայն թե կցանկանայի կատարել մի քանի անհրաժեշտ ճշգրտում:

Բնական է, որ բանավեճի ժամանակ կողմերը դիմում են ծայրահեղացումների, խիստ եւ կտրուկ շեշտադրումների, բայց դա չպետք է հասնի գռեհկացման:

Նման գռեհկացում եմ ես համարում քաղաքական եւ տնտեսական անկախությանը տրված առանձին բնորոշումներ:

Պետք է մեկընդմիշտ գիտակցել, որ անկախություն՝ չի նշանակում մեկուսացում: Այս հասկացությունները պետք է իրարից հստակ տարբերակել եւ երբեք շահարկման առարկա չդարձնել, քանի որ դա էժան շահարկում է: Պետք է վերջապես հասկանալ այն պարզ ճշմարտությունը, որ քաղաքական անկախությունն, ընդհակառակը, ենթադրում է ավելի լայն կապեր, ավելի սերտ հարաբերություններ, ավելի համակողմանի ու բազմազան համագործակցություն արտաքին աշխարհի հետ, քան կախյալ կամ կիսանկախ կարգավիճակը:

Նույնը վերաբերում է նաեւ տնտեսական անկախությանը, որը նույնպես ամենեւին չի նշանակում մեկուսացում: Տնտեսական անկա-

խություն՝ նշանակում է վարել անկախ տնտեսական քաղաքականություն, մտնել այնպիսի տնտեսական կապերի մեջ, հաստատել այնպիսի հարաբերություններ, որոնք բխում են սեփական պետության շահերից: Այն տնտեսական համակարգը, որ մենք այսօր ունենք, պարտադրված է մեզ, եւ դա ամենեւին հնարավորություն չի տալիս վարել իճնուրույն տնտեսական քաղաքականություն: Այդ իսկ պատճառով, նա արդեն մեզ համար ընդունելի չի կարող լինել, քանի որ կաչկանդում է մեր բնական զարգացումը եւ վիժեցնում հանրապետության տնտեսական բարգավաճումը:

Սրանք իբրեւ պարզ դիտողություններ, որպեսզի այսուհետեւ նման կարգի հակասությունները չշահարկվեն բանավեճերի ընթացքում, եւ ավելորդ ժամավաճառության տեղիք չտվի:

Իսկ այժմ հնության դրված բուն խնդիրների շուրջ. նախ՝ միութենական հանրաքվեի մասին:

Իմ խորին համոզմամբ՝ միութենական հանրաքվեն, որին այնքան ձգտում են կենտրոնական իշխանությունները, որին ձգտում են բոլոր հետադիմական ուժերը՝ շահագրգռված ամբողջատիրական իրավակարգի պահպանմամբ, ոչ թե իրավական ակտ է, այլ զուտ պրոպագանդիստական միջոցառում: Ես կարծում եմ, նույնիսկ այդ միջոցառման կազմակերպիչները հասկանում են, որ իրավական ուժ չի կարող ունենալ մի որոշում, որը հանրաքվեի միջոցով կայացնելու է ժողովրդի մեկ բառորդը. եւ այդ որոշումը, անկախ առանձին հանրապետություններում ստացված արդյունից, պարտադիր է լինելու ողջ երկրի տարածքում: Դա փաստորեն լիովին ոտնահարում է ազգերի ինքնորոշման իրավունքը, քանի որ ոչ թե հանրապետությունն է որոշում իր բախտը, այլ միությունն է որոշում հանրապետության կարգավիճակը: Այդ դեպքում ճարց կարող է առաջանալ՝ մի՞թե միութենական կենտրոնը չի զգում իրավական այս անհեթեթությունը: Զգում է եւ բաջ գիտակցում, բայց առաջնորդվում է ուժի դիրքերից բխող անպատկառության-ցինիզմի դրսեւորման դեռեւս գործող մեխանիզմով՝ մոլորության մեջ գցելու համար եւ՛ միութենական, եւ՛ համաշխարհային հասարակական կարծիքը:

Անպատկառության-ցինիզմի արտահայտություն է նաեւ միութենական պայմանագրի առաջարկված նախագիծը: Անպատկառությունն այս դեպքում արդեն կայանում է նրանում, որ նախագիծը չի համապատասխանում հանրապետությունների ձեռք բերած այսօրվա կարգավիճակին: Ցանկացած պայմանագիր, ցանկացած հաղթական ծրագիր սովորաբար հիմնվում է զորական վիճակի վրա: Զորական վիճակը պետք է լիներ հաղթական ուժերի բաշխման այսօրվա իրականությունը: Եթե նշված նախագիծը հանրապետություններին առաջարկվեր երեք-հինգ տարի առաջ, գուցեեւ ողջունելի ու ընդունելի լիներ նրանց համար: Ո՞րն է, ուրեմն, հակասությունը: Այն, որ ներկայացված նախագծում հանրապետություններից պահանջվում է հրաժարվել այն ամենից, ինչ նրանք արդեն ձեռք են բերել: Սա անմտություն է, ուտոպիա: Ոչ մի հանրապետություն չի հրաժարվի նրանից, որ ձեռք է բերել վերջին երեք տարիների ընթացքում:

Փաստ է, որ մեզ մոտ արդեն յոթ ամիս է, երբ ոչ ավելի, որ չեն գործում միութենական օրենքները: Այդ օրենքները չեն գործում նաեւ մի շարք այլ հանրապետություններում: Հայաստանի տարածքից դուրս դադարեցված է հայ զինապարտների զորակոչը խորհրդային բանակ: Նույնը նաեւ մի շարք այլ հանրապետություններում: Հայաստանում եւ այլ հանրապետություններում պետական լեզու է հայտարարված մայրենին: Մեր հանրապետությունում ապահաղթականացված են բոլոր պետական հիմնարկներն ու ձեռնարկությունները, իրավապահ մարմինները դառնում են հանրապետական ենթակայության:

Ինչպե՞ս, ուրեմն, Հայաստանը կամ այլ հանրապետություններ հրաժարվեն այս նվաճումներից: Դա կարող է տեղի ունենալ միայն բռնի ուժի գործադրությամբ եւ ամենեւին ոչ կամավոր հիմունքներով, որ ի բուն հակասում է պայմանագիր հասկացության ոգուն:

Եթե միութենական կենտրոնն անկեղծորեն ձգտում էր իրականանալի դարձնել պայմանագրի այդ նախագիծը, ապա գոնե պետք է ելակետ ընդուներ այսօրվա վիճակը, այսինքն՝ հանրապետությունների նվաճած ինքնիշխանության իրողությունը: Ընդուներ այն, ինչ այսօր արդեն ձեռք են բերել հանրապետությունները եւ միայն դրա հիման վրա նրանց առաջարկեր որեւէ պայմանագիր: Այլապես կենտրոնի ձգտումը դառնում է ուտոպիա, քանի որ ո՛չ Հայաստանը, ո՛չ էլ ինքնիշխանության հասած մյուս հանրապետությունները չեն կնքի այդ պայմանագիրը:

Ուրեմն այս դեպքում ևս Կենտրոնն ակնհայտորեն առաջնորդվում է ոչ թե իրապաշտության զգացումից, այլ կրկին՝ ուժի դիրքերից: Եթե այդպես է, ապա դա կատարվում է նորից միայնումիայն պրոպագանդիստական նպատակով: Նույնիսկ այնպիսի երկրորդական իրողություն, ինչպիսին միութենական պայմանագրի նախագծի ընդունումն է աշխատանքային հանձնաժողովներում, պրոպագանդիստական նկատառումներով արդեն ներկայացվում է որպես հանրապետությունների համամտություն Կենտրոնի ձեռնարկմանը:

Իսկ պրոպագանդիստական նկատառումները թելադրված են իշխանության համար մղվող պայքարի պահանջներից:

Երկու օր է՝ մենք լսում ենք Գորբաչովի ելույթները Բելոռուսիայում: Եւ որքան էլ դժգոհ լինենք այդ ելույթներից, մի բանում մենք պետք է նրա հետ համաձայնենք. իսկապես երկրում չափազանց լուրջ պայքար է ընթանում իշխանության համար, պայքար՝ հետադիմական եւ առաջադիմական, պահպանողական եւ բարենորոգիչ ուժերի միջեւ: Այդ պայքարի ընթացքում երկու կողմերն էլ՝ և՛ հետադիմականները, և՛ առաջադիմականները, դիմում են բոլոր թույլատրված եւ, նույնիսկ, որոշ չթույլատրված միջոցների: Պայքարը բնական է, պայքարը հասկանալի, բայց պետք է անել ամեն ինչ, եւ ես այստեղ էլ համաձայն եմ Գորբաչովի հետ, որ այն ընթանա միայնումիայն Սահմանադրության, օրինականության սահմաններում՝ բացառելով բռնության կամ բաղաքական սադրանքի որեւէ փորձ:

Այսպիսով, Կենտրոնի երկու ձեռնարկումներն էլ՝ և՛ միութենական հանրաքվեն, և՛ միութենական պայմանագրի ընդունվող նախագիծը, ես համարում եմ հետադիմական ուժերի պրոպագանդիստական ծրագրի պատճառապաշտ միջոցառումներ, ոչ ավելին:

Այժմ ավելի ընդհանուր գծերով՝ երկրի եւ մեր հանրապետության զարգացման հեռանկարի մասին: Կարծում եմ, այս հարցին օգտակար է մոտենալ ոչ միայն այսօրվա բաղաքական իրողությունների, այլեւ գուտ փիլիսոփայական դիտանկյունից՝ սկսելով հասարակագիտության ընդհանուր օրենքներից:

Բազմազգ, մանավանդ ունիտար պետական կառուցվածք ունեցող Միության գոյությունը հակասում է հասարակության զարգացման օրենքներին: Բոլոր բազմազգ կայսրությունները վերացել են: Անկախ մեր կամքից, Խորհրդային Միությունն էլ պետք է վերանա: Մենք կարող ենք արագացնել կամ դանդաղեցնել այդ պրոցեսը, բայց դա անխուսափելի է: Այդպիսի պետությունը հնարավոր է ժամանակավորապես պահպանել միայն որպես համակենտրոնացման համբար, բռնի ուժի միջոցով, ինչպես տեղի է ունեցել յոթանասունչորս տարի: Այդպիսի պետությունը գտնվում է ներքին խոր հակասությունների մեջ, նրանում առկա իրողություններն իրարամերժ են եւ վիժեցնում են նման պետության բնական գոյատեւումը:

Այդ իրարամերժ եւ անհամատեղելի իրողություններն են՝ միությունը, ժողովրդավարությունը եւ տնտեսական բարգավաճումը: Համաշխարհային փորձով մեկընդմիշտ արդեն ապացուցված է, որ տնտեսական բարգավաճում հնարավոր է միայն ազատ, եւ ոչ թե կենտրոնացված տնտեսության պայմաններում: Իր հերթին ազատ տնտեսության իրականացումը ենթադրում է ժողովրդավարության անհրաժեշտ մակարդակ, որ հակասում է ունիտար միության էությանը: Ե՛վ ժողովրդավարության ընդլայնումը, և՛ տնտեսական ազատությունը բնականորեն հանգեցնում են հանրապետությունների եւ երկրամասերի տնտեսական ինքնուրույնության, որ անխուսափելիորեն հիմք կծառայի նրանց բաղաքական անկախության:

Քանի որ ժողովրդավարությամբ պայմանավորված տնտեսական բարգավաճումը նշանակում է Խորհրդային Միության անխուսափելի մասնատում, ապա բացառված չէ, որ կայսերամետ իշխանությունները փորձեն այն պահպանել բռնի ուժի միջոցով, ինչպես անցած տասնամյակների ընթացքում: Սակայն այս դեպքում արդեն առաջանում է Միության կործանման մի նոր, ավելի աճավոր եւ արագընթաց վտանգ՝ ժողովրդական զանգվածների սոցիալական դժգոհությունը, որ ընդունակ է ջնջել-վերացնել ամեն ինչ:

Գոյություն ունի այդ դժգոհությունը կանխելու երկու եղանակ՝ բռնության կիրառումը եւ երկրի բնական պաշարների անխնա վատնումը: Բայց, ի դժբախտություն կայսերապետական ուժերի, դրանք ժամանակավոր եւ, մանավանդ, հանցավոր միջոցներ են: Կգա ժամանակ, երբ միութենական համակենտրոնացման համբարի գոյությունը կդիտվի որպես հանցագործություն մարդկության հանդեպ: Նույնպիսի հանցագործություն կդիտվի նաեւ երկրի բնական հարստությունների սպառու-

մը: Ինչպես գյուղացուն հող է տրվում նրանից առավելագույն արդյունք ստանալու եւ իր ընտանիքի ու ազգի բարգավաճմանը նպաստելու համար, այնպես էլ հողագնդի մեկ վեցերորդ մասը նախախնամությամբ տրամադրված է խորհրդային ժողովուրդներին՝ երկրի եւ աշխարհի բարօրությանը նպաստելու պայմանով: Մարդկությունը կարող է վաղը պատրաստուհակ ներկայացնել Խորհրդային Միությանը, որովհետեւ նրա սեփականությունը, վերջին հաշվով, նաեւ ոչ աշխարհի սեփականությունն է:

Ուստի Խորհրդային Միությունը եւ՛ ներքին, եւ՛ արտաքին հանգամանքների բերումով պարտավոր է ենթարկվել հասարակության զարգացման համաշխարհային օրենքներին, այսինքն՝ անկախ այն բանից, թե ինչպես կզարգանան իրադարձությունները, ինչպիսի ժամանակավոր ճաճանչներ տեղի կունենան, միեւնույն է՝ Միությունը վաղ թե ուշ պետք է հայհոյվի: Ցանկալի եւ հնարավոր է, որ հայհոյումը կատարվի բնական, անաչյուն, հաղթակիրթ ձեւով, եւ Միությունը վերածվի ժողովուրդների մի համերաշխ համագործակցության, ինչպիսին է, օրինակ, եւրոպական երկրների համագործակցությունը: Ավելի լավ օրինակ մարդկությունը դեռեւս չի ստեղծել: Հնարավոր է, որ ապագայում այդպիսին ստեղծվի:

Միության վերածումը նման համագործակցության նույնպես բխում է հասարակության զարգացման օրենքներից: Թեեւ ասվեց, որ Խորհրդային Միությունն անխուսափելիորեն պետք է հայհոյվի, բայց, հաշի որ այն պատմական իրողություն է, ձեւավորվել է հարյուրավոր տարիների ընթացքում, ապա փլուզվելով հանդերձ՝ այդ Միությունը չի կարող անհետ կորչել: Փաստ՝ թեկուզ անգլիական եւ ֆրանսիական գաղութային համակարգերը, որոնք թեեւ հաղթականապես փլուզված են, բայց իրականում գոյություն ունեն որպես անկախ պետությունների հաղթական, տնտեսական, հոգեւոր-մշակութային սերտ համագործակցություններ:

Խորհրդային ժողովուրդների դարավոր համակեցությունը նույնպես ստեղծել է հաղթական, տնտեսական եւ, մանավանդ, հոգեւոր հարաբերություններ ու կապեր: Երեկ պատգամավոր Իշխանյանն իր ելույթում արդարացի զայրույթ էր արտահայտում Հայաստանում ռուս մշակութային գործիչների, թեկուզեւ ականավոր եւ արժանի գործիչների

արձանների առատության առիթով, շնշտելով, մանավանդ, եւրոպական, համաշխարհային մշակույթի ներկայացուցիչների արձանների լիակատար բացակայության հանգամանքը: Սա, անշուշտ, հիմնականում արդյունք է հաղթական հարկադրանքի ու ազգային ստրկամտության, բայց հոգեւոր, մշակութային առումով նույնպես բնական ու հասկանալի է, հաշի որ նոր եւ նորագույն դարաշրջաններում հայ մշակույթն ավելի շատ կապված է եղել ռուսական, քան եւրոպական մշակույթի հետ: Նույնն է եղել նաեւ խորհրդային մյուս ժողովուրդների հանկատագիրը: Ավելին, բացառությամբ մի քանի ժողովուրդների (հայեր, վրացիներ, բալթեր եւ այլն), մյուսներն արդի հաղթակրթությանն են շփվել միայն ու միայն ռուսական մշակույթի խողովակով:

Ինչպե՞ս կարող է, ուրեմն, հոգեւոր այս ժառանգությունն անհետ կորչել: Ես վստահ եմ, որ, անկախ հաղթական ցնցումներից ու վերիվայրումներից, խորհրդային ժողովուրդներն ապագայում, գուցե ոչ նույն կազմով ու ընդգրկմամբ, կգտնեն համագործակցության մի ներդաշնակ ձեւ: Բայց հասկանալի է, որ դրան հասնելու համար դեռ երկար հանապարհ պետք է անցնել: Այնուամենայնիվ, որքան էլ հետու, այս հեռանկարը պետք է դառնա մեր այսօրվա հաղթական ծրագրերի հիմքը: Այսպիսով, Խորհրդային Միության ապագան մենք պատկերացնում ենք հետեւյալ կերպ.

- Միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող անկախ պետությունների համագործակցություն, որտեղ բացառվում է միութենական կառավարության, ընդհանուր Սահմանադրության եւ միասնական օրենսդրության գոյությունը:
- Համագործակցության գերագույն համակարգիչ իշխանությունն իրականացնում է անդամ-պետությունների նախագահների խորհուրդը (ներկայիս Ֆեդերացիայի խորհուրդը):
- Տնտեսական համագործակցությունն իրականացնում է անդամ-պետությունների վարչապետների խորհուրդը՝ համապատասխան աշխատանքային ապարատով:
- Համագործակցության ընդհանուր հաղթականության մշակման օրենսդրական մարմին է հանդիսանում խորհրդարանը՝ կազմված անդամ-պետությունների հավասար ներկայացուցչության սկզբունքով (ներկայիս Ազգությունների խորհուրդը):

Ահա սա է մոտավորապես այն իդեալը, որին մենք պետք է ձգտենք, դրա համար այսօր եւեք կատարելով բոլոր ճնարավոր բայլերը: Հասկանալի է, որ այդ ճնարավոր բայլերի շարքում կարող են նաեւ անհրաժեշտաբար կնվել որոշ ժամանակավոր համաձայնագրեր, ինչպես հորիզոնական՝ միութենական հանրապետությունների միջեւ, այնպես էլ ուղղահայաց:

Սրանից ելնելով, մենք պետք է այսօր հստակ ճշտենք մեր բայլերը: Ինձ թվում է, իմ ասածից պարզ ենթադրվում է, որ Հայաստանը չի մասնակցի միութենական հանրավենին եւ չի ստորագրի միութենական պայմանագիրը: Մյուս կողմից՝ հանրապետության կարգավիճակը որոշելու համար անհրաժեշտ է անցկացնել հանրապետական հանրաքվե: Եւ կրկին, ելնելով այն սկզբունքից, որ պետք է պահպանել օրինականությունը, մենք չպետք է խախտենք ո՛չ միջազգային իրավունքի դրույթները, ո՛չ էլ միութենական եւ հանրապետական օրենսդրությունը, որպեսզի հանրաքվեի արդյունքները իրավական ուժ ունենան եւ՛ Միության, եւ՛ համաշխարհային հանրության համար:

Ըստ այդմ, մեր խորհրդարանն այսօր պետք է կայացնի մի քանի կետից բաղկացած հետեւյալ որոշումը.

1. Մերժել միութենական հանրաքվեն,
2. Անցկացնել հանրապետական հանրաքվե,
3. Հանրաքվեի ժամկետն ու հարցի ձեւակերպումը որոշել միութենական օրենքին համապատասխան: Հարցի ձեւակերպումն, իհարկե, կրճատվի, բայց չպետք է խուսափել ուղղակի հարցից, որ միակն է. «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը դուրս գա Խորհրդային Միության կազմից»:

Իսկ ժամկետը, ինչպես ասվեց, նույնպես պետք է համապատասխանի Միության օրենքին, ըստ որի՝ հանրաքվեն կարելի է անցկացնել նրա մասին որոշում կայացնելուց վեց ամիս հետո: Սա անհրաժեշտ է ոչ միայն ձեւական կամ իրավական առումով, այլ նաեւ՝ որպեսզի մեր ժողովուրդը եւ հասարակական-քաղաքական կազմակերպությունները հնարավորություն ունենան հիմնավոր կերպով ծավալելու իրենց բացատրությունը, որ կրացառի պատահականությունների ազդեցությունը: Ես վստահ եմ, որ եթե մենք շտապենք, ապա հանրաքվեի արդյունքների վրա մեծապես կարող են ազդել պատահականությունները եւ մեր անպատրաստությունը, անպատրաստություն բոլոր կողմերից՝ եւ՛ պետության, եւ՛ հասարակական-քաղաքական կազմակերպությունների, եւ՛ ժողովրդի:

Նշելով այս հեռանկարները եւ հստակեցնելով մեր ներկա բայլերը, այնուամենայնիվ, մենք չպետք է ընկնենք նահանջի գիրկը եւ կորցնենք իրապաշտության զգացումը: Պետք է սառը գիտակցել, որ ամեն ինչ չէ, որ կախված է մեզանից, շատ բաներ կախված են արտաքին հանգամանքներից, եւ մենք պետք է պատրաստ լինենք ժամանակին արձագանքել դրանց:

Չպետք է անգամ բացառել, որ Հայաստանը նաեւ ստիպված լինի կնքել միութենական պայմանագիրը, որովհետեւ ստրկական լինի այն: Աշխարհում շատ ժողովուրդներ ստիպված են եղել կնքել ստրկական պայմանագրեր: Մեր պատմությունից հիշենք թեկուզ 1918–1922 թվականները: Ընդամենը հինգ տարվա ընթացքում Հայաստանն իր հայրենասեր իշխանությունների ձեռքով չորս ստրկական պայմանագիր կնքեց՝ Բաթումի, Ալեքսանդրապոլի, Կարսի եւ միութենական պայմանագրերը:

Միութենական պայմանագիրն ստորագրելու հարկադրանքի դեպքում արդեն, պարզ է, որ գործի պետք է դրվեն բոլոր հաղթական ազդակներն ու դիվանագիտական հնարությունները՝ առավելագույն նպաստավոր պայմաններ ձեռք բերելու նպատակով:

Կարծում եմ, հասկանալի է, որ միութենական պայմանագիրը կարող է ստորագրվել միայն ավելի վատթար վիճակից խուսափելու նպատակով, կամ էլ՝ Բաբրակ Քամալի տարբերակով: Այնուամենայնիվ, կասկած չպետք է մնա, որ, հակառակ ժամանակավոր բռնություններին ու հարկադրական նահանջներին, միեւնույն է՝ Հայաստանը եւ խորհրդային մյուս հանրապետությունները վաղ թե ուշ պետք է հասնեն լիակատար անկախության:

«Հայաստանի Հանրապետություն», 6 մարտի, 1991 թ.:
ՀՀԱՆՆ, 28/28.02.91: Բնագիր: Ինքնագիր, բանավոր ելույթի հնդինակային խմբագրություն:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԲԱՑՄԱՆԸ

(1 ապրիլի, 1991 թ.)

Նստաշրջանի աշխատանքն սկսելուց առաջ, ինձ թվում է, անհրաժեշտ է գոնե թռուցիկ հետադարձ հայացք նետել անցած ժամանակաշրջանի վրա, որ բխում է մեր հետագա գործունեության մեջ նախկին սխալները չկրկնելու հրամայականից:

Որևէ իշխանության գործունեության գնահատման համար, կարծում եմ, գոյություն ունի երեք առարկայական չափանիշ:

Առաջին չափանիշը տվյալ իշխանության որդեգրած հաղթականության, այսինքն՝ նրա կողմից ընդունված ծրագրի իրականացման հետեւողականությունն է: Հանրապետության ներկա իշխանությունների գործունեության հիմնական ծրագիրը Հայաստանի անկախության մասին Հռչակագիրն է: Բացելով Հռչակագիրը՝ դժվար չէ համոզվել, որ անցած յոթ ամսվա ընթացքում հանրապետության իշխանությունները հետեւողականորեն կենսագործել են նրա դրույթները:

Այսպես, ամբողջովին, իսկ որոշ դեպքերում դեռեւս մասամբ, իրականացած կարելի է համարել Հռչակագրի հետեւյալ կետերը.

«Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն... Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանը եւ հիմնը» (ինչպես հայտնի է, հանրապետության զինանշանի եւ հիմնի՝ օրինագրի համար հայտարարված է մրցույթ, որի արդյունքները կամփոփվեն շուտով):

«Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները» (բացառություն է կազմում միայն անտեսական դրոտը, որտեղ առայժմ, անհրաժեշտաբար, հիմնականում պահպանվում է միութենական օրենքների գերակայությունը):

«Հայաստանի Հանրապետությունն իրեն է որոշում իր հաղաքացիների զինվորական ծառայության կարգը» (առված է հակայական գործ՝ հայ զորակոչիկների ծառայությունը հանրապետության տարածքում կազմակերպելու ուղղությամբ):

«Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձեւության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սկզբունքները եւ կարգը» (այդ առթիվ ընդունվել են կարեւոր օրենքներ, որոնց հիման վրա արդեն սկսվել եւ լայն թափ է ստացել սեփականաշնորհման գործը, մասնավորապես գյուղատնտեսության բնագավառում):

«Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն... բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների եւ զինված ուժերի ապաքաղաքականացում» (նշված իրական ազատություններն ու իրավունքներն արդեն ամրապնդված են նաեւ համապատասխան օրենքներով. օրենսդրական կարգավորման կարիք ունի միայն մամուլի ազատության ապահովումը, որը մտնում է մեր երկրորդ նստաշրջանի խնդիրների մեջ):

Թվարկելով այս ամենը, ես պարզապես ուզում եմ հիշեցնել, որ, չնայած հրապարակախոսության մեջ դրսեւորվող որոշ ժխտողական տրամադրություններին, համենայն դեպս ակնհայտ են այն հաջողությունները, որոնց մեր իշխանություններն իրենց հետեւողականության շնորհիվ հասել են Հոչակագիրն իրականացնելու ուղղությամբ: Իսկ հետեւողականությունը, ինչպես նշվեց, ցանկացած իշխանության գործունեության գնահատման կարեւորագույն չափանիշներից մեկն է:

Իշխանությունների գործունեության գնահատման երկրորդ չափանիշն, իմ կարծիքով, առկա հնարավորությունների օգտագործման կարողությունն է: Պարզ է, որ որեւէ իշխանությունից չի կարելի սպասել ամեն ինչ: Պետք է ակնկալել եւ պահանջել այն, ինչ հնարավոր է իրականացնել տվյալ պայմաններում: Այդ չափանիշով մոտենալով, ինչպես

հայտնի է, մեր ժողովուրդն իրավացիորեն դժգոհ է եղել հանրապետության նախկին իշխանություններից: Համարյա ողջ 70 տարիների ընթացքում այդ իշխանությունները ոչ միայն չեն օգտագործել եղած հնարավորությունները, այլեւ, չնչին բացառությամբ, չափազանց երկչոտ են գործել անգամ թույլատրվածի սահմաններում՝ ի տարբերություն մի շարք այլ հանրապետությունների ղեկավարների, որոնք կարողացել են միեւնույն պայմաններում, Կենտրոնի միեւնույն ճնշող մամլիչի տակ այս կամ այն կերպ առաջնորդվել սեփական ժողովրդի շահերով:

Չի կարելի, իհարկե, բացառնակ ժխտողական վերաբերմունք ցուցաբերել անցյալի նկատմամբ՝ անտեսելով խորհրդային իշխանության տարիներին իրականացած նաեւ դրական տեղաշարժերը՝ մշակույթի, տնտեսության, կրթության, շինարարության եւ այլ բնագավառներում: Դրանով հանդերձ, ակնհայտ է, որ տրված հնարավորությունները լիովին չեն օգտագործվել: Եղել են, իհարկե, բացառություններ, եղել են հայրենասեր, խիզախ գործիչներ, ինչպես՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, Ազատ Խանջյանը եւ Հակոբ Զարոբյանը, բայց, դժբախտաբար, բոլորն էլ զոհ են գնացել հենց այն բանին, որ համարձակվել, խիզախել են անցնել թույլատրվածի սահմանը:

Համենայն դեպս, այս բացառությունները չեն կարող արդարացնել Հայաստանի նախկին իշխանություններին, քանի որ կային ակնհայտ բաներ, որ կարելի էր առանց խիզախության իրականացնել, բայց, դժբախտաբար, չեն արվել: Կարելի էր, օրինակ, չկեղծել սեփական ժողովրդին, բայց դա շարունակ տեղի է ունեցել: Կարելի էր բարձրորակ շինարարություն իրականացնել, որպեսզի երկրաշարժը այդպիսի աղետալի հետեւանքներ չունենար: Կարելի էր ավելի խոշոր տնամերձ հողամասեր հատկացնել մեր գյուղացիներին, ինչպես արվել է բոլոր մյուս հանրապետություններում: Կարելի էր այդման ռուսական դպրոցներ չբացել եւ հայկական դպրոցը ստորադաս վիճակի մեջ չդնել եւ այլն:

Նկատի ունենալով այս դառը ճշմարտությունները՝ Հայաստանի ներկա իշխանությունները ըստ կարելվույն փորձում են (ես չեմ կարող հավաստիացնել, թե դա նրանց լիովին հաջողվում է) օգտագործել առկա բոլոր հնարավորությունները: Սա է մեր մոտեցումը եւ մեր գործունեության հիմնական սկզբունքը: Որովհետեւ չօգտագործել տրված հնարավորությունները՝ կնշանակի, լավագույն դեպքում անհարակու-

թյուն, իսկ վատագույն դեպքում դավաճանություն: Թե որքանով է իշխանություններին հաջողվում հավատարիմ մնալ այդ սկզբունքին՝ դա արդեն մնում է ժողովրդի եւ ժամանակի դատին:

Եւ վերջապես, իշխանության գործունեության գնահատման երրորդ չափանիշը պետության կողմից օրենքի կիրառման եւ օրինականության ապահովման աստիճանն է: Իրավական պետության ստեղծումը մեր կարեւորագույն նպատակներից է, բայց հասկանալի է, որ կատարյալ իրավական պետության ստեղծումը կարող է տասնամյակներ պահանջել՝ մանավանդ նկատի ունենալով մեր պայմաններում այդպիսի պետության ավանդույթների լիակատար բացակայությունը, իրավապահ մարմինների համարյա համատարած նեխվածությունը, նոր պահանջների բավարարող կադրերի սղությունը:

Օրինականության ապահովումը, իրավապահ մարմինների արմատական վերակառուցումը, թերևս, ներկա իշխանությունների առջեւ ծառացած դժվարագույն խնդիրն է: Բայց այստեղ էլ, ինձ թվում է, նշմարելի են որոշ դրական տեղաշարժեր: Կարծում եմ, անժխտելի է, որ Հայաստանի ներկա իշխանություններին հաջողվել է կարճ ժամանակամիջոցում էապես կայունացնել հանրապետության սոցիալ-բաղաքական իրավիճակը, ապահովել հասարակական կարգուկանոնը եւ սահմանների անվտանգությունը, վերացնել անպատժելիության մթնոլորտը:

Հասկանալի է, սակայն, որ նշվածն ամենեւին էլ գոհացուցիչ չէ, եւ այս առումով դեռեւս չափազանց շատ անելիք կա, որոնցից, ինձ թվում է, առաջնային են՝ կադրային փոփոխությունները, բռեական ու բաղաբացիական օրենսդրության արմատական վերամշակումը եւ, վերջապես, էական կառուցվածքային փոփոխությունների իրականացումը թե՛ միլիցիայի, թե՛ դատախազության, թե՛ դատական համակարգերում:

Ամփոփելով այս հակիրճ ակնարկը, կարող ենք նկատել, որ հանրապետության իշխանությունների գործունեության մեջ, անհրաժեշտությունից բեղադրված, առայժմ առաջնային տեղ են գրաղեցրել բաղաքական խնդիրները: Ի դեպ, նույն պատկերն է տիրում նաեւ այլ հանրապետություններում եւ ընդհանրապես խորհրդային Միությունում, բանի որ խորհրդային հասարակության զարգացման անհրաժեշտ պայմանը նախ եւ առաջ բաղաքական վերափոխումներն են: Մինչեւ բաղաքական

կարեւոր խնդիրները չլուծվեն, հասարակության եւ տնտեսության զարգացման որեւէ ծրագիր հնարավոր չէ իրականացնել:

Առաջիկայում ես, ամենայն ակնհայտությամբ, բաղաքական խնդիրները մեր հանրապետության կյանքում կարեւորագույն տեղ կզբաղեցնեն՝ նկատի առած Կենտրոնի եւ մյուս հանրապետությունների հետ ունեցած դեռեւս անհստակ հարաբերությունները, առաջիկա հանրապետական հանրաքվեն, գործադիր իշխանությունների գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը եւ այլն:

Սակայն ոչ մի բաղաքական վերափոխում որքան էլ առաջադիմական, չի կարող էապես ազդել հասարակության զարգացման վրա, եթե այն չամրապնդվի լուրջ տնտեսական միջոցառումներով: Այս նկատառումով առաջիկայում, իհարկե կարեւորությամբ հանդերձ, բաղաքական խնդիրներն անխուսափելիորեն առաջնայնությունը պետք է զիջեն տնտեսական խնդիրներին: Եւ հանրապետության Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանն էլ, ըստ երեւույթին, իր գործունեությունը պետք է վերակառուցի տվյալ նկատառումով: Մոտ օրերս մենք կլսենք հանրապետության վարչապետի հաղորդումը տնտեսական զարգացման հարցերի վերաբերյալ, ուստի ես չեմ ուզում առանձնապես ծանրանալ դրանց վրա:

Հարկ եմ համարում միայն մի բանի խոսքով անդրադառնալ այսօրվա կարեւորագույն գործնական խնդրին՝ հողաբաժանման հարցին: Հողաբաժանման գործն արդեն սկսվել է եւ, որքան էլ թերի՝ սպասածից ավելի լավ է ընթանում: Ինչպես գիտեք, կային տարակուսանքներ, թերահավատության դրսեւորումներ եւ, նույնիսկ, սոցիալական բախումների սպասումներ, որոնք, սակայն, իրականում փարատվեցին: Կար (եւ դժբախտաբար մինչեւ հիմա էլ կա) լուրջ դիմադրություն՝ հատկապես իշխանության ստորին օղակներում, գյուղական տնտեսությունների մակարդակում: Դա բացատրվում է նրանով, որ, հողը հատկացնելով գյուղացուն, այդ տնտեսությունների դեկավարները փաստորեն զրկվում են իշխանությունից, դրա համար էլ տեղի են ունենում առկա ձգձգումներն ու երբեմն նաեւ՝ բացահայտ խափանումները:

Այնուամենայնիվ, ուրախությամբ պետք է նշել, որ չնայած այս բացասական երեւույթներին, ժողովուրդը հիմնականում մեծ խանդավառությամբ է ընդունել այս կենսական միջոցառումը, եւ այն շրջաններում, որտեղ հողաբաժանման գործընթացն սկսված է, արդեն լուրջ տե-

դաշարժեր են կատարվել: Դա վերաբերում է առաջին ներթին Արարատյան դաշտավայրին, որտեղ հողաբաժանման աշխատանքները, եղանակային պայմաններից թելադրված, ավելի շուտ են սկսվել: Հուսով եմ, որ Արարատյան դաշտի օրինակը կարող է ընդօրինակելի դառնալ նաեւ Հայաստանի նախալեռնային եւ լեռնային գոտիների համար:

Կարծում եմ, սակայն, չպետք է բավարարվել ձեռ բերածով: Մեր պատգամավորները, կառավարության ներկայացուցիչների հետ միասին, ճստաշրջանների մեկամսյա ընդմիջման ընթացքում բավականին աշխատանք են կատարել հողաբաժանման գործում: Ես ուզում եմ այդ առումով ընդգծել հատկապես պատգամավորներ Գրիգոր Ավագյանի, Խաչիկ Սաֆարյանի, Նորայր Մանասերյանի եւ Մարտունիկ Դանիելյանի եռանդուն գործունեությունը: Հնդրում եմ, որ երկրորդ նստաշրջանի ընթացքում էլ չդադարեցվի այս օգնությունը եւ, որքան հնարավոր է, շատ պատգամավորներ ընդգրկվեն հողաբաժանման աշխատանքների կազմակերպման գործում:

«Հայաստանի Հանրապետություն», 2 ապրիլի, 1991 թ.:
ՀՀԱՆԱ, 28/02.04.91: Բնագիր: Ինքնագիր:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԱՐԳՈՒՄԵՆՏԻ Ի ՓԱԿՏԻ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻՆ
(ապրիլ, 1991 թ.)

– Պարոն Տեր-Պետրոսյան, Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ) ակտիվորեն ձգտում է համահայկական հանրաքվեի շուտափույթ անցկացմանը, որը պետք է պատասխան տա Հայաստանի անկախության հարցին: Դուք, ինչքան ինձ հայտնի է, այլ տեսակետ ունեք: Որո՞նք են տարբերությունները:

– Ի տարբերություն ԱԻՄ-ի լիդերների, մենք ձգտում ենք հաշվի առնել իրերի իրական վիճակը: Մենք նպատակ չենք դրել գնալ միութենական իշխանությունների հետ ուղղակի առճակատման: Մենք անկախության հասնելու հանգիստ ու բնական հանապարհների կողմնակից ենք: Այդ գործընթացը բարդ է ու երկարատեւ, եւ միայն հոչակագրերով ոչնչի չես հասնի: Ասեմ ավելին. մենք դեմ չենք Միության կազմից հանրապետությունների դուրս գալու խորհրդային օրենքներին, 5 տարին այդ լուրջ քայլին պատրաստվելու ընդունելի ժամանակահատված է: Նրիվ անկախության հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել իրական նախադրյալներ:

– Ի՞նչ նախադրյալներ են դրանք:

– Այդ ժամանակամիջոցում մենք պետք է կողմնորոշվենք Միության եւ առանձին հանրապետությունների հետ մեր հարաբերություններում, ամուր կապեր հաստատենք արտաքին աշխարհի հետ, ստեղծենք տնտեսության մեր, թող որ առայժմ ոչ մեծ, իմնուրույն հատվածը՝ տնտեսության, որի հզորությունների 90 տոկոսն այսօր իմնագրացված է

ԽՍՀՄ կոոնոմիկայում: Մենք պետք է ընդլայնենք մեր բաժինը գոնե մինչեւ 25–30 տոկոս:

– Ինչի՞ հաշվին եք ենթադրում հասնել դրան:

– Ամենից առաջ ռամատական ռեֆորմների անցկացման, հողի եւ մաճ ու միջին ձեռնարկությունների մասնավորեցման շնորհիվ: Նմանապես՝ մենք ուզում ենք մասնավորեցնել նաեւ համարյա ողջ սպասարկման ոլորտը: Ընդունված են համապատասխան օրենքներ, որոնք ակտիվորեն ներդրվում են կյանքում:

– Հողի մասին օրենքը կարեւորագույններից է: Նրա կիրառումը հանդիպո՞ւմ է որեւէ դիմադրության:

– Դիմադրություն, իհարկե, կա, բայց ոչ թե կոմկուսի կողմից, ինչպես, ասենք, Ռուսաստանում, այլ՝ տեղական «կալվածային իշխանիկների», որոնք իշխանությունն ու տարուկ տեղը կորցնելու աճից գյուղացուն ներշնչում են, թե վաղը կարող են նորից հողը ետ խլել, թե՝ տեխնիկայով, պահարտանյութերով եւ այլնով չեն ապահովի:

– Ձեր կարծիքով, միութենական հանրաքվեի արդյունքներն ինչպե՞ս կազդեն Միության եւ մասնավորապես՝ Հայաստանի ճակատագրի վրա:

– Ամենասկզբից էլ այդ միջոցառումը ես դիտել եմ իբրեւ Կենտրոնի՝ իր իշխանությունն ամրապնդելուն միտված պրոպագանդիստական մաճեր: Իրական կյանքում այն բացարձակապես ոչինչ չի փոխի: Այսօր ոչ մի հանրապետություն չի հրաժարվի իր նվաճումներից, ինչը բոլորովին հաշվի չեն առնում կենտրոնական իշխանությունները:

– Իսկ ի՞նչ կասեք միութենական դաշնագրի մասին:

– Ես ներկա եմ լինում Ֆեդերացիայի խորհրդի բոլոր նիստերին եւ գիտեմ, թե ինչպես է այն նախապատրաստվել: Ձեմ խոսի դրա բոլոր թերությունների մասին: Ամեմ գլխավորը՝ առաջարկվող դաշնագրի ելակետը այսօրվա օրը չէ:

– Բայց հանրապետությունների հետ էլ Հայաստանը դեռեւս չի կնքել ոչ մի պայմանագիր: Ինչո՞ւ:

– Դրա պատճառը ներհին հիմնահարցերն են, որոնց լուծումից այսօր չես փախչի. աղետի գոտի, 300 հազար փախստականներ, Ղարաբաղ...

Այսուհանդերձ, խորհրդարանական խմբերի մակարդակով պայմանագրերի կնքման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պատրաստված են, մասնավորապես՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Ղազախստանի հետ:

– Մի շարք հանրապետություններ արդեն պայմանագրեր են կնքել, սակայն արդյունքները, ասենք՝ մթերային կամ արդյունաբերական մատակարարումների գծով, չեն երեւում: Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞ւ:

– Կարծում եմ, հանրապետությունները դեռեւս չեն գիտակցում, որ իրենց գործողությունների համար պետք է մշակեն ընդհանուր պլատֆորմ, նրանք դեռ հանրապետական էգոիզմից չեն «բուժվել»: Միայն երկկողմանի պայմանագրերով ոչինչ լուծել չի հաջողվի:

– Ինչքա՞ն կշարունակվի այդ «հիվանդությունը»:

– Կարծում եմ՝ ոչ երկար: Կենտրոնը կստիպի շտապել:

– Մասնավոր սեփականությունը ձեր ներքին քաղաքականության հիմքն է: Հայաստանի ապագան կապիտալիստակա՞ն է:

– Չնայած մեր բոնած կուրսին, դեռ երկար ժամանակ պետական սեփականությունը կգերակայի: Այնպես որ, եթե կապիտալիզմ է, ապա՝ պետական կապիտալիզմ:

– Ինչպե՞ս են ձեւավորվում ձեր հարաբերությունները մերձավոր հարեւանների հետ: Ես վերջերս եղել եմ Վրաստանում, ուր լսեցի մտքեր այն մասին, որ Հայաստանն ինչ-որ տարածքային պահանջներ ունի այդ հանրապետությունից:

– Նման խոսակցություններ, եթե նրանք կան էլ, ոչ մի հիմք չունեն: Վրաստանի հետ հարաբերությունները մենք դիտում ենք իբրեւ ավանդական-բարեկամական, մտադիր ենք հետագայում էլ պահպանել ավանդույթները: Մեզ մտահոգում է միայն, որ այնտեղ ապրող հայերն ունենան բնիկներին հավասար իրավունքներ ու ննարավորություններ:

– Ո՞ր սկզբունքներն են գերակշռում Ձեր քաղաքականության մեջ՝ ազգայի՞ն, թե՞ համամարդկային:

– Հայոց համազգային շարժումն (ՀՀՇ) իր էությամբ ազգային-ժողովրդավարական է: Եւ այդ սկզբունքը մեզ համար անբաժանելի է, քանի որ ազգայինն առանց ժողովրդավարության տանում է ազգայնամոլու-

թյան, իսկ մերկ ժողովրդավարությունը՝ աշխարհամաղաքացիության (կոսմոպոլիտիզմի): Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը մեզ համար ընդունելի չեն: Մեր նպատակը իրավական պետության եւ ժողովրդավարական հասարակության ստեղծումն է:

– Միխայիլ Գորբաչովի եւ Բորիս Ելցինի անուններն այսօր մյուսներից հաճախ են հնչում: Ինչպե՞ս են ձեւավորվում Ձեր հարաբերություններն այդ քաղաքական գործիչների հետ:

– Պրեզիդենտին բավականին հաճախ եմ հանդիպում Ֆեդերացիայի խորհրդում, հարաբերությունները զուտ գործնական են: Ինչ-որ համակրանք կամ հակակրանք մեր միջեւ չկա, ես նրան ընդունում եմ իբրեւ բաղաքական գործիչ, պատմյոր, որի հետ գործ ունեմ: Ելցինի նկատմամբ մարդկային համակրանք եմ տածում եւ հարգում եմ նրան իբրեւ բաղաքական գործիչ: Մենք շատ հազվադեպ ենք շփվում, սակայն երբ հարկ է լինում լուծել ընդհանուր հարցեր, նա արագ ու վճռական, առանց բյուրոկրատական բաշխուկների է գործում: Դա ինձ դուր է գալիս:

– Կա՞ տարբերություն «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի միջեւ:

– Իհարկե: Ես բաղաքացի չէի, երբ «Ղարաբաղյան» շարժում մտա: Ես գիտնական էի, բանասիրության դոկտոր, սիրում էի իմ գործը, ինչ հաջողություններ չունեի՝ իմ աշխատությունները տպագրվում էին ե՛ւ Միությունում, ե՛ւ արտասահմանում:

– ... Եւ այդ բոլորը փոխարինեցիք միտինգներով, քաղաքական պայքարով, կիսամյա բանտարկությամբ եւ հանրապետության ղեկավարի պոստում մշտական «գլխացավանքով»...

– Գալիս է մի պահ, երբ պիտի ընտրություն կատարես: Ինձ այդ անել պատադրեց հայ մտավորականի պարտքը: Եւ ոչ միայն ինձ: Իմ բոլոր գինակիցներն անցել են «Ղարաբաղի» բաղաքական դպրոցը, մենք սովորել ենք միմյանցից եւ այդ տարիներին, ինձ թվում է, ձեռք ենք բերել համակարգված բաղաքական մտածողություն: Ես շնորհապարտ եմ «Ղարաբաղ» կոմիտեին եւ Հայոց համազգային շարժմանն այն ամենի համար, ինչ ինձ տվել են նրանք: Իսկ ընդհանրապես ես առաջին անգամ 10 օր «նստել» եմ «բունն» բաղաքական գործունեության համար

դեռեւս ուսանողական տարիներին՝ 60-ական թվականներին: Այն ժամանակ այնքան խիստ չէին...

– Դուք ունե՞ք ընտանիք, երեխաներ...

– Այո, կին եւ 16-ամյա որդի, որն ավարտում է դպրոցը:

– Ունե՞ք ազատ ժամանակ, հրապույրանքներ:

– Ոչ: Մենք աշխատում ենք առավոտյան 9-ից մինչեւ գիշերվա ժամը 1-ը, երբեմն նաեւ գիշերը, առանց հանգստյան օրերի ու արձակուրդների, այդ պատճառով այլ բանի ժամանակ չի մնում:

– Ունե՞ք ինչ-որ արտոնություններ:

– Չրահապատ «Մերսեդես» եւ կառավարական ամառանոց, ուր ապրում է իմ ընտանիքը եւ 900 ռուբլի աշխատավարձ՝ ահա ամբողջ արտոնությունը: Մեքենան եւ ամառանոցը անվտանգության նկատառումներով են տրամադրված, աշխատավարձս ԳԽ նախկին նախագահի դրույմն է:

– Շատ մարդիկ, որոնց հետ ես զրուցեցի փողոցներում, ասում են, որ ներկա ղեկավարներին կարելի է մեղադրել ամեն ինչում՝ բացառությամբ կաշառակերության: Դրանից ես եզրակացրի, որ դա Հայաստանի համար բոլորովին էլ անտեսելու հարց չէ...

– Այդ հիմնախնդիրն իսկապես կա: Քաղաքական իշխանությունն արդեն ուրիշ է, բայց կառուցվածքները դեռ մնում են նախկինը: Այդ համակարգի դեմ բոնությունների մեթոդով պայքարելն անօգուտ է՝ դրա օրինակները շատ են: Միաժամանակ ժողովուրդը պահանջում է տարական սոցիալական արդարություն: Այդ չարիքից ազատվել հնարավոր է միայն տնտեսական ռեֆորմների միջոցով:

– Արդեն այժմ Հայաստանում զգացվում է մթերքների անբավարարություն: Ի՞նչ է սպասվում մարդկանց:

– Առայժմ ամեն ինչ պիտի անենք, որ հանրապետությունը սովի չմատնվի՝ մթերքներ կգնենք հանրապետություններից եւ արտասահմանից: Դե, իսկ վաղը՝ մեծ հույսեր ենք կապում սեփականաշնորհման հետ: Հայաստանի հողը հարուստ է, ժողովուրդն՝ աշխատասեր:

– Եւ, այսուհանդերձ, Հայաստանի ամենացավոտ հիմնահարցը Ղարաբաղն է: Որո՞նք են դրա լուծման հեռանկարները:

– Նման հիմնահարցերը լուծվում են կա՛մ պատերազմով, կա՛մ երկխոսությամբ: Պատերազմ ոչ ոք չի ուզում՝ ո՛չ Հայաստանը, ո՛չ Ադրբեջանը: Նշանակում է՝ երկխոսություն: Մենք դրան գնացինք: Ես մի անգամ չէ, որ հանդիպել եմ Մութալիբովի հետ, հանդիպումներ են ունեցել նաև մեր պատգամավորները: Դրանից դեռևս շատ քիչ օգուտ է եղել: Ժամանակը ձգվում է, և դա, ըստ երևույթին, ձեռնտու է ադրբեջանական կողմին:

– Ի՞նչ ելքեր եք տեսնում Դուք:

– Ամենից առաջ Կենտրոնը պետք է վերականգնի տեղական խորհրդային իշխանությունը, որը հենց ինքն է լուծարել: Միայն մարզխորհրդի իշխանության վերականգնումից հետո է հնարավոր Ադրբեջանի հետ արդյունավետ երկխոսությունը:

«Հայաստանի Հանրապետություն», 6 ապրիլի, 1991 թ.:
*Թարգմանություն ռուսերենից: «Արգումենտի ի Ֆակտի» ("Аргументы и Факты"), հ. 14, 1991 թ.: Հարցազրույցը՝ **Վ. Սամիչևի**: Հրատարակված՝ «Լևոն Տեր-Պետրոսյան. «Քաղաքական գործիչ չեն ծնվում» վերնագրով:*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՄԵՐԻԿՅԱՆ «ՔՐԻՍՉԸՆ ՍԱՅԸՆՍ ՄՈՆԻԹԸՐ» ԹԵՐԹԻՆ

(23 ապրիլի, 1991 թ.)

Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտնի է որպես խորհրդային անցուդարձերի սուր դիտորդ-մեկնաբան: Ստորև՝ նրա տեսակետները խորհրդային ընթացիկ քաղաքականության մասին, որ նա արտահայտել է Երևանում, ապրիլի 23-ին կատարված մի հարցազրույցի ժամանակ:

– Ի՞նչ հնարավորություն եք տեսնում, որ աջ ուժերը համոզեն Գորբաչովին բռնի ուժ գործադրելու Խորհրդային Միության ամբողջականությունը պահպանելու համար:

– Չեմ հավատում, որ ներկա ժամանակում հնարավոր է Միությունը պահել բռնի ուժով: Եթե աջ թևն ու Կենտրոնը համոզված լինեին այդպիսի հնարավորության մեջ, նրանք արդեն գործադրած կլինեին այն:

Հնարավոր է, որ զինվորականների, պետանվտանգության կամ ուրիշների կողմից դավադիր փորձեր արվեն, սակայն այդպիսի փորձերը դատապարտված են ձախողության: Ես չեմ հավատում, թե Գորբաչովն ինքն այդպիսի կուրս վերցնի, որովհետև դա կնշանակի, թե նա իր հիմնական քաղաքականությունից շեղվում է: Ուրեմն նա պետք է մոռանա դեմոկրատացումն ու վերակառուցումը: Առանց այդ երկու սկզբունքների երկիրն ընկնելու է տնտեսական այնպիսի մի ճգնաժամի մեջ, որով նա դժվար թե կարողանա պահպանել Միությունը: Դեռ ավելին. նման իրավիճակում Գորբաչովը կորցնելու է միջազգային աջակցությունը, որը նրա միակ դրամագլուխն է ներկայումս: Իսկ եթե նա կորցնի միջազգային վստահությունը, փաստորեն ձեռնունայն կմնա:

– Ելցին – Գորբաչով եւ դեմոկրատական ուժերի միջեւ կոալիցիոն կառավարություն կազմելու ինչպիսի՞ հնարավորություններ եք տեսնում:

– Ինձ թվում է, թե Գորբաչովը միայն պրոպագանդիստական նպատակներով կարող է ընդունել նման բան, սակայն հակասություններն այնքան խորն են, որ նման կոալիցիա կամ գործակցություն չի կարող գործնական լինել:

– Ուրեմն ինչպե՞ս կարելի է դուրս գալ այս ճգնաժամից:

– Կա միայն մի ճանապարհ՝ դեմոկրատական ուժերը պետք է ամրապնդվեն, իսկ Կենտրոնը պետք է հեռանա բեմից: Նախկին համակարգն այլեւս անկարող է կառավարել երկիրը: Կենտրոնը դատապարտված է փլուզման, եւ նա չի կարող վերականգնել իր ֆունկցիան:

– Դուք մասնակցում էիք Ֆեդերացիայի խորհրդի նիստերին եւ մոտիկից տեսնում Գորբաչովին: Տեսնո՞ւմ եք որեւէ փոփոխություն նրա կարողության մեջ... Խորհրդային Միությունը առաջնորդելու:

– Իմ տպավորությամբ, Գորբաչովի գլխավոր դժվարությունն այն է, որ նա փոփոխությունների ու բարենորոգումների հստակ եւ կառուցողական ծրագիր չունի, եւ դա է նրան պատեպատ խփում: Մյուս կողմից՝ ես պետք է գնահատեմ նրա կատարած հավասարակշռող դերը: Այս առումով նրա ներկայությունը չափազանց կարեւոր է: Ես զգում եմ, որ խորքում նա հակադրվում է առճակատումներին եւ ուժային վիճակներին: Բայց այս կապակցությամբ ես պետք է շեշտեմ նաեւ Ելցինի նշանակությունը: Ես համոզված եմ, որ հավասարակշռության գլխավոր դերը Ելցինն է կատարել: Եթե մենք չունենայինք ուժեղ դեմոկրատական հիմքով օժտված Ելցին, ապա աջերի կողմից ճնշումը կարող էր Գորբաչովին մղել մի կացության, որտեղ նա կուզենար ուժ գործադրել: Փաստորեն, Ելցինն օգնում է Գորբաչովին, որ նա հեռու մնա աջերի ճնշումից:

«Ազգ», 4 մայիսի, 1991 թ.:
Թարգմանություն անգլերենից: «Քրիսչըն Սայընս Մոնիթըր» (The Christian Science Monitor), 1 մայիսի, 1991 թ.:
*Հարցազրույցը՝ **Դանիել Սնայդերի**, «Քրիսչըն Սայընս Մոնիթըր»-ի հատուկ թղթակից:*
Հրատարակված՝ «Հայ ղեկավարն ասում է, որ Մոսկվան չի կարող հաղթել բռնի ուժով» վերնագրով:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԱՐԳՈՒՄԵՆՏԻ Ի ՖԱԿՏԻ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻՆ
(մայիս, 1991 թ.)[1]

– Ավարտվո՞ւմ է արդյոք Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցով:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Եվրոպայում անընդհատ հեղափոխության իր գաղափարի տապալումից հետո՝ 1920–21 թթ. խորհրդային Ռուսաստանն իր հայացքն ուղղեց դեպի Արեւելք՝ ձգտելով ձեռք բերել մուսուլման ժողովուրդների, եւ, ամենից առաջ, Թուրքիայի համակրանքը: Հենց այդ նպատակին հասնելու համար Հայաստանը մասնատվեց: Կարսի նահանգը Ռուսաստանը զիջեց Թուրքիային, իսկ Լեռնային Ղարաբաղն ու Նախիջեւանը՝ Ադրբեջանին: Կարսի նահանգում եւ Նախիջեւանում իրականացվեց հայերի բռնի տեղահանություն: Ահա այստեղից էլ սկսվեց հայտնի հակամարտությունը, որի արձագանքներն այսօր ցնցում են երկու հանրապետությունները: Բողոքի հանրահավաքները, որ ընդգրկեցին Լեռնային Ղարաբաղը 1988 թվականին, ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումը Ադրբեջանի կազմից դուրս գալու մասին նպատակ ունեին թույլ չտալ Նախիջեւանի ճակատագրի կրկնությունը:

Ա. ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.– Ղարաբաղի հակամարտությունը կենտրոնական օղակն է: Սակայն կան նաեւ դրանից ածանցված այլ հիմնահարցեր:

– Կարծիք կա, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը հենց սկզբից հրահրված էր մաֆիոզ կառույցների կողմից: Որքանո՞վ է այդ պնդումն արդարացի Ձեր տեսակետից:

[1] *Հարցազրույցը, հավանաբար, կայացել է 1991 թ. ապրիլի վերջին օրերին:*

Ա. ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.– Նման կարծիք կա, եւ այն անհիմն չէ, բայց այդ հակամարտությունը բարդ նախապատմություն ունի: Այն դժվար է բացատրել միայն այդ պատճառով:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Նման պնդումը կարելի էր ծիծաղելի համարել, եթե այն այդման վտանգավոր չլիներ: Խորհրդային համակարգն իր ամբողջ պատմության ընթացքում սեփական սխալներն ու անհաջողությունները բացատրել է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թշնամիներ փնտրելով: Սովոր սխեմաներով էր առաջնորդվել նաեւ «Ղարաբաղ» կոմիտեի դեմ հարուցված հետաքննությունը: Հակամարտությունը կաշառակեր տարերի, մաֆիոզ կառույցների կամ վերակառուցման հակառակորդների կողմից հրահրված լինելու վարկածի անհեթեթության մեջ կարելի է համոզվել՝ ուսումնասիրելով այդ հետաքննության ավելի քան 60 հատոր կազմող նյութերը:

– Ո՞ւմ է ձեռնտու հակամարտությունը: Կա՞ն արդյոք նման ուժեր Հայաստանում եւ Ադրբեջանում:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Իմ խորին համոզմամբ հակամարտությունը ձեռնտու չէ ո՛չ հայ, ո՛չ ադրբեջանական ժողովուրդներին: Ըստ երեւույթին այն ձեռնտու է Կենտրոնի որոշակի շրջանակների եւ Ադրբեջանի ղեկավար շրջաններին, որոնց համար այն Գորբաչովի վերակառուցման բաղաքականության վարկաբեկման ու իշխանության համար բաղաքական պայքարում դիվիդենտներ շահելու լուրջ փաստարկ է: Ադրբեջանի այսօրվա իշխանություններին հակամարտությունը ձեռնտու է նաեւ նրանով, որ այն հնարավորություն է տալիս ադրբեջանական ժողովրդի ուշադրությունը շեղել հանրապետության սոցիալ-բաղաքական ներքին հիմնահարցերից:

Ա. ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.– Հակամարտությունը չի սկսվել այն պատճառով, որ ձեռնտու է ինչ-որ մեկին: Ավելի շուտ այն սադրեցին, որովհետեւ կային մարդիկ, որ իրենց կողմից բարձրացված աղմուկի միջոցով հույս ունեին խուսափել իրենց գործած հանցանքների համար պատասխանատվությունից: Ձեր հարցի առիթով ես հիշեցի վերջերս «Շտեռն» ամսագրում հրապարակված մի հոդված: Նրանում հեղինակը, ի դեպ՝ Հայաստանից, գրում է, որ ԼՂԻՄ-ում յարվածությունն առաջացավ այն բանից հետո, երբ 1987 թ. ԽՄԿԿ կՊ պլենումներից մեկում սուր քննադա-

տության ենթարկվեց Հայաստանի այն ժամանակվա ղեկավար Կարեն Դեմիրճյանը: Անցավ մի քանի ամիս, եւ նախ Երեւանում՝ 1987 թ. աշնանը, իսկ հետո 1988 թ. փետրվարին Ստեփանակերտում, սկսվեցին հայտնի իրադարձությունները: Ղարաբաղի հիմնահարցը Հայաստանում ձեռնտու դարձավ նրանց, ովքեր այդ հանրապետությունում իշխանության լին ձգտում, եւ այդ պատճառով անընդհատ բորբոքում էին այն: Հենց այդ հիմնահարցի շնորհիվ Հայաստանում իշխանության գլուխ անցան «Ղարաբաղ» շարժման լիդերները: Անկասկած, Ադրբեջանում էլ կան մարդիկ, որ դժգոհ են Ադրբեջանի ներքին գործերին Հայաստանի միջամտությունը կանխելու՝ իշխանությունների անզորությունից: Բնական է, որ Ղարաբաղի հիմնահարցը, նույն նպատակներով, ինչ որ Հայաստանում էր, օգտագործվում է օպոզիցիայի կողմից, որը պնդում է, թե իմը կարող է լուծել հիմնահարցը, եթե լինի իշխանության գլուխ, չնայած, իմ կարծիքով, բոլորի համար ակնհայտ է, որ առկա է փակուղային իրավիճակ:

– Հակամարտության պատմության մեջ եղե՞լ է, արդյոք, մի պահ, երբ ամեն ինչ հնարավոր էր լուծել խաղաղ ճանապարհով:

Ա. ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.– Նման պահ կար ամենասկզբում: Պետք է աշխատեին փոռնագետները, որ կկանխագուշակեին հակամարտության ծանր հետեւանքները, պետք է իր խոսքն ասեր Կենտրոնը: Հակամարտությունը կարելի էր կանխել արմատապես: Սակայն այդ դեպքում պետք էր փոխզիջում փնտրել, որ նման հարցերում պարզապես չկա: Օրինակ՝ մեր հանրապետությունը բազմիցս Կենտրոնին նախազգուշացրել է հակամարտության ծավալման հնարավոր կործանարար հետեւանքների մասին: Ցավոք, կյանքը հաստատեց մեր կանխատեսումները:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Այո՛, նման պահ կար 1988 թ. մարտին՝ սումգայիթյան ողբերգությունից անմիջապես հետո: Այն ժամանակ Կենտրոնը կարող էր վճռականություն հանդես բերել եւ ԼՂԻՄ-ը դուրս բերել Ադրբեջանի կազմից, քանզի ակնհայտ էր, որ Ադրբեջանի հայ բնակչությանը եղեռն է սպառնում: Կարծում եմ, որ այն ժամանակ ե՛ւ ադրբեջանական իշխանությունների, ե՛ւ ժողովրդի մոտ մեղքի զգացումն այնքան խոր էր, որ նրանք հազիվ թե ընդդիմանային Կենտրոնի նման որոշմանը: Ես այստեղ կնշեի նաեւ Հայաստանի այն ժամանակվա ղեկավա-

րության մեղքը, որը փոխանակ աջակցելու հայ ժողովրդի արդարացի պահանջին, ընդհակառակը, բոլոր ուժերով խոչընդոտում էր մեր ժողովրդավարական շարժմանը:

– Պատմության մեջ հայերի եւ ադրբեջանցիների միջեւ շատ հակամարտություններ են եղել. գտնո՞ւմ եք Դուք, որ այդ երկու ժողովուրդները ընդհանրապես չեն կարող կողք-կողքի գոյատեւել:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Միայն ձեւական պատմական վիճակագրության տեսակետից կարելի է երկու ժողովուրդների ճարեւանությունը դիտել իբրեւ մշտական հակամարտությունների շղթա: Իրականում կոնֆլիկտային պահերը ժամանակային առումով բավականին անշնչան են երկար տարիների խաղաղ գոյակցության ֆոնի վրա: Բացառություն չէ նաեւ վերջին 70 տարին, որի ընթացքում, չնայած առկա բաղմաթիվ հակասություններին, երկու ժողովուրդները գտնում էին համագործակցության զանազան փոխշահավետ ձեւեր: Ես համոզված եմ, որ ղարաբաղյան հիմնահարցի արդարացի լուծման դեպքում մեր ժողովուրդները կարճ ժամանակում դարձյալ կգտնեն խաղաղ գոյակցության ավանդույթների պահպանման ուղիները:

Ա. ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.– Ո՛չ, չեմ գտնում: Խորհրդային իշխանության բոլոր 70 տարիներին հայերն ու ադրբեջանցիները ոչ միայն գոյակցել, այլեւ բարեկամություն են արել: Բացի այդ, իսլամը, ինչպես եւ ճրիստոնեությունը, հարգում են միակ Աստծուն հավատացող բոլոր ժողովուրդների նկատմամբ հանդուրժողականություն:

– Չեք գտնո՞ւմ, արդյոք, որ հակամարտության վրա ազդում է կրոնական գործոնը:

Ա. ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.– Ադրբեջանական եւ հայ ժողովուրդների միջեւ ոչ մի հակամարտություն, այդ թվում՝ նաեւ կրոնական, չկա, ինչման էլ փորձեն մեզ պատադրել: Հակառակ դեպքում չէին լինի հազարավոր խաղ ընտանիքները: Ղարաբաղյան հակամարտությունը նրանց կրկնակի դժբախտություն բերեց, որովհետեւ այժմ նրանք հանգրվան չեն գտնում ո՛չ Հայաստանում, ո՛չ Ադրբեջանում:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Այդ թեման հաճախ է շոշափվում Արեւմուտքի զանգվածային իրազեկման միջոցներում: Մի շարք հրապարակումներում պնդումներ կան, որ հակամարտության հիմքում, իբր, ընկած է մեր

ազգերի էթնիկական անհամատեղելիությունը: Ես ուզում եմ հերքել այդ բոլոր վարկածները, եւ հայտարարել, որ հակամարտության հիմքում չկա ո՛չ էթնիկական, ո՛չ ռասայական, ո՛չ ազգային, ո՛չ առավել եւս՝ կրոնական գործոն: Հայ ժողովուրդը սերտորեն համագործակցում է ինչպես խորհրդային Միության, այնպես էլ ողջ աշխարհի մուսուլման ժողովուրդների հետ: Մասնավորապես՝ Իրանում, Իրաքում, Սիրիայում, Թուրքիայում, Հորդանանում, Քուվեյթում, Եգիպտոսում կան հայկական գաղթօջախներ, որոնց բնակիչներն օգտվում են ազգային փոքրամասնություններին տրված բոլոր իրավունքներից: Եւ ընդհանրապես, մեր ժողովուրդը հակաիսլամական բարդույթ չունի: Ինչ վերաբերում է ղարաբաղյան հիմնահարցին, ապա նրա էությունը ԼՂԻՄ ժողովրդի ինքնորոշման իրավունքն է:

– Հակամարտության ծագման եւ ծավալման մեջ տեսնո՞ւմ եք, արդյոք, Կենտրոնի որոշակի մեղքը:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Ես գտնում եմ, որ Կենտրոնը տվյալ հակամարտության մեղավորն է ի սկզբանե, քանի որ, ինչպես ասացի, հենց նա 1920–21 թթ. «մարկապեց» ղարաբաղյան հանգույցը: Այսօր Կենտրոնն ընդունել է մի դիրք, ըստ որի՝ հակամարտությունը վերաբերում է միայն հայ եւ ադրբեջանցի ժողովուրդներին, ու կոչ է անում մեզ՝ հիմնահարցը լուծել երկխոսության հանապարհով: Աւտոմատ նման մոտեցումը թվում է արդարացի եւ օբյեկտիվ, սակայն դրանով Կենտրոնն իր վրայից գցում է ցանկացած պատասխանատվություն: Բայց նման իրավիճակում նա պարզապես բարոյական իրավունք չունի պատասխանատվությունից խուսափելու: Մեզ կոչելով երկխոսության, Կենտրոնը միաժամանակ իր կոպիտ միջամտությամբ՝ ԼՂԻՄ-ը խորհրդային զորերով օկուպացնելով, փաստորեն վիժեցնում է այդ երկխոսությունը: Ես համոզված եմ, որ առանց այդ միջամտության հայերն ու ադրբեջանցիները շատ արագ կարող են հանգել փոխադարձ ընդունելի որոշման:

Ա. ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.– Դատեցեք ինքներդ՝ կարելի՞ է արդյոք հաստատակ սխալ համարել հենց ամենասկզբում հակամարտությունը կանխելու՝ ղեկավարության անվճռականությունը: Վախենում եմ, որ բանն այստեղ կանխակալությունն է, երկու կողմերի հավասար մեղավորության հաշվեկշիռ ստեղծելու ձգտումը: Եթե հենց սկզբում Հայաստանում զգային Ադրբե-

ջանից ԼՂԻՄ-ն անջատելու ձգտումների անհեռանկարայնությունը, ապա անջատողականներն այդքան հեռուն չէին գնա: Նշանակում է՝ ինչ-որ մեկը Մոսկվայում նրանց աջակցություն էր խոստացել:

– Կարիք ունե՞ք Դուք տվյալ հիմնահարցի լուծման մեջ ինչ-որ մեկի միջնորդությանը: Եթե այո, ապա ո՞վ կարող է միջնորդի դեր կատարել:

Ա. ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.– Միջնորդներն այստեղ բացառվում են: Հիմնահարցը կարող են լուծել ԼՂԻՄ-ի հայկական եւ ադրբեջանական համայնքները՝ առանց դրսի որեւէ միջնորդության: Երկու համայնքներն էլ հոգնել են պատերազմից, նրանք վաղուց արդեն հաշտություն են ուզում, սակայն դրան չեն կարողանում հասնել դրսի ճնշման պատճառով: Հաշտության ընթացքին խանգարում են Հայաստանից ուղարկվող գրոհայինները, որոնք դիրքավորվել են մարզի տարածքում, այնտեղ ունեն ահաբեկչական բազաներ, շատ զենք, եւ հասարակ մարդիկ չեն կարողանում հանդես գալ խաղաղասիրական նախաձեռնությամբ, որովհետեւ վախենում են վրեժից: Ահա դա է խանգարում, չնայած գիշերվա քողի տակ ԼՂԻՄ-ի հայերն ու ադրբեջանցիները առաջվա պես շփվում են միմյանց հետ: Ես այդ գիտեմ, որովհետեւ վերջերս եղել եմ Ղարաբաղում: Հին կապերը չեն կտրվում: Դա երաշխիք է, որ խաղաղությունը կարելի է արագ վերահաստատել, եթե մարդկանց չխանգարեն:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Ես համոզված եմ, որ եթե Ադրբեջանում լիներ երկխոսության ընդունակ ժողովրդավարական կառավարություն, ապա որեւէ միջնորդության կարիք չէր լինի: Բայց քանի որ Ադրբեջանում իշխում է Կենտրոնի վարչահրամայական համակարգի լրիվ աջակցությունը վայելող կոմունիստական ռեժիմը, ապա կոնստրուկտիվ երկխոսություն հնարավոր չէ: Ինչ վերաբերում է միջազգային մարմիններին, ապա, երեւի թե, իմաստ ունի նրանց դիմել միայն մարդու իրավունքների ոտնահարման բազմաթիվ փաստերի առիթով. չէ՞ որ Արցախում արդեն երկար ժամանակ ոտնահարվում են մարդկային ամենատարրական իրավունքները՝ կյանքի, գույքի անձեռնմխելիության եւ այլն: Քաղաքական տեսանկյունից ես հոռետեսորեն եմ տրամադրված միջազգային կազմակերպությունների նկատմամբ: Մենք բազմիցս համոզվել ենք նրանց անգործունակության մեջ. պաղեստինյան հիմնահարցը չլու-

ծելը, Օլսթերում շարունակվող ճգնաժամը, Իրաքում քրդերի ճնշումները դրա խոսուն ապացույցներն են:

– Եթե Դուք լինեիք Ձեր ընդդիմախոսի տեղը, ո՞րը կլիներ իրավիճակի նորմալացման Ձեր առաջին քայլը: Այդ ուղղությամբ ի՞նչ առաջին քայլեր եք պատրաստ անել Դուք Ձե՛ր տեղում:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Ոչ մի անհրաժեշտություն չկա ինձ Այազ Մութալիբովի տեղը դնելու, որպեսզի կատարեմ իրավիճակի նորմալացման առաջին քայլը, քանզի այդ քայլը ես արդեն արել եմ՝ լինելով իմ տեղում: Դա երկխոսության պատրաստակամությունն է, որը ես հայտնել եմ իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո: Խոսքով Այազ Մութալիբովը նույնպես երկխոսության կողմնակից է, սակայն անցած ութ ամիսները ցույց տվեցին, որ նա ընտրել է երկխոսությունը ձգձգելու ուղին: Երեւում է, որ մարզի օկուպացումը խորհրդային զորքերի կողմից, որոնցով Մութալիբովն իրականացնում է իր քաղաքականությունը, առավել ձեռնտու է Ադրբեջանի կոմունիստական ղեկավարությանը:

Ա. ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.– Մենք սպասում ենք ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու մասին Հայաստանի Գերագույն խորհրդի հակասահմանադրական որոշման չեղյալ հայտարարելուն: Այդ որոշումն իրավական ուժ չունի, սակայն մեզ համար կարեւոր է այդ որոշման ձեւական վերացումը իբրեւ հաշտության ազդանշան: Մենք արդեն քիչ քայլեր չենք արել: Մեր գլխավոր նպատակն է, որ Ղարաբաղում չլինեն ահաբեկիչներ: Եթե այդ ապահովվի, մենք այնտեղից դուրս կբերենք ՕՄՕՆ-ը, կսկսենք բանակցությունները, վիճելի հարցերը լուծելու համար կձեւավորենք հաշտեցնող հանձնաժողով: Մենք կմտածենք այն մասին, թե ինչպես ԼՂԻՄ-ում անցկացնենք Ադրբեջանի Գերագույն խորհրդի, իսկ հետո ուղղակի, նաեւ մյուս կառուցվածքների ընտրությունները, կվերականգնենք կուսակցական օրգանները: Այս բոլոր միջոցառումները կիրականացվեն միայն ու միայն նրանց հետ, ովքեր ապրում են Ղարաբաղում, առանց դրսի միջամտության: Ինչ վերաբերում է Ադրբեջանի ու Հայաստանի անմիջական հարաբերություններին, ապա չի խանգարի, որ երկու հանրապետություններն էլ սովորեն ինքնիշխան պետությունների փոխհարաբերությունների էթիկան: Պետք է դադարեցնել փոխադարձ վիրավորանքների հոսքը, որ միմյանց հղում են զանգվածային

տեղեկատվության միջոցները, վերջ տալ պատմությունն անընդհատ փոփոխելուն եւ, վերջապես, գիտակցել, որ ադրբեջանցիներն ու հայերը եղել են ու կմնան հարեւաններ:

– Ադրբեջանը հիմնահարցի լուծման բանալին համարում է Ադրբեջանի քաղաքականությունը չընդունող հայերի տեղահանությունը, եւ, դատելով վերջին իրադարձություններից, արդեն ձեռնամուխ է եղել դրա իրականացմանը: Ինչպիսի՞ն կարող են լինել Ձեր կարծիքով, այդ քայլերի հետեւանքները:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Իրոք, ըստ մեր ունեցած տվյալների, Ադրբեջանի ղեկավարությունը հենց այդպիսի ճանապարհի կողմնակից է՝ չկան հայեր, չկա եւ հիմնահարցը: Ապրիլի 16-ի խորհրդակցությունում Այազ Մութալիբովը իրավապահ մարմիններին՝ ՊԱԿ-ին, ՆԳՆ-ին եւ դատախազությանը կոչ արեց տեղահանել ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի եւ Գետաշենի ենթաշրջանի բնակիչներին, եթե նրանք չենթարկվեն Ադրբեջանի Սահմանադրությանը: Համարյա նույնը նա կրկնեց ապրիլի 27-ին՝ հանդես գալով ադրբեջանական հեռուստատեսությամբ: Եւ, սկսած ապրիլի 19-ից, տեղահանությունն արդեն սկսվել է խորհրդային զորքերի անմիջական մասնակցությամբ: Ինչի՞ կհանգեցնի նման քաղաքականությունը: Պետք է ասել, որ վերջին տարվա ընթացքում տարածաշրջանում հաստատվել է որոշակի ստատուս-քվո: Եւ այսօր իրավիճակի կայունացման ցանկացած փորձ ապարդյուն կլինի, եթե այդ ստատուս-քվոն խախտվի. նկատի ունեմ առաջին հերթին հայկական Շահումյանի շրջանի, Գետաշենի ենթաշրջանի եւ Բերդաձոր գյուղի ճակատագիրը:

Ա. ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.– Ոչ մի բռնի տեղահանության մասին հարց մենք չենք դրել եւ չենք դնում: Նման պնդումները պարզ ջրի պղտորում են, չնայած, անկեղծ ասած, մենք բարոյական իրավունք ունենք հարցը հենց այդ հարթության վրա դնելու: Մի մոռացեք, որ կարճ ժամանակում Հայաստանից արտաքսվեցին մոտ 200 հազար ադրբեջանցիներ, որոնք մի սերունդ չէ, որ ապրում էին այնտեղ: Փաստորեն այժմ նրանք այնտեղ չկան: Ադրբեջանում ապրող հայերը պետք է ենթարկվեն Ադրբեջանի եւ ԽՍՀՄ-ի սահմանադրություններին: Այլ պայման չկա: Այլ հարց է, որ որոշ հայ ընտանիքներ վճռել են կամավոր հեռանալ մեր հանրապետությունից: Նրանց մենք չենք խոչընդոտի: Ավելին՝ կօգնենք տրանսպորտով...Վստահ եմ, որ հարցի նման լուծումը կօգնի տարածաշրջանում հանգստության հաստատմանը:

– Կարծո՞ւմ եք արդյոք, որ կոնֆլիկտը կարելի է լուծել ռազմական ճանապարհով:

Ա. ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.– Ցանկացած պատերազմ, միեւնույն է, ավարտվում է բանակցությունների սեղանի շուրջ: Հասկանալով արյունահեղության ողջ անիմաստությունը, մենք ամեն ջանք կգործադրենք, որ հակամարտությունը մարենք խաղաղ միջոցներով:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Հակամարտության լուծման ռազմական ուղին ես բացառում եմ: Մենք քաղաքական երկխոսության երդվյալ կողմնակիցներ ենք: Սակայն ես չեմ բացառում անկառավարելի տարրերի կողմից ԼՂԻՄ-ի հայ բնակչության նկատմամբ զանգվածային ահաբեկչության փորձերը, ինչպես դա եղավ Սումգայիթում եւ Բաքվում:

«Հայաստանի Հանրապետություն», 10 մայիսի, 1991 թ.:
Թարգմանություն ռուսերենից: «Արգումենտի ի Ֆակտի» ("Аргументы и Факты"), հ. 18, 1991 թ.:
Հրատարակված՝ «Լեռնային Ղարաբաղ. երկու հայացք հիմնահարցին: Հայաստանի եւ Ադրբեջանի լիդերների դիրքորոշումը» վերնագրով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

(23 մայիսի, 1991 թ.)

Խորհրդային բանակի, խորհրդային եւ ադրբեջանական ներքին գործերի նախարարությունների ստորաբաժանումները ապրիլի 29-ին սկսեցին Ադրբեջանում գտնվող հայաբնակ գյուղերի ռմբակոծությունը եւ այնուհետեւ աստիճանաբար իրենց ռազմական գործողությունները տարածեցին Հայաստանի սահմանամերձ գյուղերի վրա: Ռազմական գործողությունների հետեւանքը եղավ Գետաշենից եւ Մարտունաշենից, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի ու նրա շրջակա գյուղերից հայ բնակչության բռնի տեղահանումը: Այդ ընթացքում զոհվել են ավելի քան 50, տեղահանվել հազարավոր մարդիկ, շատ գյուղեր դատարկվել են:

Անցյալ հունվարին աշխարհն ականատես եղավ ռազմական ուժի կիրառման խորհրդային մեկ այլ գործողության, երբ Լիտվայի ժողովուրդը համարձակվեց իրեն պահել իբրեւ անկախ ազգ: Այն ժամանակ ԽՍՀՄ Ֆեդերացիայի խորհրդի կողմից ես ուղարկվեցի Վիլնյուս՝ փաստերն ուսումնասիրելու եւ բռնությունները դադարեցնելու ուղիներ գտնելու համար: Բանակի ապօրինի գործողությունների վերհանումը, ինչպես նաեւ դրանց նկատմամբ համաշխարհային հասարակայնության հակազդեցությունն օգնեցին դադարեցնել այլումանհեղությունը:

Մոսկվան, լիտվական իր սխալից խուսափելու նպատակով, Հայաստանի դեպքում կիրառեց գործողությունների մի այլ ծրագիր, որը հղարկվում է 1990 թվականի հուլիսի՝ հաղաքացիների ապօրինի զինված կազմավորումները զինաթափելու մասին պրեզիդենտական հրամանագրով՝ «զինված ավազակ» անվանելով հայ միլիցիոներներին: Համենայն դեպս, խորհրդային կառավարությունը դեռեւս ոչ մի կերպ

չի հիմնավորել իր կողմից բիրտ ուժի գործադրումը: Անցյալ օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներին, առանց Մոսկվայի օգնության, Հայաստանի ժողովրդավարական իշխանությունները խաղաղ կերպով կարողացան զինաթափել բոլոր իմնակոչ կամ ապօրինի զինված տարրերին: Այդ միջոցով հնարավոր եղավ բռնագրավել վեց անգամ ավելի զենք, քան վերջերս արեց խորհրդային բանակը ուժի գործադրմամբ:

Հայաստանի կառավարությունը միլիցիայի կառուցվածքներում, հանրապետության օրինական իշխանությունների ենթակայության տակ ստեղծել է իմնապաշտպանության ուժեր՝ իբրեւ հանրապետության կանոնավոր միլիցիայի մաս: Դրանց նշանակությունն ու թվակազմը շափազանցվում են խորհրդային եւ ադրբեջանական հաղորդագրություններում: Իսկ միլիցիայի ուժեղացումն անհրաժեշտ էր սահմանամերձ շրջանների բնակչությանը պաշտպանելու համար, ինչպես նաեւ թույլ չտալու՝ որ տեղային բախումները վերածեն լայնամասշտաբ առճակատման:

Անհնար է, որ խորհրդային հաղաքական որոշումները եւ լայնածավալ ռազմական գործողություններն իրականացվեն առանց Գորբաչովի իմացության եւ համաձայնության:

Անցյալ օգոստոսից, ժողովրդավարական ուժերի հաղթանակից ի վեր, Հայաստանի խորհրդարանն ընդունել է բազմակուսակցական համակարգ, հողը բաժանել գյուղացիներին, սկսել է առեւտրի եւ արդյունաբերական օբյեկտների մասնավորեցումը, վավերացրել է մարդու հաղաքացիական եւ հաղաքական իրավունքների միջազգային համաձայնագիրը, ընդունել է խղճի եւ դավանանքի ազատության համաշխարհային սկզբունքները: Մենք կատարելագործում ենք մեր օրենսդրությունը եւ այժմ նախապատրաստվում իրավական բարեփոխումների: Օգոստոսին Հայաստանի խորհրդարանն ընդունեց անկախության գործընթացի մասին Հռչակագիրը, որը վերջնական անկախության երկար հանապարհի սկիզբն է: Մենք անկախությունը դիտում ենք իբրեւ գործնական անհրաժեշտություն՝ ժողովրդավարական հաստատությունների ստեղծման համար: Դա միջոց է ներքագատվելու կայսերական այն կոնտեքստից, որտեղ դրացի հանրապետությունները դիտվում են իբրեւ թշնամիներ, իսկ Մոսկվան՝ որպես ազգային գոյատեւման միակ երաշխիք:

Ադրբեջանի հետ մենք նորմալ հարաբերություններ ենք ուեցել: Համոզված ենք, որ հայ-ադրբեջանական երկխոսությունը կարող է երկու հանրապետություններին բերել որոշակի փոխըմբռնման, եթե կողմնակի միջամտություններ մեզ չշեղեն դեպի խաղաղություն եւ ապահովություն տանող միակ հանապարհից:

Հայաստանը միակ հանրապետությունն է, որի անկախության ռազմավարությունը հիմնված է խորհրդային Սահմանադրության եւ խորհրդային Միության կազմից դուրս գալու մասին օրենքի դրույթների վրա: Հայաստանի խորհրդարանի՝ սեպտեմբերի 21-ի հանրաքվեի անցկացման մասին որոշումը դարձյալ հիմնված է խորհրդային օրենսդրության վրա:

Ադրբեջանի կառավարությունը, որը դեռեւս մնում է կոմունիստական, դարձել է Մոսկվայի հակաբարեփոխական ուժերի դաշնակիցը: Երկուսն էլ շանազատված են ամբողջատիրության եւ կախյալ վիճակի պահպանմամբ: Ուրեմն նրանց միացյալ ռազմավարության նպատակն է պատժել Հայաստանին՝ իր ժողովրդավարությունն ամրապնդելու եւ անկախության հանրաքվեն անցկացնելու որոշումների հաստատակամության համար, եւ վարձատրել Ադրբեջանին՝ Մոսկվային պաշտպանելու եւ կայսրության պահպանմանը նպաստելու համար:

Խորհրդային Միությունը փորձում է բախումը ներկայացնել որպես հայ-ադրբեջանական հակամարտության դրսեւորում: Արեւմուտքի կառավարություններն ու թղթակիցները հաճախ այս մակերեսային մեկնաբանությունն ընդունում են իբրեւ բացարձակ ճշմարտություն: Երկու հանրապետություններն էլ, ինչ խոսք, մեծ դժվարություններ են դիմագրավում, սակայն վերջին մի քանի շաբաթվա դեպքերն ապացուցեցին այն, ինչում ես միշտ համոզված էի. մեր ներկա հարցի հիմքը քաղաքական է եւ ոչ թե էթնիկ-ազգային:

Այսինքն, Հայաստանի դեմ ռազմական գործողությունները նպատակ ունեն Հայաստանը ներքաշելու Ադրբեջանի հետ պատերազմի մեջ, դրանով իսկ հայերին վերածելով խորհրդային բանակի դեմ անհամաստ պատերազմի եկած մարտիրոսների: Անշուշտ, այդպիսի քայլերից մենք էլ կօգտագործվեր խորհրդային բանակի զինված ներխուժումը Հայաստան արդարացնելու համար:

Հայաստանում չկան այն քաղաքական լծակները, որոնք կենտրոնական իշխանություններն ունեն ուրիշ հանրապետություններում, օրինակ՝

ազգային փոքրամասնություններ, իր գաղափարական կողմնորոշումներին ճավատարիմ համայնավար կուսակցություն, ժողովրդի կողմից մասսայականություն չվայելող կառավարություն: Այդ պատճառով է, որ Կենտրոնին անհրաժեշտ եղավ օգտագործել բռնի ուժը:

Այս ամենին հակառակ, Հայաստանը շարունակում է հաստատ մնալ իր ուղու վրա՝ ստեղծելով օրենքի եւ արդարության վրա հիմնված պետություն, որը ժողովրդին կտա նորմալ ապրելու հնարավորություն: Հայաստանը որպես ժողովրդավարական եւ իրենիշխան պետություն՝ չի բացառում խորհրդային Միության եւ խորհրդային հանրապետությունների հետ անմիջական երկկողմ հարաբերությունները:

Հուսով եմ, որ ԱՄՆ-ը լրջորեն կվերաբերի Հայաստանի եւ ժողովրդավարական այլ հանրապետությունների նկատմամբ խորհրդային կառավարության միջամտությունների բաղամակեռությանը: Վստահ եմ, որ միջազգային հանրությունը պետք է հարգի ընդհանուր ապահովության, հակամարտությունները խաղաղ ճանապարհով լուծելու եւ իրենորոշման սկզբունքներ ոչ միայն խորհրդային Միությունից դուրս, այլեւ նրա ներսում:

«Հայաստանի Հանրապետություն», 28 մայիսի, 1991 թ.: Թարգմանություն անգլերենից: «Վաշինգտոն պոստ» ("The Washington post"), 23 մայիսի, 1991 թ.:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՆԵԶԱՎԻՍԻՄԱՅԱ ԳԱԶԵՏԱ» ԹԵՐԹԻՆ
(28 մայիսի, 1991 թ.)

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի Փարիզ կատարած ինգօրյա այցի ծրագիրն այնքան լարված էր, որ հարցազրույցի համար նա ժամանակ կարողացավ գտնել միայն գիշերվա ժամը 3-ին: Մենք զրուցեցինք մեկ ժամից ավելի՝ գրեթե այնքան, որքան տեւել էր անդրկովկասյան հանրապետության առաքնորդի զրույցը Նախագահ Միտերանի հետ մայիսի 22-ին:

– Ձեր հանդիպումը Միտերանի հետ կապվա՞ծ է արդյոք վերջին 20 օրերի իրադարձությունների հետ:

– Ոչ: Մեր հանդիպումը ծրագրված էր մեկ ամիս առաջ: Բայց բնական է, մենք ճնարակեցինք Կենտրոնի այդ պատժիչ գործողությունը:

– Միտերանի հետ զրույցի ժամանակ Դուք նույն միանշանակությա՞մբ որակեցիք կատարվածը:

– Այո, նաեւ բացատրեցի, թե ինչու է մեր գնահատականն այդպիսին: Բանն այն է, որ, ի տարբերություն Մոլդովայի, Վրաստանի եւ Բալթյան հանրապետությունների, որոնք դեպի անկախություն եւ իրենիշխանություն են գնում իրենց իսկ մշակած երթուղիներով, մենք որոշեցինք այդ նույն նպատակին հասնել՝ հետեւելով խորհրդային Միությունից դուրս գալու մասին օրենքի տարին: Դրանով իսկ Հայաստանը Միության համար ստեղծում է վտանգավոր մի նախադեպ՝ ցույց տալով, որ Միությունից կարելի է դուրս գալ նաեւ՝ պահպանելով իր իսկ սեփական օրենքով նախատեսած կարգը:

Հանրաքվեն նշանակելով սեպտեմբերի 21-ին՝ լիովին համապատասխան ԽՍՀՄ Սահմանադրությանը եւ օրենքներին, իճարկե, մենք հասկանում էինք, որ այդ ընթացքում Մոսկվան չանհրե կգործադրի մեզ

խանգարելու համար: Հետեւելով սովորական տակտիկային, այն է՝ մինչ բանակցություններն սկսելը ուժ կիրառել, Մոսկվան փորձեց աճապնդել մեզ: Այդպես եղավ թե՛ Մոլդովայում, թե՛ Մերձթալթիկայում: Վերջին 20 օրերն ակնհայտորեն ցույց տվեցին, որ խոսքը ոչ թե հայ-ադրբեջանական հակամարտության, այլ Ադրբեջանի միջոցով Մոսկվայի ճնշման մասին է:

Ի բարեբախտություն Հայաստանի՝ մյուս հանրապետությունների ժողովրդավարական ուժերը դրական հասարակական կարծիք ստեղծեցին մեր օգտին: Զգալի էր նաեւ արտասահմանյան հաղարական շրջանակների արձագանքը: Այդ իսկ պատճառով, Գորբաչովը, ինչպես եւ Մերձբալթիկայում, ստիպված եղավ դադարեցնել ուժի ցուցադրումը: Այժմ իրադրությունը համեմատաբար հանգիստ է:

– Իրադրության կարգավորման գործում ի՞նչ դեր խաղացին Ձեր շփումները Գորբաչովի հետ:

– Ոչ մի: Ես փորձում էի նրա հետ կապվել ապրիլի 22-ից: Իրադարձությունները շատ արագ էին զարգանում, եւ ինձ անհրաժեշտ էր շտապ իմանալ նրա դիրքորոշումը: Իսկ նա թաքնվում էր ինձնից, խուսափում խոսակցությունից: Նա ինձ ընդունեց միայն այն ժամանակ, երբ ողբերգությունն արդեն տեղի էր ունեցել, եւ մեր հանդիպումը կորցրել էր իմաստը: Մայիսի 1-ին մենք խոսեցինք հեռախոսով, 3-ին՝ հանդիպեցինք: Ես վերջնականապես համոզվեցի, որ Գորբաչովը որոշել է գնալ մինչեւ վերջ:

– Ուրիշ ինչի՞ մասին եք խոսել Միտերանի հետ:

– Մենք կարծիքներ փոխանակեցինք ԽՍՀՄ-ում տեղի ունեցող գործընթացների մասին: Ես շարադրեցի իմ տեսակետներն այդ գործընթացների մասին՝ զրուցակցիս ուշադրությունը հրավիրելով չորս պահերի վրա:

Առաջին. դրանք անշրջելի գործընթացներ են: Համակարգն այլեւս չի կարող գոյություն ունենալ այն տեսքով, ինչպես գոյություն է ունեցել 74 տարի: Տնտեսության առողջացման կարեւոր պայման է հանդիսանում նրա ապակենտրոնացումը, որին իմաստաբերաբար կհետեւի քաղաքական ապակենտրոնացումը: Այդ երկու գործընթացները փոխկապակցված են, եւ կենտրոնական իշխանությունների բոլոր փորձերը՝

խափանել այդ փոխկապակցվածությունը, ծառայում են ոչ թե առաջընթացին, այլ արգելակմանը:

Երկրորդ. մենք հասկանում ենք, որ Արեւմուտքը պարտավորություններ ունի Գորբաչովի հանդեպ, որի դերը հատկապես մեծ է միջազգային կլիմայի առողջացման, Արեւելյան Եւրոպայի երկրների ազատագրման, ինչպես նաեւ սպառազինությունների մրցավազքի թուլացման գործում: Բայց ի դեմս Գորբաչովի անվերապահորեն պաշտպանել Կենտրոնին՝ նշանակում է գործնականում ամրապնդել ճնշողիմական ուժերի դիրքերը: Ուստի, մեր կարծիքով, արդեն ժամանակն է, որ Արեւմուտքը, մշակելով իր քաղաքականությունը ԽՍՀՄ-ի հանդեպ, ելնի այն փաստից, որ Կենտրոնի կողքին, ի դեմս հանրապետությունների, առաջ են եկել այլ իրական քաղաքական ուժեր, որոնք օր-օրի ավելի են ապացուցում իրենց գործունակությունը, մինչդեռ Կենտրոնը կորցնում է կառավարման նոր ու նոր լծակներ: Այժմ Կենտրոնը չունի նույնիսկ տնտեսական լծակներ: Նրա միակ հենարանը մնում են պատժիչ մարմինները՝ բանակը, ՆԳՆ-ն, ՊԱԿ-ը:

Երրորդ. կա մի վտանգ, որն այսօր արդեն իրեն զգալ է տալիս. վեց հանրապետությունները, որոնք ցանկություն են հայտնել հասնել անկախության, կարող են ենթարկվել եւ արդեն ենթարկվում են բռնությունների ու տնտեսական խտրականության, ինչի մասին անթաքույց ակնարկ արվեց այսպես կոչված «9+1»-ի հայտարարության մեջ: Այնտեղ ասվում է, որ իր հանրապետությունների համար կապահովի առավել բարենպաստ ռեժիմ: Մինչդեռ ո՛չ ԽՍՀՄ Սահմանադրությամբ, ո՛չ ԽՍՀՄ-ից դուրս գալու օրենքի համաձայն, որտեղ նախատեսվում է ճիգպամյա անցումային փուլ, ԽՍՀՄ կազմից դուրս գալու մտադրություն ունեցողների նկատմամբ որեւէ խտրականություն սահմանված չէ:

Չորրորդ. մենք չունենք ո՛չ բարոյական իրավունք, ո՛չ էլ մտադրություն՝ խնդրելու, որ Նախագահ Միտերանը, կամ մեկ ուրիշն Արեւմուտքում, խառնվի ԽՍՀՄ ներքին գործերին: Սակայն կան որոշ ընդհանուր սկզբունքներ, որոնք ոչ մի կերպ չի կարելի դասել այս կամ այն երկրի ներքին գործերին. օրինակ, երբ պետության կողմից ուժ է գործադրվում խաղաղ բնակչության դեմ, կամ երբ խախտվում են մարդու իրավունքները: Այդ դեպքում Արեւմուտքը չի կարող եւ չպետք է աչք փակի:

– Եւ ի՞նչ պատասխանեց Միտերանը:

– Միտերանը պատասխանեց, որ այդպիսի փաստերի վրա իմը երբեք աչք չի փակի: Ես չեմ կարող ասել, որ Ֆրանսիայի նախագահը համաձայնեց իմ բոլոր պնդումներին: Ինձ թվաց, որ նա դեռեւս հավատում է, թե Դորբաչովը դեռ կարող է խաղալ համակարգողի կառուցողական դերը այն բարդ սոցիալ-քաղաքական իրադրության մեջ, որն այսօր ստեղծվել է ԽՍՀՄ-ում: Սակայն նա խոստովանեց հանրապետությունների անող դերը: Եւ նույնիսկ հենց այն փաստը, որ նա ընդունեց ինձ հանգամանալից զրույցի համար, այդ դերի ընդունման վկայությունն է: Մեկ տարի կամ նույնիսկ վեց ամիս առաջ այդպիսի հանդիպումն անհնարին կլիներ:

– Դա Ձեր առաջի՞ն հանդիպումն էր Միտերանի հետ:

– Այո: Բայց ֆրանսիացի իմ մյուս զրուցակիցներից շատերի հետ ես արդեն ծանոթ էի: Երբ մենք «Ղարաբաղ» կոմիտեի 11 անդամներս, բանտում էինք, Ֆրանսիայի 11 խաղաթներ մեզ դարձրին իրենց պատվավոր խաղաընկերները: Ինձ «ռոդեզրեց» Փարիզի խաղաթղթի ժակ Շիրակը:

– Ուրիշ ո՛ւմ հետ եք հանդիպել եւ ի՛նչ արդյունքներ կան:

– Մենք հանդիպեցինք արտաքին գործոց նախարար Ռոլան Դյումայի հետ, այնպիսի խոշոր խաղաթղթերի հետ, ինչպիսիք են սոցիալիստական կուսակցության առաջին քարտուղար Պիեռ Մոռուան, Ազգային ժողովի նախագահ Լորան Ֆարիուսը, խորհրդարանի միջազգային հարցերի հանձնաժողովի նախագահ Միշել Վոզելը:

Առանձին ծրագիր էր կազմված ինձ հետ Փարիզ ժամանած Հայաստանի նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, Կոնոմիկայի նախարար Հրանտ Բագրատյանի համար: Նա հանդիպել է արտաքին առեւտրի, արդյունաբերության, էներգետիկայի, կապի եւ այլ նախարարությունների դեկավարների եւ պատասխանատու աշխատողների հետ: Եւրոպական պրոբլեմների նախարար Էլիզաբեթ Գիգուի դեկավարությամբ կազմվել է մանրամասն փաստաթուղթ-առձանագրություն, որը 11 ուղղություններով ամրագրում է մեր պայմանավորվածությունները անտեսական համագործակցության շուրջ: Այնտեղ թվարկված են 45 որոշակի ծրագրեր:

– Ակնհայտ է, որ բավականին արդյունավետ էին Ձեր շփումները նաեւ Ֆրանսիայի բազմամարդ եւ ազդեցիկ հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հավանաբար ոչ պատահականորեն, Ձեր այցի հետ համըն-

կավ Շառլ Ազնավուրի՝ ՄԱԿ-ին ուղղված դիմումը, որտեղ կոչ է արվում հայ-ադրբեջանական կոնֆլիկտը վերցնել միջազգային հսկողության տակ: Դիմումը Սփյուռքին՝ չի՞ հանդիսանում արդյոք կոնֆլիկտի միջազգայնացման սկիզբը:

– Հեղափոխական վերափոխումներից ու երկրաշարժից հետո ողջ աշխարհի հայերը, նույնիսկ լիովին ձուլվածները, ճիշտեցին իրենց արմատների մասին: Շատերի մոտ այսօր է արթնացել ազգային ինքնագիտակցությունը: Իհարկե, Սփյուռքում միշտ եղել են ակտիվ մարդիկ, բայց նույնիսկ նրանք են զարմանում, թե որքան շատ հայեր միանգամից հայտնվեցին աշխարհում:

Մշակութային կապեր Սփյուռքի հետ եղել են եւ նախկինում, բայց այսօր դրանց ավելանում է տնտեսական համագործակցությունը, իսկ բոլորովին վերջերս իրեն զգացնել է տալիս նաեւ Սփյուռքի քաղաքական կշիռը: Նա ամբողջ աշխարհում ավելի ու ավելի է սկսում ազդել հասարակական կարծիքի վրա, ինչպես Ղարաբաղի, այնպես էլ այլ հարցերում: Սփյուռքահայերը որոշակի ճնշում են գործադրում իրենց երկրների կառավարությունների վրա, որպեսզի նրանք արտահայտեն իրենց տեսակետները կատարվող իրադարձությունների վերաբերյալ: Նախագահ Միտերանն ինձ ուղղակիորեն ասաց, որ Հայաստանի եւ Ղարաբաղի պրոբլեմները սպառնում են դառնալ միջազգային պրոբլեմ, որովհետեւ դրանք ուժգնորեն ազդում են Սփյուռքի, մասնավորապես՝ ֆրանսահայ համայնքի վրա, ինչն արտացոլվում է երկրի սոցիալ-քաղաքական կյանքում:

– Ինչպիսի՞ն է Ձեր պատասխանը:

– Հայկական խնդիրը միջազգայնացնել, կնշանակի ի դեմս միջազգային հասարակական կարծիքի ստեղծել նոր, զսպող գործոն՝ կանխելու համար ագրեսիայի այնպիսի նոր փաստերը, որոնց ենթարկվեց Հայաստանը:

– Իսկ եթե ադրբեջանցիները նույնպես սկսեն հենվել արտասահմանի իրենց հայրենակիցների վրա: Դուք չե՞ք կիսում այն մտահոգությունը, որ Հայաստանը կարող է դառնալ երկրորդ Լիբանան:

– Հայաստանին երբեք չի կարող սպառնալ լիբանանականացումը: Չի կարելի անհարկի օգտագործել այդ տերմինը՝ մոռանալով լիբանան-

յան պորտեմի էությունը. այդ երկրի բնակչությունը մասնատված է ըստ ազգային եւ դավանական հատկանիշի: ԽՍՀՄ ցանկացած այլ հանրապետություն կարող է Լիբանան դառնալ, բայց ոչ Հայաստանը՝ միակ հանրապետությունը, որի բնակչությունն էթնիկապես եւ դավանանքով միատարր է:

– Հայաստանն՝ այո, իսկ Ադրբկովկա՞սը: Կարծիք կա, այն մասնավորապես հայտնել է Իրանի Նախագահը, որ եղածն իրականում ոչ թե հայ-ադրբեջանական կոնֆլիկտ է, այլ հակամարտություն երկու համաշխարհային կրոնների՝ քրիստոնեության եւ իսլամի միջեւ:

– Հայաստանը հին բրիստոնեության երկիր է եւ երբեք չի տառապել կրոնական ֆանատիզմով: Այդ իսկ պատճառով ես լիովին բացառում եմ կոնֆլիկտի այդպիսի մեկնաբանումը: Լավագույն վկայությունը մահմեդական բազմաթիվ երկրներում, ինչ նույն Իրանում, բազմամարդ հայկական համայնքների գոյությունն է, որոնք շրջակա ժողովուրդների հետ լիովին խաղաղ են ապրում: Այդպիսի համայնքներ կան նաեւ Միջին Ասիայի խորհրդային հանրապետություններում:

Ճիշտ է՝ Ադրբեջանում գոյություն ունի իսլամական ֆունդամենտալիզմ, եւ այն հենվում է այն ամենի վրա, ինչի վրա հենարավոր է, այդ թվում եւ՝ կոնֆլիկտի: Բայց բուն կոնֆլիկտը արհեստականորեն ստեղծվել եւ պաշտպանվում է մետրոպոլիայի կողմից: Եթե չլինի Կրեմլի միջամտությունը, ապա Հայաստանը եւ Ադրբեջանը ընդհանուր լեզու կգտնեն: Ի դեպ, Ադրբեջանի ժողովրդավարները նույն կերպ են մտածում:

– Ձեր կանխատեսմամբ՝ ի՞նչ ընթացք կունենան իրադարձությունները:

– Ես վստահ եմ, որ հանի որ Հայաստանը եւ Վրաստանը կանգնել են անկախության ձեռքբերման ճանապարհին, Ադրբեջանը նույնպես այդ ուղով կընթանա: Առավել եւս, որ նա դրա համար ունի ավելի բարենպաստ հնարավորություններ: Իսկ երբ մեր հարեւանն ազատ կլինի Մոսկվայի ազդեցությունից, մենք կարող ենք ավելի հեշտ պայմանավորվել, հան այսօր, երբ մեր երկկողմ հարաբերություններին միշտ խառնվում է երրորդ կողմը:

– Նշանակում է՝ «9+1»-ը, որի մասին Դուք այդքան քննադատորեն եք արտահայտվում, այնուամենայնիվ կարո՞ղ է օգնել կայունացնելու իրադրությունը:

– Ես կարծում եմ՝ ճիշտ հակառակը: «9+1»-ի հայտարարության առաջին հետեւանքը ուժային գործողությունն էր Հայաստանի դեմ: Այդ փաստաթուղթը շատ վտանգավոր է, հանի որ հնարավորություն է բացում մյուսների նկատմամբ խտրականության համար: Մութալիբովը, որն ստորագրել է այդ համաձայնագիրը Ադրբեջանի կողմից, որպեսզի արդարացնի այդ քայլն իր հանրապետության հասարակական կարծիքի առջեւ, ուղղակիորեն ասել է, որ «փոխարենը» «ազատագրվել են» Ադրբեջանի տարածքի հայկական գյուղերը:

– Մութալիբովն ասել է նաեւ այն մասին, որ տեղի է ունենում «հայկական էքսպանսիա»: Ձեր մի քանի արտահայտությունները մամուլում «պատմական իրավունքների» մասին նույնպես կարելի է գնահատել որպես իր նախկին սահմաններում Մեծ Հայաստանը վերականգնելու մտադրություն: Դա որոշակի անհանգստություն է առաջացնում Թուրքիայում...

– Մենք արդեն պարզաբանել եմք մեր դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ, այդ թվում եւ «Նեզավիսիմայա Գազետայի» էջերում: Ես խոսել եմ ոչ թե «պատմական իրավունքների», այլ պատմական փաստերի մասին: Թուրքիայի հետ մենք տարածայնություններ ունենք պատմական փաստերի գնահատման հարցում: 1915 թվականի եւ դրան հաջորդած տարիների իրադարձությունները մենք գնահատում եմք որպես ցեղասպանություն: Թուրքերն այլ կերպ են մտածում: Բայց դա չպետք է ազդի մեր այսօրվա հարաբերությունների վրա: Դա ուրիշ հարց է:

Հայաստանը միշտ համարել է, որ Ռուսաստանն է մեր ժողովրդի անվտանգության եւ գոյատեւման երաշխավորը: Բայց վերջին երեք տարիների ընթացքում հայ ժողովուրդը դառնությամբ գիտակցեց, որ այդ երաշխիքներն այլեւս չկան: Սումգայիթի եւ Բաքվի ջարդերի ժամանակ ռուսական բանակը չպաշտպանեց խաղաղ բնակչությանը:

Բացի այդ, բացառված չէ, որ խորհրդային բանակն, անկախ մեր կամքից, հեռանա Անդրկովկասից: Նախադեպերը պատմության մեջ կան: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսական բանակը, հաղթականորեն պատերազմելով Թուրքիայի դեմ, հեռացավ Արեւմտյան Հայաստանից: Դա 1918 թվականին էր:

Մենք հասկանում ենք, որ կարճ ժամանակահատվածում չենք կարող ստեղծել ժամանակակից բանակ եւ ճզոր տնտեսություն, որպեսզի միայնակ դիմակայենք հնարավոր վտանգները: Հենց միայն այս պատճառով բոլոր խոսակցությունները «Հայկական էմպանսիայի սպառնալիքի» մասին մարուր շահարկումներ են:

Մեր, ինչպես ցանկացած պետության, անվտանգության գլխավոր երաշխիքը հարաբերությունների կարգավորումն է հարեւանների հետ: Ուստի մենք արտահայտեցինք մեր կամքը՝ փոխշահավետ, երկկողմ հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ: Այդ երկրի դեսպանն այցելեց Հայաստան: Ոչ ինչ բարդություններ կան, բայց գլխավորն այն բանի գիտակցումն է, որ երկու հարեւան ժողովուրդներն սկսել են հարաբերությունների հաստատումը: Արդեն կան բանավոր պայմանավորվածություններ՝ որ առաջ չեն հաշվի հաղաքական պայմաններ տնտեսական եւ մշակութային կապերի զարգացման համար: Ընդհակառակը, այդ կապերը հիմք կստեղծեն հաղաքական խնդիրների լուծման համար:

– Իսկ ինչպե՞ս եք պատրաստվում կառուցել Ձեր հարաբերությունները հյուսիսային հարեւանների հետ:

– Մենք երախտապարտ ենք Ռուսաստանի եւ մյուս հանրապետությունների ժողովրդավարական ուժերին, ակնկալում ենք նրանց աջակցությունը նաեւ առաջիկայում: Մեր կողմից մենք պատրաստ ենք կիսել մեր փորձը: Ինչպես արդեն ասացի, դատելով ըստ ամենայնի, մենք կդառնանք առաջին հանրապետությունը, որը դուրս կգա Խորհրդային Միությունից՝ պահպանելով բոլոր «ձեռկանությունները»:

Մենք մեկ ուրիշ գործում ևս առաջամարտիկներ դարձանք: Երբ կոմկուսը վերջնականապես կորցրեց իր դերը հանրապետության հաղաքական, տնտեսական եւ սոցիալական կյանքում, այդ կուսակցության դեկավարներն սկսեցին զբաղվել բիզնեսով՝ չանալով օգտագործել կուսակցության սեփականությունից հնարավոր ամեն ինչ՝ տպարաններ, հրատարակչություններ, բազմաթիվ շրեղ շինություններ, որ նրանք վարձակալության էին տալիս կոոպերատիվներին: Ժողովուրդը վրդովվում էր, որ 70 տարվա շահագործման շնորհիվ կուտակված ունեցվածքը շարունակում է ծառայել նույն այդ շահագործողներին: Մենք փորձեցինք կուսակցական գործիչներին բացատրել, որ անարդար ձեւով դիզած

այդ սեփականությունից կամավոր հրաժարվելը բխում է հենց իրենց շահերից: Նրանք չցանկացան: Այդժամ մենք հարկադրված էինք օրենք ընդունել նրանց այդ սեփականությունից զրկելու մասին: Մենք վստահ ենք, որ մյուս հանրապետությունները վաղ թե ուշ կգնան այդ նույն հանապարհով եւ ուրախ կլինենք նրանց տրամադրելու մեր մշակած օրենքի բնագիրը:

Թարգմանություն ռուսերենից: «Նեզավիսիմայա Գազետա» ("Независимая Газета"), 28 մայիսի, 1991 թ.:
*Հարցազրույցը՝ **Ալեքսանդր Բանգերսկու**:*
Հրատարակված՝ «Լեւոն Տեր-Պետրոսյանը Նախագահ Միտերանին ասաց, որ Ադրբեջանը գործում է Կրեմլի պլանով, Միտերանը խոստացավ չանտեսել այդ փաստը» վերնագրով:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ «ԼԸ ՄՈՆԴ» ԹԵՐԹԻՆ

(26 հուլիսի, 1991 թ.)

Հայաստանի Գհ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը մեզ հետ ունեցած իր հարցազրույցում հայտարարեց, որ իր ներկայությունը նոր միութենական պայմանագիր կնքելու գաղափարն ընդունող հանրապետությունների՝ հուլիսի 23-ի հանդիպմանը ոչ մի կերպ չի հակասում հայ ժողովրդի կամքին, որը «ցանկանում է նվաճել իր անկախությունը» («Լը Մոնդ», 25 հուլիսի): Նա ընդգծեց նաեւ Ադրբեջանի հետ բանակցությունների նոր գործելակերպի հույժ կարեւորությունը՝ Լեռնային Դարաբաղի հիմնահարցի առնչությամբ:

– Ըստ որոշ աղբյուրների, Նովո-Օգարյովոյում հուլիսի 23-ի հանդիպմանը Ձեր մասնակցելը հիմք է տվել պարոն Գորբաչովին եզրակացնելու, որ Հայաստանը պատրաստվում է ստորագրել միութենական պայմանագիրը: Արդյո՞ք դա այդպես է:

– Ամենեւին: Հայաստանը, որ ընտրել է անկախության հասնելու խորհրդային Սահմանադրությամբ սահմանված ուղին, կողմ է Միության կառուցվածքի հնարավոր բոլոր հանդիպումներին օժանդակելու սկզբունքին: Մինչդեռ ապրիլի 23-ի «9+1» առաջին հանդիպմանը չէին հրավիրվել այն վեց հանրապետությունները, որոնք հրաժարվել էին մասնակցել ԽՍՀՄ-ն իր հին տեսով պահպանելու վերաբերյալ հանրաքվեին: Երկրորդի ժամանակ, մայիսի 24-ին, ես գտնվում էի Ֆրանսիայում: Ինչ վերաբերում է երրորդին, որը կայացավ հունիսի 2-ին՝ ներկա չէի ի նշան բողոքի Լեռնային Ղարաբաղի հարցում Մոսկվայի դիրհորոշման կապակցությամբ:

Երբ ինձ հարցրին, թե ինչպիսի՞ն է Հայաստանի վերաբերմունքը միութենական պայմանագրի նկատմամբ, ասացի, որ անհնար է պատասխանել այդ հարցին՝ մինչեւ սեպտեմբերի 21-ին Հայաստանում

անցկացվելիք հանրաքվեն, որով պետք է պարզվի ժողովրդի վերաբերմունքն անկախությանը: Նշված հանդիպման ընթացքում Ուկրաինայի ներկայացուցիչների պատասխանը մոտավորապես նույնն էր. անհրաժեշտ է սպասել ևս երկու ամիս, մինչեւ հարցը դրվի իրենց խորհրդարանի քննարկմանը: Հայաստանի դեպքում, կարծում եմ, տարիմաստ պատասխան չի լինի. ժողովուրդն անկախություն է ուզում: Նա միաժամանակ կողմ է ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ տնտեսական կապերի պահպանմանն ու հետագա զարգացմանը: Ինչպես արդեն նշել եմ, օրենքով սահմանված կարգով անկախության ձգտող հանրապետությունների նկատմամբ անբարենպաստ առևտրական հարաբերությունների պարտադրման բաղաքականությունը, որը որդեգրել է Մոսկվան, կոպտորեն խախտում է հենց խորհրդային օրենքների դրույթները: Պարոն Բորիս Ելցինն, ի դեպ, այս հարցում միացավ իմ կարծիքին:

– Արդյո՞ք ճիշտ է, որ գնալով ավելանում է այն հայերի թիվը, ովքեր որոշակիորեն շահագրգռված են մնալու ԽՍՀՄ կազմում:

– Դա վերաբերում է միայն առանձին կուսակցությունների՝ կոմկուսին, դաշնակցությանը (Սփյուռքում հենց գործող կուսակցություն, որը պաշտոնապես հաստատվել է Հայաստանում) եւ ծննդով ղարաբաղցի այն հայերի խմբավորումներին, ովքեր այժմ ապրում են Հայաստանում: Նրանք ուղղակիորեն հայտարարում են, որ Հայաստանը պետք է ստորագրի միութենական պայմանագիրը, որպեսզի հնարավորություն ունենա լուծելու Լեռնային Ղարաբաղի վերամիավորման հարցը: Իսկ այդ տարածաշրջանի բնակիչները մայիսի 16-ին որոշում են ընդունել օգտագործել Ադրբեջանի հետ փոխզիջումների եւ բանակցությունների խաղարարտը: Առաջին պատվիրակությունը գործադիր կոմիտեի նորընտիր նախագահ Լեռնաոդ Պետրոսյանի գլխավորությամբ նոր է վերադարձել Բաքվից, որտեղ իր ծագրերն է ներկայացրել պրեզիդենտ Մութալիբովին: Հայաստանի խորհրդարանն, իր կողմից, հավանություն է տվել այս նախաձեռնությանը՝ հուլիսի 16-ին անցկացված էվեարկությամբ, որով ավարտվեցին երկօրյա թեժ բննարկումները: Լավ կլիներ, եթե միջազգային հասարակայնությունը ծանոթանար այն փաստաթղթերին, որոնք մենք ընդունել ենք: Դրանք հաստատում են մեր դիմորոշումը հօգուտ ազգերի ինքնորոշման իրավունքի, ընդունելով «խաղաղական լուծումների որոնման եւ ազգամիջյան հարցերի կարգավորման ընթացքում բռնության բացառման անհրաժեշտությունը»: Այն որոշման նախագիծը, ըստ որի Լեռնային Ղարաբաղի հայությունը «ազգային-ազատագրական պայքար» է սկսել, չարժանացավ խորհրդարանի հավանությանն ու մերժվեց:

– Ձեր հակառակորդները Ձեզ չե՞ն մեղադրում, արդյոք, որ, իշխանության գլուխ անցնելով, հրաժարվել եք նրանից, ինչի համար պայքար եք մղել երեք տարվա ընթացքում, այն նույն պահին, երբ խորհրդային բանակի օժանդակությամբ կատարվում է Ղարաբաղի հայության տեղահանությունը:

– Մեղադրում են, բայց եւ որեւէ այլ ծրագիր չեն ներկայացնում: Նովո-Օգարյովոյում ես ասացի, որ միակ ելքը, այսինքն՝ բանակցությունները, հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ է սատարել Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների դրական նախաձեռնությանը, պատրաստ մթնոլորտ ստեղծելով բանակցություններ վարելու համար եւ դադարեցնելով «անձնագրային ռեժիմի ստուգման գործողությունները»: Ինձ թվաց, որ իմ հայտարարությունը ապարդյուն չեղավ. Ադրբեջանի պրեզիդենտ Մութալիբովը որեւէ առարկություն չներկայացրեց, պարոն Խորաչովն արձանագրեց «դրական տեղաշարժերի երեւան գալը», իսկ պարոն Ելցինը խորհրդային պրեզիդենտից պահանջեց, որ վերջինս անձամբ միջամտի եւ անի ամեն ինչ՝ Լեռնային Ղարաբաղի հայության եւ ադրբեջանական իշխանությունների միջեւ բանակցությունների իրական այս հնարավորությունը բաց չթողնելու համար:

«Հայաստանի Հանրապետություն», 14 օգոստոսի, 1991 թ.:
Թարգմանություն ֆրանսերենից: «Լը Մոնդ» ("Le Monde"), 26 հուլիսի, 1991 թ.:
*Հարցազրույցը՝ **Սոֆի Շիհաբի:***
Հրատարակված՝ «Ժողովուրդն անկախություն է ուզում». հարցազրույց Հայաստանի Գհ նախագահի հետ» վերնագրով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

(26 օգոստոսի, 1991 թ.)

Հարգելի նախագահող,

Հարգելի պատգամավորներ,

Հարգելի հյուրեր,

ես ամբիոն եմ բարձրացել կարճ հայտարարություն անելու համար:

Իմ կարծիքով, ես դա ափսոսանքով եմ նշում, մենք հետամուտ ենք պահի գլխավոր խնդրից: Պահի գլխավոր խնդիրը տեղի ունեցածի գնահատականը չէ, հետեւանքները չեն: Պահի գլխավոր խնդիրը Կենտրոնի ճակատագիրն է, իշխանության միութենական մարմինների ճակատագիրը:

Ես կարծում եմ, հեղաշրջման հետեւանքով Կենտրոնն սպառեց իրեն: Կենտրոնը մեռած է, Կենտրոնն ինքնասպան եղավ: Եւ հիմա վերակենդանացնել այդ մեռյալին, նշանակում է վերստեղծել այն աղետի վտանգը, ինչ տեղի ունեցավ:

Գերագույն խորհրդում տիրող տրամադրություններից, ելույթներից ես այն տպավորությունն ստացա, որ Գերագույն խորհուրդը պատրաստ չէ լրջորեն քննարկել այդ խնդիրը: Այդ պատճառով ես իմ ելույթը հետաձգում եմ, ես ելույթ կունենամ համագումարի ժամանակ:

Շնորհակալություն ուշադրության համար:

«Հայաստանի Հանրապետություն», 27 օգոստոսի, 1991 թ.:

ԵԼՈՒՅԹ ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ 5-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(2 սեպտեմբերի, 1991 թ.)

Հարգելի պրեզիդենտ,

Հարգելի նախագահություն,

Հարգելի պատգամավորներ եւ հյուրեր,

Համագումարում ունենալիք իմ ելույթը նախօրոք էի պատրաստել, սակայն ԽՍՀՄ պրեզիդենտի եւ հանրապետությունների ղեկավարների արած հայտարարության լույսի տակ անիմաստ է դառնում դրա հրապարակումը, մանավանդ, որ այն մեծապես համահունչ է հայտարարության բովանդակությանը:

Ուստի եւ նպատակահարմար եմ գտնում բավարարվել ընթերկվող հայտարարությանն առնչվող միայն որոշ դիտողություններով:

Նախ եւ առաջ կուզենայի նշել, որ այդ հայտարարությամբ վերանում է Դեկաբրյան խորհրդի նստաշրջանում իմ ռեպլիկում արտահայտված տագնապը՝ միութենական իշխանության վաղուց արդեն իրենց լիակատար սնանկությունն ապացուցած հին կառուցվածքների վերակենդանացման վտանգի վերաբերյալ:

Պրեզիդենտը եւ հանրապետությունների ղեկավարները հիշտ դաս առան պետական հեղաշրջումից հետո ստեղծված նոր իրողությունից եւ իրենց վարկաբեկած հին կառուցվածքները վերականգնելու փորձի փոխարեն ընտրեցին իշխանության նոր, միջհանրապետական մարմինների ստեղծման ուղին: Դրանով իսկ արվում է առաջին եւ շատ նշանա-

կայի բայլը՝ միաձույլ ֆեդերատիվ համակարգից ազատ եւ իրավահավասար պետությունների ընկերակցության անցնելու ուղղությամբ:

Այս տեսակետից հատկապես կուզեի ձեր ուշադրությունը հրավիրել հայտարարության երկու կետի վրա:

Առաջինը վերաբերում է հանրապետությունների կողմից միութենական դաշնագրին իրենց մասնակցության ձեւի ազատ ընտրությանը: Այիրավ անդամությունից բացի նախատեսվում է ընկերակցող անդամ կամ դիտորդ անդամ լինելու հնարավորություն եւ այլն: Հասկանալի է, որ դաշնագիրն էլ չի լինի այն, ինչ մշակվել է Նովո-Օգարյովոյում: Հայաստանը, բնականաբար, միութենական դաշնագրի նկատմամբ իր տեսակետը կարտահայտի սեպտեմբերի 21-ի հանրահվեում[1]:

Իսկ երկրորդ կետը (հայտարարության մեջ 7-րդ), որի վրա ես կուզենայի հրավիրել ձեր ուշադրությունը, այն է, որ երաշխավորում է համաշխարհային ընկերակցության, Միավորված ազգերի կազմակերպության լիիրավ անդամներ դառնալու հանրապետությունների իրավունքը: Դրանով իսկ հանրապետությունները հայտնվում են միջազգային իրավունքի լիակատար պաշտպանության ներքո:

Ես վստահ եմ, որ այս առումով համագումարի միջնորդությունը կարժանանա Արեւմուտքի բազմաթիվ շրջանների դրական արձագանքին, որոնք շահագրգռված են Խորհրդային Միությունում սոցիալ-բազմաբնական լարվածության վերացմամբ: Իսկ դա մեծապես կօգնի այդ լարվածության վերացմանը:

Հայտարարությունը ճստակ պատասխան է տալիս նաեւ երկու կարեւորագույն հարցերի, որոնք լրջորեն մտահոգում են թե՛ ԽՍՀՄ ժողովուրդներին, եւ թե՛ համաշխարհային հանրությանը: Դա նախ եւ առաջ զինված ուժերի եւ ռազմաստրատեգիական տարածքի միասնության պահպանումն է՝ այն անհրաժեշտաբար ներդաշնակելով հանրապետությունների շահերին, անպայման անցկացնելով արմատական բարեփոխումներ, որոնք արդեն մշակվում են ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունում (հենց նոր ես ստացա բարեփոխումների նախագծի ծրարը՝ պաշտպանության նախարար Շապոշնիկովի ստորագրությամբ): Եւ երկրորդ, դա տնտեսական տարածքի միասնության պահպանումն է, որով շահագրգռված են ոչ միայն միութենական դաշնագրի ստորագրման ցանկություն ունեցող հանրապետությունները, այլեւ նրանք, որոնք պատրաստ են դուրս գալ ԽՍՀՄ կազմից: Ընդսմին, բնականաբար, պետք է մշակվեն հանրապետությունների ներքին շուկայի պաշտպանության մեխանիզմներ: Այս կապակցությամբ, ուզում եմ պաշտպանել հանրապետությունների ներկայացուցիչների՝ Տնտեսական ընկերակցություն ստեղծելու մասին կոնվենցիայի նախագիծ պատրաստելու (ակադեմիկոս Շատալինի ղեկավարությամբ) նախաձեռնությունը:

Այնուամենայնիվ՝ նշելով հռչակված հայտարարության հրատապությունն ու կառուցողականությունը, դրա հետ մեկտեղ պարտք եմ համարում սկզբունքային անհամաձայնություն հայտնել դրա որոշ դրույթներին:

Առաջին (այդ մասին արդեն խոսեց Ուկրաինայի ներկայացուցիչը, եւ ես նրա հետ լիովին համաձայն եմ). միութենական Սահմանադրության եւ միութենական օրենսդրության ստեղծումը հակասում է Ազատ պետությունների ընկերակցության գաղափարին:

Եւ երկրորդ. հայտարարության մեջ երաշխավորված չեն իրավահավասար կազմավորումների իրավունքները: Այս կապակցությամբ առաջարկում եմ հայտարարության 6-րդ կետն ընդունել հետեւյալ խմբագրությամբ.

«Ընդունել հռչակագիր, որը կերաշխավորի հանրապետությունների իրավունքներն ու ազատությունները, անկախ նրանց ազգությունից, բնակության վայրից, կուսակցական պատկանելությունից եւ հանրային հայացքներից, ինչպես նաեւ՝ ազգային փոխհամասնությունների եւ իրավահավասար կազմավորումների իրավունքները», այսինքն՝ ավելացնել վերջին երկու բառը, այնուհետեւ ավելի կոնկրետ՝ «իրավահավասար մարզերի կարգավիճակը բարձրացնել իրավահավասար հանրապետությունների մակարդակի, երաշխավորել իրավահավասար հանրապետությունների իրավունքները ընկերակցության անդամների իրավահավասարության շրջանակներում»:

Նշելով ընդունվող հայտարարության անկատարությունը, դրա հետ մեկտեղ պետք է կրկին խոստովանեմ, որ այն արմատական

[1] *Տպագրում՝ «սեպտեմբերի 21-ի հանրահվեից հետո», բայց հետագրի ուղղում ենք՝ «սեպտեմբերի 21-ի հանրահվեում» («на референдуме 21 сентября»):*

հայլ է նոր հաստատակության ստեղծման ուղղությամբ: Ուստի եւ ձեզ կոչ եմ անում պաշտպանել այն՝ խուսափելու համար հնարավոր նոր համաղետներից, եւ ճանուն իրոք ազատ պետությունների ընկերակցության կառուցման:

«Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991 թ.:
Թարգմանություն ռուսերենից:
ՀՀԱՆԱ 28/02.09.91: Բնագիր: Ինքնագիր: Ռուսերեն:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ[1]

(26 սեպտեմբերի, 1991 թ.)

Քննարկումն ի՞նչ ցույց տվեց: Կոնկրետությունը, կոնկրետ հարցի քննարկումը միշտ հանգեցնում է հաղաքական դիրքորոշումների բացահայտման եւ գաղափարների հստակեցման: Դա անխուսափելի է եւ անհրաժեշտ: Ես չեմ ուզում անդրադառնալ, մեղմ ասած, այն կեղծ հայտարարություններին, որոնք արվում են ժողովրդի անունից կամ հանրաքվեի արդյունքների ոգեւորության ազդեցությամբ[2]: Հանրաքվեն կ՚վերածվում է շահարկման առարկայի, մեր ժողովրդի միասնության այս դրսեւորմանը տրվում են ամենեւին ոչ համարժեք բացատրություններ:

Խոսում են ժողովրդի անունից, բայց ինձ թվում է, թե այդ մարդիկ պարզապես տեղյակ չեն ժողովրդի կարծիքին: Եթե ժողովուրդն իսկապես այսպիսի ոգեւորությամբ, տոնախմբությամբ էվեարկեց հանրաքվեի հարցի օգտին, ապա առաջին հերթին այն պատճառով, որ տեսավ Խորհրդային Միությունում տեղի ունեցող նոր փոփոխությունների պայմաններում անկախության գնալու անարյուն, ապահով, երաշխավորված, ատաիճանական հանապարհը: Եթե դեմ ժողովրդին առաջարկեիր անկախության լիովական կամ վրացական ուղին, ապա նման արդյունք երբեմ չէիր ստանա: Ժողովուրդը տեղյակ էր, որ մեր ղեկավարությունը գնալու է այս հանապարհով. իմ ելույթը Մոսկվայում, ժողովրդա-

[1] *Ելույթը եղել է բանավոր:*

[2] *Որոշ պատգամավորներ պահանջում էին անմիջապես հայտարարել Հայաստանի անկախությունը եւ խզել բոլոր կապերը Խորհրդային Միության հետ:*

կան պատգամավորների համագումարում մատնանշում էր հենց այդ ուղին: Եւ այստեղ արտահայտված այն կարծիքները, թե մենք դավանանում ենք հանրահվեի արդյունքներին, պարզ կեղծարարություն է: Դրա համար ես այսօր հարկ եմ համարում հատակ շարադրել իմ տեսակետը մեր ապագա հաղաքականության վերաբերյալ:

Մենք ի՞նչ ենք ուզում մինչեւ հանրահվեն եւ արդյո՞ք վատ բան ենք ուզում:

Մենք ուզում ենք դառնալ եւրոպական պետությունների՝ Ֆրանսիայի, Բելգիայի, Իսպանիայի նման անկախ պետություն, հանդիսանալ միջազգային իրավունքի սուբյեկտ, այսինքն՝ հասնել լիակատար հաղաքական անկախության, դրա հետ մեկտեղ գտնել ներդաշնակություն մեր հարեւանների հետ, ստեղծել ժողովրդավարական պետությունների այնպիսի համագործակցություն, որն առավել կերպով կապահովեր եւ՛ մեր անկախությունը, եւ՛ մեր ժողովրդի բարեկեցությունն ու երջանկությունը:

Սա՞ չէր մեր ուզածը, ա՞յս խնդիրները չէին արտահայտվել մեր բազմաթիվ ելույթներում ու հոդվածներում:

Մեզ համար իդեալ էր՝ Խորհրդային Միությունը տեսնել որպես այնպիսի ազատ պետությունների մի համագործակցություն, ինչպիսին եւրոպական պետությունների համագործակցությունն է: Չպետք է մոռանալ, որ երեք տարի շարունակ մեր ժողովրդի հսկայական ջանքերի շնորհիվ եւ զրկանքների գնով մենք ամեն օր ընդլայնում ենք մեր ինքնուրույնությունը, մեր անկախությունը: Ես ընդգծում եմ՝ ամե՛ն օր, թե՛ ժողովրդավարական ազատությունների բնագավառում, թե՛ տնտեսության մեջ (նկատի ունեմ մեր սեփականաշնորհման բարեփոխումը, որ ոչ մի հանրապետություն չի կատարել), թե՛ զինակոչիկների ծառայության հարցում: Մենք փաստացի իսկապես ամեն օր գնում ենք դեպի անկախություն, ամեն օր ընդլայնելով մեր ազատությունը, մեր ինքնուրույնությունը եւ անկախությունը:

Այսօր գործընթացներն ավելի արագացել են, եւ մենք հնարավորություն ունենք ոչ թե օրեցօր, այլ արդեն ժամ առ ժամ ընդարձակելու մեր անկախությունը: Դուք ինքներդ էլ տեսնում եք, թե ինչ թափով են ընթանում գործընթացները: Երբ այստեղ խոսում են համագումարի, նրա որոշումների, Սահմանադրության, մեր ընդունելիք որոշումների մասին, դրանք դիտելով որպես կաշկանդող դոգմաներ, ես դա համարում եմ

երեսպաշտություն կամ իրական գործընթացները չհասկանալու արդյունք: Ինձ համար նման թղթերը, որոշումները, օրենքները ոչ մի նշանակություն չունեն, հաճի որ առաջնայինը, կարեւորը գործընթացներն են: Մենք պետք է հետեւենք ոչ թե օրենսդրական ձեւակերպումներին, այլ գործընթացներին: Իսկ գործընթացները, ինչպես ասացի, անկախ օրենսդրական կապանքներից, ակնհայտորեն տանում են հանրապետությունների անկախության անընդհատ աճին: Սա է, ուրիշ գործընթաց Խորհրդային Միությունում գոյություն չունի: Եւ եթե դա դանդաղ էր ընթանում մինչեւ հեղաշրջումը, այժմ դա անհամեմատ արագացել է:

Այժմ ես ամբողջ ժողովրդին եմ դիմում, եւ սա թող համարվի իմ հաղաքական պլատֆորմը. իմ նպատակն է Հայաստանը տեսնել եւրոպական տիպի ազատ պետությունների մի համագործակցության մեջ: Այդպիսի համագործակցություն կարելի է ստեղծել երկու հանապարհով: Առաջին հանապարհով ընթացավ Եւրոպան, երբ բացարձակ անկախ պետություններ, նկատի ունենալով իրենց փոխադարձ շահերը, աստիճանաբար ստեղծեցին մի կայուն համագործակցություն, ընդհանուր տնտեսական շուկա, որը միտումներ ունի ավելի ինտեգրացվելու: Գուցե հետավոր ապագայում հնարավոր լինի նույնիսկ ունիտար պետություն ստեղծել: Բայց չպետք է մոռանալ, որ Եւրոպայում այս հանապարհին նախորդել էր մի դժոխային շրջան: Եւրոպան անցավ աճավոր ավերիչ պատերազմների ժամանակաշրջանով՝ մինչեւ հասավ աճա այդ մակարդակին: Ես նկատի չունեմ նապոլեոնյան արշավանքները, դա դեռեւս միջնադար էր: Նոր շրջանում Եւրոպայում տեղի ունեցավ երեք ավերիչ պատերազմ: Նկատի ունեմ 1870 թվականը, Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմները: Այս պատերազմները բացատրվում են հենց ազգ-պետությունների ձեւավորման գործընթացով: Երբ ազգ-պետությունները վերջնականապես ձեւավորվեցին, երբ բոլոր հարցերը պատերազմներով լուծվեցին, դրանից հետո է, որ պետությունների ու ժողովուրդները նպատակահարմար գտան մտածել հարաբերությունների այլ ձեւերի մասին:

Արդյո՞ք մեզ համար էլ պատահիր է նշված հանապարհը, այսինքն՝ փչրել այս Միությունը, տեղավորվել սեփական տներում, սկսել պատերազմներ՝ թե՛ հաղաքացիական, եւ թե՛ հաղաքական, անցնել արյան, հրի ու սրի, դժոխքի միջով, որպեսզի մենք նորից մի օր հասնենք մի

մակարդակի, ինչը մենք այսօր հնարավորություն ունենք ստեղծել՝ առանց ենթարկվելու նման փոռնությունների:

Եւրոպան, ինչպես ասացի, համագործակցության հասավ ա՛յս նանապարհով, բայց արդյո՞ք դա է միակ ճանապարհը:

Ելնելով մեր իրականությունից, Խորհրդային Միության՝ այս ունիտար, տոտալիտար, դժոխային (ինչ անուն ուզում եմ տվեմ) պետության իրականությունից, պետք է հասկանալ, որ սա մի պատմական, հաղաքական, տնտեսական եւ, եթե կուզե՞ նաեւ հոգեւոր միասնություն է, առարկայական իրողություն: Սա կա, սրանից չենք կարող փախչել: Եւ արդյո՞ք հնարավոր չէ այն կացությանը, որին Եւրոպան հասավ ներքինից, հասնել վերեւից: Այսինքն, հանդելով այս ունիտար, տոտալիտար համակարգը, աստիճանաբար մոտենալ ահա այն մակարդակին, որին հասել է Եւրոպան:

Հնարավո՞ր է արդյոք, թե՞ ոչ:

Եթե բոլորը փախչեն իրենց տներ, դա հնարավոր չի լինի, եւ տեսնում ենք դրա հետեւանքները. փախչողներն արդեն պատերազմի մեջ են: Վրաստանում հաղաքացիական պատերազմ է, Մոլդովայում ազգամիջյան: Ես մեր վիճակը շատ ներչոությամբ պատկերացնում եմ. եթե մենք էլ կատարենք նույն ընտրությունը, որ կատարեցին Մոլդովան կամ Վրաստանը, ապա չենք կարող խոսափել Ադրբեջանի հետ պատերազմից:

Եթե մենք վստահ ենք մեր ուժերին, այն իմաստով, որ կարող ենք լրիվ խզել բոլոր կապերը Խորհրդային Միության հետ եւ ի վիճակի կլինենք ապահովել մեզ թե՛ սնունդով, թե՛ վառելիքով, թե՛ զենքով ու զինամթերքով ու շահել պատերազմը մեր հարեւանների դեմ՝ խնդրեմ, ընտրենք այս ճանապարհը, եթե վստահ ենք:

Բայց բոլ շուռափույթ անկախության ջատագովները մեզ տան այդ երաշխիքները: Կարծում եմ, մեր ժողովուրդն այնման խմաստուն կգտնվի, որ կգնահատի այդ երաշխիքները եւ կգնա այդ մարդկանց ետեւից: Մենք այստեղ իրար խաբելու համար չենք հավաքվել, ինչպես ասում է պատգամավոր Հակոբ Հակոբյանը: Թող յուրաքանչյուրը ներկայացնի իր ծրագիրը, իր երաշխիքները, իր տեսակետները, եւ ես հավատացած եմ, որ մեր ժողովուրդը ճիշտ ընտրություն կկատարի: Ինձ համար առնվազն ակնհայտ են այն ուղու արհավիրքները, որն առաջարկում են անհապաղ անկախության կողմնակիցները:

Հիմա մյուս ուղին: Արդյո՞ք հնարավոր է այս տոտալիտար պետությունը հանդելով վերեւից (թեեւ՝ արտաքուստ վերեւից, որովհետեւ ըստ էության դա արվում է ներքեւից՝ հանրապետությունների ջանքերով), վերացնել Կենտրոնի ռեալ հաղաքական իշխանությունը: Ես կարծում եմ՝ դա հնարավոր է, այո՛ հնարավոր է հանդել այս տոտալիտար պետությունը: Բայց ես դա համարում եմ ոչ թե հանդիչ, այլ կառուցողական գործունեություն: Դա կառուցողական գործընթաց է, հանի որ, կառույցները հանդելով, մենք, ըստ էության, ստեղծում ենք պետությունների մի նոր համագործակցություն: Եւ այժմ պահանջել Հայաստանից, որ չմասնակցի ազատ պետությունների համագործակցություն ստեղծելու այդ կառուցողական գործընթացին, կարծում եմ, մեծ սխալ կլինի, եւ Հայաստանը մեծապես կտուժի դրանից:

Ո՞ւմ վրա եմ հույս դնում: Մենք Լիտվա չենք, մենք Լատվիա չենք:

Ինչո՞ւ ենք մոռանում Արցախի հարցը: Ո՞վ է լուծելու Արցախի հարցը: Ես չեմ ասում, որ ելցինը կամ Նազարբաեւը կլուծեն, ո՛չ, ես այդման միամիտ չեմ, սակայն, մասնակցելով այդ կառուցողական պրոցեսներին, մենք գոնե կարող ենք ինչ-որ պատասխանատվությունների տակ դնել մեր գործընկերներին: Բայց եթե մենք մեզ վրա որեւէ պատասխանատվություն չենք վերցնում այդ գործընթացների առնչությամբ, ապա ինչո՞ւ ելցինը եւ Նազարբաեւը, կամ որեւէ մեկը, պիտի պատասխանատվություն վերցնեն մեր նկատմամբ: Հանուն ինչի՞: Նույնիսկ անհատականությունը եւ վառելիքը միջազգային գներով մեզ չեն վաճառի, որովհետեւ առեւտուրը նույնպես հաղաքականություն է:

Նորից եմ կրկնում. մեր մասնակցությունը պատասխանատու է բոլոր միջհանրապետական կառույցներում, այն էլ՝ լիարժեք մասնակցությունը: Ինձ համար հստակ է մեր բռնած հաղաքական ուղին, հստակ է նաեւ, թե ուր ենք գնում:

Կարող են հարցնել, թե՝ ի՞նչ երաշխիքներ կան, որ այդ ուղին կապահովի մեր լիակատար հաղաքական անկախությունը: Երբ տեսնենք, որ երաշխիքներ չկան, հենց մեր պատճառն է, որպես խորհրդարան, որպես հաղաքական գործիչներ, վերանայել, շտկել մեր դիրքորոշումը: Թե՞ մենք կարծում ենք, որ յուրաքանչյուր որոշում ընդունելիս դառնում ենք այդ որոշման գերին: Այդ դեպքում պետք է ցանկացած որոշումից հետո ցրել խորհրդարանը: Խորհրդարանը հենց նրա համար է, որ կարողանա

արձագանգել ժամանակի փոփոխություններին եւ համապատասխան նշգրտումների ենթարկի իր քաղաքական գիծը:

Ուրեմն, քաղաքական տեսակետից մեր առաջնահերթ գործը պիտի լինի որոնք հնարավոր է շուտ, բոլոր միջոցներով ձեռք բերել մեր քաղաքական անկախությունը, դառնալ միջազգային իրավունքի սուբյեկտ, ՄԱԿ-ի անդամ, եւ այդ կարգավիճակով մասնակցել վերոհիշյալ կառուցողական գործընթացներին: Ես հարյուր տոկոսով վստահ եմ նաեւ, որ Հայաստանի անկախության ճանաչումը, միջազգային իրավունքի սուբյեկտ դառնալը շատ ավելի հեշտ կլինի կառուցողական այդ աշխատանքին մասնակցելով, քան դրանից հրաժարվելու դեպքում: Որովհետեւ դրանով Հայաստանը շանս է ձեռք բերում կրկին դառնալ Խորհրդային Միության առաջադիմական գործընթացների լիդեր՝ ամրապնդելով քաղաքական գործընկերոջ իր ծանրակշիռ վարկը: Հայաստանը մի ժամանակ Խորհրդային Միության ժողովրդավարական գործընթացների լիդերն էր, եւ դա մեզ մեծագույն քաղաքական վարկ տվեց, դա նաեւ մեր անկախությունը ճանաչելու կարեւոր գրավականներից է: Հիմա, մասնակցելով այս առաջադիմական գործընթացներին, Հայաստանը կրկին դառնում է դրանց լիդեր, ինչը, վստահ եմ, ըմբռնումով կընկալվի ողջ աշխարհի կողմից: Դրանով Հայաստանն օրինակ է տալիս Արեւմուտքին եւ ԽՍՀՄ-ին, թե ինչպես կարելի է մի կողմից՝ իսկապես դառնալ անկախ պետություն, մյուս կողմից՝ մասնակցել կառուցողական գործընթացներին եւ թույլ չտալ, որ այս դժոխային պետությունը փլուզվի եւ նրա փլատակների տակ վտանգվի ողջ մարդկությունը: Հիմա ամբողջ աշխարհի եւ մեր ժողովրդի մտահոգությունը պետք է լինի փոփոխությունները դարձնել անարյուն, հանդարտ, քաղաքակիրթ: Սա ավելի հետանկարային զարգացում է, քան կայսրության ամմիջական փլուզումը:

Ահա իմ տեսակետը, որ պարտավոր էի ներկայացնել ժողովրդին հոկտեմբերի 16-ի նախագահական ընտրությունից առաջ, որպեսզի նա հնարավորություն ունենար ճիշտ կողմնորոշվելու: Սա՛ է իմ դիրքորոշումը, սա՛ է լինելու իմ քաղաքականությունը, եւ ես պայքարելու եմ անկախության այս ուղեգծի իրականացման համար:

Հոկտեմբերի 16-ի ընտրությունը, բացի Նախագահի անձի նկատմամբ արտահայտած վերաբերմունքից, անխուսափելիորեն պետք է դառնա նաեւ յուրատեսակ հանրաքվե՝ թեկնածուների քաղաքական

ուղեգծի նկատմամբ: Ահա այդ հանրաքվեով կպարզվի, թե ում քաղաքական ուղեգծին է համամասյն ժողովուրդը եւ ում է տալիս իր վստահության քվեն: Այստեղ անձերը ոչ մի նշանակություն չունեն:

Ես ստիպված էի եւս մեկ անգամ հստակեցնել իմ դիրքորոշումը, որպեսզի այսուհետեւ ոչ մի դեմագոգիայի առիթ չտամ:

ՀՀԱՆԱ, 12/26.09.91: Պաշտոնական տղագրություն: Մեքենագիր: «Հայաստանի Հանրապետություն», 28 սեպտեմբերի, 1991 թ.:

ԽՈՍՔ՝ ՊԱՏՄԱՀԱՅՐ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» 1500-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏՈՒՄ

(4 հոկտեմբերի, 1991 թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Ինձ համար մի փոքր արդեն անսովոր, բայց միաժամանակ հաճելի ասիք է չորսամյա ընդմիջումից հետո հրապարակավ հանդես գալ գիտամշակութային բնույթի ելույթով, ամենևին չհավակնելով, իհարկե, տալ հանդիսության առարկայի համակողմանի գիտական գնահատականը, որ բացառապես մասնագետ-գիտնականների գործն է, եւ այդ պատվավոր գործը, ինչպես ցույց տվեցին հոբելյանին նվիրված փարիզյան եւ երեւանյան գիտաժողովները, հրաշք կատարում են ամենայն բարեխղճությամբ եւ հմտությամբ:

Այդուհանդերձ, հայ միջնադարյան մշակույթի համեստ հետազոտողի իրավասությամբ հարկ եմ համարում ընդհանուր գծերով ներկայացնել խնդրո առարկա բացառիկ երեւույթի դերն ու նշանակությունը՝ նկատի ունենալով ժամանակների առաջադեմական կապը եւ ժողովրդի հավաքական հիշողության խորհրդին օրինաչափությունները, հետու մնալով, սակայն, բացառնակ եզրահանգումներ հաստատելու սին գայթակղությունից:

Խորապես խորհրդանշական է, որ հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքարի այս վճռական պահին, երբ միասնաբար դնում է անկախ պետականության վերականգնման հաստատուն հիմքերը, հանդիսավորապես տոնում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության»

1500-ամյա հոբելյանը, խորհրդանշական՝ նախ եւ առաջ այն առումով, որ հայ իրականության մեջ Խորենացին է ազգային պետականության առաջին եւ միջնադարում չգերազանցված գաղափարախոսը:

Նրան է պատկանում ազգի՝ որպես հոգեւոր-մշակութային եւ աշխարհաքաղաքական միավորի ըմբռնման, ինչպես նաեւ պատմական իրավունքի ու ժառանգականության՝ որպես պետության իրավազորության հիմնավորման պատիվը՝ գաղափարներ, որոնք հետագայում համարյա առանց բացառության դրսեւորվեցին բոլոր ժամանակակից ազգ-պետությունների առաջացման գործընթացում եւ այսօր էլ քաղաքական նկատառումներով դրսեւորվում են նոր կազմավորվող ազգային պետություններում:

Դրանով թեեւ պատմությունը վերածվում է քաղաքականության ծառայի, եւ խստապահանջ գիտնականների, ինչպես օրինակ՝ ամերիկացի Ֆրայի, կողմից դա դիտվում է որպես արդի պատմագիտության վարկազրկման երեւույթ, եւ նույն չափանիշը երբեմն տարածվում է նաեւ միջնադարյան պատմագրության, այդ թվում Խորենացու վրա, այնուամենայնիվ, հասարակական մտքի ըմբռնման տեսակետից անցյալի պատմագիտության քաղաքական միտվածությունը պետք է դիտել որպես հետազոտության արժանի նույնիսկ ավելի հետաքրքրական առարկա, քան իրադարձությունների անաչառ շարադրանքը:

Խորենացին, այսպիսով, որոշակի հասարակական մտածողության եւ քաղաքական միտվածության կրող է, որ ամենեւին չի նսեմացնում նրա գործի արժեքը, այլ ընդհակառակը, անսահմանորեն բարձրացնում այն: Եւ այստեղ կարեւոր չէ, թե որ նախարարական տոհմի հետ է Խորենացին կապում Հայոց պետականության վերականգնման առաքելությունը, կարեւորն ու հիմնականն այն է, որ նա հայ ժողովրդի կեցությունը չի պատկերացնում առանց ազգային պետականության գոյության:

Խորենացու երկի երկրորդ նկատառելի առանձնահատկությունն այն է, որ Հայոց պատմությունը հազարամյակների կտրվածքով ներկայացվում է համաշխարհային պատմության կոնտեքստում: Հասանելի աղբյուրների ընձեռած հնարավորությունների շրջանակում Խորենացին իր դարի համար ամենափայլուն կերպով լուծել է այս դժվարագույն խնդիրը՝ խնդիր, որ միեւնույն հրատապությամբ կանգնած է նաեւ արդի հայ պատմագիտության առջեւ, եւ դժվար է ասել, որ այն վերջնա-

կանապես հաղթահարված է: Այսպիսով, նաեւ այս առումով Խորենացու «Հայոց պատմությունը» շարունակում է պահպանել իր այժմեականությունը:

Մեթոդաբանական տեսակետից Խորենացին հարում է Եւսեբիոս Կեսարացու հաստատած պատմագիտական դպրոցին, որի երկու կարեւորագույն արգասիքները՝ Կեսարացու «Քրոնիկոնը» եւ «Եկեղեցական պատմությունը», դեռեւս 5-րդ դարում թարգմանվել էին հայերեն: Պատմագրական այդ ավանդույթը, որ համահունչ է նաեւ արդի պատմագիտության կիրառած սկզբունքներին, ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի բնորոշմամբ՝ կարելի է անվանել աղբյուրների համադրման, քննության, մշակման եւ համակարգման մեթոդ: Խորենացին, հետեւապես, պատմության նկատմամբ հանդես է բերում ոչ թե կողմնակի դիտողի, այլ համակարգավորող գիտնականի քննադատական մոտեցում:

Ժամանակակից պատմաբանն, իհարկե, Խորենացու համեմատ ունի այն անժխտելի առավելությունը, որ տիրապետում է հին աշխարհի պատմությանը վերաբերող շատ ավելի բազմազան եւ մեծաքիվ աղբյուրների, որոնք դուրս են գտնվել պատմագրի հասանելիության սահմաններից: Դրա հետ մեկտեղ Խորենացին օգտագործել է աղբյուրներ, որոնց մասին հայտնի է միայն իր երկասիրությունից: Դա առաջին հերթին վերաբերում է հին հայոց առասպելաբանությանն ու վիպասանությանը, ինչպես նաեւ հույն եւ ասորի հեղինակների մի շարք պատմական աշխատությունների:

Հատկանշականն այն է, որ Խորենացու օգտագործած կորած աղբյուրների հավաստիությունն ապացուցվում է արդի հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվող նյութական մշակույթի հուշարձանների՝ հունարեն եւ արամերեն արձանագրությունների տվյալներով: Այս առումով գիտնականների ուշադրությունն ուզում եմ հրավիրել հետեւյալ փաստի վրա:

Արեւելյան Հայաստանի տարածքում հայտնաբերված՝ Արտաշես Առաջինի սահմանաքարերի մի քանի տողանոց արամերեն արձանագրությունների հիման վրա 5-րդ, առավել եւս հետագա դարերում, նույնիսկ արձանագրություններն այդ ժամանակ վերծանելու դեպքում, որ բնական է, հնարավոր չէր ըմբռնել Հայոց թագավորի իրականացրած հողային բարեփոխման էությունը: Եւ միայն Խորենացու «Պատմությունն»

է, որ տալիս է հարցի սպառիչ պատասխանը: Սահմանամարտերի հաստատումը բացատրվում է նրանով, որ Հայաստանի վերագրավված հյուսիս-արեւելյան նահանգներում տեղի էր ունենում հարեւան երկրներից գաղթեցված ժողովուրդների բնակեցում, եւ այդ պատճառով հարկ էր առաջացել ճշտել նոր ստեղծվող բնակավայրերի սահմանները: Եւ այն փաստը, որ, ինչպես նշվեց, տվյալ բացատրությունը հնարավոր չէր քաղել վերոհիշյալ արամերեն արձանագրություններից՝ նույնիսկ եթե միջնադարի գիտուններն ի վիճակի լինեին դրանք վերծանելու, անառարկելիորեն ապացուցում է, որ Խորենացին այստեղ իսկապես օգտագործել է գրավոր աղբյուր, որը, դժբախտաբար, մեզ չի հասել:

Խորենացու՝ որպես միջնադարի խոշորագույն մտածողի նշանակալից ըմբռնումը պետք է համարել նաեւ նրա շեշտված ձգտումը՝ հայ մշակույթն առանց միջնորդվածության կապելու ժամանակի ամենազարգացած ժողովուրդների մշակույթների հետ, մի իրողություն, որը հետագայում դարձավ հայ մշակույթի զարգացման անսասան տրամաբանությունը: 5-ից մինչեւ 19-րդ դարերը հայ մշակույթը հավատարիմ մնաց այդ սկզբունքին՝ անմիջականորեն շփվելով բոլոր դարաշրջանների ամենաբարձր քաղաքակրթությունների հետ: Տրամաբանությունը խախտվեց միայն 20-րդ դարում, երբ Հայաստանը, պարագաների հարկադրմամբ, արդի քաղաքակրթության նվաճումներին սկսեց հաղորդակցվել միջնորդավորված ճանապարհով, որն անկասկած դանդաղեցրեց հայ մշակույթի զարգացման ընթացքը: Ուստի, ազգային զարթոնքի նոր պայմաններում մեր առաջնահերթ խնդիրներից է՝ վերադառնալ մեր մշակույթի զարգացման հարազատ տրամաբանությանը:

Կարելի է անդրադառնալ, իհարկե, նաեւ Խորենացու կոթողային երկը բնութագրող ու արժեքավորող բազմաթիվ այլ հատկանիշների, սակայն ելույթիս վերջում ես կբավարարվեմ միայն եւս մեկ խորենացիական դասի մատնանշումով:

Դա ազգի արժանապատվության եւ սեփական կարողությունների սառը գնահատման այն սահմանումն է, որ Պատմահայրը տվել է իր հանրահայտ ասույթում. «Թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի»:

Փորձեմ թարգմանել. «Թեեւ փոքր ազգ ենք, եւ շատ փոքրաթիվ սահմանված, եւ թույլ կարողությամբ, եւ մեր թագավորությունը բազմիցս նվաճված, սակայն բազում սխրանքներ գործվել են եւ մեր աշխարհում, որոնք արժանի են գրավոր հիշատակի»:

Ազգային արժանապատվության եւ սեփական ուժերի գնահատման հիրավի օրինակելի եւ իրապաշտական գիտակցություն, որ այսօր անչափ անհրաժեշտ է մեր ժողովրդին՝ Հայոց անկախ պետականության վերականգնման ճանապարհին ակնկալվող դժվարություններն ու գրկանքները հաղթահարելու համար:

«Հայաստանի Հանրապետություն», 5 հոկտեմբերի, 1991 թ.:
Հրատարակված՝ «Խորենացին ազգային պետության առաջին գաղափարախոսն է» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/04.10.91 թ.: Բնագիր: Ինքնագիր:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՀԱՅՔ» ԹԵՐԹԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

(23 հոկտեմբերի, 1991 թ.)

– Մեծարգո պարոն Տեր-Պետրոսյան, շնորհավորում եմ Ձեզ՝ նախագահական ընտրություններում հաղթելու կապակցությամբ: Որպես Հայաստանի առաջին Նախագահ, որն ընտրվել է համընդհանուր ուղղակի ընտրություններով, ի՞նչ լավ բան կասեք մեր ժողովրդին:

– Նախ ես պետք է երեւո՛ւյթը գնահատեմ, ապա միայն անձնավորեմ: Այն փաստը, որ Հայաստանում արմատավորում են հաղթակիրթ աշխարհին հատուկ ժողովրդավարական ավանդույթներ, արդեն պետք է համարել մեր ժողովրդի վերջին երեխուկես տարիների ազգային-ազատագրական պայքարի կարեւորագույն ձեռնումներից մեկը: Ավելի հարմար եղանակ՝ իշխանության, պետության գործերին ժողովրդի մասնակցելու, հան ուղղակի ընտրություններն են, մարդկությունն առայժմ չի գտել: Եւ ահա այս լավագույն եղանակը մեր ժողովուրդն արդեն երկու անգամ հաջողությամբ կիրառել է. նկատի ունեմ հանրաքվեն եւ հոկտեմբերի 16-ը: Իսկ եթե անձնավորեմ, խորին շնորհակալությունս եմ հայտնելու մեր ժողովրդին, որի մեծամասնությունն ինձ վստահեց այս չափազանց պատասխանատու պաշտոնը: Եւ ընտրությունից հետո առաջին զգացումս էլ հենց պատասխանատվության մեծացումն էր: Որպես Գերագույն խորհրդի նախագահ, ես, կարելի է ասել, մի կոլեկտիվ մարմնի վարիչն էի ընդամենը եւ կիսում էի պատասխանատվությունը հավասարապես բոլոր պատգամավորների հետ: Մինչդեռ այստեղ իշխանությունն անձնավորվում է մեկ մարդու մեջ, ինչը բոլորովին տար-

բեր մի որակ է: Ժողովրդին կրկնակի շնորհակալ եմ այն առումով, որ նա ինձ, ի տարբերություն մրցակիցներիս, պետք է ընտրեր եւ ընտրեց ոչ թե խոստումների ու գեղեցիկ ծրագրերի, այլ արդեն կատարածի համար: Իմ դեպքում ժողովրդի ելակետը կանխիկն էր եւ ոչ թե ապառիկը, ինչպես մյուս թեկնածուների առնչությամբ: Եթե ես ծրագրեր ներապահակի, շատ տեղին կլիներ այն հարցը, թե ինչու դրանք չիրականացրի՝ ունենալով հնարավորություններ եւ տասնհինգ ամիս ժամանակ: Ստացած ձայները ես համարում եմ վստահության նոր վկա թե՛ ինձ, թե՛ Հայաստանի ժողովրդավարական իշխանությունների կուրսին:

– Հրաժարվելով նախընտրական արշավին մասնակցելուց՝ Դուք, հավանաբար, հետեւել եք այնուհանդերձ, մրցակից-թեկնածուների ելույթներին, որոնց ընթացքում Ձեր հասցեին ինչել են մեղադրանքներ, նենգափոխվել կամ հերյուրվել են մի շարք փաստեր: Չի՞ եղել պահ, երբ ափսոսել եք, որ ընտրարշավից հրաժարվելով՝ զրկել եք Ձեզ դրանց պատասխանելու հնարավորությունից:

– Ո՛չ, ամենեւին ո՛չ: Ես վստահ էի, որ իմաստ չուներ ներել այն մեղադրանքները, մանավանդ դրանք ներկայացնելու այն ձեւը, որ ընտրել էին մրցակիցներս, նրանց վստահված անձինք կամ թեկնածուին առաջադրած կուսակցությունները, որովհետեւ մեր ժողովուրդը չէր ընդունի այդ ոճը: Ընտրապայքարում պատեհություն ուներ շանելու այն կողմը, որն առավել զսպվածություն հանդես կբերեր: Ժողովուրդն ավելի շատ գնահատում է կառուցողական մոտեցումը, քան՝ ժխտողական, մերժողական: Դժբախտաբար, մրցակիցներիցս ոչ մեկը չկարողացավ այդպիսի հատկանիշներ ցուցաբերել: Նրանք ավելի շատ հակարշավ էին մղում, քան թե քարոզում հանուն իրենց գաղափարների, ծրագրերի: Հուսով եմ, որ անցած ընտրություններից նրանք էլ դասեր կքաղեն, եւ ապագայում մեր հասարակության մեջ նախապատվությունը նման իրավիճակում կտրվի ավելի քաղաքակիրթ ձեւերին...

– Եւ մեր ազգային հոգեբանությանը ավելի հարի՞ր: Օրինակ, որոշ թեկնածուների քաղաքական շռուները...

– Ասածս վերաբերում է մրցապայքարի բովանդակությանը, ոչ թե ձեւին: Առաքինին ինձ այնքան չի հետաքրքրում: Եթե այսօր անսովորության պատճառով այն գրգռում է մեր ժողովրդին, վաղը, մյուս օրը գու-

ցե դրան մեզանում էլ վարժվեն: Թեեւ շոու եւ գովազդ կազմակերպողները պետք է գիտակցեին, որ իրենց գործելակերպը ընդունելի չէր մանավանդ այն առումով, որ մեր ժողովուրդը հազիվ էր ազատվել պատկերապաշտությունից, կռապաշտությունից, որը յոթանասունամյա վարժություն ունի, եւ հանկարծ նրան հրամցվում է մի նոր:

– Կա՞ն ներքին կամ արտաքին քաղաքականությանը վերաբերող այնպիսի առաջնահերթ ձեռնարկումներ, որոնց իրականացումը պահանջում էր, որ Դուք ունենայիք Հայաստանի Հանրապետության եւ ոչ թե Գերագույն խորհրդի նախագահի լիազորություններ:

– Այո՛, եւ Նախագահի պաշտոնի հիմնումը թելադրված էր այդ նկատառումներով: Մեկ տարվա մեր գործունեությունն ապացուցեց առկա պետական կառուցվածքների սնանկությունը՝ անկախ անձնական հանգամանքներից: Առաջարկած հակասություններին տրվում էր անձնական երանգ, եւ դա չարաշահվում էր ընդդիմախոսների կողմից՝ մոլորության մեջ գցելով նույնիսկ մեր ժողովրդի ազնվագույն շերտերին: Դժբախտաբար, կառուցվածքների ներհին հակասությունները միշտ էլ անձնավորվում են այս կամ այն կերպ: Այսօր մեր աչքի առջեւ նույնը կատարվում է Ռուսաստանում, կատարվեց Լատվիայում՝ Լանդսբերգիսի եւ Պրունսկենեի միջեւ, էստոնիայում երբ խորհրդարանական եզնաժամի հետեւանքով ստիպված էին Սավիսաարի հրաժարականի հարցը դնել եւ այլն, եւ այլն: Բայց իրականում հակասություններն առարկայական բնույթ ունեն եւ բխում են համակարգի էությունից: Խորհրդային համակարգի կառույցներն այսօր ի վիճակի չեն բավարարելու մեր պետական ներկա շահերը: Որովհետեւ վերացել է դրանց կապող շաղախը, որպիսին կոմունիստական կուսակցությունն էր: Նա էր ապահովում գործադիր մարմինների գործունակությունը: Եւ, իհարկե, չէր կարելի կառուցվածքները շաղկապող այնպիսի մի օղակ ստեղծել, ինչպիսին կոմկուսն էր, բանի որ, վաղ թե ուշ, դա մեզ կվերադարձներ ամբողջատիրական համակարգին: Ուրեմն, նոր, ժողովրդավարական հիմքերի վրա հարկավոր էր առաջացնել պետական կառույցները, ինչի հնարավոր էր հասնել դասական փոխհարաբերությունների հաստատմամբ. գործադիր, օրենսդիր եւ դատական մարմինների տարանջատումով: Որքան էլ որ դեռ հստակեցումների կարիք է զգացվում, նա-

խագաւական ընտրությամբ, դրա օրենսդրական հիմնավորմամբ այդ տարանջատումը տեղի է ունեցել, եւ այժմ լիովին կարելի է գործադիր բաղաքականության պատասխանատվությունը ամբողջությամբ դնել նախագահական համակարգի վրա: Սրանով կլուծենք պետական կառույցների ներքին հակասությունը, կամրապնդենք գործադիր իշխանությունը, որը հիմքն է ե՛ւ տնտեսական բարեփոխումների հետեւողական անցկացման, ե՛ւ հասարակական կյանքի կայունացման:

Արտաքին հարաբերությունների ոլորտում մեր առաջնահերթ խնդիրը, եւ սա ես համարում եմ անցած մեկ տարվա մեր թերացումը, ակտիվ արտաքին բաղաքականությունն է: Այսօր հարկավոր է, որ ուժեղացնենք, կարեւորենք Արտաքին գործոց նախարարության դերը, որը վաղվանից իսկ պետք է լծվի եռանդուն աշխատանքի դրսի աշխարհում: Մենք, ինչպես ասում են, պետք է բախենք բոլոր դռները, միշտ հաստատենք մեր ներկայությունը, եւ ես լիովին համոզված եմ, որ արդյունքներն իրենց երկար սպասել չեն տա: Կարելի է ասել, որ մեկ տարի է, ինչ ունայնիկ Արտաքին գործոց նախարար չունենիք: Մեր առաջին գործը կլինի այդ նախարարի նշանակումը, ինչին ձեռնամուխ ենք եղել եւ, նրա առջեւ ծառանալիք խնդիրները նկատի ունենալով, նպատակահարմար ենք գտել այդ պաշտոնը վստահել մի սփյուռահայի:

– Ո՛ւմ, եթե գաղտնիք չէ:

– Բաֆֆի Հովհաննիսյանին: Նա բարձր մակարդակի մասնագետ է, երիտասարդ, շատ եռանդուն, որը, եթե չհասցնի, գոնե կմոտեցնի մեր Արտաքին գործերի նախարարությունը բաղաքակիրթ երկրների վիճակին:

– Բաֆֆի Հովհաննիսյանը դաշնակցակա՞ն է:

– Ո՛չ, նա ոչ մի կուսակցության չի պատկանում:

– Այս կապակցությամբ՝ ինչպիսի՞ն եք համարում մեր կադրային ապահովվածության վիճակը: Ի՞նչ դեր է խաղալու հավանական թեկնածուների կուսակցական պատկանելությունը:

– Պետական կադրերը 1-2 օրում չեն պատրաստվում: Այդ բանը պետք է տեղի ունենա պետական նոր կառուցվածքների, մեխանիզմների աշխատանքին զուգընթաց. որքան հզկվեն մեխանիզմները, այնքան կկատարելագործվեն կադրերը: Մենք հրաշքների չպետք է սպասենք, այլ ելնենք այն նյութից, որ ունենք: Ինչ որակ որ այսօր ներկայացնում է մեր

հասարակությունը, ընդհանուր առմամբ նույն որակն ունեն ե՛ւ կադրերը, ե՛ւ մտավորականները, ե՛ւ մշակույթը, ե՛ւ գիտությունը: Մեր ընտրած կադրերը իդեալական չեն լինի, բայց մոտեցումն անպայման կլինի այն, որ առկա նյութից լավագույնը ընտրվի, ամենաարժանին: Սա էր մեր մոտեցումը նախկինում, եւ Վազգեն Մանուկյանի մոտեցումն էլ նույնն էր: Այլ բան է, թե որքանով մեզ հաջողվեց դա իրականացնել: Սկզբունքը չի փոխվելու: Հնարավոր են սխալներ, հնարավոր են դժգոհություններ, բայց հետեւողականորեն պետք է ձգտենք, որ յուրաքանչյուրն իր արժանի տեղը գրավի հասարակության մեջ, ինչը վերջինիս ներդաշնակության հիմքն է: Ընտրապայքարի ընթացքում եւ հետո էլ եղան խոսակցություններ, արտահայտվեցին ծրագրեր, որ Հայաստանի իշխանությունները պիտի կոալիցիոն լինեն, որ ոչ մի կուսակցություն ի վիճակի չէ մենակ կառավարել այս պետությունը: Ես համաձայն եմ, իսկապես, ոչ մի կուսակցություն այսօր այդման կադրեր չունի: Բայց դա չի նշանակում, թե իշխանությունը բաղաքական իմաստով է կոալիցիոն լինելու: Կոալիցիա կգոյանա մասնագետների ընտրության առումով, անկախ այն բանից, թե տվյալ պաշտոնին հավակնող ամենաարժանավոր թեկնածուն ո՛ր կուսակցությանն է պատկանում, նա կզբաղեցնի այդ աթոռը: Այսինքն՝ ոչ թե կուսակցությունից դեպի պաշտոնը, այլ՝ անձից, անձնական հատկանիշներից: Մասնավորապես, մի քանի սփյուռահայ նախարարներ կլինեն: Բացի այդ, բոլոր նախարարությունները, ընդհուպ մինչեւ փոխնախարարի պաշտոնը, կրնդգրկվեն սփյուռահայ մասնագետներ: Սփյուռքի եւ Հայաստանի համագործակցության լավագույն ձեր ես սա եմ համարում: Սփյուռքի կենդանի ներկայությունը Հայաստանում եւ ոչ թե հեռվից-հեռու հանձնարարականների ու ծրագրերի առաքումը:

– Առաջին փաստաթուղթը, որ Դուք ստորագրեցիք Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելուց հետո, միջպետական տնտեսական պայմանագիրն էր: Ինչպե՞ս կմեկնաբանեք այն հոկտեմբերի 18-ին վավերացնողների կազմը:

– Կազմը դեռ ոչինչ չի նշանակում, չի նշանակում, թե առայժմ պայմանագրին մասնակից ութ հանրապետությունները նույն նկատառումով են իրենց ստորագրությունները դրել: Մի մասն իսկապես լրջորեն գնա-

ճատում է այդ փաստաթղթի անհրաժեշտությունը եւ համոզված է, որ աշխատող պայմանագիր է ստորագրել, մյուս մասը, ընդհակառակը, չափազանց անլուրջ համարելով այդ ձեռնարկումը, հենց այնպես ստորագրել է, նկատի ունենալով, որ դա ո՛չ կօգնի, ո՛չ կվնասի իրեն:

– Դուք Ձեզ ո՞ր կողմը կդասեիք:

– Դաղափարի տեսակետից ես պայմանագիրը շատ լուրջ եմ համարում, քանի որ հայուրամյակներ շարունակ որպես պետական մեկ միավոր ձեւավորված երկիրը չի կարող մեկ օրում կազմալուծվել-բայֆայվել: Ուստի կապվածության միասնական ձեւերը, իմ խորին համոզմամբ, պետք է փոխարինվեն համագործակցության նոր եղանակով, ինչպիսին է, օրինակ, պետությունների եւրոպական համագործակցությունը: Բայց սա չի նշանակում, թե ես նույնիսկ համոզված եմ, որ մեր ստորագրած պայմանագիրը գործելու է, արդարացնելու է իրեն: Միեւնույն մասնակցում ենք դրան, ինչպես որ պետք է մասնակցենք վերոհիշյալ գաղափարի մարմնավորմանը նպաստող բոլոր կառուցողական աշխատանքներին:

– Իսկ հնարավո՞ր է, արդյոք, որ տնտեսական կապվածության պահպանումը հետագայում նորից հանգեցնի քաղաքական կախվածության:

– Հնարավոր է, որ որոշ պետություններ, հատկապես մեծ պետությունները՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Ղազախստանը փորձեն ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կախվածության մեջ գցեն մյուսներին, բայց սրանք էլ, իհարկե, պետք է գործի դնեն իրենց հակազդեցությունները, որպեսզի այդ կախվածությունը վերածեն փոխկախվածության: Ակնհայտ է, որ պետությունների մի մասը հետապնդում է քաղաքական նպատակներ, ուստի այստեղ պայքարը բնական է:

– Նախագահական կառույցների առաջ գալուց հետո, Ձեր կարծիքով, Հայաստանի Գերագույն խորհուրդն իր այսօրվա կազմով ու (ոչ բազմակուսակցական) բնույթով ի վիճակի՞ է կատարել քաղաքական հակակշռի իր դերը:

– Դասական իմաստով հակակշիռ չի կարող լինել, բայց քաղաքականորեն գուցե ցանկալիից ավելի մեծ հակակշիռ դառնա, որովհետեւ այս խորհրդարանն ավելի հակված է (ե՛ւ ուժերի բաշխմամբ, ե՛ւ հասարա-

կական մթնոլորտի բերումով) քաղաքական գործունեության, քան՝ բուն օրենսդիր: Դա, իհարկե, կդժվարացնի թե՛ մեր, թե՛ խորհրդարանի աշխատանքը: Եւ այստեղ շատ էական չէ այն հանգամանքը, թե Գերագույն խորհուրդը բազմակուսակցակա՞ն սկզբունքով է ընտրված, թե՝ մեծամասնական:

– Իսկ այն հանգամա՞նքը, որ ՀՀՇ-ն մեծամասնություն ունի այս խորհրդարանում...

– Կարելի է ասել, որ ՀՀՇ-ն էլ խորհրդարանի մյուս ուժերի նկատմամբ իմ ունեցած հակակշիռն է: Առանց դրա անհնարին կլիներ աշխատանքը: Դաղտնիք չէ, որ բոլոր ընտրովի նախագահներն էլ խորհրդարանում ունենում են մեծամասնություն կամ գոնե այնպիսի մի ծանրակշիռ խմբակցություն, որը թույլ չի տա, որ խորհրդարանը վիժեցնի Նախագահի քաղաքական ծրագրերի իրականացումը:

– Սահմանադիր ժողովի հրավիրումը, ինչպես հաճախակի առաջարկում է ընդդիմությունը, կամ երկպալատ խորհրդարանի հիմնումն ավելի կառուցողական չէի՞ն դարձնի գործադիր եւ օրենսդիր մարմինների փոխհարաբերությունը:

– Սահմանադիր ժողովի առաջարկների ելակետը Գերագույն խորհրդի այսօրվա կազմն է: Ընդդիմությունը համոզված է, որ նոր ընտրությունների հետեւանքով ուժերի հարաբերակցությունը կփոխվի հօգուտ իրեն: Ես, իհարկե, չեմ կարծում, որ նոր ընտրությունների դեպքում ուժերի հարաբերակցությունը էապես կփոխվի: Այդ են վկայում նաեւ նախագահական ընտրությունների արդյունքները: Թեեւս բուն բովանդակության տեսակետից էլ՝ Սահմանադիր ժողովի կողմնակիցները ճիշտ չեն գնահատում այդ կառուցվածքի անհրաժեշտությունը: Նման ժողովները, որոնք պատմության մեջ սկիզբ են առնում ֆրանսիական հեղափոխություններից, հեղափոխական ժամանակների կառույցներ են: Երբ չկան համապատասխան մարմիններ, կազմավորված խորհրդարան, Սահմանադիր ժողովի կարիք է ծագում: Շատ պետություններ էլ այդ գործը դնում են խորհրդարանի ուսերին: Դեմ չեմ, որ որոշակի պահի անկախ Սահմանադիր ժողովն ավելի հանձնարարելի է Սահմանադրություն մշակելու համար, քանի որ Գերագույն խորհուրդը, պատգամավորները երբեմն ինչ-ինչ բաներում կարող են շահագրգիռ կողմ լինել...

– Ի՞նչ նկատի ունեք:

– Այն, որ լիազորություններ կուզենան կամ չեն ցանկանա հրաժարվել իրենց մի շարք լիազորություններից՝ հօգուտ մեկ այլ մարմնի: Գերագույն խորհրդի այդ հատկանիշն արդեն ի հայտ է եկել «Նախագահի մասին» օրենքն ընդունելիս, երբ պատգամավորները ձգտում էին սահմանափակել նրա լիազորությունները: Կարծում եմ, որ դա երեւան կգա նաեւ «Գերագույն խորհրդի մասին» օրենքի մոտակա քննարկումներում, որտեղ նրանք կփորձեն գտնել նոր լիազորություններ: Այսուհանդերձ, հիմա Սահմանադիր ժողովի պահը չէ, որովհետեւ եթե մենք ընտրենք այդ ժողովը եւ նրանից պահանջենք երեք կամ վեց ամսում մշակել Սահմանադրություն, մեծ արդյունքի չենք հասնի: Անցման այս շրջանում, երբ օրըստօրե փոխվում է ամեն բան, մի կես տարի էլ չանցած, ինչպիսին էլ որ լինի Սահմանադրությունը, ստիպված պիտի հսկայական փոփոխություններ կատարենք նրա մեջ: Եւ դրանով մենք կվարկաբեկենք Սահմանադրության թե՛ բովանդակությունը, թե՛ գաղափարը: Մինչդեռ, հակառակը, հիմա է, որ պետք է ջանանք ժողովրդին հարգանք ներշնչել Սահմանադրության հանդեպ, ի հակակշիռ նրա արգահատանքի այն Սահմանադրության նկատմամբ, որը մեզ 70 տարի ստրկության է դատապարտել:

Կարծում եմ, պետք է այլ ճանապարհով գնանք. արդեն նոր գործող օրենքների, գործող մեխանիզմների հիման վրա ստեղծենք մի Սահմանադրություն, որը կայուն կլինի: Այլապես մեր իրավաբան, տնտեսագետ գիտնականները մի շաբաթում կարող են հրաշալի, գեղեցիկ Սահմանադրություն գրել, որը չի գործի:

– Ասացիք, որ նոր օրենսդիր մարմնի ընտրությունները, դատելով նախագահական ընտրապայքարի արդյունքներից, ուժերի հարաբերակցությունն էապես չի փոխի: Սակայն քաղաքական շրջանակներում հաճախ խոսվում է, որ ՀՀՇ-ն այդքան միավոր չէր հավաքի, որքան տրվեց Ձեր անձին:

– Գուցե այդ պահը կա, բայց պետք չէ չափազանցել: Որովհետեւ եթե իմ անձն են անգամ ընտրել, երբեք չեմ թաքցրել, որ ես ներկայացնում եմ Հայոց համազգային շարժումը եւ իրականացնում եմ նրա ծրագիրն ու նրա գաղափարների հավատարիմ զինվորն եմ: Չեմ թաքցնում նաեւ,

որ չեմ տեսնում այսօր մեկ այլ գաղափարախոսություն, որն ավելի պատշաճի մեր հասարակության, պետության շահերին: Բնական է, որ ՀՀՇ-ի հանդեպ վերաբերմունքն այս մեկուկես տարում փոխված լինի եւ փոխվել է, որովհետեւ երբ այն ընդդիմությունից վերածվեց իշխող կուսակցության, իր վրա վերցրեց երկրում կատարվող բոլոր երեւույթների պատասխանատվությունը: Հաճախ է որեւէ կուսակցություն բարձր ռեյտինգով գալիս իշխանության գլուխ, ապա նրա նկատմամբ հետզհետե դժգոհությունները մեծանում են:

– Հանրաքվեն տեղի ունեցավ մեծ ոգեւորությամբ: Որքան էլ որ իրատեսությամբ լեցուն՝ ժողովուրդն անհամբեր է Հայաստանի միջազգային ճանաչման խնդրում: Որեւէ կանխատեսում կանե՞ք:

– Ես ուզում եմ հստակ արտահայտել իմ տեսակետը, որպեսզի զուր պատրանքներ չփայփայենք: Աշխարհը ճանաչեց Բալթյան հանրապետությունների անկախությունը. բայց, չնայած իրավական այնպիսի մի զորեղ հիմքի, ինչպիսին է այդ երկրների օկուպացիայի անօրինականությունն աշխարհի կողմից մշտապես ընդունված լինելը՝ միայն Ռուսաստանից հետո ճանաչեց նրանց: Այժմ Արեւմուտքում ձեւավորվում է մի նոր քաղաքական տեսակետ, որից օգտվում է Գորբաչովը: Այն է՝ Բալթյան պետությունների օրինակը չպետք է նախադեպ ծառայի մյուս հանրապետությունների համար: Այսինքն, Արեւմուտքը նորից չի քաջալերում անկախության ձգտող հանրապետություններին եւ կճանաչի նրանց միայն այն ժամանակ, երբ այդ բանը կանի Մոսկվան: Մոսկվա ասելով՝ ես հասկանում եմ Ելցինին, քանի որ ամբողջ աշխարհին է հայտնի, որ Խորհրդային Միության ռեալ քաղաքականությունն այսօր որոշում է Ելցինը: Մենք շարժվել ենք խորհրդային գործող օրենքների համաձայն, այդ պատճառով իրավաբանական առումով ո՛չ Ելցինը, ո՛չ Գորբաչովը, ո՛չ Արեւմուտքը որեւէ առարկություն չեն կարող ունենալ մեր անկախությանը: Եւ որովհետեւ քաղաքական տեսանկյունից հարցը կրկին հանգում է Ռուսաստանին, ես չեմ թաքցնի, որ Մոսկվայում հանդիպեցի թե՛ Ելցինի եւ թե՛ Ռուսաստանի պետական քարտուղար Բուրբուլիսի հետ առանձին-առանձին եւ լուրջ խոսակցություններ ունեցա: Կարող եմ ասել, որ դեպքերի զարգացումը լավատեսություն է ներշնչում: Ավելին չեմ կարող ասել:

– Վտանգ չկա՞, որ այս համաձայնագրերին արագորեն մասնակցելով՝ մենք դուրս ենք մնում «անկախականների» երկրորդ շարասյունից, որի կազմում Վրաստանն էր, Մոլդովան եւ մենք:

– Մասնակցելով անցման, հանդարտ անցման շրջանի միջհաճարապետական կառուցողական գործընթացներին, մենք ավելի ենք մոտենում անկախության մեր նպատակին: Մեր ուղին ավելի կարճ է, հան առեւտուրի դիմողներին:

– Ակնկալո՞ւմ եք նոր ցնցումներ Մոսկվայում:

– Քաղաքական առումով՝ ոչ, սոցիալական առումով, որը կվերածվի հաղաքականի՝ այո: Առեւտուրը պետք է լինի տնտեսական վերափոխումների երաշխավորը, որպեսզի անցման շրջանի անխուսափելի կոռուպտները պայթյուններ առաջ չբերեն:

– Մասնագետների մեծամասնությունը խորհրդային տնտեսության համար Լեհաստանի «շոկաբուժությունն» է հանձնարարելի դիտում: Ըստ Ձեզ, Հայաստանի համա՞ր էլ լավագույնը դա է:

– Ձորս-հինգ տարի առաջ, երբ դեռ տնտեսական կառույցները չէին փլուզվել, լճական տարբերակը գուցե փրկություն լիներ, եւ մենք արդեն դուրս եկած կլինեինք այս անմխիթար վիճակից: Այժմ, թերեւս, շափազանց ծանր է նստելու այն կիրառելը, բայց այլ ուղի չի նշմարվում:

– Նախատեսո՞ւմ եք, որ Հայաստանում տնտեսական բարեփոխումներն ավելի արագ կընթանան, քան նախորդ մեկ տարվա ժամանակամիջոցում էր:

– Այո՛: Նախկին տեմպերն էլ դանդաղ չէին, բայց մեզ կաշկանդում էր այն, որ մյուս հանրապետությունները հին եղանակներով էին գործում: Այժմ ճույս կա, որ այդ արգելքը կվերանա, ինչն իմ հին կխթանի մեր բարեփոխումները:

– Արցախում շարունակվող արյունալի բախումները նշանակո՞ւմ են, արդյոք, որ Ժելեզնովոդսկի հայտարարագիրը մեռելածին մի փաստաթուղթ է, թե՞ առաջընթացի հույս կա:

– Ես այն կարծիքին չեմ, որ փաստաթուղթը մեռելածին է, թեեւ դա չի նշանակում, թե անվերապահորեն հավատում եմ նրա հաջողությանը: Պարզապես ես ելնում եմ այն հանգամանքից, որ այսպիսի խնդիրների

լուծման մեջ հարկավոր չէ անտեսել որեէ միջոց: Համենայն դեպս, ես կարծում եմ, որ Ելցինի եւ Նազարբաեւի միջնորդությունը, երաշխավորությունը շատ ավելի մեծ հնարավորություններ ունի հաջողությամբ պսակվելու, հան Գորբաչովի առաքելությունը:

– Ժելեզնովոդսկի հայտարարագիրը հիշատակելիս հայ քաղաքական գործիչներն անպայման անդրադառնում են ազգային բանակի խնդրին...

– Ազգային բանակի վերաբերյալ ես ունեմ իմ ամբողջական պատկերացումները, բայց պաշտպանության համակարգը մի առանձին մեծ թեմա է, որը, թերեւս, արծարծենք մեկ ուրիշ անգամ:

«Հայք», 23 հոկտեմբերի, 1991 թ.:
*Հարցազրույցը՝ **Վահրամ Մարտիրոսյանի**:*
Հրատարակված՝ «Հանրապետության առաջին Նախագահը Լեւոն Տեր-Պետրոսյանն է» վերնագրով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱՄՈՒՏԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՏՈՒԿ ՆԻՍՏՈՒՄ

(11 նոյեմբերի, 1991 թ.)

Վեհափառ Տեր,

Մեծարգո նախագահող,

Հարգելի պատգամավորներ եւ հյուրեր,

Քիչ առաջ, երբ այս պատմական լսարանի՝ մեր ժողովրդի արժանավորագույն ներկայացուցիչների առջեւ ես հանդիսավոր երդմամբ հավատարմություն հայտնեցի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին, նրա ազգային ու պետական շահերին — դրանք լոկ հավուր պատշաճի ազդարարված խոսքեր չէին, այլ հայ ժողովրդի դարերով փայփայած իղձերի խտացումն ու իրեղենացման արտահայտությունը:

Բախտի հմահաճույքով եւ պատմական հանգամանքների բերմամբ հայ ժողովուրդը դեմոկրատական ազատությունների մեծագույն ձեռնումները՝ անկախության հաստատվեն եւ նախագահական ընտրություններն արձանագրեց մեր հասարակարգի վերափոխման ամենակնճռաժամային ու վճռորոշ պահին:

Եւ դա, թերեւս, տրամաբանական է եւ օրինաչափ: Ժողովրդի ինքնապահպանման բնազդի միահամուռ դրսեւորումը եւ քաղաքական ենթագիտակցության գերլարումը ամենայն հավանականությամբ ենթադրում են համապատասխան հոգեկան իրավիճակ, որի դեպքում միայն

իրականություն կարող են դառնալ Սարդարապատի հերոսապատումը եւ Սեպտեմբերի 21-ի մաքառման մարտահրավերը:

Եւ գոյության դժնդակ պայմաններում դրսեւորվող նմանօրինակ թռիչքներն ամենեւին չպետք է դիտել որպես հուսահատության եզրին գամված վիրավոր գազանի վերջին սխրանք, այլ սեփական ճակատագիրը կերտելու անբեկանելի ժողովրդական վճիռ:

Ծանր, գերծանր վիճակ է բաժին ընկել մեր սերնդին՝ քանդել 70 տարի մեզ պարտադրված եւ ստրկության ու չքավորության մատնած բռնատիրական վարչակարգը եւ վերադառնալ մարդկային հասարակության բնական արժեքներին, թոթափել մեր զարգացումը կաշկանդող բոլոր կապանքները եւ տեղ զբաղեցնել քաղաքակիրթ ժողովուրդների իրավահավասար ընտանիքում, մեկընդմիշտ ազատվել օտարի խեղդիչ լծից եւ տեր դառնալ ազատության, բարօրության ու երջանկության մեր բնածին իրավունքին, խնդիր, որ ծառացած է նախկին Միության բոլոր ժողովուրդների առջեւ, սակայն մեզ մոտ անհամեմատ կնճռոտված՝ աղետի գոտու, գաղթականության եւ արցախահայության վիճակի առնչությամբ:

Սա ոչ թե հետեւանք է մարդկանց ցանկությունների կամ արարքների, ինչպես միամտաբար բացատրում են ոմանք եւ փոխադարձ կշտամբանքներով փորձում գտնել մեղավորներին, այլ մեր արհեստական հասարակապետության տրամաբանական վախճանը, եթե կուզեք՝ նախախնամության կամքը:

Եւ նախախնամության անօրինությամբ մեր սերունդն է կրելու այս ծանր խաչը, իսկ եթե փորձենք խուսափել, մեր սերունդներն ավելի ծանր խաչ են կրելու:

Ես ամենեւին ճակատագրապաշտության կոչ չէ, որ անում եմ, բավ լիցի, պարզապես կոչ եմ անում գիտակցել հետագա ուղու անդառնալիությունը եւ միահամուռ ուժերով լծվել մեր ազատ հայրենիքի շենացման սրբազան գործին:

Թեեւ մեր գործողությունները մեծապես կախված են զանազան անկանխատեսելի արտաքին հանգամանքներից, այնուամենայնիվ, պատշաճ քաղաքական իմաստության եւ ճկունության դրսեւորման դեպքում, ինչպես ցույց տվեց ավելի քան մեկ տարվա փաստացի անկախության փորձը, մենք ի վիճակի ենք ազդելու իրադարձությունների զարգացման

վրա եւ հանրապետության վերափոխումը տանելու մեր ցանկացած ուղղությամբ:

Իսկ այդ ուղղությունը միակն է՝

ԴԵՊԻ ԱՆԿԱԽ, ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ,

ԴԵՊԻ ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ,

ԴԵՊԻ ԱԶԱՏ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ:

Այլընտրանք չկա, այլընտրանքը հավասարազոր է կործանման եւ նորանոր արհավիրքների: Մենք իրավունք չունենք կորցնելու պատմական այս պատեհությունը եւ մեզ ու մեր սերունդներին դնելու անելանելի կացության առջեւ: Մանավանդ որ հանրապետության ներքին քաղաքական մթնոլորտը միանգամայն բարենպաստ է պետական, հասարակական եւ տնտեսական կյանքի այդ արմատական վերափոխումն իրագործելու համար: Ես նկատի ունեմ ժողովրդի դրսեւորած աննախադեպ միասնությունն ու համախմբվածությունը անկախության հանրաքվեի եւ նախագահական ընտրությունների ընթացքում, որ նրա անառարկելի վստահության արտահայտությունն է հանրապետության իշխանությունների որդեգրած քաղաքական ուղեգծի ու թեկուզ սխալաշատ, բայց հետեւողական գործելակերպի նկատմամբ:

Միանգամայն բարենպաստ է նաեւ այն հանգամանքը, որ տնտեսական բարեփոխումների իրականացման ճանապարհին մեր հանրապետությունը մի քայլ առաջ է անցել բոլոր նախկին խորհրդային հանրապետություններից:

Այնպես որ, առկա են բոլոր նախադրյալներն ու անհրաժեշտ դրական եւ բացասական գործոնները մեր բախտն ու ճակատագիրն ինքնուրույնաբար տնօրինելու համար:

Սակայն, նախքան բոլորանվեր ուժերով մեր արմատական ծրագրերի իրականացմանն անցնելը, մեզ մնում է հաղթահարել մի չափազանց լուրջ եւ կենսական փորձություն: Խորհրդային Միության անկայուն, ես կասեի՝ անիշխանական վիճակի պատճառով, ինչպես նաեւ միջհանրապետական տնտեսական կապերի անհուսալիության հետեւանքով մեր հանրապետությունն այսօր հայտնվել է չափազանց ծանր էներգետիկական ճգնաժամի մեջ: Կառավարությունը թեեւ արտակարգ միջոցներ է ձեռք առել խնայողության ռեժիմի, հովհարաձեւ էներգամատակարարման, վարչական միջոցների կիրառման ուղղությամբ, սա-

կայն ակնհայտ է, որ խնդրի լուծման համար անհրաժեշտ է գործի դնել քաղաքական եւ տնտեսական լրացուցիչ եւ ավելի ազդեցիկ լծակներ: Այդ լծակների որոնումն ու գործադրումը մնում են հանրապետության իշխանությունների մշտական մտահոգության առարկան: Ինչ վերաբերում է հանրապետության պարենային ապահովվածությանը, ապա առաջիկա ձմռան ընթացքում բնակչության նվազագույն կենսապահանջների բավարարմանը վտանգ չի սպառնում:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ էներգետիկական ճգնաժամի հաղթահարմանն ու պարենամթերքների հայթայթմանը զուգընթաց՝ հանրապետության իշխանությունները պետք է մշակեն եւ իրականացնեն նաեւ որոշակի քաղաքական ու տնտեսական միջոցառումներ: Ես ամենեւին մտադրություն եւ հնարավորություն իսկ չունեմ օրվա հանդիսությանը պատշաճող այս հակիրճ ելույթում հանգամանորեն ներկայացնել հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագիր, այնուամենայնիվ, հարկ եմ համարում կանգ առնել մի շարք առաջնահերթ խնդիրների վրա:

Պետական շինարարության եւ ներքին քաղաքականության բնագավառում

1. Հնարավորին չափ կարճ ժամկետում կատարելագործել եւ հասարակության զարգացման ներկա պահանջներին համարեցնել պետական իշխանության գործող համակարգը, օրենսդրորեն սահմանազատել օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների լիազորությունները, ապահովել գործադիր իշխանության ուղղածիգ կառուցվածքը, խթանել խորհրդարանի օրենսդրական գործունեությունը, ամրապնդել դատական իշխանության անկախությունը:

2. Օրենքով սահմանված շրջանակներում ապահովել քաղաքացիական իրավունքների անկաշկանդ կենսագործումն ու հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեության լիակատար ազատությունը: Կուսակցությունների համար սահմանել հատուկ կարգ՝ զանգվածային լրատվության պետական միջոցներից, մասնավորապես ռադիոհեռուստատեսության ծառայություններից օգտվելու բացարձակապես հավասար պայմաններ ստեղծելու նպատակով:

3. Բարձրացնել իրավապահ մարմինների պատասխանատվությունն ու աշխատանքի արդյունավետությունը, վերջ տալ հանրապետությունում տիրող անպատժելիության մթնոլորտին, անհաշտ պայքար մղել կաշառակերության, պետական գույքի հափշտակման, քաղաքացիների անվտանգության ու սեփականության անձեռնմխելիության սպառնացող հանցագործությունների դեմ:

4. Կասեցնել պետական եւ մասնավոր ձեռնարկատիրության սերտաճման, պետության սեփականությունը հանդիսացող հիմնարկներում կոոպերատիվ ձեռնարկությունների ստեղծման հակաօրինական երեւույթը:

5. Ստեղծել հանրապետության պաշտպանության նախարարություն՝ նրա ենթակայության տակ դնելով քաղաքացիական պաշտպանության համակարգը, ԴՈՍԱԱՖ-ը, զինկոմիսարիատը եւ ներքին ուժերի ստորաբաժանումների հիման վրա կազմավորվող ազգային զորագունդը:

6. Մինչեւ ս.թ. դեկտեմբերի 31-ը ծառայությունը լրած բոլոր զինապարտներին օրենքով սահմանված կարգով վերադարձնել հանրապետության տարածքում տեղակայված իրենց զորամասերը: Նույն ժամկետում տեղական զինակոչիկներով համալրել հանրապետության տարածքում տեղակայված 7-րդ խորհրդային բանակի շարքերը, իսկ հանրապետությունից դուրս իրականացվող զինծառայությունը կազմակերպել բացառապես կամավորության հիմունքներով:

Սոցիալ-տնտեսական բնագավառում

1. Առաջիկա վեց ամսից մեկ տարվա ժամանակամիջոցում իրականացնել եւ ավարտին հասցնել գյուղատնտեսական մթերքները վերամշակող արդյունաբերության, շինարարության, թեթեւ եւ սննդի արդյունաբերության ձեռնարկությունների, առեւտրի ու սպասարկման ոլորտի համապարփակ սեփականաշնորհումը՝ պետական սեփականության մենաշնորհը միաժամանակ պահպանելով միայն էներգետիկայի, հանքահումքային եւ ծանր արդյունաբերության բնագավառներում: Նշված միջոցառման իրականացմամբ հանրապետությունում վերջապես կստեղծվի ներքին շուկայական հարաբերություններով կարգավորվող

իմնուրույն տնտեսական ենթակառուցվածք՝ ներազատված արտաքին հանգամանքների կամայական ազդեցություններից:

2. Մինչեւ այս տարվա ավարտը համապատասխան օրենսդրական հիմքեր ստեղծել օտարերկրյա կապիտալի ներթափանցումը հեշտացնելու համար՝ առաջ կերպով ընդունելով մանավանդ «Ձեռնասեռմանության ներդրումների» եւ «Հարկերի մասին» օրենքները:

3. Սահմանել խստագույն հարկային վերահսկողություն: Սեփականաշնորհման հետեւանքով գոյացած եկամուտները բացառապես, իսկ հարկերի միջոցով գանձված եկամուտների զգալի մասը տրամադրել հանրապետության ազգաբնակչության սոցիալական կարիքների բավարարման եւ աղետի գոտու ու գաղթականության հարցերին վերաբերող հատուկ ծրագրերի իրականացման նպատակներին:

4. Նկատի ունենալով նախկին խորհրդային հանրապետություններում տնտեսական բարեփոխումների անցկացման չհամաձայնեցված ժամկետները եւ դրա հետեւանքով առաջացող անհավասարության միտումները՝ միջոցներ ձեռնարկել հանրապետության ներքին շուկայի պաշտպանության ուղղությամբ, այդ նպատակով ստեղծելով հանրապետական մաքսային ծառայություն եւ մոտ ապագայում հիմնելով ազգային դրամ:

5. Ըստ երեւույթին անհրաժեշտություն կծագի նաեւ նախատեսվածից շուտ հանրապետությունում անցնելու ազատ գների բաղձականության՝ նկատի ունենալով, որ Ռուսաստանի կառավարության նախաձեռնությունը գրեթե անխուսափելի է դարձնում նրա անդրադարձը մյուս բոլոր հանրապետություններում: Սակայն կենսական նշանակության որոշ ապրանքների համար մեզ մոտ կսահմանվեն անշրջանցելի վերին գներ՝ ազգաբնակչության վնասը նախապես հատուցելով համապատասխան դրամական միջոցներով:

Արտաքին բաղաքականության բնագավառում

1. Նկատի ունենալով, որ հանրապետության ներկա իշխանությունների ամենալուրջ թերացումը եղել է արտաքին հարաբերությունների ոլորտը, անհրաժեշտ է շուտափույթ կերպով ակտիվացնել արտաքին գործերի նախարարության գործունեությունը եւ եռանդուն կապ հաստատել մեզ համար շահագրգռություն ներկայացնող բոլոր երկրների հետ:

2. Զգտելով հասնել լիակատար բաղաքական անկախության, դառնալ միջազգային իրավունքի սուբյեկտ. Միավորված ազգերի կազմակերպության անդամ, միաժամանակ մեր շահը պահանջում է մասնակցել նախկին խորհրդային Միությունում իրականացող բոլոր կառուցողական գործընթացներին եւ միջհանրապետական տնտեսական ու բաղաքական մարմինների գործունեությանը՝ եթե ոչ անգամ այդ գործընթացների հաջողության նկատմամբ տածած համոզմունք, ապա գոնե հանրապետության վիճակը անցանկալի ցնցումներից զերծ պահելու մտահոգությամբ:

3. Շարունակել երկկողմ տնտեսական եւ բաղաքական պայմանագրերի ստորագրումը բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների, առաջին հերթին՝ Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Ղազախստանի հետ:

4. Ադրբեջանի հետ հարաբերություններում առաջնորդվել Ժնեվյան պայմանավորվածության ոգով, խաղաղ բանակցությունների միջոցով հասնել փաստաթղթում արձանագրված բոլոր պայմանավորվածությունների իրականացմանը:

5. Կայուն առեւտրական եւ տնտեսական հարաբերություններ հաստատել մեր անմիջական հարեւանների՝ Թուրքիայի եւ Իրանի հետ՝ Հայաստանը հաղորդակցության փակուղուց բանուկ միջազգային խաչմերուկի վերածելու նպատակով:

Ավարտելով հանրապետության առջեւ ծառացած մեր առաջնահերթ խնդիրների թվարկումը, հարկ եմ համարում շեշտել, որ ես միանգամայն հետու եմ մեր ժողովրդին հեշտիներ խոստանալու անհեթեթ մտից: Ես երբեք սովորություն չեմ ունեցել դատարկ խոստումներ տալ եւ այսուհետեւ էլ պատասխանատվության խորին զգացումով կտրականապես հրաժարվում եմ խոստումներից, հեշտիների գուշակումից: Ես մշտապես ձգտել եմ իմ եւ ժողովրդի առջեւ դնել թեկուզ փոքր, բայց միանգամայն իրականանալի խնդիրներ:

Թվարկված դրույթներն, անշա, այդպիսի իրականանալի խնդիրներ են, սակայն իրականանալի միայն տմնաջան աշխատանքի, բաղաքական ուժերի համախմբվածության, ժողովրդի վստահության դեպքում:

Եթե մեկ տարի հետո մեզ հաջողվի իրականացնել նշված ծրագրերի երեք հառորդն անգամ, իսկ ես վստահ եմ, որ նման ունակությունների դրսեւորման դեպքում դա անպայման կհաջողվի, ապա մենք հաջորդ ձմեռնամուտը կնշենք անհամեմատ հաստատուն կեցվածքով եւ լավատեսական տրամադրությամբ:

Հակառակ դեպքում ես պատրաստ եմ մեկ տարի անց հանրաքվեի միջոցով կրկին հայցելու մեր ժողովրդի վստահության իվեն:

Ես հավատում եմ մեր ժողովրդի իմաստությանն ու ստեղծարար ոգուն, եւ այդ հավատն է ինձ կորով ու լավատեսություն ներշնչում:

Շնորհակալություն ուշադրության համար:

«Հայաստանի Հանրապետություն», 12 նոյեմբերի, 1991 թ.:
Հրատարակված՝ «Ես հավատում եմ մեր ժողովրդի իմաստությանն ու ստեղծարար ոգուն» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/11.11.91: Բնագիր: Ինքնագիր:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԻԶՎԵՍՏԻԱ» ԹԵՐԹԻՆ

(1 փետրվարի, 1992 թ.)

– Լեւոն Հակոբի, Հայաստանում գտնվելու երկրորդ օրն իսկ համոզվում ես, որ այժմ մարդկանց կյանքն աննկարագրելիորեն ծանր է: Արդյո՞ք դա չի ազդում ազգի հոգեվիճակի վրա:

– Ես չէի ասի, որ հայերը հուսահատություն են ապրում: Երեւի, Դուի էլ առիթներ ունեցել եմ դրանում համոզվելու: Սակայն եթե Ադրբեջանի ձեռնարկած շրջափակումը շարունակվի, իսկ դրա հետեւանքով հանրապետությանը պատճառված ուղղակի կորուստներն արդեն իսկ գերազանցում են 1 միլիարդ ռուբլին, մենք իրոք կհայտնվենք հուսահատ վիճակում: Այժմ մենք ինտենսիվ բանակցություններ ենք վարում Թուրքիայի եւ Իրանի հետ՝ նրանց միջոցով արտաքին աշխարհ դուրս գալու այլընտրանքային ուղիներ գտնելու նպատակով: Զափազանց ցանկալի կլիներ, որ կայունանար Վրաստանի իրադրությունը, քանզի դա է մեր ամենաբնական ելքը, սակայն...

– Ըստ Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների հաղորդումների, Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրադրությունը փոքր-ինչ այլ քաղաքական հարթություն է դուրս գալիս, նոր կազմավորված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանը նշված տարածաշրջանում պատերազմական վիճակ է արձանագրում, իսկ Ադրբեջանի խորհրդարանը դեռեւս անցյալ տարվա դեկտեմբերին, ըստ էության, լուծարել է այդ ինքնավար կազմավորումը: Ինչպիսի՞ն է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ղարաբաղյան հարցի շուրջ երկխոսության ընթացքը:

– Այո, փաստորեն այնտեղ իրոք պատերազմ է ընթանում, մշտական են դարձել հայկական բնակավայրերի վրա կատարվող զինված հարձակումները՝ նրանց բնակիչներին Հայաստան գաղթեցնելու նպատակով: Չորրորդ տարին է, ինչ տարածաշրջանն ամբողջովին շրջափակված է: Չեմ կարող ասել, թե ինչ է լինելու այս ամենի վերջը, քանի որ Ադրբեջանի կողմից փոխզիջման գնալու որևէ պատրաստակամություն մենք չենք զգում: Մութալիբովի եւ հանրապետության այլ ղեկավարների հետ ունեցած շփումների մեկեւկես տարվա ընթացքում ես հիմնահարցի կարգավորման բազմազան տարբերակներ եմ առաջարկել, ի պատասխան որոնց երկխոսությունն ընդհատվել է՝ առանց նրանց կողմից սեփական առաջարկություններ ներկայացնելու: Եթե Ադրբեջանը չլուծարեր Լեռնային Ղարաբաղի ինքնավար կազմավորումը, այլ միանար համաշխարհային ընկերակցությանը իբրեւ անկախ մի պետություն, սակայն որոշակի ազգային-տարածքային բաժանմամբ, ղարաբաղցիներն, ըստ երեւույթին, բավարարված կզգային իրենց: Բայց քանի որ նրանց կամքը վերստին անտեսվեց, ստիպված եղան հենց իրենք հայտարարել սեփական կարգավիճակի մասին: Նրանք կամենում են, որ աշխարհը ճանաչի այդ հիմնահարցի գոյությունը, որ այնտեղ մշտապես ներկա լինեն միջազգային դիտորդներ, իսկ ինքնավարության դեպքում՝ նաեւ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր: Այդ դեպքում Ադրբեջանը, գիտակցելով իրավիճակի անելանելիությունը, հավանաբար, կսկսեր փոխզիջումային լուծումներ որոնել:

– Ինչպիսի՞ն է Հայաստանում պետականության ամրապնդման ընթացքը:

– Առաջին հերթին ծառացավ բանակի հարցը. Կենտրոնին պայման առաջադրվեց, որ հանրապետության ոչ մի բաղադացի չպետք է ծառայի նրա սահմաններից դուրս, եւ մենք կարողացանք պաշտպանել այդ դիրքորոշումը: Երկրորդ՝ Հայաստանը առաջին եւ դեռեւս միակ հանրապետությունն է նախկին ԽՍՀՄ-ում, որը հողի սեփականաշնորհում է իրականացրել, հանձնելով հողը ժողովրդին՝ մասնավոր սեփականության, ժառանգման ու վաճառի իրավունքով, ինչն օգնում է մեզ փոքր-ինչ թեթեւացնել կյանքն այս դժվար ժամանակներում: Պաշարներ նույնպես կան, սակայն կարեւորն այն է, որ հայ ժողովրդի

զգալի մի խավ ամբողջովին ապահովել է իրեն պարենով: Եւ երրորդ՝ կես տարվա ընթացքում մենք մտադիր ենք կատարել ապասարկման, առեւտրի, շինարարության, վերամշակող արդյունաբերության ոլորտների լիակատար սեփականաշնորհում: Սա արվելու է առանց որեւէ մեկին սպասելու, թեեւ, իհարկե, ուրախ կլինենինք, եթե վերափոխումները կատարվեին ԱՊՀ-ի այլ պետություններում համանման գործընթացներին զուգահեռ:

– Ես լավ եմ հիշում, որ Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Ձեր ընտրվելուց հետո շատերը Կենտրոնում «հեղափոխական գործողություններ» էին սպասում: Սակայն այդպիսիք չեղան: Ինչո՞ւ:

– Իմ գործողություններում ես ելնում էի հայ ժողովրդի հոգեբանության, այն խորհային բնազդների ըմբռնումից, որոնք պայմանավորված են նրա ողբերգական պատմությամբ: Մենք այնման փորձություններ ենք ապրել, որ այժմ հայության համար ամենագլխավորը հուսալիության նգտումն է: Մեր ժողովուրդն արկածախնդրություն չի հանդուրժի:

– Հայաստանի մասնակցությունը ԱՊՀ-ին՝ տնտեսությ՞ն վիճակով պարտադրված որոշում է, թե՞ այն ձեռնտու է հանրապետությանը:

– Ես դանդաղ, հիմնաւար գործընթացների կողմնակից եմ, իսկ ամեն տեսակի կտրուկ շրջադարձերը վտանգավոր եմ համարում: Ի սկզբանե մենք ընտրել էինք լիակատար բաղաքական անկախության ուղեգիծ, նպատակ ունենալով միաժամանակ մասնակցել Միությունում, իսկ այժմ արդեն նախկին ԽՍՀՄ-ի տարածքում տեղի ունեցող բոլոր կառուցողական գործընթացներին: Եւ մենք հետեւողականորեն պաշտպանում էինք այդ գիծը, թեեւ հանրապետության ընդդիմությունը մեկ անգամ չէ, որ փորձել է շեղել մեզ այդ գծից: Այն մեր ժողովրդին վստահության եւ ապագայի կանխատեսելիության զգացում է հաղորդում: Ես չեմ կարող, իրավունք չունեմ նրան զրկել այդ զգացումից: Օբյեկտիվ պատճառներով նույնպես հնարավոր չէ մեկ րոպեում բանդել այն, ինչ դարերով է կազմավորվել:

– Չնայած բոլոր տեսակի ջանքերին, շարունակվում է ԱՊՀ-ի միացյալ զինված ուժերի փլուզումը: Արդյո՞ք, դրանում Հայաստանի անվտանգության համար սպառնալիք չկա:

– Մենք կանխատեսում էինք դեպքերի նման զարգացում եւ այդ պատճառով էլ առագացրինք Ռուսաստանի հետ երկկողմ պայմանագրի ստորագրումը, որով նախատեսված է, որ ներկա բանակի փլուզման դեպքում Հայաստանում պայմանագրային հիմունքներով ներկա է գտնվելու առղնե ռուսաստանյան բանակը, հավանաբար՝ ռազմական բազաների կարգավիճակով: Վաղվա Ռուսաստանը, նույնիսկ սեփական կամքին հակառակ, ստիպված կլինի իրեն ճանաչել նախկին ԽՍՀՄ-ի ռազմահաղարական շահերի ժառանգորդը: Եւ եթե ոմանք այլ պատրանքներ են փայփայում, ապա խոսապես մոլորվում են:

– Արդյո՞ք Դուք կիսում եք որոշ քաղաքական գործիչների այն տեսակետը, որ Ռուսաստանում առկա են «կայսերական նկրտումներ» եւ նախկին Կենտրոնի տեղը գրավելու ձգտում:

– Նման կարգի մեղադրանքների համար հիմքեր չեմ տեսնում: Ռուսաստանը ոչ միայն չէր փորձում պահպանել կայսերական հավակնությունները, այլեւ ընդհակառակը՝ օրըստօրե ավելի էր ձգտում ազատագրվել դրանցից: Այժմ տեղի է ունենում ժառանգության բաժանման գործընթաց, եւ յուրաքանչյուրը ցանկանում է ավելի մեծ կտոր ձեռ գցել: Բայց դա բոլորին է վերաբերում, այլ ոչ միայն Ռուսաստանին: Մասնատման ժամանակահատվածը կավարտվի բառացիորեն 3–6 ամսվա ընթացքում, եւ ապա սկիզբ կառնի համախմբման գործընթացը: Վերջին հաշվով մենք կհանգենք այնպիսի մեխանիզմների ստեղծման, որոնք կներդաշնակեն ԱՊՀ-ի միջպետական հարաբերությունները:

– Ինչպիսի՞ն է լինելու Հայաստանի անկախ պետության կերպարը: Չէ՞ որ պատմությունն ընտրություն կատարելու եզակի հնարավորություն է ընձեռում:

– Ինչ վերաբերում է տնտեսությանը, ապա սոսկական ընդօրինակումը ճղի է արհեստական մոդելի ստեղծման վտանգով: Մենք դեռեւս ընդհանուր գծերով ենք մշակել զարգացման ուղիները: Սակայն ունենք բարդական ըմբռնում. նախկին ԽՍՀՄ-ում «փակուղու» վիճակով բավարարվող Հայաստանն անկախության պայմաններում հնարավորություն է ստանում թոթափելու այդ վիճակը եւ աշխույժ միջազգային խաչմերուկ դառնալու՝ թե՛ բաղաքական ու մշակութային, թե՛ տնտեսական իմաստով կապող օղակ ծառայելով Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ բոլոր տեսակի շփումների համար: Մինչեւ վերջին ժամանակներս այդ դերն էր խաղում Լիբանանը՝ հրիստոնյա-մահմեդական մի երկիր, որը հզոր ֆինանսավարկային համակարգ ուներ: Այժմ, սակայն, մեծապես ավերվելով, այն զրկվեց այդ համակարգից եւ ճայտնի չէ, թե երբ կկարողանա վերականգնել տվյալ կարուսելը: Այս իմաստով Լիբանանին կցանկանար փոխարինել Իսրայելը, սակայն հազիվ թե դա երան հաջողվի, եթե հաշվի առնենք երա բարդ հարաբերությունները Մերձավոր Արեւելքի արաբական երկրների հետ: Իրավիճակը ես զուտ բաղամական առումով եմ դիտում: Մենք այժմ շատ աշխույժ արտաքին բաղաքականություն ենք վարում, որպեսզի ծանրակշիռ փաստարկներ ներկայացնենք աշխարհին եւ համոզենք երան, որ Հայաստանն ի վիճակի է հանդես գալ որպես կամուրջ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ:

– Ինձ էլ, խնդրում եմ, համոզեք դրանում:

– Ես արեւելագետ եմ եւ ծանոթ եմ Արեւելքի հոգեբանությանը՝ այնտեղ միշտ էլ երկյուղել են մեծ ճյուսիսային հարեւանի «կռնկի» տակ ընկնելուց: Ռուսաստանի եւ Մերձավոր Արեւելքի միջեւ միջնորդ ունենալը ներկայումս ձեռնտու է թե՛ Հարավին, թե՛ Եւրոպային, թե՛ Ռուսաստանին: Մյուս կողմից, տեղի է ունենում մահմեդական եւ հրիստոնեական աշխարհների վտանգավոր սահմանազատում՝ չափազանց վտանգավոր, բանզի կրոնը վերածվում է բաղաքական գործոնի: Այդ իմաստով, թերեւս, առնակատումը մեղմելու համար չեզոք տարածք ունենալը շահեկան է ե՛ւ Արեւմուտքին, ե՛ւ Մերձավոր Արեւելքին, որը բնավ էլ չի ձգտում իմիճամեկուսացման ու ամեն տեսակի կապերի խզման: Ըստ իս՝ այստեղ է, որ մենք պետք է գտնենք մեր տեղը:

– Կարող եմ Ձեզ շնորհավորել. Հայաստանն ընդունվել է միջազգային վալյուտային ֆոնդ: Ի՞նչ հեռանկարներ են բացվում հանրապետության առջեւ:

– Դա հենց այն ճեղքումն է, որի մասին ես խոսում էի: Մեզանում արդեն աշխատում է ՄՎՖ-ի փորձագետների մի մեծ խումբ, եւ մենք ճույս ունենք, որ այն շուտով մեզ կներկայացնի մեր ֆինանսների, բանկային համակարգի վերակազմավորման ճստակ ծրագիր: Բնականաբար, մենք վարկեր ենք ակնկալում: Բացի այդ, աշխատում ենք նաեւ ազգային տարադրամի ստեղծման վրա, որը «դրամ» է կոչվելու: Աշնանն

արդեն պատրաստ կլինենք: Սակայն դա իմիանպատակ չէ: Երբ այսուհետեւ էլ ԱՊՀ-ում գործերն այս ուղով ընթանան, ապա մենք էլ մեր տարադրամը կներմուծենք՝ ոչ թե առաջինը լինելու մարմաջով, այլ՝ իրավիճակի թելադրանքով:

– Ո՞ր իրադարձությունները կդասեիք միջազգային գործերում Հայաստանի ունեցած հաջողությունների թվին:

– Ամենամեծ հաջողությունը պետք է համարել Հայաստանի նոր իմիջը՝ նրա նվիրվածությունը ժողովրդավարական սկզբունքներին, տնտեսական բարեփոխումներին:

«Հայաստանի Հանրապետություն», 6 փետրվարի, 1992 թ.:
Թարգմանություն ռուսերենից: «Իզվեստիա» ("Известия"), 1 փետրվարի, 1992 թ.:
*Հարցազրույցը՝ **Ալեքսանդրա Լուգովսկայայի**, «Իզվեստիա» թերթի սեփ. թղթակից:*
Հրատարակված՝ «Լեւոն Տեր-Պետրոսյան. «Անկախ Հայաստանը կամուրջ է Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ» վերնագրով:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՀԱՅՔ» ԹԵՐԹԻՆ
(19 փետրվարի, 1992 թ.)

– Պարոն Նախագահ, Արցախյան շարժման չորրորդ տարելիցն է, եւ այս չորս տարիների ընթացքում ամենատարբեր մեկնաբանություններ են տրվել նրա դրդապատճառներին, փուլերին, ընթացքին: Ի՞նչը կառանձնացնեիք Շարժման ազդակներից:

– Հայ ժողովուրդն ոտիքը բաց չի թողել առտահայտելու իր իղձերը անգամ պատմական ամենաբարդ իրադրություններում: Արցախի հարցը 1988-ի փետրվարին պատահականորեն չծնվեց: Նույն երեւույթը տեղի էր ունեցել 60-ական թվականներին, երբ մեր ժողովուրդն առաջինը փորձեց օգտվել խրուշչովյան հարաբերական ազատություններից: Նկատի ունեմ 1965 թ. ապրիլի 24-ի ցույցը, որը Խորհրդային Միության պատմության մեջ առաջին տարեւային եւ զանգվածային ելույթն էր: Հաջորդ տարիներին, մինչեւ բրեժնեւյան իմիանիշխանության հաստատումը, բանի դեռ ազատությունների ալիքը պահպանվում էր, Արցախի եւ Հայաստանի վերամիավորման նպատակով ստորագրություններ հավաքվեցին, ուղարկվեցին Մոսկվա, արտասահմանյան մամուլում արձագանքներ եղան... Սակայն այդ ամենը խեղդվեց, իսկ նախաձեռնողները խստորեն պատժվեցին:

1988-ին վերսկսված շարժումն ապացուցեց, որ մեր ժողովուրդը դարձյալ պատրաստ է օգտագործել ցանկացած հնարավորություն իր ազգային նպատակներին հասնելու համար:

– Այնուամենայնիվ, 88-ին եւս կյանքն իր սրբագրումներն էր մտցնում: Շարժումն այդ իմաստով կարծեք թե ավելի շատ ետնապահ դիրքում էր, քան ինքն էր թելադրում կյանքի ընթացքը:

– Ես համաձայն չեմ: Սկզբից եւեթ թեեւ Շարժումը թվացյալ տարերային բնույթ էր կրում, բայց նրա հիմնական ազդակը, կրկնում եմ, հայ ժողովրդի պատրաստությունն էր՝ օգտվելու ընձեռված հնարավորությունից: Սա լուրջ ազդակ էր, գուցե չգիտակցված, գուցե բնազդական, բայց սա կար, եւ պետք է հատուկ շեշտեմ:

– Շարժումն սկսվեց ամենքին հայտնի կարգախոսներով, սակայն իրադարձությունների գլխապտույտ ընթացքն այլ խնդիրներ պարտադրեց մեզ: Շարժման սկզբում կանխատեսվո՞ւմ էր նման շարունակություն:

– Իհարկե՝ ոչ, չէր կանխատեսվում: Շարժման բնույթի, մեր համոզմունքների փոփոխությունը բնական էր: Գուցե մենք իսկապես առաջին կամ միակ ժողովուրդն էինք, որ իսկապես հավատացինք գորբաչովյան վերակառուցմանը, հավատացինք, որ դրանով եկել է ժողովրդավարական սկզբունքների հաղթանակի ժամը, արդարության ժամը... Բայց շատ շուտ սառը ցնցուղ ստացանք: Եւ փետրվարյան մեկշաբաթյա ցույցերի ընթացքում արդեն կարգախոսները փոխվեցին: Գորբաչովի դիմապատկերները վերացան...

– Ինչպիսի՞ն էր Ձեր վերաբերմունքը ցույցերը դադարեցնելու կոչերին:

– Պատմական տեսակետից դա կարեւոր հարց չէ: Ես չեմ կարծում, թե դա ինչ-որ չափով փոխեց դեպքերի ընթացքը: Ասել, թե եթե ցույցերը չդադարեին՝ Սումգայիթը տեղի չէր ունենա՝ սխալ կլինի: Այն նախապատրաստվել էր եւ պիտի տեղի ունենար, եւ չեմ կարծում, թե դեպքերը կարող էին այլ կերպ զարգանալ:

Մենք գիտակցում էինք, որ վաղ թե ուշ ցույցերը պիտի ավարտվեն: Եւ դժվար էր պատկերացնել, թե հետո ինչպես պիտի Շարժումը պահպանվեր: Անհրաժեշտություն էր զգացվում կազմակերպական ձեւ տալ Շարժմանը: Այստեղից ծնվեց հիմնարկ-ձեռնարկություններում «Ղարաբաղ» կոմիտեներ ստեղծելու գաղափարը, որի մասին եւ հայտարարվեց փետրվարյան հանրահավաքներից մեկում: Եթե «Ղարաբաղ» կոմիտեները չստեղծվեին, Շարժումն իսկապես կարող էր մարել:

– Հաճա՞խ եք կանգնել երկընտրանքի առջեւ, որեւէ կարեւոր քայլ ձեռնարկելիս, որեւէ կարեւոր որոշում ընդունելուց առաջ:

– Երկընտրանքի առջեւ կանգնել ու հիմա էլ կանգնում եմ միայն մեկ դեպքում՝ երբ անորոշություն է: Իսկ երբ հաղթական նպատակը հստակ է, միջոցները՝ տեսանելի, ինձ համար ոչ մի երկընտրանք գոյություն չունի:

– Շարժման սկզբնական շրջանում շա՞տ էին անորոշ պահերը:

– Չէի ասի շատ էին. գուցե դրանք այն պահերն էին, երբ մեզնից պահանջվում էր շատ լուրջ վերաբերվել իրականությանը, իսկ նպատակը եւ դրան հասնելու ուղիները տեսնելուց հետո՝ գործել վճռական: Շարժման ողջ ընթացքում և՛ մեր հաղթական նպատակները, և՛ դրանց հասնելու ուղիները, և՛ դրանցից բխած մեր ծրագրերը հիմնականում հստակ են եղել: Իհարկե՝ ընթացքում մշտապես ենթարկվելով ճշգրտումների:

– Եղե՞լ են սխալներ կամ վրիպումներ, որոնք բացառելու դեպքում այլ ընթացք կունենային իրադարձությունները:

– Անշուշտ, սխալներ, վրիպումներ, սայթաքումներ եղել են: Ժամանակին վերլուծելով դրանք՝ ձգտել ենք ճշգրտումներ մտցնել մեր անելիքների մեջ: Ամենամեծ վրիպումն այն եմ համարում, որ ուշ ազատվեցինք Շարժման իներցիայից, ուշ գիտակցեցինք, որ «Ղարաբաղ» կոմիտեն, ՀՀՇ-ն դառնել են այլընտրանքային իշխանություն: Ուշ սկսեցինք մեր կամքը թելադրել նախկին կոմունիստական վարչակարգին, երբեմն հավատացինք նրա անկեղծությանը: Պետք էր ավելի վճռական գործել:

Մենք չունեինք իշխանություն գրավելու ո՛չ նպատակ, ո՛չ էլ գիտակցություն: Սա մեր սխալն էր, բայց երեւի պատմության տրամաբանությունն էր, որ ուշ գիտակցեցինք այս անհրաժեշտությունը:

– Ժողովրդավարության, անկախության վերստեղծման ճանապարհին, թվում է, սոցիալական դժվարություններն անխուսափելի են, բայց հոգեւոր-մշակութային կյանքում եւս դրական տեղաշարժեր համարյա չկան: Մինչդեռ հենց այս ոլորտն է առավել զգայուն ազգի վերածննդի նախանշանների հանդեպ:

– Սա չպետք է դժբախտություն համարվի, որովհետեւ նման օրինաչափություն ընդհանուր առմամբ նկատվում է համաշխարհային պատմության մեջ: Ցնցումների շրջանում հոգեւոր կյանքն իսկապես նահանջ է ապրում, առաջնային են դառնում այլ խնդիրներ՝ ազգի գոյության հետ կապված կենսական խնդիրները. եւ ստեղծագործ ուժերը տեղափոխվում են այս ոլորտ: Նույնը դրսեւորվեց նաեւ մեր Շարժման ընթացքում, նույնն է նաեւ փլուզված կայսրության մյուս հանրապետություններում: Ռուս շատ տաղանդավոր գրողներ, արվեստագետներ, որոնք փայլում էին լճացման տարիներին՝ այսօր հայտնվել են հրապարակախոսության ասպարեզում, իսկ գրականությունն ու արվեստն այնտեղ եւս առանձնապես շեն ծաղկում:

Մեղավոր փնտրելու կարիք չկա. վստահ եմ, որ կանցնի այս շրջանը: Մենք լուրջ հիմքեր ենք տեսնում նաեւ հոգեւոր կյանքում նոր թռիչքների համար: Երբ կարողանանք ազատվել առօրյա կենցաղային հոգսերից, ամրապնդել մեր պետականությունը, մեր տնտեսությունը, կարծում եմ՝ այդ խնդասով եւս զբաղվելու առիթ կունենանք:

– Ժողովրդի այսօրվա տրամադրություններն, անշուշտ, Ձեզ հայտնի են: Ի՞նչ ունեք ասելու ի պատասխան:

– Մեր ժողովուրդը միշտ իր մեջ ուժ է գտել դիմանալու դժվարություններին, հնարավորություն է գտել ելնելու բարդ իրավիճակներից: Հիմա եւս հեշտ չէ, բայց համոզված եմ, այս իրավիճակը նույնպես կհաղթահարվի: Ժողովուրդները մի յուրահատկություն ունեն՝ տեսնել միայն պահը, տեսնել միայն ժամը եւ ոչ ամենեւին՝ ժամանակի ընթացքը, շաւած՝ հավերժությունը:

Չորս տարին ժողովրդի պատմության մեջ վայրկյան է: Այսօր պետք է սառնասրտորեն գիտակցենք, որ վայրկյաններում պետություն չի ստեղծվում, վայրկյաններում տնտեսություն չի կարգավորվում: Դա երկար ժամանակի խնդիր է: Պետք է համբերությամբ լցվենք ու հասկանանք, որ մենք պատմություն ենք կերտում եւ մեր ապագա երջանիկ կամ ծաղկող պետության սոսկ հիմնադիրներն ենք: Դրա պատուղներն, ըստ երեւույթին, իրենք չենք վայելելու, այլ մեզնից հետո եկողները: (Այստեղ նորից շատ լեզուները կարող են ծաղրել մեզ, որ կոմունիստներն էլ 70 տարի ժողովրդին կերակրել են երջանիկ ապագայի հույսե-

րով: Ու նորից կարող են չտեսնելու տալ, որ խոսքը տրամագծորեն հակառակ վիճակների է վերաբերում):

Մենք առավելություն ունենք նախկին ԽՍՀՄ հանրապետությունների նկատմամբ: Դա այն է, որ շատ ավելի պատրաստ դիմավորեցինք մեր անկախությունը, հան նրանք: Եւ այն զգացումը, որ կա մեր ժողովրդի մեջ՝ որ մեր անկախությունը երկնային շնորհ չէր, նվեր չէր, այլ մեր պայքարի, մեր զոհաբերների գնով ձեռք բերված նվաճում, ինձ թվում է՝ մեծապես կնպաստի մեր ժողովրդի կամքի ամրապնդմանը:

Առիթից օգտվելով՝ պետք է շնորհավորեմ մեր ժողովրդին Արցախյան շարժման տարեդարձի առթիվ, մաղթեմ բոլոր ուժերով լծվել մեր պետականության կերտմանը:

«Հայք», 19 փետրվարի, 1992 թ.:
*Հարցազրույցը՝ **Վասակ Դարբինյանի**:*
Հրատարակված՝ «Պատմության եւ կյանքի տրամաբանությունը» վերնագրով:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(22 մարտի, 1992 թ.)

Ժժրախտաբար, առօրյա իրադարձությունների արագ զարգացման, փոփոխության պատճառով մենք զրկված ենք երեւույթների խորը մշտապես դիտելու հնարավորությունից: Իսկ երեւույթները չափազանց արմատական են, շրջադարձային, եթե չասենք պատմական:

Իրականում մենք գործ ունենք ոչ թե սոսկ բաղաքական կամ տնտեսական վերափոխումների, այլ մարքսիզմի լեզվով արտահայտված՝ ողջ հասարակարգի փոփոխության երեւույթի հետ:

Փոխվում է հասարակարգը, փոխվում է մեր գոյության կառույցների պատմականորեն ձեւավորված համակարգը, որ բնութագրվում է իրենց վախճանն ապրող երեմ պատմական իրողությունների դրսեւորմամբ: Դրանք են.

ա) երեմ հարյուր տարվա պատմություն ունեցող Ռուսական կայսրության փլուզումը, այսինքն՝ կայսրության բաղաքական կառուցվածքի արմատական փոփոխությունը՝ զավթված երկրների անցումը գաղութային վիճակից անկախ պետությունների կարգավիճակի,

բ) կոմունիզմի գաղափարախոսության ճգնաժամը եւ դրա հետ կապված՝ կոմունիստական վարչակարգի կործանումը, ժողովրդավարության եւ իրավական պետության սկզբունքների հաստատումը,

գ) պետական սեփականության մենաշնորհի վերացումը, վարչարարական տնտեսավարման փոխարինումը ազատ շուկայական հարաբերություններով:

Փոխվում է ամեն ինչ, եւ սրանում է մեր նպատակների իրականացման հսկայական բարդությունը: Թվարկված իրողությունների համընթաց ծավալումը նույնիսկ մեծ ու հզոր ազգերից աճուկի ջաներ կպահանջեր, ուր մնաց Հայաստանի նման փոքրիկ պետության պարագայում:

Պատմության տնօրինությամբ մեր ժողովրդի ներկա սերնդին է վիճակվել լուծելու այս բարդ խնդիրները, որոնց խորը, դժբախտաբար, դեռեւս լիովին չի ընկալվում բոլորի կողմից: Դրանով է բացատրվում, մասնավորապես, ուշացող տեղաշարժերի պատճառով հասարակության որոշակի շերտերում առաջացած անհամբերությունը: Պետք է ենթադրել, որ այդ խորը չի գիտակցվում (իսկ գիտակցվելու պարագայում հնարամտորեն շահարկվում է) բաղաքական ընդդիմության կողմից: Այս ամենը, պարզապես, առայժմ ցույց է տալիս նման խոշոր երեւույթների ողջ ընդգրկումն ընկալելու մեր անպատրաստությունը:

* * *

Այստեղ կարեւորվում է Հայոց համազգային շարժման կողմնորոշող դերը ժողովրդի եւ պետական իշխանությունների համար: Անցյալում ՀՀՇ-ն, իսկ նրանից առաջ «Ղարաբաղ» կոմիտեն, իրականացնում էր հենց այդ դերը: Մասնավորապես, պայքարի սկզբնական փուլում դա էր «Ղարաբաղ» կոմիտեի հիմնական կոչումը: Շարժումն իրականում իրենակառավարվող էր, պարզապես հարկավոր էր մի մարմին, որը կարողանար, ճիշտ ուղղություն տալ նրան՝ գործնական աշխատանքն ամբողջությամբ թողնելով ժողովրդական զանգվածներին, որոնք հնարամտորեն գտնում էին գործունեության՝ պահի համար անհրաժեշտ լավագույն ձեւը:

Հայոց համազգային շարժումը հետագայում եւս հաջողությամբ կատարում էր իր այդ կողմնորոշիչ դերը, որի շնորհիվ հանրապետության իշխանությունները կարողացան խուսափել հավանական սխալներից: Ժամոանանք, որ շատերի կողմից փորձեր եղան մեզ շեղելու ընտրած ուղեգծից, մասնավորապես՝ Խորհրդային Միության նկատմամբ ուղեգրած սկզբունքից, անկախության հանրաքվեի հետ կապված

ծրագրի իրականացման գործընթացից, օգոստոսյան հեղաշրջման օրերին ցուցաբերած դիրքորոշումից, Անկախ Պետությունների Ընկերակցության շրջանակներում վարվող բաղաքականությունից, մեր հարեւանների հետ զարգացող հարաբերությունների ճանապարհից եւ այլն: Եւ եթե հանրապետության իշխանություններին հաջողվեց հետեւողականորեն իրականացնել ուղեգրած բաղաքական ուղեգիծը, ապա նախ եւ առաջ շնորհիվ ՀՀՇ-ի, որը, գաղտնիք չէ, ներկա իշխանությունների առայժմ միակ սոցիալական հենարանն է: Վստահ եմ, որ Հայոց համազգային շարժումը այսուհետեւ եւս կկարողանա կատարել իր կողմնորոշիչ դերը, որով մեծապես կօգնի իշխանություններին՝ իրականացնելու ընդունված ծրագրերը:

* * *

Վերը թվարկված երեւույթների գնահատման տեսակետից պետք է նկատի առնել եւս մի կարեւոր հանգամանք. բաղաքական համակարգի, հասարակական կառույցների, տնտեսական հարաբերությունների փոփոխությունները հանրապետության համար ստեղծում են մի նոր աշխարհաքաղաքական վիճակ, որը մեզ պարտադրում է հիմնովին վերանայել մեր ազգային գաղափարախոսությունը, բաղաքական մտածողությունը եւ նույնիսկ հոգեբանությունը: Այս առումով անհրաժեշտ է արձանագրել, որ անցած չորս տարիների ընթացքում շարժմանը հաջողվեց հաղթահարել բազմաթիվ հոգեբանական արգելքներ թե՛ ազգային գաղափարախոսության, թե՛ բաղաքական մտածողության բնագավառում: Շարժման շնորհիվ ազգային ռոմանտիկային փոխարինելու նկատ բաղաքական իրատեսությունը, որն այսօր լիովին գիտակցվում է ժողովրդի կողմից: Գիտակցվում է վերջապես, որ ազգի ու պետության իրական շահերը կապ չունեն զգացմունքների հետ, եւ որ զգացմունքները միայնամիայն կարող են խանգարել այդ շահերի իրականացմանը:

Աշխարհաքաղաքական տեսակետից երկրագունդը միշտ էլ կազմված է եղել պատմության որոշակի փուլի համար հարաբերականորեն անսասան համակարգերից: Առաջին հերթին ես նկատի ունեմ բաղաքական համակարգերը, անվտանգության եւ համագործակցության միջազգային կոլեկտիվ կառույցները: Խորհրդային Միությունն, ահա, անվտանգության եւ համագործակցության այդպիսի անսասան համա-

կարգերից մեկն էր, որի ոլորտները հստակ սահմանված էին եւ անթափանցելի արտաքին ուժերի համար։ Եւ քանի դեռ ներքին գործընթացները չէին հանգեցրել նրա ինքնաքայքայմանը, քանի դեռ կայսրությունը չէր հաշտվել այն մտքի հետ, որ իր ազդեցության ոլորտները բաց են աշխարհի համար, ոչ ոք չէր համարձակվում թափանցել այդ ոլորտները։ Նույնիսկ Բալթյան հանրապետությունների դեպքում, որոնց բռնազավթման հակաօրինականությունն ու անկախության իրավունքը ակնհայտ էր աշխարհի համար, Արեւմուտքը ցուցաբերեց որոշակի զգուշավորություն եւ նրանց անկախությունը ճանաչեց միայն այն բանից հետո, երբ Ռուսաստանն ինքը հաշտվեց այդ մտքի հետ։

Այսօր Խորհրդային Միությունը չկա, բայց խորհրդային նախկին հանրապետությունները (նույնիսկ անցյալում ամենածայրահեղ անջատողականները), կարծես թե բնազդաբար զգալով անվտանգության այդ համակարգի թեկուզ ժամանակավոր գոյատեւման անհրաժեշտությունը, ստիպված են համագործակցել Անկախ Պետությունների Ընկերակցության շրջանակներում։ Հայաստանն առաջին իսկ օրից ողջունեց այդ գաղափարը եւ իր կառուցողական դերը խաղաց Ընկերակցության կայացման գործում։ Եւ այսուհետեւ եւս, չնայած Ընկերակցության համակարգում առկա անորոշություններին ու դրանցից ծագող հասկանալի դժգոհություններին, Հայաստանը, ըստ իս, պետք է շարունակի իր գործուն մասնակցությունն այս կառույցում, քանի որ առայժմ սա է մեր անվտանգության եւ բնականոն կենսագործունեության ապահովման միակ համակարգը։ Քանի դեռ չի ստեղծված անվտանգության այլ համակարգ, մենք պարտավոր ենք պահպանել գոյություն ունեցողը։ Հակառակ դեպքում մեր երկրամասում կառաջանա վակուում, իսկ վակուումն, ինչպես հայտնի է, առանձնահատկություն ունի անմիջապես լցվելու այլ ուժերով։ Եթե Ընկերակցությունը միանգամից դադարի գոյություն ունենալուց, Անդրկովկասն անմիջապես կդառնա, այսպես կոչված, երրորդ ուժերի թափանցման ոլորտ, ինչը մեծապես կխախտի երկրամասում ձեւավորված քաղաքական հարաբերական հավասարակշռությունը։

Չէի ասի, թե դա մեզ համար կնշանակի անխուսափելի կործանում, պարզապես նոր պայմաններին համակերպվելու համար ստիպված կլինենք հաղթահարել բազմաթիվ լրացուցիչ դժվարություններ։ Մենք

դրան էլ պետք է պատրաստ լինենք, որովհետեւ իրադարձությունները կարող են զարգանալ մեր կամքից անկախ, եւ Ընկերակցությունը կարող է փլուզվել հակառակ մեր ցանկության։ Ռուսաստանը, զբաղված լինելով իր ներքին խնդիրներով, վերջիվերջո կարող է հեռանալ այս երկրամասից։ Այնուամենայնիվ, Ընկերակցության ներկայությունը տարածաշրջանում ես դիտում եմ առայժմ որպես միակ կայունացնող գործոնը, ինչից եւ թելադրվում է մեր քաղաքականությունը։ Դա չի նշանակում, անշուշտ, որ մենք պետք է բացառենք անվտանգության եւ համագործակցության այլ միջազգային կառույցների հետ հարաբերությունների հաստատումը, ինչպես, օրինակ, ՆԱՏՕ-ի, Եվրոպական համայնքի, Սեւծովյան գոտու եւ այլն։ Այսինքն, մենք պետք է գործենք բոլոր ուղղություններով, մինչեւ անվտանգության երաշխիքների հուսալի համակարգի ստեղծումը։

* * *

Աշխարհաքաղաքական առումով հատուկ ուշադրության է արժանի հայ-ռուսական հարաբերությունների խնդիրը։ Տպավորությունն այն է, եւ դա խոստովանում են նաեւ որոշ ռուս քաղաքական գործիչներ, որ Ռուսաստանը մեր երկրամասի նկատմամբ այսօր չունի հստակ մշակված քաղաքականություն եւ դրանից բխող գործողությունների ծրագիր։ Կան մարդիկ, որոնք հենց այդ անտարբերությունն էլ համարում են Ռուսաստանի քաղաքականությունը։ Իմ կարծիքով, դա ճիշտ չէ։ Պարզապես Ռուսաստանը, կքած բազմաթիվ ներքին խնդիրների ծանրության տակ, կենաց-մահու պայքար է մղում սեփական պետության կայացման համար։ Ուղղակի նրա ձեռքերը չեն հասնում մեր տարածաշրջանին, որպեսզի կարողանա այստեղ հստակ քաղաքականություն իրականացնել։ Սակայն, համոզված եմ, որ սա ժամանակավոր երեւույթ է։

Վիճակը նման է 1918 թվականին։ Այն ժամանակ էլ, զբաղված լինելով ներքին խնդիրներով, Ռուսաստանը հեռացավ Անդրկովկասից, բայց երկու տարի անց հրով ու սրով ետ վերադարձավ։ Հիմա չեմ կարծում, որ նույնը կրկնվի, այսինքն, չեմ հավատում, որ իր խնդիրները լուծելուց հետո Ռուսաստանը կփորձի վերականգնել կայսրության տիրապետությունը մեր երկրամասում։ Որովհետեւ 1918 թվականի հետ անցկացրած զուգահեռը թեեւ տեղին է, բայց կա մի էական տարբերու-

թյուն: Այն ժամանակ, հետանալով հանդերձ, Ռուսաստանը չճանաչեց անդրկովկասյան պետությունների անկախությունը, իսկ այսօր մեր անկախությունը փաստորեն վավերացվեց Ռուսաստանի կողմից ճանաչման արժանանալու շնորհիվ, որ չափազանց կարևոր փաստ է հայ-ռուսական երեքհարյուրամյա հարաբերությունների պատմության մեջ:

Այդուհանդերձ, խուսափելով անգամ կայսրության վերականգնումից, Ռուսաստանը վաղ թե ուշ պետք է զգա իր ավանդական ռազմաստրատեգիական շահերը: Եթե չզգա անգամ, նրան զգացնել կտան, քանի որ, ինչպես ասվեց, վակուումը առանձնահատկություն ունի լցվելու այլ ուժերով, որ Ռուսաստանի համար հանդուրժելի չի կարող լինել: Նա չի կամենա նախկին կայսրության ծայրամասային տարածաշրջանները թևկուզ որպես ազդեցության ոլորտներ զիջել այլ ուժերի: Եւ Ռուսաստանը, կարծեմ թե, բնազդաբար զգում է այս անհրաժեշտությունը, ուստի կարծում եմ, որ նա կձգտի երկարաձգել իր ներկայությունը, մինչեւ կարողանա լուծել ներհին հարցերը եւ հատուկ բաղաքականություն վարել մեր երկրամասում:

* * *

Իրանի եւ Թուրքիայի նկատմամբ մշակվող հարաբերությունները ընդհանուր առմամբ ձեզ հայտնի են: Հայաստանի ներկա իշխանությունները սկզբից եւեթ որդեգրել էին այն բաղաքականությունը, որ ցանկացած պետության գոյության ամենահուսալի երաշխիքը նրա բնականոն հարաբերություններն են անմիջական հարեւանների հետ: Սա մեր արտաքին բաղաքականության հիմնաքարն է: Մենք չենք կարող հանրապետության անվտանգության երաշխիքների համակարգ ստեղծել՝ հույս դնելով թևկուզ հզոր ու ազդեցիկ, բայց հեռավոր պետությունների՝ Ռուսաստանի, Եւրոպայի կամ Միացյալ Նահանգների վրա: Մեր խնդիրները մենք նախ եւ առաջ պետք է լուծենք երկրամասում, անմիջական հարեւանների հետ:

Այս առումով Իրանի հետ հարաբերություններում որեւէ բարդություն չի նկատվում: Ընդհակառակը, կողմերն ունեն նույնիսկ ընդհանուր բաղաքական շահեր, այն է՝ պատմական հակասությունների բացակայության պայմաններում, որ չափազանց նպաստավոր հանգամանք է հայ-իրանական հարաբերությունների զարգացման գործում:

Գոհունակությամբ պետք է նշել, որ վերջին շրջանում Իրանի հետ հարաբերությունները զարգանում են բնականոն, արագացված ընթացքով եւ, վստահ եմ, շուտով մենք կզգանք այդ հարաբերությունների իրական արդյունքները:

Ինչ խոսք, Թուրքիայի հետ հարաբերությունները շատ ավելի բարդ են ընթանում, թեեւ ինչպես վերը նշվեց, անցած չորս տարիների ընթացքում մեզ հաջողվեց հաղթահարել գոյություն ունեցող հոգեբանական արգելքները: Հաջողվեց մեր ժողովրդին ներշնչել, որ Թուրքիայի հետ հարաբերություններում մենք պատրաստ ենք առաջնորդվել միայնումիայն պետական շահերով, իրատես հաղաքականության սկզբունքներով:

Հարցի առթիվ թեեւ մեր տեսակետը հայտնի է, սակայն հարկ եմ համարում եւս մեկ անգամ կրկնել. Հայաստանը եւ Թուրքիան, լինելով հարեւան երկրներ, ունեն ակնհայտ փոխադարձ շահեր, որոնք հիմք են հանդիսանում առեւտրական, տնտեսական, գիտա-մշակութային լուրջ հարաբերություններ հաստատելու համար: Վինելով փոխշահավետ, հարաբերություններն այնքան թանկ են կողմերի համար, որ նրանք պետք է խուսափեն միմյանց հաղաքական նախապայմաններ թելադրելուց:

Պետք է նշել, որ այս տեսակետն ընդհանուր առմամբ ընդունվում էր նաեւ Թուրքիայի պաշտոնական շրջանակների կողմից: Սակայն վերջին շրջանում թուրքական կառավարության որոշ ներկայացուցիչների ելույթներում նկատվում են այս սկզբունքին հակասող հայտարարություններ: Սակայն սա սպասելի էր, ուստի մեզ ամենեւին չպետք է խոտնեցնի: Այստեղ կա երկու հանգամանք, որոնք պետք է սառնասրտորեն վերլուծենք՝ բոլորովին չզարմանալով Թուրքիայի դիրհորոշման մեջ տեղի ունեցած փոփոխության առթիվ:

Առաջինն Արցախի խնդիրն է: Բնականաբար, Թուրքիան չէր կարող անտարբեր մնալ իր արյունակիցների բախտի նկատմամբ: Չպետք է մոռանալ, որ բացի պաշտոնական հաղաքականությունից, Թուրքիայում եւս գոյություն ունի հասարակական կարծիք, ինչպես նաեւ ընդդիմադիր ուժեր, որոնք հաղաքական վարկ ձեռք բերելու նպատակով շահարկում են Արցախի հարցը: Այսինքն, Արցախի խնդիրը կարծեմ թե աստիճանաբար դառնում է Թուրքիայի ներհին հաղաքական հարց: Բոլոր կուսակցությունները, հաղաքական գործիչները, մեկը մյուսից առաջ անցնելով, փորձում են ապացուցել իրենց նախանձախնդրությունը ադրբե-

ջանցի ցեղակիցների մղած պայքարի նկատմամբ։ Սա, ինչ խոսք, վտանգավոր միտում է։ Առայժմ թուրքական կառավարությունը դեռեւս կարողանում է հավասարակշռել այս ճնշումը։ Սա պետք է գնահատել, որովհետեւ կառավարությունը համենայն դեպս առաջնորդվում է երկրի իրական շահերով, եւ, ամենայն հավանականությամբ, չէր ցանկանա, որ Արցախի խնդիրը խանգարեր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը։ Այդուհանդերձ, թուրքական կառավարությունը ենթարկվում է լուրջ ճնշման եւ այդ պատճառով ստիպված է որոշ զիջումներ կատարել հասարակական կարծիքին, իսկ միջազգային ասպարեզում՝ աջակցել Ադրբեջանի դիվանագիտական-քարոզչական ջանքերին։

Երկրորդ հանգամանքը կապված է Խորհրդային Միության փլուզման եւ Ռուսաստանի վերը նշված դիրքորոշման պատճառով Անդրկովկասում առաջացող վակուումի հետ։ Լինելով հզոր, լուրջ դիվանագիտական ավանդույթներ ունեցող պետություն՝ Թուրքիան անգամ բնազդաբար պետք է զգար, որ ժամանակն է օգտվելու այդ դատարկությունից։ Այդ պատճառով, նահանջելով հայ-թուրքական հարաբերությունների հաստատման խնդրում քաղաքական նախապայմաններ չներկայացնելու սկզբունքից, Թուրքիան վերջերս սկսել է նման պայմաններ առաջադրել։ Դա տեղի ունեցավ ե՛ւ Պրագայում, ԵԱՀԽ-ի շրջանակներում ընթացող խորհրդաժողովներում, ե՛ւ Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալի Հայաստան կատարած վերջին այցելության ժամանակ։ Սա նույնպես բնական է եւ մեզ համար լիովին հասկանալի։ Ես ստիպված էի դեսպանին բացահայտորեն ասել հետեւյալը՝ դուք ուզում եք օգտվել ստեղծված դրությունից, տեսնելով, որ նախկին միութենական հանրապետությունների անվտանգության համակարգը խախտված է, եւ մտածելով, որ մենք խիստ թուլացած ենք, փորձում եք մեզնից ինչ-ինչ քաղաքական հայտարարություններ պոկել։ Փորձ արվեց նրան բացատրել, որ դա իրատեսական մոտեցում չէ, եւ դրա վերջնական արդյունքը պարզապես կլինի հայ-թուրքական հարաբերությունների վիժեցումը, որը ձեռնտու չէ ո՛չ Հայաստանին, ո՛չ էլ Թուրքիային։ Դեսպանին առաջարկվեց մեր դիվանագիտական հարաբերությունները հաստատել միջազգային ընդունված չափանիշերի հիման վրա։ Քանի որ երկու պետություններն էլ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների՝ ԵԱՀԽ-ի եւ ՄԱԿ-ի անդամ են, իրենց հարաբերությունները պետք է

հաստատեն միայնումիայն այդ կառույցների սկզբունքների հիման վրա, առայժմ մի կողմ թողնելով հայ-թուրքական երկկողմանի քաղաքական անհամաձայնությունները։ Թեեւ պարզ է, որ այդ քաղաքական խնդիրներն էլ արժանի են լուրջ քննարկման, սակայն հարաբերությունների երկրորդ փուլում՝ դիվանագիտական, տնտեսական, առեւտրական կապերի հաստատումից հետո։ Այն ժամանակ, ահա, մենք կքննարկենք բոլոր վիճելի հարցերն ու տարաձայնությունները, եւ վստահ եմ, որ իրական պետական շահերը կողմերին կստիպեն գտնել փոխզիջումներ, երկուստեք ընդունելի մոտեցումներ։

* * *

Մի քանի խոսք Արցախի հիմնահարցի մասին։ Արցախահայության հերոսական դիմադրությունը, ազգային-ազատագրական պայքարն արդեն ստիպել է աշխարհին Լեռնային Ղարաբաղը դիտել որպես ինքնուրույն քաղաքական գործոն եւ հաշվի նստել այս իրողության հետ։ Դա տեղի ունեցավ միայն այն բանից հետո, երբ արցախցին ապացուցեց իր ինքնապաշտպանական կարողությունը, ցույց տալով, որ Արցախը բռնի ուժով հայաթափելու գործը ոչ միայն հեշտ չէ, այլեւ հղի է չափազանց վտանգավոր հետեւանքներով՝ ինչպես Ադրբեջանի, այնպես էլ տարածաշրջանի ու աշխարհի խաղաղության համար։ Ահա այս մտահոգությունն է պատճառը, որ Արցախն այսօր փաստորեն դարձել է միջազգային ուշադրության կենտրոն, իսկ արցախյան հիմնահարցը՝ միջազգային խնդիր։ Քաղաքական տեսակետից սա պետք է համարել մեր ամենակարեւոր ձեռքբերումը։ Չեմ կասկածում, որ Արցախն արդեն փաստորեն նվաճել է միջազգային հանրության կողմից մարզում անվտանգության երաշխիքների մի կայուն համակարգ ստեղծելու իրավունքը։

Արցախի հիմնահարցը մասնավորապես այսօր օրակարգի խնդիր է դարձել Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդում (ԵԱՀԽ)՝ քննարկվելով նրա վերջին բոլոր նիստերում։ Մարտի 24-ին այս առթիվ պետք է կայանա մի նոր քննարկում, որտեղ պետք է ներկայացվեն հարցի լուծման կոնկրետ առաջարկներ։ Այստեղ նախեւառաջ ենթադրվում է միջազգային դիտորդների ներկայությունը, չի բացառված նաեւ Արցախի սահմաններում խաղաղարար ուժերի տեղադրումը։

Մարտի 21-ին ես հանդիպում ունեցա ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշի հետ, որից առաջ նույն օրը եւ նույնման տեւողությամբ զրույց էր կայացել նաեւ Հայաստանի արտաքին գործերի նախարար Բաֆֆի Հովհաննիսյանի եւ Միացյալ Նահանգների պետական քարտուղար Ջեյմս Բեյքերի միջեւ: Ջրույցների բովանդակությունն այն էր, որ Միացյալ Նահանգները, նախօրոք խորհրդակցելով Թուրքիայի հետ, հանգել է այն եզրակացության, որ Արցախի հարցի շուրջ եւրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդի շրջանակներում պետք է սկսվեն եռակողմ բանակցություններ՝ Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ: Դա հաստատեց նաեւ Թուրքիայի արտգործնախարար Հիմմեր Զեքինը՝ նույն օրն ինձ հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ:

Մշակված է նաեւ երեք կետից բաղկացած մի ծրագիր, որը ենթադրում է միջազգային դիտորդների վերահսկողությամբ իրականացվող՝ կրակի դադարեցում, հաղորդակցության միջոցների ապաշրջափակում, եռակողմ բանակցություններ: Ադրբեջան – Ղարաբաղ – Հայաստան հանդիպման ընթացքում, բնականաբար, կքննարկվի բանակցություններին երրորդ կողմերի մասնակցության հարցը. Հայաստանը կանի իր առաջարկությունները, Ադրբեջանը, բնականաբար, կառաջադրի իր թեկնածությունները:

Մենք այլ ուղի չունենք, եթե ոչ՝ միայնումիայն Արցախի հարցի խաղաղ լուծումը: Մինչեւ հիմա մեզ հաջողվել է հայ-ադրբեջանական հակամարտությունը տեղայնացնել Ղարաբաղի տարածքում, ամեն կերպ խուսափել Հայաստանի եւ Ադրբեջանի ամիջական բախումից, ինչը հաղարական տեսակետից մեզ չափազանց նպաստավոր դիրք է ապահովել: Այսուհետեւ ես մենք պետք է անենք ամեն ինչ, որպեսզի արցախյան հակամարտությունը չվերածվի ընդհարման Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Այս առումով ես Հայոց համազգային շարժումը մեծ անելիքներ ունի, քանի որ, դժբախտաբար, մեր հասարակության մեջ կան ուժեր, որոնք սերմանում են ոչ միայն խուճապի տրամադրություններ, այլեւ պատերազմի մոլագարություն, որը մեր նորածնունդ պետության գլխին կախված ամենամեծ վտանգն է: Զմռռանալով պատմության դասերը, մենք պետք է ամեն կերպ խուսափենք այդ վտանգից: Բարեբախտաբար, միջազգային միջամտությունն այնքան է հասունացել, որ կարծես թե արդեն իրական հնարավորություն է ստեղծվել մարելու Արցախի պայթյունավտանգ օջախը:

* * *

Ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել նաեւ հանրապետության ներքին կյանքի որոշ բարդությունների վրա: Ամենացավոտն այստեղ սոցիալական խնդիրների լուծման անբավարարությունն է, մեր ժողովրդին բաժին ընկած այն հսկայական դժվարությունները, որոնք առաջացել են հաղարական եւ տնտեսական համակարգերի վերափոխման բնական գործընթացի հետեւանքով: Եթե մենք չզգանք այդ բնական գործընթացի անխուսափելիությունը, չգիտակցենք նրա առարկայականությունը, տուրք տանք ամբոխավարական զգացմունքներին, ապա ոչ միայն կկորցնենք մեր հաղարական ձեռքբերումները, այլեւ մեր ժողովրդին կկանգնեցնենք շատ ավելի ծանր սոցիալ-տնտեսական հետեւանքների առջեւ: Եթե մենք ուզում ենք դառնալ ամուր պետություն, աստիճանաբար բավարարել մեր ժողովրդի թեկուզ տարրական սոցիալական պահանջները, պետք է հնարավորություն տանք ներկա իշխանություններին՝ իրականացնելու իր ծրագրերը: Եթե չտրամադրենք այդ հնարավորությունը, հակադրվելով տնտեսության զարգացման օրինաչափություններին՝ այսօրվանից փորձենք պետության գլխին փաթաթել առայժմ անիրականանալի սոցիալական պահանջներ, տրվենք «պոպուլիստական» տրամադրությունների, այդ ծրագրերը, որոնք դժբախտաբար այլընտրանք չունեն, ի դերեւ կելնեն: Վճռորոշը ժամանակի, պատեհության գործոնն է, որ պետք է տրամադրվի ներկա իշխանություններին:

Ջեմ կարծում, որ եթե լինեին ավելի ընդունելի ծրագրեր եւ այլ ուժեր, որոնք կարողանային իրականացնել այդ ծրագրերը, ՀՀՇ-ն իր տեղը հեշտությամբ չզիջեր ավելի կարող այդ ուժերին: Բայց, դժբախտաբար, այդպիսի ծրագրեր եւ ուժեր չկան: Այն ամենը, ինչ գովում է ընդդիմադիր մամուլում ինչ-որ ծրագրերի մասին, որոնք իբր հաշվի չեն առնվում իշխանությունների կողմից, պարզ սուտ է, հաղարական հաշվարկ, էժանագին շահարկում: Բայց դա անխուսափելի է, քանի որ ընդդիմության էությունը իշխանություններին հակադրվելն է: Այս իրողու-

բյան հետ պետք է հաշտվել եւ կարողանալ հակադրել սեփական փաստարկները:

* * *

Հաջորդ չլուծված խնդիրը, որը երեւի թե դեռ երկար ժամանակ չհաջողվի հաղթահարել, նախկին պետական ու տնտեսական կառույցների վերափոխումն է: Քանի դեռ Հայաստանում գոյություն ունի խորհուրդների համակարգը, մենք չենք կարող ստեղծել այսօրվա պահանջներին համապատասխանող լուրջ պետական կառույցներ: Իսկ համակարգը, թեեւ գլխատված, դեռեւս շարունակում է իր գոյությունը, նրա ներքին օղակներում տիրում են թե՛ այդ կառույցի բարերը, թե՛ նաեւ՝ պաշտոնյաները:

Դժբախտաբար, Գերագույն խորհուրդը նույնպես դեռ չի պատկերացնում իր նոր դերը: Սա Հայաստանի համար բացառություն չէ, նույն երեւույթն առկա է խորհրդային բոլոր նախկին հանրապետություններում, առավել ընդգծված՝ Ռուսաստանի խորհրդարանում:

Նախագահական համակարգի հաստատմամբ գործադիր իշխանություններն ստացել են լայն լիազորություններ, որոնց սահմաններում կարող են բավարար չափով գործել, սակայն Գերագույն խորհուրդը չի հաշտվում այս իրողության հետ: Խորհրդարանը նախկին հոգեբանությամբ փորձում է պահպանել գործադիր իշխանությունների նկատմամբ ունեցած, իսկ այսօր արդեն օրենսդրությամբ բացակայող, լծակները: Թեեւ օրենսդրությունը փոխվել է, հստակ տարանջատում է տեղի ունեցել գործադիր եւ օրենսդիր իշխանությունների միջեւ, սակայն, ըստ երեւույթին, այդ հոգեբանությունը հաղթահարելու համար Գերագույն խորհրդին դեռեւս ժամանակ է հարկավոր:

Եթե ուշադիր հետեւելու լինենք վերջին ժամանակներս գործադիր իշխանությունները խորհրդարանի աշխատանքները խանգարող որեւէ այլ չեն կատարել: Ընդհակառակը, իրենց օրենսդրական նախաձեռնություններով նրանք փորձել են աշխուժացնել խորհրդարանի օրինաստեղծ աշխատանքը: Իսկ եթե հետեւենք Գերագույն խորհրդի վերջին նստաշրջաններին, ապա կնկատենք, որ խորհրդարանը, դժբախտաբար, մոռացել է իր հիմնական օրենսդրական դերը եւ զբաղված է միայն գործադիր իշխանությունների աշխատանքը վիժեցնելու գործունեությամբ: Սա ես որպես մեղադրանք չեմ ներկայացնում, այլ պարզապես որպես իրողություն, որն, ինչպես նշեցի, թերեւս ավելի շեշտված է Ռուսաստանի խորհրդարանում: Սակայն դա մեր ժամանակի այնպիսի իրողություններից մեկն է, որը չի կարելի հաշվի չառնել: Այդուհանդերձ, խորհրդարան – գործադիր իշխանություն փոխհարաբերություններում ստեղծված է իրավական դաշտ, ուստի վստահ եմ, որ մոտ ժամանակներում օրենսդիր իշխանությունները կզգան իրենց բուն անելիքները, եւ իրենց գործունեությունը կհամապատասխանեցնեն ստեղծված իրավական դաշտին:

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարմանը, ապա այստեղ նույնիսկ այդ իրավական դաշտը չի ստեղծված: Տեղական իշխանություններն այսօր համարյա դուրս են մեր պետական կառուցվածքից: Եւ եթե նկատի ունենանք նաեւ այն հանգամանքը, որ տեղական իշխանությունները մեծ մասամբ ներկայացված են նախկին համակարգի պաշտոնյաներով, ապա պարզ պետք է լինի, թե ինչպիսի հակասություններ են առաջացել հանրապետական ու տեղական իշխանությունների միջեւ: Եթե խորհրդարանը կարողանար կարճ ժամանակի ընթացքում լրացնել այս բացը, որոշակի իրավական դաշտ ստեղծեր տեղական ինքնակառավարման համակարգի համար, այսինքն վերջապես ընդուներ տեղական ինքնակառավարման մասին օրենքը, ապա մենք շատ լուրջ հայտ արած կլինենք մեր պետական կառույցների կատարելագործման հարցում:

* * *

Այսօր շատ է խոսվում նաեւ Սահմանադրության մասին: Ինչ խոսք, իդեալական կլիներ, եթե մենք ունենայինք մի այնպիսի անսասան Սահմանադրություն, որը կարգավորեր պետության ու հասարակության բոլոր հարաբերությունները: Ստեղծված է մի վիճակ, երբ մենք ընդունել ենք որոշ հիմնական օրենքներ, իսկ առօրյա կյանքում մեծ մասամբ կիրառվում են խորհրդային նախկին օրենքները: Սա իրողություն է, որի հետ ստիպված ենք միառժամանակ հաշտվել, մինչեւ կարողանանք մեր ամբողջ օրենսդրությունը համապատասխանեցնել նոր պետական համակարգին:

Ինչ վերաբերում է ընդդիմության այն պահանջներին, որոնց համաձայն՝ այսօր եւեթ անհրաժեշտ է ստեղծել Սահմանադիր ժողով եւ ընդունել Սահմանադրություն, մեկանգամընդմիշտ նրանով առաջնորդվելու համար, ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ դա ուտոպիա է: Անցման շրջանում, իրադարձությունների, համակարգերի այս խելահեղ փոփոխությունների շրջանում, եթե մենք ընդունենք որեւէ Սահմանադրություն, ապա մեկ ամիս հետո լիովին կարժեզրկենք այն: Սահմանադրությունն այն հավատամքն է, որը պետք է լինի անսասան: Նրանում կատարվող յուրաքանչյուր փոփոխություն պետք է պատմական նշանակություն ունենա պետության համար: ԱՄՆ-ում մեկ սահմանադրական փոփոխություն կատարելու համար երբեմն պահանջվում է 30–40 տարի, մինչեւ որ նահանգների երկու երրորդը չի համաձայնում այդ փոփոխության հետ: Մեկ սահմանադրական փոփոխության պատճառով Դը Գոլը՝ Ֆրանսիայի ամենահեղինակավոր պրեզիդենտը, հրաժարվեց իր պաշտոնից: Սահմանադրությունն այն սուրբ գիրքն է, որը պետք է ստեղծվի մեկ անգամ եւ ընդմիշտ: Փոփոխությունները պետք է բացառություն կազմեն:

Եթե, օրինակ, մեկ տարի առաջ մենք Սահմանադրություն ընդունած լինեինք, ապա այսօր նրանից համարյա ոչինչ մնացած չէր լինի: Դրանով մենք անմիջապես կարժեզրկեինք այն, իսկ դա չափազանց վտանգավոր է, քանի որ խախտում է ժողովրդի հավատը օրենքի, Սահմանադրության հանդեպ:

Մենք ընտրել ենք այլ, եւ կարծում եմ, ճիշտ ուղի (անցումային շրջանում նման կերպ են վարվել աշխարհի բազմաթիվ պետություններ). դա առանձին բաժիններով հիմնական օրենքների ընդունումն է: Այդպիսի օրենքներ մենք արդեն ընդունել ենք՝ սեփականության, Հանրապետության Նախագահի, Խորհրդարանի մասին, որոնք փաստորեն Սահմանադրության պատրաստի բաժիններ են: Մենք են տեղական ինքնակառավարման եւ դատական իշխանությունների մասին օրենքները, ինչպես նաեւ մարդու իրավունքների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, ընտրությունների մասին ընդհանուր բաժինները: Մասնավորապես այս ուղիով է ընթանում նաեւ Իսրայելը, որը մինչ օրս Սահմանադրություն չունի եւ 40 տարվա ընթացքում ընդունել է ութ հիմնական օրենք:

Նման մոտեցումը տալիս է այն հնարավորությունը, որ մեր ընդունած օրենքները կյանքում կիրառվելով, բացահայտում են օրենսդրության հակասությունները՝ ակնհայտ դարձնելով անհրաժեշտ նշգրտումները: Իսկ շատ ավելի հեշտ եւ հիշտ է փոփոխություններ կատարել օրենքներում, դրանք համարժեցնել օրվա պահանջներին, քան նույնը անել Սահմանադրության մեջ: Վստահ եմ, որ որոշակի կայունության հասնելու դեպքում մեր հասարակությունն ի վիճակի կլինի ընդունել նաեւ Սահմանադրությունը:

* * *

Նշենք համակարգերի փոփոխության հետ կապված եւս մեկ ներհին բարդություն, որը նույնպես առարկայական իրողություն է: Խոսքը վերաբերում է պետական ադմինիստրացիային, այսինքն՝ վարչական ապարատին: Դժբախտաբար, ժողովուրդը պետության հաղթականության ու գործունեության մասին պատկերացում է կազմում գլխավորապես միջանկյալ օղակների, վարչական մարմինների միջոցով: Իշխանությունների վարած հաղթականությանը շփվելու այլ միջոց չկա: Եւ պետության՝ թեկուզ ամենափայլուն հաղթական ծրագիրը կարող է վարկաբեկվել, եթե ժողովուրդը բախվի վարչարարության անկարողությանն ու անտարբերությանը:

Այսօր Ե՛ւ մեզ, Ե՛ւ ընդհանրապես նախկին սոցիալիստական համակարգի պետությունների համար ամենամեծ պակասը ներկա պահանջներին համապատասխանող ադմինիստրացիայի բացակայությունն է: Տասնյակ տարիների ընթացքում համակարգն ստեղծել էր կադրերի պատրաստման ու առաջմղման մի այնպիսի կառուցվածք, որն այսօր բացարձակապես պիտանի չէ: Խոսքը վերաբերում է ոչ թե անհատներին, այլ համակարգին. կարող անհատներ կան, կգտնվեն եւ կընդգրկվեն նոր պետականության կառուցման գործում: Սակայն որպես համակարգ՝ նախկին նոմենկլատուրան, ինչպես ասվեց, այսօր անպիտան է: Իսկ նորը դեռեւս չկա, ՀՀՇ-ն չէր կարող երկու-երեք տարվա ընթացքում ստեղծել մեր պետության բոլոր պահանջները բավարարող կադրեր: Կարելի է ասել, որ Լենական Սոլիդարնոստի բախտը բերեց, որովհետեւ նրա պայքարը երկար տեւեց, եւ 1980 թվականից սկսած նա տաս տարի հնարավորություն ունեցավ համապատասխան կադրեր

պատրաստելու, իհարկե, եւրոպական երկրների օգնությամբ: ՀՀՇ-ն դժբախտաբար չունեցավ այդ հնարավորությունը:

Սակայն կարծում եմ, որ եթե խնդիրը մեզ համար պարզ է, մենք պետք է որոշակի միջոցներ ձեռք առնենք այն իրականացնելու համար: Ամենակարեւոր բնագավառները իրավաբանությունը, արդի տնտեսագիտությունը եւ միջազգային հարաբերություններն են: Պետության հիմքը հանդիսացող այս բնագավառներում, ահա, մենք համապատասխան կադրեր չունենք: Առայժմ մեր պետական կառույցներում որքան հնարավոր է օգտագործել ենք նախկին նոմենկլատուրայի կարող ուժերը եւ, որ ավելի կարեւոր է, կարողացել ենք ընդգրկել բավականին թվով նոր մարդկանց, որոնք նախկին համակարգի պայմաններում պետական կառույցներ թափանցելու ոչ մի հնարավորություն չունեին: Այսինքն, ընդգրկվել են արդիական մտածողությամբ աչքի ընկնող եւ Շարժման ընթացքում քաղաքացիական ակտիվություն հանդես բերած նոր մարդիկ, գիտական ու բուհական միջավայրի աշխատողներ: Եւ ուրախությամբ պետք է նշել, որ եթե մեր պետական կառույցներում, նախարարություններում, տեղական իշխանության մարմիններում եղել են դրական տեղաշարժեր, ապա դրանք հիմնականում կապված են եղել նոր կադրերի հետ: Դա չի նշանակում, անշուշտ, որ բոլոր նոր կադրերը բավարարել են իրենց ներկայացված պահանջները, բայց, որպես կանոն, հաջողություններն ուղեկցել են այն բնագավառներին, որտեղ հայտնվել են նոր մարդիկ: Ուրեմն, մենք ճիշտ ուղի ենք ընտրել եւ այսուհետեւ եւս պետք է շարունակենք պետական կառույցներում նոր կադրերի ընդգրկումը՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով, իհարկե, նրանց մասնագիտական կարողություններին:

Այս տեսակետից ամենադժվար գործը իրավաբանության ասպարեզն է, որտեղ զուտ մասնագիտական առումով հնարավոր չէ նոր մարդիկ ընդգրկել: Որքան էլ մենք փորձում ենք դատախազությունում, դատարանում, ներքին գործերի մարմիններում տեղափոխությունների, վարկաբեկված պաշտոնյաներից ազատվելու միջոցով կարգավորել կացությունը, այդուհանդերձ հանգում ենք նոր կադրեր ընդգրկելու դժվարություններին: Ըստ երեւույթին, չորս-հինգ տարի է պետք, որպեսզի աճեցնենք նոր մտածողությամբ բնութագրվող, նոր ծրագրերով կրթված իրավաբանների մի սերունդ՝ եղած համակարգերը էապես թարմացնե-

լու համար: Այս ուղղությամբ թեեւ որոշակի աշխատանքներ տարվում են, բայց, ըստ երեւույթին, առայժմ ոչ բավարար:

* * *

Ինչպես նշվեց, Հայաստանի ներկա իշխանությունների միակ լուրջ սոցիալական հենարանը մնում է Հայոց համազգային շարժումը, ինչը, բնականաբար, նրա վրա է դնում որոշակի պարտավորություններ: ՀՀՇ-ն ծնվեց որպես լայն ժողովրդական շարժում, սկզբում այլ կարգախոսներով, այլ սոցիալական պահանջներով: Այսօր այն դարձել է իշխող պետական ուժ, ինչը նրա համար ստեղծել է որոշակի երկակի հանգամանք: Շարժումը մի կողմից պարտավոր է պաշտպանել պետական շահերը, մյուս կողմից՝ չդադարել ժողովրդի սոցիալական պահանջների արտահայտիչը լինելուց: Սրանով փաստորեն Հայոց համազգային շարժումը տարբերվում է ընդդիմության զանազան շերտերից, որոնք կարող են բացարձակորեն հակադրվել իշխանություններին, շահարկելով սոցիալական խնդիրները եւ հաճախ առաջնորդվելով միայնումիայն «պոպուլիստական» նպատակներով:

Շարժման վիճակը շատ նուրբ է, փաստորեն նա է ստանում դժգոհության ալիքի բոլոր հարվածները: Բայց սա էլ բնական է, եւ ամենեւին հարկ չկա խռովելու: Դուք եք պետության հենարանը, ուստի նրա բոլոր թերությունների համար ձեզ պետք է մեղադրեն: Դուք պետք է դիմանաք այդ ճնշմանը, կարողանալով հավասարակշռել պետական շահերն ու ժողովրդի սոցիալական պահանջները, որոնք պետք է լինեն ձեր մշտական մտահոգության առարկան: Առայժմ ՀՀՇ-ն, կարելի է ասել, ատամները սեղմելով, ներքնապես խռովվելով, կարողանում է պահպանել նշված հավասարակշռությունը: Այդ առթիվ ես «ցավակցում եմ» Շարժմանը, միաժամանակ գնահատելով այն մեծ պատիվը, որ վիճակվել է նրան:

Շարժումը պետք է շատ ուշադիր լինի անգամ անարդարացի թվացող մեղադրանքների նկատմամբ: Պետք է փորձել հասկանալ ընդդիմությանը, բացատրել, համոզել: Մարդիկ կարոտ են փաստարկված խոսքի, եւ ամենաբարդ վիճակներում անգամ հնարավոր է այդ խոսքը տեղ հասցնել:

Լինելով հասարակության հիմնական շարժիչ ուժը, ՀՀՇ-ն պարտավոր է նաեւ համագործակցության եզրեր որոնել ընդդիմության կառու-

ցողական ուժերի հետ: Եթե Շարժումը դա չանի, ուրիշ ոչ ոք չի կարող անել: Ի պատիվ ՀՀՇ-ի, պետք է ասել, որ ժամանակի ընթացքում նա միշտ էլ կարողացել է համագործակցել ընդդիմության որոշակի շերտերի հետ: Մի շրջանում լուրջ հարաբերություններ էին հաստատվել Ռամկավար-ազատական կուսակցության հետ, եւ այդ հարաբերություններն ինչպես էլ այսօր գնահատվեն, ժամանակի մեջ ես դրանք դիտում եմ որպես նիշտ հաղթականություն, որը որոշ չափով օգնեց համախմբել մեր հասարակության հաղթական ուժերը: Այսօր Շարժումը լուրջ հարաբերություններ է սկսել նաեւ Հայ հեղափոխական դաշնակցության հետ, որ միանգամայն ողջունելի է: Վստահ եմ, որ առաջիկայում կանցնի նաեւ ՀՀՇ-ի ու ՀՅԴԱԿ-ի հարաբերություններում նկատվող սառնությունը: Եւ եթե Հայոց համազգային շարժման, Հայ հեղափոխական դաշնակցության, Ռամկավար-ազատական եւ Հնչակյան կուսակցությունների համագործակցությունն անկեղծ հիմքերի վրա դրվի, մենք կարող ենք հասնել լուրջ արդյունքների՝ թե՛ մեղմացնելով ներքին հասարակական լարումը, թե՛ համախմբելով մեր ուժերը արտաքին վտանգների նկատմամբ:

Վերջում ես ուզում եմ շնորհավորել ձեզ այս դժվարագույն պայմաններում տեղի ունեցող համագումարի առթիվ, մաղթել անկոտրում կամք եւ դժվարությունները հաղթահարելու համբերություն: Հույսեր մի փայփայեք, թե դժվարությունները նվազելու են, նրանք կարող են բազմանալ: Բայց Շարժումն այնքան է կոփվել, որ կդիմանա նաեւ հետագա փորձություններին:

«Հայաստանի Հանրապետություն», 2 ապրիլի, 1992 թ.:
ՀՀԱՆԱ, 28/22.03.92: Բնագիր: Ինքնագիր:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՕԳՈՆՅՈԿ» ԱՄՍԱԳՐԻՆ
(4 ապրիլի, 1992 թ.)

Լսելով մեր առաջին հարցը՝ Նախագահը մեղմ ժպտաց, հասկացնելով, որ դրան հեշտ չէ պատասխանել եւ որ՝ կանխատեսումներն իր տարերքը չեն: Սակայն մենք համառորեն պատասխանի էինք սպասում: Հարցը ձեւակերպված էր այսպես.

– Ժողովրդի մեջ Դուք անկեղծ եւ սթափ քաղաքական գործչի վարկ ունեք: Մենք կցանկանայինք Ձեզանից լսել կանխատեսումն այն մասին, թե ինչպե՞ս կարող է զարգանալ հակամարտությունը Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ:

– Ես համոզված եմ, եթե չլիներ ղարաբաղյան հակամարտությունը, ապա հաճարպետությունում մեծ հիմնախնդիրներ չէին լինի. Հայաստանը կոմպակտ, միատարր հաճարպետություն է՝ անկախության հասած համախմբված ժողովրդով:

Թվում էր, մենք ամեն ինչ ունենք տնտեսությունը վերափոխելու, արտաքին հաղթական կապեր հաստատելու եւ մեր կյանքը նորմալացնելու համար: Սակայն Ղարաբաղը խաոնեց բոլոր խաղահարտերը: Իսկ երբ Հայաստանն ու Ադրբեջանը ձեռք բերեցին անկախություն, այդ հիմնահարցը դարձավ միջազգային: Այնպես որ, մենք պետք է ենթարկվեինք նոր՝ միջազգային խաղի կանոններին: Ես կարող եմ ձեզ վստահեցնել, որ մենք պահպանում ենք այդ խաղի կանոնները: Դա նաեւ որոշակի առաջընթաց է ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ, քանի որ միջազգային հաճարպությունը, քանի դեռ գոյություն ուներ Խորհրդային Միությունը, դա համարում էր ԽՍՀՄ ներքին գործը եւ ոչ մի ձեւով չէր միջամտում: Այժմ, սակայն, նա կարծես զգացել է իր պատասխանատվությունը, այդ հակամարտությունը կարգավորելու իր պարտա-

կանությունը: Կարծում եմ, այժմ խաղաղ բնակչության անվտանգությունն ապահովող, միջազգային իրավունքով նախատեսված մեխանիզմների ստեղծման հնարավորություններն առկա են, մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան հակամարտ կողմերի միջեւ կառուցողական բանակցություններ սկսել: Այդ հնարավորությունը կա, եւ այն, բարեբախտաբար, կենսագործվում է: Ղարաբաղյան հակամարտությամբ լրջորեն զբաղվում է ԵԱՀԽ-ն: Այս ուղղությամբ նշանակալից ջանքեր են գործադրում Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Իրանը: Մասնավորապես, Իրանի միջնորդական առաքելության փորձը ցույց տվեց, որ հնարավոր է հասնել ժամանակավոր զինադադարի, կրակի դադարեցման:

– Ո՞ր խաղաղարար մոդելներն են Ձեզ ավելի մոտ՝ իրանակա՞ն, ամերիկյա՞ն, Ֆրանսիակա՞ն...

– Ես չէի ցանկանա առանձնացնել որեւէ երկրի առաջարկած այս կամ այն պլանը: Ամեն դեպքում տարբերակներից ոչ մեկը հնարավոր չէ իրականացնել առանց այլ երկրների ջանքերի: Խաղաղ կարգավորման յուրաքանչյուր պլանում կա ռացիոնալ առաջարկություն: Այժմ, իմ կարծիքով, տեղի է ունենում ջանքերի որոշակի մասնատում: Անհրաժեշտ է բոլոր առաջարկությունները մեկտեղել:

Մեր պլանն այսպիսին է. կրակի դադարեցում եւ դրա պահպանությունը վերահսկող մեխանիզմի ստեղծում: Այդ մեխանիզմի առանցքը միջազգային դիտորդների ներկայությունն է: Սա առաջին փուլն է:

Երկրորդ փուլը Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության երաշխիքների համակարգի ստեղծումն է: Առայժմ անվտանգության միակ համակարգն ինքնապաշտպանությունն է, որիշը դեռեւս գոյություն չունի: Ա՛յս է վտանգը, հանգի նման համակարգը պատերազմ է ենթադրում: Մենք կողմնակից ենք կրակի դադարեցման, խաղաղության հաստատման, սակայն երկար ապասված խաղաղությունը կլինի այն ժամանակ, երբ ինքնապաշտպանության համակարգը կփոխարինվի այդ հողում խաղաղությունը երաշխավորող այլ հուսալի համակարգով:

– Սակայն, հնարավո՞ր է արդյոք այդ հիմնահարցը լուծել միայն Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ բանակցությունների ճանապարհով:

– Նման հարցադրումը սխալ էր հակամարտության հենց սկզբից: Միջազգային հանրությունն արդեն ընդունում է, որ Ղարաբաղը ինքնուրույն հաղաքական գործոն է: Այնպես որ, ինչ-որ համաձայնության գալ առանց հաշվի առնելու Լեռնային Ղարաբաղի կարծիքը, նշանակում է հենց սկզբից վիժեցնել այդ համաձայնությունների արդյունքները:

Լեռնային Ղարաբաղը հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում պետք է ներկայացվի իբրեւ իրավահավասար սուբյեկտ: ԵԱՀԽ-ի վերջին որոշմամբ դա ընդունվում է:

– Այսինքն, ըստ էության, դա նշանակում է արդեն եռակողմ բանակցություններ վարել՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ:

– Եռակողմ կամ՝ բազմակողմ: Եւ դա արդեն որոշակի նվաճում է: Ահա թե ինչու ես այժմ առավել լավատեսորեն եմ մոտենում այդ հիմնահարցի լուծմանը: Արդեն կան այն հստակ մեխանիզմները, որոնց միջոցով կարող ենք խաղաղության հասնել մեր տարածաշրջանում: Գլխավորն է՝ հասնել խաղաղության: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին, նրա հետագա ճակատագրին, ապա դրանք բանակցությունների առարկա են:

– Ինչպիսի՞ն կարող է լինել Ռուսաստանի դերը հակամարտության կարգավորման գործում:

– Դա բարդ հարց է: Ես իմ տեսակետն ունեմ: Ռուսաստանն այնքան է զբաղված իր ներքին հիմնախնդիրներով, որ հնարավորություն չունի մեր տարածաշրջանում երկարատեւ հաղաքականություն իրականացնել: Սակայն վաղ թե ուշ Ռուսաստանի ներքին հիմնախնդիրները կլուծվեն, եւ նա կվերադառնա իր ռազմավարական շահերին:

Ռուսաստանը կվերադառնա, սակայն կվերադառնա մշակութային, տնտեսական ազդեցության ոլորտներ: Ռուսաստանը թույլ չի տա, որ ձեւավորված վակուումն ուրիշները լրացնեն: Այժմ, սակայն, Ռուսաստանը ձգտում է պատասխանատվության մի մասը հանձնել միջազգային կազմակերպություններին: Կարծում եմ, պետք է նույնիսկ ողջունել այդ ջանքերը: Չէ՞ որ նշանակալի չափով նրա շնորհիվ հնարավորություն ստեղծվեց միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել ղարաբաղյան հիմնահարցին:

Այսինքն՝ Ռուսաստանը չի հրաժարվել ղարաբաղյան հիմնահարցի լուծումից, այլ հրաժարվել է այն միայնակ լուծելուց: Ես կարծում եմ, որ

դա ավելի արդյունավետ է, բան, օրինակ, առանձին վերցրած Նագարբաև – ելցին միջնորդական առաքելությունը:

– Կա՞ն, արդյոք, Հայաստանում ընդդիմադիր ուժեր, որոնք համարում են, թե հակամարտությունը կարելի է լուծել այլ ճանապարհով:

– Կան: Եւ ես ամենից ավելի վախենում եմ բաղաքական ամբոխավարությունից: Ինչքան էլ տաբօրինակ լինի, ես նույնիսկ պատրաստ եմ համաձայնել, որ իշխանության գան կոմունիստները, բան այն զավթեն բաղաքական բախտախնդիրները, ինչ ուժեր էլ որ նրանք ներկայացնեն:

Ընդդիմությունը մեր դեմ ոչ թե մեկ, այլ մի բանի խաղաթուղթ ունի: Դրանք մեր դժվարություններն են՝ Ղարաբաղ, աղետի գոտի, փախստականներ, բայբայվող տնտեսություն, շրջափակում... Ինչքան դժվարություն ունենք մենք, այդքան էլ խաղաթուղթ ունեն նրանք: Սակայն մենք բոլոր հիմնահարցերը ավելի արդյունավետ կլուծենք, եթե հաղթահարվեր ղարաբաղյան հգնաժամը:

– Եւ Դուք այդ հարցում լավատե՞ս եք:

– Շրջահայացության հետ ոչ մի ընդհանրություն չունեցող հոռետեսությունը բաղաքականության մեջ վնասակար է եւ բերում է հուսահատության, որը չի օգնում հիմնահարցի լուծմանը: Ես, սակայն, հլնում եմ կյանքից[1]:

«Հայաստանի Հանրապետություն», 14 ապրիլի, 1992 թ.:
Թարգմանություն ռուսերենից: «Огонёк» ("Огонек"), 4-18 ապրիլի, 1992 թ.:
Հարցազրույցը՝ Գ. Ժուկովետի եւ Գ. Մարտիրոսյանի, «Օգոնյոկի» հատուկ թղթակիցներ:
Հրատարակված՝ Լեւոն Տեր-Պետրոսյան. «Գլխավորն է հասնել խաղաղության» վերնագրով:

[1] *Հարցազրույցն ավարտվում է վարողի հետգրությամբ. «Դանվելով Բաքվում՝ «Օգոնյոկի» թղթակիցը խնդրեց Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովին՝ մեկնաբանել Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ տեղի ունեցող վերջին իրադարձությունները: Ցավոք, Հանրապետության նախկին գեկավարը հրաժարվեց հարցազրույցից»:*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՆԵԶԱՎԻՍԻՄԱՅԱ ԳԱԶԵՏԱ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻՆ

(13 օգոստոսի, 1992 թ.)

– Պարոն Նախագահ, ինչպե՞ս են Հայաստանում ընթանալու իշխանության կառույցների բարեփոխումները: Եւ ինչո՞ւ խորհրդարանական հանրապետության մոդելը հարմար չեկավ եւխորհրդային երկրներից եւ ոչ մեկին: Հայաստանում արդեն անցյալ տարվա սեպտեմբերին խորհրդարանի (որը՝ Դուք այն ժամանակ գլխավորում էիք) եւ կառավարության հարաբերությունները ճգնաժամային էին, ինչը հանգեցրեց առաջին վարչապետի հրաժարականին: Այսօր ինքներդ եք գործադիր իշխանության ղեկավարը, իսկ խորհրդարանն ու կառավարությունն, առաջվա պես, հակասությունների մեջ են:

– Երբ մենք սկսեցինք բաղաքական բարեփոխումները, դրանց միակ ընդունելի, սահմանադրական ուղին «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» կարգախոսն էր: Բոլոր ժողովրդավարները, այդ թվում նաեւ մենք, անկեղծորեն հավատում էինք, որ այդ կարգախոսն օրինաչափ է, եւ, իրոք, «պատոկրատիայից» իշխանությունից զրկելու այլ միջոց չկար:

Սակայն խորհուրդները, պարզվեց, ոչ թե օրենսդիր, այլ բաղաքական մարմիններ են, մի տեսակ բաղբյուրո, որ իշխանության այլ մարմիններ չի ընդունում: Այդպես եղավ եւ մյուս հանրապետություններում եւ, բնականաբար, Հայաստանում: Այդ պատճառով, առաջ եկավ նախագահական կառավարման անցնելու գաղափարը: Նախագահի մասին օրենքը ծնվեց բուռն բաղաքական պայքարում, որը շարունակվում է մինչեւ այսօր: Խորհուրդներն առայժմ չի կարողանում հաշտվել այն

մտքին, որ իմը միայն մեկ՝ օրենսդիր գործառույթ ունի: Մեր պատգամավորները հին իներցիայով իրենց գերագույն իշխանություն են պատկերացնում, ցանկանում են վերահսկել ե՛ւ կառավարությանը, ե՛ւ Նախագահին, հավակնում են երկրի քաղաքական ղեկավարմանը: Հիմնախնդրի էությունը պետական կառույցների անկատարությունն է: Մեզ մոտ, օրինակ, կառավարությունը զրկված է օրենսդրական նախաձեռնության իրավունքից: Բոլորը՝ պատգամավորները, խորհրդարանական խմբակցությունները, կուսակցությունները, այդ իրավունքն ունեն, իսկ կառավարությունը՝ ոչ:

– Բայց Դուք՝ իբրեւ այդ կառավարության գլխավոր, ունե՞ք:

– Իսկ դա ի՞նչ հետեւանքների է բերում: Խորհրդարանի ՀՀՇ խմբակցության՝ կառավարությանն օրենսդրական նախաձեռնության իրավունք տալու առաջարկությունը մերժվեց ընդդիմության կողմից: Եւ այժմ խորհրդարանի եւ կառավարության միջեւ ցանկացած հակասություն ինքնաբերաբար վերածվում է խորհրդարանի ու Նախագահի միջեւ հակասության: Նախագահն անմիջականորեն բախվում է ընդդիմությանը: Սրանով է բացատրվում վերջին ժամանակների իմ ելույթների կտրականությունը: Ես ստիպված եմ դրան գնալ, քանզի մեղադրում են ի՛նձ, եւ ոչ թե կառավարությանն են խորհրդարան հրավիրում, այլ՝ Նախագահին, որը զրկվում է խորհրդարանի ու կառավարության վեճում միջնորդ դատավորի իր դերից: Ահա թե որն է խոչընդոտը:

– Բավարարո՞ւմ է Ձեզ նախարարների ներկա կաբինետը: Վերջին կադրային տեղափոխություններն ու նոր վարչապետի նշանակումը ինչ-որ կոալիցիոն կառավարության ուրվագծե՞ր են, թե՞ Դուք առաջվա պես նախընտրում եք ունենալ սեփական թիմը եւ ինքներդ պատասխան տալ նրա գործողությունների համար:

– Ոչ, ներկա կաբինետն իմ թիմը չէ, եւ ոչ էլ կոալիցիոն է: Կոալիցիոն կառավարություն ես չեմ ընդունում. դրա գոյությունը կապված է որոշակի սահմանադրական կարգավիճակի հետ, որն այսօր չկա: Մեր կուսակցությունն էլ դեռեւս այն վիճակում չէ, որպեսզի ստեղծի այնպիսի կոալիցիա, որն ընդունակ լինի ձեւավորել ավելի լավ կաբինետ, քան պրոֆեսիոնալիզմի հիման վրա ստեղծվածը: Մեր գլխավոր մոտեցումն անձնական պրոֆեսիոնալ որակներն ու կազմակերպական ընդունակություններն են: Եթե ինձ առաջարկեն մի նախարար, որն այս պահանջները բավարարի, ես միայն ուրախ կլինեմ: Այսօր 30 նախարարներից միայն 6-ն են Հայոց համազգային շարժման անդամ, մյուսներից շատերին նախկինում ես անձամբ չեմ էլ ճանաչել:

– Իսկ ի՞նչ «գույնի» են Ձեր սեփական քաղաքական հայացքները:

– Ասածս կարող է, թերեւս, ցինիկ թվալ, սակայն քաղաքական գործչի գլխավոր հատկությունն իրատեսությունն է, նույնիսկ՝ պրագմատիզմը: Բոլոր հնարավորությունները պետք է ուղղել ժողովրդի ու պետության բարօրությանը: Իմ իդեալը ժողովրդավարությունն է, համընդհանուր արժեքները, սակայն այսօրվա գլխավոր գործոնը իրական քաղաքականությունն է: Ոչ միայն Հայաստանում, այլեւ բոլոր նախկին հանրապետություններում ելնում են նույն նկատառումներից, բոլորն էլ հրաժարվել են գաղափարախոսական սկզբունքներից: Այսօր նախկին կոմունիստները «շատ ավելի կաթոլիկ» են դարձել, քան ես, եւ փորձում են ազգայնականներ ներկայանալ: Եւ պետք չէ նրանց կասկածել երեսպաշտության մեջ, ո՛չ: Եւ դատապարտել էլ չարժե: Պարզապես այդպիսին է այսօրվա իրողությունը:

– Դուք ասել եք, թե իսկական մտավորական է նա, ով ազատ է եւ «չի ծառայում ոչ մեկին»: Ինչպե՞ս են համատեղվում ազատության իդեալներն ու իշխանությունը, նրա սահմանափակող մեխանիզմներն օգտագործելու անհրաժեշտությունը:

– Իմ ընտրությունը նույնպես ազատ է եղել: Եւ հետո՝ ի՞նչ սահմանափակումների մասին է խոսքը: Իրավական պետության մեջ սահմանափակումները նույնպես անհրաժեշտ են: Անթույլատրելի է, որ ժողովրդավարության ճակատագիրը կախված լինի անհատի կամքից, լավ կամ վատ Նախագահից: Այսօր Նախագահի իշխանությունն, իրոք, շատ մեծ է հենց նրա՝ ժողովրդավարական սահմանափակումների բացակայության պատճառով:

– Տարօրինակ չէ՞, արդյոք, որ մտավորականությունը կոմունիստական վարչակարգի օրոք քաղաքական կյանքում ավելի նկատելի էր, քան Ձեր կառավարման ժամանակաշրջանում:

– Իհարկե, մտավորականությունը չփոթվեց, շատերը կորցրին կողմնորոշումը, սակայն ժամանակի ընթացքում ամեն ինչ իր տեղը կընկնի, մտավորականությունն էլ կգտնի իր տեղը նոր հասարակության մեջ...

– Մի՞թե նախկին տոտալիտար վարչակարգի արժեքները նրա արժեքներն էին:

– Նրանց համար, ովքեր նոմենկլատուրային մտավորականության շարքում էին՝ այո՛: Ի դեպ, այսօր մտավորականության դերի անկման մասին հենց նրանք են աղմկում:

– Դրանով հակամարտությունն ընդդիմության հետ չի սահմանափակվում, չի ավարտվում այն նաեւ խորհրդարանում: Խնդիրն աշխարհաքաղաքակա՞ն տարբերությունն է:

– Համաձայն եմ, կուսակցությունների միջեւ կան աշխարհայացքային տարբերություններ, սակայն դրանք երկրորդական են: Առաջին տեղում բաղաքական դրդապատճառներն են, միայն դրանք: Իշխանության համար պայքարն իր կանոններն ունի: Եթե նույնիսկ ես ամբողջովին ընդունեմ ընդդիմության գաղափարախոսությունը, նրանք չեն դադարեցնի իրենց պայքարը: Նրանք պատրաստ են (եւ դա անում են պոպուլիստական նկատառումներով) իրենց հայացքներն ու կարգախոսները փոխել յուրաքանչյուր ամիս:

– Դուք պատրա՞ստ եք անհատապես նշել: Դաշնակցության մասին, օրինակ:

– Դաշնակցությունը վերջին 70 տարում իրեն համարում էր ազգի առաջնորդը եւ բոլոր ազգային իդեալների՝ անկախության, պատմական սահմաններում Հայաստանի վերականգնման, 1915 թվականի Ցեղասպանության դատապարտման մարմնավորումը: 70 տարի նրանք ժողովրդի մեջ տպավորություն էին ստեղծում, թե իբր հենց դաշնակներն են պահպանում հայ ժողովրդի ու Հայաստանի ազգային շահերը: Սակայն, երբ 1988-ին սկսվեց Արցախյան շարժումը, դաշնակցական կուսակցությունը, մեղմ ասած՝ շփոթվեց. հայտնվել էին նոր մարդիկ, որոնք իր բացակայությամբ Հայաստանն իրենց ետեւից էին տանում: Նրանց առաջին բնազդային ռեակցիան սառն էր: Զգալով, որ այդ պահից կորսված է առաջնորդությունը, ինչն, իրենց թվում էր, թե կուսակցությունն ունի, նրանք չէին կարողանում հաշտվել իրենց նոր դերին:

Հետո պարզվեց, որ կային նաեւ այլ շարժառիթներ՝ դաշնակցության ղեկավարության կապերը ՊԱԿ-ի եւ այն ժամանակվա հայկական կոմունիստական ղեկավարության հետ: ՊԱԿ-ի ղեկավարության եւ Սուրեն Հարությունյանի (ՀԿԿ ԿԿ նախկին առաջին քարտուղար՝ 1988–1990 թթ. – «Ն. Գ.») հետ նրանց ղեկավար մարույխյանի հանդիպումներից հետո, 1988 թվականի հոկտեմբերին հայտնվեց մեր Շարժումը, մեր մեթոդները դատապարտող եւ Հայաստանի կոմունիստական ղեկավարության շուրջ համախմբելու կոչող հայտարարությունը: Գոյություն ունեն գաղտնի շրջաբերականներ, որոնցում հանձնարարվում է (ավելի ճիշտ, ոչ թե հանձնարարվում, նրանց մոտ այլ մեթոդներ են՝ նրահանգավորում է) ընդհանրապես չհիշատակել «Կարաբաղ» կոմիտեի, ՀՀՇ-ի մասին, իսկ եթե անգամ հիշատակեն, ապա միայն բացասական համատեքստով: Եւ կոմունիստներն էլ յուրացրին դաշնակցության գաղափարախոսությունը, սկսեցին ընդդեմ Թուրքիայի, հանուն Մեծ Հայաստանի ագիտացիաներ: Դա հասկանալի է:

Իսկ դաշնակների հետ մեր գաղափարական տարբերությունն այն էր, որ նոր շարժումը Հայոց պատմության մեջ առաջին անգամ, իրոք, որոշել էր իրատեսորեն նայել իրականությանը. մենք մեզնից ի՞նչ ենք ներկայացնում, ո՞ւմ հետ գործ ունենք, ինչպիսի՞ն են մեր ուժերը եւ ովքե՞ր են մեր հարեւանները: Մենք եկանք այն եզրակացության, որ կայսրությունը դատապարտված է, եւ պետք է ամեն ինչ անենք, որպեսզի Հայաստանը չմնա նրա փլատակների տակ: Շարժումը մեզ մոտ ավելի վաղ սկսվեց, քան մյուս հանրապետություններում, ինչն օգնեց պատրաստ լինել ցնցումներին: Կայսրության կործանումը միշտ էլ ցավագին է, ինչն առաջին հերթին ազդում է փոխրաթիվ ժողովուրդների ճակատագրի վրա: Մենք նման պատմական փորձ ունեինք եւ, որպեսզի Հայաստանը դառնար անկախ պետություն, անհրաժեշտ էին ազգային գոյատեւման սեփական երաշխիքներ: Մինչ այժմ այն երաշխավորված էր ԽՍՀՄ սահմաններով: Մենք ուղղակի կապեր չունեինք արտաքին աշխարհի հետ, մեր ճակատագիրն ամբողջովին կախված էր կայսրության կամքից: Իսկ մեր պլանների մեջ չէր մտնում ընկնել որեւէ երորդ ուժի թևի տակ, երբ այն դադարեր գոյություն ունենալ: Մենք հրաժարվեցինք «օրիենտացիայի» գաղափարից (որի վրա համարյա 300 տարի հիմնված էր Հայաստանի ողջ բաղաքական միտքը), բանզի սեփական

պատմական փորձով տեսնում էինք նրա սխալականությունը: Դրա համար, իհարկե, մեզ հայհոյում են՝ մինչ այժմ էլ դեռեւս չհասկանալով, թե այդ ինչպես կարող ենք մենք առանց ռուս քեռու, առանց ամերիկացիների, առանց Եվրոպայի գոյատեւել: Մինչդեռ Հայաստանի անվտանգ գոյության ամենահուսալի երաշխիքը ոչ թե նրա տնտեսական կամ ռազմական հզորությունն է, այլ բոլոր հարեւանների հետ նորմալ հարաբերությունների հաստատումը: Այս սկզբունքն էլ հենց ընկած է մեր արտաքին քաղաքական դոկտրինայի հիմքում:

– Բայց չէ՞ որ գոյություն ունի «հավերժական թշնամու» եւ «հավերժական զոհի»՝ բազմադարյան, պատմական ողբերգությամբ խորացած բարդույթը:

– Դա կա, եւ ժամանակ է պետք այդ բարդույթները հաղթահարելու եւ նոր գաղափարները յուրացնելու համար: Ի պատիվ մեր ժողովրդի՝ «սրբապիղծ» թվացող մեր գաղափարներին մենք դիմադրություն չենք զգացել, թեեւ դրանց, ինչպես, օրինակ, Թուրքիայի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու մասին միշտ էլ խոսել ենք, նույնիսկ ընտրությունների նախօրյակին[1]: Մենք հիշում ենք պատմական հակասությունները, սակայն, ելնելով երկրի իրական շահերից, հաղթահարելով վիրավորանքները, պետք է ձեւավորենք նորմալ միջպետական հարաբերություններ: Իհարկե, ընդդիմությունը մինչեւ այժմ էլ մեզ մեղադրում է ազգային դավաճանության մեջ, սակայն, ինձ թվում է, հոգեբանական արգելքները հաղթահարված են: Ես դա համարում եմ մեր Շարժման ամենամեծ նվաճումը, եւ ոչ միայն Հայաստանում, այլեւ Սփյուռքում, ուր շատերն են պաշտպանում մեր իրատեսական դիրքորոշումը:

– Հայաստանը ոչ սլավոնական երկրներից առաջինը պաշտպանեց Համագործակցության ստեղծումը, չնայած վերջինիս ներկա տեսքը հեռու է եւրոպական նախատիպից: Որքանո՞վ է Հայաստանի ապագան անխուսափելիորեն կապված ԱՊՀ-ին: Ի տարբերություն այլ երկրների, Հայաստանը չի փորձում զուգահեռ դաշնություններ ստեղծել եւ, շատերի կարծիքով, ապագայում նրա կապերն Արեւմուտքի

[1] Հայերեն հրապարակման մեջ «Ի պատիվ մեր ժողովրդի... նույնիսկ ընտրությունների նախօրյակին» հատվածը դուրս է մնացել: Լրացնում ենք ըստ ռուսերենի:

հետ որքան ցանկալի, այնքան էլ պրոբլեմատիկ են լինելու, իսկ մերձակա հարեւանների հետ հարաբերությունները բարդանում են տարածաշրջանային հակամարտություններով եւ մրցակցությամբ:

– Իրոք, ԱՊՀ ստեղծումը ապագայի անորոշության պայմաններում կողմնորոշվելու ձգտում է: Այս շարժառիթն առ այսօր գոյություն ունի: Սակայն ձգձգվեց ապաինտեգրացման գործընթացը, ընթացավ անկախության ամրապնդումը, եւ յուրաքանչյուր պետություն փնտրում էր անվտանգության իր երաշխիքները, այլ դաշինքներ ու համագործակցության ձեւեր: Հայաստանն էլ բացառություն չէ, ես համաձայն չեմ: Մենք մասնակցում ենք Սեւծովյան ծրագրին, Հայաստանն ակտիվորեն զարգացնում է կապերն Իրանի հետ: Հեռանկարում մենք տեսնում ենք մեր տեղը մերձավորարեւելյան համագործակցության մեջ եւ անվտանգության մերձավորարեւելյան համակարգում: Սակայն դա հեռանկարում, այն պետք է ստեղծել դանդաղ, փուլ առ փուլ, ինչին կարող է նպաստել երկկողմ հարաբերությունների հաստատումը: Մենք գերազանց հարաբերություններ ունենք Սիրիայի հետ, առկա են Եգիպտոսի հետ կապերը զարգացնելու բոլոր հնարավորությունները (եթե նույնիսկ խոչընդոտներ էլ կան, ապա միայն առայժմ՝ մենք չենք լուծել կոմունիկացիաների խնդիրը. այլ արգելք չկա): Ես հուսով եմ, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորումից հետո կկարգավորվեն նաեւ Թուրքիայի հետ հարաբերությունները: Հեռանկարում մենք սերտ համագործակցության հնարավորություններ ենք տեսնում նաեւ Անդրկովկասում: Վրաստանի հետ՝ արդեն այսօր: Այնտեղ կես միլիոն հայ է ապրում, նրանք Վրաստանի քաղաքացիներ են, նրանք ազգային կամ քաղաքական խնդիրներ չունեն, իսկ եթե կան էլ՝ ապա միայն կապված քաղաքացիական իրավունքների հետ:

– Ի դեպ, Հայաստանում, ի տարբերություն մյուս հետխորհրդային պետությունների, չկա ազգային փոքրամասնությունների խնդիր, դրա փոխարեն առկա է մեկ ուրիշը՝ ազգի մեծ մասն ապրում է իր պետության սահմաններից դուրս: Ի՞նչ սկզբունքների վրա են կառուցվելու հանրապետության եւ Սփյուռքի հարաբերությունները: Ինչպե՞ս են այդ սկզբունքներն արտահայտվելու քաղաքացիության մասին օրենքում:

– Մենք հաղաքացիություն կտանք ամեն մի հայի, եթե դրանով չեմք խախտի այն երկրի օրենքները, որում նա ապրում է: Եթե այդ երկրներում երկքաղաքացիությունը թույլատրվում է՝ խնդիր չի լինի:

– Ռուս զինծառայողների հետ միջադեպերը Հայաստանում քաղաքական արձագանքներ ունեցան: Ո՞ւմ խնդիրն է դա. գեներալների, թե՞ քաղաքական գործիչների: Կմնա՞, արդյոք, ռուսական բանակը Հայաստանում:

– Նման միջադեպեր այժմ ամենուր են լինում, եւ ես նույնիսկ կարող եմ թվեր նշել. վերջին 8 ամսում Հայաստանում զոհվել է 8 զինվորական, Ադրբեջանում՝ 77: Սակայն այս վերջինների շուրջ ոչ ոք աղմուկ չի բարձրացնում: Նշանակում է՝ կան որոշակի հաղաքական ուժեր, այդ թվում՝ Ռուսաստանում, որոնք Ռուսաստանի ղեկավարությանը մեղադրում են Հայաստանին միակողմանի աջակցելու մեջ: Ցավոք, այս պարագան իրական հետեւանքներ է ունենում, դրանով են թելադրված ռուսական զինվորական ղեկավարության համապատասխան քայլերը: Բոլորը տեսնում են հայ-ռուսական հարաբերությունների արատաին կողմը միայն՝ մեր լավ հարաբերությունները ելցինի հետ, այն, որ մենք Ռուսաստանի հետ պայմանագիր ենք կնքել: Իրականում, իհարկե, Ադրբեջանն ավելի շատ ռազմական աջակցություն է ստանում, քան մենք, սակայն այդ մասին ոչ ոք չի խոսում...

Մենք այժմ մեր բանակն ենք ստեղծում, սակայն երկկողմանի հիմունքներով պայմանագրեր ենք ստորագրել նաեւ մեր տարածքում ռուսական զորքերի ներկայության մասին: Այժմ բանակցություններ են վարվում, որոնք կպարզեն նրանց կարգավիճակը: Հնարավոր է՝ դրանք ռազմական բազաներ լինեն...

– Ներկա Հայաստանի դրոշը, գերբը եւ հիմնը նույնն են, ինչ-որ 1918–20 թթ. առաջին հանրապետությունում էր: Նշանակո՞ւմ է, արդյոք, որ այսօրվա Հայաստանը նրա ժառանգորդն է: Եւ ինչպե՞ս եք Դուք այդժամ գնահատում այն, ինչ եղել է 1920–1989 թթ. միջեւ:

– Կային պատգամավորներ, կուսակցություններ, որոնք պահանջում էին, որ 1990 թվականին ընդունած մեր Անկախության հռչակագրում ներկա հանրապետությունն իրեն հայտարարի առաջին հայկական հանրապետության իրավահաջորդը: Մենք նրաժարվեցինք դրանից:

Մեզ, ի տարբերություն լուրջ իրավական հիմք ունեցող Մերձբալթիկայի, շատ դժվար կլիներ ապացուցել, թե Հայաստանն օկուպացվել է Ռուսաստանի կողմից, չէ՞ որ կան և՛ դաշնակցական հանրապետության, և՛ խորհրդային Հայաստանի ստորագրած պայմանագրերը: Մեր դոկտրինայի հիմքում մենք դրեցինք միջազգային իրավունքի այլ սկզբունք՝ ինքնորոշման իրավունքը, եւ հետեւողականորեն էլ այն առաջ մղեցինք: Մենք այն ժամանակ Դորբաչովին, հավանաբար, ամենածանր վիճակի մեջ դրինք, հանգի չէինք խախտել իր իսկ՝ սովետական օրենքները:

– Սակայն Հայաստանում տարածված է առաջին հանրապետության (որը գոյատեւեց երեք տարի) հետ անալոգիաներ անելը:

– Ի՞նչ անալոգիա: Առաջին հանրապետությունը պատերազմում էր երեք հարեւանների հետ, մենք ստիպված եմք դիմակայել միայն մեկին, այն էլ ոչ թե մենք, այլ զարաբաղցիները:

– Դուք հաճախ եք կրկնում, թե կպաշտպանեք այն բոլոր համաձայնությունները, որոնց կհանգեն Ղարաբաղն ու Ադրբեջանը: Հաշվի առե՞լ եք արդյոք Ղարաբաղի իշխանությունների մաքսիմալիզմը եւ այն, որ ցանկացած բանակցության սկիզբ նրանք կապում են ԼՂՀ ճանաչման հետ:

– Նախ, Լեռնային Ղարաբաղի մաճսիմալիզմը արձագանք է Ադրբեջանի մաճսիմալիզմի: Դա կուսակցական մաճսիմալիզմ չէ, ո՛չ, յուրաքանչյուր ոք, ով իշխանության գլուխ կլինի Ղարաբաղում, նույն առավելագույն պահանջները կդնի: Սակայն, երբ զարաբաղցիների ամենահամեստ պահանջները բախվեցին Ադրբեջանի (որը փոխզիջման հակում չի ցուցաբերում) կոշտ դիմորոշմանը, դա նրանց բերեց այն համոզման, որ ժողովրդի ֆիզիկական գոյությունն ու մարդու իրավունքները վտանգի տակ են: Այստեղից կատարվեց պարզագույն եզրակացություն՝ դուրս գալ Ադրբեջանի կազմից: Սակայն նույնիսկ հիմա, վստահ եմ, ոչ չէ՞ եթե Ադրբեջանը հանդես գա ոեալ առաջարկություններով, ուր կնշի երաշխիքներն ու իրական փոխզիջման մեխանիզմները, թե՛ մենք, թե՛ զարաբաղցիները, կարծում եմ, ընդառաջ կգնանք: Հայաստանը տասնյակ անգամներ է հանդես եկել նման նախաձեռնություններով, սակայն ես հիմա նույնիսկ ձեւականորեն նման իրավունք չունեմ: Ցանկացած նախաձեռնությամբ պետք է հանդես գա Ղարաբաղը, իսկ մենք նրան գործնականում կպաշտպանենք: Եւ եթե Լեռնային Ղարաբաղի

Հանրապետությունը ճանաչվի որպես հակամարտության անկախ կողմ, դա ամեն դեպքում օգտակար կլինի Ղարաբաղին առնչվող խնդիրների ողջ համալիրը լուծելու համար:

– Ադրբեջանի ներկա իշխանությունների հետ այդ մասին Դուք խոսակցություն ունեցե՞լ եք:

– Ոչ, մենք շփումներ չենք ունեցել: Չնայած ընտրություններից հետո ես զանգահարեցի նրան (Էլչիբեյին – «ՆԳ»), որպեսզի շնորհավորեմ հաղթանակի առթիվ: Միծաղելի բան առացվեց: Նրա օգնականը շփոթվեց, հետո զանգահարեց իմ օգնականին, հարցնելով, թե ինչի՞ մասին եմ ուզում խոսել իրենց Նախագահի հետ: Հարկ եղավ բացատրել, որ նման բաների մասին հարցնելն ընդունված չէ, ամեն ինչ պարզ կլինի հենց խոսակցության ընթացքում: Այդպես էլ չխոսեցինք: Իսկ Մութալիբովի հետ հարաբերությունները նորմալ կին, բայց հենց սկզբից ինձ համար պարզ էր, որ նրա հետ զույգերը ոչինչ չէին պատասխում, նա իրական իշխանություն չուներ եւ պայմանավորվածություններն իմաստ չունեին:

– Իսկ հանուն ինչի՞ եք Դուք պատրաստ պայքարել իշխանության համար:

– Հանուն մեր պետության անվտանգության, հանուն նրա ապագայի: Դրա համար արժե պայքարել: Իսկ հանուն իշխանության՝ ոչ: Եթե գտնվեն մարդիկ, որ ընդունակ կլինեն ավելի լավ ղեկավարել եւ Հայաստանի ժողովրդին առավել օգուտ բերել՝ առանց երկմտելու կզիջեմ տեղս: Չէ՞ որ ես զրկվել եմ իմ ունեցած գլխավորից՝ գիտությունից, որն ինձ հսկայական երջանկություն է պարգեւել:

– Ափսոսո՞ւմ եք:

– Շա՛տ եմ ափսոսում: Բայց չէ՞ որ նաեւ շատ բան եմ ձեռք բերել:

«Հայաստանի Հանրապետություն», 25 օգոստոսի, 1992 թ.: Թարգմանություն ռուսերենից: «Նեզավիսիմայա Գազետա» ("Независимая Газета"), 13 օգոստոսի, 1992 թ.:
Հարցազրույցը՝ Լիանա Մինասյանի, Արմեն Խանբաբյանի:
Հրատարակված՝ Լեւոն Տեր-Պետրոսյան. «Հայոց պատմության մեջ առաջին անգամ մենք որոշեցինք իրականությանը նայել իրատեսորեն» վերնագրով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԵՐԴՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ[1]

(11 նոյեմբերի, 1992 թ.)

– Ո՞րն է նախագահական անցած մեկ տարում պետության կարեւորագույն առաջընթացը եւ թերացումը: Ներկա սոցիալ-տնտեսական ծանր կացության համար որքանո՞վ է պատասխանատու կառավարությունը:

– Նախագահական մեկ տարվա ընթացքում մեր պետության ամենագլխավոր առաջընթացի եւ թերացումների մասին ընդգրկուն հարցը ինձ ճիարավորություն կտա գնահատել որոշ երեւույթներ: Ես չէի ցանկանա խոսել ձեռբերումների, նվաճումների մասին, որովհետեւ ներկա այս ծանր սոցիալ-հասարակական մթնոլորտի ֆոնի վրա, կարծում եմ, մի փոքր շրեղություն կլինի նվաճումներից եւ ձեռբերումներից խոսելը: Կխոսեմ այն արժեքների մասին, որոնք այսօր մենք ունենք եւ պետք է գնահատենք: Ամենակարեւորը Հայաստանի ներքին սոցիալ-հաղաքական իրավիճակի կայունությունն է: Ես դա գնահատում եմ որպես ամենաթանկ արժեքը, որ այսօր ունի Հայաստանի Հանրապետությունը եւ հայ ժողովուրդը, մանավանդ այն իրադարձությունների ֆոնի վրա,

---

[1] *«Հայաստանի Հանրապետությունը» ծանուցում է, որ այդ հանդիպման ընթացքում բարձրացված հարցերը տպագրվել են նախապես՝ նոյեմբերի 13-ի համարում: Նախագահի պատասխանները տպագրվել են՝ թերթի խմբագրության կողմից հարցերի փոխարեն գրված ենթավերնագրերով: «ՀՀ»-ի նախորդ համարում իրականում տպագրված է հարցերի վերաշարադրանքը: Դրա հիման վրա աշխատել ենք վերականգնել հարցազրույցի տեքստը եւ դուրս ենք բերել խմբագրության կողմից գրված ենթավերնագրերը:*

որոնք տեղի են ունենում նախկին Խորհրդային Միության հանրապետություններում: Մեր աչքի առջեւ է Վրաստանը, նաեւ Ադրբեջանը, որտեղ նույնպես տեղի են ունեցել շատ խոր ներքին ցնցումներ՝ իշխանության համար պայքարի հողի վրա, որի հետեւանքով Ադրբեջանը տվեց հսկայական զոհեր, ունեցավ չափազանց մեծ հոգեբանական պարտություններ եւ տարածքային կորուստներ (նկատի ունեմ Խոջալուի, Մալիբեյլիի, Շուշիի, Լաչինի անկումը): Այս ամենը տեղի ունեցավ Ադրբեջանի ներքին անկայունության, իշխանության համար մղված պայքարի պատճառով: Նույն կորուստները տեղի են ունենում Վրաստանում: Տաջիկստանն այս ամենի ամենացցուն օրինակն է: Ահա այս իրադարձությունների հենքի վրա, ես կարծում եմ, մենք պետք է գնահատենք մեր ունեցած կայունությունը: Այդ կայունությունը ձեռք է բերվել ոչ միայն ի պատիվ իշխանությունների, այլ առաջին հերթին՝ ի պատիվ մեր ժողովրդի զգոնության, նրա՝ վտանգի ծայրահեղ զգացողության ու նաեւ՝ ի պատիվ ընդդիմության, որը չի դիմել ծայրահեղ միջոցների: Սա նույնպես պետք է գնահատել: Այս կայունությունը գնահատում եմ որպես առաջին արժեքը. կրկնում եմ, ես այն չեմ ուզում կոչել ձեռքբերում կամ նվաճում: Սա այն իրականությունն է, որ գոյություն ունի առաջին հերթին շնորհիվ մեր ժողովրդի քաղաքական զգացողության:

Երկրորդ արժեքը իրավիճակի կառավարելիությունն է, որն, անշուշտ, կապված է կայունության գործոնի հետ: Արտաքին ծանր հանգամանքների եւ ներքին սոցիալական լարման պայմաններում, որքան էլ դժվար, մեր կառավարությանը հաջողվել է անցած դաժան ձմռան ընթացքում, այնուհետեւ այս գարնան ու ամառվա ողջ ամիսներին իրավիճակը պահպանել կառավարելի: Այսօր էլ պահպանվում է այդ վիճակը: Այսօր էլ շատ ծանր է մեր կառավարության աշխատանքը: Առիթից օգտվելով, պետք է նաեւ գնահատեմ կառավարության գործունեությունը, թեեւ դա ընդունված չէ, մոդայիկ չէ: Ավելի շատ հայհոյում են, քան որեւէ դրվատանքի խոսք ասում: Համենայն դեպս, ես ավելի լավ իրազեկ լինելով այն պայմաններին, որոնց մեջ գործում է կառավարությունը, պետք է գնահատեմ նրա գործունեությունը, նրա քրտնաջան, գիշեր-ցերեկվա աշխատանքը: Կառավարությունը գոնե կարողանում է իրավիճակը պահել կառավարելի, լուծել օրվա հրատապ, օպերատիվ խնդիրները:

Հաջորդ կարեւոր արժեքը ժողովրդավարական ազատություններն են: Թեեւ այստեղ էլ կան տարբեր գնահատականներ, բայց դրանք, կարծում եմ, լուրջ չեն: Ժողովրդավարական ազատություններն անառարկելի են, այս հարցում ես որեւէ մեղադրանք չեմ ընդունում: Ժողովրդավարական ազատությունների վերաբերյալ բոլոր մեղադրանքները ես համարում եմ զուտ ամբոխավարություն: Գոյություն ունի ազատ մամուլ, միտինգների, ցույցերի ազատություն: Որեւէ սահմանափակում, որեւէ արգելք ոչ ոք չի կարող նշել: Բացարձակապես բացակայում է գրաքննությունը. դուք բոլորդ մամուլի ներկայացուցիչներ եք, պետք է հավաստեք դա: Ես նկատի ունեմ գրաքննությունը պետության կողմից, այլ բան է, որ մամուլի օրգաններն ունեն իրենց ներքին գրաքննությունը: Դա իրենց իրավունքն է: Յուրաքանչյուր խմբագիր ունի իր քաղաքական գիծը, իր աշխատանքային ծրագիրը, եւ ըստ այդ ծրագրի ու իր քաղաքական գծի՝ նա որոշ սահմանափակումներ կարող է մտցնել իր թերթում: Դա արդեն իրենց ներքին գործն է: Կրկնում եմ՝ պետության կողմից գրաքննությունը բացարձակապես բացակայում է:

Հաջորդ կարեւոր ձեռքբերումը, որ ես կարող եմ արդեն նվաճում համարել, այն է, որ մենք կարողացանք հաղթահարել պատերազմի հիստերիան (ե՛ւ գործադիր իշխանությունը, ե՛ւ խորհրդարանն այս հարցում շատ ճիշտ կողմնորոշվեցին): Սա չափազանց կարեւոր քաղաքական նվաճում էր հայ ժողովրդի կողմից: Հունիս ամսին, երբ մեծ հաջողություններից հետո Ղարաբաղում մենք ունեցանք շատ դառը պարտություններ, մեծ գայթակղություն կար տրվելու պատերազմի այդ հիստերիային, դիմելու արկածախնդրության, ներքաշվելու լայնամասշտաբ պատերազմի մեջ: Մենք կարողացանք դրանից խուսափել: Սա, ես կարծում եմ, մեր չափազանց կարեւոր, գուցե եւ չգնահատված, նվաճումն է: Համենայն դեպս, ես մեր ժողովրդին խոստանում եմ, որ կանեմ ամեն ինչ, որպեսզի չներքաշվենք լայնամասշտաբ պատերազմի մեջ եւ այսքան զրկանքների վրա չավելացնենք նաեւ մեր զավակների անմեղ արյունը:

Կարեւոր նվաճում եմ համարում նաեւ այն, որ, թեեւ շատ սուր բանավեճերից հետո, խորհրդարանն այնքան խոհեմություն ունեցավ, որ չճանաչեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը. դա ուղղակի մարտահրավեր կլիներ ողջ աշխարհին եւ, այս անգամ արդեն քաղաքական

արկածախնդրության միջոցով, կնշանակեր ներքաշվել պատերազմի մեջ Ադրբեջանի հետ: Բացի այդ, ակնհայտ էր, որ Ղարաբաղի անկախության ճանաչումը նշանակում էր բանակցությունների արդյունքների կանխորոշում: Այդ դեպքում անհրաժեշտ էր ավելի հետեւողական լինել եւ մնայուն նաեւ բանակցությունները: Բանակցությունը տեղի է ունենում փոխզիջում ձեռք բերելու նպատակով: Եթե բանակցություններից առաջ կողմերից մեկը հանդես է գալիս նման դիրքորոշմամբ, փաստորեն նա մերժում է բանակցությունները: Այս դեպքում ամբողջ աշխարհում մեզ ոչ ոք լուրջ չէր ընդունի: Մենք, շատ բնականորեն, դրանից հետո ագրեսորի համբավ ձեռք կբերեինք: Լաչինի գրավումից հետո ԵԱՀԽ-ի շրջանակներում փորձեր եղան Հայաստանին որպես ագրեսոր դիտելու: Եթե մի անգամ նման մի անվանարկում կպչի Հայաստանին, դրանից այլեւս հնարավոր չէ ազատվել: Այն կունենա շատ լուրջ եւ ծանր հաղթական հետեւանքներ: Մենք կարողացանք դրանից խուսափել, եւ ես այստեղ, կրկնում եմ, պետք է գնահատեմ նաեւ խորհրդարանի դերը, որը մեկ շաբաթ ընթացած տեւական, սուր բանավեճերից հետո, կրճատի շինկացածության մթնոլորտում, համենայն դեպս ճիշտ կողմնորոշվեց եւ չհվեաարկեց այդ պահանջի օգտին:

Եւ իհարկե, պետք է առանձնացնեմ մեր արտաքին հաղթականության մեջ ունեցած հաջողությունները: Այստեղ առանց պարծենկոտության կամ հպարտության նշույլի, հաջողությունները կարող եմ իսկապես ձեռքբերումներ ու նվաճումներ կոչել, թեեւ այս հարցում էլ կան այլ գնահատականներ, նույնիսկ ծայրահեղ գնահատականներ: Դրանք անգամ ներկայացվում են որպես ակնհայտ ճշմարտություններ: Նշում են, թե իբր Հայաստանի արտաքին հաղթականությունը նախապատրաստված էր, որ կարեւականապես դեմ եմ նման գնահատականին, որովհետեւ չէր կարող նախապատրաստվել մի բան, որը գոյություն չուներ: Հայաստանը չի ունեցել արտաքին հաղթականություն: Մեր բոլոր հարաբերությունները արտաքին աշխարհի հետ տեղի են ունեցել Մոսկվայի միջոցով: Հայաստանը ընդամենը երկու տարի է, ինչ սկսել է արտաքին հաղթականություն մշակել եւ վարել: Ձուլեցածի մեջ չի կարելի նախապատրաստվել, սա արդեն տարրական սխալ է: Եւ ինչ որ մենք ձեռք ենք բերում, պետք է դիտել որպես հաջողություն, որովհետեւ մենք սկսում ենք չեղած տեղից, զրոյից: Այս առումով Հայաստանի արտաքին հաղթականությունը ես բացարձակապես հաջող եմ գնահատում: Նշեմ հաջողություններից մի հանիսը, որոնք ակնհայտ են. առաջինը մեր անկախության ճանաչումն էր, այնուհետեւ միջազգային կազմակերպություններին մեր անդամակցությունը, միջազգային վայրուտային եւ բանկային կազմակերպություններին անդամակցելը: Սրանք արդեն ոչ թե դեկլարատիվ, այլ ռեալ հաջողություններ են: Դրանցից է նաեւ ԱՊՀ երկրների հետ մեր հարաբերությունների համեմատական կայունացումը: Իհարկե, ԱՊՀ-ն դեռեւս չկայացած համագործակցություն է, դեռ շատ երկար ժամանակ է պահանջվում, որպեսզի ԱՊՀ-ն դառնա եւրոպական համայնքի նման գործուն, կենդանի օրգանիզմ: Բայց այն, ինչ կա, դա նույնպես մենք պետք է գնահատենք, որովհետեւ այն մեզ հնարավորություն է տալիս անցումային այս շրջանում վարել որոշ չափով հավասարակշռված հաղթականություն, չկորցնել այն ձեւավորված տնտեսական կապերը, որոնք գոյություն ունեն, եւ կարողանալ շատ մեղմ կերպով անցում կատարել դեպի այլ հարաբերություններ: ԱՊՀ-ի մեջ նախկին խորհրդային հարաբերությունները պետք է լիովին վերափոխվեն միջազգային հարաբերությունների, ԱՊՀ երկրների միջեւ պետք է գործեն այնպիսի հարաբերություններ, որոնք գործում են ընդհանրապես աշխարհի պետությունների միջեւ: Մինչեւ սա չլինի, մենք չենք ունենա մի այնպիսի ներդաշնակ համագործակցություն, ինչպիսին է Եւրոպական համայնքը: Զգալի տեղաշարժեր կան նաեւ մեր հարեւանների հետ ունեցած հարաբերություններում: Խոսք մասնավորապես Իրանի, Թուրքիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի հետ ունեցած հարաբերությունների մասին է, որոնց շուրջ հարցերի միջոցով մենք դեռ կխոսենք:

Այժմ անդրադառնանք հարցի երկրորդ մասին՝ բացթողումներին եւ սխալներին: Ձեմ ուզում խոսել օբյեկտիվ դժվարությունների մասին, որոնք նույնպես շահարկման առարկա են հանդիսանում, թեեւ դրանք ակնհայտ են: Իշխանություններն, իհարկե, ավելի շատ հակված են ի ցույց դնել օբյեկտիվ հանգամանքները, իսկ ընդդիմությունը՝ հակառակը՝ անտեսել օբյեկտիվ հանգամանքները եւ կենտրոնանալ սուբյեկտիվ հանգամանքների վրա: Քանի որ ակնհայտ են օբյեկտիվ դժվարությունները, դրանց մասին չեմ ուզում խոսել: Դրանք կան, ոչ ոք չի կարող դա ժխտել: Բայց կան նաեւ բացթողումներ, որոնք կախված են մեզնից, եւ միայն որոշ չափով այդ օբյեկտիվ հանգամանքներից: Ամենագլխավոր

եւ ամենամեծ թերացումը անտեսական բարեփոխումների դանդաղումն է, երե չասեմ՝ դադարեցումը: Սեփականաշնորհման գործընթացը լիովին դադարեցված է, եւ սա ես համարում եմ ամենածանր հետեւանքներով եղի սխալը: Այստեղ մի քանի պատճառներ կան, որոնցից գլխավորը շրջափակումներն են, դրանց գումարվեց նաեւ Վրաստանի երկաթուղու խափանումը: Կառավարությունն ստիպված էր գիշեր ու զօր զբաղվել օպերատիվ խնդիրների լուծմամբ: Այդ պատճառով ժամանակ եւ հնարավորություն չէր լինում հետանկարային ծրագրեր իրականացնել: Սա կարեւոր պատճառ է, եւ այն չի կարելի անտեսել: Այս տարվա ձմեռն ավելի ծանր կլինի, քան անցյալ տարի էր, երբ անխափան գործում էր վրացական երկաթուղին, որով մենք կարողանում էինք իրականացնել մեր ապրանքափոխանակության գոնե 30 տոկոսը: Այսօր այդ հնարապարհը չի գործում: Ամենամեծ ցավն այն է, որ չենք կարողանում մեր արտադրած ապրանքն արտահանել արտաքին աշխարհ եւ դրանով ապահովել մեր արտադրությունը: Այսօր տասնյակ միլիարդների ապրանք է կուտակված Հայաստանում, այն իրացվելու դեպքում հնարավորության համար հսկայական ֆինանսական միջոցներ կարող է ապահովել, որն իր հերթին մեզ հնարավորություն կտար ապահովելու տնտեսության վերարտադրությունը, ինչ-որ չափով բավարարելով մեր ժողովրդի սոցիալական պահանջները: Բայց կան նաեւ սուբյեկտիվ պատճառներ, որոնցից գլխավորը, ցավով պետք է նշեմ, խորհրդարանի ոչ արդյունավետ աշխատանքն է: Խորհրդարանը վերածվել է քաղաքական մարմնի, ավելի ճիշտ՝ քաղաքական պայքարի արենայի, որտեղ ամենակենսական խնդիրները, որոնք հասկանալի են բոլորին եւ անհրաժեշտ մեր ժողովրդին, վերածվում են քաղաքական շահարկումների առարկայի: Սրա հետեւանքով մեր խորհրդարանը չի կատարում իր հիմնական դերը՝ օրենքների ընդունումը: Զգալի է օրենսդրության դաշտի բացակայությունը: Վեց ամիս տեւեց սեփականաշնորհման մասին օրենքի ընդունումը: Ավելին, այդ օրենքը ընդունելուց հետո անցել է երեք ամիս, բայց մինչեւ հիմա խորհրդարանը չի ընտրել սեփականաշնորհման հանձնաժողովի 10 անդամներին, որպեսզի կարողանանք սկսել այդ գործընթացը: Իմ հրամանագիրը վաղուց պատրաստ է: Հանձնաժողովի 10 անդամին հրամանագրով պետք է նշանակեր Հանրապետության Նախագահը, մյուս տասին՝ ընտրեր խորհրդարանը: Առայժմ դեռ սպասում եմ խորհրդարանի ընտրությանը: Օրենքների ընդունման այս խափանումը, դանդաղումը մեծապես խանգարում է տնտեսական բարեփոխումների անցկացմանը, մասնավորապես՝ սեփականաշնորհման գործընթացին: Ես պետք է խոստովանեմ մեղքի իմ բաժինը: Իմ կողմից, կառավարության, խորհրդարանի կանոնդողական ուժերի կողմից ավելի մեծ համառություն դրսեւորելու դեպքում հնարավոր էր այնպես անել, որ «Սեփականաշնորհման մասին» օրենքն ավելի շուտ ընդունվեր, եւ հանձնաժողովն ավելի շուտ ձեւավորվեր: Այստեղ, ըստ երեւույթին, ինձ պակասեց համառությունը, եւ ես դա խոստովանում եմ:

Լուրջ բացթողումներից կարելի է նշել նաեւ հաղաքական մի կարեւոր հանգամանք: Դա այս տարվա ապրիլ – մայիսի իրադրությունն էր՝ Նուշիի եւ Լաչինի գրավումից առաջ եւ հետո, երբ Ադրբեջանում տեղի էր ունենում շատ լուրջ պայքար իշխանության համար: Այդ պահին ադրբեջանական իշխանություններն ավելի շատ հակված էին բանակցությունների, խաղաղ լուծումների, որովհետեւ շատ ավելի ծանր դրության մեջ էին գտնվում, քան հետագայում, երբ հաջողություններ ունեցան: Մենք կորցրինք այս պահը: Պետք է խոստովանեմ մեղքի իմ բաժինը: Ըստ երեւույթին, ես պետք է այդ հնարավորության մասին հրապարակայնորեն խոսեի եւ՛ խորհրդարանում, եւ՛ ժողովրդի հետ, որպեսզի համապատասխան ճնշում գործադրվեր խորհրդարանի վրա, համապատասխան հասարակական մթնոլորտ ստեղծվեր, եւ դարաբաղցիները մասնակցեին բանակցային գործընթացին: Ինչո՞ւ, որովհետեւ այդ պահին շատ ավելի նախապատվելի դիրքում էին գտնվում դարաբաղցիները, քան հետագայում:

Խորհրդարանը մերժեց Լեռնային Ղարաբաղի հանձնման պահանջը, բայց դրանից հետո փորձ արեց գտնել ինչ-որ փոխզիջումային տարբերակ: Ընդունվեց հուլիսյան որոշումը, որով Հայաստանի իշխանությունների առաջ սահմանափակում է դրվում՝ չտարածգրել որեւէ փաստաթուղթ, որտեղ Ղարաբաղը դիտվի Ադրբեջանի տարածքում: Ես կարծում եմ, որ այս փաստաթուղթը, վճռից բացի, որեւէ օգուտ չի կարող տալ: Ինչո՞ւ: Որովհետեւ նորից կանխորոշվում են բանակցությունների արդյունքները. Հայաստանի իշխանությունները զրկվում են մանեւրելու հնարավորությունից: Ցանկության դեպքում այն մեր

պարտնյորներին կարող է միշտ էլ հնարավորություն տալ ԵԱՀԽ-ի շրջանակներում մեզ ներկայացնել որպես անզիջող, խաղաղության գործընթացը խափանող կողմ: Ինչևէ, մենք սա հետագայում ինչ-որ ձևով կարող ենք հաղթահարել: Ես առաջարկում էի ավելի մեղմ տարբերակ, որը նաև բխում էր մեր սկզբունքներից: Որոշումը կարող էր լինել հետևյալ կերպ. Հայաստանի իշխանությունները չեն կարող ստորագրել որևէ փաստաթուղթ, որը կհակասեր Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքին: Սա ավելի մեղմ տարբերակ կլիներ՝ և ըստ էության նույնը: Այս ձևը նշանակում էր՝ որևէ փաստաթուղթ ստորագրելիս Հայաստանի իշխանությունները պարտավոր են հաշվի առնել Լեռնային Ղարաբաղի կարծիքը: Այն մանևրելու ավելի մեծ հնարավորություն կտար մեզ:

Եղել են նաև այլ սխալներ: Չափազանց մեծ սխալ էր հացի գների բարձրացման ուշացումը: Դա պետք է արվեր ավելի վաղ, ամառվա ամիսներին, երբ հացի պաշարներն ավելի մեծ էին: Այդ դեպքում անցումն ավելի մեղմ կլիներ, և մենք չէինք ունենա այդքան հսկայական ֆինանսական կորուստներ: Մի կողմից 5 ռուբլով հաց էր վաճառվում, մյուս կողմից այդ հացը ալյուրի ձևով գողացվում էր ալրաղացներից, հացի խանութներից ու շուկայում վաճառվում 20–25 ռուբլով, այսինքն՝ այն միջոցները, որ կարող էր հայթայթել պետությունը, դրանով հոգալ մեր ժողովրդի սոցիալապես անպաշտպան շերտերի հոգսերը, անցնում էին սպեկուլյանտների, մաֆիոզ խմբավորումների ձեռքը:

Եղել են նաև կադրային կոպիտ սխալներ, մասնավորապես՝ հացի բնագավառի կադրերի հարցում: Սկզբում թվում էր, թե Թաֆիկ Շահբազյանը Մոսկվայում մեծ կապեր ունի ու այդ կապերը կարող է օգտագործել Հայաստանին հացով ապահովելու համար, բայց դա ընդամենը «բլեֆ» դուրս եկավ: Իրականում մեղքի ամենամեծ բաժինն ընկնում է այս գերատեսչության և հիշյալ անձնավորության վրա, որ Հայաստանը հայտնվել է այս վիճակում: Նման չափազանց կոպիտ կադրային նշանակում էր նաև օդային ուղիների վարչության պետի նշանակումը (Աղբաշյան): Նրա օրոք վիճակն ավելի վատթարացավ:

Այսքանն՝ ընդհանուր գծերով:

– Այսօր էլ գոյություն ունի՞ արդյոք «հայկական գործոն», թե՞ ոչ:

– Ես չեմ ուզում հայկական գործոնի մասին հարցը վերածել փիլիսոփայական կատեգորիայի: Երբ խոսվել է 1988–89 թ. հայկական գործոնի մասին, դա ընդամենը եղել է զուտ քաղաքական գործոն: Ի՞նչն էր այդ գործոնի էությունը: Խորհրդային Միության գոյության պայմաններում Ադրբեջանն ուներ ինչ-որ լծակներ՝ ազդելու կենտրոնական իշխանությունների վրա: Առաջին հերթին դա բռնության սպառնալիքներն էին՝ Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի հայության հալածանքները, ջարդերը, ռուս բնակչության և բանակի դեմ սպառնալիքները: Սա ադրբեջանական գործոնն էր: Այն զուտ քաղաքական գործոն էր, և Ադրբեջանը մեծ հաջողությամբ դա կիրառում էր: Փաստորեն կենտրոնական իշխանությունները հաշվի էին նստում այս գործոնի հետ: Ի հակադրություն սրան, մենք փորձում էինք ստեղծել հայկական գործոն, և մեզ դա հաջողվեց: Դա համաժողովրդական դեմոկրատական շարժումն էր, որն իր լուրջ արձագանքներն ունեցավ խորհրդային մյուս հանրապետություններում: Հայաստանն առաջին հանրապետությունն էր ԽՍՀՄ-ում, որտեղ տեղի ունեցան զանգվածային ցույցեր ու համազգային գործադուլներ, և ամենակարևորը՝ Հայաստանն առաջինն էր, որ գնաց խորհուրդների միջոցով իշխանության վերափոխման բանային:

Բոլոր հանրապետություններում վերափոխումները տեղի ունեցան այս ճանապարհով: Ես չեմ ասում, թե դա մշակված ծրագիր էր, բայց փաստն այն էր, որ առաջինը տեղի ունեցավ Հայաստանում: Սա իսկապես վերածվեց գործոնի: Հայաստանում տեղի էին ունենում դեմոկրատական այնպիսի գործընթացներ, որոնք հետագայում օրինակ էին դառնում կամ ազդում այլ հանրապետությունների շարժումների վրա: Այսօր ես «հայկական գործոն» արտահայտությունը չեմ օգտագործի, որովհետև նման քաղաքական գործոն ես չեմ տեսնում: Եթե այսօր ուզենք անպայման ինչ-որ բան հայկական գործոն անվանել, ես դա կհամարեի մեր արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքը, այն է՝ հարաբերությունների հետևողական կարգավորումը մեր անմիջական հարևանների հետ, որը գործընթաց է և դեռ չի հասել իր ավարտին:

– Ի՞նչ սկզբունքով է կատարվում կադրերի ընտրությունը:

– Ես չէի ասի, որ զգալի փոփոխություններ են եղել կադրային բնագավառում: Հայաստանի Հանրապետության կառավարությունն ունի մոտ 30 անդամ, որոնցից 4-ը մեկ տարվա գործունեությունից հետո փոխվել են: Սա, կարծում եմ, շատ բնական գործընթաց է: Մեկ տարի անցնելուց հետո նաեւ խնդիրներն են փոխվել: Այս նոր, փոփոխված խնդիրները հարկադրում են ինչ-ինչ ճշգրտումներ մտցնել կադրային քաղաքականության մեջ: Իհարկե, բոլորին ամենից շատ հետաքրքրում են, ըստ երեւույթին, երկու նախարարների՝ պաշտպանության եւ արտաքին գործերի նախարարների փոփոխությունները. դրանց մասին շատ է խոսվել, հայտնվել է նաեւ պաշտոնական տեսակետը: Ես պետք է լիովին համաձայնեմ այն տեսակետին, որը շարադրել էր Նախագահի մամուլի քարտուղարը «Ազգ» թերթին տված հարցազրույցում՝ Րաֆֆի Հովհաննիսյանի պաշտոնազրկման մասին: Լիովին համաձայն եմ նրա բոլոր գնահատականներին: Կարող եմ հիշեցնել մի երկու գլխավոր պատճառ: Սկզբի չորս ամիսների ընթացքում, երբ Հայաստանի արտգործնախարարությունը պետք է վարեր շատ ակտիվ արտաքին քաղաքականություն, երբ տեղի էին ունենում անկախության ճանաչման, միջազգային կազմակերպություններին անդամագրվելու գործընթացները, Րաֆֆի Հովհաննիսյանն իր պարտականությունները կատարեց փայլուն, եւ ես չեմ պատկերացնում մի այլ արտաքին գործերի նախարար, որը կարողանար այդպես իրականացնել այդ աշխատանքը: Բայց դրանից հետո Րաֆֆի Հովհաննիսյանի մոտ սկսվեց որոշ խզում Հայաստանի Հանրապետության Նախագահի արտաքին քաղաքականության սկզբունքներից: Դա առաջին հերթին վերաբերում էր մեր հարեւանների հետ ունեցած հարաբերությունների հարցին: Եւ դրա ամենացայտուն օրինակը դարձավ Ստամբուլի նրա ելույթը՝ ելույթ, որին ես չեմ կարող համաձայնել ոչ ամբողջությամբ, ոչ էլ յուրաքանչյուր կոնկրետ դրույթի՝ առանձին վերցրած: Եթե ես հետագայում հուշագրության ժամանակ ունենամ, կարող եմ մեկ առ մեկ վերլուծել այդ ելույթի դրույթները եւ մեկ առ մեկ առարկել դրանց: Դա նախ եւ առաջ ուղղակի հակասում էր Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքին՝ հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման սկզբունքին: Երկրորդ՝ առանց հաշվի առնելու քաղաքական հետեւանքները, շրջանառության մեջ էին դրվում վտանգավոր քաղաքական կոխաններ, նկատի ունեմ քրդական

խնդիրը, Կիպրոսի խնդիրը: Չեմ ընդունում ելույթի պատմական հիմնավորումն ամբողջապես: Լինելով պատմաբան, պիտի ասեմ, որ հիմնովին սխալ էին ե՛ւ Մանազկերտի ճակատամարտի, ե՛ւ խաչակրաց արշավանքի գնահատականները, բայց դա չէր գլխավորը: Ամենագլխավորն այն էր, որ սա Թուրքիայի դեմ ուղղված ելույթ չէր, այլ Արեւելքի բացարձակ մերժում եւ արեւմտամետության ցցուն օրինակ, որն իրականության հետ ոչ մի կապ չուներ: Աններելի է, որ արտգործնախարարն իրականացնում է մի քաղաքականություն, որը լիովին հակասում է Հայաստանի Հանրապետության Նախագահի քաղաքականությանը: Քանի որ ես եմ, վերջին հաշվով, արտաքին քաղաքականության պատասխանատուն, ես դա չէի կարող հանդուրժել: Կան նաեւ այլ պատճառներ, որոնք երկրորդական կարող եմ համարել: Ինչ վերաբերում է նրա հնարավոր վերադարձին, ես կարծում եմ, դուք տեղյակ եք, որ ես Րաֆֆի Հովհաննիսյանին, խնդրելով ազատել այդ պաշտոնը, անմիջապես առաջարկել եմ Հայաստանի Հանրապետության Նախագահի խորհրդականի պաշտոնը: Առայժմ ոչ դրական, ոչ բացասական պատասխան չեմ ստացել: Ես իմ խնդրանքի տերն եմ, եւ եթե Րաֆֆի Հովհաննիսյանը համաձայնի, այսօրվանից կարող է անցնել աշխատանքի: Հետագան ցույց կտա, թե ով իրեն ինչպես կդրսեւորի: Ես, իհարկե, չեմ բացառում, որ այն նախարարները, որոնք պաշտոն են զբաղեցրել եւ զրկվել այդ պաշտոնից, հետագայում նույնիսկ Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոն չեն զբաղեցնի: Մեզ մոտ արդեն ժողովրդավարական հասարակություն է, եւ պետք է վարժվենք դրան: Ինչպես գիտենք, Հայաստանի պաշտոնաթող վարչապետը վերադարձավ կառավարություն եւ այսօր զբաղեցնում է չափազանց կարեւոր պաշտոն: Կադրային հարցում մենք առաջնորդվել ենք նախ եւ առաջ մասնագիտական եւ անհատական կարողություններով: Որեւէ քաղաքական նկատառում գոյություն չի ունեցել: Եւ ես այստեղ նորից պետք է հիշեցնեմ, մենք առաջարկել ենք որոշ պաշտոններ նաեւ ընդդիմադիր կուսակցություններին: Ինչ-ինչ պատճառներով կա՛մ նրանք չեն համաձայնել, կա՛մ այդ պաշտոնների փոխարեն պահանջել են այլ պաշտոններ, որոնց մենք չէինք կարող համաձայնել: Մենք կոալիցիոն կառավարություն չենք ստեղծում, որպեսզի կուսակցությունն իբր թե լադրի իր ներկայացուցչի թեկնածությունը, մենք առաջնորդվում ենք այլ

սկզբունքով, եւ այս դեպքում, ինձ թվում է, կուսակցությունները պետք է հարգեն մեր կածիքը: Մենք ենք, որ պետք է առաջարկենք նրանցից որոշակի անձնավորությունների՝ պաշտոն զբաղեցնել մեր կառավարությունում. իսկ այդպիսի առաջարկություններ եղել են, այսուհետեւ ևս կլինեն: Ես չեմ կարող երաշխիք տալ, թե բոլոր նշանակումներն իրենց կարդարացնեն եւ, ասենք, մեկ-երկու տարի հետո նորից փոփոխությունների կարիք չի զգացվի: Այդպիսի բան չկա աշխարհում, նույնիսկ ամբողջ կառավարություններ են հրաժարական տալիս:

– Ինչպիսի՞ քաղաքականություն է վարում Հայաստանը հարեւան Թուրքիայի նկատմամբ:

– Թուրքիայի հետ հարաբերություններում մենք առաջնորդվել ենք մեր որդեգրած՝ հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման սկզբունքով, եւ այս շրջանակներում իրականացրել ենք չափազանց հետեւողական հաղաքականություն՝ սկսած առաջին օրվանից, երբ Շարժումը ձեւավորվեց որպես հասարակական-հաղաքական շարժում եւ որդեգրեց իր սկզբունքները: Այդ օրվանից մինչեւ հիմա մեր իշխանությունները հետեւողական հաղաքականություն են վարել, ոչ մի շեղում թույլ չեն տվել, եթե նկատի չունենանք հիշատակված մեր արտգործնախարարի կույրը: Եւ պետք է ասել, որ Թուրքիայի կողմից եթե ոչ համարժեք, ապա մուտավորապես նույն դիրքորոշումն ենք հանդիպում: Թեեւ պետք է նկատի ունենալ, որ այս հարցը, որքան բարդ է մեզ համար, գուցե նույնքան բարդ է Թուրքիայի համար:

Թուրքիայում էլ հասարակական մեծ հնչեղություն ունի Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը, այս հարցը հաղաքական շահարկման, հաղաքական պայքարի առարկա է: Եւ դրա վկայությունը Թուրքիայի խորհրդարանի վերջին նիստն էր, որտեղ Հայաստանին հաց մատակարարելու պատճառով նույնիսկ հարց բարձրացվեց անվստահություն հայտնել թուրքական կառավարությանը: Սա չափազանց էական հարց է, որը մենք պետք է հաշվի առնենք: Թուրքական կառավարությունն էլ ստիպված է հաշվի նստել հասարակական կարծիքի հետ, ստիպված է հաշվի նստել ընդդիմության հաղաքական ճնշման հետ: Եւ սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Թուրքիայի կողմից համապատասխան շտապողականություն մենք չենք տեսնում այս հարա-

բերությունների կարգավորման հարցում: Իհարկե, այստեղ գումարվում է նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցը, որի նկատմամբ թուրք ժողովուրդը շատ զգայուն է, սա էլ մենք պետք է հաշվի առնենք:

Հացի առաման թույլտվությունը միայն բարի կամքի դրսեւորում չէր, որովհետեւ, ինչպես պարզվեց խորհրդարանի նիստում, այդ որոշումը կապված էր նաեւ համապատասխան ռիսկի հետ: Ուրեմն, սա ուներ ավելի լուրջ հիմքեր: Թուրքիային էլ է ձեռնտու կարգավորել իր հարաբերությունները Հայաստանի հետ: Ինչպես ասացի, այստեղ ամենամեծ խոչընդոտը ԼՂՀ-ի խնդիրն է: Թուրքիան ստիպված է հասարակական կարծիքին տուրք տալով, կորցնել իր չեզոքությունը, միջազգային ատյաններում այս հարցում հանդես գալ Ադրբեջանի հանդեպ բացահայտ աջակցությամբ: Բայց ես համոզված եմ, որ Թուրքիան էլ շահագրգռված է Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորմամբ: Սա էլ մեծ շանս է մեզ համար, որովհետեւ, եթե Թուրքիան էլ իրականում դեմ լիներ այս պրոցեսին, չափազանց կդժվարանար հարցի խաղաղ կարգավորումը, այսինքն՝ զինադադարի հաստատումը եւ պատերազմի ավարտը:

Որքան արագ մեզ հաջողվի զինադադար կնքել Լեռնային Ղարաբաղում, կարծում եմ, այնքան արագ կզարգանան մեր հարաբերությունները Թուրքիայի հետ: Այսօր էլ, չնայած այս բոլոր դժվարություններին, համենայն դեպս, ես պետք է այդ հարաբերությունները գոհացուցիչ համարեմ, հատկապես հացի մատակարարման խնդրում: Ինչպես գիտեք, Հաֆեզ Ասադը Հայաստանին նվիրեց 6000 տոննա ցորեն՝ նկատի ունենալով մեր դժվար կացությունը: Այդ ցորենը մենք Հայաստան պիտի տեղափոխենք դարձյալ Թուրքիայի ճանապարհով, ամենայն հավանականությամբ՝ ավտոճանապարհներով: Մենք ուզում ենք, որպեսզի գործարկվի նաեւ Մարգարայի ճանապարհը. սա ևս մի լրացուցիչ ճանապարհ է, որը կօգնի մեր հոգսերի թեթեւացմանը: Այդեն արտաքին գործերի նախարարությունների մակարդակով վերջնականապես համաձայնեցված է դիվանագիտական հարաբերություններ հաստատելու արձանագրությունը: Դեպքերի հաջող զարգացման դեպքում մինչեւ տարեվերջ հնարավոր կլինի ստորագրել դիվանագիտական հարաբերությունների հաստատման այդ փաստաթուղթը: Կիրակի օրը ես 15 րոպեանոց հեռախոսազրույց ունեցա վարչապետ պարոն Դեմիրելի հետ

(ինքն էր զանգահարել): Զրույցի ժամանակ ես բարձրացրի եւս մեկ հարց. Գերմանիայից եւ Բուլղարիայից էլեկտրաէներգիայի մատակարարումը Հայաստան ապահովել Թուրքիայի ցանցերի միջոցով: Տեխնիկապես դա հնարավոր է, եւ վարչապետը խոստացավ կարգավորել նաեւ այդ հարցը: Նա հանձնարարեց իրենց էներգետիկներին, որոնք արդեն կապի մեջ են Հայաստանի էներգետիկների հետ, զբաղվել այս հարցով: Հաջողության դեպքում այս ձմեռ մենք 100–150 մեգավատ էլեկտրաէներգիա կստանանք նաեւ այս ճանապարհով, որը, կարծում եմ, մեծ աջակցություն կլինի մեզ:

– Ինչո՞վ է պայմանավորված ազգային բանակի ստեղծումն այսօր:

– Պետք է ասել, որ մեր բանակի ստեղծումը այսօր չէ, որ ձեռնարկվել է, այլ բան է, որ այն այսօր դրված է ուրիշ հիմքերի վրա: Բանակի ծնունդն սկսվել է 1990 թվականի հունվարից, երբ Բաքվի ջարդերից հետո տարերայնորեն կազմավորվեցին զինված ջոկատներ, որոնք աստիճանաբար վերածվեցին ազատամարտիկների երկրապահ ջոկատների: Դա նույնպես բանակ էր իր տեսակի մեջ, որը ժամանակին պատվով կատարեց իր խնդիրները:

Այսօր պահանջներն այլ են, պատերազմի բնույթն էլ է փոխված թե՛ Լեռնային Ղարաբաղում եւ թե՛ մեր սահմաններում: Կողմերն արդեն ունեն ժամանակակից, նույնիսկ գերժամանակակից զենքեր, զինտեխնիկա, որը պահանջում է համապատասխան պրոֆեսիոնալ պատրաստություն: Բանակում անհրաժեշտություն էր ծագել նաեւ կատարել կադրային փոփոխություններ: Վազգեն Սարգսյանը գիտակցում էր, որ ինքն այլեւս ի վիճակի չէ իրականացնել այդ նոր խնդիրները եւ կամովին, իր խնդրանքով, այդ պաշտոնը զիջեց ավելի պրոֆեսիոնալների: Մենք հրավիրեցինք երկու չափազանց հմուտ զինվորականների՝ գեներալ-լեյտենանտներ Տեր-Գրիգորյանին եւ Անդրեասյանին, որոնք այսօր ամբողջությամբ զբաղված են մեր բանակի կազմավորման հարցերով:

Բանակի հարցում մենք մի փոքր այլ ճանապարհ ընտրեցինք, քան Ադրբեջանը: Նրանք իրենց բանակն ստեղծեցին առճակատման ուղիով, մենք փորձեցինք դա անել մեղմ քաղաքական բանակցությունների միջոցով, ինչը մեզ հաջողվեց: Մենք իրավունք չունեինք ընտրելու Ադրբեջանի ճանապարհը: Իհարկե, եթե հարցին վերաբերվեինք մաթեմատիկորեն, կարելի էր ասել՝ եթե Ադրբեջանն ազգայնացնում է չորս ռուսական դիվիզիաները, ի՞նչն է խանգարում, որ մենք էլ ազգայնացնենք Հայաստանում գտնվող ռուսական բանակի երեք դիվիզիաները: Բայց խանգարող հանգամանքները շատ էին, մենք չէինք կարող հաշվի չառնել մեր աշխարհաքաղաքական դիրքը եւ մերկացնել մեր սահմանները ռուսական բանակներից: Այդ իսկ պատճառով մենք բանակցությունների շնորհիվ հասանք նրան, որ այդ երեք դիվիզիաներից երկուսը հանձնվեցին Հայաստանի իշխանություններին, մեկը պահպանվեց որպես ռուսական բանակի ստորաբաժանում, եւ համապատասխան պայմանագրով ճշտվեց այդ դիվիզիայի կարգավիճակը:

Ես կարծում եմ, բանակի ստեղծման հարցում մենք շատ ճիշտ քաղաքականություն էինք ընտրել: Ես չեմ ընդունում ընդդիմադիր մամուլում արծարծվող ոչ մի մեղադրանք կապված բանակի ստեղծման հարցում հապաղման հետ: Եթե մենք ընտրեինք ադրբեջանական ճանապարհը, շատ ավելի ծանր կացության մեջ կլինեինք: Չէինք ունենա այն, ինչ այսօր ունենք, իսկ դրա կողքին մենք կարող էինք ունենալ մեծ կորուստներ, որոնք անդառնալի կարող էին լինել: Համենայն դեպս, մեր հարաբերությունները չափազանց լավ են Ռուսաստանի հետ թե՛ քաղաքական, թե՛ ռազմական առումով: Մենք դժգոհելու առիթ չունենք:

– Ինչպիսի՞ն է Ձեր գնահատականը Լեռնային Ղարաբաղում եւ ՀՀ սահմանամերձ շրջաններում տիրող իրավիճակին

– Արցախի մասին իմ տեսակետը: Արդեն մի քանի անգամ նշել եմ, որ Հայաստանի իշխանություններն ամբողջ աշխարհի առջեւ պետք է հանդես գան որպես հարցի խաղաղ կարգավորման կողմնակիցներ, բայց հանդես գան ոչ թե դեկլարատիվ, լոզունգային ձեւով, այլ իրենց կառուցողական գործունեությամբ եւ առաջարկություններով: Այսօր, այս բոլոր դժվարություններից եւ հակամարտություններից հետո, մենք հանգել ենք այն եզրակացության, որ բանակցությունները կարող են արդյունք տալ միայն այն դեպքում, եթե մեզ հաջողվի առանց վերապահության, առանց նախապայմանների զինադադար հաստատել Ադրբեջանի հետ: Պետք է ասել, որ մեր պարտնյորներն այս հարցում համաձայն են մեզ հետ: Համենայն դեպս, մեր բոլոր շփումների ընթացքում ե՛ւ ԵԱՀԽ-ի շրջանակներում, ե՛ւ առանձին երկրների՝ Ռուսաս-

տանի. Միացյալ Նահանգների, Թուրքիայի, Գերմանիայի հետ հանդիպումների ընթացքում, բոլորն էլ համաձայն են մեր տեսակետի հետ: Այսօր բոլորիս համար էլ խնդիրը պարզ է. զինադադարն է Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման պայմանը: Զինադադարից հետո, Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության ապահովումից հետո, թող բանակցությունները տեւեն երկար ժամանակ: Սովորաբար, այսպիսի հարցերի դեպքում, բանակցությունները շատ երկար են տեւում: Դուք գիտեք, աշխարհում նմանատիպ բազմաթիվ հարցեր կան, որոնց շուրջ բանակցությունները նույնիսկ տասնյակ տարիներ են տեւում: Գլխավորն այսօր Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության ապահովումն է եւ Լեռնային Ղարաբաղի՝ որպես տնտեսական-հաղարական միավորի, նորմալ կենսագործունեությունը: Եթե սրանք ապահովվեն, մնացած հարցերը, այդ թվում նաեւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, պետք է դառնա բանակցությունների առարկա:

– Ինչպե՞ս եք գնահատում քաղաքական պայքարը Հայաստանում:

– Ինչպես եմ ես գնահատում Հայաստանում առկա հաղարական պայքարը: Գնահատում եմ որպես չափազանց բնական, անհրաժեշտ եւ անխուսափելի: Դա արդեն մարդկանց ցանկություններից չի կախված: Եթե իսկապես ժողովրդավարական հասարակություն է, ուրեմն այդ ժողովրդավարական հասարակության մեջ պետք է տեղի ունենա հաղարական պայքար տարբեր կուսակցությունների միջեւ՝ հանուն իշխանության: Ուղղակի միակ պայմանն է, որ այդ պայքարը տեղի ունենա օրենքների, Սահմանադրության շրջանակներում: Ես կրնդունեմ օրենքների, Սահմանադրության շրջանակներում տեղի ունեցող ցանկացած պայքար, որքան էլ այն հանելի չլինի իմ հիմիին, իմ հեղինակությանը, իմ անձնավորությանը: Եթե պայքարն ընթանում է, եւ մեղադրանքները ներկայացվում են օրենքների շրջանակներում, ես պատրաստ եմ ամենայն լրջությամբ ընել, վերլուծել, հաշվի առնել ինձ ներկայացվող բոլոր առաջարկություններն ու մեղադրանքները:

Մեզ մոտ այսօր օրենքների շրջանակներում պայքարի ասպարեզ կա. դա մեր մամուլն է, խորհրդարանը: Բայց, դժբախտաբար, պետք է ասեմ, որ մեր հաղարական կուսակցությունները, խորհրդարանական

ֆրակցիաները չեն օգտվում իրենց տրված հնարավորություններից: Եթե նույնիսկ պահանջում են կառավարության հրաժարականը, պահանջում են փողոցներում, միտինգներում, եթե պահանջում են Նախագահի հրաժարականը, նորից՝ միտինգներում եւ փողոցներում: Բայց կա դրա մեխանիզմը, դրա օրինական ձեւը: Ինչո՞ւ այն չեն օգտագործում: Ինչո՞ւ այսման դժգոհությունների դեպքում, երբ խորհրդարանը հնարավորություն ունի անվստահություն հայտնելու կառավարությանն ամբողջությամբ եւ ցանկացած նախարարի առանձին վերցրած, մինչեւ հիմա ո՛չ խորհրդարանը, ո՛չ էլ որեւէ ֆրակցիա չի օգտագործել այդ լծակը: Եթե դա օգտագործվեր, բոլորի համար պարզ կլիներ, թե ի՞նչ են, արդյոք, այն գնահատականները, որ տրվում են կառավարությանը կամ Նախագահին, եւ որքանով են դրանք հիմնավորված: Կառավարությունն էլ, Նախագահն էլ հնարավորություն կունենային իրենց փաստարկները բերելու: Այս դեպքում ժողովրդի համար ամեն ինչ պարզ կլիներ, մարդիկ չէին մոլորվի: Այսօր ի՞նչ է ստացվում: Ամեն ինչի մասին խոսվում է ամեն տեղ, բայց ոչ այնտեղ, որտեղ դա պետք է, որտեղ այդ խոսքի իրագործման մեխանիզմները մշակված են: Ընդդիմադիր կուսակցությունների կողմից այս լծակներն օգտագործելու դեպքում մեր պետական կառույցները շատ ավելի հաստակ կարող էին գործել, մեր ժողովուրդը չէր ընկնի մոլորությունների մեջ եւ գուցե բարձրանար նաեւ հաղարական բանավեճերի կուլտուրան, որն այսօր մեզ չափազանց անհրաժեշտ է:

– Ինչպիսի՞ վիճակ է սպասվում մեզ այս ծմեռ:

– Այս ձմեռն ավելի դաժան ու ծանր է լինելու, եթե, իհարկե, մինչեւ ձմեռ չբացվի Վրաստանի երկաթուղին, որի հետ ես դեռ թույլ հույսեր եմ կապում: Աբխազիայի հակամարտությունն արդեն չափազանց խորացած ու սրված է, եւ դժվար է գուշակել, թե ինչպես այն կավարտվի: Ի՞նչ կարելի է անել: Մենք պետք է շարունակենք մեր ակտիվ ջանքերը՝ փնտրելու եւ գտնելու հաղորդակցության այլընտրանքային ուղիներ դեպի արտաքին աշխարհ: Նույնիսկ Աբխազիայի հակամարտության կարգավորումից հետո բացառված չեն երկաթգծի նման խափանումները: Այդ պատճառով այլընտրանքային ուղիները մեզ օդի նման անհրաժեշտ են: Մենք չափազանց մեծ ուշադրություն ենք դարձնում Թուր-

հայով եւ Իրանով անցնող ճանապարհներին: Շատ շուտով երեւի մեզ հաջողվի հացի մի մասը ստանալ նաեւ Պարսից ծոցով, Իրանի տարածով: Եթե նույնիսկ ճնարավոր լինի բեռները մեկ ճանապարհով տեղափոխել, այդ դեպքում էլ մենք պետք է աշխատենք դրանք բերել երեք-չորս ճանապարհով, որպեսզի առաքումները երաշխավորված լինեն: Սրանից է կախված, թե որպիսի պատահականությունների հետ կապված կլինի ապագան: Միշտ, եւ՛ հաղթականության մեջ, եւ՛ տմտեսության բնագավառում, այլընտրանքային ճնարավորության առկայությունը չափազանց կարեւոր պայման է:

– Ինչպիսի՞ն է Ռուսաստանի հետ հետագա հարաբերությունների հեռանկարը:

– Ես որեւէ ճիմք չունեմ հայտարարելու, որ Ռուսաստանը Հայաստանի նկատմամբ վարում է անազնիվ հաղթականություն: Ավելին, ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ Ռուսաստանը Հայաստանի նկատմամբ չի վարում նաեւ երկակի հաղթականություն: Մեկ անգամ է թյուրիմացություն ծագել: Դա միակ լուրջ թյուրիմացությունն էր Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ այս մեկ տարվա ընթացքում: Խոսքս վերաբերում է այն ժամանակաճատվածին, որն ընդգրկում է Հայաստանի եւ Ռուսաստանի անկախության շրջանը: Մեր հարաբերությունները բնութագրվել են որպես կայուն, հուսալի, բարեկամական հարաբերություններ: Իսկ հիշյալ լուրջ թյուրիմացությունն ունի իր պատճառները: Խոսքն այս տարվա հունիսին Ռուսաստանի մեղքով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ռազմական հավասարակշռության խախտման մասին է: Այստեղ էլ հատուկ միտում չեմ տեսնում Հայաստանի նկատմամբ: Պարզապես, որոշ անկազմակերպվածության պատճառով, Ռուսաստանն ստիպված էր ենթարկվել Ադրբեջանի ճնշմանը եւ նրան հանձնել չորս դիվիզիաների ռազմական տեխնիկան եւ զինամթերքը: Ռուսաստանը նույն անկազմակերպվածության պատճառով այդ պահին չկարողացավ պահպանել հավասարակշռությունը եւ Հայաստանին նույնպես զոնե նույնման ռազմամթերք ու տեխնիկա հանձնել: Սա ամենացավոտ, ամենամեծ թյուրիմացությունն էր, որ տեղի ունեցավ Հայաստան – Ռուսաստան հարաբերություններում: Դրանից հետո հավասարակշռությունը հիմնականում պահպանվում է: Որոշ ոեֆորմիստներին հաջողվի կայունացնել իշխանությունը Ռուսաստանում, այնման ապահով կլինեն մեր հարաբերությունները Ռուսաստանի հետ:

– Ի՞նչ կարծիքի եք ՀՀ Գերագույն խորհրդի մի խումբ պատգամավորների՝ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներին ուղղված դիմումի մասին:

– Վերջերս հաճախ են բանավեճեր ընթանում մեր խորհրդարանի մի խումբ պատգամավորների՝ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներին ուղղված դիմումի շուրջ: Այս դիմումն իսկապես ինչ-որ հուզմունքներ առաջացնում է, բայց ես ինքներ չեմ տեսնում զգայական վերաբերմունք ունենալու նման փաստաթղթի նկատմամբ: Պետք է պարզապես սառնասրտորեն ընդունել, որ սա էլ մի բաղաքական տեսակետ է, որն այսօր գոյություն ունի մեր հասարակության մեջ: Մեր խորհրդարանում տեսակետների մի հսկա գունապատկեր գոյություն ունի, սկսած ամենածայրահեղ ռազմատենչ տեսակետներից մինչեւ ամենածայրահեղ պացիֆիստական տեսակետը: Այս դիմումն էլ պետք է ընդունել որպես այդ ներկապնակի գույներից մեկը, որն, ըստ երեւույթին, նաեւ անհրաժեշտ է: Քաղաքական տեսակետից ես բավական առողջ եմ համարում այն դրույթը, որ ավելի հեշտ կլիներ հակամարտությունը լուծել երկու կողմերի բանակցությունների միջոցով: Բայց սա՝ որպես ընդհանուր դրույթ: Սակայն այդ դրույթը տեղադրելով ռեալ իրադրության մեջ, տեսնում եմ, որ կոնֆլիկտն այնքան է խորացել, որ այլեւս այդ փուլը, այսինքն՝ երկկողմ բանակցությունների փուլը, արդյունք չի կարող տալ: Սա իմ տեսակետն է: Դիտենք նմանատիպ բոլոր կոնֆլիկտները եւ կհամոզվենք, որ առանց միջնորդների ոչ մի հարց չի լուծվում: Իսրայել-Եգիպտական հարաբերությունները կարգավորվեցին Քեմփ-Դեյվիդում՝ ԱՄՆ-ի միջնորդությամբ, արաբա-իսրայելյան խաղաղ կոնֆերանսն այսօր տեղի է ունենում ՄԱԿ-ի եւ նորից ԱՄՆ-ի միջնորդությամբ: Բոսնիայի եւ Հերցեգովինայի հարցը՝ նույնպես: Բոլոր նմանատիպ հակամարտություններում անպայման անհրաժեշտ է միջազգային հանրության միջնորդությունը: Գուցե հակամարտության սկզբնական փուլում հնարավոր լիներ նման երկկողմ հարաբերությունների միջոցով լուծել հարցը: Բայց հիմա ոչ, չեմ կարծում: Սա է այդ փաստաթղթի իմ գնահատականը:

– Որքանո՞վ է մամուլը նպաստել կամ խոչընդոտել Ձեր վարած քաղաքականությանը:

– Ոո՞վ է մամուլն օգնել իմ վարած հաղաթականության այս մեկ տարում: Մի փոչ դժվար է պատասխանել այս հարցին: Ես աշխատում եմ չկարվել մամուլից, դրանում ինձ օգնում է մամուլի գծով բարձրաստիճան աշխատակիցների հետ ունենալիք իմ հանդիպումները: Երբ ժամանակ է լինում, հետևում եմ մամուլին: Ուսանելի շատ բաներ կ՚ստանամ հանդիպումներում, զայրացուցիչ նյութերի էլ:

Ինձ չեն զայրացնում որակումները, մեղադրանքները, վարկաբեկումները: Դրանք պարզապես խոսում են ելեկտորատների հաղթական կուլտուրայի մասին: Ժամանակի հարց է: Ես կարծում եմ, ազատ մամուլն իրոք ժամանակին կթելադրի իր պահանջները, կբարձրանա նաև հաղթական բանավեճի կուլտուրան, մեր հասարակական պայքարի կուլտուրան: Ինձ զայրացնողը միայն մեկ բան է, փաստերի աղավաղումը: Դժբախտաբար, նման դեպքերի շատ եմ հանդիպում: Երբ պատմական փաստերն են կեղծվում, դա դեռ գուցե հասկանալի է, որովհետև դրանք հեռու ժամանակներին են վերաբերում եւ շատ-շատերին, ըստ երեւույթին, ծանոթ չեն: Բայց երբ այսօրվա փաստերն են կեղծվում, երբ երեկվա ելույթը այսօր ներկայացվում է բոլորովին այլ կերպ, սա արդեն զայրացուցիչ է: Ձգիտեմ, այդ հրապարակագիրը դրանով ինչ է շահում: Ոչինչ: Դրանք անմիջապես հերքվում են: Նրանց հույսն արդյո՞ք ժողովրդի կարճ հիշողությունն է:

Ես կարդում եմ, հետեւում եմ մամուլին, դա ինձ առնվազն օգնում է չի խանգարում: Եթե անգամ համաձայն չեմ ինչ-որ տեսակետների, ինչ-որ ինձադատողությունների հետ, մեկ է՝ դրանք ինձ օգնում են զգալու մեր հասարակական-քաղաքական մտի չիղը: Դա չափազանց անհրաժեշտ է ճիշտ կողմնորոշվելու եւ ճիշտ շեշտադրումներ կատարելու համար:

– Ավարտվա՞ծ է, արդյոք, պետական կառույցների շինարարությունը:

– Ես չեմ համաձայն, որ մեր կառավարության կառուցվածքը վերջնական է, մանավանդ՝ տնտեսական բարեփոխումներին զուգընթաց, մի շարք նախարարություններ պարզապես կարող են վերանալ: Օրինակ, եթե առեւտուրը սեփականաշնորհվի, ըստ երեւույթին այդ նախարարությունը կվերանա, նույնը եւ թերեւ արդյունաբերությանն է վերաբերում:

Օպերատիվ խնդիրների կողմին, ըստ երեւույթին, պետք է լիներ խոսակցես մի ինչ-որ գերատեսչություն, որն զբաղվեր հեռանկարային հարցերով, տնտեսական բարեփոխումների, ֆինանսավարկային համակարգի վերափոխման գործով եւ այլն: Այն կա: Այդ գործով զբաղվում է Էկոնոմիկայի նախարարությունը, նախարար Բագրատյանը, որը միաժամանակ նաեւ փոխվարչապետն է: Ամբողջ կառույցի էությունն այն է, որ փոխվարչապետ – Էկոնոմիկայի նախարարը հիմնականում զբաղված է ավելի հեռանկարային խնդիրներով, բայց օպերատիվ խնդիրների ծանրությունը ե՛ւ նրան, ե՛ւ նրա նախարարությանը ստիպում է շատ հաճախ ներհաչվել այդ խնդիրների լուծման գործում: Դրա համար, օգնության կարգով, նաեւ կառույցների ամրապնդման տեսակետից, չափազանց կարեւոր է ստեղծել Հանրապետության Նախագահին կից սոցիալ-տնտեսական խորհուրդ, որը կօգնի կամ կհամագործակցի Էկոնոմիկայի նախարարության հետ այս ռեֆորմների իրականացման հարցում: Այդ խորհուրդը, հուսախություն ձեզ, պետք է ասեմ, որ արդեն ստեղծվում է: Խորհրդի կազմն արդեն պատրաստ է, եւ շատ շուտով այն հրամանագրի ձեւով կհրապարակվի: Խորհրդում ընդգրկված են Հայաստանի, Սփյուռքի, նաեւ օտար մասնագետներ: Մենք նույնիսկ համապատասխան ֆինանսավորում կարող ենք ստանալ միջազգային վալյուտային կազմակերպությունների կողմից:

Ինչ վերաբերում է բուն հարցին, ասեմ հետեւյալը. պետական կառույցների շինարարության ավարտը Սահմանադրության ընդունումն է: Միայն Սահմանադրությամբ է հնարավոր վերջնականապես կարգավորել այդ հարցերը: Միայն Սահմանադրության ընդունումից հետո դրանք վերջապես կազատվեն հաղթական շահարկումների առարկա ծառայելու ոչ բարի դերից: Այսօր, Սահմանադրության բացակայության պատճառով, այն բնական պայքարը, որ կա օրենսդիր եւ գործադիր իշխանությունների միջեւ, վերածվում է միմյանցից լրացուցիչ լիազորություններ կորզելու պայքարի: Օրենքներն ընդունում է խորհրդարանը: Օրենքները ժողովրդի կողմից չեն ընդունված: Ես այն կարծիքին եմ, որ Սահմանադրությունն այն հիմնական փաստաթուղթն է, որը պետք է ընդունվի համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Այն կարող է դառնալ ցանկացած պետության հաղթական կայունության հիմք: Սահմանադրությունն անհրաժեշտ է, որպեսզի որեւէ կուսակցություն,

խորհրդարան կամ Նախագահ այլեւս չհավակնի ինչ-ինչ լրացուցիչ լիազորություններ կորզելու օրենսդիր իշխանությունից, կամ՝ հակառակը: Սահմանադրությունն ընդունում է ժողովուրդը, եւ ցանկացած փոփոխություն կարող է տեղի ունենալ միայն ու միայն ժողովրդական հանրաքվեի միջոցով: Սա է, որ վերջնականապես պետք է ե՛ւ ապահովի պետական կառույցների անկախությունը միմյանցից, ե՛ւ թուլացնի քաղաքական պայքարը: Սա չափազանց կարեւոր հանգամանք է: Ես ձեզ պետք է տեղեկացնեմ, որ Սահմանադրության պատրաստումն ընթացքի մեջ է: Տեղի է ունեցել Սահմանադրական հանձնաժողովի երկու նիստ: Այժմ հավաքվում են առաջարկությունները՝ Սահմանադրական հանձնաժողովի անդամների ներկայացրած նախագծի վերաբերյալ: Այդ առաջարկությունների ամփոփումից հետո, կարծում եմ, Սահմանադրական հանձնաժողովը պետք է տա իր վերջնական կարծիքը՝ այո՛ կամ ո՛չ նշված նախագծին: Այս ամենից հետո նախագիծը միանգամից պետք է ներկայացվի թե՛ խորհրդարանին՝ քննարկման համար, թե՛ հասարակությանը՝ համաժողովրդական քննարկման: Սահմանադրության նախագծում նախատեսված է նաեւ Սահմանադրության ընդունման եղանակը, որը ժողովրդական հանրաքվեն է:

– Ձեր ընտանիքն ու հարազատները Ձեր քաղաքական կուրսի եւ գաղափարների համակիրնե՞րն են, եւ որքանո՞վ են օգնում Ձեր դժվարին գործում:

– Որքանո՞վ են իմ ընտանիքը, իմ հարազատները օգնում ինձ իմ աշխատանքում, ընդունո՞ւմ են արդյոք իմ գաղափարները:

Ես, դժբախտաբար, շատ քիչ եմ հանդիպում ծնողներիս, որոնք մենակ են եւ ապրում են առանձին: Ուղղակի ժամանակ եւ հնարավորություն չի լինում, հանդիպում եմ ամիսը մեկ անգամ: Ինձ համար ամենամեծ բավարարություն է զրուցել հորս՝ այդ չափազանց մեծ կենսափորձ ունեցող մարդու հետ: Ընտանիքում մեծագույն երջանկություն է որդուս հետ մի փոքր, այսպես ասած, «զզվռտվելը»: Նա արդեն 17 տարեկան տղամարդ է, բայց այնքան է լրջացել, որ նույնիսկ այդ հաճույքն ինձ քիչ է պարգեւում: Քույրս, եղբայրներս, իհարկե, այցելում են ինձ: Նրանք ավելի ցավոտ են վերաբերվում ե՛ւ մամուլի ելույթներին, ե՛ւ առկա դժգոհություններին, քան ես: Նրանք ավելի շատ են շփվում մարդկանց հետ, հարեւանների հետ, բնականաբար, շատ ավելի հիվանդագին են վերաբերվում այս հարցերին: Շատ գոհ եմ, որ որդիս այդպիսին չէ: Նա նույնիսկ ավելի վերեւից է նայում այդ հարցերին, քան՝ ես:

Ինձ համար մեծագույն հաճույք է, երբ այդպիսի հնարավորություն ինձ տրվում է, ընթերցելը: Ընթերցանությունն ինձ համար ամենակարեւոր զբաղմունքն է եղել, եւ ես, այս չափազանց զբաղվածության պայմաններում կլ, աշխատում եմ չկտրվել թե՛ գեղեցիկ գրականությունից, թե՛ մամուլից, թե՛ հրապարակախոսությունից: Մի ժամանակ ես շատ հետեւողականորեն ուսումնասիրում էի ռուսական եւ մերձբալթյան դեմոկրատական մամուլը: Դժբախտաբար, դրանք հիմա քիչ հասանելի են: Ուշացումով ստացված նյութերն այլեւս կորցրած են լինում իրենց թարմությունը: Այն զգացողությունը, որ ես առաջ ունեի Ռուսաստանի իրադարձությունների, զարգացումների մասին, հիմա չունեմ: Գուցե դա նրանից է նաեւ, որ իրադրությունը շատ ավելի բարդ է, քան մեկ տարի առաջ: Այս հարցում ինձ օգնում են անալիտիկները, ժամանակ առ ժամանակ ծանոթանում եմ նրանց վերլուծություններին, չնայած ինձ համար ավելի նախընտրելի կլիներ անձամբ զբաղվել այդ հարցով:

– Կա՞ն արդյոք տարաձայնություններ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունների միջեւ:

– Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի իշխանությունների միջեւ տարաձայնություններ չկան: Եղել է միայն մի դեպք, մի տարաձայնություն, որը վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի մասնակցությանը Հռոմի կոնֆերանսին: Այդ տարաձայնությունն արդեն հարթված է, եւ այսօր երկու իշխանությունների միջեւ որեւէ տարաձայնություն չկա: Ժամանակ առ ժամանակ ԼՂՀ-ի Գերագույն խորհրդի նախագահության եւ Հայաստանի իշխանությունների միջեւ տեղի են ունենում քաղաքական կոնսուլտացիաներ, իսկ գործադիր իշխանությունների միջեւ կապերը մշտական են:

Այժմ՝ ռազմական իրավիճակի մասին: Մայիս-հունիսյան բուռն իրադարձություններից՝ տեղատվություններից եւ մակընթացություններից հետո, իրավիճակը համեմատաբար կայուն է ե՛ւ Լեռնային Ղարաբաղում, ե՛ւ մեր սահմաններում: Տեղի են ունենում տեղական բնույթի գործողություններ, փոխհրաձգություններ, առաջխաղացումներ եւ նա-

ընթացներ: Մասնավորապես մի փոքր ավելի հեղհեղուկ է վիճակը Մարտակերտի շրջանում, ուր առաջխաղացումներն ու եռընթացները շատ հաճախ են տեղի ունենում: Կայուն է Լաչինի միջանցքի վիճակը, թեև ժամանակ առ ժամանակ այստեղ ենշման ուռչակի մեծացում է զգացվում: Մեր սահմանների վրա լուրջ փոփոխություններ չկան, բայց, ցավոք, պիտի նշեմ, որ նույնիսկ այս ինչ թե շատ կայուն թվացող իրավիճակում ունենում ենք զոհեր եւ ավերածություններ:

Ընդհանուր առմամբ, այնպիսի տպավորություն է, որ կարծեմ թե ստեղծվել է ուժերի հավասարակշռություն: Այն խնդիրները, որ կան մեր ազատամարտիկների առջեւ, մտահոգում են նաեւ ադրբեջանական բանակին: Նրանց մոտ էլ են լրջորեն դրված դասալքության, զինակոչի ապահովման խնդիրները, փչացած տեխնիկայի վերանորոգման հարցը (թերեւս նրանց կորուստները շատ ավելի մեծ են): Ստեղծված այս հավասարակշռությունը գուցե լավ հիմ է զինադադարի պատրաստակամություն հայտնելու համար:

«Հայաստանի Հանրապետություն», 14 նոյեմբերի, 1992 թ.:
Հրատարակված՝ «Մեր ամենակարեւոր ձեռքբերումը Հայաստանի ներքին կայունությունն է» վերնագրով:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

(16 դեկտեմբերի, 1992 թ.)

Մեծարգո պարոն նախագահ,

Մեծարգո պատգամավորներ,

Նկատի ունենալով, որ Հայաստանի արտաքին եւ ներքին հաղթականության խնդիրները բազմիցս դարձել են լուրջ բննարկման առարկա, բոլոր ամբիոններում արծարծվել ու հստակորեն ներկայացվել են իշխանության տարբեր մարմինների ու հասարակական-հաղթական կազմակերպությունների մոտեցումներն ու տեսակետները, որոնց այսօր դժվար թե հնարավոր է նոր բան ավելացնել՝ սույն հաղորդման մեջ հարկ եմ համարում ամբողջությամբ կենտրոնանալ հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատականի եւ տնտեսության կայունացման ու զարգացման ուղղվածվող միտումների վրա:

Համակարգային ու աշխարհաքաղաքական արմատական շրջադարձերը, նոր իրավիճակում կառավարման համակարգերի արագ վերափոխման ու ճկուն աշխատանքի ապահովման դժվարությունները, տարիներ շարունակ կուտակված խնդիրների անհետաձգելի լուծման պահանջները հանրապետությունում համընդգրկուն բնույթ են հաղորդել եղնաժամային երեւույթներին:

Հանրապետության ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրվում է արտադրության ֆիզիկական ծավալների կտրուկ անկումով, էներգետիկ ռեսուրսների ծայրահեղ անբավարարությամբ, վերարտադրության պրոցեսը կազմալուծելու դատապարտող ինվեստիցիոն

հաղցով, հումքի եւ պատրաստի արտադրանքների շուկայի զգալի կոտրատով, բայթայված ֆինանսական տնտեսությամբ, արտադրության կառուցվածքային վերափոխման անբավարար տեմպերով, աղետի գոտու եւ փախստականների խնդրի սուրյամբ, սահմանամերձ շրջաններում ստեղծված ծանր կացությամբ, ժողովրդական լայն զանգվածների սոցիալական անպաշտպանվածությամբ, գիտատեխնիկական պոտենցիալի կազմալուծման միտումներով, իշխանության ու կառավարման մարմինների դեռեւս անբավարար կառուցվածքային ներդաշնակությամբ, կառավարման համակարգում գոյություն ունեցող օբեկտրական մեծաքիվ հակասություններով, նոր տնտեսական հարաբերությունների ծավալման համար անհրաժեշտ իրավական դաշտի բացակայությամբ:

Տնտեսական համակարգի կայունացման վրա հսկայական բացասական ազդեցություն են ունենում ոչ միայն շրջափակումը, հանրապետությանը պատկանող բեռների ուղղակի կողոպուտն ու թալանը հարեւան հանրապետություններում, էներգետիկայում ստեղծված աղետալի իրավիճակը, այլեւ, մասնավորապես նաեւ դրանցով պայմանավորված, վճարման հաշվեկշռի եւ բյուջեի հսկայական դեֆիցիտը, վճարունակ պահանջարկի եզնաժամը, ինվեստիցիոն սովը, սպառողական միտումների ուժեղացումն ու վերարտադրական շղթայի խաթարման իրական վտանգը:

Իրավիճակի համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե անգամ ամբողջությամբ բացառենք արտաքին բաղաքական գործոնի եւ դրանով պայմանավորված շրջափակումների ազդեցությունը, ապա միայն համակարգային փոփոխությունների՝ նախկին Միության բաղաքական-տնտեսական կառույցների փլուզման հետեւանքով հանրապետություններում անխուսափելի տնտեսական անկումը 1992 թվականին պիտի կազմեր 11–31 տոկոս: Դրա անառարկելի վկայությունն է մասնավորապես այն փաստը, որ նախորդ իննը ամիսների արդյունքներով Ռուսաստանում տնտեսական անկումը կազմել է 17,6, իսկ Ղազախստանում, Թուրքմենստանում եւ Մոլդովայում 23–28 տոկոս: Բնականաբար, տարբեր հանրապետություններում իրավիճակի բարդության աստիճանը պայմանավորված է նաեւ մի շարք այլ գործոններով, որոնց թվում հատկապես կարեւորվում են արտադրության ներքին կոոպերացիայի աստիճանը, սեփական հումքային ռեսուրսներով ապահովվածությունը, մասնագիտացված ճյուղերի մոնոպոլ դերը նախկին ԽՍՀՄ շուկայում, վերամշակող եւ արդյունահանող արդյունաբերության հարաբերակցությունը, կոնվերսիայի ենթակա արդյունաբերության բաժինը արտադրության ընդհանուր ծավալում, սենդամթերքի ներմուծմամբ պահանջը սեփական ռեսուրսներով բավարարելու մակարդակը, անցյալից կուտակված տնտեսական խնդիրների սրվածության աստիճանը, տնտեսական համակարգում գոյություն ունեցող անհամամասնությունները եւ այլն:

Հայաստանի Հանրապետության համար այս գործոններից շատերը տնտեսության անկման լուրջ ազդակ հանդիսացան: Տնտեսության անկումը գերազանցեց 50 տոկոսի սահմանագիծը՝ արդյունաբերության գծով 9 ամսում կազմելով 50,8 տոկոս:

Սա այն պրոցեսների կտրուկ սրումն էր տնտեսության մեջ, որոնք սկիզբ էին առել դեռեւս երկրաշարժից առաջ, 1980-ական թվականների երկրորդ կեսին: Սկսած 1986 թվականից՝ արդյունաբերական արտադրության բնագավառում միջին տարեկան անկումն արդեն կազմում էր 0,1 տոկոս: 1987 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ազգային եկամուտը նվազել էր 0,6, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով՝ 2 տոկոսային կետով: Էապես հասունացել էր տնտեսության կառուցվածքային վերափոխումների, հաստոցային պարկի նորացման, կոնվերսիայի խելամիտ իրականացման, տնտեսական հարաբերությունների արմատական վերափոխման խնդիրը:

Այս հարցերը Հայաստանի համար չափազանց կարեւոր նշանակություն ունեին, քանի որ նախ՝ հանրապետության արդյունաբերության համար անհրաժեշտ հումքանյութական ռեսուրսների պահանջի 85–90 տոկոսը եւ սպառողական պահանջարկի 2/3-ը ապահովվում են ներմուծման հաշվին, եւ երկրորդ՝ իոացիոնալ տնտեսական կառուցվածքի պատճառով թողարկվող արտադրանքի մեջ վերջնական արտադրանքի բաժինը կազմում է ընդամենը 20–25 տոկոս: Բնականաբար, այս երեւույթները ցցուն ձեւով բացահայտվեցին եւ ամբողջ թափով իրենց զգացնել տվին անկախ տնտեսական համակարգի անցնելու պարագաներում:

Վիճակագրության պետական վարչության եւ անկախ փորձագետների հաշվարկներով՝ հանրապետությունում արդյունաբերական ար-

տադրության ծավալների կրճատումը (50,8 տոկոս) առաջին հերթին պայմանավորված է շրջափակման գործոնով, որին 50,8 տոկոսից բաժին է ընկնում 26-ը՝ կամ ընդհանուր անկման մոտ 50 տոկոսը: Նախկին տնտեսական համակարգի փլուզման եւ վերոհիշյալ գործոնների ազդեցությանը բաժին է ընկնում 14,2 կամ ընդհանուր անկման մոտ 28 տոկոսը:

Գործնական տնտեսական հաղորդակցության գերագույն խնդիրը բնականաբար պետք է լիներ այս գործոններին հակազդող մեխանիզմների մշակումը: Պարզ է, իհարկե, որ դա մեկ ամսվա կամ մեկ տարվա խնդիր չէ: Սակայն պարզ է նաեւ, որ բոլոր դեպքերում անհրաժեշտ էր որոնել հակազդման արդյունավետ լծակներ:

Այդ առումով հարկադրված ենք արձանագրել, որ ընթացիկ տարում չհաջողվեց իրականացնել շուկայական տնտեսական հարաբերությունների ծավալման ինստիտուցիոնալ լուրջ վերափոխումներ: Իսկ ահա տարբեր պատճառներով տնտեսական բարեփոխումների սառեցման տարբերակի որդեգրումը պետք է համարել ուղղակի անթույլատրելի ու չափազանց վտանգավոր:

Ընդհանուր համակարգի հարկադրական իներցիայի հետեւանք էր նաեւ այն, որ դեռեւս տնտեսական բարեփոխումների իմիջիայն բավարար դաշտ չստեղծած՝ մենք ստիպված էինք անցնել ազատ գների գրեթե նույն հաղորդակցությանն, ինչ Ռուսաստանում: Այս քայլը թեեւ սկզբունքային եւ վճռորոշ խթան է շուկայական տնտեսական հարաբերությունների ծավալման համար, սակայն ժամանակն ու հանգամանքները հնարավորություն չտվին ամբողջությամբ հաշվի առնել ու իրացնել մեր առանձնահատուկ պայմանները: Բացի այդ, կառավարությունն էական բացթողումներ ունեցավ բյուջետային ու վարկային հաղորդակցության, բանկային համակարգի գործունեության կազմակերպման, արտադրության սկզբնական օղակներում կառավարման օրենսդրական նոր համակարգի ներդրման, բնակչության սոցիալական պաշտպանվածության առավել հուսալի համակարգերի ստեղծման, պետական սեկտորի գործունեության հստակ կազմակերպման հարցերում: Թերեւս չհաջողվեց լավագույնս օգտվել փլուզվող համակարգի մեզ համար առավել շահեկան հնարավորություններից:

Ազատ գների հաղորդակցության իրականացումը, լինելով կարեւոր պայման նոր տնտեսական հարաբերությունների ստեղծման համար, այնուհանդերձ ծնել է նաեւ մի շարք լուրջ խնդիրներ, որոնք խելամիտ կարգավորման անհրաժեշտություն ունեն:

Գլխավոր հարցը բնակչության սոցիալական վիճակի անխափան վատթարացումն է: Ապահովների գների ու ծառայությունների սակագների ամփոփ ինդեքսի աճը տարվա հաշվարկով կազմում է մոտ 10, իսկ միջին աշխատավարձինը՝ 4 անգամ: Ընդհանուր կենսամակարդակի անկումը զուգընթաց ոչ ցանկալի ու վտանգավոր երանգավորում է ստանում սոցիալական շերտավորումը, որի հետեւանքով իրավիճակի ընդհանուր ծանրությունը ոչ թե հավասարաչափ ընկնում է ամբողջ ազգաբնակչության, այլ առավել անապահով խավերի վրա:

Ուստի հրատապ անհրաժեշտություն է դառնում կանխել բնակչության վճարունակ պահանջարկի կտրուկ անկումը, հաշվեկշռել գների ու դրամական եկամուտների աճը: Հատկապես ծանր է թոշակառուների, երեխաների, հաշմանդամների, ուսանողների, բազմազավակ ընտանիքների, գործազուրկների, առողջապահության, մշակույթի, կրթության ու գիտության ոլորտի աշխատողների վիճակը, որի թեթեւացումը գոնե տեսանելի ապագայում կապված է աշխատավարձերի ինդեքսավորման խիստ տարբերակված հաղորդակցության իրականացման հետ:

1992 թվականին 4 փուլով կատարվել է նվազագույն աշխատավարձի ինդեքսավորում՝ ապահովելով 4,3 անգամ աճ: Երեխաներին տրվող բազմազան նպաստների եւ փոխհատուցման գումարների համակարգից անցում կատարվեց նպաստների վճարման միասնական համակարգի՝ լրացուցիչ արտոնություններ սահմանելով 3 եւ ավելի երեխա ունեցող ընտանիքների, որը երեխաների համար: Վերացվեց նվազագույն աշխատավարձի եւ կենսաթոշակների միջեւ եղած տարբերությունը՝ նվազագույն կենսաթոշակների չափը 5 անգամ ավելացնելու հաշվին:

Ընդհանուր մոտեցումը եղել է սոցիալապես առավել անապահով խավերի համար գոնե նվազագույն կենսամինիմումի ապահովումը: Սակայն այստեղ նույնպես լուծումները դեռեւս գոհացուցիչ չեն, եւ պետք է ձեռնարկել ավելի հստակ եւ գործուն միջոցառումներ: Նախատեսվում է նաեւ ամբողջ հանրապետության մասշտաբով հստակ կա-

նոնակարգել հումանիտար օգնության գործը, բացառելով որեւէ օրինախախտում ու չարաշահում:

Հաջորդ կենեոտ խնդիրը հանգում է նրան, որ ազատ գների պայմաններում ձեռնարկությունները կարուկ թուլացրել են ինվեստիցիոն ակտիվությունը: Ստեղծվել է մի վիճակ, երբ ինվեստիցիոն բաղցը ոչ միայն խափանում է անհրաժեշտ կառուցվածքային վերափոխումների իրականացումը, այլեւ արագորեն հանգեցնում արտադրողական ուժերի հյուծման:

Հայաստանում այսօր վերարտադրական պոտենցիալը չի բավարարում նույնիսկ պարզ վերարտադրության ապահովմանը: Ազգային եկամտի մոտ 90 տոկոսը հատկացվում է սպառման կարիքների բավարարմանը: Ամորտիզացիոն հատկացումները գործնականում զրկվել են տնտեսագիտական իմաստից, հանի որ չի կատարվել հիմնական ֆոնդերի վերագնահատում: Ամորտիզացիոն հատկացումները դեռեւս կատարվում են նախկին գներով, այն դեպքում, երբ արտադրատեխնիկական նշանակության արտադրության միջոցների գներն աճել են ավելի քան 40 անգամ:

Վերարտադրության ցիկլի ապահովման առումով այսօր Հայաստանում պահանջվում է հիմնական ֆոնդերի նորացման նախկինից ավելի բարձր աստիճան, հանի որ դրանց գերակշիռ մասն արդեն մաշված է թե՛ բարոյապես եւ թե՛ ֆիզիկապես: Սակայն իրականում արդյունաբերա-արտադրական հիմնական ֆոնդերի նորացման գործակիցը, որ 1986 թվականի 9,7 տոկոսից 1991 թ. արդեն հասել էր 3,2 տոկոսի, այսօր հավասարվել է զրոյի:

Եխատ նվազել են նաեւ պետության ինվեստիցիոն ճնարավորությունները ու կառուցվածքային վերափոխումների պոտենցիալը: Նման պարագաներում ոչ միայն արտաքին ներդրումների ներգրավման արդյունավետ նախադրյալներ պետք է ստեղծվեն, այլեւ պետության կողմից ամենաակտիվ ձեւով պետք է խթանվեն ապակենտրոնացված ինվեստիցիաները եւ շրջանառության ոլորտից կապիտալի ու ձեռներեցության փոխադրումը արտադրության ոլորտ: Ցավոք, այդ բարդ ու տեւական խնդիրը անգամ մասամբ չի հաջողվել իրականացնել:

Որպես այդ խնդրի մասնակի լուծման տարբերակ է դիտվել Հանրապետության Նախագահի հրամանագրով անավարտ արտադրական

շինարարության օբյեկտների հիման վրա խառը սեփականության ձեռնարկությունների ստեղծումը: Սակայն, գործնական աշխատանքների անբավարար կազմակերպման հետեւանքով, ակնկալվող արդյունք դեռեւս չի ստացվել:

Ցանկանում եմ ձեր ուշադրությունը հրավիրել նաեւ տնտեսական ռեֆորմի իրականացման մի շարք բացթողումների ու թերությունների վրա:

Ակնհայտ իրողություն է, որ շուկայական հարաբերությունները կարող են ծավալվել ու կարգավորիչ դեր ստանձնել միայն այն ժամանակ, երբ նոր հարաբերությունների դրսեւորման համար ստեղծվել են անհրաժեշտ նախադրյալներ: Սակայն, ցավոք, առայժմ ավելի շատ խոսվել է շուկայի դերի, քան գործնականում համապատասխան նախադրյալների ստեղծման մասին: Իրականում այսօր տնտեսության բնագավառում վարչական թելադրանքը փոխարինվում է մոնոպոլ կամ նույնիսկ՝ մաֆիական թելադրանքով:

Միջոցեր պետության դերն ու գլխավոր խնդիրը պետք է կայանա կառավարելի հունով վարել անցումը մեկ համակարգից մյուսին: Խոսքն այն մասին է, որ պետք է ստեղծել ոչ թե կառավարվող շուկա, այլ անցումը շուկային պետք է պետության կողմից կառավարելի լինի, առավել եւս մեր իրավիճակում, երբ զուգահեռաբար պահանջվում է լուծել եզգնաժամային կառավարման բազմաբնույթ խնդիրներ:

Տարվա ընթացքում չհաջողվեց տնտեսական վերափոխումների տեմպերը հասցնել արտադրության միջին ու ստորին օղակներին, ձեւավորել արտադրության միջոցների շատ թե ինչ գործուն ներհանրապետական շուկա, ստեղծված իրավիճակին ներդաշնակ վերափոխել բանկային համակարգը: Բնական է՝ տնտեսության 40–45 տոկոսով աշխատելու պայմաններում առաջացան լրացուցիչ դժվարություններ, նոր երեւույթներն ամբողջական դրսեւորումներ չգտան, սակայն իրենց լուրջ զգացել տվեցին նաեւ համակարգված մոտեցման բացակայությունն ու դանդաղկոտությունը:

Այնուամենայնիվ, անցած ամիսների ընթացքում, մնծագույն դժվարությունների հաղթահարման գնով, հաջողվեց իրականացնել որոշ տնտեսական տեղաշարժեր: Որոնք էլ դեպքերն ու իրադարձությունները կտրուկ փոփոխություններ էին կրում, որոնք էլ արտաքին գործոնները մեզ դնում էին նորանոր ելքեր փնտրելու անհրաժեշտության առջեւ, որոնք էլ

պատերազմական իրավիճակը թելադրում էր կենսագործունեության իր կանոններն ու մոտեցումները, այնուամենայնիվ, հաճոպատությունում իրավիճակի կառավարելիությունը որևէ կերպ չխաթարվեց, որ պետք է համարել մեր պետականության ամենակարևոր նվաճումը:

Տնտեսական շրջափակման հետևանքների մեղմացման, ինչպես նաև միակողմանի կախվածությունից խուսափելու առումով կարևոր դեր խաղացին Մեղրիի նավակամրջի, Ախուրյանի կայարանի եւ Հյուսիսային Կովկաս – Անդրկովկաս նոր գազատարի գործարկումը:

Մեկ տարվա ընթացքում ձևավորվեցին նոր բնույթի տնտեսական կապեր ու փոխհարաբերություններ շուրջ երկու տասնյակ երկրների ու տասից ավելի միջազգային կազմակերպությունների հետ: Առատասհմանյան երկրների հետ Հայաստանն արդեն կնքել է շուրջ 140 պայմանագրեր, համաձայնագրեր, արձանագրություններ ու համատեղ հայտարարություններ, որոնցից 8-ը միջպետական հարաբերությունների հիմնական սկզբունքների, 54-ը՝ դիվանագիտական եւ հյուպատոսական կապերի հաստատման, 36-ը՝ առևտրատնտեսական համագործակցության, 8-ը՝ գիտատեխնիկական եւ մշակութային համագործակցության, 15-ը՝ արտգործնախարարությունների միջեւ համագործակցության եւ կոնսուլտացիաներ անցկացնելու, 4-ը՝ ռազմական բնագավառի, 3-ը՝ տրանսպորտի եւ 14-ը՝ զանազան այլ հարցերի վերաբերյալ: Սրանից բացի՝ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում Հայաստանը կնքել է հաղաքականության ու տնտեսության համարյա բոլոր ոլորտներն ընդգրկող ևս 161 համաձայնագիր:

Հայաստանում ձևավորվեցին տնտեսության կառավարման ու վերահսկման նոր, անկախ պետականության կարգավիճակին բնորոշ համակարգեր, ամբողջ տնտեսական համակարգը ներառնվեց հանրապետական կառավարման ոլորտ:

Չնայած դանդաղ, սակայն սկիզբ դրվեց ներհին ռեսուրսների հավաքիր օգտագործմանը եւ կառուցվածքային վերափոխումների որակապես նոր հաղաքականությանը: Հայաստանն ստացավ իր ձուլածո ոսկու առաջին կիլոգրամները, ավարտվեց «Մետաղագործություն» ծրագրի մշակումը, որի առանձին մասեր արդեն իրագործման ընթացքի մեջ են: Մասնավորապես նախատեսվում է եկող տարի պղնձաձուլումաբերական արտադրամի թողարկող ձեռնարկությունները փոխադրել տե-

դական հումքի: 1993 թվականին նախատեսվում են Ագարակի մոլիբդենի խտանյութի վերամշակման գործարանի առաջին հերթի նախագծումը եւ կառուցումը, Կապանի լեռնահումքային կոմբինատի բազմամետաղ հանքավարի հանման ու հարստացման օբյեկտների կառուցումը, Շամլուղի եւ Ախթալայի հանքերի վերակառուցումն ու շահագործումը, ոսկու կրկնազտման ֆաբրիկայի շինարարությունը եւ այլն:

Լրջորեն բարձրացել է տնտեսության մեջ ներհին կոոպերացիայի եւ փակ ռեժիմում կենսագործունեության հնարավոր պահպանման ապահովումը: Պատահական չէ, որ երկարգծով բեռնափոխադրումների ծավալի ընդամենը 18–20 տոկոսով ապահովման պայմաններում տնտեսությունն ավելի քան 50 տոկոսով կարողացավ աշխատել:

Շատ արտադրատեսակների գծով ներհին կոոպերացիայի աստիճանը հասել է 50 եւ ավելի տոկոսի՝ աճելով տասնյակ անգամներ: Մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ ու միավորումներ, ինչպիսիք են «Էլեկտրոնը», «Նեյրոնը», «Ավիահամալիրը», «Թելեն», «Հրազդան-մեհենան», «Հայէլեկտրամեհենան», «Հայէլեկտրաշարժիչը եւ այլն, կարողացել են կարճ ժամանակամիջոցում յուրացնել նոր արտադրատեսակների արտադրություն ու գտնել նոր շուկաներ:

Թեթեւ արդյունաբերության բնագավառում արդեն միտումներ կան հյուղը ամբողջականացնելու եւ ներհին ամուր կապերով օժտված հավասարակշռ դարձնելու ուղղությամբ:

Հաճոպատությունում ավարտին են մոտենում հողային բարեփոխումները: Տնտեսավարման ձևի ընտրության կամավորության սկզբունքներից ելնելով՝ կազմավորվել են 236,3 հազ. գյուղացիական եւ 6,7 հազ. գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Սեփականաշնորհման իրավունքից օգտվել են ավելի քան 340 հազ. ծխեր:

Հողային բարեփոխումների իրականացման հետ կապված խնդիրները հիմնականում լուծվել են հաջողությամբ, որի դրական ազդեցությունն ու արդյունքները զգացվում են գյուղատնտեսական արտադրության վրա: Ներկայիս ռեսուրսային սուղ պայմաններում, երբ բենզինի եւ դիզելային վառելանյութի ապահովվածությունը կազմել է հաշվարկային պահանջարկի համապատասխանաբար՝ 10 եւ 42 տոկոսը, գյուղատնտեսական մի շարք մթերքների արտադրության գծով գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները նախկինից ավելի

բարձր արդյունքների են հասել: Առկա վարելահողերից 400 հազ. հա դրվել է բերքի տակ: Ըստ նախնական տվյալների, ընթացիկ տարում գրեթե բոլոր հիմնական բուսաբուծական մթերքների արտադրության սպասվելիք ծավալները (բացառությամբ պտղի ու ծխախոտի) կգերազանցեն նախորդ տարվա մակարդակը: Այսպես, հանրապետությունում արտադրվել է շուրջ 320 հազ. տոննա հացահատիկ կամ, 1991 թ. համեմատությամբ 5,3 տոկոսով ավելի, կարտոֆիլը՝ 330 հազար տոննա, կամ 16,4 տոկոս ավելի, բանջարեղենը՝ 558 հազար տոննա, կամ 25,7 տոկոս ավելի եւ այլն:

Գյուղատնտեսական մթերքների 70–80 տոկոսն արտադրվել է գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում, որը ճոպի սեփականաշնորհման կենսունակության բացահայտ դրսեւորում է: Բացառիկ ծանր պայմաններում հաջողվել է մթերել ավելի քան 60 հազ. տոննա հացահատիկ, աշնանացան է կատարվել 96,5 հազ. հա վրա, որը շուրջ 11 հազ. հա ավելի է նախորդ տարվա արդյունքներից:

Սակայն ծանր կացություն է ստեղծվել անասնապահության ոլորտում: Անասնակերերի կենտրոնացված մատակարարման համակարգի վերացումը եւ խտացրած կերերի ներմուծման բարդությունները, ինչպես նաեւ սեփականաշնորհման գործում տեղ գտած լուրջ թերությունները պատճառ դարձան անասնագլխաքանակի զգալի կրճատման: Այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են թռչնաբուծությունը եւ համալիրային խոզաբուծությունը, հայտնվել են վերացման եզրին:

Գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում արտադրված մթերքների (բացառությամբ հացահատիկի, խաղողի, բրդի) չնչին մասն է վաճառվել պետությանը: Ակնհայտ են մթերող եւ վերամշակող կազմակերպությունների աշխատանքներում տեղ գտած թերությունները, չի կիրառվում նախնական պայմանագիր-կոնտրակտացիաների կնքման ու անմիջապես արտադրության վայրերում գնումների իրականացման պրակտիկան, անկատար է վճարումների մեխանիզմը, արդյունավետ չեն օգտագործվում նպատակային վարկերը:

Անշափ կարեւորվում է մասնավոր սեփականության վրա հիմնված գյուղացիական տնտեսությունների եւ վերամշակող–սպասարկող օղակների միջեւ ծագած հակասությունների հաղթահարումը, անցումը որակապես նոր տնտեսական հարաբերությունների եւ, մանավանդ,

գյուղատնտեսությանն սպասարկող ոչ պետական կառույցների արագ կազմավորումը:

Անցած ժամանակահատվածում մշակվեցին հանրապետության տնտեսության կայունացմանն ու հետագա զարգացմանը նպաստող մի շարք տեխնիկական ծրագրեր, որոնց իրականացման նպատակով Եւրոհամայնքի կողմից արդեն իսկ հատկացվել է մոտ 12 միլիոն էյրո:

Ընթացիկ տարում տեխնիկական օգնության ծրագիր է կազմվել նաեւ Համաշխարհային բանկի կողմից՝ կառուցվածքային վերափոխումների եւ կառավարման էապես նոր համակարգի ձեւավորման համար: Գումարը կազմում է ավելի քան 14 մլն էյրո, եւ ըստ ծրագրի երեք հիմնական ուղղվածություն պետք է ունենա՝ պետական սեկտորի կառավարում, ֆինանսական համակարգի բարեփոխում, սեփականաշնորհման խթանում:

1992 թ. Հայաստանին ցույց տրված տեխնիկական օգնության արդյունավետ ձեւերից մեկը եղել է հայ մասնագետների վերապատրաստումը: 1992 թվականին Վիեննայում Միջազգային վայրուտային ֆոնդի, Համաշխարհային բանկի, Եւրոպական համագործակցության, Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության, Միջազգային կարգավորման բանկի կողմից ստեղծվել է մասնագետների վերապատրաստման ինստիտուտ, որտեղ վերապատրաստման դասընթացներ են անցել եւ անցնելու են 22 տարբեր նախարարությունների եւ գերատեսչությունների աշխատակիցներ:

Հայաստանի Հանրապետության տարբեր ոլորտների մասնագետներ վերապատրաստում են անցել նաեւ վերոհիշյալ կազմակերպությունների կողմից կազմակերպված այլ դասընթացներում՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում, Ավստրիայում, Գերմանիայում, Բելգիայում եւ այլն:

1993 թ. նախատեսվում է տեխնիկական օգնություն ստանալ նաեւ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունից, Եւրոպական Համագործակցությունից, Համաշխարհային բանկից, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրից, ինչպես նաեւ տարբեր երկրների՝ այդ նպատակի համար հատկացված ֆոնդերից եւ այլն:

Հանրապետությունում անցումն ազատ գներին՝ տնտեսական հարաբերությունների որակապես նոր միջավայր ստեղծեց, որն իր թերու-

թյուններով եւ բացասական հետեւանքներով հանդերձ, շատ կարճ ժամանակահատվածում դարձավ տնտեսական նախաձեռնությունը խթանող եւ տնտեսական իմքնակառավարման մեծ լիցք ունեցող համակարգ: Գործնականում տնտեսավարման սուբյեկտները, անկախ սեփականության ձեւից, հնարավորություն ստացան անցում կատարել վարչամարտական պատասխանատվությունից տնտեսական պատասխանատվության: Ավելին, նրանց իրական հնարավորություն ընձեռվեց ոչ միայն լուծելու ընթացիկ տնտեսական խնդիրները, այլեւ որոշելու իրենց գործելակերպի տակտիկան ու ստրատեգիան, իմքնուրույն վարելու կուտակման եւ սպառման հաղաքականությունը:

Դա, վերջին հաշվով, հեղափոխություն էր տնտեսավարման պրակտիկայում, լիակատար ձերբազատում վարչահրամայական համակարգի ամենահիմնական բնորոշիչներից: Այլ բան, թե գործնականում այդ իրավունքը, ստեղծված նոր որակը որեմնով հաջողվեց իրացնել տրված կարճ ժամանակահատվածում, մանավանդ, եթե նկատի ունենանք նաեւ մարդկանց մտածողության ու հոգեբանության իներցիան, պրոֆեսիոնալիզմն ու նորովի գործելու կարողությունը:

Նոր համակարգի գործունեությունն ապահովելու համար 10 ամսում ընդունվեց մեկ տասնյակից ավելի օրենք ու Գերագույն խորհրդի որոշում, Հայաստանի Հանրապետության Նախագահի 20-ից ավելի հրամանագիր, կառավարության շուրջ 120 որոշում:

Հանրապետությունում արմատավորվեց հարկային նոր համակարգ, որը, դարձյալ որոշ թերություններով հանդերձ, գործեց ու դարձավ տնտեսական կարեւոր լծակ:

Բանկային համակարգը հնարավորություն տվեց թղթակցային կապ հաստատել աշխարհի երկու տասնյակից ավելի երկրների բանկերի հետ եւ հաղթահարել ֆինանսական շրջափակումը:

«Ձեռնարկությունների եւ ձեռնարկատիրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումով հստակեցվեց տնտեսավարման սուբյեկտների կարգավիճակը, մեծ հնարավորություններ ընձեռվեց ազատ ձեռներեցության ծավալմանը:

Չնայած թույլ, վեհերոտ դրսևորումներով՝ տնտեսական հարաբերությունների ծավալման, ընդհուպ ինվեստիցիոն ու կառուցվածքային հաղաքականության վրա արդեն նկատելի ու շոշափելի է դառնում

առաջարկի ու պահանջարկի ներազդեցությունը: Դանդաղորեն ծնունդ են առնում նաեւ շուկայական ենթակառուցվածքի բաղադրիչները: Սակայն այս գործում հիմնական անելիքները դեռեւս առջեւում են:

Հանրապետության օբյեկտիվ իրավիճակից ելնելով՝ գործադիր իշխանության ողջ համակարգը եւ, առաջին ներքին, կառավարությունը փոխադրվեց եզնաժամային ու ֆունկցիոնալ կառավարման ներդաշնակման ռեժիմի: Միայն այդ ճանապարհով հնարավոր դարձավ հաղթահարել նախորդ ձմռան մեծաթիվ հրատապ խնդիրները, միաժամանակ ապահովելով տնտեսական համակարգային վերափոխման ամենակտրուկ շրջադարձերից մեկի՝ ազատ գների անցնելու պայմաններում տնտեսության կառավարելիությունը:

Համարյա ողջ տարվա ընթացքում մեզ համար կարեւորագույն հարցը տնտեսական շրջափակման ազդեցության թուլացումն ու հանրապետության կենսագործունեության ապահովումն էր: Խնդիրը, դժբախտաբար, ոչ միայն չի փոխվել, այլեւ ավելի է սրվել: Այսօր հանրապետության կենսագործունեությունը թեկուզ անցյալ ձմեռվա մակարդակով պահպանելու համար օրական պահանջվում է ներմուծել 170–180 վագոն մազութ ու նավթամթերք, 70–80 վագոն սննդամթերք, 100 վագոնից ավելի արդյունաբերական հումք ու արտադրանք, շուրջ 150 վագոն այլ բեռներ: Մինչդեռ իրական հնարավորություններն արդեն 4 ամիս է՝ մոտեցել են զրոյի:

Այս տարվա հունվար-հուլիս ամիսներին, երբ վթարների պատճառով խիստ անկանոն էր գործում նաեւ վրացական երկաթգիծը (փետրվար-մարտ ամիսներին այդ գծով ստացվեց ընդամենը 24 գնացք), Հայաստան մտավ 55191 վագոն կամ 3,6 մլն տոննա բեռ, որից՝ 18237 վագոն կամ 1,2 մլն տոննա մազութ: Ստացվեց նաեւ 4588 վագոն հացահատիկ ու ալյուր, 5395 վագոն տարբեր տիպի այլ նավթամթերքներ եւ 1058 վագոն սննդամթերք: Քիչ է ասել՝ ստացվեց: Այդ գործին օր ու գիշեր լծված մարդիկ միայն կարող են հասկանալ, թե ստեղծված իրավիճակում դա ինչպիսի ջանքեր էր պահանջում:

Գործնականում օգտագործվեց երկաթգծի ամբողջ թողունակությունը, սակայն զգալի հանգամանքով բեռներ երկաթգծի թողունակության սահմանափակվածության պատճառով այդպես էլ հնարավոր չեղավ ներմուծել Հայաստան (շուրջ 6 հազար վագոն), որից 2153 վագոնը

կամ 140 հազար տոննան կազմում էր մազութը: Այդ բեռների մի մասը բերվեց մեքենաներով, իսկ գերակշիռ մասն իրացվեց առաքողների կողմից:

Վիճակը կտրուկ սրվեց 1992 թ. օգոստոսի 14-ից՝ Աբխազիայում ծավալված իադարձությունների պատճառով: Երկաթուղին փակվեց ամբողջությամբ: Հնարավոր դարձավ միայն մասնակիորեն օգտվել Բաթում և Փոթի նավահանգիստներից, սակայն վերջին շրջանում լուրջ բարդություններ են առաջացել նաեւ այս հանապարհի շահագործման հարցում:

Իրավիճակին գումարվեցին նաեւ հյուսիսային գազատարի պայթեցումն ու տեւական խափանումը, այն դեպքում, երբ այն Հյուսիսային Օսեթիայի կողմից ամոան 1,5 ամիսների շրջափակումից հետո Հայաստանի ամենաակտիվ միջամտության շնորհիվ նոր էր գործարկվել:

Ապրիլ-հուլիս ամիսներին, գազամատակարարման երկարատեւ ընդհատման պայմաններում, ոչ միայն հաջողվեց ծանրաբեռնվածությամբ աշխատեցնել էներգետիկ համակարգը եւ ակտիվացնել տնտեսական աշխատանքը, այլեւ ձմոան համար կուտակել մոտ 200 հազար տոննա մազութ, հանապարհին ունենալով եւս 140 հազար տոննա:

Իադրության կտրուկ փոփոխությունը եւ գազամատակարարման նվազումը ստիպեցին օգոստոս ամսից ծախսել ձմոան համար կուտակված պաշարները: Այսօր հսկայական ճիգեր են գործադրվում ավտոմեքենաներով ու իմպաիոներով վառելանյութ եւ սննդամթերք փոխադրելու ուղղությամբ: Ամեն ինչ արվում է Վրաստանի հետ նորմալ տնտեսական հարաբերություններ պահպանելու համար, բայց միշտ չէ, որ հաջողվում է:

Ես չեմ հավակնում առկա դժվարությունները բացատրել լոկ օբյեկտիվ հանգամանքներով: Բայց չեմ կարող հանդուրժել նաեւ, երբ փորձ է արվում ամեն ինչ գլխիվայր ներկայացնել, նսեմացնել շատ-շատերի անձնուրաց ու շուրջօրյա աշխատանքը՝ ընդունելով հանդերձ հացամատակարարման եւ էներգառեսուրսների հայթայթման ու օգտագործման բնագավառում տեղ գտած աղաղակող խախտումներն ու հանցավոր թերացումները:

Հանրապետության Նախագահի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը շուտով կամփոփի այս ոլորտներին վերաբերող

ուսումնասիրությունների արդյունքները: Ամեն տիպի իրավախախտում, հանցավոր անփութություն ու անտարբերություն կստանա իր արժանի գնահատականը՝ համապատասխան իրավական հետեւություններով հանդերձ:

Հարկ է նշել նաեւ, որ անցումային շրջանի դժվարությունները, շատ գործընթացների դժվար կառավարելիությունը, մտածողության ու հոգեբանության բազմաշերտայնությունը, իրականության տարընթռնումը, երեւույթների համակարգված ընկալման դժվարությունները եւ բազմաբնույթ այլ հանգամանքներ առաջ են բերում լուրջ հասարակական իրավիճակներ: Նման պարագաներում հեշտությամբ գլուխ են բարձրացնում զանազան շահարկումներն ու ասեկոսեները: Հրապարակ են հանվում պատեհապաշտ ու սիրողական մակարդակի կոչեր ու կարգախոսներ, ժողովրդի բնական իրավունքները դառնում են հաղաքական շահարկումների առարկա:

Իսկ առավել վտանգավորն այն է, որ նման կոչերի ու կարգախոսների տակ փորձում են ակտիվանալ ու գլուխ բարձրացնել հանցագործ տարրերը, որոնք հարոզչի կերպարանք ստանձնած՝ սկսում են նույնիսկ բարոյախոսության դասեր կարդալ:

Թեեւ անխուսափելի, բայց անպատժելիությունն ու ամենաթողությունը անհանդուրժելի են բարդ անցումային իրավիճակներում: Ամուր եւ առողջ ազգային պետականություն կերտելու համար պետք է սկզբունքային ու անդրդվելի լինել անբարոյականության ու օրինազանցության ամեն մի դրսեւորման նկատմամբ:

Հանրապետության Նախագահը պարտավոր է անել ամեն ինչ՝ այս հարցում եղած բացթողումներն արագ հաղթահարելու եւ պատշաճ կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ:

Համոզված եմ նաեւ, որ այստեղ որեւէ արդյունքի հասնելն ուղղակի անհնար է առանց Գերագույն խորհրդի ամենաակտիվ աջակցության ու անհրաժեշտ օրենսդրական դաշտի ստեղծման:

Հանրապետության տնտեսական եզակամի հաղթահարման եւ կայունության հաստատման վերաբերյալ կցանկանայի ձեզ ներկայացնել հետեւյալ նկատառումները, որոնք ավելի մանրամասն իրենց արտացոլումը կգտնեն 1993 թ. ծրագրում:

Ամենից առաջ անհրաժեշտ է ապահովել տնտեսության լիաթոք աշխատանքը, ստեղծել պաշտպանունակության եւ անվտանգության ապահովման հուսալի նախադրյալներ, ներդաշնակել այսօրվա եւ վաղվա խնդիրների լուծումը, լինել ակտիվ ու վճռական՝ տնտեսական վերափոխումների բնագավառում:

Ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակում նախ եւ առաջ պետք է ապահովել տնտեսական կապերի աշխարհագրության այնպիսի փոփոխություն, երբ կորսվող կապերը նորերով փոխարինելու գործընթացն ի զորու լինի փոխհատուցելու տնտեսական համակարգի կտրուկ տատանումների հետեւանքով առաջացող կորուստները: Պետք է ելնել նաեւ այն մենկնակետից, որ առաջիկայում Ռուսաստանը մեր հանրապետության համար շարունակելու է մնալ տնտեսական հարաբերություններում ամենամեծ բաժին ունեցող գործընկերը:

Տնտեսական վերափոխումներ իրականացնելիս անհրաժեշտ է խուսափել ծայրահեղություններից, պետական սեկտորի կարեւոր դերի ու նշանակության թերագնահատումից՝ ներդաշնակելով սեփականության բազմաձեւության հիմքի վրա ծավալվող տնտեսական հարաբերությունները եւ հաշվի առնելով ճգնաժամային կառավարման անխուսափելիությունը:

Խիստ արագացման անհրաժեշտություն ունեն տնտեսության կառուցվածքային վերափոխումները՝ հաշվի առնելով այդ հարցում ինվեստիցիոն բաղադրականության արմատական վերանայումը, ոչ պետական եւ օտարերկրյա ներդրումների ներգրավման հետ կապված հարցերի լուծումը:

Կարեւոր խնդիրներից մեկն էլ այն է, որ հանրապետության արտադրական ենթակառուցվածքները ոչ թե խոչընդոտեն, այլ նպաստեն տնտեսության կայունացմանն ու հետագա աճին: Հետեւաբար, ենթակառուցվածքային վերափոխումները տնտեսական վերափոխումներին խիստ ներդաշնակ պետք է ընթանան: Անցումային փուլում, առանձնապես մեր իրավիճակում, ենթակառուցվածքների ձեւավորման ու վերափոխման հարցում անխուսափելի ու անհրաժեշտ է պետական հովանավորությունը:

Անցումը շուկայական տնտեսական հարաբերություններին չպետք է իրականացվի հանպատրաստից ու աղմկարարությամբ: Յուրաքանչյուր

հարաբերություն որպես այդպիսին կայանում ու գործում է միայն անհրաժեշտ նախադրյալների առկայության դեպքում: Մեր խնդիրն է՝ ամենաարագ կերպով ստեղծել այդ նախադրյալները, ձեւավորել շուկայական տնտեսական հարաբերությունների ինստիտուցիոնալ համակարգը:

Ընդ որում, ժամանակի, տեմպի ու թափի առումով նոր տնտեսական հարաբերությունների համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը հին համակարգի փլուզման համեմատ առաջանցիկ բնույթ պետք է ունենա: Հակառակ դեպքում անխուսափելի է ստվերային կառավարման ծավալումը:

Այս կարեւոր մենկնակետից ելնելով է նաեւ, որ պետք է իրականացվեն առաջիկա սեփականաշնորհման աշխատանքները, որոնց ծրագիրը շուտով ձեզ կներկայացվի:

Անհրաժեշտ է նաեւ արագացնել իշխանության մարմինների կազմակերպական ձեւավորման, գործադիր իշխանության ներդաշնակ ու գործուն համակարգ ստեղծելու, ինչպես նաեւ իշխանության բոլոր մակարդակներում իրավունքների եւ պատասխանատվությունների անհրաժեշտ հաշվեկշիռ ձեռք բերելու պրոցեսը: Այս խնդիրների լուծման նպատակով առաջիկայում ես կփորձեմ օգտագործել նաեւ իմ օրենսդրական նախաձեռնության իրավունքը:

Առաջիկա անելիքների մեջ մեծապես կարեւորվում է բնակչության սոցիալական պաշտպանվածության հուսալի երաշխիքների ստեղծումը: Հաշվարկները վկայում են, որ եկող տարի նվազագույն աշխատավարձը հարկավոր է հասցնել 4455, միջին ամսականը՝ 5418 ռուբլու, զգալի չափով նվազեցնելով նաեւ գների ու բնակչության եկամուտների աճի խզումը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու բնակչության առավելապես անպաշտպան խավերին, ինչպես նաեւ միգրացիայի բացասական միտվածության թուլացմանը:

1992 թվականի վերջին հանրապետությունում գործազուրկի կարգավիճակ ստացածների թիվը կհասնի 50 հազար մարդու, իսկ 1993 թ. ավարտին այն կարող է հասնել մոտ 200 հազար մարդու: Վերլուծությունը վկայում է, որ գրանցված գործազուրկների շուրջ 60 տոկոսն ունի բարձրագույն կրթություն: Այս մտահոգիչ երեւույթը պահանջում է ոչ միայն անմիջական ու ակտիվ միջամտություն, այլեւ կրթական ու վերապատրաստման համակարգերի լուրջ վերափոխություն: Այս տարի

միջպետական պայմանագրերի հիման վրա որոշ աշխատանքներ իրականացվելին որակյալ աշխատուժը այլ երկրներում գործադրելու ուղղությամբ: Դա պետք է շարունակվի ու ծավալվի:

Նախատեսվում է նաեւ 1993 թ. սահմանել որոշ ապրանքատեսակների բարտավորված վաճառք, պահպանել մի շարք ապրանքների հաստատագրված գները եւ առանձին ծառայությունների՝ պետության կողմից կարգավորվող սակագները:

Կարեւորագույն խնդիրներից է բանկային համակարգի նկատմամբ բնակչության վստահության վերականգնումը: Դրա համար նախ եւ առաջ անհրաժեշտ է բարձրացնել խնայբանկում բնակչության ավանդների դիմաց տրվող տոկոսադրույքները, ապահովել կանխիկ դրամի ստացումը ավանդատուի առաջին իսկ պահանջով: Այդ նպատակով անհրաժեշտ է հստակեցնել խնայբանկի կարգավիճակը, լուծել ՆՍՀՄ խնայբանկի լուծարման պատճառով բնակչության նախկին ավանդների գծով գոյացած պարտքի հարցը՝ այն ձեւակերպելով որպես պետական ներքին պարտք, եւ նրա վերասպասարկման ու մարման համար մշակել համապատասխան մեխանիզմներ:

Թե՛ Հռչակագրում, թե՛ «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքով հաստատագրված եւ ուղենշված է սեփականության բազմաձեւության հիմքի վրա շուկայական տնտեսական հարաբերությունների անցման անհրաժեշտությունը: Այս արմատական շրջադարձը սահմանադրական իրավունքից այսօր վերածվում է իրականության: Սակայն այդ իրականությունն իր սաղմնային վիճակում է՝ մեծագույն բարդություններով ու համակարգ դառնալու դժվարություններով, աղավաղվելով ու հաճախ նաեւ խեղաթյուրվելով թե՛ աջից, թե՛ ձախից:

Մեր խնդիրն է ոչ միայն նոր տնտեսական հարաբերությունների կարգավորմանն ուղղված օրենսդրական միջավայրի ստեղծումը, այլեւ այդ պրոցեսի խելամիտ կառավարումն այն հաշվով, որպեսզի ժամանակին կանխվեն տարաբնույթ շեղումները, եւ այդ նոր հարաբերությունները ծավալվեն ներդաշնակ, համակարգված եւ հասարակայնորեն անհրաժեշտ ու ցանկալի հատույցով: Դրա համար նախ եւ առաջ անհրաժեշտ է առաջիկա մի քանի ամիսների ընթացքում ընդունել Գերագույն խորհրդի նախորդ նստաշրջաններից կուտակված եւ ընթացիկ

նստաշրջանի օրակարգում ընդգրկված ավելի քան 60 օրենք ու որոշում, նպատակ բարելավելով օրենսդրական փաստաթղթերի նախապատրաստման ընթացքը, օրենսդիր ու գործադիր մարմինների փոխհամաձայնեցված աշխատանքը:

Երբեմն չնայացնելով պետականությունը իշխանության սուբյեկտի եւ այն կրողի հետ, պետք է կարեւորել հասարակական-քաղաքական գործելակերպի գնահատման մեկ հիմնական չափանիշ՝ թե որքանով է այդ գործելակերպը նպաստում մեր պետականության կայացմանն ու ամրապնդմանը եւ որքանով է ծառայում համազգային ուժերի նպատակաուղղմանը:

Եթե որեւէ մեկի գործելակերպում այս կարեւոր սկզբունքից շեղում է տեղի ունեցել, ապա պետք է ձերբազատվել դրանից, ընդունելով, որ համազգային շահերն ու խնդիրներն այսօր շատ ավելի հրատապ ու կենսական են, քան դիմեմիկ ժամանակներին բնորոշ ներքին խնդիրները:

Անցման փուլում անհրաժեշտ է նվազագույնի հասցնել ճնշարավոր կորուստներն ու առավելագույն նախադրյալներ ստեղծել շուկայական հարաբերությունների ծավալման համար, տնտեսության կայունության ապահովմանը զուգընթաց ստեղծել վերափոխումների իրականացման համապատասխան սոցիալական բազա, չկորցնել սոցիալ-տնտեսական պրոցեսների կառավարելիությունը, ներքին ճնշարավորություններն առավելագույնս օգտագործել ազգային պետականության հիմքերի ամրապնդման համար:

Վերջում հարկ եմ համարում կանգ առնել նաեւ մի շարք անհետաձգելի խնդիրների վրա, որոնց հրատապ ու հաշվենկատ լուծումը, համոզված եմ, էապես կնպաստի հանրապետության սոցիալ-քաղաքական մթնոլորտի բարելավմանը եւ տնտեսական իրավիճակի կայունացմանը:

1. Տնտեսական բարեփոխումների խորացման ու արագացման, շուկայի բավարար հագեցման տեսակետից անհրաժեշտ է 1993 թ. վերջնականապես իրականացնել սեփականաշնորհման գործընթացը գյուղատնտեսական ապրանքների մթերման, վերամշակման, առեւտրի, սպասարկման, թեթեւ եւ սննդի արդյունաբերության, շինարարության բնագավառներում:

2. Հանրապետության էներգետիկ ինքնուրույնությունն ապահովելու նպատակով եւ նկատի ունենալով գազի ու նավթամթերքների գների

անխուսափելի բարձրացումը, ինչպես նաեւ շրջափակումների շարունակման հավանականությունը՝ կառավարությանը պետք է թույլ տալ այսօրվանից եւեթ սկսել Հայկական առոմակայանի վերաբացման աշխատանքները:

3. Գործադիր իշխանությունների համակարգի գործունեության միասնականությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է շուտափույթ կերպով ընդունել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը, որի բացակայությունը խիստ բացասաբար է անդրադառնում տնտեսության կառավարելիության վրա՝ միաժամանակ հարուցելով բազմաթիվ անհարկի հակասություններ հանրապետական եւ տեղական իշխանության մարմինների միջեւ:

4. Տնտեսական բարեփոխումների ծրագիրն իրականացնելու համար հարկ է էապես խթանել խորհրդարանի օրենսդրական գործունեությունը, որն առայժմ հետու է գոհացուցիչ համարվելուց: Դրան թերեւս կարող են նպաստել Գերագույն խորհրդի վերափոխման քննարկվող ծրագրերը: Կարծում եմ, միանգամայն հիմնավոր է, օրինակ, մինչեւ համապատասխան օրենքների ընդունումը, տնտեսական գործընթացները Գերագույն խորհրդի նախագահության համաձայնության հիման վրա, Հանրապետության Նախագահի հրամանագրերով կարգավորելու առաջարկությունը:

5. Լուրջ վերափոխումների կարիք ունի նաեւ կառավարության կառուցվածքը: Հասունացել է որոշ նախարարությունների ու գերատեսչությունների լուծարման եւ մի բանիսի միավորման անհրաժեշտությունը: Ժամանակն է նաեւ քննարկելու կառավարությանն օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտելու հարցը:

6. Պետականության կայունության ապահովման եւ ներհաղթական լարվածության թուլացման տեսակետից անհետաձգելի է դարձել նոր Սահմանադրության ընդունումը, որով վերջ կդրվի միմյանցից լրացուցիչ լիազորություններ կորզելու իշխանության տարբեր մարմինների ավելորդ եւ վտանգավոր պայքարին: Ինչպես ձեզ հայտնի է, Սահմանադրական հանձնաժողովը պատրաստել է հանրապետության Սահմանադրության մի նախագիծ, որն այսօր գտնվում է քննարկման ընթացքի մեջ: Հանձնաժողովի վերջնական հավանությանն արժանանալուց հետո այն կհանձնվի ձեր դատաստանին, միաժամանակ դրվելով

նաեւ համաժողովրդական քննարկման: Սահմանադրությունը պետք է ընդունվի ժողովրդական հանրաքվեի միջոցով. ձեր պարտքն է հաստատել միայն նրա վերջնական նախագիծը, որով ներկա խորհրդարանը պատվով կատարած կլինի իր պատմական առաքելությունը: Գոյություն ունեցող հաղթական մտավախությունները գրելու եւ Սահմանադրության անձնավորումից խուսափելու նկատառումով, Սահմանադրության ընդունումից հետո պետք է անցկացնել Հանրապետության Նախագահի եւ խորհրդարանի նոր ընտրություններ: Ուստի, հրատապ է դառնում նաեւ ընտրությունների մասին նոր օրենքի ընդունումը:

Ես կոչ եմ անում ձեր բոլոր ջանքերն ուղղել այս կարեւորագույն եւ շնորհակալ պատասխանատվության կատարմանը, որովհետեւ պետական իշխանությունների ներդաշնակ գործունեությունն ու ազգային համաձայնությունը կայանում են ոչ թե բարի ցանկություններով կամ բարոյախրատական հարոզներով, այլ նախ եւ առաջ ժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված Սահմանադրությամբ, որ ենթակա չէ հարամական կոնյունկտուրայի ազդեցությանը եւ դրա շնորհիվ ցանկացած պետության կայունության հիմքն է:

«Հայաստանի Հանրապետություն», 17 դեկտեմբերի, 1992 թ.:
Հրատարակված՝ «Այսօր հրատապ ու կենսական են համազգային շահերն ու խնդիրները» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/16.12.92: Բնագիր: Մեքենագիր – ձեռագիր: Ինքնագիր:

ԵԼՈՒՅԹ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՈՐՁԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(27 փետրվարի, 1993 թ.)

Մեծարգո ներկաներ,

Նախ ասեմ, որ սա ըստ երեւույթին առաջին հավաքն էր, որտեղ մենք միաժամանակ լսեցինք համարյա բոլոր իրավապահ մարմինների ղեկավարներին, եւ ես ուզում եմ ողջունել զեկուցումները, որովհետեւ մենք ստացանք այսօրվա վիճակի լիարժեք պատկերը:

Հարցադրումները, ես կարծում եմ, բոլորին էլ պարզ են: Մենք ապրում ենք չափազանց անկայուն շրջան, անցման, համակարգերի փոփոխության շրջան, եւ սովորաբար ամենաճանցածին շրջաններն են: Շատ միամիտ ձեւով հանցագործությունների աճը ե՛ւ մեզ մոտ, ե՛ւ խորհրդային նախկին այլ հանրապետություններում վերագրում են իշխանության եկած նոր, անփորձ ուժերին, չուզենալով տեսնել խորհային երեւույթները: Իսկ խորհայինն այն է, որ տեղի է ունենում համակարգերի չախչախում, նոր համակարգերի ստեղծում՝ օրենսդրական դաշտի բացարձակ բացակայության պայմաններում. հին օրենքները, մեխանիզմները վերանում են, նորերի ստեղծման համար ժամանակ է պետք: Այսօր ակնհայտ են օրենքների միջեւ եղած հակասությունները, իսկ հանցագործը, ինչպես նաեւ թույլ դատավորը կամ դատախազը օգտվում են հենց դրանից: Սա օբյեկտիվ վիճակ է, սա պետք է տեսնենք, բայց դրանից չպետք է հուսահատվենք: Մենք պետք է զուգահեռաբար թե՛ օրենսդրական դաշտ ստեղծենք, թե՛ կարողանանք կատարելագործել

իրավապահ մարմինների ներքին կառույցները: Ես ասում եմ կատարելագործել, բայց նշված մարմինները կարիք ունեն լուրջ կառուցվածքային փոփոխությունների: Դրա մասին շատ է խոսվել: Արդարադատության նախարարությունը, դատախազությունը, ՆԳ նախարարությունը պատրաստել են բազմաթիվ առաջարկներ՝ ընդհանրապես դատական համակարգի վերափոխման, դատախազության ֆունկցիաների վերանայման վերաբերյալ եւ այլն: Բայց օրենսդրական աշխատանքը չափազանց դանդաղ է ընթանում, որի համար կան և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ: Դրա հետ մեկտեղ մենք պետք է ամենօրյա օպերատիվ աշխատանքով զբաղվենք: Ահա այս բոլորի պատճառով է ստեղծվել ներկա վիճակը, գումարած ժողովրդավարության մասին այն բյուր պատկերացումները, երբ ժողովրդավարությունը դիտվում է որպես ամենաթողություն: Գումարած նաեւ իշխանությունների նկատմամբ համապատասխան ճնշումը, որի մասին այստեղ նույնպես խոսվեց: Սկզբում դրանք գինված ջոկատներն էին: Մենք դա հաղթահարեցինք: Այսօր գոնե դատարաններում գինված մարդիկ չեն հայտնվում, գուցե ինչ-որ բացառություններ կան: Նման բացառություններից մեկն էլ վերջերս եղեգնաձորում տեղի ունեցած դատն էր, որի մասին ես ստացել եմ համապատասխան ինֆորմացիա: Բայց եթե ոչ գինված ջոկատները, այսօր արդեն հաղթական ուժերը, ինչպես նաեւ մամուլն են փորձում ճնշում գործադրել իրավապահ մարմինների վրա, մասնավորապես դատարանների: Շատ հետաքրքիր իրավիճակ է ստեղծվում: Մի կողմից՝ իշխանությունները, իրավապահ մարմինները ընդդիմության կողմից համատարած ճնշադատվում են անօրինականությունների, հանցագործությունների դեմ չպայքարելու համար, բայց երբ հանկարծ որեւէ հավակնոտ անձ է հայտնվում իրավապահ մարմինների տեսադաշտում, ինչպես, օրինակ, օդանավակայանի ղեկավարությունը, էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալը, Գուգարի շրջխորհրդի գործկոմի նախագահը, անմիջապես այդ մարդիկ վերցվում են նույն հաղթական ուժերի պաշտպանության տակ: Ըստ այդմ՝ այդ հաղթական ուժերի, կուսակցությունների մոտեցումները միանգամից սկսում են կասկած հարուցել: Սա, իհարկե, չպետք է ազդի մեր աշխատանքի վրա, թեեւ, դժբախտաբար, ազդում է:

Նոսվեց, որ պատգամավորները փորձում են միջամտել իրավապահ մարմինների աշխատանքին, ազդել նրանց վրա եւ կոչ արվեց պայքարել նման երեւույթների դեմ: Ուրգելել մենք չենք կարող, պատգամավորն էլ հաղթացի է, կարող է գալ, դիմել ցանկացած հարցով, բայց արդեն ձեր գործն է տարբերել անաչառ, հաղթացիական միջնորդությունը եւ ձեզ վրա ազդեցություն գործելու երեւույթը: Դում եմ, որ դա պետք է որոշեմ եւ յուրաքանչյուր նման դեպքի մասին դում եմ, որ պետք է անազանգվի: Ցանկացած դատավոր, դատախազ, ներքին գործերի նախարարության ցանկացած աշխատակից պետք է պարզապես անազանգի այսպիսի երեւույթների առկայության դեպքում: Ստեղծված է ՀՀ Նախագահին կից վերահսկողական ծառայություն: Եթե որեէ պատգամավոր միջնորդությամբ գալիս է հանցավորին պաշտպանելու կամ ազդելու դատավորի ու դատախազի վրա, անմիջապես պետք է անազանգվի դրա մասին: Եթե չի անազանգվում, դատարանն այլեւս իրավունք չունի ասելու, թե՝ դատավորները վախենում են: Ո՞ւմ է պետք վախեցող դատավորը կամ դատախազը: Նրանք պետք է վախենան միայն ու միայն օրենքից: Ակնառու փաստեր շատ կան, բազմաթիվ պատգամավորներ անարգել մտնում են դատարանի դահլիճ եւ շատ հանգիստ ելույթ ունենում: Իսկ երբ դատավորին կամ դատախազին հրավիրում ենք այս մասին վկայություն տալու, նրանք չեն ուզում վատություն անել կամ վատամարդ լինել: Բայց մյուս կողմից էլ իրենք են բողոքում, թե իրենց վրա ազդում են, ճնշում են եւ այլն: Ոչ մի պատգամավոր իրավունք չունի դատարանում ելույթ ունենալու, եթե չունի համապատասխան կարգավիճակ: Բայց այսօր նման դեպքեր կան, ուղղակի միջանցքներում է խոսվում այդպիսի իրողությունների մասին, բայց ոչ մի պատգամավոր դատարանի կողմից ի ցույց չի դրվում: Յուրաքանչյուր նման դեպք պետք է համապատասխան ձեւով ինքնակվի և՛ արդարադատության նախարարության, և՛ դատախազության կողմից, պետք է եւ մամուլը տեղյակ լինի: Ինչո՞ւ ընդդիմությունը կամ հաղթական ուժերը ամեն ինչի մասին կարող են գրել, իսկ մենք չենք կարող: Պետք է իրավապահ մարմինները ակտիվ ձեւով համագործակցեն մամուլի հետ: Իրենք լինեն նախաձեռնող, բոլոր նման փաստերը դարձնեն հասարակության ուշադրության առարկա, հանդես գան ներքոմներով: Բացենք ցանկացած թերթ: Բազմաթիվ ատեւկան և՛ իրավապահ մարմինների, և՛ պաշտոնատար անձանց հասցեին,

բայց դրանք ճերմումներ չեն ստանում: Սուտը գումարվում է ստին, դառնում հասարակական կարծիք: Յանկացած սուտ, զրպարտություն, կեղծիք պետք է պատասխան ստանա:

Ասվեց համակարգման բացակայության մասին: Դա էլ կա, դա էլ է խանգարում մեր գործին, եւ մենք փորձում ենք շտկել այդ վիճակը, եւ հենց դրան է կոչված ՀՀ Նախագահին կից վերահսկողական ծառայությունը, որի աշխատանքի արդյունքները շուտով պետք է որ զգանք:

Ամենացավոտ հարցերի մասին խոսվեց այսօր: Մենք արդարացիորեն բողոքում ենք Վրաստանի տարածքում Հայաստան առաքվող բեռների կողոպուտի դեմ, բայց չենք մտածում, որ Հայաստանում էլ նույնն է կատարվում՝ ե՛ւ օդանավակայանում, ե՛ւ երկաթուղում, ե՛ւ ավտոճանապարհներին: Տաշիրից մինչեւ Երեւան բենզին տեղափոխելու համար 16-17 տեղ մարդկանցից հարկ են հավաքում: Եւ սրանք պետք է դառնան մեր ամենաառաջնահերթ խնդիրները: Առաջինը՝ օդանավակայանը, որովհետեւ շրջափակումները դեռ երկար կարող են շարունակվել, Վրաստանում իրավիճակը դեռ երկար կարող է այսպես մնալ, մեր միակ կապն արտաքին աշխարհի հետ իրականացվելու է օդանավակայանի միջոցով եւ ոչ միայն «Զվարթնոցի», այլեւ այլ օդանավակայանների, որոնց ցանցը մենք պետք է մեծացնենք: Կառավարության առջեւ խնդիր է դրված մեկ շաբաթվա ընթացքում լիակատար կարգ ու կանոն հաստատել օդանավակայանում: Կպատժվեն բոլոր այն պատասխանատու անձինք, ովքեր կմեղադրվեն հանցավոր տարերի հետ գործակցության մեջ: Այս խնդիրը դրված է, եւ ես այս բարձր ամբիոնից պաշտոնապես հայտարարում եմ՝ մեկ շաբաթից լիակատար կարգ ու կանոն պետք է լինի օդանավակայանում: Հաջորդը կլինի երկաթուղին, դրանից հետո պետք է լրջորեն զբաղվենք ավտոճանապարհների անվտանգության, նաեւ նրանց շահագործման խնդրով, որում մեծ դեր է պատկանում ՆԳ նախարարությանը եւ տեղական իշխանություններին:

Իրավապահ մարմինների, մյուս գերատեսչությունների, նախարարությունների, տեղական իշխանությունների աշխատանքի վրա շատ է ազդում նաեւ քաղաքական մթնոլորտը: Յուրաքանչյուր կամպանիա իշխանությունների դեմ, կամ ցույցերի, միտինգների այս շարունակական ընթացքը, մամուլի հարձակումները՝ մարդկանց մեջ, նախարարություններում, տեղական իշխանություններում, իրավապահ մարմինների հա-

մակարգում ստեղծում են այս իշխանությունների ժամանակավորության տպավորություն: Նույնիսկ շահագրգռված մարդիկ կան, որ տարածում են, թե այս իշխանությունների օրերը հաշված են, եւ ով ինչ ուզի՝ կարող է անել: Դա անմիջապես զգացվում է: Քաղաքական նման անկայուն պահերին անմիջապես ընկնում է ե՛ւ նախարարությունների, ե՛ւ տեղական իշխանությունների, ե՛ւ իրավապահ մարմինների աշխատանքի արդյունավետությունը:

Վիճակը ծանր է: Ես չեմ խոստանում մեր ժողովրդին, թե առաջիկայում այն կարող է թեթեւանալ: Դժվարությունները դեռեւս շարունակվելու են, ժողովրդի մեծ մասը դա հասկանում է: Սակայն ժողովուրդը չի հանդուրժում անօրինականությունները. չի հանդուրժում, երբ իմը ամիսներով լույս չունի, բայց կողքի շենքում ամբողջ օրը կա, երբ տեսնում է ակնհայտ թալան: Դոնե այս հարցում պետք է բավարարենք ժողովրդի սպասումները: Եւ մենք պետք է կարողանանք բարձրացնել մեր աշխատանքի արդյունավետությունը: Ես ուզում եմ զգոնության, պետականության գաղափարի ամրապնդման կոչ անել, ուղղակի արհամարհել բոլոր այն հոռետեսական մոտեցումները, որ կան մեր ժողովրդի գոյության ու ապագայի մասին: Հիմա ով վեր է կենում, ցանկացած ամբիոնից, մամուլից խոսում է այն մասին, որ ժողովուրդը կործանվում է: Մեր ժողովուրդը 3000 տարի չի գոյատեւել, որ այսօր ոչնչանա: Մեր ժողովուրդը կա՛, կմնա՛ եւ հավերժ կլինի: Ոչ մի անհատ չի կարող խաղալ իր ժողովրդի բախտի հետ: Ոչ մի հաղաքական կուսակցություն եւս դա չի կարող անել: Ճիշտ է՝ կարող են լինել շփոթություններ, կարող է ինչ-որ պահ ժողովուրդը սխալվել, բայց ժողովուրդը շատ արագ ի վիճակի է շտկել ցանկացած սխալ: Եւ մեր ժողովրդի ամենադրական, ամենակարեւոր հատկանիշը հենց այդ վտանգի զգացողությունն է, նրա անհանդուրժողականությունը արկածախնդրության նկատմամբ եւ վտանգի պահին համախմբվելու ընդունակությունը:

«02. Ոստիկանական լրատու», 6 մարտի, 1993 թ.:
Հրատարակված՝ «Ժողովուրդը չի հանդուրժում անօրինականությունները» վերնագրով:

ԵԼՈՒՅԹ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(1 մարտի, 1993 թ.)

Ես պետք է իմ գոհունակությունը հայտնեմ այս հանդիպման առթիվ՝ մասնավորապես ինձ համար ուսանելի, եւ պետք է խոստովանեմ, որ այսօրինակ հանդիպումներ ավելի վաղ պետք է ունենայի ձեզ հետ: Սակայն եթե մենք երկուստեք համոզվենք նման հավաքների օգտակարության մեջ, այն կանոնավոր դարձնելը մեզանից է կախված: Ինձ այսօր ուրախացրեց հատկապես այն միտումը, որ, կարծեմ թե՝ դատելով այս լսարանի մթնոլորտից, վերանում է փոխադարձ պահանջների բացասականությունը (նկատի ունեմ կառավարության կողմից ձեռնարկություններին, արտադրության ոլորտների աշխատողներին ուղղված պահանջ-կշտամբանքները եւ հակառակը), եւ, փաստորեն, ձեւավորվում է համագործակցության մթնոլորտ: Ե՛ւ կառավարությունը, Ե՛ւ արտադրության ոլորտի ղեկավարությունը գիտակցում են իրենց պարտականությունները: Սա՛ է ամենակարեւորը, սա արդեն նոր մտածողության երեւույթ է, որ ունի իր հիմնավոր պատճառները: Մի կողմից՝ կենտրոնացված պետական տնտեսություն, ինչ տնտեսական միջավայր, մյուս կողմից՝ արդեն իրականացվող վերափոխումներ, լուրջ բարեփոխումների միտումներ, ընդունվող նոր օրենքներ, նոր տնտեսական հարաբերություններ, որոնք եւ համապատասխանաբար նոր մոտեցումներ են թելադրում:

Օրենսդրորեն, իրավականորեն մեծացել է ձեռնարկությունների ինքնուրույնությունը, ընդլայնվել են նրանց իրավունքները: Մի մասը կարողանում է օգտվել այդ իրավունքներից, մի մասն ինքնուրույնության յու-

րացման գործընթացի մեջ է, իսկ մի մասն էլ դեռ ապաշնորհություն է դրսեւորում: Սա նույնպես բնական է. անցումային շրջան է, ե՛ւ մենք, ե՛ւ դուք դեռեւս սովորելու շատ բան ունենք: Պետությունը լիովին գիտակցում է իր պարտավորությունները, գիտակցում է, որ իրենից ավելի շատ բան է կախված, քան բուն արտադրողներից: Ես նկատի ունեմ լուրջ հաղարական խնդիրները: Այդ առումով գերագույն խնդիրը կոմունիկացիաների հարցն է՝ արտաքին աշխարհի հետ կապը, նաեւ էներգակիրների մատակարարման ու ֆինանսավարկային համակարգի կարգավորման խնդիրները: Դրանք հիմնականում պետության պարտականություններն են, իշխանությունները պետք է լուծեն այդ խնդիրները: Մյուս հարցերը հիմնականում լուծելի են, եւ լուծելի են անգամ այս ուժերով, այս կարողություններով: Իհարկե, դա չի բացառում, որ ձեռնարկությունները եւս ուղիներ պետք է որոնեն ճգմռի աղբյուրների հայթայթման, նոր շուկաների ձեռքբերման ուղղությամբ:

Ես չեմ ուզում կրկնել նախորդ հռետորներին՝ ամեն ինչ ասվեց: Ուզում եմ շեշտել մի քանի կարեւոր հարցեր, որոնք. կարծում եմ, ձեր առաջնահերթ խնդիրները պետք է լինեն: Նախ՝ 1993 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մասին. չեմ կարծում, որ դա անիրական ծրագիր է. այն հիմնված է ձեր իսկ առաջարկությունների, ձեր իսկ հնարավորությունների ուսումնասիրման վրա: Ես ամենեւին համամիտ չեմ այն կարծիքին, թե դա իբր շոկային թերապիայի ծրագիր է: Ամենեւին: Այնտեղ շոկային թերապիայի նշույլ անգամ չկա, եւ ավելին՝ շատ ավելի պահպանողական է, քան ես կցանկանայի: Եթե փորձենք մեկ-երկու խոսքով բնութագրել ծրագրի էությունը, ապա դա առկա արտադրական կարողությունների պահպանումն է, իսկ եթե ավելի պարզեցնենք՝ պարզ վերարտադրության ապահովումը: Նորից եմ կրկնում սա բարեփոխման ծրագիր չէ, եւ ես այս ծրագրի նկատմամբ իմ պահանջներն ունեմ:

Իսկ այժմ կոնկրետ խնդիրների մասին. առկա հնարավորությունների սահմաններում (իսկ պետությունը պետք է աշխատի մեծացնել այդ հնարավորությունները), ձեր առաջին խնդիրն արտադրության անընդհատության ապահովումն է: Մենք այլեւս չպետք է կրկնենք անցյալի սխալները, պետք է ամեն ինչ անենք, որ արտադրությունը երբեք կանգ չառնի: Ինձնեղ համոզվեցիք, որ նույնիսկ 12 միլիոն կվտ/ժամ ռեժիմի

պայմաններում մեզ հաջողվեց արտադրությունն ինչ-որ չափով պահպանել: Երկրորդ խնդիրը մեր արդյունաբերության առկա կարողությունների հիմնական ֆոնդերի պահպանումն է: Ըստ զեկույցների՝ նրանց գույքագրումն ավարտված է, սակայն արդյունքները դեռեւս ամփոփված չեն. այն խիստ վերահսկողության կարիք ունի: Երրորդ խնդիրը հիմնական ֆոնդերի պաշտպանությունն է, որի մասին մի քանի հռետորներ այստեղ խոսեցին. պետք է վերականգնել ռազմականացված պահպանության համակարգը: Չորրորդը, որն ունի սոցիալական մեծ արձագանք, առկա աշխատատեղերի պահպանումն է: Նույնիսկ հարկադիր պարապուրդների առկայությամբ՝ պետք է միջոցներ հայթայթենք դրա համար: Հինգերորդ՝ ներքին կոոպերացիայի ընդլայնումը եւ ոեգիոնալ կոոպերացիայի ձեւավորումը:

Եւ վերջապես՝ առավել կարեւոր մի հարց. այստեղ հավաքված են այն պատասխանատուները, որոնց ուսերի վրա է դրված մեր տնտեսության հիմնական բեռը: Եւ, բախտի հմաճաճույրով, տնտեսության հիմնական բեռը կրող զանգվածն այսօր ամենազրկվածն է: Գյուղացիությանը՝ սեփականաշնորհման միջոցով ինչ-որ կերպ հնարավոր եղավ ապահովել: Եթե մենք ժամանակին իրականացրած չլինեինք հողի սեփականացումը, այսօր ողջ գյուղատնտեսությունը կազմալուծված կլիներ: Եթե գյուղատնտեսությունը չկազմալուծվեց եւ նույնիսկ զարգացման միտում կա, ապա միայն շնորհիվ սեփականաշնորհման, շնորհիվ այն բանի, որ գյուղացին դարձավ իր հողի, իր արտադրանքի տերը: Բյուջետային հիմնարկների աշխատողները նույնպես ավելի լավ վիճակում են, քան ձեր ոլորտի աշխատողները, որովհետեւ, այնուամենայնիվ, ինֆլյացիային զուգընթաց, մենք կարողանում ենք ճվազագույն չափով ինդեքսավորել նրանց եկամուտները, ապահովել նրանց բեկուզ չարաշ գոյությունը: Կրկնում եմ՝ ամենազրկվածը արտադրության ոլորտի աշխատողներն են: Իհարկե, կոմունիկացիաների կանոնավոր գործունեության, էներգակիրների բավարար մատակարարման դեպքում վիճակը գուցե այլ լիներ, բայց նկատի ունենալով, որ առաջիկայում եւս մենք երաշխավորված չենք նման տիպի խափանումներից, պետք է ձեր բնագավառում նույնպես լուրջ կառուցվածքային փոփոխություններ, լուրջ միջոցառումներ նախատեսենք:

Կառավարությունում, մասնավորապես էկոնոմիկայի նախարարությունում լրջորեն քննարկվում է արտադրության ոլորտում գոնե մասնակի սեփականաշնորհում իրականացնելու գաղափարը: Գաղափարի էությունն այն է, որ պետական ձեռնարկությունների ֆոնդերի 10–20 տոկոսը սեփականաշնորհվի կոլեկտիվներին: Դա, իհարկե, առաջին հայացքից կարող է վիճելի թվալ, բայց այդ դեպքում միանգամից լուծվում են մի քանի հարցեր, նախ՝ սոցիալական արդարության ապահովումը, այնուհետեւ՝ կոլեկտիվների դերի մեծացումը արտադրության կազմակերպման գործում, եւ, որ ամենակարեւորն է, եւ ես դրա մասին արդեն խոսեցի, առկա արտադրական կարողությունների պահպանության, պաշտպանության հարցերի կարգավորումը: Թեեւ այս միջոցառումն իրականացնելու հարցում դժվարություններ կծագեն, բայց ամեն գնով դա պետք է իրականացնել: Դժվարություններ կծագեն նախեւառաջ խորհրդարանում (դուք գիտեք, թե այնտեղ ինչ մթնոլորտ է տիրում. նույնիսկ տնտեսական խնդիրներին զուտ տնտեսագիտական հիմնավորումների փոխարեն՝ քաղաքական երանգ է տրվում): Այստեղ դուք ձեր վճռական խոսքը պետք է ասեք: Ինչո՞ւ հրապարակները կարող են ազդել խորհրդարանի աշխատանքների վրա, իսկ ահա այսպիսի մի հզոր բանակ չի կարող ազդել: Բազմաթիվ օրենքներ, որոնց անհրաժեշտությունը դուք ինքներդ եք զգում, արդեն տարիներով գտնվում են խորհրդարանի պահոցներում, եւ այդ օրենքներն ընդունելու մտադրություն անգամ չկա: Կարծում եմ, տնօրենների այս խորհուրդը կազմակերպական ձեւ պետք է ստանա, պետք է դառնա քաղաքական այնպիսի ուժ, որը կարողանա ազդել հանրապետության քաղաքական կյանքի վրա: Դուք պետք է մասնակցեք նաեւ խորհրդարանի նիստերին, բարձրացնեք ձեր ձայնը, ներկայացնեք ու պաշտպանեք ձեր պահանջները:

«Հայաստանի Հանրապետություն», 3 մարտի, 1993 թ.: Հրատարակված՝ «Մենք, երկուստեք, դեռեւ սովորելու շատ բան ունենք» վերնագրով:

ԵԼՈՒՅԹ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ

(2 մարտի, 1993 թ.)

Հայտնի է, թե ինչպիսի քաղաքական մթնոլորտ է առաջացել Սահմանադրության շուրջ. այսօր նրա ընդունումը կարծես թե դառնում է ավելի շատ քաղաքական, քան իրավական հարց: Բոլորս էլ գիտակցում ենք, որ պետության կայունության հիմքը Սահմանադրությունն է, եւ միայն նրա ընդունմամբ կթուլանա ներքաղաքական պայքարը, քանի որ դրանից հետո ոչ մի ուժ ո՛չ իշխանությունները, ո՛չ ընդդիմությունը չեն կարող հավակնել շրջանցելու ժողովրդի կամքը, միմյանցից լիազորություններ կորզել, փոխել իշխանությունների հակակշիռները:

Ակնհայտ է նաեւ, թե ինչպիսի դժվարություններ են կանգնած Սահմանադրության ընդունման ճանապարհին: Մասնավորապես, այսօր մեր ներքին քաղաքական կյանքը հուզում է մեկ հարց. ինչպիսի պետություն պետք է լինի Հայաստանը՝ նախագահակա՞ն, թե՞ խորհրդարանական: Երկու կողմն էլ ունեն իրենց փաստարկներն ու շարժառիթները, ինչը միաժամանակ վկայությունն է այն բանի, որ իշխանության օրենսդիր ու գործադիր օղակները բավարարված չեն իրենց լիազորություններով կամ փորձում են ընդլայնել դրանց շրջանակներն ի հաշիվ մյուս իշխանության: Կրկնում եմ՝ սա ոչ այնքան իրավական հարց է, ոչ այնքան բխում է պետականության ամրապնդման շահագրգռությունից, որքան զուտ քաղաքական խնդիր: Եւ այսպիսի պայմաններում, ինչ խոսք, չափազանց դժվար է Սահմանադրության ընդունումը:

Վստահ եմ, որ մասնագետներն ի վիճակի են պատրաստելու Սահմանադրության նույնիսկ իդեալական տարբերակ, բայց խնդրական է

մնում նրա ընդունման եղանակը: Վերջինիս համար, իհարկե, անհրաժեշտ է համապատասխան քաղաքական մթնոլորտ:

Առաջարկվում են մի քանի տարբերակներ: Նախ, այսօրվա օրենսդրությամբ Սահմանադրություն ընդունելու իրավասությունը վերապահված է գործող խորհրդարանին: Սակայն, դարձյալ զուտ քաղաքական նկատառումներով, խորհրդարանը կարծեմ թե հրաժարվում է իր այդ հիմնական իրավասությունն իրագործելու մտքից: Այս պատճառով է, որ զուգահեռաբար առաջ են քաշվում Սահմանադիր ժողովի, ժողովրդական հանրաքվեի անցկացման գաղափարները: Եթե խորհրդարանն ստանձներ իր պարտավորությունները եւ իրագործեր իր իրավասությունը, ապա նման հարցեր առաջ չէին քաշվի: Բայց մենք պարտավոր ենք հաշվի նստել իրականության հետ:

Ինչ վերաբերում է Սահմանադիր ժողովին, ապա, ըստ իս, գործող խորհրդարանի առկայության պայմաններում դա միանգամայն ավելորդ է: Ձեմ կարծում, որ Սահմանադիր ժողովում կընտրվեն ավելի հմուտ մարդիկ, քան այսօրվա խորհրդարանում: Ավելին, եթե ենթադրվում է, որ Սահմանադրության ընդունումից հետո պետք է անմիջապես տեղի ունենան նոր խորհրդարանի ընտրություններ, ինչն իմնընտիր հասկանալի է, ապա առկա խորհրդարանն իմը կարող է հանդես գալ որպես Սահմանադիր ժողով: Ի՞նչն է դրան խանգարում: Չէ՞ որ գործող խորհրդարանը Սահմանադրությունն ընդունում է ոչ թե իր, այլ իրեն հաջորդողի համար: Այսինքն, տվյալ դեպքում այն միանգամայն կարող է հանդես գալ որպես Սահմանադիր ժողով, որը չունի ոչ մի քաղաքական շահագրգռություն: Այնպես որ, հակառակ փաստարկները լուրջ համարել չի կարելի:

Մյուսը, համաժողովրդական հանրաքվեով Սահմանադրությունն ընդունելու եղանակն է: Եթե խորհրդարանը չկարողանա իրականացնել իր առաքելությունը, ապա քաղաքական ուժերը (դրանք կարող են լինել թե՛ կուսակցությունները, թե՛ գործադիր իշխանության ներկայացուցիչները) 200000 ստորագրությամբ կարող են հանդես գալ ժողովրդական հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ, որն, իհարկե, հարկադրական բայլ է:

Առաջարկվում է մեկ այլ՝ համադրական տարբերակ, երբ ենթադրվում է, որ Սահմանադրական հանձնաժողովի կողմից պատրաստված

Սահմանադրությունը պետք է ընդունվի խորհրդարանով եւ ապա դրվի համաժողովրդական հանրաքվեի՝ դրանով ավելի ապահովելով Սահմանադրության կայունությունը եւ հետագայում դրա նկատմամբ ոտնձգությունների կանխումը: Սակայն այս տարբերակի ընտրությունը նաև կախված է խորհրդարանի կամքից ու որոշումից:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե մեր պետությունը պետք է լինի նախագահական, թե խորհրդարանական, ապա չպետք է մոռանալ, որ վերջինս մենք արդեն փորձել ենք: 70 տարի Հայաստանը եղել է խորհրդարանական հանրապետություն, որը, չպետք է ժխտել, գործող համակարգ էր, գործող՝ միակուսակցական վարչակարգի պայմաններում: Խորհրդարանական համակարգը շատ արդյունավետ է նաեւ լրջորեն ձեւավորված բազմակուսակցական հասարակություններում, երբ կան մի քանի ծանրակշիռ կուսակցություններ, որոնք հետու են արկածախնդրությունից, ունեն պատմականորեն ձեւավորված լուրջ քաղաքական միտք, եւ յուրաքանչյուր պահի որեւէ կուսակցություն կարող է իր վրա վերցնել երկրի ղեկավարման պատասխանատվությունը: Եթե լինեին այդպիսի կուսակցություններ եւ այդպիսի հասարակություն, ապա կարելի էր կառուցել նաեւ խորհրդարանական պետականություն: Սակայն նման անկայուն պայմաններում, երբ կուսակցությունները վերջնականապես ձեւավորված չեն, չկան լուրջ, ուժեղ, զանգվածային կուսակցություններ, ըստ իս, խորհրդարանական համակարգը մշտական անկայունության հիմք կդառնա եւ կարող է ընդհանրապես վտանգել մեր պետականությունը: Ուստի այս պայմաններում ես չեմ տեսնում մեր պետականության այլ համակարգ, քան նախագահականն է:

«Հայաստանի Հանրապետություն», 4 մարտի, 1993 թ.:
Հրատարակված՝ «Պետության կայունության հիմքը Սահմանադրությունն է» վերնագրով:

ԵԼՈՒՅԹ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ

(27 մարտի, 1993 թ.)

Ես ուզում եմ ձեզ ներկայացնել իմ մոտեցումները Սահմանադրության եւ նրա ընդունման կարգի վերաբերյալ: Ակնհայտ է, որ մեր խնդիրն է հասարակության եւ պետության կյանքում չնախատեսել որեէ դեպք, որը չունի սահմանադրական լուծում: Սա պետության կայունության ապահովման եւ բռնախական պայմարի կարգավորման միակ միջոցն է: Այսօր, դժբախտաբար, եւ՛ Հայաստանում, եւ՛ նախկին Միության հանմարյա բոլոր հանրապետություններում բռնախական պայմարը ծայրահեղ սրության է հասել միայն ու միայն այն պատճառով, որ Սահմանադրությունը չի ապահովում ճգնաժամային իրավիճակների հնարավոր ելքերը: Սա տեղիք է տալիս մշտական պայմարի, որը հանգում է նրան, որ օրենսդիր եւ գործադիր իշխանությունները փորձում են իշխանության մյուս ճյուղերի հաշվին ընդլայնել իրենց լիազորությունները: Պետության կայունությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ Սահմանադրությունն ու նրա հետագա փոփոխություններն ընդունվեն ժողովրդական հանրաքվեի միջոցով: Այլապես, երբ Սահմանադրությունն ընդունվի խորհրդարանի միջոցով, ինչպես այսօրվա կարգն է, բացառված չէ, որ խորհրդարանը վաղը կփորձի վերահայել այն, մյուս օրը տեղի կունենան նոր խորհրդարանի ընտրություններ, նոր խորհրդարանը կփորձի ընդունել մի այլ Սահմանադրություն եւ այլն: Եւ հանի որ Սահմանադրության ընդունումն իրավական հարց լինելուց առաջ այսօր, դժբախտաբար, դարձել է բռնախական խնդիր, սա ամենևին մեզ չպետք է մղի գտնելու կոնյունկտուրային լուծումներ, այսինքն՝ մենք իրավունք չունենք իրավիճակային մոտեցումներ դրսեւորե-

լու: Ամենաճիշտ ձևը կլիներ հարմարվել խորհրդարանի այսօրվա բազմական ուժերի հարաբերակցությանը եւ փորձել ինչ-որ փոխզիջումային տարբերակ գտնել: Սակայն սա ողբերգություն կլիներ մեր պետության համար եւ կդառնար մշտական անկայունության աղբյուր:

Սահմանադրության մշակման հարցում մենք պետք է առաջնորդվենք երկու սկզբունքով. առաջին՝ բացառելով բազմական կոնյունկտուրայի նկատառումները, դրսեւորել խիստ իրավագիտական մոտեցում, երկրորդ՝ հաշվի առնել միջազգային փորձը: Այս երկու սկզբունքներն են դրվելու մեր Սահմանադրության հիմքում: Զափազանց վտանգավոր է տուրք տալ բազմական կոնյունկտուրային կամ իրավիճակային պահանջներին: Այս առումով շատ բան կախված է Սահմանադրության ընդունման կարգից: Եթե այդ իրավունքը վերապահվի այսօրվա խորհրդարանին, ես վստահ եմ, նշված սկզբունքները չեն հարգվի:

Ես առաջարկում եմ Սահմանադրության ընդունման հետեւյալ կարգը. Սահմանադրական հանձնաժողովի հավանությանն արժանանալուց հետո նախագիծը ներկայացվելու է խորհրդարան: Լավագույն լուծումը կլիներ, իհարկե, եթե խորհրդարանը նույնպես հավանություն տար Սահմանադրությանը, որից հետո այն դրվեր հանրաքվեի:

Այս փուլում ես փաստորեն տալիս եմ առաջին շանսը բազմական ընդդիմությանը՝ ազատվելու և՛ նախագահական համակարգից, և՛ անձամբ իննյից: Այսինքն, եթե հանրաքվեով այս Սահմանադրությունը չի ընդունվում, ես հրաժարական եմ տալիս: Երկրորդ, ես ընդդիմությանը տալիս եմ հաջորդ շանսը ազատվելու իննյից, բայց պահպանելով նախագահական համակարգը: Այսինքն՝ Սահմանադրության ընդունումից հետո անմիջապես անցկացվում են թե՛ Նախագահի եւ թե՛ Ազգային խորհրդի[1] միաժամանակյա նոր ընտրություններ: Ավելին, ես տալիս եմ նաեւ երրորդ շանսը: Անհրաժեշտության դեպքում խորհրդարանը կարող է հանրաքվեի դնել ոչ միայն այս նախագիծը, այլեւ այլընտրանքային տարբերակ, այսինքն՝ պառլամենտական հանրապետության մի Սահմանադրություն: Այլընտրանքային հանրաքվեի դեպքում էլ, եթե չի ընդունվում Սահմանադրության այն տարբերակը, որը մշակվել է մեր հանձնաժողովի կողմից, ես հրաժարական եմ տալիս:

Այսինքն՝ լինելով Հանրապետության Նախագահ, լինելով օրինականության երաշխավոր, ես ուզում եմ, որ Սահմանադրությունն ամենևին չկապվի անձերի կամ քաղաքական ուժերի հարաբերակցության հետ, այլ ընդհանրապես դուրս լինի քաղաքական կոնյունկտուրայից եւ իսկապես դառնա իրավական փաստաթուղթ:

Իսկ քաղաքական տեսակետից ինձ համար Սահմանադրության ընդունումը մեր պետության գերագույն խնդիրն է, որովհետեւ դրանով հայոց ազգային-ազատագրական շարժումը, որն սկսվեց 1988 թվականին, հասնում է իր տրամաբանական հանգրվանին: Շարժումը պարտավոր է իր պայքարը հանգեցնել այդ հանգրվանին, այսինքն՝ ժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունել Սահմանադրություն: Դրանից հետո արդեն բոլորովին երկրորդական կլինի, թե ով կգա իշխանության գլուխ, որովհետեւ արդեն բացառված կլինի իշխանության հասնելու որեւէ անօրինական ճանապարհություն, եւ Հայաստանում, ինչպես բոլոր քաղաքակիրթ պետություններում, իշխանությունները կփոփոխվեն միայն ու միայն ընտրությունների միջոցով: Դա կնպաստի նաեւ քաղաքական մթնոլորտի առողջացմանը, քաղաքական պայքարը կդարձնի ոիթմիկ: Հինգ տարին մեկ մթնոլորտը կշիկանա, տեղի կունենան նախընտրական սուր արշավներ, որ բնական է, բայց այդ ընթացքում ժողովուրդը, խորհրդարանը եւ գործադիր իշխանությունները կարող են հանգիստ զբաղվել իրենց բուն աշխատանքով:

Դա, ես կարծում եմ, այնպիսի կարեւոր խնդիր է, որի համար արժե պայքարել, որի համար արժե հրաժարվել անգամ Նախագահի պաշտոնից:

«Հայաստանի Հանրապետություն», 31 մարտի, 1993 թ.

[1] *Այդ պահին Սահմանադրության նախագծում այդպես էր նախատեսվում կոչել օրենսդիր մարմինը:*

ԵԼՈՒՅԹ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ 5-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(27 հունիսի, 1993 թ.)

Մեծարգո նախագահ,

Հարգելի գործընկերներ,

Թույլ տվեք ողջունել Հայոց համազգային շարժման 5-րդ համագումարի պատգամավորներին եւ հաջողություն մաղթել համագումարի աշխատանքներին:

Ելույթովս ես ոչ թե պատրաստվում եմ մանրամասն հաշվետվություն տալ մեր գործունեության մասին, այլ փորձել պատասխանել ձեզ հուզող հարցերին եւ ՀՀՇ-ին ու Հայաստանի ներկա իշխանություններին ներկայացվող մերկապարանոց մեղադրանքներին, որոնք հաճախ պարզապես վերածվում են հայհոյանքի ու գազրախոսության:

Համոզված եմ, որ ապագա պատմաբանի համար շահեկաներիչ է լինելու այն փաստը, թե պատմության կեղծարարությունից կշտացած եւ նրա դեմ ծառացած մեր հասարակությունն ինչպես է ժողովրդավարության պայմաններում հանդուրժում իր աչքի առջեւ եւ իր իսկ մասնակցությամբ տեղի ունեցող իրադարձությունների խեղաթյուրումը:

Սակայն պատմությունը թողնենք պատմության դատին եւ անցնենք բուն նյութի մատուցմանը՝ նշանաբան ունենալով ճշմարտությունը, միայն ճշմարտությունը:

1. Նախ՝ պատասխանատվության մասին, որը հատկապես վերջերս առավել շահարկման է ենթարկվում ընդդիմության կողմից. թե իբր ՀՀՇ-ն եւ Հայաստանի իշխանությունները փորձում են խուսափել պա-

տասխանատվությունից եւ այն բաղել ընդդիմության կամ արտաքին գործոնների վրա: Նման հարցադրումն ինձ համար ի բնե ծիծաղելի է. ծիծաղելի այն պարզ պատճառով, որ մարդկային պատմության մեջ ոչ մի մաճկանացուի չի հաջողվել խուսափել եթե ոչ աղարաղատությունից, ապա գոնե պատմության դատաստանից:

Եթե ժողովուրդն իր իվեներով իշխանությունն անվերապահորեն հանձնել է ՀՀՇ-ին ու նրա ներկայացուցիչը հանդիսացող Հանրապետության Նախագահին, ապա ո՞վ կարող է առարկել, որ ներկա իրավիճակի ողջ պատասխանատվությունն ընկնում է նրանց ուսերին: Այլ հարց է, թե ով ինչպես է գնահատում իրավիճակը, արդյոք չե՞ն շեշտվում նրա որոշ կողմերը եւ անտեսվում մյուսները, կամ հակառակը:

Ընդդիմության իրավունքն է, բայց նաեւ նրա բարոյականության չափանիշը, անտեսել առարկայական գործոնները եւ բոլոր անհաջողություններն ու դժվարությունները վերագրել իշխանություններին, մանավանդ եթե նա համոզված է, որ դրանով նպաստում է պետության ամրապնդմանը եւ ազգային շահերի պաշտպանությանը:

Բայց նաեւ իշխանությունների եւ ՀՀՇ-ի իրավունքն է, չխուսափելով հանդերձ պատասխանատվությունից, իր բացատրությունները ներկայացնել ժողովրդին, եւ, կախված այն բանից, թե կբավարարե՞ն նրան, արդյոք այդ բացատրությունները, ժողովուրդը ցույց կտա իր վերաբերմունքը հաջորդ ընտրություններում:

Բոլոր հաղաքակիրթ եւ իրավական պետություններում, որպիսին հավակնում է լինել նաեւ Հայաստանը, սա՛ է ժողովրդական դատաստանի իրականացման միակ եղանակը:

Ընտրություններում է միայն, որ վերջնական հաշվեկշռի են ենթարկվում հաջողություններն ու անհաջողությունները, առարկայական եւ ենթակայական գործոնները, վերջին հաշվով՝ պատասխանատվության չափը:

2. ՀՀՇ-ին ներկայացվող հաջորդ մեղադրանքն այն է, թե իբր նա, շարաշահելով Ղարաբաղյան շարժման լիցքը, մոլորեցնելով «խեղճ» ժողովրդին եւ օգտվելով նրա «տգիտությունից» ու անփորձությունից, անօրինաբար տիրել է իշխանությանը եւ վերածվել «իշխող խմբակցության», այլ կերպ ասած՝ խունտայի, թայֆայի եւ այլն:

Մի կողմ թողնելով այն, որ նման դատողությունը նախ եւ առաջ մեծագույն աբհամարհանք է սեփական ժողովրդի նկատմամբ, անդրադառնանք դրա բաղաքական նպատակադրմանը, որ, ցավոք, չափազանց պարզունակ ու թափանցիկ է: Կասկածի տակ դնելով իշխանությունների օրինականությունը եւ ոգեորված Վրաստանի, Ադրբեջանի, Տաջիկստանի օրինակներով ու ռուսաստանյան խմորումներով՝ ընդդիմությունը դրանով, փաստորեն, տեսական եւ իրավական հող է նախապատրաստում՝ արդարացնելու իշխանության համար մղելիք պայքարում միջոցների մեջ խտրություն չճանաչող իր գործողությունները:

Եթե խոսքը վերաբերում է Հայաստանի ներկա իշխանությունների լեգիտիմությանը՝ օրինականությանը, ապա դրա ամենապարեխոս վկայությունը ՀՀՇ-ի ստացած 45 տոկոս իվեներն են 1990 թ. մայիսին կայացած՝ Գերագույն խորհրդի ընտրություններում, եւ՝ Հանրապետության Նախագահի ստացած 83 տոկոս իվեները՝ 1991 թ. հոկտեմբերին տեղի ունեցած ընտրություններում:

Ասվում է, թե այդ արդյունքները ձեռք են բերվել ժողովրդին մոլորեցնելու գնով: ՀՀՇ-ն եւ Հանրապետության Նախագահը հանճար պետք է լինեին՝ ժողովրդին երկու-երեք տարի շարունակ մոլորեցնել կառավարելու համար: Ժողովրդին կարելի է տասնամյակներով ստոկացնել, կարելի է նաեւ մի պահ մոլորեցնել, բայց երկու-երեք տարի շարունակ դա ոչ ոհի չի հաջողվի: Եւ հետո, եթե մոլորեցնելն այդման հեշտ է, այդ ինչպե՞ս ժողովուրդը չմոլորվեց նախագահական որոշ թեկնածուների աղմկոտ, թանկարժեք ու լայնածավալ ընտրարշավներից:

Եթե խոսքը կրկին վերաբերում է իշխանությունների օրինականությանը, ապա նախ եւ առաջ կասկածելի է հենց ընդդիմությունը ներկայացնող՝ Գերագույն խորհրդի նորաբույս կուսակցական խմբակցությունների օրինականությունը: Ժողովուրդը ոչ մի դաշնակցական, ռամկավար կամ ԱԺՄ-ական չի ընտրել, բայց այսօր խորհրդարանում կան նման կուսակցական խմբակցություններ: Ժողովուրդն ընտրել է միայն կոմունիստներ, ՀՀՇ-ականներ եւ մի բանի անկախ պատգամավորներ: Միակ բացառությունը ԱԻՄ-ի ներկայացուցիչն է, որ ընտրվել է կուսակցական հիմունքներով: Դաշնակցության, Ռամկավար-ազատական կուսակցության եւ ԱԺՄ-ի խմբակցություններն առաջացել են խորհրդարանի ներսում կոմկուսից ու ՀՀՇ-ից անջատված պատգամավորների

ուժերով: Եթե այդ պատգամավորների գաղափարախոսության եւ բաղաքական մտածողության մեջ այդպիսի արմատական հեղաբեկում էր տեղի ունեցել, ապա տարեական բարոյականությունը եւ ժողովրդին չմոլորեցնելու վեհ գիտակցությունը պահանջում էին՝ հրաժարվել պատգամավորական աթոռներից եւ վերընտրվել որպես դաշնակցական, ռամկավար կամ ԱԺՄ-ական: Սա բաղաքական բարոյականության մեծագույն դաս կլիներ թե՛ ժողովրդի, թե՛ մանավանդ ներկա իշխանությունների համար:

3. Հաջորդ մեղադրանքը. ՀՀՇ-ն եւ Հանրապետության Նախագահն անհանդուրժող են եւ ձգտում են մենատիրության, որի վառ արտահայտությունը Նախագահի վարած կադրային բաղաքականությունն է՝ հիմնված բաղաքական նկատառումների եւ անձնական նվիրվածության սկզբունքի վրա: Ծեծված, չարչրկված, բայց դեռեւս իր հրապարակային պատասխանը չստացած մեղադրանք:

Նախ՝ հանդուրժողականության մասին: Եթե համեմատելու լինենք Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Վրաստանի, Ադրբեջանի հետ, որտեղ ժողովրդական շարժումները եկան իշխանության գլուխ, եւ անգամ՝ Ռուսաստանի հետ, ապա կտեսնենք, որ միայն Հայաստանում հաշվեհարդար չկիրառվեց նախկին կոմունիստական վարչակարգի եւ նրա ուժային լծակների՝ ներքին գործերի նախարարության ու Պետական անվտանգության կոմիտեի նկատմամբ: Կոմկուսը շարգելվեց, պետական վարչամեքենայի կոմունիստ պաշտոնյաները, միլիցիայի ու ՊԱԿ-ի աշխատակիցների մեծագույն մասը չհեռացվեցին աշխատանքից: Ավելին, կոմունիստական վերջին՝ Մարգարյանցի կառավարության 36 անդամներից 14-ը պահպանեցին իրենց տեղերը Վազգեն Մանուկյանի կաբինետում, չխոսած՝ փոխնախարարների մասին, որոնց մեծ մասը շարունակեց եւ այսօր էլ շարունակում է իր աշխատանքը: Թող չստեղծվի այն տպավորությունը, թե նման հանդուրժողականություն դրսեւորվել է միայն կոմունիստների նկատմամբ: Իմ կողմից Գագիկ Հարությունյանի կառավարությունում պետական նախարարի եւ առողջապահության նախարարի պաշտոններն զբաղեցնելու լուրջ, հետեւողական առաջարկ է եղել նաեւ դաշնակցական կուսակցության երկու հայտնի գործիչների՝ Կարո Ալեքսանիին եւ Գեւորգ Քեփենեկյանին: Առաջարկը

Քեփենեկյանի կողմից հարգելի պատճառաբանությամբ, իսկ Ալեքսանյանի կողմից՝ անհայտ նկատառումներով մերժվել է:

Անցնելով կադրերի ընտրության հարցում իբր թե դրսեւորվող հաղթական նկատառումներին՝ հարկ է նշել հետեւյալը. Վազգեն Մանուկյանի կառավարության 36 անդամներից միայն հինգն էին ՀՀՇ-ական. ինքը՝ Մանուկյանը, Հրաչ Բագրատյանը, Կարիճ Սարդարյանը, Աշոտ Մանուչարյանը եւ Ալեքսան Հակոբյանը: Գագիկ Հարությունյանի եւ Խոսրով Հարությունյանի կառավարությունում, որ կազմված էր 38 անդամներից, վեց ՀՀՇ-ական կար՝ Հրաչ Բագրատյանը, Վանո Սիրադեղյանը, Վազգեն Սարգսյանը, Վալերի Պողոսյանը, Վահան Շիրխանյանը եւ Սամվել Գեւորգյանը: Իսկ Հրաչ Բագրատյանի կաբինետում ՀՀՇ-ական են 38 անդամներից հինգը. ինքը՝ Բագրատյանը, Վազգեն Սարգսյանը, Վահան Փափազյանը, Վանո Սիրադեղյանը եւ Դավիթ Ջադյանը:

Այժմ կադրերին անձնական նվիրվածության սկզբունքով ընտրելու մասին: Այդ առիթով կարող եմ նշել միայն հետեւյալը՝ եզրակացությունները թողնելով հասարակության անաչառությանը: Մինչեւ հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ ընտրվելը ես անձամբ ծանոթ եմ եղել Վազգեն Մանուկյանի կառավարության 36 անդամներից միայն տասներեքին: Դրանք են՝ Վազգեն Մանուկյանը, Գեւորգ Վարդանյանը, Հրաչ Բագրատյանը, Կարիճ Սարդարյանը, Աշոտ Մանուչարյանը, Վահե Ստեփանյանը, Աշոտ Եսայանը, Հուսիկ Հարությունյանը, Եսայի Ստեփանյանը, Ռոբերտ Մեհրաբյանը, Հենրիկ Հովհաննիսյանը, Ալեքսան Հակոբյանը եւ Կարեն Սիմոնյանը: Գագիկ Հարությունյանի եւ Խոսրով Հարությունյանի կաբինետների 38 անդամների թվում նույն ժամանակից առաջ ծանոթ եմ եղել տասնվեցին՝ Հրաչ Բագրատյան, Գեւորգ Վարդանյան, Աշոտ Եսայան, Վահե Ստեփանյան, Բաֆֆի Հովհաննիսյան, Կարինե Դանիելյան, Գրիգոր Պողպատյան, Վանո Սիրադեղյան, Վազգեն Սարգսյան, Հակոբ Մովսես, Վալերի Պողոսյան, Ստեփան Բադալյան, Վահան Շիրխանյան, Սամվել Գեւորգյան, Վլադիմիր Մովսիսյան եւ Հուսիկ Հարությունյան: Ինչ վերաբերում է Հրաչ Բագրատյանի կաբինետին, ապա այստեղ նույնպես այդ մարդկանց թիվը կազմում է կառավարության 38 անդամներից տասվեցը. Հրաչ Բագրատյան, Աշոտ Եսայան, Վահե Ստեփանյան, Վահան Փափազյան, Կարինե Դանիելյան, Արմեն Եղիազարյան, Գրիգոր

Պողպատյան, Հակոբ Մովսես, Վանո Սիրադեղյան, Վազգեն Մանուկյան, Դավիթ Ջադոյան, Լեւոն Բարխուդարյան, Ստեփան Բադալյան, Վլադիմիր Մովսիսյան, Վազգեն Սարգսյան եւ Ռաֆայել Բազոյան: Սա էլ, ահա, կադրերի անձնական նվիրվածության մասին:

Ես ձեզ թերեւս ձանձրացրի անունների թվարկումով, սակայն այս հարցն այնքան շատ եւ կույր համաոությամբ է շահարկվում, որ կարծում եմ ավելորդ չէր մանգամըընդմիշտ սպառիչ պատասխան տալ դրան:

Այսպիսով, նկատի ունենալով վերը շարադրվածը՝ հարկ եմ համարում հիշեցնել, որ Հանրապետության Նախագահը կադրերի ընտրության հարցում առաջնորդվել եւ այսուհետ եւս առաջնորդվելու է նրանց մասնագիտական, կազմակերպչական կարողությունների եւ մարդկային հատկանիշների նկատառումով: Այս սկզբունքի հետեւողական գործադրման շնորհիվ հանրապետության կառավարման համակարգում հայտնվել են զգալի թվով կարող, մտավորական ուժեր, որոնք իրենց ձեռք բերած փորձառությամբ ի վիճակի են լուծել մեր սոցիալ-տնտեսական կյանքի խնդիրները:

Բերելով այս մանրամասները, ես չեմ փորձում, անշուշտ, խուսափել պատասխանատվությունից (կրկին այս շարաբաստիկ բառը) եւ ժխտել ներկա իշխանությունների ՀՀՇ-ական լինելու հանգամանքը: Հանրապետության ներկա իշխանությունները, այո՛, ՀՀՇ-ական են այնքանով, որքանով առաջնորդվում են ՀՀՇ գաղափարախոսությամբ եւ իրականացնում նրա ծրագիրը՝ իրավունք, որ տրվել է ժողովրդի կամքով:

4. ՀՀՇ-ին ներկայացվում է նաեւ ապակառուցողականության, Գերագույն խորհրդի գործունեությունը վիժեցնելու մեղադրանք: Թեեւ այս հարցին իր զեկուցման մեջ մանրամասն անդրադարձավ ՀՀՇ վարչության նախագահ Տեր-Հուսիկ Բաճանա Լազարյանը, ես նույնպես կարեւոր եմ համարում համառոտակի կանգ առնել դրա վրա:

Նման տպավորություն իսկապես կարող է ստեղծվել, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ խորհրդարանական ընդդիմությունը, որպես կանոն խուսափելով իր բուն՝ օրենսդրական պարտականություններ կատարումից, համառորեն ձգտում է Գերագույն խորհուրդը վերածել բաղաքական պայքարի թատերաբեմի, վերաբաշխել օրենսդիր եւ գործադիր իշխանությունների լիազորությունները, վերականգնել Սո-

վետների բացառնակ իշխանությունը, իսկ ՀՀՇ-ն նույնպիսի հետեւողականությամբ նախորդում է բոլոր նման փորձերը:

Սակայն երբ խնդրին մոտենում ենք Գերագույն խորհրդի բուն՝ օրենսդրական գործունեության տեսանկյունից, պարզվում է լիովին հակառակը: Անցած երեք տարվա ընթացքում Գերագույն խորհրդի բոլոր օրենքներն ու կարեւոր որոշումները ընդունվել են միայնումիայն ՀՀՇ-ի, անկախ պատգամավորների, մասամբ՝ կոմունիստական, ագրարային եւ ռամկավար-ազատական խմբակցությունների ջանքերով: Դաշնակցությունը եւ ԱԺՄ-ն, որպես կանոն, միշտ դեմ են եղել այդ օրենքներին ու որոշումներին, իսկ հաճախ ընդհանրապես չեն մասնակցել քվեարկություններին:

Ավելորդ չեմ համարում հիշեցնել, որ ՀՀՇ խմբակցությունը լուրջ, կառուցողական մոտեցում հանդես բերեց նաեւ Գերագույն խորհրդի բարեփոխման՝ այնքան խոսակցությունների առարկա դարձած օրինագծի ընդունման հարցում: Օրինագծի ընդունումը նորից խափանվեց դաշնակցության, ԱԺՄ-ի եւ կոմունիստների կողմից՝ այն պատճառաբանությամբ, թե իբր այն նոր լիազորություններ է տալիս Հանրապետության Նախագահին: Խոսքը վերաբերում է Գերագույն խորհրդի որոշումների նկատմամբ Նախագահի վետոյի իրավունքին: Առաջին հայացքից կարող է թվալ, թե Նախագահն իսկապես նոր լիազորություն է ձեռք բերում, բայց միայն առաջին հայացքից: Իսկ իրականում, ինչպես այսօր Գերագույն խորհրդի որոշումներն ընդունվում են 125 ձայնով, Նախագահի վետոն նույնպես պետք է հաղթահարվեր 125 ձայնով, այսինքն ոչինչ չէր փոխվում: Ընդդիմության նման դիրքորոշման բուն պատճառը, սակայն, այն էր, որ ՀՀՇ-ի եւ այլ պատգամավորական խմբերի պաշտպանած օրինագիծը զգալիորեն ճնշտացնում էր օրենքների ընդունման գործը. մի նպատակ, որ ամենևին չի մտնում դաշնակցության եւ ԱԺՄ-ի հաշվարկների մեջ:

Թե որն է, ուրեմն, խորհրդարանում ընթացող կառուցողական աշխատանքը, թող ժողովուրդը դատի:

5. Եւս մեկ ձանրակշիռ մեղադրանք. ՀՀՇ-ն եւ հանրապետության ներկա իշխանությունները հայհայեցին Հայաստանի տնտեսությունը, ժողովրդին հասցրին չքավորության եզրը՝ ուրանալով կոմունիստների

հսկայական շինարարական աշխատանքը, իրենք ոչինչ չկառուցեցին եւ այլն, եւ այլն:

Եթե անտեսելու լինենք համակարգային արմատական փոփոխությունների հետեւանքով առաջացած անխուսափելի բարդությունները, ապա անհնար է չհամաձայնել այս մեղադրանքի հետ, մանավանդ որ կյանքի շեշտակի վատթարացման անուրանալի փաստը խոսում է միմիայն դրա օգտին:

Բայց այդ հանգամանքին անտեսելու դեպքում պետք է ընդունել, որ ՀՀՇ-ն եւ Հայաստանի ներկա իշխանություններն են բայթայել նաեւ Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսի, Վրաստանի, Ադրբեջանի տնտեսությունները, որովհետեւ կյանքի[1] շեշտակի վատթարացման անուրանալի փաստն առկա է նաեւ այնտեղ:

Եթե համակարգային փոփոխությունների՝ նախկին խորհրդային բոլոր հանրապետություններին հատուկ բացասական հետեւանքներին ավելացնենք նաեւ Հայաստանի յուրահատուկ բարդությունները՝ ադեպտի գոտու վերականգնման, 300 հազար գաղթականների ադապտացիայի խնդիրներն ու, մանավանդ, Լեռնային Ղարաբաղում շարունակվող պատերազմը եւ հանրապետության համարյա լիակատար շրջափակումը, ապա կարծում եմ պատկերը լիակատար կդառնա:

Քանի դեռ Լեռնային Ղարաբաղում խաղաղություն չի հաստատվել, եւ չեն վերացվել Հայաստանի շրջափակումները, ոչ մի իշխանության, լինի ՀՀՇ-ական, դաշնակցական, թե կոմունիստական, չի հաջողվի ֆիշ թե շատ բարելավել հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը: Սա՛ է դրության իրական պատկերը, եւ սնանկ են այլ պատճառների փնտրտումները:

Այժմ անցնենք կոմունիստների եւ Հայաստանի ներկա իշխանությունների շինարարական գործունեության հարցին:

Նախ անուրանալի է, իհարկե, որ կոմունիստական վարչակարգի 70 տարիների ընթացքում Հայաստանում ծավալվեց հսկայական շինարարական աշխատանք, յուրացվեցին հարյուրհազարավոր հեկտար նոր հողեր, բնակչության թիվը հարապատկվեց, լուրջ ծաղկում ապրեց մշա-

[1] *Կյանքի բառը տպագիր տեքստում բացակայում է, ավելացնում ենք բուռ ձեռագրի:*

կույթը, միջնակարգ եւ բարձրագույն կրթությունը, գիտությունը, առողջապահությունը:

Սակայն, միաժամանակ անժխտելի է նաեւ, որ առաջին շենքը երեւանում կառուցվեց 1928 թվականին՝ խորհրդային իշխանության հաստատումից ութ տարի անց, որ հարյուրհազարավոր հայորդիներ զոհ գնացին գյուղի կոլեկտիվացման բռնարշավին եւ ստալինյան հալածանքներին, որ հայ մշակույթը կորցրեց իր հանճարեղ ներկայացուցիչներին՝ Եղիշե Չարենցին եւ Ակսել Բակունցին, որ անխնա ավերվեցին հայոց հազարամյա եկեղեցիները, որ կոմունիստների «փառաեղ» շինարարությունը պատճառ դարձավ Գյումրիի, Սպիտակի եւ աղետի գոտու տասնյակ հազարավոր բնակիչների հանճառակության, որ կոմունիստները նույն «փառաեղ» շինարարությունն իրականացրել են նաեւ Հայաստանի մայրաքաղաք Երեւանում, եւ Աստված մի՛ արասցե՛ կրկնվի նույն ուժգնության մի երկրաշարժ:

Եթե ընդդիմությունը շեշտում է անցյալի դրականը, որ մենք էլ չենք կարող ժխտել, ապա բարի պետք է լինի չմոռանալ նաեւ ողբերգականը՝ հույս չդնելով ժողովրդի «կարճ» հիշողության վրա:

Ինչ վերաբերում է ներկա իշխանությունների շինարարական գործունեությանը, ապա պետության կողմից, թեկուզ այս դժվարին պայմաններում, աշխատանքները երբեք չեն դադարեցվել, մանավանդ աղետի գոտում, իսկ վերջին երկու տարիներին պետության հովանավորությամբ Հայաստանի ողջ տարածքում ծավալվել է հսկայական անհատական շինարարություն, որի վկան կարող եմ լինել հանրապետության ցանկացած բնակավայրում, յուրաքանչյուր հայլափոխի:

6. Թերթից թերթ, հոդվածից հոդված, հանրահավաքից հանրահավաք հոչող մյուս մեղադրանքը. ՀՀՇ-ն փակեց «Նաիրիտն» ու ատոմակայանը, իսկ այժմ իշխանության գալով՝ անամոթաբար վերագործարկում է դրանք:

Այս հարցի հանգամանալից պարզաբանումը ես երկիցս տվել եմ խորհրդարանում, բայց դրանից մեղադրանքի արծարծումն ամենեւին չի դադարել:

«Նաիրիտն» իսկապես փակեց ՀՀՇ-ն՝ հսկայական ճնշում գործադրելով վերջին կոմունիստական Գերագույն խորհրդի վրա: Փակեց երեք

նկատառումով՝ քաղաքական, տնտեսական եւ հաղաքական: Շարժման տեսակետից հատկապես կարեւոր էին վերջին երկու նկատառումները:

«Նախիջեւան» հարյուրավոր միլիոնների արժութային ողջ հարստությունը տնօրինում էր Խորհրդային Միությունը՝ փոխարենը քանավորելով Հայաստանի մթնոլորտը եւ ոռւբլով վճարելով միայն աշխատավարձերի աշխատավարձը: ՀՀՇ-ն այդ պատճառով պնդում էր, որ եթե Հայաստանը քանավորվում է, ապա գոնե իմը պետք է տնօրինի այդ հարստությունը: Քաղաքական տեսակետից «Նախիջեւան»՝ որպես Խորհրդային Միության կառուցուկի արտադրության մոնոպոլիստի փակումը նշանակում էր ճզոր ճնշում կենտրոնական իշխանությունների վրա՝ Լեռնային Ղարաբաղի հարցում նրանից զիջումներ կորզելու նպատակով: Խորհրդային Միությունը կրեց հսկայական վնասներ. վայրկեայով արտասահմանից գնեց անհրաժեշտ ռումբը, բայց զիջումների չգնաց: ՀՀՇ-ի ակնկալիքը չարդարացավ, եւ Հայաստանի ներկա իշխանություններն, արդեն զուտ տնտեսական նկատառումներով, վերաձայեցին իրենց որոշումը:

Ինչ վերաբերում է ատոմակայանին, ապա նրա փակման գործում ՀՀՇ-ն որեւէ դերակատարություն չի ունեցել: Ճիշտ է՝ ՀՀՇ-ի ծրագրում արտահայտված է եղել ատոմակայանի փակման պահանջը. այդ պահանջը բազմիցս ճնշել է նաեւ ՀՀՇ-ի կազմակերպած հանրահավաքներում, բայց երբ 1989 թվականի հունվարին ԽՍՀՄ եւ այնուհետեւ Հայաստանի Մինիստրների խորհրդում ընդունվեց ատոմակայանի փակման որոշումը, ՀՀՇ-ն նրա վրա ամենեւին չէր կարող ազդել: Այն պարզ պատճառով, որ Շարժումն այդ ժամանակ լիովին կաթվածահար էր եղել. ձերբակալված էին «Ղարաբաղ» կոմիտեի բոլոր անդամները եւ Շարժման հարյուրից ավելի ակտիվիստներ: Շարժումը վերակենդանացավ միայն այդ ակտիվիստների բանտից ազատ արձակվելուց, 1989 թ. փետրվարի 28-ի Սումգայիթի ոճրագործության տարեդարձին նվիրված հանրահավաքից ու մարտի 8-ի ցույցից հետո:

Սա ամենեւին չի ասվում ժամանակի իշխանություններին մեղադրելու նպատակով. ով էլ լիներ իշխանության գլուխ, անհավոր երկրաշարժից հետո չէր կարող ընդունել այլ որոշում, քան ատոմակայանի փակումը՝ խուսափելու համար ավելի անհավոր վտանգներից: Ժողովրդի

եւ իշխանությունների այդ օրերի հոգեվիճակում նման որոշման ընդունումն արդարացված եւ անխուսափելի էր:

7. Մի ուրիշ լուրջ մեղադրանք. Արցախի եւ Հայաստանի վերամիավորման կարգախոսով գալով իշխանության գլուխ՝ ՀՀՇ-ն այնուհետեւ դավաճան դուրս եկավ եւ բազմիցս ծախեց Արցախը, որ հատկապես տարակուսանք է առաջացնում, քանի որ մեկ ապրանքը մի անգամ միայն կարելի է ծախել, մանավանդ, որ գնողն էլ մինչեւ այժմ չի հայտնաբերվել:

Որ Շարժումն իշխանության գալուց, ավելի ճիշտ՝ Հայաստանի եւ Ադրբեջանի անկախացումից հետո փոխեց իր կարգախոսը, նորից ավելի ճիշտ՝ իր հաղաքականությունը, միանգամայն իրավացի է:

Արցախի եւ Հայաստանի վերամիավորումը հնարավոր էր Խորհրդային Միության գոյության պայմաններում, երբ դա միջազգային իրավունքի տեսակետից դիտվում էր որպես ներքին սահմանների փոփոխություն:

Մինչդեռ Հայաստանի եւ Ադրբեջանի անկախացումից հետո անխուսափելիորեն անհրաժեշտ էր փոխել հաղաքականությունը՝ շեշտը դնելով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկի՝ ազգերի իրնորոշման վրա. մի սկզբունք, որ հաջողությամբ որդեգրեց իմը՝ Լեռնային Ղարաբաղը:

ՀՀՇ-ին եւ Հայաստանի իշխանություններին մեղադրողները, կարծում եմ, չեն կարող ժխտել, որ Լեռնային Ղարաբաղը երբեմ այնման միատարր, երբեմ այնման պաշտպանված, երբեմ այնման միջազգայնորեն ճանաչված չի եղել, որման այսօր: Արցախահայությունը ցրեց Ղարաբաղի հարցը ուժի միջոցով լուծելու Ադրբեջանի փայփայած նույսը: Ղարաբաղն ապացուցեց իրնապաշտպանության իր կարողությունը, որի շնորհիվ էլ պահպանում է իր գոյությունը: Իրնապաշտպանությունն այսօր Ղարաբաղի անվտանգության միակ երաշխիքն է, սակայն ժամանակն է այն փոխարինելու միջազգային երաշխիքների նոր եւ ավելի հուսալի համակարգով:

Այս առումով, Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի կողմից ԵԱՀԽ-ի խաղաղարար ծրագրի ընդունումն առաջին լուրջ քայլը պետք է համարել խաղաղության հաստատման, արցախահայության

անվտանգության եւ բնականոն կենսագործունեության ապահովման ու հիմնահարցի փոխզիջումային լուծման ճանապարհին:

Ծրագրի շուտափույթ իրականացումը բխում է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի կենսական շահերից, ուստի ոչ մի ջանք չպետք է խնայել նրա հաջողությունն ապահովելու համար: Ոչ մի ուժ չի կարող կասեցնել Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի իշխանություններին՝ հաստատակամորեն իրականացնելու խաղաղության տանող այդ ծրագիրը:

8. Տարածված ենթադրություններից է նաեւ այն, թե իբր ՀՀՇ-ն եւ Հայաստանի ներկա իշխանությունները դեմ են Սահմանադրություն ընդունելուն: Մասնավորապես՝ ինձ է վերագրվում մի միտք, այն է՝ «Հայաստանին Սահմանադրություն պետք չէ», որը ես երբեւիցե չեմ արտասանել: Բայց դա չի խանգարում, որ այն փոխանցվի բերնից բերան, չակերտների մեջ, որպես ուղղակի խոսք:

Ես իսկապես դեմ եմ եղել, եւ այսօր էլ գտնում եմ, որ ճիշտ եմ վարվել, որ Սահմանադրությունն ընդունվեր, ասենք՝ 1990–1991 թվականներին, երբ Հայաստանը գտնվում էր անկախության գործընթացի մեջ, թույլ պետական կառույցներով, անցման շրջանի խախուտ օրենսդրությամբ:

Համոզված եմ, որ այդ ժամանակ ընդունված Սահմանադրությունից այսօր ոչինչ չէր մնա, եւ ժողովրդի աչքում մենք հիմնովին կվարկաբեկեինք պետության կայունության խորհրդանիշը հանդիսացող այդ կարեւորագույն փաստաթղթի վարկը, որը կարող էր հետագայում լրջորեն անդրադառնալ բաղաքացիական համերաշխության եւ պետական կյանքի կազմակերպման վրա:

Այսօր, երբ արդեն Հայաստանը ձեռք է բերել իր լիակատար անկախությունը, երբ բավականաչափ հստակեցվել է իշխանությունների տարանջատման սկզբունքը, երբ կյանքում արդեն գործադրվել է նոր պահանջներին բավարարող օրենսդրությունը՝ միանգամայն հասունացած կարելի է համարել Սահմանադրության ընդունման պահը:

Ձեզ հայտնի պետք է լինի այն հսկայական աշխատանքը, որ այդ ուղղությամբ արդեն իրականացրել է Գերագույն խորհրդի Սահմանադրական հանձնաժողովը: Հունիսի 23-ին Սահմանադրական հանձնաժողովը հավանություն տվեց Սահմանադրության վերջնական նախագծին եւ այն ներկայացրեց Գերագույն խորհրդի քննարկմանը:

Եւ ամենայն զգոնությամբ պետք է նշեմ, որ Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքներին ամենաշահագրգիռ ու արդյունավետ մասնակցություն ունեցան նաեւ ՀՀՇ-ական պատգամավորները:

9. Հայաստանի ներկա իշխանություններն ամբաստանվում են նաեւ այն բանում, թե իբր նրանք, ի տարբերություն Ադրբեջանի իշխանությունների, հապաղեցին բանակի ստեղծման հարցում:

Ադրբեջանն ընթացավ Ռուսաստանի հետ առճակատման եւ խորհրդային բանակի բռնի ազգայնացման ճանապարհով:

Հայաստանն իրավունք ունե՞ր, արդյոք, ընթանալու նույն ճանապարհով, ինչպես պահանջում էին մեզ մեղադրողները:

Մի՞թե հասկանալի չէր Ադրբեջանի եւ Հայաստանի վիճակների տարբերությունը:

Մենք կարո՞ղ էինք վտանգել Ռուսաստանի հետ ունեցած մեր բարեկամությունը՝ գտնվելով, մեղմ ասած, ոչ այնքան նպաստավոր աշխարհագրական միջավայրում:

Սրանք հարցեր են, որոնք մանկամիտները միայն կարող են անտեսել:

Արդյունքում մենք հաղթակիրք կերպով՝ միջպետական համաձայնագրերով ստացանք մոտավորապես այն, ինչ Ադրբեջանն ստացավ առճակատման գնով՝ վերջին հաշվով դառնագույնս հատուցելով դրա համար:

Հայաստանը ստորագրեց նաեւ կոլեկտիվ անվտանգության պայմանագիրը եւ իր տարածքում պահպանեց ռուսական բանակի դիվիզիաներից մեկը, որն առաջիկայում, հավանաբար, կօժտվի ռազմական բազայի կարգավիճակով:

Այսօր Հայաստանի բանակն արդեն իրողություն է եւ ոչնչով չի զիջում Ադրբեջանի բանակին: Եւ այդ իրողությունը կերտվել է նշգրիտ հաշվարկված ու ժամանակին գործադրված քայլերի միջոցով, որ ոչ ոք չի կարող ժխտել, բանի որ փաստն անուրանալի է:

10. ՀՀՇ-ի եւ Հայաստանի ներկա իշխանությունների մասնացու «խարանահարից» է նաեւ հակառուսականությունը եւ, ո՛վ սարսափ, երդվյալ թուրքամետությունը:

Հակառուսականության շուրջ չեմ ուզում ծավալվել, անելով միայն հետեւյալ, թեկուզ մերկապարանոց թվացող հայտարարությունը:

Հայ-ռուսական հարաբերությունների երեքհարյուրամյա պատմության ընթացքում Հայաստանի եւ Ռուսաստանի կապերը երբեւիցե այնքան սերտ, այնքան անկեղծ, այնքան բարեկամական չեն եղել, որքան ելցինի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի օրոք, եւ դա միմիայն շնորհիվ այն բանի, որ երկու երկրներում էլ իշխանության են եկել իրապես ժողովրդավարական ուժեր, որոնց գործունեությունը հիմնվում է միջազգային իրավունքի նորմերի եւ համամարդկային արժեքների վրա: Հայ-ռուսական բարեկամության նորընծա ջատագովի դերին հավակնող Հայ հեղափոխական դաշնակցության կասկածելի եւ բացահայտ կապերը Ռուսաստանի պահպանողական, սեւհարյուրյակիչ տարրերի հետ իրականում սպառնում են վտանգել այդ բարեկամությունը:

Ինչ վերաբերում է թուրքամետությանը, ապա եթե այդպիսին է համարվում Թուրքիայի՝ որպես հարեւան երկրի հետ բնականոն հարաբերություններ զարգացնելու, փոխշահավետ համագործակցություն ծավալելու ձգտումը, այո՝ այդհանով մենք թուրքամետ ենք: Եթե այդպիսին է համարվում Թուրքիայի հանապարհներով ցորեն եւ կենսական այլ ապրանքներ ստանալու փաստը, այո՝ այդհանով նույնպես մենք թուրքամետ ենք: Միայն թե այդ դեպքում չպետք է մոռանալ, որ դեռես 1918 թվականին Առամ Մանուկյանի առաջին գործերից մեկը եղել է հայ ժողովրդի ջարդարար Թալիլ փաշայի ձեռքով Հայաստանի սովյալների համար 20.000 փութ ցորենի ստացումը:

11. Եւս մի՝ դժոխքի արժանի մեղք. ՀՀՇ-ն եւ հանրապետության ներկա «իշխանիկները» Հայաստանը դիտում են որպես սեփական կալվածք, պառակտում են Սփյուռքը, ոտնահարում կամ անտեսում սփյուռահայերի իրավունքները: Սփյուռքի պառակտման մեղադրանքը հասցեագրվում է հատկապես անցյալ տարվա հունիսի 29-ի իմ ելույթին:

Պարզունակ ձեռնածությամբ դաշնակցության ղեկավարությունը, որին ուղղված էր իմ ելույթը, իրեն նույնացնում է ողջ Սփյուռքին՝ փորձելով նրան հասցեագրել ելույթի պարունակած հարցադրումները:

Սփյուռքի պառակտման մեղադրանքը ներկայացնողները, կարծում եմ, նախեւառաջ պարտավոր էին ապացուցել, որ Սփյուռքը երբեւէ միավորված է եղել, իսկ դա նշանակում է՝ ապացուցել անապացուցելին:

Իրականում Սփյուռքն իր սկզբնավորման օրից աչքի է ընկել ընկերային, դավանաբանական, հայրենակցական, կրթական, մշակութային հատվածականությամբ, որը հատկապես խորացել է ավանդական բազմապահական կուսակցությունների գործունեության պատճառով: Հատվածականության խորացման գործում իրենց բացասական դերն են ունեցել նաեւ Խորհրդային Հայաստանի իշխանությունները եւ, մանավանդ, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն:

Սփյուռքի պառակտման մասին խոսողները կարծեք թե մոռացել են, թե ինչպես տասնամյակներ շարունակ ապրիլի 24-ին ավանդական կուսակցությունները յուրաքանչյուր գաղթօջախում կազմակերպում էին երեք առանձին սգահանդես, թե ինչպես նրանց շանթերով բաժանվեց հայ ժողովրդի սրբության սրբոցը՝ Հայ Առաքելական Եկեղեցին, թե ինչպես նրանց շանթերով այսօր էլ վիժեցվում է եկեղեցու վերամիավորման հրամայականը, չնայած գույց վեհափառների մերձեցման ամենայուրջ միտումներին, թե ինչպես Սփյուռքի կրթական համակարգը գրեթե ամբողջությամբ ենթարկված է կուսակցական բաժանման սկզբունքին եւ այլն: Սփյուռքի հրապարակախոսությանը ինչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր անհատ, կարծում եմ, պատրաստ է հավատալ, որ այս իրավիճակը եղել է սփյուռահայ մտավորականության մշտական մտահոգության առարկան:

Սփյուռքի միավորման միտումներն, ընդհակառակը, միանգամայն նոր երեւույթ են: Դրա առաջին խթանիչը հանդիսացավ 1988-ի երկրաշարժը, որը զորաշարժի հանեց ողջ հայությանը, իսկ երկրորդը՝ հայոց անկախ պետականության վերականգնումը, որի ձգողական ուժն առաջիկա տարիներին դառնալու է Սփյուռքի արմատական վերափոխման հիմքը: Դրան արդեն որոշակի նպաստ են բերում Հայաստանի նորաբաց դեսպանատները եւ «Հայաստան» հիմնադրամի արտասահմանյան կառույցները:

Մի հանի խոսք էլ սփյուռահայության իրավունքների ոտնահարման կամ անտեսման մասին, հարց, որը բորբոքվեց հատկապես Հայաստանի Հանրապետության հաղաղացիության օրենքի ընդունման առթիվ:

Ծիծաղելի է, ինքնին, ժխտել, որ Հայաստանը համայն հայության հայրենիքն է: Հայաստանի դռները բաց են յուրաքանչյուր սփյուռահայի համար, որը պատրաստ է իր նպաստը բերել պետականության ամ-

րապնդման, ժողովրդի բարգավաճման գործին: Եւ այսօր իսկ արդեն ինչ չեն այդպիսի անհատները, որոնք հաջողությամբ պաշտոնավարում են պետական կառավարման համակարգում՝ նախարարների, փոխնախարարների, խորհրդականների ու փոռնագետների պաշտոններով:

Հայաստանը պատրաստ է նաեւ բաղաքացիություն շնորհել ցանկացած սփյուռահայի՝ պայմանով սակայն, որ բաղաքացու լիակատար իրավունքներից, այդ թվում ընտրելու եւ ընտրվելու իրավունքից օգտվելու դեպքում, նա պետք է լիովին կատարի նաեւ իր պատասխանատվությունները՝ հարկերի մուծումը, զինապարտությունը եւ այլն:

12. ՀՀՇ-ի եւ Հայաստանի ներկա իշխանությունների[2] ամենամեծ «մեղքը», սակայն, Հայ Դատի եւ պահանջատիրության ուրացումն է:

Մոռադրություն չունենալով ծավալվել, ուզում եմ բավարարվել միայն հետեւյալ հայտարարությամբ:

ՀՀՇ-ի եւ ներկա իշխանությունների համար Հայ Դատն այսօր Հայոց պետականության կայացումն է, Հայաստանի բարգավաճումն ու հզորացումը, Լեռնային Ղարաբաղի հայապահպանումը: Յուրաքանչյուր սերունդ ազգի առջեւ ունի իր պարտքը: Եթե մեր սերնդին հաջողվի իրականացնել նշված ծրագիրը, նա իր պարտքը լիովին հատուցած կլինի:

ՀՀՇ-ն եւ Հայաստանի ներկա իշխանություններն իրենց առջեւ մշտապես դրել են միայն իրական եւ լուծելի խնդիրներ եւ այսուհետեւ էլ մտադիր չեն շեղվելու այդ գործելակերպից: Պատասխանները ու սնամեջ բաղաքական բաղձանքները միմիայն թունավորել են ազգի հոգին եւ հոխորտանքների ու սնապարծության թմրադեղով, թերարժեքության բարդույթով վարակել նրան:

Եթե փորձելու լինենք ներկա հայ իրականության խորհային երեւույթները վերածել փիլիսոփայական սահմանման, ապա անխուսափելիորեն կհանգենք հետեւյալ նշմարտությանը.

Հայոց պետականության կայացման, Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման եւ ընդհանրապես ազգային գաղափարախոսության դասեւորման ընդերքում այսօր ընթանում է անհաշտ պայքար բաղաքա-

[2] *Տպագրված տեքստում՝ «Հայաստանի եւ ՀՀՇ-ի ներկա իշխանությունների», ուղղում ենք բան Ձեռագրի:*

կան մտի երկու ուղղությունների՝ պատմական իրավունքի վրա հիմնված ավանդապահության եւ ռեալ իրականության վրա հիմնված ռացիոնալիզմի միջեւ:

Այդ պայքարը գոյություն է ունեցել նաեւ նախկինում, մասնավորապես 1918–1920 թվականներին՝ Հայոց առաջին հանրապետության օրոք: Դժբախտաբար, այն ժամանակ պայքարն ավարտվեց առաջին ուղղության հաղթանակով, որի հետեւանքով Հայաստանը կորցրեց թե՛ իր անկախությունը, թե՛ իր տարածքների զգալի մասը:

Այսօր հայ ժողովուրդը որոշ ընդդիմադիր կուսակցությունների ջանքերով նորից կանգնած է նույն փորձության, նույն երկընտրանքի առջեւ, թեեւ իրականում երկընտրանք գոյություն չունի, քանի որ առաջին տարբերակը մնկընդմիշտ ապացուցել է իր լիակատար սնանկությունը եւ կործանաբերությունը:

Հայ ժողովրդի բախտն այսօր լիովին կախված է պատմական փորձառությունից դաս քաղելու նրա ընդունակությունից եւ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի իշխանությունների բաղաքական կամքից:

Համոզված եմ, որ գոնե այս անգամ այդ ընդունակությունն ու կամքը նրանց չեն լքի, եւ պատմականության փոխարեն իրականությունը կդառնա մեր ազգային գաղափարախոսության հիմքը: Այդ գաղափարախոսության կողքի պատիվն առայժմ պատկանում է միայն ՀՀՇ-ին, նրանից անջատված ԱԺՄ-ին, ինչպես նաեւ Հայաստանի ու Սփյուռքի որոշ մտավորական շերտերի, սակայն վստահ եմ, որ այն շուտով համակելու է ողջ հայությանը:

Այսպանով, իհարկե, չի ավարտվում ՀՀՇ-ին եւ Հայաստանի ներկա իշխանություններին ներկայացվող մեղադրանքների, ամբաստանությունների, ավելին՝ հերյուրանքների, զրպարտությունների, բամբասանքների շարքը: Եւ թող ոչ ոք մոռ պատրանք չառաջանա, թե այս նկատքից հետո դրանք դադարելու են: Վաղը նորից կրկնվելու են, ավելացվելու են նորերը, եւ այսպես շարունակ: Մեր «մեղքերը» շատ են, եւ ավելի շատ էլ վերագրվելու են:

Ես ձեզ մաղթում եմ տոկունությամբ եւ համբերատարությամբ, արժանապատվությամբ ու մեծահոգությամբ կրել այդ ծանր, բայց եւ պատվաբեր լուծը:

Մաղթում եմ նաեւ՝ երբեմ ձեզ չերեւակայել ժողովրդի ծառաներ, որովհետեւ նա, ով իրեն հռչակում է ժողովրդի ծառա, ենթագիտակցաբար իրեն վեր է դասում ժողովրդից՝ նրան ծառայելը շնորհ նկատելով:

Շնորհակալություն ուշադրության եւ համբերության համար:

«Հայաստանի Հանրապետություն», 28 հունիսի, 1993 թ.: Հրատարակված՝ «Մեր սերնդի պարտքը Հայոց պետականության կայացումն է, բարգավաճումն ու հզորացումը» վերնագրով: ՀՀԱՆԱ, 28/27.06.93: Բնագիր: Ինքնագիր:

ԽՈՍՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԿԱՋՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԱՄԱՆԱԿ

(21 սեպտեմբերի, 1993 թ.)

Սիրելի հայրենակիցներ եւ հյուրեր,

Այսօր համայն հայությունը տոնում է Հայաստանի անկախության, Հայոց պետականության վերականգնման երկրորդ տարեդարձը: Տոնում է խառն ապրումներով՝ հպարտության ու մտահոգության, ձեռքբերման ու կորստի, հույսի ու տագնապի զգացումներով:

Բոլոր այս հակասական ու իրարամերժ ապրումներն էլ լուրջ հիմքեր ունեն, բոլորն էլ արդարացված են: Անխառն է միայն մեկ զգացում, մեկ վեհ գաղափար. անկախությունը՝ որքան էլ դժվարին, որքան էլ տառապալից, այնուամենայնիվ նախընտրելի է օտարի թեկուզ ամենահեշտալից լծից. անկախությունն անսակարկելի է: Միայն, ահա, այս խորախորհուրդ գիտակցությունն է, որ իրականությունը դարձնում է տանելի, իսկ անցյալն՝ անդառնալի:

Կարծում եմ, ավելորդ է հաշվետվության կարգով թվարկել անկախության երկու տարվա ձեռքբերումներն ու բացթողումները: Նախ՝ բանի որ դրանք հայտնի են բոլորին, երկրորդ՝ բանի որ պետության կայացման գործում երկու տարին սոսկ ակնթարթ է, ոչ ենթակա ժամանակակիցների արդար դատին, եւ վերջապես՝ բանի որ ավելի էական են այսօրվա խնդիրներն ու ապագա ծրագրերը:

Իսկ խնդիրներից ծանրագույնն ու դժվարլուծելին մեզ համար եղել եւ առայժմ մնում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: Մյուս

բարդությունները՝ տնտեսական շրջափակումները, մատակարարման խափանումները, արդյունաբերության անկումը, սոցիալական դժվարությունները սոսկ այս խնդրի ածանցյալն են: Ուստի բանի դեռ չի լուծված արցախյան կնճիռը, Հայաստանի բնականոն զարգացումը հարցական է, եթե չասենք՝ անհնար:

Ղարաբաղյան հակամարտությունն այսօր ընդհուպ մոտեցել է իր եզրաժամային սահմանագծին, որ նդի է միաժամանակ թե՛ պայթյունալի հանգուցալուծմամբ, թե՛ խաղաղության հաստատման բացառիկ հնարավորությամբ: Հակամարտող կողմերի՝ Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի ռազմական կամքի դրսեւորումից, միջազգային հանրության օբյեկտիվ հետեւողականությունից է կախված, թե ինչպես կօգտագործվի այդ հնարավորությունը, որպիսին չի եղել ո՛չ անցյալում, ո՛չ էլ, թերեւս, կլինի ապագայում:

Մեզ համար մանավանդ կարեւոր է գիտակցել այն ակնհայտ նշմարտությունը, որ այսօր, ավելի քան երբեւէ, խաղաղությունը կախված է հայկական կողմի, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի դիրհորոշումից, որ հսկայական պատասխանատվություն է դնում մեզ վրա: Անտեսել այս նշմարտությունը եւ դրանով փորձել խուսափել պատասխանատվությունից՝ կնշանակեր դրսեւորել միամիտ ու աններելի ֆաղաքական անհեռատեսություն եւ Հայաստանն ու Ղարաբաղը ենթարկել լուրջ վտանգների:

Խաղաղությունը չափազանց մոտ է, եւ մոտ է այնքանով, որ ուժերի հարաբերակցության ներկա դրությամբ առաջին անգամ ստեղծված է փոխզիջման իրական հնարավորություն, քանի որ առաջին անգամ կողմերն ունեն սակարկության հավասարարժեք լծակներ: Փոխզիջման այս հնարավորությունն է, աճա, որ իրենին խաղաղությունը ձեռնտու է դարձնում միաժամանակ թե՛ ադրբեջանական, թե՛ ղարաբաղյան կողմի համար:

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները բազմիցս հավաստել են իրենց պատրաստակամությունը՝ կատարելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 822 եւ 853 բանաձեւերի պահանջներն ու ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի խաղաղարար ծրագիրը, սակայն ներկայացնելով մի շարք կարեւոր առաջարկություններ, որոնք հանգում են հետեւյալին.

1. Խաղաղության գործընթացում Լեռնային Ղարաբաղը պետք է ճանաչվի որպես հակամարտության լիիրավ կողմ. այսինքն՝ Ղարաբաղի նկատմամբ պետք է կիրառվի նույն ստանդարտը, որ կիրառվում է նման տիպի բոլոր հակամարտություններում:
2. Ռազմական գործողությունների դադարեցման միջոցառումների շարքում պետք է ապահովվի Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի շրջափակումների լիակատար վերացումը:
3. Ադրբեջանի գրավված տարածքներից Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի դուրսբերումից հետո խաղաղարար ծրագիրը պետք է լիովին երաշխավորի ռազմական գործողությունների վերսկսման անհնարինությունը:
4. Հակամարտության հետ կապված իրավաֆաղաքական խնդիրները, այդ թվում առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, պետք է լուծվեն ԵԱՀԽ-ի Մինսկի կոնֆերանսում:

Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղն, այսպիսով, առաջնորդվելով ոչ թե ժամանակավոր հրադադարի, այլ կայուն խաղաղության հաստատման շահագրգռությամբ, դրսեւորում են միանգամայն կառուցողական մոտեցում, որը, հուսով ենք, պատշաճ արձագանք կգտնի միջազգային հանրության մոտ:

Մեր առջեւ կանգնած հաջորդ կարեւոր խնդիրը վերաբերում է Հայաստանի ներքին ֆաղաքական կյանքին եւ պետական շինարարության ոլորտին:

Ոչ ոք չի կարող ժխտել անկախության տարիներին Հայաստանում տիրող համեմատական կայունությունը, իրավիճակի կառավարելիությունը, ժողովրդավարական ազատությունների ու շուկայական հարաբերությունների լուրջ նախադրյալների գոյությունը, որով նա շահեկանորեն տարբերվում է նախկին խորհրդային մի ամբողջ շարք հանրապետություններից:

Եակոմունիստական Հայաստանում չի արգելվել ոչ մի ցույց կամ միտինգ, չի փակվել ոչ մի թերթ, չի կասեցվել ոչ մի կուսակցության գործունեություն, չի արձանագրվել ոչ մի ֆաղբանտարկյալ:

Օրենսդիր եւ գործադիր իշխանությունները, երբեմն սրվող հակասություններով հանդերձ, առայժմ խուսափել են միմյանց գործունեությունը վիժեցնելու վտանգից: Խորհրդարանը դեռեւս չեղյալ չի

հայտարարել Հանրապետության Նախագահի որեւէ հրամանագիր, Հանրապետության Նախագահն իր ներքին գործնականում չի օգտագործել վետոյի իր իրավունքը խորհրդարանի ընդունած որեւէ օրինագծի նկատմամբ:

Առայժմ անտեսված, բայց իրականում խորհային տեղաշարժեր են կատարվել մարդկանց հոգեբանության մեջ, մանավանդ գյուղական բնակչության շրջանում: Դառնալով հողի եւ իր արտադրանքի տերը, գյուղացին այսօր պետության ստուկից վերածվել է պետության պարտնյորի, որն արդեն թելադրում է իր պայմանները:

Դանդաղորեն, դեռեւս ոչ ցանկալի տեմպերով, անկատար օրենսդրության պայմաններում, համենայն դեպս, իր ճանապարհն է հարթում մասնավոր ձեռներեցությունը, նկատելի թափ է ձեռք բերում հանրապետության ողջ տարածքում իրականացվող անհատական շինարարությունը:

Ժողովրդավարական ազատությունների եւ շուկայական հարաբերությունների այս ակնհայտ դրսեւորումները, սակայն, դեռեւս մեծապես կախված են սուբյեկտիվ գործոններից, նրանք չեն ինստիտուցիոնալիզացվել, ինչը նույն սուբյեկտիվ գործոնների պատճառով հղի է պետության կայունությանն ու օրինականության ապահովմանն սպառնացող լուրջ վտանգներով:

Ուստի այս առթիվ ես չեմ կարող չարտահայտել իմ խորին գոհունակությունը հանրապետության Սահմանադրության մշակման ուղղությամբ խորհրդարանի եւ քաղաքական կուսակցությունների կողմից վերջին շրջանում գործադրվող ջանքերի կապակցությամբ, որ պերեստրոյկայի վկայությունն է նման վտանգներից խուսափելու եւ ժողովրդավարական, իրավական պետության վերջնական կայացումը Սահմանադրությամբ երաշխավորելու բարձր գիտակցության:

Ես վստահ եմ, որ հայ ժողովուրդը պատվով դուրս կգա թե՛ Լեռնային Ղարաբաղի ճակատամարտության հաղթահարման ծանր փորձություններից, թե՛ հանրապետության Սահմանադրության ընդունման բարդ գործընթացից:

Այս լավատեսական ինչերանգով էլ ավարտելով խոսքս, ուզում եմ շնորհավորել բոլորիդ մեր ազգային մեծագույն տոնի առթիվ եւ մաղթել

ձեզ՝ պատմություն կերտողի հպարտությամբ լծվել հայրենիքի հզորացման ու բարգավաճման արդազան գործին:

Կեցցե՛ ազատ, անկախ Հայաստանը՝ հայ ժողովրդի դարավոր իղձերի մարմնացումը:

«Հայաստանի Հանրապետություն», 22 սեպտեմբերի, 1993 թ.:
Հրատարակված՝ «Լեւոն Տեր-Պետրոսյան. «Անկախությունն անսակարկելի է» մերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/21.09.93: Բնագիր: Ինքնագիր:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ՝ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(19 նոյեմբերի, 1993 թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Վերջին օրերին հանրապետության առանց այն էլ ծանր սոցիալ-տնտեսական կացությունը նոր փորձության ենթարկվեց՝ կապված դրամաշրջանառության կազմալուծման եւ հիպերինֆլյացիայի նոր դրսեւորումների հետ: Նման իրավիճակներ ստեղծվեցին բոլոր այն նորանկախ երկրներում, որտեղ դեռեւս պաշտոնական շրջանառության մեջ էին ԽՍՀՄ պետբանկի եւ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի 1961–1992 թթ. նմուշի դրամանիշերը:

Ձեզ հայտնի է, որ Հայաստանը նախկին խորհրդային Միության մի շարք հանրապետություններ եւ Ռուսաստանի Դաշնության հետ դեռեւս այս տարվա սեպտեմբերին համաձայնագիր ստորագրեց միասնական ռուբլու գոտի ստեղծելու վերաբերյալ: Ստորագրվեց նաեւ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ երկկողմանի համաձայնագիր:

Միասնական ռուբլու գոտու ստեղծումը եւ դրա նկատմամբ մեր դիրհարոշումը թելադրված էր ինչպես ընթացիկ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, այնպես էլ երկարաժամկետ տնտեսական, սոցիալական, հաղաքական ու աշխարհաքաղաքական նկատառումներով:

Մենք արեցինք մեզանից կախված ամեն ինչ՝ միասնական ռուբլու գոտու ձեւավորման խնդիրը հաղթակիրթ, փոխհամաձայնեցված հայլերով իրականացնելու համար:

Ռուսաստանի կոչտ դիւրորոշման եւ անջատ գործողութիւնների պատճառով. սակայն, ֆինանսական համակարգի փլուզման գործընթացը դուրս եկավ վերահսկելի նունից, եւ պահանջվեց ընթացիկ մոտեցումների վերանայում:

Աղյուսիում Ռուսաստանն իմը դուրս մնաց ռուբլու գոտուց. օրերս նրան հետեւեցին Ղազախստանն ու Ուզբեկստանը, եւ մենք նույնպես պետք է կատարենք մեր ընտրությունը:

Ռուբլու գոտու ձեւավորման նման հեռանկարը, որքան էլ անցանկալի, այնուամենայնիվ, մեր կողմից կանխատեսվում էր, ու դրան համապատասխան ձեռնարկվում էին անհրաժեշտ քայլեր: Մասնավորապես՝ ամբողջությամբ տպագրվեց եւ հանրապետություն փոխադրվեց ազգային դրամանիշը՝ Դրամը: Ակտիվ բանակցություններ ծավալվեցին Միջազգային վալյուտային ֆոնդի, տարբեր երկրների հետ՝ ազգային դրամի ճնարավոր ներդրման դեպքում դրա կայունությանն օժանդակող քայլեր ձեռնարկելու ուղղությամբ:

Դրամաշրջանառության կարգավորման համալիր միջոցառումներ մշակելու եւ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից 1993 թ. հոկտեմբերի 13-ին ստեղծվեց հատուկ պետական հանձնաժողով:

Եւ ահա, համակողմանիորեն գնահատելով ստեղծված նոր կացությունն ու առաջնորդվելով օրենքով իրեն վերապահված իրավասություններով, Դրամաշրջանառության կարգավորման պետական հանձնաժողովը որոշել է 1993 թվականի նոյեմբերի 22-ի 00 ժամից Հայաստանի Հանրապետության տարածքում դադարեցնել ԽՍՀՄ պետբանկի եւ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի 1991–1992 թթ. նմուշի հազար, հինգ հազար եւ տաս հազար ռուբլիանոց դրամանիշերի շրջանառությունը:

Նման քայլը ենթադրում է.

նախ՝ կանխել այլ վայրերից շրջանառությունից դուրս եկող դրամանիշերի ներհոսքը Հայաստանի Հանրապետություն,

երկրորդ՝ կառավարելի դարձնել դրամաշրջանառության ամբողջ ծավալը եւ այն ծառայեցնել մեր տնտեսության կայունացման ու բնակչության սոցիալական պաշտպանվածության խնդիրների լուծմանը,

եւ երորդ՝ տնտեսական իրճնուրույնության նոր հիմքի վրա փնտրել Ռուսաստանի ու նախկին խորհրդային Միության մյուս հանրապետությունների հետ համագործակցության հետագա ծավալման առավել գործուն ու փոխշահավետ ուղիներ:

Հանձնաժողովի որոշումը միաժամանակ ենթադրում է 1993 թ. նոյեմբերի 22-ից շրջանառության մեջ դնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 1993 թվականի նմուշի 10, 25, 50, 100, 200 եւ 500 դրամանոց բանկային տոմսերը: Դրանով իսկ շրջանառության մեջ է դրվում հայկական դրամը՝ ռուբլու հետ 1-ը 200-ի հարաբերությամբ (այսինքն՝ 1 դրամը հավասար կլինի 200 ռուբլու):

Այս որոշումն ունի սկզբունքային նշանակություն եւ մեզանում ստեղծում է հասարակական-տնտեսական հարաբերությունների որակապես նոր միջավայր:

Նման քայլը ոչ միայն ենթադրում է հաղթահարել այն բոլոր բարդությունները, որոնք առաջացել են հիպերինֆլյացիայի ու դրամաշրջանառության հասի հետեւանքով, այլեւ նախադրյալներ ստեղծել տնտեսության կայունացման ու տնտեսական վերափոխումների իրականացման համար:

Նոր իրավիճակը թելադրում է հստակ, վճռական ու հետեւողական աշխատանք բոլոր օղակներում: Այլընտրանք այլեւս գոյություն չունի: Ամբողջ հանրապետության եւ մեզանից յուրաքանչյուրի աշխատանքով է պայմանավորված, թե ինչպիսին կլինի հայկական դրամի կայունությունը, գնողունակությունը, փոխարկելիությունը: Այս խնդրին պետք է ծառայի մեր ամբողջ տնտեսության աշխատանքի առավել արդյունավետ կազմակերպումը:

Մեզ համար, անտարակույս, նախընտրելի կլիներ ազգային դրամ մտցնել շրջափակման հաղթահարման, ծնոան հետ կապված բազմաթիվ հիմնահարցերի լուծման, տնտեսության որոշակի կայունության ու մարդկանց սոցիալական պաշտպանվածության թեկուզ նվազագույն երաշխիքների ստեղծման պայմաններում:

Սակայն նման ընտրության հնարավորություն մեզ տրված չէ: Որքան էլ դժվարին ու բարդ լինի իրավիճակը, մենք պատրաստ ենք ոչ միայն շրջանառության մեջ դնել մեր ազգային դրամանիշը, այլեւ դրա

վարկը ճավուր պատշաճի պահելու խնդիրը ճամարեմ մեզանից յուրաքանչյուրի արժանապատվության ճարցը:

Խիստ կարեւոր է դրամանիշերի փոխանակության գործի ճստակ կազմակերպումը: Պետական ճանձնաժողովն այս ուղղությամբ ձեռնարկել է անճրաժեշտ քայլեր: Ստեղծվել են փոխանակային ճանձնաժողովներ բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, բանկային բաժանմունքներում, տեղական խորճուրդներում:

Հանրապետության ներքին շուկան արժութային ճնարավոր ներխուժումից պաշտպանելու ճամար նախատեսվում է ճանրապետության յուրաքանչյուր չափաճաս քաղաքացու ճնարավորություն տալ ուղղակիորեն փոխանակել 50 ճազար ռուբլի՝ ստանալով 250 դրամ: 50 ճազար ռուբլուց ավելի 1991–1992 թվականների ճազար, հինգ ճազար եւ տաս ճազար դրամանիշով գումարներն անճրաժեշտ է մինչեւ նոյեմբերի 26-ը ներարոյալ ձեւակերպել որպես ավանդ խնայբանկի ճատուկ ճաշիվներում:

Հանրապետության բոլոր քաղաքացիները, մասնավորապես խոսս ուղղում եմ մեր գյուղացիությանը, ովքեր իրենց վաստակած եկամուտները կձեւակերպեն որպես ավանդ, կարող են վստաճ լինել, որ դրանք կգտնվեն ապաճով վիճակում, եւ կարճ ժամանակից ճետո նրանք ազատորեն կարող են տնօրինել իրենց ճաշիվները: Ձեռնարկված քայլը միայն ու միայն ճանրապետության ներքին շուկան պաշտպանելու նկատառումներից է դրդված: Այո, կլինեն նաեւ մարդիկ, որոնք ստեղծված վիճակից սեփական շաճ կորզելու նպատակով կփորձեն դիմել տարբեր ձեռնածություններ ու նաեւ խուճապային տրամադրություններ ստեղծել: Ուստի ցանկանում եմ ամենայն որոշակիությամբ նշել, մեր քաղաքացիների վաստակած բոլոր եկամուտները ամենաճուսալի ձեւով կպաշտպանվեն ու կփոխանակվեն (թե՛ ուղղակի եւ թե՛ ավանդների ձեւով), իսկ տարաբնույթ ոտնձգությունները կկասեցվեն օրենքի ամբողջ խստությամբ:

Ես ցանկանում եմ շեշտել նաեւ շրջանային խորճուրդների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարության, բանկային հիմնարկների ու փոխանակային ճանձնաժողովների ողջ պատասխանատվությունը: Այս գործում որեւէ թերացում կամ զանցաճ ճավասարազոր է ուղղակի դավաճանության:

Դրամի փոխանակման կազմակերպումը զուտ տեխնիկական խնդիր է, եւ Պետական ճանձնաժողովը, ճանրապետության կառավարությունն ամեն ինչ պետք է անեն այն ճաջողությամբ եւ ճանրապետության բնակչության ճամար նորմալ ու կազմակերպված պայմաններում իրականացնելու ուղղությամբ:

Սակայն գլխավոր ճարցը դեռես առջեւում է:

Անճրաժեշտություն է առաջանում լրջորեն սրբագրել ամբողջ տնտեսական քաղաքականությունը, էապես շտկել բանկային համակարգը, բարձրացնել ճակերի խթանիչ դերն ու ճակային եւ բյուջետային քաղաքականության արդյունավետությունը, լրջորեն բարելավել կառավարման ամեն մի օղակի գործունեությունը:

Կառավարման ամբողջ ճամակարգը պետք է նպաստի տնտեսության աշխուժացման, արտաճին առեւտրի խթանման, ներմուծումների ծավալների մեծացման, դրամաշրջանառության վերաճսկելիության գործին: Սա ճանրապետության օրենսդիր ու գործադիր իշխանություններից պաճանջում է նախկին մի շարք որոշումների վերանայում եւ ճամակարգված աշխատանք:

Միաժամանակ ամենաակտիվ աշխատանքներ պետք է տարվեն դրամի արժութային ապաճովման խնդրի ճետագա լուծման ուղղությամբ:

Սիրելի ճայրենակիցներ, ցրտի ու կարիքի ծանր բեռի տակ կքած՝ մեզանից յուրաքանչյուրի ճամար նոր փորձություն, նաեւ անխուսափելի քայլ է դրամաշրջանառության այս վերափոխումը: Պետք է ճուսալ, որ այն ճնարավորություն կտա ավելի ներգործուն դարձնել տնտեսության կայունացմանն ուղղված քայլերը եւ ավելի ընդունելի ու ճեռանկարային ձեւեր գտնել նորանկախ պետությունների տնտեսական ինտեգրացիայի ու ճամագործակցության ճետագա խորացման ուղղությամբ:

Բոլոր պարագաներում մեր ազգի ու ժողովրդի ճամար պատմական ու արժանաճիշատակ իրադարձություն է ազգային դրամի շրջանառությունը, եւ եկեք այն ընդունենք լավատեսությամբ ու ճաստատակամությամբ՝ վստաճությամբ տոգորված վաղվա օրվա ճանդեպ:

«Հայաստանի Հանրապետություն», 20 նոյեմբերի, 1993 թ.:
Հրատարակված՝ «Ազգային դրամի շրջանառությունը մեր ժողովրդի համար արժանահիշատակ իրադարձություն է» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/19.11.93: Բնագիր: Մեքենագիր – ձեռագիր:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՕԲՇԶԱՅԱ ԴԱԶԵՏԱ» ԹԵՐԹԻՆ

(24 դեկտեմբերի, 1993 թ.)

– 1988 թվականի աշնանը Երեւանում ես ներկա էի հանրահավաքի, որը Դուք էիք անցկացնում: Ղարաբաղյան շարժման ամենաթեժ ժամանակներն էին: Նոր էր պայթել Սումգայիթը, եւ, բնականաբար, կրքերը շիկացած էին: Հիշում եմ, թե ինչ տակտով էիք դուք կրքերը մեղմում՝ կոչ անելով հավաքվածների ինտերնացիոնալ զգացմունքներին: Ի՞նչ է ձեզ համար ինտերնացիոնալ գաղափարը:

– Ինձնից բանասեր, ուզում եմ միանգամից նկատել, որ սոցիալիստների թեթեւ ձեռով «ինտերնացիոնալիզմ» տերմինը վաղուց աղճել զրկվել է բարձր իմաստից եւ ձեռք բերել բաղաքական, իսկ ավելի ճիշտ՝ դասակարգային նշանակություն: Նկատի ունենալով հենց այդ նեղ բաղաքական նշանակությունը՝ ինտերնացիոնալիզմի մասին կարելի է խոսել միայն ժողովուրդների, ազգերի միջեւ հավասարության առկայության դեպքում, բանի որ դրա խախտումը անխուսափելիորեն հանգեցնում է նացիոնալիզմի: Ես կգերադասեի այլ տերմին՝ հումանիզմը, որի մեջ դնում եմ ոչ բարձր, ու դրանով իսկ վերացական գաղափար, այլ՝ ամենապարզ մարդկային կարեկցանք: Մնացած ամեն ինչ՝ սեր, բարեկամություն, համերաշխություն եւ, եթե ուզում եմ՝ ինտերնացիոնալիզմ, ածանցված են դրանից:

– Դուք դարձաք նախկին Միության բոլոր հանրապետություններից ամենամիատարր պետության ղեկավարը: Դուք եղել եք նրա ինքնուրույնության ակտիվ մարտիկներից մեկը: Ձեզ ժամանակակից, ճանաչված գրող Հրանտ Մաթեւոսյանն իր հարցազրույցներից մեկում

ասել է, որ իր համար առանձնահատուկ հպարտություն էր իրեն մեծ տերության քաղաքացի զգալը: Հայաստանի անկախության համար պայքարում ի՞նչ ազգային խնդիրներ էիք լուծում Դուք:

– Դիմ դիպած նշանակետին. այդ ճարցը հայկական բաղաքական կյանքի ամենասուր բանավեճի առարկան է: Իմ տեսակետը հետեւյալն է. հայ ժողովուրդը սովորական ժողովուրդ է, ոչ լավ եւ ոչ էլ վատ մյուսներից, դրա համար էլ նա արժանի է ունենալ այն ամենը, ինչն ունեն այլ ժողովուրդներ, այդ թվում նաեւ իր պետականությունը: Սակայն ես հատակ տարբերություն եմ տեսնում ժողովրդի եւ հասարակության միջեւ: Իսկ այստեղ մենք ստիպված ենք խոստովանել, որ հայ հասարակությունը հետու է կատարելությունից: Պետականության ձեռքբերումն ինձ համար իմաստնպատակ չէ: «Ազատ, անկախ Հայաստան» կարգախոսում հենց առաջինն է ինձ ներկայանում որպես նպատակ, իսկ երկրորդը՝ ընդամենը որպես արժանի հասարակության կառուցման համար պատռադիր միջոց: Դժվար չէ գլխի ընկնել, որ իմ դիրհորոշումը կատաղի ինդադատության է արժանանում ազգային-հայրենասերների կողմից, որոնք հայ ժողովրդին վերագրում են գրեթե փրկչական նախասահմանում: Իսկ ես օրգանապես չեմ ընդունում փրկչական ամրիցիաները՝ այն համարելով ֆաշիզմի հետ սահմանակցող՝ բաղաքականության ամենավտանգավոր գաղափարախոսականացում:

– Դուք ուսանել եք Պետերբուրգում, գիտեք Ռուսաստանը: Ձեր երկիրը երբեք չի ձգտել կապերը վերջնականապես խզել Ռուսաստանի հետ, Դուք ամենասկզբից վճռականորեն հայտարարեցիք ԱՊՀ-ից դուրս չգալու մասին: Եթե հաշվի չառնենք տնտեսական եւ քաղաքական նկատառումները (իսկ չէ՞ որ նախկին հանրապետությունների շատ ղեկավարներ «ռուսական ուժի» վախից դրանք էլ հաշվի չեն առնում), ի՞նչն է ձեզ ստիպում չտարանջատվել Ռուսաստանից, այլ գնալ նրա հետ մերձեցման:

– Անհամեմատություն չեմ տեսնում, եթե թույլ տամ ինձս ինձնից մեջբերում անել: 1991 թվականի փետրվարի 28-ին ես երույթ ունեցա մեր խորհրդարանի նիստում առաջարկելով մերժել ԽՍՀՄ-ը պահպանելու գործաչովյան հանրաքվեն, հիմնվելով հետեւյալ փաստարկների վրա. կայսրության փլուզումն անխուսափելի է, այն կախված չէ առանձին անհատների կամ բաղաքական ուժերի կամքից, այլ հանդիսանում է սոցիալական, տնտեսական եւ բաղաքական հանգամանքների հանրագումարի հետեւանք: Սակայն ԽՍՀՄ փլուզումը չի նշանակում անհետ վերացում պատմականորեն ձեւավորված այն միասնության, որը հարյուրամյակներ շարունակ երկրագնդի հայտնի տարածքում ապրող մարդկանց համար հանդիսացել է համակեցության եղանակ: Այստեղ ես նկատի ունեի, առաջին հերթին, հոգեւոր տարածքը, բանի որ գաղտնիք չէ, որ Ռուսական կայսրության եւ ԽՍՀՄ գրեթե բոլոր ժողովուրդների համար հարյուրամյակներ շարունակ համաշխարհային բաղաքակրթությանը շփվելու միակ ուղին եղել է ռուսական մշակույթը:

Վստահ եմ, որ ինչպես այսօր հոգեւոր առումով մոտ են Բրիտանական Համագործակցության երկրները, կամ՝ դեպի Ֆրանսիա են ձգտում Աֆրիկայի ֆրանսալեզու երկրները, այնպես էլ ռուսաց լեզուն ու մշակույթն ընդմիշտ մտերցրել են անցյալում Ռուսական կայսրությունը կազմած երկրներին ու ժողովուրդներին:

Ռուսական մշակույթի ամենաբարձր նվաճումը, գրականության ու երաժշտության հանճարեղ ստեղծագործությունների կողքին, ես համարում եմ 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի ռուսական ազատախոհությունը: Հենց դա էլ, ցավոք, նրա ամենախոշոր կորուստն է: Ռուսաստանն այսօր կանգնած է այդ կորուստը լրացնելու պատմական խնդրի առաջ: Միտումներն, ի դեպ, հուսադրող են, բանի որ մենք ի դեմս «Մոսկովսկայա տրիբունայի», որը կատարեց իրապես պատմական առաքելություն, արդեն ականատեսն ենք դարձել ռուսական ազատախոհության վերածնման փորձերի:

– Դուք եղել եք աշխարհով մեկ հայտնի հնագույն ձեռագրերի պահոց Մատենադարանի աշխատակից: Քաղաքական գործունեությունում Ձեզ պետք եկե՞լ է նախկին մասնագիտական փորձը:

– Քաղաքականությունը հասարակության համար ազնվաբարո գործի իրականացման առավել արդյունավետ միջոցն է: Ով եւ ինչպես այն կիրականացնի, դա արդեն այլ հարց է: Մասնագիտական գիտելիքները, կարծում եմ, չեն խանգարում, բայց եւ առանձնապես չեն էլ օգնում ինձ բաղաքական գործունեության մեջ: Պետության ղեկավարին առավել համար կգային իրավաբանական կամ տնտեսագիտական կրթությու-

նը: Սակայն մեթոդոլոգիական տեսակետից ես առանձնակի տարբերություն չեմ տեսնում գիտության ու քաղաքականության միջեւ: Ե՛ւ այստեղ, ե՛ւ այնտեղ պահանջվում են վերլուծական, համակարգված մտածողություն, ենթատեքստի զգացողություն, ի մի բերելու եւ սինթեզելու ունակություն: Այս իմաստով, իհարկե, կարելի է խոսել իմ մասնագիտական փորձի օգուտի մասին:

Ինչպես նախկինում գիտության բնագավառում, այնպես էլ այսօր քաղաքականության մեջ ես ձգտում եմ հապշտապ եզրակացություններ չանել, չընդունել իմպուլսիվ որոշումներ: Որքանով է դա հաջողվում՝ ես չեմ դատողը:

«Հայաստանի Հանրապետություն», 1 հունվարի, 1994 թ.:
Թարգմանություն ռուսերենից: «Օբշչայա Գազետա» ("Общая Газета"), 24–30 դեկտեմբերի, 1993 թ.:
Հարցազրուցը՝ ***Ելենա Մոլչանի****:*
Հրատարակված՝ «Քաղաքականություն, գիտություն եւ մշակութային տարածք» վերնագրով:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

(25 ապրիլի, 1994 թ.)

Հայ քաղաքական մտքի եւ հրապարակախոսության արդի հանգրվանը բնութագրվում է հիմնականում երկու գաղափարի՝ ազգային համաձայնության եւ ազգային գաղափարախոսության հարանուն արծարծմամբ, որոնք սովորաբար ներկայացվում են որպես ամենաբուժիչ դեղատոմս հայ ժողովրդի բոլոր խնդիրների իրականացման համար: Իրենց վեհությամբ ու խորությամբ հանդերձ՝ այդ գաղափարները կարեւոր են թվում, սակայն, միայն առաջին հայացքից:

Հարցերի խորքը թափանցելու պարագայում ակնհայտ է դառնում, որ իրականում ազգային համաձայնություն հասկացությունն ընդամենը կեղծ քաղաքական կատեգորիա է, որովհետեւ ազգի գոյությունն ինքնին ազգային համաձայնության իրողություն է:

Գիտակցաբար, թե բնազդով, տեսականացված, թե ոչ՝ ազգը, քանի դեռ գոյություն ունի, իր անդամների առնվազն 90 տոկոսով մշտապես գտնվում է համաձայնության վիճակում, այսինքն՝ ունի իր ընդհանուր հոգսերը, ազգային սրբությունները, սովորույթներն ու ավանդույթները, լեզուն, հավատը, մշակույթը, նաեւ՝ բաղձանքներն ու ապագայի պատկերացումները, որոնցով նա տարբերվում է այլ ազգերից:

Անհամաձայնություն կարող է լինել եւ կա միայն ազգի մի մասի, այն է՝ չափազանց փոքր մասի՝ քաղաքական շրջանակների միջեւ, որոնք իրենց անհամաձայնությունը հակված են նենգափոխված կերպով ներկայացնե-

յու որպես ազգային անհամաձայնություն: Ինքնին պարզ է, թե նման հակումը, չծառայելով որեւէ դրական տեղաշարժի, միաժամանակ ինչպիսի անառողջ եւ հոռետեսական մթնոլորտ է ստեղծում ազգի ներսում:

Կեղծ քաղաքական կատեգորիա է նաեւ ազգային գաղափարախոսության հասկացությունը, որովհետեւ ժողովրդավարության պայմաններում անհնար է ողջ ազգին համախմբել մեկ միասնական գաղափարախոսության շուրջ: Միշտ էլ կլինեն մարդիկ կամ մարդկանց խմբեր, եւ դա նրանց լիակատար իրավունքն է, որոնք երբեւիցե չեն ընդունի այդ գաղափարախոսությունը:

Գաղափարախոսության մենատիրությունը հնարավոր է միայն բռնապետության կամ ամբողջատիրության պայմաններում, որ ապացուցվում է թե՛ հայ ժողովրդի, թե՛ համայն մարդկության պատմական փորձով: Պատմական փորձը ցույց է տալիս նաեւ, որ որեւէ գաղափարախոսություն ինքնին դեռեւս վտանգ չի ներկայացնում. այն վտանգավոր է դառնում միայն այն ժամանակ, երբ նրա գործադրումը պարունակում է մենատիրության կամ բռնության տարր:

Ազգային գաղափարախոսության ջատագովներն ակամա նրան տալիս են խորհրդավոր, համարյա կրոնական բովանդակություն, որ պարարտ հող է ստեղծում ամբոխավարության ու քաղաքական շահարկումների համար: Խորհրդավորության քողը, սակայն, ազգային խնդիրները դարձնում է վերացական, կտրում իրական լուծումներից:

Եթե հարկ է զգացվում անպայման դիմել ազգային գաղափարախոսություն հասկացության օգնությանը՝ թեկուզ որպես քաղաքական էթիկետի պահանջի, ապա, իմ կարծիքով, պարտադիր չէ այն պատել խորհրդավորության, միստիկայի քողով: Ընդհակառակը, իմ հասկացողությամբ, դա պետք է լինի պարզ, որոշակի եւ գործադրելի ծրագիր, այն է՝ Հայաստանը տեսնել որպես ամուր, ապահով, ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական պետություն, քաղաքացիական հասարակություն, ծաղկող մշակույթ եւ բարգավաճող տնտեսություն:

Ահա մոտավորապես սա է հայ ժողովրդի ներկա ազգային իրական խնդիրը, եթե կուզե՛ք՝ ազգային ծրագիրը, որը, ինչպես տեսնում եք, ոչ մի գաղտնիք, ոչ մի խորհրդավորություն կամ դիցաբանություն չի պարունակում:

Իհարկե, ինձ անմիջապես կարող են առարկել, թե ազգային կոչված այս ծրագրում բուն էության որեւէ ազգային առանձնահատկություն չկա, եւ այդ առարկությունն առաջին հայացքից կարող է իրավացի թվալ: Հիրավի, հիշյալ ձեւակերպման մեջ ազգայինը միայն Հայաստան անունն է, մնացածը հատուկ է բոլոր ազգերին, այսինքն՝ իրականում համամարդկային է: Իսկ երբ մի հասկացություն դառնում է համամարդկային օրինաչափություն, ապա այդ հասկացությունը քաղաքականությունից տեղափոխվում է հասարակագիտության ոլորտ, կատեգորիայից վերածվելով ունիվերսալիայի: Սակայն իր ունիվերսալությամբ հանդերձ՝ այս ծրագիրը չի դադարում ազգային լինելուց, քանի որ ի զորու է ծառայելու յուրաքանչյուր ազգի զարգացման ու բարգավաճման խնդրին:

Թեեւ պարզ ու անխորհուրդ, թեեւ համամարդկային՝ այս ծրագիրը դժվար թե մերժելի կամ վիճարկելի լինի որեւէ քաղաքական ուժի համար:

Անհամաձայնությունն առկա է միայն ծրագրի իրականացման ուղիների շուրջ. յուրաքանչյուր քաղաքական կազմակերպություն այդ ուղին պատկերացնում է յուրովի: Նման անհամաձայնությունը բնական է եւ անհաղթահարելի, կարելի է ասել՝ հավիտենական:

Փորձել կենտրոնանալ տվյալ իրողության վրա եւ ճիգ թափել համաձայնության գալու՝ նշանակում է իզուր վատնել ազգի ներուժը եւ զբաղվել բացահայտ անիմաստ գործունեությամբ: Ժողովրդավարության պայմաններում, միեւնույն է, ինչ ճիգ էլ թափվի, երբեւէ սոցիալիստը՝ ռամկավար-ազատականին կամ ազգայնականը՝ ժողովրդավարին չի կարողանա ապացուցել իր դավանանքի ճշմարտությունը:

* * *

Մերժելով համաձայնության անիրագործելի ձգտումը գաղափարախոսական ոլորտում եւ ազգային հիմնախնդիրների իրականացման ուղիների ընտրության հարցում, կարող է ստեղծվել այն խաբուսիկ տպավորությունը, թե ես հասարակության համար ընդհանրապես մերժում եմ համաձայնության որեւէ հնարավորություն: Քավ լիցի:

Համաձայնությունը միանգամայն հնարավոր է, ավելին՝ կենսականորեն անհրաժեշտ, սակայն միայն հասարակական համակեցության նորմերի եւ քաղաքական ուժերի գործելակերպի կանոնների շուրջ:

Այդպիսի համաձայնության կատարյալ մարմնավորումը Սահմանադրությունն է, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդի միասնական կամքով կնքված պայմանագիր, ազգային դաշինք՝ հասարակական համակեցության եւ գործելակերպի կանոնների վերաբերյալ, որին պարտավոր են ենթարկվել հասարակության բոլոր անդամները, բոլոր հաստատությունները:

Այստեղից ինքնըստինքյան պարզ է, թե որքան ավելի մարդ մասնակցի այդ պայմանագրի կնքման արարողությանը, այնքան անխախտ ու անսասան կդառնա Սահմանադրությունը: Թեկուզ միայն այս առումով արդեն Սահմանադրության ընդունման լավագույն եղանակը հանրաքվեն է, մանավանդ՝ քաղաքական ուժերի բեւեռացման՝ Հայաստանում ստեղծված ներկա շփոթ վիճակում: Ավելորդ չէ թերեւս նշել նաեւ, որ հանրաքվեի միջոցով ընդունված Սահմանադրությունը, հետագայում բացառելով իշխանության մարմինների լիազորությունների վերաբաշխման վտանգավոր միտումը, ամուր հիմք կդառնա պետության կայունության եւ քաղաքացիական համերաշխության համար:

Ես չեմ ընդունում, ավելին՝ կտրականապես մերժում եմ այն առարկությունը, թե իբր ժողովուրդն ի վիճակի չէ կողմնորոշվելու Սահմանադրության հարցում: Մերժում եմ, քանի որ նախ՝ հայ ժողովուրդը ոչնչով պակաս չէ այն ժողովուրդներից, որոնք իրենց Սահմանադրությունն ընդունել են հանրաքվեի միջոցով (նորից ազգային ստորակայության չարաբաստիկ բարդույթը), եւ երկրորդ՝ եթե նա կողմնորոշվում է պատգամավորական թեկնածուների հազարավոր խայտաբղետ ծրագրերի հարցում, ապա շատ ավելի հեշտությամբ կարող է վերաբերմունք արտահայտել Սահմանադրության մեկ-երկու նախագծի նկատմամբ:

Նկատի ունենալով վերջին շրջանում սահմանադրական գործընթացի նկատմամբ խորհրդարանի, քաղաքական կազմակերպությունների, մամուլի միջոցների դրսեւորած լրջագույն ուշադրությունը, ոչ մի կասկած չունեմ, որ հայ ժողովուրդն ամենամոտ ապագայում կընդունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ էապես լիցքաթափելով հասարակական լարվածության մթնոլորտը եւ իր տրամաբա-

նական ավարտին հասցնելով անկախ պետականության վերականգնման առաջին, բախտորոշ փուլը:

Հանգուցալուծումն այսպիսով մոտ է, բայց բոլոր դեպքերում՝ ոչ պարզունակ: Մեզ՝ իշխանության պատասխանատուներիս համար այսօր ամենակարեւոր խնդիրն է՝ առանց ցնցումների եւ օրինականության շրջանակներում անցկացնել մինչեւ Սահմանադրության ընդունումն ու իշխանության նոր մարմինների ընտրությունն ընկած առաջիկա ժամանակահատվածը, որի համար փոխհանդուրժողականությունից բացի թերեւս կպահանջվի մշակել նաեւ մեր գործելակերպի ժամանակավոր կանոններ, ես չեմ ուզում օգտագործել քաղաքական պայքարի մորատորիում կամ քաղաքացիական համաձայնություն վերամբարձ հասկացությունները:

* * *

Սակայն նախքան գործելակերպի այդ կանոններին անցնելը՝ մի քանի խոսք Հայաստանի ներքաղաքական կացության մասին, որի վերջին բնորոշ գիծը իր արտահայտությունն է գտել ազգային համաձայնության (կոալիցիոն) կառավարության գաղափարի մեջ:

Ո՞րն է այդ գաղափարի հիմքը. ընդդիմության տեսակետից՝ Հայաստանի ներկա իշխանությունները վերածվել են հանցագործ խմբակցության, թայֆայի, քայքայել են հանրապետության տնտեսությունը, սերտաճել մաֆիայի հետ, դավաճանել ազգային դատին, ծախել Ղարաբաղը, կորցրել մեր ավանդական դաշնակիցներին եւ այլն, ուստի անհրաժեշտ է թեկուզ փողոցային խռովությունների ու կախաղանների միջոցով նրանց հեռացնել ասպարեզից եւ կոալիցիոն կառավարության օգնությամբ ազգը փրկել անխուսափելի կործանումից:

Երբ ընդդիմությանը հիշեցվում է, որ Հայաստանի ներկա իշխանություններն ընտրվել են օրինական ճանապարհով, նա պատասխանում է՝ ընտրությունները տեղի են ունեցել Ղարաբաղյան շարժման ալիքի վրա եւ հանդիսացել են ոչ այնքան քաղաքական գիտակցության, որքան ժողովրդի զգացմունքային վերաբերմունքի արդյունք:

Երբ ասվում է, որ գործող կառավարությունից, առկա օրենսդրության շրջանակներում, կարելի է ազատվել խորհրդարանի կողմից նրան

անվտանգություն հայտնելու միջոցով, ընդդիմությունը նակաճառում է՝ ներկա խորհրդարանը չի արտահայտում հասարակության մեջ առկա քաղաքական ուժերի ճիշտ հարաբերակցությունը, ուստի անվտանգության մեխանիզմն անճիշտ է կիրառել:

Իսկ երբ խոսք է գնում նոր ընտրությունների միջոցով այդ հացը լուծելու մասին, ընդդիմությունը նորից առարկում է, ասելով, թե ի սկզբանե պարզ է, որ իշխանությունները կկեղծեն ընտրությունների արդյունքները:

Եթե մի պահ անգամ ընդունելու լինենք իշխանություններին հասցեագրված այս անողոք մեղադրանքների ճշմարտացիությունը, ապա դեռ մեծ հարց է, թե որքանով է արդարացված ու փրկարար իշխանության ձեռքբերման ընդդիմության առաջարկած ուղին: Մի՞թե ակնհայտ չէ, որ իշխանության անօրինական փոփոխման վտանգավոր նախադեպը ոչ այնքան կհարվածեր ներկա իշխանություններին, որքան կործանարար կդառնար Հայոց պետականության ապագա կայունության համար:

Մենք Հայոց անկախ պետականության առաջին իշխանավորներս, մեր առօրյա պատասխանատվությունների կատարումից, կառավարման ու վերահսկողության լիազորությունների իրականացումից, Սահմանադրության եւ օրենքների ընդունումից բացի, պարտավոր ենք դնել նաեւ պետական ավանդույթների ամուր հիմքերը, որոնցից ամենահիմնականը ընտրությունների հոգեբանության արմատավորումն է:

Առայժմ Հայաստանում անցկացվել են երեք ազատ ընտրություններ. ներկա Գերագույն խորհրդի ու Հանրապետության Նախագահի ընտրությունները եւ Անկախության հանրաքվեն: Այսօր բոլոր հիմքերը կան հաստատելու, որ Սահմանադրության հանրաքվեն եւ Ազգային ժողովի ու Հանրապետության Նախագահի նոր ընտրությունները կնշանավորեն պետական այդ հիմնարար ավանդույթի վերջնական արմատավորումը:

Ուստի, այսպես կոչված ազգային համաձայնության կայացման եւ ներկա իշխանություններից ազատվելու միակ օրինական, միաժամանակ ամենակարճ հանգապարհը Սահմանադրության ընդունումն ու նոր ընտրություններն են:

Հայաստանում իշխանությունը չպետք է եւ չի կարող փոխվել այլ կերպ, քան ընտրությունների միջոցով: Հայաստանը Վրաստանի, Ադրբեջանի կամ Տաջիկստանի վերածելու բոլոր փորձերը դատապարտված են ձախողման:

* * *

Նկատի ունենալով, անա, այս ամենը, ես ձեր ուշադրությանն եմ ներկայացնում առաջիկա ժամանակահատվածում իշխանությունների եւ քաղաքական կազմակերպությունների գործելակերպի հետեւյալ ժամանակավոր կանոնները.

1. Վստահելով Գերագույն խորհրդի Սահմանադրական հանձնաժողովի եւ վեց կուսակցությունների համապատասխան աշխատակազմի կատարած աշխատանքին՝ խորհրդարանն առանց բննարկման հաստատվեի է դնում նրանց մշակած սահմանադրությունների նախագծերից մեկը:

2. Նման որոշում չկայացնելու դեպքում Գերագույն խորհուրդը այլընտրանքային կարգով հաստատվեի է դնում Սահմանադրական հանձնաժողովի եւ վեց կուսակցությունների պատրաստած երկու նախագծերը՝ անհրաժեշտության պարագայում անցկացնելով հանրաքվեի երկրորդ տուր:

3. Եթե հանրաքվեի արդյունքով ընդունվում է վեցյակի Սահմանադրությունը, ես անմիջապես հրաժարական եմ տալիս:

4. Եթե ընդունվում է Սահմանադրական հանձնաժողովի նախագիծը, անցկացվում են Ազգային ժողովի եւ Հանրապետության Նախագահի նոր ընտրություններ:

5. Գերագույն խորհուրդն ընթացիկ նստաշրջանում ընդունում է Հայաստանի Հանրապետության բաղաքացիության եւ ընտրությունների մասին օրենքները:

Համոզված եմ, որ բարիկամեցողության դրսեւորման դեպքում կարելի է հեշտությամբ համաձայնության գալ մեր գործելակերպի այս կանոնների շուրջ:

«Հայաստանի Հանրապետություն», 26 ապրիլի, 1994 թ.:
Հրատարակված՝ «Սահմանադրության ընդունման լավագույն եղանակը հանրաքվեն է» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/25.04.94: Բնագիր: Ինքնագիր:

ԵԼՈՒՅԹ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 50-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏՈՒՄ

(25 մայիսի, 1994 թ.)

Հարգելի գործընկերներ,

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի անուրանալի դերը նշանավորող այս հանդիսությունը պատմական իրադարձությունների բերումով համընկել է մեր նորանկախ պետության կերտման բախտորոշ ու շրջադարձային հանգրվանին:

Գիտությունն այսօր Հայաստանում կանգնած է նույն երկընտրանքների ու հիմնախնդիրների առջեւ, որոնց առջեւ կանգնած են հանրապետության տնտեսական եւ հասարակական հարաբերությունները, պետական եւ վարչական կառույցները:

Խորհրդային Միության փլուզմամբ խզվել են Ակադեմիայի ավանդական կապերը, վերացել կենտրոնացված պլանավորման եւ ֆինանսավորման համակարգերը, որ բնականաբար առաջացրել է լուրջ դժվարություններ եւ նույնիսկ հոռետեսական տրամադրություններ. հուսանք՝ ժամանակավոր:

Ներկա դրությամբ Ակադեմիան եւ ընդհանրապես Հայաստանի գիտությունը փաստորեն կրում են այն բոլոր զրկանքները, որոնց ենթակա է մեր ողջ ժողովուրդը: Մենք բաջ գիտակցում ենք, իհարկե, որ առկա պետական հատկացումները միանգամայն անկարող են բավարարելու գիտաշխատողների թեկուզ տարրական սոցիալական պահանջները եւ ապահովելու գիտության զարգացման բնականոն ընթացքը: Միաժամանակ, սակայն, հարկ եմ համարում հավատիացնել, որ պետու-

թյունն անում է այն, ինչ առայժմ հնարավոր է, թեեւ, իհարկե, հնարավորի սահմանը միշտ էլ առաձգական է եւ վիճելի:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ նշված պահանջների համարժեք բավարարումը կախված է Հայաստանի տնտեսության զարգացման եւ ժողովրդի ընդհանուր կենսամակարդակի բարձրացման հնարավորությունից, որն իր հերթին պայմանավորված է ղարաբաղյան պատերազմի ավարտմամբ ու շրջափակումների վերացմամբ: Լեռնային Ղարաբաղում խաղաղության հաստատումից եւ շրջափակումների վերացումից հետո, վստահ եմ, եթե ոչ անմիջապես, ապա գոնե աստիճանաբար ոչ միայն կբարելավվի Հայաստանի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակը, այլ նաեւ լուրջ հնարավորություններ կստեղծվեն գիտության զարգացման համար: Ուրախ եմ այս առիթով հայտարարելու, որ մենք երբեւէ այնքան մոտ չենք եղել խաղաղությանը, որքան այսօր:

Մեր հանրապետությունն՝ ընդհանրապես եւ Գիտությունների ազգային ակադեմիան՝ մասնավորապես, այսօր ապրում են տասնամյակների ընթացքում ձեռքբերված հարստություններն ու նվաճումները պահպանելու եւ անցումային շրջանի համար անխուսափելի կորուստները նվազագույնի հասցնելու հանգրվանը: Եւ ի պատիվ Ակադեմիայի պետք է ասել, որ այս խնդիրը, չնայած ստեղծված ծանրագույն պայմաններին, նա լուծում է բավարար կերպով:

Հայաստանի անկախացման հետեւանքով առաջացած նոր պայմանները Ակադեմիայի առջեւ, բնականաբար, դնում են նաեւ նոր խնդիրներ, որոնցից կարեւորագույնը նրա կառուցվածքային վերափոխումն է:

Գաղտնիք չէ, որ իր 50-ամյա գոյության ընթացքում Հայաստանի Գիտությունների ակադեմիան եղել է Խորհրդային Միության միասնական գիտական համակարգի մի օղակը, եւ հանրապետության գիտատեխնիկական պահանջները բավարարելուց առավել՝ գործել է այդ համակարգի զարգացման նկատառումներով ու պահանջներով: Հայաստանի Գիտությունների ակադեմիան իր կառուցվածքով եւ գիտական բնագավառների ընդգրկմամբ գրեթե պատճենել է միութենական ակադեմիայի կառուցվածքն ու ընդգրկումը: Հասկանալի պատճառներով նման դրությունը հազիվ թե համատեղելի է Հայաստանի ներկա ու ապագա պահանջների, առավել եւս՝ հնարավորությունների հետ:

Ակադեմիայի առաջ կանգնած է հանրապետության գիտատեխնիկական պահանջներից, տնտեսության զարգացման առանձնահատկություններից եւ իրական հնարավորություններից բխող ինքնաբավ գիտական համակարգի ստեղծման խնդիրը:

Դա չի նշանակում, իհարկե, արմատական վերափոխման ենթարկել Ակադեմիայի ավանդաբար ձեւավորված կառուցվածքը. հիսունամյա փորձը, ձեռքբերված նշանակալից նվաճումները այն դարձրել են Հայաստանում գիտության կազմակերպման արդյունավետ կենսաձեւ, որից, մեղմ ասած, կասկածելի է հրաժարվել:

Այնուամենայնիվ, գիտակցելով գիտական ամբողջական համակարգի հավասարաչափ զարգացման անհնարինությունը, թերեւս ժամանակն է ճշտել գիտության այն առաջնային (պրիորիտետային) ուղղությունները, որոնք ի վիճակի են ապահովելու հայ գիտական մտքի մրցունակությունը միջազգային ասպարեզում:

Անկախ պետականության վերականգնմամբ Հայաստանը եզակի հնարավորություն է ձեռք բերել ինտեգրացվելու համաշխարհային գիտական համակարգում: Մեր պարտքն է՝ որքան կարելի է արագ եւ առավելագույնս օգտվել այդ հնարավորությունից: Այդ առումով ես բավականին հուսադրող եմ համարում Հայաստանի ազգային ակադեմիայի ձեռնարկած քայլերը ԱՊՀ երկրների շրջանակներում գիտական համագործակցության վերականգնման եւ ամրապնդման, ինչպես նաեւ տարբեր երկրների գիտական կենտրոնների հետ նոր կապերի հաստատման ուղղությամբ:

Հաջորդ կարեւոր խնդիրը, որի հրատապությունը վաղուց է գիտակցվում, բայց որն այդպես էլ դեռեւս չի գտել իր բավարար լուծումը, բուհական կրթության եւ ակադեմիական գիտության ներդաշնակման անհրաժեշտությունն է: Չենք կարող չխոստովանել, որ մեզ առայժմ չի հաջողվել բուհական կրթության համակարգում լիովին օգտագործել Ակադեմիայի մտավոր կարողությունները, եւ հակառակը՝ բուհական գիտությանը հնարավորություն ապահովել առավելագույնս օգտվելու ակադեմիական հաստատությունների գիտատեխնիկական բազայից, չխոսած այլեւս զուգահեռ կառույցների՝ ամբիոնների, բաժինների, գիտխորհուրդների անհարկի կրկնությունների մասին, որն արդեն պարզապես անիմաստ շռայլություն է:

Գիտնականների բանակն այսօր Հայաստանում արհեստականորեն բաժանված է երկու մասի, որոնցից մեկը ներկայացնում են դասախոսները, մյուսը՝ գիտաշխատողները: Հուսանք, որ բուհական կրթության եւ ակադեմիական գիտության կազմակերպիչների սերտ համագործակցությունը ժամանակի ընթացքում կշտկի այս անբնական վիճակը:

Ես կուզեի շոշափել եւս մեկ հարց, որը թեեւ վերաբերում է Ակադեմիայի ներքին կանոնադրությանը եւ այդ պատճառով դուրս է իշխանությունների իրավասության շրջանակներից, բայց որի արծարծումը, կարծում եմ, արդարացված է հոբելյանական հանգամանքով: Ժամանակը չէ՞, արդյոք, լրջորեն մտածել ակադեմիական կոչումների միասնականացման մասին, վերացնելով Ակադեմիայի թղթակից-անդամի հնացած եւ իր նախնական իմաստից զրկված աստիճանը: Չէ՞ որ ակնհայտ է, որ դա մեծապես կնպաստեր ակադեմիական կառույցի ամրապնդմանն ու գիտական մթնոլորտի առողջացմանը:

Այս հասունացած հարցն, իհարկե, պետք է լուծվի ոչ թե կամային որոշմամբ, դեկրետով, այլ Ակադեմիայի կանոնադրության կատարելագործման հանապարհով կամ, ինչո՞ւ չէ, թերեւս ավելի ժողովրդավարական ձեւերով, ենթադրենք՝ Ակադեմիայի բոլոր գիտաշխատողների հանրաքվեի միջոցով:

Հոբելյանի առիթով, կարծում եմ, թերեւս ավելորդ չէ թեկուզ մի քանի թռուցիկ խոսքով անդրադառնալ նաեւ Ակադեմիայի նկատմամբ Հայաստանի պետության ու հասարակության հրատապ ակնկալիքներին:

Այս առումով ուզում եմ ձեզ հիշեցնել Հանրապետության Նախագահի՝ 1993 թ. մարտի 9-ի հրամանագրի հետեւյալ կետը. «Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան հանրապետության իշխանությունների պաշտոնական գիտական խորհրդատուն է, որի կողմից ներկայացված երաշխավորություններն ու առաջարկությունները ենթակա են պարտադիր քննարկման պետական կառավարման համապատասխան մարմինների կողմից»:

Ո՛չ ամենեւին հնազանդության նպատակով, այլ սոսկ արձանագրության կարգով, կարծում եմ, ստիպված ենք համաձայնել, որ Ակադեմիան, ըստ էության, այս հանձնարարությունը առայժմ չի ստանձնել:

Մյուս ակնկալիքը վերաբերում է հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում Ակադեմիային եւ ընդհանրապես մտավորականությանը վերապահված դերին:

Հայաստանի ներքաղաքական իրավիճակի խիստ բեւեռացումը իշխանություններին եւ ընդդիմությանը թելադրում են խաղի համապատասխան կանոններ, որոնք շատ հաճախ, մեղմ ասած, հեռու են բանականության եւ հաղաքակրթության տարրական պահանջներից:

Թեեւ ոչ ոք չի կարող ժխտել, որ Հայաստանում հաստատված է խոսքի լիակատար ազատություն, բայց նաեւ դժվար է չխոստովանել, որ հրապարակախոսության մեջ համարյա բացակայում է անաչառ վերլուծությունը, տեսական ընդհանրացումը, քննադատությունը. նկատի չունեմ, այսպես կոչված, առողջ կամ կառուցողական քննադատությունը:

Ի տարբերություն, օրինակ, Ռուսաստանի, Հայաստանում պաշտոնական եւ ընդդիմադիր ձայների կողքին համարյա չի լսվում երրորդ՝ հավասարակշռող, անկողմնակալ եւ կայունացնող ձայնը, որն իրավամբ պետք է պատկաներ մտավորականությանը, այդ թվում՝ ակադեմիական մտավորականությանը:

Իշխանությունների եւ ընդդիմության գործունեության անաչառ վերլուծությունը եւ քննադատությունը, մտավորականության սրբազան պարտքը լինելով, այսօր անչափ անհրաժեշտ են երկրի հաղաքական կայունության եւ հաղաքացիական համերաշխության ապահովման տեսակետից, մանավանդ, հանրապետության Սահմանադրության ընդունման եւ իշխանության մարմինների նոր ընտրությունների նախօրյակին:

Ավարտելով խոսքս, պարտք եմ համարում Հայաստանի կառավարության եւ հայ ժողովրդի անունից մեծարանքի ու հարգանքի տուրք մատուցել հայկական գիտության բոլոր երախտավորներին, եւս մեկ անգամ հավաստել գիտական մտքի զարգացման գործում Ակադեմիայի բազմամյա ղեկավար, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի կատարած անգնահատելի դերը, հաջողություն մաղթել Ակադեմիայի ներկայիս պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանին՝ գիտության կազմակերպման դժվարին ու պատասխանատու բնագավառում եւ արտահայտել շնորհավորել Ակադեմիայի բոլոր աշխատակիցներին այս նշանակալից առնի առթիվ:

Ուզում եմ նաեւ հատուկ շնորհակալությամբ գնահատել այն վաստը, որ Գիտությունների ազգային ակադեմիայի ծոցից ելած հայուրավոր մասնագետներ այսօր հաջողությամբ ծառայում են մեր նորանկախ պետության իշխանությունների տարբեր կառույցներում:

«Հայաստանի Հանրապետություն», 26 մայիսի, 1994 թ.:
Հրատարակված՝ «Ժամանակն է ճշտել գիտության առաջնային ուղղությունները» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/25.05.94: Բնագիր: Ինքնագիր:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

(13 հունիսի, 1994 թ.)

Մեծարգո նախագահ,
Մեծարգո պատգամավորներ,

Պատիվ ունեմ ձեր ուշադրությանը ներկայացնելու հանրապետության Գերագույն խորհրդի Սահմանադրական հանձնաժողովի մշակած Սահմանադրության նախագծի հիմնադրույթները՝ կենտրոնանալով բացառապես կարեւորագույն սկզբունքների եւ մեթոդոլոգիական խնդիրների վրա, որոնք, կարծում եմ, ընդհանուր են բոլոր սահմանադրությունների համար[1]:

Մեթոդոլոգիական տեսակետից՝ Սահմանադրական հանձնաժողովի նախագծի հիմքում ընկած են հետեւյալ գլխավոր սկզբունքները. Սահմանադրությունը դիտելով որպես պետության տեսական կայունություն ու արդյունավետ կենսագործունեությունն ապահովելու կոչված գուտ իրավական փաստաթուղթ՝ հրաժարվել իրավիճակային, կոյունկտուրային լուծումներից, տուրք չտալ բաղաքական կոմպրոմիսներին, առաջնորդվել բացառապես իրավագիտական նկատառումներով՝ հիմնվելով միջազգային փորձի եւ մեր նորանկախ պետության օրենսդրական ավանդույթի վրա: Նույնիսկ կարեւոր է նաեւ այն սկզբունքը, որ պետության եւ հասարակության կյանքում պետք է բացառված լինի որեւէ ճգնաժամային իրավիճակ, որը չունի սահմանադրական լուծում:

[1] *Տպագրում բացակայող «որոնք, կարծում եմ, ընդհանուր են բոլոր սահմանադրությունների համար» բառերը լրացնում ենք բուն պաշտոնական սղագրությունից:*

Նախ՝ իրավիճակային, կոնյունկտուրային լուծումների եւ հաղաքական կոմպրոմիսների մասին. գաղտնիք չէ, եւ այդ մասին երբեմն նույնիսկ բացահայտ խոսվում է, որ Սահմանադրության ընդունման ամենահեշտ ճանապարհը կլիներ հարմարվել խորհրդարանում ներկայացված հաղաքական ուժերի ներկա հարաբերակցությանը եւ փորձել ինչ-որ փոխզիջումային տարբերակ գտնել:

Սա իսկապես կլիներ ամենահեշտ, բայց միաժամանակ՝ պետության համար ամենավտանգավոր ճանապարհը, որովհետեւ, նկատի ունենալով հաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխականությունը, դժվար չէ գուշակել, թե հետագայում ինչպիսի ցնցումների պատճառ կարող էր դառնալ նման ձեւով ընդունված Սահմանադրությունը: Յուրաքանչյուր նորընտիր խորհրդարանի առաջին գործը կլիներ Սահմանադրությունն անմիջապես հարմարեցնել հաղաքական ուժերի նոր հարաբերակցությանը, եւ այդպես շարունակ: Այսինքն, օրենսդիր եւ գործադիր իշխանությունների՝ միմյանցից լիազորություններ կորզելու ներկա պայքարը, որ հատուկ է բոլոր նորանկախ պետություններին, կդառնար ապակայունացման մշտական գործոն՝ իր ակնհայտ բացասական հետեւանքներով:

Փոխզիջումը միշտ խախուտի եւ անհրաժեշտ է հասարակական համակեցության, հաղաքական գործելակերպի եւ դիվանագիտության որոշներում, ապա միանգամայն խոտելի է գաղափարախոսության եւ մանավանդ իրավագիտության բնագավառներում, հետեւաբար Սահմանադրության համար, որ միանշանակ պատկանում է վերջին բնագավառին, հաղաքական կոմպրոմիսի հնարավորությունը եւ նպատակահարմարությունը բացառված պետք է համարել:

Մենք իրավունք չունենք, առաջնորդվելով առժամյա, թեկուզեւ հարմար նկատառումներով, վտանգել պետության ապագա կայունությունը:

Իրավագիտության բնագավառին պատկանելու հանգամանքը, մյուս կողմից, որեւէ Սահմանադրության համար գրեթե պարտադիր է դարձնում հաջորդ սկզբունքի՝ միջազգային փորձի յուրացման անհրաժեշտությունը, տրված լինելով, որ արդի իրավունքը պատմականորեն ձեւավորվել է որպես մարդկության հավաքական մտքի արգասիք: Այս առումով, Սահմանադրական հանձնաժողովի նախագծում համարյա լիակատար կերպով արտացոլվել են պետական իմքնիշխանության

սկզբունքներին, մարդու եւ հաղաքացու իրավունքներին վերաբերող միջազգային օրենքների բոլոր հիմնական դրույթները, ինչպես նաեւ ժամանակակից ժողովրդավարական երկրների պետական կառույցների ներդաշնակ գործունեության մշակված մեխանիզմներն ու հակակշիռների համակարգը:

Ինչ վերաբերում է Հայոց նորանկախ պետության օրենսդրական ավանդույթին, ապա Սահմանադրության առկա նախագծի համար կայկեսային փաստաթղթեր են հանդիսացել Հայաստանի անկախության հռչակագիրը, Հանրապետության Նախագահի եւ Գերագույն խորհրդի մասին օրենքները, Անկախ պետականության հիմնադրույթներին վերաբերող օրենքը: Նշված փաստաթղթերը, որոնք արդյունք են բացառապես ներկա խորհրդարանի գործունեության, Սահմանադրական հանձնաժողովի նախագծում արտացոլված են, իհարկե, ոչ բացարձակ նույնությամբ, այլ ենթարկված լուրջ փոփոխությունների՝ թե՛ ժամանակի պահանջներից ելնելով, թե՛ պատշաճեցվելով մեր իրավական եւ հասարակական հասունության արդի մակարդակին:

Նկատի ունենալով այս հանգամանքը՝ պարտ եմ համարում շեշտել, որ ես ոչ միայն ամենեւին հակված չեմ Սահմանադրության բացակայության անցած չորս տարիները գնահատել որպես կորած ժամանակ, այլեւ ընդհակառակը՝ այդ ժամանակը դիտել որպես նոր պետական կառույցների ձեւավորման, համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծման եւ ընդունված օրենքների փորձարկման արդյունավետ տարիներ, որոնք, անկասկած, կունենան իրենց բարերար ազդեցությունը հանրապետության ապագա Սահմանադրության վրա: Եւ որքան կ՚այսօր խորհրդարանում գերիշխեն հոռետեսական կամ ժխտական տրամադրությունները, այնուամենայնիվ, պատմական կտրվածքով նրա դերը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման գործում արդեն իսկ անուրանալի է:

Առկա նախագծում, կարծում եմ, ամենայն հետեւողականությամբ կիրառված է նաեւ պետության ու հասարակության կյանքի բոլոր հնարավոր հգնաժամային իրավիճակների համար սահմանադրական լուծում նախատեսելու սկզբունքը, որը միակ երաշխիքն է խուսափելու ներհաղաքական պայքարի անցանկալի դրսեւորումներից եւ, ինչո՞ւ չէ

նաեւ[2] բաղամացիական պատեռազմից: Ենթադրում եմ, որ առաձնապես կարիք չկա լուսաբանելու այդ վտանգը, որովհետեւ նրա լավագույն լուսաբանությունը ներկա իրադրությունն է, ակնհայտ է, որ թե՛ Հայաստանում, թե՛ նախկին Միության մյուս հանրապետություններում տիրող ներհաղաքական լարվածությունը մեծապես առդյունի է այն պարզ իրողության, որ սահմանադրություններն ու օրենքները չեն ապահովում ճգնաժամային իրավիճակների օրինական ելքերը:

Սահմանադրական հանձնաժողովի նախագծում, ըստ իս, այդ խնդիրը լիովին հաղթահարված է: Մասնավորապես՝ բացառված է կառավարության ներկայացրած կաբեւորագույն օրենքների, այդ թվում՝ պետական բյուջեի ընդունման վիժեցումը, ի հակակշիռ որի հնշուացված է կառավարությանն անվստահություն հայտնելու կարգը: Մանրամասն մշակված է ծանր հանցագործություն կատարելու դեպքում Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մեխանիզմը: Եւ վերջապես, որպես ճգնաժամային իրավիճակի հաղթահարման ծայրահեղ միջոց՝ նախատեսված է Ազգային ժողովի արձակման եւ արտահերթ ընտրությունների նշանակման հնարավորությունը: Կարեւոր է այս առումով նշել նաեւ, որ Ազգային ժողովն ու Հանրապետության Նախագահը հավասարապես օժտված են հանրաքվե նշանակելու բացառիկ իրավունքով, որը հնարավորություն է ապահովում խուսափել անհարկի առնակատումներից եւ ծագած հակասությունները հանձնել ժողովրդի դատին:

Բոլոր հնարկված սկզբունքները, սակայն, որոնք դժվար թե լուրջ առարկությունների տեղիք տան, առայժմ կիրառված են միայն թղթի վրա, եւ հասկանալի է, որ նրանց իրական գործադրումը դեռեւս կապված է մեծ դժվարությունների հետ: Այստեղ մենք կրկին բախվում ենք Սահմանադրության ընդունման կարգին վերաբերող չարաբաստիկ խնդրին: Ընկած ստալինա-բրեժնեւյան Սահմանադրության նվաստացուցիչ ծուղակը՝ մի՞թե մեր մեջ ուժ չենք գտնելու կարել գործյան հանգույցը: Կասկած կա՞, արդյոք, որ խորհրդարանի կողմից Սահմանադրության ընդունման դեպքում բոլոր նշված սկզբունքները ենթարկվելու են հաղաքական կոնյունկտուրայի պահանջներին՝ դանդաղ գործողության ռումբ տեղադրելով մեր պետության հիմքում: Ուստի հարկադրված եմ նորից ու նորից կրկնել, որ ստեղծված հաղաքական իրադրության պայմաններում պետության կայունության հուսալի երաշխիքը կարող է լինել միայն ժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված Սահմանադրությունը, պայմանով, որ նրա հետագա փոփոխությունները նույնպես կատարվեն միայն հանրաքվեի միջոցով:

* * *

Իսկ այժմ Սահմանադրական հանձնաժողովի նախագծի բուն բովանդակության էական կողմերի մասին:

Նախ եւ առաջ հարկ է անմիջապես նշել, որ տվյալ նախագծում նախատեսված է պահպանել հանրապետության կառավարման նախագահական համակարգը: Հարկ է նշել անմիջապես, հաճի որ, ըստ էության, սա է Սահմանադրության շուրջ ընթացող բուռն բանավեճերի հիմնական առարկան: Եւ այս դրությունը լիովին հասկանալի է, հաճի որ Սահմանադրության հակատագիրը վերջին հաշվով կախված է այն հարցից, թե կառավարման ինչպիսի համակարգ պետք է որդեգրի Հայաստանի Հանրապետությունը՝ նախագահական, թե՞ խորհրդարանական: Նաեւ միանգամայն որոշակի է, որ այս հարցի շուրջ կոնսենսուսի ձեռքբերման դեպքում Սահմանադրության ընդունման կարգը կվերածվի զուտ տեխնիկական եւ հեշտ լուծելի խնդրի:

Ընդունելով հանդերձ տվյալ երկընտրանքի առկայության լրջությունն ու հիմնավորվածությունը, ես միանգամայն խոտելի եմ համարում այն էժանագին ամբոխավարական հնարքը, որով փորձ է արվում նախագահական համակարգը ներկայացնել որպես բռնապետական, իսկ խորհրդարանականը՝ որպես ժողովրդավարական վարչաձեւ: Համենայն դեպս, պատմության փորձը ցույց է տվել, որ խորհրդարանական հանրապետություններից ավելի հաճախ են բռնապետություններ ու նույնիսկ[3] ֆաշիստական վարչակարգեր ծնվել, քան նախագահական հանրապետություններից:

[2] *Տպագրում բացակայող «ինչո՞ւ չ՝ նաեւ» բառերը լրացնում ենք ըստ պաշտոնական սղագրության:*

[3] *Տպագրում բացակայող «նույնիսկ» բառը լրացնում ենք ըստ պաշտոնական սղագրության:*

Այնպես որ, ժողովրդավարության հիմունքներով՝ նախագահական եւ խորհրդարանական համակարգերի հակադրումը պետք է համարել ի բնե սխալ եւ մերժելի: Պետության ժողովրդավարության չափանիշը ոչ թե կառավարման համակարգի նախագահական կամ խորհրդարանական բնույթն է, այլ այն հանգամանքը, թե այդ վարչաձեւերը հաստատվել են ազատ ընտրությունների միջոցով, թե՝ ոչ: Ժողովրդավարության էությունը վերջին հաշվով ոչ այլ ինչ է, եթե ոչ ազատ ընտրություններ, որոնց միջոցով ժողովուրդը ճնարավորություն ունի եթե ոչ ընտրելու անպայման լավ իշխանություններ, ապա գոնե ազատվելու վատ իշխանություններից:

Այսպիսով, ժողովրդավարության տեսակետից պետություններն իրարից տարբերվում են ոչ թե կառավարման համակարգերի հատկանիշով, այլ՝ իշխանությունների ընտրյալ կամ ոչ ընտրյալ լինելու հանգամանքով: Ըստ այդմ, հավասարապես ժողովրդավարական են թե՛ նախագահական, թե՛ խորհրդարանական համակարգերը, եթե նրանք հաստատված են ազատ ընտրությունների միջոցով, եւ, համապատասխանաբար, ոչ ժողովրդավարական են այլ նանապարհներով հաստատված բոնապետությունները եւ միապետությունները:

Ես հակադրված էի զայրույթ պատճառելու հանդգնությամբ մանրամասն կանգ առնել այս պարզ ու ծեծված ճշմարտությունների վրա, որովհետեւ նախագահական համակարգը որպես բոնապետություն ներկայացնելու միտումն արդեն սպառնում էր դառնալ մոլորեցուցիչ շաճարկումների առարկա:

Իսկ ըստ էության՝ կառավարման նախագահական կամ խորհրդարանական համակարգի ընտրությունը կապված է ոչ թե ժողովրդավարության հանգամանքի, այլ այն հարցի հետ, թե որքանով է այդ համակարգերից մեկը համապատասխանում տվյալ պետության պահանջներին ու առանձնահատկություններին եւ որքանով է այն ի զորու լուծելու տվյալ պետության առջեւ կանգնած խնդիրները:

Նման հարցադրումն, անշ, կլիներ միանգամայն տեղին ու առարկայական՝ դառնալով ոչ թե մտացածին, այլ լուրջ, հայեցակարգային բանավեճի նյութ: Դժվար է, իհարկե, ընդհանուր բնույթի սույն կետերի սահմաններում այս կարեւոր հարցի շուրջ հանդես գալ համակողմանիորեն փաստարկված վերլուծությամբ, ուստի առայժմ կփորձեմ բավարարվել միայն մի քանի հիմնական դրույթների մատուցմամբ, որոնք թեեւ կարող են ձեզ համար որեւէ նորություն չպարունակել:

Այս կապակցությամբ, նախ, ներից ստիպված եմ ձեր ուշադրությունը հրավիրել մի կեղծ մտավարժանքի վրա, որով փորձ է արվում նախագահական կամ խորհրդարանական համակարգերից մեկի նախընտրումը վերածել ազգային, հոգեբանական գործոնի: Հաճախ կարելի է լսել. «Մեր ազգային նկարագրին կամ մեր ազգային հոգեբանությանն ավելի համապատասխանում է խորհրդարանական, քան նախագահական համակարգը» եւ հակառակ հայտարարությունները, որոնց հիմնազրկությունը ակնհայտ է առաջին իսկ հայացքից:

Նախագահական կամ խորհրդարանական համակարգերից մեկի նախընտրումը իրականում կապված է ոչ թե ազգային կամ հոգեբանական գործոնների, այլ պետական ավանդույթների, բաղամացիական հասարակության զարգացման մակարդակի, ժողովրդավարական ինստիտուտների ձեւավորման աստիճանի հետ: Ուստի հարցի բննարկումը կարող է իմաստալից դառնալ միայն այս տեսանկյունով եւ միասնական մեթոդոլոգիական ելակետ սահմանելու պայմանով:

Իսկ այդ միասնական տեսակետն, իմ կարծիքով, հանգում է հետեւյալին. պետականության եւ հասարակության զարգացման կոնկրետ կտրվածքում կառավարման նախընտրելի համակարգը որքանով է ի վիճակի ապահովելու օրենսդիր եւ գործադիր իշխանությունների արդյունավետ ու անխափան գործունեությունը եւ երբոր՝ դատական իշխանության անկախությունը:

Միեչեւ այդ հարցի բննարկմանն անցնելը, սակայն, ըստ երեւույթին, արժե պարզել, թե որն է կառավարման նախագահական եւ խորհրդարանական համակարգերի էական, սկզբունքային տարբերությունը: Ասսմն ամենեին տերմիններին չի վերաբերում. պետությունը կարող է ունենալ խորհրդարանի կողմից կամ նույնիսկ համաժողովրդական բվեարկությամբ ընտրված Նախագահ, բայց իրականում չլինել նախագահական: Ամբողջ հարցն, ըստ էության, այն է, թե իշխանության ո՛ր մարմինն է ձեւավորում կառավարությունը. եթե դա կատարում է Նախագահը, ապա մենք գործ ունենք զուտ նախագահական համակարգի հետ, իսկ եթե նշված իրավունքը վերապահված է խորհրդարանին, ապա տվյալ հանրապետությունը խորհրդարանական է՝ անկախ այն բանից՝

նա ունի Նախագահ, թե ոչ: Իրավաբանական նորություններն այստեղ որեւէ դեր չեն խաղում:

Զեւական տեսակետից խորհրդարանական հանրապետություններում խախտված է իշխանությունների տարանջատման թեեւ ոչ բացարձակ, բայց համենայն դեպս հիմնարար սկզբունքը, քանի որ գործադիր իշխանությունը համարյա ամբողջությամբ կախված է օրենսդիր իշխանությունից: Զեւական կողմն, իհարկե, նշանակություն չէր ունենա, եթե այդ կախվածությունը որեւէ բացասական ազդեցություն չգործեր կառավարման համակարգի կենսունակության եւ՝ օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեության արդյունավետության վրա:

Ոչ ոք չի կարող ժխտել, իհարկե, խորհրդարանական համակարգի կենսունակությունը, սակայն ոչ ոք չի կարող ժխտել նաեւ, որ խորհրդարանական համակարգը կենսունակ է միայն այն պետություններում, որտեղ պատմականորեն ձեւավորված են մեկ կամ առավելագույնը երկու-երեք լուրջ, զանգվածային կուսակցություն, որոնցից յուրաքանչյուրն ընդունակ է կազմել խորհրդարանական մեծամասնություն եւ դրա շնորհիվ ապահովել կառավարության արդյունավետ գործունեությունը: Իսկ խայտաբղետ, բազմակուսակցական խորհրդարանների ընտրության դեպքերում խորհրդարանական համակարգը հանգեցնում է թույլ կոալիցիոն կառավարությունների ձեւավորմանն ու հաճախ ներքին ցնցումների, որոնք շատ հաճախ ավարտվում են պետական հեղաշրջումներով եւ բռնատիրությամբ, կամ ոչ հազվադեպ՝ նաեւ օտար միջամտությամբ:

Խորհրդարանական համակարգի հաստատման դեպքում, իմ խորին համոզմամբ, Հայաստանին սպասում է, ահա, այս տխուր եւ ազգակործան հակատագիրը, որովհետեւ մեզ մոտ մեկ կամ երկու-երեք լուրջ զանգվածային կուսակցություններ կարող են ձեւավորվել լավագույն դեպքում միայն տասնյակ տարիներ հետո:

Ավելորդ եմ համարում այս համոզումը հիմնավորել պատմական փաստերով, որոնք անչափ առատ են: Թերեւս արժե այդ առումով հիշեցնել միայն Հայաստանի առաջին հանրապետության փորձը, որի գոյության երկուսուկես տարիների ընթացքում փոխվեց չորս կառավարություն: Կարծում եմ, դեռեւս չեն մոռացվել նաեւ եսկոմունիստական Հայաստանի պատմության առաջին տասներեք ամիսները, որոնք պետք

է գնահատվեն որպես հանրապետության խորհրդարանի եւ կառավարության առնակատման ամենաթեժ ժամանակաշրջան, որովհետեւ կարճատեւ միջոցում նախ խորհրդարանը կամովին զրկվեց կառավարության ձեւավորման լիազորությունից, իսկ այնուհետեւ ներքը հասավ կառավարության հրաժարականին:

Այսպիսով, ըստ ամենայնի, առնվազն առաջիկա մի քանի տասնամյակների հեռանկարում Հայաստանի Հանրապետությունում կառավարման նախագահական համակարգն այլընտրանք չունի: Եթե անգամ հանգամանքների բերումով Հայաստանում վերականգնվի խորհրդարանական կառավարումը, ապա միեւնույն է, մի քանի տարի հետո մեր հանրապետությունը կրկին վերադառնալու է նախագահական համակարգին, բայց անհուն զրկանքների ու անհամար վնասների գնով: Վստահ եմ սակայն, որ մեր ժողովուրդը թույլ չի տա այդ անհեթեթ սխալը:

Ասվեց արդեն, որ որեւէ պետության կառավարման համակարգի կենսունակությունը պայմանավորված է նրանով, թե որքանով է այն ապահովում օրենսդիր եւ գործադիր իշխանությունների արդյունավետ գործունեությունն ու երրորդ՝ դատական իշխանության անկախությունը:

Խորհրդարանի եւ կառավարության արդյունավետ գործունեությունն ապահովող եւ միմյանց լիովին հակակշռող հստակ մեխանիզմների մշակումից բացի, Սահմանադրական հանձնաժողովի նախագիծն, ըստ իս, հաջողությամբ լուծել է դատական իշխանության անկախության ապահովման խնդիրը:

Դատական իշխանության անկախության հիմնական երաշխիքն, ըստ այդ նախագծի, դատավորի անփոփոխելիության կարգավիճակն է: Այդ երաշխիքը զգալիորեն ամրապնդված է նաեւ դատական իշխանության համակարգում երկու նոր ինստիտուտների՝ Աղդարադատության խորհրդի եւ Սահմանադրական դատարանի ներմուծմամբ, որոնք համամասնական հիմունքներով ձեւավորվում են Հանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի կողմից:

Աղդարադատության խորհուրդն է Հանրապետության Նախագահին առաջարկում Գերագույն դատարանի նախագահի, տեղակալների, Գերագույն դատարանի անդամների թեկնածությունները, եզրակացություն տալիս, դատավորների թեկնածությունների եւ դատավորի լիազորությունները դադարեցնելու կամ կասեցնելու վերաբերյալ:

Իսկ Սահմանադրական դատարանի հիմնական իրավասությունն է՝ որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի համապատասխանությունը Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանի անկախության ամենացայտուն վկայությունն է այն, որ նրա որոշումները վերջնական են եւ վերանայման ենթակա չեն, ինչը բացառում է նրա նկատմամբ ճնշում գործադրելու որևէ հնարավորություն թե՛ Հանրապետության Նախագահի, թե՛ Ազգային ժողովի կողմից:

Սահմանադրական հանձնաժողովի նախագծի ամենալուրջ նվաճումներից մեկը պետք է համարել նաեւ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերին վերաբերող գլուխը, որի էությունը հիմնարարումն է տարածքային ինքնակառավարման՝ Հայաստանի համար անհարիր գաղափարից:

Առաջին հայացքից ապշեցուցիչ թվացող այս նորամուծությունը, սակայն, հիմնված է մեր երկրի առանձնահատկություններից բխող եզակի իրականության եւ կուռ փաստարկների վրա:

Վարչատարածքային միավորների ձեւավորումը, որպես կանոն, արդյունք է ավատական մասնատվածության հետեւանքով առաջացած պատմական գործընթացների կամ բազմազգ պետությունների բնակչության տեղաբաշխումից բխող բաժանումների: Չի կարելի բացառել, իհարկե, որ վարչատարածքային միավորների ձեւավորման գործում որոշ դեր են խաղացել նաեւ աշխարհագրական եւ տնտեսական գործոնները: Բոլոր դեպքերում, սակայն, վճռորոշը պատմական եւ էթնիկական գործոններն են եղել, մանավանդ որ տնտեսաաշխարհագրական միավորները շատ հաճախ համընկել են ավատական կամ էթնիկական սիրույթների սահմաններին:

Տարածքային ինքնակառավարումն, այսպիսով, թեկուզ ամենաժողովրդավարական երկրներում, ոչ թե բխում է համապետական շահերից կամ կառավարման նպատակահարմարությունից, այլ պարզապես պահպանվում է որպես պատմական բեռ, որը երբեմն հանգեցնում է պետական եւ տեղական շահերի լուրջ բախումների: Տարածքային ինքնակառավարումը՝ օժտված յուրահատուկ տեղական շահերով, սեփական բյուջեով եւ այլ առանձնաշնորհումներով, անխուսափելիորեն իր խորքում պարունակում է ֆեդերացիայի սաղմ, որն անհարիր է ունի-

տար պետությունների ձեւավորման հարաճուն ձգտումներին: Քանի դեռ այդ ձգտումները չեն արդարանում, պետությունները փորձում են օրենքների միջոցով գոնե նվազագույնի հասցնել պետական եւ տեղական շահերի միջեւ գոյություն ունեցող հակասությունները, բայց այդ շահերի լիակատար ներդաշնակություն միայն իշխանի է հաջողվում ստեղծել, այն էլ, որպես կանոն, ժամանակավոր:

Հայաստանն, ազատ լինելով պատմական այդ բեռից, եւ մանավանդ իր միատարր ազգային կազմով, թերևս աշխարհում եզակի հնարավորություն ունի կառուցելու դասական ունիտար պետություն, որը կարող է դառնալ նրա կայունության, տարածքային ամբողջականության եւ լիակատար իմքնիշխանության ամենահուսալի երաշխիքը:

«Հայաստանի Հանրապետություն», 14 հունիսի, 1994 թ.: Հրատարակված՝ «Պետության կայունության երաշխիքը ժողովրդական իանրաքվեով ընդունված Սահմանադրությունն է» վերնագրով: ՀՀԱՆԱ, 12/13.06.94, պաշտոնական տպագրություն: Նաեւ՝ ՀՀԱՆԱ, 28/13.06.94: Բնագիր: Ինքնագիր:

ԽՈՍՔ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻՄ

(29 օգոստոսի, 1994 թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Մեծարգո հյուրեր,

Այսօր սգացող հայ ժողովուրդը հայրենյաց սուրբ հողին է հանձնում եւ դեպի երկնային արքայություն ճանապարհում իր ամենամեծ երախտավորներից մեկին՝ Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսին:

Վեհափառ հայրապետի շուրջ հառասնամյա գահակալությունը, որ համընկավ ստալինյան բռնապետության թոթափման, մտքի ազատագրման ու մարդկային արժեքների վերականգնման տառապագին տարիներին, եղավ համակ նվիրումի, եկեղեցական բարեշինության եւ ազգային զարթոնքի փայլուն ժամանակաշրջան:

Եւ թեեւ այդ ժամանակաշրջանում մակընթացություններին հաջորդեցին նաեւ տեղատվություններ, ձեռնարկվեցին մտքի ու խղճի ազատության նոր-նոր սահմանափակումներ, բորբոքվեցին աճեճարկի ներեկեղեցական տարաձայնություններ, բայց Վեհափառ հայրապետը, միշտ գտնվելով Ամենայն հայոցի բարձրության վրա, իր իմաստուն եւ հավասարակշռված գործունեությամբ, անվրեպ ձեռնարկներով ու ծանրակշիռ խոսքով կարողացավ եկեղեցին ու իր հոտը հետու պահել աղետալի փորձություններից եւ անվերականգնելի կորուստներից:

Դրա համար պահանջվում էր, իհարկե, երկաթյա կամք, ծով համբերություն, խոր իմաստություն ու հեռատեսություն՝ հատկանիշներ, որ նախախնամությունը, բարեբախտաբար, Վեհափառին չէր զլացել:

Հասուն կյանքի ավելի քան յոթանասուն երկարուձիգ տարիների ընթացքում զգայասիրտ հայրապետը լիովին կիսեց իր ժողովրդին բաժին ընկած բոլոր տառապանքները եւ հայրենասիրական պատմի ու հովվապետական պատասխանատվության բարձր գիտակցությամբ ջանաց ամոքել նրա ցավերը, թեթեւացնել նրա բազմազան հոգսերը:

Վազգեն Վեհափառը, սակայն, բախտ ունեցավ նաեւ վայելելու իր ժողովրդի տարած հաղթանակները, հրճվելու նրա հաջողություններով, վերապրելու զանգվածային ներգաղթի ոգեւորությունը, մասնակցելու եռպատերազմյան Հայաստանի շենացմանը, ականատեսն ու նեցուկը լինելու արցախահայության հերոսամարտի եւ ողջունելու Հայոց պետականության վերականգնումը:

Երիտասարդական ավյունով նա լծվեց նորանկախ հանրապետության ամրապնդման սրբազան գործին՝ այն վեր դասելով մեացյալ բոլոր ժամանակավոր ու անցողիկ խնդիրներից, անչափ ոգեւորվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծման գաղափարով եւ իր աննձնական օրինակով ու անմիջական մասնակցությամբ բաջալերեց նրա հաջող ընթացքը:

Չնայած երկրի ներկա տխուր իրավիճակին, առկա հսկայական դժվարություններին, սոցիալ-տնտեսական ծանր խնդիրներին՝ Վեհափառ հայրապետը, օժտված լինելով հիմնականն ու երկրորդականը, անցողիկն ու մնայունը զանազանելու բացառիկ շնորհով, մինչեւ վերջին շունչը մնաց լավատես՝ հայ ժողովրդի եւ Հայաստանի Հանրապետության ապագայի նկատմամբ:

Հայ Առաքելական եկեղեցու 1700-ամյա պատմության մատյանում Վազգեն Վեհափառը երջանկությունն ունեցավ դասվելու հազվագյուտ կաթողիկոսների շարք, ովքեր իրենց ազգին ծառայեցին Հայոց անկախ պետականության գոյության պայմաններում՝ դրանով հնարավորություն ձեռք բերելով բազմապատկելու հովվապետական գործունեության արդյունքները: Վեհափառն այսպիսով իր աննձնական օրինակով եւս մեկ անգամ հաստատեց ազգի բնականոն գոյության երկու անհրաժեշտ պայմանների՝ պետության եւ եկեղեցու նակատագրի միասնության անառարկելի եզմարտությունը:

Նա թողեց, սակայն, նաեւ անկատար մի երազ, որի իրականացման համար թեեւ չխնայեց ոուեւ ջանք, մանավանդ գահակալության վերջին տարիներին: Այդ երազը Հայ Առաքելական եկեղեցու միասնության եւ ավանդական եվիրապետության վերականգնումն էր, որը որպես սուրբ պատգամ հանձնվեց մեր սերնդի խղճին:

Վեհափառ հայրապետը աշխարհից հեռացավ խլյակ դարձած մարմնով, բայց նրա փառավորված հոգին գնաց նախերելու երկնային արմայության մեջ՝ Լուսավորչի, Սահակի, Մեսրոպի, Ներսես Շնորհալու, Խրիմյան Հայրիկի անման հոգիներին թեւանցուկ:

Վազգեն կաթողիկոսի լուսավոր կերպարը հավերժ կմնա յուրահանչյուր հայի բաբախող սրտում՝ որպես եկեղեցաշինության, աննձնվիրության, հայրենասիրության եւ հաստատունության անանց խորհրդանիշ, իսկ նրա աղոթքները որպես պահապան հրեշտակներ մշտապես կհսկեն մեր փշոտ ուղին:

«Հայաստանի Հանրապետություն», 30 օգոստոսի, 1994 թ.:
ՀՅԱՆԱ, 28/29.08.94: Բնագիր: Ինքնագիր:

ԽՈՍՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(21 սեպտեմբերի, 1994 թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Մեծարգո հյուրեր,

Շնորհավորելով ձեզ հայ ժողովրդի ազգային մեծագույն տոնի առթիվ՝ սկզբից եւեթ ուզում եմ շեշտել Անկախության երրորդ տարելիցի խորհրդանշական իմաստը. երեք տարին, իհարկե, կարճ ժամանակ է որեւէ երկրի կայացման ճանապարհին, բայց մեր դեպքում պարունակում է հատուկ խորհուրդ, քանի որ արդեն իսկ ավելին է, քան տեւել է Հայաստանի առաջին հանրապետության կյանքը:

Այլոց թերեւս այդպես էլ մինչեւ վերջ անհասկանալի մնալու՝[1] դատապարտված կամ աննշան թվացող այս իրողությունը, դժվար չէ պատկերացնել, թե իրականում հպարտության ինչպիսի աղբյուր է ավելի շատ իր անցյալով ապրող հայ ժողովրդի համար՝ անկախ գոյության եւ սեփական ուժերին ապավինելու հոգեբանական արգելքը հաղթահարելու տեսակետից:

Հայաստանի ներկա անկախությունն, ըստ այդմ, արդեն ժամանակի փորձությանը դիմացած փաստ է, հետեւաբար՝ անշրջելի եւ անկորնչելի իրողություն: Եւ թող ոչ ոք պատրանքներ չփայփայի, թե շահարկելով առժամյա դժվարությունները, իր սին, եւ ըստ էության հակազ-

---

[1] *Տպագրում՝ մնաց, փոխանակ՝ մնալու: Ուղղում ենք ըստ ձեռագրի:*

գային նպատակներին հասնելու համար, կարող է հայ ժողովրդի վզին կրկին փաթաթել օտարի մերժված լուծը, մերժված իպար, մերժված հավիտյան:

Եթե ժողովուրդը չունի այս գիտակցությունը, եթե ամեն դժվարության առջև շարունակելու է ետ-ետ նայել, նշանակում է՝ նա ընդունակ չէ կերտել իր ապագան, ավելին՝ դատապարտված է կործանման:

Կարծում եմ, սակայն, որ Եւրոպայում շրջող հայտնի ուրվականով այլևս հնարավոր չէ զայրակղեցնել հայ ժողովրդին, քանի որ, ի տարբերություն այլ երկրների, այդ ուրվականը Հայաստանում ունի ոչ թե սոցիալական, այլ բացառապես ճակատագային բովանդակություն, այսինքն՝ այն ուղղված է նախ եւ առաջ Հայաստանի անկախության դեմ: Կարծում եմ նաեւ, որ ժամանակն է՝ այդ ուրվականի վտանգից խուսափելու համար համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության «Հանրաքվեի մասին» օրենքում՝ բացառելով այդ միջոցով Խորհրդային Միության վերականգնման, հետեւաբար՝ անկախության կորստի հնարավորությունը:

Վստահ եմ, որ ազգային բոլոր առողջ ուժերը, վերանալով ներքին տարածայնություններից ու ճաղատական պայքարի հոգեբանական պայմանականություններից, կպաշտպանեն օրենսդրական իմ այս նախաձեռնությունը՝ հանուն անկախության պահպանման, հանուն Հայոց պետականության ամրապնդման, որից ավելի վեհ խնդիր այսօր գոյություն չունի համայն հայության համար:

Իսկ որ Հայոց պետականությունը, բոլոր չար գուշակություններին հակառակ, կայանում ու բայլ առ բայլ ամրապնդվում է, որ հանրապետությունը գործնական հետեւողականությամբ ապացուցում է իր հավատարմությունը ժողովրդավարությանն ու տնտեսական բարեփոխումներին, որ Հայաստանն առայժմ հաջողությամբ նավավարում է տարածաշրջանային ու միջազգային հարաբերությունների բարդ օվկիանոսում՝ արդեն իսկ իրողություն է, որը ոչ ոք չի կարող ուրանալ՝ առանց մեղ գործելու նշմարտության եւ սեփական խղճի հանդեպ:

Պահպանելով ժողովրդավարական ձեռքբերումներն ու ներքին կայունությունը՝ Անկախության երրորդ տարվա ընթացքում Հայաստանը նկատելի հաջողությամբ շարունակեց իր առջեւ կանգնած երկու կարեւորագույն խնդիրների՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ու հանրապետության տնտեսական վիճակի բարելավման դժվարագույն գործը:

Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ծավալած ձմեռային երկարատեւ ու լայնամասշտաբ հարձակման լիակատար ձախողումից հետո, որն ի վերջո երկու կողմերին պատճառած անհամար զոհերից ու վիրավորներից բացի՝ ռազմաճակատի գծի որեւէ փոփոխության չհանգեցրեց, արդեն ավելի քան չորս ամիս է, ինչ պահպանվում է Թուսաստանի Դաշնության միջնորդությամբ ձեռք բերված զինադադարը՝ տեւողությամբ աննախադեպ պատերազմի ողջ ընթացքում:

Զինադադարը երկու անգամ վերահաստատվել է հակամարտող կողմերի կամքով, եւ պայմանավորվածություն է ձեռք բերվել այն շարունակել մինչեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմանը նվիրված համապարփակ բաղաքական պայմանագրի կնքումը:

Բացի զինադադարի երկարատեւ պահպանման իրենին արդեն խոսում փաստից, ուշագրավ է նաեւ այն հանգամանքը, որ հիշյալ վերահաստատումներն ու պայմանավորվածությունները կայացել են բացառապես հակամարտող կողմերի միջեւ ընթացող ուղղակի բանակցությունների միջոցով՝ հանգամանք, որ խնդրի ռազմական լուծումից հրաժարվելու նրանց պատրաստակամության ամենացայտուն վկայությունն է:

Սա է, ահա, Լեռնային Ղարաբաղում կայուն խաղաղության հաստատման պատմական պատեհությունը, որից օգտվելու պատասխանատվությունն արդեն, ըստ իս, ընկնում է ոչ այնքան հակամարտող կողմերի, որքան միջնորդ երկրների ու միջազգային կազմակերպությունների վրա, որոնց միջեւ ծագած լուրջ տարաձայնություններն առայժմ, դժբախտաբար, շեն հարթված:

Այդ տարաձայնություններն, ըստ էության, վերաբերում են երկու հարցի. առաջին՝ ո՞վ է խաղալու կենտրոնական դերը Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման խաղաղարար ծրագրում՝ ԵԱՀԽ-ն, ԱՊՀ-ն, թե՞ Թուսաստանը, եւ երկրորդ՝ ինչպիսի՞ կազմ են ունենալու հակամարտության գոտում տեղակայվելիք անվտանգության միջազգային ուժերը:

Ստեղծվում է այն տպավորությունը, որ միջնորդ երկրներն ու միջազգային կազմակերպությունները շահագրգռված են ոչ այնքան բուն

հակամարտության կարգավորմամբ, որոնք նրա հետ կապ չունեցող սեփական հաշիվներ ու հարաբերություններ պարզելով. այսինքն՝ նրանց հետաքրքրում է ոչ թե պատերազմի դադարեցումը, այլ դրա հետեւանքով առաջացող նոր իրավիճակն Ադրկովկասում:

Իսկ մեզ համար, ինչպես արդեն առիթ ունեցել ենք հայտարարելու, կարեւոր է ոչ թե այն, թե ով է խաղաղություն հաստատելու Լեռնային Ղարաբաղում, այլ այն, թե որքան արագ է հաստատվելու այդ խաղաղությունը, այլապես հիշյալ տարածայնությունների շուրջ ընթացող անվերջ բանակցությունները կարող են վտանգել առկա փխրուն զինադադարը, որի ամրապնդման համար միջազգային հանրությունն առայժմ ոչ մի գործնական բայլ չի ձեռնարկել:

Հուսով եմ, սակայն, որ առաջիկայում այդ հակասությունները վերջապես կվերանան, եւ միջազգային հանրությունը, ներդաշնակելով բոլոր միջոցառական ջանքերը, հանդես կգա Լեռնային Ղարաբաղում կայուն խաղաղության հաստատման միասնական ծրագրով, որի էությունը հավանաբար կլինի հետեւյալ բանաձեւը. Ռուսաստանի եւ ԱՊՀ-ի բաժանարար ուժեր (թերեւս նաեւ մի քանի այլ երկրների ուժերի խորհրդանշական մասնակցությամբ), գումարած՝ ԵԱՀԽ-ի եւ ՄԱԿ-ի դիտորդներ, գումարած՝ ՄԱԿ-ի մանդատ:

Համենայն դեպս, առայժմ մոտավորապես այս լուծումն է ենթադրում ընթացող բանակցությունների եւ դիվանագիտական շփումների տրամաբանությունը:

Ինչ վերաբերում է երկրորդ՝ Հայաստանի տնտեսական վիճակի բարելավման խնդրին, ապա այստեղ էլ առկա են ակնհայտ եւ հուսադրող կայունացման միտումներ, որոնք արտահայտվում են Անկախության երրորդ տարվա ընթացքում արձանագրված հետեւյալ իրողություններով.

- սկսած 1993 թ. հունիս ամսից՝ կասեցված է տնտեսական նախընթաց անընդհատ անկումը,
- ամսեամիս ապահովվել է արտադրության ծավալների թեկուզ դանդաղ, բայց պարբերական աճ,
- աշխուժացել է արտաքին առեւտուրը, մեծացել են արտահանումների եւ ներմուծումների ծավալները,
- համակարգվել է բեռնափոխանակումների իրականացումը,
- սանձվել է արժեզրկումը, կայունացել դրամի կուրսը,

- կրճատվել է բյուջեի դեֆիցիտը:

Այս ամենը, որով Հայաստանը շահեկանորեն տարբերվում է ԱՊՀ մյուս երկրներից, ձեռք է բերվել բացառապես հանրապետության ներքին կարողությունների առավելագույն օգտագործման շնորհիվ՝ առանց արտաքին ներարկումների, չհաշված մարդասիրական օգնությունը, որի նշանակությունը բոլոր դեպքերում, սակայն, շպետք է թերագնահատել:

Սակայն ներքին կարողությունների սահմանափակության պատճառով՝ հանրապետության տնտեսական վիճակի հետագա բարելավումն անհնար է պատկերացնել առանց միջազգային ֆինանսական կազմակերպությունների լուրջ օժանդակության եւ շոշափելի օտարերկրյա ներդրումների:

Այս առիթով գոհունակությամբ պետք է նշել հանրապետության կառավարության վարած հաջող բանակցությունները Միջազգային արժութային ֆոնդի եւ Համաշխարհային բանկի հետ, որոնց արդյունքում Հայաստանը, ամենայն հավանականությամբ, առաջիկա տարեմուտից վերջապես կստանա այնքան սպասված ու անհրաժեշտ ֆինանսական օգնությունը:

Իսկ օտարերկրյա ներդրումների հոսքը ակնհայտորեն կախված է խաղաղության գործընթացի խորացումից ու շրջափակումների վերացման հեռանկարից:

Թե՛ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման, թե՛ հանրապետության տնտեսական վիճակի բարելավման ապարեզում, այսպիսով, ես հակված եմ տեսնելու դրական տեղաշարժեր, որոնց ամրապնդումն ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում եւ ապագայում մեծապես պայմանավորված է Հայաստանի ներքին կայունությամբ, որն ընդհանրապես պետության բնականոն գործառնության միակ գրավականն է:

Պետք է նկատի ունենալ նաեւ, որ Հայաստանի հաղաքական կայունությունը, ներքին նշանակությունից բացի եւ որոշ առումով նրանից առավել, ձեռք է բերել տարածաշրջանային կայունության գործոնի կարեւորություն, որը համարժեքորեն էլ ընկալվում է միջազգային հանրության կողմից՝ ըստ էության հանդիսանալով մեր պետության հիմնական հաղաքական կապիտալներից մեկը՝ ժողովրդավարության եւ տնտեսական բարեփոխումների շարքում:

Եւ ես վստահ եմ, որ մեր ժողովուրդը ոչ մի դեպքում չի կորցնի իր այս ամենաթանկարժեք ձեռքբերումը, որովհետեւ դրա կորուստը հավասարազոր է ազգային աղետի, ինչպես ցույց է տալիս նորանկախ պետություններից շատերի օրինակը:

«Հայաստանի Հանրապետություն», 22 սեպտեմբերի, 1994 թ.:
Հրատարակված՝ «Հայոց պետականությունը կայանում եւ ամրապնդվում է» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/21.09.94: Բնագիր: Ինքնագիր:

ԽՈՍՔ՝ ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 75-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏՈՒՄ

(11 հոկտեմբերի, 1994 թ.)

Հարգելի գործընկերներ,

Երեւանի պետական համալսարանի հիմնադրման 75-ամյա հոբելյանի այս նշանակալից հանդիսության առիթով, կարծում եմ, նախ եւ առաջ պարտավոր եմ խորին ակնածանքի ու երախտագիտության մեր տուրքը հատուցել այն լուսավոր նվիրյալներին՝ Հայաստանի առաջին հանրապետության պատասխանատուներին ու մեծահամբավ հայ գիտնականներին, ովքեր մեր ժողովրդի համար ստեղծված դժվարագույն պայմաններում, ազգային գոյապայքարի ծանր օրերին ձեռնարկեցին հիրավի պատմական, հիրավի հոգեշնորհ մի գործ, որն արժանի է տեղ գրաղեցնելու Մաշտոցի եւ Տարեւացու մեծագործությունների կողքին:

Ես նկատի ունեմ առաջին հերթին Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանին, հանրային կրթության նախարարներ Գեւորգ Մելիք-Ղարագյոզյանին ու Նիկոլ Աղբալյանին, համալսարանի բուն կազմակերպիչներ Յուրի Ղամբարյանին ու Դավիթ Զավրյանին, դասախոսներ Ստեփան Մալխասյանցին, Մանուկ Աբեղյանին, Հակոբ Մանանդյանին, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանին, Երվանդ Տեր-Մինասյանին, Սիրական Տիգրանյանին, Ռուբեն Աբրահամյանին, Աշխարհրեկ Քալանթարին, Գրիգոր Ղափանցյանին, որոնց հետագայում միացան Հրաչյա Աճառյանը, Ալեքսանդր Թամանյանը, Լեոն, Գեւորգ

Ասատուր, Թադեոս Ավդալբեգյանը, Առսեն Տեռտեռյանը եւ շատ ուրիշ լուսավոր գիտնականներ:

Մի քանի տարվա ընթացքում, փաստորեն, հաջողվեց նոր հաստատված համալսարանի շուրջ համախմբել եւրոպական մայրաքաղաքներում բարձրագույն կրթություն ստացած եւ ազգային ու համաշխարհային գիտական շրջանակներում արդեն իսկ ճանաչում գտած համարյա բոլոր մտավոր ուժերը՝ անգնահատելի մի հանգամանք, որը միանգամից ապահովեց Երեւանի համալսարանի՝ միջազգային չափանիշներին համապատասխանող գիտակրթական մակարդակը:

Համալսարանը սնուցող մյուս կենսական աղբյուրը Մոսկվայի Լազարյան եճմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի եւ Էջմիածնի Գեւորգյան եճմարանի կառողություններն էին, որոնց շնորհիվ նրա հիմքում դրվեց նաեւ հայ միջնադարյան մտքի լուսավորական ժառանգությունը, որն ակունք էր առնում գլանդյան եւ տաթեւյան ավանդույթներից:

Այսպիսով, համալսարանի հիմնադրմամբ ես մեկ անգամ ապշեցուցիչ հետեւողականությամբ դրսեւորվեց լայն առումով ընկալվող հայ հոգեւոր մշակույթի զարգացման անխախտ օրինաչափությունը. այն է՝ մի կողմից անմիջնորդ հաղորդակցությունը ժամանակի հաղաքակրթության ամենաբարձր նվաճումներին, մյուս կողմից՝ ազգային ավանդույթի ժառանգականության ապահովումը:

Բացառությամբ, թերեւս, անտիկ մտածողության, նման անմիջական ճանապարհով են Հայաստան թափանցել հաջորդաբար հելլենիզմի, ասորական ու բյուզանդական հրիստոնեաբանության, նորպլատոնականության գաղափարներն ու համակարգավորված ուսմունքները: Հայ ժողովուրդը նաեւ առաջինն էր արեւելյան ազգերից, որ հետագայում նույնպիսի ոչ միջնորդավորված ճանապարհով եւ գրեթե անհապաղ յուրացրեց եւրոպական սխոլաստիկայի, Վերածնության ու Լուսավորության շրջանի գիտական արգասիքները:

Հայ մշակույթը երբեմ չմնաց փոխառված գիտելիքների սոսկական պատճենողի դերում, այլ, ստեղծագործաբար յուրացնելով այդ բազմերանգ հարստությունը, ստեղծեց սեփական մտքի ձեւավորված համակարգը, որը, որպես անընդհատ կուտակվող ժառանգություն, փոխանցվեց սերնդե-սերունդ՝ հակառակ անկման ու վերելքի իրարահաջորդ ժամանակներին:

20-ական թվականների համալսարանն, անշ, հիմնված լինելով հազարամյա հայ մշակույթի էությունը կազմող այս առողջ արմատների վրա, հաստատուն մտադրությամբ ու գործնական բայլերով նախանշեց մայր ճուռը, որով պետք է ընթանար արդի հայ գիտության եւ բարձրագույն կրթության բնականոն զարգացումը:

Հետագայում, սակայն, այդ ճուռը ենթարկվեց լուրջ ձեւախեղումների, որոնց հետեւանքով նախ խափանվեց անմիջական ու համընթաց հաղորդակցությունը արտաքին աշխարհի գիտական նվաճումներին, իսկ այնուհետեւ գրեթե լիովին խզվեց նաեւ համալսարանական կրթության կապը միջնադարյան հայ մշակույթի ժառանգության հետ:

Վուլգար-մատերիալիզմի համատարած տիրապետությունը ծանր հարված հասցրեց հատկապես հումանիտար գիտություններին՝ փիլիսոփայությանը, պատմությանը, տնտեսագիտությանը, իրավաբանությանը, գրականագիտությանը, արվեստաբանությանը, լեզվագիտությանը, մանկավարժությանը: Այդ հարվածից, սակայն, զերծ չմնացին անգամ բնական եւ ճշգրիտ գիտությունները, մասնավորապես գենետիկան եւ կիբեռնետիկան:

Համալսարանը չխուսափեց նաեւ մեր ժողովրդին բաժին ընկած դառը ֆիզիկական փորձություններից. հարյուրավոր դասախոսներ ու ուսանողներ զոհ դարձան ստալինյան բռնապետության գիշատիչ հաճածանքի: Հարյուրավորներ էլ, կատարելով իրենց հայրենասիրական պարտականությունը, կյանքը տվին Երկրորդ համաշխարհային պատերազմի ճակատներում:

Այնուամենայնիվ, հակառակ գաղափարախոսական բնույթի այդ աղետալի ծայրահեղություններին եւ ամբողջատիրական վարչակարգի բիրտ ճնշմանը, Երեւանի պետական համալսարանը 75 տարի շարունակ պատվով կատարեց պետական, գիտական եւ մանկավարժական կադրերի պատրաստման ազգաշահ խնդիրը, միշտ մնալով հանրապետության մայր բուհի բարձրության վրա՝ հաստատություն, որից աստիճանաբար հյուղավորվելով, փաստորեն, ձեւավորվեց Հայաստանի բարձրագույն կրթության ողջ համակարգը:

Բացի զուտ գիտակրթական գործունեությունից, համալսարանն այդ տարիներին աչքի ընկավ եւս մի կարեւոր առաքելությամբ՝ դառնալով հանրապետու-թյան հասարակական-քաղաքական կյանքի ոչ ֆորմալ

կենտրոնը, որը, շարունակ ստեղծելով բաղաքացիական եւ ազգային բնույթի լուրջ խնդիրներ ու դրանով զգալիորեն նպաստելով ժողովրդի հասարակական գիտակցության բարձրացմանը, մշտական մտահոգություն էր ստեղծում ամբողջատիրական վերնախավի համար: Դա վերաբերում է, ի դեպ, ոչ միայն համալսարանի դասախոսական կազմին եւ ուսանողությանը, այլեւ նրա կուսակցական կազմակերպությանը, որը կոմունիստական ուղղափառության տեսակետից համարվում էր ամենաանհնազանդն ու վտանգավորը Հայաստանում:

Ինչպես ամենուր, համալսարանում եւս ազգային-բաղաքական խմորումներն սկսվեցին խրուշչովյան ազատությունների շրջանում: 1965 թ. ապրիլի 24-ին համալսարանականները գոնվում էին Խորհրդային Միությունում տեղի ունեցած առաջին համաժողովրդական ցույցի առաջնորդող շարքերում: 1967-ին համալսարանի ուսանողներն էին, որ մեծ դժվարությունների եւ անհրաժեշտ զաղտնապահություն պահանջող ջանքերի գնով առաջին ծաղկեպսակը դրին Մեծ եղեռնի զոհերի հուշարձանին: Հաջորդ տարի առաջին անգամ կրկին համալսարանում հաջողվեց վերից իջեցված թեկնածուի փոխարեն հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր առաջադրել սեփական թեկնածուին՝ մեծ հայրենասեր, ակադեմիկոս Աւետիս Ահարոնյանին: Իսկ 1978 թվականին հատկապես համալսարանի շնորհիվ էր, որ ՀԽՍՀ նոր Սահմանադրության մեջ պահպանվեց հայերենը որպես պետական լեզու սահմանող հոդվածը:

Համալսարանի դասախոսները եւ ուսանողները զանգվածային մասնակցություն բերին նաեւ 1988 թվականին ծագած դարաբաղյան ազգային-ազատագրական շարժմանը՝ դրանով հսկայական ավանդ ներդնելով Հայաստանի պետական անկախության վերականգնման գործում:

Նշելով այս ամենը, ես ուզում եմ հատուկ ընդգծել ըստ արժանվույն Երեւանի պետական համալսարանին պատկանող այն նշանակալից դերը, որ նա կատարել եւ այսօր էլ շարունակում է կատարել ինչպես գիտակրթական գործունեության, այնպես էլ մեր ժողովրդի հասարակական գիտակցության ձեւավորման բնագավառում:

Եւ այս կապակցությամբ սրտանց շնորհավորելով համալսարանի բոլոր շրջանավարտներին, դասախոսական ներկա կազմին եւ ուսանո-

դությանը, ինչպես նաեւ վստահ լինելով, որ ժամանակավոր դժվարությունները ձեզ երբեմ չեն շեղի ազգային գերխնդիրների լուծմանը ծառայելու պատասխանատվությունից, մաղթում եմ ձեզ հաջողություն եւ բեղմնավոր աշխատանք՝ ի շահ հայկական գիտության բարձր վարկի պահպանման, ի շահ Հայոց պետականության ամրապնդման:

«Հայաստանի Հանրապետություն», 12 հոկտեմբերի, 1994 թ.:
Հրատարակված՝ «Համալսարանի հիմնումը հիրավի պատմական, հոգեշնորհ գործ էր» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/11.10.94: Բնագիր: Ինքնագիր:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(15 նոյեմբերի, 1994 թ.)

Մեծարգո տիկին Մանուկյան,

Սիրելի հայրենակիցներ,

Ինձ վերագույն գոհունակություն է պատճառում սրտագին ողջույնի եւ երախտագիտության խոսք ուղղել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության առաջին անգամ Հայաստանի հողում տեղի ունեցող համագումարի հարգարժան պատգամավորներին եւ հյուրերին, քանզի ինքնին արդեն ուշագրավ այս փաստին հակված եմ ընծայելու թե՛ խորհրդանշական, թե՛ բովանդակային խոր իմաստ:

Խորհրդանշականը Հայոց անկախ պետականության իրողության մի նոր ու գեղեցիկ հաստատումն է, քանի որ առանց այդ իրողության համագումարը չէր կարող Երեւանում տեղի ունենալ, իսկ բովանդակայինը՝ Բարեգործական Միության գործունեության ակնհայտ վերակողմնորոշումն է դեպի հայրենահայության մաքառման սատարումը, ամենեւին չանտեսելով, իհարկե, նաեւ Սփյուռքի կարիքները:

Հիմնվելով 1906 թվականին, հայկական ամենածաղկուն գաղութներից մեկում՝ Եգիպտոսում, Բարեգործականը շատ շուտով տարածվեց համարյա բոլոր այն երկրներում, որտեղ ապաստան գտան եղեռնից մազապուրծ արեւմտահայության բեկորները: Եւ կարճ ժամանակի ընթացքում, շնորհիվ իր առողջ արմատների եւ ազգային մեծ բարերարների աջակցության, Միությունը վերածվեց հսկա կազմակերպված ու լայնորեն ճյուղավորված կառույցի՝ Հայ Առաքելական Եկեղեցուց հետո,

փառորեն, դառնալով երկրորդ, հիրավի, համահայկական հաստատությունը:

Եթե սփյուռքահայ գաղթօջախներում կա մի կազմակերպություն, որը, թեեւ պայմանականորեն, բայց իրավամբ կարող է հավակնել Սփյուռքի յուրահատուկ կառավարության դերին, ապա դա Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունն է՝ իր շուրջ 25 հազար անդամներով, 200-ի հասնող մասնաճյուղերով, մանկապարտեզների, դպրոցների, ակումբների, որբանոցների, ծերանոցների, հիվանդանոցների ցանցով, մշակութային ու երիտասարդական կենտրոններով, համալսարանական կրթաթոշակներով, հրատարակչական գործունեությամբ եւ այլն:

Այդ կառավարությունը յուրահատուկ է նախ եւ առաջ այն առումով, որ երբեք չխառնվեց քաղաքականությանը՝ լիովին նվիրվելով սփյուռքահայության հոգեւոր եւ սոցիալական կարիքների հոգացողությանը: Թեեւ եղան փորձեր՝ Բարեգործականը ներքաշելու քաղաքական խնդիրների ոլորտ, բայց, ի պատիվ իրեն, նա մշտապես պահպանեց ապաքաղաքական, զուտ մարդասիրական, ազգային կազմակերպության իր նկարագիրը:

Յուրահատուկ է նաեւ նրանով, որ Բարեգործական Միության գործունեությունը, թեեւ հիմնականում ուղղված սփյուռքահայության ցավերի ամոքմանը, չսահմանափակվեց միայն Սփյուռքով, այլ, հավատարիմ համահայկական իր կոչմանը, հաստատությունը լուրջ գործեր ձեռնարկեց նաեւ հայրենի հողում՝ մասնավորապես 1924–1937 թվականների, 1946–1948 թթ. ներգաղթի տարիներին, ինչպես նաեւ 1988 թ. աղետալի երկրաշարժից եւ Հայաստանի անկախության վերականգնումից հետո: Եթե ժամանակ առ ժամանակ, դժբախտաբար, Բարեգործականի եւ հայրենիքի կապերը խզվեցին, ապա ամենեւին ոչ թե նրա, այլ բացառապես խորհրդային վարչակարգի մեղքով:

Յուրահատուկ է նաեւ այն տեսակետից, որ այդ կառավարությունը հաջորդաբար գլխավորեցին Սփյուռքի ամենամեծ բարերարներն ու անառարկելի հեղինակությունները՝ Պողոս Նուպար փաշան, Գալուստ Կյուլպենկյանը, Զարեհ Նուպարը, Արշակ Կարագյոզյանը, Ալեք Մանուկյանը եւ Լուիզ Սիմոն Մանուկյանը:

Բարեգործական միության բարգավաճման եւ նրա գործունեության անսահման ծավալման գործում մեծ է դերը հատկապես Ալեք Մանուկյանի, որը 36 տարի հաստատությունը գլխավորելուց հետո, մնալով նրա ցկյանս պատվավոր նախագահ, չնայած իր նահապետական տարիքին, այսօր էլ լի է իր կյանքի առաքելությունը շարունակելու լուրջ մտահղացումներով. դրա վկան ես եղա երկու ամիս առաջ Դետրոյտում նրա հետ ունեցած անձնական հանդիպումների ընթացքում: Հայրենահայությունը, բարձր գնահատելով Ալեք Մանուկյանի բացառիկ ծառայությունները, ի նշան երախտագիտության, նրա անունով կոչեց Երեւանի ամենագեղեցիկ պողոտաներից մեկը: Իսկ այսօր իմ հրամանագրերով Ալեք Մանուկյանին՝ բազմամյա ազգանվեր ու հայրենանվեր գործունեության համար շնորհվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, «Հայաստանի ազգային հերոսի» կոչում եւ հանձնվում Հայրենիքի շքանշան:

Ալեք Մանուկյանի ազգաշահ գործը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահի պաշտոնում այսօր հաջողությամբ շարունակում է նրա ազնվազարմ դուստրը՝ տիկին Լուիզ Սիմոն Մանուկյանը, որի հետեւողական ջանքերի շնորհիվ Հայաստանը վերստին տեղ է գրավում հաստատության գործունեության առաջնահերթությունների շարքում: Տիկին Մանուկյանը եւ նրա գլխավորած կազմակերպությունը առաջիններից մեկն էին Սփյուռքում, որ, անմիջապես արձագանքելով Հայաստանի անկախության նոր իրողությամբ ստեղծված պահի հրամայականին, լծվեցին հայրենի պետականության ամրապնդման նվիրական գործին: Նման պատրաստակամությունը թելադրված էր այն վեհ գիտակցությամբ, որ, չնայած Սփյուռքի կյանքի մշտական, առօրյա հոգսերին, համայն հայության համար այսօր առաջնայինը Հայոց պետականության կայացումն ու նրա օժանդակությամբ Արցախի խնդրի արդարացի լուծումն է:

Որքան ինձ թույլ են տալիս դատելու իմ անձնական շփումներն ու հանրային հանդիպումները, այս գիտակցությունն այժմ արդեն տիրապետող է Սփյուռքի կազմակերպությունների ու սփյուռքահայ զանգվածների ջախջախիչ մեծամասնության շրջանակներում: Հայաստան – Սփյուռք կապերը երբեք այնքան ազատ, այնքան սերտ, այնքան գործնական եւ այնքան արդյունավետ չեն եղել, որքան ներկայումս: Եւ թող

ոչ ոք զուր հույսեր չփայփայի, թե ստահոդ լուրերով, ասեկոսեներով ու բամբասանքներով կարող է պղտորել մարդկանց մտքերը եւ սեպ խրել մեր ժողովրդի երկու հատվածների միասնության մեջ:

Յուրաքանչյուր հայի գնահատման չափանիշն այսօր նրա բերած ավանդն է ազգային պետականության ամրապնդման գործին՝ անկախ այն բանից, թե ով է այդ պետականության իշխանության գլուխ: Ցանկացած վերապահություն այդ ավանդը ներդնելու խնդրում, հոգ չէ թե առերեւույթ ինչպիսի համոզիչ փաստարկներով հաստված, ընդամենը պարզ ամբոխավարություն է եւ փոխրոգի դաւաճանություն: Հայոց ազատ ու անկախ պետականությունը, սակայն, այն հզոր ձգողական ուժն է, որը շուտով, համոզված եմ, դարձի կբերի անգամ ինչ-ինչ պատճառներով առայժմ վերապահություն դրսեւորող տարրերին:

Համայն հայության իղձերի իրականացման՝ Հայոց պետականության կայացման եւ Արցախի ազատագրման գործում այսօր տեղի է ունենում աշխատանքի ու զոհաբերության բնական բաժանում: Հանուն ազգային ազատագրության մաքառող Արցախը զոհում է իր հաջարի զավակների կյանքն ու արյունը: Անկախ գոյության սեփական երաշխիքները կերտող Հայաստանի բնակչությունը պատերազմի եւ շրջափակումների հետեւանքով ենթարկվում է ծանր զրկանքների ու փորձությունների: Իսկ Հայաստանի անկախությամբ ու արցախյան հերոսամարտով իր ազգային արժանապատվությունը վերագտած սփյուռահայությանը բաժին է ընկնում բարոյական, հաղաքական եւ նյութական մասնակցությունը: Ուստի ակնհայտ է, որ վերջնական հաղթանակը կախված է մեր ազգի այս երեք հատվածներից յուրաքանչյուրի՝ սեփական պարտքը կատարելու փութաջանությունից: Որեւէ թերացում երեք հակատներից մեկում կարող է եթե ոչ անպայման վիժեցնել ազգային իղձերի իրականացումը, ապա, անկասկած, հանգեցնել նոր կորուստների ու զրկանքների:

Հայաստանի ու Արցախի տնտեսության վերականգնման գործում սփյուռահայության նյութական օժանդակությունը ապահովելու խնդրին է ուղղված «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեությունը, որը Հայ Առաքելական Եկեղեցու եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կողքին արդեն իսկ, փաստորեն, դարձել է երրորդ համահայկական հաստատությունը՝ իր մասնաճյուղերն ունենալով թե՛

Հայաստանում ու Արցախում, թե՛ Սփյուռքի բոլոր հայաշատ կենտրոններում: Բարեգործականի գործիչները ներկայացված են ինչպես հիմնադրամի բարձրագույն ատյանում՝ Հոգաբարձուների խորհրդում, այնպես էլ՝ բոլոր տեղական հանձնախմբերում: Պատրաստ եմ համարում հաստատել այն շոշափելի նպաստը, որ Բարեգործական Միության աղդամները բերին «Հայաստան» համահայկական հիմնադրամի եւ «Ամերիկայի միացյալ հայկական ֆոնդի» համատեղ նախաձեռնությամբ կազմակերպված 1993–1994 թթ. «Զմեռ» ծրագրի իրականացմանը: Վստահ եմ, որ այսուհետեւ եւս Բարեգործականը կանի ամեն ինչ՝ զորացնելու համար «Հայաստան» համահայկական հիմնադրամի սփյուռքյան կառույցները:

Իսկ այժմ եւս մեկ անգամ ողջունելով Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության համագումարի պատգամավորներին եւ հյուրերին, ինչպես նաեւ արտանց շնորհավորելով բոլորիդ համագումարի՝ երեւանում անցկացվելու նշանակալից փաստի առթիվ, ցանկանում եմ ձեզ մաղթել հաջառողջություն, անսպառ եռանդ եւ մեծամեծ հաջողություններ հայապահպանության, Հայաստան – Սփյուռք կապերի ամրապնդման, Հայոց պետականության զորացման ուղղությամբ ձեր ծավալած անձնվեր գործունեության ասպարեզում:

«Հայաստանի Հանրապետություն», 18 հոկտեմբերի, 1994 թ.: Հրատարակված՝ «Հայաստան – Սփյուռք կապերը երբեք այնքան ազատ, այնքան սերտ, այնքան գործնական եւ այնքան արդյունավետ չեն եղել, որքան ներկայումս» վերնագրով: ՀՀԱՆԱ, 12/15.10.94: Բնագիր: Մեքենագիր:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ՝ ԱՄԱՆՈՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՄՈՒՏԻՆ

(31 դեկտեմբերի, 1994 թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Նախ եւ առաջ ուզում եմ անհուն գոհունակությամբ նշանավորել հետեւյալ ուշագրավ իրողությունը. վերջին հինգ տարիների ընթացքում սա առաջին Ամանորն է, որ մեր ժողովուրդը դիմավորում է խաղաղության պայմաններում. սահմաններում անդորր է, Արցախը՝ ամուր ու արթուն: Կա՞ արդյոք ավելի ցանկալի ու ավելի թանկագին ակնթարթ, երբ ոչ մի զինվոր չի զոհվում, երբ ոչ մի մայր չի մտահոգվում խրամատում գտնվող որդու ճակատագրով:

Ահա սա է անցած տարվա երկնաշնորհ պարգեւը, որի առաջ մնացյալ ամեն ինչ խամրում է, դառնում չնչին ու երկրորդական:

Խաղաղությունը նվաճվեց արցախահայ քաջորդիների գերմարդկային սխրագործության ու սուրբ արյան գնով, ղարաբաղյան պատերազմի ամենասաստիկ հանգրվանում, որը համընկավ 1993–1994 թվականների ձմռան ամիսներին:

Մայիսը բերեց անդորրություն, մայիսը կրկին Ղարաբաղի հարցը մտցրեց քաղաքական կարգավորման հունի մեջ: Մայիսին կնքված զինադադարից հետո Արցախն այլեւս բոլոր բանակցություններում հանդես եկավ որպես հակամարտության ճանաչված կողմ՝ ըստ այդմ հնարավորություն ձեռք բերելով նաեւ դիվանագիտական ճակատում պաշտպանելու իր իրավունքները:

Ղարաբաղի հակամարտության քաղաքական կարգավորման գործընթացը նոր փուլ մտավ Եվրոպայի անվտանգության եւ համագոր-

ծակցության խորհրդի բուդապեշտյան գագաթնաժողովում: Համաեւրոպական այս ճեղինակավոր կազմակերպությունը փաստորեն առաջին անգամ հաղաքական որոշում կայացրեց հակամարտության գոտում միջազգային խաղաղարար ուժեր տեղակայելու մասին: Թեեւ առայժմ տեխնիկական առումով պարզված չեն այդ ուժերի մանդատին, բանակին ու կազմին վերաբերող հարցերը, սակայն նման կարեւոր հաղաքական որոշման առկայությունը վստահություն է ներշնչում, որ դրանք կլուծվեն մոտակա ժամանակներում, եւ այդման քանկ գնով ձեռքբերված զինադադարը վերջապես կվերածվի կայուն խաղաղության:

Զինադադարի շունչն իր բարերար ազդեցությունն ունեցավ նաեւ հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: 1994 թվականը նախորդների համեմատությամբ այս տեսակետից փաստորեն եղավ առաջին անցնցում տարին, որի բնորոշիչներն են՝ տնտեսության անկ, դրամի կայունացումը, բյուջեի պակասորդի կրճատումը, սղաճի սանձումը, աղետի գոտում իրականացված շինարարությունը եւ այլն: Էապես խորացավ նաեւ տնտեսական բարեփոխումների՝ սեփականաշնորհման, հարկային համակարգի կարգավորման, կառավարման մեխանիզմների կատարելագործման գործընթացը:

Տնտեսական կայունացման միտումները, առկա զինադադարն ու բարեփոխումների հաջող ընթացքը հիմք հանդիսացան միջազգային ֆինանսական կազմակերպությունների աջակցությամբ մշակելու Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման 1995 թվականի համալիր ծրագիրը, որն ուղղված է առաջին հերթին մակրոտնտեսական հավասարակշռության հաստատմանը: Ծրագրի հաջող իրականացման, համաշխարհային հանրության կողմից հատկացված վարկերի նիշտ օգտագործման դեպքում 1996 թվականը խոստանում է դառնալ բեկումնային տարի Հայաստանի տնտեսության վերականգնման եւ նրա հետագա զարգացման տեսակետից:

Թեեւ ծրագրի իրականացման հիմնական արդյունքները սպասվում են 1996 թվականին, սակայն առաջիկա տարում արդեն մեր ժողովուրդը կզգա դրական տեղաշարժեր, մասնավորապես՝ ռեալ եկամուտների աճի եւ բնակչության սոցիալապես թույլ պաշտպանված շերտերի կարիքների բավարարման առումով: Բացի զուտ տնտեսական նպատակ-

ներից, ծրագրում լուրջ ներդրումներ են նախատեսված նաեւ առողջապահության, կրթության, մշակույթի եւ գիտության ոլորտներում:

Այս ամենը վստահություն է ներշնչում, որ առաջիկա 1995 թվականը կդառնա մեր ժողովրդի հոգսերի թեթեւացման եւ անկախ պետականության շոշափելի արգասիքների դրսեւորման տարի:

Առողջության, երջանկության եւ բարգավաճման ջերմագին մաղթանքով՝ շնորհավոր ձեր Նոր տարին:

«Հայաստանի Հանրապետություն», 1 հունվարի, 1995 թ.:
Հրատարակված՝ «1995 թվականը կդառնա մեր ժողովրդի հոգսերի թեթեւացման եւ անկախ պետականության շոշափելի արգասիքների դրսեւորման տարի» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/31.12.94: Բնագիր: Ինքնագիր:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ

(18 հունվարի, 1995 թ.)

Մեծարգո նախագահ,

Մեծարգո պատգամավորներ,

Ինձ համար բավականին հեշտ ու հաճելի է խոսել 1994 թվականի մասին, որովհետեւ այն հիրավի դարձավ անկախության ժամանակաշրջանի առաջին անցնցում տարին՝ միաժամանակ թե՛ հաղթականի, թե՛ սոցիալական, թե՛ տնտեսական տեսակետներից:

Իրողության ակնհայտությունն ապացուցման կարիք չունի, եթե հիշելու լինենք նախորդ տարիների փոթորկահույզ իրադարձությունները: Այսպես.

1991 թվական.

- Գետաշենի, Շահումյանի եւ Հադրութի շրջանների հայկական գյուղերի տեղահանությունը.
- օգոստոսյան պետական հեղաշրջումը:

1992 թվական.

- զարնանային հաջողություններին հաջորդած ռազմական պարտությունները Շահումյանում, Մարտակերտում, Ւրծվաշենում,
- Աբխազական երկաթուղու խափանումը:

1993 թվական.

- ռուբլու գոտու հայհայմամբ պայմանավորված ֆինանսական նգնաժամը.
- հայ-ռուսական հարաբերություններում ծագած ժամանակավոր թյուրըմբռնումը:

1994 թվականը թեև նույնպես սկսվեց չափազանց ծանր պայմաններում՝ կապված Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ծավալած լայնամասշտաբ հարձակման եւ ազգային դրամի ներդրման բնական դժվարությունների հետ, սակայն գարնան վերջում այս երկու խնդիրներն էլ արդեն հիմնովին հաղթահարված էին:

Դրանից հետո հանրապետությունը փաստորեն մտավ սոցիալ-տնտեսական կայունացման բնականոն ընթացքի մեջ, որ շարունակվում է մինչեւ օրս: Ոչ մի հիմք չկա կասկածելու, որ այս դրական միտումը կպահպանվի նաեւ առաջիկայում: Այսինքն, մենք գործ ունենք արդեն ոչ թե պատահական, անբացատրելի, ժամանակավոր երեւույթի, այլ հիմնավոր հասարակական-քաղաքական եւ սոցիալ-տնտեսական գործընթացի հետ, որ հետեւանք է հանրապետության օրենսդիր եւ գործադիր իշխանությունների առերեւույթ դժվարըմբռնելի, բայց իրականում նպատակասլաց գործունեության: Իսկ թե ինչո՞ւ դժվարըմբռնելի՝ դա պետք է համարել պետական բարոզչության տկարության արդյունքը, որի մասին պետք է լրջորեն մտածեն համապատասխան մարմինները:

Խորհրդարանն անցյալ տարի բազմաթիվ հնարավորություններ է ունեցել ծանոթանալու Հանրապետության Նախագահի եւ վարչապետի՝ երկրի համար կարեւորագույն հետաքրքրություն ներկայացնող հարցերին նվիրված կույտերին, ուստի ավելորդ եմ համարում այսօր կրկին մանրամասնորեն անդրադառնալ դրանց: Հիշեցման կարգով նշեմ միայն, որ 1994 թվականին խորհրդարանի առջեւ ես հանդես եմ եկել չորս անգամ՝ սեփականաշնորհման տարեկան ծրագրի, Սահմանադրության ընդունման կարգի, Սահմանադրության մշակված տարբերակների եւ կառավարության ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների պատրաստած տնտեսական ծրագրի հնարավորությունների ժամանակ:

Խուսափելով մանրամասներից, ես այժմ կփորձեմ ներկայացնել ու գնահատել անցյալ տարվա հատկանշական ուղղությունները՝ կանգ առնելով մասնավորապես երեմ կարեւորագույն խնդիրների վրա, որոնք են.

ա) Լեռնային Ղարաբաղում հաստատված երկարատեւ զինադադարն ու ղարաբաղյան հակամարտության դիվանագիտական կարգավորման բնականոն զարգացումը,

բ) հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացման հարաւոում միտումները,

գ) միջազգային ֆինանսական կազմակերպությունների եւ երկարակցված աջակցության ապահովումը:

* * *

1994 թվականի ամենանշանակալից իրադարձությունն, անշուշտ, ութամսյա զինադադարն է՝ ամենաերկարատեւն ու ամենակայունը ղարաբաղյան պատերազմի ողջ պատմության ընթացքում: Ռուսաստանի եւ ԵԱՀԽ-ի միջնորդական ջանքերի, ինչպես նաեւ հակամարտող կողմերի բաղաքական կամքի դրսեւորման արդյունք հանդիսացող այս զինադադարի նշանակությունը, սակայն, ըստ իս, թե՛ նախադրյալների եւ թե՛ մանավանդ հետեւանքների տեսակետից առայժմ ըստ արժանվույն չի գնահատված:

Զինադադարի կայացման փաստը բոլորովին անհասկանալի կմնա, երբ նկատի չունվի նրան նախորդած շուրջ հինգամսյա ռազմական իրադրությունը՝ ամենաթեժն ու ամենաաղետաբեր ղարաբաղյան հակամարտության ողջ ժամանակամիջոցում:

1993–1994 թթ. ձմռան ամիսներին Լեռնային Ղարաբաղի դեմ ողջ ռազմանակատի գծով Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ հարձակումը հանդիսացավ արցախահայության ինքնապաշտպանական կռիվը հանդիսացավ արցախահայության ինքնապաշտպանական կռիվների թեև դաժան, բայց համոզիչ հիմնությունը: Երկարատեւ ու ծանր պաշտպանական մարտերից հետո ապրիլ ամսին անցնելով հակահարձակման՝ Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը լիակատար հակահարձակման՝ Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը լիովին վերականգնեցին նախորդ տարվա աշնանը ձեւավորված ստատուս-քվոն՝ գոտարած Մարտակերտի շրջանի մի շարք բնակավայրերի, այդ թվում՝ շրջկենտրոնի ազատագրումը:

Ադրբեջանական ուժերի ձմեռային ռազմարշավի ձախողումը եւ ռազմաճակատում ստատուս-քվոյի վերականգնումն, այսպիսով, հանդիսացան մայիսյան զինադադարի կայացման հիմնական նախադրյալները, որոնց առկայությունն, ինչ խոսք, մեծապես դյուրացրեց միջնորդ երկրների խաղաղարար առաքելությունը: Զինադադարի փաստի մեջ, ըստ այդմ, միանգամայն տեղին է դիտել հակամարտող ուժերի կողմից խնդրի ռազմական լուծման անհեռանկարայնության ակամա խոստովանությունը՝ միտված աստիճանաբար վերածվելու հաստա-

տուն գիտակցության, որն, անշուշտ, կայուն եւ վերջնական խաղաղության հաստատման կարեւորագոյն գրավականն է:

Ինչ վերաբերում է զինադադարի հետեւանքներին, ապա դրանցից գլխավորը հակամարտության կարգավորման դիվանագիտական գործընթացի վերականգնումն է՝ գործընթաց, որը նախորդ շրջանում, թվում էր, մտել է անելանելի փակուղի:

Սակայն նախման բուն հարցին անդրադառնալը կուզեի, ձեր ներողամտությամբ, ինձ թույլ տալ օգտվել դիվանագիտության վերաբերյալ մի փոքր ինաական զեղում կատարելու գայթակղության հուշալի պատեհությունից: Ներկա հայ հասարակական մտքի անդաստանում դիվանագիտության նկատմամբ առկա է երկակի մոտեցում. մի կողմից՝ ծայրահեղ անտեսում կամ թերահավատություն, մյուս կողմից՝ բացարձակ գերագնահատում: Եւ տարօրինակն այն է, որ այս իրարամերժ մոտեցումները շատ հաճախ դրսեւորվում են հանձինս միեւնույն մարդկանց կամ միեւնույն քաղաքական ուժերի: Այսպես, նույն մարդիկ եւ նույն քաղաքական ուժերը, ովքեր ժխտելով դիվանագիտության ուղին, մերժելով հարցի միջազգայնացումը ԵԱՀԽ-ի կամ ՄԱԿ-ի շրջանակներում, պնդում են, որ Ղարաբաղի խնդիրը կարող է լուծվել միայն ռազմական միջոցներով, միեւնույն ժամանակ առիթը բաց չեն թողնում խոցելու հաճոապետության իշխանություններին, որ նրանք իբր ռազմական հաջողությունները չեն ամրապնդում դիվանագիտական նվաճումներով: Ավելին, ասվում է նույնիսկ, որ դիվանագիտության ասպարեզում Հայաստանն անընդհատ պարտություններ է կրում, մոռացության տալով այն պարզ ճշմարտությունը, որ ռազմական հաջողությունները շատ հաճախ, զգալի չափով ինքնին պայմանավորված են լինում դիվանագիտական ձեռքբերումներով:

Սա կարող է բացատրվել ընդամենը երկու պատճառով՝ կա՛մ դիվանագիտության վերաբերյալ մեր ընդդիմախոսների թյուր պատկերացմամբ, կա՛մ իրականության խեղաթյուրման դիտավորությամբ:

Դժգոհության հիմնական առարկան Հայաստանի իշխանություններից հնչում է նրան, որ նրանք, ո՛վ սարսափ, փորձում են գաղտնի պահել իրենց դիվանագիտական հայերը: Ի դեպ, այստեղ կրկին մոռացության է տրվում մի այլ պարզ ճշմարտություն. դիվանագիտությունը երկրի քաղաքականության հենց այն բնագավառն է, որը մինչեւ որեւէ

արդյունքի ձեռքբերումը պարտադրաբար գաղտնի է մնում: Սա վերաբերում է ոչ միայն Հայաստանին, այլեւ մեզանից տասնյակ անգամ մեծ ու հզոր պետություններին: Բոլոր դաշնակիցբ երկրներում դիվանագիտական արխիվները բացվում են սովորաբար իրադարձություններից մի քանի տասնյակ տարիներ անցնելուց հետո:

Մեզանից պահանջում են, որ մենք այս դեպքում էլ հանդես գանք որպես օրիգինալ մի պետություն եւ մեր յուրաքանչյուր դիվանագիտական քայլ, յուրաքանչյուր բանակցություն անմիջապես ներկայացնենք հասարակայնությանը: Բայց եթե մենք այդպես վարվեինք, մեր պետությունը, որ այսօր թեւակոխել է իր գոյության չորրորդ տարին, ժամանակի փորձությանը չորս ամիս անգամ չէր դիմանա:

Հասարակությունը դիվանագիտական գործընթացին հասու է լինում միայն էական տեղաշարժերի կամ որոշակի արդյունքների կայացման դեպքում: Այսօր, օրինակ, բոլորիս աչքի առջեւ հարթվում է արաբա-իսրայելյան երկարատեւ հակամարտությունը. իսրայելա-պաղեստինյան համաձայնագրով ստեղծվեց պաղեստինյան ինքնավարություն, կայացավ իսրայելա-հորդանանյան համաձայնությունը, հետու չէ իսրայելա-սիրիական հաշտության կնքումը: Բայց այս բոլոր արդյունքներին նախորդել է տասնյակ տարիների գաղտնի եւ տքնաջան դիվանագիտական աշխատանք, որի մասին ոչ ոք որեւէ մանրամասն չի իմացել մինչեւ դրանց կայացումը:

Այժմ էական տեղաշարժերի կամ որոշակի արդյունքների կայացման տեսակետից անդրադառնալով ղարաբաղյան հակամարտության կարգավորման դիվանագիտական գործընթացին, տեսնենք, թե իրականում ինչ պատկեր է տիրում այստեղ:

Ղարաբաղի հարցը միջազգայնացավ 1992 թ. մարտի 24-ին՝ Հելսինկիում տեղի ունեցած ԵԱՀԽ-ի նախարարների խորհրդի հատուկ նիստում, որը որոշում կայացրեց Մինսկի կոնֆերանս հրավիրելու մասին՝ հիմնական նպատակ դնելով հակամարտության խաղաղ կարգավորումը եւ Լեռնային Ղարաբաղի հաղաքական կարգավիճակի սահմանումը: Դրանից հետո ընթացած բանակցությունների հարյուրավոր փուլերում, ԵԱՀԽ-ի եւ Մինսկի խմբի փաստաթղթերում եւ տասնյակ հայտարարություններում, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւերում, ինչպես նաեւ երկկողմանի եւ բազմակողմանի բարձր մակարդա-

կի հանդիպումներում փաստորեն իրականում արձանագրվել են ընդամենը մի քանի էական դիվանագիտական արդյունքներ:

Դրանք են.

1. Ղարաբաղյան հակամարտության փուլ առ փուլ կարգավորման մեթոդոլոգիան, որն սկսեց ձեւավորվել դեռեւս 1992 թվականից եւ այսօր խստորեն կիրառվում է անխտիր բոլոր խաղաղարար ծրագրերում: Այս մեթոդոլոգիան ենթադրում է խնդրի կարգավորման երկու աստիճան. առաջինը՝ զինադադարի կայացման, կայուն խաղաղության հաստատման, Ղարաբաղի բնակչության անվտանգության ապահովման, գրավված տարածքների ազատման եւ շրջափակումների վերացման փուլն է, իսկ երկրորդը՝ քաղաքական հարցերի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի լուծման փուլը, որը, ինչպես արդեն նշվեց, վերաբերում է Մինսկի կոնֆերանսի հիմնական իրավասությանը: Նման մեթոդոլոգիայի որդեգրման կարեւորությունը, կարծում եմ, ինքնըստինքյան ակնհայտ է, քանի որ եթե փորձ արվեր միանգամից լուծել բոլոր հարցերը, ապա, նկատի ունենալով Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ կողմերի դրսեւորած բնական մաքսիմալիզմը, խաղաղության գործընթացը մեկընդմիշտ վիժեցված կարելի էր համարել:
2. 1993 թվականի նոյեմբեր ամսին հայկական դիվանագիտությանը հաջողվեց գրավված տարածքներից առանց նախապայմանների ետքաշման միջազգային հանրության պահանջը զուգակցել Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի շրջափակումների վերացման քայլերին, որը տեղ գտավ ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի վերամշակված խաղաղարար ծրագրում:
3. 1994 թվականի մայիսից սկսած, հիմնականում ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի ջանքերով, Լեռնային Ղարաբաղը վերջնականապես ճանաչվեց որպես հակամարտության լիարժեք կողմ, որն արդեն իր պարտադիր մասնակցությունն ունի ցանկացած մակարդակի բանակցություններում:
4. 1994 թվականի դեկտեմբեր ամսին դիվանագիտական մակարդակով լուծվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության ապահովման խնդիրը. ԵԱՀԽ-ի Բուդապեշտյան

գագաթնաժողովը որոշում կայացրեց հակամարտության գոտում միջազգային խաղաղարար ուժեր տեղակայելու մասին, որը, փաստորեն, Ղարաբաղի խնդրի քաղաքական կարգավորման բոլորովին նոր փուլ է նշանավորում:
5. Բուդապեշտյան գագաթնաժողովը նաեւ վերջնականապես համադրեց ԵԱՀԽ-ի եւ Ռուսաստանի միջնորդական ջանքերը՝ հիմք ստեղծելով միջազգային հանրության կողմից Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման միասնական ծրագիր մշակելու համար, առանց որի խաղաղության գործընթացը, հասկանալի պատճառներով, դատապարտված է ձախողման:

Ահա սրանք են Լեռնային Ղարաբաղի հարցի դիվանագիտական կարգավորման շուրջ եռամյա գործընթացի հիմնական արդյունքները: Եւ թող հարգարժան ընդդիմախոսները բարի լինեն ցույց տալ, թե որտեղ են մեր կրած դառը պարտությունները այս ասպարեզում: Թե՞ պարզապես այլ են դիվանագիտական հաղթանակների կամ պարտությունների մասին մեր պատկերացումները: Ես, համենայն դեպս, հիմքեր ունեմ ենթադրելու, որ իշխանության ընդդիմախոսների պատկերացումը դիվանագիտական հաղթանակի մասին կապված է հակառակորդի անվերապահ կապիտուլյացիայի դեպքում միայն հնարավոր հանգուցալուծման հետ, որը, սակայն, չափազանց հեռու է իրականությունից: Այստեղ, թերեւս, տեղին է հիշել նաեւ հայ ժողովրդի նվաճած մեծագույն դիվանագիտական հաղթանակը՝ Սեւրի դաշնագիրը, որը սակայն պատճառ դարձավ Հայաստանի առաջին հանրապետության միջազգայնորեն ճանաչված տարածքի կեսի կորստյան: Թղթի վրա տարած նման հաղթանակներ, կարծում եմ, մեզ այլեւս պետք չեն:

Մենք պետք է ձգտենք մեր ողջ կարողությամբ կառուցողական մասնակցություն բերել Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման միջազգային գործընթացին, կայուն խաղաղություն հաստատելու մտադրությամբ խստորեն պահպանել կնքված զինադադարը, միջազգային խաղաղարար ուժերի տեղակայման միջոցով ապահովել Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունը եւ լրջորեն նախապատրաստվել քաղաքական կարգավորման երկրորդ փուլի աշխատանքներին:

* * *

Նախորդ տարիներին կուտակված փորձը, ազգային դրամի ներդրման հետ կապված դժվարությունների հաղթահարումը, ինչպես նաեւ տարածաշրջանում հաստատված երկարատեւ զինադադարը 1994 թվականին իրենց բարերար ազդեցությունն ունեցան հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացման միտումների խորացման վրա: Դրա արտահայտությունը հանդիսացան՝ տնտեսական աճի ապահովումը, դրամի կայունացումը, բյուջեի պակասորդի կրճատումը, սղաճի սանձումը, արտաքին առեւտրի աշխուժացումը, աղետի գոտում իրականացված շինարարությունը եւ այլն:

1994 թվականի հունվար – նոյեմբեր ամիսներին (դեկտեմբերի տվյալները դեռ ամփոփված չեն) հանրապետության տնտեսության զուտ նյութական արդյունքի կամ արտադրված ազգային եկամտի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 103,8 տոկոս, արդյունաբերական արտադրանքը՝ 104,8 տոկոս, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ 103,2 տոկոս:

Արտաքին առեւտրի ազատականացման եւ հանրապետության մաքսային մարմինների աշխատանքի բարելավման շնորհիվ 1994 թվականին զգալի չափով աճել են արտահանման եւ ներմուծման ծավալները, ըստ այդմ՝ 1993 թվականի հունվար – նոյեմբեր ամիսների համեմատությամբ արտահանման ծավալն աճել է 22,9, իսկ ներմուծմանը՝ 42,6 տոկոսով:

1994 թվականի հիմնական առանձնահատկություններից է նաեւ սղաճի էական զսպումը՝ որպես հետեւանք կոչտ, բայց հիմնավորված ֆինանսական հաղթականության: 11 ամիսների ընթացքում սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 55 անգամի դիմաց աճել է ընդամենը 11,6 անգամ: Ի դեպ, հատկանշական է, որ սպառողական գների հիմնական աճը 1994 թվականին տեղի է ունեցել առաջին հինգ ամիսների ընթացքում՝ 7,68 անգամ, կտրուկ նվազելով հետագա ամիսներին եւ կազմելով համապատասխանաբար հունիսին՝ 9 տոկոս, հուլիսին՝ 1,8 տոկոս, օգոստոսին՝ 3,7 տոկոս, սեպտեմբերին՝ 6,3 տոկոս, հոկտեմբերին՝ 11,3 տոկոս, նոյեմբերին՝ 14,8 տոկոս, այսինքն՝ նշված վեց ամիսների կտրվածքով աճելով ընդամենը 50,9 տոկոսով:

Սղաճի զսպմանը զուգընթաց 1994 թվականին ապահովվել է աշխատավարձի առաջանցիկ աճ՝ սպառողական գների նկատմամբ: Այսպես, 1993 թ. դեկտեմբերի համեմատությամբ (147 դրամ) տնտեսության պետական հատվածում զբաղվածների միջին աշխատավարձը 1994 թ. հոկտեմբերին աճել է 27,2 անգամ (4000 դրամ): Միջին աշխատավարձի մեծությունը աճել է նաեւ տարադրամային արտահայտությամբ. եթե 1993 թ. դեկտեմբերին այն կազմել է 1,9 ամերիկյան դոլարին համարժեք, ապա հունվարին արդեն 4,1, մայիսին՝ 4,2, իսկ հոկտեմբերին՝ 10,9 դոլար:

Կայունացման միտումների դրսեւորման տեսակետից հատկանշական է նաեւ ազգային դրամի կուրսի դինամիկան: 1994 թվականին դրամի արժեզրկումը դոլարային արտահայտությամբ կազմել է 488 տոկոս: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում բուրմեռնական մաքսը արժեզրկվել է 110 անգամ, ադրբեջանական մանաթը՝ 35 անգամ, ուկրաինական կարբովանեցը՝ 8,7 անգամ, վրացական կուպոնը՝ 7,5 անգամ, ղազախական տենգեն՝ 5 անգամ[1]: Ազգային տարադրամների արժեզրկման միտումը այս կամ այն չափով դրսեւորվել է նաեւ ԱՊՀ մյուս երկրներում: Թեեւ անգամ այս կոնտեքստում հայկական դրամի արժեզրկման 488 տոկոսը բոլոր դեպքերում կազմում է բավականին մեծ թիվ, բայց պետք է նկատի ունենալ, որ դրամի անկման հիմնական ծանրաբեռնվածությունը՝ շուրջ 3,7 անգամ ընկնում է տարվա առաջին չորս ամիսների վրա: Հետագա ութ ամիսների ընթացքում դրամի արժեզրկումը դոլարային արտահայտությամբ կազմել է ընդամենը 25 տոկոս, որ նրա կայունացման ամենապերեւախոս վկայությունն է:

Կայունացման միտումներին զուգընթաց՝ 1994 թվականին էապես խորացավ նաեւ տնտեսական բարեփոխումների՝ սեփականաշնորհման, հարկային համակարգի օրենսդրական կարգավորման, կառավարման մեխանիզմների կատարելագործման գործընթացը:

Պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ ապապետականացման ծրագրում ընդգրկված 2750 փոքր օբյեկտներից առայժմ կառավարության կողմից

[1] *Այսինքն՝ համապատասխանաբար՝ 11000, 3500, 870, 750, 500 տոկոսով (խմբ.):*

որոշում է ընդունվել 1185-ի սեփականաշնորհման վերաբերյալ: Դնահատվել է 591 օբյեկտ, սեփականաշնորհման պայմանագիր է կնքվել միայն 266 օբյեկտի վերաբերյալ: Նշված օբյեկտների սեփականաշնորհումից սեփականաշնորհման հատուկ հաշվին մուտքագրվել է շուրջ 455 միլիոն դրամ, որից 358-ը սեփականաշնորհման սերտիֆիկատներով, իսկ մնացած 97-ը՝ դրամով:

Սեփականաշնորհման սերտիֆիկատների բաշխման գործընթացը բնութագրվում է հետեւյալ թվերով. հաշվառված է 2 միլիոն 900 հազար հաղաքացի, որ կազմում է հաղաքացիների ընդհանուր թվի 75 տոկոսը: Սեփականաշնորհման սերտիֆիկատ է ստացել մեկ միլիոն 780 հազար հաղաքացի, այսինքն՝ ընդհանուր թվի 47 տոկոսը:

Մասնակի աճհատույց սեփականաշնորհման գործընթացում ընդգրկված 1400 ձեռնարկություններում տեղի են ունեցել աշխատավորական կոլեկտիվների առաջին ժողովները: 1027 ձեռնարկություններում տեղի են ունեցել նաեւ բաժնետիրական ընկերությունների հիմնադիր ժողովները (երկրորդ ժողով): 931 ձեռնարկության գործեր ճյուղային հանձնաժողովներն ուղարկել են Սեփականաշնորհման եւ ապապետականացման պետական հանձնաժողովին՝ մասնակի աճհատույց սեփականաշնորհման մասին որոշումներ ընդունելու նպատակով: Սեփականաշնորհման եւ ապապետականացման պետական հանձնաժողովն իր հերթին կառավարության հաստատմանն է ներկայացրել 611 ձեռնարկության մասնակի աճհատույց սեփականաշնորհման իր որոշումները:

1994 թվականը հաջող պետք է համարել նաեւ ձմռան նախապատրաստական աշխատանքների եւ ադեղի գոտում, մասնավորապես Գյումրի քաղաքում իրականացված բնակարանային շինարարության տեսակետից: Բավական է նշել, որ 1992 թվականի 29,6 եւ 1993 թվականի 31,1 հազար քառակուսի մետր բնակելի մակերեսի փոխարեն 1994 թվականին Գյումրի քաղաքում շահագործման է հանձնվել 52,9 հազար քառակուսի մետր տարածություն, այդ թվում բյուջեի հաշվին՝ 25,7, «Հայաստան» հիմնադրամի հաշվին՝ 18,8, իսկ Համաշխարհային բանկի վարկի հաշվին՝ 8,4 հազար քառակուսի մետր: Տարվա կարեւոր կառույցների շարքում պետք է հիշել նաեւ Հերհերի ջրամբարի հանձնումը, Աշտարակի կամուրջը եւ Երեւանի կասկադի շարժասանդուղքը, ինչպես նաեւ Ջանգեզուրի հանապարհների վերականգնված հատվածները:

* * *

Անցյալ տարվա ամենամեծ հաջողությունը, սակայն, պետք է համարել միջազգային ֆինանսական կազմակերպությունների՝ Միջազգային արժութային հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի կայացրած որոշումը Հայաստանին հիմնարար տնտեսական աջակցություն ցուցաբերելու մասին, որ երկար սպասումներից ու ապարդյուն բանակցություններից հետո վերջապես հնարավոր դարձավ վերը նշված կայունացման միտումների, առկա զինադադարի եւ բարեփոխումների հաջող ընթացքի շնորհիվ:

Կարծում եմ, ամենեւին հարկ չկա հանգամանորեն անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Միջազգային արժութային հիմնադրամի կողմից համատեղ մշակված սոցիալ-տնտեսական ծրագրին, բանի որ նախ՝ այդ հարցը շուրջ երկու ամիս առաջ քննարկվել է խորհրդարանում, երկրորդ՝ խորհրդարանական քննարկումների ընթացքում ես ընդարձակ եղույթով արդեն արտահայտել եմ իմ տեսակետը, եւ երրորդ՝ շուտով այն կրկին կդառնա ձեր ուշադրության առարկան, կապված հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման 1995 թվականի ծրագրի եւ պետական բյուջեի նախագծի օրակարգային հարցի հետ:

Կուզեի բավարարվել միայն հիշեցնելով, որ այդ համալիր ծրագիրը, որը օտարերկրյա շոշափելի ներարկումներից բացի նախատեսում է նաեւ հանրապետության տնտեսական համակարգում լուրջ կառուցվածքային բարեփոխումներ, առաջին հերթին ուղղված է մակրոտնտեսական հավասարակշռության հաստատմանը, եւ նրա հիմնական արդյունքները սպասվում են հաջորդ՝ 1996 թվականին: Սակայն բոլոր հիմքերը կան պնդելու, որ ընթացիկ տարում արդեն մեր ժողովուրդը պետք է զգա այդ ծրագրի իրականացման դրական հետեւանքները՝ մասնավորապես բնակչության ռեալ եկամուտների աճի եւ սոցիալապես թույլ պաշտպանված շերտերի կարիքների բավարարման առումով, մանավանդ նկատի ունենալով, որ ծրագրում, զուտ տնտեսական նպատակներից բացի, լուրջ ներդրումներ են նախատեսված նաեւ առողջապահության, կրթության, մշակույթի եւ գիտության ոլորտներում:

Ավելորդ չէ, թերևս, նշել նաեւ, որ ի հեճուկս թերահավատների ու չարագուշակների, չարդարացան անցյալ տարվա դեկտեմբեր ամսին համընկած, ծրագրի իրականացման առաջին փուլի՝ մասնավորապես հացի գների բարձրացման հետ կապված խուճապային երեւույթների առաջացման մտացածին հաշվարկները՝ բացառությամբ բենզինի գների կտրուկ աճի, որը սակայն նույնպես արագորեն կարգավորվեց:

Զարդարացան նաեւ այն անհիմն մտավախությունները, թե միջազգային ֆինանսական կազմակերպությունները այս կամ այն պատրվակով կարող են չկատարել իրենց ստանձնած պարտավորությունները: Ծրագրի գործադրումից անցել է ընդամենը մեկուկես ամիս, եւ Հայաստանի կենտրոնական բանկն արդեն ստացել է Միջազգային արժութային հիմնադրամի հատկացրած վարկը՝ ուղղված ազգային դրամի կայունացման նպատակին, իսկ երկկ դրամ հաստատեցիմ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրած եւս երեք վարկ, որոնք ներդրվելու են հանրապետության ոռոգման եւ էներգետիկ համակարգերի վերանորոգման եւ «Զվարթնոց» օդանավակայանի բեռնահամալիրի կառուցման ծրագրերում: Այսմանից հետո, կարծում եմ, կասկած չի կարող լինել, որ առաջիկայում որոշված ժամկետներում կտրամադրվեն նաեւ ծրագրով նախատեսված մյուս բոլոր վարկերը:

Այս ամենը հիմք է տալիս վստահություն հայտնելու, որ հանրապետության կառավարության եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների համատեղ ծրագրի հաջող իրականացման, համաշխարհային հանրության կողմից հատկացված վարկերի ճիշտ օգտագործման դեպքում 1995 թվականը իսկապես կարող է դառնալ բեկումնային տարի Հայաստանի տնտեսական վերականգնման եւ նրա հետագա զարգացման տեսակետից:

* * *

Իսկ այժմ մի քանի խոսք՝ օրենքների կատարման ընթացքի, պաշտոնական շարաշահումների կանխմանն ուղղված միջոցառումների, անօրինականությունների դեմ պայքարի ուժեղացման, իրավապահ մարմինների ֆունկցիոնալ կառույցների կատարելագործման մասին:

Ճիշտ է՝ այս հարցերի շուրջ ավելի հարմար ու առարկայական կլիներ արտահայտվել խորհրդարանում Հանրապետության գլխավոր դատախազի եւ Գերագույն դատարանի նախագահի հաշվետվությունները լսելուց հետո, բայց, հաշտվելով այս անպատեհության հետ, կփորձեմ բավարարվել միայն ընդհանուր գնահատականներով:

Այստեղ դրված խնդիրների վերաբերյալ ես մեկ տարվա ընթացքում հրապարակել եմ երեք հրամանագիր: Հիշեցնեմ՝

- 1993 թ. դեկտեմբերի 15-ի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետություն անձնագրերի ներմուծման եւ վաճառքի բարենպաստ պայմաններ ստեղծելու լրացուցիչ միջոցառումների մասին»,
- 1994 թ. հունվարի 14-ի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության պետական վարչության վերակառուցման մասին»,
- 1994 թ. օգոստոսի 1-ի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ձեռնարկություններում, կազմակերպություններում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին»:

Այս հրամանագրերի մանրամասն մեկնաբանությունն ու գնահատականը ես տվել եմ իրավապահ մարմինների 1994 թ. օգոստոսի 5-ին կայացած հանրապետական խորհրդակցությունում արտասանած ընդարձակ ելույթում («Հայաստանի Հանրապետություն», 13 օգոստոսի, 1994 թ.), ուստի չէի կամենա ձեզ ձանձրացնել ավելորդ կրկնաբանությամբ:

Կարծում եմ, որ այդ հրամանագրերը, հստակեցնելով իրավապահ մարմինների ֆունկցիոնալ պատասխանատվությունները, սահմանելով ստուգումների կազմակերպման եւ անցկացման կարգը, վերացնելով մակաբույծ վերահսկողական մարմինները, հիմնականում ծառայել են իրենց նպատակին եւ նպաստել ստվերային երեւույթների կանխարգելմանն ու պաշտոնեական շարաշահումների սահմանափակմանը:

Ի լրացումն նշվածների, առաջիկայում կհրապարակվի Հանրապետության Նախագահի եւս երկու հրամանագիր՝ ուղղված կազմակերպված հանցագործությունների եւ անօրինական լարանցումների դեմ պայքարի միջոցառումներին:

Թեեւս ինձնից սպասվում է նաեւ անդրադառնալ 1994 թ. դեկտեմբերի 28-ի «Հայ հեղափոխական դաշնակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին» հրամանագրին, բայց ես ավելացնելու ոչինչ չունեմ իմ հետուստաելույթին:

Կարող եմ նշել միայն, որ այդ հրամանագրի շնորհիվ կանխվեց ծրագրված աճաբեկչական գործողությունների հավանական շարը, եւ Հայաստանը փրկվեց տեռորիզմի աճավոր վտանգից:

Վերջում ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել խորհրդարանին՝ արտաքերթ նստաշրջան հրավիրելու իմ հրամանագրին արձագանգելու եւ օրակարգի հարցերի արդյունավետ քննարկման համար: Հուսով եմ, որ մեր ազգաշահ համագործակցությունը կշարունակվի նաեւ Գերագույն խորհրդի ներկա գումարման վերջին նստաշրջանում, որի արդյունավետությանը նույնպես չեմ կասկածում:

Շնորհակալություն ուշադրության համար:

«Հայաստանի Հանրապետություն», 19 հունվարի, 1995 թ.: Հրատարակված՝ «1994-ը դարձավ անկախության ժամանակաշրջանի առաջին անցնցում տարին» վերնագրով: ՀՀԱՆԱ, 28/18.01.95: Բնագիր: Ինքնագիր:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԱՐՄԵՆՊՐԵՍԻՆ»՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

(8 մարտի, 1995 թ.)

– Պարոն Նախագահ, ապրիլի 3-ին տեղի է ունենալու Ամենայն հայոց 131-րդ կաթողիկոսի ընտրությունը. պետությունն արդյոք ունի՞ իր տեսակետն այդ առթիվ:

– «Խղճի ազատության» օրենքով եկեղեցին անջատված է պետությունից, այդ պատճառով վերջինս իրավունք չունի միջամտել նրա ներքին գործերին, որպիսին է մասնավորապես կաթողիկոսի ընտրության հարցը:

– Դա իսկապես այդպես է, բայց այնուամենայնիվ Դուք, ոչ որպես Նախագահ, այլ որպես քաղաքացի, որպես հայ, կարող եք արտահայտել Ձեր կարծիքը կաթողիկոսական ընտրությունների կարգի, կաթողիկոսի հավանական թեկնածուների մասին:

– Ոչ միայն կարող եմ, պարտավոր եմ, քանի որ պատմականորեն այնպես է դասավորվել, որ Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունը ներեկեղեցական խնդրից վերածել է հույժ կարեւոր ազգային խնդրի:

Դա բացատրվում է այն հայտնի իրողությամբ, որ ազգային պետականության բացակայության պայմաններում Հայ Առաքելական եկեղեցին, կրոնական հաստատության դերակատարությանը զուգընթաց, դարեր շարունակ հարկադրաբար փոխարինել է նաեւ աշխարհիկ իշխանություններին: Այս հանգամանքի բնական հետեւանքը պետք է համարել կաթողիկոսի ընտրության արարողակարգում ամրագրված աշխարհական պատգամավորների մասնակցության իրավունքը, որով Հայոց եկեղեցին էապես տարբերվում է ռիխտոռեական մյուս եկեղեցիներից:

– Հայոց պետականության վերականգնմամբ արդյոք դադարե՞լ է Հայ Առաքելական Եկեղեցու ազգային դերակատարությունը:

– Ամենևին ոչ, թեև այս պատասխանը առաջին հայացքից կարող է հակասության մեջ թվալ նախորդ մտքի հետ: Ճիշտ է՝ պետականության վերականգնմամբ եկեղեցին, ըստ էության, ազատվել է աշխարհիկ իշխանություններին փոխարինելու պարտականությունից, բայց հաճի դեռ հայության մի զգալի հատվածը ապրում է Հայաստանից դուրս, նա շարունակելու է պահպանել իր միավորիչ ազգային դերը հայրենիքի եւ Սփյուռքի միջեւ: Ջխոսած այլեւս այն մասին, որ եկեղեցուն նույնիսկ կարեւոր դեր է վերապահված նաեւ ազգի հոգեւոր եւ բարոյական դաստիարակության գործում:

– Իսկ ի՞նչ եք մտածում առաջիկա ընտրությունների մասին: Ո՞վ է, Ձեր կարծիքով, կաթողիկոսի ամենահավանական թեկնածուն, կամ ավելի ճիշտ ձեւակերպելով հարցս՝ ո՞ւմ կցերադասեիք տեսնել կաթողիկոսական գահին:

– 1700-ամյա պատմություն ունեցող Հայոց եկեղեցին աչքի է ընկել այն գնահատելի առանձնահատկությամբ, որ կաթողիկոսական գահին, համարյա առանց բացառության, բազմեցրել է ժամանակի ամենաարժանավոր հոգեւորականին: Եթե կաթողիկոսների ընտրության հարցում երբեմն անգամ ծագել են ինչ-ինչ հակասություններ, ապա դա տեղի է ունեցել ավելի օտար միջամտությունների, հաճ ներհին տարաձայնությունների պատճառով:

Այսօր էլ Սբ. էջմիածնի միաբանության շարքերում կան կաթողիկոսական գահի արժանի թեկնածուներ, ինչպես՝ Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արհեպիսկոպոս Մանուկյանը, Պոլսո պատրիարք Գարեգին արհեպիսկոպոս Գազանճյանը, երիտասարդներից՝ Ալարատյան թեմի առաջնորդ Գարեգին արհեպիսկոպոս Ներսիսյանը, Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արհեպիսկոպոս Բուդիաքյանը, Նյու Յորքի թեմի առաջնորդ Խաժակ արհեպիսկոպոս Պարսամյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսյանը:

Սակայն իր աստվածաբանական պատրաստությամբ, հայագիտական հմտությամբ, դիվանագիտական ընդունակություններով եւ վարչական կարողություններով այսօր Ամենայն հայոց կաթողիկոսի ամենաժանի թեկնածուն, իմ կարծիրով, Կիլիկիո աթոռի հայրապետ Գարեգին Բ Վեհափառն է՝ անառարկելի հեղինակություն թե՛ էջմիածնի, թե՛ Կիլիկիո աթոռի միաբանական շրջանակներում, ինչպես նաեւ Հայաստանի եւ Սփյուռքի հավատացյալ զանգվածներում:

Անձնական արժանավորությունից բացի, այս ընտրությունը, վստահ եմ, կարող է շրջադարձային դեր խաղալ Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական միասնության վերականգնման, ինչպես նաեւ ավելի լայն առումով՝ Հայաստան – Սփյուռք հարաբերությունների կարգավորման հիրավի համազգային գործում: Այսպիսի վստահության հիմք է տալիս, մասնավորապես, վերջին տարիներին, երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հետ համագործակցաբար, Գարեգին կաթողիկոսի ծավալած նպատակասլաց գործունեությունը թե՛ եկեղեցու միասնության վերականգնման, թե՛ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպման ուղղությամբ:

– Եթե, իհարկե, գաղտնիք չէ, ինչպե՞ս եք Դուք պատկերացնում Հայ Առաքելական Եկեղեցու միասնության վերականգնման գործընթացը:

– Ջպետք է կարծել, անշուշտ, որ դա կարող է տեղի ունենալ միանգամից. Կիլիկիո աթոռը, որպես պատմական հաստատություն, թերեւս դեռ երկար ժամանակ կպահպանի իր գոյությունը, սակայն դրա հետ մեկտեղ՝ անվերապահորեն ընդունելով էջմիածնի գերակայությունը եւ աստիճանաբար սահմանափակվելով իր նախնական եկեղեցական վիճակներում՝ Լիբանան, Սիրիա, Կիպրոս: Բոլոր դեպքերում Գարեգին կաթողիկոսը հարմարագույն անձն է՝ այս դժվարին գործընթացը սկսելու ուժակ, եւ հավատացած եմ, որ Հայ եկեղեցու սպասավորները չեն կորցնի ընծեռված պատմական պատեհությունը:

«Հայաստանի Հանրապետություն», 8 մարտի, 1995 թ.:
*Հարցազրույցը՝ **Աշոտ Անտինյանի** («Արմենպրեսի» տնօրեն):*
Հրատարակված՝ «Լեւոն Տեր-Պետրոսյան. «Ամենաարժանի թեկնածուն Գարեգին Բ Վեհափառն է» վերնագրով:

ԵԼՈՒՅԹ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(3 ապրիլի, 1995 թ.)

Վեհափառ Տեր,

Սրբազան եւ հոգեշնորհ հայրեր,

Ազգային եկեղեցական ժողովի մեծարգո պատգամավորներ,

Խորին հարգանքի եւ երախտագիտության ոգիական տուրք մատուցելով Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի լուսավոր հիշատակին, այսօր դում գումարվել եմ մասնակիցը դառնալու եկեղեցու եւ ազգային կյանքի պատմական իրադարձության, որը վերջին վեց հարյուր տարիների ընթացքում առաջին անգամ տեղի է ունենում Հայոց անկախ պետականության գոյության պայմաններում:

Այս հանգամանքը եւ Ազգային եկեղեցական ժողովի աննախադեպ ներկայացուցչությունը իմինին արդեն ամենապերճախոս ապացույցն են այն կարեւորության, որով դրոշմված է ձեր սուրբ առաքելությունը:

Ազգային եկեղեցական ժողովը կայանում է նորանկախ Հայոց պետականության ամրապնդման լավատեսություն ներշնչող մթնոլորտում:

Չնայած Հայաստանին բաժին ընկած դաժան փորձություններին եւ անհաղթահարելի թվացող դժվարություններին՝ մեր ժողովրդի դրսեւորած անօրինակ տոկունության, համբերության, աշխատասիրության, մարտունակության եւ բարձր պետական մտածողության շնորհիվ հանրապետությունը դուրս եկավ եզնաժամային իրավիճակից՝ թեւակոխելով պետականության ամրապնդման, արցախյան խնդրի խաղաղական լուծման, տնտեսության կայունացման եւ զարգացման պատասխանատու հանգրվանը:

Այսօր մենք ամենայն հպարտությամբ եւ արժանապատվությամբ կարող ենք ազդարարել.

- Հայաստանն ամենակայուն, ամենաժողովրդավարական եւ ամենաազատական պետությունն է նախկին Խորհրդային Միության հանրապետությունների շարքում:
- Հայաստանն այդ նույն շարքում նաեւ միակ պետությունն է, որտեղ կասեցված են տնտեսության անկումը եւ դրամի արժեզրկումը, որտեղ իրականացվում են համակարգված տնտեսական բարեփոխումներ, որոնց շնորհիվ արդեն դրսեւորվում են նաեւ տնտեսական աճի հուսադրող միտումներ:
- Հայաստանն իր հավասարակշռված արտաքին քաղաքականությամբ, միջազգային կազմակերպություններում ներդրած կառուցողական ջանքերի եւ բազմաթիվ երկրների հետ հաստատած փոխշահավետ հարաբերությունների շնորհիվ ոչ միայն կարողացավ հաղթահարել քաղաքական եւ տնտեսական եզակի ժամային երեւույթները, այլեւ էականորեն ամրապնդել ազգային անվտանգությունը: Այս տեսակետից մենք այսօր շատ ավելի ապահով ենք, քան անկախության ձեռքբերման սկզբնական շրջանում:
- Ավելի քան երբեւէ ամուր, ապահով եւ հզոր է նաեւ հետոսական Արցախը, որի իղձերի վերջնական իրականացումը կախված է միայն ու միայն ողջ հայ ժողովրդի միասնական կամքի ու կորովի անմնացորդ դրսեւորումից:

Այս ամենը թույլ է տալիս ամենայն պատասխանատվությամբ հայտարարել՝ թե՛ ապահովական, թե՛ քաղաքական եւ թե՛ տնտեսական տեսակետից մեր բոլոր դժվարություններն արդեն մնացել են ետեւում, իսկ առջեւում թեեւ դեռ մեզ սպասում է տքնաջան աշխատանք, բայց՝ հստակ ճանապարհ եւ կանխատեսելի հեռանկար:

Ուստի միանգամայն վստահ եմ, որ այս ոգեւորիչ պայմաններում գումարված Ազգային եկեղեցական ժողովը, լիովին համահունչ դառնալով ներկա մթնոլորտին, պատվով կկատարի իր առջեւ դրված պատասխանատու խնդիրը, որը պատմական հանգամանքների բերումով ակնհայտորեն վաղուց դուրս է եկել զուտ եկեղեցական սահմաններից՝ վերածվելով ճիշտվի համազգային բախտորոշ խնդրի:

Վաղը Հայ Առաքելական եկեղեցու բարձրագոյն գահին բազմելու է Ամենայն հայոց 131-րդ կաթողիկոսը, որի ընտրության պատիվն ու պատասխանատվությունը վիճակված է ձեզ:

Ձեմ կասկածում, որ դուք վեր կկանգնեք մաքր ու երկրորդական խմբակային շահադիտություններից, հարացած հարաբերությունների ավանդական դիրհորոշումներից՝ առաջնորդվելով բացառաբար ձեր խղճի թելադրանքով եւ Հայ Առաքելական եկեղեցու առջեւ կանգնած գերխնդրի՝ նրա միասնության վերականգնման անհրաժեշտության գիտակցությամբ:

Պատմությունը բացառիկ պատեհություն է ընձեռել ձեռնարկելու եկեղեցու միասնության վերականգնման համազգային գործը, եւ ես կարծում եմ, որ Ազգային եկեղեցական ժողովը չի կորցնի այս պատեհությունը:

Ես հավատում եմ ձեր ողջախոհությանը եւ հաջողություն մաղթում ձեր աշխատանքին:

«Հայաստանի Հանրապետություն», 4 ապրիլի, 1995 թ.:
Հրատարակված՝ «Շկորցնենք Եկեղեցու միասնության վերականգնման պատեհությունը» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/03.04.95: Բնագիր: Ինքնագիր:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ

(21 ապրիլի, 1995 թ.)

Մեծարգո նախագահ,

Մեծարգո ներկաներ,

Այս օրերին հայ ժողովուրդը, նշելով իր ազգային ողբերգության 80-ամյակը եւ գլուխ խոնարհելով 1,5 միլիոն նահատակների սուրբ հիշատակի առջեւ, մեկ անգամ եւս հավաստում է ապրելու իր անկոտրում կամքը եւ ժողովուրդների համաշխարհային ընտանիքում իր արժանի տեղն զբաղեցնելու վճռակամությունը:

Հայաստանի մայրաքաղաքում գումարված միջազգային այս գիտաժողովն ըստ այդմ մենք դիտում ենք նախ՝ որպես հարգանքի տուրք ցեղասպանության զոհերի հիշատակին, եւ երկրորդ՝ որպես բարեկամության ցույց մեր նորանկախ պետականության նկատմամբ:

Խորապես գնահատելով ձեր պրոֆեսիոնալիզմն ու իրազեկությունը, ես չեմ հանդգնի մտնել Հայոց ցեղասպանության հետ կապված պատմական եւ իրավագիտական բարդ խնդիրների հորձանուտը, այլ պարզապես կպավարարվեմ մի քանի հայտնի նշմարտությունների արձանագրմամբ, որը, իմ կարծիքով, հույժ անհրաժեշտ է արդի հայ հասարակության քաղաքական գիտակցության ձեւավորման տեսակետից:

Պատմական փորձի ռացիոնալ յուրացման եւ անցյալի սխալները չկրկնելու առումով, կարծում եմ, ժամանակն է իրերը գնահատել սառը դատողությամբ՝ հրաժարվելով զգացական ընկալումներից եւ հոգեբանական պայմանականություններից:

1. Հայոց ցեղասպանությունն անտեղի է բացատրել հայ եւ թուրք ժողովուրդների կրոնական, էթնիկական, ռասայական անտագոնիզմով կամ տնտեսական եւ սոցիալական մրցակցությամբ. քանի որ Օսմանյան կայսրության մեջ ձեւավորված modus vivendi-ն դարերի ընթացքում, համենայն դեպս, կարողացել էր ապահովել նրանց միչ թե շատ խաղաղ համակեցությունը: Ճիշտ է՝ այդ համակեցությունը հիմնված էր կայսրության մահմեդական եւ բիւստոնյա ժողովուրդների ամենեւին ոչ իրավահավասար դրության վրա, բայց պետությունը, համենայն դեպս, երաշխավորում էր որոշակի հավասարակշռություն:

Հայոց ցեղասպանությունը զուտ բաղաքական ծրագիր էր՝ թելադրված Օսմանյան կայսրության կոնկրետ պետական շահերից:

Բալկանյան ժողովուրդների ազատագրումից հետո հայկական հարցը եւրոպական գերտերությունների կամոով մտավ միջազգային բաղաքականության ոլորտը՝ ձեւակերպվելով Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածում որպես Օսմանյան կայսրության հայկական նահանգներում բարենորոգումների անցկացման ծրագիր:

Թուրքիայի համար այդպիսով պարզ դարձավ, որ եւս մեկ պատերազմ՝ եւ նա կորցնելու է նաեւ Հայաստանը: Դրանից խուսափելու միակ միջոցը հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումն էր, որ թուրքական իշխանությունները մեթոդիկ կերպով իրականացրեցին 1878–1915 թվականների ընթացքում:

Հայ ժողովրդի բնաջնջման ծրագրի մտահղացման, մշակման եւ իրագործման ողջ պատասխանատվությունն ըստ այդմ կրում են սուլթան Համիդը եւ երիտթուրքերի կառավարությունը:

2. Եւրոպական գերտերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան եւ Ռուսաստանը 1878–1914 թվականների ընթացքում ոչ միայն որեւէ գործնական բայլ չկատարեցին Օսմանյան կայսրության հայկական նահանգներում բարենորոգումների ծրագրի իրականացման ուղղությամբ, այլեւ իրենց անհամաձայնեցված միջամտություններով ուղղակի վտանգ ստեղծեցին հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար: Այսինքն՝ հայկական հարցի միջազգայնացմամբ գրգռելով օսմանյան իշխանություններին, գերտերություններն իրենց հոգնություն չպատճառեցին վայրկյան անգամ մտածել հայ ժողովրդի ֆիզիկական

գոյության տարեական երաշխիքների մասին, որով եւ չափվում է ցեղասպանության հարցում նրանց բարոյական, իսկ Գերմանիայի դեպքում՝ նաեւ ուղղակի պատասխանատվության բաժինը:

3. Նկատի ունենալով Օսմանյան պետության եւ հայ ժողովրդի ուժերի ակնհայտորեն անհամեմատելի հարաբերակցությունը, ինչպես նաեւ Արեւելյան հարցում գերտերությունների միջեւ գոյություն ունեցող հակասությունները, դժվար է չխոստովանել, որ կենաց-մահու այդ պայքարում հայերն ի սկզբանե դատապարտված էին կործանման:

Հայ ժողովուրդն իր բոլոր կարողությունների գերլարմամբ հանդերձ ի զորու չէր վիժեցնելու Օսմանյան պետության մշակած հրեշավոր ծրագիրը, մանավանդ որ՝ հայերի մոտ, ցավոք սրտի, ակնհայտորեն բացակայում էր այդ ծրագրի գոյության գիտակցությունն անգամ:

4. Տիրապետող այն տեսակետը, թե հայ ժողովուրդը կարող էր խուսափել արհավիրքից, հրաժարվելով Թուրքիայի ներքին գործերին եւրոպական երկրների միջամտությանը նպաստելու գաղափարից եւ փորձելով հայկական նահանգների բարենորոգումների հարցը լուծել թուրքական իշխանությունների հետ անմիջական համագործակցությամբ, կարծում եմ, հետու է իրատեսությունից, քանի որ, անկախ հայերի կամքից, եւրոպական պետություններն այլեւս չէին կարող հրաժարվել հայկական նահանգների բարենորոգումների պատրվակով Թուրքիայի վրա ազդելու բաղաքականությունից:

Դրանով հանդերձ, պարտավոր ենք հավատալ, որ հայ բաղաքական մտքի երկու հոսանքներն էլ, այն է՝ կղերա-բուրժուական եւ հեղափոխական հոսանքները, թեեւ անհետեւողականորեն, բայց ժամանակ առ ժամանակ փորձել են համագործակցել թուրքական իշխանությունների հետ, որի բարձրակետը Իթթիհադի եւ Հայ հեղափոխական դաշնակցության համագործակցությունն էր: Այդ համագործակցության պատճառով լիովին բթացվեց հայ ժողովրդի զգոնությունը, եւ 1908–1914 թթ. ժամանակամիջոցը բացարձակապես չօգտագործվեց ինքնապաշտպանության պատրաստվելու համար:

Որքան էլ դառը լինի, պետք է խոստովանել, որ հայ բաղաքական մտքի երկու հոսանքներն էլ հաստ չեղան ոչ միայն վիժեցնել հայ ժողովրդի բնաջնջման պետական ծրագիրը, որ, ինչպես վերը նշվեց, գրե-

թե անհնար էր, այլեւ գոնե տարեական միջոցներ ձեռնարկել նրա հետեւանքները նվազագույնի հասցնելու համար:

5. Երբ ոչ Ցեղասպանությունից, ապա գոնե նրա կործանարար հետեւանքներից խուսափելու վերջին հնարավորությունը հայ ժողովուրդը կորցրեց 1914 թվականին, երբ Էրզրումում գումարված Հայ հեղափոխական դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ պատասխանություն ստանձնեց մասնակցել Օսմանյան կայսրությունում հայտարարված ընդհանուր զորահավաքին:

Մերժելով զորահավաքը, թեեւ, միեւնույն է, հայ ժողովրդին չէր հաջողվելու կանխել ծրագրված հաշվեհարդարը, ավելին՝ դրանով լրացուցիչ ծանրակշիռ պատրվակ էր ստեղծվելու իշխանությունների բռնություններն արդարացնելու համար, այդուհանդերձ, պահպանելով զինական ուժը, շատ վայրերում, մասնավորապես Տարոնում, հնարավոր էր կազմակերպել ավելի լուրջ ինքնապաշտպանություն եւ խուսափել իսպառ բնաջնջումից:

6. 1920 թվականին, շարունակելով պահպանել հավատարմությունը Անտանտի երկրներին, Հայաստանի Հանրապետության վարիչները չկարողացան ճիշտ գնահատել Խորհրդային Ռուսաստանի եւ Քեմալական Թուրքիայի հզորացմամբ ստեղծված նոր իրադրությունը, որի պատճառով կորցրին թե՛ Հայաստանի անկախությունը, թե՛ նրա տարածքների մի մասը: Միեւնույն հայ-թուրքական եւ հայ-ռուսական ուղղակի պայմանավորվածությունների միջոցով, ակնհայտորեն, Հայաստանի համար հնարավոր էր ապահովել ավելի բարեհաջող ապագա:

7. Այսօր Հայաստանը եւ Թուրքիան, որպես հարեւան պետություններ, պարտավոր են հաստատել փոխշահավետ առեւտրա-տնտեսական կապեր եւ բարիդրացիական հարաբերությունների միջոցով աստիճանաբար հաղթահարել պատմական հակասությունները ու վերականգնել հայ եւ թուրք ժողովուրդների փոխադարձ վստահությունը, որի համար կողմերից պահանջվում է դրսեւորել համապատասխան քաղաքական կամք եւ բարոյական կեցվածք:

Ամփոփելով խոսքս, ես հաջողություն եմ մաղթում Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի աշխատանքին, համոզված լինելով, որ այն կդառնա կարեւոր հանգրվան՝

մարդկության դեմ գործված այդ ահավոր հանցագործության գիտական ուսումնասիրության գործում:

Շնորհակալություն ուշադրության համար:

«Հայաստանի Հանրապետություն», 22 ապրիլի, 1995 թ.:
Հրատարակված՝ «Իրերը գնահատենք սառը դատողությամբ՝ հրաժարվելով զգացական ընկալումներից եւ հոգեբանական պայմանականություններից» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/21.04.95: Բնագիր: Ինքնագիր:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏՈՒՄ

(27 հուլիսի, 1995 թ.)

Վեհափառ Տեր,

Մեծարգո պարոն նախագահ,

Մեծարգո պատգամավորներ,

Տիկնայք եւ պարոնայք,

Ինձ համար մեծ պատիվ է՝ այս բարձր ամբիոնից ողջունել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առաջին գումարման պատգամավորներին, ովքեր օրերս կայացած ընտրություններում արժանացել են ժողովրդի վստահության քվեին:

Ուզում եմ նաեւ, հանձինս ձեզ, շնորհավորել մեր ողջ ժողովրդին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման պատմական իրադարձության առթիվ, վստահություն հայտնելով, որ տասնամյակների հետաձգարով այն կդառնա Հայոց պետականության կայունության ապահովման վճռական գործոն, ինչպես նաեւ ժողովրդավարական հաստատությունների ձեւավորման, հաղթահարման հասարակության ստեղծման եւ շուկայական տնտեսության զարգացման իրավական երաշխիք:

Սահմանադրության հոչակումով փաստորեն իր տրամաբանական հանգուցալուծմանը հանգեց 1988 թվականի հուժկու ազգային-ազատագրական շարժմամբ սկսված անկախ պետականության կայացման գործընթացի առաջին, բախտորոշ հանգրվանը, որի դաժան ճնշությանը պատվով դիմացավ հայ ժողովուրդը՝ խուսափելով եոկոմունիստա-

կան հասարակություններից շատերին բաժին ընկած ներհին ցնցումներից եւ դառը փորձություններից:

Պետության կայացման առաջնահերթ խնդրի կողմին ես ուզում եմ հավասարապես կարեւորել նաեւ Սահմանադրության մեջ համամարդկային արժեքների, մարդու իրավունքների եւ ազատությունների գերակայության ամրագրումը, որը մեր ժառանգած իրականության խորհրդային շերտում հիմնովին փոխում է պետություն – հաղաքացի, հասարակություն – անհատ հարաբերությունների ողջ փիլիսոփայությունը: Պետաիրավական այս կարուկ շրջադարձը ենթադրում է անշուշտ, նաեւ պատմականորեն ձեւավորված հոգեբանական պայմանականությունների հաղթահարման մի ծանր շրջան, որը կարող է տեւել երկար տարիներ:

Սահմանադրության ընդունումն, այսպիսով, ավարտը դառնալով մեր պատմական զարգացման մի կարեւոր հանգրվանի, միաժամանակ սկիզբն է մարմնավորում թերեւս ոչ պակաս կարեւոր, գուցե եւ ավելի պատասխանատու ժամանակաշրջանի:

Մեր ազգային պարտքն է՝ լիովին կյանքի կոչել Սահմանադրության հիմնարար սկզբունքները՝ ի կերտումն հիրավի իմքնիշխան, իրավական պետության, արդար, հաղաքացիական հասարակության եւ ապահով, բարեկեցիկ կյանքի:

Գալով Ազգային ժողովի ընտրության առիթին, նախ եւ առաջ պարտք եմ համարում մեր ժողովրդի անունից շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանի բոլոր անդամներին, ովքեր անցման շրջանի դժվարագույն տարիներին բայց ան բայլ դրին նորանկախ պետության հաստատուն հիմքերը, ստեղծեցին օրենսդրական այն անհրաժեշտ դաշտը, որն ապահովեց հանրապետության կայունությունն ու բնականոն կենսագործունեությունը:

Բոլոր հայտնի վերապահումներով ու թերակարծություններով հանդերձ, այսօր իսկ, սակայն, արդեն ակնհայտ է, որ առաջին խորհրդարանին վիճակված էր պատմական դեր խաղալ Հայոց պետականության վերականգնման, ժողովրդավարական կարգերի հաստատման եւ տնտեսական բարեփոխումների իրականացման գործում՝ մի դեր, որն, ըստ էության եւ ամբողջ տարողությամբ դեռեւս գնահատվելու է հետագայում՝ հաղաքական կրքերի հանդարտումից եւ կոնյունկտուրային նկատառումների վերացումից հետո:

Ազգային ժողովի մեծարգո պատգամավորներ, ըստ այդմ, բարեբախտությունն ունեմ ձեր գործունեությունը հիմնելու նախորդ խորհրդարանի կատարած հսկայածավալ օրենսդրական աշխատանքի եւ կուտակած հարուստ փորձի վրա, դրանով իսկ հնարավորություն ունենալով ապահովելու խորհրդարանական գործունեության ժառանգականությունը, մանավանդ որ ձեզանից շատերը եղել են Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավորներ:

Շուտով դուք կհաստատեք ձեր օրենսդրական գործունեության հառաջիկա ծրագիրը, որի էությունն է լինելու Սահմանադրությամբ նախատեսված օրենքների փաթեթի ընդունումը: Իհարկե, այսօր դեռեւս վաղ է խոսել ողջ փաթեթի մասին, բայց թերեւս ավելորդ չէ ընդգծել օրենսդրական հերատապ կարգավորում պահանջող երկու բնագավառների առաջնահերթությունը: Կարծում եմ, դժվար չէ գուշակել, որ խոսքը վերաբերում է տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման, ինչպես նաեւ դատական համակարգի բարեփոխման բնագավառներին, որոնց կարգավորմանն ուղղված օրենքները կոչված են ամբողջացնելու պետական իշխանության կառույցների վերջնական ձեւավորումը:

Անդրադառնալով ընտրությունների հաղամական արդյունքներին՝ կուզեի ձեր ուշադրությունը հրավիրել մի քանի հանգամանքների վրա:

Ընտրությունների ամենակարեւոր, կարելի է ասել պատմական նշանակություն ունեցող արդյունքը, ես համարում եմ այն, որ Հայաստանը փաստորեն դարձավ նախկին կոմունիստական համակարգի երկրներից միակը, որտեղ կոմունիստները չկարողացան ռեւանշ վերցնել, ավելին՝ նրանք իրենց դիրքերը զգալիորեն զիջեցին անգամ նախորդ խորհրդարանում ունեցած ներկայության համեմատ:

Սա լրացուցիչ եւ թերեւս ամենապերճախոս ապացույցն է պատմական այն անհերքելի ճշմարտության, որ կոմունիստական գաղափարախոսությունը Հայաստանում ոչ թե հիմնված է եղել ազգային արմատների վրա, այլ բռնությամբ պարտադրվել է օտար ուժերի կողմից եւ ծառայել բացառապես նրանց նպատակներին:

Ընտրությունների երկրորդ կարեւոր արդյունքը ազատական-ժողովրդավարական աջ ուժերի համոզիչ հաղթանակն էր, որը նշանակում է.

- կառավարության որդեգրած սոցիալ-տնտեսական ծրագրի իրականացման հաղաքական երաշխիք,

- ժողովրդավարության խորացման եւ ժողովրդավարական հաստատությունների վերջնական ձեւավորման պատեհություն,
- Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղական կարգավորման գործընթացի շարունակում,
- կառուցողական մասնակցություն տարածաշրջանային եւ միջազգային ինտեգրացիոն գործընթացներին,
- հավասարակշռված, խաղաղասիրական արտաքին քաղաքական կուրսի պահպանում,
- կարճ ասած՝ Հայաստանի իշխանությունների մինչ այժմ իրականացրած քաղաքական եւ սոցիալ-տնտեսական գործունեության շարունակականությունը[1] ապահովում՝ հիմնված հստակ, իրագործելի ծրագրի եւ զարգացման կանխատեսելի հեռանկարի վրա:

Եւ վերջապես, ընտրությունների երրորդ նշանակալից արդյունքը պետք է համարել Հայաստանի կանանց, մասնավորապես՝ «Շամիրամ» միության հաջողությունը, որը հասարակական կյանքում կանանց դերի բարձրացման պետեխոս վկայությունն է: Բավական է նշել, որ եթե նախորդ խորհրդարանում կանայք կազմում էին պատգամավորների միայն 2,5 տոկոսը, ապա Ազգային ժողովում նրանք ներկայացված են արդեն 5,5 տոկոսով: Ձեմ կասկածում, որ հարգելի տիկնայք ոչ միայն արդյունավետ կերպով կզբաղվեն օրենսդրական աշխատանքով, այլեւ խորհրդարանում կստեղծեն նուրբ եւ գեղեցիկ քաղաքական մթնոլորտ:

Վերջում ես մեկ անգամ շնորհավորելով ձեզ՝ ժողովրդի վստահության բարձր պատվին արժանանալու եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման առթիվ, մաղթում եմ ձեզ առողջություն եւ անձնական երջանկություն, հաճդարտ, շինարար, ստեղծագործական աշխատանք:

«Հայաստանի Հանրապետություն», 28 հուլիսի, 1995 թ.:
Հրատարակված՝ «Մաղթում եմ հանդարտ, շինարար, ստեղծագործական աշխատանք» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/27.07.95: Բնագիր: Ինքնագիր:

[1] *Տպագրում՝ շարունակության, բայց ձեռագրի ուղղում ենք շարունակականության:*

ԵԼՈՒՅԹ ՄԱԿ-Ի 50-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՀԱՏՈՒԿ ՀՈՒԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ ՆԻՍՏՈՒՄ

(24 հոկտեմբերի, 1995 թ.)

Պարոն նախագահ,
Պարոն գլխավոր քարտուղար,
Տիկնայք եւ պարոնայք,

Հիսուն տարի առաջ, երկրորդ համաշխարհային պատերազմի ավերածություններից, զինվորականների եւ քաղաքացիական բնակչության անհամար կորուստներից եւ միլիոնավոր անմեղ զոհերի շլացած տառապաթներից հետո, պետությունների մի խումբ միասին որոշեց ստեղծել Միավորված ազգերի կազմակերպությունը՝ հիմնված նոր սկզբունքների վրա, նպատակաուղղված «պաշտպանելու գալիք սերունդներին պատերազմի մտրակներից»:

Թեեւ Հայաստանը, որպես պետություն, ՄԱԿ-ի խարտիան առաջինը ստորագրողներից չի եղել, սակայն որպես ազգ, երկրորդ համաշխարհային պատերազմի դաշտ է ուղարկել շուրջ 600 000 ուստր եւ դուստր, որոնց մոտավորապես կեսը երբեք այլեւս չի վերադարձել: Նաեւ նրանց հիշատակի շնորհիվ է, որ Հայաստանը հպարտորեն տեղ է գրավում ձեր շարքերում որպես անկախ պետություն՝ նշելու համար Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրման 50-ամյա հոբելյանը:

1945 թվականի իրադրությունից ելնելով, բնական էր, որ Միավորված ազգերի խարտիան նպատակ էր հետապնդում առաջին հերթին պահպանել խաղաղությունն ու միջազգային անվտանգությունը: Միավորված ազգերի կազմակերպությունը առանցքային դեր խաղաց հա-

մաշխարհային պատերազմի ավերածություններից հետո վերակառուցման գործում՝ զերծ պահելով աշխարհը հետագա հնարավոր գլոբալ բախումից: Նույնիսկ Սառը պատերազմի ընթացքում, համընդգրկուն հիմնահարցերի միջազգային բնութագրումների ֆորումի լոկ գոյությունը կանխեց բազմաթիվ հակամարտությունների ծագումը:

ՄԱԿ-ը շարունակում է կառուցողական դեր խաղալ տարածաշրջանային հակամարտություններ պարունակող հարցերի լուծման գործում. ինչպես, օրինակ, ԵԱՀԿ-ի հովանու ներքո Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման նպատակով անցկացվող բանակցություններում: Այս առումով ես ցանկանում եմ կրկին արտահայտել երկարաժամկետ զինադադարը հարգելու եւ այն, որտեղ հնարավոր է շուտ, տեւական խաղաղության վերածելու հայկական կողմի հաստատակամությունը:

Պարոն նախագահ,

Կազմակերպության կարեւոր խնդիրներից է խաղաղության երաշխավորումը: ՄԱԿ-ը եւ ողջ աշխարհը 1945 թվականից ի վեր բազմաթիվ հակատներում ունեցել են նշանակալի առաջխաղացումներ: Ապագաղութացման եւ ապարտեհիդի վերացման, ինչպես նաեւ Կենտրոնական եւ Արեւելյան Եւրոպայում, նախկին Խորհրդային Միությունում հին կարգերի փլուզման եւ նոր, ժողովրդավարական կարգերի ի հայտ գալու շնորհիվ, հարյուր միլիոնավոր մարդիկ իրականացրին ինքնորոշման եւ ազգերի միությունում իրենց ձայնի իրավունքը:

Այս ֆորումը միաժամանակ հնարավորություն տվեց աշխարհի ազգերին իրենց բաժին մասնակցությունն ունենալ շատ հարցերի շուրջ հեռանկարների կառուցման գործում, ներառյալ՝ տնտեսական եւ սոցիալական ռազմավարական նպատակները, մարդու իրավունքները, շրջակա միջավայրի պահպանությունը, ինչպես նաեւ աջակցությունը միջազգային իրավունքին: Միաժամանակ, Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված գործակալությունների աշխատանքն ուղղակիորեն բարելավել է միլիոնավոր մարդկանց կյանքը ողջ աշխարհում:

Այնուամենայնիվ, մինչեւ 90-ական թվականները միջազգային հանձակարգը աշխարհի հիմնախնդիրներին մոտենում էր հիմնականում հատվածական սկզբունքով: Սակայն Սառը պատերազմի ավարտը հնարավորություն տվեց պետություններին միասին աշխատելու եւ միջազգային համագործակցությունը աննախադեպ մակարդակի հասցնելու: Քաղաքական, տնտեսական եւ տեխնոլոգիական փոփոխություններով պայմանավորված համընդգրկուն գործընթացները հանգեցրին ազգերի փոխկապվածության խորացմանը եւ ընդլայնեցին Միավորված ազգերի կազմակերպության տեղն ու դերը: Վերջին տարիներին ՄԱԿ-ը անց է կացրել մի շարք միջազգային համաժողովներ համաշխարհային կարեւորության խնդիրների շուրջ: Այս համաժողովներից յուրաքանչյուրը դարձավ համաձայնության կայացման կարեւոր ֆորում: Չնայած մոտեցումների տարբերություններին, դրանցից յուրաքանչյուրն ապացուցեց, որ միջազգային հանրությունը հաղթական կամք ունի բոլոր ժողովուրդների կյանքի որակական բարելավման միասնական նպատակին հասնելու համար:

Հայաստանը ցանկանում է ՄԱԿ-ը էլ ավելի ուժեղ, էլ ավելի գնահատանքի արժանացած տեսնել: Մենք ողջունում ենք դոկտոր Բուտրոս Ղալիի անխոնջ գործունեությունը՝ ուղղված այս փոփոխվող աշխարհում Միավորված ազգերի համակարգի վերակառուցմանը: Նրա նախաձեռնությամբ նշանակալի առաջընթաց է տեղի ունեցել կազմակերպության ղեկավարման գործում:

Դիխավոր քարտուղարի նախաձեռնությամբ վերջին մի քանի տարիների ընթացքում «Խաղաղության ծրագրի», «Զարգացման ծրագրի» եւ, բոլորովին վերջերս, «Խաղաղության ծրագրում լրացում կատարելու մասին» իր իսկ առաջարկությունների շուրջ կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ:

Աշխարհը գիտակցել է, որ չի լինում խաղաղություն առանց զարգացման, եւ զարգացում՝ առանց խաղաղության: Դիխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի սահմանած հաղթականության հիմքը կանխարգելիչ դիվանագիտությունն է: Պարզ է, որ ավելի լավ է կանխարգելել, քան ապաքինել: Իրոք, Սառը պատերազմի տարիներին կանխարգելված պատերազմը խաղաղության միակ հնարավոր ձեւն էր: Այսօր՝ վերջին 100 տարիների ձեռքբերումների շնորհիվ, գիտակցելով աշխարհի անող փոխկախվածության իրողությունները՝ մենք հնարավորություն ունենք մեկ քայլ եւս անել դեպի ապագա՝ հասնելու համար խաղաղության նոր ձեւի՝ խաղաղ համագործակցության եւ ընդհանուր առաջընթացի:

Մեզ համար ուղենիշ են նախորդ սերունդները եւ ոգեշնչող՝ ՄԱԿ-ի ներկայիս ղեկավարությունը: Բայց կազմակերպության վերակառուցման պատասխանատվությունն ավելի շատ ընկնում է անդամ պետությունների վրա: Կազմակերպությունն ազգերից, երկրներից ու ժողովուրդներից վեր կանգնած չէ, այն նրանց համատեղ գոյատեւման ձգտումի եւ նպատակների իրականացման արտահայտությունն է: ՄԱԿ-ը պետք է ծառայի միջազգային ողջ հանրությանը, որի կենտրոնում է մարդկային գոյը: Այն այնքանով արդյունավետ կլինի միայն, որքան որ մենք ջանանք: Նրա հաջողության գրավականը բոլոր անդամ պետությունների եւ մեզանից յուրաքանչյուրի պատասխանատվությունն է:

Եզրափակելով՝ ես կցանկանայի ողջունել բոլոր նրանց, ովքեր ծառայել են ՄԱԿ-ին վերջին 50 տարիների ընթացքում եւ հարգանքի տուրք մատուցել նրանց, ովքեր կյանք տվեցին իրենց պարտքը կատարելիս: Մենք հարգում ենք նրանց հիշատակը եւ պարտավորվում շարունակել նրանց առաքելությունը:

Շնորհակալություն, պարոն նախագահ:

«Հայաստանի Հանրապետություն», 25 հոկտեմբերի, 1995 թ.:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ 7-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(23 դեկտեմբերի, 1995 թ.)

Մեծարգո նախագահ,

Մեծարգո պատվիրակներ,

Ես առանձնակի հաճույքով եմ հանդես գալիս ՀՀՇ համագումարներում՝ դա դիտելով ընկերների ու համախոհների առջեւ պատասխանատվությունից բխող անկեղծ խոստովանության բնական միջավայրը:

Պատասխանատվությունը՝ պատասխանատվություն, սակայն այսօրվա իմ ելույթը ո՛չ հաշվետվություն է, ո՛չ էլ գործունեության ծրագիր: Պարզապես ես ուզում եմ համառոտակի անդրադառնալ մի քանի հարցերի, որոնք շոշափում են ազգի եւ պետության կենսական շահերը՝ հետեւաբար մշտապես հուզելով մեր հասարակական միտքը: Դրանք են.

- Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատականը,
- Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման ներկա վիճակը,
- Հայաստան – Սփյուռք հարաբերությունների առանձնահատկությունները,
- Հայաստանում քաղաքական ինստիտուտների ձեւավորման, մասնավորապես ՀՀՇ եւ «Հանրապետություն միավորման» կառույցների ամրապնդման հեռանկարները:

Թեեւ հարցերը բիչ կարող են թվալ, բայց ես պատրաստվում եմ դրանց անդրադառնալ հանգամանորեն, ուստի խնդրում եմ լցվել համբերությամբ:

* * *

Հայաստանի տնտեսական իրավիճակի գնահատման տեսակետից 1990–1995 թթ. ժամանակահատվածում պետք է նկատի ունենալ իրարից հստակ տարբերվող երեք փուլ.

1. Տնտեսության գահավիժման փուլ, որն ընդգրկում է 1990 թ. հունվարից մինչեւ 1993 թ. նոյեմբերն ընկած ժամանակաշրջանը, այսինքն՝ մինչեւ խորհրդային Միության՝ որպես տնտեսական համակարգի կազմալուծումը, որը խորհրդանշվեց միասնական ռուբլու գոտու բայթայմամբ եւ ազգային դրամների ներդրումով:
2. Տնտեսության կայունացման փուլ, որը տեւեց 1993 թ. նոյեմբերից մինչեւ 1994 թ. դեկտեմբերը, երբ բացառապես հանրապետության ներքին ռեսուրսների եւ հումանիտար օգնության շնորհիվ հաջողվեց կասեցնել տնտեսության հետագա անկումը, մեղմացնել սղաճը եւ կայունացնել ազգային դրամը:
3. Տնտեսության վերելքի փուլ՝ սկսված 1994 թ. դեկտեմբերի 1-ից՝ հանրապետության կառավարության եւ Միջազգային արժութային հիմնադրամի մշակած մակրոտնտեսական հավասարակշռության վերականգնման եւ տնտեսության զարգացման նախադրյալների ստեղծման համատեղ ծրագրի հիման վրա:

Ի դեպ, այս պարբերաբաժանումը լիովին հաստատվում է ոչ միայն վերլուծական տվյալներով, այլ նաեւ Հայաստանի տնտեսության դինամիկայի թվային ցուցանիշներով: Ես ամենեւին չեմ պատրաստվում ձեզ ծանրաբեռնել մակրոտնտեսական կամ վիճակագրական տվյալներով, որոնք գուցեեւ հասկանալի են մասնագետներին, բայց հասարակ մահկանացուների համար չինական հիերոգլիֆներից չեն տարբերվում:

Կան, սակայն, մի քանի պարզ, բոլորին հասկանալի ցուցանիշներ, որոնք լիակատար պատկերացում կարող են տալ իրերի իրական վիճակի մասին: Բավարարվենք մի քանիսով:

- Հայաստանի Հանրապետության բյուջեի եկամուտները 1993 թվականին կազմել են 44 մլն, 1994 թվականին՝ 94 մլն, իսկ 1995-ին՝ 216 մլն դոլար, այսինքն՝ բյուջեի եկամտային մասը երեք տարվա ընթացքում աճել է 4,9 անգամ: Բյուջեի հարկային մուտքերը 1993 թվականին կազմել են 23 մլն, իսկ 1994 եւ 1995 թվականներին համապատասխանաբար՝ 66 եւ 134 մլն դոլար, ըստ այդմ՝ երեք տարում ավելանալով 5,9 անգամ:
- Միջին ամսական անվանական աշխատավարձը 1993 թվականին կազմել է 7,5 (բյուջետային ոլորտում՝ 6,1, ոչ բյուջետային ոլորտում՝ 8,3), 1994 թվականին՝ 6,0 (բյուջետային ոլորտում՝ 3,0, ոչ բյուջետային ոլորտում՝ 8,0), իսկ 1995-ին՝ 15,6 (բյուջետային ոլորտում՝ 8,9, ոչ բյուջետայինում՝ 19,2) դոլար:
- Սղաճը 1993 թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ կազմել է 3727 տոկոս (այսինքն՝ 37,27 անգամ), 1994 թվականին՝ 1884,5 տոկոս (շուրջ 19 անգամ): Նույն տարիներին սպառողական գները բարձրացել են համապատասխանաբար՝ շուրջ 110,19 եւ 1,2 անգամ:
- Դրամի կուրսը ամերիկյան դոլարի համեմատ 1993 թ. նոյեմբեր – 1994 թ. մայիս ամիսների ընթացքում ընկել է 22 անգամ, 1994 թ. հաջորդ ամիսների ընթացքում տատանվել է 350 դրամի շուրջ, իսկ 1995 թ. բոլոր ամիսներին՝ պահպանվել գրեթե անփոփոխ (405–406 դրամ):
- Մի պահեհախոս թիվ էլ՝ եւ վերջ. 1995 թվականին Հայաստան է ներմուծվել ավելի շատ բենզին, քան նախորդ երեք տարիներին միասին վերցրած: Ի դեպ, չար գուշակություններին հակառակ, բենզինի հոսքը նույն ծավալներով շարունակվում է նաեւ ակցիզային հարկի սահմանումից հետո, օրական շուրջ 1000 տոննայի սահմաններում:

Նշելով այս ամենը, ես բոլորովին միտք չեմ հետապնդում գունազարդել պատկերը եւ հավակնոտ եզրակացություններ կատարել: Հակառակը, կարծում եմ, որ նշված փաստերը ո՛չ լուրջ նվաճումներ համարելու, ո՛չ էլ ավերդոդ էյֆորիայի հիմքեր դեռեւս չեն տալիս: Նրանք ընդամենը վկայում են տնտեսության կայունացման հանդարտ գործընթացի եւ հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հարաճուն դրական միտումների մասին, որոնք, վստահ եմ, մենք կպահպանենք նաեւ առաջիկա տարիներին՝ ձգտելով հետեւողականորեն իրականացնել «Հանրապետություն միավորման» նախընտրական ծրագիրը:

Դրականի ճետ մնկտեղ, ճարկ եմ ճամարում նաեւ նշել այն բոլոր ճիմնական թերացումներն ու սխալները, որոնք անցյալ տարիների ընթացքում թույլ են տվել Հայաստանի ներկա իշխանությունները: Իճարկե, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարելի է գտնել թերացումների ու սխալների տրամաբանական բացատրություններ կամ արդարացումներ, սակայն ես կկուսափեմ նման մոտեցումից, բավարարվելով միայն չոր փաստերով:

Առաջին լուրջ սխալը, որն ունեցավ չափազանց ծանր ճետեւանքներ, ես ճամարում եմ ազգային դրամի ներդրման ճարցում մեր դրսեւորած ճապաղումը 1993 թվականին: Ճիշտ է այդ ճապաղումն ուներ ծանրակշիռ բաղաքական պատճառ, այն է՝ վտանգի չենթարկել Հայաստանը՝ ռուբլու գոտու բայթայման եւ Թուրքիայի ճետ ճարաբերությունների սրման նախաձեռնողը լինելու մեղադրանքով, բայց ետճին ճաշվարկով, կարծում եմ, մենք պարտավոր էինք գործել ավելի ճամարձակ: Դրանով եթե անգամ չկարողանայինք խուսափել 1993 թ. աշնանն արձանագրված անկառավարելի արժեզրկումից, ապա, անկասկած, գոնե զգալիորեն կմեղմեինք այն:

Երկրորդ սխալն, իմ կարծիքով, սեփականաշնորճման գործընթացի դանդաղեցումը, իսկ ավելի խիստ արտաճայտված՝ ըստ էության նրա կասեցումն էր 1993–1994 թվականների ընթացքում: Այստեղ նույնպես, ցանկության դեպքում, կարելի է փնտրել եւ գտնել բազում բացատրություններ, բայց արդարացում չեմ տեսնում: Սեփականաշնորճման գործընթացի դանդաղեցումն, իմ խորին ճամոզմամբ, առնվազն մեկ տարով ետ գցեց տնտեսական բարեփոխումների իրականացումը Հայաստանում: Ձեմ կարող չնշել նաեւ սեփականաշնորճվող օբյեկտների գնաճատման մեթոդիկայում եւ սեփականաշնորճման պրակտիկայում տեղ գտած լուրջ թերություններ, որոնք ճասարակության մեջ տեղիք են տալիս ավելորդ կասկածների եւ ասեկոսեների:

Իշխանությունների երրորդ լուրջ թերացումը, եթե կուզեք՝ սխալը, անցած տարիներին իրավապաճ եւ տնտեսական վերաճսկողական մարմինների գործունեության նկատմամբ պատշաճ պաճանջկոտության անտեսումն էր: Ոչ ոք չի կարող ճերքել, իճարկե, ճարկային տեսչության, մաքսային վարչության, ներքին գործերի նախարարության, դատախազության եւ դատարանական ճամակարգերում տարածված

կաշառակերության, աճօրինական գործողությունների աղաղակելի երեւույթները: Միջոցներ, անշուշտ, ձեռ են առնվել, այդ մարմինների բազմաթիվ ծառայողներ ենթարկվել են պատիժների, բայց վիճակը դեռեւս շատ ճեռու է մխիթարական ճամարվելուց:

Եւ վերջապես, ճաջորդ կոնկրետ սխալներն եմ դիտում կառավարության կողմից 1995 թ. բյուջեի եկամտային մասում թույլ տված կոպիտ ճաշվարկը եւ գազի ներմուծման դիմաց Թուրքմենստանին շուրջ 50 միլիոն դոլարի պարտքի գոյացումը:

Նկատի ունենալով Հայաստանի տնտեսական կյանքում առկա դրական միտումները եւ ճաշվի առնելով թվարկված սխալներն ու թերացումները, կարծում եմ, իմ՝ քաղաքացիական ենթադրելի են մեր առաջիկա ճրատապ խնդիրները.

ա) Շեշտակիորեն արագացնել ու կանոնավորել սեփականաշնորճման գործընթացը: Ճիշտ է՝ ասեկոսեներն ու բամբասանքները դրանով չեն վերանալու: Երկրից ճրեշտակ էլ իջնի եւ սեփականաշնորճում իրականացնի, միեւնույն է, այն լինելու է բաղաքական շահարկման մշտական առարկա: Անկախ ամեն ինչից, սակայն, ակնճայտ է, որ սեփականաշնորճման գործընթացում անճրաժեշտ է իրականացնել ճետեւյալ ճրատապ միջոցառումները.

- սեփականաշնորճվող օբյեկտների գնաճատման մեթոդիկայի ճշգրտում,
- փակ բաժնետիրական ընկերությունների սեփականաշնորճման խիստ կանոնակարգում,
- Ազգային ժողովի կողմից սեփականաշնորճման գործընթացի նկատմամբ մշտական վերաճսկողության մեխանիզմների ձեւավորում:

բ) Ուժեղացնել պայքարը իրավապաճ եւ տնտեսական վերաճսկողության մարմինների համակարգում, ինչպես նաեւ նախարարությունների եւ գերատեսչությունների ապարատում դրսեւորվող կաշառակերության, աճօրինական գործողությունների, բաղաքացիների իրավունքների ոտնաճարման երեւույթների դեմ: Հարկային տեսչության, մաքսային վարչության եւ ներքին գործերի նախարարության համակարգում անցկացնել ծառայողների պարբերական ատեստացիաներ եւ ազատվել անմաքուր տարրերից: Ձգտել ճասնել այնպիսի ներդաշնակության,

որպեսզի այդ մարմինները մի կողմից կարողանան պայմարել ստվերային տնտեսության դրսեւորումների դեմ, իսկ մյուս կողմից՝ իրենց աճեկարկի, ինչո՞ւ չէ՝ հաճախ նաեւ հանցավոր միջամտություններով չխոչընդոտեն ազատ ձեռներեցության զարգացումը:

գ) Շուտափույթ միջոցներ ձեռնարկել գազի ներմուծման դիմաց Թուրմենստանի նկատմամբ գոյացած պարտքի մարման ուղղությամբ: Ապահովել էլեկտրաէներգիայի մատակարարման, կոմունալ ծառայությունների, ոռոգման գծով վճարումների կարգապահությունը:

Բացի այս կոնկրետ բայլերից, հանրապետության առջեւ մշտապես ծառացած են նաեւ ավելի լայն, ստրատեգիական բնույթի խնդիրներ՝ կապված կապիտալ ներդրումների մեծացման, արտադրության ոլորտի տեխնոլոգիական վերազինման, մասնավոր ներդրումների խթանման, ինչպես նաեւ շրջափակումների հաղթահարման հետ: Ի դեպ, շրջափակումների մասին: Ամանց թվում է, թե շրջափակման գործոնը դիտավորությամբ շահարկվում է Հայաստանի իշխանությունների կողմից՝ իրենց անհաջողություններն արդարացնելու նպատակով: Ասվում է նաեւ, թե իբր Հայաստանն իրականում շրջափակված չէ, ռանի որ սեւծովյան նավահանգիստների եւ Իրանի միջոցով ազատ հաղորդակցվում է արտաքին աշխարհի հետ: Սակայն ի՞նչ արժե այդպիսի հաղորդակցությունը՝ ոչ ոքի չի հետաքրքրում: Բերեմ միայն երկու փաստ, որոնք, իմ կարծիքով, հստակ պատկերացում են տալիս շրջափակումների իրական հետեւանքների մասին.

- 1 տոննա վառելիքի տեղափոխման ծախսերը Տուապսեից Երեւան՝ նավահանգիստ – ծով – նավահանգիստ – երկաթուղի սխեմայով այսօր կազմում են 34 ամերիկյան դոլար: Աբխազական երկաթուղով տեղափոխման դեպքում դրանք կկազմեին 24 դոլար, այսինքն՝ կունենայինք շուրջ 30 տոկոսի խնայողություն:
- Եթե, Աստված մի արասցե, մեկ շաբաթով դադարի Հայաստան – Իրան կամրջի գործունեությունը, ապա գները հանրապետությունում կաճեն երկու անգամ, այսինքն՝ տեղի կունենա բնակչության կենսամակարդակի 100 տոկոսանոց անկում:

Ահա թե ինչ է նշանակում շրջափակումը, եւ որեռնով է այն խոչընդոտում Հայաստանի տնտեսության նորմալ զարգացմանը: Ուստի, քանի դեռ չեն վերացել շրջափակումները՝ խոսել տարածաշրջանային եւ

միջազգային տնտեսական համակարգերում Հայաստանի լիարժեք ինտեգրացման մասին, պարզապես ծիծաղելի պետք է համարել:

* * *

Դադտնիք չէ, որ շրջափակումների վերացումը համարյա բացառապես կախված է Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծումից, որը, անկախ նույնիսկ շրջափակումների պարագայից, իմնինն հանդիսանում է Հայաստանի առջեւ ծառացած կարեւորագույն քաղաքական խնդիրը:

Հակամարտության կարգավորման ներկա փուլը բնութագրվում է ավելի քան մեկուկես տարի տեւող կայուն զինադադարով եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող ինտենսիվ բանակցություններով, որոնց Լեռնային Ղարաբաղը մասնակցում է որպես լիարժեք կողմ:

Հայաստանն այդ բանակցություններում հանդես է գալիս հետեւյալ հստակ դիրքորոշմամբ. հակամարտությունը պետք է լուծվի Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման սկզբունքի հիման վրա եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգության քաղաքական ու ֆիզիկական երաշխիքների ապահովման պայմանով:

Ադրբեջանն ու միջազգային հանրությունը այդ դիրքորոշմանը հակադրում են Ադրբեջանի տարածքային ամբողջականության եւ սահմանների անձեռնմխելիության սկզբունքները՝ ընդունելով հանդերձ Լեռնային Ղարաբաղի անվտանգության երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը:

Բանակցությունների արդյունավետությունն առայժմ ամենեւին համարժեք չէ նրանց ինտենսիվությանը, որը բացատրվում է նախ եւ առաջ կողմերի դիրքորոշումների կոշտությամբ, ապա այն հանգամանքով, որ միջազգային հանրությունը մինչ այժմ հիմնականում զբաղված էր բոսնիական խնդրի կարգավորմամբ:

Այդ հարցի լուծումից հետո միջազգային հանրությունը, բնականաբար, ավելի շատ ուշադրություն է դարձնելու դարաբաղյան հակամարտությանը, եւ մենք դրա միտումներն արդեն իսկ զգում ենք:

Քաջ գիտակցելով, որ միջազգային հանրությունը երկար չի հանդուրժի Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ տիրող ո՛չ պատերազմ – ո՛չ խաղաղություն իրավիճակը, Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը

բանակցություններում պետք է հանդես գան ավելի ճկուն եւ կառուցողական մոտեցումներով:

Ես համոզված եմ, որ 1996 թվականը լինելու է Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման գործընթացում եթե ոչ վճռական, ապա առնվազն լուրջ առաջընթաց նշանավորող տարի:

Բոլոր դեպքերում Հայաստանն առաջնորդվում է եւ այսուհետեւ էլ առաջնորդվելու է հարցի կարգավորման եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովման պատասխանատվության գիտակցությամբ:

* * *

Ղարաբաղի խնդրից հետո ազգային միտքը հուզող երկրորդ կարեւոր հարցը Հայաստան – Սփյուռք հարաբերությունների ներկա վիճակն է:

Հայաստանի եւ Սփյուռքի ընդդիմադիր մամուլում հարցը ներկայացվում է այնպես, թե իբր այդ հարաբերություններում առկա է խոր եգնաժամ, թե իբր Հայաստանի իշխանությունները Սփյուռքի նկատմամբ կիրառում են խտրական, պառակտողական հաղորդակցություն, ավելին՝ նույնիսկ վերարժարժվում է արեւելահայ – արեւմտահայ ժամանակավրեպ հակադրությունը (որ ընդհանրապես ծիծաղելի է, եթե նկատի ունենանք, որ Արեւելահայաստանը Նախագահ է ընտրել արեւմտահայի):

Խորին գոհունակությամբ պետք է հայտարարեմ, որ, բարեբախտաբար, սա խաբուսիկ տպավորություն է, որն ստեղծվում է որոշ ուժերի կողմից բացառապես հաղորդական շահարկումների նկատառումով, իսկ եզակի դեպքերում՝ զուտ հոգեբանական բաղդայթներով:

Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ իրականում ոչ միայն որեւէ լուրջ հակասություն գոյություն չունի, այլեւ նրանց հարաբերությունները երբեմն այնքան սերտ, ջերմ ու գործնական չեն եղել, քան այսօր:

Անկախ Հայաստանն առաջին իսկ օրից Սփյուռքում փնտրեց իր զորացման լրացուցիչ մտավոր, հաղորդական եւ նյութական կարողություններ, եւ բոլոր այդ բնագավառներում արձանագրեց համագործակցության՝ եթե ոչ դեռեւս լիովին բավարար, բայց միանգամայն արդյունավետ իրողություններ, իսկ Սփյուռքն իր հիմնական զանգվածով եւ

համարյա բոլոր ծանրակշիռ կառույցներով ձգտեց այդ կարողություններն ի սպաս դնել Հայաստանի շենացման ու զորացման գործին:

Խոսենք փաստերով:

Աշխարհում այսօր գոյություն ունի համասփյուռքյան, կամ ավելին՝ համահայկական, իներ հաստատություն.

- Հայ Առաքելական Եկեղեցու էջմիածնական աթոռը,
- Հայ Առաքելական Եկեղեցու Կիլիկիո աթոռը,
- Հայ Կաթողիկե Եկեղեցին,
- Հայ Ավետարանական Եկեղեցին,
- Հայ հեղափոխական դաշնակցությունը,
- Ռամկավար-ազատական կուսակցությունը,
- Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը,
- Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը,
- եւ վերջապես՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը:

Սրանց պետք է գումարել թերեւս նաեւ «Ամերիկայի հայկական համագումարը», որը թեեւ համասփյուռքյան կառույց չէ, բայց լուրջ հաղորդական կշիռ ունի Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Այս տաս հաստատություններից իներ գրեթե անվերապահորեն պաշտպանում են Հայաստանի ներկա իշխանությունների գործունեությունը արտաքին հաղորդականության, տնտեսական բարեփոխումների եւ ժողովրդավարության հաստատման բնագավառներում: Միակ կազմակերպությունը, որ չի հաշտվում այս իրականության հետ, Հայ հեղափոխական դաշնակցությունն է, իսկ ավելի ճիշտ՝ դաշնակցական նոմենկլատուրան, որը չի արտահայտում անգամ ոչ միայն կուսակցության համակիրների, այլեւ շարերի ամբողջական տրամադրությունը:

Հայաստանի իշխանությունների եւ դաշնակցական նոմենկլատուրայի հակասությունը մատուցել որպես հակասություն Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ՝ ոչ միայն մոլորություն է, այլեւ կեղծարարություն, որովհետեւ դաշնակցության ազդեցությունը տարածվում է սփյուռքահայության հազիվ մեկ-երկու տոկոսի վրա, եւ որևէ հակասությունը սովի, այնքան այդ ազդեցությունը նվազելու է:

Ժխտելով Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ գոյություն ունեցող հորինածո հակասությունը, չեմ կարող չնշել, սակայն, որ ներդաշնակության

պակաս, երկխոսության մեխանիզմի անկատարություն, որոշակի շփոթ իրոք գոյություն ունի:

Դա առաջին հերթին բացատրվում է Սփյուռքի առանձնահատկությամբ: Հայաստանն իսկապես լուրջ դժվարություն ունի սփյուռքահայության կամքն արտահայտող խոսակից գտնելու հարցում, որովհետեւ Սփյուռքը չունի ոչ միայն որեւէ համասփյուռքյան ներկայացուցչական մարմին, այլեւ այդպիսիք գոյություն չունեն անգամ ներգաղութային մակարդակում: Նման ներկայացուցչական մարմնի ստեղծումը, սակայն, ժամանակի հարց է, եւ վստահ եմ, որ այն երբեւէ իրականություն կդառնա:

Որոշակի շփոթ է առաջացնում նաեւ Հայաստանի Հանրապետությունում կրկնակի քաղաքացիության իրավունքի բացակայության փաստը՝ դիտվելով որպես սփյուռքահայության նկատմամբ խտրական վերաբերմունքի արտահայտություն կամ ավելի խիստ՝ որպես ազգի միասնությանը սպառնացող ահավոր վտանգ: Այս գնահատականը ես նույնպես համարում եմ մոլորություն կամ չարամտություն:

Առաջին հայացքից կարող է իսկապես հիմնավոր թվալ այն հարցը, թե ինչն էր խանգարում՝ սփյուռքահայերին օժտել կրկնակի քաղաքացիության իրավունքով: Չէ՞ որ դրանով կխորհրդանշվեր ազգի միասնությունը:

Իրականում, սակայն, դա իսկապես կունենար միայն խորհրդանշական նշանակություն: Հոգեբանական առումով, թեեւ, այդ նշանակությունն անգամ չպետք է թերագնահատել, բայց մենք պարտավոր էինք հարցին մոտենալ պետականության ամրապնդման գործնական նկատառումներով:

Նախ, ոչ մի սփյուռքահայ զրկված չէ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքից, ավելին՝ նա ազատված է օտարերկրացիների համար սահմանված բոլոր պայմաններից:

Երկրորդ, բազմաթիվ երկրներում, որտեղ գոյություն ունեն հոծ հայկական գաղութներ, կրկնակի քաղաքացիությունն ինքնին արգելված է, ուստի այդ իրավունքը կունենար վերացական նշանակություն:

Երրորդ, կրկնակի քաղաքացիության ձեռքբերմամբ սփյուռքահայությունը շատ երկրներում կկորցներ իր քաղաքական ազդեցությունը՝ դիտվելով որպես օտար տարր:

Եւ չորրորդ, սփյուռքահայությանը կրկնակի քաղաքացիության իրավունք շնորհելու դեպքում նույն իրավունքը պետք է շնորհվեր նաեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, որ հղի էր, սակայն, ազգային անվտանգությանն սպառնացող լուրջ հետեւանքներով: Այսօր արդեն մենք ականատեսն ենք այն իրողության, որ Հայաստանի բազմաթիվ բնակիչներ, օգտվելով իրենց կրկնակի քաղաքացիության հանգամանքից, խուսափում են պետության նկատմամբ իրենց պարտավորությունների կատարումից, մասնավորապես զինապարտությունից:

Հայաստան – Սփյուռք հարաբերությունների ներկա վիճակն, այսպիսով, ո՛չ լուրջ անհանգստության, ո՛չ էլ առանձնակի ոգեւորության հիմք չի տալիս: Այդուամենայնիվ, գիտակցելով այդ հարաբերությունների կարեւորությունը, Հանրապետության Նախագահի աշխատակազմում շուրջ մեկ տարի առաջ ստեղծվել է հատուկ աշխատախումբ, որում ընդգրկված են Հայաստանի եւ Սփյուռքի լավագույն մասնագետները: Աշխատախմբի նպատակն է մշակել Հայաստան – Սփյուռք հարաբերությունների զարգացման համալիր ծրագիր եւ ձեւավորել նրա իրականացման համար անհրաժեշտ կառույցներ: Աշխատախումբն արդեն կազմակերպել է մի շարք սեմինարներ եւ առանձին խորհրդակցություններ: Առաջիկայում մեր հասարակությունը հնարավորություն կունենա ծանոթանալու կատարված աշխատանքի արդյունքներին:

* * *

Իսկ այժմ ուզում եմ անդրադառնալ իմ ելույթի վերջին հարցին. այն է Հայաստանում քաղաքական ինստիտուտների ձեւավորման գործընթացին:

Հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրությամբ մենք փաստորեն ամրագրեցինք պետական եւ տնտեսական ինստիտուտների համակարգը, սահմանեցինք օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների լիազորություններն ու գործունեության ոլորտները, ինչպես նաեւ մասնավոր սեփականության, ազատ ձեռներեցության իրավունքները:

Սակայն պետության պարտքն է հոգալ ոչ միայն պետական ու տնտեսական կառույցների, այլեւ հասարակական եւ քաղաքական ինստիտուտների ստեղծման մասին: Ըստ այդմ, կուսակցությունների՝ որպես ժողովրդավարության հիմնական հաստատությունների ձեւավորումը մտնում է պետության կարեւորագույն խնդիրների մեջ:

Այս տեսակետից ես հատկապես ուզում եմ կարեւորել «Հանրապետություն միավորման» ձեւավորման փաստը՝ ո՛չ սոսկ որպես նախընտրական համագործակցության արտահայտություն, այլ որպես Հայաստանի հիրավի ազգային, ազատական-ժողովրդավարական ուժերի ապագա լայն դաշինքի ստեղծման հեռանկար:

Ըստ այդմ, ՀՀՇ-ն պարտավոր է ոչ միայն ամրապնդել այդ միավորումն ու նրա խորհրդարանական խմբակցությունը, այլեւ բայլեր ձեռնարկել՝ նրա շարքերն ընդլայնելու ուղղությամբ:

Այդ առումով, կարծում եմ, ժամանակն է, որպեսզի «Հանրապետություն միավորումը» բանակցություններ սկսի գաղափարակից այլ հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների հետ՝ ՀՌԱԿ, «Շամիրամ», ժողովրդական կուսակցություն, երկրապահների միություն եւ այլն:

Բայց դա քիչ է, անհրաժեշտ է ընդլայնել նաեւ ազատական, ժողովրդավարական ուժերի սոցիալական բազան: Ե՛ւ ՀՀՇ-ն, Ե՛ւ «Հանրապետություն միավորման» մեջ մտնող մյուս կուսակցություններն այսօր, կարծեմ, զուտ վերնաշենքային կառույցներ են: Թեեւ նրանք ունեն իրենց սոցիալական բազան, թեեւ արտահայտում են հասարակության որոշ խավերի, որոշ շերտերի՝ սեփականատերերի, ազատ ձեռներեցների, արհյունաբերողների շահերը, բայց այդ սոցիալական բազան դեռեւս ձեւավորված կառույցների չի վերածված:

Մինչդեռ մենք այսօրվանից արդեն պետք է մտածենք ոչ թե եւ ոչ միայն մարտավարական խնդիրների, այլեւ Հայաստանի՝ որպես ժողովրդավարական, իրավական պետության ապագա կայուն քաղաքական կառույցների մասին:

Որքան էլ լավ Սահմանադրություն կամ պետական իշխանության ճզոր կառույցներ ունենանք, եթե չունենանք նաեւ լուրջ քաղաքական ինստիտուտներ, այդ ամենը վտանգի կարող ենք ենթարկել:

Մենք այսօր ուրախանում ենք մեր բազմակուսակցականության իրողությամբ, ժողովրդավարական ավանդույթների ձեւավորման հանգամանքով, ունեցել ենք երեք ազատ ընտրություն, երկու հանրաքվե, առաջացել են հայտնի կուսակցություններ, քաղաքական խմբավորումներ, բայց խոսել դրական առումով Հայաստանում կուսակցություննե-

րի կայացման մասին, կարծում եմ, դեռեւս շատ վաղ է: Բայց նաեւ ուշացնել այդ գործընթացը՝ մենք իրավունք չունենք:

Իմ խորին համոզմամբ, Հայաստանում, մեր կամքից անկախ, տեղի են ունենալու այն բոլոր քաղաքական գործընթացները, որոնք տեղի են ունենում ժողովրդավարության ուղին բռնած մյուս երկրներում: Ձեւավորվելու է, ըստ էության, երեք քաղաքական ուղղություն՝ աջ ուժեր, որոնք պաշտպանում են մասնավոր սեփականության, ազատ ձեռներեցության շահերը, ձախ ուժեր, որոնց շեշտադրումը ժողովրդի սոցիալական կարիքների բավարարումն է, եւ լուսաճցային (մարգինալ) ուժեր, որոնք մշտապես ուղեկցելու են ժողովրդավարությանը, բայց վերջինիս ուժեղ լինելու դեպքում երբեք չեն վտանգելու պետության կենսագործունեությունը. դրանք ծայրահեղ ազգայնական (նացիոնալիստական) ուժերն են, որոնք կան աշխարհի բոլոր քաղաքակիրթ երկրներում եւ Հայաստանում չլինել չեն կարող:

Այս երեք քաղաքական ուղղություններից կամ ուժերից այսօր վերջնական ձեւավորմանն ամենամոտը աջ ուժերի դաշինքն է, որի ամենապերճախոս վկայությունը «Հանրապետություն միավորման» առկայությունն է: Ազգի միասնությունից, ազգային համերաշխությունից խոսում էինք ոչ թե մենք, այլ խոսում, աղաղակում էր ընդդիմությունը: Բայց նա չկարողացավ փորձյատե միավորվել անգամ մի այնպիսի փորձի հարցում, ինչպիսին ընտրությունների միջոցով որպես հրեշ ներկայացվող իշխանություններից ազատվելու հարցն էր: Եթե այս նպատակի շուրջ անգամ չկարողացան միավորվել, էլ ո՞ր հարցում են նրանք միավորվելու:

Մենք չխոսեցինք այդ մասին, մենք չաղաղակեցինք, բայց գործով իրականացրինք: Եւ բնական էր, որ առաջին հերթին հենց աջ ուժերին հաջողվեց միավորվել: Որովհետեւ հանրապետությունում այսօր հիմնականում ընթանում են դրան նպաստող գործոնները՝ ժողովրդավարության խորացում, սեփականաշնորհման ծավալում, սեփականատերերի խավի ձեւավորում, ազատ ձեռներեցության հնարավորությունների ընդլայնում եւ այլն:

Մենք ժողովրդից թաքցնելու բան չունենք. մեր գաղափարախոսությունը հիմնված է ժողովրդավարության, ազատ շուկայական տնտեսության, սեփականատերերի, ազատ ձեռներեցների իրավունքների

պաշտպանության սկզբունքների վրա, որովհետեւ համոզված եմ, որ դրանից է կախված ժողովրդի բարեկեցության եւ պետության բարգավաճման ապահովումը: Եւ բոլոր այն ուժերը, որոնք Հայաստանում դավանում են այս գաղափարներն ու սկզբունքները, վաղ թե ուշ, անգամ հակառակ մեր կամքի, միավորվելու են:

Ուստի գտնում եմ, որ մենք պարտավոր ենք այդ գործընթացը դնել կառավարելի հունի մեջ՝ «Հանրապետություն միավորման» շուրջ ձեւավորելով աջ ուժերի ավելի լայն կոալիցիա:

Դեռանում, բացի վերը թվարկված կազմակերպություններից, պետք է ընդգրկվեն Առդյունաբերողների միությունը, Գործարարների միությունը եւ Դյուզացիական սեփականատերերի միությունը, որոնք դեռ պետք է կազմակերպական ձեւ ստանան:

Սկզբնական շրջանում այդ կոալիցիան, պահպանելով «Հանրապետություն միավորում» անվանումը (կրճատ՝ հանրապետականներ), ըստ երեւույթին, կունենա դաշնության կամ համադաշնության բնույթ (ֆեդերացիա կամ կոնֆեդերացիա): Կոալիցիայի մեջ մտնող յուրաքանչյուր կազմակերպություն կպահպանի իր իմքնավարությունը, միաժամանակ ստեղծելով համակարգող կենտրոնական մարմիններ: Իսկ ժամանակի ընթացքում, չեմ կասկածում, որ տեղի կունենա նրանց համաձուլում՝ ԱՄՆ Հանրապետական կամ Մեծ Բրիտանիայի Պահպանողական կուսակցության տիպի մի հզոր կազմակերպություն ստեղծելու նպատակով:

Ես պատրաստ եմ գլխավորել այդ շարժումը եւ հանդես գալ որպես աջ ուժերի առաջնորդ կամ կոալիցիայի նախագահ: Եւ եթե դուք ինձ լիազորում եք, համաձեք, որ այդ աշխատանքը ես այսօրվանից սկսել եմ:

Այստեղ, իհարկե, ես պարտավոր եմ նշել մի վտանգ. կարող է ստեղծվել այն տպավորությունը, որ ձեւավորվում է մի գերկուսակցություն, որն ապագայում կունենա ամբողջատիրական կամ մենատիրական հավակնություններ: Ավելին, ես տեսնում եմ նաեւ ներքին վտանգ. հակակշիռների բացակայության դեպքում մենք, որպես հաղթական կազմակերպություն, կարող է դառնանք սեփականատերերի գերին, նրանց պատանդը:

Իհարկե, սեփական շահերից բացի, նրանք էլ ստիպված են հաշվի նստել ժողովրդի սոցիալական պահանջների հետ, որովհետեւ աշխարհում չկա կապիտալիստ, որ դրա հետ հաշվի չնստի, բայց այս ներքին գիտակցումից բացի անհրաժեշտ են նաեւ արտաքին հակակշիռներ: Այսինքն, նման գերկուսակցության կողքին անհրաժեշտ է նաեւ սոցիալիստական տիպի կուսակցության գոյությունը: Եւ այդ կուսակցությունն էլ, մեր կամքից անկախ, վաղ թե ուշ ստեղծվելու է: Սոցիալիզմի գաղափարը հավերժական գաղափար է եւ մշտապես ուղեկցելու է մարդկությանը. Հայաստանը չի կարող այս հարցում ես օրիգինալ լինել:

Ես առայժմ չգիտեմ, թե ովքեր են այն մարդիկ, որ դա իրականացնելու են, բայց որ ուժեղ սոցիալիստական կուսակցություն Հայաստանում ստեղծվելու է, չեմ կասկածում: Եւ անհրաժեշտ է, որ ստեղծվի: Այլապես կառաջանա մի վիճակ, երբ կգերակայեն սեփականատերերի շահերը՝ ի հաշիվ ժողովրդի սոցիալական կարիքների բավարարման:

Ահա, եթե կուզեմ, օգտվելով կոմունիստական տերմինոլոգիայից, կուսակցական շինարարության այն մոտավոր ծրագիրը, որը ես համարում եմ հրամայական եւ իրականանալի, միաժամանակ, ինչպես վերը նշեցի, նույնիսկ կարեւոր, որևէ պետական եւ տնտեսական կառույցների ձեւավորումը:

«Հայաստանի Հանրապետություն», 26 դեկտեմբերի, 1995 թ.:
Հրատարակված՝ «Ժողովրդի բարեկեցությունն ու պետության բարգավաճումը ապահովենք միասին» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/23.12.95: Բնագիր: Ինքնագիր:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՄԱՆՈՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ 1996 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՄՈՒՏԻՆ

(31 դեկտեմբերի, 1995 թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Անցյալ տարվա ամանորյա մաղթանքում ես հույս էի հայտնել, որ 1995 թվականը կդառնա մեր ժողովրդի հոգսերի թեթևացման եւ անկախ պետականության շոշափելի արգասիքների դրսեւորման տարի:

Այսօր ես խորին գոհունակությամբ այդ հույսը լիովին արդարացված կարող եմ համարել: 1995 թվականն, ի տարբերություն անկախության նախորդ տարիների, իսկապես եղավ բեկումնային՝ տնտեսության բնագավառում առկա դրական միտումների ամրապնդման, դրամի արժեքի եւ գների համակարգի կայունացման, արտաքին առեւտրի աշխուժացման, բնակչության կենսամակարդակի թեկուզ դանդաղ, բայց նկատելի բարձրացման տեսակետից:

Համոզվելու համար հարկ չկա դիմել վիճակագրական տվյալների եւ տնտեսական ցուցանիշների օգնությանը. բավական է տեսնել երթեւեկող մեքենաների բանակը, շուկաների ու խանութների առատությունը, մարդկանց ժպիտն ու աճող լավատեսությունը:

Հարկ չկա նաեւ հավաստել, որ այդ ամենը պարտավոր ենք պահպանել ու խորացնել առաջիկա տարվա ընթացքում՝ մեր ժողովրդին ապահովության եւ կայուն առաջընթացի զգացողություն ներշնչելու համար, բանզի առանց այդ զգացողության անհնար է պատկերացնել Հայաստան երկրի բարգավաճման բաղձալի հեռանկարը:

Մեր ժողովուրդը չափազանց բանկ գին վճարեց անկախության եւ Արցախի ազատագրության համար: Վճարեց սակայն ոչ թե ակամա,

այլ գիտակցաբար: Տառապեց՝ բայց դիմացավ, նեղվեց՝ բայց տոկաց, քանզի վեհ էր նպատակն ու անսակարկելի:

Ժամանակից առաջ ընկնելով, կարծում եմ, արդեն իսկ իրավունք ունենք սա համարելու անօրինակ սխրագործություն, որն արժանանալու է սերունդների անմնացորդ ակնածանքին: Եվ քանի որ չկա սխրագործություն, որ չհատուցվի, չկա ազնիվ ջանք, որ արդյունք չտա, չկա քրտնաթոր ածու, որ ծիլ չարձակի, մեր ժողովրդի գործադրած ահռելի ճիգն էլ, անկասկած, պետք է տա իր պտուղները:

Ուստի պատահական չէր, որ 1995 թվականը դարձավ պտղաբերության առաջին տարին. հունձքը թեև համեստ, բայց հուսադրող:

Իշխանության մարմինների, արդյունաբերողների, գյուղական աշխատավորության, գործարար աշխարհի հանդարտ, տքնաջան աշխատանքի շնորհիվ, կարելի է ասել, ժողովրդի կյանքն այս տարի աստիճանաբար մտավ բնականոն հունի մեջ՝ իր առօրյա հոգսերով ու դժվարություններով, բայց կանխատեսելի ընթացքով: Տեղի չունեցավ որևէ ցնցում՝ կապված դրամի կուրսի, սղաճի, գների փոփոխության, ապրանքների բացակայության կամ տնտեսական բնույթի այլ երևույթների հետ:

Տնտեսական կայունացման գործում, անշուշտ, իր վճռական դերը խաղաց միջազգային ֆինանսական կազմակերպությունների աջակցությամբ մշակված Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման 1995 թվականի համալիր ծրագիրը՝ ի չիք դարձնելով նրա իրագործման հետ կապված բոլոր հոռետեսական գուշակությունները:

Տնտեսական կայունացման միտումների ամրապնդումից և մակրոտնտեսական հավասարակշռության վերականգնումից բացի, 1995 թվականը Հայաստանի տնտեսական կյանքում նշանավորվեց նաև մի շարք կենսական ձեռնարկումների իրականացման առումով: Շահագործման հանձնվեցին Մեծամորի ատոմակայանը, Հերհերի ջրամբարը, Արաքսի կամուրջը, Տավուշ – Իջևան ճանապարհը, ռազմա-արդյունաբերական համալիրի մի քանի արտադրամասեր և այլն:

Ուզում եմ հատկապես գնահատել ատոմակայանի վերականգնման պատասխանատու ծրագրին մասնակցած բոլոր մասնագետների, գիտնականների, շինարարների բարձրորակ աշխատանքը, որի շնորհիվ Հայաստանը մասամբ վերականգնեց իր էներգետիկ անկախությունը: Այդ

առթիվ ատոմակայանի աշխատակիցներին մաղթում եմ ամենայն բարիք՝ վստահություն հայտնելով, որ կայանի անխափան ու անվտանգ գործարկումը դուք կդիտեք ձեր սրբազան պարտականությունը և պետության պատվի խնդիրը:

Սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացման իրողության, կենսական նշանակության շինարարական ծրագրերի իրականացման հանգամանքների կողքին 1995 թվականը, անշուշտ, Հայաստանի պատմության մեջ կմտնի նաև որպես ժողովրդավարության ամրապնդման և պետական համակարգի ամբողջացման շրջադարձային տարի: Ես նկատի ունեմ հուլիսի 5-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները և մանավանդ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման փաստը, որն, անկասկած, ունենալու է տևական, կառուցողական արժեք՝ ապահովելով մարդու և քաղաքացու ազատություններն ու իրավունքները, պետության կայունությունն ու իշխանության մարմինների արդյունավետ գործունեությունը: Այս կապակցությամբ ես ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել մեր ողջ ժողովրդին՝ սահմանադրական հանրաքվեի ընթացքում դրսևորած բարձր քաղաքացիական գիտակցության և իմաստուն կողմնորոշման համար:

Կարծում եմ, ինքնըստինքյան հասկանալի է, որ տնտեսական զարգացման և պետական շինարարության բնագավառներում արձանագրված վերոհիշյալ ձեռքբերումներն անհնար կլինեին, եթե ողջ տարվա ընթացքում չպահպանվեր Լեռնային Ղարաբաղում հաստատված զինադադարը, որը ես համարում եմ մեր ժողովրդի ամենաթանկ նվաճումը: Միանգամայն անհերքելի է, որ և՛ սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացման դրական միտումները, և՛ միջազգային ֆինանսական կազմակերպությունների աջակցության հաջող իրականացումը համարյա բացառապես պայմանավորված են ավելի քան մեկուկես տարի տևող կայուն զինադադարով: Մեր ժողովուրդը, դժբախտաբար, սեփական փորձով ճանաչեց պատերազմի և խաղաղության հակոտնյա անդրադարձները:

Խաղաղությունն, ըստ այդմ, պետք է դիտել որպես մեր գոյության, մեր ապահովության, մեր տնտեսական բարգավաճման միակ պայման, որովհետև մյուս անհրաժեշտ պայմանները՝ իմաստությունը,

մտավոր ունակությունը, հաջությունը, տոկունությունը եւ ձեռներեցությունը մեր ժողովրդին չեն պակասում:

Ուստի առաջիկա տարվա մեր առաջնահերթ խնդիրն եմ համարում առկա զինադադարի վերածումը կայուն խաղաղության՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդարացի լուծման հիման վրա:

Խաղաղության պարագայում ես մեր երկրի ու ժողովրդի լուսավոր ապագային չեմ կասկածում: Ջեմ կասկածում նաեւ, որ մեր սերնդի օրոք Հայաստանն արժանապատվորեն տեղ է զբաղեցնելու բաղմակիրճ պետությունների իրավահավասար ընտանիքում:

Կուզեի սա դիտվի ո՛չ որպես հավուր պատշաճի ճնշած լավատեսություն, այլ որպես մեր ներկացության մեջ նշմարվող լույսի դիտարկման առդրումի:

Սիրելի հայրենակիցներ, ի տարբերություն նախորդ տարիների, ես ձեզ կոչում եմ աղեղն ոչ թե տոկունության, համբերության, այլ խաղաղ, ստեղծագործ աշխատանքի՝ ի բարօրություն եւ ի փառս մեր ճնգամյա անկախ հանրապետության:

Շնորհավոր նոր տարի:

ՀՀԱՆԱ, 28/31.12.95: Բնագիր: Ինքնագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(31 օգոստոսի, 1996 թ.)

Համազգային ժողովրդավարական շարժման արդյունքում 1990 թվականից առ այսօր Հայաստանում իշխանության գլուխ գտնվող ուժերը, որոնք առաջիկա նախագահական ընտրություններում կրկին պաշտպանում են իմ թեկնածությունը, ժողովրդի դատին են ներկայանում իրենց վեցամյա գործունեության հետեւյալ հաշվեկշռով.

- Հայաստանի անկախության վերականգնումը եւ հանրապետության ներքին կայունության պահպանումը.
- հավասարակշռված արտաքին հարաբերության իրականացման շնորհիվ Հայաստանի միջազգային վարկի ձեռքբերումը.
- ժողովրդավարական իրավունքների՝ բազմակուսակցականության, պառլամենտարիզմի, խոսքի, մամուլի, ցույցերի, երթերի, գործադուլների ազատության ապահովումը.
- արմատական տնտեսական բարեփոխումների՝ մասնավորապես հողի սեփականաշնորհման իրականացումը, որը որոշ առումով ունեցավ ազգափրկիչ նշանակություն.
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումն ու իրավական պետության օրենսդրական դաշտի ձեւավորման սկզբնավորումը.
- մարտունակ բանակի, ներքին գործերի եւ ազգային անվտանգության մարմինների ուժեղ համակարգի ստեղծումը.

- Լեռնային Ղարաբաղի կողմից իր անկախության եւ ճուսալի անվտանգության ապահովումը:

Առկա նվաճումների կողքին, սակայն, նույն ժամանակահատվածում Հայաստանն ունեցել է նաեւ ցավալի կորուստներ.

- պատերազմական գործողությունների ընթացքում Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի տված շուրջ 5000 զոհերը եւ նույնքան հաշմանդամները.
- Հայաստանի տնտեսության եւ բնակչության կենսամակարդակի լուրջ անկումը, հումքային եւ էներգետիկ ճգնաժամը.
- Հայաստանից շուրջ 400000 բաղաքացիների մշտական կամ ժամանակավոր արտագաղթը.
- Շահումյանի շրջանի, Մարտակերտի եւ Մարտունու շրջանների որոշ հատվածների, Արծվաշենի կորուստը:

Ճիշտ է՝ կորուստների իմաստով, սկսած 1993–94 թվականներից, վիճակն սկսել է բարելավվել,– կասեցվել է տնտեսության եւ բնակչության կենսամակարդակի անկումը, նվազել է արտագաղթը եւ սկիզբ առել ներգաղթի գործընթացը, երկամյա զինադադարի շնորհիվ խնայվել է շատերի կյանքն ու առողջությունը, կորցրած տարածքների փոխարեն Լեռնային Ղարաբաղն գրաղեցրել է իր անվտանգությունն ապահովող շատ ավելի ընդարձակ տարածքներ,– այնուամենայնիվ, Հայաստանի իշխանություններն այդ կորուստների համար մտադիր չեն խուսափել իրենց բաժին պատասխանատվությունից: Իսկ թե որճանով են այդ կորուստներն առարկայական, եւ որճանով կախված իշխանությունների անմիջական գործունեության արդյունից՝ մնում է վճռել ժողովրդին եւ պատմությանը:

Ունենալով որոշ դերակատարություն ձեռքբերված նվաճումների մեջ եւ լիովին գիտակցելով պատասխանատվության իմ բաժինը կորուստների ճարցում, ինձ իրավունք եմ վերապահում հայցել ժողովրդի վստահության կրկնական էվեն՝ առաջիկա հինգ տարիներին Հանրապետության Նախագահի պաշտոնը վարելու պատրաստակամությամբ: Միաժամանակ հարկ եմ համարում ներկայացնել գործողությունների այն ծրագիրը, որը դառնալու է ապագա Նախագահի գործունեության հիմնական ուղենիշը, եւ որի իրականացումն, իմ պատկերացմամբ, Հայաստանին հնարավորություն է տալու 21-րդ դար մտնել որպես

ամուր, բարգավաճող եւ խաղաղ պետություն: Այն հիմնված է մեր անցյալի փորձի, Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման կառավարական ծրագրի եւ «Հանրապետություն միավորման» 1995 թվականի նախընտրական ծրագրի վրա:

Ներքին հաղաքականության բնագավառում

Սահմանադրության պահանջներին համապատասխան՝ ավարտին հասցնել Հայաստանի Հանրապետության պետական իշխանության կառույցների ամբողջականացման գործընթացը, որի առաջնահերթ խնդիրներն են՝ տեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորումը եւ դատա-իրավական համակարգի վերափոխումը:

Խորացնել ժողովրդավարական հաստատությունների ձեւավորման, խոսքի, մամուլի ու խղճի ազատության ապահովման, բազմակուսակցականության եւ պառլամենտարիզմի ամրապնդման, հաղաքացիական հասարակության կառույցների զարգացման գործընթացը: Հատուկ ուշադրություն դարձնել հաղաքական եւ հասարակական հավասարակշռության ապահովման խնդրին՝ որպես դրա անհրաժեշտ պայման դիտելով մի քանի խոշոր, արդիական կուսակցությունների գոյացումը:

Բարձրացնել գործադիր իշխանության մարմինների պատասխանատվությունը եւ աշխատանքի արդյունավետությունը, վերացնել վարչական ավելորդ օղակները, կրճատել պետական ապարատը՝ նրա թվակազմն աստիճանաբար համապատասխանեցնելով օպտիմալ անհրաժեշտության պահանջներին:

Կադրային հաղաքականության բնագավառում առաջնորդվել բացառապես արհեստավարժության, բարոյականության եւ աշխատանքային ունակության հատկանիշներով: Պետական ապարատը համալրել երիտասարդ, հեռանկարային կադրերով: Պայմաններ ստեղծել իշխանության մարմիններում կանանց համամասնական ներգրավվածությունն ապահովելու համար:

Օրակարգի հարց դարձնել մահապատժի վերացման խնդիրը: Քրեական եւ հաղաքացիական նոր օրենսգրքերի ընդունմամբ ապահովել անձի իրավական պաշտպանվածությունը, հաղաքացիների գույքային իրավունքներն ու սեփականության անձեռնմխելիությունը:

Խոտացնել պայմարը ճանցագործությունների, կաշառակերության, վարչամեխենայի կամայականությունների ու շահատակումների դեմ: Հետեւողականորեն ազատվել պետական ապարատում, իրավապահ մարմիններում, հարկային տեսչությունում եւ մաքսային վարչությունում ծառայող անազնիվ տարրերից:

Հատուկ հոգածության առարկա դարձնել ազգային անվտանգության հետ կապված խնդիրները՝ բանակի հզորացումն ու արդիականացումը, հետախուզության եւ հակահետախուզության արդյունավետության բարձրացումը, տեռորիզմի, թմրաբիզնեսի եւ կազմակերպված հանցագործության դեմ պայքարի ուժեղացումը, բնության պահպանության ուղղված միջոցառումների իրականացումը, պետական ռեզերվի, արտակարգ իրավիճակների համակարգի եւ սեյսմիկ ծառայության նյութա-տեխնիկական պայմանների բարելավումը, գինծառայողների սոցիալական կարիքների առաջնային բավարարումը:

Տնտեսության բնագավառում

Շարունակել ազատ շուկայական տնտեսության ստեղծմանն ուղղված բարեփոխումների՝ սեփականաշնորհման, բանկային համակարգի կատարելագործման, շուկայական ենթակառուցվածքների ձեւավորման, առեւտրային ռեժիմի ազատականացման ծրագրի իրականացումը:

Բարեփոխումների իրականացման ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել սեփականաշնորհվող օբյեկտների գնահատման մեթոդիկայի հետագա նշգրտմանը, աճուրդների անցկացման օրինականությանը, ազատ մրցակցության ապահովմանն ու հակամենաշնորհային միջոցառումների կիրառմանը:

Լայջ տնտեսագիտական ուսումնասիրությունների եւ հաշվարկների հիման վրա ճկունացնել իրականացվող հարկային հաղաքականությունը՝ նկատի ունենալով մի կողմից արտադրության խթանման եւ ներդրումների խրախուսման անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ պետական բյուջեի մուտքերի ապահովումը:

Բարենպաստ պայմաններ ապահովել օտարերկրյա մասնավոր ներդրումների իրականացման, համատեղ ձեռնարկությունների ստեղծման, արդիական տեխնոլոգիաների կիրառման համար:

Ճշտել արդյունաբերության զարգացման առաջնահերթությունները եւ պետական երաշխիքների միջոցով որոշակի հովանավորչություն ցուցաբերել միջազգային շուկայում մրցունակ ապրանքներ արտադրող ձեռնարկությունների նկատմամբ:

Օրենսդրական բարեփոխումների եւ վարչահրավական մեխանիզմների կատարելագործման միջոցով բարձրացնել վճարումային պարտավորությունների կատարման եւ հարկերի գանձման կարգապահությունը:

Առավելագույնս օգտագործել ներհին կոոպերացիայի հնարավորությունները եւ համալիր միջոցառումներ մշակել ներհին շուկայի զարգացման եւ պաշտպանվածության ուղղությամբ:

Գյուղատնտեսության բնագավառում ավարտին հասցնել արտադրություն – վերամշակում – իրացում շղթայի ձեւավորումը, նպաստել գյուղատնտեսական վարկերի հատկացման եւ ապահովագրական ֆոնդերի համակարգի ստեղծմանը, պետական ծառայություններ մատուցել սերմնաբուծության, անասնաբուժության եւ տոհմային անասնաբուծության, պարարտանյութերի եւ քիմիկատների հայթայթման, մելիորացիայի, ագրոտեխնիկական սպասարկումների գծով:

Նախատեսված ժամկետներում իրականացնել «Հանրապետություն միավորման» 1995 թվականի նախընտրական ծրագրում արտացոլված բոլոր կոնկրետ տնտեսական միջոցառումները՝ կապիտալ շինարարության եւ էներգետիկայի բնագավառների զարգացման ուղղությամբ:

Սոցիալական հաղաքականության բնագավառում

Սղաեի էական կրճատման, դրամի փոխարժեքի կայունության պահպանման, աշխատավարձերի եւ կենսաթոշակների հատհանուն բարձրացման շնորհիվ ապահովել բնակչության կենսամակարդակի աստիճանական բարելավում:

Մաեր ձեռնարկատիրության եւ գործարարության խրախուսման մեխանիզմների կիրառման միջոցով նպաստել բնակչության միջին խավի ձեւավորման եւ ընդլայնման գործընթացին:

Մշակել բնակչության զբաղվածության պետական համալիր ծրագիր: Պետության կողմից ձեռնբերված վարկերի եւ օտարերկրյա մասնավոր ներդրումների շնորհիվ ստեղծել նոր աշխատատեղեր:

Ստեղծել սոցիալական պաշտպանվածության ամբողջական համակարգ: Մշակել եւ կիրառել սոցիալական հատկացումներն առավել

նպատակային դարձնող մեխանիզմներ: Սոցիալական արտոնություններն աստիճանաբար փոխարինել դրամական հատուցումներով:

Պետական ծրագրերի միջոցով հոգածություն ցուցաբերել ընտանիքի, մայրության, ծերերի ու հաշմանդամների, երեխաների սոցիալական պաշտպանության խնդիրների նկատմամբ:

Առողջապահության բնագավառի ֆինանսավորումն իրականացնել պետական հատկացումների, պարտադիր եւ կամավոր ապահովագրական ֆոնդերի միջոցով: Պետության կողմից երաշխավորել բնակչության անապահով խավերի անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը:

Պետական միջոցների հաշվին պայմաններ ստեղծել հաճարապետությունը լքած բաղաճացիների կամավոր վերադարձը կազմակերպելու համար: Ներգաղթը խրախուսելու նպատակով՝ Հայաստանում վերաբնակվողներին ժամանակավորապես ազատել որոշ բաղաճացիական պարտավորություններից:

Շարունակել աղետի գոտու շինարարության, բռնագաղթածներին բնակարաններով ապահովելու, սահմանամերձ բնակավայրերի վերականգնման աշխատանքները: Երկարատեւ վարկերի տրամադրման միջոցով խրախուսել անհատական բնակարանային շինարարությունը:

Տնտեսական հնարավորությունների առկայության դեպքում անդրադառնալ բնակչության նախկինում արժևգրկված խնայողությունների աստիճանական հատուցման հարցին:

Կրթության, գիտության, մշակույթի բնագավառում

Ըստ ամենայնի ապահովել պետության մշտական հոգածությունը կրթության խնդիրների լուծման, հասարակական կյանքում ուսուցչի եւ դպրոցի դերի բարձրացման, ուսուցիչների սոցիալական պայմանների բարելավման, դպրոցների նյութատեխնիկական բազայի ամրապնդման, դասագրքերի պատրաստման եւ հրատարակության գործում:

Վերականգնել երաժշտական, նկարչական եւ մարզական ուսումնարանների երբեմնի վարկն ու բարի ավանդույթները՝ դրանք դիտելով որպես հրաշալի հիմք հիմնավոր բարձրագույն մասնագիտական կրթություն ձեռք բերելու համար:

Բարձրագույն կրթության բնագավառում շարունակել բուհերի հիմնավորության խորացման գործընթացը, կատարելագործել պետական պատվերի եւ վճարովի ուսուցման համակարգը, մրցութային եւ ատեստավորման մեխանիզմների կիրառմամբ բարձրացնել պրոֆեսորա-դասախոսական կազմի մասնագիտական մակարդակը:

Գիտության բնագավառում, հաշվի առնելով մի կողմից անցյալի ժառանգությունը, մյուս կողմից՝ Հայաստանի առանձնահատկություններն ու ներկա պահանջները, վերջնականապես հստակեցնել հեռանկարային հյուղերի զարգացման առաջնահերթությունները: Հայագիտության եւ հիմնարար գիտությունների ֆինանսավորման համամասնությունները աստիճանաբար մոտեցնել զարգացած երկրների համամասնությունների մակարդակին՝ պետական հատկացումներից բացի օգտվելով նաեւ միջազգային գիտական կոոպերացիայի եւ մասնավոր սեկտորի պատվերների հնարավորություններից:

Մշակույթի բնագավառում շարունակել եւ ընդլայնել պետական հովանավորչությունը ազգային արժեք ներկայացնող հաստատությունների՝ օպերայի, ֆիլհարմոնիայի, կինոյի, թատրոնի, Մատենադարանի, Ազգային գրադարանի, Պետական պատկերասրահի, Պատմության թանգարանի նկատմամբ:

«Քրիստոնեություն – 1700» պետական ծրագրի միջոցառումների շրջանակում լայն աշխատանք ծավալել պատմական հուշարձանների վերականգնման, արժեքավոր հրատարակությունների պատրաստման, բարձրարվեստ ֆիլմերի ստեղծման ուղղությամբ:

Արտաքին հաղաքականություն

Պահպանել եւ խորացնել Հայաստանի հավասարակշռված արտաքին հաղաքականությունը: Զգտել բարեկամության եւ փոխշահավետ համագործակցության աշխարհի բոլոր երկրների հետ՝ անկախ գաղափարախոսական նկատառումներից:

Ամրապնդել եւ խորացնել բարիդրացիական հարաբերությունները Հայաստանի անմիջական հարեւանների՝ Ռուսաստանի, Վրաստանի եւ Իրանի հետ: Շարունակել կառուցողական քաղերի գործադրումը Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ:

Խորացնել Հայաստանի ինտեգրացման գործընթացը միջազգային եւ տարածաշրջանային տնտեսական համակարգերում՝ ԱՊՀ, Սեւծովյան տնտեսական համագործակցություն, Առեւտրի համաշխարհային կազմակերպություն, եւրոպական կառույցներ եւ այլն:

Միջազգային հաղաքական կազմակերպություններում (ՄԱԿ, ԵԱՀԿ) հանդես գալ խաղաղության ամրապնդման, միջուկային զենքի չտարածման, սպառազինությունների կրճատման, հակամարտությունների խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների պաշտպանության դիրքորոշմամբ:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում շարունակել Հայաստանի կառուցողական մասնակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բազմակողմ եւ ուղղակի բանակցություններին: Հետեւողականորեն հանդես գալ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի պաշտպանության եւ հարցի լուծման փոխզիջումային տարբերակի որոնման դիրքերից: Պահպանել եւ ամրապնդել Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ հաստատված զինադադարը: Նպաստել Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովման, տնտեսության զարգացման եւ սոցիալական խնդիրների լուծման գործին:

Հայաստան – Սփյուռք հարաբերություններ

Հայաստանի եւ Սփյուռքի մասնագետների մասնակցությամբ ավարտել Հայաստան – Սփյուռք հարաբերությունների հայեցակարգի մշակումը՝ շեշտը դնելով մասնավորապես ընդհանուր ազգային նպատակների հստակեցման եւ կառուցվածքային մեխանիզմների ձեւավորման վրա:

Հայաստանը եւ Սփյուռքը դիտելով որպես մեկ ազգի պատմականորեն ձեւավորված երկու լիարժեք ինքնություններ՝ նրանց հարաբերությունները զերծ պահել հաղաքական հակասություններից՝ փոխադարձ հարգանքի եւ միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների հիման վրա:

Սփյուռքի մտավոր, նյութական եւ հաղաքական կարողություններն առավելագույն չափով ի սպաս դնել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ամրապնդման եւ տնտեսական զարգացման գործին: Փոխադարձաբար Հայաստանի կողմից նպաստել Սփյուռքի ազգային կյանքի բարգավաճմանը եւ համահայկական նպատակների շուրջ սփյուռքահայ բոլոր գաղթօջախների ջանքերի համախմբմանը:

Շարունակել եւ ընդլայնել Հայաստանի պետական կառույցներում սփյուռքահայ պաշտոնյաների ներգրավման ավանդույթը եւ խրախուսել Սփյուռքի կրթամշակութային, մարզական հաստատություններում հայաստանցի մասնագետների գործունեությունը:

Հատուկ ճոգածություն ցուցաբերել Անկախ Պետությունների Համագործակցության երկրների հայկական համայնքների կրթական, մշակութային եւ ճոգեւոր կարիքների բավարարման գործի նկատմամբ:

Աշխուժացնել Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ մշակութային համագործակցության, երաժշտական եւ թատերական խմբերի հյուրախաղերի, նկարչական ցուցահանդեսների փոխանակման գործը:

Ընդլայնել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում եւ միջնակարգ մասնագիտական դպրոցներում սփյուռքահայ ուսանողների ուսումնառության հնարավորությունները, վերականգնել սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման պարբերական դասընթացները:

Ամրապնդել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կառույցները՝ նրա միջոցներն օգտագործելով ոչ միայն Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի, այլեւ աստիճանաբար նաեւ Սփյուռքի կարիքների բավարարման նպատակով:

* * *

Դժվար չպետք է լինի նկատել, որ ներկայացված ծրագիրն ըստ էության չի շոշափում հեղափոխական բնույթի գլոբալ խնդիրներ կամ հակաճգնաժամային արտակարգ միջոցառումներ, այլ նախատեսում է զուտ գործնական եւ հանդարտ էվոլյուցիայի՝ ուղղված երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի, հաղաքական եւ հասարակական հարաբերությունների աստիճանական բարելավմանը: Դա նշանակում է, որ մեր գնահատմամբ Հայաստանն անցել է տագնապների, ցնցումների, արմատական ու ցավոտ վերափոխումների շրջանը եւ մտնում է խաղաղ, ստեղծագործ աշխատանքի, պետության բարեկարգման, իշխանության կառույցների գործունեության ներդաշնակման եւ արդյունավետության բարձրացման բնականոն հանգրվան:

«Հայք», 31 օգոստոսի, 1996 թ.:
ՀՀԱՆԱ, 28/31.08.96: Բնագիր: Մեքենագիր – ձեռագիր: Ինքնագիր:

«ԲԼԻՑ» ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

(5 սեպտեմբերի, 1996 թ.)[1]

– Չեչնիայի տարբերակը հնարավո՞ր եք համարում Ղարաբաղում:

– Իսկ ո՞րն է Չեչնիայի տարբերակը, ես տեղյակ չեմ:

– Իրավիճակի սառեցումը հինգ տարով:

– Իսկ մերը սառեցված չէ՞: Մեռն էլ է սառեցված եւ ոչինչ չի փոխվում:

– Աշոտ Մանուչարյանը պնդում է, որ ընտրություններից հետո ուժեղանալու է միջազգային ճնշումը Ղարաբաղի հարցը լուծելու համար:

– Գուցե Մանուչարյանը լրացուցիչ տեղեկություններ ունի, որոնց ես տեղյակ չեմ, բայց մենք այդ ճնշումն զգում ենք արդեն հինգ տարի:

– Ի՞նչ դիրքորոշում կունենաք, եթե ընդդիմությունը միացյալ թեկնածու առաջադրի:

– Ես ուրախ կլինեմ:

– Ընդդիմությունը համարում է, որ ընտրություններին ժողովրդավարական իմիջ տալու համար պարտադիր կգնաք երկրորդ փուլի:

– Արդեն ընդդիմությունը որոշել է, որ երկրորդ փուլում ե՞ս եմ խեաբկվում: Ինչպե՞ս կարող եմ ես այդպիսի բան ասել: Դա պետք է կախված լինի առաջին փուլի արդյունքներից: Դա ի՞նչ է նշանա-

---

[1] *Ընդհատված այս հարցազրույցը, բան «Ազգին», տեղի է ունեցել սեպտեմբերի 5-ին, երբ՝ «Ռուսաստանի Դաշնության առաջին փոխվարչապետ Վիկտոր Իլյուշինի հետ ունեցած հանդիպումից հետո 22 նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն անակնկալ զրույցի բռնվեց նախագահական պալատում հավաքված փոքրաթիվ լրագրողների հետ:*

կում, այսինքն՝ ամեն ինչ ի՞մ ձեռքում է: Ընդդիմությունը ճամարում է, որ ես ինչպես ցանկանամ, այնպես էլ մարդիկ ձա՞յն կտան այս կամ այն թեկնածուին:

– Ըստ երեւույթին, այո:

– Դե իրենք ամեն ինչ կարող են ասել, ես պատասխանատու չեմ իրենց խոսքերի ճամար:

– Մարզեր կատարած այցերից ի՞նչ տպավորություն ունեք:

– Այն, ինչ ես, ըստ էության գիտեի ե՛ւ մեր գործադիր իշխանությունների, ե՛ւ մեր ապարատի ինֆորմացիայից, դրա ճաստատումն ստացա: Այսինքն՝ այն բոլոր պրոբլեմները, որոնք կան ե՛ւ մեր մտածողության առարկան են, այնտեղ ուղղակի ավելի աչքառու ես ամեն ինչը տեսնում:

– Իսկ երեւանցիների ճետ ճանդիպե՞լ ե՛ք:

– Այո, սեպտեմբերի 17-ին, Լենինի ճրապարակում:

– Վեց ընդդիմադիր թեկնածուներից ո՞ւմ եք համարում ձեր ամենաճավանական ճակառակորդը:

– Ճիշտն ասած, չեմ կարող ասել: Եթե նայենք ճասարակական ճարցումներին, մոտավորապես բոլորի չանսերը ինչ թե շատ ճավասար են: Եթե, իճարկե, ճավատում եմ այդ ճարցումներին: Ես ուրիշ ստուգելու ճնարավորություն չունեմ:

– Դուք բոլորին ծանոթ եք, գուցե այդպես կողմնորոշվեք:

– Ոչ, ես բոլորին ծանոթ չեմ: Ես ծանոթ եմ միայն Աշոտ Մանուչարյանին եւ Վազգեն Մանուկյանին, մյուսներին ծանոթ չեմ: Պարույր Հայրիկյանի ճետ այնման, ուրճան ձեզ ճետ խոսեցի այսօր, կյանքում դեռ չեմ խոսել: Սերգեյ Բադալյանին միայն Կրեմից եմ տեսել, դեռ այսպես կենդանի չեմ տեսել:

– Շատ է խոսվում այն մասին, որ նախագաճական ընտրություններն օրինակելի պետք է դառնան միջազգային չափանիշների պաճպանման տեսակետից:

– Գիտեք, ես չեմ ճամարում, որ մենք աշակերտ ենք, իսկ միջազգային չափանիշներն կ՝ մեր ուսուցիչները: Ես նրանց մեր ուսուցիչը չեմ ճամարում, որ մեզ գնաճատական դնեն: Մենք ձգտում ենք, որ ամեն ինչ

օրինական լինի, ժողովրդավարական, արդար եւ ազատ: Դրանից ճետո, թե ինչ գնաճատական կտան, իրենց գործն է:

– Ի՞նչ կարծիք ունեք մամուլի պաճվածքի մասին:

– Կարծում եմ, նորմալ է, եթե ճատկապես ճամեմատելու լինենք նախորդ ընտրությունների ճետ:

– Մյուս թեկնածուների ճետ իրապարակային բանավեճը ինարավո՞ր եք համարում:

– Եթե միայն ես պետք է բանավիճեմ՝ ո՛չ: Թող բոլորը բոլորի ճետ բանավիճեն: Եթե բանավիճելու բան չունեն, ուրեմն մեկը պետք է առաջադրվեր:

– Իսկ եթե միասնական թեկնածո՞ւ առաջադրվի:

– Եթե մեկը լիներ, ես մեծ սիրով կբանավիճեի: Ավելին ասեմ. եթե երկրորդ փուլ տեղի ունենա, մեծ ճաճույճով կբանավիճեմ երկրորդ փուլ անցած ցանկացած թեկնածուի ճետ:

– Գո՞ճ եք ընդճանուր վիճակից:

– Ոչ, եթե գոճ լինեի, ինչո՞ւ էի նորից առաջադրվում, կշարունակեի գիտությամբ զբաղվել:

– Իսկ ի՞նչ պետք է լինի, որ գոճ լինեք:

– Մեր ժողովուրդը պետք է մարդավարի ապրի: Ուրիշ բան չեմ ասում: Պետք է մարդավարի ապրի, իր աշխատավարձով կարողանա ընտանիք պաճել, երեխաները մաճուր ճագնվեն, չթերանվեն: Դառնալ նորմալ երկիր, նորմալ պետություն՝ եւ մնացած ճարցերը շատ ավելի ճեշտ կլուծվեն:

– Ըստ Վազգեն Մանուկյանի նախընտրական շտաբի, Դուք ցանկանում եք բարեկեցություն ապաճովել ապագա սերունդների ճամար, իսկ ընդդիմությունը ցանկանում է բարեկեցիկ դարձնել ճենց այս սերնդի կյանքը:

– Այդ մասին գրված է իմ ծրագրում:

– Ճինգ տարին բավարա՞ր եք համարում բարեկեցիկ կյանք ապաճովելու ճամար:

– Ոչ, իճարկե բավարար չեմ ճամարում: Ճինգ տարում պետք է այս ողբալի վիճակը մի ինչ թեթեւացնենք, մի ինչ մարդկանց ավելի անճոգ

դառնենք: Կաթիլ-կաթիլ պետք է հավաքվի, ինձնից հետո դեռ տաս պրեզիդենտ էլ պետք է լինի, որից հետո երեւի մենք կհավասարվենք եւրոպական պետություններին:

– Ինչպե՞ս կգնահատեք ամերիկա-իրաքյան հարաբերությունները:

– Իսկ պարտադի՞ր է, որ ես գնահատեմ: Կարող եմ մի ընդհանուր սկզբունքով պատասխանել. ես կողմնակից եմ, որ ոչ մի հակամարտություն, ոչ մի վեճ չվերջանա զենք ու զոհով:

– Չե՞ք պատրաստվում նվազեցնել ծխելը:

– Ոչ:

– Բայց հանրապետությունում ծխելու դեմ պայքար է սկսվել:

– Ոչինչ, այս մի հարցում էլ ես թող մեղավոր լինեմ: Հրանուշ Հակոբյանը թող ինձ պատժի: Նա է, չէ՞, այդ նախաձեռնությամբ հանդես եկել:

– Ի՞նչ եք ուտում նախաճաշին:

– Նախաճաշին մեկ գավաթ սուրճ եմ խմում եւ կես բաժակ հյութ: Կեսօրին չեմ ուտում: Սուրճ շատ եմ խմում:

– Դուք ձեզ էմոցիոնա՞լ մարդ եք համարում:

– Դա պետական գաղտնիք է:

– Դուք երջանի՞կ եք:

– Երջանի՞կ... դրա մասին չեմ մտածել, ժամանակ չկա:

– Ձեր ցանկությունները մի՞շտ են կատարվում:

– Որ միշտ կատարվեին, ես Քրիստոս կլինեի:

«Ազգ», 7 սեպտեմբերի, 1996 թ. (ըստ «Փաստ» լրատվական գործակալության):
Հրատարակված՝ «L. Տեր-Պետրոսյան. «Եթե բոլոր ցանկություններս կատարվեին, Քրիստոս կլինեի» վերնագրով:

ԵԼՈՒՅԹ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ-ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

(17 սեպտեմբերի, 1996 թ.)

Սիրելի ժողովուրդ,

Սիրելի հայրենակիցներ,

Ցավոք, ես ձեզ չեմ տեսնում, լույսն ինձ խանգարում է, բայց համոզված, որ ես խոսում եմ ձեզանից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին:

Այսպիսի բազմամարդ հանդիսավոր Հայաստանում չի եղել 1988 թվականից հետո: Դում նույնան էի 1988 թվականի նոյեմբերի 7-ին այս հրապարակում, համաշխարհային ճիվաղի ահարկու հայացքի ներքո, եւ դում չվախեցա այդ հայացքից:

Այն ժամանակ դում հավաքվել էի թոթափելու տոտալիտարիզմի լուծը, վերագտնելու ձեր ազատությունն ու անկախությունը:

Այսօր դում հավաքվել եմ ձեր բաղաքացիական պարտքը կատարելու: Կան մարդիկ, ովքեր խնդիր են դրել մեր ժողովրդին վերադարձնել 1988 թվականի իրավիճակին: Նրանք կարող են համարել, որ իրենց նպատակն իրականացել է այսօր: Ես համաձայն եմ Վանոյի հետ՝ թող սա լինի մեր վերջին այսպիսի բազմամարդ հանրահավաքն այս դարում, որովհետեւ ժողովրդի խնդիրը երեխա մեծացնելն է, ընտանիքի հոգսերը տանելը, խաղաղ, ստեղծագործ, շինարար աշխատանքով զբաղվելը:

Մենք ութ տարիների երկար ճանապարհ ենք անցել ձեզ հետ, եւ ես չէի ցանկանա այսօր վերակերտել այդ ճանապարհը: Ուզում եմ ուշնցել մի անգամ հայտարարելու, որ այդ ընթացքում մենք ձեռք ենք բերել

ՄՇՏՆՋԵՆԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ, իսկ կրում ենք ժամանակավոր դժվարություններ: Վստահ եմ, որ մեր ժողովուրդը հասկանում է, թե ինչի մասին է խոսքը: Իհարկե, ինչպես միշտ, եղան թերահավատներ, որոնք հմծիծաղով ընդունեցին նման հայտարարությունը: Դա նշանակում է, որ նրանք չեն հավատում մեր նվաճումներին, չեն հավատում Հայաստանի անկախությանը, չեն հավատում Արցախի ազատագրմանը, չեն հավատում ժողովրդավարության հաստատմանը, չեն հավատում շուկայական տնտեսության միջոցով մեր ժողովրդի՝ մարդկության զարգացման բնականոն հուն մտնելու իրողությանը: Իսկ ինչ վերաբերում է ժամանակավոր դժվարություններին, ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ՝ այո, դրանք ժամանակավոր են: Տնտեսական դժվարությունները, սոցիալական հոգսերը, միևնույն է, մեր ազգը երբեէ լուծելու է: Ինչի Տեր-Պետրոսյանի, թե մի այլ Նախագահի օրոք, դա անցնելու է: Մնալու է Հայաստանի անկախությունը, մնալու է ազատագրված Արցախը, մնալու է ազատ ժողովրդավարական Հայաստանը:

Մենք անցանք փոթորկալից ճանապարհ՝ հեղափոխություններով, պատերազմով, շրջափակումներով, տնտեսական ցնցումներով լի մի փշոտ, տատասկոտ ճանապարհ, բայց այդ ամենն արդեն անցյալ է: Հավակնելով նախագահության աթոռին, ես գիտակցում եմ հետևյալը. առջևում չեն լինելու հեղափոխություններ, չեն լինելու ցնցումներ, չեն լինելու տագնապներ, եւ մեր ժողովուրդը հնարավորություն է ունենալու, օգտվելով խաղաղ, ապահով, անվտանգ կյանքից, բայլ առ բայլ ավարտին հասցնել իր պետական տան, իր պետական շենքի կառուցումը: Ես, որպես Նախագահի թեկնածու, իմ առաջին եւ գերագույն խնդիրը համարում եմ խաղաղության ապահովումը: Մենք հանուն մեծ գործի շատ զոհեր ենք տվել, այդ զոհերը լիովին արդարացված են եղել, որովհետեւ հաղթանակը շատ մեծ է, բայց հանի որ մենք արդեն հասել ենք մեր հիմնական նպատակներին, իմ խնդիրն է ապահովել, խնայել ձեր զավակների կյանքն ու աշխատանքը:

Երկրորդ խնդիրը տնտեսության զարգացումը, առողջացումն ու վերազինումն է: Դա լուծելի է, արդեն կան դրա միտումները, խաղաղության երկու տարին դրա վկայությունն է, եւ մենք վստահ ենք, որ այդ միտումները ոչ միայն կպահպանվեն, այլեւ ավելի կխորանան: Խնդիրը

մեր տնտեսության արդիականացումն է, տեխնոլոգիական վերազինումը, ներքին եւ արտաքին մասնավոր ներդրումների ներգրավումը:

Երրորդը ժողովրդի սոցիալական վիճակի բարելավումն է: Ես չեմ ուզում գունազարդել վիճակը: Եթե մենք լուծել ենք ազգային խնդիրներ, եթե մենք լուծել ենք գոյության խնդիրներ, եթե մենք լուծել ենք պետական անվտանգության խնդիրներ, ապա սոցիալական ոլորտում մենք բավականին ետ ենք մնացել: Մա պետք է խոստովանել, չփնտրել արդարացումներ, չնշել օբյեկտիվ եւ սուբյեկտիվ հանգամանքներ, այլ արձանագրել եւ խնդիր դնել այդ հարցերը լուծելու: Մեր ժողովուրդը դեռեւս չի ապրում արժանապատիվ կյանքով: Մեր ժողովուրդն արժանի է շատ ավելի մարդավայել, շատ ավելի հաղթակերպ կյանքի: Եւ խնդրի լուծումը գերբնական ջանքեր չի պահանջում. խաղաղության պահպանման, մեր ժողովրդի անվտանգության ապահովման եւ տնտեսության զարգացման միտումների հետ այս խնդիրները բայլ առ բայլ կլուծվեն:

Եւ չորրորդ խնդիրը՝ մեր երկրում, մեր տանը, մեր ընտանիքում, որը ես համարում եմ մեր պետությունը, կարգուկանոնի հաստատումն է, օրինազանցությունների, կաշառակերության, բյուրոկրատական շահատակումների վերացումը: Եւ հիմա ես համոզված եմ, որ մենք շատ ավելի մեծ հնարավորություններ ենք ունենալու զբաղվելու այս հարցերով, քան առաջ, երբ ստիպված էինք լուծել գոյության խնդիրներ:

Մենք կանգնած ենք կարեւոր իրադարձության՝ նախագահական ընտրությունների շեմին: Թվում է, թե լուծվում է անձերի հարց. այս երկրում կա չորս մարդ, որ հավակնում է նստել նախագահական աթոռին: Բայց արդյո՞ք մենք անձերի խնդիր ենք լուծում: Մենք լուծում ենք մեր հաղթանակների պահպանման խնդիրը, մեր երկրի բարօրությունն ու հզորությունն ապահովելու խնդիրը:

Կա երկու հանապարհ՝ մենք ընտրություն ենք կատարում երկու հնարավոր հանապարհի միջեւ: Մի հանապարհը՝ խաղաղության ապահովման, մեր ժողովրդի անվտանգության պահպանման, մեր տնտեսության զարգացման, սոցիալական ոլորտի բայլ առ բայլ բարելավման հանապարհն է՝ առանց պատերազմների, առանց հեղափոխությունների, առանց տագնապների ու ցնցումների, որի ջատագովը ես եմ եւ իմ ընկերները, իմ բոլոր համակիրները: Երկրորդ հանապարհը, գաղտնիք չէ, բխում է մեր ժողովրդի այսօրվա ծանր սոցիալական վիճակից: Այո,

դա օբյեկտիվ երեւույթ է, դա գոյություն ունի եւ այդ իրականության վրա է հիմնված ընդդիմության ողջ դեմագոգիան: Մեր ժողովրդին խոստանում են հրաշքներ, մեր ժողովրդին պատմում են հեքիաթներ, մեր ժողովրդին տալիս են հավաստիացումներ, որ ընտրվելու դեպքում կլուծեն մեր ազգի առջեւ կանգնած բոլոր խնդիրները: Մեկ օրում տասնապատիկ կավելացնեն աշխատավարձերը, տասնապատիկ կմեծացնեն պետության բյուջեն, տասնապատիկ կբարձրացնեն կենսաթոշակներն ու նպաստները, միանգամից հանրապետություն կներգրավեն միլիարդավոր դոլարների ներդրումներ, արմատախիլ կանեն կաշառակերությունը, Լինչի դատաստանի կենթարկեն բոլոր հանցագործներին... Բայց դա մենք տեսել ենք, դա եղել է եւ դրա հետեւանքները հայտնի են: Նույն սոցիալական ծանր իրավիճակի շահարկմամբ 1917 թվականին Ռուսաստանում իշխանության եկավ կոմունիզմի հրեշը, որը խլեց տասնյակ միլիոնավոր կյանքեր: Նույն սոցիալական դեմագոգիայի եւ օբյեկտիվ իրականության ընձեռած հնարավորությունների հիման վրա Գերմանիայում իշխանության գլուխ եկավ Հիտլերը: Ես երկու դեպք եմ հիշատակում, դուք կարող եք տասնապատկել: Եւ այն մարդիկ, որոնք ժողովրդին խոստանում էին դրախտ, Լենինը՝ ռուս ժողովրդին, Հիտլերը՝ գերմանացի ժողովրդին, որոնք խոստանում էին համաշխարհային տիրապետություն, առաջին հերթին դժոխքի վերածեցին սեփական երկիրը եւ հեղեցին սեփական ժողովրդի արյունը: Ահա թե դուք ինչի միջեւ եք ընտրություն կատարում: Մենք ութ տարի անցել ենք հրի ու սրի միջով: Ութ տարի մեր ժողովուրդը չի սխալվել: Մեր ժողովուրդն աշխարհին ապացուցեց, որ անկախության վերականգնման այս վերջին հնարավորությունը նա օգտագործեց առավելագույնս, մի բան, որ տեղի չունեցավ 1918–20 թվականներին, երբ մեր հարեւանները՝ Վրաստանը եւ Ադրբեջանը ավելի պատրաստ գտնվեցին անկախությանը, քան թե Հայաստանը: Այսօր հակառակն է, հայ ժողովուրդն ապացուցեց, որ շատ ավելի պատրաստ էր ունենալու սեփական պետությունը, քան մեր հարեւանները եւ դրանից քաղեց իր բոլոր նվաճումները: Եթե ութ տարի չի սխալվել մեր ժողովուրդը, ես վստահ եմ, որ նա չի սխալվի նաեւ այսուհետեւ:

Սակայն չպետք է հանգստանալ. սոցիալական դեմագոգիան առաջին հայացքից անմեղ բան է թվում, բայց դրա հետեւանքը ֆաշիզմն է

կամ անարխիան: Երկու դեպքում էլ մեր ժողովրդին սպասում են ահավոր վտանգներ: Չպետք է հանգստանալ այն առումով, որ ձեզանից յուրաքանչյուրը, մեր ողջ ժողովուրդը միահամուռ սեպտեմբերի 22-ին պետք է կատարի իր քաղաքացիական պարտքը՝ մասնակցելով նախագահական ընտրություններին: Միայն այդ դեպքում է, որ մեր ժողովուրդը չի սխալվի: Որքան շատ մարդ մասնակցի ընտրություններին, այնքան սխալի հնարավորությունը կլինի նվազագույն, եւ ապագա Նախագահն իրեն շատ ավելի ամուր կզգա, որովհետեւ կվայելի մեր ողջ ժողովրդի վստահության քվեն:

Սիրելի ժողովուրդ, նաեւ ուզում եմ համայն հայությանը, մեր ողջ ազգին, լինի Հայաստանում, Ղարաբաղում, Ռուսաստանում, թե ողջ Սփյուռքում, շնորհավորել Հայաստանի Անկախ Հանրապետության 5-րդ տարեդարձի առթիվ: Թող ոչ ոք չկասկածի՝ հարյուրամյակների արյունով ձեռք բերված այս անկախությունը մենք երբեւէ չենք կորցնի: Այս անգամ մենք անկախությունը նվաճել ենք հավերժ պահելու համար:

Եւ քանի որ մենք մի փոքր լիրիկական զեղում թույլ տվեցինք, վերհիշեցինք 88 թվականի մեր միասնությունը, ուզում եմ վերակենդանացնել մի վանկարկում, որն այն ժամանակ ուներ այլ բովանդակություն, իսկ այսօր մենք դրա մեջ տեսնում ենք մեր ողջ ժողովրդի, համայն հայության, Հայաստանի եւ Արցախի միասնության խորհրդանիշը՝ «Մի՛-ա՛-ցո՛ւմ, Մի՛-ա՛-ցո՛ւմ, Մի՛-ա՛-ցո՛ւմ»:

«Հայաստանի Հանրապետություն», 19 սեպտեմբերի, 1996 թ.:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

(20 սեպտեմբերի, 1996 թ.)

Սիրելի հայրենակիցներ.

Քանի որ իմ խոսքն ունչափ պատասխանատու է լինելու, ես նպատակահարմար եմ համարում ձեզ դիմել գրավոր ուղերձով:

Ես չեմ պատրաստվում ձեզ ներկայացնել իմ նախընտրական ծրագիրը, դա բավականաչափ արված է զանազան հրատարակություններում, մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի միջոցներով: Բացի այդ, Հայաստանի մարզերում ունեցած բազմաթիվ ելույթներում ինարավորություն եմ ունեցել ժողովրդին մատուցել իմ բոլոր հիմնական գաղափարները: Այդ ծրագրի էությունը կարելի է ամփոփել հետևյալ ժլատ ձևակերպմամբ. պետության ամրապնդում եւ խաղաղության ու ներքին կայունության պահպանում, Արցախի ինքնորոշման իրավունքի պաշտպանում, նրա ազատ կենսագործունեության եւ անվտանգության ապահովում, երկրի տնտեսական զարգացման խթանում, ժողովրդի սոցիալական վիճակի աստիճանական բարելավում եւ օրինականության ու կարգուկանոնի հաստատում:

Այսօր, սակայն, ես խոսելու եմ բոլորովին այլ հետույթի մասին, որը միայն կողմնակիորեն է առնչվում իմ ծրագրին:

Խոսքը վերաբերում է ընդդիմության նախընտրական տակտիկային:

Շուրջ մեկ ամիս է արդեն, ինչ ընդդիմադիր 6 թեկնածուներ մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի, հրապարակային ճառեսների բոլոր միջոցներով գիշերուզօր գրաղված են նախագահության մի այլ թեկնածուի վարկաբեկման բուռն գործունեությամբ:

Օգտագործվում է ատի, կեղծիքի, զրպարտության, անպարկեշտ ոռակումների, սոցիալական դեմագոգիայի ողջ զինանոցը:

Խոսվում է համատարած կողոպուտի, անբարոյականության, ազգային դավաճանության մասին:

Խոստումներ են տրվում առ այն, որ հնարավոր է մի քանի ամսում շեշտակիորեն բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը, տասնապատիկ ավելացնել պետության բյուջեն, աշխատավարձերը եւ կենսաթոշակները:

Նկատի ունենալով, որ այսպիսի բառոզաշղալը կարող է որոշակի արձագանք գտնել դեռեւս սոցիալական ծանր վիճակի մեջ գտնվող մեր ժողովրդի զանազան շերտերում, ես ստիպված եմ տալ որոշ պարզաբանումներ:

Ի տարբերություն ընդդիմության՝ ընտարաշրջի ընթացքում մենք ընտրել էինք զուսպ, պարկեշտության կանոնները չխախտող, անձնական պիտակներից զերծ խոսելաոճ: Սակայն, տպավորություն է ստեղծվում, որ մեր լռությունը կարող է սխալ հասկացվել:

Ես այսօր էլ մտադիր չեմ հրաժարվել իմ որեգրած սկզբունքից եւ դիմել անձնական բնույթի ոռակումների, բայց այլեւս անհնար եւ անբույլատրելի եմ համարում խուսափել որոշ հաղթական գնահատականներից:

Նախ՝ հիշյալ թեկնածուներն իրենց մարդկային նկարագրով, վարքուբարքով, դավանած սկզբունքներով ու գործելակերպով շատ հեռու են ինձ, իմ ընկերներին, առավել եւս ողջ ժողովրդին բարոյականության դաս տալու իրավունքից:

Երկրորդ՝ նրանց սոցիալական դեմագոգիան հիմնված է Հայաստանի ոեալ իրավիճակի, նրա ռեսուրսների ու անհեսական հնարավորությունների բացահայտ անգիտության փաստի վրա եւ ուղղված է ժողովրդին թեկուզ ժամանակավորապես մոլորության մեջ գցելու պատեհապաշտ նպատակին:

Եւ երորդ՝ նրանց ծրագրերը, մեթոդները եւ արկածախնդրական մտահղացումները լի են այնպիսի անհավոր վտանգներով, որոնցից մեր ժողովուրդը կարողացել է խուսափել անկախության անցած հինգ տարիների ընթացքում:

Շրջանցելով մեր այլ թեկնածուներին, ես կուզենայի այս պնդումը լուսաբանել Խորհրդային Հայաստանի վերջին վարչապետի՝ Ա.Ժ.Մ.-ի նախագահի օրինակով:

Ծանոթանալով նրա նախընտրական ծրագրին, լավ գիտենալով նրա հոգեկան կերտվածքն ու մտավոր կարողությունները, գաղափարներն ու գործելակերպը, ինձ իրավունք եմ վերապահում խորին համոզմամբ հայտարարել, որ նրա ընտրության դեպքում անխուսափելիորեն տեղի է ունենալու հետեւյալը.

- անմիջապես խիստ սրվելու են հարաբերությունները Ռուսաստանի հետ.
- վտանգվելու է հայ-ռուսական համագործակցությունը ռազմական բնագավառում.
- ֆինանսական պատճառներով հարցականի տակ է դրվելու Հայկական ատոմակայանի վերագործարկման հնարավորությունը.
- սահմանափակվելու կամ նույնիսկ խափանվելու է Թուրքմենստանից Հայաստան գազի մատակարարումը.
- կառավարության պոպուլիստական բայլերի պատճառով կրճատվելու կամ ընդհանրապես դադարեցվելու է միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրումը.
- խաթարվելու են հայ-վրացական հարաբերությունները, երկու ժողովուրդների միջեւ ստեղծվելու է կասկածամտության եւ անվստահության մթնոլորտ.
- նվազելու է բանակի մարտունակությունը, եւ դրա հետեւանքով Լեռնային Ղարաբաղը հայտնվելու է պատերազմի վերսկսման վտանգի առջեւ.
- խախտվելու է երկրի ներքին կայունությունը, կոալիցիոն կառավարության հակասությունները հանգեցնելու են անիշխանության կամ բռնատիրության հաստատման՝ իր բոլոր հակադեմոկրատական հետեւանքներով.
- Հայաստանի կարծր դիրքի պատճառով վիժեցվելու է Ղարաբաղի հարցի կարգավորման գործընթացը, մեծանալու է միջազգային հանրության եւ շահագրգիռ պետությունների հեռումը՝

ընդհուպ մինչեւ տնտեսական պատժամիջոցների կիրառում, Հայաստանը հայտնվելու է քաղաքական մեկուսացման մեջ.
- վերջին հաշվով լուրջ վտանգի են ենթարկվելու Լեռնային Ղարաբաղի գոյությունը եւ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը:

Ես պարտավոր էի հնչեցնել այս ահազանգը՝ բացառելու համար ձեր սխալվելու անգամ չնչին հնարավորությունը, իսկ սխալվելու դեպքում՝ գերծ մնալու համար ձեր ապագա կշտամբանքից՝ ժամանակին ձեզ զգուշացրած չլինելու պատճառով:

Ըստ էության՝ առաջիկա ընտրությունը տեղի է ունենալու ոչ թե անձերի կամ քաղաքական ուժերի, այլ իրականում՝ Հայաստանի ապագայի կերտման երկու հնարավոր ճանապարհի միջեւ՝ խաղաղության եւ պատերազմի, կայունության եւ խառնաշփոթի, ապահովության եւ վտանգի:

Իմ ընտրության դեպքում դուք կընթանաք առաջին ճանապարհով. այո՛, դեռեւս կլինի դժվար կյանք, բայց բարելավման միտումներով եւ խաղաղության, կայունության ու անվտանգության պայմաններում:

Իսկ ԱԺՄ-ի թեկնածուի ընտրությամբ դուք կունենաք նույնքան եւ թերեւս ավելի դժվար կյանք, բայց արդեն ուղեկցված պատերազմով, ցնցումներով ու տագնապներով: Այդ ընտրության գինը խաղաղության կորուստն է, Արցախի հայաթափումը եւ ձեր զավակների արյունը: Դուք ոչ միայն չեք ստանա խոստացվածը, այլեւ կկորցնեք ձեր ունեցածը, որի արժեքը լիովին կգնահատեք միայն կորցնելուց հետո:

Վտանգն այն է, որ շատերին կարող է թվալ, թե խաղաղությունը, կայունությունը, Արցախի ներկա վիճակը արդեն մեկընդմիշտ տրված եւ անփոփոխ իրողություններ են, որոնց այլեւս ոչինչ չի սպառնում: Ցավոք սրտի, իրականությունը դեռեւս այնքան փխրուն է, այնքան զգայուն, այնքան կախված բազմաձայն ու նրբահյուս հարաբերություններից, որ բավական է մի անզգույշ քայլ, մի լուրջ սխալ արտաքին քաղաքականության բնագավառում, բավական է մի թեթեւամիտ արկածախնդրություն, եւ մենք նորից կհայտնվենք 1991–1993 թվականների իրավիճակի մեջ:

Սիրելի հայրենակիցներ, բարեբախտաբար ասեմ՝ թե դժբախտաբար, իմ բոլոր քաղաքական կանխատեսումները մինչեւ այժմ հիմնականում իրականացել են: Մազաչափ չեմ կասկածում, որ կիրականանա նաեւ այս կանխատեսումը, եթե ահազանգս տեղ չգտնի ձեր սրտերում:

Հայաստանը տեսել է թագավորություն, տեսել է օտարի լուծ, տեսել է առաջին հանրապետություն, տեսել է խորհրդային վարչակարգ, տեսել է ժողովրդավար իշխանություն, չի տեսել միայն ֆաշիզմ, որի ուրվականը, սակայն, այսօր թակում է մեր դուռը:

Այս ամենը ես ասում եմ ամենայն սառնասրտությամբ եւ հոգու անդորրությամբ, որովհետեւ վստահ եմ, որ դուք նման կործանարար սխալ թույլ չեք տա:

Ամեն ինչ կախված է ձեր կամքի արտահայտությունից եւ առաջիկա ընտրություններին ձեր միահամուռ մասնակցության հանգամանքից: Որքան շատ մարդ մասնակցի ընտրություններին, այնքան փոքր կլինի սխալվելու հնարավորությունը, եւ այնքան իրեն ամուր կզգա ապագա Նախագահը:

Շնորհակալություն ուշադրության համար:

«Հայաստանի Հանրապետություն», 21 սեպտեմբերի, 1996 թ.: Հրատարակված՝ «Որքան շատ մարդ մասնակցի ընտրություններին, այնքան փոքր կլինի սխալվելու հնարավորությունը եւ այնքան իրեն ամուր կզգա ապագա Նախագահը» վերնագրով: ՀՀԱՆԱ, 28/20.09.96: Մեքենագիր – ձեռագիր: Ինքնագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

(21 սեպտեմբերի, 1996 թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Այնման թանկ գնով՝ կոռուստներով ու աղյուսով ձեռքբերված մեր նոր պետականությունը բոլորեց իր հինգերորդ տարին:

Դա և՛ ինչ է, և՛ շատ: Ե՛ւ ակնթարթ է, և՛ւ միաժամանակ հավիտենություն:

Քիչ է՝ մեր երևի հազարամյա պատմության տարեգրության կտրվածով:

Շատ է՝ համեմատած մեր առաջին հանրապետության երկուսուկեսամյա գոյության հետ, եւ մանավանդ այնու, որ առաջին տարիները որևէ նորածին պետության համար ամենադժվար, բայց եւ ամենաբախտորոշ ժամանակն են լինում:

Երբ հետադարձ հայացք ենք գցում անցած տարիներին, դրանք մի ամբողջ դար են թվում՝ հագեցած պատմական իրադարձություններով, պատերազմով ու շրջափակումներով, տագնապներով ու սպասումներով, կորուստներով ու սխրանքներով:

Բայց այդ տարիները եղան նաեւ մեր ժողովրդի հաղթական հաստության եւ հաղթացիական գիտակցության դրսեւորման ամենաբնորոշ հանգրվանը, որի կիզակետը հանդիսացան անկախության հանրաքվեն, արցախյան գոյամարտի հաղթական ավարտը եւ երկրի մշտական իրավիճակը:

Երբ խոսվում է հրաշքների մասին, մոռացվում է, որ իսկական հրաշքն արդեն կայացել է, հանգի վերջին հայրուրամյակում ինչ նորանկախ պետությունների է հաջողվել այդպես սահուն անցնել առաջին տարիները. համարյա ամենուրեք եղել են անիշխանության պահեր, բազմաթիվ հաշվեհարդարներ, հեղաշրջումներ ու արյունալի ներքին բախումներ:

Ութ տարի շարունակ, սկսած ազգային-ազատագրական զարթոնքից մինչեւ այսօր, մեր ժողովուրդն, ըստ էության, որեւէ նակատագրական սխալ թույլ չի տվել: Մեր ժողովուրդն աշխարհին ապացուցեց, որ հիանալի օգտագործեց անկախության վերականգնման վերջին հնարավորությունը. մի բան, որ տեղի չունեցավ 1918–1920 թվականներին, երբ մեր հարեւաններն ավելի պատրաստ գտնվեցին իրենց անկախությունը, քան Հայաստանը: Այսօր, սակայն, հիշյա հակառակը, հա՛յ ժողովուրդն ավելի պատրաստ եղավ ունենալու իր սեփական պետությունը՝ դրանից բաղելով բոլոր ակնհայտ առավելությունները:

Անկախության առաջին հանգրվանին հայ ժողովուրդն ստիպված եղավ հիմնականում լուծել գոյության խնդիրներ՝ արցախյան պատերազմ, ազգային բանակի կայացում, երկրի սահմանների պաշտպանություն, շրջափակումների եւ էներգետիկ ճգնաժամի հաղթահարում, բռնագաղթյալների ապաստանում, տնտեսական գահավիժման սանձահարում եւ այլն:

Եւ չի կարելի ուրանալ, որ նա պատվով դուրս եկավ այդ բախտորոշ խնդիրների լուծման անհավոր փորձությունից՝ դրսեւորելով զոհաբերության, տոկունության, համբերության, զգաստության եւ հավասարակշռության անօրինակ սխրագործություն:

Անկախության առաջին տարիները, սակայն, միաժամանակ եղան հանրապետության տնտեսական անկման, ժողովրդի սոցիալական ծանր վիճակի, կրթության, մշակույթի, առողջապահության բնագավառների ետընթացի ժամանակաշրջան:

Ճիշտ է, ավելի քան երկամյա խաղաղությունը բերեց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման, կենսական նշանակություն ունեցող առեւտրական գործունեության աշխուժացման, դրամաշրջանառության առողջացման որոշ դրական միտումներ, բայց, այնուամենայնիվ, մեր

ժողովրդի կյանքը դեռեւս շատ հեռու է արժանավայել համարվելու շռայլությունից:

Ըստ այդմ, հանի որ, ինչպես ասվեց, անցյալ ժամանակահատվածում մեր ժողովուրդը հիմնականում լուծե՛լ է իր գոյությանն առնչվող խնդիրները, ապա առաջիկայում ավելի մեծ հնարավորություն է լինելու զբաղվել տնտեսության զարգացման, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման, կրթության, գիտության, մշակույթի, առողջապահության բնագավառների բարեկարգման, օրինականության եւ կարգուկանոնի հաստատման հարցերով:

Դրա իրականացման համար, սակայն, անհրաժեշտ է պահպանել եւ ամրապնդել այն բոլոր նվաճումները, որոնք մեր ժողովուրդը ձեռք է բերել ամենաթանկ գնով. պահպանել ու ամրապնդել խաղաղությունը, Արցախի ազատությունը, երկրի ներքին կայունությունը, ժողովրդավարության եւ տնտեսական բարեփոխումների գործընթացը:

Ժողովրդի բարեկեցության, երկրի բարօրության միակ պայմանը այդ արժեքների գնահատումն ու պահպանումն է: Հակառակ դեպքում Հայաստանը չի կարող խուսափել իր գոյությանն սպառնացող նորանոր վտանգներից եւ բնակչության սոցիալական վիճակի էլ ավելի վատթարացումից:

Սիրելի հայրենակիցներ,

Ես խորապես համոզված եմ, որ առաջիկա տարիները լինելու են շատ ավելի հեշտ, շատ ավելի անվտանգ, շատ ավելի ապահով, քան նախորդները:

Տարեցտարի առողջանալու է երկրի տնտեսությունը, բարելավվելու է ձեր կյանքը, ծաղկելու են կրթությունը, գիտությունը եւ մշակույթը: Դուք հնարավորություն եք ստանալու ամբողջովին զբաղվել խաղաղ, ստեղծագործ աշխատանքով՝ ապահովելու համար ձեր ընտանիքների բարօրությունն ու երջանկությունը:

Եղբայրներ, քույրեր, մեր հավերժական պետականության կայացման հանապարհին վաղը դուք բոնելու եք մի նոր հենություն: Ես ձեզ կոչ եմ անում միահամուռ մասնակցել այդ հենությանը, իվերակել ձեր խղճի եւ հայրենասիրական գիտակցության թելադրանքով՝ ապահովելու համար մեր սուրբ Հայրենիքի մուտքը 21-րդ դար՝ որպես ամուր, բարգավաճող եւ խաղաղ պետություն:

Ես շնորհավորում եմ ձեզ Հայաստանի անկախության 5-րդ տարեդարձի առթիվ՝ մաղթելով ձեզ երջանկություն ու բարեկեցություն՝ ի շահ եւ ի փառս մեր համայն ազգի:

Անցնելու են տասնամյակներ ու դարեր, եւ դուք արժանանալու եք մեր սերունդների հավիտենական օրհնանքին:

«Հայաստանի Հանրապետություն», 24 սեպտեմբերի, 1996 թ.: Հրատարակված՝ «Առաջինը տարիները լինելու են շատ ավելի հեշտ, շատ ավելի անվտանգ, շատ ավելի ապահով...» վերնագրով:
ՀՀԱՆԱ, 28/21.09.96: Բնագիր: Ինքնագիր:

ՈՒՂԵՐՁ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ 1996 Թ. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

(1 հոկտեմբերի, 1996 թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Ընտրությունների արդյունքների պաշտոնական ամփոփումից հետո պարտ եմ համարում դիմել ձեզ՝ արտահայտելու համար իմ երախտագիտությունը եւ տալու որոշ նախնական գնահատականներ ներկա իրավիճակի վերաբերյալ:

Նախ ուզում եմ առանձին-առանձին խորին շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության այն 647 հազար բաղաքացիներին, ովքեր վստահության քվե են տվել ինձ՝ ապահովելով հաղթանակի համար անհրաժեշտ ձայների բանակը:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում գյուղական շրջանների բնակիչներին, որոնք, չնայած իրենց դեռեւս դժվար կյանքին ու բազում հոգսերին, հավատացել են ինձ ու ցուցաբերել առավելագույն աջակցություն:

Երախտապարտ եմ, անշուշտ, նաեւ իմ ընտրական կենտրոնի գործունեության իրենց ծանրակշիռ նպաստը բերած համակիրների լայն շրջանակին՝ գլխավորությամբ Բարկեն Առարքյանի, ինչպես նաեւ իմ բոլոր վստահված անձանց, որոնք ներկայացնում էին մտավորականության, կրթության, գիտության, մշակույթի, առողջապահության բնագավառների, արտադրության եւ գործարարության ոլորտի հիմնական շերտերը:

Ջեմ կարող ամենայն անկեղծությամբ երախտագիտությունս չհայտնել նաեւ իմ մրցակիցների օգտին քվեարկած շուրջ 600 հազար բաղաքացիներին, որոնք ազնվորեն կատարել են իրենց բաղաքացիա-

կան պարտքը և այդպիսի ակտիվությամբ մասնակցել երկրի ժողովրդավարացման կարևորագույն գործընթացին:

Նորընտիր Նախագահին լուրջ խորհելու տեղիք պետք է տա բնակչության հենց այս խավի ցուցաբերած վերաբերմունքը, որն արժանի է հանգամանալից և սառը վերլուծության: Այսօր, իհարկե, ես դեռևս լիովին պատրաստ չեմ կատարելու այդ վերլուծությունը, բայց հարկ եմ համարում ներկայացնել որոշ նախնական եզրակացություններ:

Չեմ կարծում, թե ընտրությունների արդյունքների վրա էապես ազդել են գաղափարախոսական նկատառումները. թեև կոմունիստական և ծայրահեղ ազգայնական գաղափարները մեր հասարակության տարբեր շերտերում ունեն հավատավոր կողմնակիցներ, բայց դրանք իրականում մեծ թիվ չեն կազմում:

Ըստ երևույթին, իշխանությունների նկատմամբ բնակչության բացասական հակազդեցության հարցում լուրջ դեր չեն խաղացել նաև նրանց վարած արտաքին քաղաքականությունը, արցախյան խնդրի կարգավորման ընթացքը և ազգային անվտանգության ապահովմանն ուղղված քայլերը:

Իմ կարծիքով, ժողովրդի դժգոհության ավելի վճռական գործոններ են տնտեսական բարեփոխումների անխուսափելի ցավագին հետևանքները, կադրային քաղաքականությունը, վարչամեքենայի անօրինականություններն ու կաշառակերության տարածված դրսևորումները և մանավանդ՝ բնակչության չափազանց ծանր սոցիալական վիճակը:

Ահա այն պարարտ հողը, որում ընդդիմությունը կարողացավ փայլուն կերպով սերմանել իր քարոզչությունը՝ հասնելով հնարավոր առավելագույն արդյունքին:

Աչք փակել ճչացող իրականության դեմ՝ աններելի միամտություն կամ անպատասխանատվություն կլիներ:

Այո՛, մենք լիովին գիտակցել և չենք թաքցրել, որ ինչպես ամենուր, Հայաստանում ևս տնտեսական բարեփոխումները պետք է ծնեին բարդ սոցիալական խնդիրներ, որոնց լուծման բանալին այնուամենայնիվ այդ բարեփոխումների շարունակումն ու խորացումն է: Բարեփոխումները ծանրագույն փորձություն են անգամ այնպիսի երկրների համար, որոնք չունեն աղետի գոտի, շրջափակումներ, հազարավոր փախստականներ և արցախյան կնճիռ:

Այո՛, պետության բոլոր կադրերը չեն, որ գտնվել են իրենց պաշտոնի բարձրության վրա և աչքի ընկել արհեստավարժությամբ, բարեխղճությամբ ու բարոյական նկարագրով: Անօրինականություններն ու կաշառակերության դրսևորումները հասել են հասարակական չարիքի աստիճանի:

Այո՛, չափազանց ծանր ու անմարդավայել է մեր ժողովրդի սոցիալական վիճակը. շուրջ մեկ միլիոն մարդ ապրում է չքավորության սահմանից ցածր պայմաններում, հարյուրհազարավոր աղետյալներ ու փախստականներ դեռևս օթևանում են ժամանակավոր կացարաններում, ողորմելիորեն չնչին են աշխատավարձերը, կենսաթոշակները, նպաստները, մեծ թիվ են կազմում աշխատազուրկները:

Կրկնում եմ, այս ամենը մենք ո՛չ թաքցրել ենք, ո՛չ էլ լռության մատնել, պարզապես պետք է խոստովանել, որ, ըստ ընտրության արդյունքների, մեր փաստարկներն ու ծրագրերը ժողովրդի մի մասի համար անհասկանալի են մնացել: Եթե անգամ ժողովուրդը գիտակցել է, որ սոցիալական խնդիրների լուծումը հրաշքով տեղի չի ունենալու, այլ աստիճանաբար ու քայլ առ քայլ, ըստ երևույթին իշխանությունների ծրագրերում նա բավարար մտահոգություն չի տեսել դրանց նկատմամբ:

Ինչևէ, ընտրությունները կայացել են, և ես երկրորդ անգամ ստացել եմ ձեր վստահության քվեն, որը ես հակված եմ դիտելու ոչ այնքան որպես իմ նախորդ գործունեության գնահատական, որքան որպես կանխավճար՝ ժողովրդի սպասելիքներն ու ակնկալիքները հատուցելու համար:

Ուզում եմ հավաստացնել, որ այս ընտրություններում շահած շուրջ 52 տոկոսը ես ավելի թանկ եմ գնահատում, քան նախորդ ընտրությունների 83 տոկոսը, որովհետև 1991 թվականին ես հաղթել եմ ազգային-ազատագրական շարժման ռոմանտիկ ալիքի վրա, իսկ այս անգամ՝ հասուն ժողովրդավարական հասարակության կամքի արտահայտության շնորհիվ:

Ճիշտ է, որոշ ծայրահեղական ուժերի արկածախնդրության պատճառով ստվեր գցվեց ընտրությունների վրա, և մեր պետությանն ու ժողովրդին բարոյական ծանր հարված հասցվեց, բայց դրանից ազգային ողբերգություն չպետք է սարքել: Կարևորն այն է, որ ժողովրդի ու նույնիսկ ցուցարարների մեծամասնությունը չմասնվեց կազմակերպված սադրանքին, և մեր իրավապահ մարմինների հստակ ու սառնասիրտ գործողությունների շնորհիվ կանխվեց արյունահեղությունն ու արագորեն վերականգնվեց երկրի անդորրը:

Բոնաւարութեան կազմակերպիչները, հրահրիչները եւ անմիջական մասնակիցները, իհարկե, յուրաքանչիւրն իր մեղքի չափով պետք է պատասխան տան օրենքի առջեւ, բայց հաւաստիացնում եմ, որ վհուկների որս չի սկսվելու, եւ ոչ մի անմեղ մարդ չի տուժելու: Բոլոր դեպքերում ես խոր ափսոսանք եմ հայտնում զանգվածային անկարգությունների ժամանակ պատահականորեն տուժած անձանց ու խորհրդարանի շրջակա շենքերի բնակիչներին, որոնց անդորրը խախտվեց հակաօրինական գործողությունների պատճառով:

Վստահ եմ, որ մեր ժողովուրդը նման արկածախնդրություն այլեւս թույլ չի տա, եւ պատահածը կդառնա մեր պատմության սոսկ ցավալի մի բյուրիմացություն:

Սիրելի հայրենակիցներ,

Վերստանձնելով իմ պարտականությունները, ես մտադիր եմ կետ առ կետ, հետեւողականորեն իրականացնել իմ նախընտրական ծրագիրը, որն ըստ էության պատասխանում է ձեզ հուզող բոլոր ցաւոտ հարցերին: Նուտով դուք ականատես կլինեք եւ լուրջ կադրային փոփոխությունների, եւ աւօրինականությունների ու կաշառակերության դեմ պայքարի ծավալման, եւ կենսաթոշակների ու աշխատավարձերի կանոնավոր վճարման, եւ ընդհանուր կարգուկանոնի հաստատման իրողությանը:

Ես խորապես համոզված եմ, որ խաղաղության ու կայունության պահպանման, հավասարակշիռ արտաքին քաղաքականության շարունակման, ժողովրդավարական եւ անհեւական բարեփոխումների խորացման դեպքում իշխանություններից ու ժողովրդից գերբնական ջանքեր չեն պահանջվելու երկրի տնտեսությունը վերականգնելու եւ բնակչության սոցիալական վիճակն աստիճանաբար բարելավելու համար:

Դրա համար անհրաժեշտ է միայն պետության եւ հասարակության բոլոր օղակների ամենօրյա տքնաջան ու բարեխիղճ աշխատանք:

Ես կրկին խորին շնորհակալություն եմ հայտնում մեր ողջ ժողովրդին եւ մաղթում երջանկություն ու բարօրություն, որին նա արժանի է նույնքան, որքան աշխարհի բոլոր հաղթակիրթ ժողովուրդները:

«Հայաստանի Հանրապետություն», 1 հոկտեմբերի, 1996 թ.:
ՀՀԱՆԱ, 28/01.10.96: Բնագիր: Ինքնագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՐԴՈՒՄԸ

(11 նոյեմբերի, 1996 թ.)

Ստանձնելով Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնը՝ երդվում եմ.

- Սրբությամբ կատարել Հայաստանի անկախության, տարածքային ամբողջականության եւ անվտանգության հաշխավորի առաքելաւորը պարտականությունը.
- գործել բացառապես Սահմանադրության եւ օրենքների շրջանակում.
- առաջնորդվել ժողովրդավարության եւ համամարդկային արժեքների գերակայության գիտակցությամբ.
- ջանք չխնայել երկրի խաղաղությունը, հաղաքական կայունությունը եւ հաղաքացիական համերաշխությունը ապահովելու ուղղությամբ.
- մշտական հոգածության առարկա դարձնել ժողովրդի բարեկեցության բարձրացման, սոցիալական վիճակի բարելավման խնդիրները.
- չկորցնել զգոնությունը, իրականության զգացողությունը, պատասխանատվության գիտակցությունը.
- հեռու մնալ արկածախնդրություններից, անիրատես ծրագրերից ու շուտափույթ որոշումներից.
- մերժել ծայրահեղականությունը, ամբոխավարությունը, ամբոխահաճությունը եւ սին խոստումները.

- ժողովրդին զերծ պահել աճաբեկչության, թմրամոլության, ավազակության վտանգներից.
- բարձրացնել ազգի բարոյական ոգին, ամրապնդել ու խորացնել նրա հավատը սեփական ուժերի նկատմամբ.
- պետականությունը վեր դասել ազգային ու քաղաքական բոլոր գաղափարներից, գիտակցել պատասխանատվությունը համայն հայության առջեւ:

Այսաճն ի պաշտոնե, մնացյալը՝ զուտ մարդկային առումով.

- որեւէ բայլով չարատավորել ազգի պատիվը, չդիպչել մարդու արժանապատվությանը.
- հարգել այլակարծությունը, բայց նաեւ տեր կանգնել սեփական կարծիք ունենալու իրավունքին.
- պահպանել լսելու եւ խոհուրդակցելու ունակությունը.
- չհավակնել դատավորի դերի, խուսափել անիմաստ բանավեճերից ու շատախոսությունից.
- չընկրկել դժվարությունների առջեւ, չվհտրվել անորոշ կացություններում.
- տուրք չտալ պատեհապաշտության եւ էժանագին քաղաքական շահադիտության.
- մերժել՝ թե՛ ազգային սնապարծությունն ու գերազանցությունը, թե՛ օտարամոլությունն ու աշխարհաքաղաքացիությունը.
- ատել բռնությունը, սպառնալիքը, սադրանքը, դավադրությունը.
- չհանդուրժել սուտը, կեղծիքը, բամբասանքը, մատնությունը, զրպարտությունը, անօրենությունը.
- արհամարհել պերճանքը, ընչասիրությունը, ցոփությունը.
- վանել փառասիրությունը, գոռոզամտությունը, հոխորտանքը.
- օտարել ծծնանքը, շողոքորթությունը, երեսպաշտությունը.
- ոչինչ չանել շնորհակալության, երախտագիտության կամ հատուցման ակնկալիքով:

«Հայաստանի Հանրապետություն», 12 նոյեմբերի, 1996 թ.
ՀՀԱՆԱ, 28/11.11.96. Բնագիր: Ինքնագիր:

ԵԼՈՒՅԹ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎՈՒՄ

(2 դեկտեմբերի, 1996 թ.)

Պարոն նախագահ,

Մեծարգո գործընկերներ,

Երախտագիտության ու գոհունակության զգացումով պատշաճն եմ ուզում մատուցել Շվեյցարիային, որպես 1996 թվականին ԵԱՀԿ-ի նախագահող երկրի գործառույթները կատարողի:

Ես շնորհակալություն եմ հայտնում նաեւ մեր տանտերերին՝ Պորտուգալիայի Հանրապետության կառավարությանը, հյուրընկալության եւ լուրջ ու արդյունավետ աշխատանքի տրամադրող հիանալի պայմանների համար:

Պարոն նախագահ,

Մեր գործունեության հիմնական ուղղությունն առաջադրվել էր, ըստ էության, Սառը պատերազմի ավարտից անմիջապես հետո, երբ ԵԱՀԿ-ն կարողացավ հանդես գալ որպես նոր հայեցակարգով մի հաստատություն՝ հնարավորություն ընձեռելով արդյունավետ համագործակցության մեջ ներգրավել անվտանգության դաշինքային համակարգի փլուզումից հետո բաղաքական վակուումում հայտնված բոլոր երկրներին: Դա հաջողվեց անել նաեւ այն պատճառով, որ ԵԱՀԿ-ն ձեւավորվեց որպես իր բոլոր անդամներին միավորող «ընդհանուր արժեքների հանրակցություն»:

Հայաստանը բարձր է գնահատում իր անդամակցությունը ԵԱՀԿ-ին: Մենք շատ բան սովորեցինք՝ ջանալով մեր ավանդը ներդնել համաեւրոպական ինտեգրացմանն ուղղված շարժման մեջ: Այդ գործընթացներին մասնակցությունը լուրջ ջանքեր եւ պատասխանատվություն պահանջող պարտավորություններ է դնում մեզ վրա: Սակայն, այդ պարտավորությունները բնականորեն համապատասխանում են մեր շահերին ու նպատակներին եւ ազատ ընտրության հետեւանք են հանդիսանում:

Բուդապեշտյան գագաթնաժողովը ԵԱՀԿ-ի ինստիտուցիոնալ փոխակերպման եւ եւրոպական անվտանգության նոր համակարգի մոդելի վրա աշխատելու անհրաժեշտության վերաբերյալ կարեւոր որոշումներ ընդունեց: Այսօր նշված երկու ուղղություններով մենք կարող ենք ակնհայտ առաջընթաց արձանագրել:

ԵԱՀԿ-ն իր ուրույն ավանդը ներդրեց անվտանգության հիմնահարցերի պատկերացումներում: Այն չի սահմանափակվում ռազմական հարցերի շրջանակներում, այլ դրանք ներառում է հասարակական, բաղմական, տնտեսական եւ այլ հարցերի ընդհանուր համատեքստի մեջ:

Այդ հայեցակետերն իր արտահայտությունն է գտնում ինչպես եւրոպայի ընդհանուր եւ համապարփակ անվտանգության համակարգի ստեղծման մեր համատեղ ջանքերում, այնպես էլ հակամարտությունների վաղօրոք կանխման, կարգավորման եւ դրանց հետընթացային վերականգնման ուղղությամբ գործադրվող կոնկրետ քայլերում:

Մեր ընդհանուր անվտանգության ապահովման կարեւորագույն ուղղությունը եւրոպայում սովորական սպառազինությունների վերաբերյալ պայմանագրի կատարելագործումը, համապատասխանեցումն ու իրագործումն է: Այդ գործընթացը էապես համարվում է անվտանգության բնագավառում համագործակցության Համաժողովի փաստաթղթերով նախատեսված եւ յուրաքանչյուր կոնկրետ կոնֆլիկտի դեպքում մեծ հնարավորություններ ընձեռող մեխանիզմների կատարելագործմամբ:

Արդյունավետ են գործում ներկայացուցչությունները եւ հատուկ ստեղծված մյուս կառույցները: ԵԱՀԿ-ն եւրոպայում ներկա է ամենուր, որտեղ հակամարտություններ կան: Դրանք են Բոսնիան, Չեչնիան, Լեռնային Ղարաբաղը եւ այլն:

Բուդապեշտյան գագաթնաժողովից հետո ընկած ժամանակամիջոցում Հայաստանն ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի աշխատանքներին: Ի լրումն այդ գործընթացի, Հայաստանը հանդես է եկել Ադրբեջանի հետ ուղղակի երկխոսության նախաձեռնությամբ՝ նրա հետ զարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքների համաձայնեցման նպատակով:

Սակայն այս գագաթնաժողովում, մեզ թվում է, Ադրբեջանը փորձում է խախտել բանակցային գործընթացի բոլորի կողմից ընդունված տրամաբանությունը:

Մեր խորին համոզմամբ՝ զարաբաղյան հիմնախնդիրը Ադրբեջանի կողմից առաջարկված սկզբունքների հիման վրա լուծելու դեպքում, Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա կախված կլինի ցեղասպանության կամ բռնի տեղահանության մշտական սպառնալիքը:

Սումգայիթի (1988 թ. փետրվար), Կիրովաբադի (1988 թ. նոյեմբեր) եւ Բաքվի (1990 թ. հունվար) հակահայկական ջարդերի, ինչպես նաեւ Ղարաբաղի 24 հայկական գյուղերի բնակչության տեղահանության (1991 թ. մայիս – հունիս) փորձը ամենայն ակներեւությամբ ցույց է տալիս, որ Ադրբեջանը, չնայած բոլոր հավաստիացումներին, չի կարող Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության երաշխիքներ ապահովել:

Ուստի, մենք այն կարծիքին ենք, որ նոր ողբերգության բացառման միակ հնարավորությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարգումն է:

Այդուհանդերձ, Հայաստանը, վերահաստատելով հարադարի պահպանման իր պարտավորությունը, պատրաստակամություն է հայտնում շարունակելու կառուցողական մասնակցությունը բանակցությունների գործընթացին՝ ինչպես Մինսկի խմբի շրջանակներում, այնպես էլ ուղղակի երկխոսությամբ հակամարտությունը բանական եւ արդարացի փոխզիջման հիման վրա շուտափույթ կարգավորելու նպատակով:

Պարոն նախագահ,

Ներկայի շուրջ լարված բանակցություններում անգամ մենք չպետք է մոռանանք ապագայի մասին: Իսկ տարածաշրջանի ապագա անվտանգությունն անհնար է առանց տարածաշրջանային լայն համագործակ-

ցության, որը կոչված է ոչ միայն վաղվա հեռանկարը իրական դարձնելուն, այլեւ համագործության խաղաղ կարգավորման գործընթացում վստահության ու անվտանգության ամրապնդման միջոցառումների հետագա ձեւավորմանը նպաստելուն:

Որպես բայլ տվյալ ուղղությամբ, ես կառաջարկեի ԵԱՀԿ-ի հովանու ներքո կովկասյան երեք պետությունների ոչ պաշտոնական խորհրդակցություններ սկսել կազմակերպության անդամ բոլոր շահագրգիռ պետությունների մասնակցությամբ՝ մշակելու համար տնտեսական զարգացման, սպառազինությունների վերահսկողության, հակամարտությունների կարգավորման, տարածաշրջանային ինտեգրացման հարցերի լայն շրջանակը ներառող տարածաշրջանային համագործակցության հիմնական ուղղությունները:

Վերջում, պարոն նախագահ, ես ուզում եմ շնորհավորել 1997 թվականին ԵԱՀԿ-ի նախագահությունը ստանձնող մեր դանիացի գործընկերներին եւ վստահություն հայտնել, որ նրանց ղեկավարությամբ ու բոլոր մասնակից երկրների ջանքերով մենք կհասնենք Եւրոպայի անվտանգության ու համագործակցության հրատապ հարցերի լուծմանը:

«Հայաստանի Հանրապետություն», 4 դեկտեմբերի, 1996 թ.: Հրատարակված՝ «Նոր ողբերգության բացառման միակ հնարավորությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարգումն է» վերնագրով:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ «ՊՈԼԻՏԻԿ ԷՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼ» ՀԱՆԴԵՍԻՆ[1]

(գարուն, 1997 թ.)

– 1996 թվականի սեպտեմբերին Դուք վերընտրվեցիք Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնում: Ավելի քան հինգ տարի է, որ Դուք պետության ղեկավար եք: Ի՞նչն է Ձեզ ավելի մեծ բավարարվածություն պատճառում, եւ որո՞նք են Ձեր ամենամեծ հուսախաբությունները ներքին եւ միջազգային ասպարեզներում:

– Ամենամեծ բավարարվածությունն, իհարկե, հայ ժողովրդի դարավոր երազանքի իրականացումն էր՝ Հայաստանի անկախության վերականգնումը: Դրա կողքին, թերեւս, արժանի են հիշատակվելու նաեւ Ղարաբաղի փայլուն ինքնապաշտպանությունը, Հայաստանի դեմոկրատացման գործընթացը, Սահմանադրության ընդունումը եւ հողի սեփականաշնորհումը:

Հուսախաբությունները թեեւ քիչ չեն, բայց վերոհիշյալ ձեռքբերումների համեմատ թվում են ժամանակավոր ու երկրորդական: Համենայն դեպս, չեմ կարող չնշել Հայաստանի տնտեսության եւ բնակչության կենսամակարդակի լուրջ անկումը, հումքային եւ էներգետիկ ճգնաժամը:

– 1994 թվականի մայիսից հրադադար է հայտարարված Ղարաբաղում, որը մինչեւ օրս պահպանվում է: Ի՞նչ եք կարծում, խաղաղության այդ գործընթացն արդյո՞ք անշրջելի է:

---

[1] *Հարցազրույցն օժտված է օտար ընթերցողի համար անհրաժեշտ տեղեկատվական ծանոթություններով, որ հայերեն թարգմանությունում դուրս են թողնված:*

– Դժբախտաբար, դեռեւս ոչ: Զինադադարը պահպանվում է բացառապես հակամարտող կողմերի բարի կամքի շնորհիվ, կամ, եթե կնախընտրեմ պատերազմից նրանց հոգնածության պատճառով: Երկուսուկես տարվա ընթացքում միջազգային հանրությունը չի կատարել որեւէ գործնական բայլ զինադադարի ամրապնդման ուղղությամբ: Զկան խաղաղարար ուժեր, չկան միջազգային դիտորդներ, ԵԱՀԿ-ն երեւանում, Բաքվում եւ Ստեփանակերտում չունի անգամ մշտական ներկայացուցիչներ:

Սա վտանգավոր իրավիճակ է: Ես կարող եմ միանգամայն երաշխավորել, որ Լեռնային Ղարաբաղը երբեւէ չի խախտի զինադադարը: Սակայն ստիպված եմ նաեւ ցավով նշել, որ այն պահին, երբ Ադրբեջանն զգա իր ռազմական գերակշռությունը, նա անմիջապես կվերսկսի պատերազմական գործողությունները:

– 1996 թվականի նոյեմբերին, ԵԱՀԿ գագաթնաժողովում, Ղարաբաղի հարցում Դուք պաշտպանեցիք ինքնորոշման սկզբունքը՝ ի հակակշիռ տարածքային ամբողջականության, որին հակված է միջազգային հանրությունը: Ի՞նչ եք կարծում, ինքնորոշման սկզբունքը կարո՞ղ է հաշվի առնվել հակամարտության կարգավորման հիմքերում:

– Լիսաբոնի գագաթնաժողովում Հայաստանը մերժեց ԵԱՀԿ գործող նախագահի առաջարկած բանաձեւը հետեւյալ նկատառումներով:

Բանաձեւը կանխորոշում է Ղարաբաղի կարգավիճակը, որը հակասում է ԵԱՀԿ նախորդ որոշումներին, որոնց համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը պետք է սահմանվի ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսում:

Բանաձեւը հիերարխիա է սահմանում տարածքային ամբողջականության եւ ինքնորոշման հավասարազոր սկզբունքների միջեւ, եւ մենք, լինելով հինգ տարվա պետություն, մեզ միամտություն ենք թույլ տալիս դա դիտելու որպես միջազգային իրավունքի կոպիտ խախտում:

Եւ վերջապես, Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը բխում է ոչ թե պարզ ազգային ամբիցիայից, այլ այն ճշտակ գիտակցությունից, որ առաջարկված լուծման դեպքում Ղարաբաղի հայության գլխին մշտապես կախված է լինելու ցեղասպանության վտանգը: Հայ ժողովուրդն այս դարում արդեն մեկ անգամ ենթարկվել է ցեղասպանության: Երկրորդ ցեղասպանություն նա չի հանդուրժի:

Նկատի ունենալով այս ծանրակշիռ հանգամանքները, ես համոզված եմ, այո՛, որ ինքնորոշման իրավունքը չի կարող անտեսվել Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հիմքերում:

– Հայաստանը եւ Ղարաբաղը արդյո՞ք խաղաղության գործընթացի եւ հակամարտության լուծման հարցում միեւնույն մոտեցումն ունեն:

– Հայաստանի եւ Ղարաբաղի մոտեցումներում կան որոշակի ընդհանրություններ, բայց կան նաեւ զգալի տարբերություններ: Հայաստանն, իհարկե, ունի որոշ ազդեցություն Ղարաբաղի վրա, բայց այդ ազդեցությունը չպետք է բացարձակացնել: Ղարաբաղն իր ընտրովի վարչական կառույցներով, իր ուժեղ բանակով, Ադրբեջանի դեմ մղած հաջող ազատագրական պատերազմով դարձել է ինքնուրույն հաղաքական գործոն: Սա մի փաստ է, որ ոչ ոք այլեւս չի կարող ժխտել, եւ ավելին՝ հաշվի չառնել:

– Թուրքիայում, Արեւելյան Անատոլիայի զարգացման հետ կապված, որոշ շարժումներ եւ տնտեսական ուժեր պաշտպանում են Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումը եւ հատկապես սահմանի բացումը, որը իշխանությունները պայմանավորում են Հայաստանի կողմից Ադրբեջանի հանդեպ կատարելիք քայլով: Այս ուղղությամբ Դուք կոնկրետ հեռանկարներ տեսնո՞ւմ եք:

– Մեր պաշտոնական տեսակետն այս հարցի վերաբերյալ հետեւյալն է. չնայած անցյալում գոյություն ունեցած խոր անտագոնիզմին, Հայաստանը եւ Թուրքիան, որպես հարեւան պետություններ, պետք է առանց հաղաքական նախապայմանների հաստատեն նորմալ բարիդրացիական հարաբերություններ, որոնք կարող են ընդգրկել տնտեսության, առեւտրի, տուրիզմի, գիտության, մշակույթի, էկոլոգիայի ոլորտները:

Մենք չենք թաքցնում, Թուրքիան մեզ անհրաժեշտ է թե՛ որպես կարեւոր տնտեսական գործընկեր, թե՛ որպես ամենակարճ հանապարհ դեպի Եւրոպա եւ արաբական աշխարհ: Բայց ակնհայտ է, որ Հայաստանը նույնպես անհրաժեշտ է Թուրքիային. մի պատճառը դուք նշեցիք, իսկ մյուսն այն է, որ Հայաստանն էլ Թուրքիայի համար ամենակարճ հանապարհն է դեպի Ադրբեջան եւ Միջին Ասիա: Բավական է նշել, որ Թուրքիան նախկին Խորհրդային Միության հանրապետություններին կապող միակ երկաթուղին անցնում է Հայաստանով:

Առայժմ, այո, Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը պայմանավորում է հայ-ադրբեջանական հարաբերություններ-

րով, մասնավորապես դարաբաղյան հակամարտության առկայությամբ: Սակայն ժամանակն է, որ ես անջատի այս հարցերն իրարից, հաշի առնի, իմ խորին համոզմամբ, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, բացի վերը նշված նկատառումներից, բարենպաստ մթնոլորտ կստեղծի նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման համար:

– 1915 թվականի իրադարձությունների գնահատականի վերաբերյալ տարակարծությունը արդյո՞ք կարող է շրջանցվել:

– Հայաստանը 1915 թ. իրադարձությունները համարում է հայ ժողովրդի դեմ կատարված ցեղասպանություն, որն, անկասկած, վաղ թե ուշ ճանաչվելու եւ դատապարտվելու է նաեւ միջազգային հանրության կողմից:

Դրանով հանդերձ, Հայաստանն այդ հարցը չի դիտում որպես բազմական նախապայման հայ-թուրքական պետական հարաբերությունների կարգավորման համար: Երկու ժողովուրդների փոխըմբռնման ձեւավորումը, որին ես անկեղծորեն հավատում եմ, կախված է այդ հարաբերությունների արագ կարգավորումից:

– Ներքին կյանքում եւ Ձեր երկրի համար ինչպիսի՞ հետեւանքներ կունենա Անկարայում իսլամիստների իշխանության գալը:

– Ձեռնակցելով Թուրքիայի ներքին իրավիճակի փոռնագետի դերին, չեմ կարող պատասխանել ձեր հարցի առաջին մասին: Ինչ վերաբերում է հարցի երկրորդ մասին, ապա պարոն Էրբաքանի իշխանության գալուց հետո Թուրքիայի բազմակողմանությունը Հայաստանի նկատմամբ, ըստ էության, որեւէ փոփոխություն չի կրել:

– Նավթամուղի անցկացման, Ադրբեջանի նավթի արտահանման վերաբերյալ վերջերս կնքված համաձայնությունը Հայաստանին դուրս է թողել: Դա կարո՞ղ է թուլացնել ձեր դիրքը:

– Կնքված պայմանագրերը վերաբերում են այսպես կոչված Ադրբեջանի նախնական նավթի (early oil) տեղափոխման հանապարհներին, այսինքն՝ Ռուսաստանի եւ Վրաստանի արդեն իսկ գոյություն ունեցող նավթամուղներին: Դեռեւս որոշված չէ Ադրբեջան – Միջերկրածով հիմնական նավթամուղի հանապարհը: Ուստի դեռեւս շուտ է Հայաստանն անտեսված համարել:

– ԱՊՀ ներսում այս կազմակերպության էության եւ կառույցների վերաբերյալ կան տարաձայնություններ: Ո՞րն է Հայաստանի մոտեցումը:

– Նախ եւ առաջ, կարծում եմ, պետք է արձանագրել հետեւյալը. անկախ ձեր նշած տարաձայնություններից, բոլորը միահամուռ են այն հարցում, որ ԱՊՀ ստեղծմամբ խորհրդային հանրապետությունները խուսափեցին կայսրության հայրայման հարավալավական տարբերակից:

Երկրորդ, ԱՊՀ-ն նորանկախ պետություններին ժամանակավորապես ապահովեց անվտանգության վակուումում հայտնվելու վտանգից:

Եւ երորդ, որոշ այլընտրանքներով հանդերձ, ԱՊՀ-ն դեռեւս պահպանում է ընդհանուր շուկայի պոտենցիալը, որը նորանկախ պետությունները չեն ուզում կորցնել, հաշի որ նրանց ապրանքները դեռեւս երկար ժամանակ մրցունակ չեն լինելու միջազգային շուկայում:

Առայժմ, սակայն, ԱՊՀ անդամ պետությունները, չնչին բացառությամբ, դեռեւս պատրաստ չեն ստեղծել արդյունավետ վերազգային կառույցներ:

– Հինգ տարի է անցել այն օրից, ինչ աշխարհը ծգտում է նոր կարգի, եւ երբեմն այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Ռուսաստանը փորձում է վերստեղծել հակաարեւմտյան դաշինքների մի նոր ցանկ: Հայաստանի համար արդյո՞ք չկա վտանգ՝ ներքաշվելու եւ սահմանափակվելու այդ նոր միության շրջանակներում: Ո՞րն է Հայաստանի դիրքորոշումը ՆԱՏՕ-ի ընդլայնման վերաբերյալ:

– Ես համոզված եմ, որ դեմոկրատական Ռուսաստանը որեւէ վտանգ չի ներկայացնում ո՛չ նախկին սոցիալիստական համակարգի երկրների, ո՛չ էլ Արեւմուտքի համար: Նա հրաժարվել է կայսերական ամբիցիաներից եւ մտադիր չէ վերականգնել իր նախկին ազդեցության ոլորտները: Դրա հետ մեկտեղ, սակայն, նա արդարացի խանդով է վերաբերում այն փաստին, որ իր լրած ազդեցության գոտիները փորձում են թափանցել այլ ուժեր: Արեւմուտքի անվտանգության երաշխիքն, իմ կարծիքով, ոչ թե ՆԱՏՕ-ի շուտափույթ ընդարձակումն է, այլ Ռուսաստանի վերջնական դեմոկրատացումը: Միջազգային հանրության ջանքերը, կարծում եմ, նախ եւ առաջ պետք է ուղղվեն այս նպատակին:

– Ինչպիսի՞ն են ներկայիս ձեր հարաբերությունները Ռուսաստանի հետ:

– Հայաստանը շահագրգռված է համակողմանի բարեկամական հարաբերություններ զարգացնել Ռուսաստանի հետ, թեև, առայժմ կան լուրջ տրանսպորտային դժվարություններ, որոնք խոչընդոտում են տնտեսական համագործակցության ծավալմանը: Ի տարբերություն մի շարք հանրապետությունների, Հայաստանն անկախության հինգ տարիների ընթացքում որեւէ առճակատում չունեցավ Ռուսաստանի հետ: Հակասովետական տրամադրություններն այստեղ չվերածվեցին հակառուսական տրամադրությունների, ինչպես տեղի ունեցավ այլ վայրերում:

– Ինչպե՞ս կվերլուծեք Չեչնիայի պատերազմը: Արդյոք հնարավո՞ր էր դրանից խուսափել: Խաղաղության համաձայնագիրն արդյո՞ք տեւական է: Հակամարտությունը հետեւանքներ կթողնի՞ ամբողջ Կովկասի համար:

– Պատշաճը մատուցելով չեչեն ժողովրդի մարտական ոգուն, ես այն կարծիքին եմ, որ Ռուսաստանը պատերազմը տանուլ տվեց ոչ թե Չեչնիայում, այլ բուն Ռուսաստանում: Ռուս ժողովուրդն ու Ռուսաստանի դեմոկրատական ուժերն էին, որ մերժեցին այդ պատերազմը: Խաղաղության պայմանագիրն այս իրողության տրամաբանական արդյունքն է, այդ պատճառով, կարծում եմ, այն կունենա տեւական բնույթ: Իրադրության կայունացումը Չեչնիայում, անշուշտ, կնպաստի ողջ Կովկասի իրավիճակի բարելավմանը:

– Ամերիկյան օգնությունը Հայաստանին ցույց է տալիս Միացյալ Նահանգների շահագրգռվածությունը ձեր երկրի նկատմամբ: Կարո՞ղ են նրանք ավելի առաջ գնալ՝ գործադրելով իրենց ազդեցությունը ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում:

– Չժխտելով Հայաստանին հատկացված ամերիկյան օգնության կարեւոր դերը՝ մենք միաժամանակ սառնասրտորեն գիտակցում ենք, որ ԱՄՆ-ն ավելի շատ շահեր ունի Ադրբեջանում, քան Հայաստանում: Դա կապված է մի կողմից՝ Ադրբեջանի նավթային հարստություններեի, մյուս կողմից՝ Թուրքիայի նկատմամբ ԱՄՆ-ի դաշնակցային պարտավորությունների հետ:

Բոլոր դեպքերում, սակայն, Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը մենք չենք պատկերացնում առանց Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Եւրոպայի սերտ համագործակցության:

– Տարածաշրջանում խաղաղություն ձեռք բերելուց հետո արդյո՞ք կկայանա անդրկովկասյան տարածաշրջանային համագործակցությունը: Ինչպիսի՞ ձեւեր այն կարող է ունենալ:

– Անդրկովկասյան տարածաշրջանային համագործակցությունը ես համարում եմ միանգամայն ոեալ, որովհետեւ Հայաստանը, Ադրբեջանը եւ Վրաստանը միմյանց համար եղել եւ մնում են ամենաբնական տնտեսական գործընկերներ: Հայաստանը հեռաւոլի հարաբերություններ ունի Վրաստանի հետ: Վերջինս իր ներքին նույնպիսի հարաբերություններ ունի Ադրբեջանի հետ: Լեռնային Ղարաբաղի հարցի լուծմամբ կվերանա նաեւ հայ-ադրբեջանական հակասությունը, եւ անդրկովկասյան համագործակցությունը ձեռք կբերի գործնական հեռանկար:

– Պարոնայք Ալիեւի եւ Շեւարդնաձեի հետ ստորագրելով Եւրոհամայնքի հետ գործընկերության համաձայնագիր, Դուք հույս արտահայտեցիք Եւրոպայի հանդեպ: Եւրոպայի ավելի ակտիվ մասնակցությունը ձեր տարածաշրջանում արդյո՞ք ցանկալի է: Ինչպիսի՞ տեղ այն կարող է ունենալ:

– Անդրկովկասյան պետությունների ինտեգրացումը Եւրոպական կառույցներում ես համարում եմ կարեւոր պայման ոչ միայն նրանց բնականոն զարգացման, այլեւ տարածաշրջանային կայունության ամրապնդման տեսակետից: Եւ ընդհանրապես, ես կարծում եմ, որքան ավելի շատ միջազգային պարտավորություններ ստանձնեն նորանկախ պետությունները, այնքան ավելի չափավոր եւ հավասարակշռված կլինի նրանց քաղաքականությունը: Հետեւաբար, ես նույնքան կարեւոր ու ցանկալի պետք է համարեմ Եւրոպայի ակտիվ ներգրավումը անդրկովկասյան տարածաշրջանում:

– Եւրոպայի եւ Թուրքիայի միջեւ մաքսային միության համաձայնագիրը կարո՞ղ է ենթադրել Եւրամիության եւ Հայաստանի կամ Անդրկովկասի միջեւ ազատ փոխանակման համաձայնություն:

– Հայաստանը շուտով կդառնա Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ, որի շրջանակներում էլ մենք տեսնում ենք ձեր նշած հարցերի լուծումը:

– Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ հարաբերությունների մասին ասում են, որ դրանք արտոնյալ բնույթ ունեն: Այդ հարաբերությունների ներկայիս վիճակը արդյո՞ք հաստատում է այդ որակումը:

– Հայ-ֆրանսիական հարաբերությունների նման գնահատականն ունի որոշ պատմական հիմք, որն, անշուշտ, այսօր էլ խաղում է իր դերը: Դրան պետք է գումարել նաեւ Ֆրանսիայում նշանակալից հայկական համայնքի առկայության հանգամանքը:

Հարաբերությունների ներկա մակարդակը դեռեւս շատ հեռու է Հայաստանի ու Ֆրանսիայի մտադրություններից եւ հնարավորություններից, մասնավորապես տնտեսական, գիտա-տեխնիկական, կրթա-մշակութային համագործակցության տեսակետից: Ֆրանսիան առայժմ Հայաստանին զգալի աջակցություն է ցուցաբերել հատկապես միջազգային ֆինանսական կազմակերպությունների շրջանակում եւ միջուկային էներգետիկայի զարգացման գործում:

– Կարո՞ղ եք արդյոք հաստատել, որ Հայաստանը տնտեսական վերելքի նշաններ է դրսեւորում, եւ ինչո՞վ եք դա բացատրում:

– Այո, սկսած 1994 թվականից Հայաստանում դրսեւորվել են տնտեսության կայունացման եւ զարգացման կայուն միտումներ: Երեք տարի անընդհատ ապահովվել է շուրջ 5–6 տոկոս տնտեսական աճ, սանձահարվել է ինֆլյացիան, պահպանվել է դրամի կայուն կուրսը, հաղթահարվել է էներգետիկ ճգնաժամը:

Դա հաջողվել է բացառապես հետեւողական տնտեսական բարեփոխումների իրականացման եւ Միջազգային արժութային հիմնադրամի ու Համաշխարհային բանկի աջակցության շնորհիվ: Դեռ որոշ ժամանակ եւս, ներքին ռեսուրսների հաշվին մեզ կհաջողվի պահպանել այդ դրական միտումները: Սակայն Հայաստանի լիարժեք տնտեսական զարգացումը կախված է արտաքին հաղորդակցության ճանապարհների վերականգնումից եւ օտարերկրյա ներդրումների ներգրավումից:

– Սփյուռքահայությունը կատարո՞ւմ է Ձեր սպասումներին համապատասխանող տնտեսական դեր:

– Տնտեսական առումով Սփյուռքի դերն առայժմ դուրս չի եկել մարդասիրական օգնության ու բարեգործության շրջանակներից: Մենք սպասում ենք Հայաստանի տնտեսության մեջ Սփյուռքի գործարարների լուրջ ներդրումներին:

– Ի՞նչ դաս քաղեցիք սպասվածից ավելի դժվար վերընտրություններից:

– Ավելի շատ ուշադրություն դարձնել ժողովրդի սոցիալական վիճակի բարելավմանը, ավելի լուրջ պայքար մղել կոռուպցիայի, անօրինականությունների, բյուրոկրատական քաշքշուկների դեմ:

– Ի՞նչ պայմաններով կարող է վերականգնվել ընդդիմության հետ երկխոսությունը:

– Ես որեւէ պայման չեմ առաջարկում: Ողջ քաղաքակիրթ աշխարհում գոյություն ունեն խաղի ընդհանուր կանոններ, որոնք պարտադիր են թե՛ իշխանությունների, թե՛ ընդդիմության համար, այսինքն՝ նրանք պետք է գործեն բացառապես Սահմանադրության եւ օրենքների շրջանակում:

– Արդյո՞ք քաղաքական ճգնաժամի հետեւանքով միջազգային ասպարեզում Հայաստանը թուլացավ: Ինչպե՞ս եք մտադիր վերականգնել Ձեր ժողովրդավարական վարկը ուժային միջոցների դիմելուց հետո:

– Այո, Հայաստանը որոշ չափով թուլացել է ներքին քաղաքական լարվածության պատճառով, որը ես կխուսափեի ճգնաժամ կոչելուց: Հինգ տարի շարունակ Հայաստանը եղել է Անդրկովկասի ամենակայուն պետությունը, ուստի ես չեմ կարծում, թե այդ ցավալի դրվագը կարող է լրջորեն ազդել նրա միջազգային վարկի վրա:

Ինչ վերաբերում է ուժի կիրառմանը, ապա այդ քայլին ոստիկանությունը դիմել է միայն այն բանից հետո, երբ սեպտեմբերի 25-ին ընդդիմության որոշ խմբեր գրոհել են խորհրդարանի շենքը, դաժանաբար ծեծել ու առեւանգել խորհրդարանի նախագահին ու նրա տեղակալին: Ընդդիմության կազմակերպած այս բռնությունը դատապարտվել է, մասնավորապես, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունների պաշտոնական հայտարարություններում, ուստի ես ավելացնելու ոչինչ չունեմ: Ուզում եմ միայն գոհունակությամբ նշել, որ ոստիկանության գործողությունների հետեւանքով ոչ ոք չի զոհվել եւ ոչ ոք հրազենով չի վիրավորվել:

– Որո՞նք են Ձեր նախագահական երկրորդ ժամկետի հիմնական ուղղությունները եւ նոր կառավարության առաջին քայլերը:

– Խաղաղության պահպանումը, Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծումը, շրջափակումների վերացումը, Հայաստանի տնտեսության վերականգնումը, տնտեսական բարեփոխումների խորացումը,

օտաոեկրյա ներդրումների ներգրավումը, հարկային ու վճարումային կարգապահության ապահովումը եւ, ինչպես վերը նշեցի, ժողովրդի սոցիալական վիճակի թեթեւացումն ու օրինականության հաստատումը:

– Ինչպե՞ս կբացատրեք Հայաստանում կոմունիստների այդքան թույլ լինելը:

– Դա բացատրվում է երկու պատճառով. առաջին՝ կոմունիզմը Հայաստանին պարտադրված է եղել դրսից եւ մեզ մոտ երբեմ չի ունեցել ֆանատիկ հետեւորդներ: Երկրորդ՝ ի տարբերություն մյուս հանրապետությունների, Հայաստանում դեմոկրատական կարգերի հաստատումից հետո կոմունիստների դեմ հալածանքներ չեն եղել:

– Որո՞նք են աշխարհի այն ղեկավարները, մասնավորապես՝ արեւմտյան, կենդանի կամ մահացած, որոնք Ձեր կարծիքով հնարավորին չափ լավ են հասկացել Հայաստանի դերը եւ նպաստել տարածաշրջանային կայունությանը:

– Դժվարանում եմ պատասխանել: Թերեւս խոսս պարադոքսալ հնչի, բայց, իմ կարծիքով, դժբախտաբար, արտաքին գործոններն առայժմ Ադրբեջանի համար ավելի ապակայունացնող, քան կայունացնող դեր են խաղացել:

– Կոմունիզմի վերջին տարիներին Դուք ղեկավարեցիք ընդդիմությունը: Իշխանության վեց տարիների ընթացքում որո՞նք են այն գաղափարները եւ համոզմունքները, որ դիմակայեցին փորձությանը:

– Անկախություն, Ղարաբաղի հարցի արդարացի լուծում, ժողովրդավարություն, ազատ շուկայական տնտեսություն, հարեւան երկրների հետ բնականոն հարաբերություններ:

«Հայաստանի Հանրապետություն», 9 մայիսի, 1997 թ.:
Թարգմանություն ֆրանսերենից: «Պոլիտիկ ինտերնասիոնալ» ("Politique internationale"), h. 75, 1997 թ.:
Հարցազրույցը՝ Միշել Մարիանի:
Հրատարակված՝ «Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը բխում է ոչ թե պարզ ազգային ամբիցիայից, այլ այն հստակ գիտակցությունից, որ առաջարկված լուծման դեպքում Ղարաբաղի հայության գլխին մշտապես կախված է լինելու ցեղասպանության վտանգը» վերնագրով:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(13 հուլիսի, 1997 թ.)

Համագումարի հարգարժան պատվիրակներ,

Քաջ գիտակցելով, որ գրեթե անհնար է մեկ ելույթում արծարծել ձեզ հուզող բոլոր հարցերը, փարատել ձեր կասկածներն ու մտատանջությունները, կամ ի վերջո՝ թեկուզ մասամբ բավարարել ձեր պարզ մարդկային հետաքրքրասիրությունը, կփորձեմ կատարել ընդամենը մի քանի անհավակնոտ շեշտադրումներ, որոնք, իմ կարծիքով, կարեւոր են ներկա բաղաքական իրավիճակի գնահատման տեսակետից:

Բարեբախտաբար թե դժբախտաբար, ՀՀՇ-ն որպես իշխող կուսակցություն, կրում է անցման շրջանի դժվարությունների, թերացումների, հասարակական ու բարոյական արատների ողջ պատասխանատվությունը (ՀՀՇ-ի իշխող կուսակցություն լինելու հանգամանքը, ես կարծում եմ, անհերաժեշտ չափով հիմնավորել եմ իմ նախորդ ելույթներում, ուստի հարկ չեմ համարում կրկնել բերված փաստարկները):

Հայաստանի իշխանությունները, հետեւաբար ՀՀՇ-ն, տեղի ու անտեղի ենթարկվում են ընդդիմության եւ հասարակական կարծիքի դաժան ճնշադատությանը, ծաղրին, պարսավանքին, զրպարտություններին ու անհիմն ամբաստանություններին:

Գործի է դրվում ամբոխավարության, ստի, կեղծիքի, զանգվածներին հանդյանալու, իշխանություններին վարկաբեկելու, թեւաթափ անելու, նրանց օղակների մեջ հակասություններ գրգռելու, հասարակական անդորրն ու երկրի կայունությունը խախտելու ողջ գինանոցը:

Ցանկացած դրական երեւույթ մատուցվում է որպես Աստծո շնորհ կամ ընդդիմության երախտիք, ցանկացած բացասական երեւույթ՝ որպես իշխանությունների խարդավանք:

Հաջողություններին բոլորն են տեր կանգնում, ձախողությունները՝ բաղդում են մեկի վրա: Ինչպես ասում են՝ հաղթանակը հազար ծնող ունի, պարտությունը՝ որբ է:

Ինչ որ լավ է՝ օբյեկտիվ է, այսինքն կախված չէ իշխանությունների կամքից, ինչ որ վատ է՝ սուբյեկտիվ է, այսինքն իշխանությունների մեղքն է:

Երբ աններելը ժամանակին է գալիս՝ Աստծո կամ ԱԺՄ-ի շնորհքն է, երբ անպատեհ ժամի՝ Տեր-Պետրոսյանի կամ ՀՀՇ-ի դավադրությունն է:

Ամեն ինչ սեւ է, ամեն մարդ՝ դժբախտ, ամենուրեք ճգնաժամ է, ամենուրեք հոգեվարք, երկիրը դժոխք է, ազգը՝ կործանված:

Չկա ազգային գաղափարախոսություն, չկա պետական ծրագիր, չկան տնտեսական բարեփոխումներ, չկա ժողովրդավարություն, չկա արտաքին հաղաքականություն, չկա, չկա ու չի լինի, բանի դեռ...

Ահա մոտավորապես Հայաստանի այն ողբերգական պատկերը, որ յոթ տարի շարունակ գծվում[1] է ընդդիմադիր մամուլում. ցանկության դեպքում, առանց ճիգ թափելու դեմ կարող եմ այն ավելի խտացնել ու մույլ դարձնել:

Իճարկե, տճաճ է լսել այս ամենը, մանավանդ, երբ դա մատուցվում է որպես վերին ճշմարտություն, որպես արդար դատավճիռ:

Բայց եթե դրանից սառնեղում ենք, եթե սկսում ենք մեղավորներ փնտրել մեր ներսում, ճշանակում է դեռեւս լավ չենք սերտել ժողովրդավարության այբուբենը:

Իրականում ոչ մի արտաոոց բան տեղի չի ունենում. իշխանությունն անում է իր գործը, ընդդիմությունն՝ իրենը: Իշխանությունն աշխատում է, ընդդիմությունը՝ հայհոյում, իշխանությունը սայթաքում է, ընդդիմությունը՝ ճոճվում, իշխանությունն արդարանում է, ընդդիմությունը՝ շարախնդում, իշխանությունը փորձում է լուծել ծագած խնդիրները, ընդդիմությունը ձգտում է նոր խնդիրներ ստեղծել նրա համար:

Աոտաոոց ոչինչ չկա, որովհետեւ այդպես է աշխարհի բոլոր ժողովրդավարական երկրներում:

[1] *Տպագրում՝ ընդգծվում է, բան ձեռագրի ուղղում ենք* գծվում է:

Եթե մարդու վրա տարածվում է ամմեղության կանխավարկածը, ապա իշխանությունների նկատմամբ գործում է հանցավորության կանխավարկածը. պետության մեջ ինչ էլ տեղի ունենա, մեղավորն իշխանություններն են:

Ընդդիմությունն, բան այդմ, միշտ գտնվում է հարձակվողի, իսկ իշխանությունը՝ պաշտպանվողի դերում:

Ընդդիմությունն ունի այն առավելությունը, որ հարձակումը, այսինքն՝ իշխանությունների ննձադատությունը, վարկաբեկումը, նզովումն ու դատապարտումը նրա միակ գործն է: Այլ հոգս կամ պատասխանատվություն, բան բարոզչությունը, նա չունի: Մենք եղել ենք ընդդիմություն, եւ դա շատ լավ գիտենք:

Իշխանություններն ու իշխող կուսակցությունն այս տեսակետից գտնվում են ավելի անբարենպաստ դիրքում. ընդդիմության բարոզչությունից պաշտպանվելուց բացի նրանք պետք է վարեն պետության ու հասարակության բոլոր գործերը: Մենք իշխանություն եւ իշխող կուսակցություն ենք, եւ սա նույնպես լավ գիտենք:

Ընդդիմությունն ունի եւս մի առավելություն. չկրելով որեւէ պետական պատասխանատվություն, հետեւաբար՝ չունենալով սխալվելու հնարավորություն, նա խելացի գործելու դեպքում կարող է անընդհատ բարձրացնել իր վարկանիշը: Միեչդեռ իշխանություններն իրենց գործունեության մեջ անխուսափելիորեն թույլ տալով սխալներ ու սայթաքումներ, շարունակ կանգնած են իրենց վարկանիշի անկման վտանգի առջեւ:

Սա նկատի ունենալով՝ միանգամայն բնական եմ համարում, որ մեր իշխանությունների եւ ՀՀՇ-ի վարկանիշը 1990–1991 թվականների համեմատ ակնհայտորեն ընկել է: Այս հանգամանքն, անշուշտ, խոոհելու ու մտածոդվելու տեղիք պետք է տա, բայց սրանից ողբերգություն չպետք է սարքել:

Իճարկե, որպես գործող իշխանություն մենք էլ ենք սխալներ թույլ տվել ու սայթաքել: Բայց եթե չսխալվեինք ու չսայթաքեինք անգամ, միեւնույն է, մեր հեղինակությունն ընկնելու էր, որովհետեւ աշխարհում դեռ ոչ մի իշխանության չի հաջողվել արդարացնել իր ժողովրդի բոլոր նույսերը:

Ինձ ցույց տվեք որեւէ իշխանություն, լինի դա Եւրոպայում, թե Ամերիկայում, որի ներքինակությունը ժամանակի ընթացքում չի ընկել. եթե այդպես լիներ, իշխանություններ երբեմ չէին փոխվի:

Ժողովրդավարական երկրներում իշխանությունների եւ ընդդիմության բարոզչական պայքարն ի վերջո ավարտվում է իշխանությունների պարտությամբ. եթե այդպես չլիներ, իշխանություններն էլ երբեմ չէին փոխվի:

Իշխանությունների եւ ընդդիմության բարոզչական պայքարն ուղղված է ոչ թե միմյանց համոզելու, այլ ժողովրդի վստահությունը շահելու նպատակին: Իշխանություններն ինչ էլ ասեն, միեւնույն է՝ ընդդիմությունը չի փոխելու իր տեսակետը, եւ հակառակը՝ ընդդիմությունն ինչ էլ ասի, իշխանությունները չեն ընդունելու նրա ասածները:

Ժողովրդավարական հասարակարգերում գրեթե իսպառ բացակայում է ինքնաճննադատությունը, որովհետեւ քննադատողներն այնքան շատ են, որ դրա կարիքը չկա: Ինքնաճննադատությունը հատուկ է ամբողջատիրական վարչակարգերին, բայց դա ոչ այլ ինչ է, եթե ոչ փարիսեցիություն: Ցուցադրական ինքնաճննադատությամբ զբաղվում էր սովետական բոնատիրությունը, որովհետեւ քննադատությունը խստիվ արգելված էր, եւ ժողովրդավարության պատրանք ստեղծելու այլ միջոց չկար: Սա՝ խիթիայլոց:

Վերադառնալով ժողովրդավարական հասարակարգերին, ապա նրանց շարժիչ ուժն, ինչպես տեսնում ենք, ընդդիմության եւ իշխանությունների անընդհատ բաղամական հակամարտությունն է, որը ժամանակավորապես լիցքաթափվում է պարբերաբար տեղի ունեցող ընտրությունների միջոցով:

Հայաստանյան իրականությունը ոչնչով չի տարբերվում այս ընդհանուր պատկերից, այդ պատճառով ՀՀՇ-ն ամենեւին կարիք չունի խուճապի մատնվելու:

Ընդդիմադիր ուժերն անողոք ու անճաշակ են ամենուրեք, նրանք եգնաժամ ու համընդհանուր կործանում են աճազանգում այնքան ժամանակ, բանի դեռ իրենք չեն եկել իշխանության գլուխ:

Սակայն, երբ փոխվում են իշխանությունները, փոխվում են նաեւ կողմերի դերերը. նախկին իշխանությունները հայտնվում են հարձակվող ընդդիմության, իսկ նախկին ընդդիմությունը՝ պաշտպանվող իշխանության դերում:

Նկատի ունենալով համընդհանուր այս օրինաչափությունները՝ մենք պետք է չափազանց սառնասրտորեն վերաբերվենք ՀՀՇ-ի վարկանիշի անկման փաստին:

Բոլոր դեպքերում, կարծում եմ, ՀՀՇ-ի վարկանիշն այսօր շատ ավելի ցածր կլիներ, եթե Հայաստանում ընդդիմություն գոյություն չունենար. կասկածում եմ անգամ, որ մենք կկարողանայինք իշխանության գլուխ մնալ ամբողջ յոթ տարի:

Ընդդիմության բացակայությունը անխուսափելիորեն հանգեցնում է իշխանությունների եւ իշխող կուսակցության պատասխանատվության նվազման, զգոնության թուլացման, ի վերջո՝ լճացման ու այլասերման: Այնպես որ՝ մենք երախտապարտ պետք է լինենք ընդդիմությանը, որի շնորհիվ կարողանում ենք պահպանել մեր կենսունակությունը:

Եթե մեր միակ մտահոգությունը կուսակցության վարկանիշը դիտվեր, ապա մեկ-երկու տարի առաջ իշխանությունը պետք է հանձնեինք ընդդիմությանը. շեմ կասկածում, որ ՀՀՇ-ի վարկանիշն այսօր տասնապատիկ ավելի բարձր կլիներ:

Իշխանությունների կամ իշխող կուսակցության վարկանիշն, այսպիսով, հարափոփոխ հասկացություն լինելով, ամենեւին էլ նրանց հեղինակության կամ գործունեության գնահատման օբյեկտիվ չափանիշը չէ:

Որեւէ իշխանության հիշ թե շատ ճշմարիտ գնահատականը կարելի է տալ միայն՝ նրա գործունեությունը համեմատության մեջ դնելով երկրի նախորդ կամ հաջորդ իշխանության գործունեության հետ:

ՀՀՇ-ն, դժբախտաբար, զրկված է համեմատվելու հնարավորությունից, բանի որ առայժմ Հայաստանի նորանկախ պետականության միակ իշխանությունն է: Մնում է սպասել, ուրեմն, ժամանակի հնությանն ու պատմության դատաստանին:

Իսկ ընդամենը մեկ-երկու տասնամյակ հետո մոռացվելու է այն ամենը, ինչ ՀՀՇ-ի եւ Հայաստանի ներկա իշխանությունների հասցեին ասվում է այսօր, մոռացվելու են բոլոր իրական հոգսերն ու դժվարությունները, մոռացվելու են շատ անուններ ու իրադարձություններ, եւ պատմությունը պարզապես արձանագրելու է հետեւյալ չոր փաստերը.

- ՀՀՇ-ի օրոք Հայաստանը վերանվաճեց իր անկախությունը.
- ՀՀՇ-ի օրոք Արցախը շահեց ազատագրական պատերազմը.

- ՀՀՇ-ի օրոք ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը.
- ՀՀՇ-ի օրոք Հայաստանում դրվեցին ժողովրդավարության, բազմակուսակցականության, պառլամենտարիզմի հիմքերը.
- ՀՀՇ-ի օրոք Հայաստանում ձեւավորվեց ազատ շուկայական տնտեսություն.
- ՀՀՇ-ի օրոք ստեղծվեց հայոց բանակը:

Ահա թե ինչն է, որ հատկապես մեզ չի ներվում, որ աճավոր կերպով ջղայնացնում է ընդդիմությանը:

Իրենք էլ գիտեն, մենք էլ գիտենք, որ նրանք վաղ թե ուշ գալու են իշխանության գլուխ եւ հնարավորություն ունենալու են ապացուցելու իրենց առավելությունը, կատարելու իրենց տպավորիչ խոստումները:

Բայց պետության հիմնադրի պատվից ու դափնիներից զրկվելը նրանց հանգիստ չի տալիս: Դրանով են բացատրվում ընդդիմության ջղանիզ հայերն ու երբեմն օրենքի սահմաններն անցնող վտանգավոր գործողությունները:

Նման հայերն ու գործողություններն արդարացնելու համար հնարվում են նշմարտանմման կամ բոլորովին շինծու տեսություններ:

Դիշեր-ցերեկ թմբկաճարվում է, թե իշխանությունը բռնազավթել են մի խումբ թալանչիներ, որոնց նպատակը ոչ ավել, ոչ պակաս՝ հայ ժողովրդի բնաջնջումն է: Ուստից վատբար ու ապազգային՝ որոնց դեմ գործված ցանկացած բռնություն արդարացված է, հանգի դա ազգային-ազատագրական պայքար է՝ ուստի սրբազան:

* * *

Այստեղ մենք ընդհուպ մոտենում ենք նորանկախ պետություններում ձեւավորվող ժողովրդավարության մի այլ օրինաչափության, որը որպես կանոն դրսեւորվում է գաղութատիրությունը թոթափած համարյա բոլոր երկրներում:

Հաղթանակած ազգային-ազատագրական շարժումներում (ինչպիսին նաեւ ՀՀՇ-ն է), երբ միանգամից չեն արդարանում անկախության հետ կապված վարդագույն հույսերը, շատ արագ առաջանում է երկու հաղթական հոսանք:

Մի հոսանքը դավանում եւ ձգտում է իրականացնել պետական կառույցների աստիճանական ձեւավորման, տնտեսության վերականգնման ու բարեփոխման դանդաղ, էվոլյուցիոն գործընթացը, փորձում է հաղթահարել հարեւան պետությունների հետ անցյալում կուտակված կենցոռտ հարցերն ու տարածայնությունները, ապահովել երկրի ներքին կայունությունն ու բայլ առ բայլ լուծել ժողովրդի կենսական շահերը շոշափող հարցերը:

Մյուս հոսանքը, օգտվելով անկախության անմիջական արդյունքների բացակայությունից, շահագործելով անցման շրջանին բնորոշ սոցիալական դժվարություններն ու ժողովրդի բնական դժգոհությունները, որեգրում է հեռաշներ խոստանալու եւ անիրականանալի ծրագրեր առաջադրելու հաղթականությունը: Բայց հանդիպելով ժողովրդի մի զգալի մասի շրջահայացությանն ու թերահավատությանը, նա կորցնում է հոգեկան հավասարակշռությունը, դիմում բռնությունների ու արկածախնդրությունների՝ վերջնականապես ընկնելով հեղափոխականության գիրկը: Արդյունքը լինում է՝ կա՛մ իշխանության գինված զավթում ու բռնատիրության հաստատում, որի օրինակներն անթիվ-անհամար են, կա՛մ ազգային աղետ, որը մեր աչքի առջեւ տեղի ունեցավ Աղրբեջանում եւ Վրաստանում, Էլչիբեյի եւ Գամսախուրդիայի օրոք:

Փորձը ցույց է տալիս, որ սովորաբար հաջողության են հասնում եւ բռնատիրությունից ու ազգային աղետից խուսափում այն ժողովուրդները, որոնք իշխանության ղեկը վստահում են առաջին հոսանքի ներկայացուցիչներին:

Հայաստանի հաղթական կյանքում նույնպես առկա են թե՛ էվոլյուցիոն զարգացումը ներկայացնող, թե՛ հեղափոխականություն դավանող հոսանքները. առաջինը՝ հանձինս ՀՀՇ-ի եւ ներկա իշխանությունների, երկրորդը՝ հանձինս ընդդիմության ծայրահեղ թեւի, այն է՝ ԱԺՄ-ի ու նրա դաշնակիցների:

Ի պատիվ մեր ժողովրդի, Հայաստանը, սակայն, առայժմ կարողացել է խուսափել հեղափոխականության աղետալի վտանգներից: Յոր տարվա ընթացքում մեզ մոտ գրանցվել է ընդամենը երկու տագնապալի հաղթական իրավիճակ. մեկը՝ ՀԱՔ-ի լուծարման օրերին, մյուսը՝ 1996 թվականի սեպտեմբերի 25-ին:

ՀԱՔ-ի ըմբոստությունը հաղթաՀարվեց շատ արագ եւ չունեցավ լուրջ հետեւանքներ. հակառակը՝ Հայաստանն այդ եզնաժամից դուրս եկավ ավելի հասուն եւ ուժեղացած:

Դժբախտաբար նույնը չի կարելի ասել ԱԺՄ-ի գլխավորած սեպտեմբերյան հեղաշրջման փորձի մասին, որն աՀավոր հարված հասցնելով Հայաստանի ժողովրդավարական համարումին ու միջազգային վարկին, լուրջ վտանգի ենթարկեց երկրի ներքին կայունությունը եւ փաստորեն դարձավ հայ ժողովրդի պատմության ամենախայտառակ էջերից մեկը:

Զկարծեմ, թե չափազանցում եմ, հակառակը՝ դեռ շատ մեղմ եմ արտահայտվում. ամերիկյան պետհարտուղարության հայտարարության մեջ ԱԺՄ-ի ձեռնարկած բռնությունը որակվեց որպես ֆրուստրացիա, որը պարզապես բժշկական տերմին է:

Ո՞վ չաՀեց դրանից. ո՛չ ոք, բացի մեր չարակամներից: Եթե շահեր գոնե Ազգային համաձայնության դաշինքը, գուցեեւ այդ արկածախնդրությունն արդարացված համարվեր:

Ստանալով ընտրողների ձայների 41 տոկոսը՝ Դաշինքը ձեռք էր բերել այնպիսի կապիտալ, որը նրան հնարավորություն էր տալիս առաջիկա հինգ տարիների ընթացքում հանդես գալ որպես լուրջ հաղթական կազմակերպություն եւ օրինական ճանապարհով հասնել իր նպատակների իրականացմանը: Սեպտեմբերյան խելահեղությամբ, սակայն, ԱԺՄ-ի առաջնորդը մի վայրկյանում վատնեց այդ աՀռելի կապիտալը՝ փաստորեն դավաճանելով ու չափազանց ծանր կացության մատնելով իր հաղթական դաշնակիցներին:

Եթե դեռեւս այս գնահատականը դաշնակիցների կողմից արտաբերվում է բավական երկչոտ, ապա անկասկած՝ վաղը դառնալու է տիրապետող ու միանշանակ:

Դաշինքն, ըստ էության, արդեն գոյություն չունի: Սակայն նրա անդամներից ոչ ոք առայժմ չի համարձակվում դուրս գալ նրանից, վախենալով կրել Դաշինքը բայթայողի պիտակը, թեեւ բոլորին հայտնի է, թե ով է բայթայողը:

Սեպտեմբերի 25-ին ծագած հաղթական եզնաժամն այսօր, ըստ էության, լիովին հաղթահարված կարելի է համարել: Վերականգնված է Հայաստանի ներքին կայունությունն ու հաղթական հավասարակշռությունը, ապահովված է հասարակական անդորրն ու անվտանգությունը, պետության բոլոր կառույցները գործում են սովորական ռեժիմով:

Սա ձեռք է բերվել, անշուշտ, ոչ միայն Դաշինքի ներսում առաջացած հակասությունների ու տարաձայնությունների պատճառով, այլեւ իշխանությունների նպատակասլաց ու հաշվենկատ գործողությունների շնորհիվ:

Կառավարության կազմում տեղի ունեցած լուրջ կադրային փոփոխությունները, երկու վարչապետների հաջող նշանակումները, խորհրդարանի ակտիվ օրենսդրական գործունեությունը, հանցագործությունների ու անօրինականությունների դեմ պայքարի որոշակի ուժեղացումը, հակային եւ մասնային համակարգերի աշխատանքի արդյունավետության բարձրացումը, ընդդիմության հետ սկսված կառուցողական երկխոսությունը աստիճանաբար թուլացրին հասարակական լարվածությունը՝ երկրի հաղթական կյանքը մտցնելով բնականոն հունի մեջ:

Զգնաժամը թեեւ հաղթահարված է, բայց դա դեռեւս չի նշանակում, որ հեղափոխականության վտանգը Հայաստանում իսպառ վերացել է:

Քանի դեռ ժողովրդի սոցիալական վիճակը մնում է ծանր, քանի դեռ տնտեսական ոլորտում լուրջ տեղաշարժ չի արձանագրվել, քանի դեռ պետության մեջ լիակատար կարգուկանոն եւ օրինականություն չի ապահովվել, հեղափոխականության վտանգը կա եւ կմնա:

Պատահական չէ, որ անգամ սեպտեմբերյան արկածախնդրությունից հետո ԱԺՄ-ն չի դադարեցրել բռնության բացահայտ կոչերն ու հռչակված սպառնալիքները: Նույնպես պատահական չէ, որ ընդդիմությունից միայն ԱԺՄ-ն է մերժել իշխանությունների կողմից բազմիցս կատարված երկխոսության առաջարկները:

Բացի բռնության դիմելու հավանականությունից, հեղափոխականությունը վտանգ է ներկայացնում նաեւ մի այլ, եթե կուզեք գաղափարախոսական կամ զուտ հաղթական առումով:

Հեղափոխական ընդդիմությունը ոչ թե իշխանությունների հետ վիճարկում է սոցիալ-տնտեսական բնույթի առանձին հարցեր կամ ներքին ու արտաքին հաղթականությանը վերաբերող մասնավոր խնդիրներ՝ փորձելով նպաստել այդ հարցերի ու խնդիրների բարեհաջող լուծմանը, այլ ըստ էության հարցականի տակ է դնում պետության ողջ կառուցվածքն ու գործունեությունը:

Նա պահանջում է շեղյալ համարել խորհրդարանական, նախագահական եւ տեղական ընտրությունները, վերացնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, լուծարել մարզպետարաններն ու տեղական ինքնակառավարման մարմինները, վերանայել հարեւան պետությունների հետ վարվող խաղաղասիրական հաղորդակցությունը, դադարեցնել անտեսական բարեփոխումներն ու սեփականաշնորհման գործընթացը՝ եւ այս ամենը հողարկելով հայրենասիրության, սոցիալական դեմագոգիայի ճոռոմ ու հավակնոտ տերմինաբանությամբ:

Ընդդիմության այդ թեւն իրականում խնդիր է դնում բանդել ամեն ինչ, խարխլել պետության հիմքերը եւ երկիրը վերադարձնել, լավագույն դեպքում, 1991 թվականի վիճակին՝ ժողովրդին վերապահելով անցած տարիների ողջ տառապանքներն ու դժվարությունները վերապրելու աւելորդ բեռը:

Խղճի խայթ պետք չէ, ժողովուրդն արժանի է նման խիստ պատժի, որովհետեւ չի գիտակցել, որ յոթ տարի շարունակ սխալ է ապրել, սխալ ընտրություն կատարել ու հեղափոխականների արժանիքը չի գնահատել:

Հեղափոխականությունն, այսպիսով, մնում է Հայաստանի ներհաղորդական կյանքի ամենալուրջ վտանգը՝ լուրջ նաեւ այն պատճառով, որ այն խրախուսվում է որոշ օտար ուժերի կողմից, նրանց հնարավորություն տալով միջամտելու մեր ներքին գործերին: Չնմ ուզում գերագնահատել, բայց այդ գործոնն առկա է, եւ միամտություն կլիներ կարծել, թե օտարները չպետք է օգտվեն մեր ներքին հակասություններից:

Հեղափոխականության հաղթահարումն, ուստի, պետք է դառնա մեր մտավորականության, հասարակական կազմակերպությունների, առողջ հաղորդական ուժերի, վերջապես՝ ողջ ժողովրդի գերագույն խնդիրը:

Այստեղ է, որ ՀՀՇ-ն պետք է դրսեւորի բացառիկ հաղորդական կամք եւ եռանդուն բացատրական կարողություններ՝ օգտագործելով հարուցչական բոլոր հաղորդակիրք միջոցներն ու օրինական հնարավորությունները:

Սա նախ եւ առաջ ՀՀՇ-ի ու մյուս կառուցողական ուժերի պարտքն է, որովհետեւ գաղափարախոսական պայքարը պետք է մղվի ոչ թե իշխանությունների եւ ընդդիմության միջեւ, ինչի դա միշտ կարող է շահարկվել օտարների կողմից, այլ՝ հորիզոնական մակարդակով, այն է՝ հաղորդական եւ հասարակական կազմակերպությունների միջեւ:

Այս դերն ստանձնելով՝ ՀՀՇ-ն ու նրա դաշնակիցները պետք է թեթեւացնեն իշխանությունների բեռը՝ դրանով իսկ նրանց հեռու պահելով արտաքին ճնշումներից:

Ժողովրդին հեղափոխական բախտախնդրության վտանգներից զերծ պահելու գործում ես չափազանց կարեւոր եմ համարում նաեւ Հայաստանի մտավորականության, ստեղծագործական միությունների, Ազգային ակադեմիայի, բարձրագույն ուսումնական հաստատությունների, մամուլի միջոցների, գործարար աշխարհի դերը:

Քաղաքական դաշտում բոնությունների ու օրինազանցությունների նկատմամբ պետք է ստեղծել համատարած անհանդուրժողականության ու անթույլատրելիության մթնոլորտ, այլապես ժողովուրդը չի կարող իրեն լիովին ապահովված ու պաշտպանված զգալ: Այս ամենը, սակայն, հեղափոխականության հաղթահարման թեեւ անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ:

Հեղափոխականության վերջնական վտանգազերծումը կախված է մի կողմից այն բանից, թե իշխանություններին որքանով կհաջողվի բարելավել ժողովրդի սոցիալական վիճակը, առողջացնել երկրի տնտեսությունը, լուծել պետության առջեւ կանգնած կենսական խնդիրները՝ դրանով իսկ խլելով հողը սոցիալ-դեմագոգների ոտի տակից, իսկ մյուս կողմից՝ այն հանգամանքից, թե Հայաստանում ինչպես կզարգանա արդիական հաղորդական կուսակցությունների ձեւավորման գործընթացը:

Ժողովրդավարության բնականոն զարգացման դեպքում Հայաստանում վաղ թե ուշ, ու թերեւս որոշ յուրահատկություններով, ստեղծվելու է հաղորդական ուժերի դասական համակարգ, այն է՝

Աջ-կենտրոն (լիբերալ-դեմոկրատներ կամ քրիստոնյա-դեմոկրատներ),

Ձախ-կենտրոն (սոցիալիստներ կամ սոցիալ-դեմոկրատներ),

Աջ-ծայրահեղականություն (լիբերալ ազգայնականներ),

Ձախ-ծայրահեղականություն (կոմունիստներ եւ ազգայնական սոցիալիստներ):

Ասպարեզում թեեւ բոլոր նշված ուժերն էլ կարծես թե առկա են, բայց նրանք ըստ էության գտնվում են դեռեւս սաղմնային վիճակում, ուստի ձեւավորված հաղորդական համակարգի մասին դեռ վաղ է խոսել:

Քիչ թե շատ ձեւավորված է Աջ-կենտրոնը՝ հանձինս ՀՀՇ-ի ու նրա դաշնակիցների, եւ Ձախ-ծայրահեղականությունը՝ հանձինս կոմու-

նիստերի ու դաշնակցականների: Աջ-ծայրահեղականությունը ներկայացնում են ԱԺՄ-ն ու նրա գաղափարակիցները:

Բայց սա ինչ-որ չափով զուտ պայմանական բաժանում է, որովհետեւ հաղթական ուժերի դասավորման լուրջ փորձ դեռեւս Հայաստանում չի կատարվել: Աջ-կենտրոնի ստեղծման ամենահաջող փորձն առայժմ մնում է «Հանրապետություն միավորումը», որը ես դիտում եմ նաեւ Հայաստանի հաղթական կյանքի ամենակայուն տարրը:

Ինչպես տեսնում ենք, համարյա լրիվ թափուր է Ձախ-կենտրոնը, որը պետք է զբաղեցնեին սոցիալիստներն ու սոցիալ-դեմոկրատները:

Սա ես համարում եմ Հայաստանի ներհաղթական դրության ամենավտանգավոր պահը, որովհետեւ բանի դեռ չի ձեւավորվել Ձախ-կենտրոնը, այդ դաշտն անխուսափելիորեն գրավում են աջ ու ձախ ծայրահեղականները: Ժողովրդի սոցիալական պահանջների բավարարմանն ուղղված առողջ գաղափարախոսության տիրույթը, փաստորեն, ներխուժում է սոցիալական դեմագոգիան՝ նացիոնալ-սոցիալիզմի ակնհայտ դրսեւորումներով ու իր բոլոր աղետալի հետեւանքներով:

Ուժեղ եւ իրար լրիվ հակակշռող Աջ եւ Ձախ կենտրոնների ձեւավորումն, ըստ այդմ, պետք է դառնա Հայաստանի հաղթական կյանքի առողջացման կարեւորագույն խնդիրը, որի իրագործմանը պետք է ուղղվեն ինչպես երկրի կայունությամբ մտահոգ բոլոր ուժերի, այնպես էլ իշխանությունների հետեւողական ջանքերը:

Միայն այս դեպքում է, որ ծայրահեղական ուժերը հաղթական դաշտում վերջնականապես կզրավեն իրենց բնական լուսանցային տեղը, ինչպես տեղի է ունենում աշխարհի բոլոր հաղթական երկրներում: Եւ միայն այս դեպքում է, որ Հայաստանը վերջնականապես կկարողանա խուսափել հեղափոխականության վտանգից:

Ոռեւէ երկրի կայունությունը, անվտանգությունն ու բնականոն զարգացումն, ի վերջո, ապահովում են ոչ թե ուժեղ պետական մարմիններն, այլ հզոր հաղթական ինստիտուտներն ու հաղթացիական կառույցները:

Ես չեմ կասկածում, որ Հայոց համազգային շարժումը, համախմբելով իր շարքերը, շարունակ վերաճննելով ու արդիականացնելով իր գաղափարախոսությունը, ընդլայնելով աջ ուժերի կոալիցիան՝ ընդհուպ մինչեւ ազատական-ժողովրդավարների ամուր համադաշնության ստեղծումը, մնալու է որպես Հայաստանի հաղթական կյանքի մշտական գործոն, եւ այսուհետեւ ես իր պատկառելի նպատակ է բերելու պետականության ամրապնդման ու երկրի զարգացման բախտորոշ գործին:

* * *

Սիրելի գինակիցներ,

Քանի որ իմ ելույթը նախատեսված էր կուսակցական համագումարի համար, այդ պատճառով ես ծանրացա բացառապես ներհաղթական իրավիճակի վրա: Բայց Հանրապետության Նախագահի պարագայում ամենեւին չի հասկացվի, եթե գոնե թռուցիկ կերպով չանդրադառնամ նաեւ պետական կարեւորություն ունեցող որոշ այլ խնդիրների, մասնավորապես՝ Հայաստանի սոցիալ-անտեսական զարգացման հեռանկարներին եւ արցախյան հակամարտության կարգավորմանը:

Առաջին հարցի կապակցությամբ ես ընդամենը մեկ տարի առաջ հանդես եմ եկել ընդարձակ նախընտրական ծրագրով, ուստի չեմ կարծում, թե այսօր կարիք կա կրկնել այդ ամենը: Հարկ եմ համարում միայն եւս մեկ անգամ հավաստիացնել, որ ես լի եմ վճռակամությամբ՝ ամբողջովին իրագործելու նշված ծրագիրը, իհարկե, ձեր անմիջական մասնակցությամբ եւ ամենագործոն աջակցությամբ:

Ինչ վերաբերում է արցախյան խնդրի կարգավորմանը, ապա, ինչպես ձեզ հայտնի է, երեմ մեծ պետությունների համաձախազահությամբ այն մտել է նոր, թերեւս, վճռական փուլ:

Մեզ է ներկայացվել հարցի կարգավորման մի փոխզիջումային ծրագիր, որի մանրամասները, դժբախտաբար, դեռ չեմ կարող բացահայտել, բանի որ համաձախազահների ու հակամարտող կողմերի փոխպայմանավորվածությամբ այն առայժմ գաղտնի է պահվում:

Գաղտնին անպայման դավադրություն չի նշանակում: Սա պարզապես միջազգային դիվանագիտական պրակտիկա է՝ ճեշտացնելու համար բանակցությունների գործընթացը, այն հեռու պահելով ավելորդ աղմուկից ու պրոպագանդիստական շահարկումներից: Բավական է հիշեցնել, որ արաբա-իսրայելյան կարգավորման ներկա գործընթացին նախորդել են տարիներ տեւած գաղտնի բանակցություններ:

Հասկանալի է, որ գաղտնի է ընթանալու միայն բանակցությունների փուլը, իսկ համաձայնությունների կայացումից հետո, բայց վերջնա-

կան պայմանագրերի ստորագրումից առաջ, կարգավորման ծրագիրը, բնականաբար, ներկայացվելու է ինչպես մեր, այնպես էլ Արցախի եւ Ադրբեջանի ժողովուրդների դատին:

Կարճ ասած, ղարաբաղյան կարգավորման գործընթացն այսօր գտնվում է փոխզիջումների որոնման դժվարին ճանգրվանում:

Մի բանում ձեզ կարող եմ լիովին վստահեցնել. Հայաստանը երբեւէ չի ստորագրի որեւէ փաստաթուղթ, որի տակ չի լինի նաեւ Լեռնային Ղարաբաղի ստորագրությունը:

Վերջում թույլ տվեք շնորհավորել բոլորիդ համագումարի բարեհաջող ընթացքի կապակցությամբ, շնորհավորել ՀՀՇ վարչության նորընտիր անդամներին եւ ձեզ մաղթել նոր հաղթանակ՝ հաջորդ խորհրդարանական ընտրություններում:

«Հայաստանի Հանրապետություն», 15 հուլիսի, 1997 թ.: Հրատարակված՝ «Իշխանությունների կամ իշխող կուսակցության վարկանիշը ամննեւին էլ նրանց հեղինակության կամ գործունեության գնահատման օբյեկտիվ չափանիշը չէ» վերնագրով: ՅՅԱՆԱ, 28/13.06.97: Բնագիր: Ինքնագիր:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻՆ

(սեպտեմբեր, 1997 թ.)

... Դա մի շրջանակ էր, եւ եթե նրանցից՝ երիտասարդ ֆիզիկոսներից, բանասերներից, մաթեմատիկոսներից, փիլիսոփաներից եւ նրանց ընկերներից, եւ նրանց համալսարանական համախոհներից ու դասախոսներից ոմանք էլ իրար անձամբ չէին ճանաչում, ապա անպայման հանդիպել էին եւ գոնե ինչ-որ կերպ, ընկերների միջոցով (Երեւանը «նեղ» քաղաք է) նրանք բոլորը ծանոթ էին եւ հաճախում էին նույն բնակարանները, նույն թատրոնները, նույն ռեստորանները: Նրանք կարդում եւ փոխանցում էին միեւնույն «սամիզդաւտը» (իսկ Երեւանն ասես ափի մեջ է), իսկ հետո նրանց հերոսացնում էին, դուրս էին անում, հարցաքննում էին: Ունանց նստեցնում էին: Իսկ հետո այդ շրջանակի մի մասը դարձավ իշխանություն: Եւ դա հաղթարշավ էր, քանի որ իշխանությունը՝ բարձրագույնը, իրենցն էր:

*Սակայն այդ **սեփական իշխանությունը** երեւույթը, պարզվեց, չափազանց հարուստ է նրբերանգներով:*

Իշխանությունն ունի իր ներքին օրենքները, դրանք խորթ են երեկվա դասընկերներին, եւ իրրեւ դասընկերներ նրանք չեն ներում... ոչ, ոչ իշխանության, այլ՝ նախկին ընկերների որեւէ վրիպում: Եւ հետո հին ընկերությունը տարօրինակ երանգ է ստանում, հին ընկերությունը վերածվում է իշխանությանը հատուկ ձեւով հագիստելու հատուկ իրավունքի: Այդ իրավունքով ոչ ոք չի էլ պարծենում, սակայն օգտվում է դրանից: Որովհետեւ տարօրինակ է. մի երկրում, ուր աշխատավարձը քսան դոլար է, հողի փոխարեն լեռներ են, շարունակվում է Ղարաբաղը, եւ ելքն էլ առանձնապես չի երեւում, իշխանությունն ու ընդդիմությունը կազմված են միեւնույն Լեֆորտովոն անցած միեւնույն լիբերալ մտավորականներից: «Այն ժամանակվա Լեւոնը եւ այժմյան Լեւոնը, ցավոք, երկու բացարձակապես տարբեր մարդիկ են»,– երկար ու կրքոտ համոզում էր ինձ մի հայ բանասեր: «Սակայն ահա սրանց համար,– եւ զրուցակիցս թվարկեց բանասեր Տեր-Պետրոսյանի մի քանի մենագրություններ,– նրան կարելի է ամեն ինչ ներել...»: Տեր-Պետրոսյանը Սորբոնի պատվավոր դոկտոր է: Ոչ իրրեւ Նախագահ, այլ իրրեւ գիտնական...

Իշխանությունն էլ, ինչպիսին էլ այն լինի, ենթակա է չգրված օրենքների: Ողջ հետխորհրդային տարածքում Լեւոն Տեր-Պետրոսյանն իր նախագահական ստաժով կարող է համեմատվել միայն Ելցինի հետ: Այս տարիների ընթացքում նրա մերձավոր շրջապատում այն

ժամանակվա մարդիկ համարյա չեն մնացել: Նրա ամենամոտ ընկերներից մեկը գլխավոր ընդդիմադիրն է, մյուսը՝ ԽՍՀՄ-ը վերականգնելու համար ստորագրություններ է հավաքում, երրորդն իշխանություն չունի, սակայն նրանք առաջվա պես տանու մարդիկ են, նա ժպտուն է ու արտաքաց, նրանք ժամերով զրուցում են, սակայն այս ամենը չեն խախտում Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ լռակյացի համբավը:

Հետխորհրդային նախագահներից ոչ մեկն այնքան ժլատ չէ հարցազրույցներ տալու խնդրում, որքան Հայաստանի Նախագահը: Վերածննդի տարիների կրքոտ հռետորը այսօր բարեհամբույր անհողդողդությամբ մերժում է լրագրողական ցանկացած առաջարկ՝ խոսել այն մասին, ինչի շուրջ Նախագահը ցանկություն չունի խոսելու:

«Ձեր ներփակությունը հավատո հանգանակն է»: «Հավատո հանգանակն,– մտախոհ ասաց Նախագահը,– ոչ, հավանաբար, բնավորություն է: Ես պարզապես չեմ ցանկանում այդ ամենով զբաղվել»:

Եւ չի զբաղվում: Ընդհանրապես, ասում են, համարյա անհնար է Լեւոն Տեր-Պետրոսյանին համոզել անել այն, ինչն անելն իր համար տհաճ է: Կամ՝ անհետաքրքիր: Բնավորությո՞ւն է:

«Հավանաբար ես ինչ-որ բան թերագնահատում եմ, ինչ-որ բան կորցնում, սակայն ինձ համար պարզապես ձանձրալի է խոսելը»:

«Լավ վերջաբան է հարցազրույցի համար...»,– ծիծաղեց Տեր-Պետրոսյանը:

– Մոսկվա կատարած Ձեր այցը թե՛ զգացմունքային, եւ թե՛ զուտ քաղաքական իմաստներով ընկալվեց որպես կովկասյան խնդիրների նկատմամբ Ռուսաստանի նոր, առավել հավասարակշռված մոտեցման դրսեւորում: Ի՞նչ հեռանկարներ են բացում այդ այցի արդյունքները Հայաստանի համար:

– Ամենից առաջ, Ռուսաստանի հետ մեր նոր պայմանագիրը պետք չէ ընդունել որպես անակնկալ: Դա Ռուսաստանի հետ մերձեցման ներքաղաքական համաբաանական բայլն էր: Չէ՞ որ Հայաստանն առաջինն էր միացել Բելովեժյան համաձայնագրին, Հայաստանը ԱՊՀ բոլոր գործող համաձայնագրերի՝ թե՛ կոլեկտիվ անվտանգության ուժերի, թե՛ սահմանների հնամատեղ պաշտպանության, թե՛ ՀՕՊ-ի հնամատեղ համակարգման, եւ թե՛, իհարկե, բոլոր տնտեսական պայմանագրերի ամենաակտիվ մասնակիցն է: Բացառությամբ մաքսային միության: Բայց այստեղ էլ որեւէ հակասություն գոյություն չունի: Չկան հնամատեղ սահմաններ, եւ հաշվարկները ցույց են տալիս, որ ո՛չ Հայաստանը, ո՛չ Ռուսաստանը ոչինչ չեն շահում: Իսկ Հայաստանի համար լրացուցիչ բարդություններ կծագեն արտահին առեւտրում: Մենք ռուսական կողմին բացատրեցինք մեր տեսակետը եւ հանդիպեցինք լիակատար ըմբռնման:

Եւ հիմա նոր պայմանագիր՝ մի կարգ բաներ 1991-ին ստորագրված պայմանագրից, որն ավելի շուտ ջերմ հարաբերությունների արտահայտություն էր:

– Որոնք պետք էլ չէ՞ր վավերացնել:

– Այո, բայց չէ՞ որ դուք հիշում եք Բելովեժյան համաձայնագրից անմիջապես հետո ստեղծված իրադրությունը: Հարկավոր էր ամբողջ աշխարհին ապացուցել, որ ԽՍՀՄ փլուզումը դեռ չի նշանակում կապերի խզում Ռուսաստանի հետ: Իսկ հիմա ամենայն որոշակիությամբ ընդգծվում են դաշնակցային հարաբերությունները: Եւ ես ուրախ եմ, որ Ռուսաստանը գնաց դրան: Ես չէի ցանկանա մեկնաբանել ռուսական դիւրորոշումը, բայց ուրախ եմ, որ Ռուսաստանը ձերբազատվում է բարդույթներից, կայսերական դիւրորոշումների մեջ մեղադրվելու վախից եւ բացեիբաց արտահայտում է իր դաշնակցային շահերը: Դա շատ կարեւոր է, բանի որ... հավանաբար նման հոգեբանական պատնեշ գոյություն ուներ:

Իսկ մենք դրա հետեւում տեսնում ենք մեր տնտեսական կապերի պահպանումը: Դրանից զատ, անկախության առաջին օրից ի վեր մեզ հուզում էր եւս մեկ հարց. ինչպե՞ս չհայտնվել անվտանգության վակուումի մեջ: Եւ ԱՊՀ-ն մենք դիտում ենք որպես անվտանգության հնամակարգ: Ժամանակի հետ ակնհայտ դարձավ, որ դա այնքան էլ արդյունավետ չէ, եւ այժմ մենք գտանք այլընտրանք՝ երկկողմ հարաբերությունների ամրապնդումը Ռուսաստանի հետ:

– Արդյո՞ք այդպիսի մոտեցումը առավել լայն երեւույթի՝ կոլեկտիվ համաձայնագրերի հանդեպ երկկողմ պայմանագրերի գերակայության դրսեւորում չէ:

– Այո, կան այդպիսի մոտեցումներ: ԱՊՀ մի բանի անդամներ ընդհանրապես խուսափում են կոլեկտիվ ծրագրերից եւ ձգտում են ամեն ինչ տեղափոխել երկկողմ հարաբերությունների հարթություն: Մեզ մոտ նման բան չկա, բայց մենք համաձում ենք, որ այնտեղ, ուր կոլեկտիվ պայմանագրերը չեն գործում, իրոք, պետք է այդ բացը լրացնել՝ ոչ մի դեպքում, սակայն, չհակադրվելով ԱՊՀ-ին:

– Կոլեկտիվ համաձայնագրերի նկատմամբ իրենց վերաբերմունքն արդեն համարյա որոշակիացրած պետություններից մեկը Ադրբեջանն

է: Այսուհանդերձ, Երեւանի եւ Մոսկվայի երկկողմ պայմանագրերին Բաքուն բավականին նյարդային արձագանքեց:

– Ինձ թվում է՝ Ադրբեջանի այդպիսի արձագանքը միջազգային փոխհարաբերությունների էթիկայի խախտում է: Պայմանագրի կնքումն իմ-նիշխան Հայաստանի եւ իմ-նիշխան Ռուսաստանի իրավունքն է: Ես աղդեն չեմ ուզում խոսել այն մասին, որ այդ արձագանքն ուղղակի միջամտություն է Ռուսաստանի եւ Հայաստանի ներքին գործերին: Եթե Ադրբեջանը չի ուզում ագրեսիա սանձազերծել Հայաստանի դեմ, ապա հասկանալի չէ, թե ինչո՞ւ է ջղագձվում: Չէ՞ որ մենք պարզորոշ գրել ենք պայմանագիրը գործում է միայն ագրեսիայի վտանգի դեպքում:

– Եւ, այնուամենայնիվ, դա ոչ թե զուտ մարդկային հակազդեցություն է, ինչը հասկանալի կլիներ, այլ, անկասկած, մտածված քաղաքական դեմարշ, որը, ինչպես երեւում է, որոշակի նպատակներ ունի:

– Այո, ես կարծում եմ, որ Ադրբեջանը մի ինչ կեղծում է: Բարվում չեն հավատում, թե Հայաստանն Ադրբեջանի դեմ ինչ-որ ագրեսիվ գործողություններ է նախապատրաստում: Պարզապես այնտեղ չեն ուզում, որ Հայաստանը դառնա նորմալ պետություն: Եւ կառուցողական ցանկացած բայլ, որն ամրապնդում է հայկական պետականությունը, Բարվի համար դառնում է անհանգստության գործոն: Նրանց գրգռում է ցանկացած տնտեսական ծրագիր, որն Արեւմուտքն իրականացնում է Հայաստանի հետ, լինի դա Միջազգային աոժութային հիմնադրամը, Համաշխարհային բանկը, թե մաղադսիական որեւէ կազմակերպություն. ես չեմ հիշում որեւէ նման դեպք, երբ Ադրբեջանը չդրսեւորի իր գրգռվածությունը: Անգամ Թուրքիայի հետ մեր հարաբերությունների նորմալացման ձգտումը Ադրբեջանի համար դարձել է բաղաքական պրոբլեմ: Այսինքն՝ Ադրբեջանը, զուգե իր տեսակետից նույնիսկ շատ տրամաբանական, խոչընդոտներ է հարուցում հայկական պետականության զարգացման համար:

– Անկարայի հետ հարաբերությունների բարելավման արտահայտությունը նաեւ Ռուսաստան – Հայաստան – Թուրքիա գագաթարն է, որի մասին, եւս, որքան հայտնի է, Մոսկվայում խոսք է եղել:

– Բնականաբար, եւ դա նույնպես Ադրբեջանի համար անհանգստության ազդակ է: Բայց նրանի ընդհանրապես մեր ցանկացած նախագծի

հանդեպ փորձում են խոչընդոտներ ստեղծել: Նրանց գրգռում են Իրանի հետ մեր բնականոն հարաբերությունները: Նաեւ՝ Չինաստանի, նաեւ Հնդկաստանի, բոլորի՛:

– Եկեք վերադառնանք ոչ հեռու ռոմանտիկ ժամանակները. «Ղարաբաղ» կոմիտե, հազարավոր մարդիկ Օպերային թատրոնի հրապարակում, հետո Հայոց համազգային շարժումը: Եւ բոլոր այդ հաղթարշավները... Իսկ հետո, պատահեց այն, ինչը պատահեց մյուս նոր պետություններում, ու ՀՀՇ-ն արժանացավ այլ ժողովրդական շարժումների՝ Ռուխի, Սայուդիսի ճակատագրին: Բայց ՀՀՇ-ի համար, ինչպես երեւում է, դա լի էր յուրահատուկ դրամատիզմով: Շարժումը միավորել էր իրապես լիբերալ կողմնորոշմամբ մտավորական համախոհների, ինչը չկար ո՛չ Ռուսաստանում, ո՛չ Լիտվայում, ո՛չ Ուկրաինայում:

– Ես միայն մասամբ կհամաձայնեմ ձեր հարցադրմանը, որովհետեւ ձեր բերած համեմատությունները միաժամանակ ե՛ւ ճիշտ են, ե՛ւ ոչ: Այո՛, ժողովրդավարական բոլոր շարժումներում պրոցեսները շատ բանով նմանատիպ են: Բայց կա նաեւ մեծ տարբերություն. ԱԱՇ-ն այսօր էլ մնում է իշխանության:

– Բայց արդյո՞ք դա նույն ՀՀՇ-ն է:

– Իսկ ինչո՞ւ ոչ: Ես նույն մարդն եմ, ինչ էի 88 թվականին: Պարզապես մենք ունենք անջատողականներ: Նրանք հեռացել են, իսկ ԱԱՇ-ն մնացել է:

– Այդ դեպքում հարցս այլ կերպ ձեւակերպեմ, ժողովրդավարական շարժումը դառնալով իշխող կուսակցություն, չի՞ փոխվում:

– Իհարկե, փոխվում է: Զեւափոխումներ կան, տարբեր, հաճախ անցանկալի պրոցեսներ...

– Եւ գալիս է մի պահ, ու Հայաստանը դատապարտվում է կատարել տարօրինակ ընտրություն՝ ե՛ւ Լեֆորտովոն, ե՛ւ Օպերային հրապարակի հարյուր հազարանոց միտինգները անցած երկու ընկերների եւ համախոհների՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Վազգեն Մանուկյանի միջեւ: Եւ այդ ընտրությունն ավարտվում է փողոցային հակամարտությամբ...

– Այստեղ կան գաղափարական, բայց կան եւ անձնական պահեր: Այն, որ Վազգեն Մանուկյանն այլ մոտեցումներ ունի, նորմալ է: Դա գոյու-

թյուն ուներ նաեւ «Ղարաբաղ» կոմիտեում: Մենք ունենում էինք շատ բուռն բննարկումներ, եւ հաճախ ես հայտնվում էի մեկուսացման մեջ:

– Օրինա՛կ:

– Օրինակ. 88-ի նոյեմբերին մենք բննարկում էինք Դորբաչովի այն ժամանակվա ընտրական օրենքը: Շատ թունդ բանավեճ եղավ: Մերոնք շատ ծայրահեղ էին տրամադրված՝ լիովին մերժել, իսկ ես, նկատի առնելով բաղաքական իրավիճակը, ապացուցում էի, որ նման մոտեցումը շատ վտանգավոր է: Եւ ես ճիշտ դուրս եկա: Ես այն ժամանակ հասկացա, որ Դորբաչովի համար դա պարզ բաղաքական խնդիր չէր, այլ՝ անձնական խնդիր էր:

Եղել են նաեւ այլ իրավիճակներ, երբ նույն Վազգենն է մնացել մենակ: Զգիտեմ, արժե՞, արդյոք, հիմա անձնական պահեր շոշափել, եւ չգիտեմ՝ կհավատա՞ն ինձ, բայց... Կա մի փաստ. Վազգեն Մանուկյանը չկարողացավ հաշտվել երկրորդ դեմ լինելու իրողության հետ: Երբ «Ղարաբաղ» կոմիտեն որոշեց, որ ես եմ լինելու Գերագույն Խորհրդի նախագահը, այսինքն, երկրի ղեկավարը, այդ օրվանից Վազգեն Մանուկյանը համաբեց, որ մեզ հետ գործ չունի: Թեպետ նա դեռեւս վարչապետ էր, բայց արդեն վեց-յոթ ամիս բացահայտ գնում էր ղեպի անջատում: Վազգենը մի մարդ է, որը չի ուզում լինել երկրորդը: Այլ գաղտնիք չկա:

– Դուք նկարագրեցիք տեղի ունեցած տարանջատման, այսպես ասած, անձնական կողմը: Բայց ակնհայտ է, որ կա եւ որոշակի գաղափարական հակասություն:

– Գաղափարական առումով մեր մեջ տարբերությունը հետեւյալն է. ես աստիճանական, էվոլյուցիոն զարգացման կողմնակից եմ թե՛ բաղաքականության, թե՛ տնտեսության, թե՛ արտաքին բաղաքականության մեջ: Վազգենն ավելի արմատական է: Ես ժողովրդավարական համընդհանուր արժեքների կողմնակից եմ: Իսկ Վազգեն Մանուկյանն առավել հենվում է ազգային յուրահատկության վրա: Դա չի արտացոլված մեր հիմնական ծրագրերում, սակայն արտահայտվում է մեր մտածողության, ամենօրյա գործունեության մեջ:

Իսկ ընդհանրապես, ես այստեղ օրինաչափություն եմ տեսնում: Ոչ մի հեղափոխություն, ոչ մի անկախություն առաջ արդյունքներ չի տա-

լիս: Ոչ մի տեղ: Եւ անմիջապես հայտնվում են այնպիսիք, ովքեր պնդում են, թե ամեն ինչ կարելի է լուծել անմիջապես, մեկ-երկու տարվա ընթացքում: Մյուսներն էլ տեսնում են, որ ոչ՝ դա երկար գործընթաց է: Եւ հայտնվում է երկու հոսանք. ես դրանց անվանում եմ համբերատարներ եւ անհամբերներ: Այդ ճարց է, որ երբ անհամբերները իշխանության գլուխ են գալիս, նրանց գործելակերպը կարող է փոխվել: Իսկ ճիմա նրանց համար ի՞նչ է ղարաբաղյան խնդիրը: Մեկ-երկու՝ եւ վերջ: Նաեւ աշխատավարձը կարելի է անմիջապես մի բանի անգամ բարձրացնել:

– Բայց այդ նույն «անհամբերները» Ձեզ մեղադրում են ավտորիտարիզմի մեջ: Դուք դավանում եք համընդհանուր ժողովրդավարական արժեքներ, բայց ի՞նչ եք զգում, երբ ստիպված եք լինել կարծր, երբ ստիպված եք ուժ օգտագործել ամբոխի դեմ՝ նույն Օպերայի հրապարակի, հենց նույն ամբոխի, որ հիմա հավաքվել է բոլորովին անսպասելի քանակությամբ:

– Ես կպատասխանեմ ձեր ճարցին, եթե սահմանեմ, թե իրականում ինչ է նշանակում ավտորիտարիզմը: Եթե ես օրենք եմ խախտում, ուրեմն իրավացի են նրանք, ովքեր ասում են, թե ես ավտորիտար եմ: Բայց ես կարծում եմ, որ ոչ մի օրենք չեմ խախտել ... Ցավում եմ, որ ընդդիմության գործողություններն ինձ ստիպում են օրենք կիրառել... Այո, ցավում եմ:

– Իսկ նման իրավիճակի համար պատասխանատվության Ձեր բաժինը Դուք տեսնո՞ւմ եք:

– Օբյեկտիվորեն՝ այո: Եթե կա ընդդիմություն, կան դժգոհներ՝ ես մեղավոր եմ: Ես մեղավոր եմ, որ մեր ժողովուրդը վատ է ապրում: Ես մեղավոր եմ, որ չի լուծվում ղարաբաղյան խնդիրը: Մեղավոր եմ, որ Թուրքիայի հետ սահմանները չեն բացված: Մեղավոր եմ, որ չի աշխատում աբխազական երկաթուղին: Եթե կա թեկուզ մի մարդ, որը կարող է լուծել այս բոլոր հարցերը, ես հանուլիով, հենց այս րոպեիս իմ տեղը կզիջեմ նրան:

– Մեկ անգամ էլ դիմենք հիշողություններին. Երեւան, 1993, 1994 թվականներ, մառախուղ, փողոցներում սառչող մարդիկ, շրջափակման անողոք պատկերներ: Հետո, հայտնվելով Երեւանում 96-ի սկզբներին, ես տեսա, որ Հայաստանը ամենեւին նման չի մեռնող երկրի, թեպետ ջեռուցման մարտկոցները դեռեւս սառն էին, իսկ լույսը տալիս էին

օրական երեք-չորս ժամ: Այսօր, թռչելով Երեւան, ես տեսա աներեւակայելին՝ լուսավոր քաղաք, ինքնաթիռում էլ բոլորովին այլ մարդիկ են, ոչ թե պարկավորներ, այլ իսկական գործարարներ, հնչում էր անգլերենը, ճապոներենը: Երեւանն էլ, իհարկե, այսօր այնպիսի տեսք ունի, ինչպիսին վայել է մայրաքաղաքին: Հայաստանը սովորե՞ց ապրել շրջափակման մեջ, թե՝ կան այլ գաղտնիքներ:

– *(Ծիծաղում է:)* Եթե միայն մեր ընդդիմությունը ուզենար տեսնել այդ ամենը... Այո, տարբերությունը ճակատային է: Եւ ես կարծում եմ, որ մենք, իրոք, շատ բան ենք արել: Դուք կարող եք դա ես ավտորիտարիզմ համարել, բայց մենք այդ ամենածանր ժամանակներում հասկացանք, որ ամենավտանգավորը հառաչ է երկրի կառավարելիությունը մեզ համար դարձավ համար առաջին խնդիրը: Եւ մենք արեցինք գլխավորը՝ ստեղծեցինք պետական կառույցներ: Այն, ինչ արեցին Վաշո Սիրադեղյանը ՆԳՆ-ում, Վազգեն Սարգսյանը՝ բանակում, Հրանտ Բագրատյանը՝ կառավարությունում եւ Բարկեն Ադարճյանը պառլամենտում, փրկեց մեզ: Պետությունը դարձավ կառավարելի, եւ մենք հասկացանք, որ արդեն ամեն ինչ կարող ենք անել: Մենք ընդունում էինք որոշումներ (դրանք հիմա ձեզ ծիծաղելի կարող են թվալ), ասենք, 20 ցիստեռն բենզին հյուսիսային սահմաններից ուղարկել Մեղրի, եւ մեկ-երկու օրվա ընթացքում դա իրականացնել: Եւ երբ աբխազական երկաթուղին շրջափակված էր, եւ մենք հայտնվել էինք եզակի իրավիճակում (եղավ պահ, երբ հացի պաշարները կարող էին բավարարել կես օր), հաջողվեց անհետեւակայելի մեխանիզմներով հաց կրել Բաթումից ու Փոթիից՝ ավտոշարասյուների միջոցով, 500–700 մեքենաներով:

Եւ այդ կառավարելիությունը մենք պահպանում ենք մինչեւ օրս: Հնարավոր է, որ մենք շատ սխալներ ենք գործում, բայց երբ որեւէ որոշում ենք ընդունում, կարողանում ենք այդ որոշումն իրագործել մինչեւ վերջ:

Գաղտնիքներ չկան, կյանքն ստիպեց մեզ ապրելու համար տարբերակներ փնտրել, եւ գտանք այդպիսիք. ես ճկատի ունեմ հարաբերությունները Իրանի հետ: Մենք սկսեցինք զրոյից, իսկ այսօր Իրանը մեր առաջին տնտեսական գործընկերն է: Եւ եթե այսօր սահմանային կամուրջը փակվի, մեկ շաբաթ անց՝ այստեղ գները կկրկնապատկվեն: Այդ հարցում, ասես, թե որևէ զգայուն է մեր չուկան:

Եւ վերջապես, տնտեսական բարեփոխումները: Ճնարավոր է, ինչ-որ սխալներ գործել ենք, բայց այստեղ շատ ճետեւողական ենք եղել: Եւ կարծում եմ, որ մեր ամենամեծ ձեռքբերումը ճողի սեփականաշնորճումն է:

– Հայաստանն այդ հարցում առաջի՞նն էր:

– Առաջինն ու առայժմ՝ միակը: Այն ժամանակ մեզ մեղադրում էին, բայց ճիմա թող ինչ-որ մեկը փորձի այդ մարդկանցից ետ վերցնել ճողը: Տեսնենք կենդանի կմնա՞: Ինձ ճամար դա ամենագլխավոր փաստարկն է: Այո, ասում են, որ ճողը սեփականաշնորճեցին, իսկ տեխնիկա չտվեցին: Բայց եթե սովխոզները, կոլխոզները պահպանվեին, ընդճանրապես ոչ մի միավոր տեխնիկա ճիմա մնացած չէր լինի, բոլորը կթալանվեին: Ճողի սեփականաշնորճումը Հայաստանը փրկեց սովից: Թեկուզ գյուղացիները միայն իրենի իրենց կերակրեին, դա արդեն մեկ ու կես միլիոն մարդ էր՝ այն պահին, երբ ճարյուր կամ երկու ճարյուր տոննա լրացուցիչ ճացահատիկ ուղղակի տեխնիկապես ճնարավոր չէր ներկրել Հայաստան ո՛չ օդով, ո՛չ ցամաքով:

– Հայ տնտեսագետներն, իրոք, «հարվարդյան» տպավորություն են թողնում, եւ դա ամրապնդվում է այն փաստով, որ Հայաստանում, ի տարբերություն Ռուսաստանի, այդ տնտեսագետներն այս ամբողջ ընթացքում իշխանության ղեկին են: Բայց ինչպես ռուսական կապիտալիզմի մեջ նկատվում են բացարձակապես յուրահատուկ նրբերանգներ, այնպես էլ լիբերալ հայկական տնտեսությունում ձեր փորձագետների մեծամասնությունը որպես արատ նշում է կլանայնությունը:

– Այո, դա մեզանում կոչում են կլանայնություն: Բայց այստեղ նույնպես պետք է ճստակեցնել արտաճայտությունները... *(Դադար:)* Ես դրան չեմ ճավատում: Մեզ մոտ ավելի շատ սեփականատերեր կան, ճան դա թույլ է տալիս կլանայնությունը: Եթե, անշուշտ, մենք վերջինս ճասկանում ենք որպես տարածքների եւ գործունեության ոլորտների բաժանում: Նման մենաշնորճային տարածքներ ու ոլորտներ Հայաստանում գոյություն չունեն:

– Իսկ եթե կլանայնությունը ճասկանանք որպես տնտեսական կամ քաղաքական ազդեցությունների ոչ բացաճայտ, եւ, այսպես ասենք՝ ոչ շուկայական կենտրոնների գոյության ձե՛ւ:

– Միեւնոյն է՝ չկա: Ես կտրականապես մերժում եմ դա: Հասկանալի է, կոռուպցիա կա: Բայց ո՞վ է վերցնողը: Եթե մեկը, երկուսը, երեքը, ինքը վերցնում են, այո՛, դա կլան է: Եթե վերցնում են հազարավորներ՝ դա կլան չէ:

– Բայց որտեղի՞ց այդպիսի հնարավորություն, որ վերցնեն հազարավորները:

– Մեզ դեռեւս չի հաջողվել լիակատար կարգուկանոն հաստատել մեր տնտեսությունում: Եւ գաղտնիք չէ, որ թե՛ հարկերի, թե՛ մաքսատուրերի 50 տոկոսը չի հաշվառվում: Եւ, այո, վստահ չեմ, թե մեր ձեռնարկությունների հաշվետվություններն արտացոլում են իրական պատկերը: Բայց մեզ ժամանակ է պետք, որպեսզի կարգուկանոն հաստատենք, եւ դա, այնուամենայնիվ, կանենք: Վերջին տարվա ընթացքում մենք շատ բան ենք արել, որի կապակցությամբ սպասվում է դժգոհության նոր ալիք: Այն մարդիկ, ում, կարելի է ասել, մենք ենք ստեղծել՝ գործարարները, կսկսեն բողոքել եւ հոդարկվել գեղեցիկ խոսքերով: Եւ դա հասկանալի է. խառնաշփոթի մեջ փող աշխատելու հնարավորություններն ավելի շատ են:

– Բայց Ձեզ մոտ կա՛ն արդեն հսկաներ, որոնք ի վիճակի են կազմակերպել մեր «Սվյազինվեստի» պատմության պես մի բան:

– Ոչ: Գուցե՝ ցավոք սրտի, բայց՝ ոչ: Մենք չունենք բնական այնպիսի հարստություններ, ինչպիսիք ունի Ռուսաստանը, եւ չունենք այդպիսի մոնոպոլիաներ: Դարձյալ, գուցե, ցավոք սրտի, որովհետեւ, վաղ թե ուշ, պետությունը հնարավորություն կունենա հաղթահարել մոնոպոլիաներին առնչվող դժվարությունները:

– Իսկ Ձեզ համար Մոսկվայում ո՞ւմ հետ էր ավելի հեշտ հարաբերվել՝ երիտասարդ բարենորոգիչների, թե՞ «տարերային շուկայականների»:

– Ամենից առաջ նշեմ, որ նրանց բաղամասության մեջ տարբերություն չեմ տեսնում, եթե դուի նկատի ունեք Ելցինին, Չեռնոմիրդինին եւ իմ բարեկամներ Գայդարին, Զուրաբսին, Նեմցովին... Հնարավոր է, որ նրանց միջեւ կան ինչ-որ տարաձայնություններ, բայց նրանք հանդես են գալիս որպես միասնական թիմ: Եւ կարծում եմ, որ երիտասարդ բարենորոգիչները շնորհակալ պետք է լինեն բախտից, որ իրենք ունեն

այնպիսի հովանավոր, ինչպիսին Չեռնոմիրդինն է: Թեպետ, բնական է, նրա համար դժվար է մեր տղաների հետ միեւնոյն լեզվով խոսել:

– Դուք ասացիք, որ Իրանն այսօր ձեր տնտեսական առաջին գործընկերն է: Այս տարածաշրջանում ձեւավորվող եւ բացարձակապես նոր աշխարհաքաղաքական խճանկարի մեջ արդեն ինչ-որ կերպ կարելի՞ է որոշել Հայաստանի տեղը:

– Առայժմ դժվար է: Մինչեւ մեր հարաբերությունները չկարգավորվեն մեր բոլոր հարեւանների հետ, մենք չենք կարող լուծել մեզ համար գլխավոր՝ անվտանգության հարցը: Իսկ դրա համար տասնամյակներ են հարկավոր՝ մինչեւ կլուծվի ղարաբաղյան խնդիրը, մինչեւ կկարգավորվեն հարաբերությունները Թուրքիայի հետ: Եւ միայն այդ ժամանակ մենք կարող ենք ասել, թե գտել ենք մեր տեղը այս տարածաշրջանային բաղամասության մեջ:

– Իսկ ի՞նչ տեղ կարող է ունենալ Ռուսաստանն այդ քաղաքականության մեջ:

– Ես երբեք չեմ համարել, թե Ռուսաստանի կովկասյան բաղամասությունը, այլ ոլորտների նման, անկանխատեսելի է: Կրկնում եմ՝ ես խոսկապես համարում եմ, որ Ռուսաստանը հրաժարվել է կայսերական բաղամականությունից: Ռուսաստանը հանգիստ է վերաբերվում այստեղի բոլոր պետությունների իմքնիշխանությանը: Բայց Ռուսաստանը խանդով կհետեւի այն բանին, թե ինչպես են ձեւավորված վակուումը փոխում լրացնել այլ ուժեր: Սա այն է, ինչը չեն հասկանում Արեւմուտքում: Ռուսաստանն ուրախ կլիներ բաց թողնել բոլորին, բայց ոչ իր տեղն ուրիշին զիջելու գնով:

– Դուք հաճախ եք խոսում այն մասին, որ Հայաստանի ամենաբնական գործընկերն Ադրբեջանն է: Չե՞ք անհանգստանում, արդյոք, որ կարող եք ճիշտ չհասկացվել, ինչպես ձեր քաղաքացիների, այնպես էլ ղարաբաղցիների կողմից:

– Դեռեւս ոչ մեկը՝ ո՛չ ընդդիմությունից, ո՛չ էլ Ղարաբաղը, դրա դեմ չի առարկել: Դա պարզապես փաստի արձանագրում է: Չէ՞ որ այդպես է եղել, համենայն դեպս վերջին երեք հարյուր տարիների ընթացքում: Ընդամենը տաս տարի առաջ էլ այդպես էր:

– Բայց Ղարաբաղում որոշակի զգուշավորությամբ են հետեւում երեւանի պահվածքին՝ այդ ի՞նչ նկատի ուներ Լեւոն Տեր-Պետրոսյանն անցած տարի՝ Ղարաբաղի Նախագահին ցանկանալով մեծ ճկունություն՝ բանակցային գործընթացում:

– Իսկ ի՞նչ կա որ, ճկունությունը դեռեւս ոչ մեկին չի խանգարել: Ես այսօր էլ ղարաբաղցիներին մեծ ճկունության կոչ եմ անում: Ղարաբաղի ղեկավարության վերջին արտահայտությունները ես համարում եմ ամենեւին ոչ ճկուն:

– Ուրեմն իմ հերթն է՝ տերմինները ճշտելու: Ի՞նչ եք տվյալ դեպքում հասկանում ճկունություն ասելով:

– Նախ, չի կարելի լինել ոչ կառուցողական: Հենց այնպես մերժել որեւէ առաջարկ՝ սարսռած է: Հայաստանն էլ բանակցությունները վարում է շատ սկզբունքայնորեն եւ շատ կոշտ: Բայց մենք միշտ հանդես ենք գալիս կառուցողաբար:

– Կարո՞ղ եք սարսռածի օրինակներ բերել:

– *(Ծիծաղում է:)* Ես չեմ ասում, թե նոանք սարսռած են անում: Պարզապես բանակցությունները հենց նոա համար են բանակցություն, որ փոխզիջումներ գտնվեն: Բայց եթե դու հենց սկզբից ասում ես, թե չեմ ընդունում ոչ մի ուրիշ որոշում, բացի անկախությունից, բացի Հայաստանի հետ միավորվելուց, ուրեմն դու մերժում ես բանակցություններն ընդհանրապես: Դա վերաբերում է նաեւ Ադրբեջանին: Եթե Ադրբեջանն ասում է, թե որեւէ կարգավիճակ Ադրբեջանի սահմաններից դուրս չի ընդունում, նշանակում է նույնպես մերժում է բանակցությունները:

Ճկունություն ասելով, ես ամենեւին չեմ հասկանում խորամանկություն կամ հարոշական մանիպուլիացիաներ: Ճկունությունը հարգանք է դեպի միջազգային ընդունված նորմերը: Ոչ թե սկզբունքները, այլ հատկապես պահվածքի նորմերը, որոնց պետք է ենթարկվեն նաեւ ղարաբաղցիները: Չի կարելի մարտահրավեր նետել ամբողջ միջազգային հասարակայնությանը եւ միջազգային կարգուկանոնին: Հարկավոր է փնտրել լուծումներ այդ նորմերի սահմաններում: Ո՛չ Ղարաբաղը, ո՛չ Հայաստանը, ո՛չ անգամ Ռուսաստանը հիմա չեն կարող թելադրել նոր միջազգային կարգ:

– Կարո՞ղ է Հայաստանը ինչ-որ բան առաջարկել, թեկուզեւ որոշակի շրջանակների մեջ:

– Հայաստանը առաջարկել եւ շարունակում է առաջարկել ղարաբաղյան խնդրի փուլային լուծում: Եկեք հանենք առայժմ այն ամենը, ինչը լարվածություն է ստեղծում: Հետո նստենք եւ Ղարաբաղ – Ադրբեջան կամ Ղարաբաղ – Հայաստան – Ադրբեջան կազմով, ինչը կարեւոր չէ, խոսենք կարգավիճակի մասին՝ առանց նախնական պայմանների: Բնականաբար, առանց Ղարաբաղի խոսք չի կարող լինել ոչ մի բանակցության մասին, բայց ձեւն ինձ համար բացարձակապես երկրորդական է: Գլխավորը՝ էությունն է, իսկ էությամբ դա չընկնական տարբերակն է, հանեցին խնդրի սուրը, երդվեցին չկռվել, հարցը լուծել միայն խաղաղ միջոցներով, եւ հանգիստ զբաղվեցին գործով:

– Հիմա ո՞վ ավելի շատ պատրաստ չէ այդպիսի «խաասավյուրտի»:

– Իմ կարծիքով, այդպիսի տարբերակի բոլորն ավելի պատրաստ են, քան փաթեթային լուծման *(փաթեթային լուծման տակ նկատի է առնվում Մինսկի խմբի նախկին առաջարկությունը՝ միաժամանակ լուծել ադրբեջանական հողերի եւ փախստականների վերադարձի, Ղարաբաղի անվտանգության երաշխիքի եւ կարգավիճակի որոշակիացման խնդիրները – Վ. Դ.)*: Կարծում եմ՝ թե՛ Ղարաբաղը, թե՛ Ադրբեջանը պատրաստ են: Հայաստանի համար իրավիճակը մի փոր այլ է, որովհետեւ մենք միշտ ասել ենք, մեզ համար ընդունելի է ցանկացած լուծում, որը կբավարարի Ղարաբաղին:

– Նշանակո՞ւմ է դա, որ «փաթեթի» մասին կարելի է մոռանալ:

– Իմ զգացողությամբ՝ այո: Այդպիսի համընդհանուր լուծումն անհնար է: Կարծում եմ, միջնորդները եւս հոգնել են դրանում:

– Ի՞նչ է փոխվել միջնորդների մոտեցումներում այն ժամանակից ի վեր, երբ Ֆինների փոխարեն համանախագահներ դարձան ամերիկացիներն ու Ֆրանսիացիները:

– Ղարաբաղյան խնդիրն ավելի հեռատես է դարձել միջազգային հանրության համար: Այսօր, երբ արդեն լուծված է Բոսնիայի խնդիրը, երկրորդ խնդիրը Կիպրոսն է, իսկ երրորդը՝ Ղարաբաղը: Եթե ֆինների համանախագահության ընթացքում միջազգային հանրությունը չէր արագացնում իրադարձությունները, այժմ տպավորություն է ստեղծվում, թե

ամեն ինչ սկզբունքորեն փոխվում է, բոլորն ակտիվացել են, ինչի հետեւանքով որոշակի ճնշում է իրականացվում բոլոր կողմերի վրա:

– Ռուսական դիրքորոշումն ավելի մո՞տ է դարձել ամերիկյանին:

– Եթե ձեւականորեն՝ ապա ռուսական դիրքորոշումը նույնական է ամերիկյանի եւ ֆրանսիականի հետ: Միջնորդները միասնական ծրագիր են ներկայացրել մի քանի ամիս սրանից առաջ՝ այդ նույն փաթեթային լուծումը: Ծրագիրն, ի դեպ, ձախողվեց:

– Իսկ ո՞վ հրաժարվեց:

– Ադրբեջանը ձեւացնում է, թե իբրեւ ընդունել է այդ ծրագիրը, բայց այդպես չէ: Նա այն մերժել է նույնիսկ կտրականապես, ինչման եւ Ղարաբաղը: Այժմ, կողմերի դիրքորոշումները հաշվի առնելուց հետո, համաձախագահները կգան նոր ծրագրով *(մեր զրույցն ընթանում էր նախքան բանակցությունների հերթական փուլը – Վ. Ի.)*, որն, ինչման ես հասկանում եմ, ավելի մոտ կլինի փոպային լուծմանը: Ինձ թվում է՝ միջնորդները հասկացել են, որ Ղարաբաղի կարգավիճակը բնաարկելու համար կողմերը դեռեւս չեն հասունացել:

– Իսկ ե՞րբ էր ավելի հեշտ, երբ համանախագահների տեսակետները տարբերվո՞ւմ էին, թե՞ հիմա:

– Գիտե՞ք, այդ հարցը, այսպես ասած՝ ոչ բաղաքական է, եթե այդ մասին խոսելու լինենք ավել կամ պակաս ճնշման տեսանկյունից... Այո, հիմա ավելի դժվար է: Առաջ նման ճնշում չկար: Բայց ես կարծում եմ, որ առանց որոշակի ճնշման, առանց միջազգային հանրության միասնական դիրքորոշման, այդ խնդիրը երբեք չի լուծվի: Դա չի նշանակում, թե ես վստահ եմ, որ այդ լուծումը կլինի հօգուտ Հայաստանի կամ հօգուտ Ղարաբաղի:

– Բայց համանախագահող երկրների դիրքորոշումների մոտեցումը խթանող գործոններն ամենեւին էլ բարենպաստ չեն Հայաստանի համար. ես խոսում եմ նավթի մասին:

– Այո, ամերիկյան դիրքորոշման համար նավթի գործոնը մեծ դեր է խաղում: Եւ դրանում մեզ համար մեծ վտանգ կա. դա գաղտնիք չէ: Բայց եթե Ադրբեջանը վստահ է, թե հարցը կլուծվի միայն այդ գործոնի շնորհիվ՝ սխալվում է: Ադրբեջանը եւս պետք է պատրաստ լինի շատ մեծ զիջումների: Վերջիվերջո, նավթային շահերը նույնպես սահման ունեն:

– Այն նրբերանգը, թե նավթն ավելի քիչ է, քան ներկայացվում է, օգտագործո՞ւմ է, արդյոք, Հայաստանն իր դիվանագիտության մեջ:

– Ես մի բան գիտեմ, նավթային պայմանագրերը գոյություն ունեն: Կան առաջին մուծումները, շահույթները եւ այլն: Առայժմ ինչ է: Բայց ենթադրվում: Այո, որոշ մարդիկ իրենց հանգստացնում են, թե պարզապես ոմի տեղ են անում, թե պարզապես բորսայական խաղ է գնում: Բայց չէ՞ որ մենք իմներս մեզ վրա զգացինք ամերիկյան դիրքորոշման փոփոխությունը: Նավթային լոբբին համառորեն զբաղվում է ղարաբաղյան հարցով:

– Իսկ ի՞նչ կարելի է ասել Ֆրանսիայի դիրքորոշման մասին:

– Թող նրա համար վիրավորական չթվա, բայց վճիռը կայացնելու են Ամերիկան եւ Ռուսաստանը: Եւ առայժմ ես հիմք չունեմ կասկածելու, թե նրանք տարաձայնություններ ունեն: Հիմք չունեմ մտածելու, թե Ռուսաստանն անկեղծ չէ հոգու խորում:

– Կարելի՞ է արդյոք հիմա՝ հակամարտության տասնամյակի նախօրեին, եւ խաղավարտից մեկ տարի անց, եղած փորձառության հիման վրա ենթադրել, թե ի՞նչ բովանդակություն կունենա կարգավիճակ հասկացությունը:

– Բայց դրա համար պետք է պատասխանել մեկ այլ հարցի. այդ կարգավիճակը Ադրբեջանի ներսո՞ւմ, թե՞ նրանից դուրս: Եթե Ադրբեջանից դուրս՝ խոսելու բան չկա: Իսկ եթե միացյալ կամ ընդհանուր պետության շրջանակներում՝ համաձայն նոր գտնված բանաձեւի, ապա կարելի է տարբերակներ փնտրել:

– Իսկ Հայաստանը փորձո՞ւմ է իր համար պատասխանել այդ հարցին:

– Այդ հարցին պետք է պատասխանի Ղարաբաղը: Ո՛չ, սա խորամանկություն չէ, եւ ես հոգուս մեղք չեմ անում: Դա շատ կարեւոր է հասկանալ. պատասխանը պետք է գտնեն ղարաբաղցիները:

– Իմ վերջին հարցով ես կուզեի վերադառնալ Մոսկվա կատարած Ձեր այցին: Դրա նախապատրաստմանը զուգընթաց, եւ այցի օրերին նույնպես, Հայաստանում շարունակվում էին ստորագրություններ հա-

վաքվել Բելոռուս – Ռուսաստան միությանը Հայաստանի միանալու օգտին: Ինչպես հավաստում են՝ հավաքվել է միլիոն ստորագրություն. դա շա՞տ է:

– Ստորագրությունների հավաքումը ճոգուտ Միության վերականգնման՝ ոչինչ չի ասում: Այդպիսի ստորագրություններ ցանկացած մարդ կարող է հավաքել: Մեզ մոտ, իրոք, իրավիճակն այնման ծանր է, որ հարչի ցանկացած խոստում կարող է արձագանք գտնել: Եւ վերջին ընտրությունները հենց դրա ապացույցն էին: Հիմա ցանկացած ճեխաթ ունկնդիրներ է գտնում: Բայց ես կարծում եմ, որ Ռուսաստանի հետ վերջին պայմանագրով մենք իրականում արեցինք ավելին, քան այն, ինչ ուզում են այդ ստորագրությունները հավաքողները:

«Հայաստանի Հանրապետություն», 7 հոկտեմբերի, 1997 թ.:
Թարգմանություն ռուսերենից: «Новуя Времуя» ("Новое Время"), թիվ 38, 1997 թ.:
Հարցազրույցը՝ ***Վադիմ Դուբնովի,*** *«Նովոյե Վրեմյա»-ի հատուկ թղթակից:*
Հրատարակված՝ «Լեւոն Տեր-Պետրոսյան. «Ես չգիտեմ, թե ինչ է ավտորիտարիզմը» վերնագրով:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

(26 սեպտեմբերի, 1997 թ.)[1]

ԿԱՐԵՆ ԹՈՓՉՅԱՆ, «Բի-Բի-Սի» – Վերջին ժամանակներս փորձագետները դադարել են քննարկել Հայաստանի տարածքով Ադրբեջանական նավթի երթուղին դեպի միջազգային շուկա: Մասնավորապես, դա բացատրվում է դարաբաղյան հիմնախնդրի չկարգավորված լինելով: Ինչպե՞ս եք կարծում, ի՞նչ է կորցնում եւ ի՞նչ է ձեռք բերում Հայաստանը, որին դադարել են արժեւորել որպես տարանցիկ պետություն: Շնորհակալ եմ:

– Նախ ես չէի համաձայնի Ձեր կարծիքին, թե փորձագետները կամ նավթային ընկերությունները դադարել են դիտել Հայաստանը որպես նավթամուղի անցկացման ճանապարհներից մեկը: Հարցը այլ կերպ է դրված: Այսօր խոսքն ընդամենը նախնական նավթի տեղափոխման ճանապարհների մասին է: Բնական է, որ այդ նախնական նավթը պետք է անցնի արդեն գոյություն ունեցող, գործող նավթամուղերով: Դա Բաքու – Նովոռոսիյսկ նավթամուղն է եւ Բաքու – Բաթում նավթամուղը: Ինչ վերաբերում է հիմնական նավթամուղին, ապա այդ հարցը դեռեւս ոչ միայն վճռված չէ, այլեւ նրա իննարկումը, լավագույն դեպ-

[1] *Մամուլի ասուլիսը տեղի է ունեցել Հայաստանի կառավարության Ընդունելությունների տանը: Մասնակցել են Հայաստանի եւ Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա զանգվածային լրատվության միջոցների հարյուրից ավելի ներկայացուցիչներ: Ասուլիսի ընթացքում Հայաստանի Նախագահին հարցեր են տրվել նաեւ ինտերնետ համակարգչային ցանցի միջոցով:*

ռում, սպասվում է մոտ կես տարի հետո: Իսկ որ դարաբաղյան խնդիրն այս հարցում իսկապես խոչընդոտ է, սա էլ գաղտնիք չէ: Բոլորի համար էլ ցանկալի կլիներ, որ այս հարցը լուծված լիներ, եւ նավթամուղն անցներ Հայաստանով, որովհետեւ Հայաստանը Բաքվից Ջեյհան ամենակարճ ճանապարհն է: Մենք ժամանակին առաջարկել էինք նաեւ, որ այս երկու հարցերը անջատվեն իրարից: Կարելի էր ամենեւին չպնդել, որ նավթամուղը պետք է անցնի հարավային ճանապարհով, այսինքն՝ հակամարտության գոտով (դա վերաբերում է Ֆիզուլու, Ջերայիլի եւ Ջաբրայիլի շրջաններին, այնուհետեւ Մեղրիով դեպի Նախիջեւան), այլ դիտարկել հյուսիսային ճանապարհը, որը կապ չունի հակամարտության գոտու հետ: Այս տարբերակը նույնպես գտնվում է փորձագետների փաթեթում: Այնուամենայնիվ, մենք չպետք է մոռանանք, որ այդ հարցի լուծումն իսկապես կապված է Ղարաբաղի խնդրի կարգավորման հետ:

ԷԼԻՆԱ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ, «Միր» ընկերություն – Սեպտեմբերի 22-ին «Թուրան» գործակալությունը հաղորդագրություն տարածեց այն մասին, թե իբր Յուկալովը հայտարարել է լրագրողներին, թե հայկական կողմը համաձայնվել է դարաբաղյան խնդրի փուլ առ փուլ կարգավորման տարբերակին: Նույնը պնդեց նաեւ Ադրբեջանի արտգործնախարարը: Որքանով է դա համապատասխանում իրականությանը, եւ որոնք են համանախագահողների վերջին հանդիպման արդյունքները:

– Ինչ իմ, Բաքվում սովորության կա միջնորդների անունից՝ (Յուկալովի, իսկ դրանից առաջ Կազիմիրովի, Լամբախի անունից) հայտարարություններ անել, որոնք հետագայում ևերվում են: Ես այսօր, չունենալով Յուկալովի ամմիջական կարծիքը, չեմ կարող մեկնաբանել այդ միջնորդավորված հաղորդագրությունը: Ինչ վերաբերում է Հայաստանի դիրքորոշմանը, դրա մասին եղավ Հայաստանի ԱԳ նախարարության հայտարարությունը, որը կարծում եմ սպառիչ էր: Վստահ եմ, այս լարանում բազմաթիվ հարցեր կլինեն ԼՂ հարցի լուծման առնչությամբ, գուցե ճնարավորություն կունենամ ավելի հանգամանորեն խոսել Հայաստանի մոտեցումների մասին եւ միջնորդական այն առաջարկների մասին, որոնք ներկայացվել են:

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ռադիոգործակալություն – Պարոն Նախագահ, Ձեր կարծիքով ինչպիսի՞ ազդեցություն կարող է ունենալ իսրայել-թուրքական ռազմական համագործակցությունը ողջ տարածաշրջանի վրա ընդհանրապես (ի նկատի ունեմ Մերձավոր Արեւելքը, Պարսից ծոցը, Անդրկովկասը) եւ Հայաստանի վրա մասնավորապես:

– Ես կարծում եմ՝ բոլոր այն համաձայնությունները, որոնք ուղղված են տարածաշրջանում զանազան երկրների հետ հակամարտությունների խորացմանը, այս կամ այն կերպ կազդեն նաեւ Հայաստանի վրա: Եթե իսրայել-թուրքական ռազմական համագործակցությունն ուղղված է արաբական երկրների դեմ, բնական է, սա ավելի պիտի խորացնի լարվածությունը Մերձավոր Արեւելքում եւ ավելի անորոշ դարձնի Հայաստանի իրավիճակը, հաճի որ մենք Կովկաս լինելուց առավել Մերձավոր-արեւելյան տարածաշրջանի երկիր ենք:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԼԱՋՅԱՆ, «Իրավունք» – Հարցը վերաբերում է անցած տարվա իրադարձություններին: Ձեր նախկին գիևակից, «Ազգային առաջադիմություն» կուսակցության նախագահ Ալբերտ Բադդասարյանը իր հարցազրույցներից մեկում պնդում էր, թե անցյալ տարվա սեպտեմբերի 25-ին Ձեր անձնական ինքնաթիռը պատրաստ էր թռիչքի: Ձեր դուրս գալը ամառանոցից խոչընդոտել էին Վազգեն Սարգսյանի տղաները: Կարո՞ղ եք հաստատել կամ հերքել այդ պնդումը:

– Ես Ձեզ խորհուրդ կտամ հավատալ Ալբերտ Բադդասարյանին: Եթե դա Ձեզ հաճելի է:

ԱՐՄԵՆ ԽԱՆԲԱԲՅԱՆ, «Ռեսպուբլիկա Արմենիա» – Պարոն Նախագահ, եթե ծանոթանանք Ադրբեջանի եւ Վրաստանի լրատվական միջոցների հաղորդագրություններին, կարծիք կստեղծվի, որ այդ երկրներում գտնում են, թե Հայաստանն անուղղակի կերպով ձգտում է խոչընդոտել Կովկասում եւ Անդրկովկասում ինտեգրացման պրոցեսներին, այդ թվում, այսպես կոչված, Կովկասյան ԵԱՀԿ-ի ստեղծմանը: Նույնիսկ այն կարծիքն է ստեղծվում, որ ոչ այնքան դարաբաղյան խնդրի առկայության, այլ իր ռուսամետության պատճառով է, որ Հայաստանը խոչընդոտում է դրան, քանի որ Ռուսաստանը շատ դեմ է կովկասյան նման ինտեգրացմանը: Ի՞նչ կարող եք ասել այդ մասին:

– Ես թոուքիկ եմ ծանոթ նման մեկնաբանություններին: Դուք խտացրիք դա, եւ ես հավատալով Ձեր խտացմանը՝ պատասխանում եմ ոչ թե նրանց, այլ Ձեզ: Մի քանի հարց է շփոթված: Ես տեղյակ եմ, որ Կովկասյան ՆԱՀԿ ստեղծելու հարցն առաջ է քաշվել, նախանշվել է հիմնականում Ձեչենստանի կողմից: Անկախ այն ամենից, ինչ գրվում է մամուլում, դրան դեմ են նաեւ Վրաստանը եւ Ադրբեջանը, որոնք սակայն դժվարություններ ունեն՝ Ձեչենստանին չեզոքացնելու առումով: Կար նյութի նախաձեռնությունը՝ կիսլովոդսկյան հանդիպումը, որը տեղի էր ունեցել կովկասյան շորս պետությունների ղեկավարների միջեւ (Ռուսաստան, Վրաստան, Ադրբեջան եւ Հայաստան), եւ որոշում էր կայացվել այդ կիսլովոդսկյան հանդիպումը կամ գագաթնաժողովը դարձնել պարբերական: Այս անգամ կ՚, Մոսկվա կատարած իմ այցելության ժամանակ, այս հարցը լրջորեն ճնճարկվեց, եւ ես ողջունեցի այդ գաղափարը: Ձեչենական նախաձեռնությունը, փաստորեն, ելցինյան նախաձեռնությունը ձախողելու մի ձեւ էր: Վստահ եմ, որ Ռուսաստան, Հայաստան, Ադրբեջան եւ Վրաստան գագաթնաժողովը շատ ավելի լուրջ բովանդակություն եւ հետեւանք ունի, քան չեչենական առաջարկությունը:

ՎԱՀԱԳՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ, Հայաստանի Ամերիկյան համալսարան (ինտերնետի միջոցով) – Մեծարգո Նախագահ, անկախությունը որպես գաղափարախոսություն Ձեր եւ Ձեր սերնդինն է: Այն արդեն իրականություն է: Ըստ Ձեզ, որո՞նք պետք է լինեն գալիք սերնդի գաղափարախոսությունն ու նպատակները:

– Ճիշտ կլիներ, որ այդ հարցն ուղղեիր իմ տղային, որը հաջորդ սերնդի ներկայացուցիչն է: Սա կատակ է: Ո՞րը պետք է լինի հաջորդ սերնդի գաղափարախոսությունը: Հաջորդ սերնդի եւ հաջորդ բոլոր սերունդների գաղափարախոսությունը պետք է լինի մեր պետականության ամրապնդումը, մեր ժողովրդի բարգավաճումը եւ մեր երկրի ծաղկումը:

ՍԵՒԱՆ ԴԵՅՐՄԵՆՋՅԱՆ, «Ժամանակ», Ստամբուլ – Ուզում եմ իմանալ, թե ինչ վիճակում են գտնվում այսօր Հայաստան – Թուրքիա հարաբերությունները: Եւ ինչպիսին կլինի Հայաստան – Թուրքիա հարաբերությունների տեսքը Ձեր նախագահության շրջանում:

– Այս հարցի շուրջ մենք բազմիցս ենք արտահայտվել, գուցե նույնիսկ կարելի է ասել, որ ամեն ինչ ասված է: Մենք որեւէ խնդիր չունենք:

Պատրաստ ենք այսօր եւեթ, այս վայրկյանին, առանց որեւէ նախապայմանի Թուրքիայի հետ սկսել լուրջ առեւտրատնտեսական հարաբերություններ, բացել սահմանները, Թուրքիային տրամադրել մեր ճանապարհները տարանցիկ առեւտրի համար: Թուրքիան նույնպես, կարծեմ թե, այդ ամենին համաձայն է, բայց իր համար ստեղծել է մի թակարդ, որից չի կարողանում դուրս գալ, քանի որ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավումը նա կապում է հայ-ադրբեջանական հարաբերությունների բարելավման, մասնավորապես, ԼՂ խնդրի կարգավորման հետ: Մենք փորձեցինք նրանց ապացուցել, համոզել, որ նրանք պետք է կարողանան անջատել հայ-թուրքական հարաբերությունների բարեկարգումն ու նորմալացումը հայ-ադրբեջանական հարաբերություններից, սակայն դա չհաջողվեց: Միգուցե մենք ենք մեղավոր, որ լավ չենք բացատրել: Ինչեւէ, ես գտնում եմ, որ եթե Թուրքիան իսկապես շահագրգռված է Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել, եթե Թուրքիան իսկապես շահագրգռված է նպաստել ԼՂ հարցի լուծմանը, որը նա, ըստ էության, դարձրել է հարաբերությունների բարելավման նախապայման, ապա, սա իմ խորին համոզումն է, Թուրքիան իր նպատակներին շատ ավելի հեշտությամբ կհասներ, եթե միշտ ճիմա բարելաված լիներ իր հարաբերությունները Հայաստանի հետ: Հայաստանի հետ հարաբերությունների բարելավմամբ Թուրքիան կնպաստեր նաեւ ԼՂ հարցի խաղաղ լուծմանը:

ԱՐԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ, «Արմենպրես» – Պարոն Նախագահ, վերջին տարիներին մեր քաղաքական գործիչների կողմից հատկապես շատ է խոսվում ազգային գաղափարախոսության, ազգային ծրագրերի անհրաժեշտության մասին, իսկ Դուք մի առիթով նշեցիք, որ ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է: Կարելի՞ է իմանալ, դա ինչ մեկնություն ուներ՝ քաղաքակա՞ն, գիտակա՞ն թե՞ փիլիսոփայական, եւ արդյո՞ք Դուք ընդունում եք անհատի գործոնը պատմության մեջ եւ մասնավորապես մեր պետության կայացման գործում:

– Ես արտահայտել եմ ո՛չ փիլիսոփայական, ո՛չ բաղմական, ո՛չ էլ գիտական միտք: Ես արտահայտել եմ ընդամենը շատ պարզ, մարդկային միտք, որը բխում է ժողովրդավարության իմ հասկացողությունից: Ես ասել եմ՝ ազգային գաղափարախոսությունը կեղծ բաղաքական կատե-

գոռիա է, եւ այսօր էլ դա կրկնում եմ ու վաղն էլ կասեմ: Ի՞նչ ճկատի ունեմ: Ի՞նչ են այդ մարդիկ ճասկանում ազգային գաղափարախոսության տակ: Մեկ բան՝ ամբողջ ազգը պետք է ընդունի այդ գաղափարախոսությունը: Ես այնպես եմ ճասկանում, որ ամբողջ ազգը մեկ գաղափարախոսություն ընդունում է միայն տոտալիտար համակարգերում, միայն իդեոլոգիական պետություններում: Իսկ երբ ժողովրդավարություն է, ապա ոչ ոք ոչ ոքի չի կարող պարտադրել որեւէ գաղափարախոսություն: Հայաստանում այսօր առկա բոլոր գաղափարախոսություններ՝ լինի դա կոմունիստական, սոցիալ-դեմոկրատական, լիբերալ-դեմոկրատական, ազգայնական, թե ծայրաճեղ-ազգայնական՝ ինձ համար ազգային գաղափարախոսություններ են, որովճետեւ սրանցից յուրաքանչյուրն իր մեջ է տեսնում ազգի խնդիրների լուծման լավագույն ճանապարճը: Եթե ազգին պարտադրվում է ազգային գաղափարախոսություն, դրանով խաչ եք ճաշում ժողովրդավարության վրա: Կա՛մ մեկը, կա՛մ մյուսը: Այո, ճնարավոր է ազգին պարտադրել մի գաղափարախոսություն: Այդպիսի բան տեսել ենք եւ տեսել ենք նաեւ դրա ճետեւանքները:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ, «Ազգ» – Անցյալ տարի նախընտրական պայքարի ընթացքում Դուք հայտարարեցիք, որ եթե Հայաստանի ընդդիմությունը գա իշխանության, ապա Ղարաբաղում կսկսեն ռազմական գործողություններ, այսինքն պատերազմը կվերսկսվի: Այսօր ինչպիսի՞ն է իրավիճակը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ ԼՂ պաշտպանության նախարարը նույնպես չի բացառում ռազմական գործողությունների վերսկսումը՝ այս անգամ չկապելով Հայաստանում ընդդիմության իշխանության գալու ճետ:

– Ես, այո՛, ճայտարարել եմ նման բան: Բառացի ոչ այնպես, ինչպես Դուք եք ասում, բայց էությունը ճիշտ եք առաջադրում: Այո՛, ես համոզված էի, որ ընդդիմությունը, գալով իշխանության գլուխ, պիտի սկսեր դիմել ակածախնդրությունների, որոնցից առաջինը լինելու էր Ղարաբաղում պատերազմի վերսկսումը: Բայց, գիտեք ինչ, սա մի ենթադրություն է, որը ճնարավոր չէ ապացուցել: Ինչպես գիտեք, պատմության մեջ «եթե» գոյություն չունի: Ինչ վերաբերում է Բաբայանի ճայտարարություններին, ապա ես կարծում եմ՝ դրանք անզգույշ, ոչ ճկուն ճայտարարություններ են, մանավանդ կարգավորման պրոցեսի այսօրվա վիճակի տեսակետից: Ես կուզեի ճակված լինել դա համարելու անձնական կարծիք, որը բացարձակապես չի արտաճայտում ԼՂՀ կառավարության կարծիքը: Մենք եւ ամբողջ աշխարճը տեսանք, որ ԼՂ ժողովուրդը անցկացրեց ժողովրդավարական ընտրություններ: Ե՛ւ ինձ համար, Ե՛ւ ամբողջ աշխարճի համար ԼՂ կարծիքն արտաճայտում է ԼՂՀ Նախագաճը: Իսկ պաշտպանության նախարարը, բնական է, միշտ պետք է պատրաստ լինի պատերազմի, ցանկացած պաշտպանության նախարար՝ նաեւ Վազգեն Սարգսյանը: Քաղաքականությունը՝ քաղաքականություն, խաղաղության ձգտումը՝ խաղաղության ձգտում, բայց դրա ամենաճիմնական կովաններից մեկն էլ բանակի ճզորությունն է, ռազմական ուժը, որը ես դիտում եմ ոչ թե որպես պատերազմի գործոն, այլ՝ խաղաղության: Այո, պաշտպանության նախարարը պետք է պատրաստ լինի պատերազմի, որպեսզի ոչ մի անակնկալի չգա:

Ինչ վերաբերում է ընդճանրապես պատերազմի ճնարավորությանը, ես պետք է ասեմ ճետեւյալը: Ես գտնում եմ, որ առաջիկայում պատերազմ չի լինելու, որովճետեւ խաղաղության գործընթացն արդեն բավականին լրջացել է: Պատերազմն այսօր ձեռնտու չէ ոչ մի կողմին՝ ո՛չ Ղարաբաղին, ո՛չ Ադրբեջանին, բանի որ ճույս կա, եւ շատ լուրջ ճույսեր կան, որ այդ ճարցը կլուծվի խաղաղ ճանապարճով:

ՏԻԳՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, «Ինտերֆաքս» – Մեծարգո Նախագաճ, վերջին ժամանակներս ճաճախակի խոսում են Ադրբեջանի եւ Հայաստանի ռազմական ուժերի ճարաբերակցության մասին: Մեծ մասամբ Ադրբեջանի առավելությունն է նշվում այս ճարցում: Ներկայումս ինչ ճարաբերակցություն ունեն ռազմական ուժերը՝ Հայաստանի եւ Ադրբեջանի: Այդ կապակցությամբ ճետաքրքիր է իմանալ նաեւ՝ կա՞ որեւէ արդյունք եռակողմ ճանձնաժողովի աշխատանքում, որը զբաղվում է Ռուսաստանի զենքը Անդրկովկաս ներկրելու ճարցով:

– Առաջին ճարցի առնչությամբ. թվեր չեմ ասի: Մենք ռազմական գաղտնիքներ ճրապարակելու իրավունք չունենք: Այո, մեր ճաշվարկներով, վերջին ճինգ տարիների ընթացքում, Ադրբեջանն ստացել է կրկնակի, եռակի անգամ ավելի շատ զենք, տեխնիկա եւ զինամթերք, քան Հայաստանը: Անցած պատերազմների ընթացքում Ադրբեջանն իր այդ

ձեռ՛ բերած տեխնիկայի, զինամթերի, զենքի հիմնական մասն սպառել, մաշեցրել է: Այսօր, ես գտնում եմ, կա հավասարակշռություն, եւ եթե այդպես չլիներ, եթե Ադրբեջանն այսօր էլ ունենար այդ կրկնակի – եռակի գերակշռությունը, վստահ եմ, նա վաղուց պատերազմը վերսկսած կլիներ: Ինչ վերաբերում է հաննձնաժողովին, ապա հանձնաժողովն իր աշխատանքներն, ըստ էության, դեռ չի սկսել: Դեռեւս եռակողմ հանդիպում տեղի չի ունեցել: Առայժմ ընթանում են երկկողմ խորհրդակցություններ:

ԺՈՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, Ամերիկայի ճարտարագետների եւ գիտնականների միություն (ինտերնետով ԱՄՆ-ից) – Լոս Անջելեսում սփյուռքահայությունն ունի հսկայական տեխնիկական, տեխնոլոգիական եւ գիտական ներուժ: Արդյոք Դուք ինչպե՞ս եք նախատեսում օգտագործել այդ տեխնիկական հնարավորությունները մեր երկրի առաջընթացի եւ զարգացման համար:

– Ես նախ մի բան չեմ հասկանում, թե ինչ են նշանակում այդ տեխնիկական հնարավորությունները Լոս Անջելեսում: Դա ի՞նչ է, տներում հաստոցնե՞ր ունեն, կոմպյուտերնե՞ր ունեն, թե՞ դրանք հիմնարկություններ են կամ կազմակերպություններ: Եթե խոսքը Լոս Անջելեսի ռադիոկայանների, հեռուստակայանների, մամուլի կենտրոնների մասին է, որոնք մենք մինչեւ հիմա լավ չենք օգտագործել, ապա այս հարցում մենք արդեն լուրջ աշխատանքներ ենք տանում, նաեւ՝ մամուլի նոր ստեղծված վարչության հետ: Վերջինիս տեխնիկական հագեցումը, կարծում եմ, միջազգային եւ ներհանրապետական առումով, մեր առաջիկա կարեւորագույն խնդիրներից է, եւ մենք պետք է աշխատենք այդ հնարավորությունները լավագույնս օգտագործել: Ինչ վերաբերում է Հայաստանում այդ ներուժի օգտագործմանը, ապա ես կարծում եմ՝ դրա հնարավորությունները վաղուց կան եւ ով ուզել է, կարողացել է իր հնարավորությունների սահմաններում Հայաստանին օգնել թե՛ «Հայաստան» հիմնադրամի միջոցով, թե՛ նպատակային ծրագրերի իրականացման, թե՛ համատեղ ձեռնարկությունների միջոցով: Մասնավորապես, Լոս Անջելեսից բավականին թվով գործարարներ արդեն Հայաստանում ունեն համատեղ ձեռնարկություններ, նույնիսկ առանձին սեփական ձեռնարկություններ:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ, «Նոր հազարամյակ» ամսագիր – Պարոն Նախագահ, ես իմ հարցը տալիս եմ՝ ելնելով այն համոզումից, որ Դուք հակված չեք Ձեզ համարել անսխալական: Ասացեք խնդրեմ, եթե Ձեզ հնարավորություն տրվի ուղղելու Ձեր կառավարման ժամանակահատվածում կատարած որեւէ սխալ, Դուք ո՛ր սխալը կնախընտրեիք ուղղել:

– Դժվար հարց եմ տալիս: Մեկ սխալ չկի ուղղի. հավանաբար, տասնյակ սխալներ կուղղեի: Երբեմն կարելի էր ավելի ճիշտ կողմնորոշվել կադրերի ընտրության հարցում: Ոչ միայն ես, այլ նաեւ մեր ողջ գործադիր իշխանությունը՝ կարող էինք ավելի համարձակ լինել տնտեսական բարեփոխումների իրականացման գործընթացում: Մենք ունեցել ենք, այո, եւ վրիպումներ, եւ հապաղումներ: Պատմությունը հետին թվով դատելիս միշտ կարելի է այնպես արթագրել, որ ստեղծվի իդեալական գործունեություն: Այնպես որ՝ ես մեկ սխալ չէ, տասնյակ սխալներ կնշեմ:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ, «Լրաբեր» – Պարոն Տեր-Պետրոսյան, Ձեր կարծիքով, աջ բլոկի կազմավորումը չի՞ դանդաղում արդյոք, եւ այդ կապակցությամբ 99 թվականի խորհրդարանական ընտրություններում Ձեր կարծիքով, ո՛ր ուժերը պետք է հիմնականում մրցակցեն:

– Ես չեմ կարծում, որ դանդաղում է, եւ Դուք ճիշտ ժամկետ նշեցիք: Այդ աջ ուժերի նոր միջկուսակցական կամ արդեն միակուսակցական դաշինքը լիովին ձեւավորված կլինի 1999 թ. ընտրություններից մի քանի ամիս առաջ: Դա նշանակում է, որ առնվազն այս ուժը լրջորեն կմասնակցի այդ ընտրություններին: Ինչ վերաբերում է մյուս ուժերին, ես չեմ կարող ասել, թե նրանք ինչպես կարող են կազմակերպվել եւ ինչ փաստարկներ կարող են բերել այս ուժի դեմ:

ԱՎԵՏ ԴԵՄՈՒՐՅԱՆ, «ՌԻԱ Նովոստի» եւ «Առկա» գործակալություններ – Պարոն Նախագահ, ինչպե՞ս եք Դուք վերաբերվում տեղեկատվական թափանցիկությանը սեփականաշնորհման գործընթացում: Եւ այս առիթո՞վ որքանո՞վ դա կաջակցի հայ-ռուսական տնտեսական հարաբերություններին:

– Եթե նշանակում թափանցիկություն: Ձեր հարցից ես ենթադրում եմ, որ սեփականաշնորհման գործընթացը գաղտնի է պահվում, աճուրդները թաղվում են մեր լրագրողներից, այո՞, այդպիսի փաստե՞ր կան:

ԱՎԵՏ ԴԵՄՈՒՐՅԱՆ – Չի հրապարակվում:

– Եթե դուք հետաքրքրված եք կարող եք այդ փաստերն ստանալ: Ձե՞ր կարող: Որևէ լրագրողի մերժե՞լ են որևէ տեղեկություն տալ սեփականաշնորհման գործընթացի վերաբերյալ, աճուրդների վերաբերյալ, գնահատումների վերաբերյալ: Ես կխնդրեմ բոլոր կոնկրետ փաստերն ինձ ներկայացնել:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ – Խոսքը միջազգային աճուրդների մասին է:

– Միջազգային աճուրդ ունի իր օրենքները: Գործարի գաղտնիությունը պետք է պահպանվի: Այլապես ոչ մի գործարք տեղի չի ունենա: Գործարքի գաղտնիությունը որոշ ժամկետում պիտի պահպանվի: Երբ գաղտնիքը չպահպանվի, ոչ մի գին չեն տա:

ՄԱՐԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, «Արմենպրես» – Մեծարգո պարոն Նախագահ, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյա հոբելյանին նվիրված հանդիսության ժամանակ, հիշատակելով Պատմահոր կողմից ազգային արժանապատվության եւ սեփական ուժերի գնահատման իրապաշտական գիտակցության ընկալումը, Դուք նշեցիք, որ այսօր էլ մեր ժողովրդին հենց այդ է անհրաժեշտ: Արդյո՞ք մեր ժողովուրդը, պետությունը, իշխանությունները, քաղաքական ուժերը անցած 6 տարիների ճանապարհին անցել են հենց այդ գիտակցությամբ:

– Ես ուզում եմ ճիշտ, նախ, կոնկրետ ինչ եմ ասել: Խորենացին շատ մեծ միտք է արտահայտել դեռ 1500 տարի առաջ, կարողացել է փայլուն կերպով ձեւակերպել «Ոտքերդ վերմակիդ չափով երկարացրու» բանաձեւը: Այո, ես գտնում եմ եթե ազգը, եւ ոչ միայն ազգը, այլեւ մարդը, չի կարողանում ճիշտ գնահատել իր ուժերը, այդ ազգն ու այդ մարդը կարող են մատնվել խայտառակ վիճակների, ինչպես մենք տեսնում ենք ամեն բայլափոխի: Առնվազն ես եւ իմ ընկերներս առաջնորդվել ենք այդ գիտակցությամբ: Մենք, համենայն դեպս, չենք արել մի բայլ՝ լինի դա բաղամականության մեջ թե տնտեսության, որը վեր լիներ մեր ուժերից, մեր ճնարավորությունների սահմանից: Խորենացին դա է ասել:

ԱԼՎԱՐԴ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Տեղեկատվության վարչություն – Մեծարգո պարոն Նախագահ, տարածաշրջանի երկրները՝ Թուրքիան, Իրանը, Ադրբեջանը, Վրաստանը, տարբեր մակարդակներով, բազմիցս ընդգծել են իրենց երկրների ծգտումը եւ հնարավորությունը տարածաշրջանում առաջնորդ դառնալու համար: Եթե Դուք ընդհանրապես ընդունում եք տարածաշրջանային լիդեր գաղափարը, ապա, ըստ Ձեզ, Հայաստանն ի՞նչ հնարավորություններ կունենա ապագայում նման դեր ստանձնելու համար:

– Նայած՝ ինչ եմ հասկանում տարածաշրջան ասելով: Եթե հասկանում եմ Մերձավոր Արեւելքը, ապա ո՛չ Հայաստանը, ո՛չ Վրաստանը, ո՛չ Ադրբեջանը երբեմ լիդեր չեն դառնա: Նորից խորհնացուն հիշենք: Ինչ վերաբերում է Թուրքիային, այո՛, Թուրքիան ունի նման հավակնություններ մերձավորարեւելյան տարածաշրջանում: Այսօր արդեն նույնիսկ մի նոր եւ ավելի լայն տերմին գոյություն ունի. մեր մամուլում շեմ հանդիպել, բայց արդեն գիտնականների, փորձագետների մակարդակում շատ սովորական է դարձել՝ Մեծ Մերձավոր Արեւելք, որն ընդգրկում է նաեւ Կովկասը եւ Միջին Ասիան: Այո, Թուրքիան հավակնում է այս տարածաշրջանում դառնալ նման լիդեր, բայց, վստահ եմ, դա նույնպես չի հաջողվի, որովհետեւ Թուրքիան այնման հակասություններ ունի տարածաշրջանի մյուս երկրների հետ, որոնցից մի քանիսը նույնպես չէին գլանա լիդերություն անելու:

ԳԵՒՈՐԳ ԱՍՍԱՏՐՅԱՆ, Հայաստանի ազգային հեռուստատեսություն, «Լրաբեր» – Պարոն Նախագահ, Ազգային ժողովի նախորդ նստաշրջանում փորձ արվեց ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողով: Ձեր կարծիքով, Հայաստանում կա՞ կոռուպցիա: Եթե այո, ի՞նչ միջոցներով պետք է պայքարել դրա դեմ:

– Եթե ես ասեմ, որ Հայաստանում կոռուպցիա չկա, դուք ինձ կճավատա՞ք: Իհարկե, կա կոռուպցիա, եւ դա մեր ամենամեծ չարիքներից մեկն է: Մենք այստեղ հասկանում ենք թե՛ մեղքի մեր բաժինը եւ թե՛ անցյալի ժառանգությունը՝ ինչպես բարեւի, այնպես էլ վարչական կամ պետական ապարատի կադրերի տեսակետից: Այս ամենը, գումարած տնտեսության անկման ժամանակ, խորհրդային Միության բայթյումից հետո, առաջացած բառսային, աճուրդ վիճակը, օրենսդրության բացակայությունը, իսկ հետագայում օրենսդրության անկատարությունը, ստեղծում են շատ լուրջ հող կոռուպցիայի համար: Կա նաեւ մի այլ

հանգամանք. դա պետական պաշտոնյաների վարձատրության հարցն է: Եթե պետական պաշտոնյաներին՝ լինի դա տեղական իշխանությունների թե ոստիկանության աշխատակից, կամ թեկուզ բժիշկներին (որոնք նույնպես պետական պաշտոնյաներ են, որովհետեւ բյուջետային աշխատողներ են), վարձատրում ես 20 – 30 դոլար, նրանք կաշառք են վերցնելու:

Կաշառակերության դեմ պայքարի միջոցները, ես կարծում եմ, հետեւյալն են: Նախ՝ օրենսդրության կատարելագործումը, որպեսզի օրենքներում չլինեն հակասություններ, չլինեն բացթողումներ, որոնցից ցանկացած չինովնիկ կարող է օգտվել սեւ գործարքներ կատարելու համար: Երկրորդը՝ կադրերի վերապատրաստման, կադրերի մաքրման խնդիրն է: Դա շարունակ տեղի է ունենում. անընդհատ փոփոխություններ են կատարվում, անընդհատ հեռացվում են աշխատանքից: Միայն ՆԳՆ համակարգում անցյալ սեպտեմբերից մինչեւ այս տարվա սեպտեմբեր՝ մեկ տարվա կտրվածքով (նույնիսկ կարող եմ համարել՝ ընտրություններից հետո մեկ տարվա ընթացքում) 57 անձի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, որոնցից դատապարտվել եւ պատիժ են կրում 42-ը, մնացածի նկատմամբ քննությունը շարունակվում է: Վարկաբեկիչ հանգամանքներով աշխատանքից ազատվել են, այսինքն՝ վարչական տույժի են ենթարկվել 293 աշխատող, 1100 աշխատող էլ ենթարկվել են կարգապահական տույժերի: Այս աշխատանքը շարունակվում է բոլոր նախարարություններում, բոլոր գերատեսչություններում:

Հաջորդը, ինչպես արդեն ասացի, վարձատրության խնդիրն է: Այո, գուցե մենք ազգովին պիտի մտածենք, կոռուպցիայի դեմ պայքարը հնարենք առաջնահերթ գործ, եւ դուք էլ օգնեք մեզ, Ա.Ժ.-ին: Եթե պետության միջոցները չեն ներում բոլորին բարձր աշխատավարձ վճարել, պետք է գոնե դատավորներին ու ոստիկանությանը այդ աշխատավարձը վճարել: Գիտեմ, այդ գիտակցությունը այսօր հնարավո՞ր է սերմանել, թե՞ ոչ: Հանուն ձեզ, հանուն մեր ժողովրդի բարօրության դա պետք է անել: Ի դեպ, մեր հարեւան Վրաստանն արդեն համարձակորեն գնացել է այդ բայլին: Թեեւ աշխատավարձերն ավելի ցածր են, քան մեզ մոտ, բյուջեն ըստ շնչի ավելի ցածր է, քան մերը, բայց նրանք դատավորներին, օրինակ, նշանակել են շուրջ 300 դոլար աշխատավարձ: Սա

էլ մի միջոց է կոռուպցիայի դեմ պայքարելու համար: Բայց դրա համար պետք է հասարակական համապատասխան մթնոլորտ:

ԱՐՄԱՆ ՎԱՆԵՍՔԵՀՅԱՆ, «Գոլոս Արմենիի» – Պարոն Նախագահ, եթե կարելի է, մեկնաբանեք մի փաստ. երեկ՝ սեպտեմբերի 25-ին Պետական դուման իր աջակցությունն է հայտնել ռուս-բելոռուսական միությանը Հայաստանի միանալու նախաձեռնությանը՝ 344 «կողմ», 1 «դեմ» ձայների հարաբերակցությամբ: Այդ թիվը ինչպե՞ս կմեկնաբանեիք:

– Նախ մի ճշտում. Հայաստանի նախաձեռնություն գոյություն չունի: Հայաստանում ինչ-որ հասարակական ուժեր են հանդես եկել նման նախաձեռնությամբ: Ինչ վերաբերում է Դումայի այդ որոշմանը, այն ինձ չի զարմացնում բացարձակապես: Դումայում այդ քվեարկությունը, կարծում եմ, արդյունք է տարբեր շարժառիթների, որովհետեւ տարբեր են խաղաքական ուժերը, որոնք քվեարկել են նման ձեւով: Համոզված եմ՝ մի մասը անկեղծորեն, ազնվորեն եւ Հայաստանի նկատմամբ բարեկամական ամենաջերմ զգացմունքներով շահագրգռված է, որ Հայաստանը միանա այդ միությանը: Մի այլ մասը՝ նույնքան անկեղծորեն, նույնքան ազնվորեն եւ բարեկամաբար կողմնակից է հայ-ռուսական հարաբերությունների խորացմանն ու ամրապնդմանը: Մի մասի մոտ խոսում են կայսերական զգացումները, որովհետեւ սրանում տեսնում են ինչ-որ շանս՝ վերագտնելու Ռուսաստանի երբեմնի փառքն ու հզորությունը: Իսկ ինչ վերաբերում է ընդհանրապես ե՛ւ փաստաթղթին, ե՛ւ այս գործընթացին, որ տեղի է ունենում Հայաստանում, գուցե լավ արի է, որ ես միանգամից այդ հարցին պատասխանեմ, եթե դուք ինձ թույլ տաք:

Առաջինը. պետք է փաստաթղթում գնահատել նաեւ շատ կարեւոր պահեր: Երեկվա որոշմամբ Դուման, փաստորեն, իր աջակցությունն է հայտնում եւ ողջունում է հայ-ռուսական վերջին բարեկամական պայմանագրի ստորագրումը եւ իր կամքն է արտահայտում՝ խորացնել Հայաստանի հետ բարեկամական հարաբերությունները՝ Հայաստանը դիտելով որպես սարատեգիական հուսալի գործընկեր: Ինչ վերաբերում է հայաստանյան գործընթացին, դուք գիտեք, որ կոմունիստների եւ մտավորականների մի խմբի նախաձեռնությամբ, իրարից անկախ, հավաք-

վել են համապատասխան ճանակությամբ ստորագրություններ: Ես չգիտեմ, ասում են՝ շուրջ 1 մլն է: Շատ լավ, բայց ես կուզեի ասել հետեւյալը: Կարծում եմ, այսօր այս հարցի արծարծումը վնասակար է հայ-ռուսական բարեկամության, համագործակցության եւ փոխօգնության պայմանագրի վավերացման խնդրի տեսակետից: Ես գտնում եմ, որ որոշ ուժեր փորձելու են խոչընդոտներ հարուցել մեր կնքած Պայմանագրի վավերացման հարցում: Ադրբեջանը պատահաբար չի սկսել իր մամլո արշավը մեր Պայմանագրի դեմ: Մենք դրա փորձն ունենք. հիշեք Ռուսաստանի կողմից Հայաստանին՝ այսպես կոչված, անօրինական զենք տրամադրելու հարցն Ադրբեջանը բարձրացրեց այն ժամանակ, երբ Ռուսաստանի Դումայում դրվել էր Հայաստանում ռուսական բազայի վերաբերյալ պայմանագրի վավերացման հարցը: Ադրբեջանի ամբողջ պայքարն ուղղված էր այդ պայմանագրի վավերացման վիժեցմանը, բայց դա նրանց չհաջողվեց: Ձեզ թվում էր, թե մենք հերթական դիվանագիտական պարտությունն ենք կրել, ինչի որ ամբողջ մամուլը ոգեւորված էր ադրբեջանական այս աղմուկով: Բայց, իրականում, Ադրբեջանը ջախջախիչ դիվանագիտական պարտություն կրեց. դուք հիշում եք, թե ինչպիսի արդյունքներ ունեցավ այդ պայմանագրի վավերացման հնարկությունը:

Հիմա նույնն է տեղի ունենում: Ադրբեջանը պիտի ամեն ինչ անի, որպեսզի վիժեցնի Հայ-ռուսական պայմանագրի վավերացումը, եւ, վստահ եղեք, Ռուսաստանում էլ Ադրբեջանը կգտնի ուժեր, եւ անգամ Դումայում, ուր երեկ անա այսպես միանամուռ հնարկել են, կգտնվեն մարդիկ, որոնք կպայքարեն Հայ-ռուսական պայմանագրի վավերացման դեմ: Այս հարցի արծարծումն այսօր եւ՛ Հայաստանում, եւ՛ Ռուսաստանում ստեղծելու է հակազդեցություն: Մինչեւ հիմա վերոհիշյալ մարդիկ ճանգիստ ճավաճել են ստորագրությունները, տարել են իրենց հարոզարշավը, բայց հակառակ հարոզչության, ըստ էության, գոյություն չունի: Երբ փորձ արվի հարցն արդեն օրինական ճանապարհով առաջ մղել, այսինքն՝ ներկայացնել խորհրդարան, պահանջել հանրահվե եւ այլն, բնականաբար, Հայաստանի շատ հաղաքական ուժեր պիտի հակաճարոզչություն սկսեն: Սա շատ բնական է: Այս հակաճարոզչությունը պիտի ունենա իր անդրադարձը Ռուսաստանում: Հակաճարոզչության ժամանակ հնարավոր է նաեւ, որ մեր բարեկամների հա-

մար հնչեն տհաճ արտահայտություններ: Այս ամենը գրգռելու է մթնոլորտը՝ վավերացման արարողությունից առաջ: Ուրեմն ես խորհուրդ կտայի այս գործի նախաձեռնողներին ոչ թե պասիվ սպասել, այլ հակառակը՝ շատ ակտիվ գործել, օգտագործել իրենց ազդեցության բոլոր հնարավորությունները եւ՛ Դումայում, եւ՛ Մոսկվայի հաղաքական շրջանակներում, եւ՛ Հայաստանում՝ Հայ-ռուսական պայմանագիրը շուտափույթ կերպով վավերացնելու համար: Միայն դրանից հետո է, որ, եթե հաճելի է, կարելի է խոսել նաեւ այդ միությանը միանալու կամ չմիանալու մասին:

ՕՀԻՆ ՔԵՇԻՇՅԱՆ, «Արմինյո օրգերվըր» թերթի խմբագիր, Լոս Անջելես, (ինտերնետի միջոցով) – Որո՞նք եք համարում հայ-ռուսական պայմանագրի ամենաարժեքավոր կետերը:

– Մենկ ակնհայտ է, այն արտահայտված է հենց վերնագրում: Դա փոխօգնության պարտավորությունն է, որ կողմերը վերցնում են իրենց վրա՝ կողմերից մեկի վրա ագրեսիայի կամ ագրեսիայի սպառնալիքի ծագման դեպքում: Երկրորդը՝ հայ-ռուսական տնտեսական հարաբերություններին վերաբերող ծավալուն դրույթներն են, որոնք չափազանց մանրամասն արտահայտված են այդ Պայմանագրում: Եւ այս առումով ես պետք է նշեմ, որ արդեն կատարված են զգալի, շատ լուրջ գործնական քայլեր՝ առնվազն երեք տնտեսական ծրագրերի վերաբերյալ, որոնք Հայաստանի համար ունեն ստատեգիական նշանակություն: Մեկը ատոմակայանն էր, որի գործարկման ծրագիրը շարունակվում է, եւ որի հետագա շահագործումը նույնպես տեղի է ունենալու Ռուսաստանի հետ ամենասերտ համագործակցությամբ, երկրորդը՝ «Դազպրոմի» հետ ստորագրված հանձնաժողովն էր, որի նշանակությունը գուցե պակաս չէ, հան ատոմակայանի գործարկման հարցում հայ-ռուսական համագործակցությունը: Երրորդը «Նախիջեւան» սինթետիկ կաուչուկի գործարանի, վերակենդանացման ծրագիրն է, որն արդեն համատեղ իրականացվում է ռուսաստանյան ընկերություններից մեկի հետ: Դա նույնպես շափազանց լուրջ ծրագիր է: Ընդհանրապես՝ էներգետիկայի հետ կապված հարցերը ես հիմնականում համարում եմ ստատեգիական նշանակություն ունեցող հարցեր: Այնուհետեւ՝ ես շատ մեծ կարեւորություն եմ տալիս այդ պայմանագրի, այսպես կոչված, հումանիտար բլոկին՝ մշակութային հարա-

բերություններին, սոցիալական ոլորտին, մարդու եւ ազատացու իրավունքների պաշտպանության ճարցերին: Բացի փոխադարձ օգնության պարտավորությունից, լուրջ փաթեթ է իրենից ներկայացնում նաեւ ռազմական համագործակցության բնագավառը: Դա վերաբերում է ե՛ւ կադրերի պատրաստմանը, ե՛ւ համատեղ զորավարժություններին, ե՛ւ սաիմանների համատեղ պաշտպանությանը, ե՛ւ միասնական հակաօդային պաշտպանությանը, ե՛ւ ռազմա-արդյունաբերական համալիրների համագործակցությանը եւ այլն, եւ այլն:

ՌԻՏԱ ՇԱՌՈՅԱՆ, «Հորիզոն» հայկական հեռուստաընկերություն – Ինչպե՞ս եք գնահատում Հայաստան – Սփյուռք ներկա փոխհարաբերությունները եւ ինչպե՞ս եք տեսնում այդ հարաբերությունների մոտ ապագան՝ կապված երկքաղաքացիության օրենքի ընդունման կամ մերժման խնդրի հետ:

– Ես Հայաստան – Սփյուռք հարաբերությունները գնահատում եմ միանգամայն բավարար: Ավելին չէր կարող լինել, բան կա, որովհետեւ ե՛ւ Սփյուռքը, ե՛ւ Հայաստանը համագործակցության մեխանիզմների ստեղծման ճարցում դեռեւս գտնվում են փնտրտուքների մեջ: Անկախության վեց տարիների ընթացքում կատարված է առավելագույնը, գտնված են համագործակցության լուրջ մեխանիզմներ: Դրա մասին է խոսում մասնավորապես Սփյուռքի բազմաթիվ մասնագետների աշխատանքը Հայաստանում: Շատ շատերը, տասնյակ մարդիկ իրենց ուժը, կարողությունները եւ մտավոր պոտենցիալը օգտագործեցին Հայաստանում եւ այսօր էլ օգտագործում են: Ես պետք է շափազանց բարձր գնահատեմ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեությունը, անկախ խոսակցություններից, որոնք ժամանակ առ ժամանակ ծագում են այն մարդկանց մեջ, որոնք տառապում են թերարժեքության բարդույթով եւ չեն ուզում տեսնել ոչ մի լավ բան: Մենք վարժված ենք. եթե Հայաստանում կամ հայկական միջավայրում տեղի է ունենում մի լավ բան, անմիջապես գտնվում են չարախնդացողներ, անմիջապես գտնվում են մարդիկ, որոնք նսեմացնում են դա: Հիմնադրամի գործունեության ոչ լրիվ հինգ տարվա ընթացքում այն արդեն իրականացրել է 53 մլն դոլարի ծրագրեր: Հայ ժողովրդի պատմության մեջ ոչ մի բարեգործական կազմակերպություն կամ ազգային կառույց, լինի դա եկեղեցին թե զանազան բարեգործական հիմնարկները, հինգ տարվա ընթացքում 53 մլն դոլարի ծրագիր չեն իրականացրել: Հիմնադրամը հրաշալի կառույց է, որն արդեն ապացուցել է իր արդյունավետությունը: Ուղղակի բարի կամք է պետք օգնելու այս կառույցին եւ ոչ թե չարախնդալ, քանի որ այն բացառապես ծառայում է ազգի նպատակներին: Այսօր խոսում ենք Ղարաբաղի մասին, Ղարաբաղի շենացման, ժողովրդի բարօրության, անկախության, միացումի եւ այլնի մասին, բայց ոչ ոք չի գնահատում Դորիս – Ստեփանակերտ ճանապարհի նշանակությունը: Եթե Հիմնադրամն ուրիշ ոչինչ չաներ, եթե կառուցեր միայն Դորիս – Ստեփանակերտ ճանապարհը, պետք է Հիմնադրամը դնեիր ձեր գլխին:

Կան, իհարկե, նաեւ բյուրմբոնումներ, բայց ես կեղծիք եմ համարում, երբ հարմական մի ուժի հետ եղած բյուրմբոնումները փորձում են տարածել ամբողջ Սփյուռքի վրա: Այո, մենք ունենք խնդիրներ ՀՅԴ-ի հետ, բայց ես չեմ կարծում, եւ որեւէ սփյուռքահայ չի ընդունի, որ Սփյուռքը՝ դա դաշնակցությունն է, ո՛չ, ամենեւի՛ն ոչ: Դաշնակցությունը Սփյուռքի համազգային կամ համասփյուռքյան կառույցներից մեկն է ընդամենը: Մենք ունենք շատ ավելի հզոր կառույցներ՝ դա Հայ Առաքելական Եկեղեցին է, Հայ Ավետարանական եկեղեցին, Հայ Կաթողիկե եկեղեցին, ունենք եւս երկու ավանդական կուսակցություն, Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն, Հայկական համագումար, եւ այս բոլոր համասփյուռքյան կառույցներից միայն դաշնակցությունն է, որ մեզ հետ պրոբլեմներ ունի: Մնացած բոլոր կազմակերպությունների հետ մեր հարաբերությունները փայլուն են, եւ մեր համագործակցությունը հրաշալի է: Ուզում եմ ասելու, որ, այո՛, մենք Սփյուռքի հետ երկխոսության դժվարություն ունենք, որովհետեւ Սփյուռքը չունի միասնական ներկայացուցչական մարմին: Սփյուռքի համար մեզ հետ հարաբերվելը շատ հեշտ է. կա մեկ պետություն, մեկ իշխանություն: Իսկ մեզ համար նրանց հետ հարաբերվելը շափազանց բարդ խնդիր է: Պարզապես Սփյուռքը դեռեւս չի կարողացել դուրս գալ ավանդական ազգային կառույցների մտապատկերից եւ մտածել վերսփյուռքյան կամ համասփյուռքյան միասնական կառույցի ստեղծման մասին: Մինչեւ սա չլինի, դժբախտաբար, այս թյուրմբոնումները շարունակվելու են, եւ մեր համագործակցության անարդյունավետությունը լինելու է:

Բայց բոլոր դեպքերում կան նաեւ ուրախալի երեւույթներ, սա էլ պիտի նշեմ: Գոնե հիմա արտաքին բաղաքականության մեջ նկատվում է ուժերի համախմբում, մասնավորապես՝ Ղարաբաղի հարցում ծագած բարդությունների ֆոնի վրա: Սփյուռքում նկատվում է ուժերի համախմբում, եւ կազմակերպությունները, որոնք ժամանակի ընթացքում բացարձակապես իրար հետ համագործակցելու մտադրություններ չէին դրսեւորել, արդեն մասնակցում են համատեղ գործողությունների՝ հանուն Հայաստանի, հանուն Արցախի: Ես կարող եմ ասել՝ Հայաստանին օգնելու հարցում Հայկական համագումարը եւ դաշնակցությունն արդեն շատ լավ համագործակցում են: Ալիեւի՝ ԱՄՆ կատարած այցելության ընթացքում այդ համագործակցությունը նույնպես չափազանց արդյունավետ էր, նույնը՝ 907 օրինագծի պահպանման հարցում մղվող պայքարում, որում ե՛ւ դաշնակցությունը, ե՛ւ Հայկական համագումարը գործում էին միասնաբար: Մենք տեսանք՝ եթե անգամ երկու կազմակերպություն միանան, որեան մեծ հաջողությունների կարելի է հասնել: Մենք չենք ասում՝ մե՛զ միացեք: Նախ եւ առաջ Սփյուռքը թող միանա ինքն իրեն: Սփյուռքի բոլոր կազմակերպությունները թող միանան: Դրանից հետո մեր եւ Սփյուռքի միացումը որեէ խնդիր չի հարուցի:

Հիմա՝ երկխաղաթղթության մասին: Այդ մասին ես իմ կարծիքը հայտնել եմ: Ես կարծում եմ, Սփյուռքը պիտի այնքան մեծաճոգություն ունենար, որ հասկանար, թե մենք ինչու ենք մերժել երկխաղաթղթությունը: Դա պիտի հասկանար: Ես փորձել եմ դա բացատրել: Մենք ունենք շատ լուրջ խնդիրներ: Եթե մենք հայտարարած լիներինք երկխաղաթղթություն, այսօր մենք բանակ չէինք ունենա: Սփյուռքը կուզե՞ր, որ Հայաստանը բանակ չունենար: Սփյուռքը կուզե՞ր, որ Արցախն այս վիճակում չլիներ, պատված լիներ: Մենք բանակ չէինք ունենա, եւ դա մեր ամրոցն ու խայտառակությունը կլիներ: Շատ հայ երիտասարդներ պարզապես Հայաստանից փախել են իրենց ընտանիքներով՝ բանակում ծառայելուց խուսափելու համար: Եթե նրանք երկխաղաթղթություն ունենային, չէին փախչի, բայց նրանցից ոչ մեկը չէր ծառայի մեր բանակում: Կգտնվեին կամավորներ, որովհետեւ մեր ժողովուրդը միշտ էլ ներոսներ ծնել է: Կունենայինք հինգ հազարանոց, տաս հազարանոց աննձագոնների, մաճապարոնների, ներոսների չոկատ, բայց դա բանակ չէր լինի: Բանակում ծառայելը բաղաքացիական պարտականություն է,

որը, չեմ կարծում, թե որեէ երկրում ժողովուրդն իրականացնում է հանույթով: Այնպես որ, սա միջոց էր, որպեսզի մենք բանակ ունենայինք:

ԱՐԹՈՒՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, «Հայաստանի ձայն» – Պարոն Նախագահ, Դուք հոկտեմբերի 10-ին մեկնելու եք Ստրասբուրգ եւ հանդիպելու եք Ժակ Շիրակի հետ: Արդյո՞ք Դուք բարձրացնելու եք Վարուժան Կարապետյանին ազատելու հարցը:

– Անցյալ տարվա մեր հանդիպման ժամանակ ես այդ հարցը բարձրացրեցի, եւ պարոն Շիրակը այնքան մեծաճոգի գտնվեց, որ ասաց. «Քանի որ Դուք այդ հարցը բարձրացրել եք, կարող եք փոխանցել մամուլին, որ Դուք ինձ դիմել եք Վարուժան Կարապետյանին ներում շնորհելու խնդրանքով»: Բայց մենք խոսել ենք նաեւ իրավաբանների հետ, եւ պարզվեց, որ Վարուժանն իր գործի վերանայման դիմում կարող էր ներկայացնել միայն 1997 թվականին, այսինքն՝ 15 տարվա բանտարկությունից հետո: Անցյալ տարի, ով էլ լիներ՝ չէր կարող լուծել այս հարցը: Այս տարի է, որ լրանում է վերանայման խնդրանքի ժամկետը: Բնականաբար, այս հանդիպման ժամանակ ես պիտի կրկնեմ իմ խնդրանքը: Դա իմ պարտքն է:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Հայէֆէմ ռադիոկայան – Պարոն Նախագահ, Ձեր այն հայտարարությունից հետո, երբ ասացիք, որ 2001 թվականի նախագահական ընտրություններին չեք առաջադրվի, քանի որ այդ հնարավորությունը չի ընձեռում օրենքը, այդ հայտարարությունից հետո հեռուստաելույթում Սամվել Գեւորգյանն ասաց, որ դեռ միանշանակ չէ, եւ պետք է պարզել, թե օրենքը հնարավորություն տալիս է, թե՛ ոչ: Այլ քաղաքական գործիչներ էլ նման ակնարկներ արեցին: Ձարցս հետեւյալն է՝ 2001 թվականի նախագահական ընտրություններին չմասնակցելու Ձեր վճիռը վերջնակա՞ն է, թե՛ հնարավոր են այլ տարբերակներ: Մասնավորապես, Դուք կդիմե՞ք Սահմանադրական դատարան՝ օրենքին համապատասխանությունը վճռելու համար:

– Ոչ, ես չեմ դիմի Սահմանադրական դատարան,– *(որոշ դադարից հետո՝ կատակով)*,– միայն եթե ազգովին խնդրեմ, այդ ժամանակ կառաջադրվեմ:

ՍԵՐԳԵՅ ԵՐԻՑՅԱՆ – Պարոն Նախագահ, Ձեր նախընտրական ծրագրում մի կետ կար, որտեղ նշում էիք, որ մեր երկրի մինչեւ մեկ միլիոն քաղաքացիներ գտնվում են աղքատության եզրին, եւ Դուք ունեիք

ծրագիր, որը ենթադրում էր Ձեր նախագահության հինգ տարիների ընթացքում այդ վիճակից դուրս գալ: Անցել է մեկ տարի: Ձեր կարծիքով, ի՞նչ է արել կառավարությունն այդ ուղղությամբ եւ հաջորդ չորս տարիների ընթացքում ի՞նչ է հնարավոր անել մեր Սահմանադրության գլխավոր պահանջը՝ սոցիալական պետության կառուցումը արժանապատիվ կատարելու համար:

– Ժամանակաբար առաջին տարում վիճակը մեզ բացառիկապես չի ուրախացնում: Նույնիսկ ետընթաց կա նախորդ տարվա համեմատ: Մասնավորապես, սղաճը մեր նախատեսածից բարձր էր: Մենք տարեկան սղաճը նախատեսել էինք ընդամենը տաս տոկոս, մինչ իննսերորդ ամիսն է, եւ արդեն մոտենում է 15 տոկոսի, այն է՝ 14,8 տոկոս: Իսկ սղաճը նշանակում է ժողովրդի կենսամակարդակի անմիջական անկում: Մյուս կողմից՝ ի՞նչ է հաջողվել անել: Հաջողվել է որոշ կարգ ու կանոն ճատատել մասնավորապես հարկային, մաքսային համակարգերում: Եթե ոչ այս տարվա առաջին 3–4 ամիսներին, ապա դրանից հետո մենք կարողացել ենք բյուջեի հարկային մուտքերն ապահովել 100 եւ ավելի տոկոսով: Դրանով մենք կարողացել ենք գոնե աշխատավարձերի, թոշակների ուշացումները կրճատել եւ հասցնել տանելի վիճակի: Դեռեւս մինչեւ վերջ այդ հարցը չենք լուծել: Իհարկե, ես հրաշքներ չեմ խոստացել, ես խոստացել եմ դանդաղ փոփոխություններ եւ վստահ եմ՝ այն, ինչ խոստացել եմ՝ այս հինգ տարիների ընթացքում մենք կիրականացնենք: Բայց, կրկնում եմ՝ հրաշք չսպասեք:

Եկեք պարզ, ոնց որ հաշեւանը հաշեւանի հետ, կամ ընկերն ընկերոջ հետ, նստենք խոսենք, հասկանանք մեր վիճակը: Ի՞նչ ենք մենք ուզում: Եթե դուք կարծում եք, որ այս պայմաններում՝ Ղարաբաղի հարցի չլուծվածության եւ առաջին հերթին՝ շրջափակումների առկայության պայմաններում Հայաստանը կարող է դառնալ նորմալ երկիր, Հայաստանի ժողովուրդը կարող է ապրել այնպես, ինչպես Եւրոպայի ժողովուրդները են ապրում, դա նշանակում է դուք խորենացի չեք կարդացել: Ձի լինելու: Կա՛մ, կա՛մ: Կա՛մ պիտի ամբողջ աշխարհին ասենք. «Գնացեք մի կողմ, մենք մեր հարցերը լուծում ենք, մենք վստահ ենք մեր ուժերի վրա եւ ոչ մի զիջում չենք անելու», բայց այդ դեպքում ոչ ոք պիտի իրավունք չունենա պահանջել կենսամակարդակի բարելավում, հակառակը, պիտի հաշտվի այն մտքի հետ, որ իր կենսամակարդակը

շատ ավելի ընկնելու է: Կա՛մ կ, եթե ուզում է լավ ապրել, ուզում է զարգացնել իր տնտեսությունը, պետք է հաջողություն ունենա, համաձայնություն ունենա գնալ լուրջ փոխզիջումների, ես չեմ ասում զիջումների:

Դուք շատ համարձակ եք ընդհանրապես: Լուգարդները հիմա ամենահաջ, ամենահերոս մարդիկ են մեր հասարակության մեջ: Ավելի հաջը չկա: Ում ուզում եք հայհոյում եք, ում ուզում եք սուզում եք, ում ուզում եք խայտառակում եք: Քաջություն ունեցեք նայելու իրականությանը եւ բանավեճ բացելու: Խոսք, հաշվարկներ կատարեք, թե ուր կհասնենք, եթե այս վիճակը պահպանվի ես 5–10 տարի: Ժվար չէ հաշվել: Մենք մեզ համար արել ենք այդ հաշվարկները: Հայաստանը նորմալ պետություն չի դառնա, եւ լավ չեմ ապրի, մինչեւ Ղարաբաղի հարցը չլուծվի, մինչեւ շրջափակումները չվերանան:

ՄԱՐԻՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ, «Այժմ» – Պարոն Տեր-Պետրոսյան, անցած տարիների ընթացքում Դուք մի քանի խորհուրդ եք տվել մեր բնակչությանը, թե ինչպես հայթայթել գոյության միջոցներ: Այն է՝ դիմել բարեկամներին կամ պարտք վերցնել հարեւաններից, կամ վաճառել ունեցվածքը: Իսկ հիմա, երբ այս միջոցները սպառված են, Դուք ի՞նչ խորհուրդ կտայիք այդ մարդկանց, այն քաղաքացիներին, որոնք ստանում են երեք կամ հինգ հազար դրամ աշխատավարձ:

– Դուք ո՞ր թերթն եք ներկայացնում:

Մարինա Գրիգորյան – «Այժմ»:

– «Այժմ»՝ պարզ է: Դուք, ինչպես միշտ, աղավաղում եք իմ ասածները: Ես ոչ մի նման խորհուրդ չեմ տվել: Կարող եմ վերցնել իմ ելույթի նայնագրությունը եւ կտեսնեք, որ նման բան գոյություն չունի: Ուզո՞ւմ եք ասեմ՝ ես ինչ եմ ասել: Ես ընդամենն արձանագրել եմ փաստը: Երբ ինձ հարց է տրվել, հիշում եմ ով է հարց տվել՝ Դավիթ Վարդանյանը, թե ինչպես է ապրում ժողովուրդը, եթե նրա աշխատավարձի արժեքը հավասար է երկու ձվի արժեքի, ես ասել եմ՝ ինչպե՛ս են ապրում՝ ուրեմն ինչ-որ տեղից ինչ-որ բան հայթայթում են, կա՛մ իրենց պահուստներն են օգտագործում, կա՛մ բարեկամներից պարտք վերցնում: Իսկ դուք սա դարձրել եք «խորհուրդ տալ», արդեն հինգ տարի է կրկնում եք, չեմ էլ ձանձրանում: Կարող եք էլի տաս տարի կրկնել:

ԱՐՄԵՆ ՉԱՔԱՐՅԱՆ, «Առավոտ» օրաթերթ – Պարոն Նախագահ, ես Ձեզ ուզում եմ նույն հարցն ուղղել, որն ուղղել եմ վարչապետ Ռոբերտ Քոչարյանին՝ ասուլիսում: Հարցս վերաբերում էր Գագիկ Հարությունյանի հարցադրմանը: Դատա-իրավական համակարգի բարեփոխումների համար նախորդ տարիներին հատկացվել է 1 միլիոն 600 հազար դոլար, որի հետքը չկա: Հայաստանում ազատ մամուլի կայացման համար հատկացվել է 1 միլիոն 800 հազար դոլար: Պարզ չէ՝ ո՞րն է այդ ազատ մամուլը, ի՞նչ սկզբունքով է դա բաշխվել, ի՞նչ համամասնությունով եւ ո՞ր լրատվամիջոցներին: Երրորդ վարկը, ինչ-ինչ հասարակական կազմակերպությունների տրվել է 1 միլիոն 400 հազար դոլար: Պարզ չէ, թե որո՞նք են այդ կազմակերպությունները եւ ի՞նչ նպատակներով է հատկացվել: Դուք ի՞նչ տեղեկություններ ունեք այդ վարկերի ծախսման վերաբերյալ: Արդյո՞ք կատարվել է համապատասխան աուդիտ եւ Ձեզ զեկուցվել է դրա մասին:

– Այո, ես տեղյակ եմ: Ե՛ւ Գագիկ Հարությունյանի հայտարարությունից հետո, և՛ ձեր հարցից հետո կառավարությունն զբաղվում է այդ հարցով, կատարվում են համապատասխան ստուգումներ: Երբ ստուգումների արդյունքները հայտնի լինեն, ձեզ կներկայացվեն: Համապատասխան դիմումներ ներկայացվել են այն կազմակերպություններին, որոնք հատկացրել են այդ վարկերը: Դրանք հիմնականում բաշխվել են համատեղ: Հայաստանի կազմակերպությունները չէ, որ բաշխել են, այլ համատեղ՝ արտասահմանյան եւ հայկական: Կստուգվի մինչեւ վերջին լուման եւ ձեզ կհայտնվի: Ես ինքս չափազանց շահագրգռված եմ իմանալու, թե մամուլի որ օրգանները կամ հասարակական որ կազմակերպություններն են օգտվել այդ վարկերից: Շահագրգռված եմ գուցե ձեզնից ավելի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, «Նոյան տապան» գործակալություն – Պարոն Նախագահ, դարձյալ կոռուպցիայի խնդրի վերաբերյալ: Անկախության ձեռքբերումից հետո քանի անգամ արծարծվել է այն առաջարկությունը, որ անհրաժեշտ էր մտցնել պետական պաշտոնյաների եկամուտների հայտարարագրման համակարգ: Վերջին անգամ այդ մասին կարծեմ խոսվեց 1995 թվականի սկզբին, բայց մինչեւ այժմ չի արմատավորվել: Չե՞ք գտնում, արդյոք, որ անհրաժեշտ է այդպիսի համակարգի արմատավորում, ինչպես ներկայումս արվում է Ռուսաստանում: Մասնավորապես, Դուք նշեցիք, որ պետական պաշտոնյաները ցածր աշխատավարձ են ստանում, դրանով մի տեսակ մեղավորության, կասկածի ստվեր եք գցում բոլորի վրա:

– Դուք համաձայն չե՞ք, որ պետական պաշտոնյաները ցածր աշխատավարձ են ստանում: Էլ ի՞նչ ստվերի մասին է խոսքը:

Ինչ վերաբերում է հայտարարագրերին, ես ողջունում եմ դա: Այո՛, որքան շուտ արվի, այնքան լավ: Կառավարությունը ոչ միայն դա պիտի անի, հանձնարարված է՝ եւ արդեն լուրջ աշխատանքներ են տարվում նաեւ պետական ծառայողի մասին օրենքի ընդունման շուրջ, որ ես գտնում եմ՝ ամենակարեւոր օրենքներից մեկն է:

Ձեր հարցն ինձ կօգնի, որ ես ավելի արագացնեմ այդ խնդրի լուծումը:

ԳԱՅԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ, «Սնարք» գործակալություն – Կարո՞ղ է պատահել այնպես, որ Թուրքիան հրաժարվի Հայաստանի տարածքով ստանալ ռուսական գազը, քանի որ Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը դեռ կարգավորված չէ: Եթե՝ այո, ապա այդ դեպքում Հայաստանը կստանա՞ այդ գազը, թե՞ ոչ: Կարո՞ղ է պատահել, որ չստանա:

– Ես այդպես հոռետես չեմ: Լեռնային Ղարաբաղի խնդիրն այսօր կարգավորված չէ, բայց դա չի նշանակում, որ վաղը կարգավորված չի լինի: Ձկա մի խնդիր, որ վաղ թե ուշ չի լուծվում. սա՝ մեկ: Երկրորդ՝ ես կարծում եմ, ժամանակի ընթացքում չի կարող պատահել այնպես, որ բոլոր կապերը խզվեն, եւ ինչ-որ հարցում որեւէ տեղաշարժ տեղի չունենա: Թուրքիան պիտի կշռի իր համար որն է ավելի կարեւոր՝ գա՞զը, թե՞ համերաշխության պարտավորությունն Ադրբեջանի նկատմամբ: Մի մոռացեք, որ Թուրքիայում նույնպես շատ լուրջ ձայներ են հնչում ե՛ւ քաղաքական ուժերի կողմից, ե՛ւ ավելի շատ տնտեսական վերնախավի կողմից, որոնք բողոքում են հայ-թուրքական սահմանի փակվածության դեմ: Տարբեր շահեր գոյություն ունեն: Կկշռեն, կհաշվեն, եթե իրենց ձեռնտու չէ, այո՛, որոշ ժամանակ գուցե դեռ էլի հետաձգվեն: Իսկ ինչ վերաբերում է «Ռոսգազի» հետ մեր պայմանագրին, ապա Հայաստանով դեպի Թուրքիա գազամուղի անցկացումը այդ պայմանագրի ընդամենը մեկ տարրն է: Դա շատ լուրջ պայմանագիր է, որը մեր գազային համակարգերն ամբողջությամբ միացնում է իրար: Եւ «Գազպրոմը» շա-

հագրգռված է գործունեություն ծավալել Հայաստանի ներքին ցանցում: Եթե առաջ նա միայն մեր սահմանի վրա մեզ գազ վաճառող էր, ապա այսօր այդ գազը ոչ թե սահման է հասցնում, այլ արդեն ուղղակի սպառողին: Եւ նկամուտները բաժանվում են ըստ բաժնեմասերի տոկոսների. այնպես որ դա բացառնակապես կապ չունի «Գազպրոմի» Հայաստանում ծավալած գործունեության հետ:

ԳԵՂԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ, «Ազրոպրես» խմբագրական կենտրոն – Պարոն Նախագահ, արդյունաբերության վերականգնման եւ աշխատատեղեր ստեղծելու ուղղությամբ ի՛նչ քայլեր են արվում:

– Արվում է գործնականում ամեն ինչ. ճնարավորությունների սահմանում, բայց ես ինչ առաջ ասացի, այդ ճնարավորությունների սահմանը շատ փոքր է: Ի՞նչ պիտի արվի, որո՞նք են այն հիմնական խնդիրները, որոնց վրա շատ լուրջ աշխատանք է կատարվում: Նախ եւ առաջ դա ներդրումների ներգրավման խնդիրն է, որն արդեն դարձել է մեր կառավարության գործունեության ամենաառաջնահերթ խնդիրը, եւ այս հարցում մենք ունենք որոշ հաջողություններ: Ես չեմ ուզում բոլորովին հոռետես լինել: Այս գործընթացը պիտի շարունակվի, միջազգային աճուրդները, վերջիվերջո, պիտի արդյունք տան, դրան նույնպես բացառնակապես չեմ կասկածում: Զափազանց կարեւոր էր Քըրք Քըրկորյանի հիմնադրամի ստեղծումը, որը գլխավորելու է սենատոր Դոուլը: Խոսքը փաստորեն վերաբերում է 100 մլն դոլարի ներդրումների, որոնք, ըստ երեւույթին, ցածր տոկոսներով պիտի վարկավորեն մեր արդյունաբերությունը, ընդհանրապես գործարարությունը: Ես կարծում եմ՝ եթե մեկ-երկու տարվա ընթացքում այդ հիմնադրամն օգտագործվի, ապա մեծ օգնություն կլինի Հայաստանի համար: Պետք է ավելացնեմ, որ մեզ համար այս հարցն այնքան լուրջ է, որ շուտով, ըստ երեւույթին, մեկ-երկու շաբաթվա ընթացքում, կստեղծվի ներդրումների խթանման (սա մոտավոր անվանումն է) պետական խորհուրդ: Դա ըստ երեւույթին կլինի վարչապետին կից եւ մեր առեւտրի ու արդյունաբերության նախարարության անմիջական մասնակցությամբ: Ամենայն հավանականությամբ կստեղծվի Նախագահի հրամանագրով եւ կունենա շատ լուրջ լիազորություններ: Նրա խնդիրներն են դառնալու.

1. Նախ՝ գտնել արտաքին շուկաներ: Օգնել մեր արդյունաբերողներին արտաքին շուկաներ հայթայթելու հարցում:

2. Ներգրավել օտարերկրյա ներդրումներ:

3. Հայաստանում բոլոր օտարերկրյա ներդրողներին գերծ պահել բյուրոկրատական հաշիշուկներից, որպեսզի ներդրողը Հայաստանում գործ ունենա մեկ գործընկերոջ հետ: Օտարերկրյա ներդրողը պարտավոր չէ դռնից դուռ ընկնել, ստորագրություններ հավաքել՝ մարզպետարան, հաղամասպետարան, դատարան եւ այլն, եւ այլն: Ամբողջ ծառայությունը պիտի իրականացնի այդ խորհուրդը:

4. Ներդրողներին մատուցել իրավաբանական խորհրդատվություն, որպեսզի ներդրողներն անմիջապես ճնարավորություն ունենան ծանոթանալու իրենց հետաքրքրող օրենսդրությանը:

5. Կատարելագործել, շարունակ հետեւել, բարեփոխել մեր տնտեսական օրենսդրությունը: Սա նույնպես մտնելու է նրա խնդիրների մեջ: Սա շատ լուրջ հարց է:

Հաջորդ կարեւոր խնդիրը մեր ճարկային հաղաքականության բարեփոխման խնդիրն է՝ արդյունաբերության խթանման տեսակետից: Եւ այսօր կառավարությունը պատրաստում է շատ լուրջ փաթեթ, որով բավականին կթեթեւանա մեր արդյունաբերողների ճարկային բեռը, մասնավորապես՝ շահութաբեր ձեռնարկությունների համար: Այնպես որ, սա ամենօրյա մտահոգության առարկա է:

Այս ամբողջը, սակայն, ես համարում եմ կոսմետիկա, առկա ճնարավորությունների առավելագույն օգտագործում, ոչ ավելին: Սա կթեթեւացնի մեր վիճակը, մի փոքր կբարելավի մեր կենսամակարդակը, բայց Հայաստանը չի դառնա ժամանակակից պետություն, Հայաստանում տնտեսական զարգացում չի լինի, մինչեւ չլուծվի Ղարաբաղի հարցը, մինչեւ չվերանան շրջափակումները:

ԱԼՅՈՇԱ ՄԱՆՎԵԼՅԱՆ, «Բի-Բի-Սի» – Լեռնային Ղարաբաղի ղեկավարության վերջին հայտարարություններում ասվում է, որ Հայաստանի եւ Ղարաբաղի մոտեցումների մեջ տարածայնություններ կան Մինսկի խմբի եռանախագահության ներկայացված առաջարկությունների նկատմամբ: Կարո՞ղ եք արդյոք պարզաբանել այդ տարածայնությունները:

– Ես չէի ասի, որ Ղարաբաղի հարցի լուծման, կամ Ղարաբաղի հակամարտի վերաբերյալ Հայաստանի եւ Ղարաբաղի տեսակետների միջեւ տարբերություններ կան: Ո՛չ, թե՛ Հայաստանը, թե՛ Ղարաբաղը ցանկանում են, որ ղարաբաղցին լինի անվտանգ, ազատ, որ ունենա նորմալ կենսագործունեության հնարավորություն, որ օգտվի մարդու այն բոլոր իրավունքներից, որոնցից օգտվում է ցանկացած եւրոպական ազգ, որովհետեւ ղարաբաղցին ոչնչով պակաս չէ գերմանացուց, ֆրանսիացուց, որպեսզի նրա ազատությունը սահմանափակվի: Այս հարցում որեւէ տարաձայնություն գոյություն ունենալ չի կարող: Տարաձայնություն կարող է լինել կարգավորման ընթացքի, մեթոդոլոգիայի նկատմամբ: Դաղտնիք չէ, իհարկե, կան տարաձայնություններ: Ջարմանալի կլիներ, որ նման տարաձայնություններ չլինեին: Սա երբեմն միջնորդներն անգամ չեն ուզում տեսնել, նույնիսկ մտածում են, թե ինչ-որ խաղ կա, որ Հայաստանն ու Ղարաբաղը ցույց են տալիս, թե իբր ունեն տարաձայնություններ, բայց իրականում նրանք գործում են միասնաբար: Բայց սա սխալ է, որովհետեւ նման մյուս հակամարտությունների փորձն էլ ցույց է տալիս, որ հակամարտության բոլոր կողմերն աստիճանաբար, եթե ոչ միանգամից, դառնում են ինքնուրույն քաղաքական գործոններ: Ես գիտեմ, այո, շատ լուրջ տարաձայնություններ կան նաեւ Հենքթաշի եւ Դեմիրելի միջեւ, Հյուսիսային Կիպրոսի եւ Թուրքիայի միջեւ: Մենք հիշում ենք այն լուրջ տարաձայնությունները, որ կային Միլոշեւիչի եւ Կարաջիչի միջեւ:

Դա բնական է, Ղարաբաղը շատ լուրջ քաղաքական գործոն է: Կա ժողովուրդ, կան ընտրյալ իշխանություններ, ունի ճզոր, հաղթական բանակ: Ինչո՞ւ պիտի Ղարաբաղը քաղաքական գործոն չլիներ եւ ինչո՞ւ պիտի իր ձայնը չունենար ոչ միայն Ադրբեջանի ու միջնորդների հետ խոսելիս, այլ նաեւ Հայաստանի հետ խոսելիս: Ես սա շատ բնական եմ համարում: Բայց, միաժամանակ, ունենալով տարաձայնություններ, ունենալով երբեմն լարված պահեր, մենք միշտ կարողացել ենք համագործակցել եւ ընդհանուր առմամբ այս տարիների ընթացքում մենք կարողացել ենք գտնել ընդհանուր ելքեր: Այսօր էլ, այո, կան տարբերություններ:

Շատ մեծ գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ ընդհանրապես Ղարաբաղի հարցի լուծման հինգ տարբերակ գոյություն ունի.

1. Ստատուս-քվոյի կամ այսօր գոյություն ունեցող վիճակի հավիտենական պահպանումը:

2. Հայաստանի եւ Ղարաբաղի կողմից, որպես վերջնագիր, Ղարաբաղի անկախության պահանջը կամ Ղարաբաղի միացումը Հայաստանին: Ենթադրենք՝ ամբողջ աշխարհին ներկայացվում է նման վերջնագիր. միայն այս լուծումը եւ ուրիշ ոչինչ, որի դեպքում, իհարկե, Ղարաբաղը պատրաստ կլինի վերադարձնել գրավված տարածքները:

3. Հաջորդ տարբերակը պատերազմն է, եթե, իհարկե, Ղարաբաղն ի վիճակի է ծնկի բերել, այսինքն՝ կապիտուլյացիայի ենթարկել Ադրբեջանին:

Դո՛ւմ դատեք առայժմ այս երեք տարբերակների իրական լինել-չլինելու մասին: Դրանից հետո կխոսեմ ավելի իրական տարբերակների մասին:

Նախ՝ ստատուս-քվոյի պահպանումը. ինչպե՞ս եմ դա պատկերացնում: Ես արդեն նշեցի շրջափակման հետեւանքով Հայաստանի համար առաջացած դժվարությունները: Դրան պետք է գումարել միջազգային հաճորության հանգամանքը. ի՞նչ է, միջազգային հաճորությունը թույլ է տալու, որ 20 կամ 30 տարի պահպանվի՞ այս վիճակը: Դա բացառված է, եւ միջազգային հաճորությունը կգտնի ձեւեր, միջոցներ՝ այնման խեղճացնելու մեզ, որ ոչ միայն չկարողանանք ձեռ բերել այն, ինչ որ այսօր կարող ենք ձեռ բերել փոխզիջումների հանապարհով, այլ շատ ավելի վատ վիճակի մեջ ընկնել: Այդպես եղավ Բոսնիայում: Եթե Բոսնիայի սերբերը մեկ տարի առաջ համաձայնեին այն լուծմանը, որ նրանց առաջարկվում էր, այսօր նրանք շատ ավելի լավ վիճակում կլինեին, եւ Խորվաթիայում կպահպանվեր սերբական Կրահինան: Ամեն ինչ կորցրին: Ուրեմն՝ ես չեմ գտնում, որ ստատուս-քվոն ոնալ է պահպանել: Դուցե կարելի է համառել, կես տարի էլ, մեկ տարի էլ ձգձգել, բայց ի վերջո աշխարհի համբերության բաժակը կլցվի:

Երկրորդ՝ պահանջել միայն ու միայն անկախություն կամ միացում Հայաստանին եւ ուրիշ ոչ մի տարբերակ չընդունել: Սա ըստ էության նույն բանն է: Սա վերջնագիր է, եւ այս դեպքում միջազգային սանկցիաները շատ ավելի ազդեցիկ եւ էֆեկտիվ կլինեն:

Եւ երորդ՝ պատերազմով, կարծում եմ, անհնար է, որ Ղարաբաղը կարողանա ծնկի բերել Ադրբեջանին, որովհետեւ դրա համար պետք է գրավի Բաքուն: Սակայն եթե նա փորձի ոչ թե Բաքուն, այլ թեկուզ մեկ

շրջան էլ գրավել, աշխարհը դա թույլ չի տա: Կա մի սահման, այդ սահմանից այն կողմ արդեն համբերությունը հատնում է:

Մնում է երկու տարբերակ. մի տարբերակը հարցի փուլ առ փուլ լուծումն է, մյուսը՝ փաթեթային: Եթե հարկ կա, կարող եմ մեկնաբանել: Նախ սկսեմ փաթեթային լուծումից, որովհետեւ փուլ առ փուլը, կարելի է ասել, դրա ավելի երկարաձգված տարբերակն է: Փաթեթայինը ենթադրում էր, որ միաժամանակ լուծվում են ե՛ւ գրավված տարածքների վերադարձման հարցը, բացի Լաչինի շրջանից, ե՛ւ խաղաղարար ուժերի տեղադրումը ղարաբաղա-ադրբեջանական սահմանին, ե՛ւ շրջափակումների վերացումը, ե՛ւ փախստականների վերադարձը իրենց բնակավայրերը, ինչպես նաեւ՝ բուֆերային, անջատիչ ու ոչ թիչֆային գոտիների ստեղծումը Ղարաբաղի ու Ադրբեջանի սահմանում: Դրանք շափազանց լայն գոտիներ են: Սա հարցի փաթեթային լուծման մի մասն էր: Մյուս մասը Ղարաբաղի կարգավիճակի նշառումն է:

Սա լուծման մեկ մեթոդոլոգիան է եւ, կրկնում եմ, գաղտնիք չեմ բացի, եթե ասեմ, որ առաջին անգամ համանախագահները ներկայացրել էին նման՝ փաթեթային լուծման ծրագիր: Առաջին մասի նկատմամբ, ըստ էության, ոչ ոք լուրջ տարաձայնություններ չուներ: Երկրորդը՝ կարգավիճակը, կտրականապես մերժելի էր Ղարաբաղի համար եւ նույնքան կտրականապես մերժվեց Ադրբեջանի կողմից: Ադրբեջանը թյուր տպավորություն է ստեղծում, եւ, կարծես թե, միջնորդներն էլ շահագրգռված են այդ տպավորությունը տարածելու, որ իբր իրենք ընդունել են միջնորդների ներկայացրած առաջին ծրագիրը: Այդպես չէ: Ադրբեջանը նույնքան կատեգորիկ, կտրականապես մերժել է այդ ծրագիրը, ինչպես Լեռնային Ղարաբաղը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այն ունեցել է շատ լուրջ վերապահումներ եւ այդ վերապահումները ներկայացրել է միջնորդներին:

Ըստ էության ի՞նչ տեղի ունեցավ: Միջնորդներն էլ, մենք բոլորս էլ համոզվեցինք, որ այսօր Ղարաբաղը եւ Ադրբեջանը պատրաստ չեն ճնշարկել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, որովհետեւ նրանցից յուրաքանչյուրն ունի այդ կարգավիճակի մասին իր սեփական պատկերացումը, որը կտրուկ հակադրվում է հակառակորդի տեսակետին: Այս հարցում բոլորը համոզվեցին: Եւ դրանից հետո, ես կարծում եմ, ընտրվեց միակ իրատեսական մոտեցումը. եթե լուծման նման տարբերակը չի ընդունվում, այսինքն իրագործելի չէ, այսօր պետք է փորձ կատարել իրագործել լուծման «փուլ առ փուլ» տարբերակը: Ըստ էության այդ փուլերն ընդգրկում են այն երկու բաղադրամասերը, որ կային փաթեթային լուծման ժամանակ, բայց դրանք ժամանակի մեջ իրարից հեռացվում են: Առաջին փուլում իրականացվում է այն, ինչ ես ասացի, իսկ կարգավիճակի հարցն, ըստ էության, հետաձգվում է մինչեւ այն ժամանակը, հանի դեռ չի իրականացել եւ չի կիրառվել առաջին փուլը:

Այսօր ես կարող եմ միջնորդների ճոռ առաջարկը դիտել որպես «փուլ առ փուլ» մոտեցման առաջարկ: Եղել են հայտարարություններ, թե իբր Ադրբեջանում դա արդեն ողջունել են եւ այլն, եւ այլն: Չգիտեմ: Ես չեմ ուզում շտապել: Ես չեմ հավատում այդ ողջույններին, մինչեւ չլինի գրավոր պատասխանը: Բայց պայմանավորվածություն կա, որ երկու-երեք շաբաթվա ընթացքում բոլոր կողմերն իրենց գրավոր կարծիքը պետք է հայտնեն միջնորդների այս վերջին առաջարկի վերաբերյալ: Դրանից հետո միջնորդները կքննարկեն այս կարծիքները եւ եթե տեսնեն, որ կողմերի մոտեցումներն ընդհանրություններ ունեն, դա կդիտվի որպես բանակցությունների հիմք: Իհարկե բացառված չէ, որ ընդհանրություն չի կարող լինել, եւ դա բնական է: Նույնիսկ թռուցիկ հայացքով երեւում է, որ կան լուրջ վերապահումներ, եւ մենք էլ ստիպված պիտի լիներ վերապահումներ կատարել: Դա կանեն բոլոր կողմերն էլ, բայց եթե միայն վերապահումներով սպառվի գործը, իսկ հիմնականում կողմերն ավելի շատ ընդհանրություններ դրսեւորեն, ես վստահ եմ՝ դա արդեն իոռ կդիտվի բանակցությունների հիմք: Ես խնդրում եմ ուշադրություն դարձնել այս բառի վրա, շշփոթել կարգավորման հիմքի հետ, մի բան է բանակցությունների հիմքը, մի բան՝ կարգավորման հիմքը: Կարծում եմ, սա այն միջոցն է, որը ե՛ւ միջնորդների գործն է թեթեւացնում, ե՛ւ հակամարտող կողմերի դեմքն է փրկում: Նրանց ճնարավորություն է տալիս կառուցողականություն դրսեւորել, սկսել բանակցությունները, բայց դեռեւս լուրջ պարտավորություններ չստանձնել՝ առաջարկներն ընդունելով ընդամենը որպես բանակցությունների, այլ ոչ թե որպես կարգավորման հիմք: Եթե՝ գոնվի ընդհանրությունների մի այնպիսի կրիտիկական մասսա, որը ճնարավորություն կտա սկսել բանակցությունները, ես կարծում եմ՝ դա կհաջողվի: Մի ինչ էլ համբերենք, եւ մեկ ամսվա ընթացքում պարզ կլինի՝ արդյո՞ք հաջողվում է այս առաջարկի

իրականացումը, թե՞ կոկին կողմերի տեսակետներեն այնման հակադիր են, որ պետք է նորից մտածել եւ շարունակել մարոյին դիվանագիտությունը, մինչեւ գտնվի բանակցությունների հիմքը:

ԳԵՒՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Լրագրողների համազգային «Նավասարդ» ակումբ – Պարոն Նախագահ, անցումային փուլում ամենաերկարը պաշտոնավարած վարչապետի իրականացրած տնտեսական քաղաքականության վերաբերյալ այսօր քաղաքական, իշխանական շրջանակներում ընդունվում է, որ սխալվել են նրան հավատալու առումով, եւ Դուք էլ ՀՀՇ համագումարներից մեկում ասացիք, որ իշխանության գալու պահին բավարար փորձառություն չունեիք եւ հիմա փորձ եք ձեռք բերել: Այս ենթատեքստում ինչպե՞ս եք այսօր գնահատում Հայաստանի կառավարության, Ազգային ժողովի, դատա-իրավական համակարգի եւ ՀՀՇ-ի գործունեությունը:

– Դուք մի ամբողջ զեկուցման նյութ նշեցիք: Առաջին հարցը վերաբերում էր Բագրատյանին:

Իմ կարծիքով, եթե այդ մարդը երեք տարի աշխատել է որպես Հայաստանի Հանրապետության վարչապետ, նշանակում է, որ հիմնականում նրա աշխատանքն ինձ բավարարել է: Երեք տարի դեռեւս ոչ մի այլ վարչապետ չի աշխատել Հայաստանում: Ես Հրանտ Բագրատյանի գործունեությունը չափազանց բարձր եմ գնահատում: Այն, ինչ նա արել է այդ ծանր տարիներին, ինձ համար անուրանալի է: Նախ եւ առաջ նկատի ունեմ նրա գործունեությունը օպերատիվ դեկավարման առումով, երբ մենք հայտնվեցինք ճգնաժամային վիճակում: Շրջափակումները նոր երեւույթ էին, դրանց հաղթահարման մեխանիզմները դեռ ձեւավորված չէին, Իրանի հետ հարաբերությունները նոր-նոր էին սկսվում, եւ այդ պայմաններում կառավարությունը գործադրեց աճուրդի ջանքեր ու կարողացավ ապահովել մեր ժողովրդի կենսագործունեությունը: Ինչպես ասացի՝ ես այստեղ չեմ կարող ուրանալ Հրանտ Բագրատյանի դերը: Սա՝ մեկ: Եւ երկրորդ՝ անգնահատելի է Հրանտ Բագրատյանի համարձակությունն ու պրոֆեսիոնալիզմը (թեկուզ սխալներով հանդերձ) լուրջ ազատական ռեֆորմների, տնտեսական բարեփոխումների իրականացման գործում: Հիմա կասեմ՝ եթե այսման գովում եմ, ապա ինչո՞ւ հանեցի: Ուղղակի ամեն մարդ իր ժամանակն ունի: Այդ ժամանակն

այդպիսի գործիչ էր պահանջում, այսօր՝ այլ տիպի գործիչ, որը, հիմնականում պահպանելով բարեփոխումների ստրատեգիական գիծը, ավելի շատ ուշադրություն պիտի դարձնի կառուցողական կարգապահությանը, օրինականությանը եւ օպերատիվ կառավարմանը: Այսօր անա այս խնդիրներեն են, որ, կարծում եմ, նույնիսկ հաջող լուծում է Ռոբերտ Քոչարյանը: Ինչ վերաբերում է մյուս հարցերին, դա իսկապես զեկուցման նյութ է:

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ, «Երեւան» տեղեկատվական կենտրոն – Ամբողջ 1996 թվականի ընթացքում եզրակացություն տալու համար արդարադատության նախարարություն են մուտք գործել կառավարության եւ վարչապետի 564 որոշում ու որոշումների նախագծեր, իսկ Նախագահի ընդամենը 6 հրամանագրերի նախագծեր: Ինչո՞վ եք բացատրում այս փոքրաթիվությունը, եւ արդյո՞ք սա չի նշանակում, որ Հայաստանում նախագահական կառավարում չի իրականացվում:

– Արդարադատության նախարարությունը կառավարության օղակն է եւ կառավարությունը պարտավոր է իր բոլոր որոշումները (մենք նույնիսկ օրենք ունենք այդ մասին), անցկացնել այդ նախարարության խորհրդակով: Նախագահի հրամանագրերի վերաբերյալ այդպիսի օրենք գոյություն չունի: Վեց հրամանագիր ուղարկված է, ուրեմն վեցի հարցում անհրաժեշտություն է եղել ունենալ նաեւ արդարադատության նախարարության կարծիքը: Ես կարող եմ նույնիսկ բացատրել, թե դրանք ինչ դեպքեր են: Դրանք այն դեպքերն են, երբ Նախագահի իրավաբանական բաժինը, որը շատ հզոր բաժին է, ուր հրաշալի մասնագետներ են աշխատում, ինչ-որ հարցում չի կողմնորոշվել եւ կարիք է զգացել ստանալու նաեւ արդարադատության նախարարության կարծիքը՝ ընդամենը խորհրդատվական կարգով:

ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ, «Ժայք» – Չնայած իր վարչապետության կարճ շրջանին, նախկին վարչապետ Արմեն Սարգսյանն, այնուամենայնիվ, կարողացավ իր մասին դրական կարծիք ստեղծել: Երեկ Ձեր հրամանագրով Դուք նրան նշանակել եք հատուկ հանձնարարություններով դեսպան: Ինչո՞վ էր պայմանավորված այդ նշանակումը եւ ի՞նչ գործունեություն պիտի ծավալի Արմեն Սարգսյանը:

– Նախ եւ առաջ ուզում եմ իմ ուրախությունը հայտնել, որ Արմեն Սարգսյանի ապաքինումը հաջող է ընթանում, եւ այսօր արդեն բժիշկները նրան նույնիսկ թույլ են տվել օրական 2-3 ժամ աշխատել: Սա շափազանց ուրախալի լուր է: Արմեն Սարգսյանը շատ ակտիվ մարդ է եւ նույնիսկ հիվանդության ամենածանր օրերին ուշի-ուշով հետեւում էր Հայաստանի իրադարձություններին: Նույնիսկ կինը ինձ բողոքում էր, որ գիշերն արթնանում է, միացնում համակարգիչը եւ ինտերնետի միջոցով հետեւում Հայաստանի անցուդարձին, երբեմն էլ ձեր պատճառով բավականին սոսնեղում է, երբ տհաճ բաներ է կարդում: Ինչեւէ, նա ակտիվ մարդ է, եւ բժիշկների թույլ տված այս երկու-երեք ժամվա աշխատանքը, կարծում եմ, պետք էր անպայման իմաստավորել: Հատուկ հանձնարարություններով դեսպանի պարտականությունները դնելով նրա վրա, ես այսօր նկատի ունեմ երեք բնագավառ, որոնք նա արդեն իրագործում է: Մեկը Եւրոպայի վերականգնման եւ զարգացման բանկի հետ մեր հարաբերություններն են: Սարգսյանը մշտական շփման մեջ է բանկի հետ, մասնավորապես բանկի նախագահ Դե Լառոզիեի հետ, որը դարձել է նրա անձնական բարեկամը, այցելում է Սարգսյանի տուն եւ լուրջ հարցեր քննարկում: Երկրորդը՝ Համաշխարհային բանկի հետ հարաբերությունների բնագավառն է: Վերջինիս նախագահը՝ պարոն Վուլֆինսոնը, Արմեն Սարգսյանի համալսարանական գործընկերն է եղել՝ հանգամանք, որին չէր կարելի կարեւորություն չընծայել: Եւ երորդը՝ Արմեն Սարգսյանի վրա է դրված Քըրֆ Քըրճոյանի բարեգործական «Վինսի» հիմնարկության հետ կապի պարտականությունը: Այս երեք բնագավառները, կարծում եմ, նրա համար ապահովում են բավականին ծանրաբեռնվածություն: Նա խանդավառ է նաեւ ինչ առաջ իմ հիշատակած ներդրումների իրականացման պետական հանձնաժողովի գաղափարով, առաջարկել է լինել, ըստ էության, այդ հանձնաժողովի արտասահմանում գտնվող գործակալ եւ լուրջ աշխատանքներ կատարել ներդրումների ներգրավման ուղղությամբ:

ՍԵՒԱՆ ԱԹԱՕՂԼՈՒ, «Ակոս» շաբաթաթերթ, Թուրքիա (ինտերնետի միջոցով) – Ի՞նչ եք մտածում Ձեր նոր գլխավոր խորհրդականի վերաբերյալ:

– Նախ, նորի մասին խոսելուց առաջ, ես պիտի ճի՛ մասին իմ կարծիքն ասեմ: Ես չեմ կարծում, որ իմ կամ Լիպարիտյանի կողմից ընդհանրապես լրացուցիչ մեկնաբանությունների կարիք կա: Լիպարիտյանի եւ իմ կողմից այդ հրաժարականի մասին ամեն ինչ ասված է: Մնացածն արդեն ճաշակի հարց է, ուզում ես հավատացնել դրա շարժառիթներին, ուզում ես՝ մի հավատացնե՛ք, բայց ուրիշ շարժառիթներ չկան, գոյություն չունեն: Լիպարիտյանի գործունեության, նրա վաստակի, մասնավորապես բանակցությունների գործընթացում նրա չափազանց արդյունավետ մասնակցության, նրա ամենօրյա օգտակարության մասին իմ տված գնահատականը մնում է ուժի մեջ, եւ այս շաաարկումները ոչինչ չեն տալիս: Իզուր մարդիկ պղտորում են ե՛ւ իրենց, ե՛ւ ժողովրդի մտքերը: Պետք է հավատալ մարդուն, հավատն են կորցնում: Ինչ վերաբերում է նրան փոխարինողին, անկեղծորեն ասած, ես դեռ չեմ գտել այդ փոխարինողին: Բայց համոզված եմ, որ դա կարեւոր ինստիտուտ է: Անպայման պետք է մի մարդ, որը նախագահական համակարգում զբաղվի արտաքին հաղաքականության հարցերով, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման գործընթացով, ինչպես նաեւ կապ հաստիսանա Նախագահի եւ Հայաստանի օտարերկրյա դիվանագիտական կորպուսի միջեւ: Այդպիսի ինստիտուտ, այդպիսի պաշտոն անհրաժեշտ է:

ՏԻԳՐԱՆ ՆԱՂԴԱԼՅԱՆ, «Փաստ» գործակալություն – Մեկ տարի առաջ այս օրը մեր հանրապետությունում բոլորովին այլ վիճակ էր, չորս տարի անց, գրեթե այս օրերին նախագահական ընտրություններ են սպասվում: Եթե մեկնվենք այսօր առկա ներքաղաքական զարգացումներից, ըստ Ձեզ, գալիք ընտրություններին դեռ սպառնո՞ւմ է «սեպտեմբեր 25-ի» կետը, թե՞ այն այլեւս բացառում եք:

– Ես կուզեմ էլի մինչեւ վերջ անկեղծ լինել: Դա մեծապես կախված է նաեւ ձեզանից, կախված է մամուլից, կախված է մեր հասարակությունից, կախված է մեր մտավորականությունից: Որո՞նք կարելի է հանդուրժել հեղափոխականությունը, բռնության կոչերը եւ բռնության փաստերը: Ես չեմ տեսնում, որ մեր հասարակությունն իր համար գոնե ինչ-որ իմունիտետ է ստեղծում նման անցանկալի զարգացումներից խուսափելու համար: Դո՛ւմ եմ, որ չպիտի հանդուրժենք դա:

Անկախ ամեն ինչից, արդարացված, թե ոչ՝ բռնությունը մեկանգամընդմիշտ պետք է մերժվի, բացառվի, պախարակվի, կշտամբվի, դատապարտվի առաջին հերթին ձե՛ր կողմից, մամուլի կողմից, որովհետև ձեր ձեռքին է ամբողջ զենքը: Եթե դուք դա չեք անում, ուրեմն նպաստում եք բռնությանը:

«Հայաստանի Հանրապետություն», 27 սեպտեմբերի, 1997 թ.: Հրատարակված՝ «Հաջորդ սերունդների գաղափարախոսությունը պետք է լինի մեր պետականության ամրապնդումը» վերնագրով:

ՊԱՏԵՐԱԶՄ, ԹԵ՞ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ. ԼՐՋԱՆԱԼՈՒ ՊԱՀԸ[1]

(1 նոյեմբերի, 1997 թ.)

Սեպտեմբերի 26-ի իմ մամլո ասուլիսը, ավելի ճիշտ՝ ասուլիսի Ղարաբաղին նվիրված հատվածը մամուլում և ընդդիմության կազմակերպած հավաքներում բուռն կրքերի բորբոքման առիթ տվեց: Ինձ համար դա անակնկալ չէր, և ինչ-որ չափով ես նույնիսկ ավելի խիստ հակազդեցություն էի սպասում:

Անակնկալը բանավեճի որակն էր, իսկ պարզ ասած՝ բանավեճի իսպառ բացակայությունը: Խոստովանում եմ, ես չհասա իմ նպատակին, այն է՝ մամուլում և հրապարակային ժողովներում լուրջ բանավեճ ծավալել հայ ժողովրդի առջև ծառացած ամենակենսական խնդրի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավոր ուղիների շուրջ:

Ընդդիմության արձագանքը դուրս չեկավ հայհոյանքի, վերագրումների, պիտակավորումների ու խեղաթյուրումների շրջանակից: Չարվեց ոչ մի բանական առաջարկ, չներկայացվեց ոչ մի այլընտրանքային ծրագիր, չբերվեց ոչ մի հիմնավոր հակափաստարկ: Սրանից կարելի է անել երկու հետևություն. կա՛մ ընդդիմությունը չունի ղարաբաղյան կարգավորման որևէ ծրագիր, կա՛մ եթե ունի, բայց թաքցնում է, այնքան էլ ազգանպաստ գործով չի զբաղված. ավելի խիստ որակումից ես զերծ եմ մնում:

---

[1] *Հրապարակվել է Հանրապետության գրեթե բոլոր թերթերում, նաև արտասահմանում, հայերեն և այլ լեզուներով: Բազմաթիվ հրապարակումներ է ունեցել նաև հետագա տարիներին:*

Ի՞նչ հասկացավ ժողովուրդն ընդդիմության հանած աղմուկից. որ Արցախի համար մենք արյուն ենք թափել, որ գրավված տարածքները վերադարձնելով վտանգվում է Արցախի գոյությունը, որ հանուն Արցախի հայ ժողովուրդը նորից պատրաստ է արյուն թափելու, որ մենք թմած ունենք համաշխարհային կարծիքի վրա, որ մենք ծնկի կբերեինք Ե՛ւ Ադրբեջանը, Ե՛ւ միջազգային հանրությունը, որ մենք «ազգովի կդառնանք ֆիդայի»:

Իսկ հետո՞: Ոչ ոք չփորձեց պատասխանել հետևյալ պարզ հարցերին.

- այս ամենն անելուց հետո մենք կհասնե՞նք մեր բաղձալի նպատակին, թե ոչ.
- երբ մենք թենք աշխարհի երեսին, նա մեզ ինչո՞վ կպատասխանի.
- թափվելու է Կինոյի տանը հավաքված 500 հոգու, թե՞ մեր ժողովրդի անմեղ արյունը:

Առնվազն վերջին հարցին կարելի է միանշանակ պատասխան տալ. հինգհարյուրի գլխից մի մազ անգամ չի պակասի, անկախ այն բանից, թե նրանք այսօր ինչպիսի գոհողությունների գնալու պատրաստակամություն են հայտնում: Երբ Արցախը վտանգի մեջ էր, երբ հակառակորդն ընդհուպ մոտեցել էր Դաննասարին, նրանցից ոչ ոք չարձագանգեց Վազգեն Սարգսյանի կոչին ու չմիացավ մաճապարտների գնդին: Ուրիշի արյան գնով փառ որոնողներից ու ճերոս ձեւացողներից մեր ժողովուրդը պետք է որ կուշտ լինի:

Ընդդիմության շփոթը, բացի քաղաքական նկատառումներից, գուցեե մասամբ բացատրվում է անտեղյակությամբ, որ բնական է, քանի որ Ղարաբաղում եւ Հայաստանում հակամարտության կարգավորման գործընթացին փորձագիտական մակարդակով տիրապետում են ընդամենը վեց հոգի՝ Աշոտի Ղուկասյանը, Ռոբերտ Քոչարյանը, Ալեքսանդր Ազոումանյանը, Վարդան Օսկանյանը, Ժիրայր Լիպարիտյանը եւ ես:

Բանավեճի առարկան

Ինչեւէ, բանավեճ չստացվեց, բայց դա ոչ ինձ, ոչ էլ մեր հասարակությանը չպետք է հիասթափեցնի: Միեւնույն է, ազգի ճակատագիրը տնօրինելու հավակնող ցանկացած քաղաքական գործիչ կամ մտավորական վաղ թե ուշ ստիպված է լինելու հրաժարվել հայհոյախոսությունից

(խոսս հոգեկան հիվանդների մասին չէ) եւ ժողովրդի առջեւ հանդես գալ կոնկրետ հաշվարկված ծրագրով:

Զսպասելով դրան, ես այսօր էլ պատրաստ եմ լրջորեն քննարկել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ցանկացած բանական առաջարկ, համաձայն եմ ցանկացած մակարդակի հրապարակային բանավեճի:

Սակայն բանավեճը կարող է առարկայական լինել միայն նախապես կողմնորոշվելով մի քանի ելակետային դրույթների շուրջ, այն է.

- Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է լուծվի պատերազմի, թե՞ խաղաղ բանակցությունների միջոցով.
- հնարավո՞ր է, արդյոք, հավերժորեն կամ թեկուզ երկար ժամանակով պահպանել ստատուս-քվոն եւ Ղարաբաղի խնդրի չկարգավորված վիճակը.
- Ղարաբաղին եւ Հայաստանին ձեռնտու է հարցի կարգավորված, թե՞ չկարգավորված վիճակը.
- հարցը պետք է լուծվի փոխզիջումով, թե՞ կողմերից մեկի պարտությամբ, եւ այդ դեպքում ո՞վ է լինելու պարտվող կողմը:

Այս դրույթների շուրջ ես հստակ կերպով արտահայտվել եմ բազմիցս եւ այսօր էլ պնդում եմ, որ՝

- պատերազմը պետք է բացառվի, ուստիեւ Ղարաբաղի հարցը պետք է լուծվի միայնումիայն խաղաղ բանակցությունների միջոցով.
- ստատուս-քվոն երկար ժամանակով պահպանել հնարավոր չէ, որովհետեւ դա թույլ չեն տա ո՛չ միջազգային հանրությունը, ո՛չ էլ Հայաստանի տնտեսական կարողությունները.
- Ղարաբաղին եւ Հայաստանին ձեռնտու չէ հարցի չկարգավորված վիճակը, որովհետեւ դա զգալիորեն խոչընդոտում է Հայաստանի, հետեւաբար նաեւ Ղարաբաղի տնտեսական զարգացմանը, բարդություններ ստեղծում միջազգային հանրության եւ մանավանդ հարեւան երկրների հետ հարաբերություններում, որոնք կարող են ճակատագրական նշանակություն ունենալ.
- Ղարաբաղի հարցի լուծման միակ տարբերակը փոխզիջումն է, որը նշանակում է ոչ թե մի կողմի հաղթանակ եւ մյուսի պար-

տություն, այլ հակամարտության հազեցման վիճակում ձեռբերված հնարավոր համաձայնություն:

Թող չփորձեն ժողովրդին մոլորեցնել, ասելով, թե փոխզիջումն այլընտրանք ունի. փոխզիջման այլընտրանքը պատերազմն է:

Փոխզիջման մերժումը եւ մաքսիմալիզմը (առավելագույնը եւ ոչ թե հնարավորը ձեռբերելու նգատումը) Ղարաբաղի իսպառ կործանման եւ Հայաստանի վիճակի վատթարացման ամենակարճ ճանապարհն է:

Խոսքը չի վերաբերում Ղարաբաղը տալուն կամ չտալուն: Խոսքը վերաբերում է Ղարաբաղը հայկական պահելուն. 3000 տարի այն բնակեցված է եղել հայերով եւ 3000 տարի հետո էլ պետք է բնակեցված լինի հայերով:

Իմ ընտրած ուղին ապահովելու է այդ հետանկարը եւ հնարավորություններ պահպանելու հասնել մեր բաղձալի նպատակին: Արկածախնդիրների ուղին տանելու է դեպի անխուսափելի պարտություն: Մենք մի անգամ արդեն, «Ստամբուլը արյան ծով դարձնելով», կորցրել ենք Արեւմտահայաստանը, իսկ մի այլ անգամ՝ պահանջելով Սեւրի դաշնագրով գծված տարածքները, կորցրել ենք Արեւելահայաստանի կեսը:

Փոխզիջման էությունից բացի կարեւոր է նաեւ փոխզիջման պահը: Ակնհայտ է, որ փոխզիջման դեպքում հասանելի առավելագույնը ձեռբերելու հնարավորություն ունի ուժեղ կողմը: Հայաստանն ու Ղարաբաղն այսօր ուժեղ են հան երբեւէ, բայց հակամարտության չկարգավորման դեպքում մեկ-երկու տարի հետո անհամեմատ թուլանալու են: Այն, ինչ մերժում ենք այսօր, ապագայում խնդրելու, բայց չենք ստանալու, ինչպես բազմիցս եղել է մեր պատմության մեջ:

Պետք է իրատես լինել եւ հասկանալ, որ միջազգային հանրությունը երկար չի հանդուրժելու Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրադրությունը, հանի որ այն սպառնում է տարածաշրջանային համագործակցությանն ու անվտանգությանը, ինչպես նաեւ Արեւմուտքի նավթային շահերին: Վաղ թե ուշ կողմերին պարտադրվելու է կարգավորման մի փոխզիջումային ծրագիր, որը լինելու է ոչ թե հարցի իրավական, այլ քաղաքական լուծում, թեեւ աշխարհի ուժեղները դա հռամցնելու են որպես միջազգային իրավունքի օրինակելի դրսեւորում: Ո՛չ Ադրբեջանը, ո՛չ էլ Ղարաբաղն ու Հայաստանը փոխզիջումից խուսափել չեն

կարողանալու, ինչպես չկարողացան խուսափել բոսնիական եւ արաբա-իսրայելյան հակամարտության կողմերը:

Փոխզիջումը, սակայն, միայն պատասխանը չպետք է դիտել. ընդհակառակը, հակամարտող կողմերն իրենք դեռ պետք է հսկայական ջանքեր գործադրեն նրա շուտափույթ կայացման համար, որովհետեւ այլընտրանքն, ինչպես ասվեց, պատերազմն է ու ժողովուրդների նորանոր տառապանքները:

Փոխզիջումն ընտրություն չէ լավի ու վատի միջեւ, այլ վատի ու վատթարի միջեւ, այսինքն՝ փոխզիջումն ընդամենը վատթարից խուսափելու միջոց է, որից հակամարտող կողմերը հարկադրաբար օգտվում են, երբ հասել են վատթարի գիտակցմանը եւ ի վիճակի են դրսեւորել քաղաքական կամք ու անհրաժեշտ խիզախություն:

Փոխզիջման դիմելիս կողմերը սովորաբար առաջնորդվում են մի հանի նկատառումներով, այն է. ազատվել իրենց բնականոն կենսագործունեությունն ու զարգացումն արգելակող եւ լուրջ վտանգներով եղի հակամարտությունից. սառեցնել խնդիրը, հետաձգել այն՝ ժամանակ շահելու, ուժեր կուտակելու եւ ավելի բարենպաստ հանգամանքներում հօգուտ իրենց լուծելու նպատակով. խուսափել անկանխատեսելի բարդություններից՝ ճույս փայփայելով, որ հետագայում ժողովուրդների հարաբերություններում նոր մտածողության արմատավորման եւ արժեքների վերագնահատման հետեւանքով խնդիրը կարող է կորցնել իր սրությունը, եւ սահմաններն, օրինակ, չունենան այն նշանակությունը, որ ունեն ներկայումս: Այդ մտածողությունն ու արժեքների վերագնահատումն այսօր տիրապետող են Եւրոպայում, վաղը կարող են տիրապետող դառնալ նաեւ Մերձավոր Արեւելքում, որի մասնավոր վկայությունն է, թերեւս, արաբա-իսրայելյան խաղաղության գործընթացը:

Փոխզիջումն ինչ-որ չափով բավարարելու է հակամարտության բոլոր կողմերին, բայց միաժամանակ ամբողջովին չի գոհացնելու ոչ մեկին: Նախագահ Ալիեւը դա ներկայացնելու է որպես Ադրբեջանի հաղթանակը, ես փորձելու եմ ներկայացնել որպես Հայաստանի հաղթանակը: Ադրբեջանական ընդդիմությունը համարելու է, որ Ալիեւը դավաճանեց ու ծախեց Ղարաբաղը: Հայաստանի ընդդիմությունը համարելու է, որ ես դավաճանեցի ու ծախեցի Ղարաբաղը:

Նման դեպքերում չպետք է բացառել, իհարկե, Ռաբին – Պերեսի սինդրոմի ազդեցությունը: Բայց չի կարելի անտեսել նաեւ Նաթանյահուի սինդրոմը, որը անզիջող դիրքերից գալով իշխանության գլուխ, կարճ ժամանակ անց, թեեւ դժկամությամբ, ստիպված եղավ շարունակել Ռաբինի ու Պերեսի սկսած խաղաղության գործընթացը:

Որոշ թյուրիմացություններ

Ընդդիմության հետասուլիսյան հարոզարշավում շրջանառության մեջ են դրվել որոշ թյուրիմացություններ, որոնցից մի հանիսին հարկ եմ համարում թուցիկ կերպով անդրադառնալ:

Առաջին թյուրիմացությունը, եթե կուզեք վտանգավոր մոլորությունն այն է, թե Ղարաբաղի հակառակորդը Ադրբեջանն է, որին կարելի է հեշտությամբ ծնկի բերել: Իրականում, սակայն, Ղարաբաղի հակառակորդը միջազգային հանրությունն է, որին մենք, փաստորեն, ձեռնոց ենք նետել: Չհասկանալ այս պարզ իրողությունը, կնշանակի մեր ժողովրդին մատնել դաժան փորձությունների:

Երկրորդ թյուրիմացությունը այն անհիմն պնդումն է, թե Ղարաբաղը շահել է պատերազմը, հետեւաբար կարիք չունի որեւէ զիջման գնալու: Դժբախտաբար, Ղարաբաղը շահել է ոչ թե պատերազմը, այլ հակառամարտը: Պատերազմը շահում են միայն այն ժամանակ, երբ հակառակորդը կապիտուլյացիայի է ենթարկվում: Պատերազմի ու հակառամարտի չփոթությունը շատ շատերին է փորձանքի բերել:

Երրորդ թյուրիմացություն. մինչեւ հիմա մեզ ամեն ինչ հաջողվել է, ուստի այսուհետեւ եւս կհաջողվի: Այսինքն՝ մինչեւ հիմա մենք կարողացել ենք հաղթել Ադրբեջանին, այսուհետեւ էլ կհաղթենք, մինչեւ հիմա մենք դիմացել ենք արտաքին ճնշումներին, այսուհետեւ էլ կդիմանանք եւ այլն: Սա թերեւս թյուրիմացություններից ամենավտանգավորն է, որովհետեւ ապագա հաջողությունների գրավականը դիտում է ոչ թե ուժերի ապագա հարաբերակցությունը, այլ անցյալի հաջողությունները: Այսպես մտածողները լուրջ պրոբլեմ ունեն արամաբանության տարրական օրենքների հետ: Եթե ապագա հաղթանակները պայմանավորված լինեին անցյալի հաջողություններով, ապա մեկ անգամ հաղթողն այլեւս երբեւէ չէր պարտվի, այսինքն Հռոմեական կայսրությունը երբեւէ չէր կործանվի:

Հաջորդ թյուրիմացությունը կամ ավելի ճիշտ՝ անհեթեթությունն այն է, թե Հայաստանի Նախագահը ծախում է Ղարաբաղը իր իշխանությունը պահելու համար: Դժվար է հավատալ, որ անգամ խելակորույսի մտքով կանցներ, թե Ղարաբաղը ծախելով, որեւէ մեկը Հայաստանում կարող է իշխանություն պահել:

Ի դեպ, իշխանությունը պահելու մարմաջի մասին. ի՞նչը պիտի ինձ ստիպեր ամեն գնով պահպանել իշխանությունը. բարի՛ը, փա՞ռը, թե հերոսականացումը:

Նախագահության օրոք ոչ մի բարիք կամ սեփականություն չեմ ստացել (կարող եմ ստուգել) եւ չեմ էլ ուզում ստանալ:

Անձնական փառի կամ հերոսականացման ձգտելու պարագայում ես պարզապես չէի մասնակցի 1996 թ. ընտրություններին, սերունդների աչքում մնալով որպես անկախություն նվաճած, ղարաբաղյան հերոսամարտը շահած, հայկական տարածքներն ընդարձակած Նախագահ, անկախ այն բանից, թե որճան արդարացի է այդ ամենի ինձ վերագրումը: Ինչ փույթ, թե դրանից հետո ինչ կպատահեր եւ ում վրա կընկներ վիճակի վատթարացման պատասխանատվությունը: Միեւնույն է, իմ վարկանիշը դրանից չէր տուժի, այլեւ ընդհակառակը, թերեւս ավելի շահեր: Կրկնում եմ, անձնական տեսակետից ինձ համար ամենալավ լուծումը թերեւս այդ էր, բայց դա կլիներ ոչ այլ ինչ, եթե ոչ փոխզիջման դասալքություն, որին, դժբախտաբար թե բարեբախտաբար, սովոր չեմ: Ես վերընտրվել եմ իմ առջեւ կանգնած դժվարությունների եւ դրանց հաղթահարման գործում կրելիք պատասխանատվության սառը գիտակցությամբ, որի համար ամենեւին չեմ զղջում:

Մի՞թե ես չգիտեմ հետս ձեւանալու, ազգային բոլոր իղձերի իրականացնողը ներկայանալու, ժողովրդին ամեն գնով դուր գալու էժան հնարքները: Մի՞թե ես չէի կարող գիշեր-ցերեկ հայհոյել թուրերին, ՄԱԿ-ի առջեւ բարձրացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, շեղյալ հայտարարել Կարսի պայմանագիրը, Թուրքիայից պահանջել Սեւրի դաշնագրով գծված սահմանները, վերջնագիր ներկայացնել Ադրբեջանին, ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, հայտարարել, որ ոչ մի թիզ հող չենք զիջի եւ այլն:

Այդ բոլոր հնարքները ես վարպետորեն կարող էի օգտագործել, հանենայն դեպս ոչ ավելի վատ, քան կինոյի տանը հավաքվածներից որեւէ

մեկը. ինչ է, կրթությո՞ւնս չի ներում, խե՞լքս չի կտրում: Ես հեշտությամբ կարող էի Բաքվի ու մեծ հայրենասերի համբավ ձեռք բերել, դառնալ ազգի կուռք, Հայաստանի ու Սփյուռքի միասնության խորհրդանիշը:

Ի՞նչն է, ուրեմն, խանգարում անել այդ ամենը՝ քաջության պակա՞սը, աշխարհաքաղաքացիական (կոսմոպոլիտ) մտածողությո՞ւնը, ապազգային էությո՞ւնը, թե սխալ դաստիարակությո՞ւնը: Խանգարում է ընդամենը պարզ քաղաքական հաշվարկը և մեր ժողովրդին փորձանքներից հեռու պահելու գիտակցությունը: Այլ կերպ վարվելու դեպքում աղետները ու արհավիրքներն անխուսափելի կլինեին, և այսօր ոչ միայն կորցրած կլինեինք Ղարաբաղը, այլև վտանգված կլիներ Հայաստանի գոյությունը: Լուսաբանությունների համար հեռու չգնալով, հիշենք մեր հարևանների բախտը. մեր աչքի առջև Գամսախուրդիան և Էլչիբեյը որդեգրեցին հերոսանալու քաղաքականությունը, դարձան ազգային կուռքեր, բայց անհամար աղետներ բերին իրենց ժողովուրդների գլխին:

Առասպելներ և հանելուկներ

Հայաստանի քաղաքական մտքի և հասարակական կարծիքի անդաստաններում դեգերում են նաև որոշ կայունացած պնդումներ, որոնք արդեն վերաբերում են առասպելի ու հանելուկի բնագավառին.

Առասպել առաջին. *Հայաստանն իբր ճնշումներ է բանեցնում Լեռնային Ղարաբաղի իշխանությունների վրա:*

Այս պնդման առթիվ ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ. Հայաստանը միայն մեկ անգամ է ճնշում բանեցրել Ղարաբաղի վրա՝ 1993 թվականին նրան համոզելով մասնակցել Մինսկի խմբի բանակցություններին, և այդ մասնակցությունը իրեն լիովին արդարացրել է:

Ոչ այսօր, ոչ վաղը Հայաստանը մտադիր չէ ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա: Ղարաբաղի անունից որոշումներ է ընդունում միայն նրա ղեկավարությունը՝ բնականաբար կրելով դրա պատասխանատվությունը ոչ միայն Ղարաբաղի բնակչության, այլև ողջ հայ ժողովրդի առջև: Դա չի նշանակում, անշուշտ, որ Հայաստանը հրաժարվում է խորհրդակցել Ղարաբաղի իշխանությունների հետ և նրանց համոզել այն հարցերում, որոնք ճիշտ և նպատակահարմար է համարում: Բայց միևնույն է, վերջնական որոշումը մնում է Ղարաբաղի իշխանություններին:

Առասպել երկրորդ. *Եթե Հայաստանը խիստ կեցվածք ընդուներ Թուրքիայի նկատմամբ, նրա առջև դներ Ցեղասպանության ճանաչման, Կարսի պայմանագիրը չեղյալ հայտարարելու, հայկական հողերը վերադարձնելու հարցերը, ապա Թուրքիան և Ադրբեջանը ավելի զիջող կդառնան Ղարաբաղի հարցում:*

Իմ խորին համոզմամբ, որը ես կարող եմ ապացուցել նաև կոնկրետ քաղաքական հաշվարկներով, այդպիսի կեցվածքը ոչ միայն որևէ օգուտ չի բերի Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծմանը, այլև նոր բարդություններ կառաջացնի Հայաստանի և Թուրքիայի հարաբերություններում, որոնք ավելի ևս կծանրացնեն Հայաստանի ու Ղարաբաղի դրությունը: Անգեն աչքով իսկ կարելի է նկատել, որ ընդհակառակը, Ադրբեջանի և Թուրքիայի համար դա լրացուցիչ կռվան կհանդիսանար ապացուցելու Հայաստանի ծավալապաշտական նկրտումները և նրա դեմ լարելու միջազգային հանրության առանց այդ էլ աննպաստ կարծիքը:

Առասպել երրորդ. *Եթե Հայաստանը ճիշտ օգտագործեր Սփյուռքի լոբբիստական կարողությունները, ապա սփյուռքահայ համայնքները թույլ չէին տա իրենց կառավարություններին ոտնահարել Լեռնային Ղարաբաղի իրավունքները:*

Այս առասպելը մեկնաբանելուց առաջ նախ պետք է նշել, որ լոբբիստական կարողություններ ունի միայն ամերիկահայ գաղութը, մյուս երկրներում լոբբիստական ավանդույթներ, հետևաբար նաև կազմակերպված լոբբիստական խմբեր գոյություն չունեն:

Չթերագնահատելով, անշուշտ, ամերիկահայ համայնքի լոբբիստական աշխատանքը Հայաստանին լուրջ մարդասիրական օգնություն ցուցաբերելու և ամերիկյան կոնգրեսում Ղարաբաղի նկատմամբ դրական կարծիք ձևավորելու հարցերում, դրա հետ մեկտեղ չպետք է մոռանալ, սակայն, որ լոբբիզմը սահման ունի. նրա ազդեցությունը վերջանում է այնտեղ, որտեղ բախվում է ԱՄՆ-ի ազգային շահերին: Դա վերաբերում է ոչ միայն հայկական, այլև բոլոր մյուս լոբբիստական կազմակերպություններին, այդ թվում նաև հրեականին, որը թեև ամենահզորն է, բայց ամենևին ոչ ամենակարող:

Առասպել չորրորդ. *Ռուսաստանի ներկայիս կոսմոպոլիտ իշխանությունները չեն հասկանում իրենց երկրի ստրատեգիական շահերը (այս հարցում մեղավոր է նաեւ Հայաստանը, որը չի կարողանում դա նրանց բացատրել): Բայց շուտով Ռուսաստանում իշխանության կգան իսկական ազգայնական ուժեր, որոնք Հայաստանը դարձնելով Կովկասի Իսրայել, Ղարաբաղի հարցը մեր օգտին կլուծեն:*

Կասկածելի ու հարցական են, եթե չասենք անհեթեթ, այս առասպելի անխտիր բոլոր դրույթները.

- արդյոք իսկապե՞ս կոսմոպոլիտ են Ռուսաստանի ներկա իշխանությունները.
- իրո՞ք նրանք չեն հասկանում իրենց երկրի ստրատեգիական շահերը.
- Հայաստա՞նն է, որ դա պետք է հասկացնի նրանց.
- Ռուսաստանին դաս տվողները, արդյոք, իրենց ծիծաղելի վիճակի մեջ չե՞ն դնում՝ վարկաբեկելով հայի կերպարը.
- իսկապե՞ս Ռուսաստանում իշխանության են գալու ազգայնական ուժերը.
- նրանք արդեն խոստացե՞լ են Ղարաբաղը նվիրել Հայաստանին կամ ճանաչել նրա անկախությունը, այդ խոստումը եղել է բանավո՞ր, թե՞ գրավոր.
- եւ վերջապես, ինքնախաբեությամբ Ռուսաստանի կամ որեւէ այլ տերության խաղաքարը դառնալու մոլագարությունը դեռեւս որքա՞ն ժամանակ պետք է լինի հայի կենսակերպը:

Մի՞թե մեծ խելք է պետք հասկանալու համար, որ ինչպիսի իշխանություն էլ լինի Ռուսաստանում, միեւնույն է՝ նա չի կարող ճանաչել Ղարաբաղի անկախությունը, որովհետեւ իր կազմում ունի քսան Ղարաբաղ:

Առասպել հինգերորդ. *Ադրբեջանը շատ ակտիվ գործելով միջազգային ատյաններում եւ զանգվածային լրատվամիջոցներում, փաստորեն շահել է քարոզչական պատերազմը (որը հաճախ շփոթվում է դիվանագիտական հաղթանակի հետ):*

Միակ առասպելն է, թերեւս, որ ամենեւին հիմքից զուրկ չէ. Հայաստանի եւ Ղարաբաղի համեմատ Ադրբեջանն իսկապես մեծ աղմուկ է բարձրացնում միջազգային ատյաններում ու լրատվամիջոցներում:

Պատճառը, սակայն, պարզից էլ պարզ է ու միանգամայն բնական: Էլ ի՞նչ էր մնում անելու Ադրբեջանին. նա տանուլ է տվել ռազմական առճակատումը, լիովին կորցրել է վերահսկողությունը Ղարաբաղի վրա, զրկվել է զգալի տարածքներից, ընկել շուրջ հինգ հարյուր հազար փախստականների ծանր ճնշման տակ: Ադրբեջանի Նախագահն ու արտգործնախարարը ի՞նչ պատասխան պետք է տային իրենց ժողովրդին, եթե ոչ գիշեր-ցերեկ աղմուկ բարձրացնելով ձեւացնել, թե խիզախորեն պայքարում են՝ Ղարաբաղն ու կորցրած տարածքները ետ նվաճելու համար:

Եթե անգամ ճիշտ է այն պնդումը, թե մենք իբր տանուլ ենք տվել քարոզչական պատերազմը, ապա պետք է գնահատել. ո՞րն էր ավելի նախընտրելի՝ պահել Ղարաբաղը եւ կորցնել քարոզչական պատերազմը, թե՞ կորցնել Ղարաբաղը եւ փայլուն հաղթանակ տանել քարոզչության ասպարեզում: Պատմության մեջ մենք քարոզչական ու բարոյական այնքան հաղթանակներ ենք տարել, որ գուցե մեր քիմքին դա է պատշաճում: Սա չի նշանակում, անշուշտ, որ մենք պետք է անտեսենք քարոզչական գործունեությունը եւ միջոցներ չձեռնարկենք չեզոքացնելու համար ադրբեջանական քարոզչության ազդեցությունը:

Սահմանափակելով առասպելների թվարկումը, այժմ թեթեւակի անդրադառնանք նաեւ մի քանի հանելուկների՝ նրանց լուծումը թողնելով, սակայն, բացառիկ հնարամտության տիրապետող մարդկանց:

Հանելուկ առաջին. *Կարելի է հասնել Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչմանը եւ միաժամանակ խուսափել պատերազմից (Վազգեն Մանուկյանի նախընտրական ծրագրից):*

Ի՞նչ է սա. հանճարի մտքի փայլատակո՞ւմ՝ անմատչելի խեղճ մահկանացուներիս, թե՞ ուղեղի ժամանակավոր մթագնում, որը ամեն մարդու հետ կարող է պատահել: Կամ գուցե Նախագահ Ալիեւը հանելուկի հեղինակի ականջին ինչ-որ բան է փսփսացել, որ մենք չգիտենք: Համենայն դեպս, հայ քաղաքական մտքին մի այնպիսի կնճռոտ առեղծված է մատուցվել, որից անգամ էյնշտեյնը դժվար թե գլուխ հաներ:

Հանելուկ երկրորդ. *Հնարավոր է անտեսել միջազգային հանրությանը եւ շարունակել օգնություններ ստանալ նրանից:*

Գործի բերումով միջազգային հանրության պատասխանատուների հետ ամենաշատը ես եմ շփվում, բայց երբեւէ նրանցից այդպիսի հավաստիացում չեմ ստացել: Ընդհակառակը, ամեն քայլափոխում մենք

տեսնում ենք օգնությունների նորոճեն բողարկված պայմանավորումը բաղաքական հանգամանքներով: Գուցե այստեղ էլ մենք ենք մեղավոր, որ չենք կարողանում միջազգային հանրությանը բացատրել իր ստրատեգիական շահերը: Հիրավի, մենք մոռանում ենք համաշխարհային ազգ լինելու, հետեւաբար ամբողջ աշխարհին դաս տալու մեր պատմական առաքելությունը:

Հանելուկ երրորդ. *Մենք՝ ընդդիմադիրներս, զարաբաղյան հակամարտության կարգավորման ծրագիր չունենք, բայց քանի որ Հայաստանի ներկա ապազգային իշխանություններն ի վիճակի չեն լուծելու այդ հարցը, ապա իշխանությունը տվեք մեզ, եւ մենք կլուծենք՝ ձեռի հետ էլ վերականգնելով Հայաստանի արդյունաբերությունը, հինգ-տաս անգամ բարձրացնելով աշխատավարձը, երկիրը ողողելով արտասահմանյան ներդրումներով:*

Զգիտեմ իսկ, արժե, թե չարժե մեկնաբանել այս հանելուկը. համենայն դեպս, չեմ կարող չնշել, որ բաղաքականության մեջ ազնիվ խոսքն ամենեւին էլ լավագույն փաստարկը չէ, եւ երբեւէ ժողովուրդը հավատալով որեւէ մեկի ազնիվ խոսքին՝ նրան իշխանություն չի տվել, մանավանդ, երբ այդ խոսքը, հանելուկ պարունակելուց բացի, մոտենում է նաեւ հրաշապատում հեքիաթի ժանրին:

Փաթեթային, թե՞ փուլային լուծում

Ընդդիմադիր մամուլի կողմից ջանք չի խնայվում հասարակությանը տպավորելու համար, թե իբր Լեռնային Ղարաբաղը պաշտպանում է կարգավորման փաթեթային տարբերակը, իսկ Հայաստանը՝ փուլայինը, որը ճղի է լուրջ վտանգներով: Ես թերեւս չանդրադառնայի այս հարցին, եթե ի զարմանս ինձ, նման հայտարարություններ չլսեինք նաեւ Ղարաբաղի ներկայացուցիչներից:

Սեպտեմբերի 26-ի մամլո ասուլիսին ուշադիր հետեւողները պետք է նկատած լինեին, որ թե՛ փաթեթային, թե՛ փուլային լուծումները ես համարել եմ «իրական (ռեալ) տարբերակներ»: Նշել եմ նաեւ, որ Հայաստանը լուրջ վերապահումներով ընդունել է համաձախագահների ներկայացրած առաջին ծրագիրը, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ կարգավորման փաթեթային տարբերակ: Եւ միայն այն բանից հետո, երբ Ադրբեջանը եւ Լեռնային Ղարաբաղը գրավոր կերպով կտրականապես մերժել են

այդ տարբերակը, համաձախագահներն ստիպված են եղել կողմերին առաջարկել փուլային լուծում:

Ասուլիսում իմ կողմից մասնավորապես ասված է. «Ըստ էության ի՞նչ տեղի ունեցավ: Միջնորդներն էլ, մենք բոլորս էլ համոզվեցինք, որ այսօր Ղարաբաղը եւ Ադրբեջանը պատրաստ չեն ինքնակոչ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, որովհետեւ նրանցից յուրաքանչյուրն ունի այդ կարգավիճակի մասին իր սեփական պատկերացումը, որը կտրուկ հակադրվում է հակառակորդի տեսակետին: Այս հարցում բոլորը համոզվեցին: Ես կարծում եմ, ընտրվեց միակ իրատեսական մոտեցումը: Եթե լուծման նման տարբերակը չի ընդունվում, այսինքն իրագործելի չէ, այսօր պետք է փորձ կատարել իրագործել լուծման «փուլ առ փուլ» տարբերակը» («Հայաստանի Հանրապետություն», 27 սեպտեմբերի, 1997 թ.):

Մերժելով նախ փաթեթային, ապա՝ փուլային լուծումները եւ այսօր առաջարկելով կրկին վերադառնալ փաթեթային տարբերակին, ղարաբաղյան կողմն անհարմար դրության մեջ է դրել թե՛ Ղարաբաղը, թե՛ Հայաստանը: Այնուամենայնիվ, վիճակը ես ողբերգական կամ փակուղային չեմ համարում, քանի որ հնարավոր է այդ երկու տարբերակները հեշտությամբ համատեղել: Գաղափարը շատ պարզ է. բանակցությունների արդյունքում ստորագրվում է կարգավորման փուլային տարբերակը, բայց այն կիրառվում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցումից հետո: Դրանով Ղարաբաղը միջազգային հանրությանն ապացուցում է իր կառուցողականությունը, ցույց է տալիս, որ ոչ մի մտադրություն չունի պահպանել գրավված տարածքները, իսկ մյուս կողմից՝ լուրջ առաջխաղացում է արձանագրվում կարգավորման գործընթացում, եւ վերսկսվում են շուրջ մեկ տարի ընդհատված բանակցությունները[2]:

Գլխավորն այսօր ընդհատված բանակցությունների վերսկսումն է, որի համար անհրաժեշտ է կարճ ժամանակում վերջիվերջո հակամարտող կողմերի միջեւ համաձայնեցնել բանակցությունների հիմքի հանդիսացող փաստաթղթի նախագիծը: Եթե դա տեղի չունենա միեւնույն ԵԱՀԿ

[2] *Հրապարակումներում «Գաղափարը շատ պարզ է .... ընդհատված բանակցությունները» հատվածը վրիպմամբ դուրս է մնացել: Վերականգնում ենք բուն ձեռագրի:*

նախաարարների խորհրդի առաջիկա նիստը, որը կայանալու է այս տարվա դեկտեմբերին Կոպենհագենում, ապա մեզ լուրջ բարդություններ կառող են սպասել:

Դավադրությունը բացառվում է

Ընդդիմության կողմից փորձ է արվում ստեղծել նաեւ այն տպավորությունը, թե համաձախագահների կողմից Ղարաբաղի դեմ դավադրություն է կազմակերպվում, որին ապաշնորհության պատճառով կամ դավաճանական դիտավորությամբ մասնակցում է նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նման տպավորության ստեղծման նպատակով մասնավորապես շահարկվում է բանակցությունների գաղտնիության հանգամանքը, թեեւ այդ մտավախությանը, կարծում եմ, ես սպառիչ կերպով անդրադարձել եմ ՀՀՇ 9-րդ համագումարի իմ ելույթում: Սոսկված եմ կրկնել ելույթի համապատասխան հատվածը.

«Գաղտնին անպայման դավադրություն չի նշանակում: Սա պարզապես միջազգային դիվանագիտական պրակտիկա է՝ ճնշուացնելու համար բանակցությունների գործընթացը, այն հեռու պահելով ավելորդ աղմուկից ու պրոպագանդիստական շահարկումներից: Բավական է հիշեցնել, որ արաբա-իսրայելյան կարգավորման ներկա գործընթացին նախորդել են տարիներ տեւած գաղտնի բանակցություններ:

Հասկանալի է, որ գաղտնի է ընթանալու միայն բանակցությունների փուլը, իսկ համաձայնությունների կայացումից հետո, բայց վերջնական պայմանագրերի ստորագրումից առաջ, կարգավորման ծրագիրը, բնականաբար, ներկայացվելու է ինչպես մեր, այնպես էլ Արցախի եւ Ադրբեջանի ժողովուրդների դատին...

Մի բանում ձեզ կարող եմ լիովին վստահեցնել. Հայաստանը երբեւէ չի ստորագրի որեւէ փաստաթուղթ, որի տակ չի լինի նաեւ Լեռնային Ղարաբաղի ստորագրությունը» («Հայաստանի Հանրապետություն», 15 հուլիսի, 1997 թ.):

Թվում է, թե ինչ թե շատ տրամաբանող եւ տարեական մտավոր կարողություններ ունեցող մարդկանց համար ասված է ամեն ինչ: Բայց անպարարության սովոր եւ ժողովրդին մոլորության մեջ գցելու տենդով տառապող մարդկանց համար ի՞նչ փույթ հաշվի նստել տրամաբանության կամ ընդհանրապես բանականության հետ, երբ կարելի է ընդդիմախոսի խոսքերն աղավաղելու եւ երեւակայական վերագրումներ կատարելու միջոցով հողածածկել սեփական մերկությունը՝ հույս դնելով ստորագույն մարդկային բնազդների վրա:

Դավադրությունն, ըստ էության, բացառվում է ոչ թե ենթակայական (սուբյեկտիվ) հանգամանքներով, այսինքն ոչ թե այն պատճառով, թե Լեռն Տեր-Պետրոսյանը կամ այլ ոմն այդպես է կամենում կամ պատկերացնում, այլ զուտ իրավական առումով: Այսինքն՝ գործելու է Ղարաբաղի հարցի կարգավորման վերահսկման հստակ իրավական մեխանիզմ, որն ընդգրկելու է հետեւյալ հաջորդական հանգրվանները.

ա) ինչպես վերը նշվեց, համաձայնությունների կայացումից հետո, բայց վերջնական պայմանագրերի ստորագրումից առաջ կարգավորման ծրագիրը ներկայացվելու է շահագրգիռ ժողովուրդների դատին.

բ) կարգավորման ցանկացած ծրագրի կամ պայմանագրի տակ լինելու է Լեռնային Ղարաբաղի ստորագրությունը.

գ) ստորագրումից հետո կարգավորման ծրագիրը կամ պայմանագիրը պետք է վավերացվի հակամարտող կողմերի խորհրդարանների կողմից:

Ինչպես տեսնում ենք, և՛ ժողովուրդը, և՛ ընդդիմությունը ճնարավորություն է ունենալու լիակատար կերպով վերահսկել կարգավորման գործընթացը եւ ազդել նրա արդյունքների վրա: Ես միայն ուրախ կլինեմ, եթե հնապարակային բնույթ ունեցող եւ խորհրդարանական բանավեճերի ընթացքում ընդդիմությունը հանդես գա այլընտրանքային առաջարկներով ու ծրագրերով, որոնք մեզ հնարավորություն կտան կայացնել ճիշտ որոշումներ, քանի որ Լեռնային Ղարաբաղի հարցում մենք սխալվելու իրավունք չունենք:

Ինքնախաբեությամբ չզբաղվենք եւ զուր պատրանքներ չփայփայենք Ղարաբաղի անկախության հարցում մենք դաշնակիցներ չունենք: Ոչ ոք մեր փոխարեն չի լուծելու ասկա կնճիռը: Մենք ենք լուծելու, եւ լուծելու ենք մեր ուժերի ներածի չափով: Մեր միակ դաշնակիցը արկածախնդրության մերժումն է:

Ես նպատակ չեմ հետապնդում ողբերգականացնել իրավիճակը եւ ամենեւին տագնապ չեմ հնչեցնում, քանի որ վստահ եմ մեր ժողովրդի ողջամտությանը:

«Հայաստանի Հանրապետություն», 1 նոյեմբերի, 1997 թ.:
ՀՀԱՆԱ, 28/01.11.97: Բնագիր: Ինքնագիր:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՄԱՆՈՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՄՈՒՏԻՆ

(31 դեկտեմբերի, 1997 թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Հայաստանի անկախության յոթերորդ տարին մենք թեւակոխում ենք որպես հաղթականապես եւ միջազգայնորեն լիովին կայացած, տնտեսական եւ ներհաղթական որոշակի կայունությամբ բնութագրվող, բայց նաեւ բազմաթիվ առօրեական խնդիրներով ծանրաբեռնված պետություն, որը դժբախտաբար դեռեւս շատ հեռու է մարդկանց նվազագույն պահանջները բավարարելու եւ արժանապատիվ կյանք ապահովելու սովորական պատկերացումից:

Անցնող տարում առնանագրված դրական միտումները, սակայն, հույս են ներշնչում, որ առկա կենսական խնդիրների լուծման տեսանկյունից մենք ավելի լավատեսորեն կարող ենք նայել ապագային:

Կարծում եմ, որ 1997 թվականը լիովին արդարացրեց այն կանխատեսումը, որ Հայաստանն անցել է տագնապների, ցնցումների, արմատական ու ցավոտ վերափոխումների շրջանը եւ մտնում է խաղաղ, ստեղծագործ աշխատանքի, երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի եւ հաղթական ու հասարակական հարաբերությունների աստիճանական բարելավման, պետության բարեկարգման, իշխանության կառույցների գործունեության ներդաշնակման եւ արդյունավետության բարձրացման բնականոն հանգրվան:

1997 թվականը նշանակալից էր հատկապես երկրի ներհաղաքական իրավիճակի կայունացման եւ սոցիալ-տնտեսական ոլորտում կարգուկանոնի հաստատման տեսակետից՝ մանավանդ ակնառու նախորդ տարվա անախորժ իրադարձությունների եւ տնտեսական լճացման անհանգստացնող երեւույթների ֆոնի վրա:

Բավականին հուսադրող վիճակ է ստեղծվել հարկային ու մաքսային պատասխանատվությունների կատարման եւ վճարումային կարգապահության բարձրացման գործում, որը ոչ միայն հնարավորություն է տալիս նախատեսված ժամկետներում իրականացնել բյուջեի ծախսերը, այլեւ ապահովել գազի կանոնավոր մատակարարումը՝ դրանով իսկ լուծելով երկրի էներգետիկ ապահովվածության կարեւորագույն խնդիրը:

Որոշակիորեն կանոնավորվել եւ անհրաժեշտ թափ է ստացել սեփականաշնորհման գործընթացը. սեփականաշնորհված փոքր օբյեկտների թիվն արդեն հասել է շուրջ վեց հազարի, իսկ արտադրական ձեռնարկություններինը՝ ավելի քան հազար երկու հարյուրի: «Արմենթելի» գործարքի շնորհիվ առաջին լուրջ հաջողությունն է արձանագրվել նաեւ միջազգային աճուրդների բնագավառում, որը որպես մեր երկրի վստահելիության փորձաքար, կարող է դառնալ ապագա շահավետ գործարքների գրավականը:

Լուրջ հայտեր են արվել Հայաստանի բանկային համակարգի առողջացման եւ ամրապնդման ուղղությամբ: Զգալիորեն աճել են Կենտրոնական բանկի արտաքին պահուստները. նախորդ տարեվերջի 168 մլն դոլարի դիմաց դրանք այսօր կազմում են ավելի քան 240 մլն դոլար:

Հսկայական աշխատանք է կատարվել ֆինանսա-տնտեսական օրենսդրության կատարելագործման բնագավառում: Շահութահարկի, Եկամտահարկի, Ավելացված արժեքի հարկի եւ Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների մասին ընդունված նոր օրենքներով էականորեն թեթեւացել է աշխատավորների եւ գործատուների հարկային բեռը, որի դրական ազդեցությունը արտադրության վերականգնման, ներդրումների ներգրավման եւ արտահանման ընդլայնման գործում, մասնագետների գնահատմամբ, ի հայտ պետք է գա արդեն իսկ առաջիկա տարվա ընթացքում: Գործարարության խթանման առումով կարեւոր ազատականացնող եզրակացումներ են կատարվել նաեւ հարկերի եւ բանկային գործունեության մասին ընդունված այլ օրենքներում:

Անցնող տարում որոշակի նախադրյալներ են ստեղծվել նաեւ ժողովրդի սոցիալական վիճակի բարելավման առումով: Նկատելիորեն կարգավորվել է կենսաթոշակային հիմնադրամի գործունեությունը: Հաջորդ տարվա բյուջեում նախատեսված է 30 տոկոսով բարձրացնել բյուջետային աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ուսուցիչներինը, սկսած հունվարի 1-ից, իսկ մյուսներինը՝ տարվա ընթացքում երկու հանգրվանով: Առկա միջոցների արդյունավետ օգտագործման եւ սոցիալական արդարության ապահովման տեսակետից կարեւոր միջոցառում կհանդիսանա նաեւ հուլիսի 1-ից ներդրվող ընտանեկան նպաստների համակարգը, որի ձեւավորման աշխատանքներն արդեն մոտենում են ավարտական փուլին:

Այս ամենի հետ մեկտեղ, սակայն, 1997 թվականին տնտեսության ոլորտում տեղ են գտել նաեւ մի շարք մտահոգիչ երեւույթներ, որոնց հաղթահարումն առաջիկա տարում դառնալու է կառավարության առաջնահերթ խնդիրը: Դրանք են՝ տնտեսական աճի նախատեսվածից ցածր տոկոսը, արտահանման կրճատումը եւ բարձր սղաճը, որոնց խորհրդային բնույթը, ըստ երեւույթին, պահանջում է ոչ թե զուտ վարչարարական, այլ ռազմավարական, տնտեսագիտական լուծումներ:

1997 թվականը հարաբերաբար հաջողված կարելի է համարել նաեւ Հայաստանի միջազգային հարաբերությունների զարգացման տեսակետից: Շարունակվել եւ խորացել է սերտ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների՝ Միջազգային արժութային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Եւրոպայի վերակառուցման եւ զարգացման բանկի հետ: Պահպանվել են ամերիկյան օգնության հիմնական ծավալները, իսկ հաջորդ տարվա համար նախատեսվել է նաեւ ամերիկյան ուղղակի օգնություն Լեռնային Ղարաբաղին: Օգնությունների գծով որոշ առաջընթաց է արձանագրվել նաեւ Եւրամիության, Ֆրանսիայի եւ Հոլանդիայի հետ հարաբերություններում:

Երկկողմ կապերի ամրապնդման առումով հիշատակելի են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ուկրաինայի, Վրաստանի, Իրանի եւ մանավանդ Ռուսաստանի հետ զարգացող հարաբերությունները: Արտաքին հարաբերությունների ամենանշանակալից իրադարձությունն, անշուշտ, Ռուսաստանի հետ կնքված «Բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ օգնության» պայմանագիրն էր, որը երկու երկրների միջեւ նախատե-

սում է համակողմանի համագործակցության ծավալում քաղաքական, տնտեսական, ռազմական եւ մարդասիրական ոլորտներում: Այդ պայմանագրի ոգու անմիջական դրսեւորումը պետք է համարել, մասնավորապես, Արմռուսգազարդ բաժնետիրական ընկերության ստեղծումը, որի նշանակությունը դուրս գալով զուտ ներհայաստանյան շրջանակներից, մոտ ապագայում ձեռք է բերելու տարածաշրջանային արժեք:

Ամփոփելով 1997 թվականի հիմնական արդյունքները, չպետք է անտեսել նաեւ կրթության, գիտության եւ մշակույթի բնագավառում նկատվող որոշակի աշխուժացումը, որի վկայությունն են մեր արվեստի գործիչների բազմաթիվ հյուրախաղերը, թատրոնների նոր ներկայացումները, նկարչական ցուցահանդեսները, հաջողված գեղարվեստական ու գիտական հրատարակությունները: Բարձր գնահատանքի են արժանի հրաշալի կազմակերպված բուհական ընդունելության քննությունները եւ Եղիշե Չարենցի ու Հովհաննես Բաղրամյանի հոբելյանական շքեղ միջոցառումները:

Նոր տարին, այսպիսով, մենք դիմավորում ենք որոշակի դրական լիցքով եւ հուսադրիչ նախադրյալներով, բայց նաեւ առկա խնդիրների լրջության ողջ գիտակցությամբ: Իշխանության բոլոր կառույցներից՝ խորհրդարանից, կառավարությունից, մարզպետարաններից եւ համայնքային մարմիններից դեռեւս հսկայական ջանքեր են պահանջվում երկրի սոցիալ-տնտեսական կյանքը բնականոն հունի մեջ դնելու ուղղությամբ: Մասնավորապես, իրենց լուծմանն են սպասում արտադրության խթանման, ներդրումների ապահովման, աշխատատեղերի ստեղծման եւ տարածաշրջանային համագործակցության զարգացման ցավոտ խնդիրները: Կարեւորելով մեր հայրենակից Քըրք Քըրքորյանի ստեղծած եւ սենատոր Դոուլի գլխավորած ներդրումային հիմնադրամի դերը, չպետք է կարծել, սակայն, որ այն դառնալու է բոլոր նշված խնդիրների լուծման բանալին:

1998 թվականի կարեւորագույն խնդիրներից է նաեւ դատա-իրավական բարեփոխումների ծրագրի իրականացումը: Բարեփոխումների պետական խորհրդի գործունեությունը, համապատասխան օրենքների մշակման եւ ընդունման ընթացքը, ինչպես նաեւ անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը հույս են ներշնչում, որ այդ համալիր

ծրագիրը իրականություն կդառնա սահմանված ժամկետներում եւ ամբողջ ծավալով:

Նոր տարում լուրջ ակնկալիքներ կան նաեւ արտաքին քաղաքականության բնագավառում: Հայաստանը, ամենայն հավանականությամբ, շուտով կդառնա Առեւտրի համաշխարհային կազմակերպության եւ Եւրոպական խորհրդի լիարժեք անդամ, որը պետք է դիտել որպես կարեւոր քայլ միջազգային համակարգերում երկրի ինտեգրացման ուղղությամբ:

Արտաքին քաղաքականության մեջ, սակայն, Հայաստանի համար ամենապատասխանատու խնդիրը եղել եւ մնում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումն ու շրջափակումների վերացումը, քանզի ակնհայտ է, որ առանց այդ խնդրի լուծման անհնար է խոսել պետականության վերջնական կայացման եւ երկրի բնականոն տնտեսական զարգացման մասին:

Ամանորյա ուղերձը, կարծում եմ, պատշաճ առիթ է մեկ անգամ եւս ներկայացնելու Հայաստանի հստակ տեսակետն այս հարցում.

- հակամարտող կողմերը պետք է խստիվ պահպանեն առկա զինադադարը եւ զերծ մնան պատերազմական գործողությունների վերսկսման որեւէ մտադրությունից.
- հակամարտությունը պետք է կարգավորվի բացառապես խաղաղ բանակցությունների միջոցով, փոխզիջման հիման վրա, որի էությունը միջազգային իրավունքի երկու հակադիր սկզբունքների՝ տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման հաշտեցումն է.
- Լեռնային Ղարաբաղի միջազգայնորեն երաշխավորված հատուկ կարգավիճակը պետք է ապահովի նրա ժողովրդի անվտանգությունը, լիակատար վարչական ինքնուրույնությունը, ազատ կենսագործունեությունն ու արժանապատիվ կյանքը.
- Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է լուծվի ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսի շրջանակներում, համանախագահ երկրների առաջարկների եւ երեք հակամարտող կողմերի համաձայնության հիման վրա: Այս առումով ԵԱՀԿ նախարարների խորհրդի կոպենհագենյան հանդիպումը պետք է գնահատվի ոչ թե որպես որեւէ կողմի ձեռքբերում կամ անհաջողություն, այլ բանակցային գոր-

ծրնրացի հեռանկարի պահպանման լուրջ եւ պարտավորեցնող գրավական:

Որպես Հայաստանի Հանրապետության Նախագահ, այս տոնական առիթով, ես հավաստում եմ իմ վճռականությունը հետեւողականորեն հետապնդել դրված նպատակները եւ Սահմանադրությամբ ինձ տրված լիազորությունների շրջանակներում կանգ չառնել ոչ մի խոչընդոտի առջեւ՝ հասնելու համար դրանց իրականացմանը: Հայաստանի, Ղարաբաղի, մեր ողջ ժողովրդի համար կայուն խաղաղության, երաշխավորված ապագայի եւ բարգավաճման հնարավորությունների ապահովումը ինձ համար վեր է ամեն ինչից:

Ուստիեւ համայն հայությանը ես մաղթում եմ նախ եւ առաջ խաղաղություն, ապա՝ բոլոր մարդկային փափագների իրականացում եւ անձնական երջանկություն:

Շնորհավոր նոր տարի:

«Հայաստանի Հանրապետություն», 1 հունվարի, 1998 թ.:
ՀՀԱԱ, 28/31.12.97: Բնագիր: Ինքնագիր:

ԵԼՈՒՅԹ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏՈՒՄ

(8 հունվարի, 1998 թ.)[1]

Նախքան բուն ելույթին անցնելը, կարծում եմ, ավելորդ չէ ամփոփ ձեւով ներկայացնել երկու օրվա ընթացքում այստեղ հնչած որոշ կարծիքներ, որոնք կարեւոր են քննարկվող հարցի համակողմանի լուսաբանման տեսակետից: Նախապես ներողություն եմ խնդրում, եթե այդ ամփոփումը որոշ դեպքերում չի ապահովում կարծիքների բառացի վերարտադրությունը. համենայն դեպս դրանց բովանդակության ճշգրտությունը ես երաշխավորում եմ: Եւ այսպես.

«Տրջափակումները չեն ազդում Հայաստանի տնտեսական զարգացման վրա: Ամեն ինչ կախված է կառավարության աշխատանքի ճիշտ կազմակերպումից եւ ուժերի մոբիլիզացիայից» (Ռ. Քոչարյան, Վ. Սարգսյան).

«Ղարաբաղյան հակամարտությունը խոչընդոտ չէ արտասահմանյան ներդրումների համար: Ներդրումների հոսքի ապահովումը կախված է ակտիվ ու լայնամասշտաբ մարկետինգային քաղաքականությու-

---

[1] *Նիստն ընթացել է երկու օր (հունվարի 7–8), օրակարգում՝ «Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման ուղիները»: Նիստին մասնակցել են՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Բաբկեն Արարքցյանը, Ռոբերտ Քոչարյանը, Գագիկ Հարությունյանը, Ալեքսանդր Արզումանյանը, Վազգեն Սարգսյանը, Սերժիկ Սարգսյանը, Վանո Սիրադեղյանը, Արկադի Ղուկասյանը, Լեոնարդ Պետրոսյանը, Օլեգ Եսայանը, Սամվել Բաբայանը, Արա Սահակյանը, Կարապետ Ռուբինյանը, Տեր-Հուսիկ Լազարյանը, Վարդան Օսկանյանը, Ժաննա Կարամանուկյանը, Լեւոն Զուրաբյանը, Հովհաննես Իգիթյանը, Բագրատ Ասատրյանը: Նույն հրապարակման մեջ դուրս են թողնված պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները:*

նից, մասնավորապես ինտերնետի ճնարավորությունների մասին» (Ռ. Քոչարյան).

«Հայաստանի բյուջեն կարելի է երկու-երեք անգամ մեծացնել՝ պայքարելով ստվերային տնտեսության դեմ եւ խստացնելով հարկերի հավաքման պրոցեսը» (Ռ. Քոչարյան, Վ. Սարգսյան).

«Սփյուռք – Հայաստան հարաբերությունների սերտացման դեպքում Սփյուռքից կարելի է ստանալ տարեկան 400–500 միլիոն դոլարի օգնություն» (Ռ. Քոչարյան, Վ. Սարգսյան).

«Արտագաղթն այլեւս չի սպառնում Հայաստանին, եւ ընդհակառակը՝ արդեն դիտվում են ներգաղթի միտումներ: Դրա ապացույցն է այն, որ եթե անցյալ տարի դպրոցներում երեք-չորս առաջին դասարաններ էին բացվում, ապա այս տարի բացվել են վեց-յոթ դասարաններ» (Ռ. Քոչարյան).

«Հնարավոր չէ Հայաստանը լրիվ մեկուսացնել: Մեզ կօգնեն Ռուսաստանը եւ Իրանը: Իսկ եթե ինչ-ինչ պատճառներով Ռուսաստանը դադարեցնի զենքի մատակարարումը, ապա մենք զենք կստանանք Իրանից» (Վ. Սարգսյան).

«Իսրայելի օրինակը ցույց է տալիս, որ կարելի է զարգանալ նաեւ մեկուսացման պայմաններում» (Ռ. Քոչարյան).

«Ղարաբաղյան կարգավորման պրոցեսում պետք է վարել ակտիվ սառեցման հաղաքականություն» (Վ. Սարգսյան, Ս. Սարգսյան).

«Ղարաբաղի հարցում հիմա կարիք չունենք փոխզիջման գնալու: Կգիջենք այն ժամանակ, երբ հարկադրված կլինենք» (Վ. Սարգսյան).

«Ղարաբաղում ստատուս-քվոյի պահպանումը մեզ համար վտանգավոր չէ» (Ա. Ղուկասյան).

«Ապաշրջափակումը հնարավոր չէ ապահովել. ցանկացած պատերազմով Ադրբեջանը կարող է խախտել այն» (Ա. Ղուկասյան).

«Փոլային տարբերակը կարող է մեծացնել պատերազմի վտանգը: Նոր դիրքերը մեզ համար դժվար կլինի ամրացնել» (Ս. Սարգսյան).

«Փոլային տարբերակը Ղարաբաղի ժողովուրդը վատ կընկալի, Ղարաբաղում արտագաղթ կսկսվի» (Հ. Եսայան).

«Մենք համոզված ենք, որ կարող ենք անկախ լինել. մեզ համար անընդունելի է մնալ Ադրբեջանի կազմում» (Լ. Պետրոսյան).

Այս կարծիքներից մի հանիսին ռեպլիկի կարգով արդեն արձագանգել եմ, ուստի հարկ չեմ համարում կրկնել իմ առարկությունները: Մյուսներին կփորձեմ անդրադառնալ ելույթի ընթացքում:

* * *

Այժմ անցնենք բուն նյութին: Ինչպես իմ բացման խոսքում ասացի, գոյություն ունի Ղարաբաղի հարցի կարգավորման երեք հնարավորություն.

1. Փաթեթային տարբերակ.
2. Փուլային տարբերակ.
3. Ստատուս-քվոյի պահպանում:

Ես այսօր չեմ պատրաստվում խոսել առաջին երկու տարբերակների առավելությունների ու թերությունների մասին, հանի որ նախ՝ բոլորդ էլ դրանց ծանոթ եք, եւ ապա՝ մեր դիտողություններն ու վերապահումները այդ տարբերակների վերաբերյալ արտահայտված են Մինսկի խմբի համանախագահությանն ուղղված պաշտոնական պատասխաններում (այդ փաստաթղթերը ձեզ բաժանված են): Բացի այդ, նշված տարբերակների մասին խոսելն իմաստ կունենա միայն այն բանից հետո, երբ պարզենք մենք պատրա՞ստ ենք, կամ համոզվա՞ծ ենք, որ Ղարաբաղի հարցը պետք է լուծել այսօր, թե՞ դեռ անհրաժեշտ է սպասել, այսինքն՝ առայժմ պահպանել ստեղծված ստատուս-քվոն, հույս ունենալով, թե ժամանակը մեր օգտին կաշխատի, եւ Ղարաբաղի հարցը կլուծվի ինքնըստինքյան՝ աշխարհը վաղ թե ուշ կհաշտվի կատարված փաստի հետ: Քանի որ ինձ մոտ տպավորություն է առաջանում, որ շատերը հակված են երրորդ տարբերակին, ուստի ես կկենտրոնանամ բացառապես դրա վրա:

Տեսականորեն չեմ ժխտում, որ ստատուս-քվոյի պահպանումը թերեւս կարող էր լինել լավագույն ելքը, հանի որ ի տարբերություն առաջին երկու տարբերակների, որոնց հիմքում ընկած է փոխզիջման գաղափարը, այն ենթադրում է բացառապես հաղթական լուծում: Սակայն դա միայն տեսականորեն: Իսկ գործնականում այդ հանապարհն ընտրելուց առաջ մենք պարտավոր ենք պատասխանել այն հարցին, թե Հայաստանը, որ Ղարաբաղի գոյության միակ երաշխիքն է, ի վիճակի՞ է երկար ժամանակ պահպանել ստատուս-քվոն՝ միաժամանակ ապահովելով իր նորմալ կենսագործունեությունը, տնտեսական բարգավաճումը, ռազմական հզորությունը, ինչպես նաեւ հաղթահարելով շրջափա-

կումների հարուցած դժվարություններն ու դիմագրավելով միջազգային աճող ճնշումները: Կարող եմ ինձ հոռետես համարել, բայց ես չեմ հավատում նման հրաշքի: Եւ ահա, թե ինչու:

Վերջին տարիների մակրոտնտեսական ցուցանիշների ուսումնասիրությունն ինձ բերել է այն համոզման, որ Հայաստանն իր տնտեսական զարգացման մեջ արդեն բախվում է, կարելի է ասել, ֆիզիկական լիմիտների, որոնք կախված չեն կառավարության գործունեության արդյունավետությունից կամ այլ սուբյեկտիվ գործոններից: Թե ինչ լիմիտների մասին է խոսքը, ես կասեմ հետո, իսկ առայժմ դիտարկենք այդ մակրոտնտեսական ցուցանիշները.

	1994	1995	1996	1997*
ՀՆԱ-ի աճը նախորդ տարվա նկատմամբ	5.4%	6.9%	5.8%	3%
Արդյունաբերության աճը նախորդ տարվա նկատմամբ	5.3%	1.5%	1.4%	1%
Արտահանման աճը նախորդ տարվա նկատմամբ	38%	25%	7.2%	-20%
Ներմուծման աճը նախորդ տարվա նկատմամբ	54.9%	71.1%	27%	4%

* 1997 թ. տվյալները նախնական են.

Աղյուսակից պարզորոշ կերպով երեւում է, որ թեեւ գրեթե բոլոր ցուցանիշների գծով աճը դեռես շարունակվում է, բայց արդեն առկա է նրա տեմպի դանդաղեցման ակնհայտ միտում: Եւ ամբողջ դժբախտությունն այն է, որ այս պրոցեսը ոչ միայն շարունակվելու է, այլեւ մեկ-երկու տարուց մեր տնտեսության մեջ դրսեւորվելու են նաեւ անկման միտումներ:

Ի՞նչն է պատճառը: Աղյո՞ւսը մեր վատ աշխատանքը, արդյո՞ք տնտեսական բարեփոխումների ձախողումը կամ դանդաղեցումը: Ձեմ ժխտում, որ այստեղ կան ոեզերվներ, եւ որ մեր աշխատանքի բարելավման ու վերափոխումների արագացման շնորհիվ կարելի է հասնել որոշ դրական տեղաշարժի: Բայց միեւնույն է, դա չի կարող էապես ազդել Հայաստանի տնտեսական զարգացման վրա, քանի որ երեւույթն, իմ կարծիքով, կախված է շատ ավելի օբյեկտիվ ու խորքային գործոններից:

Այդ գործոններն են, ահա, որ ես կոչում եմ Հայաստանի տնտեսական զարգացման ֆիզիկական լիմիտներ: Դրանք են՝ դարաբաղյան հակամարտության պատճառով խորացող Հայաստանի բաղաքական մեկուսացումը, շրջափակումները եւ արտասահմանյան ներդրումների բացակայությունը: Քանի դեռ չեն վերացել այդ գործոնները, ինչպիսի

իշխանություն էլ լինի Հայաստանում, ինչպիսի հանճարեղ մարդիկ էլ գտնվեն կառավարության ղեկին, միեւնույն է, ոչ միայն չի հաջողվելու ապահովել երկրի տնտեսական զարգացման նորմալ ընթացքը, այլեւ հնարավոր չի լինելու լուծել առկա սոցիալական խնդիրները:

Աշխատավարձերը, թոշակները, նպաստները մնալու են նույն խղճուկ մակարդակին. Ադեքի գոտու վերականգնումը ձգձգվելու է տասնյակ տարիներ, խորանալու է գործազրկությունը: Բյուջետային աշխատողների աշխատավարձն այսօր կազմում է շուրջ 20 դոլար: Եթե հաջողվի անգամ այդ գծով ապահովել տարեկան 20–30 տոկոսի աճ, ապա պատկերացրեք, ինչ աշխատավարձ ենք մենք վճարելու հինգ տարի հետո: 40–50 դոլա՞ր: Նկատի ունենալով դրամի արժեզրկումը եւ անխուսափելի սղաները, դժվար չէ կռահել, որ հինգ տարի հետո այդ 40–50 դոլարը կունենան նույն արժեքը, ինչ այսօրվա 20 դոլարը, այսինքն՝ բնակչության կենսամակարդակի որեւէ բարելավում տեղի չի ունենա, եթե Աստված, իհարկե, մեզ փրկի վատթարացումից: Եթե չեմ սխալվում, այստեղ կարծիք արտահայտվեց, որ մեր ժողովուրդը հանուն Ղարաբաղի դեռ կդիմանա, եւ որ Հայաստանին սոցիալական բունտ չի սպառնում: Ես էլ եմ կարծում, որ մեր ժողովուրդը հանուն իր սոցիալական վիճակի բարելավման չի վտանգի Ղարաբաղի գոյությունը: Բայց նրա սոցիալական դժգոհությունը կարտահայտվի բոլորովին այլ կերպ՝ արտագաղթի վերսկսումով:

Հետեւաբար է, ինչի՞ վրա ենք հույս դնում՝ խափանելով կամ, մեղմ ասած, հետաձգելով դարաբաղյան հակամարտության կարգավորումը: Այն համոզվածության վրա՞,

որ շրջափակումները չեն խանգարում Հայաստանի տնտեսական զարգացմանը,

որ արտասահմանյան ներդրումները կարելի է ապահովել ճիշտ մակեւոինգային բաղաքականություն վարելու շնորհիվ,

որ բյուջեն կարելի է զգալիորեն մեծացնել՝ խստացնելով հարկային կարգապահությունը,

որ Միլուոից կարելի է ստանալ հարյուրավոր միլիոնների օգնություն,

որ մեզ կօգնեն ու մեկուսացումից կհանեն Ռուսաստանն ու Իրանը,

որ ինչ որ հաջողվել է Իսրայելին, մեզ էլ կհաջողվի,

որ պետք է փոխզիջման գնալ այն ժամանակ, երբ հարկադրված լինենք:

Այս պնդումներն այնքան ծանրակշիռ են թվում, որ կարծում եմ, անհրաժեշտ է մեկ առ մեկ անդրադառնալ դրանց:

* * *

Իմ կարծիքով, ղարաբաղյան հակամարտության չկարգավորված վիճակը բացասաբար է անդրադառնում Հայաստանի տնտեսական զարգացման վրա մի շարք առումներով:

Առաջին. Շրջափակումը շուրջ 30 տոկոսով բանկացնում է Հայաստանի արտաքին բեռնափոխանակությունը, որ իմ կարծիքով ունի աճելու բեռ է թե՛ մեր արդյունաբերողների, թե՛ գործարարների համար: Այս թիվը ոչ մտացածին է, ոչ էլ ենթադրություն, այլ լուրջ տնտեսական հաշվարկի արդյունք: Դրանում դուք կհամոզվեք, կարդալով ՀՀ տրանսպորտի նախարարության ներկայացրած ծավալուն ուսումնասիրությունը եւ Համաշխարհային բանկի տեղեկանքը, որոնք պատրաստվել են իմ խնդրանքով, հատուկ այս նիստի համար: Իսկ եթե չեք հավատում նաեւ այս փաստաթղթերին, ապա մտեք ցանկացած գործարան, ցանկացած շինհրապարակ, ցանկացած խանութ եւ հարցրեք, թե որքանով է շրջափակումն ազդում նրանց գործունեության վրա:

Շրջափակումը հատկապես խոչընդոտում է մեծածավալ ապրանքների արտահանմանը: Թերեւս զարմանալի թվա, եթե ասեմ, որ այս պահին մենք ունենք շուրջ 1 միլիարդ դոլարի ապրանքներ, որոնց արտահանումը չենք կարողանում իրականացնել նրանց մեծ բեռնատարողության պատճառով: Դրանք են՝ մոլիբդենի հանքաքարը, շինանյութը, բենտոնիտը, պելիտները եւ գինին (մոլիբդենի խտանյութի ու կոնյակի փոխադրումն իմ նախաձեռնությամբ դեռ ինչ-որ կերպ արդարացվում է): Էլ չեմ խոսում «Նաիրիտի» մասին, որի շահութաբեր աշխատանքի համար պահանջվում է, որ օրական մեկ գնացք մտնի, մեկ գնացք դուրս գա գործարանից:

Անշուշտ, մեր բոլոր զգալիորեն կրճատեանք, եթե վերագործարկվեր բնկուզ միայն արխազական երկաթուղին, որի խափանումը կապված չէ ղարաբաղյան հակամարտության հետ: Հայաստանը եւ Ռուսաստանը զգալի քանակներ են գործադրել այդ ուղղությամբ, բայց դրանք բաղաքական նկատառումներով պատշաճ արձագանքի չեն արժանացել Վրաստանի կողմից: Ուստի նկատի ունենալով այդ դառը փորձառությունը, ինչպես նաեւ վրաց-աբխազական հարաբերությունների շարունակվող գերլարված վիճակը, ես վստահ եմ, որ այդ երկաթուղին առնվազն ևս հինգ տարի դեռ չի գործի: Այնպես որ մենք չենք կարող հույս դնել դրա վրա եւ առայժմ ստիպված ենք բավարարվել առկա ծախսատար ճանապարհներով: Քիչ էր, որ ծով չունենք, այժմ գործնականորեն զրկված ենք նաեւ երկաթուղիներից: Իսկ առանց երկաթուղիների դժվար է պատկերացնել ինչ թե շատ կենսունակ տնտեսություն:

Երկրորդ. Ինչ վերաբերում է այն պնդմանը, թե իբր արտասահմանյան ներդրումների հոսքը կախված չէ ղարաբաղյան հակամարտությունից, եւ դրանք կարելի է ապահովել, եթե Հայաստանի իշխանություններն ավելի ակտիվ ու լայնամասշտաբ մարկետինգային հաղաքականություն վարեն, ես, չմերժելով այդպիսի հաղաքականության իրականացման անհրաժեշտությունը, գտնում եմ, որ դրա արդյունքն այնուամենայնիվ շնչին է լինելու: Նախ, ոչ ոք չի կարող առարկել, որ Ղարաբաղում ռազմական գործողությունների վերսկսման հավանականությունը Հայաստանը, արտասահմանյան ներդրումների տեսակետից, դարձնում է ոխսկի գոտի: Ոտար կապիտալը չի կարող հաշվի չառնել այդ հանգամանքը, եւ դա բազմիցս արտահայտվել է միջազգային տնտեսական կազմակերպությունների փորձագետների մակարդակում: Այնուհետեւ, ասվեց արդեն, որ շրջափակումները շուրջ 30 տոկոսով բանկացնում են Հայաստանի արտաքին բեռնափոխանակությունը, եւ դա նույնպես չի կարող չազդել արտասահմանյան ներդրողի մտադրությունների վրա. երբ բիզնեսը զգայուն է անգամ մեկ ցենտի տատանման նկատմամբ, ինչպե՞ս կարող է անտարբեր լինել 30 տոկոսի բանկության դեպքում: Եւ վերջապես, պետք է սառնասրտորեն գիտակցել, որ անգամ անկախ այս հանգամանքներից, Հայաստանը, որպես երեխուկես միլիոնանոց շուկա ինքնըստինքյան գրավիչ չէ արտասահմանյան ներդրումների համար: Հակամարտությունների կարգավորման պարագայում Անդրկովկասում կարող էր ձեւավորվել շուրջ 15 միլիոնանոց շուկա, որը անտարակուսելիորեն բարենպաստ հող կհանդիսանար օտարերկրյա ներդրումների համար: Մի գործարան կկառուցվեր Հայաստանում, մեկը՝ Վրաստանում, մի ուրիշն էլ Ադրբեջանում, որոնք հավասարապես կսպասարկեին այդ միացյալ շուկան: Բացի այդ, նման պայմաններում հնարավոր կլիներ իրականացնել նաեւ լայնածավալ տարածաշրջանային ծրագրեր, որոնք արտասահմանյան կապիտալի

համար շատ ավելի գրավիչ են, քան կոնկրետ երկրներում կատարվող ներդրումները: Մասնավորապես այն պատճառով, որ այդ տիպի ծրագրերը, կողմնակիորեն նպաստելով տարածաշրջանային կայունության ու անվտանգության ամրապնդմանը, տնտեսական նպատակահարմարությունից բացի ձեռք են բերում նաեւ քաղաքական նշանակություն:

Երրորդ. Հակամարտության առկայությունը Հայաստանին զրկում է իր ամենաբնական եւ շահավետ տնտեսական գործընկերներից՝ Ադրբեջանից, Թուրքիայից եւ մասամբ՝ Իրանից: Բնական եւ շահավետ նախ եւ առաջ այն պարզ պատճառով, որ նրանք մեր անմիջական հարեւաններն են: Գաղտնիք չէ, որ աշխարհի բոլոր նորմալ պետությունների արտաքին տնտեսական կապերի առնվազն հիսուն տոկոսը բաժին է ընկնում նրանց անմիջական հարեւաններին: Մինչդեռ Հայաստանի դեպքում դա գործնականում հավասարվում է զրոյի: Ես առիթ ունեցել եմ գնահատելու հայ-ադրբեջանական տնտեսական համագործակցության հնարավորություններն ու հեռանկարները, ուստի զերծ եմ մնում կրկնությունից: Չեմ կարծում, որ որեւէ մեկը կարող է ժխտել նաեւ հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների հսկայական պոտենցիալը, որը թերեւս երկրորդական դեր կարող է խաղալ Թուրքիայի տնտեսության զարգացման գործում, բայց Հայաստանի դեպքում, անկասկած, ունի կենսական նշանակություն: Մեր Արդյունաբերողների միության կատարած հաշվարկների համաձայն՝ Հայաստանի ու Թուրքիայի հաղորդակցության ճանապարհների վերագործարկման դեպքում, երկու երկրների միջեւ շրջանառությունը մեկ տարվա ընթացքում կարելի է հասցնել մոտ 600 միլիոն դոլարի: Այսինքն, մեկ տարվա ընթացքում Հայաստանի արտաքին առեւտրի շրջանառությունը կարող է աճել 50 տոկոսով (այսօր այն կազմում է մոտավորապես 1 միլիարդ 125 միլիոն դոլար): Իսկ դա նշանակում է արդյունաբերության զարգացման լուրջ հնարավորություններ, լրացուցիչ աշխատատեղեր եւ սոցիալական խնդիրների լուծման հեռանկարներ:

Չպետք է մոռանալ նաեւ, որ բացի բնական տնտեսական գործընկեր լինելու իրենց արժեքից, Թուրքիան եւ Ադրբեջանը Հայաստանի համար կարեւոր նշանակություն ունեն նաեւ որպես ամենակարճ տարանցիկ ճանապարհներ մի դեպքում՝ դեպի Եվրոպա եւ արաբական աշխարհ, մյուս դեպքում՝ դեպի Իրան, Ռուսաստան ու Միջին Ասիա: Այս

առումով, ըստ իս, չարժե լուրջ պատրանքներ փայփայել՝ կապված Մեղրու ավտոճանապարհի հետ, քանի որ ակնհայտ է, որ Ջուլֆայի երկաթուղին մեկ-երկու շաբաթվա ընթացքում, այն էլ զգալիորեն նվազ ծախսով, շատ ավելի մեծ ծավալի բեռներ կարող էր տեղափոխել, քան այդ ավտոճանապարհը՝ մեկ տարում:

Եւ վերջապես չորրորդ, որն իմ կարծիքով ամենացավալին ու վտանգավորն է, ղարաբաղյան հակամարտության պատճառով Հայաստանը դուրս է մնում տարածաշրջանային կազմակերպություններից՝ դատապարտվելով օրեցօր խորացող մեկուսացման: Հայաստանն այժմ անդամակցում է ընդամենը երկու տարածաշրջանային կազմակերպության՝ ԱՊՀ-ին եւ Սեւծովյան տնտեսական համագործակցությանը: ԱՊՀ-ն, քաղաքական եւ անվտանգության կարեւորությամբ հանդերձ, ըստ էության որեւէ դեր չի խաղում Հայաստանի տնտեսության զարգացման մեջ: Իսկ Սեւծովյան տնտեսական համագործակցությունն առայժմ դուրս չի եկել բարի մտադրությունների արտահայտման ակումբի կարգավիճակից: Ինչ վերաբերում է Հայաստան – Իրան – Թուրքմենստան եւ Հայաստան – Իրան – Հունաստան եռակողմ համագործակցության ծրագրերին, ապա դրանք դեռեւս գտնվում են ձեւավորման փուլում, բայց անգամ լիարժեք իրականացման դեպքում էլ էական ազդեցություն չեն կարող ունենալ Հայաստանի տնտեսական զարգացման վրա: Բոլորիս համար էլ, կարծում եմ, հասկանալի է, որ տնտեսական առումով շատ ավելի գործնական ու կարեւոր են ԳՈՒՈՒԱՄ-ը, ՏՐԱՍԵԿԱ-ն, ԷԿՕ-ն, նավթամուղային կոնսորցիումները, որոնց դռները, դժբախտաբար, առայժմ փակ են մեր առաջ:

Հակամարտության կարգավորման գործընթացի խափանման կամ նույնիսկ ձգձգման դեպքում մենք ոչ միայն չենք կարողանալու դուրս գալ առկա մեկուսացումից, այլեւ ավելի ու ավելի խորացնելու ենք այն: Խոսքը սոսկ տնտեսական մեկուսացման մասին չէ, քանի որ ինքնըստինքյան հասկանալի է, որ տնտեսական մեկուսացումն ունենալու է նաեւ անցանկալի քաղաքական հետեւանքներ: Չեմ բացառում, որ անգամ մեկուսացման պայմաններում Հայաստանը կարող է մասնակցել տարածաշրջանային կազմակերպությունների ինչ-ինչ ծրագրերի, բայց ես նկատի ունեմ ոչ թե սիմվոլիկ մասնակցությունը, այլ լիարժեք անդամակցությունը, քանի որ միայն այդ դեպքում կարելի է ակնկալել շոշափելի արդյունքներ:

* * *

Իսկ այժմ դիտարկենք այստեղ հնչած մյուս պնդումները:

Այն, որ պետք է պայքարել ստվերային տնտեսության դեմ եւ խստացնել հարկային կարգապահությունը, դժվար թե առարկություն վերցնի: Բայց որ դրանով հնարավոր է զգալիորեն մեծացնել բյուջեն, խիստ կասկածելի է թվում: Այդպիսի միջոցներով լավագույն դեպքում կարելի է հասնել ժամանակավոր արդյունքների, քանի որ ինքնըստինքյան հասկանալի է, որ բյուջեի աճը կախված է ոչ այնքան վարչարարական մեթոդներից, որքան տնտեսության զարգացման ընդհանուր դրական միտումներից: Իսկ այդպիսի միտումներ, ինչպես քիչ առաջ նշվեց, շրջափակումների շարունակման, ներդրումների բացակայության, քաղաքական ու տնտեսական մեկուսացման պայմաններում գոյություն չեն կարող ունենալ: Բացի այդ, ես նաեւ չափազանց վտանգավոր եմ համարում այս բնագավառում վարչարարական մեթոդներով հրապուրվելը: Այդ իմաստով ինձ արդեն իսկ մտավախություն են ներշնչում կառավարության կողմից վերջերս ձեռնարկված որոշ քայլեր: Նկատի ունենալով բնագավառն սպասարկող իրավապահ մարմինների (Հարկային վարչության, Մաքսային տեսչության, ՆԳՆ, Դատախազության) որոշակի հակումները, ես չեմ կասկածում, որ վարչարարական մեթոդների կիրառումը կհանգեցնի լուրջ չարաշահումների, որի արդյունքում մենք կունենանք աշխատատեղերի կրճատում, կապիտալի արտահանում, ապրանքաշրջանառության ու դրամաշրջանառության անկում, եւ վերջին հաշվով՝ հարկային մուտքերի նվազում, այսինքն՝ մենք կստանանք մեր ուզածի ճիշտ հակառակը: Այս ամենի հետեւանքը կլինի ժողովրդի առանց այդ էլ թշվառագույն սոցիալական վիճակի հետագա վատթարացումը եւ արտագաղթի նոր ալիքի ծավալումը:

Հասկանալի չէ նաեւ, թե ինչի վրա է հիմնված Սփյուռքից ակնկալվող օգնության հսկայական չափը (տարեկան շուրջ 400–500 միլիոն դոլար): Ասվում է, որ մինչեւ հիմա Սփյուռքի հետ լավ չենք աշխատել, նրա հետ հարաբերությունները ճիշտ չենք կառուցել, այդ պատճառով էլ առայժմ նրանից չնչին օգնություն ենք ստացել: Եթե անգամ այս դիտողությունները արդարացի համարենք, չեմ կարծում, որ Սփյուռքին քիչ թե շատ ծանոթ որեւէ մեկը կարող է պնդել, թե նա Հայաստանին տա-

րեկան 400–500 միլիոն դոլարի օգնություն տրամադրելու կարողություն ունի: «Հայաստան» համահայկական հիմնադրամը առայժմ կարողացել է Սփյուռքից ապահովել տարեկան շուրջ 10 միլիոն դոլարի օգնություն: Թերեւս ավելի լավ աշխատելու, հարաբերությունները ավելի ճիշտ կազմակերպելու դեպքում, ամենալավատեսական գնահատականներով, հնարավոր կլինի այդ թիվը հասցնել առավելագույնը տարեկան 20 միլիոնի: Ինչո՞ւ այդքան քիչ,– կհարցնեք դուք: Որովհետեւ բացի Հայաստանից, Սփյուռքն ունի նաեւ բազմաթիվ այլ հոգսեր. նա պարտավոր է ապահովել ազգային զանազան կառույցների՝ եկեղեցու, դպրոցների, ակումբների, կուսակցությունների, մամուլի, հիվանդանոցների, ծերանոցների ծախսերը, ինչպես նաեւ ֆինանսապես սպասարկել տարեցտարի ծավալվող լոբբիստական աշխատանքները: Սփյուռքից հարյուրավոր միլիոնների օգնության ակնկալիքն, ըստ այդմ, ոչ միայն առասպելական է, այլեւ վտանգավոր՝ եթե դա դիտվում է որպես Հայաստանի տնտեսական զարգացման կարեւոր երաշխիքներից մեկը:

Ինձ համար բաց է մնում նաեւ այն հարցը, թե ղարաբաղյան կարգավորման եւ Հայաստանի տնտեսական զարգացման գործում որքան հույսեր կարելի է կապել Ռուսաստանի եւ Իրանի հետ: Ռուսաստանն, այո, մինչեւ այսօր կենսական օգնություն է ցուցաբերել Հայաստանին՝ մասնավորապես էներգետիկ համակարգի կենսագործունեության ապահովման, բանակի կազմավորման, զենքի ու զինամթերքի մատակարարման բնագավառներում: Անկախությունից ի վեր հայ-ռուսական հարաբերությունները զարգացել են չափազանց բարենպաստ մթնոլորտում եւ այսօր գտնվում են ամենաբարձր մակարդակի վրա: Հայաստանը կարողացել է առավելագույնս օգտվել այդ հարաբերություններից, որը թերեւս անկախության շրջանի մեր կարեւորագույն նվաճումներից է: Բայց, դժբախտաբար, այս վիճակը հավերժ չի կարող շարունակվել: Նախ, ստիպված եմ կրկնել, որ Ռուսաստանը երբեք չի ճանաչելու Ղարաբաղի անկախությունը, թեկուզ միայն այն պատճառով, որ իր կազմում ունի մոտ քսան Ղարաբաղ: Այնուհետեւ, Ռուսաստանն այսօր այնպիսի կենսական շահերով է կապված Արեւմուտքի, մասնավորապես միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ, որ չի կարող կտրուկ հակադրվել Ղարաբաղի հարցի կարգավորման ԵԱՀԿ-ի կամ ՄԱԿ-ի ծրագրերին: Արդեն իսկ տեսանելի է, որ վերջերս, Մինսկի

խմբի համանախագահության շրջանակում, Ռուսաստանը լիակատար համերաշխություն է ցուցաբերում ԱՄՆ-ի և Ֆրանսիայի առաջարկած կարգավորման պլաններին: Արևմուտքի հետ ավելորդ պրոբլեմներ չունենալու նույն պատճառով Ռուսաստանը մի օր նաև ստիպված է լինելու դադարեցնել զենքի մատակարարումները Հայաստանին: Ավելին, ես չեմ բացառում, այլև ընդհակառակը՝ չափազանց բնական ու հավանական եմ համարում, որ նկատի ունենալով կասպիական նավթի շահագործման և նավթամուղերի կառուցման խնդիրները, Ռուսաստանն առաջիկայում լուրջ ջանքեր է գործադրելու Ադրբեջանի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, և այդ դեպքում Հայաստանը կորցնելու է Անդրկովկասում Ռուսաստանի միակ դաշնակիցը կամ ստրատեգիական գործընկերը լինելու առավելությունը:

Ինչ վերաբերում է այն բանին, թե՝ եթե Ռուսաստանը դադարեցնի զենքի մատակարարումները, մենք զենք կստանանք Իրանից, ապա կարծում եմ, դա էլ զուրկ է առարկայական հիմքից: Ճիշտ է՝ իրանա-ադրբեջանական հակասությունների ֆոնի վրա Հայաստանի հզորացումն ու տնտեսական բարգավաճումը բխում են Իրանի պետական շահերից: Ճիշտ է նաև, որ Հայաստանի ամենախիստ շրջափակման տարիներին Մեղրու ճանապարհը եղել է մեր գոյատևման ամենակարևոր պայմաններից մեկը: Բայց դրա հետ մեկտեղ չպետք է մոռանալ երկու հանգամանք: Առաջին՝ Մեղրու ճանապարհի սահմանափակ հնարավորությունները և լրացուցիչ ծախսատարությունը չեն կարող լուրջ տնտեսական համագործակցություն ապահովել մեր երկրների միջև: Երկրորդ՝ Իրանում պետական շահերից բացի գոյություն ունի նաև իսլամական համերաշխության գիտակցություն: Այդ պատճառով իրանական ոչ մի կառավարություն չի համարձակվի զենք մատակարարել մի քրիստոնյա պետության՝ իսլամական որևէ պետության դեմ օգտագործելու համար, եթե, իհարկե, այդ կառավարությունն իր գլխից ձեռք չի քաշել: Եվ վերջինը՝ եթե Իրանը կարող էր մեզ զենք մատակարարել, ապա ինչո՞ւ մինչև հիմա դա չի արել:

Չգիտեմ, որքա՞ն տեղին է նաև Իսրայելի և Հայաստանի իրավիճակների համեմատությունը: Իսրայելն, այո, բոլոր հարևանների հետ ռազմական առճակատման մեջ գտնվելով հանդերձ, կարողացել է ապահովել իր տնտեսական զարգացումն ու ռազմական հզորությունը, բայց նա երբեք

չի ենթարկվել այնպիսի շրջափակման, որի մեջ գտնվում է Հայաստանը: Իսրայելն ունի հարյուրավոր կիլոմետրանոց ծովային սահման և մի քանի հզոր ռազմա-առևտրային նավահանգիստներ: Ինչպե՞ս կարելի է խոսել Իսրայելի մեկուսացման մասին, երբ նա նաև տարեկան շուրջ 4 միլիարդ դոլարի օգնություն է ստանում հրեական Սփյուռքից, մոտավորապես նույնքան էլ ԱՄՆ-ի կառավարությունից: Չեմ ուզում ավելի ծավալվել, բայց չմոռանանք նաև հրեաների հզոր ներկայությունը աշխարհի գերտերությունների քաղաքական կառույցներում, համաշխարհային ֆինանսական համակարգերում, զանգվածային լրատվության միջոցներում և այլն:

Ամենաապշեցուցիչը, սակայն այն պնդումն է, թե Ղարաբաղի հարցում մենք պետք է փոխզիջման գնանք այն ժամանակ, երբ հարկադրված կլինենք: Մի՞թե հասկանալի չէ, թե ինչ է նշանակում հարկադրված զիջում. հարկադրված զիջումը նշանակում է կապիտուլյացիա: Իսկ կապիտուլյացիայի ժամանակ դու ոչինչ չես զիջում, կամ եթե զիջում էլ ես՝ դրա դիմաց ոչինչ չես ստանում, այլ հլու հնազանդ ընդունում ես այն, ինչ փաթաթում են քո վզին: Քի՞չ է մեր անցյալի դառը փորձը: Քի՞չ են Բաթումի ու Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագրերը, երբ ավելի վաղ հնարավորություն կար շատ ավելի ձեռնտու լուծումներ գտնելու, բայց ժամանակի պատասխանատուները կորցրին այդ հնարավորությունները: Ստիպված եմ կրկնել իմ վերջին հոդվածի տրիվիալ միտքը. փոխզիջման պետք է գնալ այն պահին, երբ ուժեղ ես: Հայաստանը վաղն ավելի ուժեղ չի լինելու, քան այսօր: Հետևաբար, վաղվա ցանկացած լուծում ավելի վատն է լինելու, քան այսօրվանը:

* * *

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի հարցի հրատապ լուծման անհրաժեշտության դեմ բերված ոչ մի փաստարկ, իմ կարծիքով, քննադատության չի դիմանում: Ավելին, այդ փաստարկների մեջ ես դիտում եմ հարցի էությունից շեղվելու և փաթեթային ու փուլային տարբերակների շուրջ ֆորմալ բանավեճ ծավալելու միտում: Թեև խոստացել էի չանդրադառնալ այդ տարբերակներին, բայց, քանի որ այստեղ դրա մասին շատ խոսվեց, ստիպված եմ անել որոշ պարզաբանումներ:

Հարցն այնպես է ներկայացվում, թե իբր Հայաստանը պաշտպանում է փուլային, իսկ Ղարաբաղը՝ փաթեթային տարբերակը: Մոռացության է

տվում այն փաստը, որ Հայաստանը (ճիշտ է՝ սկզբունքային վերապահումներով) ընդունել է փաթեթային տարբերակը, եւ Ղարաբաղն իմն է կտրականապես մերժել այն: Փաթեթայինը մերժվելուց հետո մեզ ներկայացվել է փուլային տարբերակը, եւ Հայաստանը (նորից սկզբունքային վերապահումներով) այն ընդունել է: Ղարաբաղը սա նույնպես մերժել է եւ այժմ առաջարկում է կրկին վերադառնալ փաթեթային տարբերակին: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ է այդ դեպքում Հայաստանը շարունակում պնդել փուլային տարբերակի վրա: Պատասխանում եմ. առաջին՝ մենք գտնում ենք, որ Ղարաբաղի հարցը պետք է լուծել այսօր, իսկ այսօր ուրիշ լուծում չկա, բան փուլայինը, եւ երկրորդ՝ մենք համոզված ենք, որ երկար ժամանակ, գուցե թե երբեւէ, փաթեթային տարբերակի շուրջ համաձայնություն չի կայացվելու Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ: Փաթեթային տարբերակին վերադառնալու առաջարկն, ուստի, հետապնդում է ոչ թե հարցը լուծելու, այլ ժամանակ շահելու նպատակ: Կարծում եմ՝ դժվա՞ր բան է ժամանակ շահելը, կարծում եմ՝ ես չեմ կարող 3-4 տարի, մինչեւ իմ պաշտոնավարման ժամկետի ավարտը, պահպանել դարաբաղյան ստատուս-քվոն: Բայց ի՞նչ է լինելու դրանից հետո, ի՞նչ անելանելի վիճակի մեջ է հայտնվելու հաջորդ Նախագահը:

Ավարտում եմ: Երկու օրերի ճնշարկումն, այսպիսով, ինձ լուրջ հիմքեր է տալիս կասկածելու, թե փուլային տարբերակին ընդդիմացողներն ընդհանրապես Ղարաբաղի հարցը լուծելու մտադրություն ունեն: Շատերն առաննկապես դա չեն էլ թաքցնում, ինչը պարզորոշ կերպով երեւում է ելույթիս սկզբում ամփոփված կարծիքներից: Փաթեթային, փուլային կամ այլ տարբերակների շուրջ թվացյալ բանավեճը, վստահ եմ, սոսկ շղարշ է կարգավորման պրոցեսը ձգձգելու, այսօրվա իրավիճակը, այսինքն ստատուս-քվոն որքան հնարավոր է երկար պահպանելու համար: Ես ցավով նախազգում եմ, թե դա ինչ աճավոր վտանգ է ներկայացնում թե՛ Ղարաբաղի, թե՛ Հայաստանի գոյության համար: Այսօր մենք, ինչպես Բաթումից ու Ալեքսանդրապոլից առաջ, թերեւս Ղարաբաղի հարցի նպաստավոր լուծման եւ Հայաստանի բարգավաճման վերջին պատեհությունն ենք կորցնում: Եւ դրա համար մենք բոլորս էլ պատասխան ենք տալու մեր ժողովրդին:

ՀՀԱՆԱ, 01/08.01.98: Բնագիր, մեքենագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՀԱՅՑԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(3 փետրվարի, 1998 թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Իշխանության ձեզ հայտնի մարմինների կողմից ինձ ներկայացվել է հրաժարականի պահանջ:

Նկատի ունենալով, որ ստեղծված իրավիճակում Նախագահի սահմանադրական լիազորությունների կիրառումը հղի է երկրի ապակայունացման լուրջ վտանգով, ես ընդունում եմ այդ պահանջը եւ հայտարարում իմ հրաժարականը:

Ջերծ եմ մնում որեւէ մեկնաբանությունից կամ գնահատականից՝ իրադրությունը չսրելու նպատակով: Միայն հարկ եմ համարում նշել, որ իշխանության եզնաժամում Արցախի հարցի արծարծումն ընդամենը պատրվակ էր: Խնդիրը շատ ավելի խորն է եւ կապված պետականության հիմնադրույթների, խաղաղության ու պատերազմի այլընտրանքի հետ: Իսկ կյանքը ցույց կտա, թե ով ինչ է արել Արցախի համար, եւ ով է իրականում ծախում այն:

Արտաքոց ոչինչ տեղի չի ունեցել. պարզապես Հայաստանում խաղաղության եւ արժանապատիվ հաշտության կուսակցությունը պարտություն է կրել: Բարդույթների մեջ չպետք է ընկնել. խաղաղության կուսակցությունը պարտություն է կրել մեզնից շատ ավելի զարգացած հասարակություններում, ինչպես, օրինակ, Իսրայելում: Բայց եւ՛ Իսրայելում, եւ՛ Հայաստանում դա անցողիկ է, ընդամենը ժամանակավոր

նահանջ: Միեւնոյն է, վաղ թե ուշ խաղաղությունը հարթելու է իր ճանապարհը:

Կուզ եմ անում ձեզ ցուցարերել զսպվածություն, պահպանել երկրի անդորրը եւ անցկացնել նոր Նախագահի օրինական, խաղաղիկ ընտրություններ: Դա կլինի ուղ տարվա ընթացքում ձեզ հետ միասին մեր ստեղծած պետության հաստատության վկայությունը եւ արտահին վարկի պահպանման գրավականը:

Նոր Նախագահին մաղթում եմ ամենայն հաջողություն ի շահ եւ ի բարօրություն մեր ժողովրդի:

Հայտնում եմ ձեզ իմ խորին շնորհակալությունը անցած տարիներին իմ նկատմամբ ցուցաբերած վստահության եւ աջակցության համար:

Շնորհակալություն եմ հայտնում նաեւ իմ բոլոր զինակիցներին, ովքեր մշտապես անվերապահորեն եղան եւ մնում են իմ կողքին:

Եթե ընդունել եմ հրաժարականի որոշում, հավատացեք, դա նշանակում է, որ այլընտրանքը մեր պետության համար համարել եմ ավելի վտանգավոր:

Եթե արել եմ ինչ-որ լավ բան, չեմ ակնկալում որեւէ երախտագիտություն, չարածիս ու սխալներիս համար հայցում եմ ձեր ներողամտությունը:

Բարին ընդ ձեզ:

«Հայաստանի Հանրապետություն», 4 փետրվարի, 1998 թ.:
ՀՀԱՆԱ, 28/03.02.98: Բնագիր: Ինքնագիր:

ՎԵՐՋԱԲԱՆ

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ՝
ՀԻՄՆԱԴԻՐ-ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պատմության մեջ **դարաշրջան** *բառը ժամանակի տեւողության չափման միավոր չէ: Այն օգտագործվում է բնութագրելու համար այնպիսի մի ժամանակահատված, որն իր որակական հատկանիշներով ու արդյունքներով կտրուկ առանձնանում է նախորդ շրջանից, նաեւ էականորեն պայմանավորում հաջորդ շրջանի զարգացումների բնութագիրն ու որակը: Այս իմաստով 1988 թվականի փետրվարից ծայր առած Հայկական համազգային ժողովրդավարական շարժումը, անտարակույս,* **դարաշրջանի** *սկիզբ էր: Համաժողովրդական այս շարժման որակներից շատերն աննախադեպ էին մեր պատմության մեջ, մի մասն էլ շատ վաղուց չէր դրսեւորվել: Համենայն դեպս, դժվար է հիշել որեւէ շրջան, երբ սեփական ճակատագիրը անօրինելու խնդրով ոտքի կանգնած լիներ փաստորեն ողջ ժողովուրդը, միաժամանակ՝ նրա պայքարը լիներ այդքան միակամ, համառ, ամենօրյա, այդքան քանակապիր ու այդքան տեւական: Նույն կերպ՝ շատ վաղուց մեր պատմության մեջ որեւէ քաղաքական ծրագրի ու պայքարի հիմքում չէին դրվել հանրահայտ ու իրական քաղաքական այնպիսի սկզբունքներ, ինչպես՝ կողմնորոշման մերժումը, սեփական ուժերին ապավինելը, իրատեսական քաղաքական հաշվարկը եւ այլն: Եւ հենց այս երկուսով պայմանավորված՝ դարաշրջանն ստացավ իր երրորդ հատկանիշը՝ արդյունքների տեսքով. հաղթանակներ ու մնայուն ձեռքբերումներ, որ շատ վաղուց չէին եղել, եւ՝ անկախ պետականության ապահով հիմնարկեք:*

Լեւոն Տեր-Պետրոսյանը համաժողովրդական այդ շարժման առաջնորդներից ամենաահրվածն էր ու ամենահեղինակավորը: Նա նաեւ նույն այդ

Շարժման գաղափարական սկզբունքների վրա ստեղծված՝ անկախ պետության ճարտարապետն էր ու առաջին դեկավարը, Հայաստանի Հանրապետության առաջին եւ հիմնադիր նախագահը, պետականության կայացման ու հաղթանակների շրջանի առաջնորդը: Այսինքն՝ նրա անվան հետ է անքակտելիորեն կապված 1988 թվականից սկսվող **դարաշրջանը**:

Հայաստանի Հանրապետության Հիմնադիր-նախագահի գործունեության գնահատումը միայն իր անձին չի վերաբերում: Քանզի խոսքն իրականում ոչ միայն անհատի, այլ առաջին հերթին գործնական քաղաքականության հիմքում դրված նոր՝ մարդակենտրոն արժեքային համակարգի, ժողովրդի աշխարհընկալման ու ինքնընկալման նոր սկզբունքների ու չափորոշիչների, իրատես քաղաքական մտածողության եւ իրական քաղաքական դպրոցի, պետական մտածելակերպի ու պետական գոյծչի կերպարի հասարակական ընկալման մասին է: Արժեքների եւ իրողությունների հասարակական ընկալման այն հիմքի մասին, որը երկրի ու ժողովրդի գոյատեւման, պետականության պահպանման, պետական ազգի զարգացման, բարգավաճման ու հարատեւման, յուրաքանչյուր քաղաքացու ու անհատի արժանապատիվ ու իմաստավորված կյանքի ապահովման նախապայմանն է: Այսինքն՝ առաջին հերթին այս ամենը վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը եւ նրա յուրաքանչյուր քաղաքացու՝ ամենաառարկայական առումով ու ամենաուղղակի կապով: Դրանով են պայմանավորված եղել մեր հաղթանակները, անկախ պետականության հիմնադրման եւ կայացման պատմությունը, դրանով է պայմանավորված մեզանից յուրաքանչյուրի այսօրվա կյանքը, դրանով են պայմանավորվելու մեր վաղն ու ապագան:

* * *

Լեւոն Տեր-Պետրոսյանը ծնվել է 1945 թ. հունվարի 9-ին, Սիրիայի Հալեպ քաղաքում, մուսալեռցի ծնողների ընտանիքում, մեկ տարեկանում ընտանիքի հետ տարհեղադարձվել Հայաստան: Կրթությամբ արեւելագետ է. 1968 թվականին ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի արեւելագիտության բաժինը, ապա՝ ասպիրանտուրան անցել է Ս. Պետերբուրգում: Աշխատել է նախ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, ապա Մատենադարանում՝ որպես գիտնական-քարտուղար եւ ավագ գիտաշխատող: 1987 թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական

աստիճան: Նաեւ պատմաբան է՝ քաջատեղյակ Հայոց եւ համաշխարհային պատմությանը[1]: Մինչեւ 1988 թ. նա արդեն լայն ճանաչում ունեցող գիտնական էր՝ հեղինակ տարբեր լեզուներով հրապարակված ավելի քան 70 գիտական աշխատությունների: 1985 թվականից ԽՍՀՄ արեւելագետների ընկերակցության, 1988-ից՝ Հայաստանի գրողների միության, 1989-ից՝ Ֆրանսիական Ասիական ընկերության, 1991-ից՝ Վենետիկի Մխիթարյան ակադեմիայի անդամ է, 1990 թվականին ստացել է Լա Վենի, 1994-ին՝ Սոֆիայի, 1996-ին՝ Սորբոնի, նույն թվականին նաեւ Մարսասբուրգի համալսարանների պատվավոր դոկտորի կոչում:

Քաղաքական մկրտությունը Լեւոն Տեր-Պետրոսյանն ստացել է 1960-ական թվականների ուսանողական շարժումներին ու բողոքի ցույցերին մասնակցելով, ինչի համար 1966 թ. ապրիլի 24-ին ձերբակալվել է եւ ենթարկվել 10-օրյա վարչական կալանքի: Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից, որպես Մատենադարանի «Ղարաբաղ» ենթակոմիտեի նախագահ, նա հայտնվեց իրադարձությունների կենտրոնում, Շարժման առաջին դեկավարների հետ եռանդուն համագործակցության մեջ: 1988 թ. մայիսից նա նոր ստեղծված «Ղարաբաղ» կոմիտեի («Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե») անդամ էր: 1988 թվականի դեկտեմբերի 10-ին ձերբակալվեց եւ մինչեւ 1989 թվականի մայիսի վերջը «Ղարաբաղ» կոմիտեի մյուս անդամների հետ շինծու մեղադրանքով պահվեց Մասկվայի «Մատրոսսկայա տիշինա» բանտում: 1989 թ. օգոստոսին ընտրվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ապա՝ Գեւ նախագահության անդամ: Գերագույն խորհրդի պատգամավոր է ընտրվել նաեւ 1990 թ. մայիսին: Նույն թվականի օգոստոսի 4-ին, որպես ժողովրդավարական ուժերի ներկայացուցիչ, ընտրվեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ, ինչով եւ Հայաստանում վերջնականորեն արձանագրվեց ժողովրդավարական ուժերի հաղթանակը եւ կոմունիստական իշխանության ավարտը: 1991 թ. հոկտեմբերի 16-ին համաժողովրդական ընտրությամբ եւ ուղիղ քվեարկությամբ, ձայների բախշախիչ մեծամասնությամբ նա ընտրվեց Հայաստանի Հանրապետության նախագահ: 1990 թվականից որպես նախագահ (1994–1995-ին որպես համանախագահ), ղեկավարեց Սահմանադրական հանձնաժողովը, որի

[1] *Վերջերս հրապարակվեց նրա «Հայկական երկիրը եւ հայերը» ծավալուն ուսումնասիրության առաջին տոմար հատորը, առաջիկայում կհրապարակվի նաեւ երկրորդը:*

մշակած Սահմանադրության նախագիծը 1995 թ. հուլիսի 5-ին ընդունվեց համաժողովրդական հանրաքվեով: 1996 թ. սեպտեմբերի 22-ին երկրորդ անգամ ընտրվեց Հայաստանի Հանրապետության նախագահ: 1998 թ. փետրվարի 3-ին կազմակերպված պետական հեղաշրջման հետևանքով հրաժարվեց Հանրապետության նախագահի պաշտոնից:

«Ղարաբաղ» կոմիտեում

Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժումը ղեկավարող «Ղարաբաղ» կոմիտեն հայ քաղաքական իրականության մեջ, կարելի է ասել, աննախադեպ հաջողված եւ կայուն քաղաքական թիմ էր: Ավելի քան երկու տարի այն ղեկավարում էր համաժողովրդական մի շարժում, որը ոչ միայն առաջին ժողովրդավարական շարժումն էր ԽՍՀՄ կոչվող բռնապետությունում, այլեւ բոլոր առումներով՝ զանգվածայնությամբ, որակական հատկանիշներով ու արդյունավետությամբ առաջինն ու առաջամարտիկը մնաց մինչեւ կայսրության ու նրա ագռեցության ոլորտների վերջնական փլուզումը: Որեւէ մեկը չի կարող վիճարկել այն իրողությունը, որ Հայկական ժողովրդավարական շարժման ու նրա ղեկավար մարմնի՝ «Ղարաբաղ» կոմիտեի առջեւ ծառացած խնդիրները տասնապատիկ ավելի ծանր ու բարդ էին, քան այդ տարիներին Խորհրդային Միության մյուս հանրապետություններում եւ արեւելաեւրոպական երկրներում ժողովրդավարական շարժումներից որեւէ մեկի առջեւ դրված հարցերը: Որեւէ մեկը չի կարող նաեւ վիճարկել այն փաստը, որ նրա դեմ գործող ուժերը շատ ավելի ագրեսիվ էին ու վտանգավոր, քան այդ շրջանում մյուս երկրների ժողովրդավարական շարժումների դեմ գործողները: Եւ որեւէ մեկը չի կարող վիճարկել, որ պատմականորեն իրեն տրված ավելի քան երկու տարի ժամանակահատվածում Կոմիտեն իր դերը կատարեց, դրված խնդիրները լուծեց բացառիկ արդյունավետությամբ:

Հարցերի քննարկման անկաշկանդ մթնոլորտ, աշխատանքի եւ բնագավառների բնական բաժանում եւ ներդաշնակություն կար այստեղ: Դժվար է հիշել դեպք, երբ որեւէ հարցում Կոմիտեն հասարակությանը ներկայանար ոչ միասնական, ոչ հստակ, չպատճառաբանված ու չհիմնավորված դիրքորոշմամբ: Դա, անշուշտ, արդյունք էր նախնական բազմաժամ քննարկումների, առողջ ու բանական բանավեճերի:

Կոմիտեի աշխատանքային խոհանոցում Լեւոն Տեր-Պետրոսյանի կշռի ու խաղացած դերի մասերամասների մասին երբեւէ կվկայեն, թերեւս, դրա անդամները՝ իրենց գրելիք հուշերում[2]: Մենք ունենք այդ դերի ու կշռի վերջնական ընդհանրական գնահատականը՝ 1990 թ. Գերագույն խորհրդի ընտրություններից անմիջապես հետո, նույն Կոմիտեի կայացրած որոշման տեսքով. Շարժման դեկավար մարմինն իր պատմական առաքելությունն ավարտեց՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը որպես երկրի դեկավարի՝ Գերագույն խորհրդի նախագահի թեկնածու առաջադրելու որոշմամբ:

Լեւոն Տեր-Պետրոսյանի քաղաքական կերպարը Շարժման տարիներին ավելի շատ ծանոթ է հանրահավաքներից: Արդեն իսկ նրա առաջին հրապարակային ելույթից հետո հաջորդին սպասում էին: Եւ սպասում էին յուրաքանչյուր հանրահավաքում: Սպասում էին՝ ոչ թե որովհետեւ ավելի կրակոտ ու համարձակ բաներ ասող չկար: Սպասում էին, որովհետեւ նա, չգիջելով մյուսներին այդ հատկանիշներով, նաեւ ամեն ինչ հասկանալի ու ընկալելի էր ասում բոլորի համար: Հայերենի, եւ գեղեցի՛կ հայերենի, կատարյալ տիրապետում, հետեւողական բնատուր շնորհ, ձայնի հաճելիի եւ երբեք չհոգնեցնող հնչերանգ, վստահություն ներշնչող կուռ տրամաբանություն, տեւելիքի մատուցման զարմանալի պարզություն. սրանք նրա ելույթների բնորոշիչների ոչ լրիվ ցանկն են կազմում:

Իհմնականում նա էր կատարում քաղաքական վերլուծությունները, կենտրոնական ու հանրապետական իշխանությունների որոշումների, մամուլի հրապարակումների մեկնաբանությունները: Նրա քաղաքական կանխատեսումներն իրականանում էին: Նրա ելույթները հաճախ պարզապես հրապարակային դասախոսություններ էին, եւ՝ քան հոգու առջեւ փակ լսարանում ելույթ ունեցող ամեն մի դասախոս կարող էր նախանձել այն անհավատալի լուռությանն ու հափշտակվածությանը, որով 100 հազարանոց տարաբնույթ կազմ ունեցող լսարանը ոտքի վրա կանգնած լսում էր նրան: Լսում էր, հասկանում, համոզվում, հավատում: Առաջին հերթին նրա շնոր-

---

[2] *Հուշերի մի գիրք հրապարակել է Ռաֆայել Ղազարյանը, որտեղ նա իմիջիայլոց հայտնում է, որ Կոմիտեի նիստերը նախ վարում էին հերթով, սակայն քանի որ միայն Լեւոն Տեր-Պետրոսյանին էր հաջողվում զսպել մասնակիցների «գերակտիվությունը» (բնականաբար՝ իր հեղինակության շնորհիվ), ուստի, ավելի ուշ, Կոմիտեի նիստերը հիմնականում նա էր վարում (տե՛ս Ռ. Ղազարյան, Հաշվետու եմ, Երեւան, 2003, էջ 174):*

հիվ էր, որ Շարժումը տասնյակ հազարավորների համար գործավ նաեւ քաղաքական դպրոց, ամենաիսկական բաց համալսարան:

Սակայն Շարժումը միայն քաղաքական կարգապահ դպրոց չէր: Մարդկային զանգվածն ունի իր յուրատեսակ, անհատականից տարբերվող հոգեբանութիւնը: Այն ավելի շատ հակված է լսելու պարզ կարգախոսներ, դժվարութիւնամբ է տրվում տրամաբանական փաստարկների, եւ հեշտութիւնամբ՝ պարզունակ կոչերի: Ամեն պահի պատրաստ է դիմել չհաշվարկված ու չհիմնավորված գործողութիւնների, որոնք ճակատագրական կարող են լինել առաջին հերթին հենց իր համար: Եւ «ժողովրդի առողջ բնազդ» որակումը նման դեպքերում ավելի շուտ հաճոյախոսութիւն է նրա հասցեին, քան իրականութիւն: Մի տեղում հավաքված մարդկային բազմութիւնը շատ արագ կարող է ամբոխանալ՝ ձեռք բերելով նույն այդ զանգվածը կազմող անհատներից տարբերվող հոգեբանութիւն ու մտածողութիւն: Այն հեշտութիւնամբ է տրվում սադրանքների, ավելի հաճախ ոչ թե սպասում է իրեն առաջնորդելուն, այլ ինքն է որոշում ուղղութիւնը եւ առաջնորդին հրում-տանում իր առջեւից, հակառակ դեպքում՝ ոտնատակ տալիս: Շարժման տարիներին գերզգայական աստիճանի հասած ժողովրդին հարյուրավոր անգամ տրվեցին սադրիչ առիթներ թե՛ կենտրոնական ու տեղական իշխանութիւնների որոշումների, թե՛ լրատվամիջոցների հերյուրանքների, թե՛ ՊԱԿ-ի խոհանոցում թխված ապատեղեկատվութիւն ու ասեկոսեների, թե՛ ոմանց անխոհեմ ելույթների, թե՛ Ադրբեջանի գրգռիչ գործողութիւնների տեսքով: Տասնյակ դեպքեր եղան, երբ ժողովրդական հոծ զանգվածը հասավ անկառավարելիութիւնյան եզրին, չուզեց ենթարկվել «հարթակին», եւ իր գործողութիւններով կարող էր հասել վտանգավորի սահմանագիծը:

Անշուշտ, ժողովրդական շարժում առաջնորդողի համար խիզախութիւն ու հերոսութիւն է՝ առաջին անգամ գործադուլի, երթի կամ վճռական մեկ այլ գործողութիւնյան կոչ անելը եւ առջեւից գնալը: Անգամ այն պարագայում՝ երբ դա չանելու դեպքում զանգվածը միեւնույն է, ինքն է դիմելու նույն գործողութիւններին: Բայց այդ խիզախութիւնյան ու հերոսութիւնյան տասնապատիկն է պահանջվում նույն այդ պայմաններում բորբոքված մարդկային զանգվածին ու նրա տրամաբանութիւնը դեմ կանգնելու, չհասունացած ու արկածախնդրական քայլերից նրան տարհամոզելու ու հետ պահելու համար: Ամենաանհույս նմանօրինակ իրավիճակներում «հարթակի» վերջին հույսը Լեւոն Տեր-Պետրոսյանն էր, ժողովրդական տրիբունի՝ նրա համոզիչ ու սթափեցնող ազդու խոսքը, իրատես առաջնորդի՝ նրա հակայական վարկը: Տարերքը տեղի էր տալիս նրա ելույթի առջեւ, մղվում կառավարելիութիւնյան հուն, ապա այդ ներուժն ուղղորդվում էր խելամիտ եւ արդյունավետ գործողութիւնների: Շարժման մասնակիցները կարող են հիշել բազմաթիվ դեպքեր, մենք հիշեցնենք դրանցից երկուսը՝ 1988 թ. հունիսի 15-ը, երբ Հեղ2 Գերագույն խորհուրդը քննարկում էր Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի դիմումին պատասխան տալու հարցը, եւ նույն թվականի նոյեմբերի 7-ը, երբ, այն ժամանակ Լենինի անունը կրող հրապարակում, շքերթը վերածվեց հակաիշխանական հակայածավալ ցույցի:

Ռիսկի եւ իրատեսության սահմանագծին

«Ղարաբաղ» կոմիտեն մինչեւ վերջ գործեց որպես համախոհների եւ հավատարմների թիմ, ձեւական առումով չունենալով իր դեկավարը: Թերեւս նաեւ դրա մեջ էր նրա ուժի, հեղինակութիւնյան եւ հաջողութիւնների կարեւոր գրավականներից մեկը: Կոմիտեի անդամներից յուրաքանչյուրը հակայական ծանրութիւն եւ պատասխանատվութիւն էր ստանձնել, անմնացորդ կատարում էր իր գործը, փոխադարձաբար լրացնում միմյանց, ինչի շնորհիվ կայանում էր այն զարմանալի քաղաքական մոնոլիտը, առանց որի անհնար կլիներ Շարժման ընթացքն ու նվաճումները: Որոշումների նկատելի բաժանումը, թերեւս, տեղի էր ունեցել ինքնաբերաբար, բան յուրաքանչյուրի հետաքրքրութիւնների եւ ունակութիւնների, կարողութիւնների առումով:

Հանրահավաքները միայն քաղաքական պայքարի ու նաեւ քաղաքական դիտիկքների ձեռքբերման դպրոց չէին: Միայն Հայաստանում տարածվող մամուլի (որ, բնականաբար, միայն իշխանական էր) ընդհանուր տպաքանակն անցնում էր մեկ միլիոնը: Դրան ավելանում էր ռադիոն ու հեռուստատեսութիւնը: Դրանցից որեւէ մեկով հանդես գալն անմատչելի էր Շարժման դեկավարների համար: Շարժման դեմ գործող քարոզչական այս հսկայական մամլիչին դիմակայում էին հանրահավաքները՝ որպես հավատի տեղեկատվութիւնյան միջոց: Սակայն անգամ հարյուրհազարավոր մասնակիցներ ունենալը բավարար չէր, առավել եւս՝ երբ սահմանափակումները եւ արգելքները մշտական էին հանրահավաքների համար: Իշխանական քարոզչական հսկայական հեղեղին հաջողութիւնյամբ դիմակայում էին «Ղարաբաղ» կոմիտեի անունից հրապարակվող թռուցիկները եւ այլ փաստաթղթերը, որ

արագ բազմացվում ու տարածվում էին երկրով մեկ: Ավելին՝ դրանք տարածվում էին նաեւ աշխարհով մեկ՝ նույն հաջողությամբ դիմակայելով Շարժման նկատմամբ աշխարհում բացասական մթնոլորտ ստեղծելու՝ խորհրդային Կենտրոնի եւ Ադրբեջանի քարոզչությանը: Անհավասար այդ պայքարում Շարժումը հաղթանակեց: Կոմիտեի անդամների վկայությամբ, հարյուրից ավելի այդ նյութերի 90%-ը հեղինակել է Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Երկուսուկես տարվա համաժողովրդական պայքարն ունեցել է դրվագներ, երբ անհրաժեշտ է եղել դիմել նաեւ մեծ ռիսկ, ընդհուպ՝ իրական վտանգ պարունակող քայլերի ու նախաձեռնությունների: Ղարաբաղին ամենաբազմազան օգնության ապահովման, ինքնապաշտպանական խնդիրների կազմակերպման եւ իրականացման, զանազան մանր ու մեծ սադրանքները չեզոքացնելու գործողությունները «Ղարաբաղ» կոմիտեի անդամները երբեք գրասենյակից չէին ղեկավարում, այլ անմիջապես գտնվում էին ամենավտանգավոր տեղում, սահմանամերձ շրջաններում, խրամատներում: Առավել մեծ մասշտաբի քաղաքական կարեւոր քայլերի, համարձակ նախաձեռնությունների ու ծրագրերի իրականացման մեջ ժողովրդական զանգվածին միշտ շրջահայացության կոչող, սթափության կոչնակ հնչեցնող Լեւոն Տեր-Պետրոսյանը եղել է ոչ միայն առաջնորդ, այլեւ անձամբ հնարավոր վտանգի դեմ առաջին տեղում եւ առաջին պատասխանատուն: Հիշենք թեկուզ 1988-ի նոյեմբերի 7-ին նրա առավել քան համոզիչ ելույթը, նույն ամսվա 24-ին Օպերայի շենքում Շարժման նախաձեռնությամբ հրավիրված Գերագույն խորհրդի նստաշրջանը, 1989-ի դեկտեմբերի 4-ին Գերագույն խորհրդի նստաշրջանում «Հայաստանում արմատական ժողովրդավարական վերափոխումների մասին հռչակագրի» համարձակ դրույթների ներկայացումն ու պաշտպանությունը եւ այլն[3]:

Պակաս վտանգաշատ չէր, այս անգամ բոլորովին այլ առումով, գաղափարական հարցերում առաջամարտիկի դերի ստանձնումը: Անկախության գաղափարի դեմ պայքարում էր ոչ միայն կոմկուսը: Նույն բանը Հայաստանում անում էր իրեն «ազգային մտավորականություն» հորջորջող, իրականում՝ կոմունիստական մտավորական նոմենկլատուրան, իսկ Սփյուռքում՝ դաշնակցությունը՝ հակադրելով «պանթուրքիզմի վտանգի» խրտվիլակը եւ հայդատականության «տեսլականները»: Ի տարբերություն կոմունիստական գաղափարախոսության դեմ պայքարի, այս երկրորդ ճակատը որքան նուրբ, նույնքան վտանգավոր էր: Կեղծ-քաղաքական, կեղծ-հայրենասիրական, կեղծ-ազգասիրական, բայց մյուս կողմից ավանդաբար փոխանցված ու մարդկանց գիտակցության մեջ ամրացած պատկերացումների ու կարծրատիպերի շահարկման հիման վրա էր կազմակերպված «ազգայինի» այս ամբոխավարությունը: Դրանով իսկ այն, ինչպես Լեռնային Ղարաբաղի խնդրի, այնպես էլ անկախության գաղափարի ու ծրագրի դեմ շատ ավելի վտանգավոր էր, քան Կենտրոնի ուժային միջամտության սպառնալիքը: Այն կարող էր ապակողմնորոշել շատերին, ներսից քայքայել Շարժումը, կտրել նրա ողնաշարը: Ուստի այս ճակատում Լեւոն Տեր-Պետրոսյանի պայքարն անսեթեւեթ էր, առավել համառ եւ հետեւողական: Քաղաքական գործիչը նման դեպքերում կարող էր նաեւ շատերի կողմից չհասկացվել, ոչ միայն իր քաղաքական կապիտալից մաս կորցնել, այլեւ ձեռք բերել անձնական հակառակորդներ ու թշնամիներ: Եւ, իհարկե, ձեռք բերեց՝ ի դեմս կոմունիստական նոմենկլատուրայի, պալատական մտավորականության ու՝ իրենց «ազգային գաղափարախոսության» ծնող ու տերեր համարող կազմակերպությունների: Ու քանի որ Լեւոն Տեր-Պետրոսյանը քաղաքական մանկամտության ու դրա վնասարարության դեմ իր պայքարը շարունակեց անզի-

---

[3] Անձնական ռիսկի դիմելու հատկությունը բնորոշ էր «Ղարաբաղ» կոմիտեի բոլոր անդամներին: 1988 թ. փետրվարի 23-ի հանրահավաքում առաջին անգամ գործադուլի կոչ արեց Վազգեն Մանուկյանը: Նույն օրը Համբարձում Գալստյանը հրապարակավ պահանջեց իշխանությունների հրաժարականը: 1988-ի հունիսի 15-ին Օպերայի հրապարակի բազմահազարանոց հանրահավաքը խորհրդային զորքով շրջապատված Գերագույն խորհրդի նիստերի պալատ առաջնորդեց Սամսոն Ղազարյանը: Հուլիսի 5-ին «Զվարթնոց» օդանավակայանում լարված ու չափազանց վտանգավոր իրավիճակը կարողացան հարթել Սամվել Գեւորգյանը եւ Ռաֆայել Ղազարյանը: Նույն թվականի նոյեմբերին շինանյութերով բեռնված ավտոշարասյունը Ղարաբաղ էին առաջնորդում Բաբկեն Արարքցյանը, Վանո Սիրադեղյանը եւ Դավիթ Վարդանյանը: Նոյեմբերին, արտակարգ դրության պայմաններում, Քյարքի գյուղը Ադրբեջանից եկած փախստականներով կարողացավ բնակեցնել Ալեքսան Հակոբյանը: 1990 թ. հունվարին Երասխի կռիվներում հայկական ուժերի գործողությունները տեղում համակարգում էր Բաբկեն Արարքցյանը: Նույն թվականի մայիսի 27-ին կազմակերպված սադրանքի հետեւանքով երկաթուղային կայարանում եւ Նուբարաշենում բորբոքված արյունահեղության հրդեհը կարողացան մարել Աշոտ Մանուչարյանը եւ Վազգեն Մանուկյանը:

ջում ու մինչև վերջ, ուստի և առաջին հերթին հենց նրա նկատմամբ ձևավորվեց այդ թշնամանքը:

Բնական ընտրությամբ

«Ղարաբաղ» կոմիտեն, ինչպես ասվեց, ձևական առումով չուներ ղեկավար: Առավել ևս որևէ մեկը երբեք չհավակնեց իրեն Շարժման առաջնորդի կամ ղեկավարի դեր վերագրել: Սակայն, ինչպես բնության մեջ ամենուր, չէր կարող տեղի չունենալ բնական ընտրություն՝ բոլոր կարգի ընտրությունների մեջ ամենահավաստին, ամենաօրինականն ու ամենաանկողմնակալը: Իսկ այդպիսի ընտրության հիմքում ընկած է լինում բերած իրական նպաստի, ունեցած իրական արժանիքների և դրսևորած իրական կարողությունների՝ յուրաքանչյուրի կողմից տրված անաչառ գնահատականը: Ըստ այդմ՝ Շարժման բազմահազար մասնակիցների ընկալումներում Կոմիտեի անդամների մեջ Լևոն Տեր-Պետրոսյանի դերն ու կարգավիճակը հետևողականորեն առանձնանում էր: Դա անմիջապես նկատել է նաև դրսի չեզոք հայացքը. «Ղարաբաղ» կոմիտեն, բաղկացած լինելով 11 անդամներից... ձգտում է կազմավորվել որպես հստակ քաղաքական նպատակներ ունեցող շարժում: Խոսքը կոլեկտիվ ղեկավարության մասին է, թեպետ ներկայումս Կոմիտեում իշխում է Լևոն Տեր-Պետրոսյանի անձնավորությունը, որի հավասարակշռությունը, իրատեսությունը և օժտվածությունը նրան դարձնում են Օպերայի հրապարակի հանրության նախընտրելի հռետորը»[4]:

Թող տարօրինակ չհնչի, սակայն Շարժման ղեկավարի բնական ընտրությունն առաջինը կատարել էր հակառակորդների ճամբարը: Եվ յուրահատուկ այդ ընտրությանն անհնար է կասկածել աչառության ու կողմնակալության մեջ: Որպես հիմնական թիրախ ընտրվեց Շարժման ղեկավարներից իրենց համար ամենավտանգավորը՝ դրանով իսկ արձանագրելով Շարժման դե-ֆակտո առաջնորդի նրա կարգավիճակը: Կոմիտեի ձերբակալված անդամներից ամենածանր հոդվածները նախատեսված էին Լևոն Տեր-Պետրոսյանի համար: Ասել է թե՝ կենտրոնական իշխանությունները նրա մեջ էին տեսնում ամենամեծ վտանգը: 1988 թ. ամռանից ի վեր, իսկ ավելի հաճա-

[4] Ֆրանսիացի վերլուծաբանի հոդվածը տե՛ս «Լը Մոնդ» հանդես, 22 հոկտեմբերի 1988 թ.:

խակի՝ ընտրությունների նախորդ ամիսներին, Լևոն Տեր-Պետրոսյանն էր Հայաստանում՝ կոմունիստական մամուլի և «ազգային մտավորականության», Սփյուռքում՝ դաշնակցական մամուլի քննադատության առաջին, եթե ոչ միակ թիրախը: Սա նույնպես հասկանալի էր, քանզի, ինչպես ասացինք, հիմնականում նրա ուսերին էր գաղափարական պայքարի ծանրությունը թե՛ առաջին, թե՛ երկրորդ ուղղությամբ: Այդ «ընտրությունը» վկայող անհերքելի մի փաստարկ ներկայացվեց 1990-ի մայիսի 19-ին՝ ԳԽ-ի ընտրության նախորդ օրը. իշխանությունը հրապարակ հանեց ծանր հրետանին՝ վնասազերծելու իր համար երկու ամենամեծ վտանգները: Հրապարակվեց երկու ընդարձակ հոդված՝ Լենդրուշ Խուրշուդյանի՝ ընդդեմ ՀՀՇ-ի, և Սիլվա Կապուտիկյանի՝ ընդդեմ Լևոն Տեր-Պետրոսյանի, այսինքն՝ ընդդեմ Շարժման ու նրա իրական ղեկավարի: Որն էլ պատահական չէր ընտրված. հաջորդ օրը՝ մայիսի 20-ին անհնար էր այդ հարձակումներին պատասխանել. քվեարկության օրը քարոզչությունն օրենքով արգելված էր[5]:

Սակայն ոչինչ չօգնեց: Բնական իր ընտրությունը վաղուց կատարել էր նաև ժողովուրդը: Չնայած կոմունիստական իշխանության, նրա սպասարկուների և «ազգային մտավորականության» գործադրած համառ ջանքերին, Շարժումն ընտրություններում հաղթեց և խորհրդարանում հարաբերական մեծամասնություն ստացավ:

Հաղթանակը վերջնական կլիներ, եթե Շարժման ներկայացուցիչն ընտրվեր Գերագույն խորհրդի նախագահ: Շարժումը, «Ղարաբաղ» կոմիտեն կանգնած էին դե-ֆակտո առաջնորդին դե-յուրե «բացահայտելու» անհրաժեշտության առջև: Թեկնածության առաջադրման նախօրյակին բազմամարդ հանրահավաքն սպասում էր այդ հարցով «Ղարաբաղ» կոմիտեի ու ՀՀՇ վարչության որոշմանը: Ճիշտ այնպես, ինչպես «Ղարաբաղ» կոմիտեի անդամները համարում էին, որ այդ հարցը լուծում են իրենք՝ քվեարկությամբ, նույն կերպ, նույն պահին նրանց որոշմանն սպասող հազարհազարանոց հանրահավաքի յուրաքանչյուր մասնակից նույն զգացումն ուներ ինքն իր մեջ:

[5] Թե ինչպիսի հետևանք ունեցավ այս «լավ նախապատրաստված» քայլը, վկայում է այն ուշագրավ փաստը, որ ԳԽ պատգամավորության թեկնածու առաջադրված նույն Խուրշուդյանն ու Կապուտիկյանը ընտրություններում ստացան, համապատասխանաբար, 30 և 60 ձայն: Ակներևաբար՝ նրանք ձայներ էին կորցրել հենց այդ հրապարակումների պատճառով:

Մինչ ձայն ստացած բանախոսը կմոտենար խոսափողին՝ հայտարարելու Կոմիտեի որոշումը, հանրահավաքը կանխեց նրան՝ միաբերան, հաստատակամ ու անվերապահ հայտնելով իր կատարած ընտրությունը՝ «Լե՛-Խո՛ն» վանկարկմամբ: Ու եթե Կոմիտեի կողմից ընդունված լիներ այլ որոշում, և հրապարակվեր այլ անուն, առաջին անգամը կլիներ երկուսուկես տարվա մեջ, երբ «հարթակը» և ժողովուրդը միմյանց չէին հասկանա: Եւ չէր օգնի ոչ մի բացատրություն, ոչ մի ելույթ, ոչ մի հեղինակություն, ոչ մի հիմնավորում: Սակայն դա տեղի չունեցավ. Կոմիտեն և ՀՀՇ վարչությունը նույնպես արձանագրել էին փաստական իրողությունը և որոշել նրա թեկնածությունը:

Առաջին դժվարին քննությունը

Հաղթանակը և իշխանության ստանձնումը դյուրություններ չէր բերելու: Այն նախ բազմակի դժվարացնելու էր եղած խնդիրները, ավելացնելու էր նորերը, մեծացնելու էր պատասխանատվությունը: Իշխանությունը կորցրած ուժը, չհաշտվելով կատարված փաստի հետ, երկրորդ գծում պայքարի նոր ձևեր ու մեթոդներ էր մշակում, դեռևս իր ձեռքում գտնվող իշխանության միջին և ստորին օղակներում դիմում նենգադույլի: Անկախության դեմ պայքարող մյուս ուժերը, փոքր-ինչ փոխելով իրենց կարգախոսները, այնուամենայնիվ շարունակում էին բացահայտ պայքարել ԽՍՀՄ կազմում մնալու համար: Այդ նպատակով էլ նրանք նոր իշխանությանը, և առաջին հերթին նրա ղեկավարին, որ առաջ վարկաբեկելու, նրանց քայլերը խոչընդոտելու խնդիր էին դրել՝ դրա համար խտրություն չդնելով բնագավառների և միջոցների մեջ: Մյուս կողմից էլ, ՀՀՇ-ի օգնությամբ խորհրդարան մտած մի քանի մանր կազմակերպությունների ներկայացուցիչներ, իրենց ինքնահաստատման խնդիրը լուծելու և դիմագիծ ձեռք բերելու համար, «արմատական» լուծումներ էին պահանջում ինչպես անկախության հռչակման, այնպես էլ Ղարաբաղի հարցերում: Երկու դեպքերում էլ Լևոն Տեր-Պետրոսյանը զիջումներ չարեց: Զիջումներ չարեց ո՛չ ԽՍՀՄ կազմում մնալու ջատագովներին, ո՛չ էլ նրանց, ովքեր, «հայրենասիրական» ցուցադրանքին տրված, պահանջում էին դուրս գալ քաղաքական և օրինական լուծումների անխոցելի ճանապարհից, որ առաջ անկախություն հռչակել՝ հաշվի չառնելով իրավիճակը և խորհրդային ու միջազգային օրենքները:

Դեռևս կենդանի ԽՍՀՄ-ի հանրապետություններից մեկի ղեկավարի՝ Գերագույն խորհրդի նախագահի համար, թերևս, ամենապատասխանատու բնագավառը հարաբերություններն էին խորհրդային Կենտրոնի հետ: Անկախության ձգտումներին հակազդելու համար Մոսկվան ավելի ուժեղացրեց իր տնտեսական և ուժային լծակներով իրականացվող ճնշումները: Դրանց մի մասը քաղաքական ճանապարհով հնարավոր եղավ հաջողությամբ չեզոքացնել կամ շրջանցել: Մի կողմից՝ հաշվարկված վճռական ու կոշտ դիրքորոշման, մյուս կողմից՝ Կենտրոնի հետ բանակցությունների շնորհիվ հնարավոր եղավ կանխել ԽՍՀՄ պրեզիդենտի՝ «ապօրինի զինված կազմավորումների զինաթափման» մասին հրամանագրի կատարումը Հայաստանում: Կարճ ժամանակում խնդիրը լուծվեց սեփական միջոցներով՝ Հայաստանի նոր իշխանությանը չենթարկվող զինված կազմավորումների գործունեության կասեցմամբ: Դրանով լուծվեց ինչպես խորհրդային զորքերի օկուպացիայից խուսափելու, այնպես էլ հանրապետությունը քաղաքացիական պատերազմի ակնհայտ վտանգից ընդմիշտ հեռու պահելու խնդիրը:

Հավատարիմ մնալով քաղաքական առումով անխոցելի ճանապարհով անկախության ձեռքբերման իր որդեգրած ուղուն, Հայաստանը չմասնակցեց 1991 թ. մարտի 27-ին կազմակերպված ԽՍՀՄ հանրաքվեին և նշանակեց իր՝ Անկախության հանրաքվեն: Կենտրոնը և Ադրբեջանը բացահայտ ագրեսիայի դիմեցին՝ հստակ (և փաստաթղթերով ապացուցված) նպատակ ունենալով բռնի տեղահանել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը: 1991 թ. ապրիլի վերջին սկսված «Կոլցո» լայնածավալ ռազմական գործողության հետևանքով կորսվեցին ԼՂԻՄ-ին սահմանակից հայկական Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերը, գյուղեր դատարկվեցին նաև Լեռնային Ղարաբաղում, եղան տասնյակ մարդկային զոհեր: Գործադրելով ինքնապաշտպանական բոլոր միջոցառումները, բայց նաև առաջին տեղում դնելով ակտիվ և եռանդուն քաղաքական պայքարը և դիվանագիտական աշխատանքը, հնարավոր եղավ լուծել երկու անլուծելի թվացող խնդիր. խուսափել Կենտրոնի հետ բացահայտ առճակատումից, ինչպես նաև՝ կանխել Լեռնային Ղարաբաղի բնակչության տեղահանման նրա ծրագիրը: Կորսված տարածքների մեծ մասը հետագայում հետ բերվեց:

Քաղաքականապես գրագետ քայլերի և վճռականության շնորհիվ Մոսկվայի հետ հարաբերությունները հետևողականորեն որակական փոփոխություններ էին կրում և վերաճում գործընկերայինի: Տպավորիչ ու

արդյունավետ էր Հայաստանի նոր ղեկավարի քայլը 1991 թ. սկզբին՝ Մերձբալթյան հանրապետությունների համար ծանր օրերին. նրա նախաձեռնած միջնորդական առաքելությունը կանխեց խորհրդային բանակի կողմից սկսված արյունահեղության հետագա խորացումը Լիտվայում եւ ցույց տվեց Կենտրոնի դեմ անկախական հանրապետությունների միասնական ճակատ կազմելու արդյունավետությունը:

Ինքնիշխանության եւ ժողովրդավարական չափանիշների հաստատման, տնտեսությունը ազատ շուկայական հարաբերությունների հիմքի վրա տեղափոխելու հետեւողական եւ տպավորիչ քայլերը հնարավորություն էին տալիս նաեւ արդյունավետ արտաքին քաղաքականություն վարելու, միջազգային ասպարեզ դուրս գալու համար: Լեւոն Տեր-Պետրոսյանի իրականացրած եռանդուն արտաքին քաղաքականությամբ Հայաստանը, որպես պետական ինքնուրույն միավոր, քայլ առ քայլ ընդունվում էր Արեւմուտքի կողմից: Նա անսխալ էր տեսնում քաղաքական իրավիճակների անատոմիան, գործընթացների էությունն ու ուղղությունը: Աշխարհաքաղաքական զարգացումները ճշգրիտ կռահելու եւ կառուցողական դիրքերից դրանց նպաստելու առավելագույն ջանքեր գործադրելու շնորհիվ Հայաստանի ղեկավարի քաղաքական կշիռն ու հեղինակությունը աճում էր նաեւ միջազգային ասպարեզում: Առաջինն արժանանալով բարձր մակարդակի ընդունելությունների՝ տեւական մի շրջան Հայաստանի ղեկավարը միջազգային ասպարեզում, բուն էության, հանդես էր գալիս որպես անկախության ուղին բռնած հանրապետությունների պատվիրակ: 1990-91 ԹԹ. ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի եւ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանի, տարբեր երկրների ղեկավարների ու դեսպանների հետ հանդիպումների ժամանակ նա հետեւողականորեն փորձում էր համոզել, որ ԽՍՀՄ-ը դատապարտված է, եւ Արեւմուտքը պետք է անմիջական գործընկերային հարաբերություններ սկսի հաստատել անկախության ուղին բռնած հանրապետությունների հետ: Արեւմտյան երկրների ղեկավարները երկար ժամանակ տատանվում, դիմադրում էին, մինչեւ որ, արդեն ակնհայտ իրողությունների դեմ հանդիման, հենց այդպես էլ անում էին:

Լեւոն Տեր-Պետրոսյանի կանխատեսումը ճշգրիտ էր նաեւ ԽՍՀՄ անվտանգ փլուզման ձեւի հարցում: Այս դեպքում այն ոչ թե կանխատեսում, այլ ծրագիր էր, այն միակ բանական ուղու մատնանշումը, որով կայսրության փլուզումը կարելի էր գարձնել քաղաքակիրթ, ԽՍՀՄ ժողովուրդների

ու աշխարհի համար առավելագույնս անվտանգ: Նա այդ ծրագիրը ներկայացրեց համապատասխան իրադարձություններից դեռ մոտ մեկ տարի առաջ՝ անգամ նշելով փոխարինող միավորի անվանումը. «...Խորհրդային Միության ապագան մենք պատկերացնում ենք հետեւյալ կերպ. միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող անկախ պետությունների եռամագործակցություն (ընդգծումը իմն է – Ա. Ս.), որտեղ բացառվում է միութենական կառավարության, ընդհանուր Սահմանադրության եւ միասնական օրենսդրության գոյությունը» (տես էջ 175): Մեկ տարի անց սահմանված միավորումը էությամբ հենց այդպիսին էր, եւ հենց այդպես էլ անվանակոչվեց՝ Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ):

Հոկտեմբերի 16-ի ընտրությունը կանխորոշված էր

Խորհրդային Միությունից անջատված եւ նրա փլուզմամբ առաջացած անկախ պետությունները, բուն իշխանության եկած ուժերի բնույթի, կարելի է բաժանել երեք խմբի: Դրանց մի մասում տեղական կոմունիստական առաջնորդները կարողացան պահել իշխանությունը (Միջին Ասիա): Մի մասում ժողովրդավարական ուժերն ստիպված էին իշխանությունը կիսել կոմունիստների հետ (Մերձբալթիկա, Ռուսաստան, Մոլդովա, Ուկրաինա): Մի մասում էլ ժողովրդավարական ուժերը անվերապահ հաղթանակ տարան եւ անցան իշխանության գլուխ (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան): Բոլոր դեպքերում, հետխորհրդային իշխանություններին ծանր քննություն էր սպասվում: Նրանց էր վիճակված դիմակայել անկախ սպրելակերպի առաջին մեծ դժվարությունները, հաղթահարել առաջին խոչընդոտները, նոր ճանապարհ հարթել, բախվել ոչ ստանդարտ իրավիճակների հետ եւ այլն: Առաջին տարիներին բոլոր հանրապետությունները բախվեցին դժվարությունների ու խնդիրների, որ ընդհանուր բնույթի էին, անխուսափելի եւ հավասարապես ծանր բոլորի համար: Տարբեր հանրապետություններ ունեին նաեւ լրացուցիչ, յուրահատուկ խնդիրներ: Այդ յուրահատուկ խնդիրներն իրենց եւ՛ քանակով, եւ՛ ծանրության աստիճանով Հայաստանում ամենամեծն էին՝ խուլ շրջափակում, երկրաշարժի հետեւանքներ, գաղթականներ, պատերազմ:

Իշխանությունը նորանկախ երկրներում ժողովրդական զանգվածների աչքում առավել անձնավորված էր եւ ներկայանում էր երկրի առաջին

դեմքով: Որքան նախապես մեծ էին նրանից հասարակության սպասելիքները (որ նման իրավիճակներում ծայրահեղ չափազանցված են լինում օբյեկտիվ հնարավորությունների համեմատ), նույնքան մեծանում էր կարճ ժամանակ անց նրանից հիասթափվելու հնարավորությունը: Այսինքն՝ անծնավորված էր լինելու նաեւ հիասթափությունը: Եւ իրոք, մի շարք հանրապետություններում նոր, ոչ կոմունիստական իշխանությունները՝ իրենց նոր առաջնորդներով հանդերձ, կարողացան դիմանալ 1-2 տարի. սոցիալ-տնտեսական վիճակի անխուսափելի վատթարացման հետեւանքով նրանք արագորեն հեղինակազրկվեցին, նրանց դեմ աճեց դժգոհությունը, եւ իշխանության եկան հիմնականում կոմունիստական նախկին գործիչները (Վիլնա, Վրաստան, Ադրբեջան): Ընդ որում՝ այդ ընթացքում ունենալով անվերադարձելի կորուստներ:

Այս ֆոնի վրա Հայաստանը եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը կարծես թե միակ բացառություններն են: Եւ դա այն դեպքում, երբ հենց Հայաստանում էին առարկայացած ամենածանր խնդիրները, եւ Հայաստանի հանրապետության կողմից Լեւոն Տեր-Պետրոսյանից շատ ավելին էին սպասելիքները, քան որեւէ այլ երկրում նոր իշխանության որեւէ առաջնորդից: Դժվարագույն խնդիրներով հագեցած առաջին տարում, լինելով հանդերձ իշխանության թիվ մեկ պատասխանատուն, նրա հեղինակությունը ոչ միայն անկում չապրեց, այլեւ ավելի բարձրացավ: Որեւէ նշանակություն չունեցավ սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացումը, որ Հայաստանում շրջափակման, անօթևանների ու Լեռնային Ղարաբաղի խնդրի պատճառով ավելի խորն էր: «Զօգնեց» նաեւ այն հանգամանքը, որ արդեն մեկ տարուց ավելի, որպես երկրի ղեկավար, Լեւոն Տեր-Պետրոսյանը խորհրդարանում եւ մամուլում ամենաբուռն ու անողոմանափակ քննադատության էր ենթարկվում. «արմատական» անկախականները նրան քննադատում էին անմիջապես անկախություն չհռչակելու եւ Կենտրոնի հետ քաղաքական հարաբերությունները չխզելու համար, հակաանկախականները՝ միութենական պայմանագիրը մերժելու համար, հայդատական ուժերը եւ «ազգային» մտավորականությունը՝ «պանթուրքիզմի վտանգն» անտեսելու համար, զարաբաղցիները՝ քաղաքական բոլոր խնդիրներն առաջին հերթին Ղարաբաղի հարցից չբխեցնելու համար: Լեռնային Ղարաբաղում մայիս–հունիս ամիսներին ունեցած ժամանակավոր կորուստներն իրենց հերթին կրկնակի խտացնում էին այդ քննադատությունների համար նպաստավոր մթնոլորտը: Կարծես թե առկա էր

այն պայմանների եռապատիկը, որոնք այլ հանրապետությունների ոչ կոմունիստական իշխանությունների տապալման համար բավարար հիմք հանդիսացան: Եւ ահա, ընդդիմության համար այս ամենանպաստավոր թվացող պահին՝ ԿԽՄ-ում Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ անվստահության հարց հարուցվեց: Անվստահություն հայտնելուն 260 պատգամավորից գաղտնի քվեարկությամբ կողմ քվեարկեց ընդամենը... երեքը: Այսինքն՝ չնայած «օբյեկտիվ պայմաններին», նրա անհաշտ ընդդիմության հետեւողական պայքարին, մամուլում ու խորհրդարանում հնչող սուր քննադատական ելույթներին ու մեղադրանքներին, իրականում նրա նկատմամբ վստահություն աճում էր նաեւ քաղաքական մարմնում՝ Գերագույն խորհրդում, նույնիսկ նրա քննադատների շրջանում: Եւ դա էր նրա վարած իրատեսական քաղաքական կուրսի իրական գնահատականը: Նույնն էր նաեւ ժողովրդի գնահատականը. սեպտեմբերի 21-ին իրականացված անկախության հանրաքվեի արդյունքներն արդեն իսկ դրա լավագույն ապացույցն էին՝ նրա քաղաքականությանը տված միանգամյա վստահության քվե, իսկ հոկտեմբերի 16-ի նախագահական ընտրությունն այդ փաստն արձանագրեց ուղղակի, բացահայտ եւ անվիճելի:

Լեւոն Տեր-Պետրոսյանը հրաժարվեց մասնակցել 1991 թվականի նախագահական ընտրարշավին՝ բավարարվելով մեկ հեռուստաելույթով: Դա արհամարհանք չէր նախագահության մյուս թեկնածուների նկատմամբ, ընդհակառակը՝ յուրատեսակ քաղաքական մեծահոգություն էր: Դա վստահություն էր իր ունեցած վստահի եւ Շարժման քաղաքական եռամյա դպրոցն անցած ժողովրդի իմաստության նկատմամբ: Մինչդեռ նրա դեմ ծավալված քարոզչությունը նախընտրական ամիսներին, բնականաբար, բազմապատկվեց, դրա վրա ծախսվեցին հսկայական միջոցներ: Ընտրարշավին մասնակցող թեկնածուները միմյանց դեմ չէին պայքարում, այլ՝ բոլորը մեկի դեմ, ով նրանց չէր պատասխանում: Այդ քարոզչությունն իրականացնում էր ԱԻՄ-ը, որի թեկնածուն էր Պարույր Հայրիկյանը, դաշնակցությունը, որի թեկնածուն էր հայտնի գերասան Սոս Սարգսյանը, Հանրապետական կուսակցությունը, որի թեկնածուն էր Աշոտ Նավասարդյանը, նախկին նոմենկլատուրային մտավորականությունը եւ զարաբաղցիները՝ որոնց թեկնածուն էր Ջորի Բալայանը, Ութֆայել Ղազարյանը, որ հայտնի չէ, թե ում թեկնածուն էր, սակայն ակնհայտ էր, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամի իր հանգամանքով պետք է ձայներ խլեր իր գործընկերոջից... Վերջին

հաշվով՝ որոշակի բացասական միջավայր ստեղծելուն էր նպաստակաուղղված նախօրեին Վազգեն Մանուկյանի հրաժարականը վարչապետի պաշտոնից, նախագահության թեկնածու առաջադրվելը, ապա նաեւ դրանից հրաժարվելը: Սրան կարելի է ավելացնել իր դիրքն ու արտոնությունները կորցրած ողջ նախկին իշխանական նոմենկլատուրան եւ այլն: Այսինքն՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի դեմ միասնական ճակատ էին կազմել հնարավոր բոլոր ուժերը եւ գործադրում էին իրենց հասու հնարավոր բոլոր միջոցները:

Եւ այդուամենայնիվ, նա հավաքեց ավելի քան 83% ձայն: Երկրորդ տեղն զբաղեցնող Պ. Հայրիկյանը՝ 7%, Սոս Սարգսյանը (սիրված դերասանի իր համարումով, դաշնակցության «համբավով» եւ վերջինիս տրամադրած՝ այդ տարիների համար հսկայական ֆինանսական օժանդակությամբ հանդերձ) Հայրիկյանին գիջեց երկու անգամ: Ընտրության արդյունքներն ու օրինականությունը որեւէ կերպ եւ որեւէ մեկի կողմից չվիճարկվեց: Անգամ Պ. Հայրիկյանը այն յուրօրինակ ձեւով վավերացրեց՝ սեւ դրոշներով կազմակերպած սգո գավեշտական ցույցով:

Ճիշտ չի լինի ասել, թե Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ այդ վստահությունը միայն Շարժման տարիներից եկած իներցիայի արդյունքն էր: Ընդհակառակը՝ արդեն շուրջ 14 ամիս նա հանրապետության ղեկավարն էր, հասարակության աչքում՝ կատարված ամեն ինչի պատասխանատուն: Սա փաստորեն հենց այն միջին ժամանակամիջոցն էր, որ այլ հանրապետություններում բավարար էր եղել նոր իշխանությունների ղեկավարների վարկաբեկման եւ քաղաքական ասպարեզից դուրս մղման համար: Հայաստանում պատկերը ճիշտ հակառակն էր: Այդ վստահությունը Լեւոն Տեր-Պետրոսյանը վաստակել էր արդեն ոչ թե որպես համաժողովրդական շարժման առաջնորդ եւ ժողովրդական տրիբուն, այլ որպես երկրի ղեկավար, որպես պետական գործիչ՝ իր ավելի քան մեկ տարվա իրական, գործնական աշխատանքի արդյունքով, որ անհնար էր չնկատել ու չգնահատել:

Պետականության ապահով հիմնարկեք

Իշխանությունը վարող քաղաքական ուժի եւ նրա ղեկավարի գնահատականը պետք է հենվի նրանց գործունեության արդյունքի վրա, ընդ որում՝ հաշվի առնելով նաեւ այն բազան, որը նրանց կողմից ժառանգվել էր: Ինչպես ասվեց, Հայաստանում առկա էին ԽՍՀՄ փլուզման հետեւանքով առաջացած

բոլոր ընդհանրական բնույթի դժվարությունները, ինչ մյուս հանրապետություններում: Դրանց գումարվում էր միայն Հայաստանին հատուկ խնդիրների այն խումբը, որն իր ծավալով ոչ միայն կրկնապատկում, այլեւ բազմապատկում էր այդ դժվարությունները՝ տնտեսական խուլ շրջափակում, բռնագաղթվածների հոծ զանգված, երկրաշարժից մնկ երրորդով հիմնահատակ ավերված երկիր, Լեռնային Ղարաբաղի վտանգված վիճակ, հանրապետության սահմանափակ բնական պաշարներ եւ այլն:

Մինչդեռ հետագայում որեւէ մեկի մտքում երբեւէ հարց չառաջացավ. ինչպե՞ս է, որ գտնվելով էլակետային ամենաանբարենպաստ պայմաններում, փաստորեն բոլոր չափորոշիչներով մի քանի անգամ զիջելով Ադրբեջանին, կարողացանք նրա նկատմամբ հասնել այն առավելությանը, ինչն արձանագրվեց 1994-ի պինդադարով եւ առկա էր մինչեւ 1998-ը: Այդ ընթացքում կատարեցինք ամենաարմատական ու ամենադժվար վերափոխումները եւ կարողացանք ճանաչվել որպես ժողովրդավարական երկիր: Մ՚րն է եղել հաջողությունների հասնելու այդ մեխանիզմն ու գրավականը...

Թերեւս դեռ «Ղարաբաղ» կոմիտեի շրջանից ունեցած փորձից օգտվելով՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը միշտ մեծ տեղ էր տալիս զեկավարման կոլեգիալության սկզբունքին: Նա անհրաժեշտ էր համարում մինչեւ որոշում ընդունելը լսել բոլորին, ամեն տեղ՝ Գերագույն խորհրդում, նրա նախագահությունում, կառավարությունում, Անվտանգության խորհրդում, միջազգային տարբեր վեհաժողովներում Հայաստանը ներկայացնող պետական պատվիրակություններում, Սահմանադրական հանձնաժողովում, ՀՀՇ վարչությունում: Կարեւորագույն հարցերը քննարկվում էին անբռնազգաս, երկարատեւ, համբերատար, բոլոր մանրամասներով: Քննարկման մասնակից էր դարձվում խնդրին տեղյակ եւ առնչվող ամեն ոք: Ամեն մեկն ուներ ազատ արտահայտվելու ոչ միայն հնարավորություն, այլեւ պարտավորություն: Գիտնականից, հետազոտողից քաղաքական գործչին անցած լայնախոհություն, մանրուքներով չտարվելու, գլխավորը երկրորդականից զատելու ունակություն օգնում էր գտնելու հարցերի լուծման առավել ճիշտ տարբերակը: Հաճախ այն կարող էր չհամընկնել հայտնված կարծիքներից եւ առաջարկված լուծումներից եւ ոչ մեկին, սակայն, որպես կանոն, ամենապարզն էր եւ համոզում էր բոլորին: Այս աշխատաոճի մաս էր կազմում նաեւ պետության բոլոր կառույցների եւ պաշտոնյաների համար օրենդրությամբ նախատեսված իրավունքների եւ իրավասությունների իրակա-

նացման հնարավորության ապահովումը: Նախագիծը երբեք իրեն թույլ չտվեց մտնել այլ օղակների իրավասությունների ոլորտը, զբաղվել մանր հարցերով:

Սակայն սա պայմանների միայն մի մասն էր՝ խնդիրների արդյունավետ լուծումներն ապահովելու համար: Կարեւորագույն հանգամանք էր քաղաքական թիմի որակը, որի կորիզն առանցքային պաշտոններ էր ստանձնել: Պետականության կառուցման կարեւորագույն բնագավառներ զեկավարող պաշտոնյաներն ունեին անհրաժեշտ ունակություններ, նրանք լիակատար կարողանում էին օգտվել օրենքով նախատեսված իրենց բոլոր իրավասություններից, բայց այդմ էլ՝ ունեին նաեւ քաղաքական պատասխանատվություն, ինչը ապահովում էր աշխատանքի արդյունավետությունը եւ ընդհանուր ներգաշնակությունը: Նկատի ունենք մասնավորապես օրենսդիր մարմինը, կառավարությունը, պաշտպանությունը եւ ներքին գործերը: Այս հիմնասյուների վրա էր առաջին հերթին հենվում ու կառուցվում պետությունը:

Առաջին Հերագույն խորհուրդը շեշտված յուրահատկություններ ուներ: Յուրահատկություններից մեկը՝ պարզապես երբեւէ օրենսդիր մարմնի նախադեպը չունենալը, օրենսդրական աշխատանքի ամանդույթի իսպառ բացակայությունն էր: Կոմունիստական շրջանի նույնանուն մարմինն իր եւ՛ կազմով (մասամբ՝ կուսակցական նոմենկլատուրա, մասամբ՝ կիվորներ, հովիվներ, բանվորներ), եւ՛ աշխատանքի մեթոդներով (միաճաշն դակում էր կուսակցական մարմիններում գրված օրենքները եւ որոշումները) շատ հեռու էր եղել իրական օրենսդիր մարմին լինելուց եւ չէր կարող այդօրինակ դրական որեւէ ավանդույթ փոխանցել: Գեթ սկզբնական շրջանում պատգամավորների մեծագույն մասը հեռու էր ոչ միայն օրենսդրական աշխատանքը պատկերացնելուց, այլեւ իրենց իրավունքներն ու պարտականությունները ճանաչելուց: Հերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանից տիտանական համբերությունից սկսած մինչեւ մանկավարժական հմտություններ ու նրբանկատություն էր պահանջվում այս, ըստ էության ամենադժվարին օղակը զեկավարելու, այն իր գործառույթին բերելու, բնական, նաեւ արհեստածին հակասություններն ու հակամարտությունները հաղթելու, իշխանության թեւերի միջեւ լիազորությունների համար վտանգավոր պայքարը կանխելու, անհրաժեշտ եւ որակյալ օրենսդրական արտադրանքն ապահովելու համար:

Կառավարությունը, որպես ՀՀՇ-ի քաղաքական ծրագիրն իրականացնող գործադիր մարմին, որոշ խարխափումներից հետո վերջնականապես իր գնդը գտավ Հրանտ Բագրատյանի օրոք: Կենսապահովման, ազգամաքառի եւ այլ ամենօրյա խնդիրները ըստ հնարավորի լուծելուն զուգահեռ, հասարակական ու տնտեսական կյանքի արմատական վերափոխմանն ուղղված քայլերը, որ զանգազել էին, նրա օրոք շարունակվեցին նոր թափով: Յանկացած բարեփոխում որպես կանոն ավյալ բնագավառում նախ անկում է արձանագրում եւ դրանց դրական արդյունքները երեւում են ավելի ուշ: Փաստական պատերազմի մեջ գտնվող երկրում սեփականաշնորհման, ազատ շուկայական տնտեսության հարաբերությունների անցման, գների ազատականացման եւ մյուս արմատական վերափոխումների դրական արդյունքների այդ ուշացումն ավելի տեւական պետք է լիներ: Եւ այնուամենայնիվ, ազգամավարական խնդիրները լուծելու համար կառավարությունը երբեք չխորշեց գնալ ոչ պոպուլիստական քայլերի:

Պաշտպանության եւ բանակի կազմավորման խնդիրը դրված էր Վազգեն Սարգսյանի վրա: Նախորդ տարիներին ինքնապաշտպանական ջոկատների զանգվածային առաջացումը մի կողմից, թվում էր, դրական նախադրյալ էր ստեղծել խնդրի լուծման համար, մյուս կողմից սակայն ավելի մեծ խնդիրներ առաջացրել: Ֆիդայականության, ավելի հաճախ՝ կեղծ-ֆիդայականության որոշակի հատկանիշներ որդեգրած այդ ջոկատներից եւ զորակոչով հավաքած նորակոչիկներից կանոնավոր բանակ ստեղծելը պարզագույն խնդիրներից չէր: Մանավանդ, որ դրա հետ միասին շարունակվում էին պատերազմական գործողությունները Լարաբաղում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում:

Կենսականորեն անհրաժեշտ էր ապահովել հասարակական կարգը եւ օրինականությունը: Կոմունիստական իշխանության մայրամուտին, ոչ առանց հեռահար հաշվարկի, բազմաթանակ զենք էր անցել տարբեր մարդկանց, այդ թվում նաեւ հանցագործ տարրերի ձեռքը: Հանանց համար «ֆիդայությունը» դարձել էր արհեստ ու գրաստնիք՝ երեւանի փողոցներում եւ հանրապետության ճանապարհներին: Բացահայտ կողոպուտը դարձել էր այդ խմբերից շատերի հիմնական գործը: Գիշերները, երբեմն նաեւ ցերեկները, քաղաքի փողոցներում ու արվարձաններում կրակոցներ էին հնչում: Լինում էին նաեւ մարդկային զոհեր: Կրիմինալը սպառնում էր դառնալ երկրի փաստական տերը: Ոստիկանությունը, Շարժման տարիներից ի վեր բարոյալքված, անհուսալիորեն անզոր էր թվում հասարակական կարգի պահպանության իր գործառույթն իրականացնելու համար: Վանո Սիրադեղյանի համառ ջանքերի եւ կարուկ միջոցառումների շնորհիվ կարճ ժամանակում իրավիճակը կարդավորվեց:

Կար նաև հինգերորդ, կարևորագույն տարրը՝ յուրատեսակ կվինտ-էսենցիան, որ հիմք ու ընդհանուր հայտարար էր բոլորի համար և անկախ Հայաստանի առաջին իշխանության երկարակեցության նախապայմաններից մեկը. ի դեմս Հայոց համազգային շարժման՝ Հայաստանի իշխանությունն ուներ հզոր և ապահով քաղաքական հենարան: ԽՍՀՄ (նաև Արևելյան Եվրոպայի) մասշտաբով ամենատևական, ամենազանգվածային, ամենաարմատական ու ամենակազմակերպված ժողովրդավարական շարժման կազմակերպական կառույցն իր մեջ հսկայական ներուժ էր պարունակում: Նրանում տարրկայացած էին ժողովրդավարական շարժման բոլոր դրական հատկանիշները՝ անաչառությունը, անկաշկանդությունը, հրապարակայնությունն ու քննադատության բացարձակ ազատությունը: Մյուս կողմից՝ այն պահպանել ու բյուրեղացրել էր Շարժման՝ ժողովրդավարական, ազատական գաղափարները, սեփական ուժերին ապավինելու, իրատեսության և կարևոր այլ քաղաքական սկզբունքները, որդեգրել պետականության առողջ հիմնադրույթներ, որպես կազմակերպված ուժ ձեռք բերել հստակ քաղաքական բնութագիր: Դա ապահովեց, որ նրա իշխանությունը լինի բնույթով քաղաքական, հստակ քաղաքական անվամբ ու պատասխանատվության հասցեատիրով[6]: Նույն՝ քաղաքական հատկանիշ ունենալու շնորհիվ էր, որ ՀՀՇ-ն մի կողմից՝ կարողացավ չտրվել կուսակցապետություն սահմանելու գայթակղությանը, մյուս կողմից՝ միշտ մնաց որպես իշխանության ամենաարժանահավատ վերահսկող, զսպաշապիկ, ըստ էության՝ կառուցողական ընդդիմության դեր ստանձնելով: Իշխանության տարբեր մարմիններ ու ներկայացուցիչներ ոչ մի ընդդիմության կողմից այնպիսի ազատ, սուր ու հիմնավոր քննադատության չէին ենթարկվում, որքան ՀՀՇ վարչությունում, տեղական կազմակերպություններում, համագումարներում, «Հայք» թերթում:

Այս գլխավոր սյուների և քաղաքական պատվանդանի վրա էին խարսխված պետության հիմքերը և կառույցը: Այս օղակների աշխատանքը և ջանքերը արդյունավետ էին, միմյանց հետ չէին բախվում, միմյանց չէին խանգարում, քանի որ ագուցված, համակարգված, ներդաշնակված էին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ձեռքով:

6 Ի տարբերություն քաղաքական առումով անդեմ հաջորդ իշխանության, որ զուրկ է քաղաքական հատկանիշից, հասարակության համար անհայտ է նրա անունը ու անորոշ՝ պատասխանատվության հասցեատերը:

Նորանկախ պետությունների ներքին անցուդարձին ուշի-ուշով հետևող միջազգային կազմակերպությունները բարձր էին գնահատում Հայաստանում կատարվող կառուցվածքային ու տնտեսական բարեփոխումները, ժողովրդավարացման գործընթացները: Հայաստանը տարածաշրջանում նույն Արևմուտքի կողմից գնահատվում էր որպես «ժողովրդավարության կղզի»:

Էներգետիկ բնագավառում կատարված արմատական բարեփոխումների շնորհիվ, արդեն 1996 թվականից՝ ռազմական լայնածավալ բախման սառեցումից կարճ ժամանակ անց, հնարավոր եղավ ապահովել շուրջօրյա էլեկտրամատակարարում (ինչին առ այսօր շատերը, օրինակ՝ հարևան Վրաստանը, դեռ չեն հասել): Որպես տնտեսական աշխուժացման և ապագայի հեռանկարի ապացույց վկայում էր այն փաստը, որ սկսեցին արագորեն աճել անշարժ գույքի գները: Արտագաղթի տեմպերը դանդաղեցին, իսկ 1996–97 թթ. վերադարձողների թիվն արդեն գերազանցում էր արտագաղթողների թվին: Վերջնական խաղաղության հաստատումը այս և մյուս դրական գործընթացները դարձնելու էր անշրջելի:

Լեռնային Ղարաբաղի հարցում

Տարածված թյուր պատկերացում կա, թե նախագահի՝ Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման 1997 թ. աշնանը պաշտպանած ծրագիրն անակնկալ էր, ուստի և նրա քաղաքական թիմի մի քանի առանցքային անդամներ ընդդիմացան և ընդվզեցին:

Իրականությունը ճիշտ հակառակն է, տրամագծորեն հակառակը: Անակնկալը, ոչ թե հակամարտությունը կարգավորելու՝ Հանրապետության Հիմնադիր-նախագահի ծրագիրն ու այն իրականացնելու վճռականությունն էր, այլ նրա քաղաքական թիմի այդ մի քանի անդամների անսպասելի ընդդիմացումն ու դրսևորած վարքագիծը:

Լեռնային Ղարաբաղի հարցը միշտ եղել էր նախագահի առաջին և ամենակարևոր խնդիրը: Ռազմական առճակատումից ու պատերազմից խուսափելու և խնդիրը փոխզիջումների հիման վրա քաղաքական ճանապարհով օր առաջ կարգավորելու իրական ձգտումն է հենց այն կենտրոնական առանցքային գիծը, որ նրա իշխանության ողջ ընթացքում՝ սկզբից մինչև վերջ, անընդհատ և բոլորի համար տեսանելի անցնում էր Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքականության միջով: Դա կարելի է ցույց տալ տաս-

նյակ ու հարյուրավոր ապացույցներով, սակայն բավարարվենք մի քանի օրինակով, եւ համոզիչ լինելու համար գիմենք վկայակոչումների:

Արդեն 1990 թ. սեպտեմբերին, հանրապետության գեկավարի պարտականություններն ստանձնելուց ընդամենը մեկ ամիս անց, Լեւոն Տեր-Պետրոսյանն արձանագրում էր, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման համար կարող է լինել երկու հնարավոր ռազմավարություն՝ առճակատման եւ փոխգիջումների: Նա չէր ժխտում, որ մինչ այդ առճակատման ռազմավարությունը լուրջ հաջողությունների հանգեցրել է, սակայն համարում էր, որ նոր իրողությունների պայմաններում այն այլեւս իրեն սպառել է, որ նույն կերպ շարունակելն այլեւս նոր արդյունքներ չի բերի: Եւ առաջարկում էր փոխարինել երկրորդ՝ դիվանագիտական ճանապարհով խնդիրը կարգավորելու ճանապարհը. «Առճակատման փուլին, երբ կողմերը տեսնում են, որ այն հանգեցնում է ճգնաժամի, բոլոր նմանատիպ հակամարտությունների գեպքում, հետեւում է մի նոր ռազմավարություն՝ համաձայնության եզրերի որոնում: Դա միանգամայն բնական է քաղաքականության մեջ» (տե՛ս էջ 137): Եւ համոզված առաջարկում էր որոշակի ծրագիր ու քայլեր: Խոսքն, անշուշտ, Լեռնային Ղարաբաղի խնդրից հետաքրքրելու չէր վերաբերում, այլ նրա լուծման նոր մեթոդներ եւ նոր ուղիներ փնտրելուն: Նա համարում էր, որ դա է ճիշտ ու հետանկարային ճանապարհը: Իսկ խնդիրը մնում էր նույնը՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության՝ իր հողում խաղաղ ու անվտանգ ապրելու ու ազատ զարգանալու հնարավորության եւ երաշխիքների ապահովումը. «Մեզ համար այսօր ամենակարեւորն այն է, որպեսզի կարողանանք ապահովել արցախահայության գոյությունն Արցախում» (տե՛ս էջ 121):

1992 թվականին, երբ դեռ անհայտ էր, թե ընթացող պատերազմում ո՞վ կուղեկցեն վերջնական հաջողությունները, Լեւոն Տեր-Պետրոսյանը ոչ միայն հրապարակավ շարունակում էր պաշտպանել փոխզիջումների հիման վրա խնդրի խաղաղ ճանապարհով կարգավորման սկզբունքը, այլեւ արդեն վերջնական եզրակացության էր եկել դրա իրականացման մեթոդաբանության հարցում, համարելով, որ դա հնարավոր է փուլային տարբերակով. «Դուք գիտեք, աշխարհում նմանատիպ բազմաթիվ հարցեր կան, որոնց շուրջ բանակցությունները նույնիսկ տասնյակ տարիներ են տեւում: Դյահովորն այսօր Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության ապահովումն է եւ Լեռնային Ղարաբաղի՝ որպես տնտեսական-քաղաքական միավորի, նորմալ կենսագործունեությունը: Եթե սրանք ապահովվեն, մնացած

հարցերը, այդ թվում նաեւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, պետք է դառնա բանակցությունների առարկա» (տե՛ս էջ 320): Նա նույն կարծիքին ու համոզմանն էր նաեւ 1995-ին, երբ զինագադար էր կնքվել հայկական կողմի համար բացառիկ նպաստավոր իրավիճակում. «Ղարաբաղյան հակամարտության քայլ առ քայլ կարգավորման մեթոդոլոգիան, որն սկսեց ձեւավորվել դեռեւս 1992 թվականից եւ այսօր խստորեն կիրառվում է անխտիր բոլոր խաղաղարար ծրագրերում: Այս մեթոդոլոգիան ենթադրում է խնդրի կարգավորման երկուասպեկտ. առաջինը՝ զինադադարի կայացման, կայուն խաղաղության հաստատման, Ղարաբաղի բնակչության անվտանգության ապահովման, գրավված տարածքների ազատման եւ շրջափակումների վերացման փուլն է, իսկ երկրորդը՝ քաղաքական հարցերի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի լուծման փուլը, որը, ինչպես արդեն նշվեց, վերաբերում է Մինսկի կոնֆերանսի հիմնական իրավասություններ: Նման մեթոդոլոգիայի որդեգրման կարեւորությունը, կարծում եմ, ինքնըստինքյան ակնհայտ է, քանի որ եթե փորձ արվեր միանգամից լուծել բոլոր հարցերը, ապա, նկատի ունենալով Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ կողմերի դրսեւորած բնական մաքսիմալիզմը, խաղաղության գործընթացը մեկընդմիշտ վիժեցված կարելի էր համարել» (տե՛ս էջ 460):

Ընթերցողի համար ամենեւին դժվար չէ նկատել, որ հայտնի «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածի հիմնական կոնցեպցիան, որ, իբր, անակնկալի բերեց շատերին, երբեմն ընդհուպ բառացի, համընկնում է բերված քաղվածքներին. «Ղարաբաղի հարցի լուծման միակ տարբերակը փոխզիջումն է, որը նշանակում է ոչ թե մի կողմի հաղթանակ եւ մյուսի պարտություն, այլ հակամարտության հաղեցման վիճակում ձեռքբերված հնարավոր համաձայնություն» (տե՛ս էջ 627–628): Եւ եթե 1990 թվականից ի վեր հնարավոր չեղավ իրականացնել փոխզիջումների հիման վրա խնդրի խաղաղ, քաղաքական կարգավորումը, եւ առճակատումը շարունակվեց, ապա՝ միայն Ադրբեջանի չկամության, անհրատեսության, քաղաքական սխալ հաշվարկների, ռազմական ճանապարհին նախապատվություն տալու պատճառով: Լեւոն Տեր-Պետրոսյանը սկզբից եւեթ չէր բացառում նաեւ այսպիսի ընթացքը, սակայն ոչ թե որպես խնդիրը լուծելու, այլ՝ հակառակ կողմին բանակցություններ սեղանի շուրջ նստեցնելու միջոց:

Ձմռանելով հայտնի դեպքերի մանրամասների մեջ, արձանագրենք, որ զինական հաջողություններից հետո, 1994 թ. գարնանը ազատագրված էր

ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլեւ նրա շուրջն ստեղծված էր ապահով ու լայնահորիզոն ցամաքային անվտանգության գոտի: Ռազմաճակատի դիծն անցնում էր աշխարհագրական առումով ամենաբարենպաստ դիրքերով: Հայաստանի հետ ցամաքային կապը ոչ թե մի միջանցք էր, այլ ձգվում էր ողջ արեւմտյան սահմանով՝ մինչեւ Արաքսի ափը: Այս ընթացքում Հայաստանի նկատմամբ միջազգային որեւէ աննպաստ փաստաթուղթ, ըստ էության, չէր արձանագրվել: Ղարաբաղը ձեռք էր բերել փաստական բացարձակ անկախություն: Ղարաբաղի հարցը միջազգայնացվել էր, Ղարաբաղը ճանաչվել էր որպես հակամարտության եւ բանակցային լիարժեք կողմ: Ծանր կորուստներից հետո Ադրբեջանն ստիպված էր համակերպվել հարցը փոխզիջումների հիման վրա խաղաղ բանակցությունների ճանապարհով լուծելու հեռանկարի հետ: Ռազմական ու դիվանագիտության ապարեգում այս արդյունքները առաջին հերթին պետության ղեկավար, Հայաստանի դինված ուժերի գլխավոր հրամանատար եւ արտաքին քաղաքականության իրականացնող Լեւոն Տեր-Պետրոսյանի վաստակն էր: Տեւական աշխատանքից հետո, 1997 թ. աշնանը, հնարավոր ամենաբարենպաստ հիմքի վրա արդեն կարելի էր սկսել վերջնական բանակցությունների փուլը: Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի համար հնարավոր ամենաբարենպաստ այս իրավիճակում ու պայմաններում հնարավոր էր կնքել վերջնական խաղաղ կարգավորման պայմանագիրը: Եւ դա ապահովելու էր Լեռնային Ղարաբաղի հարկամարտության՝ որպես քաղաքական խնդրի, լուծումը. «խոսքը վերաբերում է Ղարաբաղը հայկական պահելուն. 3000 տարի այն բնակեցված է եղել հայերով եւ 3000 տարի հետո էլ պետք է բնակեցված լինի հայերով: Իմ ընտրած ուղին ապահովելու է այդ հեռանկարը եւ հնարավորություններ պահպանելու՝ հասնել մեր բաղձալի նպատակին...»: Հանրապետության Հիմնադիր-Նախագահը հասնում էր իր այն նպատակին, ինչին անթարմության ձգտում էր իր իշխանության ողջ ընթացքում:

Ընդդիմության դիմադրությունը հաղթահարելի էր. «Ղարաբաղը ծախելու» նրանց «մեղադրանքն», ըստ էության, արժեզրկվել էր եւ վերածվել խեղկատակության, քանզի հնչել էր եւ՛ այն ժամանակ, երբ մարդը լիակատար օկուպացված էր խորհրդային բանակի եւ ադրբեջանական ՕՄՕՆ-ի կողմից, եւ՛ այն ժամանակ, երբ այն ազատագրվում էր այդ ուժերից, բայվում էր Լաչինի միջանցքը եւ ազատագրվում Շուշին, եւ՛ այն ժամանակ, երբ Ղարաբաղի շուրջ ստեղծվում էր անվտանգության գոտի: Հասկանալի է,

սակայն, որ իրենց «ազգային» հռչակող ուժերի կողմից այդ վայնասունն առավել պետք է ծավալվեր խնդրի վերջնական խաղաղ կարգավորման փուլում: Վճռական այս պահին էր, ահա, որ, առավել քան երբեւէ, ամբոխահաճության ու կեղծ արժեքների շահարկման սպասելի ալիքի դեմ անհրաժեշտ էր Լեռնային Ղարաբաղի խնդիրը բարեհաջող լուծման վերջնագծին հասցրած նախագահի քաղաքական թիմի համախմբումն ու անվերապահ աջակցությունը: Եւ հենց այս պահին է, որ տեղի ունեցավ անակնկալը. մինչ այդ նրա ծրագրերին քաջատեղյակ, քաղաքական կարեւոր պաշտոններ ստանձնած, նրա քաղաքականությունը պաշտպանող ու դրա իրականացմանը մասնակից, նրա տեսակետների նկատմամբ երբեւէ որեւէ առարկություն, որեւէ բանում ամենաչնչին կասկած չհայտնած, նրա քաղաքականության ամենաբարձր գնահատականների արժանացրած համախոհների մի մասը[7] կտրուկ ընդդիմացան՝ ընդհուպ պահանջելով նրա հրաժարականը: Կրկնենք՝ որեւէ մեկի, առավել եւս նրանց համար որեւէ անակնկալ չկար: Ի՞նչն էր, ուրեմն, պատճառը. հանկարծակի ծնված համոզո՞ւմը սեփական ավելի բարձր ունակությունների ու կարողությունների հանդեպ, վա՞շը կեղծ արժեքների ու ամբոխահաճության սպասվող ալիքից ու վայնասունից, թե հարմար պահին նույն այդ ալիքի վրա հանկարծ ցատկելով՝ ամբողջ իշխանությանը տիրանալու գայթակղությունը: Հասկանալի է, որ հարցերը հռետորական են, եւ դժվար է նրանց քայլը բնորոշելու համար ավելի հարմար որակում գտնել, քան դավաճանություն: Մենք այն ամենապարզ դավաճանություններից, որ մեր պատմության մի շարք բախտորոշ գրվագներում ճակատագրական դեր են խաղացել:

Արժանապատիվ իր հրաժարականով Հայաստանի Հանրապետության Հիմնադիր-Նախագահը, որպես պետական գործիչ, նպատակ ուներ նախ եւ առաջ զուգոն-ինչ չվնասել իր իսկ ձեռքբերումներն ու նվաճումները եւ

---

[7] *Այստեղ միջբերենք դրանցից երկուսի՝ Ռ. Քոչարյանի եւ Ա. Մարգոյանի գնահատականները (1995 թ.). «Արցախի երթեւեկած ժողովուրդը երբեք չի մոռանա Ձեր անձնական ներդրումը մեր հերոսական գոյապայքարում: Մենք մեր թիկունքում միշտ զգացել ենք մայր Հայաստանի, Հայաստանի Հանրապետության իշխանությունների զորակցությունը», «Քաղաքական այս վայրիվերումներում Ձեր կեցվածքը եւ ծանրացողականությունը բարդ խնդիրները հանգեցնում են ամենապարզ լուծումների: Դուք եք մեր պետության քաղաքական հավասարակշռության լծակը... Ձեր շնորհիվ է, որ կանգնում են ազգային պետության հիմնասյուները» (ՀՀԱԱԼ, 03/09.01.1995):*

դրանք ամբողջությամբ ու անխափան փոխանցել հաջորդ իշխանությանը, ինչպիսին էլ այն լիներ: Երկրորդ՝ այդ քայլով զգաստության ու սթափության կոչել բոլորին՝ պատրանքներից ազատվելու, իրողությունները ճիշտ տեսնելու ու գնահատելու, գեթ կեսճանապարհին կործանարար ուղուց հետ կանգնելու համար: Որքան էլ տարօրինակ, սակայն նույն մարդկանց կողմից նրան ուղղված «պարտվողականության» մեղադրանքները, եւ առկա ձեռքբերումների հիմքի վրա շատ ավելի՝ «հաղթողական» վերջնագծի հասնելու հնարավորություն տեսնելը, ըստ էության, այլ բան չէր, քան նրա վաստակի ամենաբարձր քաղաքական գնահատական: Չէ՞ որ այդ լավագույն դիրքերն ու արդյունքները ձեռք էին բերվել նրա ղեկավարության ներքո: Լայն զանգվածներին ուղղված էժան քարոզչության մեջ է, որ հաղթանակները սովորաբար չեն անձնավորվում, անձնավորում են պարտությունները:

1998 թվականից ի վեր արմատապես փոխվեց Լեռնային Ղարաբաղի խնդրի փիլիսոփայությունը: Այն տեղափոխվեց «հայ ավանդական քաղաքական մտքի»՝ պատմական իրավունքի, պահանջատիրության հարթություն, հռչակվեց «Հայ Դատի» մաս, ինչի հետեւանքով հետագա տարիներին արձանագրվեցին հետեւյալ կանխատեսելի կորուստները.

ա) փաստորեն ինքնակամ կորցրեցինք Լեռնային Ղարաբաղի՝ որպես հակամարտության եւ բանակցային կողմի, դժվարությամբ ձեռք բերված կարգավիճակը (հիմա ապարդյուն փորձում են այն վերականգնել),

բ) Լեռնային Ղարաբաղի խնդիրն ինքնորոշվող սուբյեկտի հարցից միջազգային հանրության համար վերածվեց վիճելի տարածքի պարզունակ հարցի (իսկ դրա լուծման բանալին տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքն է),

գ) Հայաստանին ստիպեցին ստորագրել միջազգային կարեւորագույն փաստաթուղթ՝ Ստամբուլի «Խարտիան», որ ըստ էության նշանակում էր նաեւ Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչում (իսկ դա կարող է կանխորոշել Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը Ադրբեջանի կազմում),

դ) անխոհեմաբար, ժամանակ շահելու համար, բանակցությունների սեղանին դրվեց Մեղրիի հարցը (որը հետ վերցնելու համար արդեն ինչ-որ համարժեքով ստիպված պետք է լինենք փոխհատուցել),

ե) Լեռնային Ղարաբաղի շուրջ «տեղական զինված կազմավորումների» կողմից գրավված տարածքները սկսեցին դիտվել որպես «Հայաստանի կողմից» գրավված տարածքներ (եւ դրանով իսկ կորցրեցին բանակցություններում հաղթաթուղթ լինելու իրենց հատկանիշը),

զ) տնտեսական զարգացման տեմպերով եւ ընդհանուր պոտենցիալով էականորեն հետ մնացինք Ադրբեջանից (իսկ հավասարակշռությունը կարեւոր փաստարկ էր բանակցություններում),

է) միջազգային զանազան փաստաթղթերում եւ բարձր պաշտոնյաների բառապաշարում Հայաստանի համար սկսեցին օգտագործվել եւ սովորական դառնալ «օկուպանտ» եւ «ագրեսոր» որակումները (իսկ դրանք որոշակի մտայնություն են արտահայտում):

Իրատեսությունը որպես հաջողությունների հիմնական գրավական

Հայոց պատմության որեւէ շրջանում, եթե իջնելու չլինենք նրա հեռավոր խորքերը, դժվար է առանձնացնել որեւէ տասնամյակ, որը միաժամանակ պարունակի 1988–1998 թթ. հետեւյալ հատկանիշները. այդքան հարուստ ու հագեցած լինի իրադարձություններով, այդքան համընդգրկուն ու տեւական լինի ժողովրդական զանգվածի մասնակցությունն ու դերակատարությունը քաղաքական գործընթացներում, այդքան արդյունավետ լինի ձեռքբերումների առումով:

Ինչո՞ւմ էր հաջողությունների գաղտնիքը:

Ազգի, ժողովրդի գոյատեւման ու հարատեւման ապահովումը հենվում է երեք հիմնական պայմանների վրա: Առաջինը միշտ էլ նրա մեջ առկա որոշակի ներուժն է, որն անհրաժեշտության դեպքում ու ճակատագրական պահերին կարող է արթնանալ ու գործի դրվել: Միշտ չէ, սակայն, որ պատմության ընթացքում առկա է լինում երկրորդ պայմանը՝ հարմար, նպաստավոր իրավիճակներ, երբ այդ ներուժը գործի դնելով կարելի է դրական արդյունքների հասնել: Այս երկուսն ըստ էության կարելի է համարել նաեւ օբյեկտիվ պայմաններ: Սակայն դրանք ո՛չ երկուսը միասին, ո՛չ, առավել եւս, դրանցից յուրաքանչյուրն առանձին, բավարար չեն դրական արդյունքների հասնելու համար: Անհրաժեշտ է երրորդ՝ սուբյեկտիվ պայմանը. հարմար կամ նպաստավոր պահին ազգի ներուժը գործի դնելու, քաղաքական

խնդիրներն իրատեսական հաշվարկների վրա ձևակերպելու ունակ առաջնորդի, ղեկավարող ուժի, իրատես քաղաքական մտքի առկայությունը: Այս դեպքում է, որ համաժողովրդական ջանքերի գործադրմամբ, նպաստավոր պատմական պահից կարելի է քաղել հնարավոր առավելագույն արդյունքը: Կարելի է քննարկել, թե մեր պատմության երկար դարերի ընթացքում այս պայմաններից երբ որն է բացակայել: Սակայն վստահ կարելի է ասել, որ 19-րդ դարի վերջին տասնամյակներից սկսած խիստ բացակայել է երրորդ պայմանը՝ իրատես քաղաքական միտքը (Նշանավոր պատմաբան Լեոն այդ շրջանն անվանում է «քաղաքական ռոմանտիզմի շրջան», որ տվյալ դեպքում չափազանց քնքուշ ու ներողամիտ որակում է):

Հաջողությունների հասնելու համար այս երեք անհրաժեշտ պայմաններն էին, որ միաժամանակ առկա էին մի ամբողջ տասնամյակ՝ 1988-ից ի վեր, ու այդտե՛ղ պետք է փնտրել հաջողությունների գաղտնիքը: Այդ պայմաններից նորը և կարևորագույնը, այնուամենայնիվ, երրորդն էր՝ սուբյեկտիվը, իրատես քաղաքական մտքի առկայությունը: Դրանով էր տարբերվում «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն» Շարժման առաջին երեք ամիսների ղեկավարությունից: Դրա շնորհիվ էր, որ հնարավոր եղավ ապահովել Շարժման ու պայքարի շարունակականությունը: Այո՛, իրատես քաղաքական մտքի առկայության պայմանն ապահովելու հատկանիշով է, որ Շարժումը, ապա նրա քաղաքական իշխանությունը հակադրվում էին պատմական անցյալին: Ուստի և դրանում էր, ինչպես ճշգրիտ նկատում է Հանրապետության նախագահը, առարկայացել նույն այդ տասնամյակի ներքաղաքական գաղափարական պայքարը. «Իսկ դաշնակների հետ մեր գաղափարական տարբերությունն այն էր, որ նոր շարժումը Հայոց պատմության մեջ առաջին անգամ, իրոք, որոշել էր իրատեսորեն նայել իրականությանը. մենք մեզնից ի՞նչ ենք ներկայացնում, ո՞ւմ հետ գործ ունենք, ինչպիսի՞ն են մեր ուժերը և ովքե՞ր են մեր հարևանները» (տե՛ս էջ 299):

Իրատես քաղաքական մտքի երկարամյա բացակայությունը ու, դրան հակառակ՝ «քաղաքական ռոմանտիզմի» նույնքան երկարամյա գերիշխանությունը, բնականաբար, որոշակիորեն ազդել էին հասարակական պատկերացումների վրա: Ըստ այդմ՝ քաղաքական գործիչը պետք է միայն ժողովրդի ծանր անցյալից, պատմական իրավունքից ու սեփական հայրենասիրությունից խոսի, հողեր պահանջի, վրեժի, կենաց ու մահվան կռվի, մահապարտ դառնալու կոչ անի: Եվ ազդել էր այնքան, որ առավելապաշտական պարզունակ կարգախոսների կողքին իրատեսություն բառի հիշատակումն անգամ կարող էր նրա կողմից հակազդեցություն առաջացնել, այնքան, որ նույնիսկ Նախագահն է զգուշությամբ խոսում իր այդ հատկանիշի մասին. «Ասածս կարող է, թերևս, ցինիկ թվալ, սակայն քաղաքական գործչի գլխավոր հատկությունն իրատեսությունն է, նույնիսկ՝ պրագմատիզմը: Բոլոր հնարավորությունները պետք է ուղղել ժողովրդի ու պետության բարօրությանը: Իմ իդեալը ժողովրդավարությունն է, համընդհանուր արժեքները, սակայն այսօրվա գլխավոր գործոնը իրական քաղաքականությունն է» (տե՛ս էջ 297):

Իրատեսական մոտեցումը չի նշանակում չարդարացված զգուշավորություն, ավելորդ անվստահություն ու պարտվողականություն, որի հետևանքով կարող ես ձեռքից բաց թողնել հնարավոր արդյունքի հասնելու համար պահը: Ճիշտ այնպես, ինչպես ուժերի ու հնարավորությունների գերագնահատումը չի նշանակում հերոսություն ու հայրենասիրություն, երբ կարող ես կորցնել անգամ ունեցածդ: Իրատեսական մոտեցումը նշանակում է չնախապաշարված ուղեղով մանրակրկիտ քաղաքական հաշվարկ, հնարավորի արվեստի տիրապետում: Այդ ունակությունն ունենալու ու այդ արվեստին տիրապետելու դեպքում արդեն համարձակությունը լիովին արդարացված է: Հանրապետության Հիմնադիր-նախագահը տիրապետում էր այդ արվեստին և գտնում, որ՝ «քաղաքականությունը ոչ թե խոսք, ոչ թե գաղափար, ոչ թե ծրագիր է, այլ նախ և առաջ գործ, այն էլ՝ **թույլատրվածի սահմանն անցնելու միտումով**» (տե՛ս էջ 89,– ընդգծումն իմն է – Ա.Ա.): Այսինքն՝ թվացյալ զգուշավորությունն իրականում ժողովրդի առջև առաջնորդի, պետական գործչի պատասխանատվության զգացումն է, բայց միաժամանակ նաև այն պարտադիր ու ապահով հիմքը, որի վրա կարելի է կատարել նաև «**թույլատրվածի սահմանն անցնող**» համարձակ քայլեր: Այս երկու, արտաքուստ հակադիր սկզբունքների ներդաշնակեցումը, իրատեսական քաղաքական հաշվարկն էր, որ իրեն լիովին արդարացրեց Շարժման տարիներին. «Մենք եկանք այն եզրակացության, որ կայսրությունը դատապարտված է, և պետք է ամեն ինչ անենք, որպեսզի Հայաստանը չմնա նրա փլատակների տակ» (տե՛ս էջ 299): Նույնը վստահ կարելի է ասել նաև Շարժմանը հաջորդած՝ ժողովրդավարական իշխանության տարիների համար: Երկու դեպքում էլ անպակաս էին հապաղելու, համարձակության պակասի մեղադրանքները: Բայց երկու դեպքում էլ անպակաս են շատերի,

նաև հիշյալ մեղադրանքների հեղինակների, երևակայությունը գերազանցող՝ «թույլատրված սահմանի անցման» օրինակները, ինչի հետևանքով էլ արձանագրվել է իրական գործ, հաջողություն, հաղթանակ[8]:

Լևոն Տեր-Պետրոսյանը անսխալական չէ, զերծ է նախապաշարմունքներից, սառնասիրտ: Նրա համար իրատես քաղաքականության սկզբունքն ակնհայտորեն եղել է ամենակարևորը, որին նա երբևէ չի դավաճանել: Նրա քաղաքական կենսագրության մեջ այս հիմքի վրա բազմաթիվ համարձակ ու արդյունավետ քայլեր կարելի է հիշել ինչպես Շարժման տարիներից, այնպես էլ իշխանության շրջանից՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության մեջ: Նրան հաջողվեց սանձել հայ–ռուսական և հայ–իրանական փոխշահավետ հարաբերություններ և դա ծառայեցնել Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովմանը: Հայ–ռուսական զինական դաշինքը և հարաբերությունները (ինչի մասին այդքան շատ է խոսվում վերջին 300 տարվա համար) առաջին անգամ նրա շնորհիվ ու նրա ղեկավարման տարիներին է, որ իրական բովանդակություն ձեռք բերեցին՝ ժողովրդի և պետության, ստորակայի ու գերակայի հարաբերություններից վերածվելով երկու հավասարազոր պետական սուբյեկտների միջև գործընկերային հարաբերության:

Քաղաքական հաշվարկի ու քաղաքական կանխատեսման արվեստի տիրապետման շնորհիվ նրա կանխատեսումները ճշգրիտ էին և քննություն էին բռնում նաև միջազգային ու աշխարհաքաղաքական հարցերում: Այսպես, 1991 թ. օգոստոսյան «պուտչի» տապալումից անմիջապես հետո, երբ շատերը, և ոչ միայն ԽՍՀՄ-ում, դեռ վերջնական չէին կողմնորոշվում, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահը միակն էր,

---

[8] Ցայտուն արտահայտվող այս հատկանիշը շատերի կողմից է նկատվել ու գնահատվել: Որպես օրինակ նշենք Մոսկվայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանի մի արձանագրումը (1995 թ.). «Անցյալի Ձեր գործունեությունը, հիրավի, Ձեզ հպարտանալու իրավունք է տալիս, և Պատմությունն է, որ, համոզված եմ, լիովին կփոխհատուցի Ձեզ: Այստեղ՝ որպես ականատես կարող եմ վկայակոչել այն բախտորոշ պահերը, երբ Ձեր վճռականությունից ու հաստատակամությունից մեծապես կախված էր մեր ժողովրդի ընտրած ուղու ճակատագիրը, և թե ինչպես Դուք գտնում էիք առաջին հայացքից ոչ ակնհայտ, բայց միակ հնարավոր լուծումը: Շատերը Ձեզ հաճախ չէին հասկանում, բայց Դուք խիզախություն ունեցաք հավատարիմ մնալ Ձեր ընտրած ճանապարհին» (ՀՀԱՆԱ, 03/09.01.1995):

որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում տվեց ամենախիզախ գնահատականը. «Ես կարծում եմ, հեղաշրջման հետևանքով Կենտրոնն սպառեց իրեն: Կենտրոնը մեռած է, Կենտրոնն ինքնասպան եղավ: Եվ հիմա վերակենդանացնել այդ մեռյալին, նշանակում է վերստեղծել այն աղետի վտանգը, ինչ տեղի ունեցավ» (տե՛ս էջ 221): Հայաստանի ղեկավարի այս խոսքերը որպես վերնագրեր այդ օրերին շրջում էին աշխարհի առաջատար թերթերի էջերում:

Ամենատարմատական ժողովրդավարական շարժման առաջնորդին, այդ ընթացքում վեց ամիս խորհրդային բանտերում արգելափակված գործչին, հստակ ու հաստատակամորեն անկախության ուղի որդեգրած երկրի նորընծա ղեկավարին կարծես թե ավելի բնական կլիներ շատերի նման տեսնել ցնծության մեջ՝ ԽՍՀՄ փլուզման արդեն տեսանելի հեռանկարի մասին խոսելիս: Սակայն բոլորովին այլ էր Լևոն Տեր-Պետրոսյանի՝ իրատեսության սկզբունքին խարսխված մեկնակետը, ըստ այդմ՝ նաև մտահոգությունը. «Մեզանից այսօր միայն մեկ բան է կախված, և ոչ միայն մեզանից, այլև խորհրդային Միության բոլոր ժողովուրդներից ու համայն մարդկությունից՝ որքան հնարավոր է անարյուն, անցավ դարձնել այդ փլուզումը, անարյուն, խաղաղ դարձնել անցումը դեպի մի նոր վարչակարգ: Եվ Արևելյան Եվրոպայի երկրների փորձը վստահություն է ներշնչում, որ դա հնարավոր է, որ խորհրդային ղեկավարներն ու նաև հանրապետությունները կցուցաբերեն այնքան հանդուրժողականություն և գիտակցություն, որ գործը չեն հասցնի լուրջ առճակատման և խոշոր ցնցումների» (տե՛ս էջ 143): Լևոն Տեր-Պետրոսյանը, որպես Հայաստանի Հանրապետության ղեկավար և ԽՍՀՄ Ֆեդերացիայի խորհրդի անդամ, այն լայնախոհ գործիչներից էր, որոնց առավելագույն ջանքերի շնորհիվ ԽՍՀՄ փլուզումն ընթացավ հենց այս՝ անվտանգ, անարյուն, խաղաղ ճանապարհով:

Հայաստանն իր անկախությունը նվաճեց և միջազգային հանրության ընտանիք մտավ արդեն որոշակիորեն ձևավորված դրական վարկանիշով, բայց նաև ներքին ու արտաքին քաղաքական ծանրագույն խնդիրներով: Եւս մի քանի տարի, և այդ խնդիրները հիմնականում լուծված էին: Իսկ այն հարցադրումը, թե՝ ինչպե՞ս եղավ, որ նյութական, մարդկային, դաշնակիցների և այլ ռեսուրսների առումով էականորեն զիջելով հակառակորդին, գտնվելով շրջափակման մեջ ու աղետի գոտու բեռի տակ, առարկայացան հայտնի հաջողություններն ու հաղթանակները, ունի հետևյալ պատասխա-

նը: Օբյեկտիվ պայմանները զուգակցվեցին սուբյեկտիվ գործոնով. Հայաստանը, ի տարբերություն Ադրբեջանի, ի դեմս Լեւոն Տեր-Պետրոսյանի ու նրա քաղաքական թիմի, ունեցավ իրատեսական քաղաքական մտքով առաջնորդվող, իրատես քաղաքական հաշվարկներ կատարելու ունակ ղեկավարություն եւ առաջնորդ: Նույն իրատես քաղաքական ուղեգծի շնորհիվ Հայաստանը նախապատերազմյան տարիներին էլ պահպանեց իր գերադասելի գիրքը Ադրբեջանի նկատմամբ եւ հասավ հնարավոր նպաստավոր պայմաններով խաղաղության հաստատելու վերջնագծին:

Որպես ամփոփում ասենք հետեւյալը. համաշխարհային քաղաքական մտքի պատմության մեջ նորություն չէին ո՛չ իրատեսության սկզբունքը, ո՛չ իրատես քաղաքականությունը, ո՛չ սեփական ուժերին ապավինելու սկզբունքը, ո՛չ քաղաքական հաշվարկի կարեւորության գիտակցումը եւ այլն: Ավելին՝ դրանք նորություն չէին նաեւ հայ քաղաքական մտքի պատմության մեջ, այն տարբերությամբ սակայն, որ դրսեւորվել էին միայն անհատ գործիչների մոտ ու որոշ պատմաբանների աշխատություններում եւ, տեղի տալով հասարակության կարծրացած պատկերացումների պահանջին, չէին դրվել գործնական քաղաքականության հիմքում:

Շարժման, նրա քաղաքական կառույցի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի ամենամեծ խիզախումն այդ պատնեշի ճեղքահարումն էր:

Նախագահը եւ իր ընդդիմությունը

Անկախության նվաճման, պետականության կայացման եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովման խնդիրների բարեհաջող լուծումը հնարավոր դարձավ նաեւ նոր իշխանության բազմաբնույթ ընդդիմության նկատմամբ ճիշտ վերաբերմունքի շնորհիվ: Այդ վերաբերմունքի առաջին հատկանիշը, թերեւս, ողջամիտ հանդուրժողականությունն էր, որ գալիս էր առաջին հերթին Լեւոն Տեր-Պետրոսյանի լայնախոհությունից: Նա տեղի չտվեց ընտրություններում հաղթած, իր իսկ ղեկավարած քաղաքական ուժի՝ ՀՀՇ-ի բնական ու հասկանալի ձգտմանը՝ գրավելու բոլոր պետական պաշտոնները: Նրա օրոք կազմված կառավարություններում եւ այլ պետական պաշտոններում, ըստ իրենց մասնագիտական կարողությունների եւ ունակությունների, լայնորեն ներկայացված էին ինչպես անկուսակցականներ, այնպես էլ իշխանությունը կորցրած կոմկուսի նոմենկլատուրայի բազ-

մաթիվ ներկայացուցիչներ: Եւ կոմկուսը, որ պարտվելուց հետո բոլորովին չէր դադարեցրել իր պայքարը նոր իշխանության դեմ, մեկ տարվա ընթացքում իր հոգեվարքն ապրեց բնական ճանապարհով: Նույնիսկ դաշնակցությունը, որ նրա քաղաքական հակառակորդն էր ի սկզբանե, հրավեր ստացավ մաս կազմելու կառավարության, ինչը սակայն մերժեց:

Նրա վերաբերմունքը ընդդիմության նկատմամբ երբեք թշնամանքի չվերածվեց, անկախ այն բանից, թե հաճախ պայքարի ինչպիսի անընդունելի ձեւերի էր դիմում վերջինս: Հանրապետության Նախագահը հարցերն ու հարցադրումները կարողանում էր տեղափոխել քաղաքական հարթություն, դրանով իսկ ստիպում, որ պայքարը մղվի այդ հարթության վրա: Բայց այստեղ նրա ընդդիմությունը պարտվում էր, ուստի իր հերթին խուսափում էր նմանօրինակ խնդիրների առարկայական քննարկումներից եւ դիմում հերյուրանքների, խեղաթյուրումների, ասեկոսների տարածման, վերագրումների, անհայտ իրողությունների կեղծման, պիտակավորումների ու նմանօրինակ այլ միջոցների: Բոլոր հրապարակներն ու փողոցները նրանց առջեւ մինչեւ վերջ բաց մնացին երթերի ու հանրահավաքների համար, նույնիսկ պատերազմի ամենածանր շրջանում այդ իրավունքը չսահմանափակվեց: Ազատ էր մամուլը, ռադիոն ու հեռուստատեսությունը, խորհրդարանի նիստերն ուղիղ հեռարձակվում էին: Եւ ընդդիմությունն այս ամենից օգտվում էր անկաշկանդ ու անսահմանափակ՝ խեղաթյուրելով իրականությունն ու ամենաթարմ փաստերը: Հանրապետության Նախագահը երբեմն ստիպված էր լինում անդրադառնալ. «Համոզված եմ, որ ապագա պատմաբանի համար շանթահարիչ է լինելու այն փաստը, թե պատմության կեղծարարությունից կշտացած եւ նրա դեմ ծառացած մեր հասարակությունն ինչպես է ժողովրդավարության պայմաններում հանդուրժում իր աչքի առջեւ եւ իր իսկ մասնակցությամբ տեղի ունեցող իրադարձությունների խեղաթյուրումը» (տե՛ս էջ 369):

Բայց խեղաթյուրվում էին ոչ միայն փաստերն ու իրադարձությունները. նրա ընդդիմության կողմից լայնորեն կիրառվում էին պայքարի ամենաէժան, բայց արդյունավետ, միջոցներ: Դրանցից էր նրա մտքերը «փոքր խմբագրումներով» ձեւափոխելը եւ հազարավոր անգամ կրկնելով տարածելը: Օրինակ՝ այդպես առաջացավ հայտնի՝ «Հարեւաններից պարտք վերցրեք ապրեք», «Հայաստանին Սահմանադրություն պետք չէ» նրան վերագրված ու լայնորեն տարածված, այսօր էլ կրկնվող, ամբաստանություններ: Այդ-

պես «ազգային գաղափարախոսությունը կեղծ քաղաքական կատեգորիա է» նրա ձեւակերպումից սահուն դուրս հանվեց «քաղաքական» բառը եւ այլն: «Քննագատների» անճաշակությունը մատնող չժանապին այս մեթոդը նրա դեմ լայնորեն կիրառվեց մինչեւ վերջ, եւ նախագահը մի քանի անգամ ստիպված էր հիասթափությամբ դա արձանագրել. «...ես ափսոսանքով եմ նշում, որ բարեկրթությունը պակասում է: Ես քննադատությունից չեմ վախենում, անգամ՝ ամենասուր քննադատությունից: Բայց երբ կեղծում են, երբ, ասենք, վերցնում են քո արտահայտությունը, այնտեղից հանում են երեք բառ եւ դա ներկայացնում որպես իրականություն, դա ազնիվ չէ: Նման բաներն ամենից առաջ պետք է կարգավորվեն նախ ներքին կուլտուրայով, ապա նոր՝ օրենքով» (տե՛ս «ՀՀ», 05.12.96): Մի այլ միջոց էր բարոյականության ու տարրական տրամաբանության բոլոր սահմաններն անցնող հերյուրանքներ տարածելը: Այդպես հասարակության տականքի սեփականությունը դարձան «մագույթը լափելու» եւ արտադրված հասանքը «հոդին տալու» (մի այլ տարբերակով՝ «գետը լցնելու») անհեթեթ ու միմյանց բացառող մեղադրանքները: Այդպես պատերազմի, ողջ ժողովրդի իրական հերոսացման ու վաղուց մոռացված իրական հաղթանակների տարիները դարձան «ցրտի ու խավարի» տարիներ: 1997 թ. աշնանն էլ, ամեն կերպ խուսափելով Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման շուրջ նախագահի առաջարկած քննարկումից ու բանական բանավեճից, ողջ ընդդիմությունը նրա դեմ պայքարում էր հենց այս փորձված եւ իր կողմից լավ յուրացված մեթոդով. «...աճպարարության սովոր եւ ժողովրդին մոլորության մեջ գցելու տենդով տառապող մարդկանց համար ինչ փույթ հաշվի նստել տրամաբանության կամ ընդհանրապես բանականության հետ, երբ կարելի է ընդդիմախոսի խոսքերն աղավաղելու եւ երեւակայական վերագրումներ կատարելու միջոցով քողածածկել սեփական մերկությունը՝ հույս դնելով ստորագույն մարդկային բնազդների վրա» (տե՛ս էջ 638–639):

Հանրապետության Առաջին Նախագահի ընդդիմությունն, անշուշտ, բարձրացնում էր նաեւ «լուրջ քաղաքական» հարցեր: Այսօր բոլորի համար ակնհայտ է, որ դրանք, բուն էության, այլ բան չէին, քան իշխանությանը արկածախնդրական քայլերի մղելու փորձեր, քայլեր, որոնք կարող էին ճակատագրական լինել ոչ միայն իշխանության, այլ առաջին հերթին երկրի ու ժողովրդի համար: Սակայն այն ժամանակ դա բոլորի կողմից չէ, որ այդպես էր ընկալվում. «ազգասիրական» ու «հայրենասիրական», «հերոսական»

նախաձեռնությունները շատերն ընկալում էին առանց չակերտների: Բերենք մի քանի օրինակ: Նրանք 1990 թ. օգոստոսին պահանջում էին ոչ թե անկախության գործընթացի սկիզբ, այլ միանգամից անկախություն հռչակել, կամ՝ անկախություն հռչակել Լեռնային Ղարաբաղի հետ միասին, կամ՝ գործող Սահմանադրության մեջ փոփոխություն կատարել եւ Լեռնային Ղարաբաղը հայտարարել Հայաստանի մաս: 1991 թ. գարնանը, որպես բողոք Դորբաջով–Օգալ հանդիպման, պահանջում էին չճանաչել 1921 թ. մարտի 16-ի Թուս–Թուրքական պայմանագրի Հայաստանին վերաբերող կետերը: Նույն թվականի օգոստոսի վերջին, նատացույցով ու հանրահավաքներով դրան ավելացրել էին նաեւ 1921 թ. Կարսի պայմանագիրը չեղյալ հայտարարելու պահանջը: Ապա պահանջում էին ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Կատեգորիկ դեմ էին Թուրքիայի հետ որեւէ հարաբերություն հաստատելուն, քանի դեռ նա չի ճանաչել հայերի Ցեղասպանությունը, եւ այլն: Թվում էր, թե, իշխանություն ունենալով, նրանք անմիջապես կիրականացնեին այս եւ այսօրինակ այլ քայլեր: 1998 թվականից այս ուժերն են իշխանության գլուխ (եւ անձերը, անունները ու տոկոսներն այստեղ ոչ մի նշանակություն չունեն): Բայց ահա, ամբողջ ութ տարի, ոչ մի ձայն չեն հանում Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի մասին, չեն էլ նկատում Թուրքիայի վարչապետին Թուաստանում ցույց տված բացառիկ ջերմ ընդունելությունը եւ ռուս–թուրքական աճող համագործակցությունը: Ավաղ իրենք են ասում, որ Թուրքիայի հետ պատրաստ են հարաբերություններ հաստատել առանց Ցեղասպանության ճանաչման նախապայմանի: Անհասկանալի պատճառով չեն էլ քննարկում Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչելու, էլ չենք խոսում Հայաստանի անբաժան մաս հայտարարելու մասին հարցը: Չգիտես ինչու, Հայոց ցեղասպանության ճանաչման հարց չեն մտցնում ՄԱԿ-ի օրակարգ, անգամ չեն համարձակվում բառը մտցնել Սահմանադրության մեջ: Լուռ կուլ են տալիս, երբ հանրապետության այսօրվա ղեկավարը հայտարարում է, թե Թուրքիայից տարածքային պահանջներ չունենք...

Պատկերը նույնն է նաեւ ավելի ուշ շրջանի հետ կապված: Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովման պատասխանատու հայկական ուժերի կողմից զբաղեցրած տարածքները միայն «ազատագրված» կոչող, 8000 քառակուսի կմ տարածքով անկախ Լեռնային Ղարաբաղի ծրագրով իշխանության եկածներն անհասկանալի մի տրամաբանությամբ չընակեց-

րին «ազատագրված պատմական հողերը»: Ավելին, այսօր նրանցից ոմանք հավաստիացնում են, թե իրենք ի սկզբանե գիտեին եւ հայտարարում էին, որ այդ հողերը ժամանակավորապես են զբաղեցված եւ պետք է վերադարձվեն անվտանգության այլ երաշխիքների դիմաց: Արտաքին քաղաքականության պատասխանատուներն իրենց տարբեր ելույթներում կամա-ակամա կրկնել են (երբեմն՝ բառացի) «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածի համարյա բոլոր կարեւոր դրույթները: Հակամարտության կարգավորման «փուլային» տարբերակը կատեգորիկ մերժողներն այսօր ամենեւին չեն բացառում դրա արդյունավետությունը, իսկ իրենց պաշտպանած «փաթեթայինը» ստացել է «փաթեթային՝ փուլային տարբերակով» խառը ձեւակերպումը: «Փոխզիջում» բառը լսելիս հիստերիայի մեջ ընկնողները եւ դա պարտվողականություն համարողներն այսօր իրենք են ամեն օր խոսում փոխզիջումների անհրաժեշտության մասին: Ադրբեջանի հետ հավասարակշռությունը պահելու համար Սփյուռքից նրանց ակնկալած տարեկան 1-2 միլիարդ օգնությունն ու ներդրումները, ինչի վրա կառուցում էին իրենց հաշվարկները, ինչ-որ տեղ սառեց մնաց, եւ այդ մասին այլեւս ծպտուն չեն հանում:

Լեւոն Տեր-Պետրոսյանի քաղաքական ընդդիմությունը միայն մի հարցում է հետեւողական. ինչպես նրա իշխանության տարիներին, այնպես էլ դրանից հետո, նա, ըստ էության, նույն մեթոդներով ու նույն եռանդով շարունակում է իր պայքարը պետության Հիմնադիր-նախագահի, իրատեսության վրա խարսխված նրա քաղաքական ուղեգծի դեմ:

Որպես պետական գործիչ

Իշխանության հասնելու, անգամ տեւական շրջան իշխանությունը պահելու համար պարտադիր չէ պետական գործչի հատկանիշներ ունենալ: Բարենպաստ հանգամանքների բերումով դա կարող է հաջողել ամեն մի գործիչ, անգամ՝ պարզապես քաղաքականությամբ զբաղվող պարզ մի բախտախույզ: Այլ հարց է՝ թե երկրի համար ինչպիսին են լինում ամեն գնով իշխանությանը տիրանալու եւ այն իր ձեռքում պահելու հետեւանքներն ու արդյունքները:

Պետական գործիչ լինելու համար անհրաժեշտ է օժտված լինել իրական առաջնորդի հատկանիշներով: Ոչ թե հոսանքի ուղղությունը նկատողի, նրա

առջեւից գնացողի կամ նրա կողմից քշվողի, այլ՝ հոսանքն ուղղորդողի, այն առաջնորդողի, երբեմն՝ սանձողի, նրան ցանկալի ընթացք թելադրողի: Իշխանությունը պետական գործչի համար ոչ թե նպատակ է, այլ միայն միջոց՝ իրականացնելու երկրի ընթացքն այն ճանապարհով, որն առավել արդյունավետ կարող է լուծել երկրի անվտանգության ու ժողովրդի արժանապատիվ ու բարգավաճ կյանքով ապրելու խնդիրները:

Քաղաքական գործիչներին սովորաբար մեղադրում են այն բանի մեջ, որ նրանք, շահելու համար հասարակության համակրանքը, անիրականանալի խոստումներ են տալիս, այլ խոսքով՝ փաստորեն խաբում մարդկանց: Մինչդեռ ժամանակին Լեւոն Տեր-Պետրոսյանին ուղղված մեղադրանքներից մեկն էլ այն էր, որ նա խուսափում էր նման խոստումներից: Բայց դա նրա համար կարեւոր սկզբունք էր ընդհանրապես. «...Ես միանգամայն հեռու եմ մեր ժողովրդին հրաշքներ խոստանալու անհեթեթ մտքից: Ես երբեւէ սովորություն չեմ ունեցել դատարկ խոստումներ տալ եւ այսուհետեւ էլ պատասխանատվության խորին զգացումով կտրականապես հրաժարվում եմ խոստումներից, հրաշքների գուշակումից: Ես մշտապես ձգտել եմ իմ եւ ժողովրդի առջեւ դնել թեկուզ փոքր, բայց միանգամայն իրականանալի խնդիրներ» (տե՛ս էջ 259): Իշխանությունը պահպանելու կամ ամրապնդելու համար նա երբեւէ չտրվեց ամբոխահաճ խոստումների, որոշումների ու գործողությունների գայթակղությանը, իսկ սոցիալական դեմագոգիան համարում էր ամենավտանգավորը. «Սոցիալական դեմագոգիան առաջին հայացքից անմեղ բան է թվում, բայց դրա հետեւանքը ֆաշիզմն է կամ անարխիան» (տե՛ս էջ 528–529):

Որպես պետական գործիչ նա իր սկզբունքները պահպանելու եւ ծրագրերն իրականացնելու համար երբեւէ չի խորշել ամբոխահաճ տրամադրություններին ու պատկերացումներին դեմ գնալով՝ իր վարկը վտանգելուց, ինչը կարող էր նրա իշխանության տարիների բազմաթիվ դժվարին դրվագներում նաեւ հանգեցնել իշխանության կորստյան: Ոչ միայն իրավիճակը ճիշտ գնահատելու քաղաքական հոտառություն, այլ հենց պետական գործչի խիզախություն էր անհրաժեշտ՝ իշխանության գալուց ընդամենը մեկ ամիս անց հանդես գալ Լեռնային Ղարաբաղի խնդրում, թերեւս բոլորի պատկերացումներին հակադրվող, նոր ծրագրով՝ առճակատման երկուսուկեսամյա քաղաքականությունից անցում կատարել փոխզիջումների միջոցով հակամարտության խաղաղ կարգավորման քաղաքական նոր ռազմավարության, վստահ, որ դա է ճիշտ ճանապարհը. դրան հասնելու համար

ընդհուպ առաջարկելով, որ Հայաստանը, Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղը եւ Մոսկվան չեզոքայ հայտարարեն 1988 թվականից ի վեր իրենց բոլոր հակասահմանադրական որոշումները: Նա, իհարկե շատ լավ հասկանում էր, որ այս ամենը հեշտությամբ կարող է շահարկվել իր դեմ. «Փոխզիջումների մասին խոսելով՝ ես չեմ վախենում իմ վարկը կորցնելուց: Իսկ դուք կարող եք ժողովրդի մեջ տարածել, որ ես դավաճանել եմ Արցախի գործին» (տե՛ս էջ 121): Ժամանակը եւ հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ դա էր հնարավոր կորուստներից խուսափելու ուղին եւ տվյալ պահի համար լավագույն լուծումը:

Հանրապետության Հիմնադիր-նախագահն ամենամեծ կարեւորությունը տալիս էր պետությունը առողջ, ամուր եւ ապահով հիմքի վրա դնելու խնդրին: Այդ հիմքը պետք է լիներ նորանկախ երկրի Սահմանադրությունը: Խնդրին տրված կարեւորությունն արտահայտվեց ոչ թե հապճեպության մեջ, որ ավելի շատ ցուցադրանք կլիներ: Իմիջիայլոց, այդ ճանապարհով գնացին նորանկախ հանրապետություններից շատերը, եւ կարճ ժամանակ անց կանգնեցին ճգնաժամերի ու իրենց սահմանադրություններում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության առաջ: Հայաստանը գնաց այլ՝ հիմնական օրենքների առանձին ընդունման, դրանց գործարկման արդյունքների ամփոփման, տեւական աշխատանքի ճանապարհով: Այդ նպատակով ստեղծված Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքը տեւեց չորսուկես տարի[9], նրա մշակած եւ Գերագույն խորհրդի կողմից հավանության արժանացած նախագիծն արդյունք էր հանձնաժողովի 109 բազմաժամ նիստերի բծախնդիր աշխատանքի: Հանրապետության նախագահը կարողացավ դրանում իրացնել իր պատկերացումները երկրի հիմնական օրենքի մասին. «Սահմանադրությունը դիտելով որպես պետության տեւական կայունություն ու արդյունավետ կենսագործունեություն ապահովելու կոչված գուտ իրավական փաստաթուղթ՝ հրաժարվել իրավիճակային, կոնյունկտուրային լուծումներից, տուրք չտալ քաղաքական կոմպրոմիսների,

[9] *Գերագույն խորհուրդը Սահմանադրական հանձնաժողովը ստեղծեց 1990 թ. հոկտեմբերի 5-ին: Այն կազմված էր 20 անդամից, նախագահ ընտրվեց Լեւոն Տեր-Պետրոսյանը: 1994 թվականի հունիսի 16-ին ընդունված երկրորդ որոշմամբ հանձնաժողովի կազմը ընդլայնվեց խորհրդարանում արտահայտված կուսակցությունների ներկայացուցիչներով եւ համանախագահ ընտրվեց Հն նախագահ Բարկեն Ազարքյանը:*

առաջնորդվել բացառապես իրավագիտական նկատառումներով՝ հիմնվելով միջազգային փորձի եւ մեր նորանկախ պետության օրենսդրական ավանդույթի վրա: Նույնքան կարեւոր է նաեւ այն սկզբունքը, որ պետության եւ հասարակության կյանքում պետք է բացառված լինի որեւէ ճգնաժամային իրավիճակ, որը չունի սահմանադրական լուծում» (տե՛ս էջ 417): 1995 թվականի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, նախապես արժանացած լինելով Գերագույն խորհրդի հավանությանը, ընդունվեց համաժողովրդական հանրաքվեով: Իշխանությունը պետական գործչի համար այն առարկան է, որը նա ծայրահեղ դեպքերում կարող է նաեւ գրավ դնել, դրանից հրաժարվել՝ եթե իր ճշմարտությունն ապացուցելու կամ իրացնելու համար այլ ելք չի մնում: Սահմանադրական գործընթացի դեմ հարուցված խոչընդոտները հաղթահարելու եւ երկիրը Սահմանադրությամբ օժտելու համար նա ընդդիմությանն առաջարկում էր երեք տարբերակ՝ երեքում էլ նախատեսելով իր հրաժարականը (տե՛ս էջ 366, 409):

Հանրապետության Հիմնադիր-նախագահը հիանալի գիտակցում էր, որ թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության մեջ հաջողությունները եւ ձեռքբերումները կարող են ժամանակավոր եւ խաբուսիկ լինել, մի օր փլուզվել, եթե հասարակական պատկերացումները պետականության մասին հենված են սխալ եւ կեղծ արժեքային համակարգի վրա: Բարեր շարունակ պետականությունից, ուստի եւ իրական քաղաքական պատկերացումներից զուրկ ժողովրդի մեջ պարարտ հող կար այնպիսի հասկացությունների տարածման համար, ինչպես «ազգային միասնություն», «ազգային գաղափարախոսություն», «ազգային համերաշխություն» եւ այլն: Հավակնելով քաղաքական հասկացությունների դերի, սակայն անորոշ բովանդակությամբ, դրանք միաժամանակ հակադրվում էին պետականության այն ընդունված ու սովորական հիմնադրույթներին, որոնցով առաջնորդվում ու գործադրում է ցանկացած նորմալ, քաղաքակիրթ ու բանական պետություն:

Անշուշտ, երկրի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը որպես քաղաքական գործիչ կարող էր նաեւ չանդրադառնալ նմանօրինակ «գաղափարական» հարցերի, անգամ երբեմն դրանցից օգտվել՝ հանուն անձնական հեղինակության բարձրացման ու իշխանության պահպանման. «Մի՞թե ես չէի կարող գիշեր-ցերեկ հայհոյել Թուրքերին, ՄԱԿ-ի առջեւ բարձրացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, չեղյալ հայտարարել Կարսի պայմանագիրը, Թուրքիայից պահանջել Մեւրի դաշնագրով գծված սահմանները,

վերջնագիր ներկայացնել Ադրբեջանին, ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, հայտարարել, որ ոչ մի քիղ հող չենք զիջի եւ այլն... Ես հեշտությամբ կարող էի քաջի ու մեծ հայրենասերի համբավ ձեռք բերել, դառնալ ազգի կուռքը, Հայաստանի ու Սփյուռքի միասնության խորհրդանիշը»: Նա խոստովանում է, որ շատ լավ գիտեր նաեւ փառքի ու հերոսականացման դյուրին ճանապարհը. «Անձնական փառքի կամ հերոսականացման ձգտելու պարագայում ես պարզապես չէի մասնակցի 1996 թ. ընտրություններին, սերունդների աչքում մնալով որպես անկախություն նվաճած, ղարաբաղյան հերոսամարտը շահած, հայկական տարածքներն ընդարձակած նախագահ, անկախ այն բանից, թե որքան արդարացի է այդ ամենի ինձ վերագրումը: Ինչ փույթ, թե դրանից հետո ինչ կպատահեր եւ ում վրա կընկներ վիճակի վատթարացման պատասխանատվությունը: Միեւնույն է, իմ վարկանիշը դրանից չէր տուժի, այլեւ ընդհակառակը, թերեւս ավելի շահեր: Կրկնում եմ, անձնական տեսակետից ինձ համար ամենալավ լուծումը թերեւս այդ էր, բայց դա կլիներ ոչ այլ ինչ, եթե ոչ փոքրոգի դասալքություն, որին, դժբախտաբար թե բարեբախտաբար, սովոր չեմ» (տե՛ս էջ 631):

Երկրի իրական ղեկավարն ու առաջնորդը՝ պետական գործիչը, իրավունք չունի հայրենասերի ու հերոսի կեցվածք ընդունել: Երբ նա ճիշտ է ղեկավարում, իրական հայրենասեր է դառնում ու իրեն հերոս է զգում ողջ ժողովուրդը: Իսկ երբ ղեկավարն է հայրենասիրություն խաղում ու հերոս ձեւանում՝ այդ վեհ զգացումը վերածելով քաղաքական բիզնեսի առարկայի, ժողովուրդն անխուսափելիորեն բարոյալքվում է, պարտվում է ու տապալվում: Հայաստանի Հանրապետության նախագահը, որ նաեւ զինված ուժերի գլխավոր հրամանատարն էր, երբեւէ չհավակնեց, եւ ուրիշներին էլ թույլ չտվեց, հաղթանակներն իրեն վերագրել[10]: Ու նաեւ սրանում էր ղարաբաղյան պատերազմում մեր հաղթանակների ու հաջողությունների, չնայած ծանրագույն պայմաններին՝ ողջ ժողովրդի դրսեւորած աննախադեպ հոգեկան կորովի ու համբերության գաղտնիքը:

Հանրահայտ է կեղծ արժեքների ու կեղծ քաղաքական հասկացությունների շահարկման գայթակղությունն ու դրանից առաջացող վնասը: Պետական գործիչ Լեւոն Տեր-Պետրոսյանը չէր կարող բավարարվել միայն անձամբ այդ գայթակղությանը չտրվելով: Նա անպայման պետք է հրապարակավ կեղծ քաղաքական կատեգորիաներ անվաներ աջ ու ձախ շահարկվող «ազգային գաղափարախոսությունն» ու «ազգային միասնությունը», թեկուզ դրանով իսկ իր դեմ հարուցեր կեղծ-ազգայնականության ու կեղծ-հայրենասերների ողջ բանակի վայնասունը: Որպես պետական գործիչ նա շատ լավ էր հասկանում, որ դրանք ցանկացած պետականության հիմքերի տակ դրված վտանգավոր ականներ են, որ դրանց վրա պետություն չի հիմնվի, որ դրանց պատճառով պետություն կխարխլվի:

Միայն իշխանության պահպանման հարց ունեցող նախագահը չէր հայտարարի, որ Հայ Դատը եւ դրանից բխող պահանջատիրությունը չի կարելի դնել պետական քաղաքականության հիմքում, ինչն, իմիջիայլոց, ամենեւին չխանգարեց (ընդհակառակը՝ օգնեց), որ նրա իշխանության շրջանում հողեր ազատագրվեն, սկզբնավորվի Հայկական ցեղասպանության ճանաչումների շարքը...

Պետական գործիչ Լեւոն Տեր-Պետրոսյանը շատ լավ տարբերակում էր ցանկային հնարավորից, իրատեսականը՝ երազայինից, եւ շրջափակման կապանքներից ազատվելու, հարեւանների հետ բնականոն հարաբերություններ ունենալու կենսական նշանակությունը երկրի գոյության ու զարգացման համար:

Պարզ քաղաքական գործիչը, եթե միայն իշխանությունը պահելու նպատակ ունի, կարող էր տեղի տալ «հայանի ուժերի» եւ հասարակական տրամադրվածության առջեւ, այդպես վճռականորեն հանդես չգալ ղարաբաղյան հակամարտությունը լավագույն պահին լուծելու օգտին եւ այն ձգել մինչեւ իր իշխանության ավարտը (վերջին ութ տարիները ցույց տվեցին, որ դա ամենեւին անհնար չէր): Սակայն պետական գործիչ Լեւոն Տեր-Պետրոսյանը շատ լավ հասկանում էր (հասկանում եւ ճգնում էր բացատրել ու համոզել բոլորին), թե այդ դեպքում ինչպիսին են լինելու հետագա զարգացումները. «Կարծում եք՝ դժվա՞ր բան է ժամանակ շահելը, կարծում եք՝ ես չեմ կարող 3-4 տարի, մինչեւ իմ պաշտոնավարման ժամկետի ավարտը, պահպանել ղարաբաղյան ստատուս-քվոն: Բայց ի՞նչ է լինելու դրանից հետո, ի՞նչ անելանելի վիճակի մեջ է հայտնվելու հաջորդ նախագահը» (տե՛ս էջ 660): Ուստի նա չէր կարող իրեն թույլ տալ՝ իր իշխանությունն ապահովելով, երկիրը եւ ղարաբաղյան հիմնախնդիրն իր հաջորդին փոխանցել այն

[10] *Ճիշտ է՝ «անտեր» մնացած այս ավարի վրա հարձակվեցին եւ առ այսօր այն մեջ-մեջ են անում օրեւէ վաստակ ունեցող ու չունեցող բազմաթիվ կազմակերպություններ ու անհատներ, սակայն դա արդեն իրենց բարոյականության խնդիրն է:*

պայմանների մեջ, ինչում հայտնված ենք այսօր, եւ ինչի անխուսափելիությունը նա չէր կասկածում: Նրա հրաժարականը ձախողումների հետեւանք չէր, ոչ էլ քաղաքական ընդդիմության ուժի դերազանցության ու պարտադրանքի: Դա պետական գործչի հրաժարական էր, ինքնազոհողություն, վերջին ու ծայրահեղ այն միջոցը, որով, բոլոր միջոցները սպառված լինելուց հետո, Ներեւս, կարելի էր զգաստացնել քաղաքական ուժերին ու հասարակությանը, համոզել ու հետ պահել երկրի ու ժողովրդի համար վտանգավոր, կործանարար, արկածախնդրական ճանապարհից:

* * *

Լեւոն Տեր-Պետրոսյանը Հայաստանի Հանրապետության Հիմնադիր-Նախագահն է ոչ թե առաջինը լինելու հանգամանքով, այլ՝ բառի ամենալիարժեք իմաստով եւ համապարփակ նշանակությամբ:

Երբ նա 1988-ին դարձավ «Ղարաբաղ» կոմիտեի անդամ, 80-ամյա հայրը դիմեց նրան. «Այդ ճանապարհն ընտրողը պետք է պատրաստ լինի գնալ մինչեւ կախաղան: Եթե այդպես չէ, ավելի լավ է հիմա ետ կանգնես»: Չի եղել Լեւոն Տեր-Պետրոսյանի քաղաքական կենսագրության մեջ որեւէ դիպված, որ նահանջ լինի այս պայմանից:

Որպես Հանրապետության Նախագահ նա երկու անգամ պաշտոնապես երդվեց Ավետարանի եւ Սահմանադրության վրա, եւ երբեք երդմնազանց ու սահմանադրախախտ չեղավ:

Դեռ 1990 թվականի մարտին նա ինքն իր առջեւ պայման դրեց. «Ով խառնվում է քաղաքականությանը՝ նա պետք է պատրաստ լինի եւ՛ օրհնանքը, եւ՛ անեծք լսելու: Ով պատրաստվում է ագռավին ծառայել՝ նա ագռավ պարգեւներ ակնկալելու կամ նրանից խռովելու իրավունք չունի»: Սա Լեւոն Տեր-Պետրոսյան պետական գործչի հավատամքն էր, պարտադիր չափորոշիչը, նրա քաղաքական կենսագրության առանցքային բնութագրիչը, որ 1996-ին դարձավ նաեւ նախագահական երդման «զուտ մարդկային» մասի եզրափակիչը. «Ոչինչ չանել շնորհակալության կամ հատուցման ակնկալիքով»: Նա իշխանությունից հրաժարվեց արժանապատիվ ու անխռով՝ իր վատակի անխռով գիտակցմամբ, դավանած ճշմարտությանը վստահ, նույն այդ սկզբունքին հավատարիմ. «Եթե արել եմ ինչ-որ լավ բան, չեմ ակնկալում որեւէ երախտագիտություն, շարածիս ու սխալներիս համար հայցում եմ ձեր ներողամտությունը»:

Ինչպիսին էլ լինի այսօր վերաբերմունքը նրա նկատմամբ, դա ճակատագիր է, որ հատուկ է բոլոր պետական գործիչներին, որոնք գտնվել եւ գործել են կարեւորագույն պատմական հանգույցներում: Էականն այն է, որ պատմության մեջ նա մնալու եւ դնահատվելու է իր գործունեության մնայուն արդյունքներով, որպես գործիչ, որի օրոք՝

ա) Հայաստանը վերականգնել է իր անկախությունը, կայացել որպես ինքնուրույն պետություն, ունեցել իր Սահմանադրությունը.

բ) Հայ ժողովուրդը տարել է դինական հաղթանակներ եւ ազատագրել Ղարաբաղը.

գ) Հայաստանում դրվել են ժողովրդավարության հիմքերը.

դ) Հայաստանը որդեգրել է ազատ շուկայական հարաբերություններ.

ե) Հայ իրականության մեջ ներդրվել ու կենսագործվել է իրատես քաղաքականության սկզբունքը:

Այս ցանկը գեռ կարող էր շարունակվել...

*Այս ցանկը գեռ կարող է շարունակվել, եւ չպետք է ապավինել պատմության ինքնանպատակ գնահատականին ու միմիթարվել դրանով: **Դարաշրջանը**, որ սկսվել է 1988-ից եւ անխզելիորեն կապված է իր առաջնորդի՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի անվան հետ, 1998-ին ոչ թե ավարտվել, այլ հեղաշրջման միջոցով կասեցվել է: Հաջորդյա ընդմիջումից հետո իր պետական անկախությունը նվաճած ժողովուրդը չի կարող չվերադառնալ այն արժեքներին ու սկզբունքներին, որոնք ապահովում են նրա պատմության անխաթար ընթացքն ու ապագան: Արժեքներ եւ սկզբունքներ, որոնցով նա առաջնորդվել է մի ամբողջ տասնամյակ ու տեսել դրանց արդյունքները: Այսինքն՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը պատմության մեջ անպայման մնալու է նաեւ իր ընտրած ճանապարհի շարունակականությամբ:*

Իսկ Հայաստանի Հանրապետության Հիմնադիր-Նախագահը բոլորել է ընդամենը իր 60-ամյակը, որ համարվում է պետական գործիչների սովորական միջին տարիք եւ ուժերի ծաղկման շրջան:

Աշոտ Սարգսյան

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

ԱԲԳԱՐՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ, 14
ԱԲԵՂՅԱՆ ՄԱՆՈՒԿ, 439, 666
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՈՐԵՆ, 102
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌՈԲԵՆ, 439
ԱԴԲԱՇՅԱՆ ԴՈՒՏՐԻ, 312
ԱԶՆԱՎՈՒՐ ՇԱՌԼ, 211
ԱԹԱՈՂԼՈՒ ՍԵՒԱՆ, 622
ԱԼԻԵՒ ՀԵՅԴԱՐ, 557, 608, 629, 635
ԱՂԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵՐ, 116
ԱՂԲԱԼՅԱՆ ՆԻԿՈԼ, 439
ԱՃԱՌՅԱՆ ՀՐԱՉՅԱ, 439
ԱՅԱԼԱ ԼՈՒԻՍ, 80
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ (գեներալ-լեյտենանտ), 318
ԱՆՏՈՆՅԱՆ ԱՇՈՏ, 471
ԱՍԱԴ ՀԱՖԵԶ, 317
ԱՍԱՏՈՒՐ ԳԵՒՈՐԳ, 440
ԱՍԱՏՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ, 647
ԱՍԱՏՐՅԱՆ ԳԵՒՈՐԳ, 601
ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱԿՈԲ, 596
ԱՎԱԳՅԱՆ ԱՎԵՏԻՍ, 14
ԱՎԱԳՅԱՆ ԳՐԻԳՈՐ, 184
ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ ԹԱԳԵՈՍ, 440
ԱՐԱԲՈ, 19
ԱՐԱՐՔՅԱՆ ԲԱԲԿԵՆ, 79, 541, 582, 647, 673, 684, 704
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 626, 647
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԷՄԻՆԱ, 592
ԱՐՄԵՆՅԱՆ ԿԱՐՈ, 372, 373
ԱՐՏԱՇԵՍ Ա, 237

Բ

ԲԱԲԱՅԱՆ ՍԱՐԿԻՍ, 596, 647
ԲԱԳՈՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ, 374
ԲԱԳՐԱՏՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ, 21
ԲԱԳՐԱՏՅԱՆ ՀՐԱՆՏ, 210, 325, 373, 582, 620, 684
ԲԱԴԱԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ, 522
ԲԱԴԱԼՅԱՆ ՍՏԵՓԱՆ, 373, 374
ԲԱԼԱՅԱՆ ՋՈՐՈ, 102, 124, 681
ԲԱԿՈՒՆՑ ԱԿՈՍԵԼ, 377
ԲԱԼՂԱՍՄԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ, 593
ԲԱԼՂԱՍՄԱՐՅԱՆ ՍԵՅՐԱՆ, 115
ԲԱԼՂԱՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 644
ԲԱՆԴԵՐՍԿԻ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 215
ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ԱՂԱՐԴ, 600
ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ԼԵՒՈՆ, 374
ԲԵՅԲԵՐ ՋԵՅՄՍ, 282
ԲՈՒՇ ՋՈՐՋ (ավագ), 282, 678
ԲՈՒՐԲՈՒԼԻՍ ԳԵՆԱԴԻ, 249
ԲՐԵԺՆԵԻ ԼԵՈՆԻԴ, 25, 39, 62, 64, 267, 420

Գ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ, 102
ԳԱԼԱՋՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 593
ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, 124, 672
ԳԱՄՄԱԼՈՒԴԻՆ ՋՎԻԿՊ, 567, 632

ԳԱՅԴԱՐ ԵԳՈՐ, 584
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃՅԱՆ, 470
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ, 470
ԳԱՐԵԳԻՆ Բ (Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո), 471
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ, 439
ԳԴԼՅԱՆ ԹԵԼՄԱՆ, 115
ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒՇ, 19
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ, 373, 609, 672
ԳԻԳՈՒ ԷԼԻԶԱԲԵԹ, 210
ԳՈՐԲԱՉՈՎ ՄԻԽԱՅԻԼ, 80, 113, 120, 172, 188, 191, 192, 194, 204, 208–210, 217, 219, 249, 251, 268, 303, 580, 701
ԳՈՒՄԵԼԻ Բ. Ի., 33
ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, 431
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ, 439
ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ, 470
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԻՆԱ, 611
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԶԳԵՆ, 102

Դ

ԴԱԴԱՄՅԱՆ ԲՈՐԻՍ, 102
ԴԱՆԻԵԼՅԱՆ ԿԱՐԻՆԵ, 373
ԴԱՎԹՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ, 37, 65
ԴԱՎԻԹ ՍԱՍՈՒՆՑԻ, 18
ԴԱՐԲԻՆՅԱՆ ՎԱՍԱԿ, 271
ԴԵ ԼԱՌՈԶԻԵ ԺԱԿ, 622
ԴԵՄԻՐԵԼ ՍՈՒԼԵՅՄԱՆ, 317, 616
ԴԵՄԻՐՃՅԱՆ ԿԱՐԵՆ, 195
ԴԵՄՈՒՐՅԱՆ ԱՎԵՏ, 599, 600
ԴԵՅՐՄԵՆՋՅԱՆ ՍԵՎԱՆ, 594
ԴԵՆ-ՔԹԱՇ ՌԱՈՒՖ, 616
ԴԸ ԳՈԼ ՇԱՌԼ, 286
ԴԻԼԲԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ, 599
ԴՅՈՒՄԱ ՌՈԼԱՆ, 210
ԴՈԼ ՌՈԲԵՐՏ, 614, 644
ԴՈՎԼԱԹՅԱՆ ՖՐՈՒՆԶԵ, 102
ԴՈՒԲԻՆՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ, 590

Ե

ԵԼՑԻՆ ԲՈՐԻՍ, 136, 146, 188, 192, 218, 219, 231, 249, 251, 294, 302, 382, 575, 584, 594
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ, 373
ԵՍԱՅԱՆ ԱՇՈՏ, 373
ԵՍԱՅԱՆ ՕԼԵԳ, 647, 648
ԵՐԻՑՅԱՆ ՍԵՐԳԵՅ, 609
ԵՎՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ, 237

Զ

ԶԱԴՈՅԱՆ ԴԱՎԻԹ, 373, 374
ԶԱՎՐՅԱՆ ԴԱՎԻԹ, 439
ԶԱՐԵՀ ՆՈՒՊԱՐ, 446
ԶԱՐՈՒԲՅԱՆ ՀԱԿՈԲ, 181
ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ, 612
ԶՈՒՐԱԲՅԱՆ ԼԵՎՈՆ, 647

Է

ԷԼՉԻԲԵՅ ԱԲՈՒԼՖԱԶ, 304, 567, 632
ԷՅՆՇՏԵՅՆ ԱԼԲԵՐՏ, 635
ԷՐԲԱՔԱՆ ՆԵՋՄԵԴԴԻՆ, 554

Թ

ԹԱՄԱՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 439
ԹԱՐՈՒՄՅԱՆ ՌՈՒԲԵՆ, 14
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ, 470
ԹՈՓՉՅԱՆ ԿԱՐԵՆ, 591

Ժ

ԺՈՒԿՈՎԵՑ Գ., 294

Ի

ԻԳԻԹՅԱՆ ՀԵՆՐԻԿ, 102
ԻԳԻԹՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 647
ԻԼՅՈՒՇԻՆ ՎԻԿՏՈՐ, 521
ԻՇԽԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ, 174

Լ

ԼԱԶԱՐՅԱՆ ՏԵՐ-ՀՈՒՍԻԿ, 374, 647
ԼԱԼՅՈՒՄԻԵՐ ԿԱՏՐԻՆ, 80

ԼԱՄԲԱԽ ՖՐԱՆԿ, 592
ԼԱՆԴՍԲԵՐԳԻՍ ՎԻՏԱՈՒՏԱՍ, 243
ԼԵՆԻՆ ՎԼԱԴԻՄԻՐ, 90, 94, 522, 528, 671
ԼԵՌ, 439, 694
ԼԻՊԱՐԻՏՅԱՆ ԺԻՐԱՅՐ, 623, 626
ԼՈՒԳՈՎՍԿԱՅԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԱ, 266
ԼՈՒԿԻՆ, 94

Խ

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆ, 470
ԽԱԼԻԼ ՓԱՇԱ, 382
ԽԱՆԲԱԲՅԱՆ ԱՐՄԵՆ, 304, 593
ԽԱՆԶԱԴՅԱՆ ՍԵՐՈ, 29, 102
ԽԱՆՋՅԱՆ ԱՂԱՍԻ, 181
ԽԱՆՋՅԱՆ ԳՐԻԳՈՐ, 102
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ, 14
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ, 600, 612
ԽԱՏԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 439
ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ, 675
ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ, 431

Կ

ԿԱԶԻՄԻՐՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ, 592
ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ ՍԻԼՎԱ, 124, 675
ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԱՐՇԱԿ, 446
ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ ՇԱՀԵՆ, 14, 647
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ, 600
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ, 609
ԿԱՐԱՋԻՉ ՌԱԴՈՎԱՆ, 616
ԿԻՏՈՆԻ ՊԻԵՌ, 80
ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ, 446

Հ

ՀԱԿՈԲ ՄՈՎՍԵՍ, 373, 374
ՀԱԿՈԲՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ, 373, 673
ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ, 230
ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ, 524
ՀԱԿՈԲՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ, 14
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՐԳԵՅ, 102
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԻԿՏՈՐ, 29, 415
ՀԱՄԻԴ ԱԲԴՈՒԼ, 478
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ, 14
ՀԱՅՐԻԿՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ, 522, 681, 682
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿ, 372, 373, 612, 647
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ, 620
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼՅՈՒԴՄԻԼԱ, 102
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽՍՐՈՎ, 373
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՒՍԻԿ, 373
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ, 299
ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, 524
ՀԻՏԼԵՐ ԱԴՈԼՖ, 528
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, 373
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ, 597
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՐԱՖՖԻ, 244, 282, 314, 315, 373

Ղ

ՂԱԶԱՐՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ, 29, 669, 672, 681
ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՄՍՈՆ, 124, 672
ՂԱԼԻ ԲՈՒՏՐՈՍ, 489
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻԿ, 184
ՂԱՄԲԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ, 439
ՂԱՓԱՆՑՅԱՆ ԳՐԻԳՈՐ, 439
ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ, 626, 647, 648

Ճ

ՃԱՂԱՐՅԱՆ ԼԻԶԱ, 14

Մ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀՐԱՆՏ, 399
ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՍՏԵՓԱՆ, 439
ՄԱՀԵ ԺԱՆ-ՊԻԵՌ, 81
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՖԵԼԻՔՍ, 696
ՄԱՆԱՆԴՅԱՆ ՀԱԿՈԲ, 439
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ, 184
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱԼԵՔ, 446, 447
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԱՄ, 382
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԱՅԻԿ, 14, 595
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆ, 445–447
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱԶԳԵՆ, 120, 124, 245, 372–374, 522, 523, 579, 580, 635, 672, 673, 682

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՇՈՏ, 124, 373, 521, 522, 673
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԺՈՐԱ, 598
ՄԱՆՎԵԼՅԱՆ ԱԼՅՈՇԱ, 615
ՄԱՐԳԱՐՅԱՆՑ ՎԼԱԴԻՄԻՐ, 93, 372
ՄԱՐԻԱՆ ՄԻՇԵԼ, 560
ՄԱՐՈՒԽՅԱՆ ՀՐԱՅՐ, 299
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Գ., 294
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ, 251
ՄԱՐՔՍ ԿԱՐԼ, 90
ՄԵԼԻՔ-ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԳԵՎՈՐԳ, 439
ՄԵՀՐԱԲՅԱՆ ՌՈԲԵՐՏ, 373
ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ, 439
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ, 431, 439
ՄԻԼՈՇԵՎԻՉ ՍԼՈԲՈԴԱՆ, 616
ՄԻՆԱՍՅԱՆ ԼԻԱՆԱ, 304
ՄԻՏԵՐԱՆ ՖՐԱՆՍՈՒԱ, 207–211, 215, 678
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ, 594
ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ, 599
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 181
ՄՈՎՉԱՆ ԵԼԵՆԱ, 402
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, 235–239, 600, 601, 610
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ, 613
ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ, 87, 93, 373, 374
ՄՈՐՈՒԱ ՊԻԵՌ, 210
ՄՈՒԹԱԼԻԲՈՎ ԱՅԱԶ, 99, 120, 190, 193–201, 213, 218, 219, 262, 294, 304
ՄՈՒՐԱԴՅԱՆ ԻԳՈՐ, 116, 117, 124

Յ

ՅՈՒԿԱԼՈՎ ՅՈՒՐԻ, 592

Ն

ՆԱԶԱՐԲԱԵՎ ՆՈՒՐՍՈՒԼԹԱՆ, 231, 251, 294
ՆԱԹԱՆՅԱՀՈՒ ԲԵՆՅԱՄԻՆ, 630
ՆԱՂԴԱԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ, 623
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՇՈՏ, 681
ՆԵՄՑՈՎ ԲՈՐԻՍ, 584
ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, 431

Շ

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՌԱՖԻԿ, 312
ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ, 442
ՇԱՊՈՇՆԻԿՈՎ ԵՎԳԵՆԻ, 224
ՇԱՌՈՅԱՆ ՌԻՏԱ, 606
ՇԱՏԱԼԻՆ ՅՈՒՐԻ, 94, 96
ՇԱՏԱԼԻՆ ՍՏԱՆԻՍԼԱՎ, 225
ՇԵՍՈՆ ԿԼՈԴ, 80
ՇԵՎԱՐԴՆԱՁԵ ԷԴՈՒԱՐԴ, 557
ՇԻԼՈՎ ԻԼԱՆ, 94
ՇԻՀԱԲ ՍՈՖԻ, 219
ՇԻՐԱԿ ԺԱԿ, 210, 609
ՇԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ, 373

Ո

ՈՍԿԱՆՅԱՆ ՀՐԱՆՏ, 93

Չ

ՉԱՐԵՆՑ ԵՂԻՇԵ, 377, 644
ՉԵԹԻՆ ՀԻՔՄԵԹ, 282
ՉԵՌՆՈՄԻՐԴԻՆ ՎԻԿՏՈՐ, 584, 585
ՉՈՒԲԱՅՍ ԱՆԱՏՈԼԻ, 584

Պ

ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, 470
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԱՐԴ, 218, 647, 648
ՊԵՐԵՍ ՇԻՄՈՆ, 630
ՊԵՐԻ ՆԻԿՈԼ, 81
ՊՈԴՈՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ, 621
ՊՈԼՅԱՆԻՉԿՈ ՎԻԿՏՈՐ, 99, 102
ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ, 446
ՊՈՂՈՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, 102, 116
ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ, 373
ՊՈՂՊԱՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ, 373, 374
ՊՐՈՒՆՍԿԵՆԵ ԿԱԶԻՄԵՐԱ, 243

Ռ

ՌԱԲԻՆ ԻՑԽԱԿ, 630
ՌԻԺԿՈՎ ՆԻԿՈԼԱՅ, 113
ՌՈՒԲԻՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ, 647

Ս

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ, 431
ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱ, 14, 647
ՍԱՎԻՉԵՎ Վ., 190
ՍԱՎԻՍԱԱՐ ԷԴԳԱՐ, 243
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ, 709
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ, 621,622
ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱԳԻԿ, 237
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐԺԻԿ, 647, 648, 691
ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՍ, 102, 681, 682
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱԶԳԵՆ, 318, 373, 374, 582, 593, 597, 626, 647, 648, 685
ՍԱՐԳՍՅԱՆ ՖԱՆԴԵՅ, 415
ՍԱՐԴԱՐՅԱՆ ԿՏՐԻՃ, 373
ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ՎԱԶԵ, 124
ՍԱՖԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ, 124
ՍԱՖԱՐՅԱՆ ԽԱՉԻԿ, 184
ՍԵՐՈԲ ԱՂԲՅՈՒՐ, 19
ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ, 102, 373
ՍԻՐԱԴԵՂՅԱՆ ՎԱՆՈ, 373, 374, 525, 582, 647, 673, 685
ՍԼՅՈՒՆԿՈՎ ՆԻԿՈԼԱՅ, 70
ՍՆԱՅԴԵՐ ԴԱՆԻԵԼ, 192
ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ, 609
ՍՈՐԻԱ ՋԻՈՎԱՆՆԻ, 81
ՍՏԱԼԻՆ ԻՈՍԻՖ, 25, 29, 33, 37, 38, 62, 163, 377, 420, 429, 441
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԵՍԱՅԻ, 373
ՍՏԵՓԱՆՅԱՆ ՎԱՀԵ, 373

Վ

ՎԱԶԳԵՆ Ա, 429–431, 471, 473
ՎԱՆԵՍՔԵՀՅԱՆ ԱՐՄԱՆ, 603
ՎԱՆԴԵՄԵԼԲՐՈՒԿ Պ., 81
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ, 593
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ, 614
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ, 373
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ, 611, 673
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ, 609
ՎԵՅԼ ՍԻՄՈՆ, 81
ՎՈՋԵԼ ՄԻՇԵԼ, 210
ՎՈՒԼՖԻՆՍՈՆ ՋԵՅՄՍ, 622
ՎՈՒՐԱԼ ՎՈԼՔԱՆ, 280

Տ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆՈՐԱՏ (գեներալ-լեյտենանտ), 318
ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ, 439
ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ, 7–9, 11, 37, 43, 65, 79, 85, 123, 185, 188, 190, 191, 193–201, 207, 215, 217, 221, 241, 251, 261, 266, 294, 304, 382, 391, 471, 511, 521, 524, 526, 562, 575, 576, 579, 586, 590, 591, 599, 611, 638, 639, 647, 661, 665–667, 669, 670, 672–676, 678, 680–683, 686–690, 696–698, 702–705, 707–709
ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ՔՐԻՍՏԻԱՆ, 81
ՏԵՐՏԵՐՅԱՆ ԱՐՍԵՆ, 440
ՏԻԳՐԱՆՅԱՆ ՍԻՐԱԿԱՆ, 439

Փ

ՓԱՓԱԶՅԱՆ ՎԱՀԱՆ, 373

Ք

ՔԱԼԱՆԹԱՐ ԱՇԽԱՐՀԲԵԿ, 439
ՔԱՐՄԱԼ ԲԱԲՐԱԿ, 177
ՔԵՇԻՇՅԱՆ ՕՇԻՆ, 605
ՔԵՓԵՆԵԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ, 372, 373
ՔԸՐՔՈՐՅԱՆ ՔԸՐՔ, 614, 622, 644
ՔՈՉԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ, 612, 621, 626, 647, 648, 691
ՔՈՐՍ ՔԵՆ, 81

Օ

ՕՁԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ, 19
ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ, 621
ՕՍԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ, 626, 647

Ֆ

ՖԱԲԻՈՒՍ ԼՈՐԱՆ, 210
ՖՐԱՅ ՌԻՉԱՐԴ, 236

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

ԱԲԽԱԶԻԱ, 321, 342
ԱԳԱՐԱԿ, 337
ԱԴՐԲԵՋԱՆ, 21–23, 25, 28, 29, 31, 41, 48, 52, 56, 59, 61, 69, 70, 71, 73, 74, 83, 85, 97–100, 102, 108, 113–116, 118–121, 123, 124, 130, 134, 135, 137, 138, 145–147, 166, 190, 193–201, 203, 205, 208, 212, 213, 215, 217–219, 230, 259, 261, 262, 280–282, 291–294, 302–304, 306, 308, 309, 311, 313, 317–319, 322, 323, 371, 372, 376, 379, 381, 388, 389, 408, 435, 456, 457, 497, 517, 518, 528, 549, 552–554, 556, 557, 567, 574, 577, 578, 585–589, 592–594, 597, 598, 600, 601, 604, 613, 616–619, 626, 628–631, 633–638, 648, 653, 654, 658, 660, 670, 672, 673, 677, 679, 680, 683, 689, 690, 692, 693, 698, 702, 704, 706
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ (տե՛ս նաեւ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ՕՊԵՐԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ), 94
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ (տե՛ս նաեւ ԴՅՈՒՄԲԻ), 177, 659, 660
ԱԽԹԱԼԱ, 337
ԱԽՈՒՐՅԱՆ, 336
ԱՄՆ, 61, 149, 206, 278, 282, 286, 292, 320, 323, 339, 449, 499, 504, 556, 559, 564, 589, 598, 608, 633, 643, 658, 659, 678
ԱՆԱՏՈԼԻ, 553
ԱՆԴԻԱ (տե՛ս նաեւ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ), 339, 478
ԱՆԴՐԿՈՎԿԱՍ, 146, 147, 213, 276, 277, 280, 301, 336, 436, 557, 559, 560, 593, 597, 653, 658
ԱՆԿԱՐԱ, 554, 578
ԱՇՏԱՐԱԿ, 464
ԱՎԱՏԻՍ, 339
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏ, 184
ԱՐԱՔՍ, 508, 690
ԱՐԱԽԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, 237, 498, 628
ԱՐԱԽԵԼՅԱՆ ԵԻՐՈՊԱ, 53, 81, 112, 143, 209, 488, 686, 697
ԱՐԱԽՄՏՅԱՆ ԵԻՐՈՊԱ, 162
ԱՐԱԽՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, 21, 213, 628
ԱՐԵՎԱՇԵՆ, 455, 512
ԱՐՑԱԽ (տե՛ս նաեւ ՂԱՐԱԲԱՂ), 38, 51, 52, 56–60, 69, 71, 72, 76, 81, 82, 84, 85, 88, 89, 93, 97–102, 107, 108, 110, 112, 113, 115–121, 124, 126, 127, 130, 135, 137, 138, 146, 147, 160, 161, 198, 231, 250, 267, 279–283, 319, 379, 447–449, 451, 470, 474, 507, 526, 529, 531, 534, 539, 565, 574, 608, 626, 638, 661, 688, 691, 704
ԱՖՐԻԿԱ, 401

Բ

ԲԱԹՈՒՄ, 177, 342, 582, 591, 659, 660
ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ, 17
ԲԱՔՈՒ, 52, 69, 71, 73, 94, 98, 126, 147, 148, 201, 213, 218, 294, 313, 318, 549, 552, 578, 591, 592, 617
ԲԵԼԳԻԱ, 228, 339
ԲԵԼՈՐՈՒՍ (Բելոռուսիա), 48, 172, 376, 590
ԲԵՄԼԻՀԵՄ, 478
ԲԵՐԴԱՁՈՐ, 200
ԲՈՍՆԻԱ, 323, 548, 587, 617
ԲՈՒԼՂԱՐԻԱ, 318

Գ

ԳԱՆՁԱԿ (տե՛ս նաեւ ԿԻՐՈՎԱԲԱԴ), 69
ԳԱՆՁԱՍԱՐ, 626
ԳԵՏԱՇԵՆ, 69, 70, 115, 121, 200, 203, 455, 677
ԳԵՏԱՇԵՆԻ ԵՆԹԱԵՐՋԱՆ, 69, 200
ԳԵՐՄԱՆԻԱ, 318, 320, 339, 478, 479, 528
ԳՅՈՒՄՐԻ (տե՛ս նաեւ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ), 377, 464
ԳՈՐԻՍ, 72, 99, 100, 607
ԳՈՐԻՍԻ ՇՐՋԱՆ, 72
ԳՈՒԳԱՐՔ, 352

Դ

ԴԵՏՐՈՅՏ, 447

Ե

ԵԳԻՊՏՈՍ, 197, 301, 445
ԵՂԵԳՆԱՁՈՐ, 352
ԵՐԱՍԽ, 673
ԵՐԵՒԱՆ, 49, 79, 81, 94–96, 99, 109, 191, 195, 354, 377, 399, 439, 440–442, 445, 447, 449, 464, 496, 552, 575, 578, 581, 582, 586, 669, 685
ԵՐՈՒՍԱՂԵՄ, 470
ԵԻՐՈՊԱ, 53, 80, 81, 112, 143, 162, 193, 209, 229, 230, 265, 278, 281, 282, 300, 434, 451, 488, 547, 548, 550, 553, 556, 557, 564, 610, 622, 629, 643, 654, 686, 697

Զ

ԶԱՆԳԵԶՈՒՐ, 464
ԶԱՆԳԵԼԱՆ, 592
ԶԵՅԹՈՒՆ, 19
ԶՎԱՐԹՆՈՑ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ, 34, 52, 53, 354, 466, 672

Է

ԷՋՄԻԱԾԻՆ, 429, 440, 470, 471, 499
ԷՍՏՈՆԻԱ, 243, 372
ԷՐԵԲՈՒՆԻ ԹԱՂԱՄԱՍ, 95
ԷՐԶՐՈՒՄ, 480

Թ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ (տե՛ս նաեւ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ՕՊԵՐԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ), 37, 49
ԹԲԻԼԻՍԻ (Թիֆլիս), 53, 148, 440
ԹՈՒՐՔԻԱ, 44, 61, 108, 117, 123, 136, 149, 162, 163, 193, 197, 213, 214, 259, 261, 278–280, 282, 299–301, 309, 315–318, 320, 382, 478–480, 517, 553, 554, 556–578, 581, 585, 594, 595, 600, 601, 613, 616, 622, 631, 633, 654, 701, 705
ԹՈՒՐՔՄԵՆՆՍՏԱՆ, 330, 495, 496, 533, 655

Ժ

ԺԵԼԵԶՆՈՎՈԴՍԿ, 250, 251, 259

Ի

ԻՋԵՒԱՆ, 95, 508
ԻՌԱՆԴԻԱ, 339

ԻՍՊԱՆԻԱ, 228
ԻՍՐԱՅԵԼ, 265, 286, 634, 648, 651, 658, 659, 661
ԻՐԱՆ, 117, 135, 149, 197, 212, 259, 261, 278, 279, 292, 301, 309, 322, 496, 517, 579, 582, 585, 600, 620, 643, 648, 651, 654, 655, 657, 658
ԻՐԱՔ, 197, 199

Լ

ԼԱ ՎԵՌՆ, 667
ԼԱՉԻՆ, 99, 100, 306, 308, 311, 328, 618, 690
ԼԱՏՎԻԱ, 231, 243, 372
ԼԵՀԱՍՏԱՆ, 250
ԼԵՆԻՆԳՐԱԴ (տե՛ս նաև ՊԵՏԵՐԲՈՒՐԳ), 44
ԼԵՆԻՆԻ ՀՐԱՊԱՐԱԿ (տե՛ս նաև ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ), 522, 671
ԼԻԲԱՆԱՆ, 134, 211, 212, 265, 471
ԼԻՍԱԲՈՆ, 552
ԼԻՏՎԱ, 107, 115, 203, 231, 372, 579, 678, 680
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 598, 605

Խ

ԽԱՉԻՆ-ՏԱՓ, 57
ԽԱՍԱՎՅՈՒՐՏ, 587, 589
ԽՈՋԱԼՈՒ, 52, 306
ԽՈՐՎԱԹԻԱ, 617
ԽՍՀՄ (Խորհրդային Միություն, Միություն), 8, 9, 21–23, 25–27, 29–31, 33, 36, 38–40, 44, 47–53, 56, 63–67, 69–73, 80–82, 93, 94, 97, 102–106, 110, 115, 119, 123, 136, 138, 143–149, 153, 155, 156, 163, 165, 166, 172–176, 182, 185, 186, 188, 191, 192, 197, 200, 203, 205–210, 212, 214, 217, 218, 221, 223–225, 227–230, 232, 249, 254, 255, 259, 262–264, 267, 271, 274–276, 280, 291, 299, 306, 313, 330, 331, 346, 365, 378, 379, 393–395, 399–401, 411, 412, 420, 434, 442, 474, 488, 492, 553, 576, 577, 590, 601, 667, 668, 676–679, 682, 686, 696, 697

Կ

ԿԱՀԻՐԵ, 80
ԿԱՊԱՆ, 337
ԿԱՐՄԻՐ, 95
ԿԱՐՍ, 177, 193, 631, 633, 701, 705
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱ, 488
ԿԻԼԻԿԻԱ, 471, 499
ԿԻՊՐՈՍ, 315, 471, 587, 616
ԿԻՐՈՎԱԲԱԴ (տե՛ս նաև ԳԱՆՁԱԿ), 52, 147, 313, 549
ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 638
ԿՈՎԿԱՍ, 556, 593, 601, 634
ԿՐԱԻՆԱ, 617

Հ

ՀԱԳՐՈՒԹ, 99, 455
ՀԱԼԵՊ, 666
ՀԱՅԱՍՏԱՆ (ՀԽՍՀ, Հայաստանի Հանրապետություն), 7, 9–11, 14, 17, 18, 21–23, 25–28, 30, 31, 33–35, 39–41, 43–45, 48–53, 56, 57, 59–67, 69–73, 76, 79–85, 87, 88, 90, 91, 93–103, 106–120, 124, 126–128, 130–136, 138–141, 143, 146–151, 156, 160, 161, 163–167, 169, 171, 174, 176, 177, 179–182, 184–191, 193–201, 203–208, 210–214, 217–219, 221, 224, 227, 229, 231, 232, 237, 238, 241–243, 245, 246, 249, 250, 253, 259, 261–267, 274, 276, 278–280, 282, 284, 289, 291–295, 297–305, 308, 310–320, 322, 323, 325, 327–329, 331, 334, 336, 339–342, 354, 361, 363, 365, 367, 369–372, 375–385, 387–389, 391, 393–395, 400, 403–409, 411–415, 417, 419–421, 424–427, 430, 433, 434, 436, 437, 439–442, 445–449,

452, 455, 458–461, 464–468, 470, 471, 473, 474, 477, 478, 480, 483–487, 489, 491–505, 507–513, 516–519, 525, 526, 528, 529, 531–535, 537–542, 545, 548, 549, 551–562, 565–574, 576, 578, 579, 581–583, 585–598, 601, 603–606, 608–618, 620–623, 626–629, 631–634, 636–638, 641–643, 645–662, 665–668, 671–673, 675, 677–680, 682, 683, 685–687, 690–699, 701, 704–706, 708, 709
ՀԱՅԴ-ՊԱՐԿ, 49
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ (տե՛ս նաև ԼԵՆԻՆԻ ՀՐԱՊԱՐԱԿ), 525
ՀԵԼՍԻՆԿԻ, 459
ՀԵՐՀԵՐ, 464, 508
ՀԵՐՑԵԳՈՎԻՆԱ, 323
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽ, 52, 69, 71, 72
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿԻՊՐՈՍ, 616
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ, 58, 336
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՕՍԵԹԻԱ, 342
ՀՆԴԿԱՍՏԱՆ, 579
ՀՈԼԱՆԴԻԱ, 643
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ, 95
ՀՈՐԴԱՆԱՆ, 197
ՀՈՒՆԱՍՏԱՆ, 17, 655
ՀՌՈՄ, 143, 327
ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, 630

Ղ

ՂԱԶԱԽՍՏԱՆ, 187, 246, 259, 394
ՂԱՐԱԲԱՂ (տե՛ս նաև ԱՐՑԱԽ), 8, 9, 12, 21–23, 25–28, 30, 31, 34, 37, 39–41, 48–50, 52, 55–58, 62–64, 66, 69–73, 84, 85, 97–99, 101, 102, 160, 186, 189, 193–195, 197–201, 203, 211, 217–219, 261, 262, 281, 282, 291– 294, 303, 304, 307, 308, 311, 312, 317–320, 327, 376, 378–380, 384, 385, 387–390, 407, 412, 434–437, 451, 456–461, 486, 488, 491, 497, 498, 509, 510, 512, 518, 519, 521, 529, 533, 534, 548–554, 556, 557, 559, 560, 574, 575, 585–589, 592, 595–597, 607, 608, 610, 611, 613, 615–618, 623, 625–639, 643, 645–649, 651, 653, 657, 659, 660, 671–673, 676, 677, 680, 683, 685, 687–693, 696, 698, 700, 701, 703, 704, 706, 709
ՂՐՂԶՍՏԱՆ, 330

Մ

ՄԱԼԻԲԵՅԼԻ, 306
ՄԱՆԱԶԿԵՐՏ, 315
ՄԱՐԳԱՐԱ, 317
ՄԱՐՏԱԿԵՐՏ, 328, 455, 457, 512
ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ, 203, 677
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ (ԼՂ), 512
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ (տե՛ս նաև ԱՆԳԼԻԱ), 61, 504
ՄԵԾԱՄՈՐ, 508
ՄԵՂՐԻ, 336, 582, 592, 655, 658, 692
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, 265, 593, 601, 629
ՄԵՐՁԲԱԼԹԻԿԱ (Մերձբալթյան հանրապետություններ), 44, 47, 50, 107, 112, 115, 134, 155, 207, 208, 249, 276, 303, 678, 679
ՄԻՆՍԿ, 388, 389, 459, 460, 497, 518, 549, 552, 587, 615, 632, 645, 649, 657, 689
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ, 554
ՄԻՋԻՆ ԱՍԻԱ, 212, 553, 601, 654, 679
ՄՈԼԴՈՎԱ, 48, 107, 207, 208, 230, 250, 330, 679
ՄՈՍԿՎԱ, 35, 44, 52, 56, 58, 69–71, 73, 85, 93–95, 108, 114, 115, 117, 120, 126, 134, 135, 140, 165, 167, 192, 198, 203–205, 207, 208, 212, 217, 218, 227, 249, 250, 267, 308, 312, 440, 576, 578, 584, 589, 594, 605, 667, 677, 696, 701, 704

ՄՈՒՍԱ ԼԵՌ, 17, 19, 20

Յ

ՅՈՋՂԱՔ, 19

Ն

ՆԱԻԻՋԵՒԱՆ, 193, 592
ՆՅՈՒ ՅՈՐՔ, 470
ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 113, 114
ՆՈՎՈՌՈՍԻՅԿ, 591
ՆՈՎՈ-ՕԳԱՐՅՈՎՈ, 217, 219, 224
ՆՈՒՔԱՐԱՇԵՆ, 95, 673

Շ

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ (ԼՂ), 69, 70, 115, 121, 200, 455, 512
ՇԱՄԼՈՒՂ, 337
ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ, 19
ՇԱՏԱՆ, 19
ՇԻՐԱԿ, 470
ՇՈՒՇԻ, 306, 311, 690
ՇՎԵՅՑԱՐԻԱ, 547

Ո

ՈՒՋԲԵԿՍՏԱՆ, 394
ՈՒԿՐԱԻՆԱ, 48, 107, 112, 187, 218, 225, 246, 259, 376, 579, 643, 679
ՈՒՐՖԱ, 19

Չ

ՉԵՉՆԻԱ (Չեչնեստան), 521, 548, 556, 594
ՉԻՆԱՍՏԱՆ, 579

Պ

ՊԱՐՄԻՑ ԾՈՑ, 322, 593
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ (տե՛ս նաև ԼԵՆԻՆԳՐԱԴ), 400, 666
ՊՈԼԻՍ (Ստամբուլ), 470
ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ, 547
ՊՐԱԳԱ, 280

Ջ

ՋԵԲՐԱՅԻԼ, 592
ՋԵՅՀԱՆ, 592
ՋՈՒԼՖԱ, 655

Ռ

ՌԵՆՆ, 79, 80
ՌՈՒՍԱՍՏԱՆ, 34, 44, 48, 61, 90, 106, 107, 112, 136, 146, 147, 149, 162, 186, 187, 193, 213, 214, 243, 246, 249, 258, 259, 264, 265, 276–278, 280, 284, 285, 293, 302, 303, 319, 320, 322, 323, 327, 330, 332, 344, 372, 376, 381, 382, 393–395, 400, 401, 415, 435, 436, 457, 461, 478, 480, 494, 517, 521, 528, 529, 533, 554–556, 559, 576–579, 583–586, 589, 590, 593, 594, 597, 603–605, 613, 634, 643, 648, 651, 652, 654, 657, 658, 679, 701

Ս

ՍԱՍՈՒՆ, 19
ՍԱՐԴԱՐԱՊԱՏ, 20, 254
ՍԵՒԱՆԻ ԼՃՈՒՂԻ, 96
ՍԵՒՐ, 461, 628, 631, 705
ՍԻՐԻԱ, 197, 301, 471, 666
ՍՈՎԵՏԱՇԵՆ, 95
ՍՈՐԲՈՆ, 575, 667
ՍՈՒՐԳԱՅԻԹ, 22, 34, 51, 53, 71, 73, 127, 147, 201, 213, 268, 313, 378, 399, 549
ՍՈՖԻԱ, 667
ՍՊԻՏԱԿ, 377
ՍՏԱՄԲՈՒԼ, 314, 594, 628, 692
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 52, 94, 99, 100, 102, 195, 552, 607
ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 80, 81, 609, 667

Վ

ՎԱՆ, 19
ՎԱՇԻՆԳՏՈՆ, 206
ՎԱՏՊՈՒՐԱԿԱՆ, 20
ՎԵՆԵՏԻԿ, 667
ՎԻԵՆՆԱ, 339

ՎԻՆՅՈՒՍ, 203
ՎՐԱՍՏԱՆ, 117, 135, 146, 147, 187, 207, 212, 230, 250, 261, 301, 306, 309, 310, 321, 342, 354, 371, 372, 376, 408, 517, 528, 554, 557, 567, 593, 594, 600–602, 643, 652, 653, 679, 680, 687

Տ

ՏԱՇԻՐ, 354
ՏԱՋԻԿՍՏԱՆ, 306, 371, 409
ՏԱՎՈՒՇ, 508
ՏԱՐՈՆ, 480
ՏՈՒԼՊԻԱ, 496

Փ

ՓԱՐԻԶ, 79, 207, 210
ՓՈՓԻ, 342, 582

Ք

ՔԵՄՊ-ԴԵՒԻԴ, 323
ՔՅԱՐՔԻ, 673
ՔՈՒՎԵՅԹ, 197

Օ

ՕԼՈՒԹԵՐ, 199
ՕՊԵՐԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ (տե՛ս նաև ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ), 579, 581, 672, 674
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, 21, 478, 480

Ֆ

ՖԵՐԳԱՆԱ, 53
ՖԻԶՈՒԼԻ ՇՐՋԱՆ, 592
ՖՐԱՆՍԻԱ, 149, 210, 217, 228, 286, 292, 339, 401, 478, 558, 559, 589, 643, 658, 678

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան (խմբագրի կողմից) 7
Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ 15–662

1983 թվական

Ելույթ Մուսա Լեռան հերոսամարտի 68-րդ տարեդարձի հանգիստության ժամանակ 17

1988 թվական

Լեռնային Ղարաբաղում իրագործվելիք սոցիալ-անտեսական բարենորոգումների ծրագրի մասին 21
Ղարաբաղյան շարժման անցած ուղին եւ հետանկարները 25
Այսպես կոչված հակառուսական տրամադրությունների մասին, որոնք իբր բորբոքվում են Ղարաբաղյան շարժման միտինգներում 33
Վերակառուցման հակառակորդները եւ Ղարաբաղյան շարժումը 37

1989 թվական

Ելույթ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում 43
Ելույթ Հայոց համազգային շարժման հիմնադիր համագումարում 47
Արցախյան խնդրի լուծման ուղին 55
Արմատական դեմոկրատական վերափոխումների անցկացման անհրաժեշտությունը Հայաստանում 61

1990 թվական

Մասկվան այլընտրանք չունի 69

Հարցազրույց «Հայք» թերթին *75*
Հարցազրույց «Յառաջ» շաբաթաթերթին *79*
Պատվերը կատարված է. սպասեք չքանշաններին *87*
Մոսկվայի ռճրագործ սադրանքը *93*
Արցախյան ճգնաժամը *97*
Նախընտրական ելույթ ՀԽՄՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում *103*
Ելույթ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի փակ նիստում *113*
Հարցազրույց «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթին *123*
Ելույթ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նիստում *143*
Ելույթ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում *153*
Ելույթ Հայոց համազգային շարժման 2-րդ համագումարում *157*

1991 թվական

Ելույթ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նիստում *169*
Ելույթ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանի բացմանը *179*
Հարցազրույց «Արգումենտ ի Ֆակտ» շաբաթաթերթին *185*
Հարցազրույց ամերիկյան «Քրիսչըն Սայընս Մոնիթըր» թերթին *191*
Հարցազրույց «Արգումենտ ի Ֆակտ» շաբաթաթերթին *193*
Հայաստանի հայտնությունը *203*
Հարցազրույց «Նեզավիսիմայա Գազետա» թերթին *207*
Հարցազրույց ֆրանսիական «Լը Մոնդ» թերթին *217*
Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորների պատահերի նստաշրջանում *221*
Ելույթ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների պատահերի 5-րդ համագումարում *223*
Ելույթ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նիստում *227*

Խոսք՝ պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստում *235*
Հարցազրույց «Հայք» թերթին՝ Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվելու առիթով *241*
Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնամուտի ելույթը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հատուկ նիստում *253*

1992 թվական

Հարցազրույց «Իզվեստիա» թերթին *261*
Հարցազրույց «Հայք» թերթին *267*
Ելույթ Հայոց համազգային շարժման 4-րդ համագումարում *273*
Հարցազրույց «Օգոնյոկ» ամսագրին *291*
Հարցազրույց «Նեզավիսիմայա Գազետա» շաբաթաթերթին *295*
Հանդիպում լրագրողների հետ՝ նախագահական երդման առաջին տարեդարձի առիթով *305*
Տարեկան հաղորդում Գերագույն խորհրդի նստաշրջանում *329*

1993 թվական

Ելույթ իրավապահ մարմինների, գործադիր իշխանության ղեկավարների հանրապետական խորհրդակցությունում *351*
Ելույթ արդյունաբերության ղեկավար աշխատողների խորհրդակցությունում *357*
Ելույթ Սահմանադրական հանձնաժողովի նիստում *361*
Ելույթ Սահմանադրական հանձնաժողովի նիստում *365*
Ելույթ Հայոց համազգային շարժման 5-րդ համագումարում *369*
Խոսք՝ Հայաստանի անկախության երկրորդ տարեդարձի առիթով կազմակերպված հանդիսավոր ընդունելության ժամանակ *387*
Ելույթ հայկական հեռուստատեսությամբ՝ ազգային դրամի ներդրման առիթով *393*
Հարցազրույց «Օբշչայա Գազետա» թերթին *399*

1994 թվական

Ելույթ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նիստում՝ Սահմանադրության ընդունման եղանակի մասին *403*

Ելույթ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 50-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստում *411*
Ելույթ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտահերթ նիստում՝ Սահմանադրության նախագծի մասին *417*
Խոսք՝ Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա-ի հուղարկավորության արարողության ժամանակ՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում *429*
Խոսք՝ Հայաստանի անկախության երրորդ տարեդարձի առիթով կազմակերպված հանդիսավոր ընդունելության ժամանակ *433*
Խոսք՝ Երևանի պետական համալսարանի 75-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստում *439*
Ելույթ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության համագումարում *445*
Հանրապետության նախագահի՝ ամանորի շնորհավորական ուղերձը 1995 թվականի առթիվ *451*

1995 թվական

Տարեկան հաղորդում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտահերթ նիստում *455*
Հարցազրույց «Արմենպրեսին»՝ կաթողիկոսական ընտրությունների առիթով *469*
Ելույթ Ազգային եկեղեցական ժողովում՝ կաթողիկոսական ընտրության առիթով *473*
Ելույթ Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում *477*
Ելույթ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի անդրանիկ նիստում *483*
Ելույթ ՄԱԿ-ի 50-ամյակին նվիրված Գլխավոր ասամբլեայի հատուկ հոբելյանական հավաքի նիստում *487*
Ելույթ Հայոց համազգային շարժման 7-րդ համագումարում *491*
Հանրապետության նախագահի՝ ամանորի շնորհավորական ուղերձը 1996 թվականի առթիվ *507*

1996 թվական

Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի ընտրական ծրագիրը *511*
«Բլից» հարցազրույց լրագրողների հետ *521*
Ելույթ նախընտրական հանդիսավոր-հանդիպմանը Հանրապետության հրապարակում *525*
Նախընտրական ելույթ պետական հեռուստատեսությամբ *531*
Հայաստանի Հանրապետության նախագահի շնորհավորական ուղերձը անկախության հինգերորդ տարեդարձի առիթով *537*
Ուղերձ հայ ժողովրդին՝ 1996 թ. նախագահական ընտրությունների առիթով *541*
Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնական երդումը *545*
Ելույթ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության գագաթնաժողովում *547*

1997 թվական

Հարցազրույց ֆրանսիական «Պոլիտիկ էնտերնասիոնալ» հանդեսին *551*
Ելույթ Հայոց համազգային շարժման 9-րդ համագումարում *561*
Հարցազրույց «Նովոյե Վրեմյա» շաբաթաթերթին *575*
ՀՀ Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի մամուլի ասուլիսը *591*
Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պարտ *625*
Հանրապետության նախագահի՝ ամանորի շնորհավորական ուղերձը 1998 թվականի առթիվ *641*

1998 թվական

Ելույթ Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստում *647*
Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի հայտարարությունը *661*
Վերջաբան. Լեւոն Տեր-Պետրոսյան՝ Հիմնադիր-նախագահ Հայաստանի Հանրապետության (Ա. Մարգսյան) *663*
Անձնանունների ցանկ *711*
Տեղանունների ցանկ *716*